

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՅԱՆ

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԵՎ ԷԳԵՅԱՆԻ ԱՌԱՓՆՅԱԿԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՅԼ ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐԸ
(XVI–XIX դ. I կես)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ 1	
ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕԶԱԽԸ	
1. Զմյուռնիան քաղաքակրթությունների պատմության միջով.....	41
2. Գաղթօջախների կազմավորումը.....	79
3. Հայ կաթոլիկներն առափնյակում.....	101
ԳԼՈՒԽ 2	
ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐԸ՝ ԷԶՄԻԱԾՆԻ ԹԵՄ՝	
1. Զմյուռնիայի տերունի թեմը.....	119
2. Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդները.....	151
3. Զմյուռնիայի եկեղեցիները.....	182
ԳԼՈՒԽ 3	
ԷԳԵՅԱՆԻ ԱՅԼ ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՓՆՅԱԿՈՒՄ՝	
1. Զմյուռնիայի շրջակայքի բնակավայրեր.....	197
2. Հողագործությունը և արհեստները Էգեյանի համայնքներում...	256
3. Զմյուռնիայի հայ վաճառականությունը.....	284
ԳԼՈՒԽ 4	
ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ՝	
1. Ազգային վարչությունը.....	342
2. Դավիթ-Դանիելյան ներհակությունը.....	352
ԳԼՈՒԽ 5	
ՄՇԱԿՈՒՅԹԸ ԳԱՂԹՕԶԱԽՆԵՐՈՒՄ՝	
1. Գրչությունը.....	363
2. Վարժարաններ և կրթական-թարեսիրական ընկերություններ	371
3. Տպագրությունը և պարբերական մամուլը.....	409
ՎԵՐՋԱԲԱՆ.....	467
ՀԱՎԵԼ ՎԱԾ	
Ճանապարհորդները Զմյուռնիայում (XVII դ. I կես – XIX դ. I կես)	485
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ.....	499
ԱՆՎԱՆԱՑԱՆԿ.....	513

Գիրքը հրատարակության է երաշխավորել
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհուրդը

Գիտական խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ա. Ա. Մելքոնյան**

Գրախոս՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. **Գ. Ս. Ստեփանյան**

Խառատյան Ա. Ա.

Խ 310 Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես), Եր., ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., 2022, 534 էջ+նկ.:

VI-VII դդ. գոյացած Զմյուռնիայի և փոքրասիական արևմուտքի մյուս գաղթօջախները հնագույններից մեկն են տարաշխարհիկ հայկական համայնքների մեջ: Իրենց պատմությունը սկսելով դեռևս բյուզանդական ժամանակներից, դրանք հարատևեցին հետագա դարերում՝ տարածաշրջանի, պատմական ճակատագրի համեմատ, անցնելով սելջուկների, թուրքացեղ բեյությունների և օսմանյան թուրքերի տիրապետության ժամանակների դարավոր ուղին: Բուն Զմյուռնիայի և առափնյակի մյուս գաղթօջախները՝ Այդըն, Մանիսա, Էոդեմիշ, Քասաբա, Աքհիսար, Գնըք, Բերգամա, Քրքաղաչ, Դենիզլի, Նազիլի և այլն, գոյատևեցին մինչև 1922 թ. սեպտեմբեր՝ կործանվելով տարածաշրջան ներխուժած քեմալականների ձեռքով, իբրև Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության վերջին արար:

Հատկապես Զմյուռնիայի գաղթօջախը հույժ երևելի ներդրում ունի հայ մշակույթի (ազգային եկեղեցու ավանդույթների պահպանություն, գրչագրություն, գրատպություն, դպրոց և մանկավարժություն, պարբերական մամուլ և լրագրություն, ինքնուրույն և թարգմանական գեղարվեստական գրականություն, ժամանակակից փիլիսոփայական մտքի մշակումներ և այլն) համազգային զարգացման անդաստանում:

Աշխատությունը նախատեսված է պատմաբանների, բանասերների և ընթերցող հասարակայնության համար:

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ИСТОРИИ

АЛЬБЕРТ ХАРАТЯН

АРМЯНСКИЕ КОЛОНИИ СМИРНЫ И ПОБЕРЕЖЬЯ
ЭГЕЙСКОГО МОРЯ
(XVI – первая половина XIX в.)

NATIONAL ACADEMY OF SCIENCE OF THE RA
INSTITUTE HISTORY

ALBERT KHARATYAN

ARMENIAN COLONIES OF SMYRNA AND THE COAST
OF THE AEGEAN SEA
(16th - first half of the 19th century)

ЕРЕВАН-2022-YEREVAN

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փոքրասիական արևմուտքի հայկական գաղթօջախները հնագույններից մեկն են հայրենիքից դուրս համախումբ ապրած հայ հանրությունների մեջ, որոնց սկզբնավորումը պետք է որոնել վաղ միջնադարում: Հայ հեղինակները տեղեկություններ չեն տվել այս գաղթօջախների կազմավորման մասին, համենայն դեպս առ այսօր բացակայում է աղբյուրների որևէ անդրադարձ, որպիսիք, հնարավոր է, կարող են հետազայում ի հայտ գալ: Բյուզանդական աղբյուրները, մինչդեռ, ինչպես ցույց են տալիս նորագույն հետազոտությունները, և ամենից առաջ, հայ բյուզանդագիտության երախտավորներ Հ. Գեյցերի և Հ. Բարթիկյանի բացահայտումները, բավականաչափ առատ տեղեկություններ են տալիս Էգեյանի առափնյա տարածաշրջանի, առանձնապես Զմյուռնիայում և կից շրջաններում ապրած հայերի տնտեսական, ռազմական, առևտրական, վարչական ու առօրեական կյանքի ամենատարբեր իրողությունների վերաբերյալ¹: Որպես Էգեյանի արևմտյան հատվածի հնագույն գաղթավայր՝ ուսումնասիրողները մատնացույց են անում Պերգամոն (Բերգամա) քաղաքը: Անդրադառնալով 571-576 թթ. Վարդան Մամիկոնյանի ապստամբությանը հետևած իրադարձություններին՝ Գևորգ Ասլանն իր ֆրանսերեն աշխատության մեջ գրում է, որ վայելելով բյուզանդական կայսեր հովանավորությունը՝ Վարդանը ծառայության մտավ նրա բանակում, և որ <<դրա հետ կապված մյուս նշանավոր անձինք բնակություն հաստատեցին Պերգամոնում՝ իրենց ժողովրդով, իրենց հոգևորականներով և իրենց ռազմիկներով, որոնց հետ միասին այդ քաղաքում նրանք հիմնեցին հայկական գաղութ, ծառայության մեջ մտան բյուզանդական բանակում և փառաբանվեցին իրենց ռազմական քաջագործություններով>>²:

Մ. արք. Օրմանյանը ևս, իր աշխատության մեջ հղելով Գ. Ասլանին, որպես փոքրասիական արևմուտքի գաղթօջախ նշում է VI դ. Բերգամայի (Պերգամոն) հայ համայնքի գոյացումը: Պարսիկների թագավոր խոսրովը, գրում է նա, <<ծերացած ու յոզնած, ուզեց խաղաղութիւն հաստատել՝ Յոյներէն պահանջելով իրեն յանձնել փախստական հայ

¹ Բարթիկյան Հ., Բյուզանդական հետազոտություններ, հ. 1, էջ 501, 509-510, 572-573: Նույնի <<Բյուզանդիա>>, Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, էջ 12-17: Նույնի Հայ-բյուզանդական հարաբերություններ, հ. 3:

² Kevork Aslan. Etudes historiques sur le peuple Armenien, p. 264.

նախարարները: Բիզանդիոն չհաւանեցաւ եւ Պերգամա քաղաքը յատուկ հայկական գաղութ մը կազմուեցաւ, ուսկից նշանաւոր զօրավարներ եւ կայսրներ ալ ելան>>³:

Գ. Ասլանին և Մ. Օրմանյանին հղում անելով՝ Ա. Ալպոյաճյանն անդրադառնում է այս իրողությանը, սակայն, որոշակիորեն հայտնելով դրա ժամանակը՝ 577 թ., երբ Վարդանը Բյուզանդիոնում էր ապաստանել իր ընտանիքով և բանակով, <<իբեն հետ ունենալով շատ մը նախարարներ ու եկեղեցականներ, որոնք հաստատուեցան մասնաւորապէս Անատոլիոյ արեւմտեան ծայրը՝ Պերկամա, ուր կազմեցին հայկական գաղութ մը...>>⁴:

Յավոք, ոչ Գևորգ Ասլանը, ոչ Մ. Օրմանյանն այս դեպքում չեն նշել իրենց սկզբնաղբյուրը, թէն 570-ականի վերջերի իրադարձությունները վերաբրտադրելիս Մ. Օրմանյանը վկայակոչում է Սեբեոսին և Ասողիկին:

Արևմտյան հետազոտողներից հայագետ Հ. Գելցերը Բերգամայում հայության ներկայությունը սկսում է VII դարից՝ արաբական արշավանքների ժամանակաշրջանից, որ պատճառ դարձավ Հայաստանից ազգաբնակչության մի հատվածի՝ Բյուզանդիա գաղթելու համար: Այս հեղինակը նշում է, որ Պերգամոնում էր հաստատված հայազգի Նիկեփորոս պատրիկի գարմը՝ զինվորական ազնվականության դասից, և որ նրա որդին՝ Վարդան-Փիլիպիկոսը հռչակվել էր բյուզանդական կայսր (711-713 թթ.)⁵: Վ. Միքայելյանը նկատում է, որ <<Բյուզանդիայի փոքրասիական շրջանները հայերի կատարած տեղաշարժերը սկիզբ առնելով VII դարից, VIII-IX և հատկապես X-XI դարերում մեծ ծավալներ են ընդունում>>⁶: Հ. Բարթիկյանն իր հերթին գրում է, որ բյուզանդական Թրակեսիոն բանակաթեմի Պերգամոն քաղաքում հայկական համայնք էր կազմվել հավանաբար VII դ., քանի որ այն կար VIII դ. սկզբին, և այնտեղից էր սերում այդ հայազգի կայսրը⁷:

Էգեյանի առափնյա տարածքներում հայ հանրությունների ներկայության հարցում կարևոր գործոն է բյուզանդացիների կողմից թոնդ-

³ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 668:

⁴ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, էջ 178:

⁵ Գելցեր Հ., Հայ հասարակութիւնն ի Պերգամոն և պերգամացի կայսերական գահին վրայ, էջ 226-227:

⁶ Միքայելյան Վ., Դրիմահայոց պատմություն, էջ 6:

⁷ Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, էջ 75:

րակեցի աղանդավորներին Հայաստանից բռնագաղթեցնելու իրողությունը⁸:

Հ. Բարթիկյանի հրատարակած՝ Ջմյունիայի և նրա շրջակայքի հայերին վերաբերող բյուզանդական վավերագրերում բազմաթիվ տեղեկություններ են տրվում XII-XIV դդ. Ջմյունիայի և Էգեյանի առափնյակի հայերի տնտեսական, պաշտոնական և այլ գործառույթների վերաբերյալ, որից նա հանգում է այն հիմնավոր եզրակացությանը, որ դրանց բովանդակությունը <<փաստում է այս կամ այն տարածքում (փոքրասիական արևմուտքի-Ա.Խ.) հայկական կոմպակտ բնակչության առկայությունը>>⁹: Շատ ուշագրավ է, որ Եփեսոսին (Ջմյունիայի մերձակայքում) կից Պրինե քաղաքի հայ համայնքի առկայությունը ևս հաստատում են հույն հետազոտող Պ. Չարանիսը, ինչպես և Հ. Բարթիկյանը¹⁰: Առաջինը նշում է, որ XIII դ. հայտնի են հայկական երկու գաղութներ փոքրասիական արևմուտքում, մեկը՝ Ջմյունիայի մոտ, մյուսը՝ Աբիդոսի շրջակայքում՝ Սկամանդերի գետահովտում, նկատելով, որ այդ գաղութների ծագման մասին որոշակի ոչինչ հայտնի չէ, Չարանիսը կարծում է, որ ավելի հին կարող էր լինել Ջմյունիային մոտ գտնվող գաղութը, հավանաբար կազմավորված հարևան Պրինեի հայկական գաղութից, որը գոյություն ուներ X դարում¹¹:

Նշված հեղինակներն առանձնացնում են հայկական գաղութների սոցիալական խավերին, Հ. Գելցերը և Պ. Չարանիսը՝ զինվորականությանը, իսկ Հ. Բարթիկյանը առավել հստակ՝ զինվորականությանն ու արիստոկրատիային, և ապա՝ հասարակ ժողովրդին: Բայց այստեղ կարևոր է նաև մեկ այլ հանգամանք՝ արդյոք հայկական այս համայնքները, թեկուզ X-XIII դդ. կտրվածքով, պահպանել էին իրենց միաբնակ դավանանքը կամ այլ կերպ ասած՝ ազգային ինքնությունը, թե բյուզանդական ճնշումներին տեղի տալով՝ դարձել էին քաղկեդոնականներ: Կարելի է կարծել, որ փոքրասիական արևմուտքում հայ համայնքների մեծամասնությունը կայսրության հետ համագործակցելով իբրև սահմանապահ ռազմական ուժ, և ի տրիտուր դրա, պահպանել էր իր դավանական անկախությունը: XII դ. առկա է փոքրասիական

⁸ Նույն տեղում, էջ 74:

⁹ Նույն տեղում, էջ 161:

¹⁰ Charanis P. The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963, p. 54. Բարթիկյան Հ., նշվ. աշխ., էջ 76:

¹¹ Charanis P., նշվ. աշխ., էջ 54:

այս տարածքների եկեղեցական-վարչական ճանաչումը Կիլիկիայի կաթողիկոսական աթոռի կողմից: Հայտնի է, որ 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովի մասնակից՝ երեք տասնյակից ավելի եպիսկոպոսների մեջ հիշվում է **Սարգիս եպիսկոպոս Լատդիկեայ**¹²: Մ. Օրմանյանը վերջինիս դասում է <<Կիլիկիոյ հետ մօտէն յարաբերութիւն ունեցող>> տասնհինգ եպիսկոպոսների շարքում¹³:

Նիկիական պետության տնտեսության մեջ հայ վաճառականները, այդ թվում և զմյուռնահայ վաճառականները, գերաճել էին զուտ տեղական նշանակությունից և ճանաչված մասնակից էին միջազգային առևտրում: Ա. Ալպոյաճյանը գրում է, որ Միքայել Պալեոլոգ կայսեր և Նիկիայի դաշնակից Ջենովայի վաճառականների միջև 1261 թ. մարտի 13-ին կնքված Նիմփեյան դաշնագրում հիշվում են նաև հայ առևտրականներ¹⁴: Նույն պայմանագրով Ջենովայի վաճառականներն առևտրական արտոնյալ պայմաններ էին ստանում Նիկիայի փոքրասիական տարածքներում և ամրապնդում իրենց ներկայությունն այդտեղ: Զմյուռնիայում նրանց տրվում էր առևտրական կայան հիմնելու իրավունք¹⁵, որտեղ գործում էին նրանց առևտրական դաշնակից հայ վաճառականները: Հետաքրքիր է, որ Միջերկրածովյան ավազանում իրենց տրված արտոնությունների դիմաց Ջենովան պարտավորվում էր իր նավատորմով սատարել Նիկիային՝ ընդդեմ նրա հակառակորդների, բացառությամբ Հայաստանի (նկատի էր առնվում Կիլիկիան), Կիպրոսի և Ախեյի¹⁶:

XIV դ. սկզբներին փոքրասիական արևմուտքի առափնյա տարածքները, բացի Զմյուռնիայից (ջենովացիների ներկայության շնորհիվ) և Էլի մի քանի շրջաններից, ենթարկվեցին թուրքական բեյությունների տիրապետությանը. 1317 թ. թուրքական ուժերը գրավեցին Զմյուռնիայի միջնաբերդը, իսկ 1329 թ. ամբողջ քաղաքն ընկավ Այդընօղլու Ումար բեյի իշխանության տակ¹⁷: Ոչ Բյուզանդիան, և ոչ էլ Ջենովայի հանրապետությունն ի վիճակի չէին դիմակայելու էմիրությունների

¹² Տես Ընդհանրական թուղթ Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, էջ 199:

¹³ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1718: Տես նաև Աճառյան Հ., Հայ գաղթականությունը պատմություն, էջ 549-550:

¹⁴ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, էջ 530-531:

¹⁵ Горянов Б. Поздневизантийский феодализм, с. 94.

¹⁶ Успенский Ф. И. История Византийской империи, с. 615.

¹⁷ Жуков К. А. Эгейские эмираты, с. 26-28.

հարաճուն ճնշմանը տարածաշրջանում, և միակը, որ կարող էր անել Բյուզանդիան, այդ փոխնիփոխ դաշնակիցներ որոնելն էր՝ ի դեմս այդ նույն Էմիրությունների և իտալական հանրապետությունների, նրանց հետ ունեցած անկայուն փոխհարաբերություններում:

Էգեյանի առափնյա հայ գաղթօջախները հարասնեցին օսմանյան գրավումներից՝ XV դ. առաջին քառորդից հետո ևս, սակայն այս ժամանակից մինչև XVII դ. սկզբները դրանց համայնքային կյանքի վերաբերյալ տեղեկություններ գրեթե չունենք: Մի շարք հեղինակներ, սկսած Բ. Սլարսից և նրա հետևությամբ Հ. Քոսյանից, որոնց կանդրադառնանք քիչ անց, կարծում են, որ հայ գաղթականները Զմյուռնիայում և կից շրջաններում հայտնվել են Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո՝ XIV դ. վերջին քառորդին: Ըստ երևույթին, այս տեսակետի հիմք է ծառայել Մ. Չամչյանի այն տեղեկությունը, ըստ որի, Կիլիկիայում պետականության կորստից հետո հայ ազգաբնակչությունից <<բազումք և վաղագոյն աճապարեալ խոյս ետուն յաշխարհս հեռաւոր ի կողմանս Փոքուն և Մեծին Հայոց և երկիրն Վրաց և Աղուանից և ի սահմանս Յունաց և Պարսից ևս և ի կղզիս և ցրուեցան յայլևայլ թագաւորութիւնս քրիստոնէից...>>¹⁸:

Բավականաչափ ընդհանուր այս տեղեկության մեջ Էգեյանի առափնյակի վրա այս տեղաշարժը մասնավորեցնելու հիմքերը, կարծում ենք, ակնհայտ չեն: Լավագույն դեպքում, թերևս, կարող ենք նկատի առնել ընդամենը գաղթի հավանականությունը և ոչ ավելին:

Օսմանյան տիրապետության շրջանում փոքրասիական արևմուտքն ընդլայնելու էր իր կապերն ու հարաբերությունները եվրոպական երկրների հետ, որ սելջուկների, ապա բեյությունների ժամանակներում ամփոփվում էին գլխավորապես իտալական քաղաքների (Ջենովա, Վենետիկ) հետ ունեցած առնչություններում (XI-XIV դդ.): XVI դ. վերջերին և XVII դ. առաջին կեսին միջերկրածովյան ավազանում լեվանտական առևտրի ընդարձակումն ի հայտ էր բերում այս նոր երևույթը խթանող փոքրասիական հումքի արտահանման ծավալների մեծացումը, որն իր հերթին զարգացման ազդակներ էր ստանում առևտրատնտեսական նորաստեղծ աշխարհագրության պայմաններում: Փոքրասիական առևտրի կենտրոնն այս ժամանակներում պետք է դառ-

¹⁸ Չամչեան Մ., Պատմություն հայոց, հ. Գ, էջ 359:

նար Զմյոռնիան, որի նշանակությունը XVII դ. առաջին կեսին որակապես բարելավվեց և Օսմանյան Թուրքիայի տնտեսական հանգրվաններում, և արտաքին՝ միջազգային առևտրական ուղիներում՝ ընդարձակելով իր նավահանգստային կարողությունները:

XVII դ. երկրորդ քառորդին Զմյոռնիան Արևմտյան Անատոլիայի քաղաքների մեջ շահեկանորեն առանձնանում էր առևտրի ծավալների, ինչպես և արտադրական կարողությունների աճով, որին նպաստեցին նախընթաց ժողովրդագրական տեղաշարժերը: Զալալիների հուզումները Էգեյանի այս հատվածում, գաղթերը, այդ թվում և Արևելյան Հայաստանից, պարսկաթուրքական պատերազմների հետևանքով (XVI դ. վերջեր- XVII դ. առաջին տասնամյակներ), հույն, հայ և հրեա ազգաբնակչության կենտրոնացումը Զմյոռնիայում (հայերը՝ նաև շրջակայքում), իրենց ազդեցությունն էին թողնում Էգեյանի առափնյակի տնտեսական իրողությունների վրա: XVII դ. 50-60-ական թթ. նկատելի են նաև առափնյակի քաղաքների արտադրական ու առևտրական խավերի ներհոսն ու կենտրոնացումը Զմյոռնիայում՝ ի հաշիվ Մանիսայի, Քուշադայի, Այդընի, Էդդեմիշի և այլ քաղաքներից տասնամյակներ ի վեր շարունակվող այդ գործընթացի: Արևմտյան ուսումնասիրողներից Դ. Գոֆմանը, փաստականորեն հիմնավորելով Զմյոռնիայի առևտրատնտեսական շահեկանությունն ու հրապույրը Էգեյանի այս տարածաշրջանային փոփոխությունների մեջ, իբրև գործոն, նշում է նաև այդ նավահանգստի հարկերի թեթևությունը¹⁹, որն իր հերթին կապվում էր միջազգային առևտրում այդ նավահանգստի դերի կտրուկ բարձրացման հետ: Հայերի՝ դեպի Զմյոռնիա տանող ավելի քան երկդարյա շարժը, սակայն, պայմանավորված էր առափնյակի հայկական համայնքներում արհեստագործական արտադրանքի (և առաջին հերթին՝ ջուլհակագործության) բարձր պահանջարկի և հատկապես պարսկական հում մետաքսի միջազգային առևտրում նրանց ավանդականորեն առաջատար տեղի ամրապնդմամբ:

Զմյոռնիայի և Էգեյանի այս հատվածի մյուս հայ համայնքների վերաբերյալ կան տարալեզու բազմաթիվ, մասնավորապես հայերեն

¹⁹ Goffman D. Izmir and the Levantine World 1550-1650, p. 84. Այս հեղինակը Զմյոռնիայի տնտեսական նոր կարգավիճակի ամրագրումը սկսում է 1620-ական թվականներից՝ Զմյոռնիա անցած հույների, հրեաների և հայերի օրինակով՝ վերջիններիս մեջ որոշակիորեն առանձնացնելով արհեստավորներին ու առևտրականներին (նույն տեղում, էջ 85):

սկզբնաղբյուրներ: Դրանք առաջին հերթին XVII-XVIII դդ. ձեռագիր հիշատակարաններն ու այլ վավերագրերն են, որոնց մի նշանակալի մասը պահվում է Երևանի Մաշտոցի անվ. Մատենադարանի տարբեր ֆոնդերում, և որոնց բավական զգալի մասը հրապարակումների ձևով ներկայացվել է դեռևս XIX դ. պարբերական մամուլում և հատկապես համակարգված՝ շարունակում է հրապարակվել մեր օրերում:

Զմյուռնիայի և տարածաշրջանի հայկական համայնքների վաղ շրջանի (XII-XIV դդ.) պատմության, տնտեսական հարաբերությունների և բյուզանդական (նաև՝ Նիկիական) կայսրությունում հայերի զբաղեցրած դիրքի ու կենցաղային առօրյայի վերհանման տեսակետից բացառիկ կարևորություն ունեն Հ. Բարթիկյանի կողմից շրջանառության մեջ դրված և արժեքավորված բյուզանդական սկզբնաղբյուրները, որոնք ընդլայնում են մեր պատկերացումները Փոքրասիական թերակղզու արևմուտքի հայկական համայնքների (Հ. Բարթիկյանի ձևակերպումն է) մասին:

Սույն հետազոտության առարկային են առնչվում բազմաթիվ արխիվային այլ վավերագրեր, հիշատակարաններ, փաստաթղթեր, ձեռագիր մատյաններ և այլն, որոնք հրապարակվել են մի շարք տպագիր աշխատություններում: Դրանք վերաբերում են Էգեյանի առափնյա համայնքների պատմությանն ու դրան աղերսվող՝ գաղթօջախների իրավական, կրոնական-դավանական, տնտեսական ու հոգևոր կացությանն ու հարաբերություններին: Այստեղ պետք է առանձնացնել Զմյուռնիայի, Մանիսայի, Այդընի և Էոդեմիշի եկեղեցիներում ու Ազգային ընթերցարաններում անցյալում պահված ձեռագրերի ցուցակները, որոնք ժամանակին գրառել է Տ. եպ. Պայյանը և մեր օրերում հոգածությամբ գիտական մշակման ենթարկվել ու հրատարակության պատրաստվել՝ այդ երախտավորի կենսամատենագիտությամբ հանդերձ²⁰:

Հայերեն սկզբնաղբյուրների կողքին իրենց անգնահատելի ճանաչողական արժեքն են պահպանում օսմանյան տարբեր դարաշրջանների ռուսերեն թարգմանված վավերագրերը²¹:

²⁰ Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, Ե., 2002:

²¹ Аграрный строй Османской империи XV-XVII вв. Документы и материалы. В частности см. Законоположение ливы Айдын, там же, с. 44-55. Книга законов султана Селима I. М., 1969. Армяно-русские отношения в XVII веке. Сб. доку-

Զմյուռնիայի և Մանիսայի հայկական համայնքների վերաբերյալ եզակի նշանակություն ունի Միմեոն Լեհացու ուղեգրությունը, որպես խնդրո առարկա թեմային առնչվող հնագույն շարադրանքներից մեկը (XVII դ. սկզբներ), որ ընդգրկում է նաև այդ համայնքների կենսագործունեությունը: Եվ Մանիսայում, և Զմյուռնիայում նրա հիշատակած հայկական երկու թաղերը (իրենց առանձին՝ երկուական եկեղեցիներով), ցույց են տալիս, որ այդ քաղաքներում առնվազն XVI դ. արդեն կար բավական մարդաշատ հայ բնակչություն²²:

Զմյուռնիայի և մյուս գաղթօջախների պատմության մի շարք կարևոր կողմեր վերարտադրվում են Միմեոն Լեհացուն հետևող մյուս հայ հեղինակների՝ սկզբնաղբյուրային արժեք ունեցող գործերում: Նկատի ունենք XVII դ. այս տարածաշրջանի հայկական համայնքներին անդրադարձած Գրիգոր Կամախեցուն (Դարանաղցի), Զաքարիա Ագուլեցուն, Զաքարիա Սարկավազին և Առաքել Դավրիժեցուն, որոնց գործերում լույս է սփռվում գաղթօջախների հանրային, տնտեսական կյանքի, գաղթերի շարժառիթների, ժողովրդագրական տեղաշարժերի, անգամ բնական ու տարերային իրողությունների վրա²³: Սկզբնաղբյուր հանդիսացող այս հեղինակներին հետևող շարքում հարկ է առանձնացնել XVIII դ. երկրորդ կեսից հայտնի Միմեոն կաթողիկոս Երևանցու հայտնի աշխատությունը²⁴, որ բացառիկ կարևոր տեղեկություններ է տալիս իր դարաշրջանի և դրան նախորդող Էջմիածնի կաթողիկոսության և Օսմանյան պետության փոխհարաբերությունների, Էջմիածնի և փոքրասիական արևմուտքի գաղթօջախների սերտ առնչությունների մասին:

Սկզբնաղբյուրների մեջ առանձին որակ են կազմում տեղեկատվական և ճանաչողական հավաստիություն պարունակող ուղեգրական և հուշագրական մի շարք նյութեր՝ գրված եվրոպացի հեղինակների կողմից: Դրանք միշտ չէ, որ հաղորդում են ստույգ, անգամ ճշմար-

ментов. Е., 1953. Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб. документов, т. II, ч. I, Е., 1964, т. II, ч. II, Е., 1967. Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Е., 1990.

²² Միմեոն դարի Լեհացույ Ուղեգրութիւն, Վիեննա, 1936:

²³ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցույ կամ Դարանաղցույ, Երուսաղէմ, 1915: Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, Ե., 1938: Զաքարիա Սարկավազի պատմագրութիւն, հ. 1-2, Վաղարշապատ, 1870: Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, Ամսրեյօղամ, 1669:

²⁴ Միմեոն կաթողիկոս, Զամբո գիրք որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873:

տությանը ոչ այնքան մոտ տեղեկություններ, հատկապես երբ խոսքը վերաբերում է ուղեգրությունների հեղինակների համար գայթակղության քար դարձած վիճակագրական տվյալների արժանահավատությանը: Այս կարգի հրապարակումներում հանդիպում են նաև փաստերի ու իրողությունների անփույթ կրկնություններ, ոչ իրազեկ աղբյուրներից վերցրած տվյալներ, որոնք չեն նպաստում այս շարադրանքների ինքնատիպությանը և ստուգությանը: Սակայն դրանից անկախ, այս ժանրի նոթերը աչքի են ընկնում ամենատարբեր թեմաների վերաբերյալ հարուստ, անգամ անսպասելի տեղեկատվությամբ շարադրանքին տալով կենսականություն և ճանաչողական անուրանալի արժեք: Ուղեգիրների մեջ իրենց հուսալիությամբ և գիտաճանաչողական հատկություններով շահեկանորեն առանձնանում են XVII-XVIII դդ. ֆրանսիացի և անգլիացի հեղինակները:

Զմյուռնիայի և մասամբ փոքրասիական արևմուտքի հայկական գաղթօջախների բուն պատմությունը, բնականաբար, քննարկվում է հայկական մեծածավալ գրականության և համապատասխան այլ նյութերում: XVIII դ. վերջին քառորդի հայ պատմագիտությունը, հատկապես Մ. Չամչյանի և Ղ. Ինձիճյանի աշխատությունների շնորհիվ, առնչվելով մեզ հետաքրքրող հիմնահարցերին, փաստորեն նախապատրաստեց դրանց առանձին հետազոտության խնդիրը: Դրան ընդհուպ մոտեցավ հայ պատմագիտության մյուս երախտավորը՝ արդեն XIX դ., **Ղ. Ալիշանը**, որի աշխատություններում Զմյուռնիայի և կից շրջանների հայ բնակչությունն ուրվագծվում է առավել ցայտուն իրողությունների մեջ, գաղթավայրերի պատմաաշխարհագրական բնութագրերով, համայնքների ժողովրդագրական կացությամբ, իրենց թվական որակներով, զբաղմունքով և կրթական-լուսավորական վիճակով: Այս ամենին և այս աշխատության առարկայի հետ կապվող բազմաթիվ այլ անդրադարձների (պատմական տեղեկություններ, գաղթեր, պատմական հայրենիքի տեղանուններ) շնորհիվ Ալիշանին պետք է համարել Զմյուռնիայի և Էգեյանի այս շրջանների հայ գաղթավայրերի գիտական հետազոտության ռահվիրան: Ալիշանն առաջինն էր, որ հետազոտության հատուկ առարկա դարձրեց 1850-ականի սկզբներին և դրանից առաջ Այդընի վիլայեթի մեջ մտնող Զմյուռնիայի, Քուշադայի (Սկալա Նովա), Սարուխանի, Դենիզլիի և Մենթեշեի գա-

վառների հայ բնակչության կյանքն ու կենցաղը: Ալիշանը ամփոփ, բայց տարողունակ տեղեկություններ է տվել նաև Բերգամայի (Պերգամոն), Մանիսայի, Այդընի, Այասլուքի, Քասաբայի, Ալաշեհիրի (Փիլահելփիա), Աքիսարի, Էդդեմիշի և այլ գաղթօջախների, նրանց թվաքանակի, կացության ու զբաղմունքի, կրոնական ու մշակութային կառույցների մասին²⁵: Առ այսօր իրենց հրատապությունն են պահպանել Ալիշանի հաղորդած տեղեկություններն ու պատմական պյուժների վերաբրտադրությունները Ջմյունիայի և Էգեյանի առափնյակի տարադավան ազգերի կենցաղի, դպրոցների, եկեղեցիների, բնակչության տարբեր խավերի փոխհարաբերությունների և առևտրական ապրանքացանկերի մասին: Ալիշանի <<Քաղաքական աշխարհագրություն>> աշխատությունը, կարծում ենք, հույժ կարևոր արժեք ունի խնդրո առարկա տարածաշրջանի ոչ միայն հայ բնակչության, այլև հույների, հրեաների և մահմեդական ազգաբնակչության՝ այն ժամանակվա պատմական ու սոցիոլոգիական պատկերի գիտական ուսումնասիրության համար և իր արժանիքներով դուրս է գալիս ազգային սեղմ շրջանակներից: Այս աշխատության մեջ Ալիշանը Էգեյանի արևմուտքի գաղթօջախների պատմության իր անդրադարձները սկսում է XIV դարից՝ առաջ քաշելով առհասարակ փոքրասիական տարածքներից և հատկապես Կիլիկիայից հետագա դարերում գաղթականության՝ դեպի Վենետիկ շարժերի խնդիրը²⁶: Ջմյունիայի և կից քաղաքների ու բնակավայրերի գաղթականության գերեզմանաքարերին պահպանված հայրենի գյուղերի հիշատակումները սերտորեն կապվում են Ալիշանի մյուս՝ Սյունիքի տեղագրությանը վերաբերող աշխատությանը²⁷, որ հնարավորություն է տալիս ավելի որոշակի դարձնելու այդտեղից գաղթերի աշխարհագրությունն ու ժամանակը հատկապես XVII և XVIII դարերում:

Նկարագրական ու փաստական հարուստ նյութերով է հագեցած **Հ. Դիմաքսյանի** աշխատությունը²⁸՝ գրված ճանաչողական որոշակի նպատակով, որ ամուր հիմք պետք է դառնար հետազայում այս թեմայով գրված ուսումնասիրությունների համար: Այն պետք է համարել ա-

²⁵ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրություն, Վենետիկ, 1853:

²⁶ Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ԺԳ դ. եւ ի ԺԵ-Ձ դարու, Վենետիկ, 1896:

²⁷ Ալիշան Ղ., Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:

²⁸ Դիմաքսեան Հ., Շիր մ'անունք ի Միջերկրականէ, Կ. Պոլիս, 1878:

ռաջին ամփոփ գործը՝ նվիրված Էգեյանի այս հատվածի գաղթօջախների ոչ միայն պատմությանը, այլև հիմնականում XIX դ. 70-ական թթ. ազգային ու հանրային կյանքին: Իր աշխատությունը Հ. Դիմաքսյանը գրել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես արք. Վարժապետյանի հանձնարարականով (1876 թ. հուլիս): Նրա տեղեկագրությունը պետք է նպաստեր տարածաշրջանի հայության վերաբերյալ այն անհրաժեշտ նյութերի կուտակմանը, որ պատրիարքի մտահղացմամբ օգտագործվելու էին Հայկական հարցի արծարծման նպատակով: Հ. Դիմաքսյանն իր երթուղին սկսում է Պանտրմայով և ավարտում գաղթավայրերից ամենամեծի՝ Ջմյուռնիայի և կից շրջանների նկարագրությամբ: Մենք անգնահատելի տեղեկություններ ենք ստանում Քասաբայի (Գիրմաստ), Քրքաղաչի, Գնըքի, Բերգամայի, Մանիսայի և Ջմյուռնիայի համայնքների վերաբերյալ: Հ. Դիմաքսյանն իր նպատակադրման համեմատ, ուշադրություն է դարձրել տարածաշրջանի վարչական բաժանումներին, հաճախ՝ գաղթօջախների գոյացման ժամանակին (թեև ոչ միշտ հավաստի), գավառական կենտրոնների շրջակա գյուղերին, հայ բնակչության այլազգի դրացիներին, համայնքների եկեղեցիներին, դպրոցներին, դրանց եկամուտներին, սահմանադրական վարչությանը և այլն: Չնայած իր որոշ թերություններին կամ բացթողումներին (ոչ բոլոր գաղթօջախներն են ներկայացված)²⁹, ինչինչ հակասություններին կամ սեփական առարկույների համոզությանը, Հ. Դիմաքսյանի գործն իր խոշոր ավանդն է բերում այս գաղթօջախների պատմության ուսումնասիրությանը և ունի սկզբնաղբյուրի անհերքելի առավելություններ:

Էգեյանի ծովեզրի գաղթօջախները պատմաաշխարհագրական և վիճակագրական որոշակի սկզբունքներով են ներկայացված **Մակար վարդ. Բարխուտարյանի** շատ արժեքավոր աշխատության մեջ³⁰: Այս

²⁹ Ի վերջո, Հ. Դիմաքսյանը գիտական աշխատություն չի գրել, որպեսզի ընդգրկեր Էգեյանի առափնյակի բոլոր գաղթօջախները. նա կատարում է որոշակի ծրագիր՝ համապատասխան երթուղով և ամփոփվում է հենց այդ շրջանակներում: Մրանով պետք է բացատրել այդ երախտավորի նկարագրած գաղթօջախների ոչ լրիվ ցանկը, որի վերաբերյալ բավական թափանցիկ ակնարկում է իր ուսումնասիրության վերնագիրը՝ «<Շիթ մ'անունք...>»:

³⁰ Տես Մ. Բարխուտարյանի անստորագիր ուսումնասիրությունը՝ «<Վիճակագրություն>> վերնագրով, Արեւելան մամուլ ամսագրի՝ 1879 թ. հունվար-մարտ թվահամարներում:

աշխատությունը հանիրավի, գրեթե դուրս է մնացել հետազայի պատմաբանների գնահատող ուշադրությունից, թեև միաժամանակ և ոչ քիչ դեպքերում, օգտագործվել է այդ նույն պատմաբաններից շատերի, այդ թվում և Հ. Քոսյանի հանրահայտ ուսումնասիրության մեջ: Մ. վարդ. Բարխուտարյանի աշխատությունը համառոտ, բայց փաստառատ ու խմբավորված լրատվություն է առկա Ջմյունիայի շրջանակի մեջ մտնող մեկ տասնյակից ավելի համայնքների (Գնըք, Մանիսա, Քասաբա, Սալեհլի, Ալաշեհիր, Դենիզլի, Նազիլի, Այդըն, Էռդեմիշ և այլն) մասին: Մակար վարդապետը հանգամանալի տեղեկություններ է տալիս այս բնակավայրերի աշխարհագրական, բնակլիմայական պայմանների մասին, նշում համայնքների բնակչության թվաքանակը (սեռատարիքային բաժանմամբ), զբաղմունքը, կրթական վիճակը, եկեղեցիները, դպրոցները: Կարելի է ավստոսալ միայն, որ այս հեղինակը չի անդրադարձել խոշոր համայնքներին (Ջմյունիա, Այդըն և այլն) կից հայաբնակ գյուղերին, ինչն, առ այսօր գրեթե ամբողջովին դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Մ. վարդ. Բարխուտարյանը, այսուհանդերձ, նշում է մեկ-երկու այդպիսի գյուղական բնակավայրեր (Սալեհլի, Ազիզիյե)³¹, որոնք ոչ թե գաղթերի, այլ շատ ավելի ուշ ժամանակաշրջանի տնտեսական իրողությունների հետևանք էին:

Ջմյունահայ հանրային և մշակութային իրականության, ազգային հաստատությունների ու գործիչների մասին ուշագրավ տեղեկատվություն է փոխանցում **Աբրահամ Այվազյանի** <<Շար հայ կենսագրութեանց>> վերտառությամբ աշխատությունը³²: Այսուհանդերձ, այս հեղինակի տվյալներին ու փաստերին պետք է մոտենալ զգուշությամբ, անգամ որոշակի վերապահումներով ու առարկություններով: Իր շարադրանքում նա իրար է խառնել ավանդական պատումները, իրականն ու հավանականը, ընդամին չվկայակոչելով ոչ մի աղբյուր կամ հեղինակի: Ջմյունիայի հայ համայնքի գոյացման հարցում նա առաջնորդվում է տեղական պատրիոսիզմի մտայնությամբ՝ որքան հնարա-

³¹ Սալեհլին գտնվում էր պատմական Սարդիկեի ավերակների մոտ և գոյացել էր Ջմյունիա-Այդըն երկաթուղու շինարարության ժամանակ (տես Վիճակագրութիւն, Արեւելեան մամուլ, 1879, փետրվար, էջ 396), իբրև մշեցի և այլ բանվորների օթևանատեղի: Մյուսը՝ Ազիզիյեն կամ Ենի գյուղը, Քուշադայից ոչ հեռու, իր գոյության համար նույնպես պարտական էր այդ երկաթուղաշինությանը (նույն տեղում, 1879, մարտ, էջ 438):

³² Տես Այվազեան Ա., Շար հայ կենսագրութեանց, հ. 3, Կ. Պոլիս, 1893:

վոր է, դարերի խորքերը տանել գաղթօջախի պատմությունը: Զմյուռնահայ գաղթօջախի պատմությունը նա փաստորեն տանում է VII-IX դարեր՝ որպես փաստարկ, հիշելով ինչ-որ տապանաքարեր³³: Բայց թե ինչ տապանաքարեր են դրանք, որտեղ են գտնվել, արդյոք ինքը տեսել է կամ լսել դրանց մասին՝ այս հեղինակը որևէ բացատրություն չի տալիս: Փոխարենը, նա արժանահավատ է, երբ հայտնում է, որ ինքն անձամբ տեսել է 1567, 1636 և 1756 թթ. շիրմաքարեր, որոնք գտնվելիս են եղել զմյուռնահայերի հին գերեզմանատանը և հետագայում փոխադրվել Ս. Ստեփանոս եկեղեցուն կից պարտեզ³⁴: Այդ շիրմաքարերի առկայությունը հաստատվում է Հ. Քոսյանի կողմից շրջանառության մեջ դրված համապատասխան դամբանագրերով:

Զմյուռնահայ գաղթօջախի ազգային վարչության, առևտրական ու մտավոր նշանավոր գործիչների և գերդաստանների ծագումնաբանության վերաբերյալ հարուստ լրատվություն է տրվում նույն հեղինակի՝ Կ. Պոլսի թերթերում տպագրված հոդվածներում³⁵: Դրանցում բավական ուշագրավ տեղեկություններ են տրվում զմյուռնաբնակ Ապրոյանների, Նուպարյանների, Պապոյանների, Էքիզյանների, Մելիքսեյունյանների և այլոց ծագման, նրանց ազգանվեր գործերի, բարեսիրական ջանքերի և այլնի մասին:

Սրա հետ միասին, հարկ է նշել Ս. Այվազյանի անփութությունն իր հաղորդումների նկատմամբ. հավանաբար, նրան ենք պարտական Զմյուռնիայի հնագույն եկեղեցու՝ Հովակիմ-Աննա հորջորջման համար³⁶: Նույն ոճով նա շրջանառության մեջ է մտցնում Զմյուռնիայի եկեղեցու՝ Ս. Թադեոս և Ս. Բարթոլիմեոս մտացածին անունը³⁷:

Պետք է ասել, սակայն, որ Ս. Այվազյանը ճշգրիտ փաստեր և իրողություններ էլ է արձանագրում, դարձյալ, հիմնականում առանց հղումների: Այսպես, նա ստույգ նշում է 1688 թ. երկրաշարժը և դրա հետևանքով Ս. Ստեփանոս եկեղեցու խոնարհումը, 1743 թ. նույն եկեղեցու նորոգումը՝ <<ծովեզերեայ Տերվիշ օղլու խանը բնակող>> կեսա-

³³ Նույն տեղում, էջ 126:

³⁴ Այվազյան Ա., Հոնիական հայ գաղութի նահապետներեն, Արեւելք, 1900, 21 օգոստ./3 սեպտ.:

³⁵ Այվազյան Ա., Նուպար փաշա, Բիւրակն, 1899, թիւ 13, էջ 195-197: Արեւելք, 1900, 21-26 օգոստոսի թվահամարները:

³⁶ Այվազյան Ա., Շար հայ կենսագրութեանց, էջ 126:

³⁷ Նույն տեղում, էջ 129:

րացի և եվդոկիացի հարուստ հայերի ձեռքով³⁸: Նա հավաստի և հետաքրքիր մանրամասներ է հայտնում նշանավոր Ֆիզիքա Պողոս Մելիքշահյանի (ծննդամբ՝ Քրքադաչից, Ս. Մեսրոպյան վարժարանի ուսուցիչ՝ 1800-ականի սկզբներին), 1845 թ. մեծ հրդեհի, Աբեյան-Գուլասայան կտակի, գմյունահայ մտավորականության և այլնի մասին: Ա. Այվազյանի կենսագրությունների շարքը, անշուշտ, լրացնում է գմյունահայ գաղթօջախի վերաբերյալ մեր պատկերացումները:

Զմյունիայի և Էգեյանի մյուս գաղթօջախների պատմությանը նվիրված ուսումնասիրությունների մեջ առ այսօր իր եզակի նշանակությունն է պահպանում Վիեննայի Մխիթարյան հայր **Հակոբ Քոսյանի** երկհատոր աշխատությունը³⁹: Իր հետազոտական լայն ընդգրկումների, շարադրման մշակված ու հետևողական սկզբունքների շնորհիվ այս աշխատությունը հիմք և հեղինակություն է դարձել խնդրո առարկա հիմնահարցի հետագա ուսումնասիրությունների համար: Հ. Քոսյանի աշխատությունն առանձնանում է Էգեյանի գաղթօջախների գույացման, գաղթերի ու գաղթականության սկզբնավորման ու շարունակվող պատմության վերաբերյալ հարուստ տեղեկատվության և դրանց առնչվող իրողությունների ամբողջականացման տեսակետից: Այս հեղինակն ըստ էության նշված գաղթօջախների պատմությունը սկսում է Կիլիկիայի հայկական թագավորության անկման ժամանակաշրջանից հետո, XIV դ. վերջին քառորդից, բնականաբար, ձեռքի տակ չունենալով փաստական տվյալներ այդ պատմությանը ավելի վաղ ժամանակներից անդրադառնալու համար: Այս հարցում նա հենվում է ֆրանսիացի Բ. Սլարսի աշխատության վրա⁴⁰, որը բավական զգալի ազդեցություն է թողել իր՝ Հ. Քոսյանի հետազոտական մոտեցումների վրա, հատկապես Զմյունիայի գաղթօջախի կազմավորման հարցում:

Հ. Քոսյանի աշխատության առաջին հատորն ամբողջապես նվիրված է տարածաշրջանի ամենամեծ և մշակութային պատկառելի արժեք ունեցող Զմյունիայի գաղթօջախին, երկրորդ հատորը՝ մյուս գաղթօջախներին՝ Դենիզլի, Մանիսա, Էոդեմիշ, Նազիլի, Այդըն և այլն, որոնց թիվը հասնում է մեկ տասնյակի: Հեղինակը սրանք ներկայացնում է որոշակի ուղղություններով՝ պատմությունն ու ներկա կացութ-

³⁸ Նույն տեղում:

³⁹ Քոսեան Յ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա-Բ, Վիեննա, 1899:

⁴⁰ Slars B. Etude sur Smyrne, Paris, 1868 (հղվում է ըստ Հ. Քոսյանի):

յունը Բացահայտող մոտեցումների հստակ կիրառմամբ՝ գաղթականների սերումը, գաղթի ժամանակը, ազգային տնտեսական ու հանրային կյանքը, զբաղմունքը, մշակույթը և այլն: Այսպիսի մոտեցման շնորհիվ այսօր ունենք Էգեյանի գաղթօջախների պատմական դիմագիծը՝ սկսած XIV դ. վերջին տասնամյակներից մինչև XIX դ. վերջերս ընկած ժամանակահատվածը:

Հ. Քոսյանի աշխատության մյուս կարևոր արժանիքը սկզբնաղբյուրային լայն հենքն է: Նա հիմնականում օգտագործել է երեք կարգի սկզբնաղբյուրներ, հիմնախնդիրը բացահայտելու տեսակետից անգնահատելի՝ շիրմաքարերի արձանագրություններ (տվյալ գաղթօջախի գերեզմանատնից), Զմյուռնիայի թեմի առաջնորդարանի դիվանատան արձանագրությունները և մասամբ եվրոպացի ճանապարհորդների նոթերը: Այս երեք խումբ սկզբնաղբյուրները հավաստիություն են հաղորդում Հ. Քոսյանի աշխատությանը: Այս գործի շնորհիվ է նաև, որ թեկուզ կցկտուր, այսօր մենք ինչ-ինչ պատկերացումներ ունենք Քրքաղաչի, Դենիզլիի և այլ, համեմատաբար խոշոր բնակավայրերին կից գյուղերի հայ բնակչության մասին: Հ. Քոսյանի գրքում ներկայացվում են նաև գաղթավայրերում բնակվող հարանվանությունները, հիմնականում հայ կաթոլիկները:

Հ. Քոսյանի աշխատությունն ունի նաև որոշ բացթողումներ, որոնց հիմնական պատճառը, կարծում ենք, այնուամենայնիվ, սկզբնաղբյուրների պակասն է, որ ընդհանրական է ոչ միայն իր, այլև XIX դ. երկրորդ կեսի-XX դ. սույն հիմնահարցով զբաղվող բոլոր ուսումնասիրողների համար: Այդ հեղինակներն Էգեյանի գաղթօջախների պատմությունը սկսում են առնվազն XIV դ. երկրորդ կեսից՝ հետևելով Բ. Սլարսի և Հ. Քոսյանի՝ կարծես ավանդության ղարձած մեկնակետին: Փաստական նյութի պակասը, որ այնուամենայնիվ իրեն զգացնել է տալիս, Հ. Քոսյանին մղում է ավանդական զրույցների, ծերերի մշուշոտ հիշողության վկայակոչմանը, որպիսիք ճշմարտությանը ոչ միշտ են համընկնում: Նույն պակասն է պատճառը, որ Հ. Քոսյանը թույլ է տալիս փաստական անճշտություններ և հակասություններ, երբեմն անտեսում է զմյուռնահայ համայնքի և իրականության առանձնահատկությունները՝ դրանց հետ կապված հարցերի լուսաբանման ընթացքում նմանակելով պոլսահայ համայնքի իրողությունները: Այսպես, նա կարծում է, որ արևմտահայերի Ազգային սահմանադրությունից առաջ զմյուռնահայ համայնքի վարչությունը գործում էր <<ամիրաներու իշխանու-

թեան ներքեւ^{41>>}, որ ճիշտ չէ: Ամիրաները զուտ պոլսական երևույթ են, որոնք գործել են Կ. Պոլսի հայ համայնքի և օսմանյան վերնախավի իրավական ու տնտեսական առնչությունների սահմաններում և որպիսիք ընդգրկել են պոլսահայ համայնքի առանձնահատկություններն ու ինքնությունը: Զմյուռնիայում, ինչպես և կից գաղթօջախներում ամիրաներ չեն եղել, որպեսզի կառավարեին համայնքի վարչությունը, ազգային գործերն այստեղ վարել են հարուստ և ազդեցիկ հայ վաճառականները՝ իրենց ավանդականորեն սահմանված կարգով, կարծում ենք, պատմականորեն շատ ավելի հին, քան օսմանյան տիրապետության հաստատումը տարածաշրջանում, X-XII դդ., կամ ավելի վաղ՝ այնտեղ գոյացած հայ համայնքների պատմության ընդերքում և հետագայում միանգամայն հարմարվելով օսմանյան մյութեվելիական կառավարման համակարգին:

Վերոհիշյալ աշխատությունից հետո Հ. Քոսյանը գրեց ևս երկու հոդված, որոնք լրացնում են իր գրքի բովանդակային կողմերը: Առաջինը վերաբերում է Այդընի, Նազիլի, Դենիզլի և կից մյուս գաղթօջախների կրթական ու կրոնադավանական հաստատությունների կազմակերպման խնդիրներին⁴²: Հոդվածում հետաքրքիր դրվագներ կան ոչ միայն տարածաշրջանում կաթոլիկ հայերի հոգևոր սպասարկման առումով, այլև Վիեննայի մխիթարյանների այն ջանքերի վերհանմամբ, որի շնորհիվ նրանք նպաստեցին այդ հայերի ազգային նկարագրի պահպանությանը: Այս նպատակով էր, որ մխիթարյանները 1840 թ. կողմերը Զմյուռնիայում հիմնեցին վանատուն՝ կազմակերպելով նրանց հոգևոր-պաշտամունքային գործերը: 1850 թ. հետո Այդընի առաքելությունը (հոգևոր գործերի վարչությունը, որի կենտրոնը Այդընում էր՝ այստեղ հայ կաթոլիկների թվաշատության պատճառով) հանձնվեց Վիեննայի մխիթարյաններին, որոնք տասնամյակներ շարունակ իրականացրին իրենց կարևոր աշխատանքը Էգեյանի շրջանի հայ կաթոլիկների մեջ ազգային ինքնագիտակցության արձարծման ասպարեզում:

Հ. Քոսյանի մյուս հոդվածն⁴³ ունի առավել քան աղբյուրագիտական արժեք՝ ընդգրկելով Այդընի հայ գաղթականության XVII դ. առաջին կեսի պատմությունը: 1899 թ. սեպտեմբերի 20-ի երկրաշարժից փլա-

⁴¹ Քոսեան Զ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 107:

⁴² Հ.Յ.Ք. [Հայր Յակոբ Քոսեան], Յիսնամեայ յոբէլեան հանդէս հաստատութեան վանատան Մխիթարեանց որ յԱյդըն, էջ 180-187:

⁴³ Հ.Յ.Ք. [Հայր Յակոբ Քոսեան], Ակնարկ մը հնութեան բեկորներու, էջ 277-279:

տակված Այդընի Ս. Աստվածածին եկեղեցու որմերի մեջ ի հայտ էին եկել հին գերեզմանաքարեր, որոնց մակագրերն արտագրել էր Հ. Քոսյանը: Այստեղ արժեքավոր են ՌՃ (1651) թվականը կրող <<Գմրեցի յակոբոսի որդի Մարգարի>> և ՌՃԲ (1653) թվագրված՝ <<ան տրեցի (հավանաբար՝ [բայ]անտրեցի) Առաքելի որդի Ոնայի>> դամբանագրերը, որոնք հուշում են Այդընի հայերի՝ 1620-ականի գաղթականության, այլև Սյունիքից գաղթելու մասին:

Նույն հողվածում Հ. Քոսյանը հրապարակեց հին Տրալեսի (Այդընի մոտ) ավերակներում գտնված՝ Մաղաքիա եպիսկոպոսի դամբանագիրը, որ չի բացառում նրա՝ Էգեյանի առափնյակի թեմերում առաջնորդ լինելը:

Զմյուռնիայի և կից գաղթօջախների պատմության ուսումնասիրությունը որակական նոր փոփոխություններ կրեց XX դ. սկզբներին՝ **Ատոմի** ուսումնասիրություններով: Նա, իրոք, տաղանդավոր և ինքնատիպ հեղինակ է զմյուռնահայ գաղթօջախի պատմությունը հետազոտողների շարքում և հանիրավի վրիպել է այս վերջինների ուշադրությունից: Այս թեմայով Ատոմի հոդվածները տպագրվել են Կ. Պոլսի <<Արևելք>> թերթում⁴⁴: Սակավ բացառություններով՝ նրա գործերը չեն հիշատակվում սույն հիմնախնդրով զբաղվող հեղինակների կողմից: Հոդվածաշարի առիթը Զմյուռնիայի Ս. Լուսավորչյան հիվանդանոցի հոգաբարձուների կողմից հրատարակված <<Տեղեկագիրն>> էր (1901), որի քննադատությամբ հանդես է եկել Ատոմը՝ հետզհետե ծավալելով զմյուռնահայ գաղթօջախի պատմության իր լայն իրազեկությունը: Նա գաղթօջախի պատմաբանների մեջ առաջինն է, որ հակադրվում է Բ. Սլարսին, Հ. Քոսյանին և <<Տեղեկագրի>> հեղինակներին՝ Զմյուռնիայի գաղթօջախի սկզբնավորման հարցում և հետ տանում այն XIV դարից շատ ավելի վաղ ժամանակներ, մինչև XII և XI դդ. և անգամ ավելի վաղ⁴⁵: Ցավոք, Ատոմն իր այդ կարծիքը չի հաստատում որևէ հղումով կամ վկայակոչմամբ, թեև կարևորում է, որպես պատմաբան, աղբյուրագիտական նյութը և ինքն է կշտամբում Բ. Սլարսին և Հ. Քոսյանին՝

⁴⁴ Ատոմի ընդարձակ հոդվածաշարը հրատարակվել է Կ. Պոլսի Արևելք թերթի 1902 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ <<Իզմիրի Ս. Լուսավորչեան հիւանդանոցը>> և <<Իզմիրի Ս. Լուսավորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը>> վերնագրերով:

⁴⁵ Ատոմ, Իզմիրի Ս. Լուսավորչեան հիւանդանոցը, Արևելք, 1902, 31 հունվար/13 փետրվար:

ոչ արժանահավատ աղբյուրների դիմելու համար⁴⁶: Նշենք, որ այս կարծիքն ամրապնդվում է Հ. Գելցերի ծանրակշիռ հետազոտություններով⁴⁷, որոնց կարող էր ծանոթ լինել Ատոմը: Բ. Սլարսի գրքի արժանիքների մեջ ևս Ատոմը կարևորում է սկզբնաղբյուրները՝ հիշելով Զմյուռնիայի ֆրանսիական հյուպատոսսարանի տարեգրություններից այդ հեղինակի արած քաղվածները⁴⁸: Մնում է, ուրեմն, կարծել, որ Ատոմը Զմյուռնիայի գաղթօջախի սկզբնավորման մասին իր կարծիքը հայտնելիս հենվում էր հայ-բյուզանդական հարաբերություններին վերաբերող նորագույն հետազոտությունների վրա: Իրոք, Ատոմը լավատեղյակ է այն իրողությանը, որ Զմյուռնիայի հայերը եկել են հիմնականում Հայաստանի արևելյան գավառներից:

<<Արևելքում>> տպագրած իր ավելի քան երկուսուկես տասնյակի չափ հոդվածներում Ատոմն արժեքավոր տեղեկություններ է տալիս զմյուռնահայերի ազգային կյանքի կազմակերպման, հանրային վարչական կառույցների, բնակլիմայական ու համաճարակային աղետների, վաճառականության, մշակույթի և այլնի մասին: Բարձր գնահատելով Զմյուռնիայի համայնքի վճարած առանձնահատուկ հարկերի առթիվ Ատոմի տեղեկությունները⁴⁹, մինևույն ժամանակ պետք է ասել, որ նա իզուր է ժխտում զմյուռնահայ համայնքում մյութեվելիական համակարգի գոյությունը և որն ընդհանրական էր Օսմանյան Թուրքիայի հարկատու բնակչության համար: Այն հանգամանքը, որ Ատոմը վկայակոչում էր տարեկան եկեղեցականներին (մինչև Ազգային սահմանադրության կիրառումը), ամեննին չի խոսում <<մյութեվելիական դրության>> բացառման մասին. ընդհակառակը, Ատոմի հիշած տարեկան եկեղեցականները հենց նույն մյութեվելիներն էին, որոնք վերահս-

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Հայերեն էին թարգմանվել Հ. Գելցերի հայագիտական աշխատություններից, այդ թվում՝ <<Հետազոտություն հայ դիցաբանության>> (1897) և <<Համառոտություն բիզանդական կայսրերի պատմության>> (1901) և այլ գործեր (տես Արգարյան Գ., Գելցեր Հ., Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Ե., 1976, էջ 706):

⁴⁸ Ատոմ, նշվ. աշխ.:

⁴⁹ Նույն տեղում, 1902, 3/16, 5/18 հուլիսի: Փոխքը, հավանաբար, պետական հարկի տեսակներից մեկն էր, ընդ որում՝ կարևոր տեսակ, որովհետև այն գանձելու համար, մինչև Ազգային սահմանադրությունը, զմյուռնահայ համայնքի վարչության մեջ առանձնացված էր **գապզիմալի** (հարկային-ֆինանսական գործերի վերակացու) պաշտոնը (տես նույն տեղում, 5/18 հուլիսի):

կում էին Ս. Ստեփանոս և Ս. Լուսավորչյան հիվանդանոցի (որին փոխանցվում էին Ս. Լուսավորիչ եկեղեցու հասույթները) և ազգային կալվածքների նյութական միջոցները:

Զմյուռնիայի և Էդեմիշի ազգային ու կրթական կյանքի վերաբերյալ ուշագրավ վերհանումներ կան **Տիգրան Սավալանյանի** հայտնի հուշագրության⁵⁰ մեջ: Ս. Սավալանյանը ճանաչված դեմք է XIX դ. հայագիտության մեջ, հեղինակել է Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքին ու միաբանությանը նվիրված իր հայտնի երկհատոր աշխատությունը⁵¹: Նա գործուն մասնակցություն է ունեցել զմյուռնահայ մտավոր շարժմանը, հայ թարգմանական գրականությունը հարստացրել ֆրանսիական, իտալական և արաբական գրողներից արած իր թարգմանություններով:

Տ. Սավալանյանի հուշերը կարևոր են հատկապես XVIII դ. հայռուսական և հայ-հուլանդական առևտրական առնչությունների տեսակետից, որոնք շոշափելի են դառնում նրա վաճառական նախնիների գործունեության հետ կապվող և իր հիշատակած դրվագներով: Զմյուռնահայ վարժարանների և կրթական-լուսավորական շարժման իմաստով ևս (1840-1850-ական թթ.) Սավալանյանի հիշած իրողությունները ոչ քիչ դեպքերում փաստական առատ նյութ են պարունակում և նրպաստում գաղթօջախի ազգային դիմագծի վերարտադրությանը: Պակաս ուշագրավ չեն այս հեղինակի վկայությունները Էդեմիշի հայ համայնքի մի մասի՝ պարսկական Խոյ և Սալմաստ բնակավայրերից սերելու հարցում: Չնայած իր կենսագրական տվյալների որոշ հակասականությանը և հղումների զուտ բանավոր ձևին, Սավալանյանի հուշերն իրենց բազմակողմանի շերտերով իրենց նշանակությունն ունեն խնդրո առարկա հիմնահարցը հետազոտելու իմաստով:

XIX դ. առաջին կեսի զմյուռնահայ իրականության խնդիրները քննադատական լույսի ներքո են ներկայացված նշանավոր թարգմանիչ, բառարանագիր, հրապարակախոս և գրող **Մեսրոպ Նուպարյանի** հրապարակումներում: Դրանք տպագրվել են Զմյուռնիայի <<Օաղիկ>>, <<Արեւելեան մամուլ>>, <<Արշալոյս>>, <<Դաշինք>>, <<Հայ գրականութիւն>> և այլ պարբերականներում (1860-ական-1910-ական թթ.): Մ. Նուպարյանը պատկանում է զմյուռնահայ մտավորականության այն փայլուն սերնդին (Տ. Սավալանյան, Մ. Մամուրյան, Գր. Զիլինկիր-

⁵⁰ Սաւալան Տ. Հ. Թ., Կենսագրական յուշեր, Գահիրէ, 1900:

⁵¹ Սաւալանեան Տ., Պատմութիւն Երուսաղեմի, Կ. Ա-Բ, Երուսաղեմ, 1931:

յան, Ստ. Ոսկանյան, Տետյան եղբայրներ, Մ. Ս. Վանանդեցի և ուրիշներ), որը գործուն մասնակցություն ունեցավ այդ գաղթօջախում ծավալված մտավոր և մշակութային շարժմանը՝ իր սեփական ծանրակշիռ խոսքն ասելով հայկական գրատպության, մամուլի և հասարակական մտքի, գրականության, դպրոցի և մանկավարժության բնագավառներում: Մ. Նուպարյանի բազմաթիվ անդրադարձները՝ հոդվածներն ու հուշերը վերաբերում են վերոհիշյալ հիմնահարցերին և անփոխարինելի գծեր են ավելացնում զմյուռնահայ համայնքի ուրույն նկարագրին (կենցաղ, բարքեր, ազգապահպանության ջանքեր, անհատական և հանրային վարքագծեր) հետամուտ ուսումնասիրողներին: Ականավոր այդ մտավորականն իր նկարագրած միջավայրի ու գործիչների ժամանակակիցն է, շատ դեպքերում և մեկի, և մյուսի վրա զգալի ազդեցություն թողած մշակութային խոշոր գործիչ, որի գրական ժառանգությունն անգամ իր գեղարվեստական մտածողության ուղեկցությամբ հատկանշվում է նաև իր՝ զմյուռնահայ համայնքի պատմաբանի սթափ և ճշմարտացի գնահատականներով:

Զմյուռնահայ համայնքի իրողություններին, պատմությանը և նրա գործիչներին, հիմնականում XIX դ. կտրվածքով, քանիցս անդրադարձել է Վ. Զարդարյանն իր <<Յիշատակարանի>> տարբեր հրատարակություններում⁵²: Նրա աշխատությունը հազեցած է իր կողմից շրջանառության մեջ մտցված վավերագրերով, ձեռագիր հիշատակարաններով, մամուլի նյութերով և եվրոպական ճանապարհորդների վկայություններով: Նա հատկապես անդրադառնում է Ապրոյանների, Նուպարյանների, Յուսուֆյանների տոհմագրությանը՝ բարձր գնահատելով նրանց ազգօգուտ գործունեությունը և բարոյական կերպարը: Նույն կերպ Վ. Զարդարյանն ազգային մշակույթին մատուցած ծառայություններով է կարևորում Ա. Ռ. Փափազյանի, Տ. Հ. Տետյանի, Ստ. Ոսկանյանի և այլոց կենսագրականները և դրանք ընդհանրացնող՝ զմյուռնահայ ազգային ու մշակութային իրականության բնութագրերը: <<Յիշատակարանի>> հեղինակը մնում է զմյուռնահայ համայնքի պատմության արժանահավատ հեղինակներից մեկը:

Խնդրո առարկա գաղթօջախների պատմական իրողություններին լավատեղյակ հեղինակներից է զմյուռնացի հեղինակ **Թագվոր Ճեմալյանը**: Նրա բազմաթիվ հոդվածները տպագրվել են ժամանակի հայ

⁵² Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Ա-Բ, Կ. Պոլիս, 1910, հ. Գ, Գահիրե, 1934, հ. Ե, Գահիրե, 1939:

մամուլում՝ XIX դ. 90-ական թթ. մինչև XX դ. առաջին տասնամյակները: Թ. Ճերմակյանն իրավացիորեն գմյունահայ գաղթօջախի գոյությունը տեսնում է XIII դ. և անգամ դրանից էլ առաջ, որ այսօր հաստատվում է սկզբնաղբյուրներով, թեև ինքն այդ հաստատող որևէ վավերագիր չի հիշատակում⁵³:

Շատ ավելի որոշակի է այս հեղինակը XVII դ. գաղթօջախի իրողությունները հիշելիս, որից երևում է, որ նա ծանոթ է եղել Զմյունիայի առաջնորդարանի դիվանատան վավերագրերին: Թ. Ճերմակյանը ստույգ նշում է 1688 և 1771 թթ. երկրաշարժերը, 1814 թ. ժանտախտը, որ իսկ էր 700 գմյունահայերի կյանքը, ազգային հիվանդանոցի հետ կապվող փաստերը և այլն⁵⁴: Հավաստի են նաև Թ. Ճերմակյանի տեղեկությունները 1845 թ. հրդեհից հետո գմյունահայերի ծանր կացության, կրթական ու մշակութային հաստատություններին պատճառված աղետալի վնասների ցուցադրմամբ և այլն: Նա անդրադարձել է տեղի հարանվանություններին, հայ կաթոլիկների և բողոքականների կազմակերպական կառույցներին: Թ. Ճերմակյանն առաջինն է նկատել, որ Զմյունիայի հայության այդ շերտերը շատ ավելի ուշ շրջանի գաղթականներ են. կաթոլիկները (200 տուն) եկել են Արևելյան Հայաստանից և Անկյուրիայից, բողոքականները՝ շատ ավելի սակավաթիվ, Մարաշից ու Այնթափից (արհեստավորներ)⁵⁵: Ժամանակի մամուլում (<<Բիւզանդիոն>>, <<Արշալոյս>> և <<Աշխատանք>>) տպագրված նրա հոդվածներում կարելի է հանդիպել XIX դ. 30-90-ական թթ. Զմյունիայի և մյուս գաղթօջախների հանրային կյանքի հետաքրքիր վերհանումների, վարժարանների և ընկերությունների, բարերարների (Գր. Գուլասայան-Աբելյան, Գր. Պապոյան, Հ. Սարգսյան, Պող. Յուսուֆյան, Աբր. Ապրոյան, Հովս. Չելեպի և այլք) գործունեության հետ կապվող հատկանշական մանրամասների⁵⁶: Նա լուսաբանում է օս-

⁵³ Ճերմակեան Թ., Զմիւնիա եւ ազգայինք, Հանդես ամսօրեայ, 1890, թիւ 4, էջ 81-84, թիւ 5, էջ 106-109, թիւ 6, էջ 134-136, թիւ 8, էջ 183-184:

⁵⁴ Նույն տեղում, 1890, թիւ 4, էջ 83, թիւ 5, էջ 108, թիւ 8, էջ 183 և այլն:

⁵⁵ Նույն տեղում, 1890, թիւ 4, էջ 184:

⁵⁶ Այդ հոդվածների ոչ լրիվ ցանկը տես Եզական դեմք մը Իզմիրի մէջ, Բիւզանդիոն, 1905, 30 հուլիս/օգոստոս 12, 4/17-5/1 օգոստոս: Իզմիրու հայ բարերարներու յիշատակին առթիւ, Արշալոյս, 1908, 8 հունվարի: Թագթագեան սրբազանի մէկ կոնդակին առթիւ, նույն տեղում, 1908, 25 մայիսի, 15 օգոստոսի: Հայ տպագրութիւնը Իզմիրի մէջ, Աշխատանք, 1912, 103-110 և այլ թվերում:

մանյան իշխանությունների տագնապահար, երբեմն ծայրահեղ պոռթկումները ոչ մահմեդական փոքրամասնությունների նկատմամբ, երբ խոսքը վերաբերում էր դրանց քաղաքական բարեփոխությանը կասկածելուն: 1821-1822 թթ. ձեռնարկված՝ Ս. Մեսրոպյան վարժարանի շենքի շինարարությունը հենց այդպիսի վերաբերմունքին էր պարտական տարիներ շարունակ ձգձգվելու համար:

Թ. Ճերմակյանի հոդվածներում նվազագույնի են հասցված վրիպակներն ու հակասությունները գաղթօջախների մշակութային հաստատությունների ու հանրային կյանքի մանրամասներում, փոխարենը ընթերցողին է փոխանցվում մասնավորապես զմյուռնահայ կյանքին լավատեղյակ այս հեղինակի հարուստ և բազմակողմանի իմացությունը:

Էգեյանի առափնյակի գաղթօջախների, և հատկապես Ջմյուռնիայի գաղթօջախի պատմության և դարավոր ընթացքի գիտական լուսաբանման ասպարեզում խոշորագույն ներդրումը պատկանում է նշանավոր պատմաբան **Ա. Ալպոյաճյանին**: Ջմյուռնիայի գաղթօջախի գոյացումը և դրա կենսագործունեությունը նա դիտարկում է որպես առհասարակ հայ գաղթօջախների համակարգի մի բաղկացուցիչ մաս, որը ենթարկվում է Հայաստանի քաղաքական պատմությանը՝ իր տնտեսական ու հոգևոր կացության առանձնահատկություններով հանդերձ: Ջմյուռնիայի գաղթօջախին նա անդրադարձել է բազմիցս՝ դրան առնչվող աշխատություններում, առանձին հոդվածներով ու հրապարակումներով⁵⁷: Ա. Ալպոյաճյանը ևս, ինչպես Թ. Ճերմակյանն ու Ատոմը, առաջ է քաշում գաղթերի աշխարհագրության հարցը, մասնավորապես այն, թե որտեղ են հանգրվանել Հայաստանից <<բռնագաղթի ենթարկուողները⁵⁸>>:

Հետագայում մենք կտեսնենք, որ Ա. Ալպոյաճյանը զմյուռնահայ համայնքի սկզբնավորումը կապում է ընդհանրապես փոքրասիական շրջաններում հայ գաղթականության առկայության հետ՝ XIII դ. կամ

⁵⁷ Տես Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937: Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, Գահիրէ, 1952: Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, հ. Գ, Գահիրէ, 1961: Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, Բիւզանդիոն, 1904, 10/23, 13/26-16/29 ապրիլի: Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 280-282: Անհետացող հայ գաղութներ, Հայաստանի կոչնակ, 1923, թիւ 3, էջ 70-72, թիւ 5, էջ 134-135, թիւ 6, էջ 166-167: Ջմյուռնիո տպարանները, Պատմաբանասիրական հանդէս, 1964, N 2, էջ 67-84:

⁵⁸ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, էջ 289:

դրանից առաջ. <<Պատմություն հայ գաղթականության>> աշխատության մեջ նա այդ գաղթօջախի հաստատումը ժամանակակից է համարում 1236 թ. մոնղոլական արշավանքների՝ Չարմաղանի կողմից Հայաստանում նվաճումներ անելու իրադարձությանը⁵⁹: Այս մոտեցումը հենելով հավանականության վրա, բնականաբար, Ա. Ալպոյաճյանը փորձում է առարկայականություն մտցնել այդ գաղթօջախի սկզբնավորման հարցում՝ այս վերջինն առնչելով համաշխարհային առևտրի ուղղություններին:

Ա. Ալպոյաճյանը Էգեյանի գաղթօջախների առաջին պատմաբանն է, որ ներկայացրել է տերունի թեմի առաջնորդների գործունեությունը՝ գավազանագրքով⁶⁰ և այդ գործունեության մեջ ընդգրկելով ժամանակի զմյուռնահայ իրականության բնութագրական կողմերը:

<<Բիզանդիոն>>-ում տպագրած իր ընդարձակ հոդվածում Ա. Ալպոյաճյանը Զմյուռնիայի առաջնորդների ցանկը սկսում է Հովսեփ վարդապետից՝ նշելով նրա պաշտոնավարման սկիզբը և ավարտը (1661-1689)⁶¹: Այս առաջնորդական ցանկը Ա. Ալպոյաճյանը լրացրեց <<Դափնի>> ամսագրում, համալրելով այն նոր անուններով՝ հիմնահարցին նվիրված վերջին հետազոտության մեջ⁶²:

Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդների ցանկի համալրման և առհասարակ Էգեյանի գաղթօջախների պատմության, ձեռագրական

⁵⁹ Նույն տեղում, էջ 544:

⁶⁰ Տես Բիզանդիոն և Դափնի պարբերականներում Ա. Ալպոյաճյանի տպագրած հոդվածները, նաև ՄՄ, Ա. Ալպոյաճյանի դիվան, թղթ. 7, վավ. 17/1, էջ 72:

⁶¹ Ալպոյաճեան Ա., Առաջնորդություն հայոց Իզմիրի, Բիզանդիոն, 1904, թիվ 10/23, 12/25 ապրիլի:

⁶² Ալպոյաճեան Ա., Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 280-282: Սույն աշխատության հեղինակը ևս փորձել է առաջնորդների գավազանագիրքը լրացնել նոր անուններով՝ բնականաբար, հենվելով Ա. Ալպոյաճյանի և Տ. եպ. Պալյանի ուսումնասիրությունների վրա (տես Խառատյան Ա., Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդները, էջ 14-31): Այսուհանդերձ, Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդների ցանկը առ այսօր բաց է մնում տարիների, անգամ տասնամյակների կտրվածքով, երբ Էջմիածինը տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական պայմանների, նույնիսկ Կ. Պոլսի պատրիարքարանի հետ ունեցած տարաձայնությունների պատճառով չի կարողացել ժամանակին առաջնորդներ ուղարկել Զմյուռնիա: Հետագայում կարող են բացահայտվել անհայտ մնացած առաջնորդների նոր անուններ, սակայն վերոհիշյալ պատճառները, կարծում ենք, շարունակելու են ուժի մեջ մնալ:

մշակույթի ուսումնասիրության ասպարեզում իր խոշոր ներդրումն ունի հայ բանասիրության և հատկապես ձեռագրագիտության երախտավոր **Տրդատ եպ. Պալյանը**: Ինչպես Ա. Ալպոյաճյանը, նա ևս կազմել է Ջմյունիայի առաջնորդների ժամանակագրական ցանկը, որ հասցնում է ընդհուպ մինչև 1904 թ., Եղիշե եպ. Դուրյանի առաջնորդությունը⁶³: Տ. եպ. Պալյանը, սակայն, իր արժեքավոր ծանոթություններով հանդերձ, քիչ բանով է համալրել Ա. Ալպոյաճյանի կազմած նույնիմաստ գավազանագիրքը, հավանաբար կիսատ թողնելով կամ չհասցնելով հրատարակել դրա հետ կապված իր ուսումնասիրությունը:

Տ. եպ. Պալյանը անկրկնելի աշխատանք է կատարել հայագիտության մեջ հայտնի՝ ձեռագրագիտական մշակումների, մատենագիտական նկարագրությունների և դրանց արժեքավորման ու տպագրության ասպարեզում, որի լայն ընդգրկումների մեջ մեզ մասնավորապես հետաքրքրում են նրա կազմած՝ Ջմյունիայի Ս. Ստեփանոս, Մանիսայի Ս. Սիոն և Ս. Լուսավորիչ եկեղեցիների, Այդընի և Էդդեմիշի ազգային ընթերցարանների ձեռագրացուցակները, որոնք հիշեցինք նախընթաց շաբաղրանքում:

Ստուգապատում և ներհուն հետազոտողի անհատականության կնիքն է կրում **Հրանտ Ասատուրի** կոթողային աշխատությունը⁶⁴: Բնականաբար, մեզ հետաքրքրող գաղթօջախների թեման գլխավորը չէ Հ. Ասատուրի աշխատության մեջ, սակայն այս վերջինների ազգային-եկեղեցական, հանրային ու մշակութային կյանքի լուսաբանման իմաստով այն ոչ քիչ դեպքերում է շրջանառվում այդ աշխատության էջերում: Հ. Ասատուրը համոզիչ և ուշագրավ անդրադարձներ ունի Ջմյունիայի տերունի թեմի, հատկապես XVIII-XIX դդ. առաջին տասնամյակների առաջնորդների գործունեության, Էջմիածին-Ջմյունիա, Երուսաղեմի պատրիարքություն-Ջմյունիա հոգևոր հարաբերությունների և զմյունահայ մշակույթի իրողությունների ոլորտում: Հ. Ասատուրը ուշադրություն է դարձնում թեմի առաջնորդներ Ղազար Զահկեցու,

⁶³ Պալեան Տ., Գաւազանագիրք առաջնորդաց Զմիւռնիոյ, Դափնի, թիւ 1, էջ 25-28, թիւ 2, էջ 59-63, թիւ 3, էջ 91-93:

⁶⁴ Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները: Ընդարձակ օրացոյց ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1901, էջ 77-258: Սույն աշխատանքում օգտագործվել է նաև Հ. Ասատուրի աշխատության երկրորդ հրատարակությունը (Ստանպոլ, 2011, խմբագրությամբ Գր. ավ. քահ. Տամատյանի, Գ. Բամպուքճյանի և Վ. Մերովյանի), որ հազեցած է հիմնավոր ծանոթագրություններով:

Մահակ Ահագնի, Աբրահամ Աստապատցու, Ղուկաս Կարնեցու, Դանիել Սուրմառեցու, Մարտիրոս և Մատթեոս արքեպիսկոպոսների և այլոց գործունեության վրա: Հ. Ասատուրն առաջին ուսումնասիրողներից է, որ անդրադարձել է Օսմանյան Թուրքիայում ամերիկյան միսիոներների մշակութային ջանքերին, որպիսիք բավական արդյունավետորեն գործադրվել են նաև Ջմյունիայում⁶⁵:

Հ. Ասատուրը Ջմյունիայի թեմի օրինակով տալիս է **տերունի թեմ** հասկացության եթե ոչ լրիվ, ապա ուշագրավ բացատրությունը, նկատելով նաև, որ բացի Կ. Պոլսից և Իզմիրից, Էջմիածինը XVIII դ. վերջերին Թուրքիայում ուներ հինգ այլ մեծ նվիրակություններ (Ռումելի, Էնկյուրի, Թոխաթ, Էրզրում, Դիարբեքիր)⁶⁶: Նրա աշխատության մեջ հաճախակի է ի հայտ գալիս զմյունահայ համայնքը՝ ազգային կյանքի իր հատկանշական կողմերով:

Ջմյունիայի և Էգեյանի առափնյակի գաղթօջախների պատմության ծալքերը քանիցս վերհանել է **Մաղաքիա արք. Օրմանյանը**՝ իր հանրագիտական բնույթի <<Ազգապատում>> եռահատոր աշխատության մեջ⁶⁷: Ամենից առաջ նկատենք, որ Մ. Օրմանյանն առաջիններից մեկն է հայ պատմագիտության մեջ անդրադարձել Էգեյանի արևմուտքում գաղթօջախների սկզբնավորման պատմությանը՝ նկատի ունենալով, ինչպես կոտեսենք հետագա շարադրանքում, Պերգամայի (Բերգամա) հայ համայնքը:

Մ. Օրմանյանը ցույց է տվել զմյունահայ գաղթօջախի նշանակալիությունն ու մշտական ներկայությունը համազգային զարգացումների գործընթացներում: Այս ամենը նա վերհանում է Ջմյունիայի բազմաթիվ առաջնորդների գործունեության միջոցով, որոնք իրենց եռանդուն մասնակցությունն էին բերում Էջմիածնի կաթողիկոսության և արևմտահայ հատվածի ազգային-կրոնական փոխհարաբերություններին: Նույն համոզությամբ Մ. Օրմանյանը վերլուծում և բնութագրում է մեր եկեղեցու պատմության մեջ և ազգային կյանքում (նաև զմյունահայ իրականության մեջ) բավական աղմուկ հանած Դավիթ-Դանիելյան պայքարը, ցույց տվել դրա բացասական հետևանքները: Այդ պայքարի գլխավոր դերակատարներին բնութագրելիս Մ. Օրմանյանը, ինչ-

⁶⁵ Հրանտ Ասատուր, նշվ. աշխ., Ստանպոլ, 2011, էջ 176-179:

⁶⁶ Նույն տեղում, էջ 135:

⁶⁷ Օրմանեան Մ. արք., Ազգապատում, հ. Ա-Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001 (վերահրատ.):

պես միշտ, մնում է զուսպ և անաչառ հեղինակ՝ ելնելով ազգային եկեղեցու հեղինակության և արժանապատվության նախասիրություններից: Առհասարակ <<Ազգապատումի>> հեղինակն առանձնանում է շատ ավելի, քան իր նախորդները մեր պատմագիտության մեջ, քննական խոր վերլուծություններով և փաստերի ու իրողությունների ստուգությամբ և անաչառ արժեքավորմամբ⁶⁸:

Սույն հիմնախնդրին անմիջական առնչություններ ունեն մեծավաստակ պատմաբան **Լեոյի** աշխատությունները: Մեր նոր շրջանի պատմագիտության մեջ նա առավել հանգամանորեն, քան որևէ այլ հետազոտող, ուսումնասիրել և վերլուծել է հայ եկեղեցու սեփականատիրական իրավունքները, սահմանել հարկերի և տուրքերի տեսակները⁶⁹: Լեոն հստակ չի սահմանազատում առաջնորդական (տերունի) և նվիրակական թեմերը, սակայն այս հարցում նրա լուսաբանումները մեծապես նպաստում են մեր եկեղեցու և նրա թեմերի միջև փոխառաբերությունների, ուրեմն և առաջինի համազգային նշանակության բացահայտմանը:

Իր աշխատություններում Լեոն գնահատել է զմյուռնահայ վաճառականության միջազգային կապերն ու դրանց շնորհիվ՝ ազգային մշակույթը խթանող այդ խավի մտայնությունը՝ շեշտադրելով հատկապես կապանցիների առևտրական կապիտալի գործոնը, որ <<հզոր էր նաև իր հիմնած առևտրական տներով>>⁷⁰: Հենվելով միջնադարի հայկական աղբյուրների վրա՝ Լեոն ցույց է տվել փոքրասիական շրջանների, այդ թվում՝ Զմյուռնիայի և շրջակայքի վրա ջալալիների ապստամ-

⁶⁸ Այս իմաստով Մ. Օրմանյանին շատ սակավ դեպքերում կարելի է ինչ-ինչ շեղումներ վերագրել (խնդրո առարկա հիմնահարցի շրջանակներում), ինչպես, ասենք, Դանիել արք.՝ Զմյուռնիայի առաջնորդության ժամանակը, որ ճիշտ չի նշում (1796-1792, տես Ազգապատում, հ. Բ, էջ 3692), մինչդեռ՝ պետք է լինի 1793-1797): Ստեփանոս Աղավնու մասին նա գրում է, որ վերջինս <<Զմիւռնիա կը գտնուէր Գարագոչեանի մահուան ատեն (1825 թ. օգոստոսի 6-ին-Ա. Խ.) իբր առաջին առաջնորդ Էջմիածնի տէրունի վիճակին Կ. Պոլսոյ պատրիարքութեան անցնելէն ետքը, ուր գացած էր 1823-ին>> (Ազգապատում, հ. Գ, էջ 4106-4107), սակայն Ստեփանոս Աղավնին Զմյուռնիա էր եկել ոչ թե իբրև առաջնորդ, այլ պատրիարքական փոխանորդ, այն էլ ոչ թե 1823 թ., երբ այստեղ առաջնորդը Ստ. արք. Ենովքյանն էր, այլ 1825 թ.:

⁶⁹ Լեո, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. III, գիրք I, Ե., <<Հայաստան>> հրատ., 1969:

⁷⁰ Լեո, Խոջայական կապիտալ, էջ 283:

բության կործանարար հետևանքները, որոնք առնչվում են այդ տարածաշրջան ուղղված հայ գաղթականության պատմությանը⁷¹:

Նշանավոր պատմաբանն այս ամենը գնահատում է զուտ քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների տեսակետից, միաժամանակ ցույց տալով հայ հոգևորականության մի մասի կրավորական դիրքը նշված փոխհարաբերությունների սրացման որոշ ժամանակաշրջաններում: Այսպես, նա կարծում է, որ ձգտելով իր ազդեցության տակ առնել և Դանիելին, և Դավթին, ռուսները դեսպան Տոմարովի միջոցով սկսել էին դիվանագիտական մի խաղ, <<որի նպատակն էր դիվանագիտական բարդություն առաջացնել պարսկական գործերի մեջ և զինված միջամտության ուղիներ հարթել նվաճողական դիտումներով⁷²>>: Կարելի է կարծել, մինչդեռ, որ էջմիածինը ռուսական քաղաքականության մեջ չուներ ռազմավարական այդպիսի ընդարձակ նշանակություն, և որ խոսքը տվյալ դեպքում պարզապես կարող էր վերաբերել ցարական դիվանագիտության մտահոգությանը և անգամ վրիպումների՝ պարսկամետ հնարավոր կաթողիկոսի հայտնությունը կանխելու հարցում: Լեոյի վերոհիշյալ ձևակերպումն ամբողջական չէ՝ նաև Դավիթ-Դանիելյան հակամարտությանը ուշադիր հետևող երրորդ կողմի՝ օսմանյան պետության դիրքորոշումն այս խնդրում լռելյայն շրջանցելու իմաստով:

Զմյուռնիայում ամերիկյան միսիոներների գործունեությանն անդրադառնալիս Լեոն չի թաքցնում իր դավանական նախասիրությունները, երբ նրանց հրատարակած <<Շտեմարան պիտանի գիտելյաց>> ամսագիրը համարում է զուտ <<կրոնական պրոպագանդայի համար>> հրատարակված <<անկախ և անկապ հոդվածների մի ժողովածու>>⁷³: Բայց այդ ամսագիրը երբևէ կրոնական քարոզչություն չի մղել, այլ ընդամենը հետամտել է դաստիարակչական ու կրթական նպատակներ և դրանք միավորող գաղափարի մեջ է ներկայացրել իր թվացյալ՝ <<անկապ>> հոդվածները:

Զմյուռնիայի գաղթօջախին, սկզբնավորման ժամանակին և դրանց վերաբերյալ գրականությանը բավականաչափ աշխատատար անդրադարձ է արել **Գ. Օ. Գալուստյանը**⁷⁴: Մենք դեռ կվերադառնանք այս աշ-

⁷¹ Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գիրք I, էջ 226, 263-264:

⁷² Լեո, Հայոց պատմություն, հ. IV, էջ 158:

⁷³ Նույն տեղում, էջ 551:

⁷⁴ Գալուստեան Գ. Օ., Զմիւռնիա եւ Զմիւռնիայի հայ գաղութը, էջ 276-351:

խատության գնահատելի արժեքին, հատկապես գաղթօջախի սկզբնավորման հիմնահարցի առթիվ: Այստեղ նշենք միայն, որ այս հեղինակը ուշագրավ առարկություններ ունի Բ. Սլարսի և Հ. Քոսյանի կարծիքի դեմ՝ Ձմյուռնիայի գաղթօջախի պատմությունը XIV դ. վերջին քառորդից սկսելու վերաբերյալ, թեև ինքը ևս, ինչպես իր համախոհները, այս առարկությունները հենում է զուտ տեսական դատողությունների կամ ենթադրությունների վրա:

Գաղթօջախներին հանգամանալի ուշադրություն է դարձրել Գ. Պոյաճյանը՝ իր աշխատությունը տպագրելով Փարիզի <<Յառաջ>> թերթում⁷⁵: Այն, կարծում ենք, Հ. Քոսյանի աշխատության ոճով գրված վերջին գործերից մեկն է սփյուռքահայ պատմագիտության մեջ⁷⁶: Այստեղ

⁷⁵ Պոյաճեան Գ., Եգեականի դիցուհին՝ Ձմիւռնիան եւ զմիւռնահայ գաղութը, Յառաջ, 1972, սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների թվահամարները:

⁷⁶ Առափնյակի հայության անցյալի ազգային-մշակութային ինքնությանը վերադառնալու իմաստով ուշադրության են արժանի սփյուռքահայ հրատարակությունների ոչ հարուստ ցանկը համալրող հուշամատյանները: Դրանցից առաջինն իր ծավալով ոչ մեծ հրատարակություն է (Սիմոնեան Պետրոս, Յուշամատեան հայկական Ձմիւռնիան, հրատ. Ձմիւռնիոյ եւ շրջաններու հայրենակցական վերաշինաց միութեան, Փարիզ, 1936): Այդ միությունը (հիմնադիր՝ Պ. Սիմոնեան) հիմնվել էր Փարիզում, 1934 թ., Խորհրդային Հայաստանում՝ Նոր Ձմյուռնիա անվամբ ավան կառուցելու և Ֆրանսիայից հայրենիք ներգաղթ կազմակերպելու նպատակով: Հուշամատյանում հպանցիկ ակնարկներ կան զմյուռնահայ մշակույթի, եկեղեցու, մշակութային և կրոնական գործիչների, ազգային կազմակերպությունների, բարերարների և առհասարակ ոչնչացված հնօրյա գաղթօջախի պատմական անցյալի մասին՝ հազեցած համապատասխան բազմաթիվ լուսանկարներով: Մյուս հուշամատյանը լույս է տեսել քառորդ դար անց (Մեր Ձմիւռնիան, հրատ. Ամերիկայի զմիւռնահայ միութեան, Նիւ Եորք, 1961), շատ ավելի ճոխացված լուսանկարներով և հարուստ բովանդակությամբ, զմյուռնահայ մտավորական վերջին սերնդի դեմքերից մեկի՝ Ս. Ամատյանի առաջաբանով: Այս առաջաբանը, ի դեպ, տպագրվել էր դեռևս 1913 թ. Թեոդիկի <<Ամենուն տարեցոյց>>-ում (էջ 166-181): Այն գրեթե նույնությամբ կրկնում է Հ. Քոսյանին, բայց հեղինակն իր կողմից ավելացրել է գաղթի մի նոր, բայց շատ կասկածելի փուլ՝ 1895-1896 թթ.: Հեղինակը, մինչև ժամանակ, թույլ է տվել փաստական անճշտություններ և սխալներ՝ հատկապես դպրոցներին և տպարաններին առնչվող հատվածներում: Այս հուշամատյանը ևս գլխավորապես անդրադառնում է Ձմյուռնիայի գաղթօջախի մշակութային արժեքներին ու դեմքերին, բայց, կարծում ենք, առավել գնահատելի է XX դ. առաջին տասնամյակի վիճակագրական լրատվությունը ոչ միայն

յուրահատուկ հանրագումարի են բերվել Թ. Ճերմակյանի, Մ. վարդ. Բարխուտարյանի, մասամբ Հ. Քոսյանի և Գ. Օ. Գալուստյանի աշխատությունների արդյունքները, ինչպես և ճանապարհորդների կողմից շրջանառության մեջ դրված վիճակագրական փաստերը գաղթօջախների մասին: Գ. Պոյաճյանը հերքում է Ջմյունիային մերձակայքի հայերի որևէ կապ Կիլիկիայի աթոռի հետ (ուրեմն և XIV դ. գաղթը Կիլիկիայից)՝ գաղթօջախների հայությանը առնչելով միայն Էջմիածնի կաթողիկոսության հետ: Նույն կերպ, Գ. Պոյաճյանն անգիտանում է, որ դեռևս 1911 թ. Հ. Աճառյանը այն կարծիքն է հայտնել, որ Ջմյունիայի բարբառը <<չափազանց նման է>> Կ. Պոլսի և հատկապես Եվդոկիայի բարբառին (այսինքն, արևմտյան հայոց **կը ճյուղի** բարբառներին) և որը, կարծում ենք, մատնում է Ջմյունիայի հայերի շատ ավելի վաղ շրջանի գաղթը կամ գաղթերը, քան XVII դ. սկզբներին⁷⁷:

Ուշ տպագրության ժամանակային հապաղումն է աչքի զարնում մեծանուն Հ. Աճառյանի պատմագիտական աշխատության մեջ⁷⁸, որը դատելով Ջմյունիային հատկացված ոչ ծավալուն էջերից, գրվել է 1920-1930-ականի կողմերը, հիմնականում շարադրված Հ. Քոսյանի և նրան կրկնող հեղինակների հետևությամբ⁷⁹:

զուտ զմյունահայ իրականության, այլև արվարձանների (Քարաթաշ, Կորդե-լիո, Գյոզթեփե, Բուռնովա) հայ բնակչության վերաբերյալ (հայերի թվաքանակը՝ 8700 մարդ՝ 400-հազարանոց քաղաքում): Ուշադրություն են հրավիրում հուշամատյանի ակնարկներն ընկերությունների և հայ հարանվանությունների, ինչպես և Ջմյունիայի առաջնորդական թեմի քաղաքների ու բնակավայրերի մասին հակիրճ տեղեկություններն ու ակնարկները:

⁷⁷ Տես Աճառեան Հ., Հայ բարբառագիտություն, Էմինեան ազգագրական ժողովածու, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911:

⁷⁸ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Ե., <<Ձանգակ-97>> հրատ., 2002:

⁷⁹ Հ. Աճառյանը, ինչպես երևում է շարադրանքից, գրաքնական նկատառումներով, Ջմյունիայի քրիստոնյա ազգաբնակչության՝ հայերի և հույների բարբառոսական կոտորածը ներկայացնում է ընդամենը մեկ հակիրճ դարձվածով՝ <<Իգվիրը կործանվեց 1922 թ.>> (նույն տեղում, էջ 564): Բնականաբար, խորհրդային քաղաքականությունը չէր կարող հանդուրժել Արևելքում <<ազգային ազատագրական պայքարի>> ելած և <<հեղափոխական>> Քեմալի դեմ ուղղված որևէ դատողություն, անգամ ակնարկ: Իր օգտագործած գրականության մեջ Հ. Աճառյանը նշել է Պ. Միմոնյանի <<Յուշամատենը>>, որ հրատարակվել է

Հ. Աճառյանը հետագա գաղթերի ժամանակը հիմնականում վերականգնում է ըստ Հ. Քոսյանի, սակայն իր քննական վերաբերմունքով և սկզբնաղբյուրների նշանակության ընդգծումով: Նրա աշխատությունը ըստ էության, հասցվում է մինչև 1910-ական թթ. սկզբները:

Խնդրո առարկա հիմնահարցում Հ. Աճառյանի բերած ամենախոշոր նորույթը, կարծում ենք, գաղթօջախների պատմության իրողությունների լուսաբանումն է լեզվաբանական, *բարբառագիտական* քննության մեթոդով: Զմյուռնիայի բարբառին նա անդրադարձել է առավել հանգամանորեն, **Կայծոռիկ** ստորագրությամբ հեղինակի հետ գրած հոդվածում, 1899 թ., Հ. Քոսյանի գրքի հրատարակությունից անկախ և գրեթե համաժամանակ⁸⁰: Այստեղ հնչյունափոխական, ձայնաբանական և բառագիտական վերլուծությամբ ցույց է տրվում, որ Մանիսայի Վերի թաղեցի հայերը գաղթել են Խարբերդից՝ XVII դ. սկզբին:

Ավելի ուշ՝ 1911 թ. գրած իր աշխատության մեջ, ուսումնասիրելով Ղարաբաղի բարբառը, Հ. Աճառյանը նկատում է, որ Ղարաբաղից Փոքր Ասիա, մասնավորապես Զմյուռնիայի և Այդընի կողմերը մեկ-երկու դար առաջ գաղթած հայերի մեծագույն մասը տաճկախոս է դարձել, <<բայց երկու տեղ, այն է՝ Պուրտուր և Էօտեմիշ, դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կը պահեն>>⁸¹: Այստեղ ևս նա անդրադառնում է Խարբերդից Մանիսա անցած գաղթականությանը (նկատի ունենալով Վերի թաղը)՝ եզրակացնելով, որ վերջինիս լեզուն տարբերվում է այդ քաղաքի Վարի թաղեցիների բարբառից⁸²: Դրանով Հ. Աճառյանն ընդհուպ մոտենում է այն եզրակացությանը, որ նշված երկու թաղերի հայերը Մանիսա են գաղթել տարբեր վայրերից և տարբեր ժամանակներում:

Այն, որ Մանիսայի Վերի և Վարի թաղերի հայերը գաղթել են տարբեր ժամանակներում՝ կապված գաղթի տարբեր հոսքերի հետ, ամրագրում է **Գ. Շահինյանն** իր բարբառագիտական հոդվածներում⁸³:

1936 թ.: Կնշանակի, նա շարունակել է տեքստի հետ իր աշխատանքն առնվազն այդ թվականին:

⁸⁰ Կայծոռիկ, Աճառյան Հ. Հ., Մանիսացիներն իբրեւ գաղթական Խարբերդի, էջ 402-405:

⁸¹ Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, Էմինեան ազգագրական ժողովածու, էջ 61:

⁸² Նույն տեղում, էջ 168:

⁸³ Շահինեան Գ., Մաղնիսայի հայ գաղթականութիւնը, էջ 11-15: Նույնի Նմոյշներ Մաղնիսայի գաւառաբարբառէն, նույն տեղում, թիւ 19, էջ 291-294:

Տարածաշրջան անցնելու սկիզբը նա համարում է X դարը, որ շարունակվել է ևս յոթ հարյուրամյակ⁸⁴։ Հայաստանի տարբեր վայրերից այստեղ գաղթելու իրողությունը նա բացատրում է լեզվական և ազգագրական տարբեր հատկանիշների տրամաբանությամբ։ Գ. Շահինյանն ինքնուրույն հեղինակ է, սակայն նրա շարադրանքում երբեմն իրեն զգացնել են տալիս նախորդ հեղինակներից ժառանգված անճշտությունները։

Ս. Մ. Օոցիկյանի աշխատության հատվածները՝ առափնյակի գաղթօջախների վերաբերյալ, ընդգրկում են միայն Զմյուռնիան, Մանիսան և Այդընը⁸⁵։ Այս հեղինակը ևս որևէ նորությամբ աչքի չի ընկնում, չի հաղթահարում իրեն նախորդած հեղինակների ազդեցությունը՝ մնալով նրանց տեղեկատվության, այդ թվում և անճիշտ տեղեկատվության շրջանակներում։ Այսուհանդերձ, նրա աշխատությունն ուշադրություն է գրավում նշված գաղթօջախների պատմության վերջին շրջանին (1915-1922) առնչվող՝ հատկապես վիճակագրական տեղեկություններով։ Շարադրանքի ոճը և փաստերի ժամանակային վկայակոչումները ցույց են տալիս, որ Ս. Օոցիկյանի աշխատությունը ևս շատ ավելի վաղ է գրվել, քան իր հրատարակության՝ 1947 թվականը։

Սույն թեմայով Սփյուռքում և առհասարակ հայագիտության ասպարեզում վերջին տասնամյակներին հրատարակված աշխատությունների մեջ իր ընդգրկումների լայնությամբ և հիմնահարցերի բազմակողմանիությամբ երևույթ պետք է համարել ականավոր հայագետ, պրոֆ. **Ռիչարդ Հովհաննիսյանի** խմբագրությամբ տարբեր հեղինակների հետազոտություններն ամփոփող հատորը⁸⁶։ Այս հրատարակությունն ունի ժամանակային և թեմատիկ ընդարձակ սահմաններ, փաստորեն՝ XIV դ. երկրորդ կեսից մինչև Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի մյուս գաղթօջախների պատմության ողբերգական ավարտը։ Ռ. Հովհաննիսյանի ընդհանրացնող առաջաբանով հակիրճ ներ-

⁸⁴ Շահինյան Գ., Մաղնիսայի հայ գաղթականությունը, էջ 12։

⁸⁵ Օոցիկեան Ս. Մ., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եօքք, 1947։

⁸⁶ Steu Armenian Smyrna/Izmir. The Aegean Communities. Edited by Richard G. Hovannisian. California, 2012. Հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի քաղաքների ու մարզերի, ինչպես նաև հայ գաղթօջախների պատմությանը նվիրված միջազգային կոնֆերանսների շարքում Զմյուռնիա/Իզմիր խորագրով հերթական կոնֆերանսի (Կալիֆորնիայի համալսարան, Լոս Անջելես, 2002, 2-3 նոյեմբերի) նյութերը։

կայացվում է Զմյուռնիայի և մյուս գաղթօջախների տեղը հայոց պատմության մեջ, դրանց՝ ոչ մեծ թվաքանակով համայնքների մեծ ներդրումը հայ մշակույթի անդաստանում⁸⁷: Հ. Քոսյանի հիմնարար աշխատությունից հետո այս հատորը հանրագումարի է բերում գաղթօջախների պատմության մի շարք հանգուցային հիմնահարցեր: Անկախ հրատարակության հատվածական բնույթից (մեկ տասնյակից ավելի հեղինակներ՝ գաղթօջախների պատմության ամենատարբեր դրվագների վերհանումով) այս հրատարակությունը հաջողությամբ ուրվագծում է արժանավորագույն անցյալ ունեցող Զմյուռնիայի և մյուս համայնքների դարեր ի վեր հարատևած ընթացքը և մշակութային հույժ կարևոր նշանակությունը ազգային պատմության հոլովությունում:

Զմյուռնիայի և մասամբ Էգեյանի առափնյակի պատմությունն է վերաբրտադրված ՀՀ ԳԱԱ հրատարակությամբ լույս տեսած <<Հայ գաղթաշխարհի պատմություն>> եռահատորի համապատասխան հատվածում⁸⁸, որ շարադրվել է սույն աշխատության հեղինակի կողմից: Այս անդրադարձը գաղթօջախների պատմությունը սկսում է ավանդական հայ պատմագիտության կողմից ընդունված՝ XIV դ. վերջին քառորդից և հասցվում մինչև 1922 թ.՝ Զմյուռնիայի հրդեհումը և նրա քրիստոնյա բնակչության (հայեր, հույներ) ոչնչացումը քեմալականների ձեռքով: Այստեղ բավական նկատելի է հետազոտական այն ուղղությունը, երբ գաղթօջախների պատմության վերհանումն ուղեկցվում է Օսմանյան Թուրքիայի քաղաքական ու տնտեսական իրողությունների հետ ընդգծված առնչություններով:

Կրոնական փոքրամասնությունների սոցիալ-տնտեսական գործունեությունն է հիմնականում առանցքային խնդիր դարձված Դ. Գոֆմանի ճանաչում վայելող աշխատությունը⁸⁹: Այն հետաքրքիր դիտարկումներ և օսմանյան արխիվների վրա հենվող վիճակագրական տվյալներ է պարունակում տարածաշրջանի մեկ հարյուրամյակի (1550-1650) տնտեսական տեղաշարժերի վերաբերյալ, և որ առանձնապես հաջողվել է հեղինակին, նոր և բնութագրական կողմերով է վերհանել փոքրասիական թերակղզու արևմտյան շրջաններում հրեա, հույն և հայ

⁸⁷ Նույն տեղում, էջ 1-9:

⁸⁸ Խառատյան Ա., Զմյուռնիա, Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), գրքում, հ. երկրորդ, էջ 178-222:

⁸⁹ Goffman D. Izmir and the Levantine World 1550-1650. Univ. of Washington Press, Seattle and London, 1990.

համայնքների յուրովի ներդրումներն ու նշանակությունը այդ շրջանների առևտրատնտեսական զարգացման ոլորտում, մասնավորապես XVII դ. երկրորդ քառորդից սկսած:

Սրանով հանդերձ, կարծում ենք, որ առևտրատնտեսական գործունե գրեթե միակն է Դ. Գոֆմանի աշխատության մեջ և անվերապահորեն գերակայում է մյուս, այդ թվում և այդ համայնքների պատմականորեն գոյացած գործոններին: Նկատելի է, որ հեղինակը պատմական փաստերը, այդ թվում և արխիվային տվյալները ծառայեցրել է իր առաջադիր նպատակին՝ ցույց տալու, որ Զմյուռնիայի տնտեսական նշանակությունը որակական և բեկումնային զարգացման փուլ է թևակոխել սկսած 1620-ական թվականներից: XVI դ. երկրորդ կեսին և XVII դ. սկզբին, գրում է նա, Զմյուռնիայում և կից շրջաններում ժողովրդագրական փոփոխություններն ավելի ցայտուն արտահայտվեցին, և որ 1580 թ. տեղի բնակչության 80%-ը թուրքեր էին: Երբ այստեղ հունական փոքրաթիվ համայնք էր ապրում, շարունակում է նա, չկային ոչ հայեր, ոչ էլ հրեաներ. Կրոնական փոքրամասնությունների ոչ մեծ խմբեր կային ցրված Քուշադայում, Մանիսայում, Այդընում, Քիոսում և Չեշմեում, բայց բուն Իզմիրը չէր ձգում <<առևտրի հանդեպ զգայուն այս խմբերին>>⁹⁰:

Բայց, նախքան 1580-ը, հայերի ներկայությունը Զմյուռնիայում վկայվում է առնվազն 1551 թ. առաջ՝ հայկական եկեղեցու, գերեզմանատան, ուրեմն և հայ համայնքի առկայությամբ:

Քննադատության չի դիմանում նաև Դ. Գոֆմանի բերած աղբատիկ, հայերի զբաղմունքը ներկայացնող վիճակագրական պատկերը (ջիզլե վճարող մի քանի տասնյակի չափ հայկական հանե՝ ընտանիքներ, երեք արհեստավորներ, երեք առևտրականներ, մեկական բաղնեպաններ և ոսկերիչներ՝ 1640 թվականին և այլն)⁹¹, որպիսին թյուր պատկերացում է ներշնչում հայ համայնքի և թվաքանակի, և արհեստագործության ու առևտրի բնագավառում ներգրավվածության չափերի վերաբերյալ:

Զմյուռնիայի հայ գաղթօջախի պատմությունը բավականաչափ լայնորեն լուսաբանվում է ՀՀ ԳԱԱ հրատարակած բազմահատորյակներում. 1970-ական թթ. հրատարակված հատորներում (հհ. IV և V), փաստորեն առաջին անգամ խորհրդային պատմագիտական հրատարակությունների մեջ՝ բավական էջեր են հատկացված Զմյուռնիայի

⁹⁰ Նույն տեղում, էջ 142:

⁹¹ Նույն տեղում:

հայ գաղթօջախի պատմությանը⁹², որ հասցվում է մինչև 1860-ական թթ. սկզբները: Նշված հատորներում շարադրանքը գրեթե բացառապես վերաբերում է Զմյուռնիայի համայնքի պատմությանը, որտեղ հասկանալի պատճառներով, անտեսված է հայ եկեղեցու պատմությունը՝ առնչվելով գերազանցապես այդ համայնքի աշխարհիկ իրականությանը, գաղթօջախի գոյացմանը, ներհամայնքային հարաբերություններին և այլն: Կան փաստական վրիպումներ, այդ թվում տեղանունների և ժամանակագրական բնույթի: Այս ամենով հանդերձ, հարկ է գնահատել խնդրո առարկա հատվածների գիտաճանաչողական նշանակությունը այն իմաստով, որ դրա տպագրությունից հետո Զմյուռնիայի գաղթօջախի և նրա մշակույթի հիմնահարցը իր հաստատուն տեղը պետք է գրավեր հայրենական պատմագիտական հետազոտություններում⁹³:

Զմյուռնահայ գաղթօջախի կազմավորման հիմնահարցին սեփական լուսաբանումներով է մոտեցել **Մեայուհ Ասլանյանը** իր անգլերեն աշխատության մեջ⁹⁴: Ըստ նրա, Զմյուռնիայում հայերն հաստատվել են երեք հիմնական փուլերում՝ 1. XI դ. վերջին և XII դ. սկզբին՝ Բագրատունյաց թագավորության վրա սելջուկների արշավանքից հետո, 2. 1380 թ. հետո, որպես հետևանք Կիլիկիայի հայկական թագավորության անկման, 3. Մեֆյան-Օսմանյան պատերազմի արդյունքում՝ 1604 թ.,

⁹² Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 309-311, հ. V, 1974, էջ 527-534:

⁹³ Տես Ներսիսյան Մ. Գ., Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին, էջ 116-124: Այս հրապարակումը մեզանում առաջինն է, որ բացահայտորեն հերքում է 1920-ական թթ. ի վեր խորհրդային պատմագիտության մեջ հարատևած՝ քեմալականների ձեռքով Զմյուռնիայի բնակչության բարբարոսական ոչնչացումը (1922 սեպտեմբեր), իբրև <<թուրքական ազատագրական պատերազմի>> դրվագ ներկայացնող կեղծիքը: Շատ ավելի ծավալուն քննարկումների առարկա է հանդիսացել զմյուռնահայ պարբերական մամուլը (տես Հայ պարբերական մամուլի պատմություն, XVIII-XIX դարեր, հ. 1, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Գահիրե, 2006, գլուխ հինգերորդ՝ Զմյուռնահայ մամուլը, էջ 156-171: Հայ պարբերական մամուլի պատմություն, 1900-1922, հ. 2, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Ե., 2017, գլուխ երկրորդ՝ Արևմտահայ մամուլ, էջ 213-336):

⁹⁴ Aslanian S. D. From the Indian Ocean to the Mediterranean. Univ. of California Press Ltd, London, 2011.

երբ արևելյան Հայաստանի բնակչության մի մասը, որ գերծ էր մնացել Շահ Աբասի բռնագաղթից, գաղթել էր Ջմյուռնիա⁹⁵:

Արժանին պետք է հատուցել Ս. Ասլանյանին՝ Բ. Սլարսից և Հ. Քոսյանից հետո դեպի Ջմյուռնիա գաղթերի ժամանակագրությունը նորովի ներկայացնելու և, իբրև առաջին հեղինակներից մեկը՝ այն ավելի վաղ ժամանակներից (XI դ.) սկսելու համար: Մեկ վերապահումով միայն, որովհետև վերը տեսանք, որ XI դ. առաջ Ջմյուռնիայում և նրա շրջակայքում դեռևս VI-VII դդ. հայ բնակչություն կար Պերգամոնում (Գ.Ասլան, Մ. Օրմանյան, Հ. Գելցեր, Հ. Բարթիկյան), ինչպես և X և հետագա դարերում (Հ. Բարթիկյան): Նկատենք նաև, որ Ս. Ասլանյանը չի համոզում XVII դ. զմյուռնահայերի թվաքանակը որոշելու խնդրում: <<Երբ Սիմեոն Լեհացին 1604 թ. անցնում էր Իզմիրի մոտով, գրում է նա, -նշում էր հարյուրավոր բնակիչների (հայ-Ա. Խ.) և երկու եկեղեցիների առկայությունն այնտեղ>>⁹⁶: Այնուհետև նա առանձնացնում է Թավերնիեի՝ 1631 թ. տվյալը Ջմյուռնիայի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ՝ 8 հազար մարդ, և այդ թիվը համադրում ֆրանսիացի արևելագետ Ա. Գելլանդի կողմից 1670 թ. արձանագրած տվյալին, ըստ որի, Ջմյուռնիայում կար ընդամենը 130 հայ ընտանիք: Ս. Ասլանյանը եզրակացնում է, որ այդ հաստատում է Սիմեոն Լեհացու ավելի վաղ ներկայացրած թվաքանակը՝ կասկածի տակ դնելով Թավերնիեի <<չափազանցված>> տվյալը⁹⁷:

Նախ, Սիմեոն Լեհացին Ջմյուռնիայում է եղել ոչ թե 1604, այլ 1609 թվականին, երբ նոր գաղթականություն այստեղ դեռևս չէր հայտնվել և քաղաքում ապրում էր նախորդ դարերից այստեղ հարատևած հայությունը: Այնուհետև, Սիմեոն Լեհացու՝ 1609 թ. հաշված մի քանի հարյուր մարդու՝ 1631 թ. 8 հազարի հասնելը (Թավերնիե) բնավ չափազանցված չէ, այլ հիմնավոր, եթե հիշենք նոր գաղթականության գործոնը 1609-1631 թթ. միջև ընկած ժամանակահատվածում, երբ գործ ունենք մարդկանց ոչ թե բնական, այլ արհեստական աճի հետ: Ա. Գելլանդի ոչնչով չհիմնավորված թիվը (130 հայ ընտանիք), մինչդեռ, նախընտրելի է դարձել Ս. Ասլանյանի համար, երբ նա անփոփոխ համադրում է 1609-ի տվյալը 1670-ի հետ, որ համոզիչ չէ:

⁹⁵ Նշվ. աշխ., էջ 68:

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ Նույն տեղում, էջ 68-69:

Զմյուռնիայի գաղթօջախին նվիրված՝ և ծավալով, և ժամանակային ընդգրկումով անհամեմատ ընդարձակ անդրադարձ է արված տողերիս հեղինակի կողմից, ակադեմիական հաջորդ, վերջին բազմահատորյակում⁹⁸: Այստեղ ևս չի հաղթահարված Զմյուռնիայի հայ գաղթօջախի պատմությունը փաստորեն XIV դ. վերջին քառորդից սկսելու մտայնությունը՝ սահմանափակվելով դրա ավելի վաղ սկզբնավորման վերաբերյալ ընդհանուր դիտողություններով: Շարադրանքում ընդգրկված է հիմնականում Զմյուռնիայի համայնքի պատմությունը (ընդհուպ մինչև ավարտը՝ 1922 թ.), թեև որոշ չափով անդրադարձներ կան նաև Էգեյանի մյուս համայնքներին:

⁹⁸ Հայոց պատմություն, հ. II, գիրք երկրորդ, էջ 703-709, հ. III, գիրք երկրորդ, էջ 312-318:

ԳԼՈՒԽ I

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ

1. Զմյուռնիան քաղաքակրթությունների պատմության միջով

Վաղնջական ժամանակներից հայտնի՝ Զմյուռնիա քաղաքի պատմության սկիզբը ներկայանում է պատմական հետախնդրքին հատուկ առասպելների և իրականության զարմանալի խառնուրդի տեսքով: Ճանաչված լինելով որպես հին հունական քաղաքակրթության ու դրա զարգացման արդյունք, Զմյուռնիան հիշատակվում է Հերոդոտի և Ստրաբոնի կողմից: Ըստ Հերոդոտի, քաղաքը հիմնել է հունական հերոսներից Թեսեոսը, մեկ այլ ավանդության համաձայն, Տանտալոսը: Քաղաքն անվանակոչվել է Սմիրնա՝ ամազոնուհու պատվին: Իր աշխարհագրական ու տնտեսական բարենպաստ կացության շնորհիվ Զմյուռնիան համալրել է Հոնիական քաղաք-պետությունների շարքը (մ.թ.ա. 7-րդ դ.)՝ պահպանելով հոնիական անվանաձևը՝ Զմիրնա⁹⁹: Նույն ժամանակներում քաղաքը հասավ տնտեսական և առևտրական նշանակալի հաջողությունների՝ հատկապես Լիդիայի և Արևմուտքի միջև ընկած տարածաշրջանում, քաղաքակրթությունների զուգորդման տեսակետից հույժ զգալուն այդ հանգրվանում: Դրանով պայմանավորվեց Հոնիականի այդ գեղեցկագույն քաղաքի համբավը, որի սնուցիչն էր անտիկ արհեստների, արվեստների ու մշակույթի զարգացման բարձր մակարդակը: Հենց այս ժամանակաշրջանը նկատի ունի Ղ. Ալիշանը, երբ Զմյուռնիան անվանում է <<դժոխ ծովանիստ քաղաքաց, որ առավել ևս ի հնումն մեծապանծ ճոխանայր իբր առաջին գոլ ի քաղաքս Փոքրուն Ասիոյ...>>¹⁰⁰:

Այնուհետև մի քանի հարյուրամյակ, կապված հունական քաղաք-պետությունների քաղաքական վայրէջքի հետ, Զմյուռնիան կորցնում է իր ազդեցիկ նշանակությունը Էգեյանի քաղաքակրթական համակարգում: Մասամբ այդ վերականգնվում է Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նվաճվելուց հետո, երբ հին աշխարհի այդ մեծագույն զորավարը մտահղացել էր վերակենդանացնել քաղաքը: Ստրաբոնի տեղեկության

⁹⁹ Ալպոյաճեան Ա., Անհետացող հայ գաղութներ. Զմյուռնիա, Հայաստանի կոչնակ, 1923, թիւ 3, էջ 71:

¹⁰⁰ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրութիւն, էջ 543:

համաձայն, այդ արեցին իր մահից հետո նրա եղբայրը՝ Անտիգոնոսը, ինչպես և Լիսիմաքոսը մ.թ.ա. IV դ. վերջին տասնամյակներին և III դ. սկզբներին, ովքեր հոգացին նաև քաղաքի պաշտպանական կարողությունների մասին:

Հռոմեական դարաշրջանում Ջմյունիան մտնում էր կայսրության կազմի մեջ՝ վերածվելով պրոտեկտորատի, որպիսին և հիշատակվում է Հռոմի և Միհրդատի (ուս դաշնակցում էր հայոց արքա Տիգրան Մեծը) միջև մղվող պատերազմների ժամանակ, մ.թ.ա. 89-63 թթ.:

Ջմյունիան գործուն դեր ունեցավ քրիստոնեական վարդապետության տարածման, ինչպես և եկեղեցու ճանաչված կենտրոնի համբավով, որ մասամբ կարելի է բացատրել այդ քաղաքում հրեական վաղեմի համայնքի առկայությամբ: 155 թ. այստեղ է նահատակվել եկեղեցու նշանավոր դեմքերից մեկը՝ եպիսկոպոս Պոլիկարպոսը¹⁰¹: Արևելյան Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում Ջմյունիան կորցրեց իր առևտրական կարևոր նշանակությունը՝ պայմանավորված փոքրասիական ապրանքափոխանակության տարածական շրջանակների սահմանափակմամբ:

Բյուզանդիայի տիրություններում գտնվող Ջմյունիային նոր փորձություններ պետք է պարտադրեին սելջուկների նվաճումները և փոքրասիական շրջաններում չղադարող ռազմական ծավալումները: Սելջուկյան ծովահեն Յաչան 1084 թ. բյուզանդացիներից զավթեց Ջմյունիան, բայց Ալեքսիոս Կոմնենոս կայսրը հաջողեց այն հետ նվաճել: Նիկիական կայսրությունը, որ ստեղծվել էր խաչակիրների կողմից Բյուզանդական կայսրության մայրաքաղաքի գրավումից (1204) հետո, իր թեկուզ և ոչ տևական գոյության համար պարտական էր փոքրասիական ծովային կարևոր ուղիները տնօրինելու հնարավորությանը: Նրա տարածքի մեջ էին մտնում Էգեյան ծովի ափերը՝ Ջմյունիան, Փիլադելփիան (հետագայի թուրքական անվանումով Ալաշեհիր), Եփեսոսը և այլ քաղաքներ¹⁰²: Չնայած սելջուկյան էմիրությունների հետ Նիկիայի չղադարող բախումներին, Ջմյունիա-

¹⁰¹ Encyclopedia Britanica, Vol. 20, p. 847.

¹⁰² Горянов Б. Т. Поздневизантийский феодализм, с. 65.

յում ևս ստեղծվեցին նպաստավոր պայմաններ՝ արվեստների, գիտության, նրա տնտեսական կյանքի զարգացման համար¹⁰³:

Ա. Ալպոյաճյանը աներկբայելի է համարում հայերի ներկայությունը Նիկիական կայսրությունում՝ վկայակոչելով հիշյալ՝ 1261 թ. մարտի 13-ի առևտրական պայմանագիրը ջնտվացիների և Միքայել Պալեոլոգ կայսեր միջև, որտեղ հիշատակվում են հայ վաճառականները¹⁰⁴:

Նիկիական կայսրության շրջանի Ջմյունիայում հայերի հաստատման վերաբերյալ Ա. Ալպոյաճյանի դիտողությունները ավելի են ամրապնդվում, երբ նա, հենվելով Ն. Ադոնցի մի ուսումնասիրության վրա, հիշում է նաև ոչ վաճառական հայի՝ մաթեմատիկոս Արտավազդ Ռաբդաս Ջմյունացուն՝ նշելով, որ նա գործել է Անդրոնիկ Գ կայսեր (1328-1341) օրոք¹⁰⁵:

Հայերի ներկայությունը Նիկիայում առավել քան ապացուցվում է այդ պետության սահմանային ամրությունների պաշտպանության գործին նրանց մասնակցությամբ, ի թիվս ոչ հույն այլազգիների՝ ֆրանկների, սլավոնների և թուրքերի¹⁰⁶: Հ. Գելցերը, հանրագումարի բերելով Արևմտյան Փոքր Ասիայում բյուզանդական տիրապետության հարստման իրողությունները XI դ. վերջերին և հաջորդ երկու դարերում, նկատում է, որ դրա համար կայսրությունը պարտական էր խաչակիրներին, որոնց շնորհիվ <<Լավոդիկիա, Փիլադելփիա, Սարդես, Ջմյունիա, Եփեսոս՝ հունաց պատմության ամենափայլուն անունները, ազատվեցին անհավատների ստրկությունից>>¹⁰⁷:

Մոնղոլների ավերիչ արշավանքներից հետո և տեղի տալով օսմանյան թուրքերի ճնշումներին, վերականգնված բյուզանդական կայսրությունը, սակայն XIV դ. սկզբներին պետք է կորցնեի իր փոքրասիական տիրույթների մեծ մասը: Կայսրության ձեռքին մնացին միայն Նիկիան, Բրուսան, Ջմյունիան, Փիլադելփիան, Մագնեսիան (Մանիսա) և մի քանի այլ քաղաքներ¹⁰⁸՝ ձեռքից ձեռք անցնելով և ենթարկվելով տարբեր

¹⁰³ История Византии, т. 3, с. 220. Տե՛ս նաև Васильев А. А. Латинское владычество на Востоке, с. 33.

¹⁰⁴ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 2, էջ 526:

¹⁰⁵ Նիկողայոս Ռաբդաս Ջմյունացու գործունեության մասին տե՛ս Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948:

¹⁰⁶ История Византии, т. 3, с. 32.

¹⁰⁷ Գելցեր Հ., Համառոտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան, էջ 329:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 90:

նվաճողների: Ի հավելումն սրա, արաբ ճանապարհորդ Իբն Բատտուտան XIV դ. Ջմյուռնիան տեսել է մեծ մասամբ ավերակված վիճակում¹⁰⁹. քաղաքին տիրել էին սելջուկյան ցեղապետ Այդընի զորքերը՝ 1332 թ.: Բուն սելջուկյան պետությունն արդեն տրոհվել էր մեկ տասնյակի չափ անկախ՝ Սարուխանի, Գերմիյանի, Այդընի, Մենթեշեի, Կարամանի, Թեքքեի և այլ սուլթանությունների¹¹⁰: Թուրքական տարբեր ցեղերը շարունակում էին հունական հողերի գրավումները՝ պետական նոր միավորումներ ստեղծելու գործընթացում: Հատկապես հաջողությունների հասավ մոնղոլների ներխուժման հետևանքով Կենտրոնական Ասիայից Փոքր Ասիա անցած **քայի** օղուզական ցեղը, որը XIII դ. 2-րդ քառորդին հայտնվել էր Իլյունիայի սուլթանության հպատակության ներքո: Հունական հողերի հաշվին այն ստեղծեց իր սեփական էմիրությունը և կարևոր գործոն դարձավ թուրքական պետական միավորումների մեջ իր առաջնորդ Էրթողրուլի որդի Օսմանի (կամ Օթմանի, 1287-1326) կառավարման ժամանակ, ում անունով էլ հետագայում պետք է կոչվեր թուրքական կայսրությունը¹¹¹:

XIV դ. սկզբներին Էգեյանի մերձափնյա շրջաններում ուժեղացավ Այդընօղլուների թուրքմենական իշխանությունը: Հիմնադիրն էր Մեհմեդ բեյը, ով կարողացավ 1307-1310 թթ. գրավել Բիրգին, Այասլուքը, Թիրեն, Ջմյուռնիայի մի մասը, 1326 թ. ամբողջ քաղաքը: Պապի գլխավորությամբ կազմված եվրոպական կռալիցիային (Վենետիկ, Կիպրոս, Հռոդոս և այլք), սակայն, 1344 թ. հաջողվեց հետ խլել ծովափնյա Ջմյուռնիան¹¹²: 1346-1347 թթ. գրված մի Մաշտոցում գրիչը արձագանքել է Այդընօղլուների դեմ ուղղված վերոհիշյալ եվրոպական արշավանքին, նշելով, որ ինքը <<ականատես եղե, մականուն Տոֆին՝ կոմս Վիենոյ արարեալ և կարգեալ գլխաւոր ընդդէմ թուրքանց ի վանումն նոցա և յդեաց ի քաղաքն Ջմեռնիոյ Լիկեացոց>>¹¹³:

Բելությունների դեմ շատ ավելի կործանարար մտադրություններ ու գործելակերպ էին ցուցադրում օսմանյան թուրքերը, որոնք բռնել էին

¹⁰⁹ Encyclopedia Britanica, Vol. 20, p. 847.

¹¹⁰ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 567:

¹¹¹ История Византии, с. 90.

¹¹² Горянов В. Т. Поздневизантийский феодализм. с. 364. Uzuncarsili I. H. Anadolu beylikleri ve Akkoyunlu, Karakoyunlu devletleri, s. 27-28.

¹¹³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, էջ 358:

ամեն կերպ իրենց տիրույթները ընդարձակելու, և այս անգամ՝ փոքրասիական արևմուտքի առափնյա շրջանները կլանելու ուղին: 1390-ական թթ. Բայազեդ Ա-ն, թվում է, իր օրհասական հարվածը հասցրեց նրանց՝ գրավելով Սարուխանը, Այդընը, Կարամանը, Գերմիյանը, Թեքքեն և այլ տարածքներ: Անկարայի ճակատամարտը (1402), սակայն, կասեցրեց օսմանների հաղթարշավը. հաղթանակած մյուս նվաճողը Թիմուրը, վերականգնեց բեյությունները՝ իրենց ժառանգական իշխանություններով հանդերձ, մինչև որ դրանք վերջնականապես նվաճվեցին Մուրադ Բ սուլթանի կողմից՝ 1420-ականի առաջին կեսին¹¹⁴: Օսմանյան թուրքերը վերստին հաստատեցին իրենց իշխանությունը Էգեյանի այս տարածքներում, փաստորեն, բացի Կարամանի հարաբերական նվաճումից: Այդ բեյության տիրակալ Կարամանոյլուները թեն պարտվել էին և 1392 թ. Կարամանը զիջել նախ Բայազեդ Ա-ին, իսկ 1423 թ. Մուրադ Բ-ին, այնուամենայնիվ, կարողացել էին պահպանել իրենց իշխանությունը՝ օգտվելով բեյությունների շարունակական հակամարտություններից: Կարամանը վերջնականապես պետք է նվաճեր Մենեդ Բ-ն՝ 1468-1474 թթ. արշավանքների ընթացքում:

XIV դ. առաջին տասնամյակին փոքրասիական ամբողջ առափնյակն ընկել էր թուրքական էմիրների ձեռքը, բացառությամբ Ջմյուռնիայի և Հին ու Նոր Փոկեայի, որոնց տիրում էր ջենովական Ջաքարիա կլանը: 1329 թ. սակայն, չղիմանալով ճնշմանը, նրանք ստիպված էին քաղաքը հանձնել Այդընոյլու Ումուր բեյին¹¹⁵:

Նույն դարի երկրորդ կեսին Ջմյուռնիայում հաստատվեցին Հռոդոսի Ս. Հովհաննեսի միաբանության ասպետները (Հոսպիտալյերներ), բայց նրանք չկարողացան քաղաքի միջնաբերդը գրավել և հաստատվեցին ծովեզերքի ամրոցում: Նրանց և Այդընի էմիրության միջև մի քանի տասնամյակ շարունակվեցին ռազմական ընդհարումները: Թիմուրի կողմից քաղաքի գրավումը վերջ տվեց Հռոդոսի ասպետների ներկայությամբ Ջմյուռնիայում: 15-օրյա պաշարումից հետո գրավելով Ջմյուռնիան (1402 հոկտեմբեր) Թիմուրն անողորմ դատաստան տեսավ քաղաքի պաշտպանների նկատմամբ¹¹⁶: Այնուհետև այդ նվաճողը վերա-

¹¹⁴ Лень-Пуль С. Мусульманскія династии, с. 157-158.

¹¹⁵ Жуков К. А. Эгейские эмираты в XII-XV вв., с. 26.

¹¹⁶ Այվազովսկի Գ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ. Ա, էջ 66:

կանգնեց Կարամանի, Թեքքեի, Սարուխանի, Մենթեշեի, Այդընի, Քասթամունուի և Էրզրոմի բեյությունները¹¹⁷:

Էգեյանի տարածաշրջանում շարունակաբար ծավալվող պատերազմները սելջուկների և խաչակիրների, այնուհետև թուրքական տարբեր ցեղերի և Բյուզանդիայի, ապա Թիմուրի և օսմանյան թուրքերի միջև՝ տնտեսական չղադարող աղետներ էին պատճառում բնակչությանը, նրա մեջ սնուցանում հուսահատ ըմբոստության տրամադրություններ: Նշված հակամարտությունները XV դ. դրսևորվեցին նաև օսմանյան թուրքերի դեմ դիմադրական պոռթկումներով՝ սուֆիական և միստիկական ակնհայտ ուղղվածությամբ: Արևմտյան Անատոլիայում ոտքի ելած ապստամբները գլխավորում էին շեյխ Բեդրեդդինի կողմնակիցներ Բյորքուջե Մուստաֆան Զմյուռնիայի շրջակայքից և Թուրլաք Քեմալը՝ Մանիսայից: Ապստամբությունը ճնշվեց օսմանյան գերակշիռ ուժերի կողմից՝ 1410-ական թթ.¹¹⁸:

Զմյուռնիան օսմանյան թուրքերի կողմից նվաճեցվելուց հետո¹¹⁹, այն մնաց Օսմանյան կայսրության և այնուհետև հանրապետական Թուրքիայի սահմաններում՝ բացառությամբ 1919-1922 թթ., ավելի քան եռամյա մի շրջանի, երբ քաղաքը գրավել էին հույները: Վերստին տիրելով Զմյուռնիային, թուրքերը սրածուրյան և հրո ճարակների մեջ վերջ տվին քրիստոնյա ազգաբնակչության վաղեմի ներկայությանն այդ քաղաքում:

Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում ևս, որպես դրամատիկ անցյալի ատավիստական հիշեցումներ, Էգեյանի տարածաշրջանի և Զմյուռնիայի կանոնակարգված կյանքը վրդովեցին առանձին իրադարձություններ, որոնք նշանակալի հետք չպետք է թողնեին քաղաքի ճակատագրի վրա, բայց ուշագրավ են նրա կենսագրության տեսակետից: 1622 թ., Մուսթաֆա Ա-ի ժամանակ, ենիչերիների ապստամբությունները երկրի մի քանի շրջաններում, տարածվեցին նաև Զմյուռնիայում: Ապստամբներն այստեղ սպանեցին եվրոպական մի քանի հյուպատոսներ¹²⁰: Զմյուռնիան ենիչերիական հուզումների ասպարեզ դար-

¹¹⁷ Gibbons H. A. The Foundation of the Ottoman Empire, p. 258-259.

¹¹⁸ Новичев А. Д., История Турции, т. I. с. 39-40:

¹¹⁹ Սարգիսեան Ն., Տեղագրությունը, էջ 14: Էփրիկեան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, պր. 1, էջ 752:

¹²⁰ Eton W. A Survey of the Turkish Empire, p. 163.

ձավ, նույն կերպ, Սելիմ Գ-ի օրոք, թուրք-ֆրանսիական լարված հարաբերությունների ժամանակ, 1797 թ.: Մի ենիչերու սպանությունը ուն կեֆալացու ձեռքով, ոտքի հանեց նրա զինակիցներին, որոնք իրենց ատելությամբ ելք տվեցին՝ հրդեհելով քաղաքի ամբողջ եվրոպական թաղը (Ֆրենկ մահալլեսի)¹²¹:

XVII դ. Ջոյունիան օսմանյան պետության ուշադրությունը բևեռեց հրեաների ազգային ինքնագիտակցության ուրույն, մեսիականության դրսևորմամբ, որն այդպես էլ եզակի մնաց օսմանյան հրեական համայնքների պատմության մեջ: Նկատի ունենք 1666 թ. Ջոյունիայում Սաբթա Սելվիի (Յվի) միջադեպը, երբ նա՝ այդ քաղաքում անգլիական առևտրական միջնորդի որդին, իրեն հռչակեց հրեաների մեսիա: Կարճ ժամանակամիջոցում Սաբթան տեղի հրեական համայնքում ձեռք բերեց ժողովրդականություն: Պ. Ռիկոն՝ Ջոյունիայում ժամանակի անգլիական հյուպատոսը, գրում է. <<Ոչ մի հրավերք, ոչ մի ամուսնություն կամ թլպատում հրեաների մեջ չէր անցնում՝ առանց իր հետևորդների բազմությամբ շրջապատված Սաբթայի ներկայության>>¹²²:

Ակադ. Ա. Հովհաննիսյանը կուսակցական գաղափարախոսության մեկնակետից միանգամայն դրականորեն է գնահատում Սաբթայի <<հայտնությունը>>՝ նկատելով, որ նա առաջ է քաշել <<հրեա ժողովրդական մասսաների սոցիալական և քաղաքական ազատության լայն ծրագիր>>¹²³: Հավանաբար, դրան պետք է ավելացնել այդ ծրագրի հիմքում ընկած և առհասարակ մեսիականություն ծնող մտայնության՝ ազգային և կրոնական բացառիկության գաղափարը, որ արմատապես և կտրուկ հակադրվում էր Օսմանյան կայսրության մեջ շրջանառող կրոնների կողմից հրեականության հանդեպ բարձրամիտ վերաբերմունքին: XVII դ. առաջին կեսին և հետո այդ երկրում կատարված սոցիալական ու հոգևոր տեղաշարժերը, ժողովրդական հուզումներն ու ցնցումները հրեական ազգին մղում էին վերիմաստավորելու իր տեղը և սեփական վերաբերմունքն այդ տեղի նկատմամբ՝ Օսմանյան կայսրության մեջ և ընդհանրապես: Սաբթայի ուղերձը, հիրավի, ցույց է տալիս, որ հրեական շարժման կոչն ուղղված է ոչ միայն Թուրքիայի հրեաներին, այլև այդ ազգին առհասարակ, որտեղ էլ գտնվեին նրա բեկորները: Մյուս

¹²¹ Ինձիճեան Ղ., Դարապատում, հ. Բ, 1757-1768, էջ 301:

¹²² Rycout P. The History of the Turkish Empire, p. 205.

¹²³ Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, էջ 478:

կողմից, Օսմանյան Թուրքիայում Սաբեթայի ի հայտ գալը միանգամայն նոր երևույթ էր այդ երկրի քաղաքական և գաղափարախոսական իրողությունների շարքում, որչափով հանդես էր գալիս զուտ մտայնության, թող որ ընդամենը սպառնալի մտայնության տեսքով՝ հոգուտ և ի քացառիկություն կայսրության միլեթներից մեկի՝ հրեության: Ավելին, այդ մտայնությունը կայսրության մեջ սրբագործված միլեթի համակարգի կտրուկ բացասում էր նշանակում մեկ միլեթի կողմից: Ուստի պատական չէին օսմանյան կառավարողների տագնապնները և հետամուտ, ապա ծայրահեղ բացասական վերաբերմունքը հրեա մեսիայի նկատմամբ: Հրեաներին ուղղված Սաբեթայի ուղերձը ամբողջովին ներծծված է այդ ցեղի բացառիկության գաղափարը հայրենակիցներին փոխանցելու հորդորներով ու անառարկելի հավատով: Ճիշտ այն ոգով կամ մտքերը համոզիչ դարձնելու կրքով, որ պահանջվում է իրեն մեսիա հռչակած ամեն մի անձից՝ իր լսարանին համոզելու երկրային ու երկնային բոլոր խոստումների կատարման հնարավորությամբ, այսինքն հետինները առաջիններ դառնալու միասնական ներշնչումներով, մի հավատ, որ հատուկ էր միջնադարի բոլոր մեսիաներին: Սաբեթան այս տեսակետից բավարարում էր մարգարեական բոլոր պահանջները՝ հրեական հալածական ազգին մխիթարելու, նրա մտավոր անուրանալի (և իր՝ հրեության կողմից գիտակցված) կարելիությունների և ազգերի ու պետությունների մեջ նվաստ տեղ զբաղեցնելու հակասականության տեսակետից: Զմյուռնիայի իշխանավորները ձեռքակալեցին նրան, և ինչպես Առաքել Դավրիժեցին է գրում, նրանից <<ծանրագոյն տուգանս առեալ ի բաց թողին>>¹²⁴:

Սաբեթայի համբավը, սակայն, արդեն դուրս էր եկել զուտ զմյուռնական սահմաններից: Իրազեկված օսմանյան վերնախավը չէր կարող հանդարտվել և խնդիրն ավարտվում է օսմանյան հայտնի՝ կրոնաբարոյական երկընտրանքի պարտադրումով, այսինքն, մահապատիժ կամ մահմեդականության ընդունում: Սաբեթան համաձայնվեց վերջինին:

Հրեական մեսիայի քարոզչությանն արագ արձագանքեցին նաև մահմեդական հավատացյալները, իսկ ավելի վաղ՝ նրան մերժող հրեական խախամների մի մասը, որի հետևանքով <<հերձուած մեծ անկաւ ի մէջ հրէից>>¹²⁵: Թուրքերը թարգմանել տվեցին Սաբեթայի ուղերձն իրենց լեզվով, մեր հիշած Ռիկոն՝ անգլերեն, մեջբերելով նաև դրա խա-

¹²⁴ Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, էջ 491:

¹²⁵ Նույն տեղում, էջ 496:

լերեն տեքստը¹²⁶: Ֆրանսիական կրոնավորներից Ալ. դը Վինյոն նույն ժամանակներում նույնպես անդրադարձել է հրեական քարոզչին, ինչը նշում է Հ. Անասյանն իր աշխատության մեջ¹²⁷:

Հայերը ևս հետաքրքրություն ցուցաբերեցին Սաբեթայի քարոզչությանը: Պոլսահայերի մեջ այդ արեց Երեմիա Չելեպի Քյոմուրաձյանը՝ հրատարակելով իր հայտնի <<Տետրակը>>, և Առաքել Դավրիժեցին, իր պատմության մեջ, ինչպես և Զաքարիա Քանաքեռցին իր <<Պատմագրության>> էջերում¹²⁸:

Սաբեթայի նկատմամբ մեր նշած բոլոր հեղինակները ի հայտ են բերել բացասական և հեգնական վերաբերմունք, որ բացատրվում է նրանց քրիստոնեական դավանանքով և այդ գործչի ու նրա քարոզչության հանդեպ կրոնական հակամարտության ակնհայտ դրսևորումներով, ճիշտ համարժեքն այն աստեղծության ու արգահատանքի, ինչը հանդես էր բերում Սաբեթան այլ դավանանքի հանրություններին սպասվող ապագան ուրվագծելիս: Օսմանյան Թուրքիայում ազգային շարժումները նախապես ի հայտ էին գալիս կրոնադավանական ցայտուն երանգավորումով, ընդամին, սեփական դավանանքի անվիճելի գերազանցությամբ:

Քաղաքը ամբողջովին բաժանում էր կայսրության ճակատագիրը նաև վերջինիս սպառնացող այնպիսի ներքին ցնցումների դեպքում, որպիսին էր ջալալիների շարժումը: Դրանով ավարտվում էր կայսրության մեջ կատարվող տեղաշարժերի այն հերթական փուլը, որ միշտ սպառնում էր կայսրություններին՝ տարածական նվաճումներից հետո, երբ վրա է հասնում ազգային, դավանական և սոցիալական հակամարտությունների ճգնաժամը: Կայսրության տարատեսակ ցեղերի կենսակերպի միօրինակացումն ու համահարթեցումն ըստ օսմանյան թուրքերի կարգուկանոնի, հարկային լծի ծանրացումն ու թիմարի սեփականատիրական համակարգում ակնհայտորեն զգացնել տվող ճեղքերը, ավատատիրական անհնազանդ տրամադրությունների դրսևորումներն այդ ճգնաժամի անհրաժեշտ արդյունքն էին: Այս ախտանիշներն ի հայտ եկան առանձին-առանձին կամ միասին՝ ջալալիների ապստամբության մեջ ներգրավելով օսմանյան հասարակության ամենատարբեր շերտերը՝ ավատատեր-ցեղապետներից մինչև կեղեքվող գյուղացիները,

¹²⁶ Rycaut P., նշվ. աշխ., էջ 205-206.

¹²⁷ Անասյան Հ. Ս., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 44:

¹²⁸ Նույն տեղում, էջ 44-45:

օսմանյան խոշոր պաշտոնյաներից մինչև վաչկատուն բազմությունները: Անկասելի էր թվում հատկապես գյուղի տնտեսական անկումը և նրա արտադրողական ուժերի ջլատումը, երբ XVI դ. վերջերին Թուրքիան պատերազմի մեջ մտավ Ավստրիայի դեմ և գյուղատնտեսական շրջաններն ու վերջինիս արտադրած հումքով սնվող քաղաքային ազգաբնակչությունը պետության կողմից ենթարկվեցին նույն այդ թիմարին հակասող պարենային ու հարկային կողոպուտի¹²⁹:

Ջալալիների շարժումը տարածվեց ամբողջ կայսրությունով մեկ՝ հարավային շրջաններից մինչև արևմուտք՝ փոքրասիական տարածքներ, սպառնալով կաթվածահար անել երկրի ողջ ռազմատնտեսական ներուժը: Իր դրսևորման ավագակային հատկանիշներով և ոչնչացնելու տենչով այն նմանվում էր ժանտախտի, որն իր գոհերին ընտրում է առանց որևէ նախասիրության: Շարժումը տևեց ավելի քան երկու տասնամյակ՝ 1580-ականի վերջերից մինչև 1610-ականի սկզբները՝ օսմանյան պետությունից բացառիկ ջանքեր պահանջելով այն արյան մեջ խեղդելու համար:

Հազարավոր ջալալիներ էին գործում փոքրասիական տարբեր շրջաններում՝ Կարամանի, Այդընի, Սարուխանի և այլ տարածքներում¹³⁰: 1600-ականի սկզբներին նրանք արդեն ասպատակում էին Զմյուռնիայի շրջակա բնակավայրերը: Երեմիա Քյոմուրճյանը արձանագրելով ջալալիների զանգվածային տարածումն ու չարագործությունները՝ գրում է, որ նրանք

Երզնկով և Կամախի

Մինչ ի Պօլի են տարածեալ

Եւ Իզմիրիւ Լիկացոց

Մանիսօք ի ծովեզր հասեալ¹³¹:

Առավել վտանգավորն ու կազմակերպվածը այս տարիներին Քալենդեր Օղլուի հրոսակներն էին, որոնք գործում էին Մանիսայի շրջանում՝ հասնելով մինչև Զմյուռնիայի նավամատույցները: Այդընի և Սարուխանի բնակավայրերում կատարած վայրագություններով հռչակվել էին Կարա Սայիդի ջալալիները, որոնք, իրենց հերթին, կաթվածահար էին

¹²⁹ Новичев А. Д. նշվ. աշխ., էջ 126-127.

¹³⁰ Նույն տեղում, էջ 131-132:

¹³¹ Երեմիա Քեօմուրճեան, Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ, էջ 163:

արել Ձմյունիայի կենսագործունեությունը. նրանց կողմնակիցների թիվը հասնում էր 30 հազարի¹³²:

Ջալալիները Ձմյունիա չմտան, բայց շրջափակեցին քաղաքը՝ խափանելով ծովային առևտուրը: Քաղաքում ծայր առան հրդեհները, որոնք մոխրի վերածեցին շենքերը, տները և պահեստները, կարելի է կարծել, Ֆրանկաց թաղում, նավահանգստին կից: Բուն նավահանգստում, նրանք այրեցին նավերի մի մասը, մնացածների համար փրկագին պահանջելով¹³³:

Ձմյունիային կից շրջաններում Քալենդեր Օղլուի ջախջախումից հետո էլ, մինչև 1630-ական թթ. սկզբները իրենց ասպատակություններն էին շարունակում ջալալիական այլ ապստամբներ, Քնալը Օղլին՝ Այդընում¹³⁴, Էլիազ փաշան՝ Մանիսայի և Բերգամայի տարածքներում: Վերջինիս նկարագիրը գտնում ենք Գր. Դարանաղցու Ժամանակագրության մեջ. ապստամբ և ջալալի Էլիազ փաշան, գրում է նա, <<ի բազում ամաց հետևե առնել աւերութիւն աշխարհաց եւ մանաւանդ երկրին Եփեսացոց եօթն քաղաքաց... Էւս առաւել Մանիսու քաղաքին որ ի սուր սուսերի մաշեաց եւ հրով տոչորեաց եւ յաւարի էառ զնա եւ գերեաց զկանայս եւ զմանկունս եւ բազում ոճիրս գործեաց, զի ընդդիմացան նմա պատերազմաւ... Եւ յառաջագոյն որջացեալ էր ի յանառիկ դղեակին Պերդամայ>>¹³⁵:

Օսմանյան վերնախավը և սուլթանը նախըտրեցին ներման արժանացնել և անգամ պաշտոն շնորհել Էլիազ փաշային, մանավանդ, գորահրամանատար Խուսրեվ փաշան չէր կարողացել զենքի ուժով ընկճել նրան: Այդ կերպ նրանք վարվել էին նաև ջալալիական ավելի խոշոր դեմքերի՝ Քարա Յազըջիի և նրա եղբայր Դելի Հասանի հետ, նախքան վերջնականապես ջախջախելը՝ կարևոր պաշտոններ շնորհելով նրանց¹³⁶:

Ժամանակները, սակայն, փոխվել էին և 1630-ական թթ. վերջին ջալալիական ծառերի հետևում այլևս անտառ չկար, ծանր պարտություններից հետո շարժումը չքացել էր ասպարեզից: Սուլթանը չէր կարող եր-

¹³² Naima. *Annals of the Turkish Empire*, pp. 326, 355.

¹³³ Sandy's *Travel Containing an History of the Original State*, p. 12.

¹³⁴ Զուլալյան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը, էջ 215:

¹³⁵ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ, էջ 561: Տես նաև Զուլալյան Մ., նշվ. աշխ., էջ 212:

¹³⁶ Петросян Ю. А. Османская империя, с. 173-174, 176.

կար հանդուրժել իր առանձնաշնորհյալ ոսոխին և նրա հրամանով Էլիազ փաշան մահվան դատապարտվեց: Գր. Դարանադցին այդ վերագրում է սուլթանի արդարամտությանը՝ ի գոհացումն Մանիսայի բողոքող ազգաբնակչության¹³⁷:

Զալալիական շարժումը և լուրջ դժվարությունների գնով դրա դեմ տարած հաղթանակը Էժան չնստեցին նաև Օսմանյան կայսրության վրա՝ կասեցնելով նրա աշխարհակալական հարձակման թափն ու կարողությունները: Ակադ. Ա. Հովհաննիսյանը իրավացիորեն կարծում է, որ XVI դ. վերջին տասնամյակից սկսած այդ շարժումը կայսրության արևելյան և Փոքր Ասիայի այս կամ այն մասերում տասնամյակների ընթացքում <<փշրեցին Օսմանյան կայսրության մեջքը և վճռական դեր կատարեցին XVII դ. վերջերից ակնհայտ դարձած նրա թուլացման մեջ>>¹³⁸:

XVII դ. առաջին տասնամյակներին ջալալիների հուզումներից ուշաբերված՝ կայսրության փոքրասիական արևմուտքը, այսուհանդերձ, դեռ շարունակելու էր պահպանել ավատատիրական պետության մի անհանգիստ հատվածի կացությունն ու համբավը: Բ. դուռը գերադասում էր չլարել հարաբերությունները զավառական հողատիրական և մյուս կողմից, ռազմավարչական վերնախավերի հետ: Արդյունքում, ի հակակշիռ կենտրոնական իշխանության, գավառներում ամրանում էին և՛ մեկը, և՛ մյուսը: XVII դ. II քառորդին և դրանից բավական անց էլ կենտրոնական իշխանությունը զգուշավոր դիրք էր բռնել նրանց նկատմամբ: Ինչ վերաբերում է արտաքին ճնշումներին, ապա Զմյուռնիան օսմանյան պետության տագնապներից մեկը դարձավ 1694 թ., երբ Վենետիկը փորձեց գրավել քաղաքը և նախապես հասավ որոշ հաջողությունների, հատկապես Էգեյանի կղզիներում: Ժամանակի մի վավերագրում նշվում է, որ Վենետիկը հասցրել էր հարկային բեռ պարտադրել Էգեյանի կղզիների և առափնյակի բնակչությանը. <<Դարձեալ ի թուին հայոց ՌՃԽԳ (1694) զօրացան Վենետիկ քաղաքին քրիստոնէից զօրքն եւ եկեալ ԳՃ (300) նաւօք եւ մեծաւ պատերազմաւ առէն զՍաղքզի (Քիոս-Ա. Խ.) կղզին... եւ բռնութեամբ առին ի թուրքաց եւ բազում գերիս արարին... Եւ այնչափ զօրացան, մինչի ընդ հարկաւ արարին զամե-

¹³⁷ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ, էջ 565-566:

¹³⁸ Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, էջ 117:

նայն կղզիսն՝ նայ եւ Իզմիրու եւս Խ (40) քեսայ խարած առին ի թագաւորական հարկացն»¹³⁹:

Եվրոպական տերությունների միջամտությունից հետո, սակայն Վենետիկի նավատորմը հեռացավ օսմանյան ափերից¹⁴⁰:

Զալալիների և փոքրասիական շրջանների այլ ապստամբությունները իրենց խոր հետքը թողեցին Օսմանյան Թուրքիայի հետագայի ներքին քաղաքական ու տնտեսական զարգացումների վրա: Դերեբեյների (այսինքն) զորեղացումն այստեղ, կարելի է կարծել, մի հայտնի չափով կապվում է զալալիների չղաղարող հուզումների և դրանով իսկ երկրի ներքին զարգացումները կասեցնող հետևանքների հետ: Ունենալով հարկեր հավաքելու և պետությանը դրանից որոշակի մաս հատկացնելու պարտավորվածություն ու իրավունք, դերեբեյներն իրենց կիսանկախ վիճակը պահպանում էին նաև հաջորդ հարյուրամյակում՝ տնտեսական հարաբերական ինքնուրույնությամբ, պետության կողմից ճանաչված կարգավիճակով¹⁴¹:

XV դ. առաջին քառորդին օսմանների կողմից նվաճված բեյությունների ժառանգորդների հանդեպ իր դիվանագիտական հաջողություններն էր գրանցում օսմանյան պետության դյուրաթեք քաղաքականությունը: Այդընի, Մանիսայի և Կարամանի շրջաններում XV-XVII դդ. տևական ողորմածություն ցուցաբերվեց Սարուխանօղլուների ժառանգորդներին, որոնց հասած հողատարածքների մի մասը նրանք պահպանել և վերածել էին վակֆային սեփականության՝ այդպիսով ստանալով իրենց հասանելիք եկամուտների և այդ սեփականությունը վերահսկելու (կառավարելու) իրավունքը: Սարուխանօղլուներից հայտնի են 1462 թ. մի չիֆթլիքի նվիրաբերումը, ինչպես և այդ տոհմից մեկ այլ անձի՝ 1547 թ. վակֆային նվիրաբերումը Ենգի նահիեում՝ նրա որդիների ժառանգական իրավունքների ամրագրմամբ հանդերձ¹⁴²:

Փոքրասիական արևմուտքում XVII դ. իր ազդեցությամբ ու տիրույթների չափերով շատ ավելի ակնառու էր դարձել Կարաօսմանօղլուների տոհմը, որի մի ճյուղը տիրում էր Այդընին, մյուսը՝ Մանիսային և Բեր-

¹³⁹ Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, էջ 115:

¹⁴⁰ Ալպօյաճեան Ա., Անհետացող հայ գաղութներ, թիւ 6, էջ 167:

¹⁴¹ Гордлевский В. А. Избранные сочинения, т. III, с. 21.

¹⁴² Ştu Kanunpolojenie lıvyı Aıdyın. Agrarñyı stroı Osmansoy imperiı XV-XVII vv, с. 163-164.

գամային¹⁴³: Իրենց ենթակայության ներքո գտնվող գյուղատնտեսական ընդարձակ հողերի շնորհիվ նրանք փոքրասիական արևմուտքի այս մասում ունեցած դիրքն ու ազդեցությունը ամրապնդում էին արտաքին առևտրից գոյացած եկամուտների միջոցով¹⁴⁴ և առհասարակ Մանիսայի ու նրա շրջակայքի տնտեսական նշանակության ուժով: Ա. Ալպոյաճյանը նկատում է, որ Կարաօսմանօղլուները և փոքրասիական հյուսիսային շրջաններին տիրող Չափանօղլուները իրենց տոհմական ճյուղավորումներով <<կամաւոր միութեամբ և բազմութեամբ հարուստ և զորավոր>> իշխանություններ էին ստեղծել, որոնք, <<դոյզն հարգանք մը չունէին կեդրոնականին նկատմամբ>>¹⁴⁵:

Հիրավի, Կարաօսմանօղլուները նույնիսկ XVIII դ. կարող էին հանդես գալ իրենց բացահայտ անհնազանդությամբ: 1768 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Ջմյուռնիայի փաշա Կարաօսմանօղլուն հակառակ իր պարտավորվածությանը՝ օսմանյան բանակին տրամադրելու 20-հազարանոց զորք, հանդգնեց ոչինչ չտալ և կենտրոնական կառավարությանը մնում էր միայն հաշտվել դրա հետ¹⁴⁶: Վ. Ա. Գորդլևսկին գրում է՝ երբ դերեբեյները մեղանչում էին պետության գերիշխանության դեմ, սուլթանները նրանց դեմ հանում էին պատժիչ ուժեր կամ ուղարկում էին մետաքսե լար՝ ի նշան այն բանի, որ մեղավորին հնարավորություն է տրվում ազատվել մահապատժից՝ ինքնասպան լինելով¹⁴⁷: Նման վճիռը, սակայն, ոչ միշտ էր ճակատագրական լինում, որովհետև դատապարտված դերեբեյներից ոմանք հասցնում էին գլուխներն ազատել կաշառքով: XVIII դարավերջի անգլիացի հեղինակը գրում է, որ Ջմյուռնիայում և շրջակայքում ազդեցիկ ուժ ունեն <<մեծ աղաները>>՝ անկախ և ինքնագլուխ կալվածատերերը, ովքեր զորք են պահում և տուրքեր գանձում քաղաքի բնակչությունից: Բ. դուռը, հավելում է նա, որևէ եկամուտ չի ստանում Ջմյուռնիայից, բայց երբեմն իր ներկայությունը զգացնել է տալիս, երբ հարկ է լինում մի-

¹⁴³ XVII դ. Ջմյուռնիան և Այդընը իրենց կից շրջաններով մտնում էին Անադոլուի էյալեթի (բեյլերբեյլիք) մեջ և կազմում էին նրա 14 սանջակներից մեկը: Այն սահմանակից էր Սարուխանի լիվային (տես նույն տեղում, էջ 94):

¹⁴⁴ Ste Finkel C. Osman's Dream, p. 400.

¹⁴⁵ Ալպոյաճեան Ա., Պատմություն Եւրոկիոյ հայոց, էջ 308:

¹⁴⁶ Новичев А.Д., նշվ. աշխ., էջ 221:

¹⁴⁷ Гордлевский В. А., նշվ. աշխ., էջ 23-24:

ջամտել այդ աղաների վեճերին¹⁴⁸։ Եթե XVII դ., փոքրասիական արևմուտքում տնտեսությունն անարգել տնօրինում էին մայրաքաղաքի իշխանությունները և նրանց էին առաքվում Զմյուռնիայի, Սարուխանի, Թրակիայի, անատոլիական և այլ շրջանների բնակիչներից գանձված հարկերը¹⁴⁹, ապա հաջորդ դարում այսանների գորեղացումը Բ. Դոանը պետք է հարկադրեր համակերպվել քչին. <<Այս այսանների համար առևտուրը բերում է եկամուտներ, որ նրանք ստանում են բամբակից և մյուս ապրանքներից և որն ապահովում է նրանց հաշիվները հնչուն դրամով...առևտրի շահերը միշտ իրենց օրենքն են թելադրում երկու կողմերին (այսաններին և Բ. Դոանը-Ա. Խ.)>>¹⁵⁰, - գրում է իրագել դը Տոտորը։

Կարաօսմանօղլուները այս տարածաշրջանում իրենց դիրքը պահպանում էին նաև կենտրոնական իշխանության հեղինակավոր ներկայացուցչի՝ քափթան փաշայի (օսմանյան նավատորմի հրամանատարը) պաշտոնավարման պայմաններում։ Տարբեր տվյալներով նրանք իրենց իշխանությունը պահպանել են մինչև XIX դ. սկզբները, անգամ մինչև 1822 թ., ընկճվելով Մահմուդ Բ-ի կողմից¹⁵¹։ Այս սուլթանը ևս, ինչպես իր նախորդները, չէր զլանում հակառակորդներին չեզոքացնել շոյելու միջոցով, այնպես որ Կարաօսմանօղլուների հաջորդները պաշտոններ էին ստանում նաև հետագայում։ Այսպես, 1843 թ. Մանիսայում դեռ իշխանություն ունեին այդ ցեղի տոհմական աղաները. քաղաքի կառավարիչն էր Կարաօսմանզադե Էյուբ աղան, որը հիվանդության պատճառով իր տեղը զիջեց իր <<ծաղկահասակ որդուն>>՝ Սադրք Բեյին։ Կարաօսմանօղլուները, հարում է զմյուռնահայ թերթը, վերահսկում էին շուկայի գները, դատարանները և տուրքերի չափերը, այսինքն մի հայտնի չափով պահպանել էին իրենց տոհմական իրավունքների վարչական մասը¹⁵²։

Զմյուռնիայի, Այդընի ու Մանիսայի տարածքներին տիրող այս տոհմի, ինչպես և կենտրոնական իշխանությունների տնտեսական գորացման կարևոր միջոցն էին առևտուրը և արհեստները, որտեղ զգալի դերակատարություն էր վերապահված այլադավաններին, այդ թվում և

¹⁴⁸ Eton W. նշվ. աշխ., էջ 290։

¹⁴⁹ Ismail Cem. *Turkiyede geri Kalmışlığın Tarihi*. s. 80.

¹⁵⁰ *Memories of Baron de Tott*, p. 145. Հեղինակի այս եռահատոր աշխատությունն առաջին անգամ հրատարակվել է ֆրանսերեն, Ամստերդամում, 1784 թ.։

¹⁵¹ *Handbook for Travel in Turkey*, p. 302.

¹⁵² Արշալոյս Արարատեան, 1843, նոյեմբերի 12։

հայերին: XVII –XVIII հայերի գաղթերը Զմյոռնիա և կից շրջաններ շարունակվել է նաև կիսանկախ այս դերեֆեյությունների բավական կենսունակ իշխանության պայմաններում, որով և պետք է հաշվի առնել սրանց համեմատաբար մեղմ վերաբերմունքը գաղթականության (և ոչ միայն հայ) նկատմամբ, այնքանով, որքանով նշված դարերում տեսնում ենք այդ գաղթականության աչքին Զմյոռնիան, որպես հանգրվան դիտվելու բազմաթիվ փաստեր:

Այսաները, որպես Բ. դռան կողմից ճանաչված բարձրակարգ պաշտոնյաներ, իրենց ազդեցիկ նշանակությունը շարունակում էին պահպանել անգամ Զմյոռնիայի առանձին համայնքների կյանքում: Զմյոռնահայ համայնքում եկեղեցու շինության շուրջ ծայր առած գծությունների առթիվ և զմյոռնացիներին ուղղած իր պատրիարքական կոնդակում (1775 թ. հունվարի 24) Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքը ժողովրդին միաբանության կոչ էր անում՝ հարկ համարելով ընդգծել տեղի այսաներին հաշվի առնելու անհրաժեշտությունը: Պատրիարքը հորդորում էր զմյոռնացիներին <<արժանաւոր շարժամբ իւրաքանչիւր դատաւորաց հեգաբար մերձենալ և զկամս նոցա շահել և ի նոցանէ շնորհ մարդասիրութեան և խնամք դատաւորական և հայեցք քաղցրութեամբ և ապա զբոլոր իշխանաւոր զայլազգիսն՝ զգապիթսն և **զայսանսն** և զայլ մեծամեծսն՝ ըստ արժանւոյն իւրաքանչիւրոց զկամսն ձեռք առնուլ պարտիք>>¹⁵³:

Այսաների տնտեսական գորեղացումը հիմնականում կապվում էր նրանց հարկահավաքման իրավունքի և հողերի կառավարման գործառույթի հետ¹⁵⁴, որ նրանք ձեռք էին բերել՝ օգտվելով կենտրոնական իշ-

¹⁵³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 71: 1775 թ. կողմերը Զմյոռնիայում նոր եկեղեցի չի կառուցվել. Պատրիարքի դիտողությունը վերաբերում է կամ զմյոռնացիների այդպես էլ չիրագործված մտահղացմանը, և կամ էլ Ս. Ստեփանոսի վերանորոգմանը:

¹⁵⁴ Ste Karpas K. H. The Stages of Ottoman History, p. 91. Այդ երկու գործառույթները և դրանցից հատկապես հարկահանության իրավունքը, իսկապես, այսանլըքի ինստիտուտի տնտեսական ուժի հիմքն էր, որ երկուստեք ձեռնտու էր և կենտրոնական իշխանությանը՝ գավառներում սրա թուլության պայմաններում, և այսաններին՝ սանջակբեյերի ձևական գերակայությամբ, որ թույլ էր տալիս ինքնակամ տնօրինելու նշված գործառույթներից ստացվող եկամուտները: Կարելի է կարծել, որ կենտրոնական իշխանության և այսանների միջև կոնֆլիկտը, անկախ դրա վայրիվերումներից, պետք է հասունանար ոչ թե առաջինի թուլության, այլ ամրապնդման պայմաններում: Էգեյանի շրջանում, ինչպես և

խանության թուլությունից: Այդընի վիլայեթում նրանք օրինականացրեցին հարկեր գանձելու իրենց իրավունքը խաղաղության պայմաններում: Պետական հարկը մուծելուց հետո նրանց ձեռքին մնում էին շոշափելի եկամուտներ¹⁵⁵, որոնք տնօրինում էին սեփական հայեցողությամբ:

Այանները հիմնականում գոյատևեցին մինչև XVIII դ. վերջերը և վերացվեցին Մահմուդ Բ-ի օրոք, երբ վերջ տրվեց նրանց կիսանկախ կարգավիճակին¹⁵⁶:

Զմյուռնիայի, որպես օսմանյան առևտրատնտեսական կարևոր հանգույցի և միջազգային նավահանգստի հետագա պատմությունն ուղղորդվեց զուտ օսմանյան կայսրության ճակատագրին համընթաց, ընդիույ մինչև դրա վախճանը՝ քաղաքը հրդեհվեց, իսկ նրա քրիստոնյա բնակչությունը, այդ թվում և հայերը, կոտորվեցին և մասամբ հեռանալով կարողացան մահապուրծ լինել՝ 1922 թ. սեպտեմբերին, հուլիս-թուրքական պատերազմի արդյունքում, որ պատմությանը հայտնի է <<Զմյուռնիայի աղետ>> անունով: Քաղաքը, ինչպես և նրա շրջակայքը, գրկվեց իր բազմազգ բնակչությունից և ամբողջովին կամ գրեթե ամբողջովին թուրքացվեց:

Զմյուռնիայի բնակչության, այդ թվում և հայ համայնքի ժողովրդագրական նկարագրի վրա, շատ ավելի, քան փոքրասիական որևէ քաղաքի, դարեր շարունակ իրենց հետքն են թողել երկրաշարժերը, հրդեհներն ու համաճարակները: Քաղաքակրթության զարգացման դեմ այստեղ, կարծեք պայմանավորվածության համաձայն, միաբանել էին բնակլիմայական, երկրակազմական և սոցիալ-քաղաքական անխուսափելի փոխակերպումները: Բազմաթիվ մեծ և փոքր երկրաշարժերը ներխուժում էին քաղաքի կենսագրության մեջ, ընդհատում կամ ավերում նրա կենսագործունեությունը՝ շատ անգամ կանխորոշելով նրա բնակչության հետագա ճակատագիրը: Զմյուռնիան պատուհասած ավերիչ հին երկրաշարժերից հայտնի է մ.թ.ա. 178 թվականինը, որն ամբողջովին գետնին էր հավասարեցրել քաղաքը: Այն վերականգնեց Մարկոս

Բալկաններում, այսաները նպաստեցին Եվրոպայի հետ տեղական առևտրաշրջանառության աճին և մյուս կողմից, դանդաղեցնելով ամբողջ երկրի կտրվածքով շուկայական հարաբերությունների զարգացումը:

¹⁵⁵ Новичев А. Д., նշվ. աշխ., էջ 221:

¹⁵⁶ Гордлевский В., նշվ. աշխ., էջ 24:

Ավրեղիոս կայսրը¹⁵⁷, ըստ երևույթին, նկատի առնելով Հոնիականի շրջանում Զմյուռնիայի բացառիկ բարենպաստ դիրքը, որպես նավահանգստի և Հռոմեական կայսրության մեջ ունեցած ռազմաստրատեգիական ու վարչական կենտրոնի դերը: Հայկական աղբյուրների վաղ հիշատակումներից մեկում երկրաշարժը հիշվում է անգամ ամիս-ամսաթվի արձանագրումով. <<Յամի Տեառն ՌՁՅԹ (1389) մարտի ամսոյ Ի (20) օրն շաբաթ ի կէս աւուրն եղև շարժ և արար վնաս ի Շիօն և ի Զմիռ>>,- ասված է մի ձեռագրում¹⁵⁸:

1663 թ. մեկ այլ երկրաշարժ, հավանաբար խոշորներից մեկը, հիշվում է Թավերնիեի ուղեգրության մեջ¹⁵⁹:

Միջնադարում մեկ այլ՝ 1669 թ. երկրաշարժը նկարագրել է Երեմիա Քյոմուրճյանը՝ նշելով դրա ընդարձակ շառավիղը և ավերածությունը. <<Մահ լինէր ի Զմիւռնի և Բերիա և Ենկիշեհիր: Շարժ լինէր դարձեալ յԱնատոլի և տապալումն առնէր բազում գաւառաց որ ոչ լեալ էր երբէք>>,-գրում է նա¹⁶⁰:

Եվրոպացի ճանապարհորդ Սպոնը, որ 1675 թ. եկել էր Զմյուռնիա, գրում է, որ քաղաքում ուժեղ երկրաշարժ՝ եղել.¹⁶¹ վեց ահարկու ցնցումներ ավերել էին քաղաքը: Իր ավերիչ ուժով առանձնանում է 1688 թ. հուլիսի 11-ի մեծ երկրաշարժը, երբ 14 հազար մարդ մնաց փլատակների տակ¹⁶² և, ինչպես գրում է ֆրանսիացի ճանապարհորդ Լուկան, <<քաղաքը բոլորովին կործանեցաւ>>¹⁶³: Ողբերգական եղավ նշանավոր Աբրահամ Ապրոյանի (Ապրո Չելեպի) որդու՝ Մատթեոսի համար այդ երկրաշարժը: Իր <<Պատմական ոտանավորում>>¹⁶⁴ նա նկարագրում է իր Զմյուռնիայում հաստատվելը և տուն կառուցելը (<<մեծաւ ծախիւք յորինուածօք որպէս յանկ էր>>), ապա դրան հետևած արհավիրքը, որին զոհ են գնում իր կառուցած տան փլատակների տակ մնացած մայրը և զավակները: Ստեղծագործությունն աչքի է ընկնում անկեղծությամբ, զգացմունքների թափով և ուշագրավ դիտարկումներով:

¹⁵⁷ Էփրիկյան Մ., նշվ. աշխ., էջ 752:

¹⁵⁸ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 513:

¹⁵⁹ The Six Voyages, p. 102.

¹⁶⁰ ՄՄ, Փիրդալեմեան Ղ., Նշխարք պատմութեան հայոց, հ. Բ, էջ 501:

¹⁶¹ Քոսեան Հ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հ. 2, էջ 23:

¹⁶² Արշալոյս Արարատեան, 1847, 17 հոկտեմբերի:

¹⁶³ Բիւզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի:

¹⁶⁴ ՄՄ, Փիրդալեմեան Ղ., նշվ. աշխ., էջ 560-564:

Մեծապես վնասվել էր հայոց թաղը և խոնարհվել Ս. Ստեփանոս եկեղեցին, որի նորոգմանը ձեռնամուխ եղավ հայ համայնքը՝ թեմի առաջնորդ Հովսեփ վարդապետի մասնակցությամբ¹⁶⁵:

Քաղաքին բավականաչափ վնասներ պատճառեց հաջորդ դարի մյուս խոշոր երկրաշարժը՝ 1739 թ. ապրիլին, որն ուղեկցվել էր համատարած փլուզումներով, ինչպես նկատում է Հ. Քոսյանը՝ հենվելով մի եվրոպացի հեղինակի վրա¹⁶⁶: Իսկ 1778 թ. հուլիսի 5-ի մեծ երկրաշարժը գրեթե լիովին ավերեց քաղաքը¹⁶⁷:

Երկրաշարժերի ավերումները լրացվում էին դրանց սովորաբար հետևող հրդեհներով: Զմյուռնիայի տները սովորաբար փայտաշեն էին և երկրի ցնցումներից խուճապահար մարդիկ կարող էին անզգուշաբար հրդեհի օջախ ստեղծել: Բայց այն կանոնավորությունը, որով երկրաշարժերին հաջորդում էին հրդեհները, այդուհետև տների և շենքերի թալանը, թույլ է տալիս կարծելու, որ այստեղ ոչ քիչ դեպքերում իրենց միջամտությունն են գործադրել ենիչերիները և կամ քրեական տարբերը՝ որպես իրենց արարքի հետևանքը լիովին գիտակցող հրձիգներ: Իսկապես, հրդեհներով են շարունակվում և կողոպուտներով ավարտվում 1688-ի, 1739-ի, 1742-ի, 1763-ի, 1778-ի և այլ տարիներին Զմյուռնիան ցնցած բնական ու սոցիալական աղետների դրամատիկ պատմությունները:

Այդպիսի իրադրություններ ստեղծվում էին, ի դեպ, նաև Կ. Պոլսում: Նկարագրելով 1613 թ. ապրիլի 12-ի հրդեհը, եվրոպացի ճանապարհորդ

¹⁶⁵ Լուի XIV-ի բժիշկ Պ. Լուկան հետաքրքիր տեղեկություններ է տալիս 1688-ի երկրաշարժից հետո Զմյուռնիայում տնաշինական պատկերացումների մեջ կատարված փոփոխությունների մասին. <<Քաղաքը վերաշինելու առթիւ այս անպատեհութեան (տների ոչ սեյսմակայունության-Ա. Խ.) դարման տանիլ խորհեցաւ: Տուները քարաշէն են, հիմերէն մինչև 10-15 ոտք բարձրութեամբ: Անկէ վեր՝ իրարու մէջ ագուցուած ատաղձներով շինուած են, որոնց մէջերը լեցուած են եփած կաւով եւ ծեփուած են կրով: Այս զգուշութիւնը բաւ եղաւ, որովհետեւ անկէ ի վեր պատահած աւելի բուռն երկրաշարժերն անգամ մեծ վնաս չտուին եւ շատ քիչ տուներ փլան>> (Իզմիր երկու հարիւր տարի առաջ, Բիւզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի):

¹⁶⁶ Քոսեան Հ., նշվ. աշխ., էջ 23:

¹⁶⁷ Handbook for Travellers in Turkey in Asia, p. 275. Ատոմը (թեև նա այս երկրաշարժը վերագրում է 1777 թ.) գրում է, որ հայերը երկու ամսվա չափ ապաստանել են եկեղեցու բակում՝ երկնչելով նոր ցնցումներից (Արեւելք, 1902, թիւ 4952 : Տես նաև Արշալոյս Արարատեան, 1847, 17 հոկտեմբերի):

Թ. Քորյաթը գրում է, որ աղետի վայր ժամանած քաղաքի փաշան այստեղ ընդհարվում է ենիչերիների հետ, որոնք զբաղված էին այրված տները թալանելով. <<Իսկապես, այդպես էլ պատահեց,- գրում է նա,- որովհետև ենիչերիները նպատակադրվել էին կրակ գցել տները՝ մեծ վտանգ ստեղծելով քաղաքի համար՝ ի սեր ավարի և կողոպուտի, մանավանդ, հրեաների տներից>>¹⁶⁸:

1742 թ. օգոստոսի հրդեհը բնակլիմայական քմահաճույքով հանկարծ կանգ էր առել Հայոց թաղի՝ Հայնոցի մոտ: Մխիթար աբբահորը ուղղած նամակում ականատեսը գրում է. << 16000 հրեի տուն էր ուեցաւ, այսքան տաճկի տուն, այսքան չարշու բազար, որ կասէն եթէ տուն, եթէ բանուոր օդայ՝ 82000. եկաւ ֆռանկի, հայի մահիլին դէմ առաւ (հրդեհը-Ա. Խ.). աստուածային նախախնամութեամբն հօվն վեր ելաւ, դարձուց դէպ ետ, զինչ ասեմ՝ բոլոր յոյսերնիս հատաւ, պատրաստեցաք, որ մտնեմք նաւ տէրն յինքն ազատեաց...>>¹⁶⁹:

Հրդեհներն այս բազմազգ և բազմակրոն քաղաքում կարող էին ընդարձակ ճարակ գտնել և ամբողջ թաղեր հող ու մոխրի վերածել բոլորքվելով նաև կրոնական ֆանատիզմի պողոթնումներից: Թեւ Ջոյուռնիան հայտնի էր որպէս կայսրության անհամեմատ հանդուրժող քաղաքներից առաջինը, այսուհանդերձ, 1797 թ. մարտի 15-ին <<բոլոր Տրանկաց թաղը մոխիր դարձաւ սոսկալի հրկիզութենէ մը>>,-գրում է զմյուռնահայ իրազէլ թերթը¹⁷⁰:

Հայոց թաղը մեծապէս տուժել էր 1817 թ. օգոստոս-սեպտեմբերին բռնկված հրդեհի հետևանքով: Ջոյուռնիայի վիճակի առաջնորդ Փիլիպոսը Ներսէս Աշտարակեցուն գրած իր նամակում (1817, 5 սեպտեմբ.) հայտնում էր, որ այրվել են հայերի հին և նոր պատմահանները (չթագործարանները) Արապ մահալլեսի կոչվող թաղամասում՝ թշվառության մատնելով աղետյալներին¹⁷¹:

Հրդեհների այսքան հաճախականությունը հուշում է նաև դրանց մի մասի կանխակալ առաջացման հնարավորությունը: Հրձիգներին նկատի ունեւր սուլթան Մելիմ Ա-ի օրենքներից մեկը, որով պատմի առավելագոյն չափ էր նախատեսվում հանցանքի մեջ բռնված հրձիգների

¹⁶⁸ Armenians in the Ottoman Empire, p. 72.

¹⁶⁹ Տայեան Դ., Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ, էջ 302:

¹⁷⁰ Արշալոյս Արարատեան, 1847, 17 հոկտեմբերի:

¹⁷¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վալ. 153:

նկատմամբ. <<Եթե որևէ մեկը այրի որևէ մեկի տունը կամ խանութը, ապա նրան թող կախեն>>¹⁷²:

Զմյուռնիայի հրդեհների առասպելական տարեգրությունը եզրափակելիս հարկ է հիշել Ա. Ալպոյաճյանի վկայակոչած՝ անգլիացի մի ճանապարհորդի (1830-ական թթ.) հանրագումարը՝ <<Իզմիր այրած է ամբողջովին ավելի քան տասն անգամ՝ 750 տարուան միջոցին>>¹⁷³:

Տարերային աղետների հետ միասին միջնադարյան (ավելի ուշ ժամանակաշրջանի ևս) Զմյուռնիան պատուհասում էին հաճախակի տարածվող համաճարակները: Նավահանգստային այդ խոշոր կենտրոնը, Ասիայի ու Եվրոպայի հետ իրականացվող առևտրական ու քարավանային փոխշփումներում ամբարում էր, ընդունում ու փոխանցում վարակիչ բազմաթիվ հիվանդությունների հարուցիչներ, որոնք, թերևս, ավելի շատ զոհեր էին խլում բնակչությունից, քան երկրաշարժներն ու հրդեհները միասին վերցրած: Անողորմ էին հատկապես պարբերաբար կրկնվող ժանտախտի համաճարակները: XVII դ. 30-ականին Զմյուռնիա այցելած ֆրանսիացի Թավերնիեն, ինչ-որ տեղ չափազանցելով և այդ հաճախականությունից ազդված գրում էր, որ այստեղ ոչ մի տարի չէր անցնում առանց համաճարակի¹⁷⁴:

Ընդարձակ տարածքներ էր ընդգրկել 1726 թ. համաճարակը. Մխիթար աբբային գրած նամակում (նույն տարվա հունիսի 15) մի վարդապետ հայտնում է, որ մահտարածամը, <<ի բազում տեղիս տարածեալ է՝ թէ յԱդրիանուպօլիս, թէ յԻզմիր, թէ ի Պուռսայ և յայլ շրջակայս, ուստի դաղմատացիք, յոյնք, նաս հայք, հրէայք և տաճիկք ի հեռակա տեղիս փախեալք անդրէն ևս ըմբոնեալք: Բոլոր պալատից դրունքն փակուցեալք, միայն փոքրիկ ծակ մի թողեալք, անդէն տուրևառութիւն խօսից և թղթոց լինի>>¹⁷⁵:

1765 թ. ժանտախտի ահից քաղաքի բնակչությունը կարող էր դիմել միայն մեկ միջոցի՝ փախուստի, ինչն արձանագրում է եվրոպացի ակադեմիկոսը¹⁷⁶: 1784 թ. օգոստոսին Ղուկաս կաթողիկոսը գրում էր Բսահակ վարդապետին. <<Յիշեալ էիր եւ գտեղոյ ժանտախտն... Աստուած ո-

¹⁷² Книга законов султана Селима I, с. 37.

¹⁷³ Ալպոյաճեան Ա., Անհետացող հայ գաղութներ., թիւ 6, էջ 167:

¹⁷⁴ Tavernier J. Les six voyages, p. 140.

¹⁷⁵ Տայեան Ղ., նշվ. աշխ., էջ 287:

¹⁷⁶ Ասոոմ, Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը, Արեւելք, 1902, 16/29 ապրիլի:

դորմեացի եւ բարձցէ անտի զցան զայն»¹⁷⁷: 1792 թ. կաթողիկոսը նույն հասցեագրումով Մանիսայի և Աքիսարի հրդեհների հետ միասին հիշում է իր կոնդակներից մեկը՝ «<ի վերայ Ջմյուռնիոյ յաղագս ժանտամահին>»¹⁷⁸: Դրանից յոթ տարի անց, 1799 թ. օգոստոսի 22-ին Ջմյուռնիայի առաջնորդ Մարտիրոսը կաթողիկոսին տեղեկացնում էր քաղաքի բնակչությանը մեծ նեղություն պատճառած ժանտախտի մասին¹⁷⁹: Մեծաքանակ զոհեր էր խլել 1812 թ. ժանտախտը, որի հունձքը հասել էր 45 հազար մարդու¹⁸⁰: Գ. Ստեփանյանը նկատում է, որ հավանաբար այս նույն ժանտախտն էր, որ պատճառ դարձավ Ջմյուռնիայից գաղթած հայերի հաստատվելուն՝ Շամախիում և դրա շրջակայքում¹⁸¹: Աղետաբեր էր հատկապես 1819 թ. «<մահտարածամը>» (ժանտախտը կամ խոլերան), որի մասին առաջնորդ Փիլիպոսը գրում էր, որ ահաբեկված բնակչությունը փախել է քաղաքից՝ «<ցան եւ ցիր եղեալ ի Բոնովայ (Ջմյուռնիային կից ամառանոց-Ա. Խ.) եւ յայլ տեղիս>»¹⁸²:

Համաճարակային հիվանդությունները Ջմյուռնիայում հիմնականում հաղթահարվեցին միայն XIX դ. 30-ական թթ., եվրոպական բժշկագիտության ազդու միջամտության շնորհիվ, թեև կարելի է հիշել նաև 1837 թ. գլուխ բարձրացրած և հետագայում ևս իրենց զգացնել տված համաճարակները¹⁸³: Քաղաքում առաջին անգամ հակահամաճարակային արգելափակում (կարանտին) է սահմանվել 1831 թ., երբ Ալեքսանդրիայից եկած նավերը Ջմյուռնիայի ծովախորշի Ենի քալե ամրոցի մոտ ներկավեցին տասը օր¹⁸⁴:

Ի հավելումն այս ամեն աղետների, Ջմյուռնիայի բնակչությունը ըստ հնարավորին պաշտպանվում կամ կանխարգելիչ միջոցների էր դիմում համաճարակների դեմն առնելու համար: Առանձնացվել էին մեկուսարան-հիվանդանոցներ՝ վարակվածների համար, ինչպես հայերի առողջապահիկ կենցաղում՝ այսպես կոչված **մորթաքիան** (մահվան տուն): Այդպիսի հաստատություններ քաղաքի բնակիչները, այդ թվում և հայե-

¹⁷⁷ Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի, աշխ. Վ. Գրիգորյանի, էջ 461:

¹⁷⁸ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 594:

¹⁷⁹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 9, վավ. 125:

¹⁸⁰ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 26: Էփրիկեան Մ., նշվ. աշխ., էջ 754:

¹⁸¹ Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը, էջ 63:

¹⁸² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 34, վավ. 269:

¹⁸³ Ատոմ, նշվ. աշխ.:

¹⁸⁴ Նույն տեղում:

րը, հիմնել էին դեռևս XVIII դ.: Վերջիններս, ինչպես գրում է Ատոմը, իրենց հիվանդանոցը տեղափոխեցին քաղաքի մեկ այլ մաս: Զմյուռնահայերը հետագայում այն վերածել են աղքատանոցի և 1842 թ. ազգային հիվանդանոցի՝ Ս. Լուսավորչյան անվամբ¹⁸⁵: Ժանտախտի առաջին հիվանդանոցներից մեկը Զմյուռնիայում հիմնել էին ֆրանսիական կապուչինյան, ինչպես և ֆրանցիսկյան հայերը՝ 1759-ին, երբ նրանք իրենց հաստատություններից օգտվելու առաջարկ էին արել նախորդ տասնամյակին այստեղ գաղթած նախիջևանցի հայ կաթոլիկներին (իրենց ծուխը դարձնելու ակնկալությամբ)¹⁸⁶: Քաղաքի եվրոպական բնակչության կենցաղի նորամուծություններին նախանձախնդիր հայերը, ամենայն հավանականությամբ, իրենց հիվանդանոցը պետք է ունենային, ուրեմն, արդեն XVIII դ. 40-50-ական թթ. ոչ ուշ¹⁸⁷: XVIII-XIX դ. առաջին կեսին Զմյուռնիայում քրիստոնյաներն ունեին վեց հիվանդանոցներ, չորսը՝ եվրոպացիներինը (լատիններ) և մեկական՝ հույներինը և հայերինը¹⁸⁸:

Արդեն նկատել ենք, որ հաճախակի կրկնվող աղետները իրենց հասկանալի հետևանքն էին թողնում Զմյուռնիայի ողջ ազգաբնակչության, նրա ժողովրդագրական նկարագրի վրա: Մի զարմանալի հետևողականությամբ հայերի թվաքանակը տարբեր ժամանակներում և ժամանակավոր կամ տևական փոփոխությունների սահմաններում շատ քիչ է փոխվել: Զմյուռնիայի հայ բնակչության թվաքանակի մասին, որքանով մեզ հայտնի է, առաջին տեղեկությունը տալիս է Սիմեոն Լեհացին՝ XVII դ. առաջին տասնամյակին, քաղաքում հաշվելով <<հարիւր տուն

¹⁸⁵ Նույն տեղում: Ժանտախտով կամ խոլերայով բռնվածին մորթաքիա էին տանում (եթե հարկ լինէր՝ նաև հարկադրաբար) արդեն վարակված և ապաքինված հատուկ մարդիկ՝ <<մորթաճինները>>, որոնք, ըստ ընդունված տեսակետի, այլևս դիմադրողականություն էին ձեռք բերել և չէին կարող կրկին հիվանդանալ: Կար նաև <<մորթաճի>> քահանա (բնականաբար, բուժվածներից)՝ ի հոգևոր մխիթարություն հիվանդների (Ատոմ, նույն տեղում): Այս հեղինակը տարբերակում է ժանտախտը խոլերայից՝ նշելով, որ երկար ժամանակ դադարած խոլերան կրկնվել է 1893 թ. և ժանտախտը՝ 1902 թ., և որ հիվանդներին տեղավորել են քաղաքից դուրս՝ հավանաբար, հետևելով արդեն ընդունված կարգուկանոնին:

¹⁸⁶ Smyrnelis M.-C. Les Arméniens catholiques de Smyrne, p. 31-32.

¹⁸⁷ Տե՛ս Ատոմ, Իզմիրի Ս. Լուսավորչեան հիւանդանոցը, Արեւելք, 1902, 27 մայիսի/29 հունիսի:

¹⁸⁸ Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 12:

հայի»¹⁸⁹: 1631 թ. Թավերնիեն Ջմյունիայում հայերի թվաքանակը հաշվում էր 8 հազար մարդ, որ չի հակասում Սիմեոն Լեհացու տվյալներին, եթե նկատի ունենանք 1610 թ. հետո գաղթականության հոսքը Ջմյունիա: Նրա տվյալներով՝ քաղաքի բնակչության մեծամասնությունը կազմում էին թուրքերը՝ 60 հազար, ապա հույները՝ 15 հազար, իսկ ամենաքիչը հրեաներն էին՝ 6-7 հազար (ընդհանուրը՝ 90 հազար)¹⁹⁰: 1776 թ. Choiseul Couffier-ը՝ հայերին և ընդհանուր բնակչությանը հաշվում էր համապատասխանաբար 6 և 102 հազար, Տանկուան 1812 թ.՝ 10 հազար և 106 հազար¹⁹¹, ըստ ֆրանսիացի ճանապարհորդ Բանքոենեի, 1820-ականի առաջին կեսին՝ 10 հազար հայ՝ ընդհանուրը՝ ավելի քան 100 հա-

¹⁸⁹ Սիմեոն դպրի Լեհացույ Ուղեգրություն, Վիեննա, 1936, էջ 38: Ընդամին, Սիմեոնը նշում է, որ նրանք ունեն երկու եկեղեցի: Կնշանակի, միջին վիճակագրական հաշվարկով, հայերի թիվը՝ հարյուր տունը, կազմել է 5-7 հարյուր մարդ, հույժ սակավաթիվ մի հանրույթ՝ երկու եկեղեցի պահելու համար: Հետևաբար, կամ այս հեղինակն է նվազ ցույց տալիս հայերի թիվը, կամ, եթե այդ հավաստի է, 1609-1610 թթ. (եբբ նա գտնվում էր Ջմյունիայում) նախորդող շրջանում Ջմյունիան կամ գմյունահայերը աղետի կամ անակնկալ ճնշման (տարերային աղետներ, համաճարակներ, հանրային ցնցումներ) են ենթարկվել, որի մասին Սիմեոնը ոչինչ չի ասում: Բայց այդպիսի աղետ հնարավոր էր, եթե նկատի ունենանք, որ Ջմյունիայում 1610 թ. քիչ առաջ Այդրնի մերձակայքում և առհասարակ Ջմյունիայի առափնյակում իրենց վայրագություններն էին գործադրում ջալալիներ Թավուլը, այնուհետև՝ Քալենդեր օղլուն, որոնցից հայ բնակչությունը կարող էր խուսափել, ի դեպ, ոչ միայն ցամաքային, այլև ծովային ուղիներով: Չպետք է նաև աչքաթող անել այն, որ 1609-1610-ի մոտերքում հայերի թվաքանակն այստեղ կարող էր հասնել երկու եկեղեցի ունենալու չափերի՝ Շահ Աբասի արշավանքների, սովի և ջալալիների ապստամբությունների պատճառով բնավեր դարձած հայության գաղթելու պատճառով: Հիրավի, 1608 թ. մի հիշատակարանում գրառված է, որ հայ գաղթականները հասել են <<ի լեռնէն Կովկասու մինչև ի Պոնտոս և յԵփեսոս և ի Կապադովկեայ>> (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, էջ 289): Բայց այս Ջմյունիայում և դրա շրջակայքում հանգրվանած նոր գաղթականությունը հնաբնակների հետ միասին, կարող էր լքած լինել քաղաքը. 1600-ականի սկզբներին, ինչպես նշում է անգլիացի ճանապարհորդը, Ջմյունիայի բնակչության մեծ մասը հեռացել էր այրված քաղաքից (Sandy's Travels Containing of the Oriental State of the Turkish Empire, p. 12):

¹⁹⁰ The Six Voyages of John Baptista Tavernier, p. 33.

¹⁹¹ Տես Քութան Զ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 43:

զար¹⁹²: Քաղաքի ընդհանուր բնակչության թվաքանակը գոյացնում էին, ըստ վերջինիս տվյալների, մահմեդականները (60 հազար), հույները (25 հազար), հայերը և հրեաները (5 հազար), եվրոպացիները (5-6 հազար): 1872 թ. տպագրված մի տեղեկագրքում հրեաները հաշվվում են 12 հազար մարդ, հույները՝ 90 հազար, թուրքերը՝ 80 հազար, հայերը՝ 10 հազար¹⁹³: 1864 թ. տպագրած իր գրքում Ն. Մարգիսյանը հաշվում է 45 հազար թուրք, 55 հազար հույն, 13 հազար հրեա, 5 հազար հայ՝ ակներևաբար նվազեցնելով հայերի թիվը¹⁹⁴:

Եթե համադրենք քաղաքի հայ և ընդհանուր ազգաբնակչության թվաքանակը, ապա կտեսնենք, որ առաջինը XVII դ. 30-ականից մինչև XIX դ. 20-ականի կեսը տատանվել է 6-10 հազարի միջև, ընդհանուր թվաքանակի՝ 90-106 հազարի աճի պայմաններում, որ կտրուկ հակադրություն չի կազմում, իր դանդաղությամբ, քաղաքի այլ համայնքների համեմատությամբ: Ավելացնենք, որ Ջմյուռնիայի ազգաբնակչության թվաքանակում ամենաստվարը մահմեդականներն էին, որ բացատրվում է վերջիններիս հատուկ ծնելիության բարձր ցուցանիշներով և ընդհանուր սոցիումի շրջանակներում նրանց կեցության առավել բարենպաստ հանգամանքներով: Մյուս կողմից, քաղաքի ազգաբնակչության ոչ արագ աճի իրողությունը XVII դ. մինչև XIX դ. առաջին քառորդը մասամբ պետք է բացատրել բնական աղետների, հրդեհների ու համաճարակների բացառիկ հաճախականությամբ:

Ըստ կրոնադավանական ընդհանրության, քաղաքի առանձին թաղերում էին ապրում հույները, մահմեդականները, հայերը և հրեաները: Առանձին թաղում էին բնակվում եվրոպացիները, որոնք, ի դեմս ջենովացիների, առաջինն էին այստեղ հաստատվել դեռևս XII դարից: Ջմյուռնիայի եվրոպական բնակչությունը հետագայում համալրվեց XIII-XIV դդ. խաչակիրների հետ կամ նրանց հետքերով եկած եվրոպական առևտրականներով, այդ թվում և հայերով: Եվրոպացիները իտալացիներ, ֆրանսիացիներ, անգլիացիներ, հոլանդացիներ, գերմանացի-

¹⁹² ՄՄ, Մ. Աղաբեկյանի արխիվ, թղթ. 189, վավ. 65: Այս հեղինակի գրքի՝ հայերին վերաբերող տեղեկությունները հայերեն են թարգմանվել 1826 թ., Ջմյուռնիայի Բուռնովա արվարձանում:

¹⁹³ Handbook for Travellers, p. 270.

¹⁹⁴ Սարգիսեան Ն., Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 12:

ներ և այլն, սերտորեն կապված էին իրենց կամ որևէ եվրոպական հյուպատոսարանի հետ, որոնք օսմանյան իշխանությունների առջև պաշտպանում էին նրանց իրավունքներն ու շահերը: Ոչ մահմեդական զմյուռնացիների վերնախավը, հատկապես միջազգային տարանցիկ առևտրական ուղիներում երթևեկող վաճառականությունը, այս կամ այն կերպ, պաշտոնական կամ կիսապաշտոնական ձևակերպումներով առնչվում էր եվրոպական հյուպատոսությունների հետ՝ օգտվելով նրանց հովանավորությունից, որը ոչ այլ ինչ էր, բայց եթե օգտվելը կապիտոլյացիաների ընձեռած հնարավորություններից: Ասվածը ամբողջովին վերաբերում էր նաև զմյուռնահայ խոշոր առևտրականությանը:

Հոյների, մահմեդականների և հայերի թաղերը տեղավորված էին բլրի վրա, դեպի վեր բարձրացող Պագոս լեռը, իսկ ծովափին գտնվում էր եվրոպացիների թաղը, կարծես շարունակելով ջենովացիների և Հռոդոսի ասպետների (XIV դ. երկրորդ կես) նախընտրած առափնյա հատվածի կենսագրությունը:

Միջնադարում և դեռ դրանից էլ հետո, ասիական երկրների և Եվրոպայի հետ մշտական առևտրատնտեսական շփումների հետևանքով Զմյուռնիան Օսմանյան կայսրության եզակիության հավակնող քաղաքներից էր, որտեղ մահմեդական թուրքերն ավելի զուսպ էին իրենց կրոնական գերազանցության համոզմունքներում: Թավերնիեն գրում էր, որ Զմյուռնիան ավելի ազատ է, քան Թուրքիայի մեկ այլ վայր, երբ օտարականը կարիք չի զգում ենիչերիի ուղեկցությամբ շրջել¹⁹⁵: Այս զիջողամտությունը կարելի է բացատրել նաև քաղաքում եվրոպական հյուպատոսարանների առատությամբ, ինչպիսիք դեսպանատներն էին Կոստանդնուպոլսում: XVII-XVIII դդ. այստեղ հյուպատոսարաններ ունեին Ֆրանսիան, Վենետիկը, Անգլիան, Հոլանդիան, Ռուսաստանը և այլ երկրներ¹⁹⁶: Ֆրանսիան, ի դեպ, Էգեյանի շրջանում ուներ երկու փոխհյուպատոս, մեկը Սկալա Նովայում և մյուսը՝ Արշիպելագի Քիոս կղզում¹⁹⁷:

Զմյուռնիան եվրոպացիներին, նախ իտալացիներին, ապա ֆրանսիացիներին, հոլանդացիներին ու անգլիացիներին XVI-XVIII դդ. հրապուրում էր Պարսկաստանից բերվող հում մետաքսի որակով և էժա-

¹⁹⁵ The Six Voyages of John Baptista Tavernier, p. 33.

¹⁹⁶ Ամերիկյան հյուպատոսարանը Զմյուռնիայում բացվեց շատ ավելի ուշ՝ 1831 թ. (տես Cem I. Türkiye'de geri Kalmışlığın Tarihi, s. 277):

¹⁹⁷ Նույն տեղում:

նությամբ, որ առաջարկում էր նաև ցամաքային՝ քարավանային առևտրին հմուտ և բազմամարդ հայ վաճառականությունը: Նաև տնայնագործական ու գյուղատնտեսական այլ ապրանքներով՝ գորգերով, օպիումով, հնդկընկույզով, խոզկաղինով և Թուրքիայի այլևայլ շրջաններից բերվող ապրանքներով: Քարավանները այստեղ էին հասնում որոշակի ամիսներին՝ փետրվարին, հունիսին և հոկտեմբերին, հավանաբար, հարմարեցված ոչ միայն կլիմայական պայմաններին, այլև նավահանգստային բեռնափոխադրումների ավանդական ժամանակահատվածներին: Թուրնեֆորը՝ ֆրանսիական ակադեմիայի անդամ և ճանապարհորդ (XVIII դ. սկզբներ), գրում էր, որ պարսկական քարավանները Ջոյունիա են բերում տարեկան 2 հազար հակ մետաքս, օպիում, կտավ և այլ ապրանքներ¹⁹⁸:

Ջոյունիայի կառավարմանը օսմանյան պետությունը առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում՝ ելնելով նրա միջազգային առևտրական կարևոր նշանակությունից, այլև Էգեյանի մերձափնյա շրջանների ավանդականորեն հայտնի կենտրոնախույս կեցվածքից, և որ ոչ պակաս կարևոր է՝ նրա տնտեսական շահավետությունից: Հատկանշական է, որ սուլթան Մեհմեդ Ա Չելեպին, գրավելով Ջոյունիան 1424 թ., քաղաքապետ կարգեց սերբական Լազար թագավորի որդի Ալեքսանդր Միսմանին՝ Բալկաններում իր դիրքերն ամրապնդելու և տեղական ինքնագլխությունները զսպելու ակնկալությամբ¹⁹⁹:

Թավերնին՝ Ջոյունիայում եղած ամենահավաստի ուղեգրողներից մեկը, գրում էր, որ քաղաքում փաշա չկա, այն կառավարում էր կադին՝ կրոնական և միանգամայն իր վարչական ու քաղաքացիական իրավասություններով, ով հանդուրժող էր քրիստոնյաների նկատմամբ, քան այլ վայրերում էր²⁰⁰: XVII-XVIII դդ. կադիի հետ միասին քաղաքում, որպես կենտրոնական իշխանության ռազմական ներկայացուցիչ, հիշվում է

¹⁹⁸ Tournefort J. P. Voyage dun botaniste, p. 315-316.

¹⁹⁹ Այվազովսկի Գ., Պատմութիւն Օսմանեան պետութեան հ. Ա, էջ 81:

²⁰⁰ Tavernier J. B. Les six voyages en Turgue et en Perse, p. 140. Կադիների ծառայական աստիճանակարգում Ջոյունիայի կադին զբաղեցնում էր պատվավոր տեղ այդ վերնախավի եռաստիճան սանդղակում՝ Գոստանդուպոլսի, Ռումելիայի և Անատոլիայի (առաջին աստիճան) և Մեքքայի, Մեդինայի, Կահիրեի ու Հալեպի (երկրորդ աստիճան) կադիներից հետո, Սալոնիկի, Սոֆիայի, Պլովդիվի՝ երրորդ աստիճանի իր պաշտոնակիցների հետ միասին (տես Тодоров Н. Балканский город XV-XIX веков, с. 104).

մյուսելլիմը՝ կառավարիչ գորահրամանատարը, որին անձամբ նշանակում էր սուլթանը: Նա անկախ էր մերձակա քաղաքների փաշաներից, նրան էին ենթարկվում ենիչերիների գորաջոկատները՝ <<բազումս և խռովայոյզս, որք զօր հանապազ ի խնդիր են աղմկաց և աւարառութեանց>>²⁰¹:

XVI և XVII դարերից Ձմյուռնիայի պաշտոնական կառավարիչն էր համարվում քափթան փաշան՝ օսմանյան նավատորմի հրամանատարը: Եթե կադին Ձմյուռնիայում հանդես էր գալիս որպես սանջակբեյ (սանջակը էյալեթից կամ վիլայեթից ավելի փոքր վարչական մաս էր և մտնում էր վերջինիս կազմի մեջ՝ գլխավորվելով սանջակբեյի կողմից), ապա, որպես էյալեթի կառավարիչ հանդես էր գալիս կուսակալը կամ քափթան փաշան: Նրա իշխանությունն ընդգրկում էր Ջեզայիի էյալեթը, որի մեջ էին մտնում այլ տարածքների հետ՝ նաև Էգեյան ծովի առափնյակը և Ձմյուռնիան կից շրջաններով²⁰²: Ձմյուռնիան քափթան փաշայի հասն էր և որպես այդպիսին, ապահովում էր նրա դիրքերը օսմանյան բարձրագույն աստիճանակարգում՝ աքչեի բազմամիլիոնանոց եկամուտներով²⁰³: Օսմանյան նավատորմի համար ևս Էգեյանի մերձափնյա հատվածները հանդես էին գալիս որպես նավաստիների քանակը համալրող տարածքներ: Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Պ. Տոլստոյը նշում էր, որ նավատորմի համար ծովայիններ էին գորակոչում Ձմյուռնիային կից շրջաններից, որտեղ շատ կային ծովային ծառայությանը պիտանի մարդիկ²⁰⁴:

Հույները Ձմյուռնիայում ամենահին համայնքն էին (ողբերգական պատմական ճակատագրի բերումով իրենց հայրենիքում համայնք դարձած)՝ հին հունական քաղաքակրթության արժեքների շարունակա-

²⁰¹ ՄՄ, Մ. Աղաբեկյանի արխիվ, թղթ. 189, վավ. 65: Թանգիմաթի շրջանում կենտրոնական իշխանությունը գորացնելու տրամաբանությամբ, Ձմյուռնիայի մյուսելլիմը ենթարկվում էր Այդընի վալիին՝ արդեն սահմանափակ իշխանությամբ (Սարգիսյան Ն., նշվ. աշխ., էջ 12):

²⁰² Тодоров Н., նշվ. աշխ., էջ 40:

²⁰³ Օսմանյան հողատիրական համակարգի մեջ ամենաընդարձակ և եկամտաբեր կալվածքը հասն էր (100 հազար աքչեից ավելի եկամտով), որ գերազանցում էր թիմարի (մինչև 20 հազար աքչե) և գեամեթի (30-100 հազար աքչե) եկամուտները: Հասերին տիրում էին սուլթանը և նրա ընտանիքի անդամները, մեծ վեզիրը և շատ բեյլերբեյեր (տես Аграрный строй Османской империи XV-XVII вв., с. 218, 216, 201):

²⁰⁴ Русский посол в Стамбуле, М., Наука, 1985, с. 66.

կան կրողը անհիշելի ժամանակներից ի վեր: Դրան էր պարտական հույն բնակչությունը իր թվաքանակով, կարծում ենք, երկար ժամանակ Ջոյունիայի ազգաբնակչության ստվար տարրերից մեկը դառնալու համար: Սելջուկների, բելոյությունների և ապա օսմանյան տիրակալությունների անընդհատ հորձանքը մահմեդական եկվորների անխուսափելի տեղայնացմամբ և տիտղոսավոր կրոնի հետևորդների հետագա էքսպանսիայի պայմաններում՝ այս ամենը ապահովեցին մահմեդական ազգաբնակչության աճը քաղաքում և կայսրության շատ տարածքներում: Այս պայմաններում Ջոյունիայի հույն ազգաբնակչությունը այսուհանդերձ, կարողացավ գոյատևել՝ ապահովելով իր թվական գերակշռությունը ոչ մահմեդական միլիթների մեջ: Առկա տվյալներով (հիմնականում՝ ճանապարհորդներ) հույների թվաքանակը Ջոյունիայում XVII դ.-1840-ական թթ. տատանվում է 15-55 հազարի միջև²⁰⁵: Հույների թաղը համեմատաբար մոտ էր եվրոպացիների թաղին, այսինքն, նավահանգստին, որ բավական առևտրական դյուրություններ էր ընծայում նրանց: Իրենց երբեմնի ճարտարապետական կոթողների ավերակներով հույները դարձել էին երկրաշարժերից ու հրդեհներից անընդհատ վնասվող քաղաքի վերաշինության ակամա մատակարարները: Ղ. Ալիշանն այս առթիվ նկատում է. <<Ի հասարակաց շինուածս նշանաւորք են Վեզիր խան և պեզեսթէն, թանգարան շուկայք և բաղանիքն, որոց քարինք առեալ են յաւերակաց հնոյն Ջոյունիոյ>>²⁰⁶: XIX դ. առաջին կեսին (և հավանաբար, դրանից էլ շատ առաջ) հունաց թաղը կոչվում էր Այա Կատինա (եկեղեցու անվամբ)²⁰⁷, և ինչպես մյուս թաղերը, ուներ նեղլիկ փողոցներ՝ միմյանց հակված և պատշգամբներով տներ: Մեծահարուստների տները, ինչը հատուկ էր բոլոր թաղերին, միմյանց հետ մրցակցում էին իրենց գեղեցիկ ու հարմարավետ հորինվածքով²⁰⁸:

Քաղաքի տարբեր թաղերը, այդ թվում և հույներինը, առանձնացած լինելով խմբված հանրություններով, միմյանց հետ, սակայն, կապվում էին Քարավանի կամրջի կենտրոնական ճանապարհով (XIX դ. երկրորդ կես)²⁰⁹: Հիրավի, Ջոյունիան լեփ-լեցուն էր հին հունական, հռոմեական

²⁰⁵ The six Voyages, p. 33. Լուկա, նշվ. աշխ.: Մ. Մ. Աղաբեկյանի արխիվ, թղթ. 189, վավ. 65: Բազմավեպ, 1847, թիւ 2, էջ 28:

²⁰⁶ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրութիւն, էջ 344:

²⁰⁷ Արշալոյս Արարատեան, 1843, 24 դեկտեմբերի:

²⁰⁸ Բազմավեպ, 1847, թիւ 2, էջ 26:

²⁰⁹ Handbook, p. 76.

ու բյուզանդական դարաշրջանների քաղաքակրթական հիշատակներով, ամրոցների, տաճարների ու եկեղեցիների փլատակներով²¹⁰: Թավերնիեն հիշատակում է հունական երկու եկեղեցի²¹¹ այն ամենը մեծաթիվ եկեղեցիներից, ինչ մնացել էր բուն Ջմյուռնիայում այն բանից հետո, երբ դրանք վերածվել էին մզկիթների, ըստ թուրքերի կրոնական նախանձախնդրության: Ջմյուռնիայի հույները խոսում էին լեվանտում տարածված բարբառով՝ շատ մոտ Կոստանդնուպոլսի հունարենին: Կային նաև թրքախոսներ, հավանաբար, սրանց մեջ՝ Կարամանի շրջանից տեղափոխվածներ²¹²:

Ջմյուռնիայի և շրջակայքի հույներն իրենց առանձնահատուկ տեղն ունեին Ջեզայիրի (հետագայում՝ Այդընի) էյալեթի ներքին առևտրի, և միջազգային առևտրի ու ապրանքափոխանակության ոլորտում: Մ. Հովսեփյանն այս առթիվ նկատում է, որ XVII-XVIII դդ. նրանք եվրոպական առևտրում ծավալեցին խաղողի տնկարկների և բարձրորակ ծխախոտի վաճառքը՝ առաջատար տեղ զբաղեցնելով Արևմուտքի հետ քաղաքի առևտրում և իրենց կնիքը դնելով Ջմյուռնիայի ու շրջականների ապրանքաշրջանառության վրա²¹³: Նրանք էին, որ XVIII դ. վերջում առևտրական տներ հիմնեցին Եվրոպայում: Ավելացնենք, որ հույները գերազանց ծովագնացներ էին և նավագներով էին համալրվում սելջուկյան և օսմանյան ժամանակների նավերը նաև Ջմյուռնիայի ու շրջակայքի հունական ազգաբնակչությունից:

Ջմյուռնիայի հույներն իրենց ազգային մշակույթի մեջ ներդրումներն անում էին եվրոպական լուսավորականության հետ սերտ շփումների, քաղաքում և շրջակայքի բնակավայրերի իրենց դպրոցներում եվրոպա-

²¹⁰ 1845 թ. հրդեհից հետո հայկական թաղի՝ Հայնոցի վերաշինության ժամանակ հայտնաբերվեցին <<բազմաթիւ մեծամեծ քառակուսի կրանիթ քարէ տապաններ, ուստի կը կարծուի, թէ քաղաքին այն կողմը գերեզմաննոց էր ժամանակաւ: Հայոց եկեղեցիին եպիսկոպոսարանին բակը պատի մը քարերուն մէջ գտնուեցաւ Պարիսի պատկեր մը՝ ճերմակ մարմարիոնէ շինուած...>>, գրում է Արշալոյս Արարատեան լրագիրը (1847, 17 հոկտեմբերի): Վերի թաղից հետո, ուրեմն, հայկական թաղամասը հաստատվել էր Ջմյուռնիայի հին հունական լքված գերեզմանատներից մեկի տարածքի վրա:

²¹¹ Tavernier J. B. Les six voyages, p. 138.

²¹² Երեմիա Քյումուրճյանը հիշում է թրքախոս հույն կարամանցիների, որոնց գաղթեցրել էին Կոստանդնուպոլիս (տես Երեմիա Չէլեպոյ Ստամպոլյոյ պատմություն, Հանդես ամսօրեայ, 1909, թիւ 4, էջ 99):

²¹³ Housepian M. The Destruction of a City, p. 29-30.

կան ուսուցման մեթոդների կիրառման շնորհիվ: Վենետիկի Մխիթարյանների <<Դիտակ Բիզանդեան>> թերթը գրում էր, որ հույները լուսավորության ասպարեզում առավել առաջ ընթանալու համար ոչինչ չեն խնայում²¹⁴:

Հույն բնակչության պատմական հիշողության մեջ կայծկլտում էին վաղնջական ժամանակների առասպելներն ու ավանդույթները՝ կապված Մելես գետի եզերքին Արտեմիսի բաղնիքի, անտիկ Ստադիումի, Հոմերոսի քարանձավների և այլ առասպելական վայրերի հետ: Զմյուռնացի հույները պնդում էին, որ այդ քարանձավներում իր քերթվածներն է արարել անտիկ աշխարհի մեծագույն երգիչը՝ Հոմերոսը, ցույց էին տալիս նրա տապանը և այլ նվիրական հնություններ²¹⁵: Ազգային ոգու պահպանությունը, խնամքոտ վերաբերմունքն իրենց սեփական դարավոր կենսագրության հանդեպ՝ մեծապես խթանեցին հույների ազատագրական շարժման ձևավորմանը XVIII դ. վերջերին և ի վերջո, հետ խլած անկախությանը օսմանյան նվաճողներից՝ արդեն նոր ժամանակներում (1830):

Զմյուռնիայի բնակչության մեջ հույների հետ թվաքանակով մրցակցում էին մահմեդականները՝ թուրքալեզու ցեղեր սելջուկների ժամանակներից, և XIV դ. վերջերին ու XV դ. առաջին քառորդից հետո այստեղ հիմնավորված օսմանյան թուրքեր: Զմյուռնիայի՝ հարաշարժ և Սսիայի ու Եվրոպայի խաչուղիներում գտնվող այդ հանգրվանում նրանք հարկադրված զսպվածություն էին պահպանում բնակչության միլեթների և հատկապես, օտարերկրացիների հետ շփումներում՝ չհաշված արտաքո կարգի դեպքերը. առևտուրը մի որոշ չափի հավասարակշռություն էր

²¹⁴ Դիտակ Բիզանդեան, 1813, թիւ 8, էջ 33:

²¹⁵ Քրիստոնյա մյուս տարրերի հետ էգեյանի շրջանում հույներն ունեին որոշ ընդհանրություններ, ինչպիսին էր ուխտագնացությունը Սրբոց մանկանց հանգստարան, որը գտնվում էր Եփեսոսի մոտ, Ոլոգոս լեռան վրա: Ծիսական տարբերությունները, սակայն, տարաձայնություններ էին առաջացնում հույների և հայերի միջև, որ հեռատեսորեն կանխեց Սիմեոն կաթողիկոսը՝ փոխելով հայերի ուխտագնացության օրը. <<Եւ զի տեղին այն ի ձեռս Յունաց էր, ուստի յաւուրն այնմիկ մեծ աղմուկ եւ վեճ լինէր անդ, նաեւ զբազում հիւանդութիւնս եւս կրէին գնացողքն (ուխտագնացության-Ա. Խ.) վասն շոգոյ ժամանակին: Ուստի կամելով նոցա փոխել զօրն զայն եւ ի հինանց չորրորդ կիրակէին երթալ անդ յուխտ>>, -ասվում է մի վավերագրում: Կաթողիկոսն այդ փոփոխությունը հաստատում է կոնդակով (Դիւան հայոց պատմութեան, Գիրք ԺԱ, մասն III, էջ 137: Տես նաև Դաշինք, 1910, 19 մայիսի):

պահանջում սուրբեկտների միջև, իսկ առևտրական հարաբերությունները չէին կարող կայանալ, եթե կողմերից մեկը իր բացարձակ կամքը թելադրեր մյուսին, իբրև արգահատելի ռայայի, ինչպես նվաճված Արևմտյան Հայաստանում, Կենտրոնական Անատոլիայում և Բալկանյան շրջաններում:

Զմյուռնիայում այնուամենայնիվ, թուրքերի վարքագծի ու պահվածքի մասին բավական ոչ միանշանակ տեղեկություններ են հայտնում ճանապարհորդ-ականատեսները, որոնց կարծիքը, ի դեպ, դժվար է տեղավորել գաղափարական կամ անձնական նախասիրությունների շրջանակներում: Մեզ ծանոթ Թուրնեֆորը, ով որևէ շահ չուներ աչառու լինելու, գրում է, որ թուրքերը քիչ էին հայտնվում Ֆրանկների թաղում և երկրորդական տեղ զբաղեցնելով առևտրում, համեստ էին պահում իրենց²¹⁶: Պ. Լուկան, իր հերթին, նկատում է Զմյուռնիայի շահեկան նկարագիրը հանդուրժողականության տեսակետից²¹⁷:

XVIII դ. երկրորդ կեսի մի արևմտյան հեղինակ՝ Վ. Էթընը, շատ ավելի կտրուկ է արտահայտվում Զմյուռնիայի մահմեդականների մասին, նկատելով, որ նրանք քրիստոնյաների հանդեպ անգութ են և սպառնալի²¹⁸: Հակառակ տեսակետին է Ա. Ալպոյաճյանը, ով արդեն ավելի նոր ժամանակները (Զմյուռնիան աղետից 1922 թ. սեպտեմբերից առաջ) նկատի առնելով, գրում է, որ թուրքական տարրը Զմյուռնիայում այնքան քիչ էր, <<որ մարդ կրնար տարիներով ապրիլ այնտեղ, առանց հասկնալու, թե Թուրքիոյ մեջ կը գտնուէր: Թուրքերը ոչ միայն թիւով զանցառելի քանակութիւն մը կը կազմէին, այլև տեղական կեանքին մեջ իրենց մասնակցութիւնովը առևտրական տեսակետով ոչինչ կ'արժէին: Իզմիրի լեզուն հունարէն էր, ինչպէս եղած է միշտ այն օրէն, երբ քաղաքը գոյութիւն առած է²¹⁹>>:

Զմյուռնիայում թուրք ազգաբնակչության վերոհիշյալ զսպվածությունը, սակայն, հակակշռվում էր ենիչերիների ինքնավստահ և գրեթե ինքնաբավ իշխանությամբ, ենիչերիների կայագործի մշտական ներկայությամբ, որ նրանց մղում էր նաև կամայականությունների: Զալալիների ապստամբությունը ճնշելուց հետո, մասնավորապես XVII դ. երկրորդ

²¹⁶ Tournefort J. P. Voyage d'un botaniste, p. 317.

²¹⁷ Լուկա Պ., Իզմիր երկու հարիւր տարի առաջ, Բիւզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի:

²¹⁸ Eton W. A Survey of the Turkish Empire, p. 250.

²¹⁹ Ալպոյաճեան Ա., Անհետացող հայ գաղութներ, թիւ 6, էջ 167:

տասնամյակից, զգալիորեն ընդլայնվել էր ենիչերիների ուժն ու հեղինակությունը կայսրության գավառական, այդ թվում և փոքրասիական քաղաքներում, որպիսին Զմյուռնիան էր: Գրեթե մշտապես աշխատավարձը չստացող կամ միայն հուզումներից հետո ստացող ենիչերիներն այս պակասը լրացնում էին քաղաքի հատկապես գյուղատնտեսական շրջակայքի ազգաբնակչությանը հարստահարելու և կողոպտելու միջոցով: Սիմեոն Լեհացին նկարագրում է ենիչերիների մոլեռանդ ծառայությունը այլադավաններին ճնշող ու նվաստացնող սուլթանական ֆերմաններին ընթացք տալու գործում (վայելույշ չհագնվել, ձի կամ ջորի չհեծնել, բնակվել միայն համեստ կացարաններում և այլն): Նրանք ներխուժում էին կրոնական ու իրավական այնպիսի հարաբերությունների մեջ, որ անգամ օսմանյան օրենքներով վերապահված էր հոգևորականությանը: Ենիչերիները, գրում է նա, <<Նաև առաջնորդաց չտային քննել, հաս կամ չհաս օրենք (եկեղեցական-ամուսնական օրենք-Ա.Խ.) պահել. զի թե ոք կամեր կին առնուլ եւ չհասութիւնք լիներ, չերթային հովիւ կամ առաջնորդ, այլ (երթային առ) ենիչարի մի եւ տային կաշառ եւ նա գայր իրիցուն թոփուզով (գավազան, իշխանության խորհրդանիշ-Ա.Խ.) պսակ տայր առնել>>²²⁰:

Հարկ է նկատել նաև, որ հիմնականում ենիչերիներն էին, որ Զմյուռնիայում և մյուս քաղաքներում կազմակերպել էին հույն ազգաբնակչության մի շարք <<անողորմ կոտորածներ>>, այդ կրկնելով անգամ նոր ժամանակներում՝ 1821 թ.²²¹: Ասենք, քրիստոնյաների նկատմամբ հարկ եղած դեպքում բռնությունների էին դիմում ոչ միայն ենիչերիները, այլև իշխանավորները: Օսմանյան միջավայրը առանձնապես անհանդուրժող էր կրոնափոխների՝ հին հավատին դարձողներին պատժելիս:

Հավատի նահատակներին (վկաներ)՝ մեծ մասամբ բռնությանը տեղի տված և մահմեդականություն ընդունած, բայց վերստին նախկին հավատին վերադառնալու կամք ու համառություն ցուցաբերած անձանց, հիմնականում պատանիների, հանդիպում ենք ոչ միայն Հայաստանի գույզ հատվածներում, այլև Զմյուռնիայում և հարակից շրջաններում:

Զմյուռնիայի հայերի գերեզմանատան ամենահին արձանագրությունը, որ մեզ է հասել համայնքի պատմագրության երախտավոր Հ.

²²⁰ Սիմեոն Դպրի Լեհացույ Ուղեգրություն, էջ 193:

²²¹ Creasy E. S. History of the Ottoman Turks, p. 501.

Քոսյանի շնորհիվ, կրում է 1551 թ. նահատակված մի նոր վկայի՝ Սարգսի անունը²²²:

Քաղաքում նահատակված հայերից հիշվում է պատանի Բաղդասարը (1672 թ.): Մեկ այլ՝ մահմեդականացած մի գիտուն հայի՝ դարձյալ քրիստոնյայի պատմությունն է հիշում Ա. Ալպոյաճյանը. նշխարները վերցնում են հայերն ու ֆրանսիացիները, որի համար, ի դեպ, հայերը խոշոր գումար էին վճարել թուրքերին²²³:

XVIII դ. Ձմյուռնիայում նահատակվածներից հիշվում է Սամուել Մանիսացին (1723), ում գերեզմանի մոտ թաղվել էր շատ ավելի ուշ ժամանակներում՝ 1806 թ. նահատակված կարնեցի Հարությունը²²⁴: Վերջինս գինովցած վիճակում միացել էր ենիչերիների երթին (սրանք այդ մեկնաբանել էին այն իմաստով, որ Հարությունը ցանկացել էր մահմեդականություն ընդունել)²²⁵:

Մահմեդականներն ապրում էին իրենց թաղում՝ Պագոս լեռան ստորոտին, ավելի վեր, քան հունաց թաղն էր. <<տաճկացն ընդ լեռան ի վեր

²²² Քոսեան Յ., Հայք ի Ձմիւռնիա և ի շրջակայս, հ. Ա, էջ 82:

²²³ Տես ՄՄ, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 7, վավ, 17/1, էջ 70:

²²⁴ Դիմաքսեան Յ., Շիրք մ'անունք ի Միջերկրականէ, էջ 351: Կրոնական մոլեռանդությունը անհնարին էր կասեցնել անգամ Կոստանդնուպոլսում, նույնիսկ թանգիմաթի հոչակած՝ օսմանյան հպատակների իրավահավասարությունից հետո (1839): 1843 թ. օգոստոսի 17-ին այստեղ գլխատվեց Հովակիմը՝ Սամաթիա թաղից: Նա հրաժարվել էր չորս տարի առաջ ընդունած մահմեդականությունից. զուր անցան նրան փրկելուն ուղղված՝ անգլիական հեղինակավոր դեսպան Ստ. Քանինգի ջանքերը (Հայոց նոր վկաները, էջ 316-319):

²²⁵ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. 1, էջ 99-100: Օսմանյան հպատակների իրավահավասարության և կրոնների ու դավանանքների ազատության վերաբերյալ թանգիմաթի հրովարտակի (1839) թանաքը տակավին չորացած՝ հայաբնակ Նազիլի քաղաքում վերստին պոռթկաց բռնի տաճկացման ավանդույթը. <<Նազիլիէն կը գրեն, թէ մոտերս ինը տարեկան հայու աղքատ տղա մը յիշեալ քաղաքը բռնութեամբ տաճկցուցեր են...>> (Արշալոյս Արարատեան, 1841, 29 օգոստոսի): Հանցագործությունները Էգեյանի շրջանում շարունակվում էին անգամ թանգիմաթից ավելի քան յոթ տասնամյակ անց. 1912 թ. փետրվարի 16-ին թուրք ոստիկանները Էդդեմիշում հարբեցնում են 21-ամյա Գալուստ Եկենյանին, ապա տանում են և թյալատում՝ վերանվանելով Հասան: Հայերի տևական բողոքներից հետո միայն իշխանությունները նրանց են հանձնում Գալուստին (տես Դաշինք, 1912, թիւ 777, 779):

թատերաձև ձգի>>,- գրում է Ղ. Ալիշանը²²⁶, մի թաղամաս, որ պետք է գոյություն ունենար բեյությունների և Հռոդոսի ասպետների ժամանակներից ի վեր (XIII-XIV դդ.), երբ մահմեդականները բնակվում էին քաղաքի վերին հատվածում, իսկ քրիստոնյաները՝ նավահանգստին կից ներքևում: Թուրքական թաղում էր գտնվում ծածկած շուկան:

Հայներից հետո Ջմյուռնիայի մյուս հնագույն տարրը հրեաներն էին, այստեղ հայտնի՝ քրիստոնեության տարածման վաղ շրջանից, իբրև առանձին համայնք: Հրեաների թվաքանակը Օսմանյան Թուրքիայում և մասնավորապես Կ. Պոլսում, Ջմյուռնիայում, Սալոնիկում և Ադրիանուպոլսում ավելացավ XV դ. վերջին, Իսպանիայից նրանց արտաքսելուց հետո²²⁷: XVII դ. առաջին կեսի 6-7 հազարից հրեաների թվաքանակը XIX դ. 70-ական թթ. հասել էր, ըստ Ֆ. Գրուարի, մինչև 10 հազարի (իսպանական հրեաներ), ըստ մեզ արդեն ծանոթ տեղեկատուի՝ 12-13 հազարի²²⁸: Հրեական համայնքը իր լուրջ մասնակցությունն ուներ կայսրության ներքին և արտաքին առևտրում՝ Սալոնիկում, Ջմյուռնիայում և փոքրասիական այլ քաղաքներում, Եվրոպայի հետ շուկայական հարաբերություններում: Բուն Ջմյուռնիայում հրեական համայնքը կազմված էր սոցիալական տարբեր խմբերից, ինչպես և մյուս համայնքները՝ առևտրականներ, արհեստավորություն, հոգևորականներ, ուներ իր սինագոգները, դպրոցները, ազգային ներքին կազմակերպվածությունը: Թուրնեֆորը, թերևս, այս վերջին հանգամանքից ազդված՝ բանը հասցնում է ծայրահեղության, նկատելով, թե Ջմյուռնիայի ողջ առևտուրը կատարվում է արևելյան հրեաների ձեռքով: Այս հեղինակն ընդգծում է հրեաների միջնորդական գործառույթը արտաքին առևտրում²²⁹:

Ջմյուռնիայի առևտրատնտեսական նշանակությամբ արդիական տեսք էր տալիս եվրոպական առևտրին սերտաճած և գլխավորապես դրա շահերը ներկայացնող՝ քաղաքի <<լեվանտացի>> հորջորջված եվրոպացիների համայնքը: Եվրոպացի տեղաբնակների համայնքը, կարելի է կարծել, իր պատմությունը Ջմյուռնիայում սկսել էր նախքան օսմանյան կայսրության գոյացումը, բյուզանդական տիրապետության

²²⁶ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրություն, էջ 344:

²²⁷ Гордлевский В. А. Избр. Соч., т. IV, с. 62. Տե՛ս նաև Kaya Ö. Tanzimattan Lozana Azınlıklar, s. 54-55.

²²⁸ The Six Voyages, p. 33. Forbes G.. The Empires and Cities of Asia, p. 197. Handbook, p. 269.

²²⁹ Tournefort J. P., նշվ. աշխ., էջ 317.

շրջանում, հատկապես ջենովացի առևտրականության՝ Էգեյանի հանգրվաններում հիմնվելուց ի վեր, XII-XIII դդ., երբ նրանք առևտրական կապեր ու կայաններ (ֆակտորիաներ) էին հաստատել սելջուկների, ապա դրանց հաջորդած Այդընի, Սարուխանի, Կարամանի և այլ եմիրությունների հետ ունեցած առնչությունների արդյունքում:

Քաղաքի եվրոպական բնակչությունը իր շարքերը համալրում էր նաև Հոռոքսի խաչակիրների տիրապետության շրջանում, XIV դ. երկրորդ կեսին, որ, սակայն, ընդհատվեց Թիմուրի կողմից Ջմյուռնիան նվաճվելուց հետո, մի կարճ ժամանակ (1402): Համենայն դեպս, քաղաքի եվրոպացի բնակչությունը կարողացավ գոյատևել նաև հետագայում, մինչև օսմանյան թուրքերի կողմից դրա գրավումը և հետո: XVII դ. առաջին կեսին քաղաքի եվրոպական համայնքի թվաքանակը, ինչպես վկայում է Թավերնիեն, մեծ չի եղել: Նրա տվյալներով եվրոպացի ազգաբնակչությունը (որոնց ընդհանուր անվամբ <<Ֆրանկ>> էին կոչում), ունեն երեք եկեղեցի, ֆրանսիական կապուչինները՝ նաև մեկ վանք²³⁰: XVII դ. եվրոպացիների թաղամասը իր երկայնակի փողոցներով ձգվում էր և էլք ուներ դեպի ծովը, ընդամին, տեսարանները գնահատող ֆրանսիացի ճանապարհորդը նկատում է, որ այդ թաղում ծովահայաց տներն ավելի թանկ են, քան վերին մասի տները: <<Վենետիկի, Հոլանտայի և Ճենովայի հիւպատոսներն իրենց գրեթե բոլոր վաճառականութեան հետ կը բնակին մեծ, գեղեցիկ փողոցի մը մէջ, կէս փարսախ երկայնութեամբ... Իրենց տուները շատ գեղեցիկ և հանգստավետ են: Փայտաշէն տեղուանք ունին՝ երկրաշարժի պահուն հոն ապաստանելու համար>>,- գրում է Պ. Լուկան²³¹:

Սկսած XVI դարից, Ֆրանկների թաղամասում ապրող եվրոպացիներն օգտվում էին արտատարածական (էքստերիտորիալ) կարգավիճակից²³², որ դրսևորվում էր Ֆրանսիային, Անգլիային, Հոլանդիային և

²³⁰ Tavernier J. P., Les six voyages, p. 138. Կապուչինների այդ վանքը, ի դեպ, այրվել էր 1797 թ.՝ ենիչերիների ձեռքով, երբ կրակը տարածվել էր Ֆրանկաց թաղում (տես ՄՄ, Մ. Աղաբեկյանի արխիվ, թղթ. 189, վավ. 65, էջ 6):

²³¹ Բիւզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի:

²³² Այդպիսի կարգավիճակ (այսպես կոչված կապիտուլյացիաների ռեժիմը) օսմանյան պետության կողմից նախ տրվեց Ֆրանսիային՝ 1535 թ., ապա Անգլիային՝ 1579 և 1593 թթ., ապա դարձյալ նորոգված, Հոլանդիային՝ 1598 և 1612 թթ. (Զուլպյան Մ., Զալալիների շարժումը, էջ 120-121: Տես նաև Forbes G. The Empires and Cities of Asia, p. 197):

այլ պետություններին Օսմանյան պետության կողմից տրված իրավական ու տնտեսական առանձնաշնորհումներով: Այստեղ նկատենք, որ Զմյուռնիայի ոչ եվրոպական ազգաբնակչության վերնախավերը ձգտում էին որևէ կերպ մտնել եվրոպական հյուպատոսությունների հովանավորության ներքո, յուրահատուկ, բայց և բնականոն միտում՝ օգտվելու առանձնաշնորհումների բարիքներից և խուսափելու օսմանյան տեղական իշխանությունների կամայականություններից:

Եվրոպացիների թաղը մյուսներից շահեկանորեն տարբերվում էր իր բազմաթիվ պահեստներով ու ամբարանոցներով, **լոքանտա** կոչվող իջևանատեղիներով, որոնք հարմարեցված էին նավահանգստային շուկաների առանձնահատկություններին: Շուկաներում առևտուրը և առհասարակ, գործարքները կատարվում էին եվրոպական ու արևելյան ամենատարբեր լեզուներով: Եվրոպական թաղամասը կարծեք, իր գոյությամբ ընդգծում էր առևտրական միջազգային շուկայում տարբեր լեզուներով խոսող ազգերի փոխըմբռնման նշանակությունը: Հատկանշական է այս տեսակետից, որ անխուսափելիորեն պետք է միմյանց հետ շփվեին, դեռևս XIV դ. Զմյուռնիայում Պագոս լեռան ամրոցին տիրող թուրքերը և ներքին քաղաքում (ապագա Ֆրանկաց թաղը)՝ նավահանգստում ամրացած քրիստոնյաները²³³:

Եվրոպացիների թաղում գործում էին դպրոցներ՝ դեռևս միջնադարից, որ տնօրինում էին կրոնական միաբանությունները. հայտնի է XVIII դ. վերջում գործող ֆրանսիական Լազարյան միաբանության դպրոցը²³⁴:

Զմյուռնացիների կենցաղը յուրահատուկ էր դառնում քաղաքին կից գյուղ-ամառանոցներով: Այդպիսիք էին Բուռնովան (Բուռնաբաթ)²³⁵,

²³³Stu Ramsay W. M. The Thousand and One Churches, p. 37.

²³⁴ Մատենադարան, Մ. Աղաբեկյանի արխիվ, թղթ. 189, վավ. 65, էջ 6:

²³⁵ Բուռնովայում հայ մեծահարուստները ամառանոցներ ունեին դեռևս XVIII դ., հարմարավետության տեսակետից համաքալ ընթանալով եվրոպական ու հունական դրամատերերի հետ: 1802 թ. մարտին, Դավիթ-Դանիելյան հակամարտության պայմաններում Դավթի կողմնակից՝ Զմյուռնիայի առաջնորդ արքեպ. Մարտիրոսը կարողացավ խուսափել ձերբակալությունից և քսորից՝ ապաստանելով զմյուռնացի վաճառական Հ. Սավալանյանի՝ Բուռնովայում գտնվող տանը (տես Պալեան Տ., Գաւազանագիրք առաջնորդաց Զմիւռնիոյ, Դափնի, 1921, թիւ 2, էջ 60): XIX դ. Բուռնովայում առավել մարդաշատը անգլիացիներն էին: Այդ դարի կեսերին զմյուռնաբնակ անգլիացի վաճառական Չ. Վիթթլը այստեղ եկեղեցի էր կառուցել, որ վկայում է այս արվարձանում

Սեվդի քյոյը, Պուճան, Քուքլուճան, որտեղ եվրոպացիներն ունեին ամառանոցներ: Այս գյուղերում, որոնց մեջ իր համբավով աչքի էր ընկնում Բուռնուվան, իրենց ամառանոցներն էին կառուցել նաև հայ և հույն դրամատերերը: Անշուշտ, եվրոպական ծագում ունեցող զմյուռնացի ազգաբնակչության բարքերը, կենցաղն ու կեցվածքը իրենց բարերար ազդեցությունն էին թողնում առհասարակ քաղաքի նկարագրի վրա, որ գործնական իմաստ էր ստանում շուկայական, առավել ևս՝ կրոնադավանական ու ազգային հակասությունների այս հնագույն կենտրոնում: Զմյուռնաբնակ եվրոպացի վաճառականների այդ ազդեցությունը ի հայտ էր գալիս նաև տեղացի հույն, հայ, հրեա և մահմեդական վաճառականության դրամաֆինանսական գործարքների արևելյան բնույթը եվրոպականով փոխարինելու և արդիականացնելու բնագավառներում ևս²³⁶: Քաղաքում տեղացի և օտարերկրացի վաճառականների գործակցությամբ թանգիմաթի շրջանում կամ դրանից ոչ շատ առաջ այստեղ

անգլիկան դավանանքի հետևորդների ստվարացման մասին: Նույն դարի երկրորդ կեսին այստեղ գործում էին անգլիական և հունական դպրոցներ, ինչպես և Գթության քույրերի դպրոցը: Բուռնաբաթը հայտնի էր վայելուչ հյուրանոցներով, սրճարաններով և իհարկե, իր անխուսափելի շուկայով:

²³⁶ Զմյուռնիայում բնակվող այս եվրոպացիների նախաձեռնությամբ էր, որ քաղաքի վաճառականները 1842 թ. դիմել էին Անատոլիայի Հայկական ընկերության տեղական գործակալներին՝ վերացնելու այսպես կոչված **թագաս**-ի (պարտամուրհակի տեսակ)՝ իր դարն ապրած արևելյան հնավանդ ֆինանսական գործառնությունը: Դրա համեմատ, պարտապան վաճառականը իր պարտատիրոջը վճարում էր ոչ թե կանխիկ դրամով, այլ նրան էր տալիս թագաս՝ գրավոր իրավունք, որ նա այդ պարտքի գումարը գանձի իրեն պարտք մեկ այլ երրորդ վաճառականից: Առաջին պարտատերը դիմում էր այդ երրորդ անձին, բայց սա նույնպես, դրամի փոխարեն, իր հերթին, թագաս էր տալիս՝ պարտքը գանձելու չորրորդ վաճառականից և այսպես շարունակ, այնպես որ <<տերը բոլոր քաղաքը կը պտտի, բայց թուղթի կտորներ է ի գատ ուրիշ բան մը չի անցնիր ձեռքը՝ շատ անգամ կը պատահի, որ մինչև տասնհինգ օր անվճար քովը կը մնան այդ թուղթերը>> (Արշալոյս Արարատյան, 1842, 8 մայիսի): Ինչ ասել կուզի, պարտքը ի վերջո, վերադարձվում էր և այստեղ խոսքը վերաբերում է առհասարակ համարում ունեցող վաճառականներին և ոչ թե դրամաշորթներին (յան քեսիջի), որոնց խաբեբայություններից Զմյուռնիայի <<բարեմիտ>> վաճառականներին զգուշացնում էր տեղի հայկական լրագիրը (տես Արշալոյս Արատեան, 1842, 23 հոկտեմբերի):

ստեղծվեց, եվրոպական քաղաքների օրինակով, քաղաքապետարան, կարելի է կարծել, առաջիններից մեկը Օսմանյան Թուրքիայում²³⁷:

2. Գաղթօջախների կազմավորումը

Էգեյան ծովի մերձափնյա գաղթօջախների առաջացումը կապվում է հայ ժողովրդի դժվարին պատմական ճակատագրի, հայրենի երկրից հարկադրաբար գաղթելու իրողության հետ: Պատմագիտական համապատասխան հետազոտություններում առ այսօր առկա է մնում դրանց վաղ շրջանների պատմության լուսաբանման խնդիրը: Տեսանք, որ XIX-XX դդ. հայ պատմագիտությունը, ի դեմս Բ. Սլարսի, Հ. Քոսյանի, Թ. Ճերմակյանի, Ատոմի, Ա. Ալպոյաճյանի և այլոց, բավարարվել է միայն կռահումներով և ենթադրություններով՝ X-XII դդ. և կամ ավելի վաղ շրջաններում նշված գաղթօջախների գոյության մասին, սակայն փաստական հենքի բացակայության պատճառով դրանք շարունակում են մնալ այդպիսին՝ դուրս չգալով տեսական խորհրդածությունների սահմաններից: Այդ հասկանալի է դառնում այն իրողությամբ ևս, որ հայկական աղբյուրները, քանիցս տեղեկացնելով Հայաստանից բնակչության արտագաղթերի մասին, չեն նշում, կամ որոշակի չեն նշում, թե որտեղ են հանգրվանել այդ գաղթականները: Մասնավորապես, հայտնի են XI դ. պատմաքաղաքական իրողությունները, երբ հայ իշխանավորները, չկարողանալով դիմակայել բյուզանդացիների ու սելջուկների ճնշումներին, հայրենի տարածքները կամ դրանց մի մասը փոխանակում էին բյուզանդական հողերի հետ և իրենց հպատակների հետ անցնում կայսրության ենթակայության ներքո²³⁸: Շատ հավանական է, որ Սյունյաց թագավորության, Անիի անկման և Ժամանակի այլ աղետների հետևանքով հայ նախարարների և զինվորականության մի մասը անցած լինի նաև փոքրասիական տարածքներ, ինչի վաղագույն օրինակներից մեկը, դեռևս VI դարից, տեսանք Պերգամոնում հայ համայնքի կազմավորման իրողությամբ: Այս երևույթը, ի դեպ, շարունակվել է XI-XV դդ., երբ, ինչպես նկատում է Է. Բաղդասարյանը, <<Դեռևս

²³⁷ Ortaylı I. İmparatorluğun en Uzun Yüzyili, s. 163.

²³⁸ Այդպիսի տեղեկություններ են հայտնում Թովմա Արծրունու Անանուն շարունակողը, Արիստակես Լաստիվերտցին, Սամուել Անեցին և այլ պատմիչներ (տես Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 143, 153, 431):

վաղնջական ժամանակներից հայ զինվորությունը բարձր է գնահատվել հարևան Բյուզանդիայի և Պարսկաստանի կողմից, որոնց բանակներում հաճախ ոչ երկրորդական դեր էին խաղում հայկական զորամասերն ու հայ զինվորականները»²³⁹:

Անտարակույս, Էգեյանի գաղթօջախների բնակչությունը XI դ. սկսած սերտ առնչություններ է ունեցել ոչ միայն Բյուզանդիայի, այլև տեղական մահմեդական տիրակալների ռազմական ուժերի և սրանց գործողությունների հետ, որից և մեծապես կախում պետք է ունենար բուն այդ գաղթօջախների կացությունն ու ճակատագիրը:

Այսօր նույնպես հիմնահարցի հետազոտությունը կարոտ է հայկական և օտար սկզբնաղբյուրների հայտնաբերմանը, սակայն պետք է ասել, որ փոքրասիական արևմուտքի այս գաղթօջախների վաղեմի գոյության մասին կան որոշ փաստեր և իրողություններ: Այս ասպարեզում հետազոտական առաջնությունը պատկանում է բյուզանդագիտությանը, որի թարգմանական արգասիքներին հայ ընթերցողը ծանոթ էր XIX դ. երկրորդ կեսից: Այդպիսի հեղինակների մեջ առաջինը պետք է հիշատակել գերմանացի պատմաբան և բանասեր, հայագետ Հ. Գեյցերի հեղինակած գործերը²⁴⁰, որոնք առնչվում են մեզ հետաքրքրող տարածաշրջանում հայերի ներկայությանը՝ սկսած VIII դ, և հատկապես IX դ. երկրորդ կեսից մինչև XI դ. երկրորդ կեսն ընկած՝ Մակեդոնական դինաստիայի ժամանակաշրջանում: Հ. Գեյցերը Զմյուռնիային կից Պերգամոնում (Բերգամա) հայերի ներկայությունն ամրագրում է VII դ. երկրորդ կեսից՝ ի դեմս հայկական տոհմիկ զարմից սերած Նիկեփորոս պատրիկի²⁴¹, որի զավակ Փիլիպպիկոս-Վարդանը կայսր էր հռչակվել և իշխել 711-713 թթ.: Բնութագրելով Բյուզանդական կայսրություն անցած հայ գաղթականներին, որոնք VII դ. հայրենիքը լքել էին օտար ռազմական ճնշումների պատճառով, այս հեղինակը նշում է, որ նրանց մարտունակ ուժերն անցան կայսրության ռազմական ծառայության մեջ՝

²³⁹ Տես Է. Բադդասարյանի՝ Ներսես Շնորհալու <<Թուրք ընդհանրական>> երկի Ներածությունը, էջ 30:

²⁴⁰ Տես Գեյցեր Հ., Համառոտություն բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901: Հայ հասարակութիւնն ի Պերգամոն և պերգամացին կայսերական գահին վրայ, էջ 225-228:

²⁴¹ Պերգամացի Նիկեփորոս պատրիկը, ըստ Հ. Գեյցերի, 666 թ. <<Կոստանդ կայսեր մեծ ծառայութիւններ մատոյց>> (նույն տեղում, էջ 227), որ ամրապնդել է նրա ընտանիքի դիրքերը բյուզանդական վերնախավի շրջանում:

իրենց ընտանիքներով հաստատվելով հունական տարածքում²⁴²: Այս իրողությունը նշանակում է փոքրասիական արևմուտքում հայերի առկայություն՝ և տեղի և ժամանակի որոշակիությամբ, որ արձանագրում է Հ. Գեյցերը՝ բյուզանդական աղբյուրների հիման վրա:

Հայկական աղբյուրներում փոքրասիական առափնյակի հայ բնակչության առկայությունը, արդեն XII դ. վերջին քառորդին, հաստատվում է մի ուշագրավ փաստով. 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովին, ի թիվս երեք տասնյակից ավելի եպիսկոպոսների, հիշվում է նաև **Սարգիս Լատդիկեայ** եպիսկոպոսը²⁴³: Ժողովը հրավիրել էր Կիլիկիայի Գրիգոր Տղա կաթողիկոսը (1173-1193)՝ դավանական միության վերաբերյալ բյուզանդական կայսր Մանուելի և հունական եկեղեցու սինոդի առաջարկի առթիվ²⁴⁴: Մ. Օրմանյանն այս փաստին մոտենում է եկեղեցական ժողովի նշանակալիության և հայ եկեղեցու պատմության տեսակետից, սակայն Հ. Աճառյանը նշված եպիսկոպոսի՝ այդ ժողովին մասնակցությունն իմաստավորել է փոքրասիական գաղթօջախների պատմաբանի աչքերով: Նշելով, որ Լավոդիկեն (Լավոդիկիա) գտնվում է Դենիզլիի կողմերում, Զմյուռնիայից հարավ-արևելք, նա իրավամբ եզրակացնում է, որ <<Յատուկ հայ եպիսկոպոսութեան մը գոյութիւնը Լատտիկէի մէջ յայտնի կը ցուցնէ, թէ նոյն ժամանակ բաւական մեծ հայ գաղթականութիւն մը կար հոն²⁴⁵>>:

Էգեյանի առափնյակում հայկական համայնքների առկայության խնդիրն առավել խոր, բազմակողմանի և վավերագրական համոզությամբ է հետազոտել Հ. Բարթիկյանը²⁴⁶: Այս հիմնահարցին նվիրված նրա աշխատությունները՝ բյուզանդական աղբյուրների ամուր հենքով, նոր փուլ են բանում տարածաշրջանի, այլև առաջին անգամ՝ Զմյուռնիայի գաղթօջախի պատմության ուսումնասիրությունների մեջ: Հ. Բարթիկյանն առանձնացնում է Օպսիկիոն, Թրակեսիոն և Կիբերիոտների բանակաթեմերը (բյուզանդական ռազմավարչական միավորներ), նշելով, որ երկրորդի՝ Պերգամոն քաղաքում հայկական համայնքը սկիզբ էր առել հավանաբար VII դ., հենվելով VIII դ. սկզբին հայազգի կայսր Փիլի-

²⁴² Գեյցեր Հ., Հայ հասարակութիւնն ի Պերգամոն, էջ 227:

²⁴³ Տես Ընդհանրական թուղթ Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, էջ 199:

²⁴⁴ Տես Օրմանեան Մ. արք., նշվ. աշխ., էջ 1717-1718, 1719:

²⁴⁵ Աճառեան Հ., Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 549-550:

²⁴⁶ Բարթիկյան Հ., Բյուզանդիա, տես Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, էջ 4-64: Նույնի Հայ-բյուզանդական հարաբերություններ, հ. 3, Ե., 2006:

պիկոս-Վարդանի գահակալության փաստի վրա²⁴⁷: Մի հայտնի չափով և դարձյալ բյուզանդական աղբյուրների վկայակոչմամբ, նա փոքրասիական թերակղզու արևմտյան մասերում հայկական որոշ համայնքների գոյացումն առնչում է X դ. երկրորդ կեսին <<հիմնականում թոնդրակեցի աղանդավորներին>> բնագաղթեցնելու հետ²⁴⁸: Հ. Բարթիկյանը եզրակացնում է, որ փոքրասիական այս հատվածներում հայկական համայնքները շարունակել են գոյություն ունենալ հետագա դարերում, ընդամենը, զինվորագրված լինելով բյուզանդական բանակին, ինչպես արդեն հիշված Թրակեսիոն բանակաթեմի <<Եփեսոսի և Միլետոսի միջև գտնվող Պրինե քաղաքում>> բնակվող հայկական համայնքը²⁴⁹:

Հ. Բարթիկյանը փաստաթղթերում ի հայտ է բերում Ջմյունիային կից՝ Տրոյայի հայկական համայնքը (Օպսիկիոն բանակաթեմում) X դ., իր թվաշատ բնակչությամբ և դրա համեմատ մեծաթիվ հեծելագործով, որով և աչքի էին ընկնում Պրինե քաղաքում (Եփեսոսի և Միլետոսի միջև) բնակվող նրանց ազգակիցները²⁵⁰: Հատկապես կարևոր են նրա կողմից շրջանառության մեջ դրված Ջմյունիային կից Լեմվոն լեռան վրա գտնվող հունական Ս. Աստվածածին վանքում պահված փաստաթղթերը (XII-XIII դդ.): Դրանցում հիշվում են ձիթենիների առքուվաճառքի մեջ ընդգրկված բազմաթիվ հայերի անուններ²⁵¹: Այսպիսով նա անհերքելիորեն ապացուցում է Ջմյունիայում հայ համայնքի գոյությունը վերը նշված հարյուրամյակներին: Բսկ Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարքարանի 1315-1402 թթ. փաստաթղթերի արժեքավորմամբ Հ. Բարթիկյանը եզրակացնում է, որ <<բյուզանդական կառավարությանը ծառայող ծագումով հայկական ընտանիքներից բացի, կայսրության առանձին շրջաններում բնակություն հաստատած հայերի ենք հանդիպում... Խոսքը վերաբերում է Էգեական ծովի առանձին կղզիների, մանավանդ Պատմոսի, փոքրասիական ափամերձ շրջանների՝ Ջմյունիա, Եփեսոս, Միլետոս... և այլն>>²⁵²:

Հ. Բարթիկյանի աշխատությունների շնորհիվ որոշակի կապ է ստեղծվում փոքրասիական արևմտյան առափնյակի հայ գաղթօջախներ-

²⁴⁷ Բարթիկյան Հ., Բյուզանդիա, էջ 15:

²⁴⁸ Նույն տեղում, էջ 12:

²⁴⁹ Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, էջ 75-77:

²⁵⁰ Նույն տեղում, էջ 75-76:

²⁵¹ Նույն տեղում, էջ 77-78:

²⁵² Նույն տեղում, էջ 130:

րի պատմության՝ ցայսօր կցկտուր մնացած դրվագների միջև, VII դ. մինչև XIV դ. վերջերը և XV դ. սկզբները, ընդամին, այս հեղինակի այն կարևոր ընդհանրացմամբ, որ առափնյակի այս կամ այն հատվածում հայերը շարունակում էր իրենց կենսագործունեությունը՝ «<կոմպակտ բնակչության առկայությամբ>>²⁵³:

Հրապարակի վրա եղած այլ ուսումնասիրություններ ևս հիմք են տալիս կարծելու, որ էգեյանի արևմուտքի հայ գաղթօջախները շարունակել են իրենց կենսագործունեությունը ընդհուպ մինչև Բյուզանդական կայսրության վախճանը: Հույն հետազոտող Պ. Չարանիսը այս հիմնահարցին սերտորեն առնչվող իր աշխատության²⁵⁴ մեջ առանձնացնում է XIII դ. տարածաշրջանում գոյություն ունեցող երկու հայկական գաղթօջախներ, որոնցից մեկը գտնվում էր Զմյուռնիայի մոտ, իսկ մյուսը՝ Աբիդոսի շրջակայքում, Սկամանդեր գետի հովտում²⁵⁵: Նա հայտնում է, որ դրանց գոյացման ժամանակի մասին որոշակի որևէ տեղեկություն չկա. Զմյուռնիայի մերձակայքի համայնքը, կարծում է նա, կարող էր ավելի հին լինել՝ գոյացած հարևան Պրինեի համայնքից, որն արդեն կար X դարում²⁵⁶: Պրինեի գաղթօջախի առկայությունը X դ. մենք տեսանք Հ. Բարթիկյանի աշխատության մեջ՝ այս քաղաքը գտնվում էր բյուզանդական Թրակեսիոն բանակաթեմում՝ Եփեսոսի և Միլետոսի միջև²⁵⁷: Այստեղ մեկ ճշտում պետք է անել. **Զմյուռնիայի մոտ, մերձակայքում, կից** և նման հասկացությունները, ելնելով առկա ուսումնասիրություններից, դեռևս չեն նշանակում, որ խոսքը անվրեպ վերաբերում է Զմյուռնիային, թեև պայմանականորեն կարող ենք նկատի ունենալ նաև Զմյուռնիան՝ իբրև պատմականորեն ճանաչված կենտրոնի: Համենայն դեպս, հակված ենք կարծելու, որ խոսքը վերաբերում է պարզապես Զմյուռնիային մոտ գտնվող՝ հայ համայնքներ ունեցող բնակավայրերին և այս իմաստով տրամաբանական մեղանչում կլինեն, եթե մենք այդ բնակավայրերը նույնացնեինք բուն Զմյուռնիայի հետ, բայց և միաժամանակ, միմյանցից կտրուկ սահմանազատեինք այդ բնակավայրերն ու Զմյուռնիան:

²⁵³ Նույն տեղում, էջ 161:

²⁵⁴ Charanis S. P. The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963.

²⁵⁵ Նույն տեղում, էջ 54:

²⁵⁶ Նույն տեղում:

²⁵⁷ Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, էջ 76-77:

Գալով Աբիդոսի շրջակայքում և Սկամանդերի գետահովտում գտնվող մյուս հայ համայնքին, Պ. Չարանիսը գրում է, որ 1204 թ. Կոստանդնուպոլսի անկումից հետո, երբ հայ բնակչությունն աջակցեց Հենրի Ֆլանդրացուն՝ գրավելու Աբիդոսը ի շահ Լատինական կայսրության, վերջինս այդ քաղաքի վերահսկողությունը հանձնեց հայկական կայսրության: Եվ կարճ ժամանակ անց, երբ խաչակիրները վերադառնալու էին Եվրոպա, հայերն իրենց հետ վերցնելով կանանց ու երեխաներին, բոլորը միասին՝ քսան հազար մարդ, հետևեցին Հենրի Ֆլանդրացուն: Նրանք հաստատվեցին Թրակիայում, բայց ի վերջո չհուսափեցին հույների վրեժխնդրությունից²⁵⁸:

Անկախ այս միջադեպից, որ արտացոլում էր հայկական այս համայնքի կողմնորոշումը դեպի Լատինական կայսրությունը և, կարելի է կարծել, հույն-հայկական կրոնադավանական հակասությունների երևույթը, այստեղ կարելի է որոշ եզրակացությունների հանգել՝ զուտ հայ համայնքների կացության հետ կապված հանգամանքների տեսակետից: Նախ, նկատենք, որ Աբիդոսի համայնքը բնակչության թվաքանակով եղել է XII-XIII դ. սկզբի մարդաշատ համայնքներից մեկը տարածաշրջանում՝ գոնե Հ. Բարթիկյանի հրապարակած տվյալների համադրության մեջ. նույն Պրիսե քաղաքի հայ համայնքի մասին Հ. Բարթիկյանը նկատում է, որ Լևոն Զ կայսեր օրոք զինվորագրված հայերի թիվը հասնում էր 500-ի և որ այդքան <<հեծյալ տվող համայնքը պիտի որ բազմամարդ լիներ²⁵⁹>>: Այնուհետև, դժվար է միանշանակ դատել տարածաշրջանի մանր ու մեծ համայնքների հատկապես հարատևման մասին, որովհետև բյուզանդական կայսրերի և եկեղեցու կողմից իրականացվող՝ քաղկեդոնականության պարտադրանքը, ինչպես և Հայաստանից Բյուզանդիա անցած պալիլիկյան համայնքների հանդեպ նրանց անհանդուրժող քաղաքականությունը մի հայտնի չափով հեղհեղուկ էին դարձնում այդ համայնքների բուն իսկ գոյության հնարավոր պայմանները:

Փոքրասիական արևմուտքի համայնքները, դատելով ըստ ամենայնի, իրենց զինվորական ուժով և էլիտար վերնախավով մասնակցել են նաև Նիկիական կայսրության ռազմավարչական ու քաղաքական գործընթացներին: XIII դ. այդ կայսրության Թրակեսիոն բանակաթեմի դքսերը եղել են հայազգի մարդիկ (Զմյուռնիայի կատապան Վարդաս

²⁵⁸ Charanis P. նշվ. աշխ., էջ 54:

²⁵⁹ Բարթիկյան Հ., նշվ. աշխ., էջ 76-77:

Լևոն, Թոռնիկների, Կուրտիկների և այլ տոհմերի շառավիղներ) և որ Զմյուռնիային կից Պանարետոսի և այլ բնակավայրերի տնտեսական ու առևտրական գործարքներում հայկական անուններով անձինք հիշատակվում են քանիցս²⁶⁰: Այս Պանարետոս գյուղի՝ նույն ժամանակների նշանակությունն է ընդգծում Պ. Ի. Ժավորոնկովը՝ նկատելով, որ <<հայերի առավել խոշոր համայնքը գտնվում էր Զմյուռնիայի շրջանում, Պանարետոս գյուղի մոտակայքում²⁶¹>>:

Այստեղ պետք է ավելացնել, որ Զմյուռնիային մոտ այդ բնակավայրերի վերաբերյալ փաստաթղթերը վկայված են XII-XIII դդ., բայց այդ գաղթօջախները կարող էին ավելի քան հին լինել, քան այդ սկզբնաղբյուրները, կրկենք, հայտնի՝ դեռևս IX-X դդ. (Պրիների հայկական համայնքը): Խնդիրն այլ է ամբողջ փոքրասիական այս տարածքում հայկական համայնքների սկզբնավորման տեսանկյունից: Այդ դեպքում այդ համայնքների կենսագրությունը պետք է տանել շատ ավելի հետ, սկսելով VI դարից՝ Պերգամոնի (Բերգամա) գաղթօջախից, որը ինչպես տեսանք, ստեղծվել էր Վարդան Մամիկոնյանի ապստամբությունից հետո, 570-ական թթ. երկրորդ կեսին: Հիմնավոր է, ուրեմն, Հ. Գեյցերի և Հ. Բարթիկյանի այն տեսակետը, որ Պերգամոն քաղաքը հանդես է գալիս որպես հնագույնը՝ փոքրասիական արևմուտքի հայկական համայնքների պատմության մեջ: Ինչ վերաբերում է առափնյակի մյուս համայնքներին, ապա, դատելով առկա վավերագրերից, դրանք հիմնականում պետք է գոյացած լինեին հետագա դարերում՝ առվագն IX դարից (Պրիների հայկական համայնքը Լևոն Զ կայսեր օրոք) մինչև XI դ., երբ արդեն կային Զմյուռնիայի, Եփեսոսի, Լավոդիկիայի և այլ հայկական համայնքները: Նիկիայի կայսրության (որի մեջ մտնում էին նշված տարածքները) գոյության ողջ ընթացքում (XIII դ.) ինչպես նկատում է Պ. Ժավորոնկովը՝ հայերի գաղթ չի նշվում²⁶²: Հայերի՝ այս տարածաշրջան ուղղված հետագա գաղթերի հետ կապվող հանգամանքները մեզ հայտնի տվյալների հիման վրա, արդեն կապվում են XIV դ. վերջին քառորդին հայկական Կիլիկիայի ճակատագրի հետ:

²⁶⁰ Նույն տեղում, էջ 78, 161-162, 164 և այլն:

²⁶¹ Жаворонков П. И. Западные и восточные реалии в социально-политической и духовной жизни Никейской империи. В кн.: Византия между Западом и Востоком, с. 218.

²⁶² Жаворонков П. И., նշվ. աշխ., էջ 218:

Հայության զանգվածային տեղաշարժերի նոր փուլ սկսվեց Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375), երբ ժողովրդի բազմությունները ոչ միայն գերեվարվեցին, այլև տեղահանվեցին կամ գաղթեցին Ասիայի և Եվրոպայի բազմաթիվ երկրներ: Այս ժամանակաշրջանում և հետագայում հայտնվում են նոր գաղթավայրեր Արևելյան Եվրոպայի երկրներում, Պարսկաստանում, Սև և Միջերկրական ծովերի առափնյա տարածքներում, Թուրքիայի փոքրասիական շրջաններում՝ ընդհուպ մինչև դրանց արևմտյան մասը և այլուր: Հայ գաղթօջախների տարածումը և հների համալրումները նոր գաղթականական հոսքերով շարունակվել է դարեր ի վեր՝ բուն հայրենիքի ապրած քաղաքական ու սոցիալական աղետների հետևանքով:

Էգեյանի ծովամերձ շրջանների (Պերգամա, Ջմյուռնիա, Դենիզլի, Մանիսա, Այդըն, Մենեմեն, Քուշադա, Քրքադաշ, Սյոքե, Նազիլի և այլն) գաղթօջախների առկայության մասին փաստական վկայությունները նոր ժամանակների պատմագրությունը հիմնականում սկսում է XVI դարից: Ջմյուռնիայի վաղեմի հայկական գերեզմանատան (որ հետագայում լքվել է) ցայժմ հայտնի ամենահին դամբանագիրը թվագրված է 1551 թ.²⁶³: Ավելի ուշ՝ 1622 թվականից է առ այսօր մեզ հայտնի ամենահին հիշատակարանը, որ վկայում է գաղթօջախի մշակութային ծաղկման և նշանակության բարձրացման մասին²⁶⁴:

Գաղթօջախին նվիրված և դրա պատմության առաջին ուսումնասիրող Բ. Սլարսը իր ֆրանսերեն աշխատության մեջ (Slars B. Etude sur Smyrne, Paris, 1868) գաղթօջախի հիմնադրման մասին որպես սկզբնաղբյուրի, հենվում է զմյուռնացի մի քանի հնաբնականների և մտավորականների վկայությունների վրա²⁶⁵: Բ. Սլարսը կարծում է, որ հայե-

²⁶³ Քութեան Հ., Հայք ի Ջմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, էջ 82:

²⁶⁴ ՄՄ, ձեռ. N 6332, էջ 513:

²⁶⁵ Բ. Սլարսի աշխատությունը մեր ձեռքի տակ չունենք, ուստի նրա տեսակետը վերաբրտադրում ենք Հ. Քոսյանի <<Հայք ի Ջմիւռնիա եւ ի շրջակայս>> գրքի հանգամանալի շարադրանքի հիման վրա: Իր հերթին, Բ. Սլարսը վկայակոչում է հայ <<ալևորներին և ուսումնականներին>>՝ գլխավորապես Ս. Պալապանյանին (ուսյալ քահանա) և Ղ. Պալղազարյանին (Արշալոյս Արարատեան թերթի խմբագիրը), ովքեր նրան այդ տեղեկությունները տրամադրել են 1860-ական թթ., ընդ որում, Ղ. Պալղազարյանը Սլարսին տվել է նաև գրավոր տեղեկություններ (Քութեան Յ., նշվ. աշխ., էջ 40):

ըր Զմյոռնիայում են հաստատվել գաղթելով՝ Ռուբինյանների անկումից՝ 1375-ից հետո, երբ <<իբր երեսուն հազար ընտանիք անցան Կիպրոս, Ռոդոս, Կրետե և ուսկից տարածուեցան նաև Իտալիա>>²⁶⁶:

Ընդամին, Բ. Սլարսը գաղթի հանգրվաններ համարում է մասնավորապես Իտալիան, Կիպրոս, Հռոդոս և Կրետե կղզիները²⁶⁷, ինչպես և Զմյոռնիան: Այս առաջին գաղթի ժամանակ, հարում է Բ. Սլարսը, <<Հայք Զմիռնիա հաստատուելով կառուցին մատուռ մը, որուն կից ունէին գերեզմանոց մը: Դեռ այս օրս կը տեսնուին տոյն մատրան վայրն և գերեզմանոցին ցանկերը (ցանկապատերը-Ա. Խ.)՝ տաճկաց թաղին ճիշտ քովը: Հայոց եկեղեցւոյն (այժմյան-Ա. Խ.) մեծ գերեզմանոցին մէջ տակաւին այս օրս կայ գերեզմանաքար մը վերոյիշեալ գերեզմանոցէն փոխադրուած, որուն վրայ կը կարդացուի թուական մը 215 տարուան (նկատի ունի 1551 թ. Սարգսի դամբանագիրը - Ա.Խ.): Ալևոր հայք կըսեն, թէ շատ լաւ կը յիշեն, որ վերոյիշեալ գերեզմանոցին մէջ աւերակ դառնալէն յառաջ տեսած են շիրիմներ, որոց թուականը շատ աւելի հնագոյն եղած է: Այս ամէնը նմանապէս իմ կարծիքիս հաստատութեան կը նպաստեն և կրկնել կուտան, թէ հայոց՝ Զմիռնիա գաղթելը ԺԴ-երորդ դարու մէջ եղած է>>²⁶⁸:

Հ. Քոսյանը անվերապահորեն ընդունում է ֆրանսիացի հետազոտողի տեսակետը՝ իր կողմից ավելացնելով որոշ մանրամասներ. <<Գաղթականութեան համար ըսուածները (Սլարսի-Ա. Խ.) կը հաստատենք մենք ալ: Հայք այլևայլ դարերու մէջ և զանազան կողմերէ Զմիռնիա դիմած են: Առաջին անգամ ամենայն հաւանականութեամբ Ռուբինեանց թագաւորութեան անկումէն ետքն ոտք կոխած են հոս>>: Նա հավելում է, որ 200 տարվա հնություն ունեցող գերեզմանաքարերի կարելի է հանդիպել. <<Աւելի հնագոյն՝ 300 տարուան և աւելի թուական ունեցող կրկին գերեզմանաքարեր կը գտնուին, որք նախկին գերեզմանոցէն փոխադրուած են այժմեան եկեղեցվոյ պարտէզը>>²⁶⁹:

Ի հավելումն այս ամենի, բազմաթիվ անձինք հայտնել են Հ. Քոսյանին, որ <<ասկէ 25-30 տարի առաջ երբեմն կերթային նախկին մատրան (Սլարսի հիշատակած-Ա. Խ.) վայրը՝ իբր ուխտատեղի... Եւ որ գերեզ-

²⁶⁶ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 31:

²⁶⁷ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 31:

²⁶⁸ Նույն տեղում, էջ 32:

²⁶⁹ Նույն տեղում, էջ 38:

մանոցին մէջ տեսած են հայերէն գրով քարեր, որոնք վերջին տարիներու մէջ պակսած են եղեր»²⁷⁰:

Այսուհանդերձ Հ. Քոսյանը փաստերով չի ամրապնդում իր դիտողությունն այն ժամանակ, երբ գրում է, թե հավանաբար, 1500-ի վերջերին (նկատի ունի XVI դ. վերջերը) հայերը <<տակաւ թողուցած են նախկին մատրան վայրը և հաստատուած այժմեան գտնուած տեղերնին»²⁷¹: Այդ <<1500-ի վերջերը» (իմա XVI դ. վերջերին) թէն մնում են տրամաբանությունից ոչ զուրկ, այնուամենայնիվ՝ զուտ ենթադրություն, որովհետև նախկին մատուռի վայրը հայերը կարող էին լքել նաև նախքան դարավերջը, այսինքն, 1567 թ. ոչ ուշ, կամ դրան հաջորդող մի քանի տարիներին: Ինչու: Որովհետև իր՝ Հ. Քոսյանի հայտնաբերած՝ XVI դ. վերջին դամբանականը թվագրված է 1567-ով, ինչպես կտեսնենք ստորև: Իսկ դրանից հինը նահատակ Սարգսի դամբանագիրն է՝ գրված այն գերեզմանաքարերից մեկի վրա, որ, ինչպես տեսանք վերը, հետագայում եկեղեցու պարտեզ էին տեղափոխել հավանաբար նկատի առնելով այս նոր վկայի նշանակալիությունը: Այդ դամբանագիրը, որին անդրադարձանք վերը, կրում է <<յամի հազար հայկեան» (1551) թվականը²⁷²:

Ժամանակագրական կարգով վերոհիշյալին հետևում է Հ. Քոսյանի վկայակոչած մյուս արձանագրությունը. <<Այս է տապանս հանգստի եւ նազելի պատանեակի գեղեցկատիպ եւ ցանկալի Գասպար անուամբ քաղցր յոգի որդի էր առն Սարգսի եւ երկրէ ներքաղքցի որ եւ մայ[իսի] ԺԵ-ի փոխ առ Տրն ի թուականիս Հայկեան սեռի հազար ԺՁ ի»> (1567)²⁷³:

Դժվարանում ենք ասել՝ արդյոք զմյուռնացիներ են եղել այս երկու շիրմաքարերի տակ հանգչողները, բայց տվյալ դեպքում կարևորն այն է, որ XVI դ. երկրորդ կեսից առաջ զմյուռնահայ համայնքն ունեցել է իր

²⁷⁰ Նույն տեղում, էջ 40:

²⁷¹ Նույն տեղում, էջ 41:

²⁷² Նույն տեղում, էջ 82:

²⁷³ Նույն տեղում, էջ 83: Ուշագրավ է, որ Հ. Քոսյանից առաջ, 1878 թ. տպագրած իր գրքում Հ. վարդ. Դիմաքսյանը տեսել է 1567 թ.՝ մինչև 311 տարվա հնություն ունեցող այս դամբանագիրը և եզրակացրել, որ հայոց՝ <<Զմիւռնիոյ մէջ բնակութեան թուականն ալ կրնանք մինչև 350-400 տարուան համարել և թերևս Կիլիկիոյ Հայոց թագաւորութեան ժամանակներն ինչ գաղթած ըլլան՝ վաճառականութեան և արհեստից կամ այլևայլ պատճառներով»> (Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 328):

գերեզմանատունը, որը վկայում է արդեն վաղեմի պատմություն ունեցող գաղթօջախի մասին:

Զմյուռնահայ գաղթօջախի պատմությանը, այդ թվում և հայ համայնքի հաստատման խնդրին քանիցս անդրադարձել է Ա. Ալպոյաճյանը: Կ. Պոլսի <<Բյուզանդիոն>> թերթում 1908 թ. տպագրած իր հոդվածաշարում²⁷⁴ նա սկզբից իսկ հակադրվում է Հ. Քոսյանին, նշելով, որ գաղթօջախի սկիզբը պետք է համարել ոչ թե XIV դարը, այլ դրանից 200-300 տարի (և անգամ ավելի) առաջ՝ նախ փաստարկելով Բ. Սլարսի և ապա Հ. Քոսյանի վկայակոչած՝ Միքայել Պալեոլոգի և ջենովացիների 1261 թ. դաշնագիրը: <<Երբ Իզմիրի հայերն այդքան կարեւորություն ձեռք բերելու կարող եղած էին այդ թուականին, ըսել է, թե արդեն անկէ բաւական առաջ ալ ինն հաստատուած էին: Վաւերական աղբիւրներ, յիշատակարաններ թէւ կը պակսին, բայց գերեզմանաքարեր եւ իզմիրցիներու խօսած լեզուին ինչ-ինչ երեւոյթները ցոյց կուտան, թէ Իզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են ԺԱ կամ ԺԲ դարերուն մէջ եւ կամ աւելի առաջ²⁷⁵>>,-գրում է նա:

Նման եզրակացության համար, սակայն, պակասում են ոչ միայն հայկական վավերական աղբյուրներն ու հիշատակարանները, այլև գերեզմանաքարերը, որպիսիք իրականում ոչ ոք չի տեսել՝ վերը տեսանք, որ գաղթօջախում գտնված ամենաինչ գերեզմանաքարը վերաբերում է 1551 թվականին: Մյուս կողմից, դրան նախորդող փաստական նյութի պակասը (այստեղ զանց ենք առնում Հ. Բարթիկյանի հրապարակած հունարեն վավերագրերը, որոնց անձանոթ էին XIX-XX դդ. հայ հետազոտողները) դեռևս չի բացառում Զմյուռնիայում և շրջակայքում հայկական գաղթօջախի գոյությունը, որի մասին, ինչպես կոտեսնենք ստորև, կարող են վկայել եթե ոչ նյութական արժեքները, ապա պարզապես մտահանգումները: Գալով զմյուռնահայերի բարբառի լեզվական ինչ-ինչ իրողություններին, ապա այստեղ ևս հնարավոր չէ XI կամ XII դդ. որևէ գրավոր աղբյուրի վրա հենվել, որովհետև այդպիսին չկա, կան միայն շատ ավելի ուշ շրջանի զմյուռնահայ բարբառի տվյալներ, բայց դրանք ավելի շուտ կարող են դիտվել որպես հետագա դարերի գաղթերի հետևանք: Ըստ Հ. Աճառյանի, այն <<չափազանց նման>> է Կ. Պոլսի ու հատկապես Եվ-

²⁷⁴ Ալպոյաճեան Ա., Առաջնորդություն հայոց Իզմիրի, <<Բիւզանդիոն>>, 1904,ապրիլի10/23, 11/25. 13/26, 14/27, 15/28, 16/29:

²⁷⁵ Նույն տեղում, ապրիլի 10/23:

դոկիայի բարբառներին²⁷⁶: Ինչ վերաբերում է Կ. Պոլսի և Եվդոկիայի բարբառների հետ ունեցած նմանություններին, ապա հնարավոր է, որ գմյունահայ բարբառը առաջինի հետ ընդհանրություններ (և էական) կարող էր ունենալ XIV դ. Ջմյունիայում հաստատված կիլիկյան գաղթական շերտի հայտնությամբ, իսկ երկրորդի հետ՝ Թոքատից (Եվդոկիա) XVII դ., մասնավորապես ջալալիների շարժման ժամանակ այդ քաղաքն անցած հայերի գաղթով, որին կանդրադառնանք իր տեղում:

Հավանականության սահմաններում և ընդհանուր պատմագիտական մտահանգումների մեջ են շրջանառում նաև հետազայում ձևակերպված՝ Ա. Ալպոյաճյանի դիտողությունները դեպի Ջմյունիա հայերի գաղթի մասին՝ Ռուբինյանների թագավորության անկումից առաջ, XIII դ.: Վկայակոչելով Վարդան պատմագրին, նա գրում է, որ հայերը խուսափելով մոնղոլական հեղեղից՝ դիմել են Ռումի սուլթանների երկիր: <<Այս գաղթականներէն հավանական է, որ մաս մը խուճապահար փախուստի ընթացքին առաջացած է մինչև Փոքր Ասիոյ արևմտեան ծայրը, Հոնիականի եզերքը՝ Ջմիւռնիա, որուն հայ գաղութին հաստատությունը կկարծուի՝ ժամանակակից է Չարմաղան թաթար զօրապետին Հայաստանի նուաճման թուականին, այսինքն, 1236-ին>>²⁷⁷:

Ջմյունահայ գաղթօջախի կենսագրությունը ավելի վաղ ժամանակից սկսելու այս միտումով հանդերձ, Ա. Ալպոյաճյանն ընդունում է Կիլիկյան թագավորության վերանալուց հետո Ջմյունիա ուղղված հայերի գաղթը, սակայն ոչ թե 1375-1380 թթ., այլ 1404 թ., երբ Սսից հայ գաղթականների մի մասը անցել էր Եվրոպա՝ Իտալիա, Կիպրոս, իսկ մյուս մասը՝ փոքրասիական քաղաքներ: Նա հիշատակում է մի ժամանակագրություն, ըստ որի, Սսի հայերը՝ մոտ երեսուն հազար տուն, <<մտեալ նաւ գնացին ի Ֆռանգս>>²⁷⁸: Անտարակույս, Ա. Ալպոյաճյանն այստեղ սեփական ճշտումներն է անում Բ. Սլարսի և Հ. Քոսյանի նշած՝ Կիլիկիայի անկմանը հետևող գաղթի ժամանակը բացահայտելու հարցում:

²⁷⁶ Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն: Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 6, էջ 239: Հայ բարբառների մեջ գմյունահայ բարբառի գրաված տեղի, դրա հնչյունաբանական, ձևաբանական, բառակազմական և այլ առանձնահատկությունների մասին տես Vaux B. The Armenian Dialect of Smyrna. In: Armenian Smyrna/Izmir. p. 111-126.

²⁷⁷ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ, Բ, էջ 544:

²⁷⁸ Նույն տեղում, էջ 549, 499:

Ա. Ալպոյաճյանի դիտողություններին՝ զմյուռնահայ գաղթօջախի սկզբնավորման ժամանակի և սրան առնչվող հանգամանքների հարցում, ամբողջովին համընկնում են իրենից՝ Ա. Ալպոյաճյանից վեց տարի առաջ Կ. Պոլսի <<Արևելք>> թերթում մեզ արդեն ծանոթ Ատոմի հրապարակումներում առկա դրույթներին: Այսպես, Ատոմը գրում է. <<...երբ 1261-ին պաշտօնապես այնքան գովեստներով կը խօսուի Բզմիրի վրայ, անշուշտ, շատ տարիներ առաջ քաղաքը գտնուած է այդ նախանձելի կացոյթյան մէջ: Անկարելի է, որ այդ վիճակը ստացած ըլլա անակնկալ կերպով, 1261 մարտ 13-ին, այլ աւելի առաջ երթալով և կոթնելով մեր առաջ բերած ապացոյցներուն, կրնանք Բզմիրի գաղթականութեան ծագումը ԺԴ դարէ աւելի առաջ թուականներու վերագրել, որով իրաւամբ կրնանք հասնիլ ԺԱ կամ ԺԲ դարուն և կամ աւելի առաջ>>²⁷⁹: Իր հերթին, Ա. Ալպոյաճյանը, ինչպէս տեսանք, գրում է. <<Բզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են ԺԱ կամ ԺԲ դարերուն մէջ և կամ աւելի առաջ>>²⁸⁰: Ատոմը գրում է. <<Բզմիրի հայերը գլխաւորաբար արևելյան գաւառներէ եկած ըլլալնին կը հաստատեն ոչ միայն շատ մը գերեզմանաքարեր, այլև նոյն իսկ ցարդ խօսուած լեզուին մէջ ինչ-ինչ շատ հետաքրքրական երևոյթներ>>²⁸¹: Ա. Ալպոյաճյանը գրում է. <<գերեզմանաքարեր և իզմիրցիներու խօսած ինչ-ինչ երևոյթները ցոյց կուտան, թէ Բզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են...>>²⁸²:

Հիրավի, այն տեսակետը, որ առաջ է քաշել Ատոմը 1902-ի <<Արևելքում>>, կրկնվում և շարունակվում է զարգացվել 1904-ի <<Բյուզանդիոնում>>՝ Ա. Ալպոյաճյանի կողմից: Ակնհայտ է, որ Ա. Ալպոյաճյանը նշված հիմնահարցում կրել է Ատոմի զգալի ազդեցությունը: Այստեղ ավելացնենք միայն, որ Ա. Ալպոյաճյանը մի տեղ շատ թռուցիկ, բայց և դրվատանքով հաստատում է վերջինիս խնդրո առարկա տեսակետը, որ նա հայտնել էր <<Արևելքի>> 1902 հունվարի 31| փետրվ. 13-ի թվահամարում՝ նկատելով, որ Ատոմը <<ԺԴ դարուն գաղթականութեան մը

²⁷⁹ Ատոմ, Բզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը և իր տեղեկագիրը: Արևելք, 1902, հունվարի 31| փետրվարի 13:

²⁸⁰ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Բզմիրի, Բիւզանդիոն, 1908, ապրիլի 10|23:

²⁸¹ Ատոմ, նշվ. աշխ., Արևելք, 1902, հունվարի 31|փետրվարի 13, N 485:

²⁸² Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., Բիւզանդիոն, 1908, ապրիլի 10|23:

եկած ըլլալը (իմա Զմյոռնիայի հայ գաղթականության սկիզբը-Ա. Խ.) կը հերքէ՝ բանավոր առարկութեամբ»²⁸³:

Զմյոռնիայի գաղթօջախի պատմության մեջ Ա. Ալպոյաճյանը նշանակալի տեղ է վերապահում XIV դ. հայ եկեղեցու գործունեությանը: Կ. Պոլսում, Բրուսայում, Կուտինայում և Փոքր Ասիայի արևմտյան մասերում հաստատված հայերի հոգևոր տեսչությունը, նրա կարծիքով, այդ դարի առաջին կեսին վարում էր Էնկյուրիի հայոց առաջնորդությունը՝ եպիսկոպոսների ձեռքով: <<Բիզանդական կայսրության վերջին բեկորներին Պոլսոյ մէջ առնուազն 1307-էն ի վեր կամ հաւանօրէն աւելի կանուխէն գոյութիւն ունեցող հայ եպիսկոպոսներ, անշուշտ, Ամենայն հայոց կաթողիկոսներու կարգադրութեամբ, եթէ ոչ աւելի կանուխ, ապահովաբար գոնէ ԺԵ դարէն սկսեալ, կհովուէին նաև արեւմտեան Փոքր Ասիոյ, ինչպէս Պրուսայի և Կուտինայի մէջ ու շուրջը հաստատուած հայերը, և 1316-էն ի վեր Էնկիւրիի մէջ հաստատուած հայոց առաջնորդութիւնը իր գոյութիւնը կը պահէր>>, գրում է նա²⁸⁴:

Շարունակվել է արդյոք հայերի գաղթը Էգեյանի ծովամերձ շրջաններ հաջորդ՝ XVI դարում: Այս դեպքում ևս ուղղակի փաստեր չկան, եթե չհաշվենք որոշ հետազոտողների՝ առանց փաստական տվյալների արված և առարկայական չդարձած դիտողությունները:

Գաղթօջախի պատմության սկիզբը բավական մշուշոտ է ներկայացնում Գր. Օ. Գալուստյանը: Իր շարադրանքում նա հիմնական շեշտը դնում է համայնքի պատմության կիլիկյան շերտի գոյությունը հերքելու վրա: Ելնելով դրանից, նա արժանահավատ չի համարում, նախ, հայերի գաղթը Կիլիկիայից (XIV դ. վերջին քառորդին կամ հաջորդ դարի սկզբներին) փաստարկելով, որ այս տասնամյակներին իրենք՝ քաղաքը տիրող Հռոդոսի ասպետները, դժվարությամբ էին դիմակայում սելջուկյան ճնշումներին, և որ գաղթականների աչքին այդ քաղաքը հուսալի չէր կարող դիտվել այնտեղ ապաստանելու համար²⁸⁵: Այնուհետև, կարծում է նա, հայերն այստեղ չէին կարող գաղթել Կիլիկիայից, որովհետև զմյոռնահայ համայնքը երբևէ կապված չի եղել Կիլիկիայի աթոռի հետ, և այդ վկայող ոչ մի գերեզմանաքար կամ այլ ապացույց չկա: Մինչդեռ, շարունակում է նա, հայտնի են այդ գաղթօջախի վաղեմի սերտ կապերն

²⁸³ Նույն տեղում:

²⁸⁴ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, էջ 549: Տես նաև Հ. Ճ. Սիրունի, Պոլիս եւ իր դերը, հ. 1, էջ 178:

²⁸⁵ Գալուստեան Գ. Օ., Զմիւռնիա և Զմիւռնիոյ հայ գաղութը, էջ 278:

ու հարաբերությունները Էջմիածնի հետ, քանի որ հնագույն տապանաքարերը <<Արարատայ նահանգի անուններով կը հաստատեն, թէ զմիռնահայությունը կիլիկեան ծագումով ոչ ինչ ունեցած է իր մէջ>>²⁸⁶:

Մենք արդէն տեսանք, որ առ այսօր մեզ մատչելի հնագույն տապանաքարերը չեն անցնում ավելի հետ, քան 1551 և 1557 թվականները, որտեղ, ի դեպ <<Արարատայ նահանգ>> հիշեցնող ոչինչ չկա: Եվ դարձյալ, գաղթօջախի պատմությունը շատ ավելի հետ տանելու միտումով, Գ. Գալուստյանը կարևորություն չի տալիս XVII դ. սկզբներին Շահաբասի ժամանակների գաղթին Զմյոռնիա և վկայակոչում է Սլարսին, ով (հենվելով Թավերնիեի՝ 1631թ. արձանագրած զմյոռնահայերի թվաքանակի վրա), նկատել էր, թե հայերը 26 տարվա ընթացքում (այսինքն 1604 թ. հետո) չէին կարող այդքան բազմանալ: Գ. Գալուստյանը, ուրեմն, զուտ տեսականորեն է հիմնավորում այն թեզը, որ Զմյոռնիայի գաղթօջախը շատ ավելի հին պատմություն ունի, քան XVII դ. սկզբների գաղթերն են և որ այն հիմնել են արևելահայ գաղթականները Շահաբասից, նաև՝ Կիլիկիայի թագավորության անկումից էլ շատ առաջ: Այնուհետև, Գ. Գալուստյանը չի համոզում, երբ վիճարկում է 1370-1380 թթ. Կիլիկիայից հայերի Զմյոռնիա գաղթը: Հռոդոսի ասպետները միայնակ չէին բեյությունների դեմ մղած պայքարում, այստեղ դեռևս XII-XIII դդ. հուսալի դիրքեր ունեին Ջենովայի վաճառականները, որոնց հետ առևտրական հին կապեր ունեցող հայերը կարող էին գործել կամ բնակվել Զմյոռնիայի մերձափնյա՝ նավահանգստային մասում, որտեղ առանձնացած էին քրիստոնյաները: Ինչ վերաբերում է Արարատյան նահանգի տեղափոխություններով և անձնափոխություններով հայտնի տապանաքարերին, ապա դրանք հենց Շահաբասի ժամանակների գաղթականների ու նրանց սերունդների, ինչպես և հետագայում գաղթածների հետքերն են (XVII-XVIII դդ.) և համեմատելի չեն XIV դ. վերջին քառորդի գաղթի կամ Կիլիկիայի աթոռի հետ ենթադրվող՝ գաղթօջախի փոխհարաբերությունների հետ: Գ. Գալուստյանը, մյուս կողմից, հաշվի չի առնում այն փաստը, որ XII կամ XIII դարերում զմյոռնացի հայերը չէին կարող կապված լինել Էջմիածնի հետ, որովհետև այդ ժամանակներում կաթողիկոսությունը վաղուց արդեն տեղափոխվել էր Կիլիկիա:

Գաղթօջախի սկզբնավորման խնդիրն իրեն հատուկ խորքային հայեցվածքով քննարկել է Հ. Աճառյանը, կարելի է ասել, բավական ուշ

²⁸⁶ Նույն տեղում, էջ 277-278:

հրատարակված իր աշխատության մեջ²⁸⁷: Նա անդրադառնում է Ա. Այվազյանի կարծիքին, ըստ որի, Զմյուռնիայի շրջանի հայ գաղթականության պատմությունը հասնում է 1000-1200 տարվա (իմա մոտ IX դ.) միաժամանակ դիպուկ նկատելով, որ այս մասին <<վստահելի տեղեկություն չունինք>>:

Հ. Աճառյանը, իրոք վստահելի տեղեկություն է տալիս Էգեյանի այս տարածաշրջանում հայ գաղթականության մասին, որ վերաբերում է արդեն XII դարին: Նա նույնպես վկայակոչում է Հռոմկլայի եկեղեցական ժողովը (1179), որին <<ներկայ էր նաև Սարգիս եպիսկոպոս Լատոսիկեի, որ հիմնական Տենիզլիի (տպագրական վրիպակ է, պետք է լինի Տենիզլիի – Ա. Խ.) կողմերը կիյնա, Զմիւռնիայէն դէպի հարաւ-արեւելք: Յատուկ հայ եպիսկոպոսութեան մը գոյութիւնը Լատոսիկեի մէջ յայտնի կը ցուցնէ, թէ նոյն ժամանակ բաւական մեծ հայ գաղթականութիւն կար հոն>>²⁸⁸:

Նկատենք, որ XIII դ. սկզբին սելջուկները Դենիզլին զիջել էին բյուզանդացիներին²⁸⁹, որ ինքնին ենթադրում է քրիստոնեական տարրի, այդ թվում և զգալի թվով հայերի բնակությունն այնտեղ՝ գոնե վերջիններս հոգևոր գլխի նստավայր լինելու տեսակետից ևս: Այստեղ մի վերջին անգամ նկատենք նաև, որ սելջուկների ժամանակներից և նախքան Օսմանյան Թուրքիային անցնելը, Դենիզլին և նրա շրջակա բնակավայրերը հայտնի էին հատկապես կտավի և նուրբ մետաքսի գործվածքների արտադրության և իրացման ոլորտում²⁹⁰, որից անմասն չէին կարող մնալ հայերը, ովքեր մասնագիտացել էին այս բնագավառում:

XV-XVI դդ. Զմյուռնիա և Էգեյանի այլ ծովամերձ շրջաններ հայերի նոր գաղթերի մասին որոշակի փաստեր չկան, բայց, ինչպես տեսանք,

²⁸⁷ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002:

²⁸⁸ Նույն տեղում, էջ 549-550: Հռոմկլայի ժողովը գումարվել է 1179 թ. Զատկին: Ժողովին մասնակցող հոգևորականների մեջ էր Սարգիս Լատոսիկեայ եպիսկոպոսը, <<որով Կիլիկիոյ հետ մօտ յարաբերութիւններ ունեցող եպիսկոպոսներ կըլլան 15>>,-գրում է Մ. Օրմանյանը (Օրմանեան Մ., Ազգապատում, հ. 1, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 1718): Զմյուռնիայի շրջակայքը, տվյալ դեպքում՝ Դենիզլին, կամ որ նույնն է՝ Էգեյանի առափնյա տարածքների հայ գաղթականության բնակավայրերը, XII դ. առաջ ևս ենթարկվում էին Կիլիկիայի աթոռին:

²⁸⁹ Гордлевский В. А. Избр. Соч., т. 1, с. 53.

²⁹⁰ Uzuncarsili I. H. Osmanli Tarihi, II Cilt. Turk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1949, s. 675.

XVI դ. 2-րդ կեսի մեզ հայտնի գերեզմանաքարերը հաստատում են Ջմյունիայում արդեն գոյություն ունեցող գաղթօջախի գոյությունը: Մակար վարդապետը կարծում է, որ հայերը Նազիլի են գաղթել 400 տարի առաջ, այսինքն XV դ. վերջին (կամ XVI դ. սկզբին)՝ Ագուլիսից, Կապանից, Ղարաբաղից, Երևանից և այլն: Սակայն նա որևէ փաստ չի բերում այս տեղեկության օգտին²⁹¹, թեև կարելի է կարծել, որ նշված վայրերից գաղթերը վերաբերում են XVII դարին, ինչը հաստատվում է Հ. Քոսյանի վկայակոչած բազմաթիվ շիրմաքարերով:

Ջմյունիան և նրա շրջակայքը նոր գաղթականությամբ պետք է համարվեին 1590-ական թթ. և հետո, հատկապես 1610-ական թթ. հետևող շրջանում, երբ ջալալիների ապստամբություններից, սովից ու պարսկա-թուրքական պատերազմից պատուհասված բազմաթիվ հայեր անցան Միջերկրականի և Էգեյանի ափերը: Այս ժամանակներից պետք է վերջնականապես կազմավորվեին Ջմյունիայի և կից բնակավայրերի հայկական համայնքները: Հ. Դիմաքսյանը վկայում է Երևանից ու Ղարաբաղից (վերջին տեղանվան ներքո ենթադրելով նաև առհասարակ Սյունիքը՝ Կապանը, Մեղրին, Գորիսն ու դրան հարող տարածքները) գաղթած լայն շերտի առկայությունը Ջմյունիայում և նրա թեմերում²⁹²:

Նույնն են հաստատում Հ. Քոսյանի աշխատության շնորհիվ մոռացությունից փրկված՝ Ջմյունիայում և շրջակայքի բնակավայրերում հայտնաբերված բազմաթիվ դամբանագրերը՝ շատ ավելի լայն անվանացանկով: Դրանք ցույց են տալիս, որ այստեղ հայ գաղթականության մի որոշակի և բազմամարդ շերտը XVII դ. ամբողջ տասնամյակներ շարունակ գաղթել է Սյունիքից (Շաշկերտ, Շվանիձոր, Կալեր, Մանլև, Գումարք, Չավնդուր, Կապան և այլն), Ջուղայից, Նախիջևանից և Արարատյան դաշտի այլ բնակավայրերից²⁹³: Հարկ է նկատել, որ Հ. Քոսյանի հիշատակած XVII-XVIII դդ. տապանաքարերի գրեթե բացարձակ մեծամասնությունը պատկանում է Արևելյան Հայաստանից եկած՝ XVII դ. և հետագայի գաղթականությանը: Պետք է ենթադրել, որ վերջինիս, իբրև նոր գաղթականության, Ջմյունիայում կամ նոր գերեզմանոց է հատկացվել և կամ էլ Հ. Քոսյանին մատչելի է եղել արևելահայ տեղափոխներով այդ գերեզմանատան մի հատվածը: Ինչ վերաբերում է շրջա-

²⁹¹ Արեւելեան մամուլ, 1879, թիվ 3, էջ 436:

²⁹² Դիմաքսյան Հ., նշվ. աշխ., էջ 129, 143-144;

²⁹³ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 85, հ. Բ, էջ 25- 26, 51, 54, 69- 70, 101: Նույնի Ակնարկ մը հնութեան բեկորներու, էջ 278:

կայքի բնակավայրերին, ապա սրանց մի զգալի մասում, ինչպես կտեսնենք, հայ հանրություններ էին գոյացել հենց XVII դարում: Ձմյուռնահայերի ավելի հին գերեզմանատունը, ինչպես վկայում է Հ. Քոսյանը, լքվել էր XVI դարում, որի նմուշները արդեն տեսանք 1551 և 1567 թթ. երկու տապանաքարերում:

Կարելի է ասել, որ մինչև 1610-ականի վերջերը Ձմյուռնիան և մերձակայքը գաղթականներին ասպնջականելու համար անվտանգ չէին: Ի տարբերություն Կ. Պոլսի, որտեղ գաղթական հայերի բազմությունները եկել էին արդեն 1605 թ.²⁹⁴, այս տարածաշրջանը այդպիսի հնարավորություն չէր ընձեռում: Այստեղ շարունակվում էին ջալալիների հուզումները՝ տակնուվրա անելով ամբողջ փոքրասիական շրջանները: Առանձնապես եռանդուն էին գործում ապստամբների բազմահազարանոց կուտակումները՝ Քալենդեր Օղլուի, Քարա Սայիդի, Սաչլու Խալիլի գլխավորությամբ: Օսմանյան պետությանը լրջորեն սպառնում էր Քալենդեր օղլուն, որին դժվարությամբ պարտության մատնեց թուրքական զորահրամանատար Մուրադ փաշան²⁹⁵: Նույն ժամանակներում էր գործում Ջանփոլադ Ալի Օղլի փաշան կամ Թավուլը: Սա իր գործով գրավել էր Հալեպը, ապա Սիսը, Ադանան և խորացել արևմտյան Փոքր Ասիայում, հասել մինչև Եփեսոս (Այասուք) և Ձմյուռնիա: Ջալալիների պարտությունից հետո միայն, 1610-ական թթ. և այդուհետև էգեյան հասած հայ գաղթականները կարող էին հանգրվանել դեռևս անհանգիստ այդ տարածքներում: Այս տեսակետից բավական ուշագրավ են Սիմեոն Լեհացու տվյալները XVII դ. առաջին տասնամյակի Ձմյուռնիայի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ. այստեղ, ըստ նրա, <<կայր հայոց եպիսկոպոս մի, յաբեղայ մի եւ էրեց մի, հարիւր տուն հայի եւ երկու եկեղեցի՝ մինն ի բերթն եւ մինն ի դուրս>>²⁹⁶:

Եթե XVII դ. առաջին տասնամյակին զմյուռնահայ գաղթօջախը կազմված է եղել 100 տնից, ապա դժվար է ենթադրել նոր գաղթականության մեծաքանակ առկայությունը: Ջալալիների մեկը մյուսին հետևող արշավանքները տարածաշրջանում և առհասարակ խառնակ իրադրությունները ծանր հարված էին հասցրել Ձմյուռնիայի նավահանգստին ու առևտրին, քաղաքը դարձրել անհուսալի և անապահով՝ գաղթականներին հրապուրելու համար: Հնարավոր է, իրենց գործն էին արել նաև

²⁹⁴ Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ, էջ ԻԴ:

²⁹⁵ Naima. Annals, pp. 360-361.

²⁹⁶ Սիմեոն դպրի Լեհացույ Ուղեգրություն, էջ 37:

հրդեհները: 1600-ականի սկզբներին, ինչպես գրում է եվրոպացի ճանապարհորդը, բնակիչների մեծ մասը լքել էր այրված քաղաքը²⁹⁷: 1622 թ. Զմյուռնիայում և շրջակայքում խժոժություններ էին անում ապստամբ եմիչերիները՝ պատուհասելով քրիստոնյա երկրների հյուպատոսներին²⁹⁸: Դրանից հետո էլ, 1630-ական թթ. Այդընի շրջանում գործում էին Քնալը Օղլուի ապստամբ ջոկատները և այլն²⁹⁹:

Զալալիների հուզումների ժամանակաշրջանում Զմյուռնիա և մերձակայք են գաղթել նրանց ասպատակությունների թիրախ հայեր Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից՝ Բաղեշից, Կեսարիայից, Խարբերդից և այլն: Գաղթերը շարունակվել են XVII դ. մյուս տասնամյակներին ևս: Ուշագրավ է Հ. Դիմաքսյանի գրառած մի դամբանագիրը՝ <<Այս է տապան բաղըշեցի Յովհաննեսի որդի Աւագի կողացւոյն>>³⁰⁰: Կեսարացիներ <<խոճա Մուրատը և ճիհանշայն>> Զմյուռնիայի Ս. Ստեփանոս և Ս. Բարդուղիմեոս եկեղեցուն են նվիրել Կեսարիայում գրչագրված մի ձեռագիր³⁰¹: Նույն ժամանակներում Կեսարիայից Զմյուռնիա էր գաղթել Էքիզյան հայտնի ընտանիքը³⁰²: Կեսարացիներ կային նաև շրջակա քաղաքներում և ավաններում:

Նոր գաղթերը հետագայում փոխհատուցելու էին այն կորուստները, որ ունենում էր առհասարակ Զմյուռնիայի ազգաբնակչությունը քաղաքական խառնակությունների, բնական աղետների և համաճարակների պատճառով: Պետք է նկատի ունենալ նաև բուն իսկ զմյուռնահայերի գաղթերը (հիարկե, ոչ մեծ չափերով) դեպի եվրոպական երկրներ, չի բացառվում նաև փոքրասիական այլ քաղաքներ և Կ. Պոլիս, այլև Արևելյան Հայաստան:

1720-ական թթ. վերսկսված թուրք-պարսկական պատերազմը և պարսկական ծանր հարստահարումները չարիք դարձան արևելահայ բնակչության համար: <<Երբ խայերն կտեսնեն, որ էլ ճար չկա, նեղութիւնն օրըստօրէ իւելանման ա, շատ գեղ ու շատ մարդ խիզանով փախան գնացին օսմանցու երկիրն>>,-առանց հասցեագրման գրում է Պետ-

²⁹⁷ Sandys Travels, p. 12.

²⁹⁸ Eton W. A Survey of the Turkish Empire, p. 163.

²⁹⁹ Զուլալյան Մ., Զալալիների շարժումը, էջ 215:

³⁰⁰ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 351:

³⁰¹ ՄՄ, ձեռ. 6332, էջ 215ա-216:

³⁰² Արշալոյս, 1908, 1 մայիսի:

րոս դի Սարգիս Գիլանենցը³⁰³։ Մյունիքում և Արցախում ծավալված պայքարի շնորհիվ հայությունը հարված հասցրեց նվաճողներին, սակայն Արարատյան դաշտում թուրքերն ասպատակում և գերեվարում էին խաղաղ հայ բնակչությանը։ Գերվածներին վաճառում էին Կ. Պոլսի շուկաներում, ընդ որում, նրանց քանակն այնքան շատ էր, որ Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես Կոլոտը բողոքել էր մեծ վեզիր Իբրահիմին՝ <<խափան դնել անիրաւութեանցն այնոցիկ>>³⁰⁴։

Տեղահանված և փախստական բազմաթիվ հայեր էին կուտակվել 1727 թ. Կարինում, Եվդոկիայում, Սեֆաստիայում, Կոնիայում և այլուր, որոնք 1732 թ. հնարավորություն ստացան հեռանալ նպատակահարմար թվացող վայրեր։ <<Ձի բազում մարդիկ տնով չկեցին աստի, ոմանք գնալով Իզմիր, ոմանք Կոստանդինուպոլիս, ոմանք ի Տրապիզոն, ոմանք Դոլըմ և ոմանք այլուրեք³⁰⁵>>,- գրում է Հ. վարդ. Ներսեսյանը Մխիթար աբբային։

Մյունիքում ազատագրական շարժման տեղատվությունից հետո խուսափելով պարսկական ճնշումներից, մարդիկ գաղթում էին հայրենի վայրերից։ 1730-ականի սկզբին Զմյոտնիա գաղթեց Նուպարյանների գերդաստանը։ Մեկ տասնամյակ անց արևելյան գավառներից և հատկապես Արարատյան հովտից դեռ շարունակվում էր գաղթը, որի ճանապարհը բռնեցին նաև մելիք Մելումն ու նրա մարդկանց բազմությունը։ Հավաքելով յուրայիններին, մելիք Մելումը բռնում է գաղթի ճանապարհը, որի մասին ասվում է Էջմիածնի սինոդին ուղղված մի վավերագրում. <<Իսկ որդին տյոն գայս Մելիքսելումայ, մելիք Խանբաբին երկրորդ, չյանդուրժեալ յասպատակութեանց եւ ի բռնութեանց յերկրին Պարսից, խոյս ետուն տամ[բք] իւրովք յերկիրն օսմանցւոց ի քաղաքն յԻզմիւռնիա յամի տեառն 1745-ի>>³⁰⁶։

Մինչև XVIII դ. առաջին կեսը Արևելյան Հայաստանից շարունակվում էին գաղթերը Նախիջևանից, Երևանի շրջակայքից և նոսրացող

³⁰³ Ժամանակագրություն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի, էջ 201։

³⁰⁴ Այվազովսկի Գ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 173։

³⁰⁵ Տայեան Դ., Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ, էջ 290։

³⁰⁶ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 169/ա, վավ. 70։ Մելիք Խանբաբի արդեն զմյոտնաբնակ հետնորդները նույն գրության մեջ հայտնում էին, որ իրենք մելիքական ծագում ունեն և սերում են <<յերկրէն Երեւանայ եւ իշխօղ մելիքական աստիճանաւ Զարապխանէի եւ Շորեկէլայ նահանգացն եւ այլոց գիւղորէից>> (նույն տեղում)։

կամ սովարացող հոսքերով՝ Մյունիքից: Նախիջևանցիների գաղթին մենք կանդրադառնանք Էգեյանի շրջակայքի հայ կաթոլիկական հարանվանությամբ վերաբերող հատվածում: Այստեղ նկատենք միայն, որ գաղթել էին ոչ միայն նախիջևանցի կաթոլիկները, այլև Երևանի ու նրա շրջակայքի հայ բնակչության մի մասը: Մ. Թաղիադյանը որոշակիություն է մտցնում այս տեղաշարժերի մեջ, երբ նշում է, որ Զմյուռնիա էին գաղթել նաև կարբեցիները. <<Վերջին անբաժ Կարբոյ,- գրում է նա,- եղև յաւուրս Նադրայ արքայի պարսից, յորոց ի բնակչաց կէսը գնացին ի Զմիւռնիա, իսկ կէսըն եկին Երևան>>³⁰⁷:

Նկատենք, որ կարբեցիք և ամենից առաջ կարբեցի վաճառականները վաղեմի կապեր ունեին Զմյուռնիայի և շրջակայքի հետ, ինչպես ունեին առհասարակ Արարատյան դաշտի և Երևանի առևտրավաճառականական խավերը: Նրանց մեջ 1706 թ. իր հոգևոր գործառույթն է իրականացրել <<մեղօք լցեալ և թարմատար>> գրիչ կարբեցի Վարդան երեցը <<յերկրէս Արարադէ և ի գիւղաքաղաքն Կարբոյ յոտն Արագածէ>>³⁰⁸: Պետք է կարծել, որ Վարդան երեցը, հակառակ գրիչներին հաստուկ գանգատներին, Էգեյանի հայաբնակ բնակավայրերում հազիվ թե իրեն միայնակ զգար. Զմյուռնիայում, Թուրգուրում, Այդընում, Աքիիսարում և այլուր, որտեղ շրջում էր նա, XVIII դ. առաջին կեսին արդեն բնակվում էին կարբեցիներ: Հ. Քոսյանը մեջբերել է <<ի գեղջէն կարբեցի մահտեսի Մարտիրոսի որդի Եվումի>> տապանագիրը, <<որ փոխեցաւ թ. ՌՃՂԸ (1749) մարտի Ի (20)>>³⁰⁹:

1740-ական թթ. նույն պարսկական հարստահարություններից խույս տալով, Էգեյանի ափերն են գաղթել վայոցձորեցի հայեր: Այս ժամանակաշրջանում է, կարելի է կարծել, Դարալագյազի Մթնաձոր (Մատնեձոր, Մոնաձոր) գյուղից (ինչպես ասված է բնագրում) Զմյուռնիա է անցել մեկիք Վանին: Նրա թոռը՝ արդեն զմյուռնացի Մելիքյան Մկրտիչը հետագայի իր մի գրությամբ հայտնում էր պապի անտերունչ մնացած ունեցվածքի մասին, որ հայրենիքում էր մնացել <<ի ժամանակս Թահմազ Ղուլի շահին, որ ի Նադիր շահին>>³¹⁰:

³⁰⁷ Թաղիադյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, էջ 122:

³⁰⁸ ՄՄ, ձեռ. 805, էջ 449ա: Տես նաև նույն տեղում, ձեռ. 2129, էջ 51ա:

³⁰⁹ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 91:

³¹⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 248, վավ. 1096:

Նույն ժամանակներում Ձմյուռնիա են գաղթել եղվարդեցի Հովհաննեսը և նրա որդի Կարապետը՝ մի քանի տասնյակ ուղեկիցներով³¹¹: Ի դեպ, վերջինս իր առևտրական գործառնություններով հետագայում առնչվելու էր զմյուռնաբնակ եվրոպական վաճառականների հետ: Այս ժամանակներում՝ XVIII դ. կեսերին, չքավոր գաղթականները Ձմյուռնիայում այնքան էին բազմացել, որ հայ համայնքը հիմնում է այսպես կոչված <<օտալարը>> (բնակարաններ)՝ անշուք մի շինություն, որտեղ ապաստանել են նաև տնանկ հիվանդները, ինչպես նշված է հետագայում կառուցված Ս. Լուսավորչյան հիվանդանոցի տեղեկագրում³¹²: Ձմյուռնահայերի վարչության ջանքերով գործում էր նաև առանձին հիվանդանոց՝ գաղթական հիվանդներին խնամելու համար³¹³: Հյուրանոցի և հիվանդանոցի առկայությունը ինքնին վկայում էր գաղթական ազգակիցների նկատմամբ զմյուռնահայերի հոգածության մասին: Միաժամանակ, քաղաքում (մասամբ և շրջակայքի բնակավայրերում) հաստատվում էին նաև զգալի թվով գաղթած վաճառականներ, որոնք իրենց զբաղմունքի բերումով պետք է որ արդեն ծանոթ լինեին Ձմյուռնիայի շուկային: Նրանք իրենց մասնակցությունն են բերել տեղի ազգային համայնքի հասարակական ձեռնարկումներին:

XVIII դ. առաջին կեսին գաղթականները բնակություն էին հաստատում ոչ միայն Ձմյուռնիայում, այլև, ինչպես ասվեց, նաև շրջակայքում: Սյունիքի, Նախիջևանի և այլ վայրերի բնակիչները, ինչպես նշում է Կ. Շահնագարյանը, <<լքին զարարս իւրեանց եւ զերկիր ծննդեան եւ անցեալ գնացին ոմանք ի Թուրքաստան՝ զտեղի կալեալ ի Ձմիւռնիա, ի Կոստանդնուպոլիս, ի Պերգամ, յԵօտեմիշ, յԱդիսար...>>³¹⁴:

Ձմյուռնիայի շրջակայքի նշված՝ վերջին երեք բնակավայրերին պետք է ավելացնել Քրքաղաչը, Նազիլին, Քուշադան, Գնըքը և այլն: Իսկապես, այս ժամանակաշրջանի Ձմյուռնիայի և կից շրջանների դամբանագրերը վկայում են դափանցի, շաշկետցի (շաշկերտցի), կալերցի, մանլևեցի, ափքեսեցի, նախիջևանցի և այլ եկվորների մասին, ամբողջովին կամ գրեթե ամբողջովին գաղթած այն նույն վայրերից, որոնք հիշվում են XVII դ. շիրմաքարերի արձանագրություններում: Հանդիպում են նաև խարբերդցիների, թոքատցիների, կեսարացիների և այլ շրջան-

³¹¹ Նույն տեղում, ձեռ. N 10272:

³¹² Ատոմ, Իզմիրի Ս. Լուսավորչեան հիւանդանոցը, Արևելք, 1902, 22 մայիսի:

³¹³ Նույն տեղում:

³¹⁴ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 30:

ներից եկածների շիրմաքարեր, որոնք համեմատաբար փոքրաթիվ են՝ ըստ Հ. Քոսյանի մեջբերումների³¹⁵:

Ստույգ փաստեր այն մասին, թե արդյոք 1796 թ. Աղա Մահմադ Խանի արշավանքի ժամանակ կամ դրա հետևանքով հայեր են գաղթել Ջմյունիա՝ մեզ չհաջողվեց գտնել: Թեև Հ. Քոսյանն այդ իրողություն է համարում, սակայն այդ հաստատող որևէ աղբյուր չի հղում: Ըստ երևույթին, նա հենվել է Կ. վարդ. Շահնագարյանի՝ 1859 թ. հրատարակած Ստեփանոս Օրբելյանի Պատմության համար գրած առաջաբանում վկայակոչված մի վավերագրի վրա: Այստեղ նկարագրվում են Մարտիրոս արքեպիսկոպոսի՝ Ջմյունիայի առաջնորդ նշանակվելու նախընթաց դեպքերը: Ասվում է, որ Մարտիրոսը 1796 թ. գնացել է Ջմյունիա, <<ըստ որում բնակիչք երկրիս յառաջմէ անդ էին գնացեալ>>³¹⁶: Բայց <<յառաջմէ>> ավելի շուտ կարող է նշանակել ոչ թե Աղա Մահմադ Խանի ժամանակ, այլ դրանից առաջ, մեր կարծիքով՝ 1740-1750-ական թթ.: Հիրավի, հայերը Տաթևից Ջմյունիա և շրջակայք էին գաղթել այս ժամանակաշրջանում: Այդնի շիրմաքարերից մեկը պատկանում է <<տաթևացի տեր Գեորգի որդի տեր Օվանէսին ՌՄԺԲ>> (1763)>>³¹⁷: Այս գաղթականությունն է, որ Տաթևի վանքին կալվածքներ էր նվիրել Ջմյունիայում և կից բնակավայրերում (Քրքաղաչ, Նազիլի, Էռդեմիշ և այլն)³¹⁸:

2. Հայ կաթոլիկներն առափնյակում

Դեպի փոքրասիական առափնյակ ձգվող՝ XVIII դ. առաջին կեսի վերոհիշյալ մասնակի գաղթերին գրեթե համաժամանակ և այնուհետև, մինչև դարավերջ հանդիպում ենք առավել նշանակալի գաղթական հոսքերի: Նկատի ունենք հայ կաթոլիկական հանրությունների տեղաշարժերը, որոնց հիմքում ընկած էին սոցիալական և մի հայտնի չափով նաև քաղաքական պատճառները:

Հայ կաթոլիկների՝ նշանակալի քանակով գաղթը դեպի Էգեյանի առափնյակ, ծայր է առնում Նախիջևանից, XVIII դ. 40-ական թթ.: Ինչպես և Սյունիքից եկած գաղթականները, նախիջևանցի կաթոլիկները գաղթը սկսեցին կազմակերպված և մարդաշատ բազմությամբ՝ իրենց հոգևոր

³¹⁵ Քոսեան Զ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 90-96, հ. Բ, էջ 25-28, 52-55, 70, 80-85 և այլն:

³¹⁶ Նույն տեղում, էջ 113-114:

³¹⁷ Նույն տեղում, հ. Բ, էջ 28:

³¹⁸ ՄՄ, Կաթոլիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 447, թղթ. 48, վավ. 221:

ու աշխարհիկ առաջնորդների ծրագրած երթով ու հանգրվանների հաշվարկումներով: Գաղթի միանշանակ պատճառը Նադիր շահի (1732-1745) ժամանակ սաստկացած տնտեսական և կրոնական բռնություններն էին Արևելյան Հայաստանում և Հարավային Կովկասի մյուս մասերում: Իր նվաճողական հանդուգն ծրագրերն իրականացնելու համար շահը նյութական վիթխարի պահանջները ձգտում էր բավարարել ոչ միայն գրավված վայրերի թալանով, այլև բուն պարսկաբնակ ժողովուրդների հարկային լծի անօրինակ ծանրացմամբ: Թե ինչ ամայացնող մեթոդներով էր կատարվում հարկահանությունը, հուսահատ տողերով է ներկայացնում Վարդան Օձնեցին իր <<Պատմութիւն Հայոց>> շարադրանքում. <<Ի ժամանակս Նատիր շահին, -գրում է նա,- որպէս աւանդեն մեզ տարեգրութիւնք եւ աւանդութիւնք հինաւորց արանց, այնքան մեծացաւ յաշխարհիս Հայոց հարկապահանջութիւն մինչեւ չմնալ առ մեծատունս հարստութիւն ընչից յորոց փոխառեալ ամենեցուն՝ տային հարկապահանջից. ապա ի տեղի դրամոց եւ այլ կահ ու կարասեաց, գորս վճարեալ էին տանէին գերիտասարդս եւ զմանկամարդս գորս դուլ ծառայ անուանէին, այսինքն սեփեական ծառայ արքունի>>³¹⁹:

Զղիմանալով օրինական հռչակված կեղեքումներին և դրանց ուղեկցող այլ անողորմ չարաշահումներին, Արևելյան Հայաստանի բնակչության մի զգալի մասը բռնեց ապահով վայրեր խույս տալու՝ ավանդական դարձած գաղթերի, մյուսները՝ զինված ընդհարումների և անհնազանդությունների ճանապարհը: Տարածաշրջանում ստեղծված իրադրության առթիվ ռուսական զորահրամանատար Մ. Մ. Գոլիցինը 1747 թ. մարտի 15-ին Մուղանից գրում էր. <<Պարսկական նահանգի շատ տեղերում այժմ վտանգավոր իրադրություններ և մեծ խառնակություններ կան Գենջե, Իրևան, Նախչևան և Թիֆլիս քաղաքներում. Նրանց վրա դրված դրամական տուգանքների անչափելի գումարների պատճառով: Գրեթե բոլոր բնակիչները՝ մեծից մինչև փոքր և իրենք էլ, այդ քաղաքների կառավարիչները, ապստամբեցին, և հավաքելով իրենց ինչքն ու անասունները, հեռացան լեռներ>>³²⁰:

Նախիջևանից գաղթի իրողության և ժամանակի վերաբերյալ արդեն շատ որոշակի տեղեկություններ է տալիս մի Հայսմավուրքի ժամանակակից գրիչը. <<Թուահաշուէն Հայոց ՌՃՂԶ (1747) ամսեան ապրելի ԺԱ-ին (11) որ էր ի ժամանակն Պարսից անագորուն եւ անուպա Նադր

³¹⁹ ՄՄ, ձեռ. 4331, էջ 51:

³²⁰ Арунова М. Р., Ашрафян К. З. Государство Надир-шаха Афшара, с. 224.

շահին գոր յոյժ նեղութիւն ունէին Պարսից իշխանութեան ենթակայ] ժողովուրդքն թող զանիրաւ հարկապահանջութիւն գոր առաւել էր քան զառաջինսն յաւել եւս չար ի վ[երայ] չարեաց եւ վերք ի վ[երայ] վիրաց գոր Նախիջեւանայ երկրին վերայ ձրգեալ էին ԼԵՌ (35 հազար) թում[ա]ն եւ Երեւանու երկիրն ԽՌ (40 հազար) թում[ա]ն որ բազումք հանդերձ տամբք մեծաւ տառապանօք եղեալ ի տանց եւ ի հայրենեաց փախսան երկիրն օսմանցոց»³²¹:

Ուշագրաւ է, որ “երկիրն օսմանցոց” են փախել կամ գաղթել առհասարակ Նախիջևանի և Երևանի բնակիչները՝ առանց դավանանքի կամ ազգության որևէ տարբերության: Հայերի պարագայում խոսքը վերաբերում է նաև Սյունիքի բնակիչներին, որոնք, ինչպես տեսանք, ճիշտ նույն ժամանակներում՝ 1740-ականին և հետո հայտնվել էին Զմյուռնիայում և կից տարածքներում: Գաղթերի այս ընթացքը շարունակվելու էր ամբողջ XVIII դարում, թեև խնդիրն այն է, որ այդ ժամանակահատվածում գաղթական ամենամեծ հոսքը տեղի է ունեցել հենց Նադիր շահի իշխանության և դրան հաջորդող խառնակ տարիներին: Նադիրի անօրինակ հարկապահանջության պատճառը Խաչատուր Զուղայեցին բացատրում է նրանով, որ նա կասկածում էր հայերին՝ վրացի ապստամբների հետ համագործակցելու մեջ³²²:

Այս գաղթականությանը բավական ուշադրություն է դարձրել Ղ. Ալիշանը՝ պարզաբանելով և գաղթի պատճառները, և հանգամանքները: Ըստ այդմ, Նախիջևանի կաթոլիկների ու նրանց վանքերի վրա դրված ծանր հարկերն ու դրանք վճարելու համար արված պարտքերը թեթևացնելու համար դեռևս 1743 թ. Վենետիկ էր մեկնել պատվիրակ՝ տեղի բանկերից նրանց ավանդները Նախիջևան տեղափոխելու նպատակով³²³: Գաղթը կազմակերպելու գործում եռանդուն ջանքեր էր գործադրել դոմինիկյան հայր Թովմաս Իսավերդենցը՝ ունիթորների հոգեվոր առաջնորդը, որին պարսիկները բանտարկել էին՝ նրա գործողությունները կանխելու համար: Հավանաբար, նրան օգնել էին ֆրանսիական կամ պապական դիվանագետները, որոնք Նախիջևանում մշտապես առնչվում էին հայ կաթոլիկների հետ կամ վերջիններիս ներկայացուցիչներն էին շփվում նրանց հետ Վենետիկում, որտեղ վաղուց ի վեր առևտրական կապեր ունեին նախիջևանցի վաճառականները: Հա-

³²¹ Աճառեան Հ., Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Բայազետի, էջ 630:

³²² Խաչատուր աբեղայ Զուղայեցի, նշվ. աշխ., էջ 269:

³²³ Ալիշան Ղ., Սիսական, էջ 406:

մենայն դեպս, մահվան դատապարտված Իսավերդենցը ոչ միայն ազատվեց բանտից, այլև կազմակերպեց բազմաթիվ մարդկանց ելքը Նախիջևանից՝ անարգել շարունակելով գաղթի ծրագիրը. <<Այլ յաջողեաց նմա ոչ միայն գերծ անել, այլև գերծունել բացի սակաւուց ոմանց զամենայն մնացեալսն՝ տկարս, զծերս եւ զմանկունս եւ զկանայս եւ եռամսեայ դժուարակիր եւ տառապագին ուղեւորութեամբ հատանել անցանել ընդ բովանդակ Մեծ եւ Փոքր Հայս եւ հասուցանել ի ծագ Փոքուն Ասիոյ ի Զմիւռնիա քաղաք ոգիս աւելի քան զհագար, ընդ որս եկին եւ սակաւ ոմանք ի հարց մնացեալ վանորէից>>, գրում է Ղ. Ալիշանը³²⁴:

Այն, որ հայերի գաղթը նախապես կշռադատվել էր և ծրագրվել էր նախիջևանցի գլխավորների կողմից, անհերքելի է դառնում այն փաստով, որ ջահկեցիների բազմությունը տեղափոխելուց առաջ Իսավերդենցը <<նախ զմեծատունս ընչիւք նոցին հեռացոյց ի բաժին օսմանեանց>>, անշուշտ, դարձյալ, Զմյուռնիա:

Բայց խնդիրն այն է, որ Զմյուռնիայում կաթոլիկ նախիջևանցիներ են ապրել և մահացել նախքան Իսավերդենցի կողմից կազմակերպված գաղթը: Հ. Քոսյանի վկայակոչած տապանագրերը, իսկապես, այդ թվականից ավելի հին են, այսինքն, այստեղ հայտնվել են հայ կաթոլիկներ, նախքան մեզ արդեն հայտնի՝ վերոհիշյալ բազմամարդ գաղթը: Այդպիսիք են Իսավերդենցի համազրուղացի Խոշկաշինեցի Գալուստի որդի Դավթի, որ <<փոխեցաւ ՌէՃԼԴ>> (1734), Խոշկաշինեցի Նահապետի որդի Աստվածատուրի՝ ՌՉԽԵ (1745) մահվան թվականները կրող տապանաքարերը³²⁵:

Հ. Աճառյանը կարծում է, նկատի առնելով 1730-1740-ական թթ. առհասարակ գաղթականական տեղաշարժերը Արևելյան Հայաստանից, որ կաթոլիկ հայերը Թովմաս Իսավերդենցի գլխավորությամբ Զմյուռնիա են անցել 1730-ական թթ.³²⁶: Իր ուշագրավ աշխատության մեջ Մ.-Կ. Սմիրնեևիսը այս հարցում չի խախտում վերը նշված տասնամյակի

³²⁴ Նույն տեղում:

³²⁵ Նույն տեղում, էջ 311: Պետք է նկատի ունենալ, որ նախիջևանցի կաթոլիկները դամբանագրերում գործածել են հայկական այբուբենի գուտ թվային արժեքը՝ առանց 551(2)-ի հավելման:

³²⁶ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 552:

ժամանակահատվածը՝ նշելով, որ կաթոլիկ հայերի մի մասը Ջմյունիա է անցել դոմինիկյան հայր Թ. Իսավերդենցի առաջնորդությամբ³²⁷:

Այսուհանդերձ, կարելի է որոշ մանրամասներ ավելացնել գաղթի ժամանակի խնդրին: Գաղթը իրականացվել է 1747 թ., ինչը տեսանք վերը նշված՝ Նոր Բայազետի Հայսմավուրքում, որտեղ ՌՃՂԶ (1747) ապրիլի 11-ը աներկբայորեն վերաբերում է կաթոլիկների՝ հայրենի Նախիջևանը լքելու տարվան ու ամսաթվին, իբրև հետևանք իր ծանրությամբ աննախընթաց հարկահանության: Սկզբնաղբյուրներից օգտվելու իր առավելությամբ Հ. Քոսյանը իր հերթին հավելում է, որ Ջմյունիայում արդեն հանգրվանած նախիջևանցիները 1748 թ. դիմել են տեղի օսմանյան իշխանություններին՝ մատուռի շինության խնդրանքով³²⁸: 1747 թ. ապրիլին գաղթականները մեծ բազմությամբ և <<մեծաւ տառապանօք>> վտանգավոր ու հեռավոր ճանապարհ կտրելով այստեղ կարող էին հասնել մի քանի ամիս անց և բնակության նոր վայրում փոքր ի շատե հարմարվելուց հետո միայն կարող էին մատուռի շինության հարց հարուցել, որ և համընկնում է 1748 թվականին:

Դեպի Ջմյունիա գաղթելու մտադրությունը բավականաչափ հասկանալի է դառնում Նախիջևանի հայ վաճառականության՝ Էգեյանի առափնյակի հետ ունեցած դարավոր առևտրական կապերի հետևախորքում: XVII դ. առաջին քառորդին ևս նախիջևանցիներ կարող էին հայտնվել Ջմյունիայում՝ զուտ առևտրական առնչությունների շնորհիվ և այս դեպքում՝ առանց դավանական տարբերակման: Դրա ամեննին էլ ոչ հեռավոր արձագանքը կարելի է համարել Բերգամայի ձեռագրերից մեկի հիշատակարանը. <<Գրեցաւ... ի երկրին ասիացոց ի վիճակս սբ. Յովհաննու Ավետարանչի ի քաղաքս Պերկամա ի թուփս Հայոց ՌՃԻԴ (1675): Ես գաղցի Գրիգոր Էրեցս որ եմ ի յերկրէն Նախչուանու ի գեղջէն որ յայժմ կոչի Գաղ>>³²⁹:

Մինչև խնդրո առարկա գաղթը Ջմյունիայում հայ կաթոլիկների ներկայության մասին է փաստում գրիչ Նովհաննես Ջահուկեցու կողմից 1738 թ. (այսինքն Թ. Իսավերդենցի կազմակերպած 1747 թ. գաղթից գրեթե մեկ տասնամյակ առաջ) ընդօրինակված Նովհան Քոնեցու (XIV դ.)

³²⁷ Smyrnelis M.-C. Les Armeniens catholiques de Smyrne aux XVIIIe et XIXe siècle, p. 29.

³²⁸ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 306:

³²⁹ ՄՄ, ձեռ. 4669, էջ 211/բ:

<<Գիրք ի վերայ երկուց բնութեանց>> շարադրանքը³³⁰: Հովհան Քոնեցու՝ դոմինիկյան այդ նշանավոր քարոզչի և ունիթորների առաջնորդի գործի ընդօրինակումը վկայում է, որ գրիչ Հովհ. Ջահուկեցին ունեցել է իր պատվիրատուն կամ համախոհ հայրենակիցները Ջմյունիայում: Նույն եզրակացությանն է առնչվում դարձյալ 1738 թ. Ջմյունիայում գրչագրված մի ձեռագրի պարագայում. ձեռագիրը՝ <<Վիճաբանութիւն աստուածաբանութեան>> վերնագրով, հիշեցնում է նախիջևանցի ունիթորների ներկայությունն այստեղ՝ իր բացատրությամբ. <<ի լաթիներէն ի հայ բարբառ թարգմանեցեալ ի Թումաս վարդաբետէ ազնիւ Ջուղայ քաղաքէն Ճահուկեցոյ ի սրբազան կարգէն քարոզողաց>>³³¹ (իմա դոմինիկյան քարոզիչների):

Չի բացառվում, ի դեպ, որ այս գործի թարգմանիչը լինի հենց ինքը՝ Թովմաս Իսավերդենցը (<<Թումաս վարդաբետը>>), ում աշխատանքի արգասիքը հետագայում Ջմյունիայում կարող էր ընդօրինակվել (կամ հայտնվել) այստեղ գործող իր ազգական Իսավերդենց եղբայրների ազդեցիկ առևտրական ընկերության պատվերով: 1830-ական թթ. տպագրած իր երկհատոր աշխատության մեջ եվրոպական դիվանագիտական ներկայացուցիչներից մեկը՝ Ֆ. Հերվեն գրում է, որ զմյունաբնակ <<հույները և հայերը կապ են հաստատել Լոնդոնի, Փարիզի, Մարսելի, Տրիեստի և Եվրոպայի այլ մասերի հետ: Այն ժամանակ, երբ ես բնակվում էի այնտեղ (Ջմյունիայում-Ա.Խ.), Իսավերդենց ընկերությունն իր առևտրական գործարքներն իրականացնում էր ամենալայն թափով կամ առևտրական լեզվով ասած՝ առավելագույն չափերով էր գլուխ բերում իր գործերը: Ձեռնարկը տնօրինում էին հայերը, թեև ներկայումս նրանք իրենց ֆրանկ են համարում: Բայց եղբայրները (Իսավերդենց եղբայրները-Ա. Խ.) շատ չանցած առանձնացան, գործը բաժանվեց երկու տարբեր ընկերությունների միջև>>³³²:

Նկատենք, որ ջահկեցիները և Նախիջևանի մյուս կաթոլիկները հազիվ թե ցանկություն ունենային, այն էլ հոծախումբ, Կ. Պոլիս անցնելու: Օսմանյան մայրաքաղաքում ավանդական բնույթ էին կրում ընդհարումներն ու երկպառակությունները մի կողմից հայ առաքելականների և կաթոլիկամետների միջև, մյուս կողմից իշխանությունների անհամադրժողականության պոռթկումները ազգային եկեղեցուց դիմաշրջված

³³⁰ ՄՄ, ձեռ. 842, էջ 142/ա:

³³¹ ՄՄ, ձեռ. 842:

³³² Armenians in the Ottoman Empire, p. 270.

կամ կաթոլիկական դավանանքին հարած հայերի դեմ: 1730-ական թթ. դրությունը բարդանում էր նրանով, որ Կ. Պոլսի կաթոլիկ հոգևոր վերնախավն ու սրան մշտապես սատարող ֆրանսիական դեսպանատունը հարուցում էին կաթոլիկ եկեղեցու հայ հետևորդների համար անջատ եկեղեցի ստեղծելու խնդիրը: Բանը հասել էր նրան, որ հայ կաթոլիկները Կ. Պոլսում սկսել էին բացահայտորեն խախտել օտար եկեղեցիներ հաճախելու պետական արգելքը: Դեռևս XVII դ. գործողության մեջ դրված այս արգելքը բխում էր պետության շահերից՝ թույլ չտալու հայ միլիթի դավանական փոփոխումը հոգուտ կաթոլիցիզմի, ասել կուզի՝ ֆրանսիական կամ ավստրիական ազդեցության ընդլայնմանը Թուրքիայում: Մ. Օրմանյանն ընդգծում է այս հարցում լատին եպիսկոպոսի և քարոզիչների եռանդուն գործունեությունը 1730-ական թթ.՝ առավել խորացնելու նրանց հայ հետևորդների և առաքելական եկեղեցու միջև եղած սեպը³³³:

Նույն գալթակություններն ու գրգռությունները ջրի երես դուրս եկան նաև հաջորդ տասնամյակին, երբ կաթոլիկները Կ. Պոլսում սկսեցին բացեիքաց խոսել Սամաթիայի Ս. Գեորգ և Ղալաթիայի Ս. Լուսավորիչ եկեղեցիները իրենց ենթակայությանը, իբր, հանձնելու մասին: Դարձյալ կառավարությունը չհապաղեց միջամտել: Հետևեցին բանտարկություններն ու պատիժները. <<Միւս կողմէն.-հարում է Մ. Օրմանյանը,- փոխադարձ թշնամութիւններ ալ ասպարէզ կը գտնեն եւ մատուցութիւնք, նեղութիւնք եւ տառապանք ազգին մէջ կը յաճախեն>>³³⁴:

1730-1740-ականին նշված խնդրի շուրջ ստեպ պոռթկացող գծությունները ավելի հիվանդագին որակների չվերաձվեցին մի կողմից Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհ. Կոլոտի, ապա նրան հաջորդած Հ. Նալյանի լայնախոհության, և մյուս կողմից ֆրանսիական դեսպանների զգուշավորության շնորհիվ: Ավելացնենք, որ պատժիչ գավազանը միշտ գործադրելու հակամետ օսմանյան կառավարությունը 1750-1770-ական թթ. անցավ էլ ավելի անհանդուրժող քաղաքականության՝ հայրենի եկեղեցուց դիմադարձ հանդուգն հայերին պատժելու համար: Ժամանակի թուրքական պատմագիր Ջեվդեթ փաշան հանրագումարի էր բերում կառավարության այս ուղեգիծը, երբ գրում էր, որ <<Օսմանյան պետության հպատակներից մի փոքր հասարակության (հայ հան-

³³³ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 3325:

³³⁴ Նույն տեղում, էջ 3392:

րության-Ա. Խ.) այդպիսի մի օտար եկեղեցու հպատակությունը քաղաքական խռովություն է համարվում>>³³⁵:

Բավականաչափ շրջահայաց Թովմաս Իսավերդենցը՝ Նախիջևանի Խոշկաշեն բնակավայրից, դոմինիկյան մյուս հայրերի հետ միասին չէր կարող այսպիսի պայմաններում նոր բնակության վայր համարել դավանական հակասությունների խառնարան ներկայացնող Կ. Պոլիսը: Ջմյունիան այս տեսակետից անհամեմատ հանգստության և ապահովության հույսեր էր ներշնչում: Այստեղ չկար ոչ մահամեղական պահպանողականություն, և ոչ է, ըստ այդմ, իշխանությունների վերահսկողական անխափան գործառնություն, որ ձգտում էր տնօրինել ամեն ինչ: Չկար նաև դավանական պատրաստի առարկությունները ձեռքին և կաթոլիկներից դժգոհ ազգային եկեղեցին՝ պատրաստ ըմբերանելու կաթոլիկամետ ազգակիցներին, իսկ եթե կար՝ ապա ամենևին էլ ոչ վարչական այնպիսի հնարավորություններով, ինչպիսին ուներ պոլսահայ հոգևորականությունը, որովհետև Ջմյունիան և փոքրասիական մյուս հայ համայնքները Էջմիածնի տերունի թեմն էին՝ Կ. Պոլսի պատրիարքության հետ ունեցած ոչ պարտադիր կապերով ու հարաբերություններով, որոնք չէին կարող խանգարել հայ կաթոլիկների՝ սեփական դավանական հարմարավետության վերաբերյալ պատկերացումներին: Կար նաև ոչ պակաս կարևորը՝ Ջմյունիայի եվրոպական ազատամիտ համայնքն իր կաթոլիկներով, բողոքական այլևայլ ճյուղավորումներով ու անհիվանդագին համակեցությամբ, որտեղ եթե բախումներ ենթադր-

³³⁵ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, էջ 238: Այսուհանդերձ, կաթոլիկ հայերին ի նպաստ գործեց ավստրիական դեսպանն այն բանից հետո, երբ 1773 թ. պատրիարքական աթոռին հայտնված Ջաքարիա Կաղզվանցին ուժգին հալածանք էր սկսել կաթոլիկ հայերի դեմ և ապա, այդ իսկ պատճառով պաշտոնազրկվել: 1782 թ., վերստին բազմելով պատրիարքական աթոռին, Ջաքարիան հարկադրված էր շատ ավելի զգուշավոր գործել կաթոլիկ հայրենակիցների դեմ և անգամ տեղի տալ առաքելական եկեղեցի չհաճախելու վերաբերյալ նրանց պահանջներին, անշուշտ, ոչ առանց Բ. դրան համաձայնության: Ջաքարիան, գրում է Ավ. Պերպերյանը, <<Արար ժողով ի պատրիարքարանին եւ օրինադրեաց զի Հայք մի արասցեն խնամութիւն ընդ հռովմեական հայոց եւ մի ազգականութիւն են, այսպէս որոշեաց զոսա իբրեւ զազգ մի (առանձին ազգ-Ա. Խ.), որոց ուրախացեալ ընդ այս առաւել եւս վստահացան որոշումն իւրեանց եւ սկսան յայնմհետէ չերթալ երբեք եկեղեցիս հայոց, այլ միայն եկեղեցիս լատինացոց>> (Պերպերեան Ա., Պատմութիւն Հայոց, էջ 3):

վեին, այն էլ հիմնականում առևտրական հրապարակներում, որոնց տարածքում իրեն բավականաչափ ինքնավատահ կարող էր զգալ նախնիների ունիթորների աշխարհիկ վերնախավը: Օսմանյան իշխանություններն այստեղ մտոդելու տեղիք տվող չափերով զուսպ էին՝ միջազգային այդ նավահանգստի բազմազգ և բազմակրոն շուկայում, ուր անտեսանելի թեկերով ավելի շուտ վերահսկում էին եվրոպական հյուպատոսները՝ թեկուզ և պայմանականորեն հաստատված իրենց իրավասությունների սահմաններում: Հիրավի, այստեղ ամեն ինչ կարող էր հուսադրող թվալ պարսկական սարսափները ճաշակած նախնիների ներքին՝ գաղթի մտադրությունը հղանալու և իրականացնելու պահերից սկսած:

Գայթակղիչ էր նաև ֆրանսիական հյուպատոսի՝ սերտ առնչություններից մինչև քաղաքական հովանավորություն մատուցելու հնարավորությունը հատկապես կաթոլիկամետ կամ կաթոլիկ դարձած հայերի, հույների և այլ տարադավան խմբերի ու անձանց նկատմամբ: Զմյուռնաբնակ եվրոպական համայնքն ինքնին վայելում էր եվրոպական հյուպատոսների խնամակալությունը, որ լռելայն հարգվում էր օսմանյան իշխանությունների կողմից: Այս տեսակետից հետաքրքրական է Զմյուռնիայում և կից շրջաններում (Էջմիածնի նախկին տերունի թեմ) Մայր աթոռի սեփականությունների գործակալ Թ. Չելիկի նամակը (1852, 16 մայիսի) կաթոլիկոս Ներսես Աշտարակեցուն, որը բավականաչափ լույս է սփռում այս խնդրի վրա: Չելիկի տողերից հայտնի է դառնում, որ 1825 թ. ի վեր, տերունի թեմը կորցնելուց հետո, իր կալվածքներն այստեղ այլևս չվերահսկող Էջմիածինն իր սեփականատիրական իրավունքները վերականգնելու հնարավորություն կարող է ունենալ միայն ռուսաց հյուպատոսի հովանավորությամբ, որ կարող էր նա ցուցաբերել իրեն՝ Չելիկին, եթե սա դատական գործ հարուցեր հոգուտ Էջմիածնի իրավունքների: Այդպիսին էր իրերի կարգը. <<Ի տեղեկություն ձերոյ վեհափառութեան, հարում է նա,- ասեմ՝ զի գործակալն և թարգմանն հռոմեական աթոռոյն եւս պաշտպանութիւն ստանա աստ (Զմյուռնիայում-Ա. Խ.) ի գաղղիական հիւպատոսէ, քանզի այսպէս է սովորութիւն ի կողմանս յայտոսիկ>>³³⁶:

Մ.-Կ. Միիրնելիսն ուշադրություն է դարձնում այս յուրահատուկ հովանավորչության իրավական նշանակությանը՝ միանգամայն տարբե-

³³⁶ ՄՄ, Կաթոլիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 448:

րակելով այն կրոնական հովանավորչությունից: Բայց այնչափով, որ-
չափով հովանավորյալը կարող էր օգտվել արտասահմանյան տվյալ
երկրի (եվրոպական, ռուսական) հպատակի իրավունքներից, չվճարել
գլխահարկ (խարաջ) և անգամ իր միլեթի (համայնքի) հարկերը³³⁷, իշ-
խանությունների հետ մտնել դատաիրավական գործընթացների մեջ,
նման դեպքերում իրավական հովանավորչությունը, կարծում ենք, մե-
քենաբար և անխուսափելիորեն պետք է գերաճեր կրոնական հետևանք-
ների: Այդ էր պատճառը, որ, ինչպես նկատում է այս հետազոտողը, հա-
մայնքները և պետությունը շահագրգռված չէին հովանավորյալների
թվաքանակի մեծացմամբ³³⁸:

Նախիջևանցիները Զմյուռնիայում համեմատաբար դյուրավ հիմնա-
վորվեցին և ձեռք գրկեցին վաճառականության, առևտրի ու արհեստ-
ների դոմինիկյան հայրերի շնորհիվ արժանանալով նաև ֆրանսիական
հովանավորությանը³³⁹ XVIII դ. առաջին քառորդին այստեղ հաստատ-
ված կաթոլիկ հայրենակիցների աջակցությամբ ևս:

Թ. Իսավերդենցի առաջնորդությամբ, եթե նկատի առնենք նրա կազ-
մակերպած երկրորդ գաղթը, Զմյուռնիա են անցել ավելի քան 1000
մարդ³⁴⁰, Բայց եթե հիշենք, որ դրանից առաջ էլ նա հաջողել էր ապահո-
վել որոշ հոգևորական հայրերի և մեծահարուստների ելքը (նախ զմե-
ծատունս ընչիւք նոցին³⁴¹), բնականաբար, իրենց ընտանիքներով, այդ
թիվը շատ ավելին պետք է լիներ: Էգեյականի ափերն հասած գաղթա-
կանները, սակայն, ցրվել են ոչ միայն մերձակա քաղաքներում, այլև ան-
ցել Կ. Պոլիս, Իտալիա և այլուր, իսկ ինքը՝ Իսավերդենցը, 1762 թ. մեկնել
էր Անկոնա և այլևս չէր վերադարձել: Համենայն դեպս, 17 տարի անց
Զմյուռնիայում նորաբնակ ունիթորներից մնացել էր 700 մարդ, ինչպես
գրում են նրանք Հռոմի Ս. Ժողովին ուղղած իրենց խնդրագրում (1764 թ.
ապրիլի 15) <<վասն մեղաց մերոց բազմացան նեղիչք մեր (Նախիջևա-
նում-Ա. Խ.) որ ոչ կարացաք տանել. վասն այսորիկ թողաք զհայրենի յեր-

³³⁷ Smyrnelis M.-K. նշվ. աշխ., էջ 34:

³³⁸ Նույն տեղում, էջ 35: Ավելի ուշ շրջանի՝ 1822 թ. հովանավորյալների թվումՄ.-
Կ. Սմիրնեիսը հիշում է պարսկահայ կաթոլիկներից երկու Ժերիսյանների (հա-
վանաբար Երիցյանների), Անդրե Բալադյուրին (բահաթյան), երկու
Իսավերդենցների (դոմինիկյան առաջնորդի տոհմից) և այլն (նույն տեղում):

³³⁹ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 307:

³⁴⁰ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 406:

³⁴¹ Նույն տեղում:

կիրն մեր եւ բնակութիւնն մեր, եկաք աստ ի քաղաքն Իզմիռ եւ մասն մի ի քաղաքն Թիւրաթիւր, որ եմք թվով 700 անձինք... Այժմ որք մնացաք մեք եւ առանց հոգեւոր մխիթարութեան...»³⁴²:

Խնդրարկուները թախանձում էին վերադարձնել իրենց քարոզչին՝ Իսավերդէնցին, որին այլևս վիճակված չէր հովվել իր ժողովրդին: Դատելով խնդրագրի հեղինակների կողմից նրան տված անառարկելիորեն դրական բնութագրից, որի կարևորությունը ընդգծված է այդ շարադրանքում, դրան խանգարել էին կաթոլիկական հայրերի տարաձայնությունները իր գործունեությունը դադարեցրած Դոմինիկյան միաբանության շուրջ (իրավահաջորդության խնդիրներ): Իսկ նախիջևանցիների թվաքանակը հետագայում, մինչև դարավերջ, գնալով նուստանում էր: 1790-ական թթ. անգամ Անկյուրիայից, Թոքատից և այլ վայրերից եկած նոր գաղթականներով հանդերձ, Ջոնունիայում հայ կաթոլիկների թվաքանակը նվազում էր, նրանք ձուլվում էին կաթոլիկական զանգվածի մեջ: XIX դ. վերջին, որպես այդպիսին, հայ կաթոլիկների թիվն այստեղ հասել էր 150-200 մարդու՝ ըստ Հ. Քոսյանի, և 300 ընտանիքի՝ ըստ <<Արարատ>> ամսագրի հեղինակի³⁴³:

Նախիջևանցիները Ջոնունիայում պետք է վերջնականապես խզեին իրենց կապերը ազգային եկեղեցու և կրթության հետ, կարելի է կարծել, 1772 թ., Ջաքարիա պատրիարքի կողմից հայ եկեղեցու դռները նրանց առջև փաստորեն փակելու անխոհեմ որոշումից հետո: Հայերեն խոսող Իսավերդէնցից կամ մի որոշ ժամանակ նրան փոխարինողից հետո ազգային լեզուն դուրս մղվեց այդ հանրության հաղորդակցությունից, որն իր հերթին մեծապես նպաստեց ազգային ծեսերի ու արարողությունների վերացմանը նրանց մեջ և անառարկելի անցմանը կաթոլիկական պաշտամունքին: Պաշտամունքն արդեն կատարվում էր լատին կապուչինների կողմից՝ միանգամայն խորթ ազգային բարքերին ու սովորություններին: Այդ արդեն կաթոլիկ հայերի ուժացումն էր նշանակում: Վերո-

³⁴² Նույն տեղում, էջ 407: Հայերի մեջ գործելու, այդ թվում և փոքրասիական շրջաններում կաթոլիկական դավանանքի տարածման գործը վերահսկելու համար Հռոմի Ս. Ժողովը նախապես լատին հայագետ կրոնավորներ, ապա ուրբանյան դպրատան շրջանավարտներ, իսկ XVIII դ. նաև մխիթարյան հայրերի ու լիբանանյան անտոնյան միաբանների էր առաքում (տես Գալմբեարեան Գր., Կենսագրություն Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆեան, էջ 257):

³⁴³ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 33: Հովիւ, Մի տխուր պատկեր հռովմեական հայոց կեանքէն, Արարատ, Էջմիածին, 1896, թիվ 6, էջ 175:

հիշյալ Խոշկաշեն բնակավայրից սերած կաթոլիկների դամբանագրերը, որ վերաբրտադրել է Հ. Քոսյանը, ցույց են տալիս առհասարակ զմյուռնաբնակ հայ կաթոլիկների օտարվելու աստիճանական ընթացքը: 1734 և 1741 թթ. (նախքան մեծ գաղթը՝ 1747 թ.) դամբանագրերում մահվան տարին նշված է հայերեն թվատառերով (թեև ոչ հայկական, այլ գրիգորյան տոմարով)՝ Խոշկաշինեցի Գալուստի որդի [Դ]ավիթ, որ փոխեցաւ ՌՃԼԴ (1744), Խոշկաշինեցի Նա[հապե]տի որդի Ա[ստված]ատուր, ՌՉԽԵ (1741) և այլն (բոլորն էլ ոչ հայկական թվականի հավելմամբ, այլ զուտ այբբենական ցուցիչով)³⁴⁴:

1760-ական թթ. սկսած, մինչև 1790-ական թթ. տապանագրերը արդեն գրված են միայն թվանշաններով՝ եվրոպական ձևով. Խոշկաշինեցի Մանասի դուստր Անաստաս՝ 1761, Աբարնեցի Յովհաննէսի որդի Մաթոս՝ 1760, սրա որդի Անդրեաս՝ 1763, մյուս որդին՝ Պողոսը, 1770, Թոխատցի Ըստեփանի որդի Պետրոս՝ 1795 և այլն³⁴⁵:

Վերոհիշյալ օրինակները ինչ-որ չափով անդրադարձնում են նախիջևանցիների կողմից ավանդության յին՝ տապանագրերին հայկական տառանիշեր (թվանշաններ) դրոշմելու սովորությունը թողնելը և դրանց եվրոպական համարժեքներին անցնելը: Դրանից առաջ էլ, Զմյուռնիայում տեղավորվելուց ի վեր նրանք կապ չեն ունեցել հայկական գերեզմանատան հետ և իրենց ննջեցյալներին թաղել են Ս. Պոլիկարպոս երբեմնի հայ կաթոլիկական եկեղեցու գավթում կամ շուրջը: Խնդիրը, սակայն, միայն թվանիշերի մեջ չէր, և ոչ էլ, անգամ հուղարկավորության համար առանձին գետին տնօրինելուն: Կարևորն այստեղ այդ և նման գործոնների բազմապատկումն էր, այն, որ հայ կաթոլիկները եվրոպական բարքերին ու սովորություններին են անցել արդեն 1760-ական թվականներից, բնականաբար, ոչ միայն այդ տասնամյակից, այլ մինչև դարավերջ և դրանից հետո, աստիճանաբար, որ գահավիժման չափ արագացել է և որակական ծավալներ ստացել 1831 թ. Օսմանյան Թուրքիայում առանձին հայ կաթոլիկական համայնքի ճանաչումից հետո: Այդ գործոնների մեջ Հ. Քոսյանը իրավացիորեն առանձնացնում է մայրենի լեզուն չպահպանելը, ամբողջովին օտար կրթության անցնելը և տոհմային սովորությունների մոռացությունը, որոնց հիմքում անխուսափելիորեն ընկած էր հայ համայնքից ու եկեղեցուց անջատ ապրելու իրողությունը³⁴⁶:

³⁴⁴ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 311:

³⁴⁵ Նույն տեղում, էջ 312-313:

³⁴⁶ Նույն տեղում, էջ 310:

1894 թ. <<Արարատ>> ամսագրի թղթակից Հովիվը, արձանագրելով Զմյուռնիայի կաթոլիկ հայերի սերունդների ամբողջովին ձուլումը եվրոպական ազգերին, կշտամբում էր այդ անկումը չկանխող հայ եկեղեցուն՝ անտարբերության համար, ընդգծելով այդ խնդրում լատին եկեղեցու հույժ ակտիվությունը, որ հասցրել էր դավանափոխների կողմից իրենց սեփական ազգային արմատները կտրականապես մերժելու մտայնությանը. “Դաւանափոխք ոչ միայն իրենց անուն փոխած են, այլ նաեւ մականուն, տոհմանուն... աւելի կը սիրեն ասել, թէ իրենք սերած են աճեմներէ (պարսիկներէ), քան թէ հայերէ”³⁴⁷:

Կաթոլիկական եկեղեցին Զմյուռնիայում, իսկապես, ամենայն հոգածությամբ ձեռնամուխ եղավ դավանափոխներին իր փարախը վերջնականապես քաշելու գործընթացին՝ նույնիսկ տարբեր միաբանությունների սուր մրցակցության գնով: Հարուստ նախիջևանցիներին իրենց ծխերում տեսնելու անդիմադրելի ցանկությունը տնական տարածայնությունների ասպարեզ դարձավ առ ի չգոյե դոմինիկյան հայրերի, ֆրանցիսկյան միաբանության և կապուչինների գլխավորների միջև, որն ի վերջո, ավարտվեց ֆրանսիական դեսպանության և միաբանությունների փոխադարձ համաձայնությամբ, որի համեմատ ծխերը բաժանվեցին ըստ համապատասխան աղոթատեղիների³⁴⁸: Ծխերի շուրջ և դրանք վերահսկելուն ուղղված հակասությունները շարունակվեցին նաև հետագայում, երբ հայ կաթոլիկները Զմյուռնիա ապաստանած նոր գաղթականների համալրմամբ ավելի մարդաշատ էին դարձել: Հ. Քոսյանն այդ գաղթը բացատրում է զուտ տնտեսական իրողություններով, երբ (XVIII դ. վերջերին) <<բաւական թոռվ կաթողիկեայ հայ գաղատիացի վաճառականներ իրենց

³⁴⁷ Հովիւ, նշվ. աշխ., էջ 175: Հիրավի, կարծես տեղի տալով ազգության կամ ծագումնաբանական անցյալի վրա խաչ քաշելու և անգամ իրենց պարսկական ծագում վերագրելու Նախիջևանի կաթոլիկների այդ բուռն ցանկությանը, Մ.-Կ. Սմիրնէլիսը իր վերոհիշյալ աշխատության մեջ այդ դավանափոխներին, թեկուզ և չակերտների մեջ, անվանում է պարսիկներ: Ի դեպ, Նոր Զուղայի և Նախիջևանի հայ վաճառականները Օսմանյան Թուրքիայում դեռևս XVII դ. հայտնի էին *acem tuccari*՝ պարսիկ վաճառականներ անվամբ, որի հիմքում ընկած էր նրանց պարսկահպատակությունը և պարսկական հումքի առևտրում ներգրավվածությունը: An Economik and Social History of the Ottoman Empire ստվարածավալ գրքի խմբագիրները նրանց զգուշորեն ոչ մահմեդականներ են կոչում (էջ 517):

³⁴⁸ Smyrnelis M.-K., նշվ. աշխ., էջ 31-32: Ղ. Ալիշանը նկատում է, որ 1850-ական թթ. Զմյուռնիայում գործում էին կաթոլիկական Ս. Պոլիկարպոս և Լազարյան միաբանության Հիսուսի սիրտ եկեղեցիները (տես Ալիշան Ղ., Միսական, էջ 345):

բախտն այլուր փորձելու համար թողած են իրենց ծննդյան վայրը եւ տնով-տեղով դիմած են Զմյոռնիա»³⁴⁹:

Այստեղ ևս հարկ է նկատել, որ անկյուրացիները (գաղատացիները) մինչ այդ էլ և ծանոթ առևտրական ուղիներով դրանից շատ ավելի առաջ էին հայտնվել Զմյոռնիայում, ընդամին, ոչ քիչ թվով: Մարգիս Մարաֆյան վարդապետը, ով Զմյոռնիայում մի տևական ժամանակ զբաղված էր կաթոլիկ քարոզչության աշխատանքով, 1754 թ. հունիսին և ոչ առանց ներքին բավարարվածության, գրում էր Վենետիկ, Ստեփանոս (Մելքոնյան) արքեպիսկոպոսին. <<Բայց քեռշէ-պուճախ քրթմնջեն ոմանք ի ծածուկ՝ գաղատացիք ամենայիմարք, Բայց գտանին նոցա ըմբերանօղք բազումք, որոյ վասն եւ գլխաւորք նոցին գան եւ գնան առ իս եւ մեք շահեմք զնոսա բարոյականաբար...»³⁵⁰:

Գաղատացի ընդդիմախոսների նկատմամբ քամահրանքը ինքնին խոսում է քարոզչի վրիպումների մասին, սակայն այստեղ կարևորն այն է, որ նրան առարկել են զմյոռնաբնակ գաղատացիները, հնարավոր է՝ ազգային եկեղեցու հետևորդներ, որոնց վրա ձգտել է <<բարոյականաբար» ներգործել Ս. Մարաֆյանը: Զմյոռնիայում բնակվող գաղատացիները ևս կարող էին պահպանել իրենց կապերը Գաղատիայի իրենց հայրենակիցների հետ և վերջապես, XVIII դ. 90-ականի գաղթից դեռ շատ առաջ էլ գաղատացի հայ կաթոլիկ վաճառականներ նույնպես կարող էին լինել Էգեյանի առափնյա շրջաններում: Հ. Քոսյանը գրում է, որ Այդընում բնակվող 10-15 տուն հայ կաթոլիկները 1856 թ. համալրվեցին չորս տուն գաղատացի ընտանիքներով³⁵¹: Հատկապես Այդընում էին կենտրոնանում, մինչև 1890-ական թթ., կաթոլիկ հայերը՝ ամենից առաջ տեղափոխվելով փոքրասիական մյուս մասերից և Զմյոռնիայի շրջակայքից: Թվաքանակի այսպիսի աճով Այդընը պետք է դառնար վարչական յուրահատուկ կենտրոն՝ իրականացնելու վիլայեթի հայերի հոգևոր սպասարկումը: Այս գործին նպաստեցին հատկապես Վիեննայի Մխիթարյանները՝ դեռևս 1840-ական թթ. սկզբներից: Նրանց ներկայացուցիչը ամեն տարի այցելում էր Այդըն, Մելես, Քուշադա, Սյոքե և այլուր՝ վերոհիշյալ առաքելությամբ, իսկ 1850 թ. Զմյոռնիայի արքեպիսկոպոս Մուսաբեկին Այդընի առաքելությունը հանձնում է Վիեննայի Մխիթար-

³⁴⁹ Քուեան Յ., նշվ. աշխ. էջ 320:

³⁵⁰ Տայեան Ղ., նշվ. աշխ., էջ 163:

³⁵¹ Քուեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 40:

յաններին՝ նրանց հետ ընդունած պայմանների համաձայն³⁵²: Չնայած հայ կաթոլիկ համայնքի և Մխիթարյանների որոշ տարաձայնություններին, Այդընում 1850 թ. հետո առաջինին հաջողվել էր ձեռք բերել ոչ մեծ մի մատուռ և գերեզմանատան տարածք:

Շատ ավելի փոքրաթիվ էին, Այդընի կաթոլիկների համեմատությամբ, Թիրեի, Բայանդըրի, Քուշադայի և Սյոքեի նրանց դավանակիցները՝ մեկից մինչև մի քանի ընտանիք³⁵³: Գաղատիայից եկած հայերը մինչև 1831 թ. կաթոլիկական առանձին համայնքի պետական ճանաչումը, իրենց կրոնական ծեսերն ու արարողությունները կատարում էին հայ առաքելական եկեղեցիներում, և բաժանումից հետո էր, որ անցան լատին արքեպիսկոպոսի իրավասությանը: Այս իմաստով հարկ է նկատի առնել Մխիթարյանների կողմից օտար դավանանքին նպաստող նրանց գործունեությունը, այլև դրան հակասող իրական ջանքերը՝ ազգային լեզուն պահպանելու (պաշտամունքի, աղոթքի լեզուն նրանց այդ գործառնության շնորհիվ մնում էր հայերենը), հայալեզու վարժարաններ ստեղծելու ասպարեզում: Այդընում նրանց հիմնած վարժարանը (1853 թ.)³⁵⁴ ըստ ամենայնի նպաստեց նաև թուրքախոս հայ հանրության մեջ հայախոսության տարածմանը, որի բազմաթիվ օրինակները կարող ենք գտնել Ջմյունիայի շրջակայքում բնակվող հայերի մեջ: Անշուշտ, այդ ամենը թույլ պատվար էր ի վաղուց անտի հռոմեադավանությանը հարած հայերի ուժացումը կանխելու համար, բայց այստեղ հույժ կարևոր է այն ճշմարտությունը, որ Մխիթարյանները իրենց գործունեությունը պայմանավորելով կաթոլիկ եկեղեցու ինքնությամբ և գործելով նրա հովանու ներքո, ազգի գաղափարը կամ նրա պահպանությանը նպաստող գործոնների մեջ ամեննին էլ առաջնային նշանակություն չէին տալիս եկեղեցուն, այլ կարևոր էին համարում ազգային լեզուն, բարքերը և սովորույթները, որոնք պետք է ի սպաս դրվեին այդ նույն՝ ազգի գաղափարին:

Մխիթարյանների երախտիքն այն է, որ նրանք փորձում էին լուծել ազգ-եկեղեցի փոխադարձ պայմանավորվածության մեջ առաջացած հիմնախնդիրը ազգապահպանության այլ, մասնավորապես կրթության և լուսավորության բնագավառում, որպիսին տեսանք Ջմյունիայի հայ

³⁵² Նույն տեղում, հ. Բ, էջ 35-37:

³⁵³ Նույն տեղում, էջ 40:

³⁵⁴ Տե՛ս Հ.Յ.Ք.[օսեան] Յիսնամեայ յոբելեան հանդէս հաստատութեան Մխիթարեանց որ յԱյդըն, էջ 180-187:

կաթոլիկ հանրության հետ նրանց առնչվելու պայմաններում: Սակայն ազգային եկեղեցուց դուրս և նրանից անկախ ազգության գաղափարը, որ հասարակական գիտակցության այլ ասպարեզներում (կրթություն, լուսավորություն, գիտություն, մշակույթ) միանգամայն կարող էր ցուցադրել իր հաջողությունները, կենսունակ չէր կարող լինել՝ առաքելական եկեղեցուց ազգության օտարման պայմաններում: Այդ էր պատճառը, որ վերջնականապես կտրվելով ազգային եկեղեցուց, Զմյուռնիայի հայ կաթոլիկները կտրվեցին նաև ազգությունից: Իր ժամանակին դավանանքի և խղճի ազատության գաղափարը կրոնական համոզմունքին համադրած մտայնությունը, որով առաջ էր ընթանում Եվրոպան, ուշացած դուրս եկավ հայ ազգ-եկեղեցի հարաբերություններում:

Այդընի վիճակներում առանձին համայնք կազմելու իրավունք ստանալուց հետո, 1830-ական թթ. սակավամարդ հայ կաթոլիկ ընտանիքները սկսեցին ցրվել՝ ձգտելով գործել Կ. Պոլսում կամ Եվրոպայում խմբված իրենց դավանակիցների շրջանում: XIX դ. վերջին այս կերպ չքացան Այդընի, Նազիլիի, Դենիզլիի, Թիրաղիի և այլ բնակավայրերի հայ կաթոլիկ ընտանիքները՝ տարրալուծվելով Զմյուռնիայի և Օսմանյան Թուրքիայի իրենց դավանակիցների զանգվածի մեջ:

Հանրագումարի բերելով Էգեյանի արևմտյան առափնյակում և հատկապես Զմյուռնիայում հայ համայնքների հաստատման պատմությունը, կարելի է տարբերակել հետևյալ փուլերը.

1. 570-ական թթ. Վարդան Մամիկոնյանի ապստամբության արդյունքում, երբ նրա համախոհ նախարարներն ու այլ տոհմիկները իրենց ժողովրդով և մարտական ուժերով հաստատվեցին բյուզանդական կայսեր տրամադրած Պերգամոն (Բերգամա) քաղաքում: Առափնյակում գոյացած այս համայնքը պետք է համարել հնագույնը փոքրասիական արևմուտքի հայկական գաղթօջախների մեջ: Այնուհետև հայկական գաղթօջախներ ենք տեսնում Զմյուռնիայում, Դենիզլիում և այլուր՝ մինչև XIV դ., թեև այստեղ դժվար է խոսել այդ գաղթօջախներից յուրաքանչյուրի պատմության և շարունակականության մասին՝ առ ի չգոյեմեզ մատչելի վավերագրական նյութերի:

2. Կիլիկիայի թագավորության անկումից հետո, XIV դ. վերջին քառորդից, երբ գաղթերը կարող էին շարունակվել նաև հետագայում: XIV-XVI դդ. կտրվածքով պետք է առանձնացնել, ի դեպ, արևմտահայ գաղթականների հոսքը դեպի փոքրասիական շրջաններ և Զմյուռնիա, որով

և պայմանավորվեց <<կը>> ճյուղին պատկանող զմյուռնահայերի բարբառի գոյացումը:

3. XVII դ. սկզբներից՝ Օսմանյան Թուրքիայում բռնկված ջալալիների ապստամբության, Արևելյան Հայաստանում Շահ Աբասի գործադրած տեղահանումների և աղետալի չափերի հասած սովի պատճառով, հիմնականում Սյունիքից և Արարատյան դաշտից ու Խարբերդից: Այդ գաղթերը մեկանգամյա դեպքեր չեն եղել, այլ ավելի կամ նվազ հոսքերով շարունակվել են նաև XVIII դարում:

4. 1720-ական թթ. վերսկսված պարսկաթուրքական պատերազմների ժամանակաշրջանից մինչև Նադիր շահի թագավորության վախճանը և դրան հետևող տարիները (1740-ական թթ.), երբ Զմյուռնիա գաղթեցին Նախիջևանի հայ կաթոլիկները: Զգալի չափերի էին հասնում նաև գաղթերը Սյունիքից:

5. XVIII դ. 90-ական թթ., երբ Զմյուռնիա գաղթեց հայ կաթոլիկների երկրորդ նշանակալի հոսքը՝ Գաղատիայից: Սյունիքն այս անգամ ևս անմասն չի մնացել գաղթերից: Տաթևից Այդըն են անցել բավական թվով մարդիկ, ինչը վկայվում է Զմյուռնիայի և Այդընի դամբանագրերով:

VI-XII դդ. ընթացքում գաղթերի պատճառներն էին Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները, որոնք մղեցին ազնվականության մի մասին ու նրանց հպատակներին՝ հարկադրված տեղափոխվել փոքրասիական արևմուտք: Հայ առաջին գաղթօջախները (Բերգամա, Դենիզլի և այլն) կազմված են եղել մարտունակ զորաջուկատներից, որոնք ռազմական ծառայության են անցել Բյուզանդական կայսրության բանակում: Առանձին թեմա է Բյուզանդական կայսրության և խաչակիրների հակադրության ու փոխհարաբերությունների պայմաններում հայկական այս մարտունակ միավորների (ուրեմն և գաղթօջախների) ունեցած տեղի և նշանակության խնդիրը, որ անմիջականորեն կապվում է այդ գաղթօջախների հետագա ճակատագրի կամ հարատևման հետ: Հայտնաբերվելիք Բյուզանդական, եվրոպական և այլ վավերագրերը, կարելի է կարծել, թույլ կտան լուսաբանելու այս հիմնահարցը ևս:

Հայ բնակչությունը Փոքր Ասիայի արևմտյան մասերում հայտնվել է հիմնականում կազմակերպված գաղթերի ձևով: Դրանք ցույց են տալիս, որ հատկապես սկսած XVII դարից, որ Էգեյանի առափնյակի ընտրությունը, իբրև գաղթավայրի, պատահական չի եղել. արևելահայ գաղթականների համար էական նշանակություն է ունեցել Մեդրիի, Կապա-

նի, Նախիջևանի, Ագուլիսի, Ջուղայի և Երևանի հայ վաճառականության փորձը, որ նա ձեռք էր բերել XVI-XVII դդ.՝ փոքրասիական առևտրական ուղիներին իր լավատեղյակության շնորհիվ: Հայ գաղթականները XVIII դ. ևս շարունակել են իրենց առնչությունները բնաշխարհի ժողովրդի հետ, որն իր հերթին նախորոշել է հայերի չղադարող գաղթերը դեպի այդ տարածքներ:

ԳԼՈՒԽ 2

ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԸ՝ ԷԶՄԻԱՄՆԻ ԹԵՄ

1. Զմյուռնիայի տերունի թեմը

Զմյուռնիայի և Էգեյանի առափնյա մյուս հայ գաղթօջախների պատմության առանձնահատկությունների, մշակույթի ու տնտեսության դիմագիծը բացահայտելու համար շատ կարևոր նշանակություն ունեն հայության այդ հանրությունների առնչությունները Մայր աթոռ Ս. Էջմիածնի հետ: Զմյուռնիան ավանդաբար Էջմիածնի տերունի (այսինքն սեփական) թեմն էր համարվում ոչ ուշ, քան XVII դարից, իսկ այդ նշանակում էր, որ նշված գաղթօջախները Էջմիածնի հետ կապված էին կրկնակի՝ նվիրակական (կրոնական-հարկային) և միաժամանակ՝ առաջնորդական (կրոնական-վարչական) կապերով ու հարաբերություններով: Նկատենք, որ Զմյուռնիայի թեմ ասելով նկատի ունենք փոքրասիական արևմուտքի բոլոր գաղթօջախները՝ այդ քաղաքի առաջնորդական կենտրոնի հանգամանքով:

Իբրև տերունի թեմ, Զմյուռնիան երբ է անցել Էջմիածնին: Հայագիտության մեջ այս հարցին որոշակի կամ ստույգ պատասխան չի տրվել: Եվ քանի որ այս հարցը գրեթե նույնանում է այդ թեմի առաջնորդական պաշտոնը առաջին անգամ զբաղեցնող անձի հետ, Ա. Ալպոյաճյանը կարծում է, որ Զմյուռնիայում վիճակավոր նվիրակներ ուղարկելու սովորույթը <<ԺԷ դարուն կէսէն առաջ սկսած ըլլալու չէ>>³⁵⁵: Այդ նույն հոդվածում նա որպես առաջին առաջնորդի, նշում է Հովսեփ վարդապետին՝ սկսած 1661 թվականից³⁵⁶: Հետագայում նա արդեն Զմյուռնիայի առաջին առաջնորդ է համարում Հովսեփից շատ առաջ հիշվող Պոնկտոշ (Պոնկտոշ) Կարապետին, ում մասին հիշատակող վավերագիրը տպագրել է Գ. Սրվանձտյանցն իր <<Թորոս աղբար>>-ում՝ առանց դրա թվագրման և հեղինակին նշելու: Մենք դեռ կանոդադաճանք այդ վավերագրին, միայն այստեղ ասենք, որ շատ համոզիչ և հիմնավոր՝ Գր. Գալեմբյարյանը հետագայում ի հայտ է բերել դրա և հեղինակին, և գրության ժամանակը: Այդ վավերագրում Մելքիսեթ կաթողիկոսը մե-

³⁵⁵ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, Բիւզանդիոն, 1904, 12/25 ապրիլի:

³⁵⁶ Նույն տեղում:

դադարվում է դավանական տեսակետից անարժան մեկին՝ Պոկնտոշ Կարապետին, Թիրայի, Իզմիրի և Մանիսայի առաջնորդ նշանակելու համար: Ընդգծենք՝ **Առաջնորդ**, և ոչ թե **նվիրակ**: Խնդրո առարկա հարցն այս ամենով հանդերձ, սակայն, չի սպառվում, այլ ընդհակառակն, չի կորցնում իր սրությունը. այդ դեպքում, երբ է ստեղծվել Ջմյունիայի տերունի թեմը, եթե այն առաջնորդ ուներ: Բնականաբար, վավերագիրը ստեղծվելու պահին այն արդեն կար (որչափով խոսքը վերաբերում է Մելքիսեթին առաջնորդ կարգելու արդեն ավարտված գործողությանը): Բայց և առ այսօր այդ հարցը մնում է անպատասխան՝ անհրաժեշտ փաստերի բացակայության պայմաններում: Կարող ենք միայն նկատել, որ 1610-ական թթ. Ջմյունիայի տերունի թեմը գոյություն ունենալու առավել քան իրական հիմքեր ուներ, երբ Ջմյունիա և կից բնակավայրեր էին գաղթել բազմաթիվ հայեր ոչ միայն Արևմտյան, այլև հատկապես Արևելյան Հայաստանից, Էջմիածնի ենթակայության ներքո գտնվող շրջաններից՝ Սյունիքից և Արարատյան դաշտից՝ ջալալիների, Շահ Աբասի և այլոց բռնություններից զանգվածորեն խուսափելու նպատակով: Այս պայմաններում անտերունյ ժողովրդի՝ <<ցրուեալ փարաքանդայի>> (Գր. Դարանաղցու եզրն է՝ իմա գաղթականության) գոյապահպանության խնդիրները չէին կարող չմտախոգել հայ եկեղեցուն, հատկապես Էջմիածնի կաթողիկոսությանը և Կ. Պոլսի պատրիարքությանը: 1612 թ. Կ. Պոլսի հայոց հոգևոր գլխի՝ պատրիարքի բարդացած պարտականությունները երեք գործառույթների բաժանվեցին նաև հենց այս՝ օսմանյան մայրաքաղաք և դրան մերձ շրջաններ անցած հայ գաղթականության ներհուսի պատճառով: Պատրիարքական իշխանությունը տարածականորեն և ժողովրդագրական սկզբունքներով բաժանվեց Հովհաննես Խուլի, Ջաքարիա Վանեցու և Գրիգոր Դարանաղցու միջև, երբ վերջինիս հոգևոր վերահսկողությանը հանձնվեց <<Անատոլի փարաքանդան, այսինքն Ասիակողմեան մերձաւոր վիճակներն>>³⁵⁷:

³⁵⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 2705, 2746: Այս բաժանումներին ամբողջովին անփոյոթ և կամայական բացատրություն է տրված ոչ վաղ անցյալի մեր պատմագիտության մեջ, անգամ տարրական փաստերն ու իրողությունների պատճառներն ու հետևանքները շփոթելու գնով: <<XVII դ. Վանեցի Ջաքարիայի, Խուլ Հովհաննեսի, Գրիգոր Դարանաղցու և այլոց մեջ ծագած գավազանակովի պատճառով պատրիարքարանի իրավասության սահմանները վերաձևվեցին, տրոհվեցին թեմերը, իսկ որոշ մարզերի հոգևոր կառավարությունն էլ, իբրև <<տերունական թեմեր>> անցան Էջմիածնի Մայր աթոռին (Ջմյունիա,

Զանգվածային գաղթերը, բնականաբար, պետք է առաջացնեին նաև Էջմիածնի կաթողիկոսության խորին մտահոգությունը՝ ի տես արևելահայ վիճակների մարդաթափության, որ և առավել սևեռուն էր դառնում այլ կրոնական կենտրոնների կողմից գաղթականության հոգևոր խնամքը ստանձնելու համար ծավալվող մրցակցության պայմաններում: Հնարավոր է, ուրեմն, որ Զմյուռնիան և դրա շրջակայքը տերունի թեմի վերածված լինեն 1610-ական թթ. սկզբներին, թեև դժվար է այդ պնդելը՝ առ ի չգոյե այդ իրողությունը ուղղակիորեն հաստատող վավերագրի կամ աղբյուրի: Համենայն դեպս, որպես Զմյուռնիայի թեմի մեզ հայտնի առաջին առաջնորդ՝ սկզբնաղբյուրով վկայվում է հիշյալ Պոկնտոշ Կարապետը 1614-1615 թթ.: Այս թվականներն էլ, գոնե մոտավորապես, պետք է ընդունել որպես Զմյուռնիայի տերունի թեմի պատմության սկիզբ:

Սիմեոն Երևանցու <<Զամբո>> աշխատության մեջ հստակ սահմանագատվում և բնութագրվում են Էջմիածնի նվիրակական և նվիրակական-առաջնորդական թեմերը (վիճակները), որոնց հիմքում ընկած է վաղ միջնադարից հարատևած և անտարակույս, փոփոխությունների ենթարկված ազգային-կրոնական հին իրավունքը: Իրենց բնույթով ու նկարագրով պատմականորեն գոյացած այս երկու ինստիտուտները՝ նվիրակականը և նվիրակական-առաջնորդականը ամրագրում էին հայ Առաքելական եկեղեցու կառույցների արտատարածական կարգավիճակը, յուրաքանչյուր պետության սահմաններում գտնվող Էջմիածնական թեմի իրավական կացության երկկողմանի ճանաչումը այդ թեմի տարածքը տիրապետող, տիրող պետության, և միաժամանակ, Էջմիած-

Վասպուրական, Տիգրանակերտ)>>, ասված է ժամանակի լուրջ հրատարակություններից մեկում (Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 302): Նախ, Կ. Պոլսի պատրիարքական իշխանությունը վերոհիշյալ երեք հոգևորականների միջև բաժանվել է ոչ թե նրանց միջև եղած <<գավազանակովի>> պատճառով (ընդհակառակն, բաժանումը կատարվեց նրանց համաձայնության արդյունքում), այլ նոր գաղթօջախների առաջացման թելադրանքով: Եվ ապա, 1610-ական թթ. ոչ մի թեմ էլ չէր տրոհվել, այլ կրկնում ենք, նոր թեմեր կամ վիճակներ էին գոյացել սրելով դրանց կառավարման խնդիրը: Այլ հարց է արդեն, որ Էջմիածինը պետք է ձգտեր ձեռք բերել նոր տերունական թեմեր, այդ թվում՝ Զմյուռնիան և Էգեյանի առափնյակի մյուս գաղթօջախները:

նի կողմից՝ որոշակի պատասխանատվությամբ և իրավունքներով: Այս վերջինները քաղաքական ու իրավական տեսակետից չէին կարող միատեսակ և համագոր լինել: Այստեղ գործում էին և ավանդության նորմերը, և էջմիածնի համազգային հեղինակության հետզհետե ընդլայնումը՝ Կիլիկիայից Մայր աթոռի ավանդական կենտրոն վերադառնալուց հետո (1441), և օտար պետությունների վերաբերմունքն ու քաղաքականությունը՝ հայ հանրությունների նկատմամբ: Իր նշանակությունն ունեւ հակաթոռ կաթողիկոսությունների և էջմիածնի փոխհարաբերությունների բնույթը, հատկապես հայոց կաթողիկոսության իրավահաջորդության (կարգավիճակի) խնդիրը Կիլիկիայի և էջմիածնի կաթողիկոսությունների միջև:

Տերունի թեմը (վիճակը), որպես էջմիածնի վարչական կառույց, տարածականորեն տրոհվում էր ավելի մանր միավորների (քաղաքներ, գյուղախմբեր, բնակավայրեր), որոնք բոլորն էլ հովվում էին մեկ առաջնորդ-նվիրակի կողմից: էջմիածնին առնչվելով առավել կայուն և մնայուն փոխհարաբերություններով, տերունի թեմերը դրա համեմատ, ավելի անմիջականորեն էին արձագանքում վերջինիս տրամադրություններին՝ հատկապես զգայուն լինելով նրա կողմնորոշումների նկատմամբ և պաշտպանելով նրա հարկային-սեփականատիրական շահերը: Ինչ վերաբերում է նվիրակական թեմերին, դրանք հետզհետե պետք է ընդգրկեին Օսմանյան Թուրքիայի տարածքում գտնվող Արևմտյան Հայաստանը:

Մի կողմ թողնելով նվիրակական վիճակները և նախքան Զմյուռնիայի թեմին անցնելը, այստեղ նկատենք, որ տերունի թեմերը մեծապես նպաստում էին էջմիածնի ոչ միայն հոգևոր-կրոնական, այլև նյութական՝ տնտեսական կարողությունների պահպանմանն ու ընդլայնմանը: Այստեղ մենք գործ ունենք մի կարևոր գործոնի՝ էջմիածնի այդ կարողությունների նյութական հիմքի, վիճակներից ստացվող հարկերի և տուրքերի, այսինքն եկեղեցական հարկահանման համակարգի հետ: Այն ձևավորվել և հետագա կայուն տեսքն էր ստացել դարերի ընթացքում՝ հանդես գալով իբրև կաթողիկոսության հարատևման ու գոյապահպանության միջոց պետականությունից զրկված և աշխարհով մեկ սփռված հայության ընդհանրական աթոռի համար: Տերունի վիճակները նվիրակականներից տարբերվում էին, նախ, էջմիածնին տրվող հարկերի և տուրքերի ավելի լայն քանակությամբ և չափով. եթե նվիրակական թեմերը հարկվում էին միայն եռամյա տնդությամբ վճարվող նվիրակական համակարգով, ապա տերունի թեմերը հարկվում էին հավելյալ

դրա հետ միասին նաև առաջնորդական վճարումներով (առաջնորդի, առաջնորդարանի, ենթակա թեմերում առաջնորդի կամ Էջմիածնի վեքիլ-տեղապահների գործունեությունն ապահովող ծախսեր): Մի կողմ թողնելով նվիրակական և տերունի վիճակների գոյացման պատմական պայմանների քննությունը, խնդրո՞ւ առարկա հարկման համակարգը բնութագրելիս մենք կսահմանափակվենք XVII-XIX դդ. առաջին քառորդ ժամանակահատվածով, երբ վերջնականապես իր կայուն բնութագիրը ստացավ, ապա վերացավ Զմյուռնիայի տերունի թեմը (վիճակը)՝ Էջմիածնի հետ ունեցած իր դարավոր և միաժամանակ, յուրահատուկ փոխհարաբերություններով: Նախ նկատենք, որ Էջմիածնական թեմերի տարբաժանման հիմքում ընկած էր Էջմիածնի սեփականատիրական-գույքային իրավունքների սկիզբը: Այս առումով հազիվ թե սպառիչ լինի Ա. Ալպոյաճյանի կարծիքը, ըստ որի <<միայն Իզմիրի եւ Պաղտատի մէջ նուիրակներն առաջնորդական պաշտօն կը վարէին եւ ասոր համար այդ թեմերը տերունի վիճակ կոչուած էին>>³⁵⁸: Հիրավի, նվիրակներն առաջնորդական պաշտոն էին վարում ոչ միայն Իզմիրում, Բասրայում և Բաղդադում, այլև բոլոր տերունի թեմերում (Օսմանյան Թուրքիա, Պարսկաստան, Վրաստան և այլուր), բայց նկատենք, որ տերունի վիճակները այդպես էին կոչվում ոչ թե նվիրակների՝ միանգամայն առաջնորդական պաշտոն վարելու, այլ նվիրակի և առաջնորդի պաշտոնները համատեղող սեփականատիրական սկզբունքի բերումով: Այլ կերպ ասած, նվիրակի և առաջնորդի պաշտոնների համատեղումը տվյալ դեպքում հանդես էր գալիս ոչ թե իբրև պատճառ՝ այդպիսի հասկացության բնութագրի (տերունի թեմ) համար, այլ սոսկ հետևանք, որ ածանցվում էր վերոհիշյալ սեփականատիրական իրավունքից: Տերունի վիճակներում Էջմիածինն ուներ, ուրեմն, սեփականատիրական առավել լայն իրավունքներ, քան նվիրակական վիճակներում: Տերունի վիճակի դեպքում այդ իրավունքն իրացվում էր երկու համընթաց ուղղություններով՝ նվիրակական հարկեր ու տուրքեր, և մյուս կողմից՝ առաջնորդական հարկեր գանձելով, ինչպես և ապահովելով վիճակի հոգևոր սպասարկումը՝ ի դեմս մշտական պաշտոնատեղի ունեցող առաջնորդի: Ուշագրավ է, որ Միմեն Երևանցին՝ ժամանակի կրթված և բանիբուն եկեղեցականներից մեկը, իր հանրահայտ <<Զամբո>>-ում նվիրակական, ապա տերունի վիճակները բնութագրում է հենց այս՝ զույգ կարգի վիճակ-

³⁵⁸ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, Բիւզանդիոն, 1904, 12/25 ապրիլի:

ներից ստացվող եկամուտների տարբերությամբ: Իր աշխատության Ե գլխում, նա անդրադառնում է նվիրակական վիճակներին ամրագրված եկամուտներին (հարկեր, տուրքեր), որոնք Ս. աթոռը <<առնու ի ձեռն նուիրակաց ի յերիս ամս միանգամ գնուիրակական, զգանձանական, զարդիւնս եւ զվէճեղենս յիշատակի>>³⁵⁹:

Սիմեոն Երևանցու վերնագրային ձևակերպման մեջ միաժամանակ, առանձնացված են թեմերի հարկերն ու տուրքերը, ընդամին, նախ նշվում են նվիրակական գանձանակի, հոգեբաժնի հարկերը (զարդիւնս), ապա տուրքերը՝ կտակականը, հիշատակի նվիրատվությունները (զվէճեղենս յիշատակի): Հարկերն ու տուրքերը տարբերակելու հարցում բավականաչափ պարզություն է մտցնում Սիմեոն կաթողիկոսի <<Յիշատակարանը>>, որտեղ մասնավորապես, խոսվում է Զմյուռնիայի թեմի շփոթ վճարումների մասին և որոնք կարգավորել էր կաթողիկոսը. <<Եւ զի չէր անդ (Զմյուռնիայում-Ա. Խ.) սովորութիւն հոգեբաժին և կողոպուտ³⁶⁰ տալ Սրբոյ Աթոռոյս, ըստ որում առաջնորդական վիճակ էին մեր և տէրունի ժողովուրդը: Եւ զստակն եւս զոր տային Սրբոյ Աթոռոյս հանգուցեալքն հաւասար այլոց վանորէից տային: Եւ յորժամ զհոգեբաժին խնդրէին, ասէին թէ՛ ահա կտակն է, զոր ետուք: Վասն որոյ սիրով և մեղադրութեամբ գրեաց սոցա սրբագան վեհն, թէ կտակս կամայական (կամավոր-Ա. Խ.) տուրք է ննջեցելոյն, և հոգեբաժինն և զկողոպուտն իբրու հարկ, զոր տան իւրեանց առաջնորդին և վանիցն>>³⁶¹:

Սիմեոնը, ուրեմն, կտակը համարում է տուրք, իսկ հոգեբաժինը և կողոպուտը՝ հարկեր, որոնք տրվում են նվիրակ-առաջնորդին և վանքերին: Նկատենք, որ տուրքերը և հարկերը Օսմանյան Թուրքիայում գտնվող թեմերից էջմիածնին կարող էին հասնել վակֆի սեփականատիրական համակարգի միջոցով, այսինքն, որևէ մզկիթի կամ հոգևոր հաստատության էր նվիրաբերվում անշարժ գույք կամ դրամ, որի տո-

³⁵⁹ Սիմեոն կաթողիկոս, Զամբո գիրք, էջ 44: <<Զվէճեղենս յիշատակի>> հասկացությունը Վ. Համբարձումյանի թարգմանությամբ՝ <<հիշատակի նվիրատվություն>> (տես Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Զամբո, էջ 61), որ, կարծում ենք, ունի ոչ թե հարկի, այլ տուրքի նշանակություն: Կարծում ենք, որ հարկը տուրքից տարբերվում էր իր անհամեմատ մեծ չափերով և կայունությամբ:

³⁶⁰ Կողոպուտ <<Իրք մնացեալք յաւարէ կամ ի մեռելոյ, որպէս իրաւունք եկեղեցւոյ>> (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1113):

³⁶¹ Դիւան հայոց պատմութեան, Գիրք ԺԱ, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, մասն III (1777-79), էջ 137:

կոսները կարող էր ստանալ Էջմիածինը, իբրև ժառանգորդ: Այս կերպ Ս. Աթոռը դարձել էր Զմյոռնիայում և շրջակայքում գտնվող վակֆ տների և այգիների սեփականատեր: Ղուկասի կաթողիկոսության ժամանակ Զմյոռնիայի շրջանակի Գնրք բնակավայրից ոմն մահտեսի Վարդում Էջմիածինն էր նվիրել իր և իր կնոջ հոգեբաժին դրամը՝ 130 դուրուշի չափով և իր տունը ևս կտակել նրան՝ վակֆի ձևով: Էջմիածինը ստանալու էր տան վարձից գոյացող եկամուտը՝ տարեկան 3 դուրուշ: Կաթողիկոսի օրհնության գիրն ամուսինները պահում էին իրենց մոտ՝ «<զի յետ մահուանն իւրեանց մի ոք պահանջեսցէ ի կողմանէ ինքեանց զհոգեբաժին, ըստ որում ի կենդանութեան իւրեանց ետուն>>³⁶²:

Հոգեբաժինը, հետևաբար, մտնում էր Էջմիածինն տրվելիք հարկերի ցանկի մեջ:

Եկեղեցուն տրվող հարկերն ու տուրքերը վավերագրերում ընդհանուր իմաստով հիշվում են **հաս և իրավունք** եզրույթներով, հաճախ՝ առանց տարբերակման: Այսպես, Էջմիածնական վիճակներին հղած իր մի կոնդակում Հակոբ Շամախեցի կաթողիկոսը կարգադրում էր, որ տեղերում հաս և իրավունք կարող են առնել միայն առաջնորդները³⁶³: Առաջնորդական հաս և իրավունք է հիշվում նաև ավելի ուշ շրջանում՝ Եփրեմ կաթողիկոսի կոնդակում (1816, ապրիլ), ընդամին նվիրակական տուրքերի և հարկերի խճողված հիշատակումով, որպիսիք են **գանձանակ, հիշատակի, խոստմունք, կտակ, հոգեբաժին, քառասնից, ժամուց** «<եւս եւ առաջնորդական ամենայն հաս եւ իրաւունք եւ զայլ նախնաւանդ քրիստոնեական ջերմեռանդութեան տուրս>>³⁶⁴: Արքեպ. Եսայուն Զմյոռնիայի առաջնորդ և նվիրակ հաստատող իր կոնդակում (1782, մայիս) Ղուկաս կաթողիկոսը, թվում է, տալիս է Զմյոռնիայի տերունի թեմի նվիրակական հարկերի և տուրքերի սպառիչ ցանկը, «<այսինքն **զհոգեբաժինս, զկողոպուտս, զժամուցս, զքառասնիցս, զկտակս, զխոստմունս, զգանձանակս**>>³⁶⁵: Ուշագրավ է, որ շարունակության մեջ կոնկրետ նշվում են առաջնորդական (ոչ նվիրակական) «<հասն եւ զիրաւունսն>>՝ հարկերն ու տուրքերը, «<Այսինքն, **զարբադրամն, զԱթոռահասն, զպտղին, զդիագարդն, զտնականն, զխաջօրհներքն, զմատաղսն, զերկու գանձանակսն, այսինքն զԱրք. Աթոռոյս և զառաջնորդականն,**

³⁶² Դիվան հայոց պատմության, Ղուկաս Կարնեցի, էջ 333:

³⁶³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 52:

³⁶⁴ Նույն տեղում, թղթ. 243, վավ. 148:

³⁶⁵ Նույն տեղում, թղթ. 242, վավ. 59:

զհանդիսաւոր աւուրց բուրվառն եւ ի քաղաքիդ զօդոյ օրհներն եւ զայն յատուկ ողորմութիւնն, զոր առաջնորդն յետ նուիրակութեան Էլանէ ի թեման (շրջակա քաղաքներն ու բնակավայրերը-Ա. Խ.) եւ անուամբ Մբյ Աթոռոյս խնդրեալ առնու>>³⁶⁶:

Առաջնորդական հարկերն ու տուրքերն այստեղ աչքի են ընկնում իրենց առատ բազմազանությամբ՝ համեմատած նվիրակականների հետ, մանավանդ նվիրակական հարկահանությանը տերունի թեմում միանում էր և առաջնորդականը, տվյալ դեպքում՝ երկու գանձանակները և այն հատուկ <<ողորմությունը>>, որ տրվում էր առաջնորդին՝ իր պաշտոնավարության եռամյա շրջանը լրացնելուց հետո՝ ամբողջ թեմի կողմից: Հարկերն ու տուրքերը գանձվում էին և բնամթերային և դրամական ձևերով, նույնպես երեք տարին մեկ: Կարելի է կարծել, որ բնամթերային շերտը առավել զանգվածային բնույթ ուներ Էջմիածնի բնաշխարհիկ վիճակներում, բնականաբար, կապված հարկատուների տնտեսական տիրապետող կացութաձևի՝ ավատատիրական փակ տնտեսությանը հատուկ ապրանքադրամական, ագրարային հարաբերությունների հետ: Քաղաքային բնակչությունը, որ հիմնականում կազմված էր արհեստավորությունից և վաճառականությունից, հարկվում էր դրամական վճարների ձևով: Զմյուռնիայի թեմի քաղաքաբնակ հայությունը (բուն Զմյուռնիան և քաղաքները՝ Այդըն, Մանիսա, Էդդեմիշ և այլն) ևս հարկվում էր նույն կերպ՝ առանձնանալով թեմի գյուղատնտեսական շրջանների համեմատաբար սակավաթիվ հայ բնակչությունից, որտեղ պետք է գերակշռեր բնամթերային հարկումը: Տիրապետողը, սակայն, Էջմիածնի վիճակների ու թեմերի համար մնում էր բնամթերային ռենտան: Եվ այս տեսակետից ուշադրություն է գրավում, որ Սիմեոն կաթողիկոսը <<Զամբո>>-ում Ս. Աթոռի նվիրակական և տերունի վիճակներից առանձնացնում է վիճակների երրորդ՝ միջակա խումբը, որը նվիրակական արդյունքների եռամյա վճարից հետո Էջմիածնին տալիս էր նաև տարեկան բնամթերային հարկերը՝ <<ի տարին միանգամ զիւղս, զպանիրս, զմատաղացու չորքոտանիս եւ զայլս այպիսիս, ուտելիս եւ զվճենդենս>>³⁶⁷: Այդ վիճակների մեջ են մտնում Բայագետը, Դիադինը, Ալաշկերտը, Թոփրակ կալան, Մանազկերտը, Բերկրին, Արճեշը, Արծկեն և այլն՝ իրենց շրջակա գյուղերով հանդերձ³⁶⁸:

³⁶⁶ Նույն տեղում:

³⁶⁷ Սիմեոն կաթողիկոս, Զամբո գիրք, էջ 50:

³⁶⁸ Նույն տեղում, էջ 50-51:

Նվիրակական և տերունի՝ առաջնորդական թեմերի ավանդական տուրքերից բացի, Ս. Աթոռը, այս անգամ կամավորական հիմունքներով, հավաքում էր նաև եկամուտներ՝ **խմդադեայ** (օժանդակ) ընդհանուր անվան տակ, որպիսիք բացառապես միջանկյալ տուրքեր և նվիրատվություններ էին: Էջմիածնի վանքի պարիսպները նորոգելու համար Միմեոն կաթողիկոսը իր կոնդակով (1764, մարտի 10) Զմյուռնիայի տերունի թեմի ժողովրդին հորդորում էր <<վասն իմդադեայի եւ քեմէկի եւ օգնութեան>> տալ <<գտուրս եւ գնուէրս... ոչ ի կողմանէ նուիրական արդեանցն գորս բնական կարգ է ի ժամանակի իւրում յերեք տարին միանգամ տալ, այլ զայս տուրք եւ նուէրք որպէս թէ պատահմամբ ի կողմանէ շինութեան շրջապատ պարսպի մեծի Սբյ Աթոռոյս>>, ի դեպ, չմոռանալով նվիրատուներին համոզել տալ <<անխնայ եւ առատապէս>>³⁶⁹:

Զմյուռնիայում, ինչպես և մյուս թեմերում, առաջնորդն օժտված էր կաթողիկոսի ներկայացուցչի ընդարձակ լիազորություններով: Հոգևոր գործերի ամբողջ համալիրը նա էր տնօրինում՝ սկսած քահանա ձեռնադրելու իրավունքից մինչև հոգևոր հարկերի ու տուրքերի գանձումն ու վերահսկողությունը, թեմի գործերի (աշխարհիկ գործերը ներառյալ) մասին Էջմիածին տեղեկագրելն ու հաշվետվություն ներկայացնելը, տեղական օսմանյան իշխանությունների հետ հարաբերվելուց մինչև թեմի ժողովրդի կտակների, ժառանգության, լուսավորության, դպրոցի, պսակի և ամուսնալուծության և այլ խնդիրներ: Առաջնորդի վերահսկողության և հոգևոր ու մասամբ աշխարհիկ հոգածության (առնչությունները թեմի ժողովրդի և իշխանությունների միջև, կրթական ու լուսավորական գործեր) ներքո էր գտնվում թեմի ամբողջ ժողովուրդը՝ առանց դասային կամ անհատական որևէ բացառության: Նրա իրավասություններից դուրս չէին գտնվում, անգամ առաջին հնագույն մասնագիտության անձանձիր ներկայացուցիչները. <<Այլևս այսոքիկ տէրունիքս, գրում էր Ղուկաս կաթողիկոսն իր կոնդակում (1782, մայիս),- առաջնորդին պարտի հասանիլ կանոնական հրամանաւ, այսինքն տունք քահանայից, ազատաց, եկեղեցպան իշխանաց, եկամտից, ժամկոչաց, պոռնկաց, յանկարծամահից, անհաղորդից և այլոց այսպիսեաց>>³⁷⁰:

³⁶⁹ Միմեոն կաթողիկոս, Զամբո գիրք, էջ 50:

³⁷⁰ Նույն տեղում:

Այլ հարց է արդեն այն, որ օսմանյան իշխանությունները, հաճախ՝ ենիչերիական միավորների գլխավորները, ոտնահարում էին առաջնորդներին իշխանական բերաթներով տրված լիազորությունները՝ որևէ պահի ներխուժելով նրանց իրավասությունների սահմանները և նրանց թելադրելով իրենց կամքն ու վճիռը:

Իր պաշտոնին անցնելուց առաջ Ջմյուռնիայի նվիրակ-առաջնորդը օսմանյան պետությանը մուծում էր միանվագ հարկ՝ **մուքաթա'ա**: Նա շրջագայում էր թեմի մյուս քաղաքներում և գյուղատնտեսական շրջաններում՝ հարկեր ու տուրքեր հավաքելու համար: Ս. աթոռի վեքիլի (տեղապահի), մշտական պարտականությունն էր հետևել էջմիածնապատկան սեփականության անվթարությանն ու եկամուտների պահպանությանը: XIX դարի սկզբներից մինչև Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը 1840-ական թթ., Ջմյուռնիայում էջմիածնի վեքիլներն էին Չելիկյան գերդաստանի մարդիկ, որոնցից մահտեսի Կարապետ Չելիկը 1801 թ. Դավիթ կաթողիկոսի տեղապահն էր³⁷¹: 1852 թ. մայիսին նույն ընտանիքից Թ. Չելիկը, որպես էջմիածնի կալվածքների կառավարիչ, Ներսես կաթողիկոսին իր հաշվետվության մեջ տվյալներ էր ներկայացնում Ս. աթոռի եկամուտների վերաբերյալ: Հաշվետվությունից պարզվում է, որ էջմիածնական վակֆ արած տների եկամուտն այդ տարիների ընթացքում հասել է 21719 դուրուշի, որ գոյացել էր վարձով տրված տներից, ձիթենու այգիներից և այլն³⁷²: Նույն սեփականատիրական հիմունքներով էջմիածինը տներ ուներ թեմի այլ քաղաքներում և բնակավայրերում՝ Էոդեմիշում, Բայանդըրում և այլուր³⁷³: Ջմյուռնիայի թեմում տուրքեր և հարկեր էին գանձվում նաև Տաթևի վանքի օգտին՝ գանձանակական իրավունքով (կողոպուտ, հոգեբաժին և այլն): Այս վանքի հեղինակությունը բարձր էր հատկապես թեմի գյուղատնտեսական շրջաններում, որ պետք է բացատրել դեռևս Շահ Աբասի ժամանակներում, և այնուհետև XVIII դ. Սյունիքից Ջմյուռնիայի շրջակայք անցած հայ գաղթականական և բավական զգալի մի շերտի առկայությամբ: Տաթևի վանքը գանձանակական եկամուտներ էր ստանում Քրքաղաճից, Էոդեմիշից, Նազիլիից և այլն: Յուրաքանչյուր բնակավայրում Տաթևի վանքն ուներ գանձապետներ, որոնք գործակցում էին թեմի առաջնորդի հետ: 1824 թ. Էոդեմիշի և Նազիլիի գանձապետներն իրենց հավաքած դրամական հա-

³⁷¹ Նույն տեղում, վավ. 92:

³⁷² Նույն տեղում, թղթ. 167, վավ. 448:

³⁷³ Նույն տեղում, թղթ. 248, վավ. 1090:

սույթները՝ 1248 դուրուշ ընդհանուր գումարով, հանձնել են թեմի առաջնորդ Մարտիրոսին՝ Տաթևի վանք ուղարկելու համար³⁷⁴:

Կրոնական հարկերն ու տուրքերը զուգահեռ հարկահանման պայմաններում, երբ թեմերի ժողովուրդը ստիպված էր վճարել և Էջմիածնի, և վանքերի օգտին՝ ի հաշիվ սեփական տնտեսական կարիքների բավարարման, ամենից առաջ ծանրանում էին հասարակ ժողովրդի ուսերին: Եթե այս ամենին ավելացնենք օսմանյան պետությանը տրվող բազմապիսի հարկերն ու տուրքային-պարհակային հարկադիր վճարումները, ապա թեմերի ժողովրդին մնում էր ելք որոնել տնտեսական ծանր կացությունից դուրս գալու համար: Այդպիսի դրությունը հասցնում էր նրան, որ մարդիկ հրաժարվում էին վճարել Էջմիածնին կամ վանքերին տրվող հարկերը, ի դժգոհություն համառ հարկահանների: Միմեռն կաթողիկոսը չէր թաքցնում իր սրտնեղությունը, երբ Զմյուռնիայի թեմի ժողովրդին կշտամբում էր հարկեր վճարելու հարցում Էջմիածնին նախապատվություն չտալու և կամ հարկերից հրաժարվելու համար: <<Արդ դուք-գրում է նա,-փոխանակ առավել զպատուելոյ զսուրբ Աթոռս, ըստ որում մայր վանորէից և եկեղեցեաց և դուք տէրունի ժողովուրդ սորին, ստոր արկանէք զսա, քան զմասնաւոր վանորայս, որ զտրին հարկապիսի տուրսն ոչ տայք, այսինքն զկողոպտոսն և զհոգեբաժինն: Զի կտակ յանտէրունի (ոչ տէրունի թեմեր-Ա. Խ.) տեղեացն ևս Սրբոյ Աթոռոյս քան զայլ վանորէիցն բազմապատիկ և զհոգեբաժինն ևս տան շատ յանտէրունեացն: Իսկ դուք զկտակն հաւասար այլոց տայք և զհոգեբաժին և կողոպտոս ոչ բնաւ>>³⁷⁵:

Ինչ ասել կուզի, դժգոհություններն ըստ հարկին պոռթկում էին, ընդ որում, նաև ոչ ունեզուրկ մարդկանց շրջանում: Թեմի ժողովրդի դժգոհությունն ու տրտունջները առավել լսելի էին դառնում նաև կրոնական այլ կենտրոններից եկած այցելու նվիրակների և դարձյալ հարկահավաք գործառույթի պատճառով:

Կ. Պոլիսը և Զմյուռնիան մտնում էին, ինչպես նշված է 1772 թ. մի ձեռագրում, Էջմիածնի <<մեծ նուիրակութիւնների>> մեջ: Հենվելով XVIII դ. վերջի այդ վավերագրի վրա, Հ. Ասատուրը գրում է, որ Կ. Պոլսից և Զմյուռնիայից բացի, Թուրքիայում Էջմիածինն ուներ ևս հինգ մեծ նվիրակություններ՝ Ռումելի, Էնկյուրի, Թոքատ, Էրզրում, Դիարբեքիր և չորս

³⁷⁴ Նույն տեղում, թղթ. 48, վավ. 221:

³⁷⁵ Միմեռն կաթողիկոսի Յիշատակարանը, էջ 137-138:

փոքր նվիրակություն՝ Կարս, Ախալցխա, Վան, Բայազետ³⁷⁶։ Կարելի է կարծել, որ նվիրակական վիճակները մեծի և փոքրի բաժանելու հիմքում ընկած էին մի քանի սկզբունքներ, և ամենից առաջ, այդ նվիրակությունների դիմաց օսմանյան պետությանը էջմիածնի վճարած մուքաթա՝ա (մախթու) հարկը, նաև նվիրակության նյութական ու քաղաքական նշանակալիությունը։ Առաջինն այդ վիճակների մեջ Կ. Պոլիսն էր՝ մայրաքաղաքի հայ համայնքի և նյութական, և հոգևոր անմրցելի կարողություններով ու հեղինակությամբ, և ապա Ջմյունիան՝ միջազգային առևտրական լայն կապերի, հատկապես էջմիածնի ու գաղթօջախների (Եվրոպա, Ռուսաստան, Մերձավոր ու Միջին արևելյան երկրներ) փոխհարաբերությունները ապահովելու և պահպանելու դարձյալ անմրցելի կարողություններով։ Այս պատճառով էջմիածինը բացառիկ լուրջ ուշադրություն էր դարձնում այս գաղթօջախների իր նվիրակություններին, որոնք, ի հավելումն վերը նշվածի, շատ անգամ հարաբերություններ կարգավորողի դեր էին կատարում էջմիածնի և օսմանյան իշխանությունների միջև։ Այսուհանդերձ, տակավին տարբերություններ կային Կ. Պոլսի և Ջմյունիայի նվիրակական վիճակների միջև. եթե Կ. Պոլսում էջմիածնի նվիրակն ուներ սոսկ նվիրակի՝ երեք տարին մեկ անգամ մյուռոն բաժանելու (թաղերի եկեղեցիներին) և հիմնականում էջմիածինը ներկայացնելու առաքելություն՝ առանց որևէ հոգևոր իշխանության (այդ գործառույթն իրացնում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքը, ով օսմանյան իշխանությունների պնդումով և միլեթի տրամաբանությամբ, արդեն իսկ կաթողիկոսի փոխանորդն էր Օսմանյան Թուրքիայում), ապա Ջմյունիայի պարագան բավական տարբեր էր։ էջմիածնի ներկայացուցիչն այստեղ կատարում էր, ինչպես տեսանք, նվիրակի և առաջնորդի գործառույթները մի տևական ժամանակ (երեք և ավելի տարիներ)՝ բնակվելով Ջմյունիայի իր նստավայրում և կառավարելով տեղի առաջնորդարանը։ Այնուհետև, կրոնական-վարչական պաշտոնը կատարելու կամ այդ շարունակելու իմաստով ոչ մի կապ չկար Կ. Պոլսի և Ջմյունիայի նվիրակների միջև, այլ կերպ ասած, նրանցից յուրաքանչյուրը սահմանված ժամկետում (կամ դրանից շեղումներով հանդերձ) կատարում էր իր գործը և ապա վերադառնում էջմիածին։ Այս տեսակետից երկիմաստ է մնում Հ. Ասատուրի դարձվածքը, ով գրում է, թե <<Կոստանդնուպոլիս եկած նուիրակները Իզմիր կերթային միշտ

³⁷⁶ Ասատուր Հ., Կոստանդնուպոլսյ հայերը, էջ 135։

մնալ երեք տարի իբր առաջնորդ>>: Նույն կերպ, նա նշում է, որ նվիրակները միշտ Իզմիր էին գնում, իբրև առաջնորդ և որ <<Դանիել եպիսկոպոս 1796-ին Կոստանդնուպոլիս եկած էր իբր նուիրակ Էջմիածնայ, եւ ըստ սովորութեան, առաջնորդ գացած էր Իզմիր>>³⁷⁷: Բայց Դանիելը, մեկնելով Էջմիածնից, նախ նշանակվել է Ջմյունիայի (1793) և ապա Ռումելիայի առաջնորդ (1797)՝ երբևէ Կ. Պոլսում նվիրակ չլինելով: Ա. Ալպոյաճյանը առավել անվերապահ է, երբ գրում է, թե <<Նուիրագործուած սովորութիւն մը դարձած էր Կ. Պոլսի նուիրակներուն անպատճառ մեկ-երկու տարի ալ Իզմիր նուիրակ-առաջնորդ երթալը: Այս ձեւն երկար ատեն պահուեցաւ...>>³⁷⁸:

Կարելի է կարծել, որ և Հ. Ասատուրը, և նրան հետևելով՝ Ա. Ալպոյաճյանը սեփական մեկնաբանությունն են տվել Ավ. Պերպերյանի դրան մոտ, բայց տարիմաստ մի դարձվածին, ըստ որի, <<(1796) Եկն այսոսիկ աւուրս ի Կոստանդնուպոլիս Դանիել եպիսկոպոս նուիրակ սուրբ Էջմիածնի... եւ կատարեալ գգործս պաշտաման իւրոյ գնաց ի Ջմիւռնիա ըստ սովորութեան նուիրակաց Էջմիածնի մնալ անդ զամս երիս>>³⁷⁹:

Խնդրի մեջ լիակատար պարզություն մտցնելու համար նկատենք, որ Պերպերյանը ասում է, որ Կ. Պոլիս էր եկել Էջմիածնի նվիրակ (և ոչ թե Կ. Պոլսում Էջմիածնի կողմից նվիրակ կարգված) Դանիելը, և որ պաշտամունքի իր գործն ավարտելուց հետո գնացել Ջմյունիա՝ ըստ սովորության այնտեղ մնալու երեք տարի (և ոչ թե ըստ սովորության՝ Կ. Պոլսից հետո Ջմյունիա, որպես առաջնորդ գնալու): Ընդհակառակը, Կ. Պոլսի և Ջմյունիայի նվիրակները Էջմիածնի կողմից նշանակվում էին առանձին-առանձին, և հազվադեպ էր պատահում, որ Կ. Պոլսի նվիրակը իր պաշտոնը շարունակեր Ջմյունիայում և կամ հակառակը: Ինչ-որ տեղ, բայց դեռևս ոչ իբրև բացառություն, կարելի է հիշել Միսեոն Երևանցու օրինակը, երբ նա, Կ. Պոլսի նվիրակ լինելով՝ <<Պահ մը Ջմիւռնիա ալ գտնուած է Սահակ Ահագինի կաթողիկոս հռչակուելէն ետքը (1756 թ. փետրվարից հետո-Ա. Խ.), բայց չենք կարող ճշդել, թե Ջմիւռնիոյ շրջանակին նուիրակութեան անցնելով, թե ոչ Ջմիւռնիոյ փոխանորդութիւնը իբր յաւելուածական պաշտօն վարելով>>³⁸⁰, գրում է Մ. Օրմանյանը:

³⁷⁷ Նույն տեղում, էջ 135-136:

³⁷⁸ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, Բիւզանդիոն, 1904, 12/25 ապրիլի:

³⁷⁹ Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, էջ 36:

³⁸⁰ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 3495:

Այս թեականության մեջ՝ կարծում եմ, հավանականը վերջինն է, քանի որ չկա որևէ վավերագիր, որ վկայեր Միմեոն Երևանցի ապագա կաթողիկոսի՝ Զմյուռնիայում նվիրակի պաշտոն վարելու մասին:

Տերունի թեմի նվիրակները, որոնք տևական ժամանակ կատարում էին իրենց պաշտոնը, տեղական իշխանությունների հետ ունեցած փոխհարաբերություններում պետք է գլուխ հանեին բազմաթիվ դժվարություններից, անգամ զուտ հոգևոր սպասարկման խնդիրներում: Բ. դուռն այս առումով քանիցս ֆերմաններ էր տալիս, անշուշտ, Էջմիածնին տրված իրավունքների սահմաններում, վերահաստատելով նրանց իրավասությունները պաշտամունքի և կրոնական սպասարկման ոլորտներում: Սուլթան Ահմեդի ֆերմանով, ի պատասխան Աղեքսանդր Զուղայեցի կաթողիկոսի խնդրագրի, հաստատվում էր <<զի նուիրակունքն Էջմիածնի (ուր և գնայցեն) մի ոք նեղացուցեն գնոսա>>³⁸¹: Իշխանությունները, և մանավանդ ենիչերիական գլխավորները, իրենց մշտական կեղեքումներում հաճախ էին անգիտանում սուլթանական ֆերմանները, երբ բանը հասնում էր <<գլավուրներից>> դրամ շորթելուն: Սուլթան Ահմեդ Գ-ի ֆերմանը՝ տրված <<ի վերայ Զմիւռնիոյ դագեացն>> (կազաներին-Ա.Խ.) վասն տեղոյն առաջնորդին>>, հրամայվում էր <<զի մի նեղացուցեն գնա և յօրէնս հայոց մի խառնիցին>>³⁸²:

Դրան նախորդել էր այն, որ Զմյուռնիայի առաջնորդի գործերին ապօրինի միջամտությունից պաշտպանվելու խնդրանքով իշխանություններին էր դիմել Կ. Պոլսի պատրիարքը: Ուստի ֆերմանով հրամայվում էր դատավորներին, թե <<հայոց օրինաց և առաջնորդի գործոյն և չհասութեան պսակից և կամ քահանայից վրէժխնդրութեան, առաջնորդի մի խառնիք դուք, զի այդոքիկ առաջնորդի են գործ>>³⁸³:

Նկատենք, որ Զմյուռնիայի առաջնորդին ի պաշտպանություն տրված ֆերմանները պատահական չէին. էյալեթը (վիլայեթը) օսմանյան գավառական վարչական այն միավորներից էր, որ աչքի էր ընկնում, հատկապես XVIII դ., իր կենտրոնախույս, ասել կուզի՝ կամայական կեցվածքով, և առաջնորդը չէր կարող զերծ մնալ ճնշումներից ու վարչական ինքնագլխություններից: Նկատենք նաև, որ տվյալ դեպքում Բ. դուռը տեղական իշխողներին զգացնել էր տալիս նրանց զսպելու իր իրավունքը:

³⁸¹ Միմեոն կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 240:

³⁸² Նույն տեղում:

³⁸³ Նույն տեղում, էջ 241:

Նվիրակների պաշտոնը հաստատվում էր սուլթանական ֆերմանով, համապատասխան կաթողիկոսներին տրված ֆերմաններին, որտեղ նշվում էին նրանց ենթակա նվիրակական և տերունի թեմերը: Ամեն մի ֆերմանի, այդ թվում և ընթացիկ գործերին վերաբերող ֆերմանների դիմաց կաթողիկոսը մուծումներ էր անում օսմանյան գանձարան: Հակոբ Շամախեցի կաթողիկոսի (1759-1763) հաստատման և երեք այլ ֆերմանների համար արքունական գանձարան է վճարվել 750 դուրուշ³⁸⁴:

Սովորական երևույթ էր, որ օսմանյան պաշտոնեության ստորին օղակները, մանավանդ գավառներում, անտեսում էին մայրաքաղաքի հիերարխիական ավելի բարձր հրամանները, երբ բանը հասնում էր ոչ մահմեդական հպատակների իրավունքներին: Այս առթիվ ուշագրավ է հետևյալը. Ավետիքին (հետագայում պատրիարք) էր գրում ի կուսակալ Խալիլ փաշան բանտարկում է եկեղեցի կառուցելու մեղադրանքով, որի մասին պատմում է ինքը՝ Ավետիքը. <<Խելիլ փաշայ խօսեր սաստիկ սպառնալեօք՝ վասն է՞ր շինեցիր զեկեղեցին Երզնկոյ: Ես... պատասխանեցի, թէ հրամանաւ թուրքին մեծաւորին եւ ձեր դուռնան գրքին հրաման ֆեթվային Երզնկու դատաւորին գիտութեամբ շինեցի>>³⁸⁵:

Վերադառնանք, սակայն, նվիրակներին: Հանրահայտ են նրանցից շատերի արտաքո կարգի ընչաքաղցությունն ու չարարկումները՝ եկեղեցական հարկերն ու տուրքերը հավաքելու գործում: Ավելին. թեմերում հայտնվում էին տարբեր վանքերի կամ միաբանությունների անունից որպես նվիրակ ներկայացող հոգևորականներ, այդ թվում Էջմիածնից, Սսից, Երուսաղեմից և այլն, նաև սեփական նախաձեռնությամբ գործող բախտախնդիրներ, ապավինելով իրենց ճարպկությանն ու ժողովրդի դյուրահավատությանը: Բազմաթիվ էին, իհարկե, ազնվորեն ու խղճմտանքով գործող նվիրակները, եկեղեցու արժանավոր գործիչները, մասնավորապես տերունի թեմերում, որպիսին Զմյուռնիան էր, բայց և ոչ քիչ դեպքերում էին հայտնվում նրանք, ովքեր նվիրակի պաշտոնը դարձրել էին տխուր համբավի հոմանիշ: Հայտնի է նվիրակների չարաշահումների մերկացման գործում ազգային լուսամիտ գործիչների քննադատական կտրուկ վերաբերմունքը: Ոչ պակաս ցասկոտ էր նվիրակներին, բայց նրանց հետ միասին ժամանակի խայտառակ կաթողիկոս Մելքիսեթին բնութագրող Գրիգոր Կեսարացին՝ XVII դ. առաջին կեսի հայ եկեղեցու պահպանողական և խստամբեր հայրերից ամե-

³⁸⁴ Նույն տեղում, էջ 237:

³⁸⁵ Կենսագրություն Աւետիք պատրիարքի, էջ 113:

նաերևելին, ով իր խոսքն ուղղում էր հենց այդ կաթողիկոսին՝ թվարկելով նրա մեղսագործությունները. <<Թե յինչ երկիր որ նուիրակ յուղարկես՝ նա կու ընտրես՝ յոր տեղ չար եւ լիրբ, անգգամ, անամօթ եւ ամբարտաւան մի կայ, որ ոչ Աստուծոյ երկնչի, եւ ոչ ի մարդկանէ ամաչէ, գայնպիսիքն կառաքես, որ զարդարեալ երիվարօք եւ պճնեալ հանդերձիւք եւ կրկին պաշտօնէիւք գան եւ գոռոզաբար խորխտան եւ բազում ցոփութեամբ եւ անկարգութեամբ եւ արբեցութեամբ զաշխարհս վրդովեն եւ յոլով խռովութիւն եւ աղմուկս յարուցանեն>>³⁸⁶:

Էջմիածնի կաթողիկոսները փորձում էին այս կամ այն կերպ կանխել ապերասան նվիրակների չարաշահումները՝ առաջնորդներին ուղղած իրենց շրջաբերականներով, հրահանգներով և այլն, սակայն հազիվ թե կարելի կլինէր խոսել դրանց անառարկելի արդյունավետության մասին: Էջմիածնական այդպիսի մի վավերագրում (1818 թ. դեկտեմբեր), որպէս կանոնական գրություն՝ ուղղված առաջնորդներին, ասվում է. <<Սակայն լսեմք, զի ոմանք նուիրակունք այդր զչափն նեղեն, չարչարեն զժողովուրդն թէ վասն հոգեբաժնից և թէ վասն նուիրակական ողորմութեանց՝ երբեք չնայելով յանձին կարողութեան...>>³⁸⁷:

Անդրադառնալով հարկահավաք նվիրակների և առաջնորդների անգթություններին, ակադ. Ա. Հովհաննիսյանը նշում է, որ Աղթամարի և Էջմիածնի կաթողիկոսների հակամարտությունը բորբոքվում էր <<մասամբ այս հողի>> (իմա նվիրակական հարկերի) վրա³⁸⁸: Ինչ վերաբերում է նվիրակների պատկանելությանը, ուշագրավ է Հ. Սիրունու կարծիքը, թե Էջմիածնից դժգոհ մի տարր կար արևմտահայ կենտրոններում, որի պատճառը <<առաւելապէս Էջմիածնի անունով Թուրքիոյ հայ թեմերուն մէջ շրջագայող նուիրակներն էին>>³⁸⁹: Բայց նվիրակական չարաշահումներն ընդհանրական երևույթ էին և ոչ թե Էջմիածնի մենաշնորհը, թեև այլ հարց է արդեն, որ Էջմիածնականների հետ մրցակցում էին կրոնական այլ կենտրոնները՝ ոչ սակավ դեպքերում չզսպելով Էջմիածնի հեղինակությունը սովերեյն կրքերը:

Հարկ է նկատել, որ անկախ նվիրակ-առաջնորդների նկատմամբ քննադատական վերաբերմունքից, որ տեսանք վերը, նրանք իրական-

³⁸⁶ Սրուանձտեանց Գ., Թորոս աղբար, էջ 282:

³⁸⁷ ՄՄ, արխիվ Հարություն Աբրահամյանի, թղթ. 98, վավ. 148:

³⁸⁸ Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, էջ 146:

³⁸⁹ Սիրունի Հ. Ճ., Պոլիս եւ իր դերը, էջ 541:

նացնում էին ազգային մի շատ կարևոր գործառույթ՝ ապահովելով Էջմիածնի հոգևոր-կրոնական կապերը աշխարհասփյուռ հայության հետ և նպաստելով ազգապահպանության դեմ ուղղված մարտահրավերների հաղթահարմանը դարերի ընթացքում: Առաջնորդների և նվիրակների անչափ կարևոր այս պահպանողական գործունեությունը, որ Էջմիածնի գործունեությունն էր միանգամայն, կարևորագույն նշանակություն ունեցավ բնաշխարհում և գաղթավայրերում հայ ազգային մշակույթի պահպանության ու զարգացման, ազգի հոգևոր արժեքների շարունակականության ամրապնդման համար: <<Նվիրակները, գրում է Լեոն, - շրջելով աշխարհի բոլոր կողմերում ցրված հայության մեջ, կատարում էին այն կարևոր դերը, որ սերտ հարաբերություններ էին ստեղծում Էջմիածնի և տեղական ժողովուրդների մեջ: Նրանք էին, այդպիսով, ազգային ոգին պահպանում հեռավոր և կորած անկյուններում>>³⁹⁰:

Նկատենք նաև, որ թեմերի համար մրցակցական պայքար էի ընթանում Էջմիածնի և մյուս աթոռների միջև, մանավանդ այնպիսի հարուստ թեմի, որպիսին Զմյուռնիան էր: Կ. Պոլսի պատրիարքները, օգտվելով քաղաքական ու պատերազմական խառնակ իրավիճակներից, երբ խզվում էր կանոնավոր հաղորդակցությունը Պարսկաստանի և Թուրքիայի միջև, XVIII դ. (մասամբ դրանից էլ առաջ) առ ի չգոյե Զմյուռնիայում Էջմիածնական առաջնորդի, չէին զսպում այդ թեմը պատրիարքությանը միացնելու իրենց գայթակղությունը: Կ. Պոլսի Ավետիք պատրիարքը, որին չես կարող մեղադրել պատրիարքության շահերի հանդեպ անտարբեր վերաբերմունքի մեջ, 1700-ականի սկզբներին Զմյուռնիա՝ նվիրակ է ուղարկել իր հովանավորյալներից մեկին՝ Մարտիրոս Քյուլիանճի վարդապետին (հետագայում՝ Կ. Պոլսի պատրիարք), ով <<եկն Ըստամպոլ սուլթան Մուստաֆե ժամանակի (Մուստաֆա Բ՝ 1695-1703 –Ա. Խ.), վեղար անցուցաք զգլուխն կրոնաւորութեան, ուղարկեցաք Իզմիր նվիրակ>>³⁹¹, գրում է Ավետիքը:

³⁹⁰ Լեո, Երկերի ժողովածու, հ. երրորդ, գիրք առաջին, էջ 134:

³⁹¹ Կենսագրություն Աւետիք պատրիարքի, էջ 155: Մարտիրոս Քյուլիանճու ոչ վաղ անցյալից, երբ իր բարերար Ավետիք պատրիարքը բացահայտել էր <<անոր խարդախութիւններն ու գողութիւնները>> (Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2737), դժվար չէ մակաբերել, թե պատրիարքի աչքից հեռու՝ նա որքան ազատություն կտար իր ձեռքերին:

Պետք է կարծել, որ այս դեպքում Մարտիրոսը Ձմյունիա է ուղարկվել ոչ թե իբրև Կ. Պոլսի պատրիարքության, այլ Երուսաղեմի պատրիարքության նվիրակ: Ավետիքն այդպիսի նշանակում անելու իրավունք ուներ, որովհետև նրա ժամանակներում Երուսաղեմի պատրիարքությունը փաստորեն կցված էր Կ. Պոլսի պատրիարքությանը և Ավետիքը հանդես էր գալիս իբրև միանգամայն Երուսաղեմի պատրիարք³⁹²:

Այսուհանդերձ, ի հնուց անտի ճանաչված էր Երուսաղեմի պատրիարքության իրավունքը՝ նվիրակ ուղարկել Օսմանյան Թուրքիայում գտնվող թեմերը: 1741 թ. ևս Սրբոց Հակոբյանց վանքը Ձմյունիա է ուղարկել իր նվիրակին՝ Սարգսին³⁹³, իսկ 1805 թ. հիշվում է Երուսաղեմի մեկ այլ նվիրակ՝ Պողոս Գրիգորյանը³⁹⁴:

XVIII դ. առաջին կեսի մի վավերագրում Երուսաղեմի նվիրակական իրավասության մեջ մտնող վիճակների ու թեմերի քաղաքների շարքում (Ռումելի, Կաֆա, Էնկյուրի, Վան և այլն) հիշվում է նաև <<Իզմիրու թեմը>>³⁹⁵:

Նվիրակական այցելություններից կամ նվիրակների վարքագծից ավելի կարևորը կար. հայ եկեղեցական կենտրոններում պայքար էր ընթանում թեմերի, հատկապես հարուստ թեմերի յուրացման համար: Էջմիածնի կաթողիկոսները, սկսած Փիլիպոսից և Հակոբ Ջուղայեցուց և վերջացրած Սիմեոն Երևանցիով ու Ղուկաս Կարնեցիով, համառորեն պաշտպանում էին Մայր աթոռի իրավունքները օսմանյան տարածքների վիճակներում: Եթե Փիլիպոսի և Հակոբ Ջուղայեցու համար բախումների առաջավոր բնագիծը Սսի և Երուսաղեմի աթոռներն էին՝ Էջմիած-

³⁹² Երուսաղեմի հայոց վանքի պատմագիր Հովհ. Հաննան Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների միացումը համարում է անխիղճ մարդկանց գործ, ովքեր թելադրվել էին << ի հորեն իւրեանց սատանայէ եւ ի կամարարաց նորին>>, անշուշտ, նկատի ունենալով XVII դ. վերջերի և XVIII դ. սկզբների պոլսահայ աշխարհիկ ու կղերական շահամուլ գործիչներին, ովքեր հմայված էին Երուսաղեմի ուխտավորներից ակնկալվող ոսկիների շողարձակումներով (Յովհաննէ Հաննա, Գիրք պատմութեան, էջ 119):

³⁹³ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 2931:

³⁹⁴ Տես Մրմըրեան Հ., Ստուերք հին դեմքերու, էջ 40:

³⁹⁵ Տես Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Թ, էջ 523:

նի կարգավիճակը թեմերում ամրապնդելու կամ կորսվածները հետ բերելու համար (հատկապես Էջմիածին-Եղիազար Այնթափցի հակամարտությունը 1650-1660-ական թթ.), ապա Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների ժամանակ (1760-1790-ական թթ.) հանուն թեմերի պահպանության խնդիրը վերաբերում էր արդեն գորեղացած նոր ընդդիմախոսի՝ Կ. Պոլսի պատրիարքության և մասամբ՝ Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության հետ ընդհարումներին: Զմյուռնիան՝ իր շրջակայքի թեմերով և համեմատաբար բարվոք կարողություններով ու հարուստ վաճառականությամբ, չէր կարող կովախնձոր չդառնալ Մայր աթոռի և Կ. Պոլսի պատրիարքության միջև՝ մասնավորապես Կոլոտ Հովհաննես պատրիարքի (1715-1741) ժամանակներից ի վեր: Անդրադառնալով այս տևական հակամարտությանը՝ Սիմեոն Երևանցին գրում է իրեն հատուկ անմիջականությամբ. <<Ձի վասն Զմիւռնիոյ քաղաքին որ է տէրունի թեմ Սրբոյ Աթոռոյս զնայ և առաջնորդ ևս կոչի (որ է այսպէս մինչև ցայսօր), Պոլսոյ պատրիարգունքն մախային միշտ և մոմռային անդադար զի ի կողմն իւրեանց արկցեն որպէս զի և զնորին առաջնորդն ինքեանք առաքեսցեն ... պատճառելով թէ թագաւորն թէՖթիշ (ստուգում, քննություն-Ա. Խ.) առնէ և զմախթուն (արքունական հարկը՝ մուքաթա՝ան-Ա. Խ.) խնդրէ ի մէնջ և թէ ի Պարսկաստան նստի կաթողիկոսն և յիմ երկիրս առաջնորդ առաքէ առանց ֆարմանի: Եւ զայլս այլիսիս ստապաճոյճ յողեալ ասէին միշտ: Ապա ի վերոյ գրեալ թուոջն յորում նստաւ Յակովբ կաթողիկոսն Շամախեցի (իմա 1759 թ.-Ա.Խ.) մեք ի Պօլիս նուիրակ էաք և սոյն վէճս ևս յարոյց տեղոյ պատրիարգ Յակովբ վարդապետս... մինչ գրէթէ առնուլ կամէր զԻգմիր>>³⁹⁶:

Զուտ արքունական հարկի տեսակետից, ինչը երևում է Սիմեոնի վիճակագրական տվյալներում, Զմյուռնիան և նրա թեմերը սուլթանական զանձարանին վճարում էին 4 հազար ստակ կամ 33 դուրուշ, իսկ Օսմանյան Թուրքիայի Էջմիածնական մյուս թեմերը միասին վերցրած՝ 57 դուրուշ (խոսքը միշտ վերաբերում է միանվագ վճարին, որ արվում էր կաթողիկոսի բերաթը ստանալու համար): Հատկապես Սիմեոնի ջանքերով Հակոբ Շամախեցու վճարած մուքաթա՝այի մեջ մտցվում է նաև Զմյուռնիայի թեմի համար տրվող չափաբաժինը (<<չորս հազար ստակ որ է երեսուն և երեք դուռուշ, ԺԳ փարայ և Ա ստակ>>) և այդպիսով ամբողջ հարկը հասցնելով տասն հազար ութ հարյուր ստակի կամ 90 դու-

³⁹⁶ Սիմեոն կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 236-237:

րուշի, որով <<եղև սովորութիւն յայնմ հետե զի ի մեջ կաթողիկոսական բերաթին Իզմիր ևս յատուկ գրիցի... Այս յատաք զձայն նոցին յականջաց կաթողիկոսացն որք ոչ ևս կարեն ի բերան բերել Զմիտին>>³⁹⁷, -հարում է Սիմեոն Երևանցին:

<<Զամբո>>-ում և առհասարակ մեզ հասած մյուս վավերագրերում ու գրականության մեջ նկարագծվում է այս հոգևորականի հույժ արդյունավետ գործունեությունը ինչպես Կ. Պոլսում էջմիածնական նվիրակի պաշտոնում, այնպես էլ կաթողիկոսանալուց (1763) հետո: XVIII դ. էջմիածնի կաթողիկոսների մեջ նա առանձնանում է որպես խոշոր անհատականություն, կայուն համոզմունքների տեր եկեղեցական, ում նպատակը հայ եկեղեցու միասնության գաղափարն էր և նրա հեղինակության բարձրացումը: Լինելով ճարտասան քարոզիչ, նա օժտված էր դիմացինին, այդ թվում իր եռանդուն ընդդիմախոսներին համոզելու, իսկ եթե անհրաժեշտ էր՝ նրանց ըմբերանելու անվիճելի կարողությամբ: Հայտնի է Կ. Պոլսի պատրիարք Հ. Նալյանի՝ նրան տված սրամիտ բնութագրականը, երբ պատրիարքը, որպես քարոզիչ, փարթամ մորուքով Մովսես վարդապետից գերադասում է անմորուս (Քեռուկ) Սիմեոնին. <<Քարոզ կուզեք՝ Քեռուկ, մորուք կուզեք՝ Մօսէս>>³⁹⁸:

Հայտնի են նաև Սիմեոն Երևանցու բարեփոխումները էջմիածնի հոգևոր կառավարման, վանքի վիճակի և նյութական բարելավումների, շինարարության, տպագրական-հրատարակչական գործը զարգացնելու ասպարեզներում: Ավելացնենք, որ նրան փառաբանող բնութագիրը, որ առկա է <<Զամբո>>-ում, նա ինքը չէր կարող հեղինակել, որչափով իր այդ աշխատության մեջ նա չափազանց հեռու է ինքնամեծարումից:

³⁹⁷ Սիմեոն կաթողիկոս, նշվ. աշխ., էջ 237: Կաթողիկոսը, իսկապես, համառության շնորհիվ հասել էր իր նպատակին. նրա անվամբ տրված սուլթանական ֆերմանում արձանագրված է ճիշտ իր նշած գումարը՝ <<կաթողիկոսական ընծայն որ է 10800 ըստակ, հասաւ մեր գանձարանին>>, ասված է այստեղ (Լեո, Հայոց պատմություն, հ. III, գիրք I, էջ 141): Ավելացնենք, որ այս կաթողիկոսը համառ պայքար է մղել պոլսահայ կրոնական ու աշխարհիկ ջոջերի դեմ, ովքեր փորձում էին յուրացնել էջմիածնի թեմերը Օսմանյան Թուրքիայում, այդ թվում և Ախալցխայի թեմը՝ <<Որպէս ահա արդէն սկսեալ են խորխտալ ի յարտաքին տեղիսն ի վերայ նուիրակացն եւ մարդկացն մերոց՝ որպէս յանցելումն արարին յԱխլցխայ...>>, գրում է կաթողիկոսն իր հիշատակարանում (Դիւան հայոց պատմութեան, Գիրք ԺԱ, Սիմեոն կաթողիկոսի յիշատակարանը, էջ 399):

³⁹⁸ Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, էջ հղ:

Այդ բնութագիրը, ինչպես շատ հիմնավոր նկատում է Մ. Օրմանյանը, <<ուրիշ գրիչէ <<Ջամբոին>> մեջ մուծուած է>>³⁹⁹:

Կ. Պոլսում իր նվիրակության տարիներին ապագա կաթողիկոսը հի-րավի, հանգամանորեն ծանոթացավ պոլսահայ իրականությանը, ամի-րաների՝ օսմանյան արքունիքում ունեցած դիրքին, վերելքներին ու ան-կումներին: Կրթված և ուսյալ այդ եկեղեցականը չէր կարող չտեսնել և հաշտվել այն իրողության հետ, որ Կ. Պոլսի պատրիարքությունը, որ Փիլիպոս և Հակոբ Զուղայեցի կաթողիկոսների ժամանակ ըստ ամենայ-նի ականածում և գրեթե առանց առարկության ընդունում էր Էջմիածնի ուղղորդող նշանակությունը հայ եկեղեցու նվիրապետության մեջ, այժմ փոխատեղել է իր դիրքը թուլացած Էջմիածնի հետ ունեցած իր հարա-բերություններում: Հովհաննես Կոլոտի ժամանակներից պատրիար-քությունն ուժեղանում էր և Երուսաղեմում, և Սսի ու Աղթամարի թեմե-րի հետ իր առնչություններում: Դրա վկայություններից էր այն, որ Կ. Պոլսում կաթողիկոս օծվեց Կարապետ Ուլնեցին (1726): Դարձյալ Կ. Պոլսում հոգևոր և աշխարհիկ վերնախավի որոշմամբ էր, որ կաթողի-կոս էր ընտրվելու Աղեքսանդր Բյուզանդացին (1753), նույն մեծամեծնե-րի ժողովի թելադրանքով և Էջմիածնի միաբանների որոշմամբ էր, որ կաթողիկոս ճանաչվեց Սահակ Ահագինը (1756), ով Էջմիածին չմեկնեց և հրաժարվեց կաթողիկոսությունից⁴⁰⁰:

Կարապետ Ուլնեցու ընտրությունից սկսած, Էջմիածնի կաթողիկոս-ները հաստատվում էին սուլթանական ֆերմանով (բերաթով)⁴⁰¹, որի համար հիմք էր հանդիսանում Կ. Պոլսի պատրիարքի միջնորդագիրը, և որը նույնպես, որպես Էջմիածնի իրավունքների ոտնահարում, չէր կա-րող լռելյայն կուլ տալ <<Ջամբո>>-ի պատվախնդիր հեղինակը: Կ. Պոլսի պատրիարքության գորեղացմանը և մի հայտնի չափով Էջմիածնի ուժի ու հմայքի նվազեցմանը նպաստեց 1724 թ. պարսկական նախկին նահանգների գրավումը թուրքերի կողմից, որը դարձավ Էջմիածինը օս-մանյան հարկային համակարգ ընդգրկելու գործոն և իրավական հիմք՝ նրա նկատմամբ Կ. Պոլսի պատրիարքության ազդեցությունը ուժեղաց-նելու համար: Այստեղից՝ Սիմեոն Երևանցու հակակրական, երբեմն ըն-դոստ առարկումները Կոլոտ և Նալյան պատրիարքներին, և որպես կա-թողիկոս, հանդուգն ու բացահայտ փորձերը՝ վերականգնելու Էջմիած-

³⁹⁹ Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 3503-3504:

⁴⁰⁰ Նույն տեղում, էջ 3454:

⁴⁰¹ Սիմեոն կաթողիկոս Երևանցի, նշվ. աշխ., էջ 329:

նի երբեմնի ազդեցությունը Կ. Պոլսի պատրիարքության վրա, ամրապնդելու առաջինի դիրքն ու համարումը երեքացող էջմիածնական նվիրակական ու տերունի թեմերում: Անշուշտ, այդ ձգտումներն իրական հիմքեր կարող էին ունենալ այն չափով, որչափով արդեն 1735 թ. Արևելյան Հայաստանում վերահաստատվեց պարսկական տիրապետությունը և էջմիածինը դուրս եկավ օսմանյան հարկային համակարգից: 1764 թ., արդեն կաթողիկոս, Սիմեոն Երևանցին անցավ գործնական քայլերի՝ մրցակից պատրիարքությանն իր տեղը ցույց տալու և էջմիածնի գերակայությունը շեշտակի բարձրացնելու նպատակով: Կ. Պոլսի ազգայիններին նա առաջարկեց այնտեղ էջմիածնի նվիրակի կողքին հաստատել կաթողիկոսական փոխանորդի ինստիտուտ, որը փաստորեն, նշանակելու էր էջմիածնական վերահսկողություն պատրիարքության նկատմամբ: Մտահղացումը բնականաբար, պետք է ձախողվեր օսմանյան կառավարության, հետևաբար և ամիրաների կտրուկ առարկությունների պայմաններում. կաթողիկոսի ներկայացուցիչ Աբր. եպ. Աստապատցին՝ Զմյուռնիայի առաջնորդը, պարզապես արտաքսվեց Թուրքիայի սահմաններից: Ավելին, կարելի է կարծել՝ անկամ և ամիրաներին անմոռուչ ենթարկվող Գրիգոր Պասմաճյան վարդապետը նույն իշխանամետ ամիրաների կամքով դիմեց ինքնատիպ դեմարշի: Կաթողիկոսին նա առաջարկում էր, որ նա իրեն՝ պատրիարքին, եպիսկոպոսական ձեռնադրության իրավունք շնորհի: Այդպիսի իրավասությունը, սակայն, ավանդաբար էջմիածնին էր պատկանում և այժմ մերժելու հերթը հասել էր կաթողիկոսին⁴⁰²:

Վերադառնանք, սակայն, Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդների գործունեության ասպարեզին: Նվիրակական հարկերն ու տուրքերը գանձելու համար նրանք, ըստ օրինի՝ երեք տարին մեկ շրջագայության էին դուրս գալիս թեմերում՝ Այդընում (Կյուզելիսար), Մանիսայում, Մենեմենում, Բերգամայում, Էոդեմիշում, Աքիսարում, Դենիզլիում և այլուր՝ բաժանելով էջմիածնի կողմից ուղարկված մյուռոնը: Այստեղ, ի դեպ, նկատենք, որ նվիրակական գանձումների համար Զմյուռնիայի տերունի թեմի (կարելի է կարծել նաև Օսմանյան Թուրքիայի մյուս տերունի թեմերի) առաջնորդը պետք է ստանար ոչ միայն էջմիածնի հրահանգը, այլև Կ. Պոլսի հայոց պատրիարքի կոնդակը, և այս՝ կարծում ենք, վերջինիս վերապահված այն իրավասությունների շարքից, որով

⁴⁰² Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 3522-3523:

պատրիարքությունը սահմանափակում էր էջմիածնի գործողություններին ազատությունն այդ երկրում և որը ժամանակին այնքան սրտնեղություն էր պատճառել Միմեոն կաթողիկոսին: Հետևաբար, շատ հավանական է, որ պատրիարքների այդ իրավունքը սկսել է գործել Հովհաննես Կոլոտի կամ Հակոբ Նալյանի ժամանակներից: Համենայն դեպս, առաջնորդի՝ նվիրակական հարկերն ու տուրքերը հավաքելու համար պատրիարքական կոնդակ ստանալու պարտականությունը, որպես կանոն, գործում էր XIX դ. առաջին քառորդին, Ջմյուռնիայի տերունի թեմի գոյության վերջին շրջանում: Ժամանակակիցներից մեկը՝ ոմն Հակոբ Պոդոս, 1820 թ. սեպտեմբերին արքեպ. Կարապետին ուղղած նամակում արձանագրում էր այդ իրողությունը. <<Իսկ վասն ժողովարարութեան գործոյն որ ի կողմանս Ուռումելի և ի Ջմիւռնոյ, խնդրել կամեցեալ կոնդակ մի ի սրբազան պատրիարգէն՝ ունելով յատուկ ևս նամակ վասն այնր իրի առ սրբազանն>>⁴⁰³:

Անշուշտ, միշտ չէ, որ նվիրակները (առաջնորդները) ամփոփվում էին երեք տարվա սահմաններում, և նման դեպքերում, ելնելով Ս. Աթոռի նպատակահարմարությունից (քաղաքական խառնակ իրավիճակ, գործող առաջնորդի պաշտոնի շարունակության անհրաժեշտություն՝ ի տրիտուր անհետաձգելի գործերի և այլն), պաշտոնավարությունը շարունակվում էր: Կանոնական ժամկետի խախտումը պետք էր հիմնավորել, ուստի սովորաբար թեմի ժողովրդի կողմից կաթողիկոսին էր ուղղվում մահսերական (հանրագիր)՝ առաջնորդի պաշտոնավարությունը երկարաձգելու ցանկությամբ և համապատասխան փաստարկներով: Այսպես, Ղուկաս Կարնեցու առաջնորդությունը Ջմյուռնիայում տևել է 11 տարի՝ 1764-1775 թթ.⁴⁰⁴, Դանիելինը՝ 4 տարի (1793-1797)⁴⁰⁵: Ընդգծված մրցանիշ է սահմանել Մարտիրոս արք. -ը⁴⁰⁶՝ Ջմյուռնիայում իր պաշտոնավարությունը շարունակելով (ընդհատումներով) 19 տարի (1797-1816):

⁴⁰³ ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163, վավ. 369:

⁴⁰⁴ Տես Դիւան հայոց պատմութեան, Միմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, գիրք Ը, էջ 203: ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 22:

⁴⁰⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 273, վավ. 75: Տես նաև Երիցեան Աղ., Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար, Թիֆլիս, 1877, էջ 27:

⁴⁰⁶ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 151: Երիցեան Աղ., նույն տեղում:

Ի դեպ, հավանաբար մտահոգված լինելով առաջնորդական շրջանի այսպիսի խախտումներով, Էջմիածինը Եփրեմ կաթողիկոսի ժամանակ մշակել է <<Յաղագս նուիրակաց Մբոյ Կթուղկէ Էջմիածնի>> փաստաթուղթը՝ առաջնորդվելով նշված եռամյա ժամկետը պահպանելու դրույթով. <<Ձի թեպէտ և ժամանակ շրջագայելոյ նուիրակաց ի վիճակի իւրեանց պայմանեալ է լինիլ երեք ամ, բայց ըստ չափու քանակութեան վիճակի իւրեանց՝ արժան է զի նուիրակունք ինքեանք փոյթ կալցին արժանաւորապէս տնօրինել զչափ ժամանակի կատարման պաշտօնի իւրեանց և դառնալ յետս>>⁴⁰⁷:

Դարձյալ վերոհիշյալ՝ չնախատեսված արտաքո կարգի և կամ էլ զմյուռնահայ համայնքում երկպառակությունների պատճառներով, առաջնորդները կարող էին չլրացնել եռամյա ժամկետը՝ հետ կանչվելով Էջմիածին և իրենց տեղը զիջելով նորանշանակ մեկի: Այսպիսով, անկախ Էջմիածնի կողմից առաջնորդական ժամկետը կայունացնելու ջանքերին, մեզ հայտնի տվյալները ցույց են տալիս, որ այդ ոչ միշտ է հաջողվել:

Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդի պարտականության մեջ էր մտնում նաև Տաթևի վանքի կալվածքներից ստացվող արդյունքների գանձումը: Այդ վանքը կալվածքներ ուներ Քրքաղաչում, Նազիլիում և Էոդեմիշում: Զմյուռնիայի տերունի թեմի վերջին առաջնորդ Ստեփան արք. Ենովքյանի մի գրության մեջ (1824 թ. հունվար) հենց այդպես էլ նշվում է՝ <<վասն արդեանց գանձանակական Տաթևոյ վանից գոր ամենայն ջանիւ կատարել պարտական եմք>>⁴⁰⁸: Նկատենք, որ Տաթևի վանքի սեփականությունները տերունի թեմում ամենևին էլ պատահական երևույթ չէին, հատկապես շրջակա բնակավայրերում, որտեղ ապրում էին դեռևս XVII դ. սկզբներից Սյունիքից եկած գաղթականների սերունդները, ովքեր հնամենի առնչություններ ունեին այդ վանքի հետ: Ստ. Ենովքյանը գրում է, որ հօգուտ Տաթևի վանքի, Էոդեմիշից և Նազիլիից ստացել է 1248 դուրուշ, որ ուղարկել են վանքի գանձապետները⁴⁰⁹: Առաջնորդների նվիրակական այցերը կարող էին տևել մեկից ավելի տարիներ: Առաջնորդ Փիլիպոսն իր շրջագայությունը թեմի բնակավայրերում սկսել էր 1816 թ. նոյեմբերի 12-ին՝ Մանիսայից և ավարտել

⁴⁰⁷ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22, վավ. 134:

⁴⁰⁸ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 48, վավ. 221:

⁴⁰⁹ Նույն տեղում:

1818 թ. նոյեմբերի 29-ին՝ Գնըքում⁴¹⁰: Հարկերի և տուրքերի հետ միասին առաջնորդն ընդունում էր կաթողիկոսական և Ս. Աթոռի միաբանությամբ տրված նվիրատվությունները՝ նաև ապրանքային տեսքով: Դրանց վերաբերյալ նրանք հաշվետվություն էին առաքում Էջմիածին:

Արտատարածական կարգավիճակ ունենալով՝ ի դեմս աշխարհասփյուռ իր վիճակների ու թեմերի, Էջմիածնի կաթողիկոսությունը պետք է գործեր առաջին հերթին այնպիսի գործոնների թելադրանքով, ինչպիսիք ունեին քաղաքական բնույթ: Նվիրակական և տերունի թեմերը, հիմքում ունենալով սեփականատիրական որոշակի տարբերություններ, միաժամանակ արտացոլում էին Ս. Աթոռի քաղաքական յուրօրինակ փոխհարաբերությունները Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հետ, որոնք անմիջական կախում ունեին հայ հանրությունների նկատմամբ այդ երկրների ունեցած վերաբերմունքից: Դրա հետ միասին գործոն էին դառնում նաև այդպիսի վերաբերմունքի պայմաններում իր դիրքն ու ազդեցությունը պահպանելուն ուղղված Էջմիածնի առավել կամ նվազ հաջողությունները: Այս տեսակետից տերունի թեմերը, համեմատած նվիրակական թեմերի հետ, արձանագրում էին Էջմիածնի առավել զգալի հնարավորությունները, որչափով ընդգրկում էին ոչ միայն օտար պետությունների կողմից նրա կրոնադավանական ինքնության, այլև կրոնական վարչական իրավասությունների (Էջմիածնի մշտական ներկայությունը թեմերում, առաջնորդի, որպես համայնքի ներկայացուցչի փոխհարաբերությունները տեղական իշխանությունների հետ) ճանաչումը: Օսմանյան Թուրքիայում, որտեղ այդ ճանաչումն ուներ ոչ իրավաչափ բնույթ՝ կախված այլահավատ հպատակների ու նրանց կրոնական կառույցների համեմատությամբ պետության և տիտղոսավոր կրոնի բացարձակ գերակայությունից ու նրանց ճնշելու քաղաքականությունից, այդ ճանաչումը ձևակերպվում էր համապատասխան իրավական հիմունքներով:

XVIII դ. Էջմիածնի տերունական իրավասությունները հանդիպելու էին լուրջ փորձության՝ կապված թուրք-պարսկական ռազմական առճակատումների և առհասարակ միջպետական հակասությունների հետ: Կ. Պոլսի պատրիարքության ակտիվացումը մայրաքաղաքից դուրս և առաջին հերթին օսմանյան գավառների հայ կրոնական հան-

⁴¹⁰ Նույն տեղում, թղթ. 29, վավ. 160:

րություններում՝ խրախուսվում էր կենտրոնաձիգ քաղաքականություն վարող օսմանյան պետության կողմից: Եղիազար Այնթափցու հակաթոռ և էջմիածնական թեմերին տիրելու պառակտչական գործունեությունը ընդամենը մանկական խաղեր էին XVIII առաջին քառորդից ծայր առած իրողությունների համեմատ: Միլեթների նկատմամբ Բ. դռան կենտրոնաձիգ քաղաքականությունը պետք է ընդլայներ Կ. Պոլսի պատրիարքության կարողությունները՝ այդ թվում և ի հաշիվ էջմիածնի ավանդական իրավունքների: Կարապետ Ուլնեցու (1726), այնուհետև Ադեքսանդր Բյուզանդացու (1753) և Սահակ Ահագնի (1756) կաթողիկոսական ընտրությունները Կ. Պոլսում՝ երեք դեպքերում էլ վկայում էին այդ կարողությունների նոր որակի մասին: Էջմիածնի և Կ. Պոլսի պատրիարքության փոխհարաբերություններում տեղ գտած այս փոփոխությունները, ի հայտ եկան, Կարապետ Ուլնեցու ժամանակից, երբ կաթողիկոսի իրավունքները ամրագրող սուլթանական ֆերմանը սկսեց տրվել միայն Կ. Պոլսի պատրիարքի միջնորդությունից հետո, որով ամենաքիչը՝ ընդգծվում էր վերջինիս անկախ և նախապատիվ դիրքը Օսմանյան Թուրքիայում՝ կաթողիկոսության նկատմամբ: Այդպիսիք էին նաև պատրիարքության փորձերը սուլթան Մուստաֆա Գ-ի (1757-1774) ժամանակ խլելու Թուրքիայի վիճակները Էջմիածնից, այդ թվում և Զմյուռնիայի թեմը, որին անդրադարձանք վերը: Այս իրողությունները ցասկոտ տողերով է գնահատում Ս. Աթոռի իրավունքների նախանձախնդիր Միմեոն կաթողիկոսը, սակայն, իր հասցեագրումներն ուղղելով պատրիարք Հովհաննես Կոլոտին, մինչդեռ վերջինս ընդամենը ի պաշտոնե պետք է համակերպվեր Էջմիածնի հանդեպ օսմանյան փոփոխվող քաղաքականությանը: Այս առթիվ պաշտպանելով Կոլոտին Միմեոնի հարձակումներից, Մ. Օրմանյանը իրավացիորեն և իրեն հատուկ զգուշավորությամբ նկատում է, որ <<Կոլոտ ոչ մի կերպով Մայր աթոռի իրաւունքներուն վնասել ուզած չէր, եւ իր գործն ալ միջնորդի դերէն անդին չէր անցներ>>⁴¹¹:

Այսուհանդերձ, կարելի է կարծել, Մ. Օրմանյանը, իր հերթին, բավական միանշանակ է Միմեոն կաթողիկոսին տված բնութագրում, լիովին անտեսելով այն հանգամանքը, որ կաթողիկոսը կոչված էր պաշտպանելու Էջմիածնի իրավունքները Թուրքիայում և որ Ս. Աթոռը, դարձյալ քաղաքական հանգամանքների շնորհիվ, կարողացավ ձերբազատվել

⁴¹¹ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3294:

Կ. Պոլսում կաթողիկոսների ընտրության՝ կարգ և ավանդույթ դառնալու սպառնացող վտանգից, սակայն ի գործու չեղավ ամբողջովին վերականգնել իր երբեմնի իրավունքները: Էջմիածինն արտահայտում էր իրերի այդպիսի դրության դեմ ուղղված իր խորին դժգոհությունը, որ կտրուկ փոխել էր պատրիարքության հետ նրա փոխհարաբերությունների ավանդական բնույթը՝ ի վնաս իրեն, և որի դեմ բողոքում էր այդ <<վշտակոծ կաթողիկոսը>>:

Տերունի թեմերի համար պատրիարքության և Էջմիածնի, Աղթամարի և Էջմիածնի, նաև Էջմիածնի և Գանձասարի միջև պայքարը շարունակվում էր Ղուկաս կաթողիկոսի ժամանակ և այս իմաստով չի կարելի ասել, որ Էջմիածինը միայն կորուստներ էր ունենում: Միմեոն Երևանցին Էջմիածնին էր վերադարձրել Զմյուռնիան, այլև ձեռք էր բերել նոր տերունի թեմ Օսմանյան Թուրքիայում՝ Կարսը⁴¹²: Բայց սրանք միջադեպային հաջողություններ էին, որոնք արտացոլում էին երևույթի հակասական ընթացքը և ամենին էլ ոչ՝ տիրապետող դարձած ուղղությունը, այն է՝ Թուրքիայի քաղաքական կտրուկ ուղղվածությունը միլեթներում, այդ թվում և հայ միլեթում միակ և բացարձակ թելադրող դառնալու, հատկապես օտար միջամտություններից դրանք զերծ պահելու սկզբունքով: Դրա վկայությունն էին երկրում կաթողիկական դավանանքի տարածման դեմ ուղղված՝ հաճախ նույնիսկ արտաքո կարգի միջոցառումները՝ ընդհուպ մինչև հալածանքներ և վերահսկողության աստիճանական խստացումները միլեթների գլուխների և ազգային վարչությունների նկատմամբ: Այս պայմաններում դարձյալ ուշադրության կենտրոնում պետք է հայտնվեին նաև Էջմիածնի կաթողիկոսների և սեփականությունների խնդիրները, որտեղ առաջին բնագծում էին հայտնվելու տերունի թեմերը: Այդ խնդիրը պետք է լուծվեր 1824 թ., դարձյալ Բ. դռանը սաստիկ մտահոգող՝ հունական ապստամբության և թուրք-պարսկական փոփոխված հարաբերությունների շրջանում: Այսպիսի իրադրության մեջ էին գործելու կաթողիկոս Եփրեմը և Էջմիածնի սեփականությունները վերահսկող Ներսես Աշտարակեցին, ինչպես և Զմյուռնիայի թեմի վերջին առաջնորդ-նվիրակ, արքեպ. Ստ. Ենուվքյանը (1821-1824)՝ Օսմանյան Թուրքիայում Էջմիածնի նվիրական և տերունական իրավունքների վերացման փուլում:

⁴¹² Միմեոն կաթողիկոս Երևանցի, նշվ. աշխ., էջ 53:

Արք. Ստ. Ենովքյանը Ձմյուռնիայում իր առաջնորդական պաշտոնավարումը սկսեց 1821 թ. հունվարից, երբ նրա հետ էջմիածինը Թուրքիա՝ նվիրակության էր ուղարկել ևս երկու հոգևորականների, Հովհ. Կարբեցուն՝ Կ. Պոլիս և Ստ. Տեղապահյանին՝ Ռումելի: Պատրիարքի և ամիրանների ժողովը վավերացրել էր այդ նշանակումները⁴¹³: Ստ. Ենովքյանը փոխարինել էր արքեպ. Փիլիպոսին: Հիմնականում առանց միջադեպերի անցած՝ նրա առաջնորդական գործերը սկսեցին խառնակվել պաշտոնավարման վերջին՝ երրորդ տարում, երբ օսմանյան պետությունը 1821-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմի ավարտին կամ դրանից քիչ անց հարկ համարեց վերանայել հարաբերությունները իր ռազմական հակառակորդ Պարսկաստանին ենթակա էջմիածնի հետ: Վերջինս թուրքերի աչքին կասկածելի էր դարձել առհասարակ պարսիկների տարածքում գտնվելու, ուրեմն և պարսկամետ կողմնորոշումների պատճառով. հարկ էր նվազագույնի հասցնել նրա ազդեցությունը Թուրքիայում՝ այստեղ վերացնելով տերունի թեմերը: Այս հարցում Բ. դուռը նախընտրեց զգուշավոր գործելակերպը: Համենայն դեպս, թուրքական իշխանությունները խստացրեցին Ձմյուռնիայի հայոց առաջնորդարանի վերահսկողությունը: 1824 թ. օգոստոսի 21-ին առաջնորդն այս մասին հայտնում էր Ներսես Աշտարակեցուն. <<ի յաճախելոյ յառաջնորդարանն յայս միջոց երթեակութիւն այլազգեաց (թուրքերի-Ա. Խ.) և յայլոց, թերևս ևս ծպտելոց և ի զննին շրջելոց, որպէս և ի Պոլսոյ պատուիրեալ էին զայնպիսիս ըստ իւրաքանչիւր կարգի սիրաշահել>>⁴¹⁴:

Բոլոր դեպքերում, 1824 թ. վերջերին օսմանյան իշխանությունները կայացրել էին <<մեծ նվիրակություններում>>՝ Կ. Պոլսում և Ձմյուռնիայում տերունի թեմերը վերացնելու որոշումը, որին, թվում է, դեռևս անտեղյակ էին զմյուռնացիները, անգամ այն բանից հետո, երբ Ստ. Ենովքյանին իշխանությունները հարկադրեցին կամովին հրաժարական տալ (էջմիածնի հնարավոր բողոքները կանխելու նպատակով): Այս առումով ուշագրավ է զմյուռնացի հեղինակավոր վաճառականների՝ Կ. Աքչեյանի, Կ. Եղվարդյանի, Ավ. Էքիզյանի և նույն Ստ. Ենովքյանի նամակը (1825, 19 հունվարի) Կ. Պոլսում էջմիածնի նվիրակ Աստվածատուր սրբազանին, որում վերջինիս առաջարկում են <<կամաւ հրաժարեալ յառաջնորդական պաշտօնէ>> արք. Ենովքյանի փոխարեն ստանձնել

⁴¹³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 38, վավ. 108ա:

⁴¹⁴ ՄՄ, նույն տեղում, թղթ. 47, վավ. 137:

Զմյուռնիայի առաջնորդի պարտականությունները⁴¹⁵: Կնշանակի, Աստվածատուրը ևս պաշտոնաթող էր արվել, որ արդեն չէր կարող հայտնի չլինել զմյուռնացիներին, քանի որ, հակառակ դեպքում, այդպիսի հրավեր չէր լինի: Այսուհանդերձ, Էջմիածնին մնում էր կռահումներ անել զարգացող անբարենպաստ հանգամանքների վերաբերյալ և ինչ-ինչ քայլեր ձեռնարկել հատկապես Աստվածատուրի նույնպես հարկադրական պաշտոնանկությունից հետո: Ներսես Աշտարակեցու՝ Ստ. Ենովքյանին գրած մի նամակից (1824, 24 դեկտեմբերի) պարզվում է, որ վերջինս պետք է վերադառնար Էջմիածին՝ Կ. Պոլսի վրայով և այնտեղ Աստվածատուրի հետ ի շահ Էջմիածնի գործելու համար: Ներսեսը հատկապես զգուշացնում է Ստ. Ենովքյանին՝ Կ. Պոլսում լինել գաղտնապահ և զգուշանալ որևէ ավելորդ տեղեկություն տալուց. <<Զայս ձեզ աւանդեմ առ այժմ, զի ամենևին մինչև ցմտանելն ձեր ի Պօլիս, բացի համբաւոյ... եղելոց յաղագս համազգային ծանօթութեանց... մի բնաւ զնշմար իմն ցուցանել ունեք ախորժեսջիք, քանզի կասկածն հասարակաց, որոց վնասն գտանի նուիրակ սրբզն Ածատուր արքեպս. հայրն իմ դադարեցուցանել ի գործոց իւրոց՝ վասն ձեր գտանի առաւել ևս. կասկածելի մինչ դիմեալ զնայք ի սահմանաց աստի, ուստի ամենևին զգոյշ գոցիս>>⁴¹⁶:

Դրանից առաջ Ստ. Ենովքյանին ուղղված նամակում ևս (1824, 4 դեկտեմբերի) Ներսես Աշտարակեցին պատվիրում է խոհեմ լինել և առանց աղմուկի մտնել Կ. Պոլիս՝ անտեսելով այլոց խորհուրդները⁴¹⁷:

Ստեփանոս արք., ուրեմն, գործերից հետ է քաշվել դեռևս 1824 թ. վերջերին, ինչը պարզվում է ոչ միայն Ներսեսի վերոհիշյալ՝ դեկտեմբերի 4-ի և 24-ի նամակներով (Ստեփանոսի վերադարձի առթիվ նրան ուղղված հորդորներով), այլև իր՝ Ստեփանոսի 1825 թ. մայիսի 5-ի նամակով՝ ուղղված Կարապետ արքեպիսկոպոսին, որտեղ հայտնում է, որ <<Քանի յամսով յառաջ կամաւ հրաժարելով մեր ի պաշտօնէ վերատեսչութեան վիճակիս, առաջադրեցաք յիշխանացն (զմյուռնահայ երևելիներին-Ա.Խ.) զայլ ոք հովիւ հոգևոր>>⁴¹⁸:

Նամակից պարզվում է նաև, որ երևելիները Կ. Պոլսի նվիրակ արք. Աստվածատուրին դիմելուց հետո (և հավանաբար, նրա համաձայնությո-

⁴¹⁵ Նույն տեղում, թղթ. 51, վավ. 197:

⁴¹⁶ Նույն տեղում, թղթ. 166, վավ. 161:

⁴¹⁷ Նույն տեղում, թղթ. 166, վավ. 162:

⁴¹⁸ ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163 բ, վավ. 786:

յունը ստանալով) հանրագրով դիմել են Կ. Պոլսի պատրիարքին (Կարապետ Պալաթցուն)՝ որպես Զմյուռնիայի առաջնորդի առաջադրելով Աստվածատուրի թեկնածությունը: Պատրիարքը, սակայն, մերժում է այդ հանրագիրը և հայտնում, որ ամիրաների խորհրդով մտածում է Զմյուռնիա ուղարկել Պանտրմայի առաջնորդ Ստեփանոս (Աղավնի) արքեպիսկոպոսին իբրև փոխանորդ⁴¹⁹: Հույժ ուշագրավ է պատրիարքի հայտնած անսպասելի վճիռը. <<ըստ որում տնօրինեցաւ զի ամ[ենայն] նուիրակունք աթոռոյն Էջմիածնի որ յՕսմանեան տերութիւն են, գնասցեն անդ (Էջմիածին-Ա. Խ.) փութով>>⁴²⁰: Կարելի է եզրակացնել, որ Էջմիածնի նվիրակներին Օսմանյան Թուրքիայից արտաքսելու և նվիրակությունն այդ երկրում վերացնելու վճիռը կայացրել են հենց օսմանյան իշխանությունները՝ թուրք-պարսկական պատերազմի ավարտից բավական հետո, 1824 թ. վերջերին: Դրա հիմքում ընկած էր Բ. դռան ձգտումը՝ վերացնել Պարսկաստանի սահմաններում գտնվող Էջմիածնի որևէ ազդեցություն օսմանյան հայ հպատակների վրա և դրանով իսկ վերացնել պարսկական (և ոչ միայն պարսկական) քաղաքական ամեն մի ազդեցություն Թուրքիայում: Գործնականում այդ էր ակնարկում Կարապետ պատրիարքը՝ հայտնելով պետական վերին տնօրինության մասին: Այս առթիվ նկատենք, որ ժամանակային իմաստով փոքր-ինչ առաջ ընկնելով, Բայց և Բ. դռան շրջադարձը արձանագրող հեղինակը գրում է, որ 1826-1829 թթ. պարսկական և տաճկական պատերազմներից հետո <<Տաճկաստանի հայոց պաշտօնական յարաբերությունները Էջմիածնի կաթողիկոսական աթոռի հետ բոլորովին ընդհատուեցան. Մայր աթոռի միաբանները քշուեցան Տաճկաստանի սահմաններից և արգելուեցաւ նոցա, որ այլ ևս ոտք չկոխեն սուլթանի երկրները>>⁴²¹:

Այստեղ նկատենք, որ նշված պաշտոնական հարաբերությունները թուրքական կողմի նախաձեռնությամբ դադարել էին այդ պատերազմներից ոչ թե հետո, այլ առաջ՝ 1820- ականի սկզբների թուրք-պարսկական պատերազմից հետո, 1824 թ. վերջերին-1825 թ. սկզբներին, ինչը տեսնում ենք Թուրքիայից Էջմիածնի նվիրակներին վտարելու իրողությո-

⁴¹⁹ Հիրավի, Ս. Ենուքյանի հրաժարականից հետո Ստեփանոս Աղավնին Զմյուռնիայում նշանակվել է պատրիարքական փոխանորդ (տես Ասատուր Հ., Կոստանդնուպոլսյ հայերը, էջ 166:

⁴²⁰ ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163բ, վավ. 786:

⁴²¹ Սուրբ Էջմիածնի հայրապետական աթոռը և Տաճկաստանի Հայք, Փորձ, 1881, N 1, էջ 24:

յան մեջ: Եվ դարձյալ, պետք է նշել, որ 1825 թ. հունվարին Ստեփանոսը՝ Զմյուռնիայի տերունի թեմի վերջին առաջնորդը, արդեն հրաժարական էր տվել, ինչը վկայում է 1825 թ. հունվարի 14-ի թվակիր՝ զմյուռնահայ <<իշխաններին>> և <<կամաւ հրաժարեալ առաջնորդական պաշտօնէ>> Ստեփանոսի նամակը Եփրեմ կաթողիկոսին: Այստեղ ասվում է, որ առաջնորդի հրաժարականը ցանկացել են տեղի իշխանությունները (Բնականաբար, կատարելով Բ. դռան կամքը) և որ այդ <<ոչ ի նուազ տրտմութիւն արկանէ զմեզ՝ կամելով տարամերժել յիշխանութենէ աստի>>⁴²²:

Այսուհանդերձ, Ստեփանոս արք. չէր շտապում մեկնել Էջմիածին: Կարապետ արք. գրած իր նամակում (1825, 2 փետրվարի) նա հայտնում է, որ ինքը հրաժարական է տվել և ցանկանում է վերադառնալ, բայց սպասում է ինչ-որ մի վաճառականի, ում հետ հարկ է ավարտին հասցնել դրամական հաշիվները⁴²³: Իսկ Ներսես Աշտարակեցուն ուղղած նամակում (1825, 17 փետրվարի) հրաժարված առաջնորդը գրում է, որ <<արգելան նուիրակունք ի գործոց>>⁴²⁴: Արդեն Էջմիածնում, 1826 թ. մարտին Ռումելիի նախկին նվիրակ Տեղապահյանի հետ կազմած մի գրության մեջ Ստեփանոսը նշում է, որ Զմյուռնիայի տերունի թեմը Կ. Պոլսի պատրիարքությանն անցնելու կապակցությամբ իրենք Էջմիածնական կալվածքները (այդ թվում և Զմյուռնիայի շրջակայքում գտնվող) վերահսկող վեքիլ (տեղապահ) են նշանակել Չելիկյան Աստվածատուրին՝ <<գորդի հանգուցեալ մահտեսի Սարգիս Բազմաշխատ վեքիլ աղային, ընդ որում է Բազում ամաց հետէ յորդոց որդիս մտերմութիւն ունէին զայս գործ առ սէր լուսատու ծնողին (Էջմիածնին-Ա. Իս.) իւրեանց>>⁴²⁵:

Աստվածատուր և Ստեփանոս Տեղապահյան արքեպիսկոպոսներին, նաև՝ Ստեփանոս Ենովքյանի պաշտոնանկությամբ վերանում էին Էջմիածնի նվիրակական վիճակները Կ. Պոլսում և Ռումելիում ու տերունի թեմը՝ Զմյուռնիայում և նրա շրջակայքում: Ընդամին, վերջինս դադարելով տերունի թեմի կարգավիճակից, կցվում էր Կ. Պոլսի

⁴²² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 2:

⁴²³ ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163բ, վավ. 760: <<Մեք մտադրեալ եմք Աստուծով ելանել աստէն ոչ անագան, թէւ ժողովուրդն ոչ կամին բնաւ զի հրաժարեցայց յինքեանց>>, հավելում է արդեն նախկին առաջնորդը:

⁴²⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 51, վավ. 156:

⁴²⁵ Նույն տեղում, թղթ. 54, վավ. 293:

պատրիարքությանը, և այս փոփոխությունները, բնականաբար, կատարվեցին ոչ ամիրաների և ոչ էլ անհանդուրժող դարձած Կարապետ պատրիարքի նախաձեռնությամբ կամ տնօրինությամբ, այլ օսմանյան պետության որոշմամբ: Այնուհետև, Ձմյունիան ընդգրկվել է Կ. Պոլսի պատրիարքությանը ենթակա վիճակների ցանկում: Հետաքրքիր է այդ տերունի թեմը Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից կլանվելու իրավական ընթացքը: 1826 թ. մարտի 4-ին պատրիարքարանում գումարված ժողովում <<սահմանեցան կանոնք կարելորք ի կարգապահութիւն արքեպիսկոպոսական և առաջնորդական աթոռոց և այլոց ժառանգաւորաց>> և որ ուշագրավ է, լրություն է պահպանվում Ձմյունիայի առաջնորդական թեմի մասին: Ըստ երևութին, Բ. դուռը դեռևս պահը հարմար չի համարել արձանագրելու իր նոր, կտրուկ դիրքորոշումը Էջմիածնի նկատմամբ: Ավելի քան չորս տարի անց, պատրիարքարանի 1830 թ. նոյեմբերի 14-ի ժողովի որոշմամբ Օսմանյան Թուրքիայի հայոց արքեպիսկոպոսարանների մեջ հինգերորդ տեղում նշվում է. <<Արքեպիսկոպոսարան Ձմիւնիոյ որոյ աթոռանիստ եկեղեցին է Սբ Ստեփաննոս>>⁴²⁶:

Ձմյունիայի, ինչպես և Կ. Պոլսի տերունի թեմերի վերացումը հայ կրոնադավանական հանրության և Էջմիածնի նկատմամբ Բ. դռան նոր քաղաքականության արդյունքն էր, որի անմիջական խթանները եղան դրան նախորդող թուրք-պարսկական պատերազմը և 1820-ական թթ. հունական ազատագրական շարժումը, որոնք օսմանյան կառավարությանը մղեցին ուժեղացնել վերահսկողությունը իրեն ենթակա կրոնադավանական հանրությունների, այդ թվում և հայերի նկատմամբ:

Բ. դռան և Էջմիածնի միջև հարաբերությունների խզումը Աղ. Երիցյանը և նրա հետևությամբ, Մ. Օրմանյանը բացառապես կապում են ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացման և 1829 թ. ավարտված ռուս-թուրքական պատերազմի հետ: Աղ. Երիցյանը դրա պատճառն է համարում Ռուսաստանի և Բ. դռան միջև եղած <<անբավականությունը>>⁴²⁷: Մ. Օրմանյանն իր հերթին գրում է. <<Վերոյիշեալ 1828 թուականէ ասդին Էջմիածին Թուրքիոյ համար եպիսկոպոս չէր ձեռնադրած, միւռուն չէր բաշխած, նուիրակ չէր յուղարկած, նուէր և օգնու-

⁴²⁶ ՄՄ, Արխիվ զանազան հեղինակների, թղթ. 48, վավ. 45:

⁴²⁷ Երիցեան Աղ., Ամենայն հայոց կաթողիկոսությունը եւ Կովկասի հայք, հ. 2, էջ 31:

թիւն չէր ստացած, նոյնիսկ Էջմիածնապատկան կալուածներու եկամուտը չէր գանձած: Վերջին միւռնի օրհնութիւնը 1820-ին էր եղած...>>⁴²⁸:

Նշված կապերի խզումը, մինչդեռ, տեղի է ունեցել շատ ավելի վաղ՝ 1824 թ. վերջին, երբ, ինչպես տեսանք, Էջմիածնի նվիրակները արտաքսվելու էին Օսմանյան Թուրքիայի տարածքից: Անշուշտ, 1828-1829 թթ. պատերազմը ավելի բարդացրեց թուրքական կառավարողների և Ռուսաստանի, ուրեմն և վերջինիս տիրապետության տակ անցած Էջմիածնի փոխհարաբերությունները, բայց փաստերը ցույց են տալիս, որ Էջմիածինը Օսմանյան Թուրքիայի իր նվիրակություններից զրկվել է 1820-ականի թուրք-պարսկական պատերազմից հետո, 1824 թ., երբ Էջմիածինը գտնվում էր պարսկական ենթակայության ներքո, բնականաբար, իր պարսկամետ դիրքորոշման պատճառով հարուցելով Բ. դրան խորին դժգոհությունը:

2. Ձմյուռնիայի թեմի առաջնորդները (1610-ական թթ.-1872)

Ձմյուռնիայի առաջնորդների գավազանագրքի վերհանումը միահյուսված է Էջմիածնի տերունի թեմի և այնուհետև դրա, որպես կրոնական ինստիտուտի, դարավոր պատմությանը: Ընդգծելով առ այսօր քիչ ուսումնասիրված և ազգային հանրության հետ հարաբերվելու՝ Էջմիածնական այդ յուրահատուկ կառույցի ազգապահպան ու պատմական նշանակությունը, այստեղ կփորձենք շարունակել Ձմյուռնիայի առաջնորդների գավազանագրքի հետազոտությունը, որ սկիզբ է առնում մեր պատմագիտության երախտավորներ Հ. Քոսյանի, ապա Ա. Ալպոյաճյանի և Տ. եպ. Պալյանի ուսումնասիրություններով⁴²⁹:

Ձմյուռնիայի առաջնորդների ցանկը սկսենք այս հեղինակների ներկայացրած առաջնորդների բավական տարբեր հերթագայությամբ ու թվագրումներով՝ քննարկելով դրանք առանձին-առանձին: Նախապես նկատենք, որ Տ. Պալյանն այդ ցանկը սկսում է Հովսեփ վարդապետով,

⁴²⁸ Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Գ, Ա. Էջմիածին, 1911, էջ 4193:

⁴²⁹ Քոսեան Յ., Հայք ի Ձմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, էջ 114-116: Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, Բիւզանդիոն, 1904, 10/23, 10/25, 13/26, 14/27, 15/28, 16/29 ապրիլի: Նույնի՝ Իզմիրի հայոց առաջնորդները, Դափնի, 1922, թիւ 9, էջ 280-282: Պալեան Տ. եպ., Գաւազանագիրք առաջնորդաց Ձմիւռնիոյ, Դափնի, 1921, թիւ 1, էջ 25-28, թիւ 2, էջ 59-63, թիւ 3, էջ 91-93:

1689 թվականից, իսկ Ա.Ալպոյաճյանը՝ շատ ավելի վաղ հիշվող առաջնորդով:

1. **Պոկնտոշ Կարապետ**, 1614-15: Ա. Ալպոյաճյանը հղում է իր սկզբնաղբյուրը՝ Գ. Սրվանձտյանցի հանրահայտ աշխատությունը՝ մի ուշագրավ վավերագրով, որ անծանոթ է Տ. Պալյանին: Այստեղ Գրիգոր Կեսարացին, որ քանիցս բազմել է Կ. Պոլսի պատրիարքական աթոռին (XVII դ. 1-ին կես), սաստիկ հանդիմանում է ժամանակի կաթողիկոս Մելքիսեթին՝ եկեղեցական կարգը խախտելու, ընչաքաղցության և դավանական անաղարտությունը քամահրելու համար. <<Եւ Պոկնտոշ զԿարապետն որ Հոռոմ դարձաւ եւ Հոռոմ կին էառ եւ եօթն տարի ի հետ այն կնոջն ի Հոռոմ կեցաւ, յիմայ եպիսկոպոսութեան հրաման եւ տուեր եւ Թիրայու, եւ Իզմիրու եւ Մանիսայու առաջնորդ եւ կացուցեր>>⁴³⁰:

Գր. Գալեմքարյանին հաջողվել է այս վավերագիրը հայտնաբերել Հռոմի <<Բորբականտայի հայերէն ձեռագրաց մեջ>> և ինչպես ինքն է պնդում, գրված 1614-1615-ին, Կ. Պոլսի Զաքարիա և Հովհաննես Խուլ պատրիարքների կողմից, Գր. Կեսարացուն 1613 թ. պատրիարքությունից վտարելուց հետո: Այդ ձեռագիրը, հարում է նա, կրում է իտալերեն վերնագիր՝ <<Գրիգորի Վ. Կեսարացոյ թուղթ առ Մելքիսեղ պատրիարք>>⁴³¹:

Պոկնտոշ Կարապետի առաջնորդության՝ վերոհիշյալ տարիները (1614-1615), հետևաբար, ունեն պայմանական բնույթ և ավելի շուտ վերաբերում են Կեսարացու պարսավի գրության ժամանակին: Բայց դրանք նաև այն թվականներն են, երբ Կարապետը թեմի առաջնորդն էր՝ նշանակված Մելքիսեթ կաթողիկոսի կողմից: Չի բացառվում, իհարկե, որ նա այդ պաշտոնը վարած լինի նշված թվականներից և առաջ, և հետո:

2. **Տրդատ արք.**, 1635 թ.:

Այս թվականին իր գրչագրած բժշկարանի հիշատակարանում Սարգիս երեցը գրում է. <<Աստուծոյ ողորմութեամբն մեր հոգևոր հայրն մեր և կենդանի նահատակն տէր Տրդատ արքեպիսկոպոսն հրաւիրեաց և կոչեաց զմեզ աստիճան քահանայութեան ի ձեռնադրութիւն... Ելեալ զնացաք Իզմիրու և Կօզլէլիսարն որ է վիճակն Ոհաննու աւետարանչին և անդ առաք զկարգ և զպատիւ քահանայութեան, եկաք Իզմիր և դարձեալ սկսեցաք զայս պատուական բժշկական հեքիմարանս... Եւ ի կատարելն սորա էր թուին Հայոց ՌՁԴ (1635) [յ]ունիս Ժ (10)... Գրեցաւ սա

⁴³⁰ Սրուանձտեանց Գ., Թորոս աղբար, մասն Բ, էջ 281:

⁴³¹ Գալեմքարեան Գր., Զաքարիա եպիսկոպոս Վանեցի, պատրիարք Կ. Պոլսոյ (1576-1639), թիւ 2, էջ 66-79:

ի ժամանակս և ի կաթողիկոսութեան տեառն տէր Փիլիպոսին, որ այժմ երկրորդ լուսաւորիչն է Հայոց⁴³²>>:

Արժեքավոր այս տեղեկությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ 1635-ի կողմերը Ջմյունիայի և շրջակայքի առաջնորդանիստ կենտրոնը եղել է ոչ թե Ջմյունիան, այլ Այդընը (Կյուզելիիսար), որտեղ և առաջնորդական պաշտոնը վարել է Տրդատ արքեպիսկոպոսը: Գրիգոր Կեսարացին ևս, Սարգիս երեցից առաջ, ինչպես տեսանք, թվարկում է թեմի գլխավոր կենտրոնները՝ Թիրան (Թիրադիր), Իզմիրը և Մանիսան, որտեղ Ջմյունիան գրավում է երկրորդ տեղը, Թիրայից հետո, մինչդեռ այդպես չէր կարող լինել, եթե առաջնորդանիստը լինէր Ջմյունիան: Այդընը, մինչդեռ, չի հիշվում Կեսարացու թվարկած շարքում: Այս առթիվ, կարծում ենք, հիմնավոր չէ Ա. արք. Սյուրմեյանի կարծիքը, որի համաձայն, թեմի (առափնյակի) հոգևոր կենտրոնը XVII դ. անվերապահորեն համարվում է Այդընը, քանի որ այնտեղ է գործել Սարգիս երեցի հիշատակած <<կենդանի նահատակ>> Տրդատ արքեպիսկոպոսը. <<Յայտնի է, գրում է նա, որ ԺԷ դարուն Իզմիր թեմ հայոց համար վաճառաշահ կեդրոն էր, բայց թեմին հոգևոր կեդրոնն ու եպիսկոպոսական աթոռը կը մնար միշտ Այդըն կամ Կիւզէլ-Հիսար իբր, պատմական ու առաքելական աթոռ>>⁴³³:

1635-ի կողմերում Այդընի հոգևոր կենտրոն լինելու իրողությունը դեռևս չի նշանակում, որ այն միշտ ունեցել էր այդ կարգավիճակը: Այդպիսին կարող էին լինել, մինչև Տրդատ արքեպիսկոպոսը և անգամ դրանից էլ շատ առաջ և Ջմյունիան, և Թիրեն, և Մանիսան, նաև առափնյակի մեկ այլ հայաբնակ բնակավայր: Կարծում ենք նաև, որ թեմական կենտրոնի կարգավիճակը Ջմյունիան ձեռք է բերել 1630-ականից հետո, երբ այդ համայնքի հայ բնակչության թիվը հասել էր նշանակալի չափերի՝ այդ նավահանգստի առևտրական նշանակության կտրուկ բարձրացման և նոր գաղթականությունների համար հրապուրիչ դառնալու հետևանքով: Համենայն դեպս, ստորև հիշատակվող՝ Կիրակոս Թալինցին 1651 թ. իրեն հորջորջում է, ինչպես կոեսնենք, Ջմյունիայի վերատեսուչ՝ առաջնորդ:

3. Կիրակոս Թալինցի, 1651-?

Հիշատակվում է նշված թվականի մի ձեռագրում, որպես Ջմյունիայի թեմի <<վերատեսուչ>> (առաջնորդ) և, ինչպես ներկայանում է հիշա-

⁴³² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի, հ. Բ (1621-1640), էջ 596:

⁴³³ Սիւրմէան Ա., Պատմութիւն Հալէպի քահանայից, էջ 15:

տակարանում, <<յոգնամեղի Կիրակոս Թալնցի, յերկրէն Արա[ր]ատցի, ի թեմէն Սբ. Լուսաւորչի, սնեալ և վարժեալ ի գահ իջման Սբ. Միածնի, բայց ի վերջինս կոչեցեալ վերատեսուչ ի Զմիւռին Լիկիացոց...>>⁴³⁴:

Հայտնի չէ, թե երբ է Կիրակոս Թալնցի վարդապետը նշանակվել և թողել առաջնորդական պաշտոնը, բացի իր վկայություններից, որ 1651 թ. ինքը Զմյուռնիայի առաջնորդն է, և որ այդ քաղաքի ազգաբնակչությունը կրել է պատերազմի ողջ աղետները:

Առաջին հայացքից մի տարօրինակ հակասություն կա, սակայն, Կիրակոս Թալնցու կենսագրական հանգամանքների, այդ թվում և Զմյուռնիայում նրա առաջնորդական պաշտոնավարման հարցում: Խընդիրն այն է, որ բացի վերը նշված՝ 1651 թ. հիշատակարանից, որին կասկածելու հիմքեր չունենք, մեզ է հասել մեկ այլ ձեռագրում պահպանված՝ Կիրակոս Թալնցու, որպես ստացողի հիշատակարանը, թվագրված այս անգամ՝ 1695 թ. (Մեկնություն Ս. Աւետարանին Մատթէի): Այստեղ նույնպես, բառացի, կրկնվում են 1651 թ. նրա հիշատակարանի դարձվածները, որ մեջքերել ենք վերը, միայն տարբերվելով շարունակության մեջ՝ <<...Բայց ի վերջինս կոչեցեալ վերատեսուչ ի Զմիւռին լիկեացոց>> դարձվածին անմիջապես հետևում է՝ <<որ և ի տեսանելն իմում զայս Մատթէոսի Աւետարան զի քաղուածոյն բազմաթիւ փափաքանօք ստացայ արդեամբ իմով հազար հարիւր քառասուն և չորս (1695) թուին>>⁴³⁵:

Թվում է, որ Կիրակոսը 1651 թ. հետո ևս շարունակել է իր պաշտոնը՝ որպես առաջնորդ, գոնե մինչև 1695 թ., որովհետև այս թվականին, ըստ վերոհիշյալ հիշատակարանի, նույնպես հանդես է գալիս որպես այդպիսին, ամրագրելով ձեռագրի ստացման վայրը՝ Զմյուռնիան, և որ նույնն է, իր՝ այդ քաղաքում լինելը իր պաշտոնավարությամբ հանդերձ: Այս դեպքում մենք պետք է ընդունենք, որ Կիրակոս Թալնցին առաջնորդ է եղել առաջին և երկրորդ հիշատակարանների միջև ընկած ժամանակաշրջանում, այսինքն 1651-1695 թթ.: Բայց այդ այդպես չէ, և ահա թե ինչու. նախ, 1651 թ. հիշատակարանի նույն դարձվածները ինչու էին դարձյալ հայտնվելու 1695 թ. հիշատակարանում և երկրորդ, 1651-ի և 1695-ի միջև հիշվում են այլ, թվով շուրջ չորս-հինգ առաջնորդներ (որոնց կանոնադառնանք ստորև): Ուրեմն, բացառվում է Կիրակոսի անընդհատ պաշտոնավարությունը 1651-1695 թթ.: Քիչ հավանական է

⁴³⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի, հ. Գ, էջ 416:

⁴³⁵ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, էջ 831):

հենց 1695 թ. նրա երկրորդ պաշտոնավարությունը, որովհետև այդ թվականին նա բավական ծեր պետք է լիներ դրա համար: Մնում է միայն կարծել, որ 1695 թ. Կիրակոսը չի ցանկացել նոր հիշատակարան գրել, այլ վերցրել է 1651 թ. պատրաստի՝ իր կենսագրական հանգամանքները ներկայացնող դրվագները և տեղադրել 1695 թ. երկրորդ հիշատակարանի մեջ՝ թարմացնելով միայն հիշատակարանի թվականը և դարձնելով 1695, կամա թե ակամա անտեսելով այն, որ յուրացնում է իր սեփական անցյալը, մատուցելով այն որպես ներկա, և որ ինքն այդ պահին Զմյուռնիայի առաջնորդը չէ: Նկատենք, որ Կիրակոսը զբաղվում էր ոչ միայն ձեռագրերի ընդօրինակությամբ, այլև առք ու վաճառքով և այս պարագայում իր կենսագրական հանգամանքների հիշատակումը կարող էր նպաստել նրա գործարքներին (կամ առնվազն, գոհունակություն պատճառել գնորդին և անձամբ իրեն): Հիրավի, Ն. Մառի հրատարակած Սևանի վանքի ձեռագրերի ցուցակում առկա է 1702 թ. գրված հետևյալ հիշատակարանը, <<Գոհանամ զքէն Ք՛ս ա՛ծ որ ետուր ինձ կարողութիւն տկարիս և անգոր փծուն գրչիս. թալնցի Կիրակոս վարդապետիս որ հասուցեր աւարտ գրքիս որ կոչի Ադամ գիրք>>⁴³⁶:

Հետևյալ հիշատակարանը վկայում է, որ 1706 թ. Կիրակոս Թալինցին ողջ էր և շարունակում էր ձեռագրերի հետ կապված իր գործունեությունը. <<Դարձեալ ի թուին ՌՃԾԵ (1706) մայիսի Դ (4) ես՝ Կիրակոս վարդապետս Թալնցի, գայս իմ հալալ արդեանց ստացեալ գիրքս ծախեցի տէր Սահակ արեղային>>⁴³⁷:

Կիրակոս Թալինցին բացակայում է Ա. Ալպոյաճյանի և Տ. Պալյանի ցուցակներում:

4. Ստեփանոս վարդ., 1655-1661 թթ. միջև:

⁴³⁶ Мapp Н. Я. Список рукописей Севанского монастыря, с. 36. Տես նաև նույն տեղում, էջ 35: Այս հիշատակարանին առաջինը ուշադրություն է դարձրել հայ ձեռագրագիտության երախտավոր պրոֆ. Վ. Հակոբյանը՝ հանգելով հիմնավոր ենթադրության, որ 1651 թ. և 1702 թթ. հիշատակարանների հեղինակները <<թվում է, այս երկուսը միևնույն անձնավորություններն են>> (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 416):

⁴³⁷ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, էջ 1192:

Ա. Ալպոյաճյանը հիշում է այս վարդապետին, իբրև Հակոբ Ջուղայեցու աշակերտի՝ վկայակոչելով <<Դիւան հայոց պատմությունը>>⁴³⁸: Ականավոր պատմաբանը Ստեփանոսի առաջնորդության տարիներն է համարում 1657-1663-ը, իսկ Դավիթ Բաղիշեցին իր ժամանակագրության մեջ հայտնում է միայն, որ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի նշանավոր աշակերտների մեջ է (այդ թվում և Առաքել Դավրիժեցին) <<Ստեփանոս վարդապետն, մեր սիրելի եղբայր ի Զմիռնի քաղաք, և որչափ քաղաքաց առաջնորդք այժմ աշակերտք սորա (Հակոբ կաթողիկոսի-Ա. Խ.) են>>⁴³⁹:

Նկատենք, որ Հակոբ Ջուղայեցին կաթողիկոսական գահին էր 1655 թվականից, իսկ ժամանակագրության հեղինակ Դավիթ Բաղիշեցու պատվերով այդ գործը ընդօրինակել է Գրիգոր երեցը⁴⁴⁰: Իր հերթին, Վ. Հակոբյանն ավելացնում է, որ այդ ձեռագիրն ընդօրինակված է 1661 թվին⁴⁴¹: Հետևաբար, ժամանակագրությունը պետք է գրված լինի 1655 (երբ Հակոբ Ջուղայեցին արդեն կաթողիկոս էր) և 1661 (երբ ձեռագիրն ընդօրինակվել է) թվականների միջև: Մեզ հայտնի չէ, թե Ստեփանոս վարդապետը երբ է ավարտել իր պաշտոնը:

Դժվարանում ենք ասել, թե Ա. Ալպոյաճյանն ինչ աղբյուրից է օգտվել՝ այդ 1657-1663-ը նշելիս:

Տ. Պալյանն այս առաջնորդին չի հիշում:

5. **Մաղաքիա եպ. Եփեսացի**, վախճ. 1661 թ.:

Վկայակոչելով այս եպիսկոպոսի՝ Այդնում թաղված լինելու մասին մի դամբանագիրը (1661), որ հրապարակել է Հ. Քոսյանը, Ա. Ալպոյաճյանը ենթադրում է, որ նա <<առաջնորդութեան պաշտոնով այս շրջանակը (Էգեյանի մերձամինյա տարածքներ-Ա. Խ.) գտնուած է>>⁴⁴²:

⁴³⁸ ՄՄ, Ա. Ալպոյաճյանի դիվան, թղթ. 7, վավ. 17/1: Տես նաև Դիւան Հայոց պատմութեան, հ. Ժ, էջ 52: Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 361: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 416:

⁴³⁹ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 361:

⁴⁴⁰ Դիվան հայոց պատմութեան, գիրք Ժ, էջ ԼԳ:

⁴⁴¹ Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 289:

⁴⁴² Ալպոյաճեան Ա., Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 280: Հ. Քոսյանը ենթադրում է, որ տապանաքարը լեռնաղաշտի ավերակների մեջ է փոխադրվել Այդրնի հայոց եկեղեցու շրջակայքից՝ Տրալեսի (Այդրնի հին հունական անվանումը) բարձունքների վրա ուխտատեղիի իրավունք ունենալու համար (Հ.Յ.Ք. [օսեան], Ակնարկ մը հնութեան բեկորներու, էջ 279):

Ահա Հ. Քոսյանի հայնաբերած շիրմաքարի արձանագրությունը. <<Այս է տապան Մաղաքիա եպիսկոպոս] եփեսացի սա Քի ՌՃԺ (1661)>>⁴⁴³:

Հ. Քոսյանը հավելում է, որ չնայած դամբանագրի տառերը <<գրեթե անընթեռնի դարձած են, թվականն որոշ կը կարդացուի>>:

Ա. Ալպոյաճյանի ենթադրությունը, իրոք, հավանական է, մանավանդ, ինչպես տեսանք Տրդատ. եպ. օրինակով, XVII դ. Այդնը առաջնորդական նստավայր էր:

6. **Բարսեղ վարդ.**, 1665-ից առաջ:

Ա. Ալպոյաճյանն այս առաջնորդին հիշում է մի Ոսկեփորիկի (1665-ից առաջ) վկայակոչումով. <<Իզմիր քաղաքի առաջնորդ Բարսեղ վարդապետ, եկի քաղաքն Ման[իսա] ուր Բ քահանայ ձեռնադրեցի ի Սբ Լուսաւորիչ եկեղեցոյ սպասաւոր...>>⁴⁴⁴: Գրեթե բառացի, նույնն է ասված, սակայն առանց Ոսկեփորիկի և 1665 թ. հիշատակության, Տ. Պալյանի գալազանագրքում⁴⁴⁵:

Բարսեղ վարդ. մասին այլ տվյալներ մեզ հայտնի չեն:

7. **Իզնատիոս Միակնի,** 1670-ից առաջ:

Այս հոգևորականը չի մտել ոչ Ա. Ալպոյաճյանի, և ոչ էլ Տ. Պալյանի ցուցակի մեջ: Ե. Քյումուրճյանի մի գրության մեջ նա հիշվում է որպես Էջմիածնի նվիրակ բացասական թանձր գույներով. <<Իզնատիոս Միակնի, նուիրակ Էջմածնայ կրկին կրկին չափով ծախէր զմեռոնն յոյժ անիրաւութեամբ, ի սահմանս Զմիւռնոյ յանկարծ մեռաւ ի գիւղս տաճկաց>>⁴⁴⁶:

Ե. Քյումուրճյանն այս տողերը գրել է 1670 թ., ուրեմն, Իզնատիոսը նվիրակ և առաջնորդ է եղել այդ թվականին, առավել հավանական է դրանից առաջ, 1660-ական թթ., երբ սրվել էր պայքարը Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի և Եղիազար Այնթափցու միջև՝ Օսմանյան Թուրքիայում Էջմիածնի իրավունքների շուրջ⁴⁴⁷: Եղիազարին սատարող Ե. Քյումուրճ-

⁴⁴³ Նույն տեղում, էջ 278:

⁴⁴⁴ ՄՄ, Ա. Ալպոյաճյանի դիվան, թղթ. 7, վավ. 17/1, էջ 72:

⁴⁴⁵ Պալեան Տ., նշվ. աշխ., թիւ 2, էջ 59: Տես նաև Յուզակ հայերեն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիա եւ ի շրջակայս նոցին, էջ 119:

⁴⁴⁶ Տես Գալէմքէաբեան Գր., Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկէայք, էջ 73:

⁴⁴⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 125:

յանը հանգամանորեն խոսում է Հակոբ Զուղայեցու կողմնակիցների, նրանց հետ և Իզմիրի Սիականու անփառունակ վախճանի մասին:

8. Հովսեփ վարդ. Քոլեյան, 1683-1706:

Տ. Պալյանն իր գավազանագրքում առաջինը նշում է այս առաջնորդին՝ հենվելով 1689 թ. Զմյուռնիայի Ս. Ստեփանոս և Ս. Բարդուղիմեոս եկեղեցու նորոգության արձանագրության վրա, որտեղ հիշվում է Իզմիրի առաջնորդ Հովսեփ վարդապետը⁴⁴⁸:

Ա. Այադյաճյանը Տ. Պալյանի հիշատակած այս վավերագրին հավելում է այլ տեղեկություններ Հովսեփ վարդ. վերաբերյալ. Հովսեփը հիշվում է Մանիսայի Ս. Լուսավորիչ եկեղեցու զանգակատան՝ 1661 թ. արձանագրության մեջ⁴⁴⁹, ըստ Հ. Քոսյանի՝ 1686-1687 թթ. նրա՝ Վենետիկում գտնվելը և հայերեն մի գրքի տպագրությանը մասնակցելը, 1691 թ. առաջնորդական պաշտոնը շարունակելը, 1696 թ. Կ. Պոլսում լինելը և կաթողիկոսություն քարոզելը, Ավետիք պատրիարքի հրահանգով բանտարկվելը⁴⁵⁰, 1706 թ. դեռ ողջ լինելը (հիշվում է Աղեքսանդր կաթողիկոսին պոլսահայերի կողմից գրված հանրագրում)⁴⁵¹ և վերջապես, որպես

⁴⁴⁸ Պալեան Տ., նշվ. աշխ., թիւ 1, էջ 25-26: Այս արձանագրությունը ուշագրավ է մեկ այլ լուսաբանությամբ ևս. <<Ես Իզմիրու առաջնորդ Յովսէփ վարդապետս, ապաւինեցայ յողորմութիւն Աստուծոյ ի սուրբ Ստեփաննոս և ի սուրբ Բարդուղիմեոս եւ զեկեղեցիս հիմնարկեցաք>>, ասված է այնտեղ: Դարձվածը վերաբերում է ոչ թե Զմյուռնիայում նոր եկեղեցու շինությանը, այլ 1688 թ. Երկրաշարժից հետո կործանված եկեղեցու, նորոգմանը, որ կրել է նախքան այդ նորոգումը, մեկից ավելի տարբերակներով անուններ, այս դեպքում՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի անվամբ:

⁴⁴⁹ Այդ արձանագրությունը հավաստում է, որ Մանիսայի Ս. Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է <<ծախիւք գոյիւք համայն առհասարակ ժողովրդի և աշխատասիրութեամբ յումեմնի՝ յովսէփ պիտակ վարդապետի, որ ի թուի ՌՃԺ (1661) երորդի եւ ՄՌ յամի (Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 133):

⁴⁵⁰ Մ. Չամչյանը գրում է, որ Ավետիք պատրիարքի փոխանորդ Հովհաննես Զմյուռնացին հայ կաթողիկոսներին և որպես այդպիսիք ամբաստանվողներին հալածելու ընթացքում՝ 1703 թ., <<Ետ ունիլ և զառաջնորդն զմիւռնիոյ զյովսէփ վոյտ, որ էր յեմիածնայ և եղ ի բանտի. և նորա վճարեալ վեց քսակ դրամոյ... հազիւ զերծաւ անտի>> (Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, էջ 743):

⁴⁵¹ Հանրագրի տեքստը՝ Աղբիւր ազգային արդեան պատմութեան վերնագրով, տես Կոռնկ հայոց աշխարհին, 1863, թիւ 8, էջ 662-684: Հանրագիրը գրվել է 1706 թ. բավական առատ տեղեկություններ տալով հայ առաքելականների և կաթողիկոսների միջև եղած հակասությունների և պայքարի մասին: Այստեղ հիշվում է <<քօլէ Յովսէփ վարդապետն (ակներևաբար՝ Հովսեփ Քոլեյանը-Ա. Խ.), որ յայտ-

Էջմիածնի նվիրակ և Զմյուռնիայի առաջնորդ, հիշվում է Հովսեփ արք. Քյոլեյանը, որ կաթողիկ էր և կաթողիկոսը նրան Հռոմ պետք է ուղարկեր, եթե մահը չկանխեր: <<Հիմա հետաքրքրական է ճշդել, թե 1661-ին մինչև 1706 յիշատակուած Զմյուռնիոյ առաջնորդ Յովսէփը միննոյն անձն է, թէ իրարմէ տարբեր երկու անձեր են: Այս հանգույցը փափագելի էր, որ լուծուէր>>,-գրում է Ա. Ալպոյաճյանը⁴⁵²:

Կարելի է մեկ կարևոր տվյալ ավելացնել Զմյուռնիայի առաջնորդ Հովսեփ վարդ. կենսագրությանը, որ, կարծում ենք, ամրագրում է նրա առաջնորդական պաշտոնի սկիզբը: Մատենադարանում պահվող՝ Ղ. Փիրղալեմյանի հավաքածուի մի ձեռագրում ինքը՝ Հովսեփ վարդ., հայտնում է. <<Թուին ՌՃԼԲ (1683) յօգոստոս քսանվեց ես Յովսէփ վարդապետս Իզմիրու առաջնորդ և (իմ) փոքրաւորն Ագարիայն այս թուիս մտանք Իզմիրս. Եւ այս թուիս յունիս մէկն ելանք ի սուրբ Էջմիածնէն դէպի Իզմիրս>>⁴⁵³:

Հետևաբար, Հովսեփի առաջնորդության սկիզբը պետք է համարել 1683-ը և այս դեպքում Հ. Քոսյանի վկայակոչած՝ Մանիսայի եկեղեցու 1661 թ. արձանագրության մեջ հիշվող Հովսեփի ինքնությունը, թվում է, կորցնում է իր նշանակությունը, որովհետև նա չի նշվում որպես առաջնորդ: Ա. Ալպոյաճյանը ևս կանգ է առնում այս հանգամանքի վրա՝ նկատելով, թե այդ արձանագրության մեջ <<չըսվիր, թէ առաջնորդ է>>⁴⁵⁴: Մնում է, ուրեմն, ճշտել Հովսեփի ինքնությունը 1689 (Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրությունը)-1706 (Հովսեփի մասին վերջին տեղեկությունը)⁴⁵⁵ թվականների միջև:

նի ցուցաներ զինքն բարեկամ երկաբնակաց>> (նույն տեղում, էջ 674): Հանրագրի վերաբերյալ ուշագրավ բացատրություններ է տվել Գր. Գալեմքարյանը, որի բնութագրմամբ՝ 1698-ի կողմերը Հ. Քոլեյանը <<եռանդուն կաթողիկէ էր և պաշտպան կաթողիկէ հաւատոյ>> (Գալեմքեարեան Գր., Հարություն Վ. Լեւոնեան Կ. Պոլսեցի, արք. Կեսարիոյ պաղեստինացւոց, թիւ 9, էջ 553):

⁴⁵² Ալպոյաճեան Ա., Իզմիրի Հայոց առաջնորդները, Դափնի, 1922, թիւ 9, էջ 281: Հովսեփի մասին Ալպոյաճյանի դիտողությունները տես նույն տեղում, էջ 280-281:

⁴⁵³ ՄՄ, Ղ. Փիրղալեմյանի հավաքածու, ձեռ. 6332, էջ 268:

⁴⁵⁴ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 280:

⁴⁵⁵ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 280: Ա. Ալպոյաճյանը հղում է <<Կռունկ հայոց աշխարհին>> ամսագրում տպագրված վերոհիշյալ վավերագիրը, գրված պոլսահայերի կողմից՝ Աղեքսանդր կաթողիկոսին, որտեղ Հովսեփը հիշատակվում է որպես Էջմիածնի նվիրակ:

Վերադառնանք Մանիսայի եկեղեցու 1661 թ. վերոհիշյալ արձանագրությանը: Որևէ կապ չունենալով Հովսեփի բուն առաջնորդական գործունեության հետ, այսուհանդերձ, այն օգնում է բացահայտելու կամ ճշտելու այդ գործունեության ժամանակային կտրվածքը: Եթե նրա առաջնորդության ժամանակը 1661-1706 թթ. երկար ու ձիգ տարիների ընթացքը կասկածի կամ ճշտման տեղիք կարող էր տալ, ապա նույնը չի կարելի ասել 1683-1706 թթ. ժամանակահատվածի համար, որտեղ Հովսեփին վերաբերող տվյալների և ամենից առաջ՝ առաջնորդական շրջանի տրամաբանության մեջ մեջ ոչ մի տարակուսելի բան չկա: Հետևաբար, Հովսեփը կամ Հովսեփ Քոլեյանը պետք է որ մինևույն անձը լինի, ով հիշվում է 1683-1706 թթ. մեր դիտարկած բոլոր վավերագրերում, էջմիածնի նվիրակը և առաջնորդը Զմյուռնիայում՝ այդ տարիներին:

Առաջնորդների ցանկում Ա. Ալպոյաճյանը և նրա հետևությամբ Տ. Պալյանը, զետեղել են **Գրիգոր վարդ. Սամուելյանին**՝ XVII դ. վերջ-XVIII դ. սկիզբ կտրվածքով: Նշում են նաև, որ այս անձը հայտնի է **Տերեայի** ծածկանվամբ, իբրև աշուղ, երգել է հայերեն և թուրքերեն: Տ. Պալյանը, ցավոք, չի նշում իր աղբյուրը⁴⁵⁶: Ա. Ալպոյաճյանը կասկածի տակ է առնում Սամուելյանի մասին տվյալները, նկատելով, որ դրանք <<վերաքննութեան կը կարօտին, վասնզի իրեն առաջնորդութեան համար որոշուած ժամանակամիջոցը կանցնի Յովսէփ եպս.-ի>>⁴⁵⁷: Հիրավի, վերը տեսանք, որ Հովսեփն է եղել Զմյուռնիայի առաջնորդը 1683-1706 թթ.:

9. Հայրապետ վարդ., 1715:

XVIII դ. առաջին առաջնորդներից մեկն է, որ հիշվում է Ղ. Փիրղալեմյանի հավաքածուի մի հիշատակարանում. <<Գրեցաւ գիրս գաւազան տալոյ իշխանութեան վարդապետականի ի թուաբերութեան Հայոց ՌՃԿԴ (1715) ամին ի մայիսի 21 ի վայելում տեառն Հայրապետի աստուածաբան վարդապետի որ է առաջնորդ Զմիւռնի քաղաքի լիկեացոց և նահանգի նորին>>⁴⁵⁸:

Այս առաջնորդի մասին կա մեկ այլ տեղեկություն ևս, որին կանցնենք քիչ անց:

10. Ներսէս եպ. Եփեսոսի, 1717:

⁴⁵⁶ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, Բիւզանդիոն, 1904, 12/25 ապրիլի: Պալյան Տ., նշվ. աշխ., թիւ 1, էջ 26:

⁴⁵⁷ Ալպոյաճեան Ա., Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 281:

⁴⁵⁸ ՄՄ, Փիրղալեմյանի հավաքածու, ձեռ. 6332, էջ 268-ա: Նույն տեքստը՝ աննշան փոփոխություններով, տես ՄՄ, ձեռ. 5817, էջ 84/բ:

Հիշատակվում է Ա. Ալպոյաճյանի ցանկում՝ Հովհ. Ոսկերբանի <<Մեկնութեան>> 1717 թ. տպագրության հիշատակարանի հղումով, որտեղ հիշվում է <<զգերապատիվ զՆերսէս եպիսկոպոսն Եփեսոսի>>: Ա. Ալպոյաճյանը, բնականաբար, Ձմյունիային կից Եփեսոսը առանձին թեմ չի համարում և իրավամբ կարծում է, որ Ներսէսը պարզապես <<Եփեսացի>> տիտղոսով էր վարում նույն Ձմյունիայի առաջնորդությունը⁴⁵⁹:

11. Միմեոն վարդ. Երևանցի, 1718-1726:⁴⁶⁰

Խոսքը վերաբերում է նույնպես Միմեոն Երևանցի վարդապետին՝ կաթողիկոսի շատ ավելի ավագ անվանակցին:

Ա. Ալպոյաճյանի ցանկում նա անմիջապես հետևում է Ներսէս եպիսկոպոսին, ընդամին, պատմաբանը վկայաբերում է Աստվածատուր կաթողիկոսի 1718 թ. մի կոնդակը, որտեղ վերջինս Վենետիկի հայ վաճառականներին պատվիրում է ինչ-ինչ իրեր առաքել Ձմյունիայի առաջնորդ Միմեոն վարդապետին⁴⁶¹: Հենվելով նշված կոնդակի թվագրման վրա, Ա. Ալպոյաճյանը Միմեոն վարդ. առաջնորդության սկիզբը կամ առաջնորդության տարիներից մեկն է համարում 1718-ը⁴⁶²: Միմեոն վարդ. առաջնորդության տարին մենք եզրափակել ենք 1726-ով՝ հաշվի առնելով հետևյալը. անարդարացի համարելով Միմեոն կաթողիկոսի՝ Կ. Պոլսում կաթողիկոս ընտրված Կարապետ Ուլնեցուն <<Ջամբո>>-ում տված բացասական թանձր բնութագիրը, Մ. Օրմանյանը նկատում է. <<Բայց Երևանեցին (կաթողիկոսը-Ա. Խ.) անազան դատող մըն է, եւ գործին պարագաներուն ինքն մասնակից եղած չէ. գուցէ տեղեկություններ քաղած ըլլայ նախկին Միմեոն Երևանեցիէն, որ այդ միջոցին (Կարապետ Ուլնեցու կաթողիկոսական ընտրության միջոցին՝ 1726 թ. փետրվարի 27-ին-Ա. Խ.) Ձմիւնիոյ նուիրակ կը գտնուէր>>⁴⁶³:

⁴⁵⁹ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 281:

⁴⁶⁰ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 3291: Պատմաբանասիրական հանդեսում տպագրված մեր հոդվածում (Խառատյան Ա., Ձմյունիայի տերունի թեմի առաջնորդները, էջ 19) նշվել էր Միմեոն Երևանցու առաջնորդության միայն սկիզբը՝ 1718 թվականը, որ թերի է և շրջանցում է Մ. Օրմանյանի էական դիտողությունը, ինչը հենվում է Գ. Աղանյանի Դիւան Հայոց պատմութեան Ա հատորի մի վավերագրի վրա:

⁴⁶¹ Նույն տեղում:

⁴⁶² Ալպոյաճեան Ա., Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 281:

⁴⁶³ Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 3291:

Մ. Օրմանյանը, սակայն, անկախ իր որոշ վերապահությունից, չի բացատրում, թե Սիմեոն կաթողիկոսը Ուլնեցու ընտրության վերաբերյալ տեղեկությունները ինչու պետք է վերցրած լիներ հենց Զմյուռնիայի երբեմնի նվիրակ (առաջնորդ) Սիմեոն վարդապետից:

Տ. Պալյանի գավազանագրքում տեղ չեն գտել ոչ Ներսես եպիսկոպոսը, և ոչ էլ Սիմեոն Երևանցի վարդապետը:

12. Մանուել վարդ., 1726 -1735 թթ. միջև ընկած ժամանակաշրջան:

Վերոհիշյալ Հայրապետ և Սիմեոն վարդապետների հետ միասին կամ նրանցից հետո Էջմիածնի Աբրահամ Բ կաթողիկոսը (1730-1734) հիշում է նաև մեկ այլ առաջնորդի՝ Մանուել վարդապետին, Եվդոկիայի եպիսկոպոս Մինասին ուղղած իր կոնդակում. <<Նա ևս, սիրելի, Իզմիրու առաջնորդական կելուրի (եկամտի-Ա. Խ.) կողմանէ գոր գրեալ էիր իբր թէ տարինն Ի՛Է (27) քեսայ կելուր կը լինի. զի այս վասն նախանձու գրեալ են իզմիրցիքն, զհտեմ, նագելի և լուեալ եմ ի բնէ անտի Հայրապետ, Սիմեոն և Մանուել լուսաւոգի վարդապետաց յԻզմիրու ի սուրբ գահս հասուցեալ կելուրն և քոյդ ևս զհտեմ որ քան զնոցա առաւել է...>>⁴⁶⁴:

Նախ, եթե մի կողմ թողնենք կաթողիկոսի նախանձախնդրությունը <<կելուրի>> (Էջմիածնին հատկացրած տերունի թեմի տուրքը) առթիվ, նա գրում է բավական ժամանակ առաջ գործող առաջնորդների մասին (<<ի բնէ անտի>>): Իրոք, խոսքը վերաբերում է 1715 և 1718 թթ. պաշտոնավարած Հայրապետ և Սիմեոն վարդապետներին և վերջում՝ Մանուել վարդապետին, ով չկա ոչ Ա. Ալպոյաճյանի, և ոչ էլ Տ. Պալյանի ցանկում: Կնշանակի, Մանուել վարդապետը Զմյուռնիայի առաջնորդ է եղել Սիմեոնի և Ղազար Զահկեցու պաշտոնավարման 1726-1735-ի միջև: Ավելի ստույգ լինելու համար այլ տվյալներ չունենք:

13. Ղազար Զահկեցի, 1735-1737:

Հիշյալ թվականներին վարել է նվիրակության պաշտոնը՝ ըստ Տ. Պալյանի, իսկ նրանից առաջ 1737-ը ամրագրել է Ա. Ալպոյաճյանը⁴⁶⁵: Պաշտոնավարությունից անմիջապես հետո, ընտրվել է Էջմիածնի կաթողիկոս: Մ. Օրմանյանը առավել որոշակիորեն նշում է, որ Զահկեցին կաթողիկոս է ընտրվել 1737 թ. հուլիսին, և որ Էջմիածին է մեկնել իր առաջնորդական պաշտոնատեղիից⁴⁶⁶:

⁴⁶⁴ Տայեան Ղ., Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, էջ 56:

⁴⁶⁵ Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 26: Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իգմիրի, 1904, 12/25 ապրիլի:

⁴⁶⁶ Օրմանյան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 3373-3374:

14. Մինաս արք. Փերվազյան, 1735:

Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ առաջնորդ է եղել 1736 թ., մենք կավելացնենք՝ Ղազար Զահկեցուց առաջ, մի կարճ ժամանակ, որովհետև վերջինս իր պաշտոնավարությունը սկսելով նույն 1735-ին, շարունակել է վարել մինչև 1737-ը ներառյալ: 1736 թ. Փերվազյանը՝ <<Զմիւռնիոյ արքեպիսկոպոս առաջնորդն>>, արդեն գտնվում էր Իտալիայում, որտեղ ընդունել էր կաթոլիկություն և <<Մխիթարեանց քով հաստատուեցաւ իբրեւ ձեռնադրիչ եպիսկոպոս>>⁴⁶⁷: 1736 թ. նա արդեն իր պաշտոնը չէր վարում և գտնվում էր Իտալիայում, թեև հիշվում է թողած պաշտոնով:

15. Աղեքսանդր եպ. Բյուզանդացի (Գարագաշ), 1743, 1745:

Ա. Ալպոյաճյանը Ա. Բյուզանդացու առաջնորդության տարիներից հիշատակում է 1743 և 1745 թվականները՝ հենվելով նրա առաջնորդության ժամանակ Ս. Ստեփանոս եկեղեցու նորոգումը վկայող՝ Հ. Քոսյանի մեջբերած արձանագրության վրա⁴⁶⁸: Տ. Պալյանը ևս վկայակոչում է այդ արձանագրությունը, ինչպես և Հ. Նալյան պատրիարքի <<Մեկնություն Նարեկի>> գրքի (1745) հիշատակարանի տողերն առ <<Զմիւռնիոյ քաջ դիտապետն և արքեպիսկոպոսն գտէր Ալեքսանդրոս պաշտօնակիցն մեր ի Քրիստոս և աստուածաբան վարդապետն>>⁴⁶⁹:

Եվ Ա. Ալպոյաճյանը, և Տ. Պալյանը գրում են, որ հայտնի չէ, թե Աղեքսանդր Գարագաշը երբ է սկսել և ավարտել իր առաջնորդական պաշտոնը:

Աղեքսանդր Բյուզանդացին 1753 թ. ընտրվել է Էջմիածնի կաթողիկոս:

Ա. Ալպոյաճյանը կասկածում է ժամանակագրորեն Գարագաշին հետևող (1746) **Պետրոս վարդապետի** առաջնորդությանը՝ վկայակոչելով Այդընի եկեղեցու մի տետրակում արված ժլատ գրառումը՝ <<ի ժամանակս Պետրոս վարդապետին որ եկեղեցոյն հսապն (հաշիվները-Ա. Խ.) նորա ձեռացն էր>> դարձվածով⁴⁷⁰: Ըստ երևույթին, Տ. Պալյանը նկա-

⁴⁶⁷ Գալեմբեարեան Գր., Կենսագրութիւն Սարգիս արքեպ. Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկէայք, էջ 224: Այն, որ 1736 թ. Մինաս արք. գտնվում էր Իտալիայում, որտեղ տարել էր Ս. Հռիփսիմեի նշխարների մի մասը, առաջինը հայտնում է Մ. Չամչյանը (տես Չամչեան Մ., նշվ. աշխ., էջ 573): Տես նաև Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ Վենետաց, էջ 343:

⁴⁶⁸ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, Բիւզանդիոն, 1904, 12/15 ապրիլի: Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 57-58:

⁴⁶⁹ Պալեան Տ., նշվ. աշխ., Դափնի, 1921, թիւ 1, էջ 26-27:

⁴⁷⁰ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., 12/25 ապրիլի:

տի ունի այս՝ Ա. Ալպոյաճյանի կամ նրա աղբյուրի տեղեկությունը՝ ինքն էլ կասկածելով Պետրոս վարդապետի վերաբերյալ տվյալների բավարարությանը⁴⁷¹: Այսուհանդերձ, գրեթե նույն ժամանակներում Ջմյուռնիայում նորից է հիշվում Պետրոս վարդապետը և այս անգամ՝ իբրև ոչ թե նյութական հաշիվների հետ գործ ունեցող, այլ գրասեր եկեղեցական, որի մասին վկայում է հետևյալ հիշատակարանը. <<Գծագրեցաւ ձեռամբ յոքնամեղ Էջմիածնեցի Կիրակոսի որդի չնչին դպիր Յարութիւնս ի Իզմիր քաղաքին ի հին պետէստէնի մէջն թվին 1200-ին (1751) և ի մայիս ամսոյ միջին աւարտեցաւ ի վայելումն Պետրոս վարդապետին և լիցի ողջ ամէն>>⁴⁷²:

Կարծում ենք, որ այս վերջին իրողությունը փոքր-ինչ ամրապնդում է Պետրոս վարդապետին առաջնորդների ցանկի մեջ մտցնելու հավանականությունը՝ թեև խնդիրը կարոտ է լրացուցիչ փաստերի:

16. Սահակ Ահագին (Իսահակ) Ա⁴⁷³ 1754-1755:

Ա. Ալպոյաճյանը նրան թվագրել է 1755-ով՝ իբրև առաջնորդի, Կոլոտ Հովհաննես պատրիարքի աշակերտի և հենվելով Ալ. Գարագաշ կաթողիկոսի կոնդակի վրա՝ ուղղված <<Նախ սիրեցելոյն եղբօրն մերոյ Իսահակ և առաջնորդին մերոյ աստուածաբան վարդապետին>>⁴⁷⁴: Սահակ Ահագինը կաթողիկոս է ընտրվել Բյուզանդացու մահից հետո (1755), բայց Էջմիածին չի գնացել, պաշտոնը չի ստանձնել և որից հետո, 1759 թ. կաթողիկոս է ընտրվել Հակոբ Շամախեցին: Ինքը՝ Սահակը, վախճանվել է 1763 թ.՝ Էրզրումի Ս. Լուսավորիչ վանքում⁴⁷⁵: Գր. Գալեմքարյանը ևս Սահակի փաստական հրաժարումը նշելով՝ հայտնում է, որ նա մինչ այդ Ջմյուռնիայի առաջնորդն էր⁴⁷⁶: Մ. Օրմանյանը նրա առաջնորդությո-

⁴⁷¹ Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 27:

⁴⁷² ՄՄ, ձեռ. 1709, էջ 108բ:

⁴⁷³ Այս Սահակ Ահագին և հետագայի իր անվանակից առաջնորդին տարբերելու համար պայմանականորեն հավելում ենք Ա և Բ ցուցիչները:

⁴⁷⁴ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ.:

⁴⁷⁵ Նույն տեղում:

⁴⁷⁶ Գալեմքեարեան Գր., Յարութիւն Վ. Լեւոնեան, էջ 386-387: Տես նաև Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ. հ. 1, էջ 342: Սահակ Ահագին և Էջմիածնի միաբանության՝ 1756 թ. հետո էլ շարունակվող ոչ միանշանակ հարաբերությունների մասին տես ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 12, որտեղ Սահակը հաստատում է իր կաթողիկոսական պաշտոնը, իբրև <<Տէր Իսահակ, Կաթողիկոս ամենայն հայոց>>:

յան տարին նշում է 1754-ը⁴⁷⁷, իսկ Տ. Պալյանը՝ 1755-ը⁴⁷⁸: Նկատի առնելով, որ Սահակը կարող էր առաջնորդ նշանակված լինել 1754 թ. վերջին, իսկ պաշտոնի անցած՝ 1755 թ. վերջին (Էջմիածին-Զմյուռնիա ուղերթի տևողությունը), մենք նրա առաջնորդության սկիզբը համարում ենք 1754-ը՝ հետևելով Մ. Օրմանյանի նշած տարեթվին:

17. Աբրահամ Աստապատցի, 1756-1764:

Առաջնորդն էր Սահակ Ահագնից հետո⁴⁷⁹: Աբր. Աստապատցին Զմյուռնիայում ծավալել է կրթական-լուսավորական գործունեություն, նրա առաջնորդության ժամանակ՝ 1759 թ., հիմնվում է Մահուտսի Մարկոսի տպարանը, որտեղ տպագրվել է երեք գիրք, այդ թվում և Եզնիկի աշխատությունը (1762): Այս առաջնորդի ժամանակ, ինչպես կտեսնենք հետագայում, Զմյուռնիայում զարգացման նոր մղումներ ստացան կրթությունն ու գրչագրությունը, որն ըստ ամենայնի խրախուսվում էր նրա համախոհ և գործակից Մեսրոպ Գանձակեցու կողմից: Ինքը՝ Աստապատցին, Սիմեոն կաթողիկոսին աջակցել է ոչ միայն մշակութային անդաստանում, այլև ընդառաջել Կ. Պոլսի պատրիարքարանը վերահսկելու նրա ձգտումներին՝ կաթողիկոսական փոխանորդի միջոցով⁴⁸⁰, որի պատճառով նրան հեռացնում են Կ. Պոլսից⁴⁸¹: Մ. Մսերյանցն իր հերթին նկատում է, թե Աստապատցին է Կ. Պոլսում Էջմիածնի փոխանորդություն հաստատելու հարց հղացողը⁴⁸²:

18. Ղուկաս Կարնեցի, 1764-1775:

Սիմեոն կաթողիկոսը 1764 թ. մարտի 10-ի կոնդակով հայտնում է Զմյուռնիայի տեղունի թեմի ժողովրդին, որ առաքում է <<առաջնորդին ձեռքով Ղուկաս աստուածիմաստ վարդապետիդ, որ եկեալ այդր>>⁴⁸³: Ինքը՝ արդեն կաթողիկոս օծված Ղուկասը, 1780 թ. սեպտեմբերի 7-ին զմյուռացիներին հղած կոնդակում նշում է իր առաջնորդության ժամանակը. <<Քանզի մինչև ես տակաւին ի գործ նուիրակութեան և առաջնորդութեան մայրաքաղաքիդ Զմիւռնիոյ և համայն օրհնեալ վիճակացդ յամս երկոտասան>>, այսինքն, 1764-1776 թթ: Կարելի է կարծել, որ Ղուկասը

⁴⁷⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 3454:

⁴⁷⁸ Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 27:

⁴⁷⁹ Ալլոյաճեան Ա., նշվ. աշխ.: Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 27:

⁴⁸⁰ Տեա Զամյան Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 872:

⁴⁸¹ Տեա Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 3519:

⁴⁸² Մսերեանց Մ., Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, էջ 1:

⁴⁸³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 22:

մեկ տարով ավելացնում է իր պաշտոնավարման ժամանակը: Ա. Ալպոյաճեանը և Տ. Պալյանը ճիշտ նշում են Ղուկասի առաջնորդության սկիզբը (1764), սակայն սխալվում են՝ 1780-ը համարելով նրա պաշտոնավարման ավարտը⁴⁸⁴: Ճիշտ է, Տ. Պալյանն այստեղ հավելում է <<բայց 1775-ին Զմիւռնիոյ առաջնորդ Եսայի վարդապետ մը կը յիշուի, գուցէ ասիկայ առաջնորդի բացակայ եղած ժամանակները փոխանորդութեան պաշտօն կը վարէր, այս մասին չենք կրնար որոշ բան մը ըսել>>⁴⁸⁵:

Ղուկասը Էջմիածին է կանչվել 1775-ին (և ոչ թե 1780-ին), իսկ նրա փոխարեն Զմյուռնիա է ուղարկվել Եսային: 1775 թ. Սիմեոնը <<Թուրթ մի ևս ի վերայ Ամստերդամու հայկազուն ժողովրդոյն գրեաց և զԵսայի վարդապետն նուիրակ և առաջնորդ յղելն ի Զմիւռնի և զՂուկաս վարդապետն խնդրելն ծանոյց նոցա>>⁴⁸⁶:

19. Եսայի վարդ., 1775-1779, 1782-1783 կամ 1784 (1783-1784-ը՝ ամիսների կտրվածքով):

Եսային առաջնորդ է նշանակվել երկու անգամ. նախ, ինչպես տեսանք, Սիմեոնի կողմից, 1775 թ., երբ Եսային փոխարինեց Ղուկասին, և որի մասին Մ. Օրմանյանը գրում է շատ որոշակի. <<Եսայի վարդապետ յաջորդ նշանակուեցաւ և 1775 յունիս 23-ին ճամբայ ելաւ⁴⁸⁷>>:

Այն, որ 1777 թ. Եսային շարունակել է իր պաշտոնը, վկայում է նրա սպասավորը, <<Ես՝ սպասաւոր առաջնորդի տորին, տեսառն Եսայի յոգնաշխատ վարդապետի որ հարկեց զանպիտանս ձեռնադրել յարեղայ...>>⁴⁸⁸:

1779 թ. Եսային առաջնորդությունը հանձնել է Փիլիպոսին, ինչպես այդ մասին Ամստերդամի ազգայիններին էր հայտնում Սիմեոն կաթողիկոսը⁴⁸⁹, իսկ 1782 թ. մայիսին նա կրկին առաջնորդ է նշանակվում՝

⁴⁸⁴ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 13/26 ապրիլի: Պալյան Տ., նշվ. աշխ., Դափնի, թիւ 1, էջ 28:

⁴⁸⁵ Պալեան Տ., նույն տեղում:

⁴⁸⁶ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ը, էջ 452-453: Ինքը՝ Ղուկասը, Էջմիածին է հասել 1776 թ., ինչպես գրում է ինքը (Դիւան հայոց պատմութեան, Գիրք առաջին, հ. Ա, էջ 103):

⁴⁸⁷ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3627:

⁴⁸⁸ Յուզակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիա, Զմիւռնիա, էջ 116:

⁴⁸⁹ Դիւան հայոց պատմութեան, Գիրք ԺԱ, էջ 321:

փոխարինելով Փիլիպոսին⁴⁹⁰: Տ. Պալյանն իր գավազանագրքում գրում է, որ <<1775-ին Ջմիւռնիոյ առաջնորդ Եսայի վարդապետ մը կը յիշուի>>, հավելելով՝ <<այս մասին մենք չենք կրնար որոշ բան մը ըսել>>⁴⁹¹: Հետագայում, հենվելով մի ատենի ժամագրքի հիշատակարանի վրա, նա աներկբա նշում է, որ Եսայի վարդ. եղել է Զմյուռնիայի առաջնորդ և 1777-ին ձեռնադրության կարգ է կատարել⁴⁹²:

Եսային վախճանվել է Զմյուռնիայի առաջնորդի և նվիրակի պաշտոնում. նրա մահվան մասին զմյուռնացիները հայտնել էին Ղուկաս կաթողիկոսին, ինչը հիշում է վերջինս՝ 1784 թ. նրանց ուղղած թղթում⁴⁹³:

20. Փիլիպոս եպ., 1779-1782, 1784:

Առաջնորդ՝ Եսայու կրկնակի առաջնորդական շրջանների միջև:

Ա. Ալպոյաճյանը գրում է, որ <<իզմիրցիք զինքը 1782-ին մերժած են>>⁴⁹⁴: 1782 թ., առաջին եռամյա ժամկետը լրացնելով՝ Փիլիպոսը ընդհարվել է զմյուռնահայերի հետ, ուստի հետ է կանչվել Էջմիածին՝ իր պաշտոնը զիջելով Եսայուն: Բայց Եսային նույնպես չի լրացրել իր պաշտոնավարման երկրորդ եռամյան և 1779 թ. վերադարձել է Էջմիածին: Փիլիպոսի նշանակումը ի սկզբանե հարթ չի ընթացել. մեկ անգամ նրա պաշտոնը Սիմեոնի կողմից հաստատվելուց հետո, Ղուկասը նրան վերահաստատել է 1780 թ., հանձնարարելով զմյուռնացիներին, որպես <<ծայրագոյն նուիրակի և առաջնորդի... վերստին ունիցիք ի սեր ըստ ամենայնի>>⁴⁹⁵: Այս վերահաստատման տարին էլ, թերևս, հիմք է տվել Ա. Ալպոյաճյանին թվագրելու 1780-1782 թթ.:

21. Միքայել վարդ., 1784 թ. մայիս և հետո:

Այս առաջնորդը չի հիշվում որևէ առաջնորդական ցանկում: Վախճանված Եսայի վարդ. քեռորդին էր, ում նշանակման մասին Ղուկասը հայտնում է 1784 թ. մայիսի 16-ին⁴⁹⁶: Կաթողիկոսը նույնն է ծանուցում

⁴⁹⁰ Դիվան հայոց պատմության, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, էջ 303:

⁴⁹¹ Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 28:

⁴⁹² Յուզակ հայերեն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, էջ 116:

⁴⁹³ Դիվան հայոց պատմության, Գիրք առաջին, էջ 420: Տես նաև ՄՄ, ձեռ. 2803, էջ 498:

⁴⁹⁴ Ալպոյաճեան Ա., Իզմիրի հայոց առաջնորդները, Դափնի, թիւ 9, էջ 282:

⁴⁹⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 51:

⁴⁹⁶ Դիվան հայոց պատմության, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, էջ 421: Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 8:

զմյուռնահայ երևելիներ Աստվածատուր Ապրոյանին և մահտեսի Կ. Չելիկյանին⁴⁹⁷: 1784 թ. դեկտեմբերի 22-ին Ղուկասը, սակայն, ի պատասխան <<Միքայել պետի>> խնդրանքի՝ երկարաձգել իր մնալը Ջմյուռնիայում, կտրուկ առաջարկում է նրան վերադառնալ Էջմիածին. <<յամենալն քո ոչ օգուտ բերէ քեզ, այլ փութա օր մի յառաջ դիմել ի սուրբ Աթոռս>>⁴⁹⁸:

Եթե հանրագումարի բերենք 1775-1784 թթ. առաջնորդների հերթազայման վերաբերյալ տվյալները, ապա պետք է ասենք, որ մեր ունեցած առկա հակասական տվյալները դեռևս բավարար չեն այս գրեթե տասնամյա շրջանում ճշգրտություն մտցնելու համար: Միայն 1784 թ. այստեղ գրավոր աղբյուրներում փոփոխվում են երեք առաջնորդներ՝ Եսայի, Իսահակ (Սահակ, դարձյալ Ահագին մականվամբ) և Միքայել վարդապետները: Հակասություններ կան բուն աղբյուրների և այլ տվյալների միջև: Այսպես, Հ. Ասատուրը գրում է, որ Թորոս եպ. Սսեցու՝ 1784 թ. Կիլիկիայի կաթողիկոս օծվելու միջոցներին՝ 1784 թ. սեպտեմբերին <<Էջմիածնէն նուիրակ եկած էր Պոլիս Սահակ վարդապետ, փառահեղ կերպարանքով ահագին մարդ մը... Սահակ կատեր Զաքարիա պատրիարքը եւ օր մը վիճաբանութեան մը պահուն բարկանալով ապտակեց զայն: Կաթողիկոսը (Ղուկաս Կարնեցին-Ա.Խ.) լսելով իրողութիւնը՝ անմիջապէս Սահակի տեղ իբր նուիրակ դրկեց Պոլիս նախորդ նուիրակ Մինաս եպիսկոպոսը, իսկ Սահակ Ահագին ... գնաց Իզմիր, իբր առաջնորդ>>⁴⁹⁹:

Բայց այս միջադեպը չէր կարող լինել 1784 թ. սեպտեմբերի միջոցներին, որովհետև Սահակը օգոստոսին արդեն գործող առաջնորդ էր: Իրոք, այդ թվականի օգոստոսին Ղուկաս կաթողիկոսը գրում էր նրան՝

⁴⁹⁷ Նույն տեղում, էջ 7:

⁴⁹⁸ Դիվան հայոց պատմության, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, էջ 493:

⁴⁹⁹ Տ. Պալյանը հաստատում է այս՝ 1784 թվականը, նշելով, որ Սահակը իբր Էջմիածնայ նուիրակ Կ. Պոլիս եկած է 1784-ին եւ նույն տարին Իզմիր դրկուած է առաջնորդութեան պաշտօնով: Կերեւի թէ հազիւ քանի մը տարիներ պաշտօն վարած է...>> (Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 28): Ոչ մի հիմք չկա Հ. Ասատուրին և Տ. Պալյանին այս՝ Սահակի 1784 թ. առաջնորդության հարցում անճշտություն վերագրելու համար, որ ժամանակին թույլ է տվել տողերիս հեղինակը (տես Խառատյան Ա., Ջմյուռնիայի տերունի թեմի առաջնորդները, Պատմաբանասիրական հանդես, 2016, N 2, էջ 22 և 24):

Զմյուռնիա. <<Յիշեալ էիր եւ գտեղոյ ժանտախտն... Աստուած ողորմեսցի եւ բարձցէ անտի զգան զայն>>⁵⁰⁰:

Եթե 1784 թ. օգոստոսին Սահակը Զմյուռնիայի առաջնորդն էր, ապա չէր կարող սեպտեմբերին կամ դրանից հետո նշանակվել այդ պաշտոնին՝ նշված միջադեպի պատճառով: Իսկ եթե օգոստոսին առաջնորդ էր (ինչը վկայում է Ղուկաս կաթողիկոսը), ապա չի բացառվում, որ նա այդ պաշտոնը վարած լիներ նաև օգոստոսից առաջ:

22. Գալուստ վարդ., 1785-1790:

1784 թ. հետո Տ. Պալյանը չորս տարի բաց է թողնում՝ առաջնորդական աթոռը զբաղեցված տեսնելով միայն 1788-ին՝ ի դեմս Գալուստ վարդապետի⁵⁰¹, ընդամին, չնշելով նրա առաջնորդական պաշտոնի ավարտը: Ուշագրավ է նրա կողմից Կ. Չելիկյանին ուղղված Ղուկաս կաթողիկոսի 1790 թ. հուլիսի 25-ի կոնդակի վկայակոչումը, որով կաթողիկոսը հորդորում է իր հասցեատիրոջը <<Հոգետոբ որդւոյն մերոյ Գալուստ հանճարունակ վարդապետին օժանդակել ի գործսն... Եւ մեք մտադրեալ եմք Աստուծով դէպի աշնան եղանակն գնոր նուիրակ եւ առաջնորդ պատրաստել եւ ուղեւորել...>>⁵⁰²:

Դրանից հետո կաթողիկոսը, անկասկած, կատարել է իր մտադրությունը՝ Գալուստ վարդապետի փոխարեն 1791 թ. որպես նոր առաջնորդ և նվիրակ ուղարկելով Բսահակին: Կաթողիկոսի վերոհիշյալ կոնդակից պարզվում է, որ Գալուստ վարդ. 1790 թ. արդեն ավարտել էր իր նվիրակության շրջանը, որ կարող էր տևել երեք, ապա և ավելի տարիներ: Ուստի և նրա նվիրակության սկիզբը կարելի է համարել Տ. Պալյանի նշած՝ 1788-ից առնվազն երեք տարի հետ ընկած շրջանը, ավելի ճիշտ՝ 1785 թվականը, մանավանդ, ինչպես տեսանք, Միքայել վարդ. 1784 թ. զբաղեցնում էր իր պաշտոնը և նոր առաջնորդը (Գալուստ վարդ.) Զմյուռնիա կարող էր գնալ 1785 թվականին⁵⁰³:

23. Սահակ Ահագին (Բսահակ) Բ, 1784 թ. օգոստոս-?, 1791-1793:

Բսահակը առաջնորդական պաշտոնը վարել է երկու անգամ: Ա. Ալպոյաճյանը նրա առաջնորդության տարին է համարում 1790-

⁵⁰⁰ Դիվան հայոց պատմության, Ղուկաս Կարնեցի, էջ 461:

⁵⁰¹ Պալեան Տ., նշվ. աշխ., Դավինի, 1921, թիւ 1, էջ 28:

⁵⁰² Նույն տեղում:

⁵⁰³ Ըստ այդմ, 1785-1790 թթ. միջև է կառուցվել կամ նորոգվել Քասաբայի եկեղեցին, որի վերաբերյալ արձանագրությանը կվերադառնանք իր տեղում:

1793 թթ.⁵⁰⁴, մինչդեռ Իսահակը Ձմյունիա է ուղարկվել 1791 թ., ինչպես տեղեկացնում է Ղուկաս կաթողիկոսը Հովսեփ Արղությանին⁵⁰⁵: Ա. Ալպոյաճյանը փաստորեն նկատի ունի նրա առաջնորդության երկրորդ շրջանը: Տ. Պալյանը, իր հերթին, Իսահակի առաջնորդության սկիզբը համարում է 1784-ը. <<Սա իբր էջմիածնայ նուիրակ Կ. Պոլիս եկած է 1784-ին եւ նոյն տարին Իզմիր դրկուած է առաջնորդութեան պաշտօնով: Կերելի թէ հազիւ քանի մը տարիներ պաշտօն վարած է եւ կըսուի, թէ վախճանած է ի Ձմիւռնիա>>,-գրում է նա⁵⁰⁶:

Հ. Ասատուրը ևս Իսահակի առաջնորդ նշանակվելու (առաջին անգամ) տարին համարում է 1784-ը⁵⁰⁷, որի պատճառը, ինչպես տեսանք վերը, Ջաքարիա պատրիարքի հետ նրա ընդհարվելն էր և որից հետո Ղուկաս կաթողիկոսը Իսահակին, ով էջմիածնի նվիրակն էր Կ. Պոլսում, նույն պաշտոնով տեղափոխում է Ձմյունիա:

Իսահակը մահացել է Ձմյունիայում, իբրև առաջնորդ և նվիրակ՝ 1793 թ. նոյեմբերից երկու-երեք ամիս առաջ⁵⁰⁸, ինչպես հայտնում է Ղուկաս կաթողիկոսը՝ 1793 թ. նոյեմբերի կոնդակում⁵⁰⁹:

24. Դանիել արք., 1793-1797:

Նույն այդ կոնդակում, որտեղ Ղուկասը հայտնում էր Իսահակ վարդ. մահվան մասին, հավելում էր, որ Ձմյունիայի նվիրակ և առաջնորդ է կարգում Դանիելին՝ <<պատուիրելով նմա զի մեծ կոնդակն զոր տուեալ էաք Իսահակ վարդապետին հանգուցելոց, զայն ի յիւր անուն փոխեալ

⁵⁰⁴ Ալպոյաճեան Ա., Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 282:

⁵⁰⁵ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Թ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն 1, 1778-1800, էջ 126: 1791 թ., մինչև Իսահակի՝ Բայազետից Ձմյունիա հասնելը, Ղուկասը նրան ևս <<թուղթ>> է գրել (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 41):

⁵⁰⁶ Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 28:

⁵⁰⁷ Ասատուր Հ., Կոստանդնուպոլսոյ հայերը և իրենց պատրիարքները, Ստանպուլ, 2011, էջ 128:

⁵⁰⁸ Տես Ղուկաս կաթողիկոսի 1793 թ. նոյեմբերի կոնդակը Ձմյունիայի հայերին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 59, նաև՝ թղթ. 5, վավ. 46):

⁵⁰⁹ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 282: Իսահակ վարդ. եղբորը՝ տիրացու Ստեփանին գրած իր նամակում Ղուկաս կաթողիկոսը հանգուցյալ առաջնորդին բնութագրում է որպես <<այդ զարմանալի, վարդապետն իմաստուն, գրիչն արագագոյն>> (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ 32/ա):

է>>⁵¹⁰: 1793-ը, իբրև Դանիելի պաշտոնավարման սկիզբ, նշված է նաև Ալ. Երիցյանի հրատարակության մեջ⁵¹¹: Ա. Ալպոյաճյանը, մինչդեռ, Դանիելի պաշտոնավարման սկիզբն ու ավարտն է համարում 1797-1798 թթ., նույնը կրկնում է Տ. Պալյանը, իսկ Մ. Օրմանյանը իր հերթին նշում է 1796-1797 թթ.⁵¹²:

Կ. Պոլսից Դանիելը Ջմյունիա է հասնում 1794 թ. օգոստոսին, որ փաստվում է նույն ամսին զմյունացի Գալուստ քահանային Ղուկասի գրած թղթից⁵¹³:

Հայտնի են Դանիելի և զմյունահայ վերնախավի որոշ անձանց միջև գծությունները նոր առաջնորդի՝ իր պաշտոնատեղին գալուց ի վեր: Բանը հասավ այնտեղ, որ Դանիելի հակառակորդները <<բազմակնիք մահսերօք>> (հանրագրով) դիմեցին կաթողիկոսին, որ նա Դանիելին փոխարինի մեկ այլ առաջնորդով⁵¹⁴: Դանիելին սատարում էր ազդեցիկ Մարգարը՝ Ապրոյան տոհմից: Ջուր անցան կողմերին հաշտեցնելու՝ կաթողիկոսի և պատրիարք Զաքարիա Կաղզվանցու ջանքերը, որ նրանք գործադրեցին 1795-1797 թթ.⁵¹⁵: Կաթողիկոսը, ի դեպ, ենթադրում էր, որ գործը հաշտությամբ չի ավարտվելու, ուստի գրում էր Զաքարիա պատրիարքին, որ հաշտությունը չհաջողելու դեպքում մտադիր է Ջմյունիայում Դանիելին փոխարինել եպ. Մարտիրոսով, իսկ իրեն՝ Դանիելին, նույն պաշտոնով ուղարկել Ռումելիա⁵¹⁶: Իսկապես, 1797 թ. Դանիելը մեկնում է Ռումելիա:

Կաթողիկոս է ընտրվել 1801 թ.:

25. Մարտիրոս արք., 1797-1816:

⁵¹⁰ Նույն տեղում:

⁵¹¹ Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար, էջ 27:

⁵¹² Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 13/26 ապրիլի: Պալեան Տ., նշվ. աշխ., թիւ 2, էջ 59: Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 3692: Կարելի է կարծել, որ անճշտությունը սկիզբ է առնում Ալ. Պերպերյանից. <<(1796) եկն այսոսիկ ատուրս ի Կոստանդնուպոլիս Դանիել եպիսկոպոս նուիրակ սուրբ Էջմիածնի... եւ կատարեալ զգործս պաշտաման իւրոյ գնաց ի Զմիւռնիա...>>, գրում է նա (Պերպերեան Ա., Պատմութիւն հայոց, Ս. Էջմիածին, 2009, էջ 36):

⁵¹³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ 36:

⁵¹⁴ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս, էջ 744:

⁵¹⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ 55-56:

⁵¹⁶ Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրության համար, էջ 27:

Տ. Պալյանը նրա առաջնորդության սկիզբն է նշում 1797-ը, իսկ Ա. Ալպոյաճյանն անստույգ է համարում Հ. Քոսյանի նշած՝ 1800-1801 թթ. Ջմյունիայի առաջնորդ Մարտիրոս Մյունյաց եպ. և անունը, և ժամանակը: Նա նկատում է, որ իրականում խոսքը վերաբերում է 1799-1801 թթ. միջոցների առաջնորդ Մարտիրոս Կեսարացուն և որ Հ. Քոսյանի այդ սխալը գալիս է ոչ ճիշտ ընթերցված մի հիշատակարանից⁵¹⁷: Միաժամանակ, նա Մարտիրոսի պաշտոնավարման ժամանակն է համարում 1798-ից 1810-ը՝ նկատելով նաև, որ իրեն հայտնի չէ՝ 1810-ից հետո նա շարունակել է պաշտոնավարել, թե ոչ⁵¹⁸: Մարտիրոսի առաջնորդության սկիզբը առավել ստույգ է նշված Աղ. Երիցյանի տվյալներով՝ 1797 թ., որովհետև զմյունացի երեսիների հետ Դանիելին հաշտեցնելու՝ կաթողիկոսի և Ջաքարիա պատրիարքի անհաջող փորձերից հետո Դանիելը 1797 թ. փետրվարին մեկնում է Ռումելիա⁵¹⁹, իսկ դրանից հետո Մարտիրոսը նույն տարվա ընթացքում կարող էր հայտնվել Ջմյունիայում: Ի լրումն այս ամենի, 1801 թ. հուլիսին Մարտիրոսը գրում էր Դավիթ կաթողիկոսին. <<Արդ... զի ահա Բ ամ եղև, որ ի նուիրակական գործոյ վախճան առեալ, միայն առաջնորդականին կեամք և մնամք գործն պարապեալ>>⁵²⁰: Ուրեմն, Մարտիրոսը դեռ 1800 թ. ավարտել է սովորաբար երեք տարի տևող նվիրակի պաշտոնը, որ սկիզբ էր առել առաջնորդության հետ միասին՝ 1797 թ.:

⁵¹⁷ Պալեան Տ., նշվ. աշխ., Դավիթ, 1921, թիւ 2, էջ 60: Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 14/27 ապրիլի: Տես նաև Քոսեան Հ., Հայք Ի Ջմիւռնիա, հ. 1, էջ 113-114:

⁵¹⁸ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., 1904, 13/26 ապրիլի: Մարտիրոսի պաշտոնավարման ժամանակի խնդիրը ավելի է խճճվում Ն. Ակինյանի ոչ հավաստի մի տեղեկությամբ, ըստ որի, Ջմյունիայում Ապրոյանների տոհմաձառով <<զբաղած է նաեւ Ջմիւռնիոյ առաջնորդը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս՝ 1804-ին>> (Ակինեան Ն., Երեմիա Չելեպի Քեօմիւրճեան, էջ 239): Մեսրոպ արք. մասին մեզ այլ տվյալներ մատչելի չեն: Ընդհակառակը, Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում պահվում է մի վավերագիր, որի համաձայն, Ապրոյանների տոհմաձառը վավերագրերի հիման վրա կազմել է Ջմյունիայի առաջնորդ Մարտիրոսը, և որ այդ վկայականը այդ նույն՝ 1804 թ. ապրիլի 20-ին ստորագրել և հաստատել են մի խումբ քահանաներ և աշխարհականներ (տես Յուզակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, էջ 333):

⁵¹⁹ Նիլթեր Ներսես Ե-ի կենսագրութեան համար, էջ 27:

⁵²⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. 92:

Այժմ վերադառնանք Մարտիրոսի պաշտոնավարման ավարտին, որ 1810-ով է ամրագրում Ա. Ալպոյաճյանը: Բայց Մարտիրոսը պաշտոնավարում էր 1812 թ., այդ տարվա դեկտեմբերի 18-ին նա նամակ է գրել Ներսես Աշտարակեցուն՝ հայտնելով Ջմյունիայում տարածված ժանտախտի մասին⁵²¹: Ավելին, կա Էջմիածնի տնտեսական հաշիվների 1816 թ. մի մատյան, որտեղ նշված է. <<Ընդ Մարտիրոս եպս. -ին եկեալ իզմիրցոց տուրքն եղև եօթանասուն և հինգ թուման>>⁵²²: Հետաքրքիր է, որ պահպանվել է Մարտիրոսի՝ 1811 թ. սեպտեմբերի 1-ի թվակիր կտակը, որ 1825 թ. հաստատել են զմյունահայ <<իշխանները>>⁵²³:

Դավիթ-Դանիելյան պայքարի տարիներին Մարտիրոսը Դավթի հուսալի կողմնակիցն էր, որ հոգուտ իր պաշտպանյալի և համախոհի, գործի էր դնում իր ազդեցությունը ոչ միայն Էջմիածնի միաբանների, այլև Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականության շրջանում⁵²⁴: Նրա դեմ խմբվեցին, բնականաբար, Դանիելի կողմնակիցները, որ տեղի տվեց տնական երկպառակությունների⁵²⁵: Մարտիրոսին վտանգավոր հակառակորդ էր համարում Դանիելը, ով Ալեքսանդր I-ին հղած գրության մեջ զանգատվում էր նրանից⁵²⁶: Իր երկարատև առաջնորդության համար Մարտիրոսը պարտական էր Դավիթ-Դանիելյան պայքարի վայրիվերումներին:

26. Փիլիպոս եպ., 1816-1821:

Ա. Ալպոյաճյանը վկայակոչում է 1820 թ. հոկտեմբերի 26, Իզմիր թվագրումով մի գրքի ընծայականը՝ <<ի Փիլիպոս նուաստ եպիսկոպոսէ Ջմիւնոյս>>, հավելելով, թե <<Ասով, անշուշտ, չէ կարելի թէ երբ եկած

⁵²¹ Նույն տեղում, թղթ. 29, վավ. 133:

⁵²² Նույն տեղում, թղթ. 29, վավ. 151:

⁵²³ Նույն տեղում, թղթ. 22-բ, վավ. 52/ա:

⁵²⁴ Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 746: Հայտնի են նաև Կ. Պոլսի Գրիգոր պատրիարքի (ուս նգովել էր Դավիթը) փորձերը՝ <<ոտիւք եւ ձեռքք անխնամ>> արքայազն Ջմյունիայի առաջնորդին (Դիւան հայոց պատմութեան, Գիրք Զ, էջ 568):

⁵²⁵ Ջմյունիայում Դավթին, ուրեմն և Մարտիրոսին պաշտպանում էին երեւելիներ ՄոսկոՖ Հովհաննեսը, Ստ. Ագարյանը, Գ. Հարությունյանը և այլք, Դանիելին՝ թերևս, ամենաազդեցիկ անձը՝ Մարգար Ապրոյանն իր համախոհներով (տես Դիւան հայոց պատմութեան, Գիրք Է, մասն երկրորդ, Դաւիթ կաթողիկոս, էջ 164-165):

⁵²⁶ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ե, էջ 290:

եւ երբ ձգած է Իզմիրը»⁵²⁷: Աղբյուրները, սակայն, բավականաչափ տեղեկություններ են հայտնում և մեկի, և մյուսի մասին:

Փիլիպոսը հաջորդել է Մարտիրոսին նույն՝ 1816 թ., որ վկայում է Եփրեմ կաթողիկոսի 1816 թ. ապրիլի 15-ի կոնդակը՝ Փիլիպոսին Ձմյունիայի նվիրակ և առաջնորդ նշանակելու և Մարտիրոսին հետ՝ Էջմիածին հետ կանչելու մասին⁵²⁸: Ինքը՝ Փիլիպոսը, Ձմյունիա է հասել 1816 թ. մայիսին⁵²⁹: Փիլիպոսի պաշտոնավարման ժամանակ է, որ զմյունացի Հ. Մ. Վանանդեցի քահանան ընդօրինակել է Ստ. Լեհացու՝ Թ. Աքվինացուց թարգմանած <<Գիրք հոգեաց եւ հրեշտակաց>> երկը՝ 1817-1820 թթ.⁵³⁰: 1816 թ. աշնանը և այնուհետև Փիլիպոսն իրականացրել է իր նվիրակական առաքելությունը Ձմյունիայի շրջակա թեմերում՝ Մանիսա, Քասաբա, Պայանտըր, Էոդեմիշ և այլուր⁵³¹:

Իր տեղում տեսանք, որ այս առաջնորդն ունի իր անվանակիցը՝ ի դեմս դարձյալ Ձմյունիայում 1779-1782 թթ. առաջնորդ եղած Փիլիպոսի: Թերևս ժամանակի առումով և տեսականորեն հնարավոր է, որ նրանք միննույն անձը լինեն, սակայն, թվում է, նրանք տարբեր մարդիկ են. 1820 թ., վերջին Փիլիպոսի առաջնորդության ժամանակ գրված մի ձեռագրում տրված է նրա կենսագրությունը, որտեղ ասված է, որ մինչև Ձմյունիա գալը նա նվիրակ է եղել Կարինում, Տիգրանակերտում և Ամիդում, և ոչ մի խոսք չկա նախկինում նրա՝ Ձմյունիայի թեմի առաջնորդ լինելու մասին⁵³²:

Ջարմանալի գուգադիպությամբ, սակայն, Փիլիպոսը, ինչպես և իր երբեմնի առաջնորդ անվանակիցը, ընդհարվել է զմյունահայ երևելի-

⁵²⁷ Ալպոյաճեան Ա., Առաջնորդություն հայոց Իզմիրի, 1904, 14/27 ապրիլի:

⁵²⁸ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 148: <<Գրեցաք ահա առ նա (Մարտիրոսին-Ա.Խ.) գալ հանգչիլ ի բազմամեայ աշխատանաց իւրոց ի փափագելի գիրկս լուսածին ծնողիս (իմա Ս. Էջմիածին-Ա. Խ.) մերոյ>>,- գրում էր Եփրեմ կաթողիկոսն իր նույն կոնդակում (նույն տեղում):

⁵²⁹ ՄՄ, ձեռ. 2718, էջ 77: Ինքը՝ Փիլիպոսը գրում է իր հիշատակարանում՝ <<1816և մայիսի 1, ի գալն հրամանաւ Եփրեմայ սրբազան կաթողիկոսին և համակամութեամբ սրբազան եպիսկոպոսացն սինթոսականացն... ի պանծալի մայրաքաղաքս Ձմյունիա ի գործ նուիրակութեան և առաջնորդութեան...>> (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, Ե., 2004, էջ 358-359):

⁵³⁰ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. II, էջ 615-616:

⁵³¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 12, 33, 39-41, 46-47:

⁵³² ՄՄ ձեռ. 2718, էջ 76- 76/ա:

ների հետ: 1819 թ. դեկտեմբերին Ներսես Աշտարակեցին գուր չէր գրում Մարգար Ապրոյանին, թե <<յաղագս որոմանցն երկպառակութիւն ոչ պակասելոց ի վիճակի յայդմիկ>>⁵³³:

Մինչ այդ ծայր էին առել առաջնորդի և գմյունահայ վերնախավի ընդհարումները, որոնք մի պահ խաղաղվեցին, անշուշտ, կաթողիկոսի միջամտությամբ, որը լավ իրագել էր համայնքի իրականությանն ու անցուդարձին: 1818 թ. հունիսի 6-ի կոնդակով Եփրեմ կաթողիկոսը ողջունում էր կողմերի միջև հաստատված հաշտությունը. <<Լուեալ իմացաք ի միական և ի միաբան գրութենէդ ձերմէ որ ի 21 մարտի, ի 26 մայիսի առ որ ցնծացեալք մխիթարեցաք...>>, գրում է կաթողիկոսը և հավելում. <<Խոովառիթ բանքն թէպէտ սաստիկ զվէրս ի մեզ յաւելին, բայց միաշունչ ձայն ձեր բարեպաշտութեան և սէր և ի հնազանդութիւն վերստին ընդ պատկերին մերոյ և առաջնորդիդ ձերոյ...>>⁵³⁴:

Սակայն այս բախումները շարունակվեցին նաև 1820 թ. և ընդհուպ մինչև Փիլիպոսի հեռանալը Էջմիածին՝ 1821 թ. մարտ⁵³⁵: Ընդհարումների պատճառը գմյունահայ երևելիների միջև առկա գծություններն էին, համայնքում գոյացած պարտքերի վճարման խնդիրը, որ սրվում էր առաջնորդարանի կողմից այդ պարտքը մարելու շուրջ մեծահարուստների տարբեր մոտեցումներով: Այս իմաստով հարցին բավական լույս է սփռում Փիլիպոսի հակառակորդ Ջմյունիայի <<չորից իշխանաց>> դիմումը Կ. Պոլսի պատրիարքին (1820 թ. 4 հունվար): Դիմումը գրել էին երևելիներից Ստեփան Ջմյունակեայանը, Մկրտիչ Նուպարյանը, Հարություն Էքիզյանը և Հովհաննես Եղիազարյանը. <<Ասկէ վեց ամիս առաջ, գրում են նրանք, - իւրան նորոգութեան համար (իմա Փիլիպոսն իր առաջնորդական վերընտրության համար- Ա.Իւ.) արգու մահսէր (հանրագիր-Ա. Իւ.) խնդրեց, հասարակութիւնն էլ իւրեան խոշնութլուխ չունենալով (իրենից դժգոհ լինելով-Ա. Իւ.) չկամեցան անել արգու մահսէր: Վերջապէս իշխանաց մէջ մեծ խռովութիւն ձգելով հազիւ թէ կարաց (Փիլիպոսը-Ա. Իւ.) չորս կամ հինգ մարդ իւրան կողմը անել>>⁵³⁶:

Դիմումի հեղինակները պատրիարքին գանգատվում էին ոչ միայն համայնքի պարտքը մարելու հարցում առաջնորդի կամայական մոտե-

⁵³³ ՄՄ, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 165:

⁵³⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 155:

⁵³⁵ Տես Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, էջ 746:

⁵³⁶ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 36, վավ. 4:

ցումների, այլև նվիրակական հարկերի չափերը որոշելիս նույն վարքագիծը ցուցաբերելու մեջ:

Նկատենք, որ Էջմիածնին ենթակա տերունի թեմի երեսելիների դիմումը ոչ թե կաթողիկոսին, այլ Կ. Պոլսի պատրիարքին՝ ինքնին ի հայտ էր բերում նրանց խորին դժգոհությունը, անգամ դիմաշրջվելը Էջմիածնից: Համայնքում այս տրամադրությունների առկայությունը, անկախ այս դիմումին տեղյակ լինելուց կամ չլինելուց, չէին կարող չառաջացնել Եփրեմ կաթողիկոսի տագնապը՝ ընդհուպ մինչև Էջմիածնի շահերին ծայրահեղ ջանախնդիր առաջնորդին հեռացնելու չափ: Կաթողիկոսի այս կարծիքը, կարծում ենք, անփոփոխ մնաց անգամ այն ժամանակ, երբ Փիլիպոսը, այնուամենայնիվ, իր համակիրների օժանդակությամբ հասավ այն բանին, որ կարողացավ հօգուտ իր վերահաստատման հանրագիր կազմել և ուղարկել Էջմիածին: Համենայն դեպս, առաջնորդ Փիլիպոսին գրած իր նամակում (անթվակիր, կարծում ենք՝ գրված 1820 թ. դեկտեմբերին կամ դրանից ոչ շատ առաջ) Ներսես Աշտարակեցին նախ հայտնում էր հաճելի լուրը՝ առաջնորդական պաշտոնում նրա <<վերանորոգութեան>> հանրագիրը համայնքի կողմից, ապա և անախորժը՝ շատ թափանցիկ ակնարկով. Էջմիածնից, հայտնում էր նա, Թուրքիա Կ. Պոլսի կողմն են գնացել Էջմիածնի Ս. Ժողովի երեսելի անդամներ Հովհ. Կարբեցին, Ստեփանոս Ենովքյանը և Ստեփանոս Թելավեցին, որոնք Կ. Պոլսից <<ցրուեալք անդէն լինելոց են, մինն ի նոցանէ առ ձեզ՝ այդր Զմիւռնիոյ, մինն ի Պալիքէտէր և մինն ի Կեսարիայ, եթէ իցէ ստոյգ լուրն ի համբաւուց>>⁵³⁷:

Խոսքը, և այդ վերաբերում էր արդեն գործողություն դարձած խոսքին, այսինքն, նշված թեմերում նոր նշանակված առաջնորդներին:

27. Ստեփանոս եպ. Ենովքյան, 1821-1824:

Հ. Քոսյանը, և նրան հետևելով՝ Ա. Ալպոյաճյանն ու Տ. Պալյանը խախտում են առաջնորդների հերթականությունը՝ Փիլիպոսի հաջորդը համարելով Ստեփանոս եպ. Աղավնուն⁵³⁸. <<1825-ի միջոցները, գրում է Հ. Քոսյանը, -Զմիւռնիա իբր Էջմիածնի թեմ նկատուելով՝ Էջմիածնի կողմանէ առաջնորդ կը կարգուի Ենովքեան Ստեփան արքեպս.: Քիչ մը ետքը ռուսաց եւ Թիւրքիոյ մէջ ծագած պատերազմին պատճառաւ եւ քաղաքական բերմամբ, երբ Զմիւռնիա կանցնի Կ. Պոլսոյ պատրիարքու-

⁵³⁷ ՄՄ, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 408:

⁵³⁸ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 14/27 ապրիլի: Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 61:

թեան իրաւասութեան ներքեւ, Զմիւռնիոյ առաջնորդ կը կարգուի Աղաւնի Ստեփան արքեպս. >>⁵³⁹:

Շ. Քոսյանը շփոթում է Ստեփանոս Աղավնուն և Էջմիածնից իբրև առաջնորդ նշանակված Ստեփանոս Ենովքյանին՝ Զմյուռնիայի տերունի թեմի վերջին առաջնորդին: Ստեփանոս եպ. Ենովքյանը Զմյուռնիա է հասել 1821 թ. հունվարի 21-ին և ստանձնել առաջնորդական պաշտոնը, իսկ Փիլիպոսը Էջմիածին է վերադարձել դեռևս նույն տարվա մարտի 20-ին՝ Մանիսայից⁵⁴⁰: Ինչ վերաբերում է Ստեփանոս եպ. Աղավնուն, ապա նա Զմյուռնիայում հայտնվել է ոչ թե որպես Էջմիածնական ավանդական տերունի թեմի առաջնորդ և նվիրակ, այլ Կ. Պոլսից առաքված պատրիարքական փոխանորդ, Ստ. Ենովքյանի հրաժարականից՝ 1825 թ. փետրվարից հետո⁵⁴¹, երբ փաստորեն վերացվել էր Զմյուռնիայի Էջմիածնական տերունի թեմը:

Այն, որ Բ. դուռը պատրաստվում էր Զմյուռնիայի, և նույն կերպ, կայսրությունում գտնվող այլ թեմերի ենթակայությունը դուրս բերել Էջմիածնի իրավասությունից, վերջինիս հայտնի էր դեռևս 1824 թ.: Կ. Պոլսում Էջմիածնի նվիրակ արք. Աստվածատուրին, և ինչպես զգուշորեն գրում էր Ներսեսը Ստեփանոսին, <<կասկածն հասարակաց>> ձգտում է <<դադարեցուցանել ի գործոց իւրոց>>⁵⁴²: Աստվածատուրի դեմ հարուցվող վտանգներին դիմակայելու նպատակով էր, որ Ստեփանոսը պետք է մեկնէր Կ. Պոլիս: Այդ ակնհայտ է դառնում Ներսես Աշտարակեցու 1824 թ. դեկտեմբերի 24-ի թվակիր նամակից՝ ուղղված Ստեփանոսին, ընդամին, նա քանիցս պատվիրում է Զմյուռնիայի առաջնորդին՝ զգույշ լինել ավելորդ լրատվություն չտալու համար⁵⁴³: Երևում է՝ Էջմիածինը փորձել է պահպանել Աստվածատուրի ներկայությունը Թուրքիայում՝ Զմյուռնիայում Ստեփանոսի առաջնորդական պաշտոնը նրան հատ-

⁵³⁹ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 114:

⁵⁴⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ, 38, վավ. 108/ա: Ինչպես տեսանք վերը, Ներսես Աշտարակեցին նոր առաջնորդի մոտալուտ գալստյան մասին հայտնում է գործող առաջնորդ Փիլիպոսին՝ 1820 թ. դեկտեմբերին: Իրականում նշված հոգևորականները Կ. Պոլիս էին հասել դեռևս 1820 թ. օգոստոսի 12-ին, երբ պոլսահայ համայնքը բռնված էր դավանական հուզումներով (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ, 38, վավ. 108/բ):

⁵⁴¹ Տես Ասատուր Շ. Կ., Պոլսոյ հայերը և իրենց պատրիարքները, էջ 166:

⁵⁴² ՄՄ, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 161:

⁵⁴³ Նույն տեղում:

կացնելու գնով: Հենց այդ էլ խնդրում էին իրենց համախոսականում զմյուռնացիները պատրիարքին, այն, որ Աստվածատուրը ստանձնի իրենց հրաժարված առաջնորդ Ստեփանոսի պարտականությունները: Ինչպես գրում է Ստեփանոսը իր նամակում (1825 թ. մայիսի 5-ին), մերժելով այդ համախոսականը, պատրիարքը, ամիրաների խորհրդով մտադիր էր Զմյուռնիա ուղարկել, որպես պատրիարքական փոխանորդ, Պանտրմայի առաջնորդ Ստեփանոս արհիիին (իմա նույն Աղավնուն)⁵⁴⁴: Դա նշանակում էր, որ այլևս Էջմիածինը զրկվում է Զմյուռնիայի իր թեմից և այն անցնում է Կ. Պոլսի պատրիարքության տնօրինությանը: Ա. Ալպոյաճյանը, ի դեպ, կարծում է, և դժվար է նրան համաձայնել, թե <<պատրիարքարանն առաջին անգամ 1825-ի սկզբները փորձ մը կընէ Իզմիրն իր թեմին կցելու՝ հոն դրկելով Ստեփանոս Աղանի եպս.-ը՝ պատրիարքական փոխանորդի տիտղոսով>>, որից հետո <<երկրորդ փորձ մը ըրած է եւ այս անգամ յաջողած է>>⁵⁴⁵:

Ստեփանոսի վերոհիշյալ նամակը հիմնովին հերքում է այս հարցում պատրիարքարանի որևէ նախաձեռնության կամ փորձեր անելու մտահղացումը: Խոսքը վերաբերում է ոչ միայն Զմյուռնիայի, այլև ամբողջ Օսմանյան Թուրքիայում տերունի թեմերը վերացնելու, դրանք Էջմիածնի իրավասությունների շրջանակից դուրս բերելու ընդհանրական ու քաղաքական որոշմանը, որ կարող էր կայացնել միայն օսմանյան պետությունը: Կարելի է միայն զարմանալ ոչ միայն Էջմիածնի՝ Բ. դռան հետ փոխհարաբերություններում ցուցաբերած միամտության և դրան համարժեք կրավորական դիրքորոշման, այլև իրադարձությունների ընթացքի վրա զուտ ազգային տրամադրություններով ներգործելու հայեցակետի վրա: Ցավոք, նույն տեսակետի կրկնությունն ենք տեսնում հայ պատմագիտության մեջ, գրեթե ութ տասնամյակ անց՝ ի դեմս Ա. Ալպոյաճյանի, ով Էջմիածնական տերունի թեմի վերացումը պայմանավորում է միայն Կ. Պոլսի պատրիարքարանի անհաջող կամ հաջողված փորձերով՝ կլանելու Զմյուռնիայի առաջնորդությունը և կատարելապես անգիտանալով օսմանյան պետության նոր, անհանդուրժող վերաբերմունքը Էջմիածնի քաղաքական կողմնորոշումների նկատմամբ: Այդ նշանակում էր Օսմանյան Թուրքիայի հայ համայնքների դուրսբերումը համազգային հոգևոր կենտրոնի՝ Էջմիածնի իրավասությունների սահ-

⁵⁴⁴ ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163/բ, վավ. 786:

⁵⁴⁵ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 14/27 ապրիլի:

մաններից՝ այս վերջինները հանձնելով իրեն հնազանդվելու պարտադրված Կ. Պոլսի հայոց պատրիարքությանը⁵⁴⁶:

Ստեփանոս Ենովքյանը՝ Ջմյուռնիայի տերունի թեմի վերջին նվիրակը և առաջնորդը, իր պաշտոնն ավարտեց 1825 թ. սկզբներին⁵⁴⁷: Այդուհետև, ինչպես կոեսնանք, Ջմյուռնիայի թեմը շարունակել է իր պատմությունը Կ. Պոլսի հայոց պատրիարքության իրավասության ենթակայությամբ՝ որպես զուտ հիշողություն պահպանելով իր ավանդական և յուրահատուկ կապերը Էջմիածնի կաթողիկոսության հետ:

28. **Հարություն եպ. Գապենճյան (Գապենճանյան), 1826-1829:**

Ա. Ալպոյաճյանը և Տ. Պալյանը այս եպիսկոպոսին հիշում են որպես Կ. պատրիարքարանի կողմից Ջմյուռնիա առաքված առաջին առաջնորդի⁵⁴⁸: Հ. Գապենճյանի առաջնորդությունը և ժամանակը հաստատելու համար Ա. Ալպոյաճյանը նկատում է, որ <<Յարութին եպս.-ի՝ Իզմիրու առաջնորդութիւնը ... կը յիշատակի, որչափ կը յիշենք, միայն Աստուածատուր եպս. Յովհաննիսեան. Յ. Քօսեան, Այվազեան և այլք կանգիտանան այս պարագան, որ շահեկան է, վասնզի շարքը (Ջմյուռնիայի առաջնորդների-Ա. Խ.) կը ճշտէ և մեր ըրած քիչ առջի շրջումը կարդարացնէ>>⁵⁴⁹:

Մ. Օրմանյանը, հղելով Ա. Տեր-Յովհաննիսյանին⁵⁵⁰, բացատրում է, որ Երուսաղեմի պատրիարքության գործերը կարգավորելու ընթացքում (թվականը չի նշում, բայց նկատի ունի 1825/1826 թթ.) <<Երուսաղեմի փոխանորդ Յարութին Եղեսացի վարդապետն ալ Ջմիւռնիոյ առաջնորդութեան յղուեցաւ>>⁵⁵¹:

Տ. Պալյանը այս առաջնորդին վերագրում է առաջնորդության նույն տարիները, ինչպես և Ա. Ալպոյաճյանը իրենից առաջ՝ 1826-1829 թթ.⁵⁵²:

⁵⁴⁶ Տերունի թեմերի վերացմամբ Օսմանյան պետությունը վերացնում էր նաև Էջմիածնի սեփականատիրական իրավունքները իր տարածքներում, որ առանձին իրավական հիմնահարցի նշանակություն ունի:

⁵⁴⁷ Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163/բ, վավ. 760:

⁵⁴⁸ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., 1904, 14/27 ապրիլի: Պալեան Տ., նշվ. աշխ., թիւ 2, էջ 62: Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ Գապենճեան, ըստ Տ. Պալյանի՝ Գապենճանյան ազգանվամբ:

⁵⁴⁹ Ալպոյաճեան Ա., նույն տեղում:

⁵⁵⁰ Տեր Յովհաննիսեան Ա., Ժամանակագրական պատմութիւն Սուրբ Երուսաղեմի, էջ 404:

⁵⁵¹ Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 4124:

⁵⁵² Պալեան Տ., նույն տեղում, էջ 62: Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., 14/27 ապրիլի:

29. Գաբրիել Եղիայան, 1829-1834:

Ա. Ալպոյաճյանը վերոնշյալ առաջնորդական շրջանը հատկացնում է Երուսաղեմի Գաբրիել պատրիարքին, նկատելով, որ նա եղել է նախկին պատրիարքը, որը պաշտոնավարումից հետո, ծերության պատճառով վերադարձել է Երուսաղեմ: Տ. Պալյանը գրում է, որ նա 1829-ին կարգվել է Զմյուռնիայի առաջնորդ՝ <<Երուսաղեմի պատրիարքութեան տիտղոսը վրան մնալու պայմանաւ>>⁵⁵³:

Խնդիրն այն է, որ Երուսաղեմի հայոց պատրիարքության խառնակ վիճակի պատճառով (որտեղ այս էլ որերորդ անգամ միաբանության բնականոն ընթացքը շեղել էր գոյացած պարտքը) Կ. Պոլիս էր կանչվել, ազգային հոգևոր և աշխարհիկ վերնախավի կողմից՝ Երուսաղեմի պատրիարք Գաբրիելը: Փաստորեն նպատակահարմար է համարվել նրան Երուսաղեմի գործերից հեռացնելը, բայց և նոր պատրիարք չնշանակելը, ուստի, ինչպես գրում է Մ. Օրմանյանը, <<1829 յուլիս 1-ին որոշուեցաւ (զուտ ձևականորեն պահպանելով նրա պատրիարքական պաշտոնը-Ա. Խ.) Գաբրիելի Զմիւռնիա երթալը եւ տեղւոյն առաջնորդն Եղեսիացի Յարութին վարդապետը Պրուսա և Կուտինա փոխադրուեցաւ>>⁵⁵⁴:

30. Թադեոս եպ., 1834-1837:

Ա. Ալպոյաճյանը և Տ. Պալյանն այս առաջնորդին հիշում են իբրև Գաբրիել եպ. հաջորդի, որը վախճանվել էր թեմերում իր առաջնորդական այցելության ժամանակ՝ Սյոքեում, 1837 թ.⁵⁵⁵: Ա. Ալպոյաճյանը որոշակի նշում է նրա առաջնորդության տարիները, որ կրկնել է Տ. Պալյանը, եթե չհաշվենք, ամենայն հավանականությամբ, տպագրական վրիպակը նրա շարադրանքում (1824՝ 1834-ի փոխարեն)⁵⁵⁶:

31. Թագթագյան Պ. արք., 1838-1840, 1845-1863, 1869-1872:

Տ. Պալյանը Պ. Թագթագյանի առաջնորդության առաջին շրջանի տարիներն է համարում 1838-1841-ը, Ա.Ալպոյաճյանը՝ 1838-1841/1842-ը⁵⁵⁷, իսկ Մ. Օրմանյանը և զմյուռնահայ համայնքի անցուդարձը հրատապ արձանագրող <<Արշալույս Արարատեան>> թերթը նշված շրջանի ավարտը եզրափակում են 1840 թվականով, որ շատ ավելի ստույգ է և ա-

⁵⁵³ Պալեան Տ. , նշվ. աշխ., 1921, թիւ 2, էջ 62:

⁵⁵⁴ Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 4200:

⁵⁵⁵ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., 1904, 15/28 ապրիլի:

⁵⁵⁶ Պալեան Տ., նույն տեղում:

⁵⁵⁷ Պալեան Տ., նույն տեղում: Ալպոյաճեան Ա., նույն տեղում:

հա թե ինչու. զմյուռնահայ թերթը տեղեկացնում է, որ Պողոս արքեպիսկոպոսը 1840 թ. նոյեմբերի 17-ին հրաժեշտ է տվել զմյուռնացիներին՝ թողնելով իր պաշտոնը և որ նա կանչվել է Կ. Պոլիս՝ հրավիրվելով պատրիարքի և ամիրանների կողմից⁵⁵⁸: Նրա փոխարեն, ինչպես կոտեսենք ստորև, Զմյուռնիայի առաջնորդ է ընտրվել արք. Մատթեոս Զուխաճյանը:

Երկրորդ անգամ Պ. Թագթագյանը Զմյուռնիայի առաջնորդությունը ստանձնել է 1845 թ. նոյեմբերի 26-ին, ինչպես հայտնում է ինքը՝ Ներսես Աշտարակեցուն՝ 1846 թ. հունվարի 20-ի գրությամբ⁵⁵⁹: Այս անգամ նա պաշտոնավարել է մինչև 1863 թ., երբ ընտրվել է Կ. Պոլսի պատրիարք, ինչը նշում են Հ. Քոսյանը, Ա. Ալպոյաճյանը և Տ. Պալյանը⁵⁶⁰, այս անգամ առանց որևէ տարբերության: Նրա պատրիարքության տարիներին (1863-1869) Զմյուռնիան նոր առաջնորդ չի ունեցել. վերջինիս գործառույթն իրականացրել են առաջնորդական փոխանորդներ Հ. վարդ. Զիլինկիրյանը, Գ. վարդ. Դերձակյանը և Կ. վարդ. Ալեքսանյանը՝ 1864-1867 թթ.⁵⁶¹:

1869 թ. Պ. Թագթագյանը թողել է պատրիարքական աթոռը և վերադարձել Զմյուռնիա՝ երրորդ անգամ ստանձնելով առաջնորդական պաշտոնը և այն վարելով ընդհուպ մինչև իր մահը՝ 1872 թ.:

32. Մատթեոս եպ. Զուխաճյան, 1841-1844:

Որպես առաջնորդ, Զմյուռնիա է եկել 1841 թ. մարտի 13-ին⁵⁶²: Հ. Քոսյանը նրա առաջնորդության տարիները թվագրում է 1842-1845-ով, Ա. Ալպոյաճյանն ու Տ. Պալյանը, արդեն ճշտված՝ 1841-1844-ով⁵⁶³: Մ. Օրմանյանը գրում է, որ Զմյուռնիայի առաջնորդ Մ. Զուխաճյանը Կ. Պոլսի հայոց պատրիարք է ընտրվել 1844 թ. հուլիսի 1-ին՝ Կ. Պոլսում գումարված ամիրանների ընտրողական ժողովի կողմից⁵⁶⁴, որ և պետք է ընդունել աներկբայորեն, իբրև նրա առաջնորդության ժամկետի ավարտ:

⁵⁵⁸ Տես Արշալոյս Արարատեան, 1840, 20 նոյեմբերի:

⁵⁵⁹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 121, վավ. 82:

⁵⁶⁰ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 115: Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., 15/28 ապրիլի: Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 63:

⁵⁶¹ Պալեան Տ., նշվ. աշխ., թիւ 3, էջ 91:

⁵⁶² Տես Արշալոյս Արարատեան, 1841, 14 մարտի:

⁵⁶³ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 115: Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., 15/28 ապրիլի: Պալեան Տ., նշվ. աշխ., թիւ 2, էջ 63:

⁵⁶⁴ Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 4379:

Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրվել 1858 թ. մայիսի 15-ին:

Այսպիսին է, մոտավորապես, Ջմյունիայի թեմի՝ Էջմիածնական նվիրակների և առաջնորդների, այնուհետև, Կ. Պոլսի պատրիարքության թեմի վերածված առաջնորդների գավազանագրքի պատկերը մեր թեման ընդգրկող ժամանակաշրջանում և որը հետագա լրացումների ու ճշտումների կարիք ունի: Ինչպես երևում է սույն շարադրանքից, շատ տարիների, անգամ տասնամյակների համար առաջնորդներ չեն հիշվում, որի պատճառը մասամբ աղբյուրների բացակայությունն է, իսկ հիմնականում այն, որ Էջմիածինը և քաղաքական, և Կ. Պոլսի պատրիարքության հետ աննպաստ մրցակցության պայմաններում ժամանակին տերունի թեմի առաջնորդներ չի կարողացել ուղարկել Ջմյունիա:

Անկախ տարբեր, այլ համատեքստերում ոչ պակաս կարևոր հանգամանքներից, Ջմյունիայի համայնքի և թեմի (տերունի և ապա ոչ տերունի) համազգային հեղինակության շնորհիվ նրա առաջնորդներից վեցը 1737-1858 թթ. ընթացքում ընտրվել են Ամենայն հայոց կաթողիկոսներ՝ Ղազար Ջահկեցին (1737), Աղեքսանդր Բյուզանդացին (Գարագաշ) (1753), Սահակ (Իսահակ) Ահագինը (1756, հրաժարվել է կաթողիկոսությունից), Ղուկաս Կարնեցին (1780), Դանիել Սուրմառեցին (1801) և Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցին (1858):

3. Ջմյունիայի եկեղեցիները

Ջմյունիայի գաղթօջախի պատմությունը իր փակ մնացած բազմաթիվ էջերով, անսպասելի շրջադարձերով և տարբեր լուսաբանումներով, անքակտելիորեն կապված է նրա եկեղեցիների պատմության հետ: Ավելին, եկեղեցիների պատմությունը մեծապես նպաստում է գաղթօջախի պատմության ճշմարտացի վերարտադրությանը, անգամ հանդես գալիս իբրև նշանախեց՝ հայ համայնքի նկարագիրն ու պատմության փուլերը վերհանելու և բնութագրելու տեսակետից:

Այն, որ Ջմյունիայի հայերը XIV դ. կամ դրանից էլ շատ առաջ բնակվել են քաղաքի բարձրադիր մասում, Պագոս լեռան բարձունքին, և որի մասին աներկբա հայտնում են Բ. Սլարսը, այնուհետև Հ. Քոսյանը, առանց որոշակիության, կարելի է ապացուցել փաստերով: Մեկ անգամ ևս հիշենք հնագույն՝ լեռան բարձունքին գետեղված հայկական թաղի պատմության դրվագները: Ըստ վերոհիշյալ հեղինակների և Հ. Քոսյանի

շարադրման, հայերը <<հաւանաբար 1500-ի վերջերը տակաւ թողուցած են նախկին մատրան վայրը (իմա լեռան բարձունքին, թուրքերի թաղի մոտ-Ս. Խ.) եւ հաստատուած այժմեան գտնուած տեղերնին, որ այսօրուան օրս գեղեցիկ եւ ընդարձակ թաղ մը կազմած են>>⁵⁶⁵:

Նախ նկատենք, որ <<1500-ի վերջերն>> ասելով Հ. Քոսյանը ենթադրում է XVI դարի վերջերը: Տեղափոխության փաստը XVI դ. վերջերը համարելը տրամաբանորեն կարելի է ընդունել, եթե նկատի առնենք, որ այդ դարի երկրորդ կեսին ևս հայերի մի մասը շարունակել է ապրել բարձունքի հին թաղում: Դրա մասին ոչ որոշակիորեն, բայց և կարող է հուշել այդ թաղի գերեզմանատնից նոր, ներքնի թաղում հայտնված շիրմաքարը՝ 1551 թ. արձանագրմամբ: Նկատենք նաև, որ մատուռը ամենայն իրավունքով կարող էր համարվել եկեղեցի, որպիսին համարում է և որի մասին առաջին ու հնագույն տեղեկությունը տալիս է Սիմեոն Լեհացին՝ 1610 թ. կողմերը: Վերստին հիշենք այդ տեղեկությունը. Իզմիրում, գրում է նա, <<կայր... հարիւր տուն հայի եւ երկու եկեղեցի. մինն ի բերթն եւ մինն ի դուրս>>⁵⁶⁶:

Երկու եկեղեցու առկայությունն ինքնին վկայում է, որ հայերը միջնաբերդի բարձունքից իջել են ներքև՝ քաղաքի ծովագերյա հատվածը, աստիճանաբար լքելով իրենց նախկին՝ թուրքերի հարևանությամբ գտնվող բարձրադիր թաղը: Բայց հայերի այս տեղաշարժը կարող էր կատարվել նաև XIV դ. առաջին կեսին՝ 1344 թ. հետո, երբ Ս. Հովհաննու միաբանության ասպետները պապի գործակցությամբ հաստատվեցին քաղաքի ծովափնյա շրջանում⁵⁶⁷:

Այսուհանդերձ, այս փաստարկը հավանականությունից այն կողմ չի անցնում, և միակ փաստը, որին կարելի է հենվել տվյալ դեպքում, մնում է այն, որ հայերն իրենց նախկին բարձունքին գտնվող թաղը պարպել են 1610 թ. (Սիմեոն Լեհացու վկայությունը երկու եկեղեցու մասին) առաջ. թե երբ, այս հարցի պատասխանը մնում է վիճահարույց, ուստի և Բ. Սլարսի և Հ. Քոսյանի պատասխանը, այսինքն XVI դ. վերջին, ունի

⁵⁶⁵ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 41:

⁵⁶⁶ Սիմեոն դպրի Լեհացույ Ուղեգրութիւն, էջ 38:

⁵⁶⁷ XIV դ. այս ժամանակաշրջանը՝ մինչև Լենկթեմուրի կողմից քաղաքի գրավումը (1402) նկատի ունի Վ. Ռամսեյը՝ գրելով, որ Զմյուռնիայում ստեղծվեց մի իրադրություն, երբ Պագոս լեռան բարձունքին տիրում էին թուրքերը, իսկ քրիստոնյաները տնօրինում էին ներքին (այսինքն մերձափնյա, նավահանգստին կից հատվածը) քաղաքը (տես Ramsay W. The Thousand and One Churches, p. 37).

գուտ վարկածի բնույթ: Հակառակ նրանց արդեն հիմնավոր այն կարծիքի, որ հայերը նախապես բնակվել են քաղաքի վերին մասում, իսկ հետո, ժամանակի ընթացքում, տեղափոխվել ներքև: Այս առումով նշենք նաև, որ <<Միայն երկու-երեք գերեզմանաքար կը ցուցուին Ս. Ստեփանոսի (վերջին՝ ներքին թաղի եկեղեցին-Ա. Խ.) պարտեզին մեջ, որոնք վերոյիշեալ մատրան շուրջը գտնուած գերեզմանոցէն փոխադրուած են⁵⁶⁸>>, գրում է Հ. Քոսյանը:

Զմյուռնահայերի եկեղեցիների խնդիրը հետագա շրջաններում շատ ավելի խճճված հակասական պատկեր է ընծայում, հատկապես XVII-XVIII դդ. կտրվածքով: Մենք տեսանք, որ քաղաքում 1610 թ., բնականաբար, դրանից էլ առաջ, հայերը միաժամանակ ունեցել են երկու եկեղեցի՝ նախկին և նոր թաղերում: Այս վերջին թաղում (ըստ Հ. Քոսյանի՝ Guartier Armenien) կառուցված եկեղեցին միջնադարից ի վեր, մինչև գաղթօջախի պատմության ավարտը, հանրահայտ Ս. Ստեփանոս եկեղեցին էր, որի կողքին, ինչպես կտեսնենք ստորև, մտորումների տեղիք է տալիս մեկ այլ անվամբ եկեղեցու քանիցս հիշատակումը: Այդ եկեղեցին տարբեր, անգամ միևնույն ժամանակներում կոչվել է Ս. Ստեփանոսի, մերթ Ս. Բարդուղիմեոսի, մերթ էլ միասին՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի անվամբ: Տարբեր տվյալներ կան արդեն հայկական վերջին թաղում եկեղեցիների քանակի վերաբերյալ: Ուղեգրական որոշ սկզբնաղբյուրներ նշում են մեկ եկեղեցի, մյուսները՝ երկու, ընդամին, ճանապարհորդները խոսում են միայն եկեղեցիների քանակի մասին՝ չհայտնելով դրանց անունները, որոնք պահպանվել են միայն հայկական աղբյուրներում: Երկու տարբեր անուններով եկեղեցիները ենթադրում են երկու եկեղեցիների առկայություն, որ հաստատվում են որոշ աղբյուրներով: Սակայն քիչ չեն նաև վկայությունները զմյուռնահայերի մեկ եկեղեցի ունենալու մասին, ուստի այս շփոթը պարզելու համար այս իրարամերժ տվյալները պետք է քննարկել մի ըստ միոջէ: Նախ, քննարկենք Ս. Ստեփանոս եկեղեցուն վերաբերող գրավոր հիշատակարանները, որոնցից ամենահինը թվագրվում է 1625 թվականով: Այդ Ղալաթիայում գրչագրված մի Ճառընտիրի հիշատակարան է՝ գրված տեր Գրիգորի ձեռքով և որոշակի հասցեագրմամբ.

⁵⁶⁸ Քութան Յ., նշվ. աշխ., էջ 39:

<<Գրեցաւ ի թուին Հայոց ՌՀԴ (1625): Աստուած ողորմի ասացեք խօջայ Աւետիքին... եւ ետ զսբ գիրքս... յիշատակ ի դուռն յԻզմիրայ Ս. Ստեփանոս Նախավկային>>⁵⁶⁹:

Ժամանակագրական հերթականությամբ վերոհիշյալ ձեռագրին հետևում է Հովհաննու հայտնության մի մեկնություն՝ գրված <<ի թուին Հայոց ՌՃԶ (1657)... Աշխատասիրութեամբ եւ ջանիւք նորոգ ընդօրինակեալ ի ձեռն իմ յոգնամեղ Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհաննու մեղսամած եւ ապարդուն քահանայիս որ եմ անարժան սպասաւոր եւ աւելածու Ս. Ստեփաննոս եկեղեցւոյն Իզմիրոնոյ>>⁵⁷⁰:

Դրանից հինգ տարի անց գրված մի ձեռագիր տեղեկացնում է, որ այն <<կազմեցաւ ի թուականիս ՌՃԺԱ (1662) ամին, ի Զմիրոն քաղաքի, ի դուռն սուրբ Ստեփաննոս Նախավկային>>⁵⁷¹:

Եվ վերջապէս, մի ձեռագրում՝ XVII դ. վերջին ձեռագիրը մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ, հայտնում է, որ ժողովածուի ընդօրինակումը <<կատարեցաւ ի Զմիրոն քաղաքի ի դուռն Սբ Ըստեփանոսի, թվը ՌՃԽԷ (1698)>>⁵⁷²:

Ս. Ստեփանոս եկեղեցին քանիցս հիշատակվում է, իբրև մեկ անվամբ եկեղեցի, նաև XVIII դ., այն դեպքում, երբ զուգահեռաբար գործածական էր եկեղեցու նաև երկանուն ձևը՝ Ս. Ստեփանոսի եւ Ս. Բարդուղիմէոսի համադրմամբ կամ միայն Ս. Բարդուղիմէոսի անվամբ: XVIII դ. վերջերից, սակայն, միակ գործածական ձևը դառնում է Ս. Ստեփանոս անվանումը՝ ընդհուպ մինչև դրա հրկիզումն ու կործանումը քեմալականների ձեռքով (1922): Այսինքն, զուգանունությունը վերանում է եւ Զմյուռնիայի հայերի այս եկեղեցուն ամրագրվում է մեկ անուն՝ Ս. Ստեփանոս եկեղեցի: Հետևենք, սակայն, XVIII դարում Ս. Ստեփանոս անվան առանձին կիրառման վերջին օրինակներին՝ խնդիրը նաև ժամանակագրորեն մինչև վերջ հստակեցնելու համար: XVIII դ. այդ հիշատակումներից առաջինը առկա է Ժողովածու մեկնությանց գրքի հիշատակարանում, որ <<գրեցաւ ի թուականութեան Հայոց 1211 (1762) նոյեմբերի 17, ի մայրաքաղաքս Զմիրոն, ի սուրբ Ստեփաննոս եկեղեցին Հայոց>>⁵⁷³: Ահա և նշված դարի՝ 1778-1780 թթ. Ս. Ստեփանոսի անվամբ

⁵⁶⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Բ, էջ 187:

⁵⁷⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, էջ 787:

⁵⁷¹ ՄՄ, ձեռ. 6332, էջ 233:

⁵⁷² ՄՄ, ձեռ. 2243:

⁵⁷³ Յուզակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, էջ 561:

եկեղեցու վերջին գրչագիր հիշատակումներից մեկը. ձեռագիրը (Կիրակոս Գանձակեցու <<Պատմութիւն>>-ը և Թովմա Մեծոփեցու <<Պատմութիւն Լէնկթմարոյ>>-ը) գրչագրվել է Ջմյունիայում՝ <<Հնդ հովանեայ սրբոյն Ստեփաննոսի շնորհալից եկեղեցւոյն յԻգմիոի քաղաքի ի պետըս ուսումնասիրաց>>⁵⁷⁴:

Մեկ անգամ ևս կրկնենք, որ վերոշարադրյալը վերաբերում է բացառապես Ջմյունիայի՝ մեկ սրբի, Ս. Ստեփաննոսի անվամբ եկեղեցու վավերագրական հիշատակումներին: Դրանք մենք առանձնացրեցինք, որովհետև Ջմյունիայում XVII-XVIII դդ. Ս. Ստեփաննոս եկեղեցու կողքին և համաժամանակ, երկիցս հիշատակվում է մեկ այլ՝ Ս. Բարդուղիմեոսի անվամբ եկեղեցի: Ինքնին հարց է առաջանում՝ արդյոք զմյունահայերը XVII-XVIII դդ. ունեցել են երկու եկեղեցի, այսինքն, Ս. Ստեփաննոս և Ս. Բարդուղիմեոսի անուններով եկեղեցիներ, որոնցից յուրաքանչյուրի հիշատակումով էլ, ի դեպ, գրչագրվել են ձեռագրեր: Հարցադրումը ավելի է ամրապնդվում այն իմաստով, որ ճանապարհորդներից ոմանք պարզապես նշում են, որ Ջմյունիայի հայերն ունեն երկու եկեղեցի, ցավոք, առանց անվան հիշատակության: Անդրադառնալով, ուրեմն, Ս. Բարդուղիմեոս եկեղեցուն: Որքանով մեզ հայտնի է, այս անվամբ XVII դարում եկեղեցին ձեռագրերում հիշվում է ընդամենը երկու անգամ: Ս. Բարդուղիմեոսը առաջին անգամ վկայվում է Ս. Ստեփաննոս եկեղեցու առաջին հիշատակումից (1625) երեք տարի անց՝ 1628 թ., մի Ավետարանի հիշատակարանում, որում տեղեկացվում է, որ ձեռագրի վերջին ստացող Ջենապ Չելեպին <<էառ գտուրբ աւետարանս ի հալլա ընչից իւրոց... եւ յետ յիշատակ Իգմիո քաղաք ի դունն սուրբ Բարդուղիմեոսի եկեղեցւոյն... ի թուականիս Հայոց ՌՃԷ (1628)⁵⁷⁵>>: Ավելացնենք, որ այս հիշատակարանն ընդօրինակած Ղ. վարդ. Փիրղալեմյանը Ս. Բարդուղիմեոսը ակներևաբար համարելով վաղեմի և չպահպանված եկեղեցի, կից ծանոթագրել է. <<Այժմ Բարդուղիմեոս եկեղեցի ոչ գոյ ի Ջմիւնիայ>>⁵⁷⁶:

Այնուհետև Ս. Բարդուղիմեոս եկեղեցին հիշվում է դրանից 34 տարի անց, մի Մաղմուսարանի հիշատակարանում՝ գրված <<Հայոց ՌՃԺԱ

⁵⁷⁴ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 2, էջ 484:

⁵⁷⁵ ՄՄ, Ղ. Փիրղալեմյանի հավաքածու, ձեռ. 6332, էջ 204:

⁵⁷⁶ Նույն տեղում:

(1662) ամին... ի քաղաքն Զմիւռ, ընդ հովանեաւ սուրբ Բարդուղիմէոսի եկեղեցուն⁵⁷⁷>>:

Եկեղեցիների քանակը և տարբեր անունները, թվում է, տարակուսանքի տեղիք չեն տալիս այն եզրակացության համար, որ XVII դ., գոնե մինչև 1662 թ., Զմյուռնիայում գործել են երկու եկեղեցիներ, որոնցից մեկը Ս. Ստեփանոսն է, մյուսը՝ Ս. Բարդուղիմէոսը: Սակայն խնդիրը կնճռոտվում է այն պահից, ավելի ստույգ՝ 1643 թվականի մի ձեռագրից սկսած, երբ հիշատակարաններում հայտնվում է երրորդ տարբերակը՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմէոսի միացյալ անվամբ մեկ եկեղեցին (անունների ոչ պարտադիր հերթականությամբ, ինչպես կոտեսները ստորև):

Այս անգամ ևս թվարկենք այս հիշատակումներն ըստ ժամանակագրական կարգի: Առաջինը ճաշոց է՝ գրված 1643 թ., Կեսարիայում և որպես հիշատակ՝ տրվել <<ի դրոնս վայելչայարկ և գեղեցկասար սուրբ եկեղեացն սուրբ Ստեփանոսի Նախավկային և սրբոյն Բարդուղիմէոսի առաքելոյն ի ծովահայեաց քաղաքս Իզմիր... ի թուական Հայոց ՌԴԲ (1643)⁵⁷⁸>>:

Ավելացնենք, որ ձեռագիրը չէր կարող միաժամանակ նվիրաբերվել երկու տարբեր եկեղեցիների, ինչին, կարծեք, մղում է **եկեղեացն** հոգնակի ձևը:

Երկու անվամբ մեկ եկեղեցու կամ երկու տարբեր եկեղեցիների խնդրի մեջ բավական պարզություն է մտնում 1688 թ. երկրաշարժից հետո ավերված եկեղեցին նորոգելու մասին տեղի առաջնորդարանի արձանագրությունը, որ մեջբերել է Հ. Քոսյանը. <<Ի թվին ՌՃԼԷ (1688) յունիսի 30 շարժ եղև յԻզմիրս. առաջին եկեղեցին ի հիմանց տապալեցաւ իսկ ի թվին ՌՃԼԸ (1689) յունուարի 29 ես Իզմիրոյ (Իզմիրոյ) առաջնորդ Յովսէփ վարդապետս ապաւինեցայ յողորմութիւն (ողորմութիւն) Աստուծոյ ի սուրբ Ստեփանոս եւ ի սուրբ Բարդուղիմէոս եւ զեկեղեցիս (եկեղեցիքս) հիմնարկեցաք... եւ կանգնեցաք զսոսա Տուն Աստուծոյ նորոգ արձան...⁵⁷⁹>>:

⁵⁷⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, էջ 346:

⁵⁷⁸ ՄՄ, Ղ. Փիրղալեմյանի հավաքածու, ձեռ. 6332, էջ 215ա-216:

⁵⁷⁹ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 57: Տես նաև Պալեան Տ., Գաւազանագիրք առաջնորդաց Զմիւռնիոյ, թիւ 1, էջ 25-26:

Տողատակի ծանոթագրության մեջ Հ. Քոսյանն անում է մի շատ ուշագրավ հավելում՝ բացատրելով վերը մեջբերված տեքստում առկա զուգադրությունների (Իզմիրու-Իզմիրոյ, յողորմութիւն-ողորմութիւն, զեկեղեցիս-եկեղեցիքս) պատճառը: Դերձանավաճառ (թելավաճառ) Եղիա Եսայանը, հայտնում է նա, իրեն՝ Հ. Քոսյանին է տրամադրել տարիներ առաջ իր ընդօրինակած՝ առաջնորդարանի դիվանի 1689 թ. վերոհիշյալ տեքստի մի տարբերակը, որը փոքր-ինչ տարբերվում է Հ. Քոսյանի մեջբերած արձանագրությունից (վերջինս այդ տարբերությունները նշել է փակագծերում): Այստեղ ուշագրավը Ե. Եսայանի տեքստում առկա **եկեղեցիքս** հոգնակի ձևն է, որ ամրապնդվում է <<եւ **կանգնեցաք զսոսա**>> դարձվածի հոգնակիությամբ: Պետք է եզրակացնել, ուրեմն, որ այս դեպքում ևս խոսքը վերաբերում է երկու անվամբ մեկ եկեղեցու:

Երկու անվամբ եկեղեցու հիշատակումը շարունակվում է նաև հետագա շրջանի ձեռագրերում: XVII դ. վերջի՝ Զմյուռնիայում պահված ձեռագրերից մեկում ասվում է. <<Գրեցաւ թուին ՌՃԽԴ (1695) նոյեմբերի ԻԶ (26) օրն Իզմիրոնի քաղաք ի դուռն սբ Ըստեփաննոսի եւ Բարդուղիմէոս առաքելոյն>>⁵⁸⁰:

XVIII դ. շարունակվում է եկեղեցու երկանուն գործածությունը: Կիպրիանու գրքի հիշատակագրությունը հավելում է. <<Գրեցաւ Կիպրիանոս ի Զմիրոնի քաղաքն ի դուռն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաքելոյն Բարդուղիմէոսի թուին ՌՃԿԲ (1713) փետրուարի Ե (5)...>>⁵⁸¹: 1760 թ. երկու հիշատակարաններում ևս եկեղեցին հիշվում է երկանուն ձևով, անունների այլ հերթագայմամբ՝ <<Ի ՌՄԹ (1760)... ընդ հովանեաւ սրբոյն Բարդուղիմէոսի եւ Ստեփաննոսի եկեղեցոյն>>⁵⁸²:

Նկատենք, որ 1760 թ. այս վերջին երկու հիշատակարաններով հիմնականում ավարտվում է Զմյուռնիայի եկեղեցու զուգանուն գործածությունը, որը, ինչպես կտեսնենք ստորև, ավելի շուտ արդեն ուներ սովորության ընդմիջ: Մինչդեռ, տասնամյակներ առաջ գործածության մեջ էր մտել մեկ անվամբ եկեղեցու հիշատակումը, ընդամենը՝ ամրագրելով միայն Ս. Ստեփանոս անվանումը: Ահա առաջնորդարանի դիվանատան այդ արձանագրությունը՝ 1760-ից տասնյոթ տարի առաջ. <<Ի թուին ՌՃՂԲ (1743) յունիս 15...սկիզբն եղև վերստին նորոգութեան Սուրբ

⁵⁸⁰ ՄՄ, ձեռ. 9656, էջ 93ա:

⁵⁸¹ Յուզակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Բ, էջ 190:

⁵⁸² Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի սրբոց Յակոբեանց վանքի, հ. 1, էջ 288:

Ստեփանոս եկեղեցույս եւ Սրբոյ Մինասայ տաճարին (իմա մատուռի-Ս. Խ.) ձախակողմեան աւանդատանն...»⁵⁸³:

Եկեղեցին այստեղ նշված է միայն Ս. Ստեփանոսի անվամբ, ճիշտ այնպես, ինչպես հիշվում է Զմյոռնիայի վաղեմի եկեղեցու անունը մեզ հայտնի հիշատակումներից հնագույնում՝ վկայված, ինչպես տեսանք, 1625 թ.: Բայց տեսանք նաև, որ հիշվում է առանձին Ս. Բարդուղիմեոս եկեղեցի՝ 1628 թ. ամրագրումով: Մնում է կարծել, որ 1625-ից էլ առաջ Զմյոռնիայում հայերն ունեցել են եկեղեցական համալիր՝ երկու առանձին կառույց-եկեղեցիներով, որոնցից մեկը Ս. Ստեփանոսն էր, մյուսը, որպես տաճար կամ մատուռ՝ Ս. Բարդուղիմեոսը: Ժամանակի ընթացքում, ավելի ճիշտ, բնական աղետներից հետո եկեղեցու հերթական նորոգումներից մեկի ժամանակ, Ս. Բարդուղիմեոս տաճարը չի վերականգնվել, հնարավոր է՝ 1689 թ. կամ դրանից էլ առաջ և հետո, անգամ մինչև 1743 թ. մեզ հայտնի նախավերջին նորոգումը, երբ արդեն ոչ համալիրի տեսքով մնացած մյուս կառույցը՝ Ս. Ստեփանոսը մի որոշ ժամանակ սովորության ռուծով շարունակել է կոչվել գույգ անուններով՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի եկեղեցի (1760 թ. վերոբերյալ հիշատակարանները), մինչև որ արդեն 1780-ականից վերջնականապես տիրապետող է դարձել մեկ սրբի անունը կրող՝ Ս. Ստեփանոս եկեղեցի անվանաձևը: Այստեղ պետք է մեկ վերապահում անել. Ս. Բարդուղիմեոսի անվամբ կարող էր կոչվել կից մատուռը կամ շինությունը՝ ընկալվելով որպես ինքնուրույն եկեղեցի կամ աղոթատեղի: Վերը նշված՝ Ե. Եսայանի տեքստում, որպես եկեղեցու վերականգնման վերաբերյալ արձանագրության (1689) տարբերակ, և որը փակագծերում վերականգնել է Հ. Քոսյանը, Ս. Ստեփանոսը և Ս. Բարդուղիմեոսը կարող էին ենթադրվել իբրև երկու եկեղեցիներ՝ երկու տարբեր անուններով, որոնցից մեկը բուն եկեղեցին էր, իսկ մյուսը՝ կից շինությունը կամ այսպես կոչված տաճարը՝ Ս. Բարդուղիմեոսի անվամբ: Քիչ առաջ տեսանք առաջնորդարանի դիվանատան մեկ այլ՝ 1743 թ. արձանագրությունը <<Սուրբ Ստեփանոս եկեղեցույս եւ Սրբոյ Մինասայ տաճարին ձախակողմեան աւանդատան» նորոգության վերաբերյալ:

Զմյոռնահայերի մեկ, թե երկու եկեղեցի ունենալու խնդիրը, սակայն, այս ամենով չի սպառվում: Բացի Ս. Ստեփանոս և Ս. Բարդուղիմեոս անվամբ համալիրից, զմյոռնահայերն ունեցել են իսկապես իրենց երկ-

⁵⁸³ Քոսեան Զ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 57:

որոշ եկեղեցին՝ վավերագրերով ամրագրված XVII դ. սկզբից մինչև 1650-ական թթ.: Վերստին անդրադառնանք Սիմեոն Լեհացու՝ 1610 թ. հիշատակած երկու եկեղեցիներին՝ իրենց որոշակի տեղագրությամբ գտնվելով <<մինն ի բերթն եւ մինն ի դուրս>>⁵⁸⁴: Այսինքն, պետք է կարծել, որ 1610 թ. դեռ կար քաղաքի միջնաբերդի հայկական հին եկեղեցին՝ Բ. Սլարսի և Հ. Քոսյանի հիշատակած նախկին մատուռի թաղում, որը <<1500-ի վերջերը>> (իմա XVI դ. վերջերին) լքել էին հայերը և իջել նավահանգստին մոտ նոր թաղ և կառուցել Ս. Ստեփանոս եկեղեցին (գրավոր ավանդված 1625 թ.): Եթե Սիմեոնը հայտնում է, որ հայերը երկու եկեղեցի ունեն, կնշանակի, դրանք եղել են գործող եկեղեցիներ, ուրեմն և հայերն ապրել են քաղաքի երկու տարբեր թաղերում՝ իրենց տարբեր եկեղեցիներով: Ավելին, կարելի է մակաբերել, որ մինչև XVII դ. 50-ական թթ. Զմյուռնիայում երկու տարբեր թաղերն էլ գոյատևել են՝ Վերի և Վարի թաղերի հայկական սովորական համակցությամբ, որ հատուկ էր, ինչպես տեսանք, Բգեյանի առափնյակի այլ գաղթօջախներին ևս: Այս երկրորդ եկեղեցու մասին Սիմեոն Լեհացուց հետո հայկական որևէ այլ աղբյուրի չենք հանդիպում, սակայն պահպանվել են ճանապարհորդների տեղեկությունները, որոնց կանցնենք քիչ անց: Այստեղ, սակայն, հերթական հարցեր են առաջանում՝ կապված Զմյուռնիայի գաղթօջախի բուն պատմության հետ: Նախ, ի՞նչու Բ. Սլարսը, և նրան հետևելով՝ Հ. Քոսյանը անվերապահորեն պնդում, թե 1500-ականի վերջերին, այսինքն XVI դ. վերջերին, նեղված թուրքերի անբարյացակամ վերաբերմունքից, հայերը թողել են հին մատուռի (ըստ Սիմեոն Լեհացու՝ եկեղեցի) Aphano machala կոչված վայրը, շուրջը՝ գերեզմանոցով, և իջել ներքև, երբ այդ մատուռի մասին որևէ վավերագիր չի պահպանվել: Ինքը՝ Հ. Քոսյանը գրում է, որ <<Այս մատրանս նկատմամբ չկրցանք գտնել որեւիցէ քանդակեալ գրութիւն եւ ոչ գրաւոր յիշատակարան մը. միայն երկու-երեք գերեզմանաքար կը ցուցուին Ս. Ստեփանոսի պարտեզին մէջ, որոնք վերոյիշեալ մատրան շուրջը գտնուած գերեզմանոցէն փոխադրուած են. ստոնցմէ մին ալ բոլորովին անընթեռնլի եղած է>>⁵⁸⁵:

Այդ երկու ընթերցանելի գերեզմանաքարերից մեկը, ինչպես տեսանք իր տեղում, թվագրված է 1551, իսկ մյուսը՝ 1567 թ., որոնք չեն կարող մղել այն եզրակացությանը, թե հայերը այդ դարի վերջին են հեռացել իրենց նախկին թաղից: Սլարսը նախկին մատուռի վայրի մասին լսել է ավան-

⁵⁸⁴ Սիմեոն դպրի Լեհացույ Ուղեգրութիւն, էջ 38:

⁵⁸⁵ Քոսեան Զ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 39:

դաբար պահպանված գրույցներից, որ նրան են փոխանցել զմյուռնահայ քահանա Ս. Պալապանյանը և մտավորական Ղ. Պալազարյանը: Այսուհանդերձ, փաստեր չկան, որ հայերը հին թաղը լքել են ավելի վաղ, քան XVI դարի վերջերը, ուստի մենք ևս, բայց որոշակի վերապահումներով, կրնդունենք Բ. Մլարսի և Հ. Քոսյանի ավանդական դարձած թվագրումը հայերի՝ նոր թաղ անցնելու վերաբերյալ:

Անդրադառնանք այժմ Զմյուռնիա այցելած եվրոպացի ճանապարհորդներին: Ա. Ալպոյաճյանը գրում է, որ Բ. դռան մոտ ֆրանսիական դեսպան Լորան դ'Արվյոն իր բազմահատոր հուշերում հայտնում է, որ 1654 թ. Զմյուռնիայի հայերը ոչ թե <<եկեղեցի մը ու մատուռ մը ունեցած են, այլ երկու եկեղեցի, մեկը՝ արքեպիսկոպոսարան, ուր կը նստեր թեմին առաջնորդ արքեպիսկոպոսը՝ առնուազն տասներկու քահանաներով, իսկ երեք քահանաներ ալ... կը պաշտօնավարէին երկրորդ եկեղեցիին մէջ... եւ որուն շուրջընկաց՝ ազգային գերեզմանատունը>>⁵⁸⁶:

Դարձյալ Ա. Ալպոյաճյանի վկայակոչմամբ, ֆրանսիացի մեկ այլ ճանապարհորդ՝ Թեվենոն, որ Զմյուռնիայում է եղել 1656 թ., նույնպես տեղեկացնում է, որ հայերը երկու եկեղեցի ունեին, <<որոնցմէ մեկը եթէ Ս. Ստեփանոսն էր, միւսն ալ ուրիշ հնագոյն եկեղեցի մէր, որ, ինչպես ըսինք, թրքաց թաղին (միջնաբերդում-Ա. Խ.) մէջ էր>>, հավելում է Ա. Ալպոյաճյանը⁵⁸⁷:

Ա. Ալպոյաճյանի մտքերը նրանից քիչ առաջ տեսնում ենք լավատեղյակ Ատոմի հոդվածում. <<Արդէն հաստատուած իրողութիւն մ'է, թէ սկզբան Հայոց թաղը այժմու տեղը չէր, այլ արդի թրքաց թաղին մէջ եղած է, հոն հայերը եկեղեցի մըն ալ ունեցած են, ինչպես եւ անոր կից գերեզմանատուն մը: Թեվընո, որ 1656-ին եկած է քաղաքս, կըսէ, թէ հայերը երկու եկեղեցի ունին: Տարակոյս չկա, որ մեկը Ս. Ստեփանոսն է՝ եկեղեցին ըլլալ պէտք է, միւսն ալ հնագոյն եկեղեցին՝ Վերի թաղը>>⁵⁸⁸:

Ֆրանսիացի ճանապարհորդ Թավերնիեն⁵⁸⁹ գրեթէ նույն ժամանակներում՝ 1630-ական թթ. Զմյուռնիայում հաշվում է հայկական մեկ եկեղեցի՝ հակառակ Լ. դ'Արվյոյի և Թեվենոյի տվյալների: Կարծում ենք, Թավերնիեի տվյալը ճիշտ չէ, որովհետև դեսպան դ'Արվյոն, ինչպես ասվեց

⁵⁸⁶ ՄՄ, Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 7, վավ. 17/1, էջ 70:

⁵⁸⁷ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 10/23 ապրիլի:

⁵⁸⁸ Ատոմ, Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը, 1902, թիւ 4951:

⁵⁸⁹ The Six Voyages of John Baptista Tavernier, p. 33.

վերը, առավել հանգամանալի փաստերով է ապացուցում իր լավատեղյակությունը՝ հստակ տարբերակելով այդ եկեղեցիները՝ ըստ արքեպիսկոպոսարանի և սովորական եկեղեցու: Թուրնեֆորը նույնպես իր ուղեգրության մեջ մեկ եկեղեցի է նշում, բայց նրա տվյալը բավական ուշ շրջանի է վերաբերում՝ XVII դ. վերջ-XVIII դ. սկիզբ, երբ երկրորդ եկեղեցին կարող էր արդեն գոյություն չունենալ: Բացի այդ, օտար ճանապարհորդները կարող էին սխալվել՝ հակասական տեղեկություններ տալով, ինչը ոչ քիչ դեպքերում հասկանալի է դառնում նրանց ոչ բավարար իրազեկության պատճառով:

Բերված փաստերը հասցնում են այն եզրակացությանը, որ XVI դ. վերջերին, երբ Զմյուռնիայի հայերը թողել են իրենց նախկին՝ միջնաբերդին կից թաղը և իջել քաղաքի նավահանգստի հատված՝ նոր թաղ, պահպանել են իրենց հին եկեղեցին մինչև XVII դ. 50-ական թթ., հին թաղի դեռևս պահպանված եկեղեցու առկայությամբ: Դրանից հետո այդ հին եկեղեցին այլևս չի հիշվում՝ կամ 1688-ի երկրաշարժը, կամ հաճախադեպ հրդեհներն էին արել իրենց գործը՝ հուշ դարձնելով <<նախկին մատրան>> (Վերին թաղի) տեղը: Վերին թաղի այդ եկեղեցու անունը մեզ անհայտ է մնում, որովհետև հայ և օտարազգի հեղինակները արձանագրում են միայն դրա գոյության փաստը: Բայց այդքանն էլ բավական է՝ հետևյալը նշելու համար. եթե հայերը վերին թաղում եկեղեցի են ունեցել մինչև XVII դ. կեսերը, ապա այդ թաղում նրանց մի մասը շարունակել է ապրել: Կնշանակի, նրանք այս ժամանակահատվածում ունեցել են երկու թաղ, ինչպես, ասենք, Մանիսայում՝ XVII դ. սկսած մինչև այդ գաղթօջախի վախճանը:

Զմյուռնիայի եկեղեցիների պատմությունը, ինչպես տեսանք, բավական վիճահարույց էջեր ունի, որ պայմանավորված է վավերագրերի ոչ բավարար առկայությամբ և տեղեկատվության պակասով: Հավանաբար, այս է եղել պատճառներից մեկը, որ մինչև XVIII դ. երկրորդ կես, արդեն միակը մնացած եկեղեցու անունների հարցում ուսումնասիրողները հաճախ կրկնում են մեկը մյուսին՝ հատուկ քննարկման նյութ չդարձնելով այս խնդիրը: Եկեղեցիների անվան մեջ առաջին շփոթը մտցրեց Հ. Դիմաքսյանը՝ 1878 թ. տպագրած իր աշխատության մեջ, որտեղ զմյուռնահայ գաղթօջախի սկիզբն առնչելով նրա եկեղեցու շինության և անվան հետ, սխալվում է և մեկ, և մյուս հարցում թեկուզ և ինչ-որ թեականությամբ, գրելով. <<երկրացիք (իմա տեղաբնակները-Ա. Խ.) Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս անուն եկեղեցւոյն շինութեան թուակա-

նին հենլով՝ 1636 թույն կարծին լինել>>⁵⁹⁰: Հ. Դիմաքսյանին եկեղեցու (ենթադրյալ) այս կարծեցյալ անունը հուշարկվել է անստույգ աղբյուրի կողմից: Գրավոր՝ մինչև այժմ հայտնի որևէ աղբյուր Ձմյուռնիայում այդ անվամբ եկեղեցի չի հիշում, իսկ ինչ վերաբերում է բուն եկեղեցու շինության թվականին, ապա նախընթացում արդեն տեսանք, որ դեռևս 1610 թ. Սիմեոն Լեհացին տեսել է այդ եկեղեցին, որը 1636-ից շատ ավելի առաջ, 1625 թ., կոչվում էր Ս. Ստեփանոս ըստ առ այսօր պահպանված վավերագրի: Հ. Դիմաքսյանի այս վարանումը, դարձյալ առանց հղման, տասնհինգ տարի անց, 1893 թ. կրկնել է Ա. Այվազյանն իր կենսագրությունների շարքում. <<Ոմանք,-գրում է նա,-այս եկեղեցույ (Ս. Ստեփանոսի-Ա. Խ.) նախկին անվանը մասին իսկ տարակարծիք կը գտնուին եւ Ս. Թադէոս եւ Բարդուղիմէոս կանուանին>>⁵⁹¹:

Ա. Այվազյանը, սակայն, իր հերթին ոչ ճշտված տեղեկություն է տալիս եկեղեցու անվան մասին, երբ գրում է, թե <<Հայք ի Ձմիւռնիա առաջին անգամ իրենց գերեզմանատան մէջ եկեղեցի մը կանգնած են Յովակիմ-Աննա անուամբ>>⁵⁹²:

Խոսքն այս անգամ վերաբերում է Վերին թաղի կամ մատուռ հորջորջված եկեղեցուն, որի մասին ևս ոչ մի գրավոր հիշատակում գոյություն չունի: Ա. Այվազյանի այս ոչ հավաստի՝ Հովակիմ-Աննա անվամբ եկեղեցին նույնությամբ տեղափոխված ենք տեսնում Ա. Ալպոյաճյանի մի հոդվածում և Հ. Աճառյանի աշխատության մեջ, այն տարբերությամբ միայն, որ Ա. Ալպոյաճյանն այդ եկեղեցին տեղադրում է Հայնոց թաղում (այսինքն՝ վերջին, ներքնի թաղում), իսկ Հ. Աճառյանը՝ նախնական, Վերին փողոցում (թաղում)⁵⁹³: Երկու դեպքում էլ գործ ունենք Ա. Այվազյանի ոչ ստույգ անվանման արձագանքի հետ:

Ձմյուռնիայի եկեղեցիների պատմությունն ու ճակատագիրը հաճախակի առնչվել է տարերային աղետների՝ երկրաշարժերի ու հրդեհների հետ, հայ համայնքին ևս, ինչպես և քաղաքի մյուս հանրություններին

⁵⁹⁰ Դիմաքսեան Հ., Շիրմ' անունք, էջ 328:

⁵⁹¹ Այվազեան Ա., Շար հայ կենսագրութեանց, հ. 3, էջ 129:

⁵⁹² Նույն տեղում, էջ 126: Ա. Այվազյանը Հովակիմ-Աննա եկեղեցին տեղադրում է Ձմյուռնիայի Վերին թաղում (այսինքն հնագույն, մինչև XVI դ. սկիզբը՝ հայերի միակ թաղը), իսկ Ս. Ստեփանոս եկեղեցին՝ ծովեզերյա թաղում (կամ Հայնոց թաղում):

⁵⁹³ Տես Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 10/23 ապրիլի: Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 550:

կանգնեցնելով ավերված կամ վնասված շինությունները նորոգելու անհրաժեշտության առջև:

1688 թ. հետո Ս. Ստեփանոս եկեղեցու նորոգման հաջորդ արձանագրությունը, դարձյալ Զմյոռնիայի դիվանատան մատյանից, թվագրված է 1743 թ., որում նշված է. <<Ի թուին ՌՃՂԲ յունիսի 15, Աստուծով եւ օժանդակութեամբ Հոգւոյն արբոյ սկիզբն եղեւ վերստին նորոգութեան Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ...⁵⁹⁴>>:

Կարծում ենք, որ այս նորոգումը կատարվել է հերթական՝ 1739 թ. երկրաշարժից հետո:

1842 թ. զմյոռնահայ համայնքը կառուցեց իր երկրորդ եկեղեցին՝ Ս. Լուսավորիչը: Կառուցման ազդակ եղավ դեռևս XIX դ. սկզբից գործող մեկ այլ հաստատության՝ Ս. Լուսավորչյան ազգային հիվանդանոցի (հիմն. 1801 թ.) նորոգումը: Զմյոռնահայ առօրյային անդրադարձող <<Արշալոյս Արարատեան>> լրագիրը այս առթիվ գրում է, որ նորոգված հիվանդանոցի տարածքում <<պզտիկ ու աղուոր քարաշէն եկեղեցի մըն ալ շինուեցաւ յանուն Սուրբ Գրիգոր Լուսաւորչի, ու ամէն բան լմնցած ըլլալով անցած կիրակի օրը (իմա դեկտեմբերի 13-ին) գերապատիւ սրբազան Մատթեոս արքեպիսկոպոսը (առաջնորդը-Ա. Խ.) յիշեալ եկեղեցիին օծումը ըրաւ մեծ հանդեսով՝ քահանայից ու ժողովրդոց⁵⁹⁵>>: Լրագիրն առանձնապես դրվատում էր հիվանդանոցի վերակացու Ավ. Էքիզյանի նյութական ու բարոյական աջակցությունը հիվանդանոցի նորոգման և եկեղեցու կառուցման մեջ, շեշտելով, որ <<ինք բարի պատճառը եղաւ սա սուրբ շինութեան>>: Եկեղեցու շինությունը նույնպես ամբողջովին Ավ. Էքիզյանին է վերապահում Տ. Պալյանը, ընդամին մատուռ համարելով եկեղեցին՝ դրա ոչ մեծ չափերի պատճառով: Մատթեոսի առաջնորդության ժամանակ, գրում է նա, <<կը նորոգուի Իզմիրի Ս. Լուսաւորիչ հիւանդանոցը և կը կառուցուի նաև Ս. Լուսաւորիչ մատուռը⁵⁹⁶>>:

Ս. Լուսավորիչը զմյոռնահայ համայնքի համար իր կարևոր նշանակությունն ունեցավ հատկապես 1845-1853 թթ., երբ մնացել էր զմյոռնա-

⁵⁹⁴ Պալեան Տ., նշվ. աշխ., 1921, թիւ 1, էջ 26-27:

⁵⁹⁵ Արշալոյս արարատեան, 1842, 18 դեկտեմբերի: Ճիշտ չէ Հ. Դիմաքսյանի այն տեղեկությունը, որ Ս. Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1801 թ.՝ Մարտիրոսի առաջնորդության ժամանակ (տես Դիմաքսեան Հ., Շիրք մ'անունք, էջ 332):

⁵⁹⁶ Պալեան Տ., նշվ. աշխ., էջ 63:

հայերի միակ գործող եկեղեցին⁵⁹⁷: Այս եկեղեցին ևս հարատևեց մինչև գաղթօջախի պատմության ավարտը:

Զմյուռնահայ եկեղեցիների պատմության ընթացքը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

Ենթադրաբար կարելի է ընդունել այն վարկածը, որ զմյուռնահայերը այդ քաղաքին կից Պագոս լեռան ստորոտին գտնվող իրենց վաղեմի թաղից ներքև՝ նավահանգստին մոտ նոր թաղ են տեղափոխվել 1610 թ. բավական առաջ, քանի որ այդ թվականին նրանք այդ թաղում ունեցել են եկեղեցի,

XVII դ. ի վեր եկեղեցիների քանակը որոշելու համար կարևոր նշանակություն են ստանում դրանց անունները: Առաջին անգամ Ս. Ստեփանոս միակ անվամբ եկեղեցին հիշատակված է 1625 թ., այնուհետև, այդ դարում՝ 1657 և 1698 թթ.: XVIII դ. վերջին տասնամյակներից մինչև 1842 թ. Ս. Ստեփանոսը դառնում է այդ անվամբ միակ եկեղեցին՝ ընդհուպ մինչև գաղթօջախի պատմության ավարտը,

XVII-XVIII դդ. Ս. Ստեփանոս եկեղեցուն զուգընթաց և միննույն ժամանակ՝ կրկնակի, 1628 և 1662 թթ. հիշվում է Ս. Բարդուղիմեոս եկեղեցին: Այդ նպաստել է այն ոչ հիմնավոր ենթադրությանը, որ XVII դ. կեսերին Զմյուռնիայում գործել են երկու եկեղեցիներ, որոնցից մեկը Ս. Ստեփանոսն է, մյուսը՝ Ս. Բարդուղիմեոսը,

ձեռագրերում առկա է նաև երրորդ տարբերակը՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի միացյալ, երկու անուն կրող եկեղեցին (Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի եկեղեցի), որ ձեռագրերում հանդիպում է 1643, 1689, 1695, 1713 և 1760 թթ.,

անունների զուգահեռ և միաժամանակյա գործածությունը վերստին ցույց է տալիս, որ 1625 թ. առաջ (այդ թվականով է ամրագրված գործող, ուրեմն դրանից առաջ գոյություն ունեցած Ս. Ստեփանոս եկեղեցու անվամբ ամենափին վավերագիրը) հայերն ունեցել են եկեղեցական համալիր՝ մեկ գլխավոր եկեղեցի և կից տաճար կամ մատուռ: Համալիրի գլխավոր կառույցը կոչվել է Ս. Ստեփանոսի, մյուսը՝ տաճարը, Ս. Բարդուղիմեոսի անվամբ: Բուն եկեղեցին XVII և XVIII դդ. հաճախ կոչվել է կառույց-համալիրի երկու բաղադրիչների անվամբ՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի եկեղեցի:

⁵⁹⁷ Ատոմ, նշվ. աշխ., 1902, 17/30 հունիսի:

1662 թ. հետո առանձին Ս. Բարդուղիմեոս եկեղեցի այլևս չի հիշվում. Այս դեպքում ևս կարելի է կարծել, որ XVII դարում, 1662 թ. (փաստերի բացակայության պատճառով հնարավոր չէ առավել որոշակի նշել ժամանակը) հետո Ս. Բարդուղիմեոսի մատուռի կամ տաճարի անունը դուրս է եկել ինքնուրույն գործածությունից: Փոխարենը նույն եկեղեցին հիշատակվում է երկու անվամբ՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի եկեղեցի՝ սկսած 1688 թ. երկրաշարժից հետո ավերված եկեղեցու նորոգման մասին առաջնորդարանի դիվանատան արձանագրությունից: Այս երկանուն եկեղեցին հիշվում է նաև 1695, 1713 և 1760 թթ., որից հետո, 1780-ական թթ. վերջնականապես ամրագրվել է մեկ անվամբ՝ Ս. Ստեփանոս եկեղեցի:

Եկեղեցիների տարբեր անվանումներից բացի, առանձնանում է XVII դ. առաջին կեսին միաժամանակ գործող երկու եկեղեցիների խնդիրը: Մինչև 1650-ական թթ. հայերը Զմյուռնիայում ապրել են երկու տարբեր՝ հին և նոր թաղերում միաժամանակ: Տակավին պետք է ճշգրտվի Բ. Սլարսի (և Հ. Քոսյանի) կարծիքը, թե XVI դ. վերջերին նրանք լքել են հին՝ Պագոս լեռան փեշերին գտնվող վերին թաղը և իջել ներքև՝ նոր թաղ, որովհետև դրանից հետո ևս շարունակել է գործել դեռևս 1610-ին Սիմեոն Լեհացու կողմից վկայված <<բերթի>> (միջնաբերդ) կամ վերին թաղի եկեղեցին: Զմյուռնիայում համաժամանակ գործող երկու եկեղեցիների մասին վկայում են նաև ֆրանսիական դեսպան Լ. դ'Արվյոն (1654) և ֆրանսիացի ճանապարհորդ Թեվենոն (1656):

Անստույգ պետք է համարել XIX-XX դդ. մի քանի հետազոտողների կողմից Ս. Ստեփանոս եկեղեցուն այլ անուններ վերագրելը, որ հավելյալ շփոթ է առաջացնում խնդրո առարկա հարցի մեջ: Չկա որևէ վավերագիր, որով կհաստատվեր Զմյուռնիայում Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս, ինչպես և Հովակիմ-Աննա երկանուն եկեղեցիների գոյությունը:

ԷԳԵՅԱՆԻ ԱՅԼ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐ: ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ
ԱՌԱՓՆՅԱԿՈՒՄ

1. Զմյուռնիայի շրջակայքի բնակավայրեր

Զմյուռնիայի տերունի թեմն իր սկզբնավորումից սկսած (XVII դ. երկ-
րորդ տասնամյակ) ընդգրկում էր փոքրասիական տարածքների
արևմտյան մասը՝ իր հայաբնակ քաղաքներով, ավաններով ու գյուղե-
րով: Այդ թեմի մեջ մտնող բնակավայրերի լրիվ ցանկը տրված է Սիմեոն
կաթողիկոսի <<Զամբո>> աշխատության մեջ⁵⁹⁸, մեզ հասած՝ Ղուկաս
կաթողիկոսի և այլ կաթողիկոսների կոնդակներում:

Հայկական աղբյուրները լրություն են պահպանում, գոնե մեր են-
թադրածի չափով, հզեյանի առափնյա տարածքների հայկական գաղթո-

⁵⁹⁸ Զմյուռնիայի թեմի մեջ մտնող բնակավայրերը, որ <<Զամբո>>-ում հիշվում են որպես օսմանցիների իշխանության ներքո գտնվող նվիրակական և առաջնորդական վիճակներ, հետևյալներն են. Զմյուռնիա, Գյոզալիխար (Այդըն), Մանիսա, Մանսաման, Գիրիդ, Սաղգըզ, Միտիլու, Այազմա, Քամար, Բերդամա, Ղընըխ, Սովմա, Ղրխաղաձ, Աղասար, Գյորդաստ, Ատալիա, Մառմառա, Ալաշհար, Դուրդութ, Բայինդուր, Թիրա, Օտամիշ, Ենկիբազար, Նազլու, Տենկեզլու, Բերգի, Հոնաս, Ռոտոսթ, Իստիանքոյ, Բողլոռում, Մուլլա, Մալաս, Մանդալիաթ, Ղուշատա, Սոքա, Քյոշք, Մսրտամ, Գյուլամբա, Սոպրուջա, Բոզդոդան (տես Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Զամբո, էջ 68): Ղուկաս կաթողիկոսի կոնդակներում որոշ փոփոխություններով (հիմնականում նվազող թվարկմամբ) հիշվում են նույն տեղանունները (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 59, թղթ. 273, վավ. 75), առավել նվազած թվով՝ Եփրեմ կաթողիկոսի 1816 թ. մի կոնդակում՝ Փիլիպոսին Զմյուռնիայի նվիրակ և առաջնորդ կարգելու առթիվ (նույն տեղում, թղթ. 243, վավ. 148): Զմյուռնիայի շրջակայքի այլ բնակավայրեր՝ գյուղեր կամ ավաններ, որոնք նույնպես ընդգրկված են եղել տերունի թեմում, հավանաբար հայ բնակչության փոքրաթվության պատճառով չեն հիշվել այդ կոնդակներում: Այսպես, կոնդակներում հիշվում են միայն խոշոր բնակավայրերը՝ Այդընը, Մանիսան, Էոդեմիշը և այլն, սակայն այդ քաղաքների մերձակայքում եղել են նաև հայաբնակ շատ գյուղեր, որոնց մասին կոնդակներում ակնարկվում է <<եւ այլ ամենայն շրջակա դասապայս (բնակավայրեր – Խ. Ա.) եւ ի գիւղորայս դոցին>>, <<եւ այլ թեմս եւ ի վիճակս... Զմիւռնիոյ մայրաքաղաքին>>, <<եւ յայլ շրջակայս դոցին>> և այլ ձևակերպումներով (տես ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 239, 148, թղթ. 273, վավ. 75):

ջախների վաղագույն շրջանի (VII-XII դդ.) գոյության մասին, եթե չհաշվենք որոշ կցկտուր տեղեկություններ:

Սակավ բացառություններով, կոնդակներում Զմյուռնիայից հետո հիշատակվում են Այդընը և Մանիսան, իսկ մյուս քաղաքներն ու այլ բնակավայրերը (վիճակի թեմեր)՝ անկանոն հերթականությամբ. XVIII դ. կոնդակներն այս դեպքում ակներևաբար, նկատի են ունեցել տերունի թեմի մեջ մտնող համայնքների նշանակալիությունը (թվաքանակը, օսմանյան վարչական բաժանումները և այլն): Կար, անշուշտ նաև ավանդության պատկերացումը. Այդընը առաջնայիններից մեկն էր Զմյուռնիայի շրջակա հայ համայնքների մեջ իր պատմությամբ, XVII դ. և կարելի է կարծել՝ դրանից էլ առաջ՝ երբեմն իր առաջնորդանիստ կենտրոնի հանգամանքով և հայ բնակչության թվաքանակով: Էգեյանի բնակավայրերի հայության դարավոր պատմությունը, այսուհանդերձ, մի հայտնի չափով բաց է մնում հատկապես մանր բնակավայրերում ապրած հայերի վերաբերյալ կցկտուր աղբյուրների կամ դրանց չգոյության պատճառով: Կարելի է միայն ասել, որ այդ ոչ մեծ համայնքները հիմնականում համալրվել էին XVII – XVIII դարերում՝ Սյունիքից և Ղարաբաղից, մասամբ և Արևմտյան Հայաստանի այլևայլ շրջաններից շարունակական գաղթերի հետևանքով: Ստորև կնշենք առավել նշանակալի մի քանի համայնքներ:

ԱՅԴԸՆ (հին հուն. Տրալիս, Գյուզելիիսար, Գյոզհիսար). իր պատմությունը Այդընը ևս սկսում է հին հունական քաղաքակրթության զարգացմանը համընթաց՝ հիմնվելով Տրալիս անվամբ, արգոսցի և թրակացի գաղթական հույների կողմից: Քաղաքն այնուհետև մտնում է հռոմեական դարաշրջան՝ կործանարար երկրաշարժից հետո վերստին նորոգվելով Տիբերիոս կայսեր օրոք՝ Կլավդիոսների ժամանակաշրջանում (մթա II դ.): Ցիցերոնն իր պաշտպանական ճառերից մեկում Տրալիսը բնութագրում է իբրև <<հարուստ և զարդարուն>> քաղաք⁵⁹⁹, որի համար վերջինս պարտական էր ցամաքային, և միաժամանակ, ծովային առևտրին: Հույն պատմագիր Ստրաբոնը Տրալիսը հիշատակում է այս վերջին իմաստով, իբրև Փոքր Ասիայի ամենահարուստ քաղաք⁶⁰⁰:

XIII դ. վերջերին քաղաքը բյուզանդացիներից անցել է սելջուկյան էմիր Այդընին՝ այդուհետև կրելով նրա անունը: Այս էմիրը բյուզանդացիների հետ հարաբերություններում բավական ճկունություն էր ցուցաբե-

⁵⁹⁹ Արեւելեան մամուլ, 1901, թիվ 23, էջ 990:

⁶⁰⁰ Նույն տեղում, էջ 984:

րում, որ նպաստեց նրա տիրույթների սահմանների ընդարձակմանը: 1307-1326 թթ. Այդընի բեյության մեջ մտան Բիրգին, Էոդեմիշը, Այասլուքը, Թիրեն և Զմյուռնիան: Իր՝ Այդընի մեծ որդին տիրում էր Այասլուքին, երկրորդ որդին՝ Ումուր բեյը, Զմյուռնիային, իսկ մյուս որդիները կառավարում էին Էոդեմիշի և Թիրեի մերձակա տարածքները⁶⁰¹: Սակայն հասունանում էր կոնֆլիկտը խաչակրաց իշխանությունների և Այդընի բեյության, և մյուս կողմից՝ վերջինիս և Վենետիկի հանրապետության ու պապի միջև՝ Այդընի բեյության ագրեսիվ նկրտումների և հատկապես լեվանտի ծովային առևտրում գերիշխող դիրքեր ունենալու համար: 1344 թ. պապի, Վենետիկի, Կիպրոսի և Հռոդոսի դաշնակցությունը ծովային մի ճակատամարտում պարտության մատնեց Ումուր բեյին՝ նրանից խլելով Զմյուռնիան: Սակայն դրանից հետո էլ, տասնամյակներ շարունակ, ռազմաշունչ Այդընողլուները չէին դադարում Զմյուռնիայում հաստատված խաչակիրներին լարված վիճակի մեջ պահելուց:

Այն, ինչ հաջողվում էր Այդընի բեյությանը բյուզանդացիների հետ շփումներում, հատկապես սեփական նավատորմի և ծովային առևտրում կուտակած եկամուտների շնորհիվ, չհաջողվեց օսմանյան թուրքերի պարագայում: Չղիմասնալով սրանց անընդհատ աճող ճնշումներին, Այդընի էմիրը ստիպված էր Բայազեդ I-ին հանձնել իր տիրույթները (1390): Նույն սուլթանը տիրեց ինչպես Այդընին, այնպես էլ Կարամանի, Սարուխանի, Մենթեշեի, Գերմիյանի և այլ էմիրություններին⁶⁰²: Թիմուրի հայտնությունը փոքրասիական արևմտյան տարածքներում և հաղթանակը Անկարայի ճակատամարտում (1402) ավելի քան երկու տասնամյակ կասեցրեց թուրքերի ամրակայումը փոքրասիական առափնյակում: Բայազեդի պարտությունը ճակատագրի պարզևն էր նշված էմիրություններին, սակայն ժամանակավոր պարզևն: Թեև Թիմուրը վերականգնեց էմիրությունները, այդ թվում և Այդընը (1403), որը կարողացավ գոյատևել մինչև 1425 թ., և դրանից հետո այն վերստին անցավ օսմանյան թուրքերի պետությանը⁶⁰³:

Այդընի հայ բնակչության, ասել կուզի՝ գաղթականության պատմությունը, եթե դատելու լինենք շիրմաքարերի արձանագրություններից, վկայված է XVI դարից, իսկ եթե նկատի ունենանք հենց գերեզմանատան առկայությունը, որտեղ գտնվել է այդ շիրմաքարը, էլ ավելի վաղ

⁶⁰¹ Uzuncarsili I. H. Anadolu Beylikleri, s. 27-28. Տես նույնի Osmanli Tarihi, I Cilt, s. 19.

⁶⁰² Новичев А. Д. История Турции, с. 27.

⁶⁰³ Gibbons H. A. The Foundation of the Ottoman Empire, p. 283.

ժամանակներից: Համենայն դեպս, ելնելով 1561 թ. դամբանագրից, առավել քան հավանական է եզրակացնելը, որ Այդընում հայերը հաստատվել են նշված դարում կամ դրանից էլ շատ առաջ: Ահա մեզ հայտնի՝ XVI դ. մնացած միակ այդ արձանագրությունը, որ հայտնաբերել է Հ. Քոսյանը.

Դամբարան. ուն անցաւոր շաւիղ Կեսարիացի

Խայդանագործ Գեորգն որ ննջեց ի տէր

Թուին 1561⁶⁰⁴:

Մակար վարդապետը (Բարխուտարյան) 1879 թ. նշում է, որ Այդընի հայերը գաղթել են Հայաստանի տարբեր շրջաններից և որ նրանք <<երբեմն աւելի բազմաթիւ են եղել և առնուազն 500 տունէ կը բաղկանային, ինչպէս որ հին արձանագրութիւնները կը վկայեն: Սակայն հետզհետէ նուազելով՝ այժմ հազիւ 71 տուն կայ>> ընդամենը 277 մարդ⁶⁰⁵:

Հ. Քոսյանը, հենվելով վերոհիշյալ դամբանականի վրա, կարծում է, որ <<Հայք իբր 350 տարի յառաջ գաղթած են յԱյտըն>>⁶⁰⁶: Այսինքն, Հ. Քոսյանը նույնականացնում է գաղթօջախի գոյության և նրա հին գերեզմանատան՝ մեզ հասած նմուշի թվականները (1561), որ հիմնավոր չէ, որովհետև նախ գաղթօջախը պետք է լիներ, և ոչ թե նրա գերեզմանատունը, այն էլ՝ իր միակ դամբանագրով, որ ամենևին չի բացատրում ավելի հին դամբանագրերի գոյությունը: Մեկ այլ կարևոր հանգամանք նս. Այդընի գաղթօջախ ասելով պետք է հասկանալ ոչ միայն այդ քաղաքի հայ հանրության, այլև դրա շրջակա մի քանի գյուղերի հայ բնակչությունը, որ գոյացել էր XVII-XVIII դդ. (Շահաբասի ժամանակաշրջանի՝ XVII դ. առաջին քառորդի, Դավիթ Բեկի կոնվներին հաջորդող և 1730-1740-ական թթ. գաղթեր): Նրանք մեծ մասամբ այն հայերն էին, որոնք գաղթել էին Սյունիքից, Ղարաբաղից և խոսում էին Ղարաբաղի բարբառով ու դրա ենթաբարբառներով. <<Փոքր Ասիոյ մէջ Զմիւռնիոյ եւ Այտընի քովերը հին հայ գաղթականութիւն մը կայ, որ մէկ-երկու դար առաջ (իմա XVII-XVIII դդ.-Ա.Ն.) Ղարաբաղէն հեռանալով այս տեղերը հաստատուէր էին: Թէւ յիշեալ գաղթականութեան մեծագոյն մասը տաճկախօս դարձած է, բայց երկու տեղ, այն է՝ Պուրտուր եւ Էօտէմիշ, դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ կը պահեն>>, գրում է

⁶⁰⁴ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 25:

⁶⁰⁵ Տեւ Արեւելեան մամուլ, 1879, թիւ 3, էջ 437:

⁶⁰⁶ Քօսեան Յ., նույն տեղում:

Հ. Աճառյանը⁶⁰⁷: Նա նկատում է նաև, տաճկախոս հայերի մեջ, իբրև հայախոսներ, բացառություն էին կազմում նաև Այդընի մի քանի գյուղերը⁶⁰⁸:

Մ. Պոտուրյանը կրկնում է Մ. Բարխուտարյանին ու Հ. Քոսյանին, թեև Այդընի գաղթօջախի պատմության սկիզբը մեկ տարով հետ է տանում վերոհիշյալ շիրմաքարի թվականից և նշելով, որ հայերը Այդըն են գաղթել 1550 թ.⁶⁰⁹: XIX դարավերջին Մ. Պոտուրյանի տվյալներով, այդ քաղաքում մնացել էր հազիվ 50 տուն հայ⁶¹⁰: Ղ. Ալիշանի տվյալներով, դեռևս XIX դ. կեսերին Այդընի 30-հազարանոց բնակչության մեջ հայերն ունեին ընդամենը 35 տուն⁶¹¹:

Այսուհանդերձ, Այդընը փոքրասիական հայ համայնքների մեջ մնում էր իբրև ճանաչված բնակավայրերից մեկը՝ թեկուզ և անցյալի շատ ավելի բազմամարդ բնակչության և երևելի պատմության շնորհիվ: Մի պահ կամ ավելի տևականորեն այն կարող էր լինել նաև Զմյուռնիայի տերունի թեմի առաջնորդական կենտրոնը, ինչը տեսնում ենք 1635 թ. մեզ արդեն հայտնի բժշկարանի հիշատակարանում՝ Տրդատ արքեպ. օրինակով, որը քահանա էր ձեռնադրել գրիչ Մարգսին հենց Այդընում⁶¹²: Ավելին, Հ. Քոսյանը Այդընում հայտնաբերել և 1906 թ. հրապարակել է 1651 թ. երկու շիրմաքարեր, որոնցից մեկը՝ Մաղաքիա եպ. Եփեսացունն է, շատ հավանական է՝ թեմի առաջնորդին⁶¹³: 1638 թ. Այդընում կառուցվել է Ս. Աստվածածին եկեղեցին, նորոգվել կամ հնի տեղում կրկին կառուցվել 1734 թ. և ապա 1833 թ.⁶¹⁴, ինչը դարձյալ վկայում է համայնքի մարդաշատության մասին:

⁶⁰⁷ Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն: Էմիսեան ազգագրական ժողովածու, հ. Ը, էջ 66:

⁶⁰⁸ Նույն տեղում, էջ 30-31: Այդընի շրջակա այդպիսի 28 գյուղ է թվարկում Հ. Քոսյանը, այդ թվում՝ Իմամ քյոյ, Գօճակյուր, Մերչեքյոյ, Ումուրլու, Թեփեճիք, Չերքեզ քյոյ, Ըշըզլը և այլն (Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 7): Նշված կամ կից այլ գյուղերում ցրված հայ բնակչությունը այստեղ կարող էր հայտնվել XVII դ. առաջին տասնամյակներին՝ Սյունիքից և Արարատյան դաշտից շարունակվող գաղթերի ընթացքում:

⁶⁰⁹ Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, գիրք Ա, էջ 150:

⁶¹⁰ Նույն տեղում:

⁶¹¹ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրութիւն, էջ 543:

⁶¹² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, ԺԷ դ., էջ 596:

⁶¹³ Հ. Յ. Ք. (Քօսեան Յ.), Ակնարկ մը հնութեան բեկորներու, թիւ 9, էջ 278:

⁶¹⁴ Քօսեան Յ., Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Բ, էջ 9-10:

Այդընի հայ բնակչությունը սակավամարդ է դարձել XVIII դ. վերջերին և XIX դ. առաջին կեսին, տնտեսական պատճառներով, երբ տեղի հայերը կարող էին տեղափոխվել առավել հարմարավետ փոքրասիական այլ քաղաքներ՝ Ջմյունիա և այլուր: Լյուդովիկոս XIV-ի բժիշկ Պ. Լուկան վկայում է, որ Այդընի հայերը <<մեծ վաճառականություն կրնեն մետաքսի եւ մանածի>>⁶¹⁵, ինչը ցույց է տալիս տեղացի հայ վաճառականների բարգավաճ վիճակի, անգամ միջազգային առևտրում ընդգրկվածության մասին:

Շատ ուշագրավ են Հ. Քոսյանի աշխատության մեջ առկա շիրմաքարերի արձանագրությունները սկսած XVI դ. և այս գաղթավայրի գոյության մասին խոսող ոչ միայն խայդանագործ (քուղագործ) Գեորգի (1561) այլև XVIII դ. մի դամբանական՝ Կոզալիսարցի Եղիայի որդի Ստեփանի (ՌՄԺ-1741) հիշատակին: Խոսքն այստեղ վերաբերում է ոչ թե սյունեցիների դամբանագրերին, այլ Այդընի հին գաղթականության մի բեկորին, որպիսին միակն է Քոսյանի վկայակոչած՝ այդ քաղաքի հայերի դամբանագրերում⁶¹⁶: Մնացած դեպքերում Հ. Քոսյանի գրքում գետեղված դամբանագրերը վերաբերում են XVIII դարին, մեծ մասամբ հիշվում են Սյունիքից եկածները՝ շվանիձորցիներ, տաթևացիներ, շիկահողցիներ, կիրթաղեցիներ (կերթաղեցի, կերթայթաղեցի), գմրեցիներ, Արարատյան դաշտից՝ կարբեցիներ: Համեմատաբար սակավ են դայսարցի, դարահիսարցի, քարայիսարցի (Ափիոն Գարահիսարն է) հորջորջումները և այլն⁶¹⁷:

Իր գրքի հրատարակությունից տարիներ անց Հ. Քոսյանը հնարավորություն ունեցավ հրապարակելու նաև իր նոր հայտնաբերած՝ Այդընի XVII դ. մի քանի դամբանագրեր: Ջմյունահայ համայնքի պատմության այս նվիրյալն ընդօրինակել էր <<գմրեցի յակոբոսի որդի Մարգարի>> (1651 թ.), <<գերթայթաղեցի աւետիսի որդի յակոբի>> (1651), <<չաղվեցի նահապետի դուստր Թաքուհիի (1714), <<սրաշենեցի մարութի որդի Օվանեսի>> (1754) <<կերթայթաղեցի մահտեսի աւետի որդի աւետիսի>> (1734) և այլոց դամբանագրերը⁶¹⁸: Քոսյանի մեջբերած գրեթե բոլոր շիրմաքարերին հիշվում են Սյունիքի գյուղերը, ինչպես և այն, որ Այդընում XVII դ. երկրորդ կեսին, նաև XVIII դ. երկրորդ կեսին ապրել են Սյունի-

⁶¹⁵ Բիւզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի:

⁶¹⁶ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 27:

⁶¹⁷ Նույն տեղում, էջ 25-27:

⁶¹⁸ Հ.Յ.Ք. (Հայր Յակոբ Քօսեան), Ակնարկ մը հնութեան բեկորներու, էջ 278:

քից գաղթած հայրերի որդիները. Կնշանակի՝ գաղթերը Սյունիքից դեպի Էգեյանի ափեր՝ շարունակվել են երկու հարյուրամյակների ընթացքում՝ XVII և XVIII դդ.:

Օսմանյան տարածքներից գաղթած Այդընի հայերը (ի տարբերություն Արևելյան Հայաստանից գաղթածների), որ հիմնականում թրքախոս էին, XIX դ. երկրորդ կեսին, խմբված եկեղեցու շուրջ, դպրոցի շնորհիվ ակնհայտ շրջադարձ էին արել դեպի ազգային կրթությունն ու հայախոսությունը: Այդընի ժողովուրդը մեծ մասամբ խոսում էր թուրքերեն, նկատում է Հ. Քոսյանը, <<բայց մեծ եռանդ կը տեսնուի հիմակ հայերէն խօսիլ, կարդալ ու գրելու համար>>⁶¹⁹: Այստեղ նկատենք, որ թուրքերեն կարող էին խոսել կամ հնաբնակ՝ մեզ հայտնի գաղթերից առաջ Այդընում ապրող հայերի սերունդները, կամ ուշ միջնադարում Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններից եկած գաղթական հայերը: Սյունիքից եկած հայությունը, մինչդեռ, հաստատվելով Էգեյանի մերձափնյա բնակավայրերում և դրանց կից գյուղերում, շուրջ երկդարյա գաղթերի հետևանքով համալրելով իր քանակը, պահպանել էր իր հայախոսությունը և խոսում էր մայրենի բարբառով: Այդընի հայ գաղթականությունը զբաղվում էր առևտրով, գյուղատնտեսությամբ և արհեստներով՝ կապեր ունենալով Զմյուռնիայի նման առևտրական խոշոր նավահանգստի հետ: 1817 թ. ապրիլին Զմյուռնիայի առաջնորդ Փիլիպոսն այցելել է իր վիճակի մեջ մտնող Այդըն և նշել, որ այստեղ կան դերձակներ, ծաղկանկարողներ (գործվածքի), չթագործներ և այլն: Նա հիշում է նաև մաղագործների (անշուշտ՝ հայ բոշաներ)⁶²⁰:

Այդընի հին (XVI դ.) և ավելի ուշ շրջանի շիրմաքարերի արձանագրությունները հիմք են տալիս ասելու, որ Այդընի հայ համայնքը կազմավորվել է XVI դ. շատ ավելի վաղ, թե որոշակի՝ որ դարից, անհայտ է մնում նյութական փաստերի բացակայության պատճառով:

ՄԱՆԻՍԱ: Էգեյականի հայկական գաղթավայրերից Մանիսան (Մագնեզիա) անտիկ աշխարհում համբավված քաղաքներից մեկն էր, որ գտնվում էր Մեանդր գետի ափին, Եփեսոսի շրջակայքում⁶²¹, որին էլ վիճակված էր դառնալու հայկական գաղթավայրերից մեկը փոքրասիա-

⁶¹⁹ Նույն տեղում, էջ 35:

⁶²⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ, 29, վավ. 160, էջ 49-50:

⁶²¹ Encyclopaedia Britannica, Vol. 14, p. 633. Տե՛ս նաև Uzuncarsılı I. H. Osmanlı Tarihi, C. 1, s. 18.

կան տարածքներում՝ կիսելով այս վերջիններիս ընդհանուր պատմական ճակատագիրը:

Մինչև XIV դ. սկզբները Մանիսան գտնվում էր բյուզանդական տիրապետության ներքո՝ համարվելով Լասկարիսների նահանգական կենտրոնը: 1313 թ. Մանիսան կից շրջաններով մտավ Սարուխանի բեյության կազմի մեջ՝ իբրև դրա կենտրոնը: Սարուխանը առաջատարներից մեկն էր բեյությունների փոքրասիական խմբում. այն ուներ մեկուկես տասնյակի չափ քաղաքներ, բացի բուն Մանիսայից, ընդգրկում էր Մենեմենը, Գյորդեսը, Դեմիրջին, Նիֆն ու Թուրգուլը, ուներ 20 բերդ, 10 հազարանոց բանակ և ժամանակի համար բավական ազդեցիկ նավատորմ⁶²², որ բեյության լուրջ գործոններից մեկն էր սելջուկյան պետության քայքայումից հետո նոր գոյացած մահմեդական կազմավորումների, ինչպես և բյուզանդական կայսրության հետ նրա ռազմական ու քաղաքական հարաբերություններում: Այդ հնարավորություն էր տալիս Սարուխանի բեյությանը՝ Բյուզանդիային հարկադրելու հաշվի նստել իր հետ, անգամ համարելու իրեն լիարժեք դաշնակից, երբ կայսրությունը նրա ռազմական օգնության կարիքն էր զգում: Այսուհանդերձ, Սարուխանին ևս, ինչպես մյուս բեյություններին, սպասվում էր կլանումը գլուխ բարձրացրած օսմանյան թուրքերի կողմից: Հայտնի են նրա վերջին տիրակալ Հզրըշահի փախուստը Թիմուրի մոտ, սրա օգնությամբ Անկարայի ճակատամարտից հետո Սարուխանի անկախության վերականգնումը մոտ երկու տասնամյակ կարճ ժամանակով, ապա վերստին և, այս անգամ վերջնականապես, Օսմանյան Թուրքիայի կազմի մեջ մտնելը: Սարուխան օղուկների իշխանության վերջը տրվեց սուլթան Բայազեդի որդիների գահակալական կռիվների ընթացքում, երբ նույն Հզրըշահը պարտություն կրեց օսմանյան գահի համար պայքարող եղբայրներից Մեհմեդ Զելեբիից և սպանվեց⁶²³:

Վերադառնանք, սակայն, մեկ դարից ավելի գոյատևած Սարուխանի բեյությանը: Տարածաշրջանում այն ազդեցիկ իշխանություն էր դարձել նաև իտալական առևտրի, մասնավորապես Ջենովայի հետ տնտեսական առնչությունների շնորհիվ: Ջենովացիները փոքրասիական տարածքներում հատկապես աշխուժացել էին լատինական կայսրության ստեղծվելուց հետո (1204)՝ մտնելով Մանիսայի շրջան և այստեղ ծավա-

⁶²² Uzuncarşılı I. H. Anadolu Beylikleri, s. 31.

⁶²³ Նույն տեղում, էջ 32:

լելով իրենց առևտրական գործունեությունը⁶²⁴։ Ուշագրավ է, որ ջենտվացիները Մանիսայի շրջանում իրենց ազդեցությունն ամրապնդում էին ոչ միայն առևտրի, այլև հանքային արտադրությունը զարգացնելու ուղղությամբ։ Այս բնագավառում, ի դեպ, իրենց նախաձեռնությամբ աչքի ընկան հայերը, բնականաբար, դաշնակից ջենտվացիների աջակցությամբ։ Վ. Գորդլևսկին գրում է, որ սելջուկների ժամանակ հայերի ձեռքին պետք է կենտրոնացած լինեին մետաղամշակությունը և առհասարակ, տեղական արտադրությունը⁶²⁵։ Այս իրողությունը մեկ անգամ ևս վկայում է փոքրասիական շրջաններում՝ դեռ բյուզանդական, ապա և սելջուկյան տիրապետության օրոք, XI-XII դդ. զաղութաբնակ հայերի առկայության մասին։ XVI դ. արդեն օսմանների ժամանակ հանրահայտ դարձած հանքային արտադրությունը պետք է ունենար իր նախընթաց պատմությունը՝ գործում էին արճճի և արծաթի հանքերը Մանիսայում և սելիտրայի արտադրությունը Մարուխանում⁶²⁶։

XVII դ. Մանիսայի շրջանում ևս կազմավորվեց դերեբեյություն, ինչը հատուկ էր դարձել Օսմանյան Թուրքիայի փոքրասիական տարածքներին։ Մանիսան դարձավ Կարաօսմանօղլու գերդաստանի նստավայրը, թրքացել տոհմ, որ ծագումնաբանական կապեր կարող էր ունենալ Մարուխանօղլուների հետ, եթե հաշվի առնենք, մանավանդ, որ օսմանյան թուրքերը այստեղ ևս կիրառում էին պարտված բեյությունների բեկորները պահպանելու գնով իրենց իշխանությունը ամրապնդելու քաղաքականությունը։ Այդընում, նկատում է Վ. Գորդլևսկին, XIX դ. կեսերին մյուսեյլիմի պաշտոն էր զբաղեցնում Կարաօսմանօղլուների հետնորդ Յադուբ փաշան, ով այդ պաշտոնը գնել էր օսմանյան կառավարությունից⁶²⁷։ Կարաօսմանօղլուները հարուստ հողատերեր էին։ XVIII դ. այդ տոհմը տիրում էր Կենտրոնական Անատոլիայի տարածքներին։ Տոհմի գլխավորը տիրում էր Մանիսային, նրա ազգակիցները իշխանություն ունեին Այդընում և Բերգամայում, ազդեցիկ էին նաև Զմյուռնիայում և Մենեմենում⁶²⁸։ Նրանք փաստորեն ամենահզոր այսաններն էին XVII-XVIII դդ. Օսմանյան Թուրքիայում։ Այսուհանդերձ, կորց-

⁶²⁴ Гордлевский В. А. Государство сельджукидов в Малой Азии, с. 145.

⁶²⁵ Նույն տեղում, էջ 132-133:

⁶²⁶ Гордлевский В. А. Эксплуатация недр земли в Турции, с. 262.

⁶²⁷ Гордлевский В. А. Силуэты Турции, с. 24.

⁶²⁸ Uzuncarşılı I. H., Anadolu Beylikleri, s. 32. Стu նաև Петросян Ю. А. Османская империя, с. 194.

րած երբեմնի ուժն ու իշխանությունը, Կարաօսմանօղլուներն իրենց հետաճած դիրքը պահպանեցին մինչև XIX դ. առաջին քառորդ, սակայն դրանից հետո էլ այդ տոհմի սերունդներն ապրում էին Մանիսայում, ինչպիսին էր Հաջի Էոմեր աղան՝ իր հարստությամբ հռչակված այդ մարդը⁶²⁹։ Եվ Կարաօսմանօղլուների (Մանիսայի և Այդընի շրջաններ), և Չափանօղլուների (Կենտրոնական Անատոլիա), որպես այանների վախճանը վրա հասավ այն ժամանակ, երբ սուլթանը վերջ տվեց իր այդ ենթարկյալների ռազմական գործությանը։ Այդ, անկասկած, պետք է համարել Օսմանյան Թուրքիայի ներքաղաքական լուրջ հաջողությունը՝ այանների դեմ կենտրոնական իշխանության մղած պայքարում։

Հավանաբար, փոքրասիական մշտապես խլրտացող տիրույթները սանձահարելուն ուղղված՝ սուլթանների մտահոգությունների հետ էր կապվում այն, որ վերջիններս Մանիսան դարձրին թագաժառանգների նստավայրը՝ սկսած XV դ. սկզբից։ Այստեղ կառավարիչ են եղել Մուրադ Բ-ն, Մեհմեդ Բ-ն, Սելիմ Բ-ն, Մուրադ Գ-ն և սուլթանական գահին հայտնված կամ այդպես էլ չհայտնված այլ գահաժառանգներ⁶³⁰։

Մանիսան զանազան կրոնական ուսմունքների, հուզումների և քանիցս պոռթկացող ապստամբությունների յուրօրինակ կենտրոն էր արևելյան ու արևմտյան քաղաքակրթությունների խաչմերուկում՝ հանդես գալով որպես անխուսափելի հանդիպավայր, դեռևս XV-XVI դդ.։ Զմյուռնիայից առաջ։ 1419 թ. այստեղ ապստամբություն բարձրացրեց Բեդրեդդինը, որին միացան մահմեդականները, հույները և հրեաները։ Շարժումը ջախջախվեց սուլթանական բանակի կողմից⁶³¹։ XIV-XVI դդ. Փոքր Ասիայում՝ Բրուսայում, Էնկյուրիում, Մանիսայում և այլուր հայտնված շիիթական գաղափարախոսները սփոփանքի յուրահատուկ սպեղանի դարձան անընդհատ զրկանքների, պատերազմների ու ավերածությունների ցնցումներ ապրած տարացել ու տարակրոն ազգերի համար⁶³²։ XVI դ. այստեղ ջալալիների ապստամբությանը միացան հին բեյությունների ուժահաստ, բայց իրենց հավակնությունները բորբոքած

⁶²⁹ Finkel C. *Osman's Dream*, p. 400.

⁶³⁰ Alderson A. D. *The Structure of the Ottoman Dynasty*, p. 22-23. Տե՛ս նաև Книга законов султана Селима I, с. 13. Տե՛ս նաև Fisher S. N. *The Foreign Relations of Turkey*, p. 103.

⁶³¹ *Turkey in Asia*, p. 303.

⁶³² Гордлевский В. А. *Государство сельджукидов*, с. 256.

ժառանգները: 1620-ական թթ. այստեղ շահատակում էր Էլիագ փաշան, որը, ինչպես Գր. Դարանաղցու շարադրանքից, իր ավերածություններն էր անում Մանիսայի և Բերգամայի կողմերում՝ աղետներ պատճառելով բնակչությանը⁶³³:

XVI դ. Էգեյանի արևմտյան տարածաշրջանը իր կարևոր տեղն ուներ օսմանյան տնտեսության զարգացման հաշվեկշռում, իրողություն, որ ակնհայտորեն կապվում է բեյությունների (Էմիրությունների) ժամանակներից ժառանգված բավական կենսունակ տնտեսության հետ: Գյուղատնտեսական ու անասնապահական արտադրության զարգացումը, ինչպես և արտաքին առևտրի ընձեռած հնարավորությունները այս ժամանակաշրջանում առաջ մղեցին Թիբեի, Բերգամայի, Այդընի, Մանիսայի, Դենիզլիի բնակչության թվաքանակը և առևտրատնտեսական կարեկիությունները, ավելին, քան ուներ Ջմյուռնիան այս հարյուրամյակներին⁶³⁴:

Ընդհուպ մինչև XVIII դ. վերջերը տարածաշրջանն ապրում էր իր անհանգիստ կյանքով ու արդեն ավանդական դարձած անջատողական տրամադրություններով: Մանիսան Ջմյուռնիայի առաջնորդական վիճակի հնագույն և բազմամարդ բնակավայրերից մեկն էր, որտեղ հայերը, չի բացառվում, կարող էին հայտնվել, իբրև հանրություն, ինչպես Ջմյուռնիայում կամ փոքրասիական այլ վայրերում, Բյուզանդական կայսրության ժամանակներում: Մանիսայի հայ համայնքի մասին մեզ հայտնի առաջին տեղեկությունը տրվում է Սիմեոն Լեհացու ուղեգրության մեջ, 1610-ականի սկզբներին: Եվ Ջմյուռնիայի, և Մանիսայի հայ համայնքներն այստեղ նկարագծվում են որպես հին գաղթականություններ, որոնք ունեն իրենց երկուական եկեղեցիները, կնշանակի, ապրում էին իրենց ազգային կյանքով: 1609-1611 թթ. ճանապարհորդության ընթացքում Սիմեոն Լեհացին Բրուսայից անցնում է Պալքեսար, ապա Մանիսա: Այս քաղաքի հայ բնակչության մասին նա տալիս է կարևոր տեղեկություններ. <<Եւ կայր այս քաղաքս երկու եկեղեցի հայոց, փայտէ տան պէս, մինն ի վերն լերան վրայ, և մինն ի դաշտն, կայր եպիսկոպոս մի անունն Յակոբ Ֆրնօզցի եւ երկու երեց և քանի հարիւր տուն հայի>>⁶³⁵:

⁶³³ Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցույ, Երուսաղեմ, 1915, էջ 561:

⁶³⁴ Goffman D. Izmir and the Levantine World, p. 54.

⁶³⁵ Սիմեոն դպրի Լեհացույ Ուղեգրություն, էջ 37:

Եթե 1615 թ. կողմերում Թիբայի և Զմյուռնիայի հետ միասին նշվում է և Մանիսան, իբրև մեկ առաջնորդություն, որին Էջմիածինը հոգևոր գլուխ էր նշանակել մեզ արդեն ծանոթ Պոկնտոշ Կարապետին, ապա, պետք է եզրակացնել, որ այս վիճակի (թեմի) գլխավոր բաղադրիչները հենց այս երեք քաղաքներն էին, որոնց հիշատակությամբ էլ նկատի էր առնվում Էջմիածնի ամբողջ թեմն այս տարածաշրջանում: Եթե հիշյալ քաղաքների հետ միասին Մանիսան դիտվել է որպես տերունի թեմ հասկացությամբ մեկ ամբողջություն, չի բացառվում, որ Մանիսան հայաբնակ եղած լինի դեռևս X-XI դարերից և թերևս էլ ավելի վաղ շրջանից, բյուզանդական կայսրության օրոք, ինչը նկատեցինք վերը: Հետաքրքիր է նաև տեղի եպիսկոպոս Հակոբ Ֆրնոզցու պարագան: Արդյոք նա էր Մանիսայի, կարելի է կարծել նաև Զմյուռնիայի ու Այդընի հայության հոգևոր գլուխը, իսկ եթե այո, ապա ում կողմից էր նա նշանակված՝ Էջմիածնի, թե Սսի աթոռի: Եպիսկոպոսի <<Ֆրնոզցի>> հորջորջումը խոսում է նրա կիլիկյան ծագման, և կարծեք թե Մանիսայի՝ Սսի աթոռին պատկանելու օգտին: Բայց ծննդյամբ կիլիկյան Ֆրնոզ բնակավայրից լինելը դեռևս չի նշանակում, որ Հակոբ եպիսկոպոսը Մանիսայում Սիսն է ներկայացրել, այլ կերպ ասած՝ Մանիսան մտած է եղել Սսի ենթակայության ներքո: Մենք տեսանք իր տեղում, որ Զմյուռնիան և Մանիսան 1610-ական թթ. իբրև թեմ, պատկանում էին Էջմիածնին, բայց այստեղ մեկ վերապահում պետք է անել. Սիմեոն Լեհացու տեղեկությունը Հակոբ Ֆրնոզցու մասին՝ վերաբերում է 1609-1610 թվականներին, իսկ Պոկնտոշ Կարապետի՝ Զմյուռնիայի և Մանիսայի թեմի Էջմիածնական առաջնորդ լինելու վկայությունը (Գրիգոր Կեսարացու կողմից), տրվել է դրանից բավական հետո՝ 1610-ական թթ. կեսերին: Նման վերապահումը, սակայն, կորցնում է իր ուժը, երբ նկատի ենք առնում հետևյալը. թեմերին տիրելու համար XVII դ. առաջին քառորդից համառ պայքար էր ընթանում Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսությունների միջև, ինչը տեսնում ենք, բավական բացահայտ, անգամ իրավասությունները սահմանագծելուն ուղղված բանակցություններում⁶³⁶ այս երկու աթոռների

⁶³⁶ Նկատելով, որ Աղթամարի և Սսի (Կիլիկիայի) աթոռների, ինչպես և վերջիններիս ու Էջմիածնի միջև դեռևս 1630-ական թթ. չկարգավորված և անորոշ էին մնում իրավասությունների սահմանները, Մ. Օրմանյանը նկատում է, որ այդ <<սահմանները ոչ սկիզբէն եւ ոչ յետոյ որոշ գծուած չէին եւ քաղաքական տիրապետութեանց համեմատ կը փոխուէին իրաւասութեանց վիճակները: Վերջապէս Մայր աթոռի անկարգ, անկանոն կացութիւնը... համարձակութիւն

միջև, Էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսի օրոք: Այս պայմանները հաշվի առնելիս կարելի է անգամ կարծել, որ XVII դ. սկզբին հնարավոր էր Կիլիկիայի ձեռնադրած եպիսկոպոսի ներկայությունը, թեկուզ և զուտ նվիրական կան առաքելությամբ՝ Մանիսայում, քանի որ Էգեյանի շրջանների գաղթօջախներն ավանդաբար պետք է ենթարկվեին Սսի կաթողիկոսության իրավասությանը: Խնդիրը բուրոքովին այլ էր 1610-ականի կեսերին և մանավանդ, 1630-ականին, երբ Զմյուռնիան և Մանիսան (նաև սրանց մերձակա՝ Էգեյանի տարածքները) արդեն համարվում էին Էջմիածնի թեմեր: Այս տասնամյակի վերջերին Էջմիածնի Փիլիպոս կաթողիկոսին գրած իր նամակում Կիլիկիայի կաթողիկոս Սիմեոնը դժգոհում է, որ եկեղեցական կարգը խախտելով, Բրուսայի, Մանիսայի և Զմյուռնիայի Էջմիածնական նվիրակները <<մեծապահոց մեջ բաց պատարագ են ըրեր>>⁶³⁷, ինչը հաստատում է, որ այդ վիճակները ինքնին եկաթալվում են որպես Էջմիածնի նվիրակություններ (կամ առաջնորդություններ):

Զմոռանալով նաև, որ Էջմիածնի միաբանության մեջ կարող էին լինել նաև կիլիկեցի հոգևորականներ: Վերը մեջբերեցինք Սիմեոն Լեհացու այն տեղեկությունը, որ Մանիսայի հայերն ապրում են երկու տարբեր թաղերում՝ իրենց երկու եկեղեցիներով, որոնցից մեկը (ուրեմն և թաղը), գտնվում է <<ի վերն լեռան վրայ>> և մյուսը՝ քաղաքի ներքևում, հարթության վրա՝ <<ի դաշտն>>: Ակներևաբար, հայկական այս երկու թաղերը հիմնվել են տարբեր ժամանակներում, կարելի է կարծել՝ Հայաստանի տարբեր բնակավայրերից սկիզբ առած գաղթերի հետևանքով, հակառակ դեպքում նրանք կտեղավորվեին մեկ թաղում, առանց <<վերի>> (այսպես կոչված Մալթա թաղը) և կամ ներքևի (դաշտի) թաղերի բաժանման: Սիմեոնը, սակայն, չի նշում հայ բնակիչների թիվը՝ ըստ թաղային տարբերակման, այլ բնականաբար, զույգ թաղերի բնակչության ընդհանուր թվաքանակը տների հաշվարկով՝ <<քանի (իմա մի քանի-Ա. Խ.) հարիւր տուն հայի>>:

Սիմեոն Լեհացուց հետո, որքան մեզ հայտնի է, Մանիսայի հայերի թվաքանակի վերաբերյալ հայկական աղբյուրներում որևէ վիճակագրա-

տուեր էին միւս աթոռներուն ուզածնուն պէս գործել եւ ուզած կողմերուն համար եպիսկոպոսներ ձեռնադրել>> (Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 2844): Ինչ ասել կուզի՝ եպիսկոպոս ձեռնադրելու իրավունքը նշանակում էր տվյալ կաթողիկոսության իրավունքների (կամ հավակնությունների) հաստատումը որևէ վիճակի կամ տարածքի հայության նկատմամբ:

⁶³⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, էջ 2852:

կան տվյալ չի արձանագրվել՝ մինչև Ղ. Ալիշանը: 1853 թ. հրատարակված իր աշխատության մեջ նա նշում է այդ թիվը՝ 2500 մարդ⁶³⁸:

Համեմատաբար նվազ քանակ է ներկայացրել Մանիսայի հայերի թիվը դրանից քսան տարի առաջ՝ 1833 թ. Բոստոնում տպագրած իր գրքում, ճանապարհորդ Է. Սմիթը: Քաղաքի ամբողջ բնակչության թիվը նա հաշվում է 80.000, այդ թվում թուրքերի տները՝ 8000, հույների՝ 800, հայերին՝ 400 (երկու եկեղեցիներով), 100 կամ 150 հրեական տների առկայությամբ⁶³⁹:

Մակար վարդ. Բարխուտարյանը, 1879 թ. ամրագրում էր Մանիսայի հայկական երկու թաղերի տների և բնակիչների քանակն առանձին-առանձին. Վարի Մանիսայում 390 տուն՝ 1766 բնակչով (Ս. Սիոն եկեղեցի) և Վերին Մանիսան՝ 103 տուն 407 (519) բնակչով (Ս. Լուսավորչյան եկեղեցի)⁶⁴⁰: Մակար վարդ. քիչ առաջ՝ 1878 թ., Հ. Դիմաքսյանը ամբողջ Մանիսայում հաշվում է 650 տուն հայ⁶⁴¹: Եթե հանրագումարի բերենք այս բոլոր տվյալները, կարող ենք ասել, որ XIX դ. Մանիսայում ապրել է 2500-3000 հայ:

Մակար վարդ. Վարի և Վերին թաղերն անվանում է ավանդակա-նացված և գործածական հորջորջումներով՝ Հին Մանիսա և Նոր Մանիսա, նկատելով, որ վերջինս <<լերան ստորոտը կը գտնուի>>⁶⁴²: Ուրեմն, Վարի կամ Հին Մանիսան ներկայացնում է շատ ավելի հին գաղթական-

⁶³⁸ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրություն, էջ 543:

⁶³⁹ Armenians in the Ottoman Empire, p. 195. Եթե նկատի առնենք յուրաքանչյուր տան (հանե) շնչերի միջին վիճակագրական թիվը՝ 4-5 մարդ:

⁶⁴⁰ Արեւելեան մամուլ, 1879, թիւ 3, էջ 440: Մակար վարդապետի վիճակագրական տվյալների հանրագումարը (տղամարդկանց, կանանց, պատանիների, օրիորդների, մանկահասակ տղաների և աղջիկների թիվը) ցույց է տալիս, որ Վերին թաղի հայերի թիվը կազմում է ոչ թե 407, այլ 519 մարդ (տես նույն տեղում, 1879, թիւ 2, էջ 395): Հ. Քոսյանը Վարի թաղի հայերի տների թիվը հաշվում է 500, բայց ակներևաբար շփոթելով՝ վերադառնում է նաև Մակար վարդ. նշած և միայն Վարի թաղի տներին վերաբերող 390-ին (Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 118 և 129): Վերին թաղի տների քանակը, ըստ Քոսյանի, հասնում էր 100-120-ի (նույն տեղում, էջ 131): Ինչ վերաբերում է Մակար վարդ. կազմած՝ Զմյուռնիայի թեմի վիճակագրական ցանկին, ապա այն լրիվ չէ. Այդ ցանկից դուրս են մնացել Թիրա, Մենեմեն, Ալաշեհիր, Այասլուք (Եփեսոս), Թուրգուլթ, Ստանքլոյ, Բողըռում և այլ հայաբնակ բնակավայրեր:

⁶⁴¹ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 353:

⁶⁴² Արեւելեան մամուլ, 1879, թիւ 2, էջ 394:

նություն, հայ գաղթականության առավել մեծ թվաքանակով, իսկ լեռան ստորոտին գտնվող Նոր Մանիսան հետագա շրջանի, կարելի է կարծել՝ XVII դ. սկզբին եկած գաղթականությունն էր, որ եկել էր Խարբերդից և Հայաստանի պարսկական մասից, հիմնականում Սյունիքից և Արարատյան դաշտից: Վերին կամ նոր Մանիսայի ժողովրդի զբաղմունքը ևս այդ էր վկայում. Մակար վարդ. կարծում է, որ մեծ մասամբ ջուլհակությամբ զբաղվող այդ ժողովուրդը <<Պարսկաստանէ գաղթած կերնին>>⁶⁴³: XVII դ. սկզբներին Մանիսա են գաղթել նաև նախիջևանցիներ. 1661 թ. (ՌՃԺ) Մանիսայի Վարի թաղի եկեղեցու դռան արձանագրության մեջ հիշվում է նվիրատուն՝ <<Իսկ դուռն այս է յիշատակ աստապատցի Մարգար որդոյ բարեպաշտօն Մկրտչի>>⁶⁴⁴: Անշուշտ, չի բացառվում, որ Սյունիքից և Ղարաբաղից հայերն այստեղ (Վերին թաղ) գաղթած լինեին ջալալիական հուզումների և պարսկա-թուրքական պատերազմների ժամանակ, բայց և փաստերը ցույց են տալիս, որ Մանիսայի հայ համայնքը XIX դար էր հասել պատմականորեն մի քանի, տարբեր և տարժամանակյա գաղթականությունների արդյունքում:

Հակառակ Մակար Բարխուտարյանի, Հ. Քոսյանը կարծում է, որ հայերն իրենց գաղթականության սկզբներում <<նախ այս ձորամեջն (իմա լեռան ստորոտի մի ձորամիջում-Ա. Խ.) ընտրած են իրենց բնակութեան վայր և ապա իջած են Վարի թաղն, եւ արդարեւ, տեղւոյս եկեղեցին աւելի հնագոյն արձանագրութիւններ ունի, քան Վարի թաղի եկեղեցին>>⁶⁴⁵:

Նկատենք, որ Վերին թաղի Ս. Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1799 թ.՝ Մարտիրոսի առաջնորդության ժամանակ, Աստվածատուր և Մարգար Ապրոյանների նպաստներով⁶⁴⁶, այսինքն, շատ ավելի ուշ, քան Սիմեոն Լեհացին էր վկայում Մանիսայում երկու հայկական եկեղեցիների, ուրեմն և թաղերի համաժամանակյա գոյության մասին, այլ կերպ ասած՝ Հ. Քոսյանի հնագույն համարած եկեղեցուց շատ առաջ:

⁶⁴³ Նույն տեղում:

⁶⁴⁴ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 133:

⁶⁴⁵ Նույն տեղում, էջ 132:

⁶⁴⁶ Հ. Քոսյանը մեջբերել է այդ մասին վկայող Ս. Լուսավորիչ եկեղեցու ճակատի մի արձանագրությունը (նույն տեղում, էջ 132), որ կառուցման գործում մենաշնորհ դեր է վերապահում Ապրոյաններին, մինչդեռ եկեղեցին կառուցվել է նաև <<արդեամբք... ժողովրդոցն>>, ինչպես գրում էր Դավիթ կաթողիկոսը Ջմյուռնիայի երևելիներին ուղղած՝ 1801 թ. դեկտեմբերի 1-ի իր նամակում (Դիւան հայոց պատմութեան, գիրք Է, մաս երկրորդ, էջ 393):

Այդ եկեղեցիներից որևէ մեկի հնագույն լինելու մասին ոչ մի վկայություն չկա. և մեկ, և մյուս թաղում այդ եկեղեցիները փայտաշեն էին և բնականաբար, քանիցս նորոգված պետք է լինեին: Հիրավի, Վերին թաղի Ս. Լուսավորիչ եկեղեցին հիշվում է հետագայի՝ նրա քարերից մեկին պահպանված և Հ. Քոսյանի վկայակոչած շատ ավելի հին արձանագրություններից մեկում: Այստեղ ասվում է, որ Ս. Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է <<ծախիւք գոյիւք համայն առհասարակ ժողովրդի եւ աշխատասիրութեամբ յումեմնի Յովսէփ պիտակ վարդապետի որ ի թուի ՌՃՏերորդի (1661) եւ ՄՌ յամի>>⁶⁴⁷:

Հ. Քոսյանը Վերին թաղի հնության օգտին բերում է ևս մեկ փաստարկ՝ 1672 թ. մի տապանաքար եկեղեցուն կից և չպահպանված գերեզմանատնից⁶⁴⁸: Բայց այդ եկեղեցին հիշատակվում է նաև ավելի հին մի վավերագրով. եկեղեցուն երբեմնի պահվող ձեռագրերից մեկում արձանագրված է. <<գնեցաւ զանձատետրս թվին ՌՂԹ (1639) մարտ ամսոյ ուրբաթ եւ եղաւ յեկեղեցին Լուսաւորչին ի քաղաքն Մանիսայ>>⁶⁴⁹: Տ. վարդ. Պալյանը մեջբերել է այդ եկեղեցուն պատկանող մեկ այլ վավերագիր՝ <<Յիշատակ է գիրս Տէր Գրիգորին որ ետ Ս. Լուսաւորիչին եկեղեցին թվ. ՌՃԷ (1658) ամէն>>⁶⁵⁰:

Մանիսայի Վարի թաղի Ս. Սիոն եկեղեցում պահված կամ մեզ հայտնի ձեռագրերը ժամանակի առումով զիջում են Վերի թաղի Ս. Լուսավորիչ եկեղեցու ձեռագրերին: Դրանցից ամենահինը, որտեղ հիշատակվում է Ս. Սիոն եկեղեցին, գրված է 1678 թ., որով պետք է ընդունենք Ս. Լուսավորչի հնագույն ձեռագրի (1650 թ.) 39 տարվա ավագությունը⁶⁵¹: Հետևելով Հ. Քոսյանին և այս տարբերությունը նկատի առնելով, Գ. Շահինյանը կարծում է, որ Վերի թաղի գաղթականությունը 20 տարով ավելի հին է, քան Վարի թաղինը, և որ Վերի թաղի գաղթականությո-

⁶⁴⁷ Քօսեան Հ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 133:

⁶⁴⁸ Նույն տեղում, էջ 134:

⁶⁴⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դ., հ. Գ, էջ 379:

⁶⁵⁰ Տ.Վ.Պ.[ալեան], Ցուցակ հայերեն ձեռագրաց Ս. Լուսաւորիչ եկեղեցոյն Վերի թաղի ի Մաղնիսա, օգոստոսի 15, էջ 555:

⁶⁵¹ Ահա այդ ձեռագրի վերջին ստացողի հիշատակարանը. <<Եւ արդ, զվերջին ստացող սբ Աւետարանս որ գերի անկեալ էր սա ի ձեռն այլասեռից եւ ըստացաւ զգատեցի եւ եղի ի սբ Սիոն եկեղեցիս ի քաղաքն Մանիսէ...>> (Շահինեան Գ., Մաղնիսայի հայ գաղթականութիւնը, թիւ 1-2, էջ 12):

յունը գոյացել է XVI դ. վերջին, իսկ Վարինը՝ XVII դ. առաջին քառորդին⁶⁵²:

Այստեղ, կարելի է կարծել, կարևորություն է ստանում այն, թե երբ և որտեղից են գաղթել Վերի և Վարի թաղերի հայերը: Մանիսայի գաղթօջախն հետազոտողները իրենց ուշադրությունը գլխավորապես սևեռել են Վերին թաղի վրա, և այդ այն դեպքում, երբ Վարի թաղի հայության թվաքանակը՝ գոնե հայտնի փաստ Մակար վարդ. վիճակագրական տվյալներով, կազմում էր Վերին թաղի բնակչության ավելի քան քառապատիկը (Վերին՝ 407 մարդ, Վարի՝ 1766)⁶⁵³: Հավանաբար, այստեղ առկա է սովորույթի ուժը՝ խթանված այն հանգամանքով, որ Վերին թաղի վավերական նյութերը, և կարծում ենք, զուտ պատահականության բերումով, իրենց քանակով և հնությամբ գերազանցում էին Վարի թաղում պահպանված հուշարձաններին: Մոտեցումների այսպիսի նախասիրությունը սկսվում է Հ. Քոսյանից, որը հետազոտական առարկայի տեսակետից նախապատվությունը բացահայտորեն տալիս է Վերին թաղին (ավելի շատ տվյալներ և տեղեկություններ այդ թաղի եկեղեցու, դրա նորոգումների, գերեզմանատների և սրանցից մնացած դամբանադրերի վերաբերյալ): Գ. Շահինյանը լեզվական քննության տեսակետից ևս ուշադրության կենտրոնում է պահում Վերին թաղը՝ այս առթիվ երկխոսության մեջ մտնելով Հ. Աճառյանի և Կայծոռիկ ստորագրությամբ հեղինակի հետ: Լեզվական այս քննության արդյունքները բավական լույս են սփռում այն հարցի վրա, թե երբ և որտեղից են գաղթել Վերին թաղի մանիսացիները: Նրանք բոլորն էլ ընդունում են Գ. Շահինյանի կարծիքը, որ Մանիսայի երկու թաղերի հայերը գաղթել են տարբեր ժամանակներում, որ <<կերկարաձգի Ժ-րդ դարէն սկսեալ մինչև ԺԷ դարուն կէսերը գեթ ընդհանուր ժամանակներով>>⁶⁵⁴: Գ. Շահինյանն այդ հիմնավորում է երկու թաղերի ազգագրական և լեզվական տարբերությ-

⁶⁵² Շահինեան Գ., նշվ. աշխ., էջ 13:

⁶⁵³ Արեւելեան մամուլ, 1879, թիւ 3, էջ 440:

⁶⁵⁴ Բիւրակն, 1899, թիւ 1-2, էջ 12: Իր <<Նմոյշներ Մաղնիսայի գաւառաբարբառէն>> հոդվածում (թիւ 19, էջ 291-294) Գ. Շահինյանը քննում է Մանիսայի Վերին թաղի բարբառի լեզվական իրողությունները (բառամթերք, դրա կրած հնչյունափոխությունները և այլն)՝ մեջբերելով նաև նմուշներ այդ բարբառից: Գ. Շահինյանի լեզվական մոտեցումների արժեքը թողնելով մասնագետ լեզվաբաններին, այստեղ նշենք միայն, որ այդ նմուշների մի մասը ենթարկված է գրական մշակման, ուստի և բարբառի լիարժեք պատկերը չի կարող վերարտադրել:

յուններով և հավանական է համարում Վերի թաղեցիների առավել վաղ գաղթած լինելը: Հ. Աճառյանը և Կայծոռիկը հենվելով Գ. Շահինյանի մեջբերած Վերի թաղեցիների գործածած գավառաբարբառի իրողությունների վրա, համաձայնում են վերջինիս, նշելով, որ այդ հիմք է տալիս ասելու, որ նրանք գաղթել են Խարբերդից XVII դ. սկզբին⁶⁵⁵: Նրանք գրում են, որ Վերին թաղի բարբառն ազդված է Ջյուլուսիայի, Կ. Պոլսի և Մանիսայի Վարի թաղի բնակիչների լեզվական տարբեր երևույթներից:

Իր հաջորդ հոդվածում Գ. Շահինյանն առաջ է քաշում վերինթաղեցիների մեջ ուստայնանկության (ջուլիակագործություն, մանածագործություն) տարածված լինելու հանգամանքը, իբրև նրանց բնօրրանը որոշելու գործոն և այդպիսին համարում է ոչ միայն Խարբերդը, այլև Մալաթիան և Բալուն⁶⁵⁶: Նկատենք, որ այս վերջին փաստարկը հենվում է իրողության, բայց ոչ տարբերիչ իրողության վրա. ուստայնանկությամբ՝ այդ հնամենի արհեստով, զբաղվում էին ոչ միայն Մանիսայի վերինթաղեցիները, այլև Էգեյանի շրջանի շատ գաղթավայրերի հայկական բնակչությունը (Ջյուլուսիա, Այդըն, Էոդեմիշ և այլն), մասնավորապես XVII-XVIII դդ. Սյունիքից գաղթած հայերը: Ստույգ կարելի է համարել մանիսացիների գաղթը Խարբերդից, որ ակնհայտ է ոչ միայն Վերին թաղի բարբառին տված՝ Հ. Աճառյանի, Գ. Շահինյանի և այլոց գնահատականներով, այլև XVII դ. սկզբի պատմական իրողություններով: Նշված ժամանակաշրջանում հայերը Խարբերդից գաղթել են մի քանի անգամ: 1602 թ. մի շարակնոցում Մատթեոս գրիչը հայտնում է. <<Բազում նեղութիւն եկն ի վերայ աշխարհիս, զի շատ տեղիք աներեցաւ ի ձեռաց իսմայէլացոց, զի այս ամի Բ (2) անգամ երկիրս փախստական եղաւ եւ մեք ի յերերմանք կամք եւ զվերջն Աստուած գիտէ, թէ զինչ լինելոց ենք... Արդ ես երես անկեալ աղաչեմ զձեզ չի մեղադրել ինձ, զի պիղծ լազիբին կինն եկաւ ի Խարբերդ նստաւ շատ հեծելով, երկիրս ամեն փախստական եղաւ>>⁶⁵⁷:

Ջալալիների հուզումների և խառնակությունների վայրագ ժամանակներն էին, ապստամբական ուժերը կովում էին օսմանյան պետության, ի հարկին նաև միմյանց դեմ՝ ավերելով, սրածության մատնելով և կամ գերեվարելով գրավված բնակավայրերն ու անպաշտպան ժո-

⁶⁵⁵ Կայծոռիկ, Աճառեան Հ., Մանիսացիներն իբրեւ գաղթական Խարբերդի, թիւ 25, էջ 402-403:

⁶⁵⁶ Նույն տեղում, թիւ 31- 32, էջ 504-505:

⁶⁵⁷ Հայերեն ձեռագիր հիշատակարաններ ԺԷ դարի, հ. 1, էջ 79-80:

ղովրդին: 1602 թ. ենթարկվելով կրկնակի հարձակումների և դիմելով փախուստի և գաղթի, Խարբերդում և դրա շրջակայքում գոյատևած մարդիկ, այդ թվում և հայերը, նոր արհավիրքներ պետք է տեսնեին: 1606 թ. Խարբերդը և շրջակայքը գրավեց մի նոր ջալալի՝ Թավուլը, համեմատաբար ավելի զորեղ ռազմական ուժեր տնօրինող ապստամբ, որի ավագակային արշավների աշխարհագրությունը տարածվում էր Արևմտյան Հայաստանից մինչև Թուրքիայի փոքրասիական շրջաններ, մինչև Զմյուռնիա և Մանիսա: Այս հարձակումների մասին մեկ այլ հիշատակագրող նշում է. <<Ելալ Նեոի որդին կոչեցեալն Թաւուլ, խիստ աւիիրութիւն էառ յերկ[ր]իս Ղաբերտու, Ե (5) ամիս ի դաշտն նստաւ զգեղօրայքն այրեց, շինութիւն պակասեցաւ>>⁶⁵⁸:

Խարբերդում և շրջակայքում նոր ասպատակությունների ձեռնարկեց ջալալի Շաբանը՝ 1611 թ., որի մասին խոսվում է Ժամանակի մի չափածո գործում.

Ապա Շապան պիղծ եղեալ
Յոլով զոգիս սրով խողխողեալ
Ապա յԱմթայ նա հալածեալ
Եւ ի Խարբերթն կործանեալ⁶⁵⁹:

Գրավոր փաստերի չգոյությունը մեզ հիմք չի տալիս ասելու, թե հատկապես որ ջալալու հարձակումից հետո են հայերը հայտնվել Զմյուռնիայի շրջանում, այդ թվում և Մանիսայում: Հնարավոր է՝ սկսած 1602 թ., ինչի մասին վկայում էր գրիչ Մատթեոսը, որ կարող էր շարունակվել ջալալիների հետագա ասպատակությունների ընթացքում (ընդհուպ մինչև 1611 թ.՝ Շաբանի կողմից Խարբերդի ավերումը), անգամ այդ հարձակումների միջև ընկած անարյուն ժամանակներում, երբ բնակչությունը գրեթե միշտ պատրաստ էր հեռանալու հույժ անկայուն և մոտալուտ հարձակումների թիրախ դարձած բնօրրանից: Հետևաբար, խարբերդցիները Մանիսայում կարող էին հայտնվել մոտավորապես 1602-1611 թթ.: Չի բացառվում նաև, որ խարբերդցիների մի մասը գերեվարությամբ տարված լինե՛ր Էգեյանի ափերը՝ այդտեղ վաճառելու կամ ստրկական աշխատանք պարտադրելու մտադրությամբ, քանի որ, նշված շրջանները դեռևս 1590-ականներից բռնկված էին մեկը մյուսին հաջորդող ջալալիական հրամանատարների արշավանքներով: Շուրջ 1597 թ. և հետո այստեղ ակտիվորեն գործում էր, ինչպես տեսանք, Քա-

⁶⁵⁸ Նույն տեղում, էջ 215:

⁶⁵⁹ Նույն տեղում, էջ 443:

լենդեր օղլուն՝ Քարա Մեյադի հետ, որոնք ասպատակում էին բավական լայն շառավղով՝ Բրուսայից մինչև Մանիսա՝ իրենց շուրջ խմբված 30 հազարանոց բանակին հենված⁶⁶⁰։ Այս բանակն էր, որ Մարուխանի մոտակայքում (Այդըն) 1595 թ. ջախջախել էր Անատոլիայի բեյլերբեյ Հասան փաշային և Մարուխանի Հաջի բեյին՝ սպառնալով Մանիսային և կից տարածքներին⁶⁶¹։ Տարածաշրջանը, հիրավի, բռնկվելու պատրաստ վառողի տակառ էր հիշեցնում և այս պայմաններում խարբերոցիների կամավոր հայտնությունը Ջմյունիայի շրջակայքում և Մանիսայում՝ տարակուսելի կարող է թվալ առաջին հայացքից, որ հուշում է որոշակիությունների մեջ մեզ անհայտ գործոնների առկայության մասին։ Եվ ոչ միայն Ջմյունիայի և Մանիսայի, այլև ամբողջ Էգեյանի տարածաշրջանի, որի հայ գաղթականության հնագույն պատմությունը, որ չկա հայկական աղբյուրներում, հաճախ ստիպված սկսում ենք XVII դ. սկզբից։ Արդյոք Էգեյանի առափնյակի (նաև կղզիների) համար այդքան խառնակ և վտանգավոր ժամանակներում այդ տարածաշրջանը կարող էր այնպիսի անհաղթահարելի ձգողական ուժ ունենալ Հայաստանի հայ բնակիչների համար, որ նրանց մի զգալի մասը շարունակեք գաղթել հենց այդտեղ։ Ինչն էր նրանց մղում այդտեղ հանգրվանելու։ Հարցեր են սրանք, որոնց պետք է անդրադառնալ Էգեյանի այս շրջանների մյուս հայկական գաղթօջախների պատմությունը դիտարկելուց և արդյունքները հանրագումարի բերելուց հետո։ Հարկ է այստեղ միայն նկատել, որ նշված գաղթականությանը զգալիորեն ուղղորդել են մի քանի գործոններ, ինչպես Էգեյանի գաղթավայրերի առկայությունը XVI դ. դեռ շատ առաջ՝ բյուզանդական ժամանակներից ի վեր, սելջուկների հարկային համեմատաբար մեղմ քաղաքականությունը և, այս թվարկման մեջ ամեննին էլ ոչ վերջինն ըստ նշանակության՝ հայերի ընդգրկվածությունը տեղական և միջազգային առևտրում։

Ջալալիների հուզումների վերջին դրվագներից էր Էլիազ փաշայի ապստամբությունը 1620-1630-ական թթ., որին անդրադարձել ենք իր տեղում։ Օսմանյան իշխանությունները, ինչպես տեսանք, դժվարությամբ ազատվեցին նրանից՝ նախապես պաշտոնով ու կաշառքով հրապուրելով նրան և ապա ենթարկելով մահապատժի։ Մանիսայի, ինչպես և Բերգամա քաղաքի (որտեղ տարիներ շարունակ ամրացել էր Էլիազ փաշան) հայկական համայնքները, այսուհանդերձ, կարողացան գո-

⁶⁶⁰ Naima, Annals, p. 355. Տե՛ս նաև Новичев А. Д. История Турции. I, с. 131.

⁶⁶¹ Naima, նշվ. աշխ., էջ 336:

յատնել ջալալիների և օսմանյան պետության բախումներից առաջացող արհավիրքների պայմաններում:

Այսանների ժամանակաշրջանում, ինչպես տեսանք, XVIII դ. Մանիսային և շրջակայքում տիրում էին Կարաօսմանօղլուները, որ ամեննին չկասեցրեց այս տարածաշրջանի առևտրական ու տնտեսական զարգացումը, Զմյուռնիայի, և սրա միջոցով՝ Մանիսայի ներգրավվածությունը միջազգային առևտրին: Նավահանգստային այդ խոշոր կենտրոնի ապրանքափոխանակության մեջ Մանիսան ուներ իր բաժինը՝ հատկապես գյուղատնտեսական և արհեստագործական արդյունքները շուկայում ներդնելու տեսակետից, որ և շարունակվեց հետագայում՝ տեղական արտադրության զարգացման պայմաններում:

Մանիսան փոքրասիական արհեստագործության ճանաչված կենտրոններից մեկն էր, որի հույն, հայ, հրեա, իսկ հետագայում նաև մահմեդական ազգաբնակչությունը մասնակցում էր արհեստավորական առևտրական ապրանքների շրջանառությանը դեռևս Բյուզանդիայի և սելջուկների, այնուհետև օսմանյան տիրապետողների դարաշրջաններում: Արհեստավորները, այդ թվում և հայերը միավորված էին էսնաֆությունների՝ արհեստակցական կորպորատիվ միությունների մեջ: Համեմատության համար այստեղ նշենք, որ XVII դ. Կ. Պոլսի 150 և Բրուսայի մոտ 60 էսնաֆությունների դիմաց Մանիսայում գործում էին 60-ը⁶⁶²: Որևէ տեղեկություն չկա այն մասին, որ Մանիսայի (և առհասարակ Էգեյանի շրջանի այլ հայ գաղթավայրերի) հայերը մտնում էին այդ էսնաֆությունների մեջ, թե առանձին էին գործում, սակայն պետք է ենթադրել, որ անդամակցել են, թեկուզ և այն պատճառով, որ հայ արհեստավորները փոքրաքանակ էին և հազիվ թե առանձին միության հայտներ կայացնեին: Մանիսայի հայերի մեջ ամենից շատ տարածված արհեստը մանածագործությունն էր, որ գաղթական հայերն իրենց հետ բերել էին հայրենիքից՝ Սյունիքից և Խարբերդից. <<Գլխաւորաբար, գլում է շ. Քոսյանը,- իրենց ապրուստի աղբյուրն է ոստայնանկութիւնը... Գրեթէ ամէն տան բակին մէջ կտեսնուին ջուլիակի գործինէր՝ նահապետական դրութեան եւ վիճակի մէջ, որոնց առջևը նստած են կանայք եւ օրիորդք եւ կը գործեն օրն ի բուն՝ մեծ եռանդեամբ>>⁶⁶³:

⁶⁶² Inalcik H. նշվ աշխ., էջ 150:

⁶⁶³ Քութան Յ., նշվ. աշխ., էջ 128:

Մանիսացիները, այդ թվում և վարիթաղեցիները, բնականաբար, ունեին նաև այլ արհեստավորներ՝ դերձակներ, ժամագործներ, սափրիչներ, հյուսներ, դարբիններ և այլն: Տեղի արհեստավորների և առհասարակ, հայ համայնքի կյանքի մասին կարևոր տեղեկություններ են պարունակում Զմյուռնիայի ատաջնորդ Փիլիպոսի՝ 1816-1817 թթ. գրառումներն իր նվիրակական այցերի վերաբերյալ: 1816 թ. նոյեմբերին Փիլիպոսն այցելել է Վարի թաղ, նշելով, որ այն ունի 9 ծուխ՝ համապատասխան թվով քահանաներով: Դրանցից ավագ քահանա տեր Հարությունի ծխում հիմնականում առևտրականներ էին (մահտեսի պատվանուններով), կային նաև արհեստավորներ՝ չեմպերձի (գոտի պատրաստողներ, օղեգործներ), պասմաձի (չթագործ), պոյաձի (ներկարար, ծեփագործ), պեռպեռ (սափրիչ) և այլն⁶⁶⁴: Առևտրական հայերը ներգրավված էին տեղական գյուղատնտեսական ապրանքների և հումքի (բամբակ, ցորեն, պտուղներ) առևտրի ոլորտում, որտեղ եկամտաբեր էր հատկապես բամբակի հնամենի առևտուրը: Դեռևս XVII դ. Թուրնեֆորը գրում էր, որ Մանիսայում առևտրի հիմնական ապրանքը բամբակն է⁶⁶⁵:

1817 թ. հոկտեմբերին Փիլիպոսն այցելել է Մանիսայի <<Վերին գյուղ>> (թաղ), նվիրատուների ցանկն այստեղ շատ ավելի նվազ է, քան Վարի թաղում, որ խոսում է Վերինթաղեցիների առավել համեստ օգիակական կարողությունների մասին. նրանք գլխավորապես արհեստավորներ էին և մանր առևտրականներ (նշվում են միայն անունները), իսկ ծխերի բաժանման մասին՝ ոչ մի տեղեկություն⁶⁶⁶: Մանիսայի հայերի ապրուստի միջոցներից էր այգեգործությունը, աճեցնում էին խաղող, թուզ և այլ պտուղներ, որոնք հանվում էին շուկա, սակայն եկամտի հիմնական աղբյուրը, հատկապես Վերին թաղում, մնում էր արհեստագործությունը: Այստեղ ևս, ինչպես և փոքրասիական մյուս քաղաքներում, ազգաբնակչությունը զբաղվում էր նաև հողագործությամբ, հիմնականում՝ այգեգործությամբ, սակայն օսմանյան հարկային քաղաքականությունը, խաղողի մշակության հետ կապված դժվարությունները ակնհայտ էին դարձնում արհեստների եկամտաբերությունը այգեգործության համեմատությամբ: XIX դ. երկրորդ կեսին ընդարձակ այգիներ ունեցող մանիսացի հայերը չկարողացան դեմ առնել որթավիճի (ֆի-

⁶⁶⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 12-13:

⁶⁶⁵ Tournefort J. P. Voyage d'un botaniste, p. 311-312.

⁶⁶⁶ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 32-34:

լոքսերա) ավերածություններին և հարկադրված էին հրաժարվել այգե-
գործությունից⁶⁶⁷:

Մանիսայի հայերը ամենամոտ առնչություններ ունեին զմյուռնահայ
իրականության հետ, նրանց և հոգևոր, և տնտեսական կյանքը փաստո-
րեն ուղղորդվում էին Զմյուռնիայի առաջնորդարանի և մեծահարուստ-
ների կողմից: XVIII դ. և XIX դ. առաջին կեսին այստեղ ազդեցիկ էին
զմյուռնացի Ապրոյանները, Էքիզյանները և Կոստանդյանները, ովքեր
անմիջական մասնակցություն են ունեցել Մանիսայի համայնքի ազգա-
յին հաստատությունների նորոգումների կամ կառուցման գործին: Դա-
վիթ-Դանիելյան ներհակությունները, որ տեսնում ենք Զմյուռնիայում՝
Մարտիրոս արք. առաջնորդության ժամանակ (XVIII դ. վերջ – XIX դ.
սկիզբ), ի հայտ եկան նաև Մանիսայում՝ Վերին թաղի Ս. Լուսավորիչ
եկեղեցու շինության առթիվ:

Այսուհանդերձ, Վերին թաղի հայությունն ապրում էր շատ ավելի
զուսպ և համեմատաբար խաղաղ առօրյայով, քան վարիթադեցիները:
Գոնե XIX դ. երկրորդ կեսի կտրվածքով, որին իր բացատրությունն է
տալիս Հ. Քոսյանը՝ ելնելով իր լուսավորական մտայնությունից: Նա
նկատում է, որ Վարի թաղի հայերը երկար ժամանակ տարաձայնոյթ-
յուններ ունեին, որի պատճառը <<ոչ արժանւոյն>> առաջադիմությունն
էր, առիթը՝ թաղականի, քահանայի, վարժապետի առօրեական խնդիր-
ները⁶⁶⁸: Նշանակություն ուներ նաև այն, որ այդ թաղում կենտրոնացած
էին առևտրականները, ովքեր շուկայի մրցակցական տարամիտումնե-
րը հեշտությամբ տեղափոխում էին հանրային կյանքի ոլորտ: Վերին
թաղում, մինչդեռ, համախումբ ապրում էին խարբերողի արհեստավոր-
ները՝ իրենց պահպանողական միջանձնյա և ազգային հարաբերու-
թյուններով ու ավանդական կենսակերպով, որը եթե ոչ ամբողջովին,
ապա գեթ առօրեական իմաստով մարդկանց մղում էր լայնախոհու-
թյան և հանդուրժողականության:

Թանգիմաթի ժամանակներից և մասնավորապես XIX դ. առաջին
կեսից Մանիսայի հայերի մեջ ևս վերելք ապրեց ազգայնության ոգին,
ուշադրության կենտրոնում հայտնվեցին վարժարանները, ստեղծվեցին
արհեստավորական, կրթական-բարեսիրական և կանանց ընկերու-
թյուններ, առավել սերտ դարձան կապերը Զմյուռնիայի առաջնորդարա-
նի և ազգային այլ հաստատությունների հետ: Ուշագրավ է այս իմաս-

⁶⁶⁷ Քուեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 129:

⁶⁶⁸ Քուեան Յ., նշվ. աշխ., էջ 127:

տով Զմյուռնիայի <<Սյունյաց>> ընկերության գործունեության ազդեցությունը Մանիսայի հայերի կրթական կյանքում: Անգամ 1847 թ., երբ <<Սյունյաց>> փաստորեն դադարեցրել էր իր գործունեությունը, Մանիսայի հայերը կազմակերպեցին իրենց <<Ազգասեր>> ընկերությունը, որի կրթական նպատակները կրկնում էին նույն <<Սյունյացի>> ծրագրային դրույթները, անշուշտ, զուտ տեղական շրջանակներում⁶⁶⁹:

ԷՆՂԵՄԻՇ: Փոքրասիական հնագույն քաղաքներից է Էգեյանի շրջանում, հայկական կայուն համայնքի պատմությամբ, որի սկիզբը հնարավոր է շատ ավելի հին կարող է լինել, քան XVII դ. ավանդված վավերագրերը: Քաղաքն իր շրջակա բնակավայրերով (Բիրգի, Թիրե, Այասլուք և այլն) և Զմյուռնիայի շրջանակով հանդերձ, ապրել է տարածաշրջանի ողջ պատմական ճակատագիրը՝ հունահռոմեական ժամանակներից մինչև Բյուզանդիա, սելջուկներ, մոնղոլներ և Օսմանյան կայսրություն: Քաղաքը գտնվում է Զմյուռնիայից հարավ-արևելք, նրա հետ դարեր ի վեր կապված էր տնտեսական ու ռազմավարչական կապերով, թեև միայն XIX դ. վերջին, ի հետևանս Օսմանյան Թուրքիայի տնտեսական դանդաղ զարգացման, շարք մտավ Էոդեմիշ-Զմյուռնիա երկաթուղին:

Էոդեմիշը փոքրասիական հնագույն գաղթավայրերից մեկն է: Ղ. Ալիշանն իր <<Քաղաքական աշխարհագրութեան>> մեջ, որքանով մեզ հայտնի է, առաջինն է նշում տեղի հայերի թվաքանակը՝ 700 մարդ⁶⁷⁰: Մակար վարդ. 1879 թ. Էոդեմիշի համայնքում հաշվում էր 177 տուն՝ ընդամենը 933 մարդ (տղամարդ, կին, երիտասարդ, պատանի, օրիորդ, երկսեռ երեխաներ հաշվարկով), որ ավելի քան քսան տարի անց նույնությամբ կրկնում է Հ. Քոսյանը ըստ երևույթին ձեռքի տակ նոր տվյալ-

⁶⁶⁹ Ընկերության նպատակն էր <<հայազգի աղքատաց, կարոտելոց եւ բանտարկելոց խնամել, տնանկ հիւանդաց դարման տանել եւ դպրատանց բարեկարգութեանը ըստ հնարատրութեան հոգ տանել>>, գրում էր զմյուռնահայ թերթը (Արշալոյս Արարատեան, 1847, փետրվարի 7): Թերթն ընդգծում էր այդ ընկերության հանրային կարևորությունը Մանիսայի համայնքի աղքատության պայմաններում՝ կոչ անելով <<օգնական հանդիսանալու այս ընկերութեանը, մանաւանդ թէ ով որ Մանիսայի ժողովրդոց խեղճութիւնը եւ ցաւալի աղքատութիւնը լսած կամ տեսած է>> (նույն տեղում):

⁶⁷⁰ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրութիւն, էջ 54:

ներ չունենալով⁶⁷¹: Այս դեպքում փաստորեն ունենք XIX դ. ընթացքում, մինչև 1879 թ. ընկած ժամանակաշրջանը, Էոդեմիշի հայերի մոտավոր թվաքանակը, որը չի գերազանցել 1000-ը: Ավելացնենք, որ XX դ. սկզբներին Էոդեմիշի հայերի թվաքանակը ավելացել էր. Զմյուռնիայի <<Դաշինք>> թերթի տվյալներով համայնքում տների քանակը հասնում էր 250-300-ի⁶⁷²:

Մակար վարդ. Էոդեմիշի հայ հանրության պատմությունը սկսում է XVI դարից՝ նշելով նաև նրա տեղաշարժը գաղթելուց հետո՝ սկզբնական ապաստանից. <<Հայք 300 տարի առաջ գաղթած են ի Պերկի, որ Էօտեմիշէն մեկուկես ժամ հեռի գիւղ մ'է եւ անկից Էոտեմիշ իջած հաստատուած են>>⁶⁷³: Հ. Քոսյանը, նոր մանրամասն է հավելում հայերի՝ Պերկիից Էոդեմիշ անցնելու իրողությունը՝ ժամանակային իմաստով. <<Ի սկզբան անդ Հայք իբր 300 տարի յառաջ իրենց բնիկ երկրէն գաղթած են Պերկի անուանեալ քաղաքն, որ Էօտեմիշէն 2 ½ ժամ հեռու վայր մը կը գտնուի եւ վերջէն Պերկին թողլով՝ եկած հաստատուած են յԷօտեմիշ, որ գրեթէ 150 տարի առաջ>> (նկատի ունի XVIII դ. երկրորդ կեսը-Ա. Խ.)⁶⁷⁴:

Երեք հարյուր տարի առաջ ասելով երկու հեղինակներն էլ (Մակար վարդ. հաշվարկի շուրջ քսանամյա վաղեմությամբ հանդերձ) նկատի ունեն XVI դարը: Հ. Քոսյանի վկայակոչած՝ Պերկիի հին դամբանագրերից ամենահինը թվագրված է 1651 թվականով, վերջինը՝ 1737 թ.: Նկատենք, որ ժամանակային այս սահմանափաժանները պայմանական և պատահական բնույթ ունեն, քանի որ այս հեղինակը արձանագրել է այն, ինչ հաջողվել է տեսնել: Ավելին. Պերկիի գերեզմանատան շիրմաքարերը, մինչդեռ, կարող էին շատ ավելի հին լինել, քան 1651 թվականին է, եթե նկատի առնենք այն պարզ ճշմարտությունը, որ 1651-ը ոչ թե գերեզմանատունը հիմնելու թվականն է, այլ ընդամենը հայտնաբերված շիրմաքարերի մեջ ամենահինը. կարող էին լինել նաև ավելի հները, որ մեզ մնում են անհայտ: Դարերի ընթացքում դրանք ևս, ինչպես Էգեյանի տարածաշրջանի հայկական գերեզմանատների շիրմաքարերը, օգտագործել են շինարարական նպատակներով՝ մոռացության մշուշին հանձնելով պատմական կարևոր վկայությունները:

⁶⁷¹ Վիճակագրություն, Արեւելեան մամուլ, թիւ 3, էջ 439: Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 68:

⁶⁷² Դաշինք, 1913, 20/3 ապրիլի:

⁶⁷³ Վիճակագրություն, թիւ 3, էջ 439:

⁶⁷⁴ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 68:

Վերադառնանք, սակայն, պահպանված շիրմաքարերին՝ այս անգամ Էռդեմիշի գերեզմանատնից: Դրանք թվագրված են 1740-1860-ական թթ.: Իրենց ժամանակային ողջ պայմանականությամբ հանդերձ, և Պերկիի, և Էռդեմիշի դամբանագրերը ցույց են տալիս, որ հայերի այս համայնքը Պերկիում արդեն կար XVII դ. առաջին կեսին, և այնտեղ ապրել է մինչև 1730-ական թթ., և ըստ Հ. Քոսյանի՝ 150 տարի անց տեղափոխվել Էռդեմիշ: Միաժամանակ, ուշադրություն է գրավում այն, որ և Պերկիի, և Էռդեմիշի տապանագրերը գրեթե ամբողջովին ցույց են տալիս, որ XVII դ. սկզբին այստեղ գաղթականությունը եկել է Սյունիքից: Պերկիի գերեզմանների մակագրություններում գլխավորապես հիշվում են շաշկետեցի (Շիշկերտ, Շաշկերտ), կալերցի, շվանիձորեցի և մազրեցի հանգուցյալները, որոնց շարքը լրացնում են [չ]ավնդրեցի, դափանցի, ագուլեցի մակագրությամբ շիրմաքարերը: Նկատենք, որ Ղ. Ալիշանը Զանգեզուր գավառի գյուղերի ցանկում (<<Գեոդեան Զանկիզուր գավառի>>) Շաշկերտը հիշում է նաև Շեշկերտ, Իշկերտ, Շաշիգետ տարբերակներով⁶⁷⁵: Կալերը հայտնի գյուղն է Մեղրաձորի հովտում՝ հռչակված դեռ Դավիթ Բեկի կռիվների տարեգրության մեջ՝ 1720-ական թթ.: Մագրա տեղանվան դեպքում խնդիրը փոքր-ինչ կնճռոտվում է. Ալիշանը Մագրա ձևով հիշում է մի քանի գյուղ՝ Մեզրե գետի հովտում, Հարավային Վայոց ձորում, Բարգուշատի ձորում, Բաղաբերդի մոտ՝ <<ի լանջս լեռանց Կապանի>>, Երնջակի գավառում և այլն⁶⁷⁶: Կարելի է կարծել՝ Պերկիի (և Էռդեմիշի) տապանագրերը վերաբերում են հենց Բաղաբերդին կից Մագրային, քանի որ նույն գերեզմանների այլ տապանաքարերին նշված են հիմնականում Մեղրիի և Կապանի գյուղերը, որոնց բնակիչները դեռևս XVII դ. առաջին կեսին ապրում էին Պերկիում (հիշեցնենք, որ Պերկիի գերեզմանատանը կար 1651 թ. տապանաքար) և այնուհետև XVIII դ. 20-ական թթ. անցել են Զմյուռնիա և կից շրջաններ, իսկ մի մասն էլ հայտնվել է Պերկիում և Էռդեմիշում: Հ. Քոսյանը մեջբերել է մի դամբանագիր՝ <<Թուփն ՌՃԿ (1711) անդրեցի Միրզան>>⁶⁷⁷: Եղծվել է տեղանվան ցուցիչի առաջին տառը՝ չ-ն, որի առկայությամբ կատանանք **չավնդրեցի** լրիվ ձևը: Չավնդուրը տարածքի և ոչ բնակավայրի անվանում է նույն Բաղաց գավառում, որ ըստ Ալիշանի, <<Եւ զի զգետովս

⁶⁷⁵ Ալիշան Ղ., Միսական. Տեղագրություն Սիւնեաց աշխարհի, էջ 288:

⁶⁷⁶ Նույն տեղում, էջ 71, 179, 213, 260, 351:

⁶⁷⁷ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 70:

տարածեալ է գաւառն Բաղաց, ի յետնոց եւ ցայժմ՝ բովանդակ երկիրն կամ մեծ մասն մի նորին կոչի Չաւրնդուր>>>⁶⁷⁸:

Ուշագրաւ է Հ. Քոսյանի մեջբերած դամբանագրերի մյուս խումբը՝ արդեն Էռդեմիշի գերեզմանատնից, հիմնականում նույն գյուղերի հիշատակմամբ՝ Շաշկերտ, Մազրա, Կալեր, Քուջերթ, Շվանիձոր, Մալն (Մանլն), Սրաշեն և այլն: Պերկիի հին գերեզմանատան պահպանված վերջին շիրմաքարը կրում է ՌՃՁԶ (1737) թվականը (<<կալերցի Սիմոնի որդի դափանցի Օհաննէս>>), իսկ Էռդեմիշի ամենահին շիրմաքարերը՝ 1741 թվականը⁶⁷⁹: Դրանից պետք է մակաբերել, մի հայտնի չափով դարձյալ պայմանականորեն (ընձեռված նյութի շրջանակներում), որ այունեցիները սկսել են Պերկիից Էռդեմիշ տեղափոխվել 1730-1740-ական թթ.: Այնուհետև, Պերկիի հին գերեզմանատան XVII դ. շիրմաքարերը հիշատակում են միայն հանգուցյալների անունները և գյուղը՝ մազրեցի՝ ՌՃ-1651, շաշկետեցի Պողոս՝ ՌՃԻ-1671, կալերցի Աբգար՝ ՌՃԺԵ-1666, Գրիգոր կալերցի՝ ՌՃԻԵ-1676)⁶⁸⁰:

Էռդեմիշի գերեզմանատան շիրմաքարերը, մինչդեռ, սկսած 1741 թ., հիշատակում են նաև հանգուցյալների հայրանունները և գյուղը՝ մինչև 1780-ական թթ., որպիսիք Հ. Քոսյանի մեջբերած՝ ուշ շրջանի դամբանականներն են (շաշկետեցի Պողոսի որդի Կապրիել՝ ՌՃԴ-1741, գեղջեն Քուզիրեթցի Ավանի որդի Հակոբ՝ ՌՄ-1751, դափանցի մահտեսի Եղիայի դուստր Թաման՝ ՌՄԺ-1761, մարգերեցի Ղազարի դուստր Բրապիոն՝ ՌՄԻԹ- 1780 և այլն)⁶⁸¹ :

Պերկիի և Էռդեմիշի դամբանագրերի այս տվյալները վկայում են., որ Էռդեմիշում ապրել են Պերկիի XVII դ. առաջին կեսի գաղթականության սերունդները, ինչպես և Սյունիքից արդեն XVIII դ. եկած նոր գաղթականները՝ հայրանվան հիշատակումներով: Կնշանակի, գաղթը Սյունիքից շարունակվել է XVII դ. սկզբից սկսած մինչև մոտավորապես XIX դ. առաջին քառորդը՝ արդեն ավանդական դարձած գաղթի մեկնակետով և վերջնական հանգրվանով՝ Սյունիք-Էռդեմիշ երթուղով:

Հետաքրքրություն են առաջացնում դամբանագրերում հանդիպող **պերքնեցի-բերքնեցի-երքնեցի** տեղանվանական ձևերը, որ մատնում է Պերկի ավանից (որտեղ նախապես հանգրվանել էին գաղթական սյու-

⁶⁷⁸ Ալիշան Դ., նշվ. աշխ., էջ 272:

⁶⁷⁹ Բօսեան Յ., նշվ. աշխ., էջ 69, 86:

⁶⁸⁰ Նույն տեղում, էջ 69-70:

⁶⁸¹ Նույն տեղում, էջ 86-93:

նեցիները) նրանց ծննդյամբ սերելը՝ <<[ր կամ պ]երքնեցի մահտեսի... ՌՄԺ (1761)>>, <<պերքնեցի Սաղայթելի որդի Պողոս ՌՄԺԸ (1769)>>, <<բերքնեցի Սաղայթելի կողակից Ազիզինե՝ 1225 (1776)>>⁶⁸²: Կարելի է եզրակացնել, որ այս եռյակ բերքնեցիները Պերկիի՝ շատ ավելի հին գաղթականության սերունդներից են, ովքեր իրենց տոհմիկ ծննդավայրը կապում են հենց Պերկիի և ոչ թե այլ բնակավայրի հետ, այսինքն, իրենց համարում են բնիկ պերկնեցի:

Փաստերը ցույց են տալիս, որ Պերկի ավանում, դրա բնակչության մի զգալի մասի էոդեմիշ անցնելուց հետո էլ շարունակվել է հայ համայնքի կյանքը: Ավանը (*Բերգի* ձևով) հիշվում է Ջմյունիայի տերունի թեմին ուղղված՝ կաթողիկոսական մի շարք կոնդակներում, իսկ դրանցից առաջ, նախ, Սիմեոն Երևանցու <<Ջամբո>>-ում⁶⁸³, որի կաթողիկոսության սկզբից (1763), ի դեպ, դեռ ավելի քան երկու տասնամյակ առաջ էր սկսվել հայերի անցումը Պերկիից էոդեմիշ: Կամ Սիմեոնի և կամ էլ Ղուկասի ժամանակվա մի կոնդակում (անթվակիր, կաթողիկոսի անունը չկա) ավանը հիշվում է Բիրգի ձևով⁶⁸⁴, Ղուկաս կաթողիկոսի 1782 թ. մայիսի մի կոնդակում այն հիշվում է Բերքի ձևով⁶⁸⁵: Այնուհետև, Եփրեմ կաթողիկոսի՝ 1816 թ. ապրիլի կոնդակում ամրագրված է դարձյալ Բերքի բնակավայրը⁶⁸⁶: Մակար վարդապետի՝ 1879 թ. ներկայացրած Ջմյունիայի թեմի բնակավայրերի ցանկում Պերկին չկա, ուստի պետք է կարծել, որ այդ ավանը հայերը վերջնականապես լքել են (կամ այնտեղ շատ քիչ թվով են եղել) 1810-ականի և 1870-ականի միջև ընկած ժամանակահատվածում:

Սյունեցի առավել մեծաքանակ գաղթականների կողքին XVII-XIX դդ. էոդեմիշ են եկել նաև Ագուլիսից (հանդիպում է դեռևս Պերկիի դամբանագրերում<<Սաւալանի որդի Օհաննէսին ագուլեցի>>)⁶⁸⁷, Երևանից, Կեսարիայից, Թոքատից և այլն՝ համեմատաբար աննշան քանակով, որ

⁶⁸² Նույն տեղում, էջ 87, 89:

⁶⁸³ Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, էջ 68:

⁶⁸⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 239:

⁶⁸⁵ Նույն տեղում, թղթ. 243, վավ. 59:

⁶⁸⁶ Նույն տեղում, թղթ. 243, վավ. 148:

⁶⁸⁷ Այս տապանագիրը հիշում է նաև Տ. Սավալանյանը՝ Հ. Քոսյանից փոքր-ինչ տարբեր թվագրումով՝ ոչ թե ՌՃԿԷ (1718), այլ ՌՃԿԵ (1716) Սաւալան Տ.Հ.Թ., Կենսագրական յուշեր, էջ 10:

բացառում է բազմամարդ խմբերի գաղթը, ինչը տեսնում ենք Սյունիքի գյուղերից եկած գաղթականների դեպքում:

Ի լրումն վերոհիշյալի, ավելացնենք, որ 1817 թ. Զմյուռնիայի առաջնորդ Փիլիպոսը գրանցել է Էդդեմիշի նվիրատուների անուններ իրենց հայրենի գյուղի նշումով՝ շաշկետեցի Սիմոն, մանվեցի Մարտիրոս և այլն, որ ցույց է տալից նրանց՝ նոր գաղթական լինելու հանգամանքը⁶⁸⁸: Էդդեմիշի այս, ինչպես և վերջին դամբանագրերում շրջանառող թվականները վկայում են, որ հայերի անցումը Սյունիքից դեպի փոքրասիական այդ քաղաք՝ շարունակվել է առնվազն մինչև XIX դ. առաջին քառորդ, եթե ոչ մեծ խմբերով, ապա անհատական չափերով:

Էդդեմիշի հայերի նախնական գաղթավայրի՝ Պերկիի եկեղեցու մասին որևէ հին վկայություն չի պահպանվել, ուստի հետազոտողները լռելյայն անցնում են այս հարցի կողքով և անդրադառնում են միայն Էդդեմիշի եկեղեցուն⁶⁸⁹: Մինչդեռ հայերը Պերկիում ապրել են, ինչպես տեսանք, ավելի քան 130 տարի, փաստ, որ բացառում է, որ նրանց իրենց եկեղեցին չունենալը: Այս տեսակետից հետաքրքիր է, որ Հ. Քոսյանը, արդեն Էդդեմիշի Ս. Հռիփսիմե եկեղեցու սպասքների մեջ հիշում է նաև մի ծածկոցի հետևյալ մակագրությունը. <<Յիշատակ է ծածկոցս կեսարացի ոսկերիչ Աբրահամին եւ իւր կողակից Շահգէտէին ի դուռն Էօտեմիշու սուրբ Աստուածածնայ ՌՄԺԲ (1763) նոյեմբեր Ա(1)ին>>⁶⁹⁰:

Ուրեմն, 1763 թ. Էդդեմիշում գործում էր (բնականաբար, նաև դրանից առաջ) ծածկոցի ամրագրած՝ Ս. Աստվածածին անվամբ եկեղեցին, բայց կա նաև հաջորդ՝ 1764 թ. մեկ այլ ընծայական՝ արդեն Ս. Հռիփսիմե եկեղեցու հիշատակումով. <<Յիշատակ է սաղաւարդս Էօտեմիշու եկեղեցին ի դուռն սուրբ Հռիփսիմայի ...թվ. ՌՄԺԳ>>⁶⁹¹: Մնում է, ուրեմն, ենթադրել, որ եղել է մի հին եկեղեցի, Ս. Հռիփսիմեի անվամբ, որի գոյության մասին, որպես մատուռի, վկայում է Տ. Սավալանը:

Պերկիից Էդդեմիշ անցնելուց մի քանի տասնամյակ անց, 1805 թ., հայերն ի հիմանց կառուցել են Ս. Հռիփսիմե քարաշեն եկեղեցին⁶⁹²,

⁶⁸⁸ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 41:

⁶⁸⁹ Տ. Սավալանը թուրքիկ նշում է, որ Պերկի գյուղականում հայերն ունեցել են միայն մատուռ, որը դարավերջին (նկատի ունի XVIII դարը) խանի իր վերածվել (Մաւալան Տ., նշվ. աշխ., էջ 101):

⁶⁹⁰ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 76, 71:

⁶⁹¹ Նույն տեղում:

⁶⁹² Նույն տեղում, էջ 70-71:

նույնանուն եկեղեցու փոխարեն, որ գոյություն ուներ, ինչպես տեսանք, առնվազն 1764 թ.: Համենայն դեպս, եկեղեցու երկրորդ դռան ճակատին հետագայում դրոշմվել է Զմյուռնիայի առաջնորդ Մարտիրոսի (կամ իր յուրայիններից մեկի) ընդարձակ գրավոր-բացատրությունը, որտեղ, ընդամին, փառաբանվում է նրա մեծարած Դավիթ կաթողիկոսը⁶⁹³:

Ս. Հռիփսիմե եկեղեցին ուներ եկամտաբեր կալվածքներ: 1879 թ. դրությամբ, ըստ Մակար վարդ. տվյալների, նրա եկամուտը կազմում էր 22.300 դուրուշ, ընդ որում, Զմյուռնիայի վիճակում իր մեծությամբ երկրորդը՝ Վարի Մանիսայի Ս. Միոն եկեղեցու եկամտի (30. 000 դուրուշ) համեմատությամբ⁶⁹⁴:

Էռդեմիշում իր արտադրական ծավալներով առանձնանում էր մետաքսագործությունը՝ Սյունիքից գաղթած հայերի ավանդական և հիմնարար արհեստը, որով մասամբ զբաղվում էին նաև Արևելյան և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից Էգեյանի ափեր հասած գաղթականները: Էռդեմիշում նրանք գործում էին առհասարակ զգեստներ և հատկապես մետաքսե թաշկինակներ՝ յուրահատուկ և շուկայում գնահատվող որակներով, որոնց տնայնագործական արտադրանքի մեջ էին ընդգրկված կանայք⁶⁹⁵:

Էռդեմիշի հայության մյուս զբաղմունքը երկրագործությունն էր, մշակում էին ցորեն, գարի, բամբակ, կանեփ, բանջարանոցային և մրգատու կուլտուրաներ: Համայնքն ուներ նաև վաճառականներ, որոնց հիմնական մասը զբաղվում էր տնայնագործական արդյունքները տեղական, ներքին շուկայում իրացնելու գործով:

Վերապահությամբ պետք է մոտենալ Հ. Քոսյանի այն տեղեկությանը, որ Էռդեմիշի համայնքում վաճառականությունը նշանակալի տեղ չի ունեցել (<<վաճառականությունը այնչափ յառաջ չէ գացած իրենց մեջ>>)⁶⁹⁶: Մինչդեռ, այս գաղթօջախում գործել են վիլայեթի և Օսմանյան Թուրքիայի սահմաններից այն կողմ շրջանառող վաճառականներ: Ինչպես վկայում է Ս. Սավալանյանը, Սավալան տոհմից վաճառական Հովհաննեսը (ագուլեցի) Պերկի է գաղթել XVIII դ. առաջին քառորդին և վախճանվել <<թուխ ՌՃԿԵ>> (1716): Իր՝ Ս. Սավալանյանի հայրն ու հորեղբայրները Պերկի են եկել ավելի ուշ՝ 1770 թ., հետևելով այնտեղ հաս-

⁶⁹³ Նույն տեղում, էջ 72:

⁶⁹⁴ Վիճակագրություն, թիւ 3, էջ 440:

⁶⁹⁵ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 79:

⁶⁹⁶ Նույն տեղում:

տատված տոհմի երթուղուն⁶⁹⁷: Մավական տոհմի վաճառականները առևտրական կապեր են ունեցել ռուսական շուկաների, հատկապես Աստրախանի հետ, որ անշուշտ, առնչվում է հայ վաճառականներին ռուսական տարածքներ ներգրավելու՝ դեռևս Պետրոս Մեծի իրականացրած արևելյան քաղաքականությանը: Էդդեմիշում նրանք ձեռք են գարկել նաև գյուղատնտեսական արդյունքների արտադրությանը⁶⁹⁸:

Էդդեմիշի գերեզմանոցի աղբյուրի արձանագրության մեջ (1815) <<պարօն>> հորջորջումը ևս կասկած չի թողնում հասցեատիրոջ սոցիալական վիճակի մասին, այն, որ նա եղել է վաճառական (<<Յիշատակ է պարօն Կարապետին, Սիմօնին եւ Յարութինին>>)⁶⁹⁹: 1817 թ. հուլիսին առաջնորդ Փիլիպոսը Էդդեմիշ կատարած իր նվիրական այցի մասին գրառումներում հիշատակում է նաև առևտրական նվիրատուների՝ Սելումյան մահտեսի Սարգսին, Սյունիքի գյուղերից գաղթած անձանց և այլոց⁷⁰⁰: Արհեստները ևս տարածված էին Էդդեմիշում, ինչը տեսանք ամենից առաջ մետաքսագործության՝ այստեղ ամենատարածված արհեստին անդրադառնալիս: Վերոհիշյալ վավերագրում ամրագրվել են բազմաթիվ արհեստավորներ՝ ոսկերիչ, դարբին, մետաքսագործ, պայտառ, կոշկակար, հացագործ և այլն: Հետաքրքիր է, որ Էդդեմիշի հայ համայնքում ապրում էին հայ բոշաներ, որոնք, հավանաբար, գաղթել էին հայերի հետ միասին՝ Սյունիքից: Նվիրատուների ցանկում Փիլիպոսը գրանցել է <<պօշայ Խաչատուրին>>: Բոշաները, ի դեպ, դատելով Փիլիպոսի գրառումներից, առավել մեծաքանակ խմբով ապրում էին Այդընի հայ համայնքում՝ և այստեղ, և Էդդեմիշում զբաղվելով իրենց տոհմական արհեստով՝ մագաղաթագործությամբ⁷⁰¹:

⁶⁹⁷ Մաւական Տ., նշվ. աշխ., էջ 10, 8:

⁶⁹⁸ Նույն տեղում, էջ 12: Իր նշանավոր մի նախնու՝ Թումային մեծարելով, Տ. Մավականը 1860-ական թթ. Զմյոռնիայի <<Ծաղիկ>> և <<Արշալույս Արարատեան>> պարբերականներում տպագրած իր հոդվածները ստորագրում էր Տ.Հ.Թ.Ս. սկզբնատառերով՝ Տիգրան Հայրապետ Թումայեան Մաւականեան:

⁶⁹⁹ Քօսեան Ա., նշվ. աշխ., էջ 84:

⁷⁰⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 41:

⁷⁰¹ Նույն տեղում, էջ 41-45:

Էռդեմիշի հայերը, դատելով այն լեզվական նմուշներից, որ մեջբերել են Ս. Սալալանը և Հ. Քոսյանը⁷⁰², խոսել են Գորիսի կամ դրան մոտ բարբառով՝ սրա ենթախոսվածքներով հանդերձ: Համայնքի վարժարաններից առաջինը հիշվում է արական վարժարանը՝ հիմնված 1832 թ., որ կառուցել էր Օհան Ջուլֆայանը՝ կալվածատեր և Էռդեմիշի քաղաքապետի օգնականը: Այնուհետև հիմնվել է աղջիկների վարժարանը՝ 1870 թ.⁷⁰³: Պետք է կարծել, որ մինչ այդ, Էռդեմիշցի մանուկները կրթվել են ուսյալ հոգևորականների՝ եկեղեցուն կից դպրոցներում, ինչպես առհասարակ Ջմյունիայի և շրջակայքի ամբողջ հայությունը՝ մինչև 1790-ական թթ. սկզբները, երբ հայ միլեթին հնարավորություն տրվեց (սկսած Կ. Պոլսի հայ համայնքից) հիմնելու պետության կողմից ճանաչված վարժարաններ:

ՔՐՔՄԱՐԱՐ: Բնակավայր Ջմյունիայից հյուսիս-արևելք, 146 կմ հեռավորությամբ: Մանիսայից և Էռդեմիշից հետո Քրքաղաչը Ջմյունիայի թեմում երրորդն է հայ համայնքի թվաքանակով, ըստ Մակար վարդապետի՝ 156 տուն, բնակիչների թիվը՝ 811, իսկ Հ. Դիմաքսյանի տվյալներով (1878 թ.)՝ 140 տուն, բնակիչները՝ 450 մարդ⁷⁰⁴: Մոտավորապես այդքան էլ հաշվում էր Հ. Քոսյանը՝ 160-170 տուն՝ 800-անոց բնակչությամբ⁷⁰⁵: Ավելացնենք, որ ըստ Դիմաքսյանի, քաղաքի բնակչության ընդ-

⁷⁰² Սալալան Ս., նշվ. աշխ., էջ 101-103: Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 80: Ս. Սալալանը նկատում է, որ Էռդեմիշի հայերը ունեին իրենց գավառական բարբառը, <<գոր աճմու լեզու կանվանեն: Կերեի, -հարում է նա, -թե իրենց գաղթականությանը պարսկահայոց սահմաններին է, այն է՝ Խոյ, Սալմաստ, ինչպես եւ Իզմիրու գերեզմանատան մէջ գտնուած հին տապանագրերու մէջ կը կարդանք սոյն եւ ուրիշ Միւսեաց երկրի ու պարսկական քաղաքաց անունները>> (Սալալան Ս., նշվ. աշխ., էջ 101): Բայց Էռդեմիշի հայերը, ինչպես տեսանք, գաղթել էին Սյունիքից՝ ներկայիս Գորիսի, Մեղրու և Կապանի գյուղերից և որոնց լեզուն կապ չունի Խոյի և Սալմաստի բարբառների հետ. ակներևաբար, <<աճմու լեզու>> արտահայտությունն է զուտ տրամաբանորեն մղել Սալալանին՝ բարբառը բնութագրելու պարսկահայության գործոնով: Հ. Քոսյանն իր հերթին կարծում է, որ Էռդեմիշցիք խոսել են Ղարաբաղի բարբառով:

⁷⁰³ Սալալան Ս., նշվ. աշխ., էջ 99: Յառաջ, 1972, 25 հոկտեմբերի: Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 149:

⁷⁰⁴ Վիճակագրություն, թիւ 3, էջ 440: Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 123:

⁷⁰⁵ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 144: 1860-1870-ական թթ. Քրքաղաչն ուներ 20.000 բնակիչ, որից 3 հազարը՝ հույներ (տես Turkey in Asia, p. 305): Մ. Պոտուրյանը կրկնում է այս տվյալները, սակայն 1900 թ. կտրվածքով (Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, էջ 506): Ղ. Ալիշանը փոքր-ինչ նվազ է ցույց տալիս հայ հա-

հանուր թիվը կազմում էր 14.530 մարդ, որից մահմեդականները՝ 12.480, իսկ հույները՝ 1600 մարդ⁷⁰⁶: Հ. Դիմաքսյանը Քրքաղաչի հայ համայնքի հաստատման կամ գաղթի ժամանակն է համարում կամ 1600-ական թվականները, կամ էլ վերջին Թահմազ Ղուլիի (1730-ական թթ.) ժամանակները՝ չնշելով իր աղբյուրը, հավանաբար բանավոր ավանդություններից ելնելով: Հ. Քոսյանը գաղթի ժամանակը միանշանակ համարում է XVIII դ. առաջին կեսը՝ դարձյալ չհղելով որևէ աղբյուրի կամ վկայության⁷⁰⁷: Չի բացառվում հայերի շատ ավելի վաղ ներկայությունը այս քաղաքում, սակայն կարող ենք ասել, որ XVII դ. առաջին տասնամյակներին և հաջորդ դարի առաջին կեսին Քրքաղաչի հայ ազգաբնակչությունը կարող էր համալրվել նշված ժամանակների՝ Հայաստանից ծայր առած համընդհանուր գաղթերի արդյունքում: Այն, որ Քրքաղաչի գաղթօջախը հիմնվել կամ համալրվել է XVII դ. առաջին տասնամյակներին, առավել հավանական է դառնում նրանով, որ, ինչպես ցույց է տալիս Էգեյանի հայ գաղթօջախներից յուրաքանչյուրի պատմությունը, XVIII դ. այս տարածքներում հայկական նոր գաղթօջախ չի հիմնվել. գաղթերն ընդամենը համալրել են արդեն տեղերում առկա հայ բնակչության թվաքանակը և ոչ ավելին: Կարծում ենք, որ ամբողջ XVIII դ. գաղթերը նախորդ դարի (որոշ տեղերում՝ ավելի վաղ ժամանակների) գաղթերի շարունակությունն էին ոչ միայն իբրև գործողություն, այլև վերջնական հանգրվանի իմաստով: Նոր գաղթականությունն այստեղ ասի է առել իրեն վաղաձանոթ բնակավայրում կամ քաղաքում, ծայրահեղ դեպքում՝ այս վերջիններից ոչ հեռու գտնվող գյուղերում: Ազգակիցների մեջ կամ նրանց հետ ապրելու ձգտումն ու իրողությունը նոր գաղթականության համար դարձել էր կենսապահովման բնագոյական պահանջ, որ հենվում էր նախնական իրազեկության վրա: Ըստ մեծի մասին, Հայաստանի այլևայլ հատվածներից Էգեյանի առափնյակ շարժվող հայ խմբերը կամ բազմությունները, եթե չհաշվենք բազմաթիվ պատահականությունները, գիտեին, թե դեպի ուր են գնում և, թերևս՝ փոքր-ինչ ավելի աղոտ, թե ինչ է սպասում իրենց (միջավայրի սոցիալ-կլիմայական պայմաններ, նոր տեղում հարմարվելու հնարավորություններ, դավանանքի և իշխանությունների հետ կապված խնդիրներ և այլն): Եվ

մայնքի թվաքանակը՝ 700 մարդ (Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրություն, էջ 547):

⁷⁰⁶ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 123:

⁷⁰⁷ Նույն տեղում, էջ 129: Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 144:

եթե խնդրին նայենք այս տեսակետից, ապա Քրքաղաչի հայ համայնքի պարագայում ևս կարող ենք ասել, որ այն գոյացել է կամ XVII դարում և կամ դրանից էլ վաղ մի ժամանակաշրջանում, իսկ XVIII դ. առաջին կեսին այդ համայնքն ընդունել է նոր գաղթականների:

XVII դ. Քրքաղաչի որևէ հնություն չի արձանագրվել: Չկան ավանդական վկայարանները՝ հին եկեղեցու և գերեզմանաքարերի հետքերը և այդ կարելի է բացատրել եկեղեցին <<ի հիմանց նորոգելու>>, հին եկեղեցու քարերը նորի կառուցման մեջ օգտագործելու այն համատարած իրողությամբ, որ հատուկ է միջնադարում Էգեյանի (և ոչ միայն) բոլոր հայկական գաղթավայրերին: Գերեզմանատները լքվում էին կամ համայնքը նոր թաղ տեղափոխվելու և կամ էլ շինարարական ու վարչական պայմանների թելադրանքով և նույն կերպ հին գերեզմանաքարերը հիմնականում օգտագործվում էին նոր եկեղեցու շինության կամ տնաշինական նպատակներով:

Քրքաղաչի եկեղեցու վերաբերյալ Հ. Դիմաքսյանը գրում է, որ հայերն այստեղ նախ <<սեղան են կանգնել>> (մատուռ են կառուցել), իսկ 1796 թ. կառուցել եկեղեցին՝ Ս. Աստվածածինը, որ վերաշինվել է 1871 թ.՝ դրան նախորդող հին եկեղեցուց հետո⁷⁰⁸: Հ. Քոսյանը նշում է, որ Քրքաղաչի հայերը գաղթել են Թավրիզից, Խոյից, Կապանից, Ղարաբաղից և Երևանից, Հ. Դիմաքսյանը՝ Ղարաբաղից, Երևանից և կամ Կարինից, իսկ Ս. Պոտուրյանը կրկնում է Հ. Քոսյանին⁷⁰⁹: Վերապահությամբ պետք է մոտենալ, սակայն, Հ. Դիմաքսյանի կարծիքին, ըստ որի, Քրքաղաչի <<կանաչք եւ մանկտիք հայերէն կը խօսին զմիտնացւոց եղանակաւ եւ նմանութեամբ>>, իսկ տղամարդիկ ընդհանրապես խոսում էին թուրքերեն, թէն ոմանք հայերեն գիտէին⁷¹⁰: Բայց այսպիսի տարօրինակ բազմաբարբառայնություն չի կարող լինել, որպեսզի լեզվի գործածության հիմքում ընկած լինի սեռատարիքային գործոնը: Մյուս կողմից, Հ. Դիմաքսյանի նշած գաղթի մեկնակետերում (Ղարաբաղ, Երևան կամ Կարին) հայությունը խոսում էր հայերեն: Եվ բացի այդ, XVIII դ. առաջին կեսին գաղթած հայախոս հայերը չէին կարող հանկարծակի թուրքախոս դառնալ: Հ. Դիմաքսյանի կարծիքը, կարելի է ենթադրել, հենվում է թոռցիկ կամ մասնակի բնույթի տեղեկատվության վրա: Համոզիչ չի թվում նաև

⁷⁰⁸ Քոսեան Զ., նշվ. աշխ., էջ 146:

⁷⁰⁹ Նույն տեղում, էջ 152-153: Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 129: Պոտուրեան Ս., նշվ. աշխ., էջ 506:

⁷¹⁰ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 127:

Հ. Քոսյանի կարծիքը, թե ծերերը Քրքաղաչում տաճկախոս են, իսկ նոր սերունդը՝ հայախոս⁷¹¹: Ըստ էության, սա Հ. Դիմաքսյանի վերոնշյալ մտքի մեկ այլ տարբերակն է: Հ. Աճառյանը, մինչդեռ, Ջմյուռնիայի բարբառով խոսող փոքրասիական բնակավայրերի մեջ մտցնում է նաև Քրքաղաչը, որում զգալի էր դարաբաղյան խոսվածքների շերտը⁷¹²:

Քրքաղաչի համայնքի բնակչությունը ևս շարունակում էր ապրել նույն կենցաղավարությամբ, ինչ հայրենիքում՝ զբաղվելով արհեստներով ու հողագործությամբ: Կային կոշկակարներ, դերձակներ, սափրիչներ, ոսկերիչներ, երկաթագործներ և այլն: Կարելի է կարծել, որ տեղացիների մեծ մասը զբաղվում էր արհեստներով, ինչը հուշում է առաջնորդ Փիլիպոսի՝ 1818 թ. մարտին կազմած նվիրատուների ցանկը⁷¹³: Այս դեպքում պետք է ենթադրել, որ իրենց պատրաստած արտադրանքը նրանք վաճառում էին Ջմյուռնիայի անհամեմատ ավելի հոծ առևտրական հրապարակում: Գյուղատնտեսական արդյունքներից էին հացահատիկը, քնջութը, բամբակը, ձիթապտուղը. վերջինիս ավանդական հիմքի վրա XIX դ. վերջին գործում էր զմյուռնացի Գ. Դավիթյանի շոգեշարժ սարքավորումներով հագեցած ձիթհան գործարանը⁷¹⁴: Ի դեպ, դատելով Քրքաղաչի գերեզմանատան դամբանագրերից, զմյուռնացի հայերը բավական սերտ կապեր ունեին տեղացի ազգակիցների հետ: Այգեգործական արտադրանքի մեջ կայուն տեղ ունեին Քրքաղաչի հոչակված անկուտ խաղողը և սեխը, կեռասը, ընկույզը և այլն: Հողագործները մեծ մասամբ ոչ ունևոր խավերից էին, որոնց մշակած ոչ մեծ հողակտորները եկամտաբեր չէին: Առհասարակ հայտնի է, որ Այդընի լիվայում հողը թանկ էր, հարկերը՝ բազմազան, որ և տնտեսական դժվարություններ էր հարուցում հողագործների առջև. <<Ընդարձակ հողեր չունենալնուն պատճառաւ ծանրաքիրտն աշխատութեամբ հազիւ կը յաջողին իրենց օրապահիկնին ճարել>>, -գրում է իրագեկ հեղինակը⁷¹⁵:

⁷¹¹ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 149:

⁷¹² Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, էջ 239:

⁷¹³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 62-66:

⁷¹⁴ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 150:

⁷¹⁵ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 126:

Քրքաղաչի տնտեսության մեջ բավական գործուն դեր ունեին առևտրականները, որոնց մեջ կային նաև երևանցիներ⁷¹⁶: Առևտրականների ձեռքով Ձմյունիա, Բերգամա, Գնըք և փոքրասիական այլ քաղաքներ էին արտահանվում տեղական գյուղատնտեսական արդյունքները՝ ներմուծելով, հիմնականում՝ Ձմյունիայից, շալ, բրդեղեն, սուրճ, շաքար, օճառ և այլն: XIX դ. սկզբներին Քրքաղաչում հայտնի էր վաճառական Կ. Եղիվարդյանը, որի հաշվեմատյանը (1816-1820-ական թթ.) պահվում է Երևանի Մատենադարանում: Վաճառականի ամերիկաբնակ հետևորդներից մեկը գրում է, որ 1745-ի կողմերը գաղթելով Եղվարդից, իր նախնիները <<Իզմիրի գետեզերքի հողերու վրայ գլխի յազմա (գլխաշոր-Ա.Խ.) տպելու և ներկելու գործարան մը հիմնած էին, որ մինչև 1810 թուականին շարունակուեցաւ>>⁷¹⁷: Խոսքը, կարծում ենք, վերաբերում է ոչ թե Ձմյունիային, այլ հենց Քրքաղաչին կամ դրան մոտ շրջաններից մեկին: Բուն Ձմյունիայում 1790-ականին միայն սկսեց գործել չթագործների (պասամաճիների) արհեստանոցը, որի տերերի մեջ Եղիվարդյաններ չեն եղել: Քրքաղաչի անվանի հայ վաճառականների մեջ XIX դ. 70-ական թթ. Հ. Դիմաքսյանը հիշում է մեկ այլ Կ. Եղիվարդյանի, ինչպես և Ճիզմեճյաններին, Գարախաչատուրյաններին, Դավիթյան եղբայրներին, Հ. Քյուրուկճյանին և այլոց⁷¹⁸, ովքեր ներգրավված էին Ձմյունիայի և տարածաշրջանի մյուս քաղաքների ու բնակավայրերի առևտրաշրջանառության ոլորտում:

ԳՆԸՔ (ՂՆԸԽ): Գտնվում է Բերգամայի մերձակայքում: Ղ. Ալիշանը հիշատակում է Քըլըք կամ Կընըխ ձևերով⁷¹⁹: Հ. Դիմաքսյանը գաղթավայրի հնությունը հաշվում է 180-200 տարի⁷²⁰, այսինքն՝ XVII դ. երկրորդ կեսից: Սակայն կա մեզ հասած՝ ավելի վաղ շրջանի հիշատակարան <<ի ձեռամբն ապականեալ>> Ստեփանոս երեցի, ով հայտնում է. <<Զվերջին նորոգումն Սբ. Աւետարանիս ի խնամոցն Աստուծոյ եղև երկրիս Ղնխոյ ի վիճակիս Սբ. Աթոռոյս Միսայ կաթողիկոս տեառն տէր Միմեռնի ի թուականութիւն Հայոցս ՌՁԶ (1637) ի դառն և նեղ ժամանակի այլազգաց տաճկաց, զոր և մեզ հանդիպեալ սուրն վաղակաւոր պատենիցն մերկացեալ, նայն զմեզ արմատախիլ արար ի բնական գաւառէ

⁷¹⁶ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 66:

⁷¹⁷ ՄՄ, ձեռ. 1027/2:

⁷¹⁸ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 125:

⁷¹⁹ Ալիշանեան Ա., նշվ. աշխ., էջ 547:

⁷²⁰ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 139:

մերմէ... Քանզի էաք մեք յերկրէն Արարատեան ի Հայոց մեծաց, ի հաւ[ա]յտէն Սբ. Գրիգորի և ի թեմէն լուսակառուց Սբ. Էջմիածնայ ի գեաւղէն Թալին կոչեցեալ»⁷²¹:

Շատ ուշագրաւ է, որ հայրենի երկրից պոկված բեկորները որպիսիք էին Ստեփանոս երեցը և նրա ուղեկից համերկրացիները, Էգեյանի ափերին՝ Գնըքում են հայտնվել ոչ թե բռնագաղթի կամ գերեվարության, այլ կամավոր գաղթի հետևանքով. <<ի պէսպէս վշտաց պատահեալ, բայց ողորմութիւնն Աստուծոյ պահեալ մինչև ցայժմ ի գերութենէ, քանզի մեզ սիրով բերին այսչափ ճանապարհս...>>, հարում է երեցը:

Կնշանակի, Արարատյան դաշտից և մասնավորապէս Թալինից գաղթականներին արդեն ծանոթ էին Էգեյանի հեռավոր բնակավայրերը: Թալինցիները XVII դ. առաջին կեսին բավական առնչություններ ունեին Զմյուռնիայի և մերձակայքի հետ. Թալինից էր նաև Զմյուռնիայի առաջնորդ Կիրակոսը՝ 1650 թ. սկզբներին, իսկ եթէ նկատի ունենանք վերոհիշյալ Ստեփանոս երեցին՝ այստեղ կային նաև թալինցի գաղթականներ: Եվ դարձյալ, նույն երեցի վերոհիշյալ հիշատակարանը, որտեղ Գնըքը համարվում է Սիսի աթոռի վիճակ, ցույց է տալիս, որ XVII դ. առաջին կեսին Էգեյանի այս շրջանում ընթանում էր շարունակական բանավեճ Էջմիածնի և Կիլիկիայի աթոռների միջև՝ թեմերի նկատմամբ իրենց իրավունքները ցուցադրելու կամ դրանց տիրանալու համար:

XVIII դ. առաջին կեսից ևս Էգեյանի ափերին հասած սյունեցիները համալրել են նաև Գնըքի հայ համայնքը: Հ. Դիմաքսյանը մեջբերել է նրանց ներկայությունն այստեղ վկայող մի տապանագիր.

Սա է յերկրէն արեւեցի

Ի նահանգէն Սիւնեաց մեծի

Եւ ի գեղջէն Աղաբեճեցի

Եկեալ սա աստ վերափոխի

ՌՄԹ թուին (1760) յունուար 13 ին⁷²²:

Նույն հեղինակը մեջբերել է նաև ՌՄԺ (1761) թ. մեկ այլ տապանագիր⁷²³, որ աներկբա է դարձնում Սյունիքից հայերի գաղթը Գնըք և առհասարակ, Էգեյանի մերձափնյա շրջաններ: Այսուհանդերձ, Գնըքում, կարելի է կարծել, հայ բնակչություն գոյություն է ունեցել շատ ավելի վաղ: Մակար վարդ. գրում է, որ <<Գնըքի հայերն մայրենի լեզուն բոլո-

⁷²¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի, մասն Բ, էջ 704:

⁷²² Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 144:

⁷²³ Նույն տեղում:

րովին մոռցած են և տաճկերէն կը խօսին>>⁷²⁴։ Խնդիրն այն է, որ Արևել-
յան Հայաստանից, ինչպես և բուն Պարսկաստանից եկած հայերը տաճ-
կախոս չէին, այդպիսիք կարող էին լինել սելջուկների, ապա օսմանյան
թուրքերի տիրապետության տակ գտնված հայերը։ Մինչդեռ հետագո-
տողները միաբերան նշում են, որ հայերը Գնըք են եկել Արևելյան Հա-
յաստանից՝ XVII-XVIII դդ. ընթացքում։ Մնում է միայն ենթադրել, որ
տաճկախոս հայերը, որոնց հանդիպել է Մակար վարդ., կամ Գնըք
եկած՝ Օսմանյան Թուրքիայի հայ գաղթականներից էին և կամ էլ՝ Գնը-
քի տաճկախոս դարձած՝ հին հայկական համայնքի բեկորները, ովքեր
այդտեղ են ապրել նախքան Սյունիքից, Ղարաբաղից և Արևելյան Հա-
յաստանի այլ շրջաններից սկսված գաղթը՝ XVII դ.։

Գնըքի հայ բնակչության թվաքանակի մասին տվյալները գրեթե
նույնն են Հ. Դիմաքսյանի և Մակար վարդ. հրապարակումներում
(1870-ական թթ. կտրվածքով). առաջինը նշում է 117 տուն՝ 252 անձով
(ընդհանուր ազգաբնակչությունը՝ թուրքեր, հույներ և այլն, 1167 տուն,
3004 մարդ), իսկ Մակար վարդ.՝ 105 տուն, 466 անձ⁷²⁵։ Ըստ Դ. Ալիշանի,
Գնըքի հայերի թիվը կազմում է 420 մարդ⁷²⁶, և եթե նկատի առնենք, որ
նա այս տվյալը հրապարակել է Հ. Դիմաքսյանից և Մակար վարդ. ավել-
լի քան երկու տասնամյակ առաջ, կարելի է ասել, որ XIX դ. երկրորդ կե-
սին շարունակվում էր Գնըքի հայ ազգաբնակչության նվազումը. պատ-
ճառների մեջ պետք է նկատի ունենալ տնտեսական դժվարին պայ-
մանները, որոնք դեպի մեծ քաղաքներ, և առաջին հերթին Զմյուռնիա
էին մղում առհասարակ Էգեյանի տարածաշրջանի ոչ մեծ, գյուղատն-
տեսական բնակավայրերի լայն խավերին, այդ թվում և փոքրաթիվ
առևտրականությամբ։

Գնըքի հայ բնակչությունը հիմնականում զբաղվում էր արհեստնե-
րով ու հողագործությամբ։ Տեղական բնակչությանը սպասարկում էին
տարբեր արհեստավորներ՝ դերձակներ, կոշկակարներ, ոսկերիչներ,
երկաթագործներ, սափրիչներ և այլն։ Առևտրական ոչ մեծաթիվ խավը
Զմյուռնիայի և Պալքեսների շուկաներ էր արտահանում երկրագործա-
կան արդյունքներ՝ բամբակ, ափիոն, բուրդ, ցորեն, պտուղներ և ներմու-
ծում կենցաղային սպառման առարկաներ՝ կոշիկ, թեյ, սուրճ և այլն։
1818 թ. նոյեմբերին Գնըք այցելած առաջնորդ Փիլիպոսը տեղի հայ

⁷²⁴ Վիճակագրություն, թիւ 1, էջ 379։

⁷²⁵ Նույն տեղում, էջ 135։ Վիճակագրություն, թիւ 3, էջ 440։

⁷²⁶ Ալիշանեան Դ., նշվ. աշխ., էջ 547։

բնակչության մեջ առանձնացնում էր մանր առևտրականներին և արհեստավորներին⁷²⁷, որոնք կազմում էին բնակչության համեմատաբար բարվոք վիճակում գտնվող խավերը:

ԲԵՐԳԱՄԱ (Պերգամոն): Գտնվում է Գնըքից արևմուտք: Նշանավոր է իր պատմական անցյալով, անտիկ դարաշրջանում եղել է Բերգամայի թագավորության մայրաքաղաքը:

Բերգաման մեզ հայտնի հնագույն հայ գաղթավայրն է փոքրասիական թերակղզու արևմուտքում, որտեղ, ինչպես տեսանք, հայ հանրություն է հայտնվել դեռևս VI դարում, Վարդան Մամիկոնյանի 571-576 թթ. հայտնի ապստամբությունից հետո: Այնուհետև, տեղի գաղթօջախը համալրվել էր արաբական արշավանքների հետևանքով Բյուզանդական կայսրություն անցած հայերի տեղաշարժերի արդյունքում⁷²⁸:

Խնդրին քաջաձանթ Շ. Բարթիկյանը գրում է, որ բյուզանդական Պերգամոն քաղաքում հայկական համայնքն առաջացել էր հավանաբար VII դ., քանի որ այն կար VIII դ. սկզբին: Նա առավել որոշակիություն է մտցնում հիմնահարցի մեջ՝ նկատելով, որ Բյուզանդական կայսրության փոքրասիական թերակղզու ափերին <<տարբեր ժամանակներում կազմավորվել էին հայկական համայնքներ, որոնցից ամենահինը, հավանաբար, Պերգամոնի համայնքն էր>>⁷²⁹:

Հայտնի չէ Բերգամայի հայերի հետագա ճակատագիրը, այս առումով վավերագրեր կամ այլ վկայություններ չկան և կարելի է կարծել, որ այդ համայնքին դժվարին ժամանակներ էին սպասում և Բյուզանդական կայսրության հետագա գոյության, և սելջուկների ու մոնղոլների տիրապետության ու ռազմական բախումների ժամանակաշրջաններում: XIV դ. Բերգաման մտնում էր Կարասիի բեյության մեջ և Օսման Ա-ի հաջորդը՝ Օրհանը (1326-1359), ի թիվս փոքրասիական արևմուտքի քաղաքների և այլ բնակավայրերի, գրավել էր նաև այդ քաղաքը՝ կործանելով քրիստոնեական տաճարները (1345)⁷³⁰: Երեմիա Քյոմուրճյանն այս առթիվ գրում է.

ԶՊալիքէսը և զՊերդամա
Եփեսոսի զԻզմիր առեալ,
Ուր աննման և մեծածախ

⁷²⁷ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 67-69:

⁷²⁸ Գեղեցր Շ., Հայ հասարակությունն ի Պերգամոն, թիւ 8, էջ 226-227:

⁷²⁹ Բարթիկյան Շ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, հ. 3, էջ 73:

⁷³⁰ Տեւ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, ց. 2, գ. N 108:

Եկեղեցիքն են կործանեալ⁷³¹:

XVII դ. առաջին տասնամյակներին, ինչպես Զմյուռնիայի ամբողջ մերձակայքում, Բերգամայում ևս իրեն զգացնել տվեց հայերի գաղթականական նոր հոսքը: Հ. Դիմաքսյանը գրում է, որ այդ բնակավայրի համայնքն ունի 230-250 տարվա պատմություն⁷³², այսինքն, այդ պատմության սկիզբը պետք է հասկանալ 1610-1640-ական թվականները:

Կասկածից վեր է, որ Բերգամայում ափ առած մարդիկ սերում էին Արևելյան Հայաստանից՝ կազմելով Սյունիքից, Ղարաբաղից, Արարատյան դաշտից ու հատկապես Նախիջևանից ծայր առած գաղթականների մի մասը: Հ. Դիմաքսյանի վերաբերմամբ մի տապանագրում հիշվում են գաղեցիները (ակաղեցի, կեղցի ձևերով ևս, որոնք կարող էին և բնագրի, և արտագրողի թույլ տված սխալը լինել)⁷³³: Հիրավի, այս գաղթի մեկնակետի (Նախիջևան) և ժամանակի (1620-ական թթ.) տեսակետից ուշագրավ է նույն գյուղի անվան հիշատակությունը մի ձեռագրում. <<Գրեցաւ... ի երկրին ասիացոց ի վիճակն Սբ. Յովհաննու աւետարանչի: Ի քաղաքն Պերկամա ի թվկիս հայոց ՌՃԻԴ (1675): Ես գաղցի Գրիգոր երեցս որ եմ ի յերկրէն Նախջուանու ի գեղջէն որ յայժմն կոչի Գաղ>>⁷³⁴:

XVII դ. Սյունիքից Բերգամա անցած գաղթականության ներկայության մասին է վկայում Բերգամայի Ս. Աստվածածին եկեղեցու մի մաշտոցի նկարագրությունը Գոլճեան Հ. քահանայի գրչով. <<Մատենաս, գրում է նա, - գրուած է Անդրեաս անուն աշխարհականի մը ձեռոք ՌՃԺ (1661) թուին, գրուած ի Լոր գիւղ>>⁷³⁵: Լորից եկած հայերն էին, որ մաշտոցը բերել էին Բերգամա:

Քանիցս նկատել ենք, որ Արևելյան Հայաստանից գաղթը շարունակվեց նաև հաջորդ հարյուրամյակի առաջին տասնամյակներին, որի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Բերգամայում ապաստանած մի քահանա Կարբի գյուղից՝ գրելով. <<Վարդան անարիեստ և բազմամեղ երիցու գրչի տէր յամէ ՌՃԿ (1711) թվին ի երկիրն Ասիայ որ

⁷³¹ Երեմիա Քեօմիւրճեան, Պատմութիւն համառօտ ԴՃ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, էջ 66: Բերգաման Օրհանի կողմից գրավվելու մասին տես նաև Այվազովսկի Գ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ. Ա, էջ 22:

⁷³² Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 150-151:

⁷³³ Նույն տեղում, էջ 155-156:

⁷³⁴ ՄՄ, ձեռ. 4669, էջ 211|բ:

⁷³⁵ Արշալոյս, Իզմիր, 1908, 5 մայիսի:

պանդուխտ եղայ»⁷³⁶ և քիչ անց հավելելով՝ «<Անարհեստ գրիչ Վարդան քահանայ յիշեալ որ ի դառն կենօք ի յօտար երկիր Ասիայ ի Պերգամէ ի թուին հողն [անընթ.] յերկեալ [երկրեալ] արքադեան [արարադեան] Կարբոյ»⁷³⁷:

Կարբեցիները, ի դեպ, Զմյոռնիային և դրան կից բնակավայրերին իրենց ծանոթությունը գործնականի վերածեցին նաև Վարդան քահանայից ավելի քան երկու տասնամյակ անց, 1730-ական թթ., անտարակույս, կապերը պահպանած լինելով Էգեյանի առափնյակում արդեն հաստատված իրենց համագյուղացիների հետ: Այս առումով շատ կարևոր լուսաբանումներ է անում Մեսրոպ Թադիադյանը. «<Վերջին անգամ Կարբոյ,- գրում է նա,- եղև յաւուրս Նադրայ արքայի պարսից, յորոց ի բնակչացն կէսք գնացին Ի Զմիւռնիա, իսկ կէսքն եկին ի Երևան»⁷³⁸:

Կ. վարդ. Շահնագարյանը ևս հստակ առանձնացնում էր գաղթի հաջորդ նշանակալի հոսքը. «<ի կէսն տասն և ութերորդ դարուն>>՝ գաղթը թուրք-պարսկական ռազմական բախումների և Նադիր շահի բռնությունների պատճառով, ի թիվս այլ գաղթավայրերի հիշատակելով, ինչպես տեսանք, նաև Բերգաման⁷³⁹:

Ղ. Ալիշանը 1853 թ. Բերգամայի հայերի թիվը հաշվում է 60 տուն՝ հույների և թուրքերի դրացիությամբ⁷⁴⁰: Դեռ քառորդ դար չանցած՝ 1876 թ., այդ թիվը առավել նվազ է ցույց տալիս Հ. Դիմաքսյանը՝ 42 տուն, 92 անձ, որ շատ անշուք է թվում հույների (1200 տուն, 5224 անձ) և անգամ հրեաների (130 տուն, 286 անձ) կողքին՝ թուրքերի անհամեմատ բազմամարդության (2800 տուն, 7268 անձ) և բնակչության ընդհանուր թվաքանակի (12000) համատեքստում⁷⁴¹: 1879 թ., ըստ Մակար վարդ. վիճակագրական տվյալների, Բերգամայում կար 50 տուն հայ՝ 300 բնակիչներով⁷⁴², գործում էր Ս. Աստվածածին եկեղեցին: Հայտնի է, որ այդ եկեղեցին վերջին անգամ նորոգվել կամ կառուցվել է 1848 թ., սակայն հիշատակ-

⁷³⁶ ՄՄ, ձեռ. 2129, էջ 29|ա:

⁷³⁷ Նույն տեղում, էջ 51|ա:

⁷³⁸ Թադիադյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ վավերագրեր, էջ 122:

⁷³⁹ Շահնագարեան Կ. վարդ., Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Միսական, Առաջաբան, էջ 30:

⁷⁴⁰ Ալիշանեան Ղ., նշվ. աշխ., էջ 543:

⁷⁴¹ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 147:

⁷⁴² Վիճակագրութիւն, Արեւելեան մամուլ, թիւ 3, էջ 440:

վում է շատ ավելի վաղ. մի մաշտոցի նվիրատվության հիշատակարանում ասվում է, որ Քրքաղաչի Սարգիս քահանայի որդի պարոն Կյուրեղը այդ ձեռագիրը <<տուաւ Բերկամայ Սուրբ Աստուածածնայ անուամբ կառուցեալ Սուրբ եկեղեցոյ...թուին ՌՄԻԶ (1777) դեկտեմբեր ամսոյ Դ-ին դասապէն Քրքաղաճ>>⁷⁴³: Հարկ է նկատել, որ Քրքաղաչի և Բերգամայի հայ հանրությունների միջև գործում էին ոչ միայն ազգակցական, այլև հայրենակցական ամուր կապերը, մանավանդ, եթե նկատի ունենանք Սյունիքից դեպի Էգեյանի ափեր ձգվող գաղթականների չդադարող հոսքը XVII-XVIII դդ.:

Բերգամայի հայ համայնքն ընդգրկված էր տեղական գյուղատնտեսական արդյունքների արտահանման ոլորտում: Զմյուռնիայի, Թիրեի, Դենիզլիի և շրջակայքի այլ բնակավայրերի հետ տնտեսական մշտական շփումների պայմաններում Բերգաման XVII-XIX դդ. ամենից առաջ արտահանում էր բամբակ, որի շարժով միանում էր Օսմանյան Թուրքիայի ոչ միայն ներքին, այլև արտաքին ապրանքաշրջանառությանը: Բերգամայի, Թիրեի, Դենիզլիի և մոտակա տարածքներում բամբակագործության զարգացումն իր հերթին նպաստում էր այդ տարածաշրջանում բամբակագործական մանուֆակտուրայի վերելքին⁷⁴⁴: 1620-ական թթ. Բերգաման լրացրեց Այդըն-Մանիսա բամբակագործական արտադրության կենտրոնի շարքը, որտեղ նրա չափաբաժինը հասնում էր տարեկան 28 հազար հակ գործվածքեղենի⁷⁴⁵: Արտահանվում էին նաև տեղական գյուղատնտեսական այլ արդյունքներ՝ ցորեն, գարի, սիսեռ, ափիոն, խոզկաղին, բանջարաբոստանային այլ կուլտուրաներ:

Հայերը զբաղվում էին նաև արհեստներով: Այստեղ նրանց հետ կողք-կողքի ապրում էին բոշաները, որոնք զբաղվում էին անասնապահությամբ և մաղագործությամբ: Հ. Դիմաքսյանը հայտնում է, որ բոշաները կրոնասեր էին, խոսում էին թուրքերեն⁷⁴⁶: Կարելի է կարծել, որ նրանք այս կողմերում էին հայտնվել պարսկական տիրապետության տակ գտնվող տարածքներից, հայ գաղթականության հետ միասին, բայց այդ դեպքում առկալիս է մնում այն հարցը, թե նրանք ինչու պետք է թուրքախոս լինեին:

⁷⁴³ Արշալոյս, 1908, մայիսի 5:

⁷⁴⁴ Inalcik H. նշվ. աշխ., էջ 145:

⁷⁴⁵ An Economic and Social History of the Ottoman Empire, p. 459.

⁷⁴⁶ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 151:

Արդյոք XVII-XVIII դդ. և հետո Բերգամայի հայության մեջ մնացել էին ավելի հին գաղթականությունների բեկորները, XIX դ. երկրորդ կեսին ինչու էր համայնքն այդքան սակավամարդ դարձել և որոնք էին դրա պատճառները՝ հարցեր են սրանք, որոնք շրջանցվում են փաստական նյութի չգոյության պատճառով:

ԴԵՆԻՋԼԻ: Գտնվում է Ջմյունիայից հարավ-արևելք, պատմական Լավոդիկեի մերձակայքում, որտեղ, ինչպես տեսանք, գործում էր Սարգիս եպիսկոպոսը, իբրև հայ բնակչության հոգևոր ներկայացուցիչ և այս աստիճանակարգով մասնակցել է 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովին՝ Սիրիայի և Միջագետքի եպիսկոպոսների շարքում⁷⁴⁷: Հ. Քոսյանը գրում է, որ Դենիզլին Ջմյունիա-Տիներ երկաթուղու մի հանգույցն է այն երթուղու վրա, որն անցնում է <<հնումն նշանաւոր Լաւոդիկէի աւերակաց քովէն>>⁷⁴⁸: Դենիզլիում և շրջակա գյուղերում ևս հայեր են բնակվել, հավանաբար դեռևս XII դ. և դրանից էլ առաջ: Հ. Բարթիկյանն առանձնացնում է փոքրասիական թերակղզու ափերին գտնվող բյուզանդական Թրակեսիոն բանակաթեմը, որի տարածքում էին Լյուդիան, Փիլադելփիան, Պերգամոնը, Լավոդիկիան, Սարդիսը և այլն⁷⁴⁹: Սելջուկների ժամանակ Դենիզլին ուներ առևտրաքաղաքական կարևոր նշանակություն, որ հասկապես երևում է Բյուզանդիայի և սելջուկների փոխհարաբերությունների ոլորտում. XIII դ. սկզբին սելջուկյան սուլթան Քեյխուսրեվ Ա-ն Դենիզլին նախ հանձնել էր բյուզանդացիներին, հետո փորձել հետ բերել այն՝ թեկուզ և անհաջող⁷⁵⁰: Մոնղոլների տիրապետության շրջանում Դենիզլին պահպանում էր տարածաշրջանով անցնող առևտրական հանգույցի նշանակությունը Իլզին-Աքշեհիր-Իսաքլու չայ-Գոնջարլու (Դենիզլիի մոտ) ուղերթում, որ փաստորեն կրկնում էր սելջուկների հին առևտրական ուղին: Տարածաշրջանում առևտրական հարաբերությունների պահպանումն ու զարգացումը արդեն օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում՝ հիմք էին դարձել XVI-XVII դդ. հայ հետագա գաղթականության համար:

Դենիզլիի հայերի հնագույն գաղթականության մասին առայժմ կցկտուր աղբյուրներ են հայտնի: Բացի վերոհիշյալից, նրանց՝ այստեղ

⁷⁴⁷ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա, էջ 1718:

⁷⁴⁸ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 56:

⁷⁴⁹ Բարթիկյան Հ. Մ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, հ. երրորդ, էջ 77, 148:

⁷⁵⁰ Гордлевский В. А. Избр. Соч., т. 1, с. 53.

ներկա գտնվելու հետքերից մեկը կարելի է համարել XIX դ. սկզբներին այսնի կարգավիճակը պահպանած հայազգի մի անձնավորության առկայությունը, որի մասին հայտնում է Վ. Ա. Գորդլևսկին⁷⁵¹: Եթե նկատի առնենք, որ այսանները հին բեյությունների ժառանգական իրավունքները պահպանած վերնախավի բեկորներն էին ընդհուպ մինչև XIX դ. Օսմանյան Թուրքիայում, ապա չի բացառվում հայ այսնի այսպիսի զարմանալի հարատևումը Դենիզլիում: Հ. Քոսյանը Դենիզլիի հայերին համարում է Պարսկաստանից գաղթածներ՝ ակնհայտորեն նկատի առնելով XVII-XVIII դդ. Սյունիքից և Արարատյան դաշտից գաղթած հայերին: Այստեղ նույնպես հայ բնակչությունն ապրել է իր առանձին թաղում՝ սրա ներքին բաժանմամբ՝ Վերին և Վարի թաղերում, ունենալով դրանց միջև կառուցված եկեղեցի: Իրենց հին թաղը գերեզմանոցով և եկեղեցիով հանդերձ, նրանք լքել են XVIII դ. վերջերին, հավանաբար այդ թաղում բռնկված հրդեհի պատճառով, որի մասին հիշվում է 1831 թ. կառուցված եկեղեցու արձանագրության մեջ. <<ի սուգ էիր ցարդ (մինչև նոր եկեղեցու կառուցումը-Ա. Խ.) երիւք տասն ամոյ ի հրոյ աւերակ>>,-ասված է մի հիշատակարանում⁷⁵²: Ընդամին հին եկեղեցու վերաբերյալ այլ տեղեկություններ չեն պահպանվել: Այս գաղթօջախի հնության (X-XII դդ.) մասին է վկայում նաև այն փաստարկը, որ առաջ ենք քաշել Էգեյանի այլ գաղթօջախների պատմության առթիվ. Հ. Քոսյանը հայտնում է, որ տեղի հայ բնակիչները տաճկախոս են և հիշում է ծեր կանանց, որոնք հայերեն էին խոսել⁷⁵³:

Անկախ Հ. Քոսյանի դիտողությունից՝ Դենիզլիի հայերի տաճկախոսության վերաբերյալ, հարկ է արժանին հատուցել Զմյուռնիայի թեմական վարչություններին և մտավորականությանը, որոնց հոգաժության շնորհիվ իրենց կրթական գործն էին անում Զմյուռնիայի շրջակայքի ազգային վարժարանները: Գալով Դենիզլիի հայերի գործածած լեզվին, ապա Ա. Բեկնազարյանը ևս վկայում է, որ Դենիզլիի ավագ սերունդները խոսելիս են եղել Ղափանի և Մեղրիի՝ իրենց հայրենիքի բարբառով⁷⁵⁴: Խոսքը, կարծում ենք, վերաբերում է XVII-XVIII դդ. ընթացքում Սյունիքից եկած գաղթականներին:

⁷⁵¹ Гордлевский В. А. Избр. Соч., т. 1, с. 261.

⁷⁵² Քուեան Յ., նշվ. աշխ., էջ 59:

⁷⁵³ Նույն տեղում: Հակոռակ դրան, Հ. Քոսյանը նաև նկատում է, որ ծերերն իրենց մայրենի լեզուն ավելի լավ գիտեն, քան պատանիները (նույն տեղում, էջ 66):

⁷⁵⁴ Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, էջ 241-242:

Դենիզլիում և նրա շրջակայքում հայերն ապրում էին հույների, թուրքերի և հրեաների հարևանությամբ: Մակար վարդ. Դենիզլիում հաշվում է 82 տուն՝ 389 անձով, Հ. Քոսյանը՝ 80-82 տուն, մոտ 400 անձով⁷⁵⁵, գրեթե նույն տվյալները, որ հուշում է այն մասին, որ կամ Հ. Քոսյանն է օգտվել Մակար վարդ. տվյալներից և կամ էլ նրանք երկուսն էլ օգտվել են առաջնորդարանի տվյալներից, համենայն դեպս, կարելի է առաջնությունը տալ Մակար վարդապետին, որովհետև Հ. Քոսյանը իր վիճակագրական տվյալներն ամրագրել է վարդապետից շուրջ քսան տարի անց՝ 1899 թ., իսկ այդ ժամանակամիջոցում Դենիզլիի հայերի թվաքանակում ավելի զգալի փոփոխություններ կարող էին լինել:

Հայերը Դենիզլիում զբաղվում էին արհեստներով ու առևտրով: Նրանք իրացնում էին տեղական գյուղատնտեսական ապրանքները և հատկապես ընդգրկված էին բամբակի առևտրի մեջ: Դենիզլիի և Ալաշեհիրի կտավի ու բատիստի գործվածքների արտադրությունը, որ հայտնի էր դեռևս Անատոլիայի բեյությունների ժամանակներից, մի հայտնի չափով պարտական էր տեղական հումքն իրացնող առևտրականությանը: Համայնքում գործում էին այլևայլ արհեստավորներ՝ ոսկերիչներ, դերձակներ, չթագործներ, սափրիչներ և այլն: Առանձնապես թվաշատ էին հայ բոշաները, որոնք զգացնել էին տալիս իրենց ներկայությունը Էգեյանի այս տարածաշրջանում գրեթե ամենուրեք: Դենիզլիում և շրջակայքում արտադրվում էին ցորեն և հացահատիկային այլ կուլտուրաներ: Հիմնականում գյուղատնտեսությամբ զբաղվող հայերը, որոնց թիվը չէր անցնում մեկ տասնյակից, XIX դ. վերջերին ցրված էին քաղաքի մերձակա գյուղերում⁷⁵⁶:

Դենիզլիում զմյուռնացի հայերի առկայությունը վկայում էր թեմական կենտրոնի՝ Զմյուռնիայի, և այս հնամենի գաղթօջախի վաղեմի ազգային կապերի մասին: XIX դ. երկրորդ կեսին կային Դենիզլիում բնակվող և օսմանյան ծառայության մեջ գտնվող հայ պաշտոնյաներ: Այս իմաստով ուշագրավ է Դենիզլիի գերեզմանատանը թաղված (1872 թ.) այդպիսի երևելի մեկի՝ 1832 թ. տեղի եկեղեցին իր ձեռնտվությամբ կառուցած մահտեսի Խաչիկ Առաքելյանի դամբանագիրը: Նա այստեղ կոչվում է <<իշխանապետ>>, նաև <<իւլպատոսաց եւ բղէշսից, իշխանաց

⁷⁵⁵ Վիճակագրություն, 1879, թիւ 3, էջ 440: Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 59, 66-67:

⁷⁵⁶ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 59:

խորհրդատու գոլ ըստ ծիսի օրինաց, որով եղեալ յոյժ սիրելի այլազանց եւս>>⁷⁵⁷:

Քաղաքի առևտրական հին ավանդույթները պահպանվել էին Զմյուռնիայի հետ առևտրատնտեսական կապերի շնորհիվ: Մինչև XIX դ. երկրորդ կեսը կիրակի և հինգշաբթի օրերին Դենիզլիում պարբերաբար գործում էին տոնավաճառները:

ՆԱԶԻԼԻ: Էգեյանի հնագույն բնակավայրերից մեկն էր՝ Այդընի հյուսիս-արևելյան մերձակայքում, որի վկայություններն էին հին հռոմեական (կամ հունական) ժամանակներից մնացած քաղաքակրթության հետքերը՝ ճարտարապետական կոթողների ավերակները: Մակար վարդ. Նազիլիի հայ գաղթականության պատմությանը տալիս է չորս հարյուր տարվա վաղեմություն՝ փաստորեն այն համարելով XV դ. գաղթական տեղաշարժերի հետևանք, թեև ոչ նա, ոչ էլ Հ. Քոսյանը որևէ փաստարկ կամ հիմնավորող տվյալ չեն բերում գաղթօջախի սկզբնավորման իրենց ենթադրությունն ամրապնդելու համար⁷⁵⁸:

Մակար վարդ. Նազիլիում հաշվում է 53 տուն՝ 279 անձով, իսկ Հ. Քոսյանը՝ 53 կամ 60 տուն՝ 274 անձով (սեռատարիքային դասակարգմամբ)⁷⁵⁹: Նազիլիի համայնքի անձանց թվաքանակը ավելի նվազ է ցույց տալիս Ղ. Ալիշանը՝ 130 մարդ⁷⁶⁰: 1901 թ. Կ. Պոլսի <<Մանգումլի էֆ-քեար>> թերթի տվյալներով Նազիլիի ամբողջ բնակչությունը կազմում էին 3141 այր, 2972 կին՝ մահմեդականների բացարձակ մեծամասնությամբ՝ 3870 մարդ, հույներ՝ 1498, հայ՝ 336⁷⁶¹:

Հ. Քոսյանը Նազիլիի հայերին համարում է Ադընի գաղթականության մի ճյուղը՝ հավանաբար, հենվելով Այդընի վարչական կենտրոն լինելու հանգամանքի վրա: Նազիլիի հայությունը, առնվազն XVII դ. երկրորդ կեսից պետք է փոխած լինի գերեզմանատան տեղը, որովհետև տապանաքարերից ամենահինը, որ հայտնի է առ այսօր, թվագրված է ՌՃԽԷ (1698) թվականով, իսկ մյուսները՝ արդեն XVIII դ. տարբեր տաս-

⁷⁵⁷ Նույն տեղում, էջ 64:

⁷⁵⁸ Վիճակագրություն, 1879, թիւ 3, էջ 436: Հ. Քոսյանը Նազիլիի գաղթականությանը նախ տալիս է 250 տարվա (այսինքն XVII դ. երկրորդ կես), իսկ այնուհետև Մակար վարդ. հետևելով՝ 400 տարվա (իմա XV դ. երկրորդ կես) հնություն (տես Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 50 և 56):

⁷⁵⁹ Վիճակագրություն, էջ 436: Քօսեան Յ., նույն տեղում:

⁷⁶⁰ Ալիշանեան Ղ., նշվ. աշխ., էջ 547:

⁷⁶¹ Մանգումլի էֆքեար, 1901, 4/17 մայիսի:

նամյակներով⁷⁶²: Պետք է կարծել, որ Հ. Քոսյանի վերաբնակարարական գործունեությունը, թեկուզ և XVII դարի այդ միակ օրինակով (<<գումարեցի Աղիջանի որդի Սիակ, Ռճխէ-1698) վկայում են Նազիկիում այդ դարից սկսած Սյունիքի գաղթականության առկայության մասին: Մնացյալ դեպքերում տապանաքարերի գրությունները ցուցադրում են ոչ միայն Սյունիքի տեղանունները, գյուղերն ու բնակավայրերը (Մանլի, Ափքես, Գումարք, Կրթեթաղ (Գիրթաղ), Ղափան), այլև թույլ տալիս մեկ անգամ ևս եզրակացնելու, որ Սյունիքից և առհասարակ Արևելյան Հայաստանից գաղթերը շարունակվել են երկու հարյուրամյակներում՝ XVII և XVIII դդ.: Սյունիքից, Նազիկիի շիրմաքարերը վկայում են, որ տեղի հայ գաղթականության մաս են կազմել, կարծում ենք, ավելի ուշ շրջանում, կեսարացի, թոքատեցի և կարահիսարցի (իմա Ափիոն-Կարահիսարից եկած) հայերը՝ դատելով XIX դ. վերջի և XX դ. տապանաքարերի մակագրություններից: Անշուշտ, դամբանագրերը միայն մասամբ են վերաբնակարարական գաղթականական շերտերը, և այդ ոչ միայն Նազիկիում, այլև Էգեյանի բոլոր գաղթավայրերում: Կարող էին լինել ավելի հին տապանաքարեր, քան այն, ինչ ներկայացնում է Հ. Քոսյանը, բայց մենք ավելին չունենք, քան տրամաբանության առջև դրանք պատահական և միաժամանակ, իրական համարելը:

Նազիկիի հայերը բնակություն էին հաստատել քաղաքի հյուսիս-արևելյան կողմում և ոչ թե համախումբ՝ մեկ թաղում, այլ ցաքուցրիվ, իրարից հեռու տներով, համենայն դեպս՝ Հ. Քոսյանի նկարագրած ժամանակներում, XIX դ. վերջին: Հայ բնակչությունը թրքախոս էր: Նազիկիի վերջին՝ Ս. Հռիփսիմե եկեղեցին նորոգվել է 1843 թ., Մատթեոս արք. (հետագայում՝ Ամենայն հայոց կաթողիկոս) առաջնորդության ժամանակ: Այս եկեղեցու բեմը՝ շինված Նազիկիի հին գերեզմանատան շիրմաքարերով, հնարավորություն է ընձեռել Հ. Քոսյանին՝ սերունդներին հանձնելու գաղթօջախի պատմության հին դրվագները: Դրանցում կարելի է տեսնել նույն սոցիալական շերտերը՝ արհեստավորներ, առևտրականներ, հոգևորականություն: Արհեստավորների մեջ առավել շատ հիշվում են դերձակները, երկաթագործները, ոսկերիչները, սափրիչները և այլն, կային նաև Արևելյան Հայաստանից գաղթած մաղագործ բոշաներ: Տեղական գյուղատնտեսական ապրանքների արտահանման մեջ ավանդական առաջնությունը XIX դ. ևս պահպանում էր բամբակը,

⁷⁶² Քոսեան Զ., նշվ. աշխ., էջ 52-55:

որի արտադրությունն ու արտահանումը զարգացման ակնհայտ նշաններ էին ցույց տալիս այդ դարավերջին: Նազիլին, գրում է Հ. Քոսյանը, <<ունի բամպակի և մատուտակի (քաղցրարմատ բույս-Ա. Խ.) մասնատոր գործատուներ և աշխատատեղեր: Հինգշաբթի օրը տոնավաճառի օր է>>⁷⁶³: Մշակում էին նաև բանջարանոցային կուլտուրաներ, ձիթապտուղ: Կային արտասահմանցի ներդրողների գործարաններ:

ՔԱՍԱԲԱ (Գիրմաստ): Ինչպես անվանումն է հուշում՝ ճանաչված էր իբրև հին բնակավայր (թուրք.՝ kasaba-բնակավայր): Զմյուռնիային ամենամոտ փոքր քաղաքներից էր, դրա հյուսիսային կողմում. XVII-XIX դդ. մեծ քաղաքի՝ Զմյուռնիայի հումքային գյուղատնտեսական կցորդը՝ իր բերրի հողերով, ընդարձակ հողահանդակներով և այգիներով, բամբակի, ծխախոտի դաշտերով ու բանջարանոցներով: Քաղաքը բյուզանդական ու սելջուկյան ժամանակներից ի վեր բնակեցված էր հույներով, կարծում ենք՝ նաև հայերով, և մահմեդականներով: Լինելով Մանիսայի սանջակներից (վարչական տարածք) մեկը, Քասաբան 15-հազարանոց բնակչությամբ փոքրասիական քաղաք էր, ըստ եվրոպական մի հրատարակության՝ հինգ հազար հույն և հայ բնակիչներով, մնացյալը՝ մահմեդականներ⁷⁶⁴: Ղ. Ալիշանը XIX դարակեսին հայերի թիվը հաշվում էր 400 մարդ: Ըստ Հ. Դիմաքսյանի, հայերի տների թիվը հասնում էր 130-ի՝ 370 շնչով, մահմեդականներինը՝ համապատասխանաբար 460 և 1120, հույներինը՝ 110 և 290: Մի որոշ չափով տարբեր են Մակար վարդ.՝ գրեթե նույն ժամանակաշրջանին (1879 թ. կամ դրանից քիչ առաջ) վերաբերող տվյալները՝ 105 տուն, 486 մարդ: Հ. Քոսյանը ևս դարավերջին հաշվում է 100 տուն՝ 486 անձով⁷⁶⁵: Հ. Դիմաքսյանը նկատում է, որ հայերը բնակվում են առանձին թաղում, ինչպես և հույներն ու թուրքերը, այսինքն, միջնադարյան արևելյան քաղաքին հատուկ տեղադրությամբ, ըստ էթնոկրոնական հատկանիշի: Այս հեղինակը Քա-

⁷⁶³ Նույն տեղում, էջ 50: Տոնավաճառների ավանդության լյազմակերպումը Նազիլիում տեսնում ենք դեռևս բյուզանդական ժամանակներից. Կ. Ժուկովիչի շատակում է XII-XIV դդ. Նազիլիի <<խոշոր և մշտական>> տոնավաճառները, որտեղ հատկապես աշխույժ էր անասունների առևտուրը, ինչպես և Զմյուռնիայի մերձակայքում՝ Ս. Պանտելեյմոնի մենաստանի մոտ գտնվող տոնավաճառը (տես Жуков К. А. Эгейские эмираты, с. 115):

⁷⁶⁴ Turkey in Asia, p. 325.

⁷⁶⁵ Ալիշանեան Ղ., նշվ. աշխ., էջ 547: Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 77: Վիճակագրություն, 1879, թիւ 3, էջ 440: Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 161:

սաբայի համայնքի հնությունը հաշվում է մինչև 300 տարի, նկատի առնելով XVI դ. երկրորդ կեսը, ավելին, նա գրում է, որ տեղի հայերն ավանդաբար իրենց բնակություն հաստատելու թվականը հաշվում են 400 տարով, որն իրեն հավանական չի թվում⁷⁶⁶: Ինքը՝ Հ. Դիմաքսյանը, Քասաբայի հայերի ամենահին մասունքը վերագրում է 1629 թ.՝ վկայակոչելով Ս. Լուսավորիչ եկեղեցու մի խաչի արձանագրությունը. <<Յիշատակ է Ս. Խաչս Այրիճիհանին եւ Զարդարին թւն ՌՀՀ>>⁷⁶⁷: Նկատենք, սակայն, որ խաչը եկեղեցում կարող էր հայտնվել իբրև նվիրատվություն՝ ավելի ուշ շրջանում, որով և հնարավոր չէ եկեղեցու հնությունը պարզելը: Հ. Դիմաքսյանի մեջբերած մյուս արձանագրությունները վերաբերում են XVII-XVIII դդ., որոնցից ամենահինները՝ 1644 թ. մի Ավետարանի հիշատակարան, մյուսը՝ 1691 թ. տապանագիր: Տեղի հայ բնակչությունը հիմնականում գաղթել էր Արևելյան Հայաստանից:

Քասաբայի Ս. Աստվածածին եկեղեցին վերջին անգամ՝ մեզ հայտնի տվյալներով, կառուցվել կամ հիմնովին նորոգվել է 1840 թ.: Բնականաբար, այս գաղթօջախը դրանից շատ առաջ էլ ունեցել է նույնանուն եկեղեցի, որի վկայությունն է հետագայում կառուցված դպրոցի մի պատի քարի պահպանված (հին շինությունների քարերը սովորաբար օգտագործված լինելու պատեհությամբ) արձանագրությունը. <<Ձեռնտութեամբ Պալթազատե Պարոն Աստուածատուրի ի Հայր[ա]յ[ետութեան] [Գա]լուստ արքեպիսկոպոսին արդեամբք եւ ծախիւք մեծահարուստ Մենքշեզատե [Յովի]աննէսին եւ եղբօրն իւրոյ մահտեսի Պօղոսին եւ համայն ննջեցելոց>>⁷⁶⁸:

Գալուստ վարդապետը Զմյուռնիայի առաջնորդն էր, ինչպես տեսանք, 1785-1790 թթ., հետևաբար, Քասաբայի եկեղեցին կարող էր կառուցվել այդ հնգամյա ժամանակահատվածում: XVIII դ. վերջերին, Ղուկաս կաթողիկոսի ժամանակ կառուցված այդ եկեղեցուց շատ առաջ Քասաբայի հայերը եկեղեցի ունեին, ինչը տեսանք Հ. Դիմաքսյանի հիշատակած հնություններում, որոնց մեջ առկա են XVII դ. հիշատակարաններ և մասունքներ: Չի բացառվում, որ այստեղ հայկական հնամենի գաղթօջախ եղած լինեք, շատ ավելի հին, քան Շահ Աբասի ժամանակվա գաղթերի արդյունքում հայտնված գաղթականությունները: Քասաբայի եկեղեցու վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է հաղորդում անգ-

⁷⁶⁶ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 82:

⁷⁶⁷ Նույն տեղում, էջ 89:

⁷⁶⁸ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 158:

լիացի ճանապարհորդ Ֆ. Արնհայտը՝ Լոնդոնում 1834 թ. տպագրած իր գրքում. Քասաբան, գրում է նա, ունի մոտ 2000 տուն՝ թուրքեր, հրեաներ՝ հայեր և <<վերջիններս, կարծեմ, այստեղ են հաստատվել մոտավորապես 1690 թ., դրանից քիչ ժամանակ անց էր, որ նրանք եկեղեցի կառուցելու ֆերման ձեռք բերեցին>>⁷⁶⁹:

Անշուշտ, այս վերջին տեղեկությունը չի բացառում այն, որ Քասաբայի հայերը կարող էին ձեռք բերել ոչ թե եկեղեցի կառուցելու, այլ նորոգելու ֆերման, որ անհրաժեշտ էր ամեն անգամ՝ նաև եկեղեցին նորոգելու, և ոչ միայն ի նորոգելու պարագայում:

Քասաբայի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը հողագործներ և արհեստավորներ էին, մասամբ զբաղվում էին հողի սեփականության հետ առնչվող միջնորդական գործառնություններով. <<Տեղացիք վաճառականութենէ աւելի հողագործութեան կը զբաղին եւ ամեն ոք քիչ-շատ հերկելու և վարելու հող ունի: Թուով խիստ քիչ մարդիկ կառավարութենէ ծախու կառնեն տասանորդներն (եօշիւր) եւ անով կը պարապին>>,-գրում է Հ. Դիմաքսյանը⁷⁷⁰: Նկատենք, որ Քասաբան բամբակի արտադրության ավանդական կենտրոններից մեկն էր տարածաշրջանում. XIX դ. երկրորդ կեսին, դրա շնորհիվ, այստեղ գործում էին չորս բամբակամշակման գործարան՝ իրենց բամբակագտիչ և պատրաստի գործվածքեղենի արտադրական կարողություններով⁷⁷¹: Քասաբան ներգրավվել էր, այսպիսով, Էգեյանի բամբակագործական արտադրության մեջ՝ հենվելով տեղական հումքի վրա: Փոքրասիական գյուղատնտեսական արտադրությանը Քասաբան մասնակցում էր նաև ծխախոտի, մեղրի, ավանդական այգեգործական և բանջարանոցային բերքերի (ծխապտուղ, թուզ, սեխ, ձմերուկ) մշակությամբ, որոնց ոլորտում գործում էին նաև հայերը:

Հայ համայնքում արհեստների մեջ տարածված էին դերձակությունը, ոսկերչությունը երկաթագործությունը և հացագործությունը:

⁷⁶⁹ Armenians in the Ottoman Empire, p. 232. Ավելացնենք, որ այս հեղինակը ուշադիր է վիճակագրական փաստերի նկատմամբ և քննադատական գնահատական է տալիս Թուրնեֆորի (1701), Պոկոկի (1740), ինչպես և այլոց՝ Զմյուռնիայի ազգաբնակչության վերաբերյալ տվյալներին, նկատելով, որ XVII-XVIII դդ. եվրոպական մի շարք ճանապարհորդներ ճշգրիտ չեն այս հարցում (նույն տեղում):

⁷⁷⁰ Դիմաքսեան Հ., նշվ. աշխ., էջ 79:

⁷⁷¹ Turkey in Asia, p. 305.

XIX դ. երկրորդ կեսին Քասաբայի հայերն ունեցան իրենց դպրոցը, իսկ մինչ այդ, պետք է կարծել, նրանք սովորում էին Ս. Աստվածածին եկեղեցու կրթված հոգևորականների մոտ: Հարուստ զմյուռնահայերը, ի դեպ, նյութական հովանավորություն են ցուցաբերել այս և առհասարակ Էգեյանի շրջանի համայնքներին: 1840 թ. եկեղեցու կառուցման կամ նորոգման ծախսերին իր բաժինն էր ներդրել զմյուռնացի Ավ. Էքիզյանը, իսկ դարավերջին հիմնված Ճեվահիրճյան արական և Տիգրանուհյան իգական վարժարանները կառուցվել էին դարձյալ զմյուռնացի Հ. Ճեվահիրճյանի միջոցներով⁷⁷²:

Հ. Աճառյանը Քասաբան մտցրել է տարածաշրջանի այն բնակավայրերի մեջ, որտեղ ապրող հայերը խոսում էին Չմյուռնիայի բարբառով: Կարելի է կարծել՝ նաև Սյունիքի բարբառով կամ դրա խոսվածքներից մեկով, որչափով այստեղ հաստատված հայերի մի զգալի մասը Սյունիքից էր անցել Էգեյանի ափամերձ տարածքներ՝ հիմնականում սկսած XVII դ. առաջին տասնամյակներին:

ԱՔՀԻՍԱՐ (Թիրա, Թիրադիր, Թիյաթիրա) գտնվում է Չմյուռնիայից հյուսիս-արևելք: Թիրա անվամբ բազմիցս հիշվում է XVIII-XIX դդ. Չմյուռնիայի տերունի թեմին ուղղված կաթողիկոսական կոնդակներում՝ միջակա տեղ զբաղեցնելով առաջնորդական բնակավայրերի թվարկման շարքում: XVII դ. սկզբներին հիշվում է Սիմեոն Լեհացու ուղեգրության մեջ: Չմյուռնիայից հետո նա անցնում է Թիրա, նշելով, որ այնտեղ կար տասը տուն հայ, բայց <<երեց չկար>>⁷⁷³, որից կարելի է ենթադրել, որ այս փոքրիկ գաղթօջախը կամ դեռևս չի կայացել և կամ էլ այնտեղ կանգառել են պատահականորեն հայտնված գաղթական խմբերի պատահիկները, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ 1610-ական թթ. սկզբներից հետո էր դեպի այս տարածաշրջան ձգվելու գաղթականության հոսքը Արևելյան Հայաստանից: XIX դ. Աքիսարում հայերի տներն արդեն հասնում էին 50-ի (բնակավայրի 5-հազարանոց բնակչության մեջ), գործում էին Ս. Աստվածածին եկեղեցին և դպրոցը, ինչպես տեղեկացնում է Ղ. Ալիշանը⁷⁷⁴: XVIII դ. պարսկա-թուրքական պատերազմների, և հատկապես Նադիր շահի օրոք Սյունիքից և Արարատյան դաշտի բնակավայրերից ծայր առած գաղթականության մի մասը ապաստանել է Աքիսարում: Մասնավորապես, Չմյուռնիայում և Աքիսարում

⁷⁷² Քուեան Յ., նշվ. աշխ., էջ 156, 159:

⁷⁷³ Սիմեոն դպրի Լեհացույ Ուղեգրություն, էջ 38:

⁷⁷⁴ Ալիշանեան Ղ., նշվ. աշխ., էջ 547:

1746 թ. Բաղրամյան նահապետական զորքի կազմակերպիչ կաթողիկոս Կարապետը, ինչը նկատել ենք իր տեղում⁷⁷⁵:

Դեռևս անտիկ աշխարհից հայտնի Թիրան՝ իր հունահռոմեական ճարտարապետական կառույցների ավերակներով ու պատմությամբ, միջնադարում հայտնի էր իր արհեստավորներով: Հագիվ թե պատահական լինեք, որ հայոց եկեղեցու մոտ կար ներկարարների թաղ, որ անվթար էր մնացել XIX դ. 40-ական թթ.⁷⁷⁶: Այս դեպքում դժվար չէ կռահել, որ Աքիսարին մի հայտնի չափով բաժին էին ընկել տարածաշրջանին մշտապես հատուկ բամբակագործական արտադրության արդյունքները, ինչպես և մետաքսի գործվածքները ներկելու և ապա շուկա հանելու գործը:

Մելքունների ժամանակներից և օսմանյան տիրապետության շրջանում Աքիսարից արտահանվել են բամբակ և բամբակյա գործվածքներ, ձիթապտուղ, այգեգործական մշակույթի բազմաթիվ տեսակներ, որի շնորհիվ, ինչպես և Զմյուռնիային կից լինելու հանգամանքով, այդ բնակավայրն իր անմիջական մասնակցությունն ուներ և ներքին, և արտաքին առևտրի մեջ: Հայ համայնքը ևս ընդգրկված էր այդ ապրանքաշրջանառության մեջ՝ զբաղված լինելով հողագործությամբ, արհեստներով ու առևտրով: Աքիսարի համայնքում հայտնի էին երկաթագործները, թամբագործները և դերձակները, իսկ բնակիչների մի մասն էլ հումքը կամ պատրաստի արտադրանքը Էգեյանի շրջանի շուկաներն էր տեղափոխում իր սայլերով կամ սայլակներով⁷⁷⁷: Որոշակի տվյալներ չկան այն մասին, թե երբ է հաստատվել հայ գաղթականությունը Աքիսարում:

Համենայն դեպս, 1879 թ. Մակար վարդ. այստեղ արձանագրել է 84 տուն հայ՝ 339 բնակիչներով, Ս. Լուսավորչյան եկեղեցիով, ինչպես և եկեղեցու հասույթների մեջ մուտքագրված 4800 դուրուշ եկամտով: Ի դեպ, այս վերջին՝ նվազ ցուցանիշով Աքիսարի հայ համայնքը նախավերջին տեղն էր զբաղեցնում Զմյուռնիային կից հայաբնակ համայնքների մեջ՝ առաջ անցնելով միայն Սյոքեի հայ համայնքի (որին կանցնենք քիչ անց) եկեղեցու համապատասխան կարողությունից

⁷⁷⁵ Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 407:

⁷⁷⁶ Արշալույս Արարատեան, 1840, 21 սեպտեմբերի:

⁷⁷⁷ Տես ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 59-61:

(2960 դուրուշ)⁷⁷⁸: Կարելի է մակաբերել, որ եկեղեցու եկամուտն ինքնին արտացոլում էր համայնքի չափավոր նյութական հնարավորությունները:

Աքիսարում համայնքի բնակչության հետ խառնված էին հայ բռնները, որոնք, լինելով հայ եկեղեցու հետևորդներ, ի տարբերություն մահմեդականացած բռնների, սերտ շփումներ ունեին հայերի հետ: <<Գըրգ Աղաճի, Ագիսարի եւ Ուշագի հայ բնակչության մէկ կարեւոր տոկոսը հայ բռն ծագում ունի, թէւ առանց այժմու սերունդներէն շատերը ի գուր կը ջանան ծածկել իրենց նախապապերուն ցեղը>>,- գրում է լավատեղյակ հեղինակը⁷⁷⁹:

Վերջին հանգամանքը, ցույց է տալիս, որ դրանից առաջ, հավանաբար XIX դ. և ավելի վաղ շրջանում հայ բռնները սկսել էին տարրալուծվել հայերի մեջ՝ զբաղմունքի, դավանական և հատկապես թուրքական ավանդական միջավայրի ճնշումներին դիմակայելու ասպարեզներում միավորող ընդհանրություններ ունենալով հայերի հետ:

Աքիսարում ևս բռնները զբաղվում էին արհեստագործական և գյուղատնտեսական արտադրանքները շուկա տեղափոխելով, ինչպես և առևտրով: Այս իմաստով դժվար է ասելը, թե ինչ զբաղմունքներ ունեին Աքիսարի մերձակա գյուղերում և բնակավայրերում ապրող մահմեդականացած բռնները, որոնք մինչև XX դ. սկզբները պահպանել էին իրենց հայախոսությունը, թեև կրոնական այս տարանջատման պատճառով մեկուսացած պետք է լինեին և հայերից, և իրենց հայադավան ազգակիցներից: Համենայն դեպս, Այդընի վիլայեթում բռնների թիվը պետք է որ շատ ավելին լիներ, քան նշում է XX դ. սկզբների հեղինակը՝ 50-60 վրան⁷⁸⁰:

Աքիսարի հայ բնակչությունը եկեղեցու և դպրոցի շնորհիվ կարողացավ պահպանել իր լեզուն՝ հայախոսությունը, մանավանդ Զմյուռնիայի նշանավոր <<Սյունյաց>> ընկերության ջանքերով բացված վարժարանի շնորհիվ: Նախքան Մանիսայի, Մենեմենի և Աքիսարի դպրոցները այդ ընկերության խնամքի տակ անցնելը: 1845 թ.,

⁷⁷⁸ Վիճակագրություն, 1879, թիւ 3, էջ 440: Անգլիացի ճանապարհորդ Ռ. Վալշը (XIX դ. I կես) գրում է, որ Աքիսարի բնակչության թիվը ներկայիս կազմում է 6-7 հազար մարդ, որից 1500-ը՝ հույներ և հայեր (Armenians in the Ottoman Empire, p. 352):

⁷⁷⁹ Վերածին Մ., Հայ բռնները Փոքր Ասիոյ մէջ, թիւ 6, էջ 138:

⁷⁸⁰ Նույն տեղում:

Աքիսարում գործում էր վարժարան՝ 34 աշակերտով (նաև իտալերենի դասավանդմամբ), որի մասին տեղեկություն է տալիս <<Արշալոյս Արարատեան>> թերթը⁷⁸¹։ Դրանից առաջ էլ Աքիսարի հայերն ունեին իրենց վարժարանը, որովհետև նույն թվականին Ջյուռնիայում հանգանակություն է կազմակերպվել՝ այդ գյուղաքաղաքում վարժարանի նոր շենք կառուցելու համար։ Այսուհանդերձ, հետագայում թրքախոսությունը պետք է տարածվեր Աքիսարում, ինչպես գրում է այդ երևույթից տազնապահար և գույները խտացնող՝ զմյուռնահայ թերթերից մեկի աշխատակիցը. <<Ազիսարի հայութիւնը,-գրում է նա,- դարձեր է թրքախօս։ Վարժարանը ձգուած ըլլալով անխնամ, ան չէ կրցած իր դռնը դնել հասարակութեան վրայ>>⁷⁸²։

Այսուհանդերձ, ազգապահպանության հարցում, մասնավորապես էգեյանի տարածաշրջանում այլազգի և այլադավան հանրությունների մեջ փոքրաթիվ և ցրված հայ գաղթականության հարատևման տեսակետից մեծ դեր էր վերապահված ազգային եկեղեցուն ու դպրոցին, որոնք ուսուցանում և գործածական էին դարձնում հայերենը։ Նոր սերնդի մեջ վարժարանը հայախոսությունը պետք է տարածեր գրական աշխարհաբարով, որպիսին շրջանառվում էր ամբողջ արևմտահայ հատվածում։

ՔՈՒՇԱԴՆԱ (Սկալա Նովա, իտալ.՝ Նոր նավահանգիստ)։ Գտնվում է Զյուռնիայից հարավ-արևմուտք, Եփեսոսի ծովածոցում, բնակության և նավագնացության համար հարմարավետ տեղանքում։ Քաղաքը գոյություն ուներ դեռևս հունահռոմեական դարաշրջաններում՝ դատելով XX դ. սկզբին հարատևած պարիսպների և այլ շինությունների մնացորդներից։ Պետք է կարծել, որ Քուշադան ջենովացիների ու սելջուկների, ինչպես և առաջինների ու բելյությունների առևտրական փոխհարաբերություններում եղել է բանուկ ճանապարհների հանգուցակետ՝ վաճառաշահ նավահանգիստ։

Հայ բնակչության կամ գաղթականության հաստատման սկիզբը Մակար վարդ. համարում է XVI դ. առաջին կեսը՝ նշելով, որ <<250 տա-

⁷⁸¹ Արշալոյս Արարատեան, 1845, 5 հոկտեմբերի, 16 նոյեմբերի։ Հաջորդ տարվան նույն այս թերթը փոքր-ինչ ավելին է ցույց տալիս աշակերտների թիվն Աքիսարում՝ 41 (նույն տեղում, 1846, 8 փետրվարի)։ Ընկերությունն օգնել է նաև Քրքադաչի, Քասաբայի և Այդընի վարժարաններին՝ ապահովելով ուսուցիչներով, իսկ աշակերտներին՝ նպաստներով (Բիզանդիոն, 1905, 4/17 օգոստոսի)։

⁷⁸¹ Յուլակ, Ճամբու նոթեր, Աշխատանք, 1912, 12 հոկտեմբերի։

⁷⁸² Նույն տեղում։

րի յառաջ գաղթած են հայք այս քաղաքն>>⁷⁸³: Թուրնեֆորի այցի ժամանակ (XVIII դ. սկիզբ) Քուշադան բնակեցված էր մահմեդականներով (1000 տուն), հույներով (600 տուն), հայերով (60 տուն) և հրեաներով (10 տուն)⁷⁸⁴: Հույները և հայերն ապրում էին քաղաքի ծայրամասերում: Ֆրանսիացի ճանապարհորդը հայտնում է նաև, որ քաղաքում և նրա շրջակայքում տեղավորված էին ենիչերիներ, այսինքն, այն ամրացված նավահանգիստ էր⁷⁸⁵: Նրա հաղորդման համաձայն, հայերը եկեղեցի չունեին, ուստի կարելի է ենթադրել, որ թվաշատ չլինելու պատճառով նրանք կամ գոհացել են մատուռով և կամ էլ մի ինչ-որ ժամանակ հոգևոր սպասարկում են գտել կից հայաբնակ բնակավայրերից մեկում: Եկեղեցուն կանդրադառնանք քիչ անց, իսկ այստեղ նկատենք, որ Քուշադայի հայ բնակչությունը հետագայում ավելանալով, XIX դ. երկրորդ կեսին սկսել է նվազել՝ թերևս, կապված Զմյուռնիայի առևտրաարհեստավորական միջավայր տեղափոխվելու պահանջի հետ: Նշանակություն ունեցավ, անշուշտ, Զմյուռնիա-Այդըն երկաթուղու գործարկումը: Այդընի քարավանային, երկրի ներսից ձգվող ճանապարհները մինչ այդ՝ 1860-ական թթ., կենտրոնանում էին այդ նավահանգստում՝ իրենց տնտեսական ողջ կարևորությամբ, վիլայեթի ներքին՝ գյուղատնտեսական արտադրանքը և բնական հարստությունները ծովային այդ հանգույցով արտահանելու, ինչպես նաև տեղական շուկայում ապրանքափոխանակության համար: Երկաթուղին անշքացրեց այս առևտրի ավանդական վերջնակետը՝ նշված ապրանքները (ցորեն, գարի, բամբակ, բուրդ, ձիթապտուղ, միրգ և այլն, հանքային արդյունքներ) անմիջակա-

⁷⁸³ Վիճակագրություն, Արեւելեան մամուլ, 1879, թիւ 3, էջ 438: Հայ գաղթականության սկիզբն այստեղ փոքր-ինչ հետ էր տանում Դաշինք թերթի թղթակիցը 1910 թ. գրելով, որ Քուշադայի գերեզմանատան արձանագրությունները <<մինչեւ 300 տարուայ հնութիւն կը մատնանշեն: Տեղոյս ափ մը հայերը, -հարում է նա.- Պարսկաստանի (արևելահայ-Ա. Խ.) գաղթականութեան մնացորդն են>> (Դաշինք, 1910, 11 ապրիլի):

⁷⁸⁴ Steu Tournefort J. P. Voyage d'un botaniste, II, p. 328. Հակառակ Թուրնեֆորի այս տեղեկության, որ վերաբերում է XVIII դ. սկզբին, Դ. Գոֆմանի վկայակոչած (1661 թ. դրությամբ) օսմանյան արխիվներում Քուշադայի հայերի, ինչպես և հրեաների թվաքանակի վերաբերյալ տվյալներ չկան: Դ. Գոֆմանը, սակայն, նկատում է, որ Քուշադայի հարկատու հույների մեջ կան հայկական անուններ՝ <<Էրմենի Հասուն, Էրմենի Քալը>> (տես Goffman D. Izmir and the Levantine World, p. 83):

⁷⁸⁵ Tournefort J., p. 328.

նորեն շատ ավելի կարողունակ նավահանգիստ-շուկա՝ Զմյուռնիա տեղափոխելով: Եթե Ղ. Ալիշանը 1850-ականին Քուշադայում հայերի թիվը ամրագրում էր 20 տնով, ապա Մակար վարդ. շուրջ երկու տասնամյակ անց հաշվում էր 29 տուն՝ 120 անձով, իսկ Հ. Քոսյանի տվյալները նույնն են, ինչ Մակար վարդապետինը, թեև դրանք նա հրապարակել է դարձյալ շուրջ երեք տասնամյակ անց՝ 29 տուն 119 շնչով⁷⁸⁶: Մակայն Հ. Քոսյանը բերում է նաև իր ժամանակի ցուցանիշները, երբ գրում է, որ հայերը <<ասկե քսան տարի յառաջ երեսուն տուն կը հաշուէին, սակայն այս օրս հազիւ 12 տուն մնացած են>>, այսինքն, վկայում է գաղթօջախի գրեթե լրիվ խամբելու մասին⁷⁸⁷:

Քուշադայի հայերը, պետք է կարծել, այսուհանդերձ, գոնե XVIII դ. սկզբին արդեն ունեցել են իրենց եկեղեցին: Հակառակ դեպքում, նրանք չէին կարողանա պահպանել իրենց դավանական ու ազգային պատկանելությունը հետագայում ևս: Չնայած Քուշադայի եկեղեցուն վերաբերող ամենաինչ տվյալը, որ մեզ հաջողվեց գտնել, վերաբերում է շատ ավելի ուշ շրջանի՝ 1781 թ., այնուամենայնիվ հուշում է այն միտքը, որ այդ գաղթօջախի հայերը դրանից առաջ էլ կարող էին ունենալ իրենց եկեղեցին: Նշված թվականի մի վավերագրում՝ իր տան վաճառքի մասին, այրի կին Մերիեմը հայտնում է, որ <<Ղուշատայում եղեալ մեր միւլք տունն վեց հարիւր դուրուշ ծախեցինք վասն եկեղեցի շինելոյ Ղուշատայ բնակեալ ժողովրդոց>>⁷⁸⁸:

Կառուցվել է արդյոք համայնքի հավաքած նյութական միջոցներով այդ եկեղեցին՝ հայտնի չէ, սակայն հայտնի է, որ XIX դ. առաջին կեսին Քուշադայում գործում էր Ս. Հովհաննես եկեղեցին, ինչը հիշատակում է Ղ. Ալիշանը, իսկ Մակար վարդ. այն հիշում է Ս. Աստվածածին անվամբ: Հ. Քոսյանն իր հերթին գրում է, որ Քուշադայի եկեղեցին <<13 տարուայ շինութիւն մ'է>>, և որ հին եկեղեցու մի պատկերի վրա՝ գրված 1831 թ., հիշատակվում է <<Ղուշատասու եկեղեցին>>⁷⁸⁹: Ամեն դեպքում,

⁷⁸⁶ Ալիշանեան Ղ., նշվ. աշխ., էջ 543: Վիճակագրություն, Արեւելեան մամուլ, 1879, թիւ 3, էջ 440: Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 115:

⁷⁸⁷ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 112: Դրանից շուրջ տասը տարի անց Քուշադայում հայերի տների թիվը էլ ավելի նվազ է ցույց տալիս Զմյուռնիայի հայկական թերթը՝ 10 տուն (Դաշինք, 1910, 10 ապրիլի):

⁷⁸⁸ Կավվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, կազմ. Աբրահամյան Ե., Ե., 1941, էջ 151:

⁷⁸⁹ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 112:

Քուշադայի եկեղեցին XIX դ. կարող էր նորոգվել, կամ կառուցվել ի նորո, նոր անվամբ հանդես գալ և այլն, սակայն խնդիրն այն է, որ Թուրնեֆորից հետո Քուշադայի հայերը պետք է որ ունեցած լինեին իրենց եկեղեցին և որ այրի Մերիեմի նվիրատվության ժամանակ (1781) կառուցվելիք եկեղեցին ամենևին էլ առաջինը չէր կարող լինել այդ համայնքի պատմության մեջ:

Չնայած Քուշադայի հայ համայնքի փոքրաթվությանը, (XIX դ. չի գերազանցել երեք տասնյակի չափ տները), այն զարմացնում է եկեղեցու եկամուտների անհամեմատ բարձր չափերով՝ 17.705 դուրուշ, որ երրորդ տեղն է գրավում Մակար վարդ. արձանագրած՝ Զմյուռնիայի կից շրջանների շուրջ 14 հայաբնակ բնակավայրերի մեջ Էռդեմիշի Ս. Հռիփսիմե (22. 300 դուրուշ) և Վերին Մանիսայի Ս. Լուսավորչյան (18050 դուրուշ) եկեղեցիների եկամուտներից հետո⁷⁹⁰, բնականաբար, իր կալվածքների և նվիրատվությունների շնորհիվ: Վերոհիշյալ վավերագրում ասվում է, որ տան վաճառքի գործարքը հաստատել է Զմյուռնիայում Քուշադայի համայնքի վեքիլ Թերզի Ղազարը, որ և վկայում է Զմյուռնիայի ազգակիցների հետ այդ բնակավայրի հայերի սերտ կապերի մասին (Քուշադայի հայկական գերեզմանատանը թաղված էին նաև զմյուռնացի հայեր, կարելի է կարծել՝ Քուշադայի նախկին բնակիչներ, ովքեր XIX դ. երկրորդ կեսին տեղափոխվել էին Զմյուռնիա): Կարելի է մակաբերել նաև, որ զմյուռնահայ վաճառականությունը լայնորեն օգտագործել է հին Սկալա Նովայի նավամատույցը՝ իր առևտրական գործարքների համար, ձեռք բերել այնտեղ կալվածքներ՝ դրանց մի մասը նվիրաբերելով Քուշադայի հայերին: Չհաշված այն, որ այստեղից Զմյուռնիա տեղափոխված հայերն իրենք էլ կարող էին նվիրատվություններ անել իրենց համայնքին:

ՄԵՆԵՄԵՆ ԵՎ ՍՅՈՔԵ: Հայ բնակչությունը ցրված էր Զմյուռնիայի շրջակայքի և Այդընի վիլայեթի բազմաթիվ գյուղերում ու բնակավայրերում, որի մասին ընդամենը կցկտուր տվյալների կարելի է հանդիպել մամուլում: Մասնավորապես Զմյուռնիայի հայ մամուլում տեղեկություններ են պահպանվել Մենեմենի և Սյոքեի նման գավառական քաղաքների հայ բնակչության մասին:

Մենեմենը հին հունական բնակավայրերից էր (Թեմնոս), այն կրել է տարածաշրջանին հատուկ անվերջ երկրաշարժերի հարվածները՝ քա-

⁷⁹⁰ Վիճակագրություն, էջ 440:

նիցս կործանվելուց և վերաշինվելուց հետո: Քաղաքը վերանվանվել է, դարձյալ ըստ հունարենի՝ Մենոմենոս (Հերմոս գետի անվանումներից մեկը)⁷⁹¹: Զմյուռնիայի <<Դաշինք>> թերթի թղթակիցը Մենեմենի հայ գաղթօջախի պատմությունը սկսում է XVII դարից՝ նկատելով, որ այստեղ հաստատված հայ հանրությունը <<Գաղատիոյ հսկա գաղութէն անջատուած հատուած մըն է: Էնկիւրիի Քառասնից մենաստանին ձեռագիրները այսօր (1901 թ.-Ա. Խ) Մենեմեն կը գտնուին>>⁷⁹²:

Մենեմենի համայնքը հռչակված էր իր Ս. Սարգիս <<հոյակապ եկեղեցիով>>, տպավորիչ՝ իր ճարտարապետական կառույցով և ընդարձակ չափերով: XIX դ. երկրորդ կեսից այն արդեն մարդոց համայնքի հակադրությունն էր կազմում՝ հուշելով երբեմնի թվաշատ հայ բնակչության բեկված պատմության մասին: Ս. Սարգիս եկեղեցին հիմնվել էր Մելքիսեթ կաթողիկոսի ժամանակ, հավանաբար, 1610-1620-ական թթ., գրեթե նույն ժամանակներում, ինչ Արմաշի վանքը: Այդ կաթողիկոսն ակտիվացնում էր Էջմիածնի ջանքերը՝ իբրև տերունի թեմերի, հովվական հովանու տակ առնելով Էգեյանի առափնյակով և կղզիներով մեկ սփռված հայ գաղթական բազմություններին: Դատելով եկեղեցու վեհությունից՝ Մենեմենում խմբված է եղել բավական ստվար գաղթականություն, իբրև XVII դ. առաջին քառորդին հատուկ տեղաշարժերի արդյունք, երբ փոքրասիական տարածքները ողողվել էին հայ գաղթականության նորանոր ալիքներով: Մենեմենում մի ժամանակ կային <<քահանաներու երամ, ստուար ժողովողեան դաս, իշխաններ, աղաներ, կալուածատերեր>>, գրում էր <<Դաշինք>> թերթը⁷⁹³: XVIII-XIX դդ. Մենեմենի բամբակի տնայնագործական, այնուհետև գործարանային արտադրության մեջ ընդգրկված էր նաև հայ համայնքը, հատկապես բամբակե գործվածքների արտադրության ոլորտում՝ գերազանցապես սպասարկելով բնակչության հասարակ խավերին. <<Չքաւորը,- գրում է այս առթիվ Թ. Ճերմակյանը,- կը գոհանար տեղական բամպակ կտաններով, որոնց այժմ Մենեմենի պէզ կամ բամպուք պէզի անունը կը տրուի>>⁷⁹⁴:

⁷⁹¹ Արշալոյս, Զմյուռնիա, 1908, 16 հունվարի:

⁷⁹² Դաշինք, Զմյուռնիա, 1911, 18 փետրվարի:

⁷⁹³ Նույն տեղում:

⁷⁹⁴ Ճերմակեան Թ., Աւանդական բարեգործութիւնը, Արշալոյս, 1908, 1 մայիսի:

Մենեմենի հայ բնակչությունը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, խոսում էր Զմյուռնիայի բարբառով⁷⁹⁵:

1840-ական թթ. Զմյուռնիային կից բնակավայրերի հայության ազգային կացությամբ մտահոգ <<Սյունյաց>> ընկերությունը Մենեմենում նույնպես, ինչպես Մանիսայում, Քասաբայում, Աքիիսարում, Քրքադաշում և այլուր, իր հովանու ներքո էր առել դպրոցների խնամարկման հոգսերը՝ նյութապես աջակցելով չորս տասնյակի չափ աշակերտների⁷⁹⁶: Այստեղ գործում էր Արամյան դպրոցը⁷⁹⁷:

1911 թ. Մենեմենը 15 հազարանոց բնակչությամբ քաղաք էր⁷⁹⁸, իսկ դրանից տասամյակներ առաջ, 1850-ականին, այստեղ մնացել էր ընդամենը 35 տուն հայ⁷⁹⁹: Տնտեսական դժվարությունների, XIX դ. առաջին կեսից Զմյուռնիայի՝ բամբակամշակման ոլորտում շատ ավելի հզոր մրցակիցների կամ նրանց դիմակայելու անկարողության պատճառով համայնքը սկսել էր մարել: Համենայն դեպս, XX դ. երկրորդ տասնամյակին Մենեմենի գաղթօջախը Էգեյանի շրջակայքի հայությանը առավելապես իրեն հիշեցնել էր տալիս Ս. Մարգիս եկեղեցիով, որտեղ տոնախմբության էին գալիս այդ սրբի կիրակին նշելու համար:

Ավելի խոստումնալից վիճակում չէր գտնվում Սյոքեի (Զմյուռնիայից հարավ) փոքրաթիվ համայնքը նույն ժամանակներում՝ 1910 թ. այստեղ հաշվվում էր ընդամենը 30 տուն հայ⁸⁰⁰: Մակար վարդ. դրանից շուրջ երեք տասնամյակ առաջ գրանցել էր 15 ընտանիք՝ 79 անձով⁸⁰¹: Նա ենթադրում է, որ այստեղ հայերն ապրում են 200 -250 տարի ի վեր, այսինքն, XVII դ. երկրորդ կեսից և պահել են իրենց լեզուն և սովորությունները⁸⁰²: Հ. Քոսյանն այստեղ հաշվում է 25 տուն՝ 150 անձով⁸⁰³: <<Սյոքեցի հայերը,- գրում է <<Դաշինքը>>,-Պարսկաստանի գաղթական-

⁷⁹⁵ Աճառյան Հ., Հայ բարբառագիտություն, հ. 6, էջ 239:

⁷⁹⁶ Տես Արշալոյս Արարատեան, 1846, 8 փետրվարի: Բիւզանդիոն, 1905, 4/17 օգոստոսի:

⁷⁹⁷ Դաշինք, 1910, 13 ապրիլի:

⁷⁹⁸ Turkey in Asia, p. 302.

⁷⁹⁹ Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրութիւն, էջ 547:

⁸⁰⁰ Դաշինք, 1910, 11 ապրիլի:

⁸⁰¹ Վիճակագրութիւն, Արեւելեան մամուլ, 1879, թիւ 3, էջ 440:

⁸⁰² Նույն տեղում, էջ 437-438:

⁸⁰³ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 106: Իր հավելվածում, սակայն, Հ. Քոսյանը այլ թվեր է նշում՝ 15 տուն, 70 անձով (նույն տեղում, էջ 11):

նութեան մնացորդներն են⁸⁰⁴>>: Հ. Քոսյանի նշած դամբանագրերում կան դափանցի, պարսկահայ՝ Խոյից, կարահիսարցիներ, կեսարացիներ: Սյոքեում բնակություն են հաստատել նաև Էգեյանի առափնյա վայրերի հայերից՝ Քուշադայից և Էոդեմիշից⁸⁰⁵: Հայտնի էր այս վերջինի Ս. Աստվածածին եկեղեցին, որը վերաշինվել կամ նորոգվել է 1818 թ.⁸⁰⁶: Տեղի հայերը զբաղվում էին առևտրով և արհեստներով, մի մասը XX դ. սկզբներին ընդգրկված էր հալվայի ու ձիթապտղի վերամշակող արտադրության մեջ: <<Դաշինքը>> իր հերթին, 1910 թ. նշում էր, որ Սյոքեում մնացել է ընդամենը 20 տուն հայ, որոնցից միայն 6-7-ն էին տնտեսապես բարվոք վիճակում, իսկ <<մնացածը խեղճուկրակ գործաւորներ են>>⁸⁰⁷:

Եվ Մենեմենի, և Սյոքեի փոքրաթիվ հայ համայնքները, ինչպես և Էգեյանի շրջանի ամբողջ հայ բնակչությունը, պետք է գոյատևեին մինչև տարածաշրջանի քրիստոնյա համայնքների վախճանը:

Եզրափակելուց առաջ ավելացնենք, որ հայ բնակչությունը վերոհիշյալ քաղաքներով ու բնակավայրերով չէր սպառվում: Առհասարակ ուսումնասիրողների, այդ թվում և մեր ուշադրությունից դուրս են մնացել քաղաքներին կից գյուղական շրջանները, որտեղ կային զգալի թվով հայկական համայնքներ և որոնց մասին պահպանվել են ընդամենը հատուկենտ տեղեկություններ: Կարելի է ասել միայն, որ դրանք ևս գոյատևեցին մինչև 1922 թ. սեպտեմբերի արհավիրքը:

2. Հողագործությունը և արհեստները Էգեյանի համայնքներում

Աշխարհագրական բարենպաստ դիրքի և դրան մեծապես առնչվող առևտրի ու արհեստների բարձր մակարդակի շնորհիվ Զմյոտնիան և կից տարածաշրջանն ապահովեցին իրենց տնտեսական առաջնակարգ նշանակությունը ամենատարբեր դարաշրջաններում: Բյուզանդական կայսրության, սելջուկների ու դրանց ժառանգորդ բեյությունների և Օսմանյան կայսրության տիրապետության պայմաններում այստեղ կարևոր դերակատարություն ունեցավ Ասիայի և Եվրոպայի միջև ապրանքափոխանակության գործոնը, որի շնորհիվ Զմյոտնիան պահպա-

⁸⁰⁴ Դաշինք, 1910, 11 ապրիլի:

⁸⁰⁵ Քոսեան Յ., նշվ. աշխ., էջ 109:

⁸⁰⁶ Նույն տեղում, էջ 106:

⁸⁰⁷ Դաշինք, 1910, 19 մայիսի:

նեց միջազգային նավահանգստի իր տեղն ու դիրքը՝ անկախ իր տիրողների իշխանության բնույթից կամ ցեղային պատկանելությունից: Քաղաքակրթությունների հերթագայումը չկասեցրեց Ձմյուռնիայի առևտրական խոշոր հանգրվանի գործառության արժեքը, ընդհակառակը, հենց քաղաքակրթությունների մերձեցման ու զարգացման ներքին տրամաբանությունն էր մղում նրանց փոխազդեցությանը նաև տնտեսական հարաբերությունների կտրվածքով: Այստեղ փոքրասիական տարածաշրջանին և Ձմյուռնիային վերապահված էր շարունակական գործառույթ արևելքի և արևմուտքի ապրանքափոխանակության իրացման անհրաժեշտությամբ: Մի հայտնի չափով, կարելի է կարծել, փոքրասիական այս տարածքներին էր պարտական Բյուզանդական կայսրությունը՝ խաչակիրների հարվածներից հետո իր տարածքները (մայրաքաղաք Կոստանդնուպոլսով հանդերձ) կորցնելուց հետո և հանգրվանելով Նիկիայում (1204-1261)՝ ժամանակ շահելու իր պետական վերածնության համար: Այս տեսակետից ուշագրավ է, որ Նիկիայի ինքնակալ Միքայել Պալեոլոգը Բյուզանդական կայսրությունը վերականգնելու գործում Ջենովայի աջակցության դիմաց, ի թիվս այլ առևտրատնտեսական արտոնությունների, խոստացել էր նրան տրամադրել Ձմյուռնիան՝ իր նավահանգստով⁸⁰⁸:

Փոքրասիական հումքի և եվրոպական արտադրական արդյունքների, ինչպես և թանկարժեք քարերի ու մշակված մետաղների փոխանակության պահանջարկը զգալի չափով դրսևորվում էր միջերկրածովյան ավազանում՝ միմյանց փոխարինող սելջուկների, թուրքացեղ տիրակալների, ինչպես և եվրոպական տերությունների միջև բախումներով առևտրական ու քաղաքական ազդեցություն նվաճելու համար: Իրենց հերթին, բյուզանդացիները XII դ. վերջին և XIII դ. խոչընդոտում էին սելջուկների առաջարժմանը դեպի Էգեյան ծով: Ե. Լուդշովեյտը նկատում է, որ այդ պատվարն ընդգրկում էր Ձմյուռնիան, Սարդի (Սալեիլի), Փիլադելփիա (Ալաշեհիր) և Եփեսոս (Այալուք) քաղաքներն ու դրանց կից տարածքները, որոնք մնում էին իրենց՝ բյուզանդացիների իշխանության ներքո⁸⁰⁹: Ջենովացիները, որ XIII-XIV դդ. իրենց հատկապես ինքնավատահ էին զգում հենց այս տարածաշրջանում, մանավանդ Բյուզանդական կայսրության ժամանակավոր անկումից հետո, փորձում էին ամրապնդել իրենց ներկայությունը Մանիսայում, Ձմյուռնիայում և հարա-

⁸⁰⁸ Васильев А. А. Латинское владычество на Востоке, с. 37.

⁸⁰⁹ Гордлевский В. А. Избр. соч., т. 3, с. 114.

կից շրջաններում: Նույն ժամանակաշրջանում Ջենովան իր թաղամասերը կամ առևտրական կայաններն ուներ Բյուզանդական կայսրության ճանաչված տնտեսական կենտրոններում, այդ թվում՝ Կ. Պոլսում, Զմյուռնիայում և Էգեյանի կղզիներում (Էվբեյա, Լեսբոս)⁸¹⁰:

Նույն իրողությանն ենք հանդիպում Փիլադելֆիայում՝ XII դ. վերջին, որտեղ բազմամարդ այդ քաղաքի առևտրական հրապարակում կարևոր դիրք ունեին Ջենովայի մրցակից Վենետիկի վաճառականները⁸¹¹:

Իտալական վաճառականների և առևտրի առկայությունը փոքրասիական տարածքներում զարգացման ազդակներ էր տալիս վերջինիս սահմաններում գյուղատնտեսական հումքի և դրա վրա հենվող տնայնագործական արտադրության զարգացմանը: Այստեղ, ի թիվս այլ արտադրատեսակների, կարևոր նշանակություն ստացավ մետաքսի արտադրությունը, որն իր հերթին ավելի գործունակ էր դարձնում Զմյուռնիայի նավահանգստային դերը: Զմյուռնիայից դեպի Կ. Պոլիս և եվրոպական շուկաներ առաքվող մետաքսը XIV դ. աշխուժացրեց Զմյուռնիա-Այապոլս-Պալատիա առևտրական բանուկ ուղին: Փոքրասիական մետաքսի և դրա մշակման գործում ակնհայտ էին Փիլադելֆիայի և Պալլքեսերի մետաքսագործական⁸¹², և դրան զուգահեռ, միջազգային ճանաչում ստացած՝ մշակվող բամբակագործական արդյունքները: Բամբակագործական հումքի հետագա մշակումը, մանածագործությունը և արտադրանքի ներկումը, որ հայտնվեց մասնագիտական կենտրոնացման և վերահսկողության ասպարեզում՝ XVII⁸¹³, իր հիմքում ուներ դեռևս բեյությունների, եթե չասենք էլ ավելի վաղ ժամանակների արհեստագործական արտադրությունը:

Էգեյանի հայկական համայնքները իրենց գոյության համար պարտական էին հողագործությանն ու արհեստագործությանը: XV դ. սկսած, սրանցից հատկապես առաջինը հենվում էր հողի օսմանյան սեփականատիրական համակարգի վրա, որի թեկուզ և թռուցիկ բնութագիրն այստեղ անհրաժեշտ ենք համարում այդ համայնքների կեցության պայմաններին ծանոթանալու տեսակետից:

Օսմանյան կայսրության տարածքներում, այդ թվում և փոքրասիական շրջաններում, հողի սեփականատիրական ձևերի մեջ առանձնաց-

⁸¹⁰ История Византии, т. 3, с. 114.

⁸¹¹ Steu Горюнов Б. Т. Поздневизантийский феодализм, с. 289.

⁸¹² Uzunçarşılı I. H. Anadolu Beylikleri, s. 198.

⁸¹³ Тодоров Н. Балканский город XV-XVI веков, с. 253.

վում է թիմարը, որպես պետական ռազմավարչական և տնտեսական համակարգը բնութագրող գործոն: Իր լայն ընդգրկումներով թիմարը ներառում էր գյուղատնտեսական ապրանքներ ստեղծող ազգաբնակչության ամենալայն շերտերը, որչափով թիմար էին համարվում մինչև 20 հազար արծե եկամուտ բերող կալվածքները՝ փաստորեն մանրապրանքարտադրողների զանգվածից մինչև միջակ սեփականատերերը: Թիմարը հողի պետական սեփականատիրական հիմնական ձևն էր կայսրությունում, որից ստացվող եկամուտները պետական զանձարան էին մտնում հողը մշակող կամ տնօրինող թիմարատերերից ստացվող հարկերի միջոցով: Թիմարը, ինչպես և զեամեթը (20-100 հազար արծե եկամուտ տվող կալվածքներ) պետության կողմից ռազմահողատիրական խավերին սրանց ծառայությունների պայմանով տրված հողերն էին, որոնք համարվում էին պետական սեփականություն⁸¹⁴: Եվ որպես այդպիսին, պետությունը կարող էր հետ վերցնել թիմարը, եթե թիմարատերը չէր կատարում շնորհված հողի դիմաց իր ստանձնած պարտավորությունները: Ճիշտ նույն կերպ, թիմարատերը կարող էր գրկել ռայային հողից, եթե որոշակի տարիների ընթացքում նա չէր մշակել իրեն հատկացված հողամասը: Օսմանյան պետության ռազմական ու տնտեսական զորությունը պետք է թուլանար, ի թիվս ռազմական ու քաղաքական տարբեր պատճառների, նաև նշված պարտավորությունների չիրականացման հետևանքով, երբ հողատերերը (թիմարի և զեամեթների տերեր) ի գործու չէին ռազմական որոշակի ուժեր տրամադրել օսմանյան բանակին: Թիմարը վարձակալող գյուղացու աշխատանքի ցածր արտադրողականությունը և դրա հետ կապվող՝ օսմանյան ռազմական ուժի և հետևաբար նվաճումների ձախողումը XVI դ. 2-րդ կեսից պետք է հանգեցնեին պետական սեփականության և հողօգտագործման այդ ձևի քայքայմանը: XVI դ. վերջին սկիզբ առած ջալալիների ապստամբության պատճառներից մեկը պետք է որոնել հողօգտագործման ձևերի ոչ կենսունակության, այլև այլասերման ու հողի սեփականության բնեղացման հետ, որ Օսմանյան Թուրքիայում հասցրել էր եկամուտների վերաբաշխման անհրաժեշտությանը՝ սրանից բխող բոլոր հետևանքներով: Կարելի է կարծել, սակայն, որ թիմարի նշանակության նվազումը դեռևս օսմանյան ռազմատնտեսական համակարգի փլուզում չէր նշանակում: Վերն ասվածը հիմնականում վերաբերում է հողի սե-

⁸¹⁴ Тверитинова А. С. О домениальном землевладении феодалов-ленников в Османской державе в XV-XVI веках, с. 314.

փականատիրական ձևերի ներքին, որակական տեղաշարժերին, որոնք իրենց հերթին կապված էին օսմանյան հասարակության ներսում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Վերջիններս հասցնում էին նաև դրական արդյունքների՝ երկրի ամբողջ տնտեսության մակարդակով և հազիվ թե այս դեպքում խոսք կարող է լինել Օսմանյան Թուրքիայի տնտեսության ընդհանուր քայքայման մասին: Գյուղական շրջաններից դեպի քաղաքներ, այդ թվում և փոքրասիական քաղաքներ գրեթե չընդհատվող հոսքը նպաստում էր բնակչության քանակական աճին, հարկային քաղաքականության մեղմացմանը և արհեստների ու արհեստագործական արտադրության աշխուժացմանը, ինչպես և ապրանքափոխանակության ընդլայնմանը: Անատոլիական շրջաններում դեռևս XVI դ. երկրորդ կեսին քաղաքային բնակչության աճը հասել էր 70 տոկոսի⁸¹⁵: Այսուհանդերձ, հայ գաղթականների մի զգալի մասը, անգամ ոչ մեծ քաղաքներում, ընդգրկված էր գյուղատնտեսական արտադրության ոլորտում. հայրենիքում կապված լինելով հողի մշակության հետ, նրանք պետք է ձգտեին գյուղատնտեսական շրջաններ: Նրանք ընչագուրկներ չէին, և, ինչպես տեսանք, ըստ մեծի մասին՝ կամավոր գաղթականներ, որոնք ձեռնարկելով հողագործական արտադրության, Օսմանյան Թուրքիայում իրավականորեն ազատ էին և, չհաշված թիմարի ու սեփականատիրական այլ ձևերի հարկային կաշկանդող պարտավորություններին, չէին ամրացվում հողին: Հայկական համայնքները շուկա էին հանում իրենց հողագործական արդյունքները, այգեգործական ու բանջարաբուստանային ամենատարբեր բերքեր՝ մասնակցելով գյուղատնտեսության ու առևտրի սերտաճման գործընթացին և տանելի պայմաններ ստեղծելով իրենց կեցության մեջ:

Հայ գաղթականներն էգեյանի առափնյակում, համենայն դեպս, XIV-XVII դդ. ընթացքում (եթե նկատի ունենանք Կիլիկյան թագավորության անկումից հետո մինչև Շահ Աբասի՝ գաղթերի ժամանակաշրջանը), ընդգրկված էին գյուղատնտեսական արտադրության մեջ և հարկերի օսմանյան համակարգում: Օսմանյան Թուրքիայում հողատիրական-իրավական երեք հիմնական ձևերի մեջ էին մտնում պետական հողերը (թիմար, գեամթթ), որոնք շնորհվում էին ռազմահողատիրական ծառայության պայմաններում և պետական ծառայության դիմաց (հաս), մասնավոր սեփականությունը (մյուլք) և կրոնական ու բարեգործական

⁸¹⁵ Петросян Ю. А. Османская империя, с. 149.

հաստությունների սեփականությունը (վակֆ)⁸¹⁶: Առավել տարածված սեփականատիրական ձևը վերջինն էր՝ վակֆը: Այն մահմեդական հոգևորականության տիրության ձևն էր, և որպես այդպիսին, կարող էր լինել հողամասեր, տներ, խանութներ և այլ անշարժ գույք, որոնք կտակում էին կրոնական հաստատություններին և որոնց շնորհիվ կտակարարը և ապա նրա ժառանգները շարունակաբար ստանում էին եկամտի մի որոշակի մասը⁸¹⁷: Վակֆատերն այսպիսով, թեկուզ և մասնակիորեն, հանդես էր գալիս որպես բաժնետեր՝ կրոնական հաստատության հետ միասին, փոխարենը իր և իր զավակների համար ապահովելով մի եկամուտ⁸¹⁸, որը կայուն և հուսալի բնույթ ուներ, որչափով վակֆը, որպես սեփականություն, այս դեպքում սրբազան էր և անօտարելի: Իրենք՝ վակֆի տերերը, թեև ձևականորեն սեփականատեր չէին դիտվում, սակայն իրավունք ունեին կառավարել վակֆային սեփականությունը⁸¹⁹: Վակֆ անողը կադիի հաստատմամբ նշանակում էր վերակացու (մյութելի կամ վեֆիլ), որը պետք է վերահսկեր վակֆային սեփականության բոլոր գործերը՝ ընդհուպ մինչև տարեկան հասույթը ժառանգորդին (գլխավորապես կրոնական հաստատություն) հասցնելը⁸²⁰: Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1780-ականի սկզբներին, գնըքցի մահտեսի Վարդումը իր կնոջ հետ հոգեբաժին դրամ էր հատկացրել (130 դուրուշ) Ս. Աթոռին: <<Նաեւ զիւրեանց կացարան տունն եւս արարեալ էին վախույ Սրբոյ Աթոռոյս հաստատուն թղթով եւ պայմանեալ էին եւս զի որքան են ինքեանք կենդանի եւ կան ի վախույ արարեալ (վակֆի վերածած-Ա. Խ.) տանն այսմիկ ի կողմանէ նորին ի տարին զԳ (3) դուռուշ դրամ քիրայ տացեն Սրբոյ Աթոռոյ>>⁸²¹:

⁸¹⁶ Ств Тверитинова А. С., նշվ. աշխ., էջ 314: Зулалян М. К. Западная Армения в XVI-XVII вв., с. 28.

⁸¹⁷ Այդընի, Մանիսայի և Կարամանի հողերը XV-XVII դդ., անգամ բեյությունների վերացումից հետո, պատկանում էին Սարոխան օղլուներին՝ իբրև ժառանգական վակֆեր: Պահպանվել են նրանց նվիրաբերած վակֆերի վավերագրերը՝ թվագրված 1462, 1547 թթ. և այլն (տես Аграрный строй Османской империи, с. 163-164):

⁸¹⁸ Ств Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 143:

⁸¹⁹ Новичев А. Д. История Турции I, с. 55.

⁸²⁰ Inalcik H. The Ottoman Empire, p. 142.

⁸²¹ Դիվան հայոց պատմության, Գիրք Առաջին, Ղուկաս Կարնեցի, էջ 333:

Աղբյուրների չգոյությունը կամ այդպիսիների՝ մեզ անմատչելի լինելը հնարավորություն չի տալիս բացահայտելու, թե սեփականատիրական որ ձևի կամ ձևերի պատկանող հողերն են մշակել հայկական համայնքները փոքրասիական արևմուտքում: Նկատենք, որ սեփականատիրական տարբեր ձևերի պայմաններում թիմարի և վակֆի հետ միասին տարածված էր նաև մյուլքը՝ իբրև մասնավոր սեփականություն: Անկախ այս ամենից, կարելի է կարծել, որ հայերն այստեղ մշակել են և պետական, և մասնավոր սեփականության, և կրոնական ու բարեգործական հաստատությունների սեփականություն հանդիսացող հողերը⁸²², որ չենք կարող որոշակիացնել՝ առանց արխիվային համապատասխան վավերագրերի: Համենայն դեպս, անկախ սեփականատիրական ձևերից, որոնցից յուրաքանչյուրը ավատատիրական հարաբերությունների մի որոշակի բնագավառ էր ներկայացնում, հողի մշակությունը փոխհատուցվում էր պետականորեն ամրագրված հարկերով, որոնք XV-XVI դդ. ուղեկցվում էին կոռային և պարհակային աշխատանքներով, որպիսիք տնտեսական հարկադրանքի ձևեր էին՝ ծանրացած գյուղացիների վրա և հոգուտ հողատիրոջ:

XVI դ. թիմարի տեղատվության հետևանքով օսմանյան հասարակության մեջ ծայր են առնում ավատատիրական հարաբերությունների փոփոխությունները, որոնք խորհրդային պատմաբանների կարծիքով պետք է հասցնեին սոցիալական կատակլիզմների՝ կտրուկ ձևով դրսևորվելով գյուղացիական ապստամբությունների տեսքով: Կարելի է ենթադրել նաև, որ թիմարի փլուզումը կապվում էր ոչ միայն տնտեսական հարաբերությունների ոչ արդյունավետության, այլև Օսմանյան Թուրքիայի ռազմական հաջողությունների վախճանի հետ: Կայսրության սահմանների ընդարձակման կասեցումը չփոխհատուցվեց հողօգտագործման և արդյունաբերական արտադրության ներուճակ (ինտենսիվ) զարգացմամբ՝ աննախընթաց չափերի հասցնելով այդ երկրի տնտեսական հետամնացությունը եվրոպական երկրների համեմատությամբ: Այդ հետամնացությունը հարատևում էր նաև հարկային համակարգի կարծրացած (ստագնատիվ) վիճակի հետևանքով, որ XVI-XVII դդ. հիմնականում պահպանել էր սելջուկների ժամանակների վաղ ավատատիրական ասիական հարկման համակարգի ավանդական

⁸²² Ա.Ս. Տվերիտինովան հողի նկատմամբ լրիվ սեփականության ձևեր է համարում մյուլքը, մալիքյանեն և տնային կամ ժառանգական վակֆերը (տես Тве-ритинова А. С. О домениальном землевладении в Османской державе, с. 314):

կամ հիմնական կողմերը, և մյուս կողմից, իր տեղական դրսևորումներով ու առանձնահատկություններով ավելի շատ նպաստում էր օսման-յան կենտրոնախույս ավատատերերի տնտեսական անկախությանը՝ պետությանը զրկելով գյուատնտեսության և արտադրության զարգացմանն ուղղված միասնական հարկային քաղաքականությունից:

Ինչպես ամենուրեք, մեզ հետաքրքրող տարածաշրջանում գյուղացու հողօգտագործման իրավունքը սկսվում էր հողատիրոջը տրվող դրամական հատուցմամբ: Որոշակի վճարի դիմաց հողագործ ռայան հողատեր սփյահիից կամ պետությունից (հողի սեփականատիրոջից) ստանում էր հող մշակելու իրավունքը հաստատող վկայագիր՝ **թափու**, որով իրավականորեն ամրագրում էր իր վարձակալությունը: Թափու արված հողը ժառանգաբար անցնում էր սերունդներին: Այդնի լիվայում ագրարային հարաբերությունների և հատկապես մեզ հետաքրքրող հարկերի վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր են Ա. Ս. Տվերիտինովայի հրատարակած փաստաթղթերն ու վավերագրերը, որոնք լույս են սփռում հարկերի տեսակների ու չափերի, դրանց հիմքում ընկած հողի բերրիության որակների և այլնի վրա: Իր վարձակալած հողահանդակի (չիֆթի) դիմաց ռայան վճարում էր րեսմ-ի չիֆթ հարկը, որի մեծությունը կախված էր այդ հողահանդակի չափերից⁸²³: Այս հարկը սովորաբար վճարվում էր մարտ ամսին, այսինքն, գարնանացանից առաջ: Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ թեև Այդնի լիվայում հողը շատ թանկ էր (ինչպես ասվում է օրենքներից մեկում)⁸²⁴, այսուհանդերձ, այն հրապուրում էր հայրենիքը հարկադրաբար թողած հողագործ, այդ թվում և հողագործ հայ գաղթականներին հենց այն իրողության համար, որ այստեղ ազատ հողեր շատ կային, որոնք կարելի էր վարձակալել, ինչպես տեսանք, րեսմ-ի չիֆթ վճարելով: Գաղթականներին ձեռնտու էր նաև այդ լիվայի այն օրենքը, ըստ որի, արգելվում էր քաղաքացիների ու գյուղացիների անասունների համար թողնված հողի մշակումը:

⁸²³ Չիֆթիք էր համարվում լավագույն հողի 60, միջակ հողերում՝ 80, ավելի պակաս բերրի հողերում՝ 130-150 դոնյումը (1 դոնյումը հավասար էր, երկայնքով ու լայնքով՝ 40 քայլի) Տես Аграрный строй Османской империи, с. 46, 99; Книга законов султана Селима I, с. 76. Ռայան, ընդամին, կարող էր վարձակալել մեկ լրիվ չիֆթից ավելի հող, որի համար պետք էր վճարել լրացուցիչ հարկ՝ դոնյում աքչեսի. <<Այդնի լիվայում, - ասված է օրենսգրքում, - այդպիսի հողատերեր շատ կան>> (նույն տեղում, էջ 48):

⁸²⁴ Նույն տեղում, էջ 46:

Անասնապահական շրջաններից գաղթած մարդկանց համար այդ նույնպես լրացուցիչ հնարավորություն էր տալիս քաղաքում բնակվելով հանդերձ, անասնապահությամբ կարգի բերել իրենց տնտեսությունը՝ անծանոթ, և դրանով իսկ տագնապ ներշնչող օտար վայրերում: Ինչ-որ չափով կարգավորված էր բերքը գյուղական շրջաններից քաղաքի շուկա փոխադրելու խնդիրը, որ դարձյալ կարևոր էր բերքը իրացնելու համար: Այսպես, հայտնի էին Այսալուքի և Զմյուռնիայի արվարձաններում բնակվող արաբ-բուգուրջիները (ուղտապաններ)⁸²⁵, որոնք իրականացնում էին այդ գործառույթը՝ սպասարկելով բերքի կամ վաճառվող այլ ապրանքների փոխադրությանը:

Գյուղատնտեսական արդյունքների՝ ցորենի գարու, անասնակերի, բամբակի, ձիթապտղի և բանջարանոցային ու այգեգործական այլ արտադրանքների համար ռայայից գանձվում էր **ուշր** (եռշուր, հոգնակի՝ աշար) կոչվող եկամտահարկը՝ բերքի 1/10 մասը, որ տրվում էր հողի սեփականատիրոջը: Ուշր էր հարկվում նաև ջրաղացից (ամբողջ տարին գործելու դեպքում՝ 60 աքչե, կես տարին՝ 30 աքչե, էլ ավելի պարապուրդի դեպքում՝ ամսական 5 աքչե), ավելի պակաս չափերով՝ հողմաղացից և ձիթհանքից⁸²⁶:

Այդընի լիվայում գործառում էր ամուսնական հարկը՝ **րեսմ-ի գերդեքը**, ինչպես առհասարակ ամբողջ Օսմանյան կայսրությունում. ռայայի կույս աղջկա համար՝ 60 աքչե, այրու համար՝ 30 աքչե: Այն տրվում էր հողատիրոջը, ում հողի վրա ապրում էր տղամարդը⁸²⁷:

1610-ական թթ. դեպի Էգեյականի առափնյակ ուղղվող հայ գաղթականության հոսքի համար հուսադրող նշանակություն ունեցավ օսմանյան պետության որոշ փոփոխված քաղաքականությունը գյուղական շրջանների նկատմամբ: Սաստկացել էին հողատերերի կողմից գյուղացիների անխնա շահագործումը, հատկապես ոչ լիարժեք հանդակներից ամբողջական հանդակների չափով հարկեր քանելու չարաշահումները: Գյուղացիների հողագրկման երևույթները ինչ-որ չափով սահմանափակելու, ինչպես և մայրաքաղաքում ու մեծ քաղաքներում ապաստանած գյուղացիներին իրենց բնակության նախկին վայրեր վերադարձնելու նպատակով պայմաններ ստեղծվեցին մատչելի գներով նրանցից խլված հողերը հետ տալու, հողագործության աշխուժացումն ապահովելու

⁸²⁵ Նույն տեղում, էջ 51:

⁸²⁶ Նույն տեղում, էջ 49:

⁸²⁷ Նույն տեղում, էջ 51:

համար: Ջալալիների ապստամբությանը պարտության մատնելուց անմիջապես հետո, 1610-1611 թթ. ցորենի գներն իջան 1595 թ. մակարդակին, այսինքն ապստամբությանն ընդհուպ նախորդող ժամանակաշրջանի չափերին⁸²⁸: Այս, ինչպես և Այդընի լիվայում ազատ թիմարների առկայությունը⁸²⁹, որի մասին խոսվեց վերը, ազդակ դարձան հայ գաղթականության տեղաշարժին՝ դեպի փոքրասիական տարածաշրջան:

XVI դ. 2-րդ կեսին օսմանյան պետության հարկային ծանր համակարգը քիչ ազդեցություն չունեցավ գյուղացիական տնտեսությունների արտադրական կարողությունները սահմանափակելու համար: Այդպիսիք էին պետական հարկերի չափերի մեծացումը և արտակարգ հարկեր սահմանելը, որոնց մեջ իր հաճախականությամբ առանձնանում էր **ավարիզ-ի դիվանիյե** (կամ **թեքյալիֆ-ի դիվանիյե**) հարկը: Այն պետք է գանձվեր պատերազմական պայմանների բերումով, բայց կայուն չափ չունենալով՝ կարող էր պարտադրվել մեկից ավելի անգամ, ընդամին, ռայաները պետք է վճարեին ըստ տվյալ բնակավայրի հարկացուցակներին լրիվ համապատասխան, կնշանակի՝ փախստական գյուղացիների փոխարեն ևս⁸³⁰: Տարեկան ապօրինաբար գանձվող արտակարգ հարկերից էր **սուրսաթը**, որ բնակչությունից քանում էին նույնպես պատերազմների ժամանակ՝ շատ ավելի ընչաքաղց դարձած օսմանյան պաշտոնյաները: Նիկիայի ժողովուրդը, գրում է Գրիգոր Դարանաղցին, սուլթանին բողոքել էր տեղի կադիից, որը <<մեծ հարկապահանջությւն է դրած ի վերաներս ամենայն երկրովք՝ սուրսաթ անուն>>, հարկ, որը <<ահա երեք անգամ կու լինի, որ կառնե>>⁸³¹:

Այդընի լիվայում հարկվում էր **խարաջ**, որպես բերքի վրա դրված տարեկան հարկ՝ կայուն կամ փոփոխական բնույթով⁸³²: Վերոհիշյալ կանոնադրությունում ասված է, որ նախկինում այգիներից խարաջ է վերցվել՝ դոնյումից 6 աքչե չափով, որը հետագայում փոխարինվել է բերքի 1/10 մասի՝ ուշրի գանձումով, 11 աքչե՝ դոնյումից⁸³³: Հարկի գրեթե

⁸²⁸ Петросян Ю. А. Османская империя, с. 179.

⁸²⁹ Аграрный строй Османской империи, с. 52.

⁸³⁰ Новичев А. Д. Турция, ч. I, с. 120-121.

⁸³¹ Ժամանակագրությւն Գրիգոր Դարանաղցու, էջ 569:

⁸³² Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, էջ 637:

⁸³³ Аграрный строй Османской империи, с. 51. Մ. Ջուլպյանը նկատում է, որ խարաջը հասկացվում է ջիզլեյի՝ գլխահարկի իմաստով (Ջուլպյան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, էջ 97):

կրկնապատկումը վկայում էր ոչ միայն հարկային պարտավորությունների ուժեղացման, այլև արջեի շարունակական արժեգրկման մասին: Բուն ջիզեն՝ ոչ մահմեդականներից գանձվող գլխահարկը, նույնպես փոփոխական բնույթ ուներ և դրա չափը մեծանում էր⁸³⁴ նույն այն պայմանների թելադրանքով, որ նշեցինք վերը:

Այլ հարկերի առկայությամբ ևս, որոնց տարատեսակներով այնքան խճողված է օսմանյան հարկային ցանցը, հիմնականում սրանք էին այն հարկերը, որոնք վճարել են էգեյանի առափնյա տարածքի օսմանյան հպատակները, այլև հայ գաղթօջախները XVI-XVII դդ.: Վերջիններիս սոցիալական ու տնտեսական կյանքի վրա բավական լույս են սփռում նաև գյուղատնտեսական ապրանքներից գանձվող հարկերի չափերը այս ժամանակաշրջանում: Ինչպես երևում է XV-XVI դարերում գործող Այդընի և դրա վարչական տարածքի մի կանոննամեից, շուկայական հարկերը ստացել էին հավասարակշռված և կայուն տեսք և իրենց ոչ մեծ չափերով նպաստում էին տնտեսական ապրանքների շուկայական շրջանառությանը և ի վերջո, այդ ապրանքների արտադրության ընդլայնմանը: Կանոնակարգվում էր նաև այն ապրանքների վաճառքը, որոնց սպառումը սահմանափակվում կամ արգելվում էր արտահանման բնագավառում: Այդպիսիք էին հացահատիկը, բամբակը, աղը և այլ ապրանքներ⁸³⁵, որոնց գանգվածային պահանջարկը արտադրական համապատասխան չափերով չէր բավարարվում երկրի ներսում կամ այս կամ այն չափով ընդլայնվում էր՝ արհեստագործական արտադրանքը հումքով ապահովելու թելադրանքով: XVI դ. քաղաքային բնակչության աճը, այդ թվում և փոքրասիական տարածքներում, իր հերթին նպաստում էր ապրանքադրամական հարաբերությունների ընդլայնմանը և գյուղատնտեսական շրջանների արտադրական կարողությունների զարգացմանը, որ, սակայն, կաշկանդվում էր հարկերի բարձրացմամբ: XVI դ. վերջին և XVII դ. սկզբին, ինչպես նկատում է Մ. Ջուլալյանը, 25 անգամ բարձրացել էին պետական և արտակարգ հարկերը, ավելացել էր նաև քրիստոնյաներից գանձվող ջիզեյի չափը⁸³⁶: XVII-XVIII դդ. Այդընի վիլայեթի գավառական շրջաններում հաստատված հայ գաղթականների քանակը, կարելի է եզրակացնել, իր չափերով պետք է որ նվազ լիներ, քան քաղաքներում (Ձմյուռնիա, Մանիսա, Այդըն, Էդդեմիշ) ապաստա-

⁸³⁴ Ջուլալյան Մ., նշվ. աշխ., էջ 97:

⁸³⁵ Петросян Ю. А. Османская империя, с. 153.

⁸³⁶ Ջուլալյան Մ., նշվ. աշխ., էջ 126:

նած ազգակիցներին: Մյունիքից, Ղարաբաղից, Արարատյան հարթավայրից և Արևմտյան Հայաստանից եկած գաղթականների մի նշանակալի մասը, իբրև հողագործներ, ձգտում էին իրենց առօրեական զբաղմունքին՝ գյուղատնտեսական արտադրությանը, ուստի բնակության համար նախընտրում էին գյուղատնտեսական բնակավայրերը:

Մենք հակված ենք կարծելու, որ Էգեյանի առափնյակի հայ համայնքները մշակել են սեփականատիրական տարբեր ձևերի պատկանող հողահանդակներ, այդ թվում և հիմնականում՝ վակֆատերերի հողերը: Հայտնի են Էջմիածնին պատկանող վակֆ արած տներ, այգիներ, խանութներ և այլ կալվածքներ, որոնք նվիրատվություն էին արել Մայր աթոռին Ջմյուռնիայի թեմի անհատները: Այդ նյութական արժեքները որոշյալ եկամուտներ էին բերում Մայր աթոռին, որը հանդես էր գալիս որպես վակֆատեր: Ջմյուռնիայի թեմի տարածքներում Էջմիածնապատկան վակֆ կալվածքների խնդրի վրա բավական լույս է սփռում Մաշտոցյան Մատենադարանում պահվող մի անթվակիր փաստաթուղթ՝ <<Աթոռու Էջմիածնայ Իզմիրու վախֆ տուներուն տարեկան իճարենները (վարձերը-Ա. Խ.)>> վերտառությամբ: Այստեղ նշված են անշարժ գույքի անունները, դրանց վարձակալները և վարձի չափերը: Ահավասիկ՝ <<Պասմաճի Վարդանի պարտեզեն՝ 50 դրշ, Տոմուղլու սոխախ (փողոցի անվանումն է-Ա. Խ.) սազլը (սազ նվագող-Ա. Խ.) յոյն՝ 43,20 [դրշ], Մեծ տէր Կարապետի տուն՝ 40 դրշ, Շաքարեան աղայի Ստեփանին տուն՝ 35 [դրշ]>> և այլն⁸³⁷: Փաստաթղթում նշված են երեք տասնյակից ավելի տներ Ջմյուռնիայում, ևս մեկական տուն Էդդեմիշում և Բայանդըրում: Այս փաստաթուղթը ընդամենը մեկ հատվածն է այն ավելի ընդարձակ տեղեկատվության, որ տալիս էր Մայր աթոռի սեփականությունների վերակացու Թ. Չելիկը Ներսես կաթողիկոսին գրած իր նամակում (1852, 16 մայիսի)⁸³⁸: Նամակից պարզվում է նաև, որ Էջմիածինը, ինչպես և Ս. Թադեի վանքը (Ուչքիլիսե) ձիթենու այգի ունի Էդդեմիշում, արդեն <<յօտարի ձեռն>> անցած այգի՝ Բայանդըրում և այլն: Հիշատակվում է նաև Տաթևի վանքին Ջմյուռնիայում հատկացված վակֆը (ձիթենու այգի): Թ. Չելիկը կարողացել էր ստանալ մեկ այլ կալվածքի 1852 թ. հասույթը և պատրաստվում էր Էջմիածին հասցնել այդ

⁸³⁷ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 248, վավ. 1090:

⁸³⁸ Նույն տեղում, թղթ. 167, վավ. 448:

գումարը⁸³⁹: Կնշանակի, Մայր աթոռը 1852 թ. արդեն եթե ոչ լրիվ, ապա մասամբ կարգավորել էր իր ստացվածքների խնդիրը Օսմանյան Թուրքիայում:

Իր տեղում մենք անդրադարձել ենք Էջմիածնին տրվող՝ տերունի վիճակի տուրքերին, որպիսիք էին հոգեբաժինն ու կողոպուտը և նվիրական տուրքերն: Վավերագրերի պակասը հնարավորություն չի տալիս վերարտադրելու դրանց չափերը, սակայն, պետք է կարծել, որ դրանք միատեսակ չափ չեն ունեցել և առաջնորդներն ու վեքիլները հարկերն ու տուրքերը գանձել են ըստ որոշակի անհատի կարողության (ստացվածքի) չափի, որի խախտումները հարուցել են առանց այդ էլ հարկային պարտավորությունների տակ կքած ժողովրդի դժգոհությունը: Խոսքն, անշուշտ վերաբերում է վակֆային մասհանմանը, որը, ինչպես նկատեցինք, իրականացվում էր կտակների ու նվիրատվությունների տեսքով՝ վերածվելով վակֆային սեփականության: Մշտապես

⁸³⁹ Նույն տեղում, թղթ. 167, վավ. 447: Խնդիրն այն էր, որ օսմանյան պետության հետ 1825 թ. ի վեր իր հարաբերությունները դադարեցրած Էջմիածինը, զրկվելով իր տերունի թեմերից, ի վիճակի չէր եղել, Բ. դռան հարուցած արգելքների պատճառով, տիրություն անել Թուրքիայում իր ունեցած վակֆային սեփականություններին (տես Սուրբ Էջմիածնի հայրապետական աթոռը և Տաճկաստանի հայք, էջ 84): Ինչպես տեսնում ենք, միայն 1852 թ. կաթողիկոս Ներսես Աշտարակեցին անդրադարձավ այդ խնդրին՝ վերականգնելու այդ երկրում Էջմիածնի վակֆային սեփականատիրական իրավունքները և վերադարձնելու տասնամյակների ընթացքում չստացած օրինական եկամուտները: Թագվոր Չելիկին Էջմիածնի վեքիլի պաշտոնը փոխանցվել էր հորից՝ Աստվածատուր Չելիկից, սրան էլ իր հորից, որոնց ավանդական դարձած պարտականությունն էր հավաքել և Էջմիածին ուղարկել նրա վակֆային և այլ եկամուտները: Ձմյուռնիայի թեմը Կ. Պոլսի պատրիարքության իրավասությանն անցնելու կապակցությամբ այդ թեմի Էջմիածնական վերջին առաջնորդ Ստ. Ենովքյանը և Ռումելիի նույնպես նախկին նվիրակ Տեղապահյանը իրենց համատեղ ծանուցման մեջ (1826, մարտի 26) նշում էին, որ <<իբրեւ տոյն այս տերունի վիճակ Աթոռոյն (Էջմիածնի-Ա. Խ.) փոխեցաւ ի վիճակ Պոլսոյ... հարկ էր մեզ ելանելն աստի՛ թողուլ գոք հաւատարիմ վեքիլ ի կողմանէ Սբյ Աթոռոյն ի վերայ գանձանակաց եւ կտակաց եւ վարձուց վախճ տանց մերոյ եւ Սրբոյ Գեղարդիւն գանձանակ դրամոյ եւ այլոց խօստմանց, որ յանուն Սրբոյ գահին, որպէսզի ըստ հաշուագրին յամ յամէ ժողովեալ գամն իւրաքանչիւր տեղեաց գանձեսցէ յինքն վեքիլն եւ ընդ հարկաւորութիւն հասուցէ ի Սբ. Աթոռն>> (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 293): Թ. Չելիկը վեքիլ էր նշանակվել Ձմյուռնիայի նախկին առաջնորդի և տեղի <<պանծալի իշխանաց>> համաձայնությամբ (նույն տեղում):

պարտքերի տակ գտնվող Էջմիածինը հարկադրված էր գոհանալ այն-քանով, որքան հնարավոր էր հարկերն հավաքել ժողովրդից: Ներսես Աշտարակեցին զմլոռնացի Հովհաննես Խաչատրյանին գրած նամակում (1823, 23 ապրիլի) արտահայտում էր Էջմիածնի համակերպումն այս իրողությանը՝ նկարագրելով Ս. Աթոռի <<տարաբախտ ընթացքը>> Եփրեմ կաթողիկոսի ժամանակ և պատվիրելով հորդորել առաջնորդ Ստեփանոսին՝ <<փութացուցանել զգործ նուիրակութեան իւրոց եւ իւր նպատակ... զարդինս բարեպաշտ նուիրանաց ժողովրդոց հետզհետէ ի վճարում ծանր տոկոսի պարտաւորութեանց (Մայր Աթոռի-Ա. Խ.)՝ ոչ հայեցեալ ի գումարացն առաւելութեան կամ մեծութեան>>⁸⁴⁰:

Եթե Էջմիածնին տրվող հարկերը, այդ թվում և երեք տարին մեկ վճարվող նվիրակական հարկերը, կանոնակարգված էին և կաթողիկոսները հոգածությամբ էին հետևում դրանց մուծումներին, ապա այլևայլ անուններով նվիրատվությունները՝ եկեղեցական սպասք, անոթներ, բուրվառներ, սկիհներ, խաչեր, ուրարներ և այլն, ինչպես և օժանդակ տուրքեր (իմդադեայ) ակնկալելիս եկեղեցին առավել հենվում էր հավատացյալների բարեպաշտական զգացումների վրա:

Բնաշխարհից դուրս եկած գաղթական բազմությունների մեջ բավական թիվ էին կազմում հողագործները (թեև այստեղ դժվար է սոցիալական ճշգրտումներ մտցնելը), այնուհետև արհեստավորները և առևտրականները՝ քաղաքային, և գյուղատնտեսական շրջաններում: Հասկապես այս երկու խավերը նոր հանգրվաններում հաստատվելու ավելի լայն կարելիություններ ունեին. միջնադարյան արևելյան քաղաքում և գավառում արհեստներն ու առևտուրն ընկած էին մարդկանց առօրեական կենցաղավարության հիմքում, որ հնարավորություն էր տալիս այդ ոլորտներում զբաղված մարդկանց համեմատաբար անհիվանդագին և անկաշկանդ հարմարվելու նոր միջավայրին: Ստույգ կամ դրան մոտ վիճակագրական տվյալներ չկան, թե առանձին գաղթերի ժամանակ հայ գաղթականների (Արևմտյան կամ Արևելյան Հայաստանից) որ մասն է տեղավորվել Զմլոռնիայում կամ փոքրասիական այլ քաղաքներում, և որ մասը՝ գյուղատնտեսական՝ հողագործական շրջաններում՝ սկսած Կիլիկիայի անկման ժամանակներից (XIV դ. վերջին քառորդ) և վերջացրած Աղա Մահմադ Խանի ժամանակվա և Էնկյուրիի հայերի

⁸⁴⁰ ՄՄ, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 165, վավ. 731:

գաղթով XVIII դ. 90-ական թթ.): Էլ չենք խոսում VI-XI դդ. կամ դրանց հետևող նույնպես հեռավոր ժամանակների հայկական հնամենի գաղթօջախների մասին, որոնց Էգեյանի ավերին հաստատվելը, ինչպես տեսանք, անառարկելի իրողություն է: Ավելացնենք նաև, որ խնդրո առարկա միջնադարյան իրականության մեջ հողագործությունը, արհեստները և առևտուրը խորը անջրպետներով բաժանված չէին միմյանցից, որ հատկապես նպաստավոր էր գաղթականության համար. վերջինս կենսապահովման պահանջների կամ անձանոթ միջավայրին հարմարվելու թելադրանքով առավել ջանքեր կարող էր գործադրել իր ունակությունների ամբողջ ներուժը գործնական շրջանառության մեջ ներդնելու համար: Արհեստավորը ևս կարող էր զբաղվել առևտրով կամ հողագործությամբ, ինչպես և հողագործը՝ հանդես գալով շուկայական սուբյեկտի դերում, առևտրականը՝ հողագործի և այլն: Միջնադարյան քաղաքներում, այսուհանդերձ, արհեստագործությունն ուներ իր հաստատ, կայուն տեղը, որպես սոցիալական որոշակի տարր՝ հասարակական արտադրության և փոխհարաբերությունների մեջ, և հայ արհեստավորությունն այս տեսակետից բացառություն չէր կարող կազմել: Էսնաֆի (մասնագիտությունների կորպորատիվ միավորման)⁸⁴¹ մեջ մտնող հայ արհեստավորությունը մեծ քաղաքներում անդամակցում էր կրոնադավանական խառը խմբավորումներ ներկայացնող արհեստավորական այդ կազմակերպություններին, որոնք Օսմանյան Թուրքիայում գլխավորում էին մահմեդական թուրքերը: Բուն արհեստանոցներից սկսած՝ իրեն ամենուրեք զգացնել էր տալիս կրոնական խորակաությունը, որին ծանոթ էին դեռևս հայրենիքում գործառած և հետագայում գաղթի ուղիները բռնած հայ արհեստավորները: Հայկական նահանգներում, գրում է Հ. Անապյանը, նրանք <<իրենց արհեստներն ի գործ դնելու իրաւունքին տիրանալու համար բռնադատուում էին իսլամների հետ միասին անդամակցելու թուրքական արհեստաւորական միաւորումներին, իսկ անդամակցելու համար՝ նրանց նման ենթարկւում էին իսլամական սահմանուած ծիսակատարութիւններին և այդ միջո-

⁸⁴¹ Էսնաֆի՝ մասնագիտական կորպորացիայի մեջ էին մտնում բոլոր սոցիալական խավերը, բացի ենիչերիներից, պետական ծառայողներից և հոգևորականներից: XVII դ. կեսին Կ. Պոլսում կային 1109 արհեստավորական միավորումներ՝ իրենց կազմում ունենալով առավելագույնը 200 հազար մարդ (տես Хитцель Ф. Османская империя. с. 148-149):

ցով՝ իսլամութիւնն ընդունելու թելադրանքներին»⁸⁴²: Թուրք արհեստավորական միջավայրի այդպիսի գոհ էր դարձել Թոքատից Զմյուռնիա եկած կոշկակար պատանի Բադդասարը: Սկզբնաղբյուրի շարադրանքից ակնհայտորեն երևում է, որ Բադդասարին և նրա հետ եկած վարպետին թույլ չեն տվել գործելու մեկուսի՝ կոշկակարների էսնաֆից առանձին (որին նախանձախնդիր էին առհասարակ արհեստավորական միությունները) և դիմել են նրանց ասպարեզից հեռացնելու միջոցների: Դիմենք բնագրին՝ <<Եւ ուսթային առեալ զԲադդասարն եւ երթայ ի Զմիւռնի քաղաք Լիկեացոց, առ ի գործել զգործ արուեստին: Իսկ հարկահանքն որք առնուին զհարկն՝ տեսեալ զԲադդասարն, պահանջէին զհարկն, այսինքն զխարաճն, իսկ նա զի ոչ ունէր զինչս որ տայր նոցա, վասն որոյ կալեալ եղին (հարկահանները-Ա. Խ.) ի կոճեղս եւ շատ ողորբելով եւ բռնադատելով պատրեցին զմանուկն Բադդասար եւ ոչ կամաց թլպատեալ անուանեցին Դաուդ»⁸⁴³:

Ըստ շարադրանքի, Բադդասարը հետագայում հրաժարվում է իրեն պարտադրված կրոնից և նահատակվում էրզրումում (1672, 4 հունիս)⁸⁴⁴:

Արտադրամասերում մահմեդական արհեստավորների ծառայական վերելքը ապահովվում էր նույն այդ կրոնական խտրականության ուժով: Նաև այն հանգամանքով, որ տիտղոսավոր կրոնի առավելություններից ելնելով, նրանք ավելի հուսալիորեն կարող էին պաշտպանել արհեստավորների տվյալ խմբի շահերը՝ ընդդեմ համքարությունից դուրս կամ զուգահեռ գործող համքարության հետ հնարավոր մրցակցական պայքարում:

Մտնելով էսնաֆական կազմակերպությունների մեջ, հայ արհեստավորները Էգեյանի գաղթավայրերում նույնպես պահպանում էին իրենց

⁸⁴² Անասեան Յ., Թուրքական ֆութուվվաթը եւ հայերը, էջ 223:

⁸⁴³ Հայոց նոր վկաները, էջ 152:

⁸⁴⁴ Նույն տեղում: Հետաքրքիր է այս տեսակետից հուլանդացի նկարիչ Յան Լույկենի (1649-1712) <<Հավատի նահատակները>> նկարաշարի մի կտավը, որտեղ պատկերված է հայ պատանու մահապատիժը քաղաքային հրապարակում՝ հավաքված բազմության առջև: Որքան էլ սյուրռեալիստական և զգայացունց, այդ կտավի համար իրական հիմք կարող էր ծառայել նաև 1710 թ. Կ. Պոլսում նահատակված Աստվածատուր Սեբաստացին. նա Ղալաթիայում շրջել էր այնպիսի հագուստով, որը վերապահված էր միայն մահմեդականներին, ուստի և պետք է հատուցեր կրոնաափոխությամբ կամ մահապատժով (տես Յովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, էջ 78-79):

ազգային, կրոնաքաղաքական բարքերն ու ավանդույթները, առաջնորդվում դրանցով, ինչպես և մահմեդական արհեստավորներն էին առաջնորդվում ֆութուվվայով՝ իրենց վարքագծի կրոնաքաղաքական նորմերով: Սուֆի դերվիշների բարոյական պատկերացումների այդ էթիկան կարգավորում էր մահմեդական արհեստավորական խմբերի ներսում փոխադարձ հարաբերությունները և հանդես էր գալիս որպես արհեստավորության կենսագործունեությունն ապահովող գործոն՝ այդ միջավայրում, որտեղ և XIII-XIV դդ. տիրապետող դարձավ ահիականությունը՝ բարոյական կացութաձևն ու կանոնները վերահսկող ահիի՝ ընտրովի արհեստավոր ավագի գլխավորությամբ⁸⁴⁵:

Հայ արհեստավորությունն առաջնորդվում էր իր սեփական՝ քրիստոնեական բարոյականության ավանդության լարգուկանոնով և վարքագծի սահմաններում, որոնք կողք-կողքի գոյատևելու իրավունք ունեին մահմեդական ֆութուվվայի հարևանությամբ: Նրանք գործում էին ամենից առաջ՝ իրենց համայնքի սահմաններում, համայնքը սպասարկելուն ուղղված արտադրական գործունեությամբ և դրա կրոնաքաղաքական սկզբունքներին համապատասխան (հոգատարություն միմյանց՝ արհեստավորների նկատմամբ, եկեղեցիների, դպրոցների շինությանը կամ նորոգմանը նյութապես նպաստելը, հանգանակությունների մասնակցելը, աջակցելը մատյանների գրչագրմանը և այլն):

Հայ արհեստավորները գործում էին էգեյանի բոլոր գաղթավայրերով մեկ: Նրանք հիշվում են ձեռագիր վավերագրերում, ճանապարհորդների նոթերում, դամբանագրերում, հայերեն և օտարալեզու բազմաթիվ արխիվներում և այլն: Այդընի գերեզմանատանը հայտնաբերված ամենահին շիրմաքարը (1561), որ հիշել ենք նախորդ էջերում, պատկանում է կեսարացի <<խայդանագործ>>(քուղագործ) Գեորգին⁸⁴⁶: Կեսարիայից, ուրեմն, Զմյուռնիա են անցել ոչ միայն վաճառականներ, այլև արհեստավորներ, ընդ որում, XVI դ. կեսին և դրանից էլ առաջ, ինչը կարող է հուշարկել այդ արհեստավորի մահվան թվականը: Ի դեպ, խայդանագործը նույնն է, ինչ շերիֆձին (քուղ, ժապավեն պատրաստող վարպետ), վաղուց ի վեր ծանոթ զմյուռնահայերին. 1816 թ. զմյուռնացի նվիրատուների մի ցանկում ի թիվս այլ արհեստավորների, հիշվում է նաև շերիֆձին⁸⁴⁷:

⁸⁴⁵ Տե՛ս Inalcik H. The Ottoman Empire. The Classical Age, 1300-1600. pp. 151-152.

⁸⁴⁶ Քութան Յ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 25:

⁸⁴⁷ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 2:

Զմյուռնիայում հանդիպում ենք արհեստավորների միավորման ոչ ֆուրթովվայական, այլ լոնջայական, հիմնականում պետական, աշխարհիկ բնույթի ղեկավարությամբ գործող էսնաֆությունների: Գործում էին հացագործների, երկաթագործների, կաշեգործների, կտավագործների, կոշկակարների և այլ միավորումներ: Զուտ էսնաֆին վերաբերող գործերը՝ արտադրանքի տեսակների, որակի, գների, իրացման կարգուկանոնի և դրանց հետ կապվող խնդիրները քննարկվում և որոշումները կայացվում էին էսնաֆի մեծ ժողովում (մեջլիս-ի քեֆիր): Այստեղ նույնպես հանդիպում ենք արտադրական միավորին՝ արտադրամասի եռաստիճան սանդղակին՝ աշակերտ (չրագ), ենթավարպետ (իզիթբաշի, խալֆա) և վարպետ (ուստա): Աշակերտից ենթավարպետ և այս վերջինից վարպետ անցումը կատարվում էր հատուկ ծիսակատարությունների ուղեկցությամբ:

Անհրաժեշտ է այս բնագավառում ևս նկատի ունենալ օսմանյան պետության թեոկրատիկ բնույթը, ասել կուզի՝ ըստ ամենայնի մահմեդական սկզբի պաշտպանությունը և մահմեդական արհեստավորների շահերի գերադասումը արհեստավորական բազմակրոն միջավայրում՝ սկսած արհեստավորական արտադրամասից և վերջացրած շուկայում այս վերջինի արդյունքների իրացումով: Այս ամբողջական վերահսկողությամբ է բացատրվում այն, որ օսմանյան իշխանությունները խիստ կանոնակարգում էին մտցրել արհեստանոցների աշխատանքում՝ արտադրության բոլոր փուլերում և դրանց նախորդող հումքի գնման գործառույթներում⁸⁴⁸:

Զմյուռնիայի տերունի թեմին ուղղած կոնդակներում Էջմիածնի կաթողիկոսների կողմից միշտ հիշատակվում են, ի թիվս բնակչության այլ շերտերի, <<վայելչագործ արհեստավորները>>, <<գեղեցկանկար արհեստավորները>> և այլն: Զմյուռնիայում և Էգեյանի մի քանի քաղաքներում (Մանիսա, Այդըն, Էդդեմիշ և այլն) հայ արհեստավորները կազմել են իրենց համայնքների բնակչության մի զգալի մասը, սակայն զուտ գյուղատնտեսական շրջանների ոչ մեծ համայնքներում, կարելի է կարծել՝ բնակչության համեմատաբար փոքրաթիվ մասը համատեղել է հողագործությունն ու արհեստագործությունը:

Զմյուռնիայում և Էգեյանի մյուս գաղթավայրերի գործող արհեստավորական էսնաֆի վերաբերյալ քիչ տեղեկություններ են պահպանվել,

⁸⁴⁸ Green J. K. Leavening the Levant, p. 154.

ամենից առաջ՝ արհեստների և դրանցով զբաղվող մարդկանց անունների հիշատակումը: Դրանք միայն ընդհանուր գծերով կարող են պատկերացումներ տալ նրանց տնտեսական գործունեության, արհեստագործական արդյունքների իրացման պայմանների ու ձևերի վերաբերյալ: XVII դ. և դեռ դրանից էլ շատ առաջ, պետք է կարծել, Էգեյանի շրջանում ևս հայերը պահպանել էին արհեստագործական արտադրության կազմակերպման նույն ձևերը, ինչ հայրենիքում, անշուշտ, արտադրամասից դուրս՝ մահմեդական միջավայրում, արդեն բոլորովին այլ պայմաններում: Զմյուռնիայում հայ արհեստավորներն ընդգրկվել էին էսնաֆական կազմակերպությունների մեջ, թեև չի բացատրվում, որ, ինչպես Բալկաններում, գործեին այնպիսի արհեստավորներ, որոնք չէին մտնում կորպորատիվ կազմակերպությունների մեջ⁸⁴⁹: Ոչ մեծ այնպիսի համայնքներում, ինչպես, օրինակ, Նագիլիում, Մենեմենում, Քուշադայում և այլուր, արհեստավորների փոքրաթվությունը՝ պայմանավորված հայ բնակչության սակավամարդությամբ, սահմանափակում էր այդպիսի կազմակերպության մեջ մտնելու հարկն ու հնարավորությունը: Ի հակադրություն դրա, մարդաշատ էին Էոդեմիշի, Այդընի և Մանիսայի հայ արհեստավորները: Էոդեմիշում իրենց բարձրորակ արտադրանքի շնորհիվ ճանաչված էին հատկապես հայ մետաքսագործները: Մետաքսի հումքը, որով առատորեն լցված էր Էգեյանի ամբողջ առափնյակը՝ տեղական գյուղատնտեսական արտադրության և մետաքսի հնամենի առևտրական ճանապարհի շնորհիվ, բավական հնարավորություններ էր ընձեռում մետաքսագործության եկամտաբերությանը: Էոդեմիշում հայ արհեստավորները արտադրության մեջ էին ներգրավել նաև կանանց աշխատուժը, ինչը նկատեցինք իր տեղում. տներում հաստատված դագգահներով կանայք պատրաստում էին մետաքսի թաշկինակներ, գլխանոցներ, հագուստի տարրեր: Նույն իրողությունն ենք տեսնում նաև Մանիսայի ջուլիակների պարագայում, որտեղ <<զաղթակա՛նութեան առաջին օրէն սկսեալ Վերի թաղեցիները ոստայնանկ եղած են ամենքն ալ եւ են տակաւին>>⁸⁵⁰: Մանիսայում տարածված արհեստների բազմազանությունը բացատրվում է առհասարակ XIII-XIV դդ. ի վեր այդ քաղաքում իտալական առևտրական համայնքի առկայությամբ, իսկ հետագայում Մանիսայի՝ օսմանյան գահաժառանգների նստավայր դառնալու իրողությամբ:

⁸⁴⁹ Тодоров Н. Балканский город XV-XVI веков, с. 112.

⁸⁵⁰ Շահինեան Գ., Մանիսայի հայ գաղութին ծննդավայրը, 1889, թիւ 31-32, էջ 503:

Էգեյանի շրջանի քաղաքների մեջ արհեստագործության առավել խոշոր կենտրոնը, հատկապես XVII դ. ի վեր, մնում էր Զմյուռնիան: Արհեստավորներն այստեղ, ինչպես ամենուրեք հայկական գաղթավայրերում, առաջ են մղել մշակույթի զարգացումը, հասարակական այդ միջին խավը, առևտրականության հետ միասին իր կենսունակությունը հաստատում էր նաև ազգային մշակույթը հովանավորելու և հարստացնելու հաճախադեպ իրողություններով: 1713 թ. Զմյուռնիայում գրչագրվել է Կիպրիանոս գիրքը (աղոթքներ, վարքագրություն, բժշկական բնույթի նյութեր և այլն) <<ի վայելումն դավուխճի (իմա գղակագործ) Աւագի որդի Աւետիքին>>⁸⁵¹: Մի բառգրքի գրիչն է եղել <<իզմիրցի տողրամաճի (իմա հյուսն) որդի Ադամը՝ թուին ՌՃՀԵ (1726)>>⁸⁵²: Այս արհեստավորներն էին, որ նյութական արժեքներով էին հագեցնում ազգային հաստատությունները, նվիրատվություններ անում հիվանդանոցներին, եկեղեցուն ու վարժարանին, տնանկներին և այլն: Ասենք, որ Էջմիածնի Մայր աթոռին վակֆային նվիրատվություններ են արել գերազանցապես արհեստավորական խավերի մարդիկ: Այդ հնարավորություն է տալիս մի որոշ չափով գաղափար կազմել Էգեյանի այս տարածքների հայկական համայնքներում տարածված արհեստների մասին, որչափով նվիրատուները ներկայացնում էին առհասարակ Զմյուռնիայի տերունի թեմի ժողովրդին: Նշված ժամանակներում այստեղ շրջանառում են ամենատարբեր բնույթի արհեստների մարդիկ՝ չիլինկիր (դարբին) մահտեսի Թագվորը, պերպեր (վարսավիր) Մատուրը, տողրամաճի (հյուսն) Խաչիկը, յորդանճի (վերմակագործ) Հարոնը, պիլեզիկճի (ապարանջան պատրաստող) մահտեսի Հարությունը և ուրիշներ⁸⁵³: Արհեստների այս բազմազանությունը նկատի ունենալով՝ դժվար է համաձայնել այն կարծիքին, թե արհեստները <<այնչափ ընդհանուր չեն տարածուած հայոց (զմյուռնաբնակ-Ա. Խ.) մեջ, կը գտնուին աննշան թուով ժամագործ, ոսկերիչ, դարբին, վերմակագործ, դերձակ, կոշկակար, ատաղձագործ են>>⁸⁵⁴:

Կաթուղիկ հայերը, որոնք հիմնականում գաղթել էին Նախիջևանից և հետագայում Էնկյուրիից, զբաղվում էին տարագագործությամբ, ոսկերչությամբ, երկաթագործությամբ և այլն: Վերջինս, ի դեպ, բավական տա-

⁸⁵¹ Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, հ. Բ, էջ 190:

⁸⁵² Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի հայոց, էջ 603:

⁸⁵³ Նույն տեղում, թղթ. 100, վավ. 159/II;

⁸⁵⁴ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 288:

րածված էր Զմյուռնիայի և կից բնակավայրերի ու քաղաքների արհեստների ասպարեզում, այդ թվում և հայկական համայնքներում, որովհետև տեղական հումքը լիովին ընձեռում էր դրա հնարավորությունը: XIII դ. արդեն հայտնի էին երկաթահանքերը՝ Սիպիլ լեռան փեշերին, Մագնեզիայի (Մանիսա) մոտ⁸⁵⁵: Զմյուռնիայում հնագույն արհեստներից էր գորգագործությունը, որով զբաղվում էին կայսրության տարբեր ազգերի հպատակներ: 1720-ական թթ. Կ. Պոլսում ռուսական ռեզիդենտ Ն. Նեպլյուևը գրում էր, որ այստեղ հյուսվում են ուղտի բրդից գորգեր, որոնք բարձր են գնահատվում⁸⁵⁶: Ներկարարությունը ևս բավական լայն ասպարեզ ուներ բամբակագործական ապրանքների և կտավագործության հետ կապված արհեստների խմբում, կաշվի, մետաքսի և բրդեղենի ու դրանցից պատրաստված ապրանքատեսակների տնայնագործական արտադրության մեջ: Տարբեր որակների ու արդյունավետության ներկանյութերն այստեղ ստացվում էին բուսական նյութերից, ինչպես և հանքային ծագում ունեցող հումքից⁸⁵⁷: Քաղաքաբնակ արհեստավորները զբաղվում էին նաև հողագործությամբ՝ ձեռք բերելով որոշակի չափի հողամասեր (լրիվ չիֆթ կամ ավելի փոքր չափերի): Սուլթան Սելիմ Ա-ի օրենսգիրքը ուշագրավ մեկնաբանություններ է հուշարկում այս հարցի վերաբերյալ. <<Քաղաքի բնակիչները, - ասված է օրենքներից մեկում, - քաղաքի սահմաններում կարող են չիֆթիք ունենալ: Նրանք թող հարկ վճարեն ըստ այն բանի, թե ինչքան հող ունեն լրիվ չիֆթի կամ կես չիֆթի համեմատ: Նրանց ասածը, թե <<մենք քաղաքացիներ ենք և չիֆթ թեսմի չենք վճարում>>, նշանակություն չունի: Նշանակությունը տրվում է հողին>>⁸⁵⁸:

Հիրավի, արհեստավորները դեռևս մինչև Սելիմի ժամանակները կարող էին տրտնջալ և անգամ փորձել՝ հրաժարվելու գյուղատնտեսական արտադրության հարկումներից, որովհետև արդեն իսկ վճարում էին իրենց՝ արհեստավորական արտադրանքի համապատասխան հարկերը: Բայց, ինչպես կարելի է կարծել, նրանք բեյությունների, իսկ դրանից առաջ՝ սելջուկների ժամանակ (XI-XIV դդ.) հողի համար սահմանված հարկեր չեն վճարել, որ արդեն պարտադիր էր դարձել XV դարում: Իրազեկ ուսումնասիրողն այս առթիվ գրում է, որ Արևմտյան

⁸⁵⁵ Степ Жуков К. А. Эгейские эмираты, с. 144.

⁸⁵⁶ Дандиги Б. Русские путешественники на Ближнем Востоке, с. 79.

⁸⁵⁷ Жуков К. А., նշվ. աշխ., էջ 113-114:

⁸⁵⁸ Книга законов султана Селима, с. 144.

Անատոլիայում մահմեդական արհեստավորներն ազատ էին ռայա քրիստոնյաների վճարած բեւա-ի չիֆթ հարկից (22 աքչեի չափով), բայց Մեհմեդ Բ-ի ժամանակ նրանք արդեն վճարել էին այդ և մյուս հողահարկերը, ինչպես բոլոր ռայաները⁸⁵⁹։ Չքավոր կամ ոչ հարուստ արհեստավորները, բնականաբար, չէին կարող կրկնակի հարկ վճարել և զբաղվում էին նաև հողագործությամբ, ուստի կարելի է եզրակացնել, որ օսմանյան հարկային համակարգն իր ծանրությամբ և պարտադրիչ բնույթով արագացնում էր հողի սեփականատիրական հարաբերությունների փոփոխությունները օսմանյան հասարակության մեջ՝ հիմքում ունենալով, սակայն, թիմարի տրոհման դեմն առնելու և այդ կանխելու վաղեմի իրավական ուղղվածությունը։

Արհեստավորները ևս վճարում էին իրենց արտադրական գործունեությանը համապատասխան հարկեր։ Սուլեյման Քանունիի ժամանակ ևս հարկերի չափերն ամրագրվել են իրավականորեն, որ մտել է ջիզյեի (խարաջ) ընդհանուր գումարի մեջ՝ հարուստներից՝ 4 ոսկի, էսնաֆից՝ 2, չքավորներից՝ 1⁸⁶⁰։ Արհեստավորները հիմնականում վճարում էին **խարաջ** և **իհթիսաբ բեւաֆի** հարկերը⁸⁶¹։ Վերջինս հավաքվում էր շուկայում՝ արտադրանքն իրացնելու դիմաց, իսկ մնացյալ դեպքերում այլ հարկեր՝ սահմանված շերիով և աշխարհիկ օրենսդրությամբ։ Շուկայում արհեստավորական և գյուղատնտեսական ապրանքների գները և որակը պետությունը կարգավորում էր մուխթեսիբների միջոցով, որոնց գործունեությունը վերահսկում էր կադին (դատավորը)։ Ղ. Ինձիճյանի ժամանակ (XVIII դ. երկրորդ կես-XIX դ.առաջին տասնամյակներ) կադին այդ գործը կատարում էր իր երկու նայիբների (նույնն են, ինչ մուխթեսիբը) միջոցով⁸⁶²։

XVIII դ. վերջերին Օսմանյան Թուրքիայում նկատելի է դառնում տնայնագործական արտադրության դանդաղ, բայց զգալի զարգացումը, երբ արտադրության ասպարեզում հայտնվում են իրենց աշխատողներով ու արդյունքներով ծավալուն արհեստանոցներ, որոնք վկայում էին ապրանքային արտադրության զարգացման մասին⁸⁶³։ Այս՝ որակական

⁸⁵⁹ Жыков К. А., նշվ. աշխ., էջ 121։

⁸⁶⁰ Ալպոյաճեան Ա., Պատմություն հայ Կեսարիոյ, էջ 636-637։

⁸⁶¹ Ste Shaw S. History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 1, p. 120.

⁸⁶² Ինձիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, էջ 93։

⁸⁶³ Հակառակ այս ակնհայտ փաստին, Մ. Մեյերը, ելնելով մարքսիստական ընդհանուր դրույթից, կարծում է, որ ապրանքային արտադրության ընդլայնման,

փոփոխությունների նախաշեմին Ձմյուռնիան ևս իր մասնակցությունը բերեց բամբակի և բրդի գործվածքների արտադրության աշխուժացմանը: Մետաքսի, կերպասի և չթի արտադրության ոլորտում հայտնվեցին նաև հայ արհեստավորները՝ հենվելով տեղական հումքի ընձեռած կարելիությունների վրա: Էգեյանի շրջանի հայկական համայնքների արհեստագործության մեջ այս տասնամյակներին առաջնակարգ նշանակություն է ստանում մետաքսի և բրդյա նուրբ գործվածքեղենի արտադրությունը՝ ավանդական ոստայնակության հիման վրա: Այս արհեստի տարածման և հայ համայնքների սոցիալական առօրյայում դրա ձեռք բերած հեղինակության մասին է վկայում զմյուռնահայերին ուղղված՝ Միմեոն կաթողիկոսի կոնդակը (1764, 10 մարտի), որտեղ մաղթանքներ են հղվում <<գեղեցկանկար արհեստաւորաց>>⁸⁶⁴:

Կաթողիկոսը նկատի ուներ ծաղկանկար նուրբ գործվածքներով թաշկինակների ու գլխանոցների արտադրության մեջ ներգրավված արհեստավորներին, որոնց արտադրած արդյունքները լայն պահանջարկ ունեին Ձմյուռնիայում և Էգեյանի առափնյակում: Նրանց թվում նաև Եղվարդ գյուղից 1745 թ, կողմերը Ձմյուռնիա գաղթած Հովհաննեսսին և նրա որդուն՝ Կարապետին, որոնք <<Իզմիրի գետեզերքի հողերու վրայ գլխի յազմա տպելու և ներկելու գործարան մը հիմնած էին, որ մինչև 1810 թուականին շարունակուեցաւ>>⁸⁶⁵:

Դրանից հետո էլ, սակայն, տասնամյակներ անց, Եղիվարդյանների արհեստանոցը շարունակել է գործել, ինչը վկայում է Ղ. Ալիշանը՝ գրելով, որ Ձմյուռնիայում <<նշանաւոր են գործարանսն ծաղկենկար կտաւոց եւ ի թղթարանն՝ հաստատեալ ձեռն ճարտարաց հայոց>>⁸⁶⁶: Վերջին

գույքային անհավասարության խորացման համեմատ Էսնաֆը վերածվում է ապրանքային արտադրությունը արգելակող ուժի (տես Мейер М. С. К характеристике экономической жизни городов Османской империи в XVII в., с. 261): Սակայն չպետք է անտեսել, որ տեղական արտադրությունը կաշկանդող հետևանքներով հանդերձ, արհեստավորական միավորումներն Օսմանյան Թուրքիայում մնում էին տնտեսական այն միակ և կենսունակ գործոնը, որ առհասարակ կարող էր խթանել ընդլայնված վերարտադրությունը:

⁸⁶⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 22:

⁸⁶⁵ ՄՄ, ձեռ. N 10272:

⁸⁶⁶ Ալիշանեան Ղ., նշվ. աշխ., էջ 345:

դեպքում խոսքը վերաբերում է 1840-ական թթ. Հակոբ Տյուզյանի հիմնած թղթի գործարանին⁸⁶⁷:

Տպած գործվածքների գվյուռնացի այլ վարպետներ, Եղիվարդյանից տասնամյակներ հետո, բավականաչափ անդուր մրցակիցներ էին դարձել՝ պոլսահայ իրենց արհեստակիցների համար: Հավանաբար, հենց այս 1780-ականից հայտքի գործարանն էր, որ պայքարի թիրախի դարձրին պոլսեցի ջուլիակները: Վերջիններս գործեցին անվրեպ՝ օսմանյան իշխանությունների միջոցով հասնելով նրան, որ առհասարակ արգելել տվեցին նուրբ գործվածքների արտադրությունը Ջմյուռնիայում:

Բնականաբար, իր տերունի թեմին շտապեց օգնության հասնել Էջմիածինը. Կ. Պոլսի ջուլիակների գլխավորներին՝ Մեյրամդուլին, Կ. Տրճանենցին, տիրացու Գեորգին (Էսնաֆի գանձապետը) և Կ. Նուրյանին ուղղած իր գրության մեջ (1784, 15 մայիսի) Ղուկաս կաթողիկոսը հորդորում էր խաղաղությամբ հարթել խնդիրը՝ «<զի Ջմիւռնիոյ դիւպէնդոց (իմա մետաքսագործների) գործն մի խափանեսցեն, այլ հրաման առցեն յարքունուստ դարձեալ ի գործ արկանել ...գարհեստն իւրեանց եւ կենցաղավարիլ>>⁸⁶⁸:

Իրավական տեսակետից, ի դեպ, հիմնավոր է թվում պոլսահայ արհեստավորների մեղադրանքն ընդդեմ գվյուռնացիների, որ պարզվում է կաթողիկոսի հիշյալ գրությունից. «<Քանզի եւ զարգիլման յաւէտ քան զկար իւրեանց ի վեր բեռնադրեալ ապրանօք ձեռնարկին տանել զապրանսն յիզմեայ եւ ի ուզունձայ (բատիստե գործվածքի տեսակներ-Ա. Խ.) եւ այնու որպէս թէ վնասատու եղեն առից եւ տրից պոլսեցի մերագուն ղօլբէնտձի եղբարց, ուստի եւ նոքա առ ի գղեմ ունել անդր (Կ. Պոլիս-Ա. Խ.) գնացողաց, փոխանակ ի մասնաւոր վրիժառութեան՝ առհասարակ զմեզ արգելեն ի գործոյ, համանգամայն զտպարանս (արհեստանոցը-Ա. Խ.) խափան տալով>>⁸⁶⁹:

⁸⁶⁷ Արշալոյս Արարատեան, 1847, թիւ 285: Տես նաև Մենելիշեան Գ., Ազգաբնութիւն ազնուական զարմին Տիւզեանց, էջ 37: Ջմյուռնիայի թղթի գործարանը թանգիմաթից քիչ առաջ և անմիջապէս հետո գործարկված թեթև արդյունաբերական ձեռնարկություններից էր, որ լրացնում էր Կ. Պոլսում շարք մտած ֆեսի գործարանի, Պէյքոզի զինվորական հանդերձանքի ֆաբրիկայի, Պէյքոզ-Ինջեքլոյի հախճապակու գործարանի և այլնի շարքը (տես Ortaylı L. İmparatorluğun en Uzun Yüzyılı, s. 199).

⁸⁶⁸ ՄՄ, ձեռ. 2803, էջ 429:

⁸⁶⁹ Նույն տեղում:

Ուրեմն, գվյոտնացի արհեստավորների բարձրորակ արտադրանքը պահանջարկ է ունեցել այդ քաղաքի շրջակայքից դուրս, անգամ հեռավոր Կ. Պոլսի շուկայում, և պոլսահայ արհեստավորները նրանց դեմն առնելու համար այլ միջոց չեն ունեցել, քան բողոքելը և վարչական միջամտության դիմելը: Այնուհետև, նույնպես հետաքրքրություն է հարուցում էսնաֆի արտադրանքի իրացման պետականորեն ամրագրված սահմանների հարցը. կնշանակի, Զմյոտնիայի շուկան ևս իշխանությունների կողմից ճանաչված է եղել որպես պոլսեցի մետաքսագործների մենաշնորհային տարածք, որտեղ ուրիշներն իրավունք չունեին այդ արհեստագործական ապրանքատեսակներն արտադրելու և իրացնելու: Զմյոտնացի արհեստավորները խախտել էին այդ մենաշնորհը և պատժվել՝ կանգնելով արհեստանոցի փակման փաստի առջև:

Հայտնի չէ, թե ինչով ավարտվեց գվյոտնացի և պոլսեցի այս արհեստակիցների ընդհարումը: Կարող ենք ասել միայն, որ գվյոտնացիների նշված կախվածությանը վերջ տրվեց 1790 թ., երբ օսմանյան իշխանությունները կերպասի արտադրության արտոնագիր տրամադրեցին գվյոտնացի մի հայի: Արհեստանոցը գործելու էր վակֆային սեփականատիրական հիմունքներով՝ այն տարեկան հարկ էր վճարելու Կ. Պոլսի բարեգործական հաստատություններից մեկին: Ղուկաս կաթողիկոսն այս ձեռնարկի առթիվ շնորհավորում էր հիմնադիրներին՝ տամդաճի (դրոշմադիր) Ստ. Խաչատրյանին և քեդիտուդա (վակֆի վերակացու) Հ. Դովլաթյանին, որոնք հիմնել էին այդ արհեստանոցը⁸⁷⁰:

Ա. Այվազյանը գրում է, որ այդ չթագործական արհեստանոցը հիմնել էր Տամկաճյան ընտանիքի անդամներից մեկը. <<Սոյն հարազատներէն (Տամկաճյան-Ա. Խ.) մէկը մայրաքաղաքս գալով, 1790-ին ... սուլթան Մելիմի խնդիր կը մատուցանէ եւ կը յաջողի առանձնաշնորհութեան հրովարտակ ստանալ՝ Զմիւռնիոյ մէջ տպածոյի գործարան մը (պասմահանէ) հաստատելու՝ հատուկ վակֆնամեով մը>>⁸⁷¹:

⁸⁷⁰ Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 573:

⁸⁷¹ Այվազեան Ա., Յոնիական հայ գաղութի նահապետներէն, 1900, 3 սեպտեմբերի: Տամկաճյան ընտանիքից էր, ի դեպ, ականավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանյանի հայրը (նույն տեղում): Նույն հոդվածում այս հեղինակը նշում է, որ Տամկաճյան գերդաստանի <<անդամներէն չորս եղբայրներ, չորսն ալ յազմայի եւ ծաղկենկար վարշտակներու գործով ընկերովի կը զբաղին եղեր ի Զմիւռնի, ԺԸ դարու վերջին քառորդին մէջ>>: Այստեղ նկատենք, որ ժամանակին յազմաճի (գործվածքին նախը դրոշմող) գործավոր էր եղել XIX դ. առաջին

Գ. Պոյաճյանը նկատում է, որ այս ձեռնարկությունը <<բաժնետիրական դրությամբ կը գործեր եւ մեծ շահեր ապահոռւած է հայ բաժանորդներուն: Վայրը կոչուած է պասմահանէ, ուր հետագային կառուցուեցաւ Իզմիր-Մանիսա երկաթուղային կայարանը>>⁸⁷²:

Զթագործարանը բացվել էր արքունի ֆերմանով, որի շնորհիվ զմյուռնահայ արհեստավորները դադարում էին կախում ունենալուց Կ. Պոլսի իրենց արհեստակիցներից, որովհետև պետական ձեռնարկությունը նրանց համար ընդհանրապես ապահովում էր արտադրանքի սպառումը կայսրության սահմաններում՝ ազատելով շուկայական իրացման հետ կապված դժվարություններից: Զմյուռնացի ձեռնարկուներին ուղղված՝ Ղուկաս կաթողիկոսի օրհնության գիրը (1792, հունիսի 15) բավականաչափ լույս է սփռում այդ իրողության վրա, որտեղ նա նշում է, որ օսմանյան իշխանությունը <<խրովք արքունական ազդողագոյն հրովարտակօք հրամայեալ է կառուցանել ի քաղաքոջո ընդարձակ տպարան եւ ձեզ՝ անվեհեր համարձակությամբ գործել ի նմա արուեստ ձեր՝ եւ թէ որպէս ինքեանք՝ պարոն տիրացու Ստեփաննոսն եւ խօջայ Յովհաննէսն կացուցեալք են լինիլ ի վերայ տպարանին... եւ թէ զհարդ յաջողմամբ Տեառն գլխատրեցեալ է մեծակառոյց եւ գեղեցկաշէն գործարանոյ անկասկած յումեքէ արհեստագործէք առատ շահեկանութեամբ>>⁸⁷³:

Այդ արհեստանոցում արտադրվում էին թաշկինակներ, երեսկալներ, հագուստի բաղադրիչներ և այլն: Այն հաջողությամբ գործեց շուրջ քառորդ դար, մինչև 1817 թ. ամռանը բռնկված հրդեհը, երբ այրվեցին բազմաթիվ տներ, <<200-ի չափ աւելի պակաս ի տանց հայոց, հին եւ նոր պասմախանայից ի յաճին դարձեալ>>, ինչպես հայտնում էր Զմյուռնիայի առաջնորդ Փիլիպոսը Ներսես Աշտարակեցուն⁸⁷⁴: Պետք է կարծել, որ տերերը դրանից հետո կարողացել էին նորոգել արհեստանոցը և վերսկսել իրենց արտադրությունը, համենայն դեպս, մինչև XIX դ. երկ-

քառորդին հարստացած և զմյուռնահայության լուսավորության մեկենաս դարձած Հակոբ Սարգսյանը, որն այդ արհեստը կատարելագործելով՝ լուրջ հաջողությունների էր հասել Եվրոպայում՝ Վիեննայում (նույն տեղում, 1900, 8 սեպտեմբերի): Ինչ ասել կուզի, այս փաստը ևս վկայում է փոքրասիական արևմուտքում արհեստի այս տեսակի զարգացման բարձր մակարդակի մասին:

⁸⁷² Պոյաճեան Գ., Եգեականի դիցուհին՝ Զմիւռնիան եւ զմիւռնահայ գաղութը, 1972, 1 հոկտեմբերի:

⁸⁷³ Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 573:

⁸⁷⁴ ՄՄ, արխիվ Ա. Երիցյանի, թղթ. 159, վավ. 170:

րորդ կեսը, երբ այն քանդվեց՝ կապված Զմյոռնիա-Քասաբա երկաթուղային կայարանի կառուցման հետ⁸⁷⁵։ Համենայն դեպս, այս արհեստանոցը գործեց շուրջ 60-ամյա մի ժամանակաշրջանի տևականությամբ, որ քիչ է հանդիպում ժամանակի օսմանյան մանուֆակտուրաների պատմության մեջ

Հազիվ թե հայ չթագործները հաշտված լինեին իրենց արհեստագործության համար աղետաբեր երկաթուղաշինության հետևանքի հետ։ Որոշակի փաստեր մենք չկարողացանք հայտնաբերել, միայն կարող ենք ասել, որ 1860-ական թթ. Զմյոռնիայում գործում էր ընդարձակ և իր տեսակի մեջ միակ այդպիսի ձեռնարկություն՝ «Մի միայն գործատուն է ծաղկենկար տպեալ կտաւոյ եւ է ի ձեռս հայոց. եւ ի նմա աշխատաւորք իբրեւ չորեք հարիւր⁸⁷⁶», գրում է «Բազմավեպը»։

Միննույն լրատվության մեջ, ի դեպ, «Բազմավեպն» ավելացնում է, որ հայերի ձեռքին է գտնվում «Եւ միւս եւս գործարան՝ հասարակ անօթոց»>> կարելի է կարծել՝ բրուտագործական արհեստանոց։

Վիլայեթի հայ ազգաբնակչությունը ևս զբաղվում էր ձիթապտղի մշակությամբ և համապատասխան ձեթի հնամենի արտադրությամբ, չոր մրգերի (հատկապես նարինջ, թուզ, չամիչ) մշակությամբ ու վաճառքով. «Ամենայն ազգ պտղոց գտանի անդ, այլ նարնջենին՝ անբաւ առատութեամբ, յորմէ յամենայն պարտէզս տանց գտանի⁸⁷⁷», - դարձյալ գրում է «Բազմավեպը»>։

Մանածագործական ձեռնարկությունները, որոնք հիմնվել էին XVIII դ. Կ. Պոլսում, Սալոնիկում, Ադրիանուպոլսում, ինչպես և Յալովայի թղթի գործարանը, երկար ժամանակ չեն գործել և փակվել են կարճատև գործունեությունից հետո։ Օտարերկրյա անհամեմատ ուժեղ մրցակցությունը և օսմանյան վերնախավի ու արքունիքի՝ հիմնական սպառողի քմահաճույքները անհաստատ էին դարձնում այս ձեռնարկությունների գոյության երաշխիքները⁸⁷⁸։

XVIII դ. էգեյանի ծովամերձ շրջաններում օսմանյան տնտեսության աշխուժացման դրսևորումներ, այսուհանդերձ աչքի էին զարնում։ Բավական ծավալների էր հավակնում բամբակագործական արտադրանքը։ Փոքրասիական կտրվածքով՝ Թիրեում, Բերգամայում, Դենիզլիում,

⁸⁷⁵ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 35։ Պոյաճեան Գ., նշվ. աշխ.։

⁸⁷⁶ Բազմավեպ, 1863, թիւ 1, էջ 9։

⁸⁷⁷ Նույն տեղում, էջ 12։

⁸⁷⁸ Տեւ Մեյեր Մ. Շ. նշվ. աշխ., էջ 271-272։

հայ արհեստավորները ներգրավվել էին բամբակագործական մանուֆակտուրային արտադրության մեջ, ինչը տեսանք Ջոյունիայի օրինակով: Այս քաղաքում վարպետ արհեստավորների մի մասը մասնագիտացել էր բամբակի հումքը և գործվածքեղենը ներկելու արհեստի մեջ: XIX դ. բամբակն այստեղ եփվում էր ալկալիական թույլ լուծույթի, ապա ձիթայուղի մեջ, իսկ մաքրվելուց հետո ստանում էր ապրանքային հրապուրիչ գույն⁸⁷⁹, որ, ի դեպ, հատուկ էր տեղական բարձրորակ արտադրանքին: XVII դ. երկրորդ կեսին Ջոյունիայի բեզեստենի ընդարձակումը վկայում է այն մասին, որ տեղական արհեստները այս ժամանակաշրջանում զգալի առաջընթաց էին ապրել: Ի դեպ, այդ համընկնում է ժամանակային այն փուլին, երբ էգեյանի մերձափնյա տարածքներում ավելի քան երբևէ, բնակչություն էին հաստատում հայ գաղթականները: Հայ արհեստավոր վարպետներն իրավունք ունեին առանձին խանութներ բանալ (որոշակի առանձնաշնորհումի դիմաց՝ գումար ներդնելով), առևտուր անել բեզեստենում⁸⁸⁰ այլակրոն արհեստավորների հետ միասին: Պետք է կարծել, որ այստեղ հայ արհեստավորներն ունեցել են առանձին տարածք, մահմեդականների խանութներին կից, ինչպես Օսմանյան Թուրքիայի միջնադարյան բեզեստեններում: Ինչպես էթնիկական հանրություններն էին առանձին թաղամասեր զբաղեցնում քաղաքներում, այնպես էլ նրանց առանձնացած համախմբումն էր բեզեստեններում:

Հայ արհեստավորները փոքրասիական արտադրությանը մասնակցում էին նաև բրդի վերամշակման և դրա բազմատեսակ արտադրության ասպարեզում: Հումքի առկայությունը բավական հնարավորություններ էր տալիս այդ արտադրությունը ծավալելու համար: Մանիսայում և Այդընում, ինչպես և կից շրջաններում, ոչխարաբուծությունը դեռևս XV-XVI դդ. զգալի տարածում ուներ: Այս իմաստով անհրաժեշտ է դիտել, որ Այդընի լիվայում ռայային թույլ էր տրվում տնօրինել մի քանի դյոնյում հողամաս՝ արոտավայրի համար, ընդամին, այդպիսի հողը թափու (այս դեպքում՝ հողօգտագործման) չէր տրվում: Քաղաքների մարդաշատ դառնալը սկսել էր սահմանափակել երբեմնի արձակ տարածություններ դուրս եկող անասնապահների տեղաշարժման շառավիղը և գործող օրենքները նրանց համար ապահովում էին իրենց զբաղմունքը շարունակելու հնարավորություն:

⁸⁷⁹ Eton W. A survey of the Turkish Empire, p. 227.

⁸⁸⁰ Porter J. Turkey. Its History and Progress, p. 399.

XV-XVII դդ. թուրքական քաղաքների արհեստագործական արտադրությունը բավականաչափ ազատորեն, իր արդյունքների որակի շնորհիվ, կարողանում էր այս կամ այն չափով հակակշռել Եվրոպայից ներմուծված ապրանքներին: XV դ. երկրորդ կեսին եվրոպական (ֆրենկի) բատիստը և մահուդը, մանավանդ Լոնդոնի մահուդը, Բրուսայի շուկայում փոխանակվում էին տեղական արհեստագործական ապրանքների հետ: Զմյուռնիայում ևս, ոչ պակաս չափով, քան թուրքական առևտրատնտեսական մյուս կենտրոններում, կատարվում էր շուկայական գնի վրա հենվող ապրանքափոխանակություն: Այս ամենով հանդերձ, տեղական արտադրանքը, այս դեպքում՝ Զմյուռնիայի արհեստավորների արտադրանքը, անկախ եվրոպական ապրանքների հետզհետե ընդլայնվող տեսականուց, ուներ իր կայուն սպառողը: Մինչև XIX դ. կեսը Զմյուռնիայում և մյուս քաղաքներում ու բնակավայրերում հատկապես զարգացում էր ապրել գործվածքեղենի արտադրությունը՝ ավանդական մանածագործության հիման վրա, որի արտադրական կարողություններն ու հմտությունները տարածաշրջանի հայ հանրությունները ժառագել էին հայրենիքից իրենց հեռացած նախնիներից (Սյունիք, Խարբերդ և այլն): Արհեստների մյուս տեսակներով զբաղվող հայերը սպասարկում էին ոչ միայն իրենց ազգակիցներին, այլև իրենց գործունեությամբ նպաստում էին տեղական հունքը մշակող տեղական արհեստագործական արտադրության զարգացմանը:

3. Զմյուռնիայի հայ վաճառականությունը

Զմյուռնիայի հայկական գաղթօջախի վերաբերյալ մեզ հայտնի ժամանակներից առաջ հայ վաճառականներն արդեն ավանդական կապեր ունեին փոքրասիական նավահանգիստների հետ: XII-XIII դդ. և դրանից հետո Վենետիկի ու Զենոպիայի առևտրի ընդլայնումը բյուզանդական պետության (նկատի ունենք նաև Նիկիան) տարանցիկ ուղիներում խթանեցին իտալական այդ քաղաքների առևտուրը նաև Արևելքի հետ: Հայ վաճառականների գործունեությունը տևական էր դառնում բուն Հայաստանի քաղաքների առևտրահանգուցային դերակատարության շնորհիվ: Այստեղից դեպի հյուսիս տանող ճանապարհները տանում էին դեպի Տրապիզոն, Կոստանդնուպոլիս, սրանց վրայով՝ սևծովյան այլ նավահանգիստներ, և մյուս կողմից, տարածվում դեպի Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած առևտրական ուղիները: Այս ժամանա-

կաշրջանում հայ առևտրականները մշտապես շփվում էին լեվանտի առևտրական կենտրոնների հետ, որտեղ, ինչպես նկատում է Հ. Մանանդյանը, <<սելջուկյան արշավանքներից հետո առաջացել էին հայկական գաղութներ>>⁸⁸¹։ Կարելի է կարծել, որ խոսքը վերաբերում է Էգեյանի շրջանի մի քանի այլ գաղթօջախների, բայց ոչ Ջմյուռնիային, և ոչ էլ ավելի վաղ ժամանակներից հայտնի՝ փոքրասիական Բերգամային (VI դ.) և Օպսիկիոն բանակաթեմին (Նիկիայի տարածք), որտեղ, ինչպես գրում է Հ. Բարթիկյանը, հայերը հիշվում են դեռևս X-XI դարերում⁸⁸²։

XIII դ. ջենովացիների ճանաչված և կայուն առևտրական կայաններից էին Ջմյուռնիան, Քիոսը, Միտելենեն և այլն, և նրանց հետ գործակցող հայ վաճառականները ևս կարող էին անկաշկանդ գործել այս տարածաշրջանում։ Մ. Օրմանյանը գրում է, որ XIV դ. <<Շատ զարգացած էր հայոց (Կաֆայի) դիրքը գենուացւոց պաշտպանութեան ներքեւ>>⁸⁸³։ Հայտնի է նաև, որ նույն ժամանակներում, ինչպես և Կոստանդնուպոլսում և Վենետիկում, Ջմյուռնիայում ևս իրենց առևտրական կայանն ունեին դրիմահայ վաճառականները⁸⁸⁴։ Վենետիկի և Ջենովայի առևտրական գործառնությունների ոլորտում Ջմյուռնիան Արևելքի և Արևմուտքի ապրանքափոխանակության կարևոր հանգուցակետն էր։ Հայ վաճառականները Էգեյանի մատույցներն էին հասնում Հայաստանի ամենատարբեր շրջաններից՝ տեղափոխելով ոչ միայն դրանց հումքը և տնայնագործական արտադրանքը, այլև պարսկական տարածքների հումքն ու կիսաֆաբրիկատները։

Նիկիայի կայսրության և դրան ժամանակակից ու հաջորդած փոքրասիական բեյությունների ժամանակաշրջանում (XIII դ.) Ջմյուռնիան Կոստանդնուպոլսի, Տրապիզոնի և Այաշի հետ միասին մտնում էր տարածաշրջանի կարևոր նավահանգիստների շարքը, ընդամին, Ջմյուռնիան գերծ մնաց մոնղոլական արշավանքներից, որ առավել նշանակալի էր դարձրել այդ նավահանգստի ռազմավարական նշանակությունը միջազգային առևտրի համար⁸⁸⁵։ Այդ նշանակությունը պահպանվեց նաև Ջենովայի հետ Միքայել Պալեոլոգի հարաբերությունների դաշնակցային բնույթով։ Ջենովան, ի հեճուկս իր մշտական մրցակից Վենե-

⁸⁸¹ Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, էջ 166։

⁸⁸² Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, հ. 3, էջ 73-74։

⁸⁸³ Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Մայր աթոռ Ս. Էջմիածին, էջ 2421։

⁸⁸⁴ Միքայելյան Վ. Ա., Դրիմահայոց պատմություն, էջ 69։

⁸⁸⁵ История Византии. В трех томах, т. 3, с. 36.

տիկի, անմաքս առևտրի ազատություն էր ստացել Նիկիական պետության նշված տիրույթներում⁸⁸⁶: Այս կերպ Ջմյուռնիա, Մանիսա, Դենիզլի և փոքրասիական այլ քաղաքներ թափանցեցին իտալացի առևտրականները՝ ձեռնարկելով նաև տեղական հումքի մշակմանն ու իրացմանը: XIII-XIV դդ. պետք է դիտել որպես իտալացիների հետ հայ առևտրականության տնտեսական կապերի զարգացման որակապես նոր փուլ արդեն XIII դ. վերջին և XIV դ. սկզբին ջենովացիներն իրենց թաղամասերն էր հիմնել Ջմյուռնիայում⁸⁸⁷, որ վկայում է տարածաշրջանում նրանց առևտրատնտեսական կայուն կացության մասին: 1352 թ., ի դեպ, ջենովացիներին տրվեց Մանիսայի շիֆի արդյունահանման մենաշնորհը, որի հետևանքով նրանք ընդլայնեցին եվրոպական տեքստիլ արդյունաբերության հումքային մատակարարման շրջանակները⁸⁸⁸:

Հայ-իտալական առևտրական սերտ կապերի վկայությունն է և այն, որ XIII դ. վերջին Հայաստանում բավական լայն շրջանառության մեջ էին իտալական ոսկե դուկատները⁸⁸⁹:

Ջմյուռնիայում ջենովացիներն իրենց դիրքերն ավելի ամրացրեցին XIV դ. երկրորդ քառորդին, երբ Կղեմես Զ պապի ներշնչանքներով Վենետիկի, Կիպրոսի, ինչպես և Հռոդոսի ու Լոմբարդիայի ասպետները 1343 թ. արշավանք նախաձեռնեցին թուրքերի դեմ՝ այստեղից հետ մղելով նրանց և Այդընօղլուներին⁸⁹⁰: 1346 թ. գրված մի մաշտոցի հիշատակարանում արշավանքի նախապատրաստությանը ականատես գրիչը նշում է. <<Այլ որպես եւ ոյր աղագաւ զայն կարգս գրեցի, վասնզի յառաջ Գ ամաց զի Կլեմենդոս պապն վեցերորդն զիշխանումն Իմպերտ անուն եւ մականուն Տոֆին, կոմս Վիենիոյ արարեալ եւ կարգեալ զլիաւոր ընդդէմ թուրքանց ի վանումն նոցա եւ յդեաց ի քաղաքն Զմիւռնիոյ Լիկեացոց: Եւ իմ յայնժամ տեսեալ զկարգ առնողութեանն գրեցի զստորագրեալս արարողութիւնն>>⁸⁹¹:

⁸⁸⁶ Ալպոյաճեան Ա., Ջմյուռնիո տպարանները, էջ 68:

⁸⁸⁷ История Византии, т. 3, с. 114.

⁸⁸⁸ Inalcik H. The Ottoman Empire. 1300-1600, p. 134.

⁸⁸⁹ Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 265:

⁸⁹⁰ Ալպոյաճեան Ա., Անհետացող հայ գաղութներ, 1923, թիւ 5, էջ 135:

⁸⁹¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Գ, էջ 358:

Դաշնակիցների նավատորմն ուղղվեց դեպի Այդընի էմիրություն և գրավեց Զմյուռնիայի մեծ մասը (առափնյա Զմյուռնիա)՝ տիրելով այն մինչև Լենկթեմուրի կողմից քաղաքի գրավումը (1402): Այդընի էմիրության դեմ այս զինակցությունը նաև ցույց է տալիս Զմյուռնիայի կարևորությունը միջազգային ապրանքափոխանակության ասպարեզում: Այդ նշանակությունը պահպանվեց և ընդլայնվեց XV-XVI դդ. և հետագայում: Դրան մի հայտնի չափով նպաստեց Միջերկրական ծովի ասիական նավահանգիստների դերակատարության նվազումը⁸⁹², որի հետևանքով առանձնապես աշխուժացան ասիական քարավանային ուղիները, որոնք մի քանի ճյուղավորումներով տանում էին դեպի Կոստանդնուպոլիս և Զմյուռնիա: XVI դ. միջերկրածովյան առևտրում Վենետիկի թուլացումը պետք է փոխհատուցվեր Սև և Էգեյան ծովերում եվրոպացիների հետ լեվանտական առևտրի ընդլայնումով, որից դարձյալ շահեցին այդ նավահանգիստները⁸⁹³: Սրանով հանդերձ, նույն ժամանակներում պարսկական մետաքսի առևտուրը նշանակալիորեն վնասվում էր թուրք-իրանական պատերազմի ստեպ բռնկումներից, երբ քարավանները հարձակումների թիրախ էին դառնում հակառակորդ բանակների համար և կամ դրանց բախումների պատճառով անվերահսկելի դարձած ավազակային ճնշումների արդյունքում⁸⁹⁴:

Վենետիկից և Ջենովայից բացի, հայ վաճառականությունը դեռևս XIII դ. առևտրական կապեր էր հաստատել իտալական այլ քաղաքների հետ: Դրանցից հայերի համար ամենահին ասպնջական քաղաքը Անկոնան էր: 1248 թ. հայերն այստեղ հաստատել էին հոգետուն, նախքան հաջորդ հարյուրամյակում նրանց շատ ավելի մարդաշատ ներկայությունը Վենետիկում և Ջենովայում⁸⁹⁵: Մինչև XVIII դ. հայերն Անկոնայի հետ պահպանեցին իրենց վաղեմի առևտրական հարաբերությունները ներմուծելով այնտեղ մետաքս, բուրդ, համեմունքներ և այլն: 1624 թ. Ապրոյան տոհմից Հակոբը գործառում էր այս՝ համեմունքների վաճառքի ասպարեզում, պղպեղ ուղարկելով Անկոնա⁸⁹⁶: Հետագայում Անկոնայի հայերի մի մասը լուծվել է տեղի իտալացի ազգաբնակչության մեջ, որ հայրենի եկեղեցուց հեռանալու անխուսափելի հետևանքն էր:

⁸⁹² Միւրմէնան Ա., Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Ա, էջ 274:

⁸⁹³ Subhi L. The Era of Suleyman Magnificent, p. 449.

⁸⁹⁴ Baibourtian V. International Trade and the Armenian Merchants , p. 81.

⁸⁹⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց, էջ 358:

⁸⁹⁶ Ալիշան Դ., էջ 452-453:

Իտալական քաղաքներում հայ վաճառականության տարածվելը կապվում էր այդ երկրի տնտեսության մեջ նրա անհերքելի նշանակության, հայ առևտրական կապիտալի գործողության շառավիղների ընդլայնման հետ: Զմյուռնացի վաճառականներն ապրանքների անմիջական արտահանման և տեղում իրացնելու գործառույթները շարունակեցին հետագա դարերում ևս, XV-XVII դդ.: Դրան նպաստեցին Վենետիկի հանրապետության տեղական արտադրության զարգացման միտումները, որոնք ամենից առաջ ենթադրում էին հումքի պահանջարկի աննախընթաց ընդլայնում: Այս վերջինի թելադրանքով Վենետիկի կառավարությունը բարենպաստ պայմաններ էր ստեղծում լեվանտական առևտրին փոքրասիական հումք մատակարարող հայ վաճառականության համար: 1576 և 1579 թթ. Վենետիկի սենատը զեղչեց Պարսկաստանից ներմուծված մետաքսի մաքսը, իսկ 1589 թ. որոշմամբ ավելի թեթևացրեց կամ անմաքս դարձրեց այդ ապրանքի ներմուծումը, որի մի զգալի մասը բաժին էր ընկնում Զմյուռնիայի նավահանգստին և այնտեղ գործառող հայ վաճառականությանը⁸⁹⁷: Մաքսերը նվազեցին նաև անգորական բրդի ներմուծման դեպքում՝ 1557 թ., իսկ 1623 թ. Զմյուռնիայով պարսկական մետաքսի տեղափոխման համար ստեղծվեցին առավելագույն բարենպաստ պայմաններ, որոնց համեմատ մաքսը <<չորրորդ մասն էր հարկին, զորս այլոց պահանջէին>> վենետիկյան իշխանությունները⁸⁹⁸: Տոսկանայի դուքսը ևս 1591 թ. հրովարտակով առանձնաշնորհումներ էր տրամադրում հայերին՝ հրավիրելով նրանց բնակություն հաստատել Լիվորնոյում. 1646 թ. այստեղ հանգրվանած 12 հայ խոշոր վաճառականներից 3-ը գմյուռնացիներ էին, որոնք թվաքանակով զիջում էին միայն կեսարացի հայերին⁸⁹⁹: Լիվորնոյում գործող վաճառականներից էր Զմյուռնիայում սաղմոսարան գրչագրած Սուքիասը, ով ուշագրավ տողեր է թողել իր առևտրական զբաղմունքի և հոգեշահ գործունեության մասին. <<Աւարտեցաւ ի թուականիս Հայոց ՌՃԺԱ (1672) ամին եւ յունիսի ԻԱ (21) յաւուր շաբաթու ի քաղաքն Զմիւր ընդ հովանեաւ Սուրբ Բարդուղիմեոսի եկեղեցուն եւ այլ կայր գիրքս այս ի ձեռին իմում ոչ կարէի աւարտել զի էի վաճառող ընչից. երթայի քաղաքէ

⁸⁹⁷ Նույն տեղում, էջ 440:

⁸⁹⁸ Նույն տեղում, էջ 449:

⁸⁹⁹ Ուղուրլեան Մ., Պատմութիւն հայոց գաղթականութեան, էջ 45, 50:

ի քաղաք այլ երկիր որ կոչի Տալիա ի քաղաքս Լիվոռնայ (Լիվոռնո-Ա. Խ.) ի թագաւորութիւնն գրանդուկայ Ֆերդինանդոս Մեդիչի...>>⁹⁰⁰:

Հռոմի կաթոլիկական վերնախավը, սակայն, շարունակում էր դավանական անվստահության դրսևորումները հայ վաճառականներին հովանավորելու հարցում: Այդպիսի վերաբերմունք ցուցաբերվեց Նոր Ջուդայի վաճառական խոջա Նազարի նկատմամբ 1629 թ., երբ նա Հռոմի Ս. Հավատոյ տարածման ժողովի առջև խնդրագիր էր ներկայացրել՝ պապական պետության և կաթոլիկական այլ քրիստոնեական երկրներում առևտրական կայաններ հիմնելու վերաբերյալ: Խնդրագիրն այդպես էլ մնաց թղթի վրա, որովհետև Ս. Ժողովը որոշել էր, որ այդ թույլտվությունը կշնորհվի <<այն վաճառականներուն միայն, որոնք կաթողիկէ են եւ կամ ըլլալ կուզեն>>⁹⁰¹:

Հիբավի, իտալական քաղաքների հետ գմյուռնահայ վաճառականների առնչությունների մասին բավարար պատկերացումներ կազմելու համար կարևոր նշանակություն է ստանում Լիվոռնոյի Տոսկանայի դքսության այդ կենտրոնի հետ հայ վաճառականների սերտ շփումների բացահայտումը: Լիվոռնոյում հայերն առևտրական գաղութ էին ստեղծել դեռևս XVI դ., թերևս ավելի վաղ, և որի հետ գմյուռնահայերի առևտրական կապերը պահպանվեցին մինչև XIX դ. կեսը: Արդեն XVI դ. Լիվոռնոն դարձել էր ճանաչված հանգուցակետ տարանցիկ առևտրում՝ կարևոր տեղ և համարում ձեռք բերելով Արևելքի երկրների և Արևմտյան Եվրոպայի ապրանքափոխանակության մեջ: 1578-1605 թթ. Լիվոռնոյի նավահանգիստ մտած անգլիական և հոլանդական նավերի թիվը մեծացել էր հինգ անգամ⁹⁰², որ վկայում էր նրա միջազգային առևտրական աճող նշանակության մասին: Տոսկանայի դքսի վերոհիշյալ հրովարտակից հետո էր, որ դրանից օգտվեցին նաև գմյուռնահայերը՝ բնակության մեկնելով այնտեղ: Այդ նշանակում էր, որ այստեղ նրանք պետք է հիմնած լինեին վաճառատներ՝ դառնալով իտալական արտադրական ապրանքների իրացման անմիջական մասնակիցը՝ թողնելով միջնորդ առևտրականի գործունեության շատ ավելի պարտադրված և անձուկ սահմանները:

⁹⁰⁰ Մայր ցուցակ... Մատենադարանին Մխիթարեանց, հ. Ա, էջ 349:

⁹⁰¹ Ակինեան Ն., Մովսես Գ Տաթևացի հայոց կաթողիկոսն..., էջ 386-387:

⁹⁰² Рутенбург В. Италия и Европа накануне нового времени, с. 33.

Օտար, այդ թվում և հայ վաճառականներին 1593 թ. առանձնաշնորհումներ էր տվել նաև Ֆլորենցիան: Ի թիվս այլ արտոնությունների, նրանց տրվում էր դավանական ազատություն, ինչպես և առանձին համայնք կազմելու իրավունք⁹⁰³: Ակներև է, որ դրանով հայ վաճառականների գործունեությունը իշխանությունների կողմից դիտվում էր որպես առևտրի մշտական ու հուսալի կապերի երաշխիք, որ պետք է նպաստավոր լիներ իտալական առևտրի համար՝ լեվանտի ապրանքափոխանակության ասպարեզում: Ֆլորենտական հրովարտակն այս տեսակետից հետաքրքրական է նրանով, որ երաշխավորում էր ոչ միայն առևտրական, այլև քաղաքացիական, կրոնական և իրավական որոշակի ազատություններ, որպիսիք հետադարձ ազդեցությամբ խթանելու էին Ֆլորենցիայի առևտրական շրջանառության ընդարձակմանը լեվանտի մրցակցական պայքարում:

XVII դ. զմյուռնահայերի թիվն ավելի էր մեծացել Լիվոռնոյում: 1663 թ. Ս. Հավատոյ տարածման ժողովի քարտուղար Ալբերիչին արձանագրում էր, որ այդ տեղաշարժը կատարվել է <<դոսկանական տերութեան շնորհած արտոնութեանց պատճառաւ եւ վաճառականաց հետզհետէ յաճախելովն ի Լիվոռնոյ>>⁹⁰⁴:

Լիվոռնոյի հետ աշխույժ առևտուր էին անում և այնտեղ բնակություն հաստատում ագուլեցի, ջուդայեցի, նախիջևանցի և կապանցի հայ վաճառականները ևս: Զմյուռնիայից Լիվոռնո էր անցել մեծահարուստ հայ վաճառական Անտոն Չելեպին, որը կանխատեսելով սուլթանի ոտնձգություններն իր սեփականության նկատմամբ, այդ քաղաքի բանկ էր տեղափոխել յոթ միլիոն լիրա⁹⁰⁵ (1656 թ. կամ դրանից քիչ առաջ): Հայ

⁹⁰³ Ուդուրլեան Մ., նշվ. աշխ., էջ 253-255:

⁹⁰⁴ Նույն տեղում, էջ 51:

⁹⁰⁵ Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, էջ 57: Բրուսայում, Զմյուռնիայում և Կ. Պոլսում սեփական տներ և ապարանքներ ունեցող Անտոն Չելեպին, որն իր հարստությամբ հայտնի էր օսմանյան արքունիքում և Եվրոպայում, հատկապես Զմյուռնիայում աչքի էր ընկնում իր մեծագումար գործառնություններով: <<Եւ յորժամ գային կարաւանք վաճառականաց յաշխարհէն Պարսից ի քաղաքս յԻզմիր, զամենայն բեռինս կարաւանին միանգամայն գներ զինչ եւ լինէր, թէ ապրիշում, և թէ թաֆարիզ եւ միանգամայն վճարէր զգինն: Սոյնպէս եւ յաշխարհէն ֆռանկաց յորժամ գային ծովով նաւքն բարձեալ բեռամբ պատուական ստացուածովք, զբնաւին բեռն միանգամայն ինքն միայն գներ եւ վաղվադակի զգինն վճարէր>>, գրում է Առաքել Դավրիժեցին (Պատմութիւն, էջ 338-339): Մ. Ս. Մէյերը ի դեմս Անտոն Չելեպու՝ տեսնում է XVII դ. եվրոպական շուկաներում

ստվարացած համայնքի հոգևոր պահանջմունքներից ելնելով, Լիվոռնոյում բնակվող մի ուրիշ մեծահարուստ՝ Ապրո Չելեպին, 1663 թ. դիմել էր Ֆլորենցիայի պապական նվիրակին՝ խնդրելով միջնորդել Հռոմի առջև, Լիվոռնոյում եկեղեցի կառուցելու համար: Ինչպես նախկին ժամանակներում, Հռոմն առարկություններ ուներ ոչ կաթոլիկական դավանանքների դեմ, ուստի այդ բնույթի տարաձայնությունները հաղթահարվեցին բավական ուշ: Հավաստիանալու համար, որ հայերը կառուցվելիք եկեղեցում իսկապես կհետևեն կաթոլիկական ծեսերին, Ս. Ժողովն առաջարկել էր Ապրո Չելեպին՝ ընդունել կաթոլիկական դավանանքը: Վերջինս, ինչպես գրում է Մ. Ուղուրյանը, <<վշտացաւ խնդրոյն անյաջող ելիցն համար, ուստի բնաւ յանձն չառաւ հաւատոյ դաւանութիւն տալ>>⁹⁰⁶: Եկեղեցու շինարարությունն ամբողջովին ավարտվեց միայն 1714 թ. և օծվեց Պիզայի արքեպիսկոպոսի հրամանով⁹⁰⁷:

Լիվոռնոյում և իտալական այլ քաղաքներում զմյուռնահայ վաճառականները իրացնում էին Թուրքիայից բերած գյուղատնտեսական հումքը, ինչպես և լեվանտի շուկաներում պահանջարկ վայելող ապրանքներ՝ շերամ, մուշկ, որդան կարմիր, բուստ, սաթ, մեղրամոմ, բրդեղեն, կերպաս և այլն: Հակառակ ուղղությամբ նրանք Թուրքիա էին ներմուծում եվրոպական արդյունաբերական արտադրանք՝ գործվածքեղեն, կոշիկ, արդուզարդի առարկաներ, կոմիներ և այլ ապրանքներ⁹⁰⁸: Ֆրանսիացի ճանապարհորդ Թուրնեֆորը (XVII դ.) տեղեկացնում է, որ հայ վաճառականները Լիվոռնո էին արտահանում մետաքս, բամբակ, բրդի թել:

Լիվոռնոյում հաստատված հայ վաճառականները տնականորեն բնակվելով այս քաղաքում, մասնակցում էին բուն իսկ իտալական քա-

հաստատված հայ վաճառականության գործառության ներկայությունը՝ Զմյուռնիայի հոլանդական առևտրական կայանների մեջ առանձնացնելով նաև հայկական **Էքսեն** առևտրական տունը (տես Мейер М. С. Османская империя в XVIII веке, с. 59):

⁹⁰⁶ Ուղուրլեան Մ., Պատմութիւն հայոց գաղթականութեան, էջ 52:

⁹⁰⁷ Ալիշան Ղ., Միսական, էջ 452: Լիվոռնոյի հայկական եկեղեցու շինարարությունը բավական երկար է տևել. նախ գնվել է եկեղեցու տարածքը՝ 1692 թ., <<առաջնորդութեամբ Գեորգայ որդւոյ Ապրո Չելեպոյ գնեցին զեկեղեցատեղին... որ է 26.500 իտալական լիրայ կամ ֆրանկօ>> (նույն տեղում): Այն նորոգվել է <<յամի տեառն 1701 եւ ի թուոյն Հայոց ՌՃԾ ծախիւք Հայկազանց բնակչաց քաղաքիս>>: Նորոգումն իրականացրել էր իտալացի ճարտարապետ Օլիմթոս Բարատոսին, ինչպես գրված է եկեղեցու պահպանված արձանագրություններից մեկում:

⁹⁰⁸ Steu Akdag M. Turkiyenin İktisadi ve İctimai Tarihi, C. 2. Istanbul, 1974, s. 436.

ղաքների միջև ընթացող առևտրին, ինչը մղում էր նրանց առնչվել նաև դրանց առօրեական կյանքին: Հետաքրքիր է, որ 1746 թ. Լիվոռնոյից Լուկա քաղաք՝ Ս. Տավինոյի տոնախմբությանն են գնում 13 հայ վաճառականներ, որոնցից 3-ը, ի դեպ, գմյուռնացիներ էին: Լուկան հայ վաճառականներին քաջածանոթ քաղաքներից էր. դեռևս XV դ. պարսկական մետաքսի քարավանային ուղիներից մեկն անցնում էր Բրուսայով, այնուհետև Էգեյան կամ Մարմարա ծովերով ձգվում Իտալիա՝ Վենետիկ և Լուկա, այստեղից էլ ուղղվում դեպի եվրոպական արդյունաբերական այլ կենտրոններ: Հայերը պետք է որ վաղեմի առնչություններ ունենային Լուկայի հետ, որովհետև վերոհիշյալ տոնախմբության ժամանակ նրանք պնդում էին, որ ազգակցական կապեր ունեն նշված սրբի հետ և որի նշխարների մի մասը նրանք բերում են Լիվոռնո⁹⁰⁹:

Ուշագրավ են Չաքարիա Ագուլեցու հայտնած տեղեկությունները իտալական քաղաքների հետ Ձմյուռնիայի առևտրական կապերի վերաբերյալ: Չաքարիան ճանապարհորդել է 1647-ից սկսած տասնյակ տարիներ՝ Ագուլիս-Ձմյուռնիա երթուղով: Այն ձգվում էր դեպի Վենետիկ, այստեղից՝ Ամստերդամ և Տրիեստ: Այս հեղինակը հատուկ տեղ է տալիս Ձմյուռնիա-Լիվոռնո երթուղու նկարագրությանը⁹¹⁰, նա անցել է բանուկ առևտրական ուղիներով՝ Պարսկաստան, ապա Թուրքիա՝ Էրզրում-Թոքատ-Ձմյուռնիա գծով: Նրա անցած ճանապարհները բավական հաստակ և բնութագրական պատկերացումներ են տալիս պարսկական մետաքսի ցամաքային հանգրվանների և ապա դրա արտածման եվրոպական քաղաքների մասին, որ ընդլայնում է լեվանտական առևտրի տարանցիկ ուղիների վերաբերյալ մեր իմացությունը: Ինչ վերաբերում է Թուրքիայի ներքին երթուղիներին, որոնցից օգտվում էին XVII դ. Ձմյուռնիայի նավահանգիստ մեկնող հայ վաճառականները, ապա այստեղ, այլ երթուղիների թվում պետք է առանձնացնել Գիլանից բերված մետաքսի ընթացքը՝ Թավրիզ-Վան-Թոքատ-Ձմյուռնիա երթուղով: Թավերնիեն վկայում է, որ այս բանուկ երթուղու շնորհիվ բուն Թավրիզում հաստատվել էին <<բազմաթիվ հայ ընտանիքներ՝ առևտրով վաստկուած ընդարձակ հողերու տէր, որոնք առեստուրը պարսիկներէն լաւ կըմբռնեն...Հոն կան անհամար թիւ մը վաճառականներու եւ անհուն քանա-

⁹⁰⁹ Ալիշան Դ., նշվ. աշխ., էջ 451:

⁹¹⁰ Չաքարիա Ագուլեցու Օրագրությունը, էջ 15-16:

կութեամբ ամեն տեսակ ապրանքներ, մասնաւորաբար մետաքս, որ կը բերուի Գիլանի նահանգէն եւ ուրիշ վայրերէ»⁹¹¹:

Հարկ է ավելացնել, որ Թոքատը նա իր ամուր կապերը Զմյուռնիայի հետ պահպանում էր մինչև XVIII դ. սկզբները և մասամբ՝ հետո: Մի քանի տասնամյակ անց, 1701 թ. սեպտեմբերին Թուրնէֆորը վկայում էր Կարին-Թոքատ առևտրական ուղում հայերի զանգվածային մասնակցության մասին. <<Մեր կարավանը, - գրում է նա, - կը բաղկանա ոչ աւելի քան երեք հարիւր հոգիէ, գրեթէ բոլորն ալ հայեր, որոնք մետաքս կը տանին Թոքատ, Զմիւռնիա և Կ. Պոլիս>>⁹¹²: Թոքատն իր առևտրական նշանակությունը պահպանում էր նաև գրեթէ մեկ հարյուրամյակ անց. Նապոլեոնի դեսպան գեներալ Գարդանը գրում էր, որ Թոքատ քաղաքը <<մի պահեստ է Իզմիրի ապրանքների համար, որոնք հետո տարածվում են դեպի Էրզրում, Կեսարիա և Մոսուլ>>⁹¹³:

Բավական լայն շառավիղ ունի Զաքարիայի առաջին եվրոպական ուղևորությունը՝ Վենետիկ-Ամստերդամ-Լիվոռնո-Ջուստից-Կալիս-Մալիկանտա-Լիվոռնո-Մեսինա-Զմյուռնիա երթուղով: Ակնհայտորեն նկատելի է, որ իր գործառնություններով նա հիմնականում առնչվում է իտալական առևտրական կենտրոններին, որոնց հետ զմյուռնահայերն ունեին ավանդական կապեր:

Դեռևս առաջին ուղևորության ժամանակ Զաքարիան նշել է իր օրագրում. <<Մեր աքուլաց շատ բազրկան կեր Իզմիր>>⁹¹⁴: Հիրավի, դատելով հիշատակարանից, 1639 թ. հետո (նկատի ունենք այդ տարվա՝ Կասրե-Շիրիհի թուրք-պարսկական հաշտության պայմանագիրը) Զմյուռնիայում ստվարացել էր Արևելյան Հայաստանից եկած վաճառականների թվաքանակը, որոնց մեջ՝ ջուղայեցիներ, պոնտեցիներ, նախիջևանցիներ, ագուլեցիներ, երևանցիներ և այլն: Լիվոռնոյի, Մարսելի, Ամստերդամի և եվրոպական այլ կենտրոնների հետ առևտուր անող այդ վաճառականները իրենց կոչում էին XVII դ. և հետագայում նա ճանաչում գտած **փարսինախայ** հավաքական անվամբ⁹¹⁵:

Զմյուռնիայում գործող հայ վաճառականության՝ տարանցիկ առևտրին մասնակցելու տնտեսական հիմքը XVI դ. մինչև XVIII դ. 40-ական

⁹¹¹ Քիւրտեան Յ., Նիւթեր, էջ 31:

⁹¹² Նույն տեղում, էջ 37:

⁹¹³ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. Զ, էջ 91:

⁹¹⁴ Նույն տեղում, էջ 160:

⁹¹⁵ Սարուխան Ա., Հոլանդան եւ հայերը, Վիեննա, էջ 20:

թթ. մնում էր Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի գյուղատնտեսական հումքի արտադրությունը: 1639 թ. վերոհիշյալ պայմանագրից հետո այդ առևտրական ուղիներում սկսվեց հանդարտության շրջան, որ դրականորեն ազդեց ինչպես ներքին՝ փոքրասիական, այնպես էլ Կ. Պոլսի, Տրապիզոնի, Հալեպի, Ջմյունիայի և միջերկրածովյան առևտրական ուղիների աշխուժացման վրա: Սակայն Էգեյանի շրջանում դրությունը պետք է բարդանար Կանդիայի պատերազմի (1645-1669) պատճառով, որ բավական վնաս հասցրեց արտաքին, մասնավորապես Ջմյունիա-Վենետիկ առևտրին: Իրենց հերթին, Ջմյունիա տանող քարավանային ուղիները դարձան անապահով, ուժեղացան հարստահարությունները, հաճախադեպ՝ կողոպուտներն ու թալանը⁹¹⁶:

Այսուհանդերձ, քարավանային ճանապարհը, անկախ իր խափանումներից, գործում էր, որի վկայությունը տալիս է Զաքարիա Ագուլեցու <<Օրագրությունը>>: Իր ճանապարհորդությունների ընթացքում Զաքարիան անցել է նշված քարավանային ուղիներով մինչև Ջմյունիա և ապա Եվրոպա: Նա առաջին անգամ Ագուլիսից դուրս է եկել 1647 թ. մարտին՝ արձանագրելով. <<Մին բեռն ապրիշիմով (մետաքս) գնացի դեբի Ըզմիր>>⁹¹⁷: Ագուլեցի այս վաճառականի ուղին ժամանակի բանուկ անցումային գծերից մեկն էր, որն ընդգրկում էր Ագուլիս-Նախիջևան-Երևան-Էրզրում-Թոքատ-Ջմյունիա քարավանային երթուղին: Ագուլեցի վաճառականների այս ընթացքը Էրզրումում սովորաբար միանում էր Նոր Ջուղայի վաճառականների երթուղուն. <<Ես էլ-հայտնում էր մեկ այլ վաճառական՝ խոջա Սաֆարը,-Սպահանայ կարավանայ հետ եկի Թարվեզ: Տեղէն՝ Արզրում, Թոխաթ, մինչև Իզմիր>>⁹¹⁸: Այս ուղին ժամանակային որոշ ընդհատումներով (պարսկա-թուրքական ընդհարումների ժամանակ) բանուկ էր հատկապես XVII դարում և հաճախ շրջանցում էր Բրուսա-Էնկյուրի գիծը. <<Առանց Էնկյուրիէն և Պրուսայէն անցնելու,-գրում էր Թավերնիեն,-Թոքատէն ուղղակի Իզմիր ջորիով քսանը եւ հինգ օր է, իսկ ուղտով՝ քառասուն օր>>⁹¹⁹: Ուշագրավ է, որ Զաքարիան անցել է նաև Ջմյունիա-Մանիսա-Բրուսա ցամաքային ճանապարհով, որ բանուկ էր դարձել դեռևս XIV-XV դդ.⁹²⁰: Այս ուղիով

⁹¹⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Գ, էջ 416-417:

⁹¹⁷ Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, էջ 71-72:

⁹¹⁸ Տէր-Յովհաննէսն Զ., Պատմութիւն Նոր Ջուղայո, էջ 185:

⁹¹⁹ Տես Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Ետրկիոյ հայոց, էջ 1263:

⁹²⁰ Inalcik H., նշվ. աշխ., էջ 124:

էր իրականացվում նաև Էգեյանի շրջանի բամբակի և բամբակագործական արտադրանքի արտահանումը (Բերգամայից, Դենիզլիից և այլն) Եվրոպա, որը և հումքի արտահանման կարևոր ուղու նշանակությունը պետք է պահպաներ նաև XVIII դ.:

Իրենց հարստությամբ ու ազդեցությամբ պարսկահայ վաճառականներից հետ չէին մնում Ջմյուռնիայում դեռևս նախորդ դարերում հաստատված կեսարացի ու եվդոկացի հայերը: Մրանց մի մասը, ինչպես և արևելահայ վաճառականները, դարձան տեղաբնակներ՝ Ջմյուռնիայում կառուցելով տներ, Էգեյանի առափնյա բնակավայրերում և գավառական տարածքներում ձեռք բերելով ընդարձակ հողատարածություններ և այլն: Ապրոյան գերդաստանից եզակի չէր Մատթեոսի (XVII դ. կեսերին Կոստանդնուպոլսում հանրաժանոթ Ապրո Չելեպու որդու) օրինակը, ով 1680-ական թթ. թեկուզ և չարաբաստիկ, տուն էր կառուցել Ջմյուռնիայում: Երթնեկ հայ վաճառականների խմբերը, մինչդեռ, բնակվում էին նավահանգստին կից խաներում և հյուրատներում: Ա. Այվազյանը հիշատակում է <<ծովեգերեայ Տերվիշ օղլու խանը բնակող>> կեսարացի և եվդոկացի հարուստ հայերին, որոնք 1743 թ. նվիրատվություններ էին արել Ջմյուռնիայի եկեղեցու վերակառուցմանը⁹²¹: Կեսարացի էին նշանավոր Յուսուֆյանները և Էքիզյանները XVIII-XIX դդ.: Առաջինների մի շատավիղը XVIII դ. սկզբին տեղափոխվել էր Ջմյուռնիա և փեսայացել Ապրոյաններին: Մետաքսի փոքրասիական առևտրում զբաղված վիրաբնակ վաճառականները ևս հանգրվանում էին այստեղ՝ ափ առնելով մշտական բնակության համար: XVIII դ. առաջին կեսին Տփղիսից եկած վաճառական էր Ջմյուռնիայում վախճանված Կուլիկենց Դավթի որդի Պապոն (Պապոյանների նախնին), որի տոհմի անդամները հետագայում իրենց հեղինակության շնորհիվ օգտվում էին արտատարածական կարգավիճակից, այսինքն վայելում էին, ինչպես կոտեսներ քիչ անց, անգլիական հյուպատոսարանի՝ օրինականորեն ամրագրված հովանավորությունը: Ջմյուռնացի հայերն ուղղակի կապ էին պահպանում Տփղիսի իրենց հայրենակիցների հետ: 1776 թ. հունվարի 15-ի թվակիր մի վավերագրից պարզվում է, որ այդ քաղաքն էր մեկնել զմյուռնաբնակ վաճառական Եսային՝ այնտեղ բնակվող Թաղայի որդի Մկրտումի հետ

⁹²¹ Այվազեան Ա., Շար հայ կենսագրութեանց, հ. 3, էջ 129:

առևտրական վեճը կարգավորելու համար⁹²²: Առհասարակ Ձմյունիայում գտնվող եկվոր վաճառականները բավական հետքեր են թողել իրենց ներկայության մասին, ճիշտ այնպես, ինչպես Հայաստանի գավառներից եկած վաճառականները Կոստանդնուպոլսում: 1646 թ. կեսարացի խոճա Մուրատը Ճիհանշայի հետ միասին ճաշոց է նվիրել Ձմյունիայի հայոց եկեղեցուն⁹²³, իսկ նույն եկեղեցու մի ձեռագրի հիշատակարանում (1662) հիշվում են կազմել տվող բարեգործները՝ պոլսաբնակ երևելի վաճառական և գործիչ, վանեցի խոջա Ռուհիջանը և նրա հայր խոջա Ախիջանը⁹²⁴: Մանիսայում գործում էին XVII դ. վերջին եկած կապանցի վաճառականներ, ինչը արձանագրված է տեղի եկեղեցուն քուջերթցի խոջաներից անցած Ավետարանի հիշատակարանից⁹²⁵: Եկվոր այս վաճառականների կայուն խմբերի համար Ձմյունիան մնում էր շարունակվող գործառնությունների ասպարեզ: Ժամանակի ընթացքում նրանք կամ տեղաբնակ էին դառնում և կամ էլ այնպես էին սերտաճում զմյունահայ կյանքին, որ նկատելի ազդեցություն էին թողնում նրա ազգային-հասարակական իրականության վրա:

Իտալական քաղաքներից Վենետիկը, որպես եվրոպական միջնադարյան առևտրի խոշոր կենտրոն, հարյուրամյակներ ի վեր Ջենովայի հետ միասին, կարելի է ասել, ուղղորդում էր լեվանտական ապրանքաշրջանառությունը: Փոքրասիական վաղեմի առևտրի ոլորտում և իտալական քաղաքների հետ ունեցած առնչություններում Ձմյունիան պահպանում էր իր ակտիվ դերակատարությունը XI-XIV դդ., որին մասնակցում էին նաև հայ վաճառականները: Հենվելով իրենց՝ առևտրական ուղիների և ապրանքափոխանակության հարուստ փորձի վրա, նրանք առևտրական կայաններ ստեղծեցին իտալական քաղաքներում, այդ թվում և Վենետիկում: XVI դ., ինչպես նկատում է Դ. Ալիշանը, <<յորչափ յաճախութիւն կար Հայոց ի Վենետիկ եւ ոչ միայն ի Ջուդայէ կամ ի պարսկահայոց, այլեւ իբր ի թուրքահայոց, մանաւանդ ի Փոքր Ասիոյ>>⁹²⁶:

⁹²² Վավերագիրը ժամանակին մեզ էր տրամադրել երջանկահիշատակ պատմաբան Վ. Մարտիրոսյանը. տես Խառատյան Ա., Ձմյունիայի վաճառականությունը միջազգային առևտրում, 1989, N 3, էջ 73:

⁹²³ ՄՄ, ձեռ. 6332, էջ 215-216:

⁹²⁴ Նույն տեղում, էջ 233:

⁹²⁵ Արեւելեան մամուլ, 1897, թիւ 10, էջ 354:

⁹²⁶ Ալիշան Դ., Հայ-Վենետ, էջ 383:

Վերջիններիս մեջ իրենց տևական ներկայությամբ առանձնանում էին զմյուռնահայերը: XVII-XVIII դդ. Վենետիկում շարունակում էին գործել զմյուռնահայ վաճառականների սերունդները, որոնք այստեղ ապրող հայրերից ավելի հայ ընտանիքների մասն էին կազմում: Ղ. Ալի-շանը այդպիսի, մի քանի սերունդ թողած վաճառականներից հիշում է Մարտիրոսյանին և Ադամյանին⁹²⁷:

Վենետիկում հայ վաճառականները զբաղվում էին ավանդական մետաքսի, ակնեղենի, մարգարտի, բրդի և այլ ապրանքների առևտրով: Նրանց առևտրացանկի կարևոր բաղադրիչներից էր մասնավորապես վենետիկյան համբավված հայելին, որ նրանք ներմուծում էին Թուրքիա, Պարսկաստան և այլուր⁹²⁸:

Առևտրական պայմանների փոփոխությունների կամ իտալական քաղաքների մաքսային նախասիրությունների շրջադարձերի հետևանքով կատարվում էր և հակառակը՝ Վենետիկի հայ վաճառականներն էին բնակություն հաստատում Ջմյուռնիայում: Այս իրողությամբ է մասամբ բացատրվում Եվրոպայում ապաստանած հայերի անցումը Ջմյուռնիա՝ XVIII դարում: Ջմյուռնահայ վաճառական Շահումյան ընտանիքի մասին Ա. Այվազյանը նկատում է, որ այն <<Վենետիկէն եկած հին ընտանիք մըն է>>⁹²⁹: Հիրավի, Մեղրիի (կամ Կապանի) վաճառական դասը, որ <<հզոր էր իր միջազգային կուտակումներով>>⁹³⁰, XVII դ. և հետո առևտրական տներ էր հիմնել Վենետիկում, Կոստանդնուպոլսում, Ջմյուռնիայում և այլուր: Շահումյանների տոհմը, որից, ի դեպ, սե-

⁹²⁷ Նույն տեղում, էջ 500-502, 497:

⁹²⁸ Տես Տեր-Յովհաննեսն Զ., նշվ. աշխ., էջ 165: Մի հետաքրքիր վավերագրում նորջուղայեցի վաճառականը թղթին է հանձնել երգիծական շնորհից ոչ զուրկ իր էպիկական նկատառումները վենետիկյան ապակու շուկայի մասին, երբ հանդիպել էր պահանջարկի անսպասելի բարձրացումից թանկացած ապակեղենիզներին. որպես գնորդ, նա արդեն ձախողում է համարում այդպիսի առևտուրը.

Պնչերն խիստ ցից արարին, բարձրացուցին քիթն երկան
Տեսինք, որ խիստ թանկացուցին, ես [ն]ոց[ա]նէ ձեռն եմ վեռման
Լաւ բազարի չհանդիպեցանք, մեր վաստակն կու լինի ունայն
Ինչ մարդ որ թանգ ապրանք կառնու՝ ինքն է ուր ապրանաց դիշման
Մուղ առնողն շահ չէ անում, ծախելու տեղ կու մնայ հեյրան (զարմացած-Ա. Խ.)
(նույն տեղում, էջ 168-169):

⁹²⁹ Այվազեան Ա., Հոնիական գաղութին նահապետներէն, 1900, 3 սեպտեմբերի:

⁹³⁰ Լէօ, Խոջայական կապիտալ, էջ 283:

րում էր Դավիթ Բեկի զինակից Ստեփանոս Շահումյանը, Վենետիկում էր հաստատվել XVII դ. կեսերին: Ստ. Շահումյանի հորեղբայրը՝ Սահակի որդի Ոսկանը, այստեղ <<եկեալ եւ հաստատեալ էր ի տուն վաճառականութեան>>⁹³¹:

Շահումյանները, ինչպես և Վենետիկի մյուս հայ վաճառականները, ամբողջովին կապված էին լեվանտական առևտրի հետ. նրանք ներմուծում և արտահանում էին գյուղատնտեսական հումք, Դամասկոսի կերպաս, եվրոպական արտադրության լայն սպառման առարկաներ, գործվածքեղեն, ապակի և այլն: 1757 թ. այդ առևտրական տունը սնանկացավ շուրջ հարյուրամյա գործունեությունից հետո, մինչդեռ Ջմյուռնիայի նրանց ազգակիցները շարունակում էին իրենց հաջողակ առևտուրը: 1781 թ. Ղուկաս կաթողիկոսը ողջուն էր հղում իզմիրցի պարոն Հակոբ Շահումյանին⁹³², որպես երևելի անձնավորության:

Ջմյուռնիայում և Վենետիկում գործող մեղրեցի վաճառականներից էին Պապդուլյանցները: 1791 թ. Ղուկաս կաթողիկոսը զբաղվում էր զմյուռնաբնակ վաճառական Հ. Պապդուլյանցի ժառանգության գործով՝ տեղեկացած լինելով, որ Մեղրիում է բնակվում նրա ազգականը: Կաթողիկոսը դիմել էր Ջմյուռնիայի առաջնորդ Իսահակ վարդապետին՝ բավարարելու ժառանգորդի օրինական պահանջները⁹³³:

Ուշագրավ է, որ Վենետիկի Ս. Խաչ եկեղեցու դիվանում հիշվում է Ոսկան, որդի Պապդուլի վաճառականը (1670-1730-ական թթ. գրառումներ)⁹³⁴, որ վկայում է այդ քաղաքում մեղրեցի կամ զմյուռնացի գերդաստանի վաղեմի բնակության մասին: 1718 թ. Վենետիկում բնակվում էին տասը մեղրեցի վաճառականներ, որոնք առևտրական կապեր ունեին Ջմյուռնիայի հետ⁹³⁵:

Վերը տեսանք հայ առևտրական կապիտալի նկատմամբ Վենետիկի իշխանությունների վարած դրական և անգամ հովանավորչական քաղաքականության դրսևորումները XVI դ., իրողություն, որ բացատրվում է ամենից առաջ վենետիկյան միջնորդ առևտրի և մյուս կողմից՝ վենետիկյան տեղական արտադրության կարիքների բավարարման հետ: XVII դ. վերջերին Վենետիկը, Լիվոռնոն և իտալական մյուս քաղաքները

⁹³¹ Ալիշան Դ., Միսական, էջ 300:

⁹³² Դիվան հայոց պատմության, գիրք 1, Ղուկաս կաթողիկոս Կարնեցի, էջ 248:

⁹³³ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, էջ 566, 603, 606:

⁹³⁴ Ալիշան Դ., նշվ. աշխ., էջ 304-305:

⁹³⁵ Արամեան Ս., Դավիթ Բեկ, էջ 115-116:

հայ վաճառականների համար դառնում են ոչ միայն առևտրական ուղու վերջնակետ, որտեղ իրացնում էին ներմուծած ապրանքները, այլև տարանցիկ հանգրվաններ՝ հումքը և արդյունաբերական ապրանքները Արևմտյան Եվրոպայի այլ երկրներ տեղափոխելու համար: XVII դ. երկրորդ կեսին այս կերպ շարունակվում էր անգորական բրդի արտահանումը Զմյուռնիայից Վենետիկ և այստեղից ցամաքային ճանապարհներով դեպի Ամստերդամ և հոլանդական այլ քաղաքներ: Այս ժամանակաշրջանում Վենետիկի իշխանությունները, ելնելով տեղական արտադրությունը հումքով ապահովելու պահանջներից, փորձեցին խոչընդոտել ներմուծված ապրանքները հանրապետության սահմաններից դուրս տանելուն, ուստի և իրենց մաքսային քաղաքականության մեջ դիմեցին որոշ սահմանափակող ձեռնարկների: 1657 և 1661 թթ. բրդի յուրաքանչյուր ներմուծված հակի դիմաց սահմանվեց այնքան տուրք, որքան պահանջվում էր Վենետիկից արտահանելու համար (6-ական դուկատ): Վաճառականները բողոքել էին դրա դեմ, փաստարկելով, որ այդպիսի մաքսային սահմանափակումը անիմաստ է դարձնում առևտուրը Վենետիկի վրայով, քանի որ Զմյուռնիայից Վենետիկ նավով բերված և այստեղից Հոլանդիա արտահանված մեկ հակ բուրդը նստում է 70 դուկատ, մինչդեռ Զմյուռնիայից Լիվոռնո բերելով արտահանելու դեպքում՝ 62 դուկատ⁹³⁶: Անկախ այն բանից, որ Վենետիկի իշխանությունները անսացին հայ վաճառականների բողոքին և թեթևացրեցին մաքսի չափը, ակնառու էր, որ առավել ձեռնտու են հարաբերությունները նույնպես առևտրական դյուրություններ ընծայող Լիվոռնոյի հետ: Այս հանգամանքով կարելի է բացատրել գմյուռնացի վաճառականների բավականաչափ երկարատև առնչությունները և առևտրական կայանի հարատևումը Լիվոռնոյում. 1693 թ. Զմյուռնիայից Վենետիկ է բերվել 1192 հակ բուրդ, իսկ Լիվոռնո՝ 2900 հակ⁹³⁷:

Իտալական քաղաքների հետ գմյուռնահայ վաճառականության ավելի ուշ շրջանի փոխհարաբերությունները պետք է կենտրոնանային բամբակի արտահանման և ներմուծման գործառնությունների վրա՝ ընդգրկելով փոքրասիական շրջանների հումքային տարածքները: XVII դ. վերջին և XVIII դ. սկզբներին Էգեյանի տարածաշրջանում բամբակի մշակության աճը խթանում էր ոչ միայն բամբակագործական մանուֆակտուրայի զարգացումը, այլև հումքի արտահանման հնարավո-

⁹³⁶ Ալիշան Դ., Սիսական, էջ 44:

⁹³⁷ Նույն տեղում, էջ 445:

րությունները: Զմյուռնահայ վաճառականությունը գործուն դերակատարություն ուներ բամբակի արտահանման ասպարեզում, որ XVIII դ. երկրորդ կեսին պետք է փոխարիներ հում մետաքսի հնամենի արտահանման զանգվածին: Այս ժամանակաշրջանում Զմյուռնիայից իտալական քաղաքներ և արևմտաեվրոպական այլ շրջաններ արտահանվող բամբակի չափերի մասին բավական տեղեկություններ է տալիս Ղ. Ինճիճյանը, նշելով, որ այստեղից տարեկան արտահանվում էր 45 հազար բեռ բամբակ և 25 հազար բեռ բամբակի մանած⁹³⁸:

Այս տեղեկության մեջ ուշադրություն է հրավիրում XVIII դ. լեվանտում եվրոպական առևտրական հաշվեկշռի արդեն բացահայտ ընդգծվող ակտիվությունը համեմատած նախորդ ժամանակաշրջանների հետ, երբ արևելյան ապրանքային հոսքը պայմանավորում էր եվրոպական, այդ թվում և իտալական առևտրի պասսիվ հաշվեկշիռը⁹³⁹: Դա նշանակում էր նաև, որ Վենետիկը և իտալական մյուս քաղաքները արդեն ստեղծել էին զարգացած թեթև արդյունաբերություն, որի արտադրանքի իրացումն այլևս չէր ենթադրում միջնորդ առևտրի այնպիսի սուր կարիք, որի պահանջը այնպես ակնհայտ էր նախորդ դարերում: Արդյունաբերության զարգացումը սահմանափակում էր միջնորդ առևտրի ծավալներն ու ինքնուրույնությունը և դրանք հարմարեցնում իր պահանջների, ասել կուզի՝ հումքը տեղում գնելու և սեփական արտադրություն հասցնելու մակարդակին: Հիմնականում սրանով էր պայմանավորված արևմտահայ, մասնավորապես զմյուռնաբնակ (և անշուշտ, եկվոր) միջնորդ առևտրի շառավիղների նվազումը իտալական քաղաքների հետ ունեցած հարաբերություններում⁹⁴⁰:

⁹³⁸ Ինճիճեան Ղ., Դարապատում, 1750-1757, էջ 232:

⁹³⁹ Рутенбург В. И. Италия и Европа накануне нового времени, с. 46.

⁹⁴⁰ Միջնորդ առևտուրը, որ սնուցել էր եվրոպական արտադրության վիթխարի պահանջները, XVIII դ. ակնհայտորեն ցուցադրում էր իր հնարավորությունների սպառումը, բայց ամենևին էլ ոչ իր գործառության վախճանը, որ բավական լուրջ նշանակություն ունեցավ օսմանյան ավանդական հասարակության մեջ հասարակական, տնտեսական ու վարչակառավարչական փոփոխությունների համար: Միջնորդ առևտրի կենսունակությունն էր, որ մեծապես նպաստեց այսանների ինստիտուտի զարգացմանը և որը տեսանք Զմյուռնիայի փաշա Կարաօսմանօղլուի օրինակով՝ 1768 թ., երբ նա հանդգնել էր գործ չտրամադրել պատերազմի մեջ մտած սուլթանին (տես Новичев А. Д. История Турции, I, с. 221):

XVIII դ. սկզբներին արդեն նկատելի էր դարձել Վենետիկի առևտրի անկումը թուրքական նավահանգիստներում: Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Պ. Տոլստոյը նշում էր Վենետիկից ներմուծվող ոսկեկար և մետաքսե դիպակների բարձր պահանջարկը օսմանյան ավագանու շրջաններում, սակայն Թուրքիայում վենետիկցի վաճառականների սակավաթվության պայմաններում⁹⁴¹: Տնտեսական այս իրողությունը կապված էր ոչ թե մրցակցության, այլ Բ. դռան և Վենետիկի միջև քաղաքական հակամարտ հարաբերությունների հետ, որոնք հրահրվում էին մասնավորապես վերջինիս անգլիական մրցակիցների կողմից՝ հաճախ կորցնելով իրենց սրացումները և կամ էլ մեղմացումները: Հիրավի, մի քանի տասնամյակ անց թեն պատկերը փոխվում է և Զմյուռնիայում նկատելիորեն աշխուժանում է վենետիկցիների փոքրաթիվ համայնքը, սակայն, ինչպես վկայում է ռուս դիվանագետ Ն. Նեպլյուևը, վենետիկյան առևտուրը կորցրել էր իր երբեմնի ծավալները, ընդամին իտալական մյուս քաղաքների՝ Զմյուռնիայի նավահանգստում ամրանալու պայմաններում, երբ 1740-ական թթ. Նեապոլն այստեղ հյուպատոսարան էր հաստատել⁹⁴²: Մինչդեռ, զմյուռնաբնակ հույն, հայ և հրեա վաճառականությունը XVIII դ. առաջին քառորդին զգալիորեն կրճատել էր իր առևտուրը Վենետիկի հետ: Նվազել էր մետաքսի, անգորական բրդի և հումքի այլ տեսակների արտահանումը, որ դարձյալ կապվում էր Թուրքիա-Վենետիկ հարաբերությունների սրման և լեվանտում անգլիական ու ֆրանսիական առևտրի չափերի ընդլայնման հետ: Իտալական առևտրի նվազումը սահմանափակում էր զմյուռնահայ վաճառականության գործունեության շրջանակները: Նվազել էր ֆլորենտական կերպասի և ջենովական թավշի ներմուծումը, որչափով բավական աշխուժացում էր ապրել Կոստանդնուպոլսի, Քիոսի և այլ վայրերի մետաքսի էժան գործվածքների վաղեմի արտադրությունը, որի արդյունքներն իրենց մատչելի գնի շնորհիվ բավարարում էին զանգվածային գնորդի պահանջարկը: Զմյուռնահայ գաղթօջախի պատմաբան Թ. Ճերմակյանը այս վերջին հանգամանքի վրա էր բևեռում ընթերցողի ուշադրությունը, երբ վերհանում էր Էգեյանի մերձափնյա տարածքների բամբակագործական արտադրության սոցիալական կողմնորոշումները՝

⁹⁴¹ Русский посол в Стамбуле, с. 97.

⁹⁴² Данциг Б. М. Русские путешественники на Ближнем Востоке, с. 80.

նկատի ունենալով Մենեմենի բամբակագործական արդյունքները սպառող չքավորներին⁹⁴³:

Միևնույն ժամանակ, Վենետիկի իշխանությունները հիմնավորված տագնապով էին գնահատում Զմյուռնիայի նավահանգստում իրենց դիրքերի տեղատվությունը: 1712 թ. սեպտեմբերին նրանք պարզապես մեղադրում էին Զմյուռնիայում իրենց հյուպատոսին՝ հայերի նկատմամբ իր ոչ ճիշտ գործողությունների համար և <<թելադրեն ողորդել զհայս՝ զի ի նոցանէ կախեալ էր շահ առևտրի երկոցուն նաւահանգստաց>> (Վենետիկի և Զմյուռնիայի –Ա. Խ.)⁹⁴⁴:

Իսկապես, մեկ տասնամյակ անց Վենետիկի հյուպատոսը զուր ջանքեր էր գործադրում Օսմանյան Թուրքիայի հետ իր հանրապետության քաղաքական ու առևտրական հարաբերությունների սրացումները կանխելու համար: Բանը հասել էր այնտեղ, որ վենետիկյան նավերը Զմյուռնիայի նավահանգստում հարկադրված էին ընթանալ ֆրանսիական դրոշակով, որ տեղի էր տվել վենետիկյան ներկայացուցչի բողոքին⁹⁴⁵:

Այսուհանդերձ, Վենետիկը դեռևս զգալիորեն պահպանում էր իր առևտրական կայունությունը Օսմանյան Թուրքիայում: Թուրքական սոցիալական վերնաշերտերում բարձր էին գնահատվում նրա արտահանած նուրբ գործվածքները (որով, ի դեպ, հռչակված էր նաև Ֆլորենցիան), դիպակն ու ապակեղենը: Զմյուռնահայ վաճառականները մեծ չափերով ընդգրկված էին այդ առևտրում, որի հորիզոնները հասնելու էին մինչև XIX դ. առաջին կեսը: Իտալական քաղաքներում հայ վաճառականները շարունակում էին գործել և վաճառատներ պահել ավանդական դարձած կապերի շնորհիվ: Այսպես, Նեապոլի հետ հին առևտրական հարաբերություններն էր պահպանում Ապրոյանների նշանավոր տոհմը, որի ներկայացուցիչներից Ստեփան Ապրոյանը այստեղ գործել և կնքել է իր մահկանացուն 1852 թ.⁹⁴⁶:

XVIII դ. երկրորդ կեսից զգալիորեն ծավալվեցին գմյուռնահայերի կապերը հյուսիս-իտալական քաղաքներից Տրիեստի հետ: Դրանից անմիջապես առաջ եվրոպական առևտրական մագիստրատների փոփոխությունները, լեվանտի առևտրում եվրոպական տերությունների բա-

⁹⁴³ Արշալոյս, Զմյուռնիա, 1908, 1 մայիսի:

⁹⁴⁴ Ալիշան Դ., Սիսական, էջ 448:

⁹⁴⁵ Shay M. The Ottoman Empire, p. 64.

⁹⁴⁶ Նոյեան աղանի, Կ. Պոլիս, 1852, 9 մայիսի:

ցարձակ դարձած գերիշխանությունը, ինչպես և Օսմանյան Թուրքիայից արտասահմանյան շուկաներ գուտ հումք արտահանելու իրողությունները զգալիորեն ազդեցին հայ վաճառականների առևտրական գործունեության վրա: Զմյուռնիայի և եվրոպական քաղաքների միջև երթևեկող ոչ քիչ թվով վաճառականներ, Թուրքիայի տարանցիկ դերակատարության սահմանափակման հետ կապված՝ թողեցին եվրոպական բնակատեղիները (հիմնականում իտալական և հոլանդական) և հաստատվեցին Զմյուռնիայում: Սլարսը նշում է, որ այս ժամանակ գաղթօջախ են վերադարձել Վենետիկում, Հոլանդիայում, Ավստրիայում և այլուր բնակվող վաճառականները⁹⁴⁷: Նկատելի էր նաև վաճառականության տեղաշարժը Եվրոպայի ներսում: 1769 թ. սեպտեմբերի 12-ին քահանա Հովհաննեսը հայտնում էր Վենետիկի Մխիթարյանների աբբահայր Ստեփաննոսին, որ ավստրիական կայսրուհի Մարիա-Թերեզան արտոնություններ է տալիս հայերին՝ բնակվելու Տրիեստում. <<Կայսերուհին ազատ կացոյց զքաղաքն Դրիեստին վասն բազմամարդ առնելոյ զնա, այսպէս առ այս վախճան խորհեցաւ հաստատել ի Դրիեստէ եւ զհայ քահանայ մի, զի գուցէ թէ իցէն յազգէն հայոց, որք կամիցին գալ եւ բնակիչ լինիլ ի Դրիեստէ վասն պակասութեան քահանային մի արգելցին ի գալոյ>>⁹⁴⁸:

Խոսքը վերաբերում էր Տրիեստը ազատ նավահանգիստ (պորտո ֆրանկո) հռչակելու իրողությանը, որ հետամտում էր ավստրիական առևտրի միջազգային նշանակության ընդլայնմանը, այդ թվում և իտալական առևտրի հնարավորությունների համախմբմամբ:

Տրիեստում կայանած վաճառականները, որպես կանոն, գործառում էին նաև իտալական մյուս քաղաքներում՝ իրենց առևտրացանկում հիմնականում ունենալով Թուրքիայի գյուղատնտեսական հումքը և եվրոպական արտադրության ապրանքները, որ նրանք բերում էին Զմյուռնիայից:

Տրիեստի զմյուռնացի մեծահարուստներից էին նաև Հ. Մարգսյանը, Պետրոս Յուսուֆյանը, Գր. Աբելյան-Գուլասպյանը, Աբրահամ և Ստեփան Ապրոյանները և այլք: Պետրոս Յուսուֆյանը այս քաղաքում վաճառում էր եգիպտական գյուղատնտեսական հումք՝ ակներևաբար նպաստելով եգիպտական արտաքին առևտրի ընդլայնմանը, մի երկրի,

⁹⁴⁷ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 33:

⁹⁴⁸ Տայեան Դ., Մայր դիւան Մխիթարեանց ի Վենետկոյ, էջ 261:

որտեղ իր եղբայր Պողոս Յուսուֆյանը զբաղեցնում էր պաշտոնական բարձր դիրք⁹⁴⁹:

Տրիեստում բնակություն հաստատած գմյուռնահայ վաճառականները այնտեղ գործել են բավական երկար ժամանակ, մինչև XIX դ. կեսը և անգամ հետո: Տրիեստի մի <<Ծանուցմունք պատկաց>> մատյանում (1798-1808) հիշվում է խաթուն Մարիամ Ռոզան՝ <<դուստր իզմիրցի պարոն Յովհաննիսի Պետրոսի Զաքարեան>>, որը 1806 թ. ամուսնացել էր իտալացու հետ 1807 թ., դարձյալ իտալացու հետ, ամուսնացել էր գմյուռնացի Կարապետ Աստվածատրյանի դուստր խաթուն Բրիջիտան⁹⁵⁰:

XIX դարավերջին գմյուռնահայերը իտալական քաղաքներ էին արտահանում Էգեյանի շրջանի բամբակագործական և այգեգործական բազմազան արդյունքներ, չոր միրգ և այլն: Զմյուռնիայում և կից շրջաններում արտադրված խաղողի հյութի (շիրա) ներմուծման չափերով դարավերջին Իտալիան գրավում էր առաջին տեղը (2157447 կգ), ավելի շատ, քան Ֆրանսիան (1511285 կգ), Ավստրիան (781498 կգ) և Գերմանիան (552744 կգ)⁹⁵¹: Նույն ժամանակներում Զմյուռնիայի նավահանգիստն արձանագրում էր գյուղատնտեսական արդյունքների աննախընթաց աճ, որ կուտակվել էր նախորդ տասնամյակներում. միայն Զմյուռնիայի շրջակայքի տարեկան բերքերի արժեքը կազմում էր 142 մլն 252 հազ. 500 ֆրանկ, ներմուծման 95 մլն ֆրանկի դիմաց⁹⁵²:

Հարկ է նկատել, որ գմյուռնահայ վաճառականության գործունեությունը իտալական քաղաքների հետ ունեցած առևտրում հարատևում էին ազգային ավանդույթների, տոհմային ունակությունների և միջավայրն ու իրավիճակը լայնորեն ընկալելու հնարավորությունների շնորհիվ: Իր հերթին, իտալական քաղաքների առևտրական վաղնջական մշակույթը քաղաքակրթում էր հայ վաճառականությանը, մղում յուրացնելու եվրոպական առևտրի նուրբ և կատարելագործված մեթոդներն ու փորձը, որոնք այնքան անհրաժեշտ էին առհասարակ միջազգային առևտրում կենսունակություն և կայունություն ձեռք բերելու տեսա-

⁹⁴⁹ Արշալոյս Արարատեան, 1844, 13 հունիսի, Բիւզանդիոն, 1905, 30 հուլիսի, 4 օգոստոսի:

⁹⁵⁰ Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, էջ 537:

⁹⁵¹ Սուրհանդակ, Կ. Պոլիս, 1900, 7 հուլիսի:

⁹⁵² Տես Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 754:

կետից: Հայ վաճառականների համար իտալական առևտրի ընձեռած բարենպաստ պայմանները շատ դեպքերում վճռական նշանակություն էին ունենում այն խտրական քաղաքականությանը դիմակայելու համար, որ Օսմանյան Թուրքիայում կիրառվում էր առհասարակ ոչ մահմեդական վաճառականության նկատմամբ: Այսպես, հայտնի է, որ Բ. դուռը մինչև թանգիմաթը թուրքահպատակ վաճառականներին շնորհել էր որոշ արտոնություններ (իմթիյազ), որոնք բաժանվում էին մի քանի կարգի: Մահմեդական առևտրականը արտասահման մեկնող նավի համար մաքս էր վճարում 380 դուրուշ, հպատակ փոքրամասնությունները՝ 500 դուրուշ և 620 դուրուշ բոլոր նրանք, ովքեր իմթիյազ չունեին⁹⁵³: Պետք է առանձնացնել այս իմաստով արտոնյալ վաճառականներին (բերաթի թյուջջար), որոնց արտոնությունները (ցածր մաքսեր, առևտրական տարածքի մատչելիություն) նորոգվում էին նոր սուլթանների կողմից⁹⁵⁴: Այսուհանդերձ, առևտրի նկատմամբ օսմանյան <<ներողամտությունը>>, որի մասին առասպելներ են պատմում թուրքամետ պատմաբանները, իր հակադրությանն էր վերածվում օտար նավերի համար Զմյուռնիայի նավահանգստում կայուն մաքսաչափի չգոյության պատճառով: Այս հանգամանքը քափթան փաշային և սուլթանական մյուս բարձրաստիճան պաշտոնյաներին տալիս էր ապօրինի գանձումների կամայականության և կաշառք շորթելու հավելյալ հնարավորություններ:

Զմյուռնահայ վաճառականները մինչև XIX դ. առաջին քառորդ իրենց ազգանվանն ավելացնում էին իտալերենից փոխառած <<դի>> նախդիրը⁹⁵⁵: Դրա գործածությունը, պետք է կարծել, սկիզբ էր առել Վենետիկում հայկական համայնքի ձևավորումից ոչ շատ ուշ. համենայն դեպս, 1718 թ. հենց այդպես էլ ստորագրել են Վենետիկում ապրող հայ վաճառականները՝ բոլորն էլ, ի դեպ, դափանցիներ՝ Baldasar di Japida da Kapan, Teodoro di Manugh da Kapan, Arutiun di Abele da Kapan և այլք⁹⁵⁶, 1794 թ. Մարգար Ապրոյանի մի վկայագրի մեջ հիշվում են նրա համաքաղաքացիներ Կարապետ դի Հաճի Հարությունը և Մսեր դի Գրիգորը (զմյուռնա-

⁹⁵³ Արշալոյս Արարատեան, 1846, 3 մայիսի: Արտոնությունների այս խտրական տարակարգումը վերացվեց թանգիմաթի շրջանում՝ 1846 թ., երբ արտոնության միասնական չափ սահմանվեց նավահանգիստ մտնող նավերի համար՝ 420 դուրուշանոց տուրքն իջեցվելով 40-ի (նույն տեղում):

⁹⁵⁴ Steu Bagis A. I. Osmanli Ticaretinde gayri Muslimler, s. 19-20.

⁹⁵⁵ Արեւելք, Կ. Պոլիս, 1902, 27 մայիսի:

⁹⁵⁶ Արամեան Ս., նշվ. աշխ., էջ 115:

ցի հայտնի Մսերյանների տոհմից)⁹⁵⁷: Այդ նախդիրի նույն գործածությամբ ենք հանդիպում Դավիթ կաթողիկոսին (1803) և Ներսես Աշտարակեցուն (1807) հղված վաճառականների դիմումներում⁹⁵⁸ և այլն: Հետաքրքիր է, որ Ջմյունիա բնակվելու եկած վաճառականների մի զգալի մասը, համենայն դեպս, XVIII դ. երկրորդ կեսին և XIX դ. սկզբներին պահպանում էին իրենց ազգանվանը կցված այդ մասնիկը: Հիմնավոր է Ատոմի այն կարծիքը, որ <<դի>> մասնիկը, ինչպես ըսին ուրիշներ, իտալերենն առնուած է, ճիշտ այնպես, ինչպես <<պարոնը>>՝ խաչակիրներեն, եւ այս կետը անգամ մըն ալ կը հաստատուէ, թէ մաս մը հայեր Իտալիայէն ու Աւստրիոյ մէկ մասէն գաղթելով եկած հաստատուած են հոս, ուր տակաւին անոնց սերունդը որոշապէս կը տեսնուի՝ այդ տէրութեանցը հպատակ գտնուելով>>⁹⁵⁹:

Այս ամենով հանդերձ, կարծում ենք, որ <<դի>> նախդիրը ուներ սոցիալական կարգավիճակի նշանակություն, որ արձանագրում էր այս առևտրականների նախադաս դիրքը վաճառականների հիերարխիայում և լայնորեն շրջանառվում զմյունահայ համայնքի ներսում՝ գոհացնելով իրենց անվան հնչեղությամբ հետամուտ խոշոր վաճառականների պատվախնդրական զգացումները:

XVII-XVIII դդ. հայ վաճառականների համար հատկապես հրապուրիչ է դառնում ֆրանսիական առևտրական հրապարակը: Ֆրանսիական կառավարությունը մինչև 1634 թ. խրախուսում էր պարսկական

⁹⁵⁷ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 61:

⁹⁵⁸ Նույն տեղում, թղթ. 14, վավ. 56, թղթ. 18, վավ. 133:

⁹⁵⁹ Ատոմ, Իզմիրի Ս. Լուսատրչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը, Արեւելք, 1902, թիւ 4956: Ատոմը ուշադրություն է դարձնում նաև այն հանգամանքին, որ նշված նախդիրի հարատևումը առկա էր զմյունահայ այն երևելիների շրջանում, ովքեր առնչություններ ունեին իտալական և ավստրիական հյուպատոսությունների հետ (դրագոմանի կամ այլ պաշտոնների բերումով): Իրենց կարգավիճակի համեմատ՝ նրանք վայելում էին այդ տերությունների հովանավորությունը: Այդ կարգավիճակը նրանք ստանում էին հատուկ հրամանագրով: Անգլիական հյուպատոսարանի դրագոմաններ էին Պապոյան տոհմի անդամները դեռևս XVIII դարից. Գր. Պապոյանին (վախճ. 1829 թ.) տրված հրամանագրով նրան արտոնվում էր հագնել սուլթանին <<ոչ հպատակ եղող անձանց զգեստներ>> (Այվազեան Ա., Հոնիական հայ գաղութի նահապետներեն, Արեւելք, 1900, 22 օգոստոսի), այսինքն ոչ մահմեդականներին օսմանյան պետության կողմից պարտադրված գույներից և այլ որակներից զերծ տարազներ հագնելու թույլտվություն, որ ենթադրվում էր եվրոպացիների համար:

հումքի ներմուծումը և Բարեհաջող պայմաններ էր ստեղծում տարանցիկ առևտրի զարգացման համար, որ նպաստում էր նրա տեքստիլ արդյունաբերության ամրապնդմանը: 1630-ականի սկզբներից, ինչպես երևում է հայ առևտրականների և ֆրանսիական առևտրական փոխհարաբերությունների ընթացքից, առաջինները կայուն կամ մշտական առևտրական հանգրվաններ են որոնել Ֆրանսիայում և այստեղ, որպես այդպիսին, թիրախավորել Մարսելի նավահանգիստը՝ ավանդական կենտրոնը արևելյան հումքի հետ ֆրանսիական առևտրի և առնչությունների խաչմերուկներում: Հայ վաճառականներից Obro-ն և Ferpius George-ն դիմել էին Մարսելի քաղաքային իշխանություններին՝ առևտրական այնպիսի արտոնություններ ստանալու, ինչպիսիք ունեին պարսկահայ վաճառականներն այդ քաղաքում⁹⁶⁰: Պետք է կարծել, որ նախ, խոսքը վերաբերում է օսմանահպատակ վաճառականներին, որոնց արտասահմանյան կարգավիճակը, ի տարբերություն պարսկականի, ամենևին չէր մտահոգում օսմանյան պետությանը, ուստի և իրենց կացության բարելավման համար հենց իրենք՝ օսմանահպատակ վաճառականները, պետք է հանդես բերեին նախաձեռնություն: Եվ այնուհետև, ֆրանսիական վաճառականները սպառնալիք համարեցին հայերի մրցակցությունը Մարսելի նավահանգստում. 1632 թ. նրանք դիմեցին Լյուդովիկոս ԺԴ-ին՝ զանգատվելով, որ Մարսելի նավահանգիստը հայ վաճառականների պատճառով զրկվել է իր երբեմնի առևտրական կարողություններից. նրանք խուսափում են մաքսերից և էժան գնով վաճառելով իրենց ապրանքը՝ հարված են հասցնում տեղական առևտրին: Բողոքարկուներն առաջարկում էին արգելել հայերին՝ զբաղվելու մետաքսի առևտրով: Իշխանությունները մերժեցին դիմումը՝ հենվելով օրենքի վրա, որով արտոնվում էր մետաքսի առևտուրը, միաժամանակ խոստանալով, որ եթե կան օրինազանցություններ, ապա դրանց դեմը կառնվի դարձյալ օրենքի ուժով⁹⁶¹: Մեկ այլ վավերագրում Մարսելի վաճառականները դժգոհում էին, որ հայերը հակադրվում են ֆրանսիական առևտրի պետական հովանավորչական քաղաքականությանը նրանով, որ իրենց վաճառած ապրանքի փոխարժեքով տեղական ապրանք չեն գնում, իսկ շահած դրամը զարտուղի ճանապարհներով տեղափոխում են երկրի սահմաններից դուրս: Իշխանություններն անսա-

⁹⁶⁰ Մարուխան Ա., նշվ, աշխ., էջ 43:

⁹⁶¹ ՄՄ, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 240/12, վավ. 6, էջ 2:

ցին այս բողոքներին⁹⁶², համենայն դեպս, 1634 թ. շոշափելի սահմանափակումներ մտցրեցին լեվանտական մետաքսի ներմուծման մաքսային ընթացակարգում. Մարսելում մեկ հակ մետաքսի մաքսաչափը 16 ֆրանկից հասցվեց 112-ի⁹⁶³, որը ֆրանսիական շուկայում ձեռնարկի արեց հայ վաճառականներին և նրանք հարկադրված էին լքել Մարսելը: Ֆրանսիական իշխանությունների մերկանտիլիստական միջոցառումները շարունակվեցին մինչև 1680-ական թթ., որպիսիք շոշափելի վնասներ հասցրեցին նաև տեղական առևտրին⁹⁶⁴: Դրանից հետո էր, որ խրախուսելով լեվանտական առևտուրը, Կոլբերն ընդլայնեց մանուֆակտուրային արտադրանքի արտահանումը Թուրքիա՝ այնտեղից ներմուծվող ապրանքախմբին հակադրելով մի շարք սպառունակ գաղութային ապրանքներ՝ սուրճ, շաքար, ինդիգո և այլն⁹⁶⁵:

Մարուխանի հիշատակած վաճառական Օբրոն պետք է որ Ապրոյան գերդաստանից լիներ, նույն ինքը՝ Ապրո Ապրոյանը, ով թեև 1660-ական թթ. Բելգրադից տեղափոխվել էր Կ. Պոլիս, սակայն դրանից առաջ էլ գործառնություններ ուներ Զմյուռնիայում: Ա. Ապրոյանը Կանդիայի պատերազմի ժամանակ օսմանյան բանակի մատակարարն էր: Դրամական մեծ կարողության տեր այդ վաճառականը ֆինանսավորում էր օսմանյան վերնախավին: Հապացույց սրա, կարելի է հիշել, որ 1673 թ. նոյեմբերի 29-ին նա ստացել էր Կրետեի դեֆթերդար Ահմեդին տված իր պատկառելի չափերի հասնող պարտքը՝ 4700 ասլան դուրուշ⁹⁶⁶: Վ. Զարդարյանը գրում է, որ նա Կրետեում <<եկեղեցի մը կառնէ հայոց համար>>⁹⁶⁷: Ապրոյանի բարեգործության մասին է վկայում նաև Զմյուռնիայում ժամանակի անգլիական հյուպատոս Ռայկոտը, նշելով, որ նա 1400 դոլար է վճարել իր ազգի եկեղեցու շինության համար⁹⁶⁸: Կ. Պոլսի

⁹⁶² Նույն տեղում, էջ 1:

⁹⁶³ Քիլրտեան Հ., նշվ. աշխ., էջ 68:

⁹⁶⁴ ՄՄ, Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 240, վավ. 11, էջ 1:

⁹⁶⁵ Porter J. Turkey. Vol. 1, p. 102.

⁹⁶⁶ Բարթիկյան Հ., Նյութեր գաղութահայ պատմութեան, 1987, N 10, էջ 80:

⁹⁶⁷ Զարդարեան Վ., Յիշատակարան, էջ 5:

⁹⁶⁸ Rycout P. History of the Turkish Empire, p. 280. Զմյուռնիայում Ռայկոտը դիվանագիտական ծառայության մեջ էր 1660-1670-ական թթ., նրա աշխատությունը հետաքրքիր սկզբնաղբյուր է մասնավորապես 1620-1670-ական թթ. Օսմանյան Թուրքիայի պատմության, ինչպես և Զմյուռնիայի նավահանգստի, առևտրի և այլ իրողությունների մասին (տես Новичев А. Д. История Турции. I, с. 281):

հայ համայնքում ևս Ապրո չէլեպին հույժ ազդեցիկ անձ էր: Հայտնի են նրա ջանքերը՝ թուրքական իշխանությունների կողմից Ս. Նիկողայոս եկեղեցու քանդումը կանխելու համար, որ այդպես էլ չհաջողվեց, հայտնի է նաև նրա տպավորիչ գործունեությունը Կ. Պոլսում՝ Եղիազարյան խմբակցությանը սատարելիս⁹⁶⁹: Ապրոյի որդի Մատթեոսը հոր մահից (1676) առաջ առևտրական գործերի բերումով գտնվում էր Զմյոռնիայում⁹⁷⁰: Նրա գործունեության շրջանում էր, որ ֆրանսիական կառավարությունը զգալի արտոնություններ ընձեռեց հայ վաճառականներին՝ երկրի նավահանգիստներում արևելյան բեռնափոխադրությունն աշխուժացնելու նպատակով և համապատասխանաբար, արժանին հատուցելով այդ գործընթացում ներգրավված հայ առևտրականներով:
<<Եւ ինքն (Մատթեոսը-Ա. Խ.) դարձեալ,-գրում է Ն. Ակինյանը,-մեծանուն վաճառականութեամբ եւ իշխանաւոր պատուով ընդունի ի Լիւդովիկոս ԺԴ արքայէ գաղղիացոց թուղթ ազնուութեան եւ հովանաւորութեան 1687, որում ժամանեալ ելք հասարակաց կենաց մարդկան՝ հանգչի ի Քրիստոս թաղեալ ի մէջ Սուրբ Ստեփաննոս եկեղեցոյ Զմիռնոյ>>⁹⁷¹:

Դեռևս XVI դ. ֆրանսիական առևտուրը լեվանտում մրցակցում էր անգլիական, այնուհետև, XVII դ.՝ հոլանդական վաճառականության հետ: Ֆրանսիական վաճառականները Լիոնից և Մարսելից Թուրքիա էին արտահանում զարդեղեն, Լանգեդոկի մահուդ, ներկ, արևադարձային պտուղներ⁹⁷², իսկ Ֆրանսիա ներմուծում փոքրասիական գյուղատնտեսական ապրանքներ՝ մետաքս, հնդկընկույզ, բուրդ, օպիում, խոզկաղին և այլն: Տավերնիեն բնութագրական գծերով է ներկայացնում ֆրանսիական առևտրին հետաքրքրող որոշ հանգամանքներ: Մաքսատանը, նկատում է նա, ապրանքները գնահատելուց հետո միայն կարելի էր առևտուր անել, ընդամին, մաքս գանձվում էր կամ ապրանքով, կամ դրամով: Օսմանյան պաշտոնյաները 1000 էքյու էին վերցնում այնպիսի ապրանքի դիմաց, որի մաքսը չէր կարող արժենալ անգամ 300 էք-

⁹⁶⁹ Տես Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 1, էջ 502: Տես նաև Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, էջ 151:

⁹⁷⁰ Ակինեան Ն., Երեմիա Չէլեպի Քեօմիւրճեան, էջ 246-250:

⁹⁷¹ Նույն տեղում, էջ 252-253:

⁹⁷² Tournefort J.-P. Voyage d'un botaniste. II, p. 315-316.

յու⁹⁷³: Քարավանային առևտրում ընդգրկված առևտրականները, հարում է նա, մեծ մասամբ հայեր էին, որոնց շատ հաճելի էր իրենց ապրանքը վաճառել ֆրանսիացիներին, քան որևէ այլազգիի, որովհետև նրանք ամեն ինչի դիմաց կանխիկ դրամով էին վճարում, մինչդեռ անգլիացիներն ու հոլանդացիները նրանց հարկադրում էին արժեքի կեսի դիմաց մահուդ ստանալ⁹⁷⁴:

XVII դ. երկրորդ քառորդից սկսված միջազգային ապրանքափոխանակության ծավալների աճով և Միջերկրածովյան ավազանում առևտրի վերելքով պայմանավորված՝ բարձրացավ Ձմյուռնիայի, որպես հանգուցային նավահանգստի նշանակությունը: 1630 թ. Ֆրանսիան Ձմյուռնիայում, Հալեպում և Իսկենդերուլում բաց արեց իր հյուպատոսարանները⁹⁷⁵:

Լեվանտական առևտրում ֆրանսիական ապրանքաշրջանառությունը տպավորիչ չափերով աճել էր XVII դ. վերջին, երբ ֆրանսիական արտաքին առևտրի կեսը բաժին էր ընկնում այդ տարածաշրջանին⁹⁷⁶: Հաջորդ դարի կեսերին առանձնապես ընդարձակվել էր ֆրանսիական դիպակի արտահանումը Թուրքիա, որը երկրի ներքին շրջաններ էր տարվում նույն քարավանային առևտրի ուղիներով և որի կարևոր հանգրվաններից մեկը Ձմյուռնիայի նավահանգիստն էր⁹⁷⁷: XVI-XVIII դդ. Լեվանտում ֆրանսիական առևտրի ակտիվությունը մի հայտնի չափով բացատրվում էր հանրահայտ կապիտուլյացիաների կարգավիճակով, որ Օսմանյան Թուրքիան տրամադրում էր եվրոպական տերություններին և ժամանակագրորեն ամենից առաջ՝ Ֆրանսիային: Դրանք առևտրական հարաբերություններում տրված փոխհամաձայնություններ էին, որոնք ընդգրկում էին մաքսային հարկերն ու տուրքերը, ծովային կամ ցամաքային բեռնափոխադրումների վերաբերյալ երկկողմ պարտավորվածությունները, ժառանգորդման իրավունքի խնդիրները նշված փոխհարաբերություններում և այլն: Ֆրանսիայի հետ 1535 թ. պետության վավերացրած կապիտուլյացիաները վերահաստատվել են 1569, 1581,

⁹⁷³ Tavernier J. B. Les six voyages en Turquie et en Perse, p. 141.

⁹⁷⁴ Նույն տեղում:

⁹⁷⁵ Bağis A. I. Osmanlı Ticaretinde gayri Muslimler, s. 10.

⁹⁷⁶ Issawi Ch. The Ottoman Empire in the European Economy 1600-1914, p. 114. Сту́нсан Мейер М. С. К характеристике экономической жизни городов Османской империи в XVII веке, с. 245:

⁹⁷⁷ Memoires of Baron de Tott, p. 146.

1604, 1673 և 1740 թթ.⁹⁷⁸: Հատկապես նշանակալի էին 1740 թ. կապիտուլյացիոն իրավունքները, երբ ֆրանսիական ներմուծվող և արտահանվող ապրանքների համար սահմանվեց 3% չափով մաքսատուրք, այն դեպքում, երբ օսմանյան վաճառականների մոծած մաքսաչափը կազմում էր 10%, բնականաբար, ի վնաս տեղական առևտրի: Նույն պայմանագրով և տրամաբանությամբ ֆրանսիական վաճառականներն ազատվում էին ներքին (Օսմանյան կայսրության գավառներում) մաքսեր վճարելուց, մինչդեռ տեղական վաճառականներն այդ իրավունքից զուրկ էին⁹⁷⁹: Անտարակոյս, կապիտուլյացիաներն արտոնյալ վիճակ էին ապահովում Թուրքիայում եվրոպական տերությունների առևտրի անկաշկանդ ծավալման համար, և ընդհակառակը, խոչընդոտում օսմանյան վաճառականների իրավունքների հավասարակշռությանը եվրոպականի հետ՝ և ներմուծման, և արտահանման բնագավառներում:

Զմյուռնիայի նավահանգիստն ընդունում էր ֆրանսիական թեթև արդյունաբերական արտադրության արդյունքները և այդ երկիր առաքում դրան անհրաժեշտ հումքը: XVIII դ. վերջերի և XIX դ. սկզբների՝ Զմյուռնիայում ֆրանսիական առևտրին վերաբերող մի վավերագրում նշվում է, որ <<Գաղղիան առնու աստ մետաքս անթափ (հում, անմշակ-Ա.Խ.), թֆտիկ այծի Անկիւրիոյ... բամպակ եւ աստ՝ ազնիւ յոյժ եւ փոխանակ նոցին առաքէ անդր չուխայ Լանկըտոքի, կտաւէղենս>>⁹⁸⁰:

Հետագայում, անշուշտ, Ֆրանսիայից ներմուծվող ապրանքացանկն առավել ընդլայնվել էր՝ արդուզարդի լայն տեսականի, կաշի, դեղորայք, կահկարասի, անգամ ֆես, բայց արդեն 1840-ական թթ. տեղական ավելի էժան արտադրանքը ինչ-որ չափով, իր զարգացման համեմատ, դիմակայում էր ֆրանսիական այս, ինչպես և եվրոպական այլ արտադրատեսակների ներմուծմանը⁹⁸¹: Զմյուռնիայում թղթի գործարանը ևս, որ հիմնել էր Հակոբ Տյուզյանը, մասամբ հազեցրել էր թղթի սուր պահանջարկը⁹⁸²: Բամբակի և գյուղատնտեսական այլ ապրանքների առևտուրը

⁹⁷⁸ Անապյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., 1961, էջ 46: Տես նաև Хитцель Ф., նշվ. աշխ., էջ 153.

⁹⁷⁹ Новичев А. Д. Турция, I, с. 212.

⁹⁸⁰ ՄՄ, Մ. Աղաբեկյանի արխիվ, թղթ. 189, վավ. 65:

⁹⁸¹ Եւրոպա, 1847, 13 հուլիսի:

⁹⁸² Հ. Տյուզյանի այդ ձեռնարկությունը գործարկում էին ֆրանսիացի վարպետները. այն ուներ 180 բանվոր և տարեկան արտադրում էր 500.000 օխա թուղթ (Եւրոպա, 1849, 9 հունվարի):

տեղական առևտրականների համար կայուն եկամուտներ էր ապահովում հնչուն դրամով⁹⁸³։ Թուրքական ներքին շրջանների գյուղատնտեսական արդյունքների շնորհիվ էր, որ հույն և հայ առևտրականները կարողանում էին դիմակայել եվրոպական առևտրի մրցակցային ճնշումներին։ Գյուղատնտեսական հումքի եվրոպական պահանջարկի ընդարձակումը XVIII դ. վերջերին և XIX դ. առաջին տասնամյակներին որոշակիորեն ակտիվացնում էր ոչ միայն եվրոպական առևտուրը, այլև տեղական առևտրական կապիտալը։ Ֆրանսիական և անգլիական առևտրականների միջև այստեղ ընդլայնվող մրցակցային պայքարին մասնակցում էին նաև տեղական առևտրականները՝ ստանալով նաև իրենց շահույթները, որպես տեղական հումքի վաճառքը տնօրինողներ և ապահովելով իրենց տեղը Արևելք-Արևմուտք ապրանքափոխանակության ոլորտում։ Այս գործընթացն ի վերջո, խթանելու էր օսմանյան առևտրական կապիտալի՝ դեպի արտադրություն անցնելու թեկուզ և դանդաղ շարժը տեղական հումքի հիման վրա։ Մասնավորապես XIX դ. առաջին կեսին երկրում, նաև Էգեյանի առափնյա շրջաններում աննախընթաց զարգացման են հասնում թեթև արդյունաբերական ձեռնարկությունները (տեքստիլ, բամբակագործական և բրդի գործվածքների, մրգերի, գինու և այլնի արտադրություն)։ Անկախ օսմանյան պետության կողմից տեղական առևտուրն արգելակող և արտաքին կապիտալը մեծապես խրախուսող քաղաքականությունից, այդ երկիրը դանդաղ, բայց և կայուն գործընթացներով կարողանում էր ապահովել սեփական արտադրության գոյությունն ու զարգացման միտումները։ Այդ միտումները, իրենց հերթին սնուցանում էին Զմյուռնիայի նավահանգիստն ու այստեղ գործառող հույն, հայ, հրեա և տեղաբնակ եվրոպական վաճառականները, որոնք XIX դ. և XX դ. սկզբներին կենտրոնացան փոքրասիական հումքի հիման վրա տեղական արտադրության կազմակերպման, դրա արտահանման և եվրոպական արդյունաբերական ապրանքների ներմուծման ասպարեզներում։ Երկճղի բևեռացած՝ սոսկ արտահանման ու ներմուծման առևտրական հնավանդ գործառույթները այժմ համալրվելու էին ի հաշիվ աստիճանաբար կայացող տեղական արտադրության։ XIX դ. երկրորդ կեսին օսմանյան հումքի արտահանման բնագավառում ակտիվացած այս գործընթացը նպաստում էր ֆրանսիական շուկաների հետ հայ վաճառականության կապերի ամրապնդմանը

⁹⁸³ De Tott, նշվ. աշխ., էջ 145։

և Ֆրանսիայում հայ առևտրականության՝ մի հայտնի չափով համախմբմանը⁹⁸⁴:

XVI դ. Ֆրանսիայի հետ առևտրական հարաբերությունները ընդլայնելուն համընթաց, հայ վաճառականները գրեթե միաժամանակ, կապեր են հաստատել Հոլանդիայի հետ՝ ֆրանսիական Մարսել նավահանգստից անցնելով այդ երկիրը: Հ. Քյուրտյանը առևտրական այս ուղին բացատրում է Մարսելում գործող ցածր մաքսաչափերով⁹⁸⁵, բայց հաշվի պետք է առնել նաև Ամստերդամում հաստատված նույնպես մատչելի մաքսերը և գործվածքեղենի ու կտավի արտադրության հումքի մեծ պահանջարկը: Իրենք՝ հոլանդացիները, XVI դ. երկրորդ կեսին առևտրական լայն կապեր էին ստեղծել Կ. Պոլսի և Զմյուռնիայի նավահանգիստների հետ, որովհետև հաջորդ դարասկզբին արդեն այս քաղաքներում գործում էին նրանց առևտրական գրասենյակները: 1516 թ. Հոլանդիայի հետ կնքած Թուրքիայի առևտրական պայմանագիրը ինքնին ցույց է տալիս, որ Ամստերդամում գործառում էին նաև հայ վաճառականները⁹⁸⁶, իսկ արդեն XVI դ. 90-ական թթ., ինչպես նշում է Վ. Բայբուրդյանը, Ամստերդամում ստեղծվել էր ոչ մեծ հայ համայնք՝ գլխավորապես կազմված ջուղայեցիներից⁹⁸⁷: XVII դ. երկրորդ կեսին կամ դրանից էլ առաջ հայ վաճառականներին հատկապես հրապուրում էր Ամստերդամը, որ դեռևս XV դ. դարձել էր առևտրական խոշոր կենտրոն և որը տպավորիչ հովանավորչական օրենքներ էր ընդունել ի նպաստ օտար վաճառականների նստակեցության, դատախարակական և վարկային-ֆինանսական կացության: Բուն իսկ Հոլանդիայի հյուսիսային նա-

⁹⁸⁴ XIX դ երկրորդ կեսի հայ-ֆրանսիական առևտրատնտեսական կապերի պատմությունը թողնելով զուտ մասնագիտական հետազոտությունների ոլորտին, նկատենք, որ այս իրողությունը ակնհայտորեն երևում է Փարիզում ապաստանած հայ դրամատերերի գործունեությունից. նաև նրանց նյութական աջակցության շնորհիվ էր, որ Գ. Այվազովսկին այստեղ հրատարակեց <<Մասեաց աղավնի>> ամսագիրը (1855-1858), Ա. Մուրատյանը <<Փարիզ>> շաբաթաթերթը (1860-1863): Ի դեպ, եվրոպաբնակ հայ վաճառականների գործնական խնդիրներին պետք է ծառայեր Անգլիայում՝ Լիվերպոլում, 1856 թ. հրատարակվող “Prix Courant” հայատառ թուրքերեն առևտրական պարբերականը (խմբագիր՝ Կ. Գասպարյան), որը դուրս է մնացել հայ մամուլի մատենագետների ու շաղկապներից (տես <<Արեւելք>>, Փարիզ, 1856, թիւ 13, էջ 411):

⁹⁸⁵ Քիւրտեան Յ., նշվ. աշխ., էջ 68:

⁹⁸⁶ Անապյան Հ., նշվ. աշխ., էջ 46:

⁹⁸⁷ Байбуртян В. А. Армянская колония Новой Джульфы в XVII веке, с. 15.

հանգները Ամստերդամի նավահանգստով էին ընդունում լեվանտական առևտրում ընդգրկված գյուղատնտեսական հումքը՝ անմաքս ներմուծմամբ շահագրգիռ լինելով արագորեն զարգացող և վերամշակող իրենց արտադրության համար⁹⁸⁸։ Ամստերդամի նավահանգիստն այս ժամանակաշրջանում հանդես էր գալիս որպես երկրի ներքին՝ ինքնաբավ շուկայի կենտրոն, գրեթե գուրկ լինելով տարանցիկ առևտրի նշանակալիությունից, որով և պետք է բացատրել և վերոհիշյալ հովանավորչությունը եկվոր, այդ թվում և հայ վաճառականների նկատմամբ՝ XVI դ. վերջերին։

Հոլանդական նավաշինության զարգացումը և դրա համեմատ՝ ծովագնացության ընդլայնումը պետք է խթաներ Ամստերդամի՝ որպես միջազգային տարանցիկ հանգուցակետի նշանակության աննախընթաց վերելքը, որն իր հերթին արագացնելու էր լեվանտական առևտրի ապրանքաշրջանառությունը։ 1612 թ. կնքվեց առևտրական երկրորդ պայմանագիրը Օսմանյան Թուրքիայի և Հոլանդիայի միջև, որից հետո վերջինս Ջմյուռնիայում բաց արեց իր հյուպատոսարանը⁹⁸⁹։ Ուշագրավ է, որ քափթան փաշայի հետ կնքած այս պայմանագրով Հոլանդիան պարտավորվում էր, ի տրիտուր Թուրքիայում հոլանդական նավերի անարգել մուտքի և ապրանքների իրացման արտոնությունների, չներմուծել այն երկրների ապրանքները, որոնց հետ Բ. դուռն առևտրական պայմանագրեր չունեին։ Այդ կաշկանդում էր հոլանդական առևտրական նավատորմի բեռնափոխադրումների շրջանակները, ուստի և Հոլանդիան ևս, ի պատասխան դրա, արգելք դրեց Օսմանյան Թուրքիայից և Պարսկաստանից ապրանքների ներմուծման վրա։ Բավական դժվարին, եթե չասենք ծանր դրություն ստեղծվեց նշված երկրներից հումք փոխադրող վաճառականների, այդ առումով նաև հայ վաճառականների համար, որոնք Հոլանդիայի հետ կապված էին ոչ միայն արտահանման, այլև ներմուծման գործառույթներով։ Հոլանդացիների այս ձեռնարկումը, միաժամանակ, բավական պարզորոշ ցուցադրում էր նրանց առևտրական ընկերության մտահղացումը՝ Գիլան-Ջմյուռնիա առևտրական ռազմավարական ուղեգծից վանելու հումք փոխադրող օտար վաճառականներին և դրանց թվում առաջիններից մեկին՝ մրցակից

⁹⁸⁸ Чистозвонов А. Н. Реформационное движение и классовая борьба в Нидерландах, с. 82.

⁹⁸⁹ Սարուխան Ա., Հոլանդան եւ հայերը, էջ 12։ Şen նաև Uzunçarşılı İ. H. Osmanlı Tarihi, C. III, 2 Kis., s. 237.

հայերին: Ավելին, 1690-ական թթ. այդ ընկերության գործակալը հայերին առաջարկում էր գնել նրանց արտահանած մետաքսի մեկ երրորդը, այն պայմանով, որ նրանք իրենց ապրանքը Եվրոպա առաքելին այդ ընկերության նավերով⁹⁹⁰: Ակներն էին նաև հոլանդացիների մրցակցական նկատառումները անգլիական նավատերերի նկատմամբ: Հայ վաճառականները, սակայն, չնպաստեցին մենաշնորհային այս պայմանին, որի պարտադրիչ բնույթն ու հեռանկարները նրանք լավ էին պատկերացնում: Դեպի արևմուտք նրանք իրենց արտահանումը շարունակեցին ցամաքային ուղերթով՝ որպես հանգուցակետ ընտրելով Զմյուռնիայի և Հալեպի քարավանային ուղիները⁹⁹¹: Այս ուղիների աշխուժացումը, իր հերթին, ինչպես կտեսնենք քիչ անց, սրտնեղություն էր պատճառում ոչ միայն հոլանդական, այլև ռուսական դիվանագիտությանը. մասնավորապես, վերջինս մատնացույց էր անում հոլանդացիների առևտրական շահեկան դիրքերը Պարսկաստանում և Հնդկաստանում⁹⁹²:

Միջազգային առևտրում հայ վաճառականներին պարտադրված այսպիսի պայմաններով է բացատրվում, մասամբ, եվրոպական երկրներից Զմյուռնիայում վերաբնակվելու՝ հայ վաճառականության ձգտումը, հատկապես այն հատվածի, որին ձեռնտու էր միջնորդ առևտրականի իր գործառնությունների առանցքը տեղափոխել շատ ավելի չափարտադրող օսմանյան այդ նավահանգիստը: Այսուհանդերձ, հայ վաճառականները, ոչ առանց հոլանդական նավատիրական ընկերությունների գործակցության, շարունակում էին երթնել Զմյուռնիայի և Ամստերդամի միջև: XVII դ. առաջին կեսին առավել ընդգծվեց Զմյուռնիայի նշանակությունը հոլանդական առևտրի ու առևտրական նավագնա-

⁹⁹⁰ Քիւրտեան Յ., նշվ. աշխ., էջ 37:

⁹⁹¹ Նույն տեղում:

⁹⁹² Տես Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, էջ 449: Ա. Հովհաննիսյանը մեջբերել է ռուսական դեսպան Վոլինսկու մտահոգությունն արտահայտող խոսքերն այս առթիվ. <<Գիլանցիները, գրում էր նա,- ընդարձակել են Պարսկաստանի առևտուրը Բատավիայի ընկերության (հոլանդական-Ա. Խ.) հետ. ներկայիս ապրանքների մեծ մասը Արևելյան Հնդկաստանի և Եվրոպայի միջև շրջանառություն է գործում նրանց ձեռքով՝ չհանդիպելով պարսիկների կողմից որևէ խոչընդոտի, քանի որ շահի արթունիքը, ինչպես ներքինիները, նույնպես և մինիստրները, միշտ մեծ կաշառքներ են ստանում նրանցից և այս եղանակով ոչ միայն որոշ ապրանքներ, այլև հում մետաքս և մետաքսե մանվածքներ են անարգել գնում և ուղարկում Հոլանդիա՝ Հալեպի և Զմյուռնիայի վրայով>> (նույն տեղում, էջ 452-453):

ցության համար, որտեղ անգլիական ու ֆրանսիական առևտրի հետ ունեցած մրցակցական ասպարեզում նրանք տիրապետող դիրքեր գրավեցին, շատ ավելի, քան Կոստանդնուպոլսում⁹⁹³:

Հոլանդական Օստ-ինդիական ընկերությունը մրցակցության հետ միաժամանակ, բավական կապեր ուներ Նոր Զուդայի հայ վաճառականների հետ՝ գնահատելով նրանց գործուն դերակատարությունը հումքի մատակարարման ասպարեզում, որ, մանավանդ, իրականացվում էր հայերի ոչ համախմբված, այլ գլխավորապես անհատական գործունեության ձևերով: 1626 թ. հետո, գրում է Ա. Սարուխանը, <<հայերը ոչ միայն յարատև յարաբերություններ մշակեցին Հոլանդայի հետ, այլև ոմանք հարկաւոր համարեցան մշտականապես հաստատուիլ Ամստերդամում՝ ուղղակի, այն է՝ առանց հոլանդացի, հրեա կամ այլ միջնորդների հոլանդական շուկաներից օգտուելու համար թէ ներածութեամբ, եւ թէ արտածութեամբ>>⁹⁹⁴:

XVII դ. և XVIII դ. առաջին կեսին զմյուռնահայ վաճառականները Հոլանդիա էին արտահանում մետաքս, բամբակ, համեմունքներ, գյուղատնտեսական ապրանքներ, և ներմուծում թեթև արդյունաբերական և կենցաղային գործածության բազմաթիվ ապրանքներ՝ հագուստ, կոշիկ, հայելի, դանակ, ժամացույցներ և այլն, ինչպես գրում է Ղ. Ալիշանը՝ <<ազգ ազգ ախղամախղի (տարբեր ապրանքներ-Ա. Խ.) յորս ի դէպ է զառաջին տեղին ունել չուխայից>>⁹⁹⁵:

Զմյուռնիայից գյուղատնտեսական ապրանքների արտահանումը Ամստերդամ և այստեղից՝ իտալական քաղաքներ՝ իրականացվում էր հոլանդական նավերով: Վկայակոչելով եվրոպական մի հեղինակի հրապարակած վավերագիրը, Ա. Սյուրմեյանը գրում է, որ հավանաբար հալեպցի կամ իզմիրցի <<վեց վաճառականներ... 1627 թ. նոյեմբեր 21-ին

⁹⁹³ Бааш Э. История экономического развития Голландии в XVI-XVIII веках, с. 393. Նույն հեղինակը նկատում է նաև, որ նիդեռլանդական նավահանգստային քաղաքներում բնակվում էին եվրոպական ազգությունների շատ վաճառականներ՝ իտալացի, գերմանացի, ֆրանսիացի և այլն, որոնց փոխհարաբերությունները, անշուշտ, նպաստում էին երկկողմ կապերի հարատևմանը (նույն տեղում, էջ 245): Հիշենք, որ նույն երևույթի՝ շատ ավելի վաղ ժամանակների դրսևորմանը հանդիպում ենք Զմյուռնիայում, որտեղ դարերի ընթացքում գոյացել էր եվրոպական մի շարք ազգերի առևտրական թաղամասը՝ Ֆրանկաց թաղը:

⁹⁹⁴ Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 460:

⁹⁹⁵ Ալիշան Ղ., Սիսական, էջ 460:

Ամստերդամի մէջ առևտրական դաշինք մը կը կնքեն հոլանտացի Jan Steen-ի հետ, որով վերջինս, անշուշտ նաւատէր մը, Լիվոռնո պիտի փոխադրէր ապրանքներ»⁹⁹⁶:

XVIII դ. զմյուռնացիները, ինչպէս և իրենք՝ հոլանդացիները, Զմյուռնիա բերվող վերոհիշյալ ապրանքները համալրեցին արձձով, անագով և պողպատով, ընդամին, այս ասպարեզում մենաշնորհ դիրք ապահովելով օսմանյան շուկայում, ինչը նշում էր Կոստանդնուպոլսում ռուսական ներկայացուցիչ Ն. Նեպլունը⁹⁹⁷:

Ամստերդամի որոշ հայեր ունեին նաև սեփական նավեր, որոնք, ինչպէս և հայ վաճառականներն ամենուրեք, ծովային ուղիներում միայնակ չէին, և ուրեմն, ենթակա ոչ միայն բնական աղետների: Առանձնապէս ահեղ վտանգ էին ներշնչում ու ներկայացնում ծովահենները՝ թէ Միջերկրական, թէ Էգեյան և թէ այլ ծովերում, որոնք ոչ քիչ դեպքերում գործում էին եվրոպական կամ օսմանյան կառավարությունների ցուցումներով՝ միջազգային առևտրում մրցակից երկրների առևտրական ուղիները անապահով կամ աննավարկելի դարձնելու նպատակով: Այս պատճառով առևտրական նավերը հաճախ նավարկում էին մարտանավերի ուղեկցությամբ: Լիվոռնոյի հոլանդական հյուպատոսը իր մի տեղեկագրում նշում է, որ 1653 թ. ապրիլի 21-ին հոլանդական յոթ մարտանավեր ուղեկցել են հինգ առևտրանավերի, որոնցից մեկի անունը Cooperman van Armenian (Հայկական վաճառական) էր, մյուսինը Coopman van Persien (Պարսկական վաճառական)⁹⁹⁸:

XIV-XV դդ. միջերկրածովյան շրջանները վտանգավոր գոտիներ էին համարվում ծովահենների առկայության պատճառով. այդ, ինչպէս և Արշիպելագի կղզիներում հատկապէս երթնելում էին ծովային ավազակախմբերը, որոնք միավորում էին օսմանցի թուրքերին և թուրքացեղ մարդկանց⁹⁹⁹: Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Թեվենոն 1665 թ. գտնվելով Բենդեր Աբասում, գրում էր, որ Հնդկաստան մեկնելը կապված է ծովահենների հետ կապված վտանգների հետ: Ծովահեններից մեկը <<նույնիսկ իր տրամադրության տակ ծովային նավատորմ ուներ, որը, ասում էին, բաղկացած էր հարյուր առազաստանավից (galiores): Նա կողոպտում էր իրեն հանդիպած ամեն ինչ, բայց ոչ հոլանդացիներին,

⁹⁹⁶ Միւրմէեան Ա., Պատմութիւն Հալեպի հայոց, հ. Բ, էջ 614-615:

⁹⁹⁷ Дандиг Б., նշվ. աշխ., էջ 79:

⁹⁹⁸ Մարուխան Ա., նշվ. աշխ., էջ 56-57:

⁹⁹⁹ Васильев А. А. Падение Византии, с. 47-48.

որոնց չէր համարձակվում ձեռք տալ՝ վախենալով իր դեմ ուղղել այդ հզոր ընկերության (հոլանդական-Ա. Խ.) զայրույթը»¹⁰⁰⁰:

Այսուհանդերձ, միշտ չէ, որ ծովահենները երկնչում էին հոլանդական կամ եվրոպական այլ առևտրական ընկերության պատժիչ ձեռնարկներից: 1663-1664 թթ. բերբերական ծովահենները գրավել էին 29 հոլանդական նավ, 1714-1770 թթ.՝ 39-ը, պատճառելով մարդկային և նյութական զգալի կորուստներ¹⁰⁰¹: Հոլանդական առևտրական նավատորմի դեմ ծովահենների ավազակային գործողությունները հարկ է դիտել նաև լեվանտում անգլո-հոլանդական առևտրական մրցակցության տեսանկյունից, երբ ծովահենները գործում էին անգլիական կառավարության խրախուսանքով ու թելադրանքով: Նույնը պետք է ասել օսմանյան պետության հետ համագործակցող մահմեդական ծովահենների մասին, որոնք, ասենք, պաշտպանում էին Բայազետ Բ-ին (1481-1512) Վենետիկի դեմ մղվող պայքարում¹⁰⁰²: Էգեյանի տարածաշրջանում ծովահենները հարատևել են մինչև XIX դ. կեսը՝ կողոպտելով առևտրական միայնակ կամ ոչ հուսալի պահականավերով բաց ծով դուրս եկած վաճառականներին: 1841 թ. Ջոյուռնիայի <<Արշալոյս Արարատեան>> լրագիրը գրում էր, որ ծովահենները նավեր են կողոպտում այդ նավահանգստի մերձակա ջրերում, իսկ հաջորդ տարին, ինչպես հայտնում է նույն լրագիրը, Միջերկրականի կղզիներից եկած հանդուգն ավազակախմբերը նույնիսկ ափ էին իջել և թալանել այս անգամ ցամաքային երթուղով՝ Այդըն-Ջոյուռնիա ընթացող քարավանը¹⁰⁰³:

Օսմանյան նավահանգիստներում խարխիս նետած եվրոպական վաճառականների, առավել ևս օսմանահպատակ վաճառականների նավերի և նավաբեռների ապահովագրումը (թեսլիմ) հաճախ ստանում էր խնդրահարույց նշանակություն՝ կորսված ապրանքների իրական արժեքի ոչ միայն վերականգնման, այլև փոխհատուցման հանգուցալուծումներում: Այս տեսակետից շատ հետաքրքրական է Վենետիկի Միլիթարյան Իգնատիոս վարդ. Փափազյանցի մի վավերագրական աշխատությունը, որն ընդգրկում է 1826 թ. ընթացքում գրված առևտրական փաստաթղթեր, ակնհայտորեն՝ հայ վաճառականների գործնական պա-

¹⁰⁰⁰ Մեջբերումը՝ ըստ Է. Թաջիրյանի թարգմանության. տես Թաջիրյան Է., Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17-18 դարերում, մաս II, էջ 120:

¹⁰⁰¹ Баам Э., նշվ. աշխ., էջ 310:

¹⁰⁰² Labib Subhi. The Era of Suleyman Magnificent, p. 441.

¹⁰⁰³ Արշալոյս Արարատեան, 1841, 7 փետրվարի, 1842, 11 սեպտեմբերի:

հանջմունքների համար և տպագրված <<ի խնդրոյ ազնուական պարոն Պետրոսի Եռսուֆեանց Ջմիռնացոյ բնակելոյ ի Թրէս>>: Աշխատությունը ցույց է տալիս, որ XIX դ. սկզբներին վնասի փոխհատուցման միջազգային նորմեր էին գործում նավատերերի և վաճառականների իրավական հարաբերություններում՝ ապահովագրելու տեղափոխվող ապրանքները նավերի անսարքություններից, փոթորիկներից, ծովահենների հարձակումներից և այլն: Այս առթիվ տրվում է հետևյալ բացատրությունը. <<Տուգանք վնասու, զոր իտալացիք կոչեն Avaria. Ավառիա են տոյժն յառաջ եկեալք ի վնասուց ալեկոծութեան կամ ի կողոպտելոյ հինից, այսինքն աւազակաց ծովու, որով յաղորդակիցքն (ապահովագրողները-Ա. Խ.) նաւուն որպէս և բեռանցն պարտին հատուցանել ըստ իւրաքանչիւր չափու մասնակցութեանն, զոր ունին ընդ նաւուն և ընդ վաճառացն>>¹⁰⁰⁴:

XVIII դ. երկրորդ քառորդին զմյուռնահայ վաճառականներն ամրապնդեցին իրենց գործնական կապերը հոլանդական առևտրական ընկերությունների հետ, որին նպաստում էր տարանցիկ առևտրին արդեն ըստ ամենայնի նպաստող հոլանդական կառավարությունը՝ իր վարած ազատ առևտրի քաղաքականությամբ: Ամստերդամում և Անտվերպենում քաջալերվում էին արևելյան, այդ թվում և հայ վաճառականները, որոնք, ինչպես նկատեցինք, գործում էին անկախ կամ գրեթե անկախ, առանց ընկերությունների և այդպիսով, հոլանդացիների կարծիքով, չէին կարող մրցակցական վտանգ ներշնչել: Այս քաղաքականության հիմնավորման հարցում նշանակություն ուներ նաև հոլանդական նավերի բեռնաշրջանառության աճը լեվանտում, հոլանդական գլխավոր շտատների կողմից քաղաքական բարենպաստ հարաբերությունների պահպանումը օսմանյան պետության հետ¹⁰⁰⁵: XVII դ. վերջին և XVIII դ. սկզբին հոլանդական առևտուրը կազմում էր լեվանտի ամբողջ շրջանառության 20-25%-ը¹⁰⁰⁶, որ զգալի որակ էր եվրոպական առևտրի հաշվեկշռում՝ կարևորելով հոլանդական կառավարության ջանքերն այս ուղղությամբ:

Արտաքին առևտրում հայ վաճառականները որքան էլ միայնակ գործեին, այսուհանդերձ, միավորվում էին ընդհանուր վտանգ կամ սպառնալիք հարուցող խոչընդոտների դեպքում: Այս պարագայում և

¹⁰⁰⁴ Փափագեանց Ի., Պատճենք նամակաց վաճառականութեան, էջ 199:

¹⁰⁰⁵ Ств Русский посол в Стамбуле, с. 92.

¹⁰⁰⁶ Мейер М. С., նշվ. աշխ., էջ 246.

շատ սակավադեպ, նրանց կազմակերպվածությունն ի հայտ էր գալիս որպես քաղաքական հովանավորություն վայելող օտար վաճառականներին ընդդիմանալու արդյունավետ միջոց: Ա. Սարուխանը հիշում է հայ վաճառականների բողոքագիրը (1658-1659 թթ.) Ջմյունիայի հոլանդական հյուպատոս Մորտիերի դեմ՝ ուղղված Հոլանդիայի Գլխավոր շտատներին: Հյուպատոսը կամայականորեն արգելել էր այդ վաճառականների ապրանքների բեռնումը հոլանդական նավեր՝ նրանցից պահանջելով ավելացնել վճարը. <<Մեք ֆլամիկի (հոլանդական-Ա. Խ.) նաւին Ժ-ին կէս անք տուել, չում այլ տա (ինչու-Ա. Խ.) դու մին մոչլ կէս ըռփ աս ուզում>>, առարկել էին նրանք հյուպատոսին¹⁰⁰⁷: Ակներն է, որ Մորտիերը կտրուկ բարձրացրել էր բեռնավորման գինը, Բայց տվյալ դեպքում պակաս ուշագրավ չէ այն, որ հյուպատոսի դեմ հայ վաճառականների բողոքը պաշտպանեց գմյունաբնակ հոլանդական գաղութը (1658 թ. փետրվարի 14-ին)՝ հայտնելով, որ իր վերաբերմունքով հյուպատոսը վնասում է հենց հոլանդական առևտրին, որի պատճառով հայերը, հույները և հրեաները կարող են հրաժարվել հոլանդական առևտրանավերում իրենց ապրանքը բեռնելուց¹⁰⁰⁸: Իսկապես, Ջմյունիայի առևտրում խիստ ազդեցիկ այս երեք էթնիկական խմբերի կողմից հոլանդական նավերի վարձակալման ձախտդումը զգալի հարված կարող էր հասցնել նավատերերին:

XVI-XVIII դդ. գմյունահայ վաճառականության պատմությունը սերտորեն միահյուսվում, այլև գրեթե նույնանում է պարսկաբնակ և Թուրքիայի հայաբնակ վայրերի խոշոր վաճառականության պատմության հետ. ագուլեցի, ջուղայեցի, նախիջևանցի, սյունեցի, կեսարացի, թոքատեցի, կարինցի և այլ տարաբնակ այլ վաճառականների համար Ջմյունիան հանդես էր գալիս որպես և միջազգային, և ներքին գավառների առևտրի ընդհանրական հանգրվան: Վ. Բայբուրդյանը նկատում է, որ 1639 թ. թուրք-պարսկական հաշտության պայմանագրից հետո Հալեպում, Ալեքսանդրիայում, Կ. Պոլսում և Ջմյունիայում աշխուժացել էր արևելահայ առևտրական կապիտալը՝ ընդլայնելով մետաքսի առևտրի

¹⁰⁰⁷ Սարուխան Ա., նշվ. աշխ., էջ 23:

¹⁰⁰⁸ Նույն տեղում, էջ 32: Ջմյունիայի մեզ ծանոթ՝ Ֆրանկաց թաղի այս հոլանդացի վաճառականները, լավատեղյակ լինելով բեռնվող ապրանքների սակագների՝ ամենից առաջ պաշտպանում էին իրենց և հայրենակից հոլանդական նավատերերի շահերը:

ծավալները¹⁰⁰⁹։ Այս վաճառականներից շատերը իրենց եվրոպաբնակ գործընկերների նման այս նավահանգստում դառնում էին, ինչպես տեսանք, նստակյաց բնակիչներ՝ ելնելով առևտրի համար ընդարձակ հնարավորություններ ընծայող այդ հանգրվանի հարմարավետությունից։

Մինչև XVIII դ. վերջ զգալի թվով գմյունահայ վաճառականներ էին բնակվում Ամստերդամում։ Նրանց հետ Միմեոն և Ղուկաս կաթողիկոսները մշտական կապեր էին պահպանում՝ հաճախ նախապես տեղյակ պահելով ազգային-կրոնական գործերում իրենց անելիքների մասին։ Կապող միջակա օղակը Ջմյունիայի տերունի թեմն էր, որի ծխերի մեջ էին ընդգրկված Ամստերդամի գմյունացի վաճառականները, որոնք շարունակում էին պահպանել իրենց մերձավոր փոխհարաբերությունները Ջմյունիայի առաջնորդի և նրա միջոցով՝ Էջմիածնի հետ։ Այս իմաստով բավական պերճախոս է Միմեոն կաթողիկոսի Հիշատակարանի մի հատվածը, որտեղ կաթողիկոսը հայտնում է, որ ուղարկել է <<օրհնութեան կոնդակ եւս ի յԱմստերդամ որոյ եւ միսիթարութիւն եւ յուսադրութիւն վասն տարակցութեանցն եւ միայնութեանցն։ Զի եւ այն լինի ընդ ձեռամբ Զմիւռնիոյ նուիրակի եւ առաջնորդի>>¹⁰¹⁰։ Ամստերդամի հայկական եկեղեցին ևս պատկանում էր Ջմյունիայի թեմին և հետևաբար, գտնվում էր նրա իրավասության ներքո։ Նույն կերպ, 1775 թ. Ջմյունիայի առաջնորդ Ղուկասին (ապագա կաթողիկոսը) Եսայի վարդապետով փոխարինելու իր որոշումը կաթողիկոսը հայտնել էր Ամստերդամի վաճառականներին։ Իր հերթին, Ամստերդամի <<հայկազուն ժողովրդոյն>> քանիցս կոնդակներ էր ուղարկել Ղուկաս կաթողիկոսը¹⁰¹¹։ Ջմյունիայից Ամստերդամ էին անցել ակնաավոր պատմաբան և մանկավարժ Տ. Մավալանյանի նախնիները՝ XVIII դ. առաջին կեսին¹⁰¹²։ Այդ դարի վերջին քառորդին Ամստերդամի նշանավոր վաճառականներից էր նույն տոհմից Առաքել Մավալանյանը, որի եղբայր Մոսկոֆ Հովհաննեսը բնակվում և գործում էր Ջմյունիայում։ 1783 թ. մարտին Ղուկաս կաթողիկոսը օրհնության գիր է ուղարկել Առաքելին՝ Ամստերդամ¹⁰¹³,

¹⁰⁰⁹ Baibourtian V. International Trade and the Armenian Merchants, p. 84.

¹⁰¹⁰ Միմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, 1763-1767։ Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, էջ 69։

¹⁰¹¹ Տես Դիւան հայոց պատմութեան, Ղուկաս Կարնեցի, գիրք Ը, էջ 452-453, գիրք ԺԱ, էջ 321 և այլն։

¹⁰¹² Տես Մաւալանեան Տ., Կենսագրական յուշեր, էջ 7-8։

¹⁰¹³ Դիվան հայոց պատմության, Ղուկաս Կարնեցի, էջ 352, 343։

որում հիշում է Ս. Աթոռին նրա նվիրատվությունը՝ 2 հազար գուլդենի չափով, իսկ դրանից առաջ Առաքել Սավալանյանը մեկ այլ վաճառականի՝ պարոն Մնացականի հետ միասին Ամստերդամից զանգեր էր ուղարկել Էջմիածին (1782 թ.):

Ուշագրավ է, որ Պետրոս Ապրոյանը հոլանդերենից՝ <<ի ֆիլեմենկի բարբառոյն ի հայ բարբառ>> է թարգմանել պատմական շարադրանքի բնույթի մի ժողովածու՝ Օսմանյան Թուրքիայի, այդ թվում և փոքրասիական քաղաքների մասին տեղեկություններով: Դրան կանոնադաշտանք հետագա շարադրանքում, իսկ այստեղ միայն նկատենք, որ Էգեյանի շրջանում հոլանդացիների հետաքրքրությունները կարևորող թարգմանիչը նույն ամստերդամաբնակ Պետրոս Ապրոյանն էր՝ Պետրոս Մեծի ծանոթը և նրանից Ռուսաստանում առևտրի արտոնություններ ստացած անձը:

Հայ վաճառական համայնքն Ամստերդամում խմբված էր իր եկեղեցու շուրջ, և ինչպես տեսանք, ընդգրկված էր Զմյուռնիայի տերունի թեմի մեջ: Եկեղեցին հիմնել էին ջուղայեցի վաճառականները՝ XVI դ. վերջերին կամ XVII դ. սկզբներին¹⁰¹⁴, կար նաև հոգետուն, որ կառուցվել էր <<յանուն հոգւոյն սրբոյ՝ ըստ չափու սրբոյ եկեղեցւոյ Զմիւռնիոյ կամ փոքր-ինչ մեծ քան զայն>>, ասված է մի վավերագրում¹⁰¹⁵: Եկեղեցին անշքացման ուղին բռնեց XIX դ. առաջին քառորդին՝ հայ առևտրական համայնքի վերանալուն գուզընթաց: 1835 թ. այստեղ այլևս պաշտամունք չէր կատարվում: Այնուհետև եկեղեցին սեփականատերերի մի ձեռքից մյուսն էր անցնում, նրա տերերը, այդ թվում և Էջմիածինը՝ փոխարինում էին միմյանց՝ անգամ հոլանդական դատարանում Էջմիածնի օգտին հանդես եկող ռուսական իշխանությունների արդարացի միջամտության պայմաններում: Ի վերջո, վերջիններս շահեցին գործը և Ամստերդամի հայոց եկեղեցին 1873 թ. հանձնվեց Էջմիածնին: Այն

¹⁰¹⁴ Ալիշան Ղ., Միսական, էջ 460:

¹⁰¹⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիւան, թղթ. 52, վավ. 413: Նույն վավերագրում ասվում է, որ եկեղեցու տանիքի վրա կառուցված էր երկու-երեք տուն՝ քահանաների համար և հյուրանոց (<<վասն միսաֆիրաց>> հյուրերի համար), և որ այստեղ պահվում էին գրչագիր և տպագրված գրքեր: Տներից ստացված վարձը կազմում էր 3 հազ. դուրուշ, իսկ բանկում տարեկան շահութաբեր արժեթղթերից ստացված եկամուտը հասնում էր 5 հազ. և ավելի գուլդենի (նույն տեղում):

աճուրդով վաճառվեց 1874 թ. մարտին, որով և ավարտվեց Հոլանդիայի հայ գաղթօջախի պատմության վերջին արարը¹⁰¹⁶:

XVII դ. երկրորդ կեսին եվրոպական առևտրական մայրուղիների փոփոխությունները, լեվանտի առևտրում տերությունների բացարձակ գերիշխանությունը, ինչպես և Պարսկաստանից հումքի արտահանման հնարավորությունների սպառումը անմիջականորեն ազդեցին հայ վաճառականների գործունեության վրա: Հոլանդական շուկաների հետ հայերին ամենից շատ կամրջող մետաքսի արտահանման կորուստը կործանիչ հարված էր հասցրել հայ-հոլանդական տնտեսական առնչություններին: 1740-1750-ական թթ. բուն իսկ Պարսկաստանում աղետալի չափերով նվազեց մետաքսի առևտուրը: Զմյուռնիան և Հալեպը դրա հետևանքով կորցրեցին մետաքսի շահութաբեր առևտուրը: Դրանից քիչ առաջ պարսկական առևտրական ուղիներն արդեն ապահովության հույսեր չէին ներշնչում հայ վաճառականներին՝ Պարսկաստանի ներքին անկայունության և միջավատական բախումների պատճառով: 1730-ական թթ. Նադիր շահն արգելեց մետաքսի արտահանումը Թուրքիա, որը փաստորեն քայքայեց փոքրասիական ապրանքափոխանակության դարավոր գործընթացը: Դրան հակադրվելով՝ սուլթան Մահմուդն իր հերթին դիմեց հակառակ գործողությունների. Միմեռն կաթողիկոսը նշում էր, որ հրապարակվել է <<Սուլթան Մահմուտի ֆարման վասն արեւելցի վաճառականացն որք ի յերկիրն օսմանցուց զի մի պահանջեսցեն զհարկ ինչ ի նոցանէ ՌՃՕԱ թուին (1738-1739 թթ.-Ա.Խ.) տաճկաց>>¹⁰¹⁷: Այս հակամարտությունը հասցրեց նրան, որ աննախընթաց չափերով նվազեց մետաքսի առևտուրը: Աստիճանաբար մարեց XVIII դ. երկրորդ կեսին դեռևս գործող Սպահան-Կարին-Թոքատ-Զմյուռնիա ուղին¹⁰¹⁸, որով դարեր ի վեր հայ վաճառականները Եվրոպա էին հասցնում պարսկական հումքը: Այս ասպարեզում գործառող վաճառականները տեղափոխվեցին Եվրոպա, Օսմանյան Թուրքիա, Հնդկաստան և այլուր:

Մետաքսի առևտրի ամլացող ասպարեզից հեռացող հայ վաճառականների մի մասը տեղափոխվեց նաև Զմյուռնիա կամ դրան կից շրջաններ, որ շարունակվեց հետագա տասնամյակներին: Այս մասին

¹⁰¹⁶ Մարուխան Ա., նշվ. աշխ., էջ 160-162:

¹⁰¹⁷ Միմեռն կաթողիկոս, Զամբո զիրք, էջ 245: Կաթողիկոսն այստեղ նկատի ունի Մահմուդ Ա-ին (1730-1754):

¹⁰¹⁸ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 66:

ուշագրավ տեղեկություններ է տալիս Տ. Հ. Սավալանյանը. <<Եւ որովհետեւ Իզմիրի հայերը,-գրում է նա,- առևտրական եւ ընտանեկան յարաբերութիւններ ունէին Ամստերդամի ազգայնոց հետ եւ ամէնքն ալ գրեթէ Պարսկաստանէն գաղթած, այս պատճառներով Եսայեայ որդիքն (Տ. Սավալանյանի պապը և նրա եղբայրները-Ա. Խ.) չուզելով իրենց բնակավայրն՝ Աշտարխան դառնալ, կորոշեն գալ բնակութիւն հաստատել Իզմիր (1770), որ, ինչպէս յայտնի է՝ այն ժամանակ եւս Թիւրքիոյ ամէնէն ծաղկեալ եւ վաճառաշահ քաղաքն էր>>¹⁰¹⁹:

Տ. Սավալանյանի նախնիներից ևս մեկը՝ Հովհաննես անվամբ, Էգեյանի շրջան էր եկել շատ ավելի վաղ, XVIII դ. սկզբներից ոչ ուշ և բնակություն հաստատել Էոդեմիշին կից Պիրկի ավանում, որտեղ էլ վախճանվել է 1716 թ.¹⁰²⁰: 1743 թ. Զմյուռնիայում զգալի թիվ էին կազմում Պարսկաստանից տեղափոխված և առհասարակ եկվոր վաճառականները: Ս.Ստեփանոս եկեղեցու նորոգման արձանագրության մեջ ասվում է, որ այդ գլուխ է բերվել <<արդեամբք եւ տրօք առհասարակ ժողովրդոց լուսաւորչածնից տեղացւոց եւ վաճառականաց եկաց եւ բնակաց>>¹⁰²¹:

XVII-XVIII դդ. պետք է առանձնացնել Զմյուռնիայի հայ եկվոր կամ տեղաբնակ վաճառականների գործունեության մի կարևոր բնագավառը՝ ակնավաճառությունը: Այսպես, ջուղայեցի Սարգիսը XVII դ. առաջին քառորդին կան դրանից քիչ անց խոջա Ավետիքի հետ Հալեպից անցել է Զմյուռնիա և բնակվել այստեղ, իբրև ակնեղենի վաճառական¹⁰²²: Ի դեպ, սա այն Սարգիսն է, ով Այդընում 1635 թ. ձեռնադրվել է քահանա՝ Տրդատ եպիսկոպոսի կողմից, ինչը պարզվում է մի բժշկարանում նույն Սարգսի գրած հիշատակարանից¹⁰²³: Թանկագին քարերի վաճառքը Զմյուռնիայում, ինչպես ամենուրեք կայսրության առևտրական կենտրոններում, իրականացվում էր ծածկած շուկաներում՝ բեզեսթեններում, որոնք պահպանվում էին քաղաքապահ ենիչերիների գորաջոկատների

¹⁰¹⁹ Սաւալանեան Տ., Կենսագրական յուշեր, էջ 8: Սավալանյանների տոհմից էր մեծահարուստ Եսայի Սավալանյանը, որը մինչև թանգիմաթի հռչակումը Այդընի կառավարիչ Հալիլ Քյամիլ փաշայի սեղանավորն էր (Արշալոյս Արարատեան, 1841, 28 փետրվարի):

¹⁰²⁰ Նույն տեղում, էջ 10:

¹⁰²¹ Քօսեան Յ., նշվ. աշխ., էջ 58:

¹⁰²² Միւրմէեան Ա., Պատմութիւն Հալեպի քահանայից, թիւ 1-2, էջ 15:

¹⁰²³ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 596:

կամ այլ զինված պահակախմբերի կողմից: XVIII դ. սկզբին Ձմյունիա այցելած ֆրանսիացի բժիշկ Պ. Լուկան գրում էր, որ <<պեղեթենին մեջ ալ թանկագին քարերու եւ այլ արժէքաւոր առարկաներու տուրեւառ կըլլա>>¹⁰²⁴, առևտուր, որին մշտապես մասնակցում էին օտար և տեղական, այդ թվում և հայ վաճառականները, և որն արդեն դարեր ի վեր ավանդական կայունություն ուներ Ձմյունիայում:

Անգլիայի հետ ևս հայ վաճառականության առևտրի հիմնական բաղադրիչը XVI-XVIII առաջին կեսին մնում էր պարսկական մետաքսը, մասամբ նաև գյուղատնտեսական հումքը: Ձմյունիայից հայերն անցնում էին Բոսալիա, ապա Ֆրանսիա՝ Մարսելի նավահանգստով շարունակում երթուղին դեպի Հոլանդիա և Անգլիա: Անգլիական առևտուրը Թուրքիայի հետ առանձնապես աշխուժացավ Էլիզաբեթ թագուհու օրոք XVI դ. երկրորդ կեսին, արտաքին առևտուրն արևելյան շուկաներում ընդլայնելու՝ պետական քաղաքականության պայմաններում: Լեվանտի շուկաներում պահանջարկ էին վայելում անգլիական գործվածքեղենը, հատկապես բրդե և բամբակի գործվածքեղենը¹⁰²⁵, ծաղկենկար կերպասը, մահուղը, ամերիկյան ապրանքները, լայն սպառման գործարանային արտադրանքը և այլն: XVII դ. անգլիացիներն արդեն հյուպատոսարաններ էին հաստատել Կոստանդնուպոլսում, Հալեպում և Ձմյունիայում, ինչպես նաև առևտրական կայաններ¹⁰²⁶: XVII-XVIII դ. լեվանտական շուկան անգլիացիներին հետաքրքրում էր բրդի և բամբակի հումքային գնումների տեսակետից, որի իրականացման ամենահարմար հարթակներից մեկը նրանց համար մնում էր Ձմյունիան: Ձմյունահայ վաճառականների՝ Անգլիայի հետ առևտրական հարաբերությունները պատմականորեն կարելի է բաժանել նախ XVII-XIX դդ., երբ նրանք զբաղվում էին բացառապես միջնորդ առևտրով, այնուհետև XIX դ. 40-ական թթ., երբ հայ վաճառականները առևտրական տներ բաց արեցին այդ երկրում՝ տեղում վաճառելով արևելյան հումքը և արտահանելով անգլիական գործարանային արտադրանքը: Սուեզի ջրանցքի բացումը (1869 թ.), որի շնորհիվ Միջերկրական ու Կարմիր ծովերի միացմամբ շարք մտավ Ատլանտյան ու Հնդկական օվկիանոսներ տանող ամենակարճ ուղին, բավական զգալի հարված հասցրեց Ձմյունիայի նավահանգստի, ուրեմն և առևտրի միջազգային ընդգրկումներին: Այսուհան-

¹⁰²⁴ Բիւզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի:

¹⁰²⁵ Hanvay J. An Historical Account of the British Trade. Vol. 1, p. 386.

¹⁰²⁶ Նույն տեղում: Stü ևս Inalcik H. The Ottoman Empire. The Classical Age, p. 138.

դերձ, այս նավահանգիստը շարունակեց պահպանել իր մասնավոր և անփոխարինելի դերակատարությունը փոքրասիական գյուղատնտեսական արդյունքների արտահանման (բամբակ, խաղող, այլ մրգեր, ձիթապտուղ, հացահատիկային բերքեր, ափիոն և այլն) և եվրոպական գործարանային արտադրանքը Օսմանյան Թուրքիա ներմուծելու շրջանակներում¹⁰²⁷: Այս շրջանում, XIX դ. կեսին Անգլիան շարունակում էր Թուրքիա արտահանել մահուդ (չուխա), կտավ, ապակի, թիթեղ, սարքավորումներ և այլն¹⁰²⁸:

Հայ վաճառականների մրցակցական հնարավորությունները բավական սեղմվում էին անգլիացիներին Բ. դոան քանիցս տրամադրած կապիտուլյացիաների հետևանքով: Ֆրանսիացիներից հետո նրանց այդպիսի արտոնություններ տրվեցին 1579-1580, այնուհետև 1583, 1593 թթ., որ վկայում է XVI դ. սկսած լեվանտի, մասնավորապես օսմանյան առևտրում անգլիացիների ծավալումների հետևողականության մասին¹⁰²⁹: Այս վերջինն իր հերթին ցույց էր տալիս անգլիական Լեվանտի ընկերության (հիմն. 1581 թ.) մշակած այն ընթացքը, որով վերջինս ձգտում էր կենտրոնանալ Հալեպ-Ջուղա-Հնդկաստան առևտրական ուղու վրա, որտեղ և գործառում էին նաև հայ վաճառականները: Ֆրանսիական և հոլանդական առևտրի հետ մրցակցական ոլորտում անգլիական քաղաքականությունը XVI-XVII դդ. հետամտում էր պարսկական մետաքսի արտահանումն ուղղել դեպի Հնդկական օվկիանոս՝ փորձելով այս երթուղին գայթակղիչ դարձնել նշված գործընթացում ավանդականորեն ակտիվ հայ վաճառականների համար: Հիբրավի, այս նպատակով 1665 թ. անգլիական իշխանությունները հայ վաճառականներին արտոնեցին առևտրական կայաններ ստեղծել, իսկ 1668 թ. նրանց շնորհեցին անգլիական Արևելահնդկական ընկերության հետ հավասար իրավունքներ՝ Հնդկաստանում և Պարսկաստանում¹⁰³⁰: Մի հայտնի

¹⁰²⁷ Բօսեան Յ., նշվ. աշխ., էջ 33:

¹⁰²⁸ Եւրոպա, Վիեննա, 1847, 13 հուլիսի:

¹⁰²⁹ Տես Անասյան Հ., նշվ. աշխ., էջ 46: Хейцель Ф., նշվ. աշխ., էջ 153: Ջուլայյան Մ., Ջալալիների շարժումը, էջ 121: Новичев А.Д., Турция, ч. I, с. 139-140: 1580 թ. անգլիացիներին տրված արտոնությունը նշանակում էր միջազգային իրավունքում Անգլիայի դերակատարության վավերացում. այսուհետև նրա նավերը օսմանյան նավահանգիստներ կարող էին մտնել անգլիական, և ոչ թե որևէ այլ երկրի դրոշով (տես Новичев А. Д., նշվ. աշխ., էջ 140):

¹⁰³⁰ Армяно-русские отношения первой трети XVIII века, с. X.

չափով այս միջոցառումները՝ ուղղված ռուսական և եվրոպական այլ երկրների առևտրի դեմ, փակուղի էին դառնալու հայ վաճառականների համար, որի արդյունքում նրանք կգրկվեին եվրոպական տարողունակ շուկաներից: Անգլիական վերոհիշյալ ընկերությունը փորձում էր հայերին ներգրավել անգլիական բեռնանավերի սպասարկման ոլորտ՝ փոխարենը պարտավորվելով գնել նրանց արտահանելիք մետաքսի մեկ երրորդը: Լեվանտի հայ վաճառականները, այսուհանդերձ, չհամաձայնեցին մենաշնորհային այդ առաջարկին՝ նախընտրելով մերձավորարևելյան առևտրական ուղիները, և ամենից առաջ՝ Հալեպի նավահանգիստը¹⁰³¹: Ինչ վերաբերում է այլ առնչություններին, ապա հայ վաճառականները շարունակում էին պահպանել իրենց կապերը անգլիական դրամատերերի հետ և ներմուծման, և արտահանման ոլորտներում՝ հատկապես գործուն հարաբերությունների մեջ մտնելով նրանց հետ Զմյուռնիայում:

Մոտավորապես նույն ժամանակներում՝ XIX դ. առաջին քառորդին Զմյուռնիայում էր գործում վաճառական Կ. Եղիվարդյանը, ով առևտրական գործարքներ էր կնքում նաև զմյուռնաբնակ անգլիացի Վիթթլի հետ՝ տեղում ակտիվորեն մասակցելով ներմուծման ու արտահանման գործարքներին: Անգլիացուն նա վաճառել է Զմյուռնիայի կտավի գործարանի արդյունքները՝ ինչպես նաև տեղական այլ ապրանքներ՝ չորացրած միրգ, մետաքս, խոզկաղին և այլն¹⁰³²: XIX դ. առաջին կեսին անգլիական շուկաների հետ պետք է որ կապված լինեին Թիֆլիսից XVIII դ. սկզբներին Զմյուռնիա գաղթած Պապոյանները՝ այստեղ անգլիական հյուպատոսարանի ավանդական դրագոմանները¹⁰³³:

1840-1850-ական թթ. զմյուռնահայ վաճառականներն անգլիական առևտրի և շուկայի հետ կապվեցին որակական նոր հարաբերություններով՝ առևտրական տներ հիմնելով Մանչեստրում: Այս քաղաքում 1840-ական թթ. սկզբներին առաջին վաճառատունը հաստատել են Գա-

¹⁰³¹ Քիւրտեան Հ., նշվ. աշխ., էջ 37:

¹⁰³² ՄՄ, ձեռ. 10272, էջ 6/ա և հետո:

¹⁰³³ Պապոյան տոհմի ավագի դամբանագիրը մեջբերել է Ա. Այվազյանը՝ <<Այս է տապան թիֆլիզցի Կուլիկեանց Դաւթի որդի Պապօի որ հանգեաւ թվին ՌՃԿԵ (1716) յունուար 6>> (Այվազեան Ա., Հոնիական հայ գաղութի նահապետներն, 22 օգոստոսի/14 սեպտեմբերի): Այս տոհմի վերջին դրագոմաններից էր Գ. Պապոյանը, ով այդ պաշտոնում փոխարինել էր ականավոր Պողոս Յուսուֆյանին, երբ վերջինս մեկնել էր Եգիպտոս (նույն տեղում):

փամաճյանները, ինչպես գրում է <<Արշալոյս Արարատեան>> լրագիրը¹⁰³⁴: Դրանից շուրջ չորս տասնամյակ անց Մանչեստրում էին գործում զմյուռնացի մեծահարուստ վաճառականներ և բարեգործներ Հակոբ և Հովհաննես Սպարթալյանները, որոնց գործունեության շնորհիվ, ինչպես նկատում է վերոհիշյալ լրագիրը, <<Անգղիոյ գործարաններու արտադրութիւնք գունդագունդ կընթանան Զմիւռնիա>>¹⁰³⁵:

Առավել ընդլայնված չափերով զմյուռնահայ վաճառականներն իրենց գործունեությունն Անգլիայում շարունակեցին XIX դ. երկրորդ կեսին և հետագայում՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտը:

Դեռևս քիչ են ուսումնասիրված զմյուռնահայ վաճառականների հարաբերությունները Ռուսաստանի հետ: Զմյուռնիայի վրայով վաճառականները Ռուսաստան էին մտնում հարավից և արևմուտքից՝ առաջին դեպքում կասպիական-վոլգյան ուղիով, որով մետաքսը պարսկական Գիլանից տեղափոխվում էր Աստրախան և ռուսական այլ տարածքներ: Մյուս՝ եվրոպական ուղերթը ձգվում էր Հոլանդիայով և Հյուսիսային ծովային ուղիով մտնելով Արխանգելսկ: Վերջինս կապվում էր ոչ միայն մետաքսի, այլև բազմատեսակ այլ ապրանքների, հատկապես եվրոպական արտադրանքի իրացման հետ: XVII դ. խոջա Սաֆրազը Սպահանից քարավանով հասել էր Թավրիզ, ապա Էրզրումի և Թոքատի վրայով՝ Զմյուռնիա, այնուհետև Ամստերդամ (կարելի է կարծել, տարանցիկ հանգրվանով՝ Մարսելով)՝ այնտեղից ապրանք առնելու և Մոսկվա տանելու համար¹⁰³⁶: Ասենք նաև, որ պարսկական մետաքսը առևտրի հիմնական, բայց և ոչ միակ առարկան էր, և որ հայ վաճառականները հյուսիսային ուղի էին հասցնում եվրոպական ամենատարբեր ապրանքներ՝ մորթի, սուրճ, յուղեր, գինի, բրինձ, պերճանքի առարկաներ և այլն:

¹⁰³⁴ Արշալոյս Արարատեան, 1843, թիւ 169:

¹⁰³⁵ Նույն տեղում, 1880, թիւ 1152: Այս լրագիրը նկատում էր զմյուռնահայ վաճառականության կողմից միջնորդ վաղեմի առևտրի շրջանակները հաղթահարելու և եվրոպական արտադրությանը անմիջականորեն կապվելու նոր գործառույթը հայ դրամատերերի կողմից. <<Եթե ատեն մը ներածութիւնը բոլորովին յոյն եւ լատին վաճառականներու ձեռք կը կատարուէր, գրեթէ 1860-էն ի վեր (ոչ, 1840-ականից-Ա. Խ.) հայերը Մանչեսթրի հետ ուղղակի յարաբերութեան մտնելով՝ մեծ մասամբ յուրացուցին առևտրի այս ճիւղը, մինչ երկրին արտաբերութեան մէջ ալ ոչ նուազ դեր մը կը կատարեն>> (նույն տեղում, 1884, թիւ 1318):

¹⁰³⁶ Լեօ, Հայկական տպագրութիւն, հ. 1, էջ 83:

Հոլանդական կառավարությունն ամեն կերպ խրախուսում էր հյուսիսային ծովային ուղիով վաճառականների ելքն ու մուտքը դեպի Ռուսաստան և հակառակ ընթացքով՝ ելնելով անգլիացիների հետ մրցակցությունից և սիրաշահելով հայերին՝ հատկապես XVII դարում: Իսկապես, հոլանդացիները շահագրգռված էին Արխանգելսկի վրայով հայ վաճառականների արտահանած մետաքսի և այլ ապրանքների առևտրով, որովհետև նրանք ապահովում էին ոչ միայն իրենց գործվածքեղենի արտադրության հումքային պահանջները, այլև ռուսական ապրանքների ներմուծումը Հոլանդիա՝ երկու դեպքում էլ ձգտելով դյուրացնել ներմուծման և արտահանման ազատ տեղաշարժերը: 1676 թ. փետրվարին հոլանդական դեսպան Կոնդրատի ֆոն Կլենկը ցար Ֆեոդոր Ալեքսեևիչին առաջարկում էր հայերին թույլ տալ Ռուսաստանի միջով արտահանել մետաքս, այլև մատչելի մաքսերով այլ ապրանքներ՝ ազատ առևտրի սկզբունքով¹⁰³⁷: Դեսպանն առաջարկում էր Աստրախանի, Մոսկվայի և Արխանգելսկի շուկաներում հայերի՝ իրենց ապրանքները չվաճառելու դեպքում թույլ տալ նրանց անցնել Հոլանդիա՝ սահմանելով չափավոր մաքսեր¹⁰³⁸: Հոլանդական շուկայում բարձր էին գնահատվում նաև արևելյան գործվածքները և ակնեղենը: Այս երթուղին, սակայն, չէր սահմանափակվում Հոլանդիայով. վաճառականներն այստեղից կարող էին անցնել Սկանդինավյան թերակղզի և այլուր, այստեղից Ռուսաստան բերելով նաև հոլանդական ապրանքներ՝ կերպաս, գործվածքեղեն, մորթեղեն, պերճանքի առարկաներ¹⁰³⁹: Իրենց այս գործառնություններով հայ վաճառականները զգալիորեն նպաստում էին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի առևտրական կապերի ամրապնդմանը, որ պետք է շարունակվեր նաև XVIII դ. առաջին կեսին: Դրանից առաջ, նախորդ հարյուրամյակում ևս այս առևտուրն ըստ ամենայնի արժանանում էր ռուսական կառավարության խրախուսանքին. 1667 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարը, ինչպես նկատում է Հ. Քյուրտյանը, հայ վաճառականների համար մի ուղեկցող նավ է հատկացնում՝ ծովահեններից նրանց պաշտպանելու համար¹⁰⁴⁰: Իրողությունն ինքնին վկայում էր ոչ միայն ռուսական կառավարողների կողմից եվրոպական առևտրի նշանակությունը կարևորելու, այլև այդ առևտրի պատկառելի ծավալների մա-

¹⁰³⁷ Армяно-русские отношения в XVII веке. с. 129-130.

¹⁰³⁸ Նույն տեղում, էջ 120:

¹⁰³⁹ Նույն տեղում, էջ 171:

¹⁰⁴⁰ Քյուրտեան Հ., նշվ. աշխ., էջ 32:

սին: Նույն հեղինակը առանձնացնում է այս հանգամանքը՝ նշելով, որ <<ռուսական սահմաններով կատարուած հայ առևտուր այնքան խոշոր էր, որ մութին մէջ կը թողուր Թուրքիոյ կատարուած հայ առևտուրին ամբողջութիւնը՝ մանաւանդ ԺԷ դարուն սահմաններով>>¹⁰⁴¹:

Եվրոպայի հետ առևտրի ռուսական քաղաքականության հաջողությունները պետք է անհանգստացնէին պարսկական մետաքսի և այլ ապրանքների արտահանման ասպարեզում իրենց շահերին հետամուտ անգլիական առևտրականներին, որոնք ձգտում էին ամրապնդել Հնդկական օվկիանոսով անցնող առևտրական երթուղին: Հնդկաստան տանող առևտրական մագիստրալներում նրանք հատուկ նշանակություն տվեցին Ռուսաստանի և Հոլանդիայի շուկաներին իրազեկ հայ վաճառականներին իրենց կողմը թեքելու ուղեգծին: Հնդկաստանում հայերին տրված առևտրական կայաններ հիմնելու իրավունքը հետամտում էր թուլացնել կամ վերահսկել գլխավորապես հայերի ձեռքով կատարվող կասպյան-վոլգյան Ռուսաստանի տարածքով մինչև Եվրոպա տանող երթուղին: Այս համատեքստում պետք է գնահատել նաև 1688 թ. Հնդկաստանում հայ վաճառականներին անգլիացիների հետ հավասար առևտրական արտոնությունների տրամադրումը¹⁰⁴²: XVII-XVIII դդ. մի կողմից Անգլիայի և Հոլանդիայի, և մյուս կողմից՝ այս վերջինների և Ռուսաստանի միջև ընթացող առևտրական մրցակցության մեջ ընդգրկվեցին նաև զմյուռնահայ վաճառականները: Հատկապես XVIII դ. առաջին քառորդին, երբ այս մրցակցությունը ստացավ առավել քան սուր եզրեր՝ դառնալով տերությունների արտաքին քաղաքականության ակտիվ բնագավառներից մեկը: Ա. Հովհաննիսյանը նկատում է, որ Ռուսաստանն իր հերթին, շահագրգռված էր խոչընդոտելու Զմյուռնիայի և Հալեայի վրայով առևտուրը՝ դրան հակադրելով և շատ ավելի բանուկ դարձնելով կասպյան-վոլգյան երթուղին և փորձելով այստեղ ընդգրկել հայ վաճառականներին¹⁰⁴³:

Հայ-ռուսական առևտրական հարաբերությունները շատ ավելի խոստումնալից դարձան Պետրոս Մեծի քաղաքականության արդյունքում, երբ Ռուսաստանը սկսեց Հյուսիսային ծովային ճանապարհն առավել բանուկ դարձնելու, ուրեմն և անգլո-ֆրանսիական առևտրի հետ

¹⁰⁴¹ Նույն տեղում, էջ 31-32:

¹⁰⁴² Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, с. X.

¹⁰⁴³ Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, էջ 580:

մրցակցության պայմաններում սիրաշահել հայ վաճառականներին: Կարելի է այս վերաբերմունքի ուղղակի դրսևորումներ համարել 1711 թ. վաճառական Մերկուլ Աղազարովին տրված իրավունքը՝ Հոլանդիայից տեղափոխվելու Մոսկվա և հորդորները՝ նպաստելու ռուսական առևտրին: Այս վաճառականի ապրանքացանկը փաստորեն նույնն էր, ինչ Ռուսաստան մտնող ջուղայեցի վաճառականներինը՝ մետաքս, թանկարժեք քարեր, ալմաստ, մարգարիտ, իսկ Եվրոպայից՝ հոլանդական և անգլիական գործվածքներ, կարմիր մահուդ, ծխախոտ, համեմունքներ, հայելի և այլն¹⁰⁴⁴: 1715 թ. Պարսկաստանում ռուսական դեսպան Ա. Վոլինսկուն տված հրահանգներով ցարը ցանկալի էր համարում դիվանագիտական խոչընդոտներ հարուցելը Զմյուռնիայի և Հալեպի առևտրական ուղիների դեմ¹⁰⁴⁵: Վերոհիշյալ վերաբերմունքի ուշագրավ մեկ այլ դրսևորում էին այն առևտրական արտոնությունները, որ տվել էր Պետրոս Մեծը զմյուռնահայ վաճառական Ապրոյան եղբայրներին: Նրանք ռուսական տարածքներ էին հասցնելու Պարսկաստանից բերած մետաքսը և այլ ապրանքները՝ Աստրախանով, ապա անցնելու էին Յարոսլավլ, Մոսկվա և Սանկտ Պետերբուրգ¹⁰⁴⁶: Զմյուռնահայ վաճառականներին ռուսական միապետն ապահովում էր դրանից առաջ՝ 1710 թ. տված իրավունքներով¹⁰⁴⁷: Վերոհիշյալ արտոնագիրը ցարը շնորհել է <<Պիտեր Աբրոյին>> և նրա եղբայրներ Աբրահամին ու Ստեփանին, որոնց հետ ծանոթացել էր Հոլանդիայում: Փաստաթղթում ասվում է, որ Ապրոյանները բնակվում են Զմյուռնիայում և մեծ առևտուր ունեն Պարսկաստանում, Հնդկաստանում, Թուրքիայում ու եվրոպական երկրներում և որ նրանց առևտրացանկը մեծ մասամբ մետաքսն է և այլ պարսկական ու արևելյան ապրանքներ: Եղբայրները, ի դեպ, իրենց հուշագրում հայտնել էին, որ ցանկանում են առևտուր անել Պարսկաստան-Ռուսաստան (ավելի որոշակի՝ Գիլան-Աստրախան-Յարոսլավլ-Արխանգելսկ-Մոսկվա-Պետերբուրգ) երթուղով¹⁰⁴⁸:

¹⁰⁴⁴ Армяно-русские отношения, т. II, ч. I, с. XII, 109.

¹⁰⁴⁵ Նույն տեղում, էջ 93:

¹⁰⁴⁶ Նույն տեղում, էջ 105: Կար ևս մեկ այլ երթուղային տարբերակ՝ Աստրախան-Մարատով և Վոլգայով վեր, ապա ցամաքով մինչև Մոսկվա (նույն տեղում, էջ 155):

¹⁰⁴⁷ Նույն տեղում, էջ 106: Տես նաև Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 581:

¹⁰⁴⁸ Նույն տեղում, էջ 105-107:

Հայ վաճառականների մի զգալի մասը, այսուհանդերձ, շարունակում էր կապված մնալ Զմյուռնիա-Միջերկրածովյան նավահանգիստներին և Հալեպի երթուղուն, այսպիսով, շրջահայաց կեցվածք ընդունելով Եվրոպա-Ռուսաստան առևտրական հակասությունների մեջ՝ գործելով, սակայն, առանց միասնական ուղղության կամ կազմակերպվածության: Ռուսական առևտրին հակառակ, նրանք չէին կարող հրաժարվել առևտրական հին ավանդական ուղիներից, որոնց լավատեղյակ էին և կապված գործնական առնչություններով՝ դարեր ի վեր: Ավելին, անգլիացիներն ավելի գործուն դարձան՝ ընդլայնելով պարսկական մետաքսի իրենց մեծաքանակ գնումները հենց Զմյուռնիայում՝ այսպիսով, մի կողմից մրցակցելով հոլանդացիների հետ՝ նույնպիսի շահավետ առևտրական մեթոդի կիրառմամբ, և մյուս կողմից քաջալերելով հայ վաճառականների եկամտաբեր գործունեությունը: Հ. Քյուրտյանը այս առթիվ նկատում է, որ 1718 թ. հետո Զմյուռնիա բերված մետաքսի <<մեծագոյն յաճախորդները>> եղել են անգլիացիները, որոնք գործում էին Թուրքիայում իրենց ընկերության միջոցով¹⁰⁴⁹, առևտրական կանոնարկված քաղաքականությամբ և դրան համապատասխան ձկուն մեթոդներով: Դրան չէին կարող համարժեք դիմակայություն ցուցաբերել ո՛չ հայ վաճառականները՝ իրենց սակավաթիվ ընկերություններով, ըստ մեծի մասին՝ տարանջատ գործելակերպով ու անհատական շահերով, և ո՛չ էլ Ռուսաստանը՝ իր փոփոխական առևտրական ռազմավարությամբ, որ հենց Պետրոս Մեծի ժամանակ կարող էր կտրուկ բեկումների ենթարկվել՝ փոխարինվելով հիմնահարցի լուծման ռազմական նախասիրություններով, հատկապես Պարսկաստանի հետ քաղաքական հարաբերությունների ոլորտում: Համենայն դեպս, 1719 թ. հունիսի 6-ի որոշումով ցարն անվավեր համարեց հայ առևտրական ընկերությունների հետ մոսկովյան կառավարության հետ կնքած պայմանագրերը՝ այդ ընկերությունների հետ ունեցած հարաբերությունները հավասարեցնելով օտարերկրացիներին տրված իրավունքներին: Որոշման մեջ նշվում էր, որ հայերի հետ կնքված նախկին պայմանագրով վերջիններս պարտա-

¹⁰⁴⁹ Քիւրտեան Հ., նշվ. աշխ., էջ 39: Այս հեղինակն իրավացիորեն քննադատում է Լեոյին, ով հայ վաճառականներին մեղադրում է իբրև Ռուսաստանի հետ ունեցած պայմանագիրը խախտող կողմի: Ռուս-անգլիական տնտեսական հակասություններում իրենց սեփական շահերին հետամուտ և տարուբերվող հայ վաճառականներին նույն կերպ, բայց և ակնհայտորեն հօգուտ անգլիական առևտրի, մեղադրում էր անգլիացի մի հեղինակ (տես նույն տեղում, էջ 41-42):

վորվել էին պարսկական մետաքսը տեղափոխել միայն Ռուսաստան և առևտուր չանել օտարերկրացիների հետ, որի դիմաց նրանց տրվել էին արտոնություններ (ցածր մաքս, ուղեկցորդներ և այլն): Հայ վաճառականները, մինչդեռ, մի կողմ են թողնում Ռուսաստանը և մետաքսը տեղափոխում են այլ երկրներ՝ դրանով իսկ խախտելով իրենց ստանձնած պարտավորությունները¹⁰⁵⁰: Ինչպես նկատում է Ա. Հովհաննիսյանը, հայերին փաղաքշելու և նրանց Ռուսաստանի հետ առևտրական համագործակցության մղելու քաղաքականությունը պետք է փոխարինվեր դեպի Պարսկաստան արշավանքով և վերջինիս մերձկասպյան նահանգների՝ պարսկական մետաքսի հայրենիքի գրավումով¹⁰⁵¹: Այս պայմաններում հայ վաճառականներին, այդ թվում և Ապրոյաններին տրված արտոնությունները կորցնում էին իրենց իմաստը. առևտրականից առավել գնահատվելու էր ռազմական ուղին:

Իր հերթին, օսմանյան կառավարությունը քայլեր ձեռնարկեց հոգուտ թուրքական առևտրական երթուղիների՝ մետաքսի տեղափոխումը միայն Թուրքիայի տարածքներով իրականացնելու և Ռուսաստանը շրջանցելու համար: 1717 թ. Բ. դուռն այս ոգով ճնշում էր գործադրել պարսկական կառավարության վրա՝ վաճառականությանը հարկադրելու, որ առևտուրը <<շրջի թուրքական պետության միջով>>, իսկ 1721 թ. դրան ավելացրել էր նոր պահանջներ՝ արգելելու նաև եվրոպական վաճառականների մուտքը Պարսից ծոց¹⁰⁵², որով և ապահովվելու էր թուրքական առևտրական ուղիների մենաշնորհի դիրքը պարսկական մետաքսի տեղափոխման ոլորտում:

Գիլանը գրավելու և մետաքսի հումքավայրին տիրելու մտադրության հետ միասին Պետրոս Մեծը շարունակում էր առևտուրը կասալիականի կողմ ներգրավելու իր ուղեգիծը: 1721 թ. Կոստանդնուպոլսում ռուսական ներկայացուցիչ Ն. Նեպյունին տրված հրահանգում նրա խնդիրներից մեկն էր համարվում համոզել Զմյուռնիայի, Հալեպի, Ալեքսանդրիայի և Դանուբյան շրջանների մայրուղիներին լավատեղյակ վաճառականներին՝ Ռուսաստանի միջով մետաքսը Եվրոպա տեղափոխելու օգտակարության մեջ, նրանց հրապուրելով դրան նպաստող պայ-

¹⁰⁵⁰ Армяно-русские отношения, т. II, ч. I, с. 169-170.

¹⁰⁵¹ Նույն տեղում, էջ XIII:

¹⁰⁵² Նույն տեղում:

մաններով, որպիսիք էին <<ճանապարհների անվտանգությունը, տեղափոխման փոքր արժեքը և ցածր մաքսը>>¹⁰⁵³:

Ռուսական կառավարությունը դիվանագիտական քայլեր էր ձեռնարկում այս հարցում նաև եվրոպական տերությունների չեզոքությունն ապահովելու կամ կտրուկ հակադեցությունը մեղմացնելու ուղղությամբ. 1723 թ. հոկտեմբերի 24-ի ռեսկրիպտով կանցլեր Գ. Գոլովկինը նույն Ն. Նեպլյունին հրահանգում էր հավատացնել Կոստանդնուպոլսում ֆրանսիական դեսպան դը Բոնակին, որ Գիլանի գրավումով ռուսները մտադիր չեն լինի խոչընդոտել Գիլանից Զմյոռնիա, ինչպես և Հալեպ տանող մետաքսի առևտրին¹⁰⁵⁴, փաստորեն, այս ուղիներով դեպի Եվրոպա տանող առևտրին: Այդ նշանակում էր նաև, որ ռուսական կառավարությունը պետք է վերստին մտահոգվեր կասպիական ուղիների աշխուժությունն ապահովող իրավական գործոնները օրակարգ մտցնելու հարցով: Հիրավի, 1723 թ. հուլիսի 5-ի և 1725 թ. հուլիսի 8-ի որոշմամբ Ռուսաստանում վերականգնվում էին հայ վաճառականների իրավունքները այդ երկրի առևտրական ուղիներում¹⁰⁵⁵:

Ռուս-պարսկական ռազմական առճակատումները և Պետրոս Մեծի կասպիական արշավանքը (1722-1723), սակայն, անշուշտ դարձրին Վոլգայով դեպի վեր տանող ուղու կենսունակությունը, իսկ Աննա Իվանովնա կայսրուհու արած զիջումները Պարսկաստանին (1730-ական թթ. առաջին կես), որի արդյունքում վերջինիս վերադարձվեցին մերձկասպյան շրջանները, այդ թվում և Գիլանը, փաստորեն անգործունակության դատապարտեցին հայերին տրված առևտրական արտոնությունները: 1735 թ. նոյեմբերի 3-ին պարսկահայ և հնդկահայ վաճառականներն իրենց մի խնդրագրում նշում էին, որ 1722-1723 թթ. արդեն վերացվել էին ազատ տեղաշարժի իրենց արտոնությունները ռուսական սահմաններում՝ սկսած Աստրախանի նահանգական գրասենյակի անհաղթահարելի պահանջներից և հավելյալ մաքսային վճարումներից: Այս պատճառով, ասվում է խնդրագրում, ոչ մեծ կարողության տեր (маломочные) շատ վաճառականներ, որոնք տարեկան երկու-երեք ան-

¹⁰⁵³ Նույն տեղում, էջ 172-173:

¹⁰⁵⁴ Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 149-150.

¹⁰⁵⁵ Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. I, с. XIII.

գամ երթնեկում էին առևտրական այդ ուղիով, Գիլանում նյութական կորուստներ էին կրում և սնանկանում¹⁰⁵⁶:

Առևտրական այս ուղու արժեզրկմանը չկարողացան խոչընդոտել ռուսական իշխանությունների փորձերը՝ վերականգնելու երբեմնի աշխույժ երթնեկը. մետաքսի առևտուրն այլևս չէր խրախուսվում ոչ ռուսական, և ոչ էլ պարսկական կողմում: Վրա հասած պարսկական գահակալական ընդհարումները Պարսկաստանում 1730-1740-ական թթ. իրենց վերջնական հարվածը հասցրեցին մետաքսի վաղնջական առևտրին՝ Զմյուռնիան և Հալեպը զրկելով իրենց տնտեսական հմայքի մի կարևոր բաղադրիչից: Ռուսական՝ կասպիական-վոլգյան մայրուղու անշքացումը անխուսափելիորեն բացասաբար էր անդրադառնալու բուն Աստրախանում հաստատված և այդ ոլորտում ընդգրկված հայ առևտրականների հետագա գործունեության վրա: Տ. Սավալանյանի տեղեկությունը՝ այդ նավահանգստում բնակվող իր նախնիների Զմյուռնիա տեղափոխվելու վերաբերյալ (1770-ական թթ.), այդ իրողության հետևանքներից էր:

Հայտնի չէ, թե Ապրոյանները արդյոք օգտվել են ռուսական առևտրական ուղիներից և եթե այո, ապա ինչ ծավալներով և որքան ժամանակ: Խնդիրն այն է, սակայն, որ օսմանյան կառավարությունը հազիվ թե անտարբեր լիներ նրանց և առհասարակ, ռուսական շուկաներում օսմանաբնակ վաճառականների գործառության նկատմամբ, որ կարող էր հալածանքների հասնել հատկապես ռուս-թուրքական պատերազմների ժամանակ¹⁰⁵⁷: Մետաքսի ավանդական առևտրի վրա աղե-

¹⁰⁵⁶ Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сб. документов, т. III, с. 72.

¹⁰⁵⁷ Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Բ, էջ 19-20: Ուշագրավ են Վ. Զարդարյանի հրապարակած տեղեկությունները օսմանյան իշխանությունների կողմից ամասիացի հայ վաճառական Կարապետ Մանուկ Օղլուի հալածվելու մասին: Այս վաճառականը (գործել է XVIII դ. վերջին քառորդին և XIX դ. առաջին տասնամյակներին) աշխույժ առևտուր էր անում Ռուսաստանում՝ Ղրիմում և Օդեսայում: Այս գործը նա շարունակել էր 1807-1808 թթ.՝ ընթացող ռուս-թուրքական պատերազմի պայմաններում և որի համար դատապարտվելով մահվան մի կերպ ազատվել էր 200 տոպրակ դրամ կաշառք տալով: 1812 թ. Մոսկվայի հայտնի հրդեհը մոխրացրեց Կարապետի 200.000 ռուբլի արժողության ապրանքները, որ վկայում է ռուսական շուկաներում նրա առևտրի պատկառելի չափերի մասին: Կարապետի արկածահույզ կյանքի պատմությունը գրի է առել

տալի ազդեցությունն թողեցին նաև պարսկա-թուրքական հակամարտ հարաբերությունները: Նույն 1730-ական թթ. Նադիր շահը պետք է արգելել մետաքսի արտահանումը Թուրքիա, և սուլթան Մահմուդ Ա-ն իր հերթին դիմելու էր դրան հակազդող քայլերի:

Ակներև է, որ պարսկական խափանարար գործողություններին սուլթանը պատասխանում էր անմաքս առևտրական քաղաքականությամբ, որն ի գործու չէր, սակայն, վերականգնելու պարսկական հումքի արտահանումը օսմանյան տարածքներ՝ դեպի Կոստանդնուպոլիս, Ջոյունիա և Հալեպ: Այս հակամարտությունը հասցրեց նրան, որ 1740-1790-ական թթ. աստիճանաբար մարեց դեռևս գործող Սպահան-Թավրիզ-Թոքատ-Ջոյունիա երթուղին¹⁰⁵⁸: Ջոյունահայ վաճառականների մի մասը հրեա և հույն վաճառականների հետ միասին, կենտրոնացավ Այդընի, Ալաշեհիրի, Մանիսայի և առհասարակ Էգեյանի առափնյա շրջաններում՝ բավարարելով նաև տեղական սպառողի պահանջարկը: Օսմանյան և հպատակ ազգերի վերնախավերը հիմնականում սպառում էին եվրոպական գործվածքներ և կտավ, մինչդեռ ստորին խավերի մեջ լայն պահանջարկ ունեին ցածրորակ և էժան տեղական բամբակե և բրդե գործվածքները: Ջոյունաբնակ վաճառական էքիզյանները, ներգրավված լինելով եվրոպական կտավի ներմուծման գործում, հաշվի էին առել այս հանգամանքը՝ տեղական արդյունքներն իրացնելիս¹⁰⁵⁹:

Հիրավի, այս ժամանակաշրջանում առևտրական հայեր էին հաստատվել Դենիզլիում, Մանիսայում, Քասաբայում, Քրքաղաչում և այլուր, որոնք զբաղվում էին քաղաքներում և այլ բնակավայրերին կից ավաններում մշակվող գյուղատնտեսական արդյունքների (խաղող, ցորեն բամբակ, բանջարանոցային կուլտուրաներ) վաճառքով: Նկատենք, որ Ջոյունիային կից գավառական քաղաքների առևտրական հրապարակը գրեթե ամբողջովին ենթարկված էր Ջոյունիայի շուկային, այնպես որ նշված վայրերում առևտրի ինքնուրույնության մասին կարելի է խոսել զուտ պայմանականորեն: Իրոք, Ջոյունիայի առևտրական հրապարակն ընդգրկում էր նաև շրջակա գյուղատնտեսական շրջանների արդյունքների վաճառքը, այս թվում նաև բուրդ, գինի, չոր մրգեր և այլն, որոնց մի մասը վաճառվում էր օտարերկրացիներին: Այս իմաստով Ջոյուն-

Ֆրանսիացի հեղինակ Ժ. Դյուպլանը իր *Via de Karabet Manouc-oglu* (Paris, 1828) գրքում (տես Ջարդաբեան Վ., նույն տեղում):

¹⁰⁵⁸ Քիւրտեան Հ., նշվ. աշխ., էջ 66:

¹⁰⁵⁹ Արշալոյս, 1908, 1 մայիսի:

նիային կից գյուղատնտեսական տարածքները ևս մի որոշ չափով ընդգրկված էին արտաքին առևտրի մեջ, իսկ XIX դ. առաջին կեսին՝ առավել մեծ չափերով, որին գործուն մասնակցություն ունեին հայ առևտրականները: Բուն ներքին շուկայում զմյուռնացի մեծահարուստ վաճառականները իրենց դրամագլուխը առևտրական շրջանառության մեջ էին դնում ստորակարգ վաճառականների, սրանք էլ, իրենց հերթին, ավելի մանրերի՝ շրջիկ չարչիների կամ փերեզակների միջոցով: Վերջիններս շրջում էին փոքրասիական մերձակա գավառներում և բնակավայրերում՝ իրացնելով Ջմյուռնիայում և այլ քաղաքներում գնած տեղական ու եվրոպական արտադրության ապրանքները: Պայմանագրով՝ որոշակի չափով փոխառություն վերցրած կողմը <<շահեցուցանե՛լ գայն իւրով վաստակօք եւ ի տուրևառութենէ անտի արտադրեալ շահն լիցի երկու բաժին, մին՝ դրամատու վաճառականին, եւ միւսն՝ շահեցուցանօղին գայն: Երբեմն եւս երեք մասն բաժանին՝ զշահն՝ զերկուսն տալով դրամատու վաճառականին եւ զմիւս՝ շահեցուցանօղ փերեզակին¹⁰⁶⁰>>, գրում է Հ. Տեր-Շովնանյանը:

Հ. Քյուրտյանը <<վտանգաւոր եւ բազմաձախս>>¹⁰⁶¹ է համարում հում մետաքսի Թավրիզ-Ջմյուռնիա-Կոստանդնուպոլիս ուղերթը՝ ավագակներով, ընչաքաղց պաշտոնյաներով ու անակնկալներով լեցուն մի ճանապարհ, որով սովորաբար վաճառականները երթնեկում էին զինված պահապանների ուղեկցությամբ: Ստորակարգ առևտրականները գուրկ էին այդ ապահովությունից: Գր. Դարանաղցին թանձր գույներով է պատկերում և՛ վաճառականների, և՛ ստորակարգ առևտրականների ու հատկապես փերեզակների շահամուլությունը, և վտանգներով ծանրամած առևտրական այդ ուղիները, որտեղ այդ առևտրականներին դարանակալ սպառնում էին կողոպուտն ու դրան ուղեկցող մահը. <<Եւ այսոնք,-գրում է նա՝ նկատի ունենալով Նիկիայի կողմերը,-որ այսպէս չարաչար զմահն յանձ առեալ՝ կորստեան կու մատնեն զանձինս եւ զինչս իւրեանց, ոչ թէ վասն կարի առաւել չքաւոր աղքատութեան առնեն գայս կարիք հոգոյ եւ մարմնոյ կորստեան դուրս վաստակոյ, այլ վասն մեծա-

¹⁰⁶⁰ Տեր-Յովնանեանց Յ., Պատմութիւն Նոր Զուղայու, հ. 1, էջ 160-161: Խոշոր գումարների դիմաց դրամատերը վաշխ էր վերցնում 12, իսկ ոչ մեծ գումարների դեպքում՝ 6%-ի չափով (նույն տեղում, էջ 169):

¹⁰⁶¹ Քիւրտեան Հ., նշվ. աշխ., էջ 8:

նալոյ սակին որ նոցա չար մեծատունքն այս կերպիւ մեծացեր են գան-
ձիւք>>¹⁰⁶²:

Գր. Դարանաղցին՝ հավատարիմ իր կրօնաբարոյական հայեցոյթա-
նը, այս ամենը վերագրում է Աստծո ճշմարտութիւնից հեռանալու կոր-
ծանարար ընթացքին, առևտրի մարդկանց եղծված նկարագրին և վար-
քագծին: Բուն իսկ իրականութեան մեջ այդ ընդամենը խոշոր առևտրա-
կան կապիտալի՝ սպառողի հետ հարաբերվելու առօրեական դրսևո-
րումներից մեկն էր օսմանյան փոքրասիական տարածքներում: Հենց
նույն Զմյոռնիայի շուկայում մանր ու միջակ (և ոչ միայն) կարողութեան
տեր առևտրականներին իրենց իսկ միջավայրում հաճախ ուղեկցում
էին յուրահատուկ դարանակալ աղետները՝ խարդախութիւնը, կեղծ
սնանկութիւնը և այլն¹⁰⁶³:

Էգեյանի առափնյա տարածքների և ընդհանրապէս փոքրասիական
գյուղատնտեսական շրջանների գյուղատնտեսական արտադրանքն էր
հատկապէս բամբակը, որ առաջնակարգ նշանակություն պետք է ստա-
նար զմյոռնահայ վաճառականների գործառնություններում՝ XVIII դ.
երկրորդ կեսից, պարսկական մետաքսի առևտրի անկումից հետո: Ընդ-
լայնվեց բամբակի առևտուրը և բամբակի մշակութեան Էգեյանի բնակա-
վայրերը՝ Մանիսա, Բերգամա, Այդըն, Թիրե, Մենեմեն, Դենիզլի և այլն,
դարձան բամբակի արտահանութեան կենտրոններ: Ի դեպ, ամերիկյան
ուշացած ներկայութիւնը Զմյոռնիայում այդպիսի իրողութիւնը
ձգտում էր փոխհատուցել բամբակի արտահանմամբ՝ օսմանյան համա-
պատասխան արտադրութեան դեմ բավական հաջող մրցակցութե-
յամբ¹⁰⁶⁴: 1811թ. ամերիկացիները Զմյոռնիայում հիմնեցին իրենց

¹⁰⁶² Ժամանակագրութիւն Գրիգոր վարդ. Կամախեցոյ, էջ 464-465:

¹⁰⁶³ Զաքարիա Ագուլեցին հիշում է այդպիսի <<մֆլիս սնողուն հանած>> (կեղծ
սնանկացած) երկու վաճառականների՝ Շահվերդիի և Գասպարի արարքը
Զմյոռնիայում, 1667 թ.: Իրենց սնանկ հայտարարելուց հետո <<մնաց բազրկանի
(դրամատու վաճառականի-Ա. Խ.) սոցա վերայ պարտք՝ էՃՌ (700.000) մարչի,
որ փողն՝ ոմն շախով, ոմն ապրիշում կամ չուխա կամ ուրիշ այլ ապրանք ին
տուած: Այս չՇահվերդիս, չԳասպարս այսպէս էրեսներն սեւացուցին: Մարդ
ընգաւ մէջ, որ բերին, կիսու կտրեցին. գիր տուին, թէ չուրի (մինչև-Ա.Խ.) ԺԸ (18)
ամիս կէտու կտրածն տանք>> (Զաքարիա Ագուլեցու Օրագրութիւնը, էջ 72):

¹⁰⁶⁴ Էգեյանի շրջանում գործառող հայ վաճառականներից հատկապէս բամբակի
և չոր մրգերի արտահանման աշխուժացման դարաշրջանում՝ XVIII դ. վերջերին
և XIX դ. սկզբներին, պահանջվում էր հումքի առավել լայն ճանաչողութիւն՝
մրցակցական պայքարին դիմակայելու համար: Հայ վաճառականների համար

առևտրական ֆիրման, իսկ 13 տարի անց՝ հյուպատոսարանը: Ամերիկյան արտահանումների ծավալները և ակտիվ առևտրական քաղաքականությունը ամրագրվեցին 1830 թ. կնքված թուրք-ամերիկյան կապիտուլյացիոն պայմանագրով, որի համեմատ ամերիկացիները ստանում էին արտոնություններ¹⁰⁶⁵:

1840-ական թթ. Էգեյանի շրջակայքի բամբակի արտադրությունը դրան հակադրեց Քրքադաչի ու Քասաբայի բարձրորակ բամբակը՝ Դենիզլիի, Սոպուճայի և այլ վայրերի նույն կուլտուրայի հետ միասին: Այսուհանդերձ, տեղական տնայնագործական արտադրությունը, կրելով գյուղատնտեսական ոլորտի ընդհանուր աշխուժացման դրական հետևանքները, զուրկ էր մնում պետական քաջալերությունից և ընդհակառակն, ընդլայնվում էին եվրոպական վաճառականությանը տրվող արտոնությունները:

Զմյուռնիայի առևտրական հրապարակում տնտեսական արդյունքների վաճառքի և մանավանդ բարձրորակ ծխախոտի արտահանման բնագավառում կարևոր դերակատարություն ունեին հույն վաճառականները, որոնք հիմնականում կապված էին եվրոպական շուկաների հետ: Առհասարակ Էգեյանի շրջանի հույն բազմամարդ ազգաբնակչության տնտեսական գործունեությունն իր ազդեցության զգալի կնիքն էր դնում գյուղատնտեսական արտադրության և առևտրի ծավալների վրա: Պետք է առանձնացնել, սակայն, տեղական բամբակագործության զարգացումը, որն առևտուրը խթանելուց զատ, նպաստում էր տեղական ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացմանը: XVIII դ. երկրորդ կեսին հատկապես հաջողություններ արձանագրեց գորգերի տնայնագործական արտադրությունն ու առևտուրը: Ն. Նեպլյունը մաս-

նախատեսված՝ Ի. Փափագյանցի գրքի վավերագրական մի նմուշում՝ <<Օրինակ յանձնարարութեան վաճառաց>> վերնագրով հատվածում կարդում ենք. <<Զամիչն Զմիւռնիոյ պարտի լինել անողկույզ, չոր և դեղնագոյն: Ընտրելագոյն բամբակն պարտի լինել կարի սպիտակ, երկայնաթել և առանց աղտեղութեան զոր սովոր են ի փոքր քուրձս ամփոփել: Իսկ ստորին տեսակն պարտի ըստ հնարաւորութեան լինել առանց խառնուրդի ներման և հատուածոյ տերևոց, որք նուաստացուցանեն զյարգ մթերիցն, և լինին դժուարինք՝ ի մանել և ի գործել զկտաւս>> (Փափագեանց Ի., Պատճէնք նամակաց, էջ 178):

¹⁰⁶⁵ Халфин Н. А., Мурадян А. А. Янки на Востоке в XIX веке или колониализм без империи, с. 47, 95.

նավորապես, նշում էր ոլորաթելերի բարձր որակը¹⁰⁶⁶: Տեղական արտադրության զարգացման միտումների մասին է վկայում 1790 թ. Զմյուռնիայում չթագործարանի հիմնադրումը հայերի կողմից¹⁰⁶⁷, որին անդրադարձանք իր տեղում: Այստեղ ավելացնենք, որ ի տարբերություն Կ. Պոլսի, Ադրիանուպոլսի, Մալոնիկի և այլ քաղաքների մանուֆակտուրաների, որոնք ենթարկվում էին պետական վերահսկողության՝ հիմնվելով պետության կողմից, զմյուռնացի վաճառականների այս առևտրաարտադրական ձեռնարկումը, թեկուզ և աննշմար չափերով, ներկայացնում էր առևտրի անցումը դեպի արտադրություն, որ ուշագրավ երևույթ էր ժամանակի Օսմանյան Թուրքիայի տնտեսական կյանքում:

Արդեն նկատել ենք, որ Զմյուռնիայի այլազգի և այլադավան վաճառականներին այս կամ այն չափով, բայց և անհրաժեշտաբար, տնտեսական առնչությունների, ոչ սակավ դեպքերում՝ համագործակցության էին մղում առևտուրը և տեղաբնակի առևտրական ընդհանուր շահերը: Զմյուռնահայ վաճառականությունն այս իմաստով հասկանալի և միաժամանակ՝ վաղեմի կապեր ու աղերսներ ուներ նավահանգստի ոչ միայն արևելցի, այլև եվրոպական համայնքի վաճառականության հետ: Այս վերջիններս լիովին վայելում էին Զմյուռնիայի եվրոպական հյուպատոսարանների հովանավորությունն ու աջակցությունը, և մյուս կողմից, իրենց այս առանձնահատուկ կացությամբ դեպի իրենց ձգում օսմանահպատակ առևտրականության շահեկան ուշադրությունը: Այս հանգամանքը, անշուշտ, դրականորեն էր անդրադառնում զմյուռնահայ վաճառականության առևտրական հնավանդ մեթոդների փոփոխման և ասիական գործառության հին ձևերն ու հնարները նորերով փոխարինելու տեսակետից¹⁰⁶⁸:

¹⁰⁶⁶ Дандиг Б. М. Русские путешественники на Ближнем Востоке. М., 1965, с. 79.

¹⁰⁶⁷ Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 572-573, 575:

¹⁰⁶⁸ Զմյուռնիայում բնակվող այս եվրոպացիների նախաձեռնությամբ էր, որ քաղաքի վաճառականները 1842 թ. դիմել էին Անատոլիայի հայկական ընկերության տեղական գործակալներին՝ վերացնելու **թագաս** կոչված պարտամորհակի՝ իր դարն ապրած արևելյան վաղեմի և անկանխիկ ֆինանսական գործառնությունը: Դրա համեմատ, պարտապան վաճառականը իր պարտատիրոջը վճարում էր ոչ թե հնչյուն դրամով, այլ նրան տալիս էր թագաս՝ գրավոր իրավունք, որ նա այդ պարտքի գումարը գանձի իրեն պարտք մեկ այլ երրորդ վաճառականից: Առաջին պարտատերը դիմում էր այդ երրորդ անձին, բայց սա նույնպես, դրամի փոխարեն, իր հերթին թագաս էր տալիս՝ պարտքը գանձելու չորրորդ վաճառականից և այսպես շարունակ, այնպես որ գումարի

Այսպիսով, XVI դ.-XIX դ. առաջին կեսին զմյուռնահայ առևտրական կապիտալը և ընդհանրապես Ջմյուռնիայի նավահանգստում գործառող հայ վաճառականությունը լուրջ ներդրում ունեցավ արևելքի և արևմուտքի ապրանքաշրջանառության ոլորտում: Եվրոպայի, ինչպես և Օսմանյան Թուրքիայի տնտեսական տեղաշարժերի տեսակետից հայերը հույն և հրեա վաճառականության հետ միասին կատարել են աչքի ընկնող դերակատարություն՝ բավարարելով հումքի նկատմամբ եվրոպական արտադրության պահանջարկը և ըստ հնարավորին խթանելով գյուղատնտեսական արտադրության զարգացումը Էգեյան ծովի առափնյա տարածքներում: Ջմյուռնիայում, հատկապես XVI-XVIII դդ. գործառել են ոչ միայն տեղաբնակ, այլև Հայաստանի գույգ հատվածներից եկած ու Եվրոպայում, Մերձավոր Արևելքի երկրներում և Հնդկաստանում գործող հայ վաճառականները: Եվ այս առումով զմյուռնահայ վաճառականությունը հասկացությունը ստանում է շատ ավելի լայն իմաստ՝ սերտաճելով առհասարակ Ջմյուռնիայում տնականորեն գործող հայ վաճառականության գործունեությանը: Կարելի է կարծել, որ այդ նավահանգստի միջազգային կարևոր տարանցիկ նշանակությամբ, ինչպես և բնաշխարհի հետ ունեցած անմիջական առնչություններով է բացատրվում զմյուռնահայ գաղթօջախի հույժ կարևոր տեղը հայ մշակույթի զարգացման մեջ: Չնայած իր բնակչության համեմատաբար փոքր քանակին (XVII-XIX դդ. ընթացքում՝ առավելագույնը 12 հազար մարդ) գաղթօջախը ծանրակշիռ ներդրում արեց ազգային հոգևոր արժեքների ստեղծման ասպարեզում:

<<տերը բոլոր քաղաքը կը պտտի, բայց թուղթի կտորներէ ի գատ՝ ուրիշ բան մը չի անցնիր ձեռքը, շատ անգամ կը պատահի, որ մինչև տասնհինգ օր անվճար քովը կը մնան այդ թուղթերը>> (Արշալոյս Արարատեան, 1842, 8 մայիսի): Ինչ ասել կուզի, պարտքը, ի վերջո, վերադարձվում էր և այստեղ խոսքը վերաբերում է առհասարակ համարում ունեցող վաճառականներին, և ոչ թե դրամաշորթներին (յան քեսիջի), որոնց խաբեայություններից Ջմյուռնիայի <<բարեմիտ վաճառականներին>> զգուշացնում էր տեղի հայկական թերթը (Արշալոյս Արարատեան, 1842, 23 հոկտեմբերի):

ԳԼՈՒԽ 4

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ

1. Ազգային վարչությունը

Զմյուռնահայ համայնքի ազգային կյանքի կազմակերպման, նրա սոցիալական խավերի փոխհարաբերությունների վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ չեն պահպանվել գոնե մինչև XVIII դարը: Կարելի է միայն նկատել, որ մինչև հայոց կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում (1441) և դրանից հետո էլ, մինչև XVII դ. 10-ական թթ., հայ Առաքելական եկեղեցին, ի դեմս Կիլիկիո Մեծի տանն կաթողիկոսության, հովվում էր Էգեյանի շրջանի հայկական հնամենի համայնքները: Դրանք իրենց ինքնությունը պահպանել էին եկեղեցու ազգապահպան գործունեության միջոցով և դրան առնչվող՝ հանրային կազմակերպության համապատասխան ձևերի (աշխարհիկ իրողությունների կարգավորում, հարկերի և տուրքերի գանձման գործիքակազմ, մշակութային ավանդական կյանքի դրսևորումներ, բարքեր, կենցաղ և այլն) կիրառմամբ:

Ինչպես են հարաբերվել Էգեյանի գաղթօջախները բյուզանդական իշխանությունների, ինչպես և սելջուկյան տիրակալների ու բեյությունների, ապա օսմանյան նվաճողների հետ՝ ընդհուպ մինչև XVII դ., ինչ մասնակցություն են ունեցել դրանց տնտեսական ու ռազմաքաղաքական կյանքին, իրավական ու վարչական փոխհարաբերություններին և այլն, այս ամենը դեռևս սպասում են լուսաբանումների, որոնցից շատերն ի հայտ կգան այն ժամանակ, երբ հետազոտողին մատչելի կդառնան այդ ժամանակաշրջանի հայկական, հատկապես հունական և իտալական, ինչպես և օսմանյան՝ դեռևս անհայտ մնացած սկզբնաղբյուրները: Դրությունը բավական խոստումնալի է դառնում Զմյուռնիայի գաղթօջախի պարագայում, հատկապես XVII դ. սկզբներից և առավել լայն տեղեկատվական շառավիղներով՝ XVIII դ., երբ արդեն գործ ենք ունենում մեզ մատչելի՝ հայկական սկզբնաղբյուրների և գրականության հետ: Այստեղ խոսքը վերաբերում է առհասարակ գաղթօջախների հանրային կյանքին, որի վերաբերյալ բավական նյութեր են տրամադրում զմյուռնահայ եկեղեցիները, դամբանագրերը, ձեռագիր մատյանները և այլն:

Ս. Ստեփանոս եկեղեցին մնում էր զմյուռնահայ համայնքային կյանքի ամենագլխավոր գործոնը XVII դ. առաջին տասնամյակներից ի վեր: Հանրային իրականության մյուս գործոնը ազգային հիվանդանոցն էր, որի գոյությունը ենթադրվում է շատ ավելի վաղ, քան XVIII դարը: Իր հաճախակի պտղակացող համաճարակներով հայտնի Զմյուռնիայում և մերձակա շրջաններում ազգաբնակչությունը, այդ թվում և հայերը, չէին կարող չմեկուսացնել հիվանդներին, որ կարող էր իրականացվել միայն առանձին հիվանդանոցներ հիմնելով և որոնք գործում էին համայնքների ծախքով: Զմյուռնիայի կրոնադավանական բոլոր հանրությունները այդպիսի հիվանդների պատսպարում էին **մորթաքիա** (մահվան տուն) կոչվող մեկուսարաններում, ինչպես նշում է այս հարցի պատմության լավատեղյակ Ատոմը: Հետզհետե այդպիսի մեկուսացումը, հարում է նա, կրել է հարկադրական, կանխարգելիչ բնույթ, և որ Ս. Լուսավորչյան հայկական հիվանդանոցը հիմնվել է այդ նպատակով¹⁰⁶⁹: Թե երբ է ազգային հիվանդանոցը կոչվել Ս. Լուսավորչյան, հայտնի չէ. 1802 թ. կառուցված հիվանդանոցի շենքը նորոգվել է 1842 թ., երբ կառուցվել է Ս. Ստեփանոս եկեղեցու միայնությունը խախտելով, զմյուռնահայերի երկրորդ եկեղեցին՝ Ս. Լուսավորիչը, հիվանդանոցի անվամբ: Կարծում ենք, որ ազգային հիվանդանոցի նորոգումն անմիջականորեն կապ ունի նոր եկեղեցու անվանակոչության հետ. ըստ էության, այստեղ առկա է եղել եկեղեցու կառուցման ֆերմանի (թույլտվության) և հարկային բարդությունը հաղթահարելու, ինչպես և նորոգ հիվանդանոցի շենքը եկե-

¹⁰⁶⁹ Ցավոք, Ատոմը որևէ գրավոր աղբյուր չի նշում, այլ հենվում է ավագ սերունդներից, ընդհուպ մինչև ականատեսները փոխանցված տեղեկությունների վրա, որոնց հետքերը, կարելի է կարծել, տանում են մինչև XVIII դ. և անգամ ավելի հին ժամանակներ: Նույն հեղինակը վկայում է նաև, որ մորթաքիային հատկացված է եղել հիվանդանոցի մի մասը, իսկ շինության մյուս հատվածները տրամադրվել են հանրային այլ նպատակների (հիվանդանոց, աղքատանոց) (Ատոմ, Իզմիրի Ս. Լուսավորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը, Արեւելք, 1902, 16/29 ապրիլի): Հետագայում, XIX դ. առաջին քառորդին, մորթաքիան փոխադրվել է մեկ այլ վայր՝ պահպանելով իր անվանումը (նույն տեղում): Ազգային հիվանդանոցի մասին տեղեկություններ է տվել Թ. Ճերմակյանը՝ նշելով, որ այն գտնվում էր Հայոց թաղի (Հայնոց) հյուսիսային կողմում, <<ուր կը դարձանուէին ժանտախտէ բռնողներ>> (Ճերմակեան Թ., Զմիւռնիա եւ ազգայինք, Հանդես ամսօրեայ, 1890, թիւ 5, էջ 108: Ատոմ, Իզմիրի Ս. Լուսավորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը, Արեւելք, 1902, 16/29 ապրիլի, 21 մայիսի /3 յունիսի, 22 մայիսի /4 յունիսի):

դեցու կալվածք ճանաչել տալու իրավական խնդիրը, որի հաջող լուծման դեպքում հիվանդանոցը կազատվեր մեծ չափերի հասնող հարկից: Եկեղեցին այս դեպքում հանդես կգար որպես վակֆային հաստատություն՝ իբրև հիվանդանոցի սեփականատեր, և որոշակի գումար կհատկացներ նրա կենսագործունեության ապահովմանը: Ավելորդ չէր լինի այս իմաստով փոքր-ինչ առաջ անցնելով, հիշել 1848-1849-ի կողմերը կառուցված Ս. Հռիփսիմյան վարժարանի օրինակը, երբ այդպես էլ չհաջողվեց այդ շինությունը վակֆային հաստատության հովանու ներքո մտցնելով նրա համար սահմանել արտոնյալ՝ ցածր հարկ¹⁰⁷⁰:

Հիվանդանոցի նորոգման գործին իր աջակցությունը բերեց զմյուռնահայ հայտնի բարեգործ, մեծահարուստ Ավետիս Էքիզյանը՝ 1842-1846 թթ. համայնքի հոգաբարձուներից մեկը: Նրա գործունեությունն անցնում էր զմյուռնահայ համայնքից այն կողմ. 1831 թ. նրա նախաձեռնությամբ և նյութական միջոցներով էին նորոգվել Մանիսայի Ս. Սիոն եկեղեցին և դպրոցը, 1835 թ.՝ Մենեմենի Ս. Սարգիս եկեղեցին և դպրոցը, 1840 թ.՝ Քասաբայի Ս. Աստվածածին եկեղեցին և 1857 թ. Բայանդըրի եկեղեցին ու դպրոցը, ինչպես գրում է Ատոմը¹⁰⁷¹: Նույն հեղինակը հավելում է, որ 1842 թ. Ավ. Էքիզյանը ստանձնելով ազգային հիվանդանոցի հոգաբարձությունը, ձեռնամուխ է լինում այդ հաստատության շենքի շինությանը, որն ավարտում է կարճ ժամանակ անց¹⁰⁷²: Զմյուռնիայի <<Արշալոյս>> թերթն իր հերթին, հետագայում հայտնում էր, որ այդ ազգասերը 1845 թ. հետո անձամբ ձեռնարկել էր <<Գրեթէ Զմյուռնիոյ բոլոր թեմերու եկեղեցիներու և դպրոցներու կառուցման՝ իր քսակէն ալ միշտ կարեւոր գոհողութիւններ չի խնայելով>>¹⁰⁷³:

Ս. Լուսավորչյան հիվանդանոցը, ի դեպ, երկրորդ անգամ նորոգվել էր դեռևս 1740-ական թթ., Ավ. Էքիզյանի նախնիներից Կարապետ Էքիզյանի հովանավորությամբ¹⁰⁷⁴: Ս. Լուսավորչյան հիվանդանոցի նորոգումը հաջորդ անգամ իրականացվեց 1879 թ.՝ զմյուռնացի բարերար եղբայրներ Հակոբ և Հովհաննես Սպարթալյանների ծախքով, երբ կառուց-

¹⁰⁷⁰ Ատոմ, նշվ. աշխ., Արեւելք, 1902, 17/30 յունիսի:

¹⁰⁷¹ Ատոմ, նշվ. աշխ., Արեւելք, 1902, 6/19 յունիսի:

¹⁰⁷² Նույն տեղում: Տես նաև Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 151:

¹⁰⁷³ Արշալոյս, Իզմիր, 1908, 1 մայիսի:

¹⁰⁷⁴ Նույն տեղում:

վեց նոր, եռահարկ շենք՝ իր շատ ավելի բարվոք պայմաններով¹⁰⁷⁵։ Մինչև թանգիմաթը զմյուռնահայերը հիվանդանոցին նպաստ էին տալիս **տարեկիք** կոչված տարեկան հարկը՝ 100-150 ոսկու չափով¹⁰⁷⁶։

Զմյուռնահայ համայնքի դրամական և ֆինանսական միակ և կարևոր կառույցը այսպես կոչված **խորան** (հորա) էր, ինչը, որպես այդպիսին, կազմում էր այդ համայնքի ազգային-վարչական կյանքի շատ ուշագրավ առանձնահատկությունը։ Այս հասկացության վերաբերյալ կան տարբեր բացատրություններ։ Համայնքի հոգաբարձուները, այս առթիվ գրում է Ա. Այվազյանը, ազգային կալվածքների եկամուտների գումարները հավաքելով՝ «ազգային գանձը կամ խորա ըստած սնտուկը ի պահ կը տրուէին»¹⁰⁷⁷։ Ըստ Ատումի, «վարչական գործառնութեանց կեդրոնը շուկան՝ խորա ըստած տեղն էր, մասնավոր մթերանոց մը Մեծ վեզիր խանի մէջ։ Խորան ժողովատեղի, խորհրդատեղի է, ուր տեղի կունենային ոչ միայն ժողովականներու նիստերը ու գումարումները, այլև հոն կը գտնուէին տումարներ, դիւանատունը եւ անոր պաշտօնեաները»¹⁰⁷⁸։

Կարելի է նաև եզրակացնել, որ իրոք, զմյուռնահայ համայնքի ֆինանսադրամական կացության կարևոր կառույցը, որ մատակարարում էր ազգային հաստատությունները՝ դպրոցները, հիվանդանոցը, ի մի բերում համայնքի եկամուտներն ու դրանց կարգավորման հետ կապված ձեռնարկները, այդ թվում և հարկերի և տուրքերի կնճռոտ հարցերն իշխանությունների հետ, մնում էր խորան՝ ազգային սնդուկը կամ բյուջեն։ Ա. Ալպոյաճյանն ավելացնում է, որ մինչև 1860 թ. արևմտահայերի ազգային սահմանադրությունը Զմյուռնիայի առաջնորդարանի (կամ ազգային վարչական) գործերը «բոլորովին տարբեր ձև եւ տարբեր դրութիւն» ունէին՝ Կ. Պոլսի համայնքի համեմատությամբ։ Հիրավի, եթե Կ. Պոլսում վերը նշված բոլոր գործառնությունները իրականացնում էր պատրիարքը՝ իր վեքիլների ու նազըրների օգնականությամբ և գործադիր իրավասություններով, ապա Զմյուռնիայում այս գործը կատարվում էր ոչ թե առաջնորդի գերակա իրավունքների ուժով, այլ ընդամենը

¹⁰⁷⁵ Ճերմակեան Թ., Զմիւռնիա եւ ազգայինք, 1890, թիւ 5, էջ 108։ Տես նաև Հանդէս բացման նորաշէն Ազգ. հիւանդանոցի Զմիւռնիոյ, 1879, յունուար, էջ 353։

¹⁰⁷⁶ Տես Ատում, նշվ. աշխ., 1902, 3/16 յուլիսի։

¹⁰⁷⁷ Այվազեան Ա., Յոնիական հայ գաղութի նահապետներէն, 1900, 23 օգոստոսի/5 սեպտեմբերի։

¹⁰⁷⁸ Ատում, նշվ. աշխ., 1902, 28 հունիսի/11 հուլիսի։

նրա մասնակցությամբ, համայնքի աշխարհիկ տարրի շատ ավելի լայն ներկայացուցչությամբ և վերահսկողության չափերով: Խորայի դրամարկդն ուներ հինգ բանալիներ, որոնցից մեկը պահվում էր առաջնորդի, մյուսները՝ ավագերեց քահանայի, գապգիմալի (գանձապետ) և մեկական՝ համայնքի երևելի երկու անդամների մոտ¹⁰⁷⁹: Այստեղ ասենք, որ գապգիմալը հանդիսանում էր կառավարության կողմից նշանակված պաշտոնյա, որը պետք է հավաքեր օսմանահպատակ <<հայերէ պահանջուած **փունթ** անուն տուրքը>>, ինչպես գրում է Ատումը¹⁰⁸⁰: Դժվար չէ նկատելը, որ համայնքի եկամուտների հավաքման ու բաշխման գործում զմյուռնահայ համայնքն ավելի ընդարձակ տեղ և իրավունքներ էր հատկացնում աշխարհիկ իրավատերերին ու նրանց վերահսկողությանը, քան եկեղեցու ներկայացուցիչներին (երեքը՝ երկուսի դիմաց): Այլ կերպ ասած, զմյուռնահայ համայնքի վարչական գործերում գերակշռում էր աշխարհիկ ներկայացուցչությունը, որ ուշագրավ իրողություն էր ժամանակի հայ գաղթօջախների ներհամայնքային կազմակերպությունների մեջ: Այս հանգամանքը կարելի է բացատրել համայնքում առևտրական կապիտալի ընդարձակ կարողություններով և ավանդական ազդեցությամբ, որի կապերն ու հարաբերություններն ազգային կրոնական ասպարեզում, ինչպես տեսանք, հասնում էին ընդհուպ մինչև Ամենայն հայոց կաթողիկոս և առհասարակ, եկեղեցու նվիրապետություն, աշխարհով մեկ սփռված գաղթօջախների աշխարհիկ ու հոգևորական վերնախավ և այլն:

Չարկ է նկատել նաև, որ այս վարչական կառույցն ուներ նաև վերահսկողական ճկուն և արագորեն փոփոխվելու ընդունակ համակարգ՝ խորայի եկամուտների և ծախսումների հաշվետվությունը տրվում էր տարին մեկ, երբ միաժամանակ վերընտրվում էին հիվանդանոցի և դպրոցի հոգաբարձուներ, վարչական գործերի պաշտոնատարներ և այլն, որոնց գործունեության նյութական լծակը միշտ մնում էր նույն խորան: Այս պատճառով էլ խորային միաժամանակ տրվել է ավելի լայն մեկնաբանություն, քան <<ազգային սնտուկ>> հասկացությունն էր, այսինքն ժողովատեղի կամ խորհրդատեղի, ինչը տեսնում ենք Ատումի վերոհիշյալ աշխատության մեջ: Ի լրումն այս ամենի կամ խորա հասկացության բնութագրի, նկատենք, որ այստեղ էին հավաքվում ամբողջ

¹⁰⁷⁹ Այվագեան Ա., նշվ. Աշխ.:

¹⁰⁸⁰ Ատում, նշվ. աշխ., 1902, 5/18 հուլիսի: Խոսքը, հավանաբար, վերաբերում է արքունական տուրքերից մեկին:

թեմի մյուս բնակավայրերի կալվածական-սեփականատիրական գործառնությունների, նվիրատվությունների գործադրման և այլնի վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնք վերահսկում էր առաջնորդարանը: Վերջինս այս դեպքում հանդես էր գալիս որպես Էգեյանի առափնյա գաղթօջախները միավորող կենտրոն՝ իր գործառույթն իրականացնելով մի կողմից տեղական օսմանյան իշխանությունների, մյուս կողմից Մայր աթոռի հետ ունեցած իր առնչություններով:

Էջմիածնական կալվածքների, դրանց եկամուտների, առքուվաճառքի, կտակների, նվիրատուների և այլ գործառնությունների վերաբերյալ հաշիվներն ու փաստաթղթերը ևս պահվում էին խորայում, որտեղից պարբերաբար Մայր աթոռին հաշվետվություն էր ներկայացնում Զմյուռնիայի առաջնորդը, իբրև տերունի թեմի ներկայացուցիչ (մինչև 1825 թ.) և խորան վերահսկող մարմնի անդամ: Այս դեպքում խորան կարող էր հանդես գալ իբրև ինքնուրույն ազգային հաստատություն, որին կարող էին կտակներ ու նվիրատվություններ անել: Կարելի է հիշել Զմյուռնիայի առաջնորդ արք. Մարտիրոսին, ով 1811 թ. բավական գումար էր կտակել <<ի հօրայն հայոց...պայմանաւ, զի նոյն վերոյգրեալ 2500 դռշ (դուրուշ-Ա. Խ.) մշտենջենապես մնասցէ ի հօրայն>>¹⁰⁸¹: Նկատենք, որ խորան դիտվել է իբրև կրոնական-բարեգործական սուբյեկտ վակֆային համակարգում՝ ժառանգական իրավունքով, որի շնորհիվ, ի դեպ, հետագայում տերունի թեմերից զրկված Էջմիածինը 1850-ական թթ. հնարավորություն ունեցավ ստանալու այդ թեմում իր կալվածքների եկամուտները (մասնակի կորուստներով): Տասնամյակների լուսնունն այս իմաստով խախտեց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին՝ 1851 թ.¹⁰⁸²: Խոսքը վերաբերում էր առհասարակ տերունի թեմի՝ Զմյուռ-

¹⁰⁸¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22բ, վավ. 52, թղթ. 165, վավ. 175: Պալեան Տ., նշվ. աշխ., թիւ 2, էջ 61:

¹⁰⁸² Թեմում Էջմիածնի սեփականությունների գրանցման և այդ խնդրի արծարծման հետ կապված գործերի վերակացությունը կաթողիկոսին իբրև հավատարմատար հանձնարարել էր զմյուռնացի հեղինակավոր դեմքերից մեկին՝ Թագվոր Ս. Չելիկյանին, որի լիազորագիրը հաստատել էր սինոդը՝ 1852 թ. սեպտեմբերին: Նույն թվականի մայիսին Չելիկյանը խնդրել էր կաթողիկոսին տեղեկանք ուղարկել Զմյուռնիայի թեմում Էջմիածնի, ինչպես և Տաթևի վանքի սեփականությունների վերաբերյալ (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 167, վավ. 447): Նրա ջանքերը բավական արդյունավետ եղան. կաթողիկոսին ուղղած գրությամբ (1852, 25 ապրիլի) Զմյուռնիայի առաջնորդ արք. Պ. Թագթագյանը ծանուցում էր, որ համայնքը որոշել է Էջմիածնին հանձնել նրա սեփականությ-

նիայում, Էռդեմիշում, Բայանդըրում և այլուր Էջմիածնական լքված կալվածքներին, ինչպես և գանձանակի արդյունքներին: Կաթողիկոսի հավատարմատար Թ. Չելիկյանը հաջողության էր հասել հայցի բավարարման գործում: Ինքը՝ Ներսես Աշտարակեցին քաջաճանոթ էր Ձմյունիայի թեմում Էջմիածնական կալվածքների և քանակին, և եկամտաբերությանը. դեռևս 1823 թ., Եփրեմ կաթողիկոսի ժամանակ, նա ստանձնել էր Ս. Աթոռի տնտեսական գործերի կառավարումը¹⁰⁸³:

XVIII-XIX դդ. սահմանագծին, որպես ազգային և աշխարհիկ հանրային կազմակերպություններ, Ձմյունիայի հայ համայնքում հանդես էին գալիս եկեղեցին (առաջնորդարանը) և մասամբ էլ խորա-ժողովարանը: Խորան վերահսկող անձինք փաստորեն ներկայացնում էին ոչ միայն զմյունահայ, այլև շրջակայքի մյուս, ոչ մեծ գաղթօջախների հանրությունները՝ սահմանափակ անդամակցությամբ մի խմբակ, որը անգոր էր իրականացնելու անգամ այդ հանրությունների փոխհաղորդակցական տարրական պահանջունքները: Ձմյունիայում իրերի այս դրությունը, սակայն, առաջադրում էր թեմի վարչությունը ընդլայնելու, համայնքների ներքին կյանքը նորովի կազմակերպելուն ուղղված նախաձեռնություններ, որի մասին մեզ հուշում է 1799 թ. օգոստոսի 22-ի թվակիր մի վավերագիր. հեղինակը առաջնորդ արք. Մարտիրոսն է, որը դիմում է Ղուկաս կաթողիկոսին. <<Տէր իմ,-գրում է նա,-գի անցելումն ամի խորհրդակցութեամբ քահանայից և իշխանաց քաղաքիս հաստատեցաք զոմնս կանոնադրութիւնս քաղաքական (քաղաքացիական-Ա. Խ.) որոյ պատճենն ևս ունիք տեսանել կարի յոյժ օգտաւէտ և հարկաւոր է քաղաքիս և ազգիս մերոյ...>>¹⁰⁸⁴:

յան հաստիքները, որոնք կուտակվել էին վերջին 26 տարվա ընթացքում և <<յայսմ հետէ ըստ վաղնջոյն սովորութեան ամ ամի հատուցանել նմա անխափան զարդինս նուէրաց հաւատացելոցն...>> (նույն տեղում, թղթ. 167, վավ. 509):

¹⁰⁸³ Ձմյունացիներ Գր. Պապոյանին և Հովհ. Խաչատրյանին գրած իր նամակում (1823, նոյեմբերի 10) Ներսես Աշտարակեցին խնդրում էր <<հասուցանելոյ առ մեզ զարդինս... յամենայն վիճակս Ձմիւնիոյ, ի քաղաքս եւ ի դասապայն հին եւ նոր առ գանձապետս եւ ի խօրայն քաղաքական>> (ՄՄ, Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 165, վավ. 810):

¹⁰⁸⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 9, վավ. 125:

Պակաս ուշագրավ չէ վավերագրից պարզվող այն հանգամանքը, որ այդ կանոնադրությունը մշակվել էր զմյուռնահայերի մեջ երկպառակություններին վերջ տալու և մարդկանց միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով, որովհետև առաջնորդը կաթողիկոսից քաջալերող կոնդակ է խնդրում ի հաստատումն խաղաղության՝ «<հնազանդելոց օրհնութիւն և անհնազանդիցն՝ սաստ>»:

Առ ի չգոյէ նշված կանոնադրության գործադրությունը վկայող որևէ փաստի, չենք կարող խոսել դրա ճակատագրի մասին, եթե չհաշվենք այն, որ գոնե մինչև 1807-1808 թթ.՝ Զմյուռնիայում Դավիթ-Դանիելյան ներհակության ավարտը, երկպառակություններից ջլատված համայնքում հնարավոր չէր խոսել ընդհանուրի համաձայնությամբ գործող որևէ կանոնադրության մասին:

Զմյուռնիայի և առափնյակի մյուս գաղթօջախների ներհամայնքային կազմակերպությունների մասին առաջին ամբողջական պատկերացումը առայժմ հնարավոր է կազմել թանգիմաթի դարաշրջանից սկսած, երբ կազմավորվեցին միլեթների ազգային վարչական մարմինները գոյացնող կրոնական և աշխարհիկ տարրերը՝ համայնքներում այս վերջինների առավել լայն շերտերի ընդգրկմամբ:

Համայնքի ազգային վարչությունն այս նոր պայմաններում առաջին անգամ կազմավորվեց 1841 թ., երբ «<հայազգի երեւելիների եւ ուսումնականների ժողովքը>> ընտրեց ազգային գործերի հոգաբարձություն, ինչպես հայտնում էր զմյուռնահայ թերթը¹⁰⁸⁵: Ժողովում ընտրվեցին

¹⁰⁸⁵ Արշալոյս Արարատեան, 1841, 20, 28 մարտի: Ատոմն իրավացիորեն քննադատում է Զմյուռնիայում 1902 թ. հրատարակված ազգային հիվանդանոցի Տեղեկագրի այն տեսակետը, ըստ որի, «<Արդէն վաղուց դադրած էր միւթելէիական պաշտօնավարութիւնը եւ 1847-էն ետքը վարչային նոր կազմակերպութեան համեմատ գերագույն ժողովի կողմէ կընտրուէին եկեղեցւոյ, վարժարանի, հիւանդանոցի եւ այլ հաստատութեանց հոգաբարձու կոչուած գործող ու վարիչ մարմինները՝ օրինաւոր համարատուութեամբ>>, ընդամին նկատելով, որ Զմյուռնիան երբեք գերագույն ժողով չի ունեցել, ինչպես պոլսահայ համայնքը, այլ «<վարչական մասնաւոր դրութիւն մը>> (Ատոմ, նշվ. աշխ., 1902, 5/18 հուլիսի): Այստեղ հավելենք, որ Տեղեկագիրը վեց տարի ուշացումով է ամրագրում համայնքի «<վարչային նոր կազմակերպութիւնը>>, այսինքն, ոչ թե 1847-ից հետո, այլ 1841 թվականից: Կարծում ենք, որ ճշգրտման կարիք ունի իր՝ Ատոմի նշած հոգաբարձուների (իր եզրով՝ եկեղեցականների) լիազորության ժամկետը. «<Ասոնք, գրում է նա, -ամէն տարի չեն ընտրուիր>>, մինչդեռ հոգաբարձուներն այս անգամ ընտրվել էին մեկ տարի ժամանակով (տես Արշալոյս Արարատեան,

չորս մարդ՝ Ավ. Էքիզյանը, Մ. Միքայելյանը, Գ. Մանուկյանը և Ա. Միքայելյանը : Ընտրվեց ևս մեկ հոգաբարձու՝ Ա. Կարապետյանը, որպես Զմյուռնիայի տարբեր միլեթներից ընտրվող քաղաքային ժողովի (շուրա-ի մեշլիս) անդամ: Այս չորս հոգաբարձուների հետ ընտրվեցին չորս խորհրդականներ (օգնականներ) և նշանակվեցին Ս. Ստեփանոս եկեղեցու երկու վերատեսուչներ, հիվանդանոցի խորհրդական հոգաբարձու և վարժարանների մեկական վերատեսուչներ: Բոլոր հոգաբարձուների և մյուս պաշտոնատարների գործողության ժամկետը, ինչպես ասվեց, մեկ տարի էր, որ և տեսնում ենք ամբողջ 1840-1850-ական թթ. հոգաբարձուների ցանկում: Հետագայում չորս (երբեմն՝ հինգ) հոգաբարձուների (գործակիցների կամ խորհրդականների) թիվը հասել է մոտ մեկ տասնյակի¹⁰⁸⁶, որ վկայում է համայնքի վարչության կազմի ընդլայնման, ասել կուզի՝ դեմոկրատացման մասին: Հետաքրքիր է, որ ավանդույթի և կարևորության սկզբունքով պահպանվել էր երբեմնի խորայի գապզիմալի պաշտոնը, կարևորություն էր տրվել, մասնավորապես, Ս. Ստեփանոս եկեղեցու հոգաբարձուների պարտականությանը, որի մեջ էին մտնում եկեղեցու սեփականատիրական իրավունքի, կալվածքների և դրանց առուծախի վերաբերող գործերը:

Զմյուռնահայ համայնքի վարչական գործերի կազմակերպական ձևը 1840-ական թթ. իսկապես տարբերվում էր Կ. Պոլսի հայ համայնքի համապատասխան կառույցներից: Կարծում ենք՝ ամենից առաջ, արհեստավորության սահմանափակ ներկայացուցչությամբ, Զմյուռնիայում վերջինիս ոչ մեծ թվաքանակի պատճառով և վարչության կազմում մտավորականների (<<ուսումնականների>>) պատշաճ ներկայության պայմաններում: Հիշարժի, այստեղ ազգային հոգաբարձուներն ընտրվում էին ըստ գործունեության որոշակի ոլորտի (եկեղեցու սեփականություններ, սեփականատիրական-գույքային հարաբերություններ, անդամակցությունը Զմյուռնիայի քաղաքական ժողովին՝ հիմնականում առևտրին առնչվող գործառույթների խնդրով և այլն): Կ. Պոլսում, մինչդեռ, ազգային կառույցները հստակ բաժանվում էին ըստ միլեթի հատկանիշների՝ կրոնական և քաղաքական ժողովների առկայությամբ,

1841, 20, 28 մարտի): Ազգային հիվանդանոցի Տեղեկագրի մասին տես նաև Տիրիկեան Ա., Տեղեկագիր յանձնաժողովոյ, Արեւելեան մամուլ, 1902, 15 ապրիլի, էջ 378-382):

¹⁰⁸⁶ Տես Արշալույս Արարատեան, 1846, 5 ապրիլի, 1847, 22 օգոստոսի: ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 137, վավ. 101, թղթ. 129, վավ. 45, թղթ. 145, վավ. 299 և այլն:

որոնք միասին կազմում էին գերագույն ժողով կոչվող ազգային վարչությունում: Հարկ է նկատել, սակայն, որ ընդհանրությունները Կ. Պոլսի և Ջմյուռնիայի համայնքների միջև ավելի շուտ վերաբերում էին գաղափարախոսությանը՝ աշխարհիկ ներկայացուցչության ընդլայնմանը և եկեղեցու գործառնության նշանակության սահմանափակմանը՝ ի դեմս մայրաքաղաքում գործող հայոց պատրիարքի և Ջմյուռնիայում (և առհասարակ գավառներում՝ առաջնորդական վիճակներում պաշտոնավարող)՝ եկեղեցին ներկայացնող առաջնորդի: Այս վերջին հանգամանքը՝ եկեղեցու աշխարհիկ գործառնությունների նվազեցմանը օսմանյան բարենորոգիչների կողմից՝ միլեթների համակարգի ձևախեղումներով և նրանց կրոնական հիմքերի դեմ ուղղված սպառնալիքներով, բնականաբար, առաջացնում էր մի կողմից ազգապահպանության խնդիրներից, և մյուս կողմից, համայնքներում իր դասային արտոնություններից զրկվելու վտանգից տագնապած հոգևորականության և առհասարակ ազգի պահպանողական տարրերի մտահոգությունները: Այս տեսակետից բավական պերճախոս էր Ներսես կաթողիկոսին ուղղած իր նամակում (1848, 1 փետրվարի) Կ. Պոլսի Մատթեոս պատրիարքը, որը, ի դեպ, դեռևս 1840-ականի առաջին կեսից՝ Ջմյուռնիայում առաջնորդության տարիներից, քաջատեղյակ էր համայնքներում Բ. դռան հրամանով կատարվող վարչական փոփոխություններին: Կ. Պոլսում, հայտնում էր նա, հաստատվել են եկեղեցական և քաղաքական (քաղաքացիական) ժողովներ, որի հետևանքով պատրիարքին վերապահվել է ընդամենը կրավորական դերակատարություն. <<Զի այժմեան վիճակ կացութեան իմոյ է ներկայ գտանիլ միայն ի յիշեալ ժողովսն եւ գոր ինչ հրամայեն նոքա եւ տնօրինեն ըստ իւրեանց բարեհաճութեան՝ առնել եւ ի գործ դնել եւ գոր արգելու եւ խափան արկանեն, լրութեամբ պատուել եւ յայսմանէ զինչ մնաց մեզ առնել մինչ զկարելոքսն ազգային եկեղեցական օգտի, գոր պահանջէ Ձերդ աստուածապատիւ վեհափառութիւն, մեր անկարանամբ զայս ի բերան առնուլ, թող թէ ի գործ դնել>>¹⁰⁸⁷:

Տասը մարդուց կազմված հոգաբարձուների քանակը Ջմյուռնիայում անփոփոխ մնաց ընդհուպ մինչև 1861 թ.՝ ազգային սահմանադրության կիրառումը¹⁰⁸⁸:

¹⁰⁸⁷ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 137, վավ. 15:

¹⁰⁸⁸ Կարծում ենք, որ Պ. Փափազյանը՝ Ռ. Փափազյանի կենսագիրը և զարմիկը, ապավինել է զուտ իր պատանեկան հիշողությանը, բայց ոչ փաստերին, երբ գրում է, թե Ջմյուռնիայում 1855 թ. <<ըստ նոր կանոնի, փոխանակ ըստ սովո-

Տարեկան հոգաբարձուներ ունեին նաև Զմյուռնիայի թեմական որոշ միավորներ՝ կախված հայ համայնքների թվաքանակից՝ Մանիսայում, Էռդեմիշում և Այդընում: Դրանց գործունեության վերաբերյալ ունենք ընդամենը կցկտուր տեղեկություններ. Կարելի է միայն ասել, որ դրանք գործում էին նույն շրջանակներում, ինչ տեսնում ենք Զմյուռնիայում՝ ազգային եկեղեցու և համայնքի սեփականությունների կառավարումն ու մատակարարումը, դպրոցների նյութական ապահովումը և այլն: 1850 թ. փետրվարի 21-ին Մանիսայի դպրոցների և աղքատանոցի տարեկան վերակացուներն իրենց զմյուռնացի գործընկերների հետ ստորագրել են Ներսես Աշտարակեցուն առաքված լիազորագիրը՝ պաշտպանելու Աբեյյանի կտակով իրենց հանձնարարված ազգային հաստատությունների դատը¹⁰⁸⁹:

2. Դավիթ-Դանիելյան ներհակությունը

Վերը տեսանք, որ թանգիմաթի շրջանում և դրանից դեռ շատ առաջ, կազմակերպական ձևերի որոշակի տարբերությամբ հանդերձ, զմյուռնահայ համայնքի ազգային վարչությունը գլխավորապես կարգավորում էր գույքային-սեփականատիրական խնդիրները, դրամական հատկացումների բնագավառը՝ հիվանդանոցի ու վարժարանների նյութական ապահովման գործառույթները և մինչև XIX դ. 60-ական թթ.՝ իր ավանդական կառույցների միջոցով: Եկեղեցական-համայնքային նյութական միջոցների վերահսկողության և իրացման գործը կատարում էին աշխարհիկ երեսիները կամ <<իշխանները>>՝ որպես կանոն, մեծահարուստ վաճառականներ, ինչպես և առաջնորդը և այլ՝ հանրությանը վստահություն ներշնչող մարդիկ: Սակայն այս, թվում է՝ ժամանակի քննության բովով անցած և հուսալիորեն գործող կարգուկանոնը կարող էր և անխուսափելիորեն շեղվել իր ընթացքից՝ համայնքի գործերում անհատների կամ վերնախավային խմբերի մրցակցության, առաջացած տարաձայնությունների, առաջնորդի և հանրության միջև հայտնված հակասությունների (հիմնականում հարկերի չափերը սահմանելու, ազգային դրամարկդի միջոցները տնօրինելու դեպքերում), և վերջապես

րութեան երկու անձինք հոգաբարձու ընտրուելու, ութ անձինք ընտրուեցան>> (Փափազեան Պ., Կենսագրութիւն Ռուբէն Անդրէաս 3. Փափազեան բազմադիւն վարժապետի, էջ 22):

¹⁰⁸⁹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 152, վավ. 96:

ընչաքաղցության ու սնափառության պոռթկումների պատճառով, որոնցից ապահովագրված չէ և ոչ մի հանրություն: Տարաձայնությունների տեղիք էին տալիս սովորաբար մեծ ծախսեր պահանջող՝ եկեղեցու նորոգման կամ եկեղեցաշինության դեպքերը, այլև հանրային շինությունների կառուցմանն առնչվող հանգանակությունները: Այդպիսիք էին նաև նվիրակական տուրքերի և հարկերի գանձման գործընթացները, երբ նվիրակ-առաջնորդները էջմիածնին հաճոյանալու կամ սեփական նախասիրությունները գերադասելու տենչով գերազանցում էին գանձումների ողջամիտ չափերը և այլն, որոնցից, ի դեպ, նվիրակ-առաջնորդներին քանիցս սթափվելու կոչեր էին անում իրենք՝ էջմիածնի կաթողիկոսները:

1775 թվականից արդեն ունենք եկեղեցու կառուցման առթիվ գմյուռնահայ համայնքում ծայր առած երկպառակությունների օրինակը, երբ բորբոքված կողմերին զգաստացնող կոնդակ ուղղեց Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքը. <<Բայց այն գործ եկեղեցաշինութեան, գրում է նա, ոչ ի գլուխ ելանէ վարկպարագի գործադրութեամբ եւ անխոհեմ արարողութեամբ եւ կողմնական շարժողութեամբ, այլ նախապէս պատուէրս լիցի ձեզ ամենեցուն՝ թէ քահանայիցոյ, թէ իշխանացոյ եւ թէ գլխաւոր անձանցոյ, որք ի միջի ձերումն, զյողն խաղաղութեան ... պարտիք հաստատապէս պահելով միաբանութիւն անել...>>¹⁰⁹⁰:

Նկատի ունենանք, որ 1775 թ. Զմյուռնիայում եկեղեցի չի կառուցվել, ուրեմն պատրիարքը աչքի առաջ կարող էր ունենալ կամ նոր եկեղեցու կառուցումը, կամ էլ թեմի բնակավայրերից մեկում եկեղեցաշինական որևէ ձեռնարկ, որ տևական երկպառակություններ էր առաջացրել համայնքում, հակառակ դեպքում դրան չէր միջամտի պատրիարքը խաղաղության հորդորով:

1790-ականի երկրորդ կեսին գմյուռնահայ համայնքում նոր, ոչ պակաս սուր ընդհարումների տեղիք տվեց Մանիսայի Վերին թաղի Ս. Լուսավորիչ եկեղեցու շինության գործը, որ պետք է իրականացվեր եկեղեցապատկան միջոցներով: Եկեղեցու կառուցման ֆերմանի հատուցումը՝ 3950 դուրուշի չափով, նախապես վճարել էր համայնքի երևելիներից մեկը՝ Մարգար Ապրոյանը, թերևս, այս գումարն ազգային արկղից հետ ստանալու պայմանով: Ազգի ջոջերի մի մասն ընդդիմացել էր այս պարտքը վերադարձնելուն և, ինչպես գրում էր հետագայում Դավիթ

¹⁰⁹⁰ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 77:

կաթողիկոսն իր համախոհներին, ֆերմանի համար Մարգարի տված գումարին նրանք անտեղյակ են եղել: Կնշանակի, ըստ նրա, Մարգարը գործել էր իր սեփական նախաձեռնությամբ և համայնքը կանգնեցրել կատարված փաստի առջև¹⁰⁹¹: Ինչպես երևում է զմյուռնացիներին ուղղված նույն Զաքարիա պատրիարքի կոնդակից (1796, 4 օգոստոսի), Մարգարի և նրա հակառակորդների վեճը լուծելու գործը օսմանյան իշխանությունները հանձնարարել էին Կ. Պոլսի պատրիարքարանին, որտեղ էլ կողմերի ներկայացուցիչների և <<ալթը ջեմաթ>>-ի (վեց թաղ, այդպես էր կոչվում պոլսահայ համայնքը պաշտոնական գրագրություններում) տասնհինգ ամիրաների մասնակցությամբ քննվել էր գործը: Իրավարար այդ ժողովը հաստատել էր Մարգարի ծախսերի հիմնավորվածությունը և չափը, <<վասն այնորիկ ևս վճռեցան բազմութեամբ ի դատաստանի ի յատենի ներկայութեան մերոյ զի եկեղեցին վճարեացէ եւ հատուցէ զնոյն ֆերմանից մասրաֆն (ծախսը-Ա.Խ.) պրն Մարգարին>>¹⁰⁹²:

Ուշագրավն այստեղ այն է, որ պատրիարքը չէր թաքցնում իր և դատարանի անդամների ակնածանքը Ապրոյանների տոհմիկ գերդաստանը ներկայացնող Մարգարի նկատմամբ և սաստում էր նրա հակառակորդ <<մեծամեծ ոմանց եղեալ հատկացեալ անձանց>>, որ հաշտվեն դատարանի վճռին և այլևս չբողոքեն՝ վկայակոչելով սուլթանի և մեծ վեզիրի գթասրտությունը, հակառակ դեպքում նրանք կարող էին խիստ պատիժներ տալ բողոքող կողմին: Պատրիարքը կոչ էր անում հաշվի առնել այն, որ <<լուսահոգի նախնիք սորին (Ապրոյան տոհմը-Ա. Խ.) ի բնէ անտի աշխատաւորք են յոյժ ի վերայ ազգին մերոյ>>¹⁰⁹³: Հարկ է

¹⁰⁹¹ Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ե, մաս երկրորդ, Դաւիթ կաթողիկոս, էջ 393:

¹⁰⁹² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 89: Պահպանվել է պատրիարքի նույն բովանդակությամբ կոնդակը, որտեղ նա զմյուռնացիներին զգուշացնում էր վեճը շարունակելու տխուր հետևանքներից, որոնք կձախողեին առհասարակ եկեղեցու շինության գործը (նույն տեղում, թղթ. 6, վավ. 71):

¹⁰⁹³ Նույն տեղում: Դուկաս կաթողիկոսը խոհեմաբար գերադասում էր հանրային խաղաղությունը, որին ուղղված էին նաև պատրիարք Զաքարիայի ջանքերը, ուստի չեզոքություն պահպանելով հակառակորդ կողմերի նկատմամբ, ողջունեց նրա հաշտարար գործողությունները. <<Եւ թեպէտ ցաւ է մեզ զարհամարհութիւն կրելով տարագրելն... սակայն զի նազելի եղբայրդ (պատրիարքը-Ա. Խ.) ընդ բազմախորհուրդ օրհնեալ իշխանապետացն՝ իրաւասիրաբար քննութիւն առնելով իրաց նոցա զաղմկալիք վեճն հատեալ եք՝ գերծուցանելով յայլ եւ յայլ մեծամեծ վնասուց եւ վերջապէս հաշտութիւն արկեալ ի մէջ խռովելոցն,

նկատել նաև, որ գմյունացիների վեճի ամբողջ ընթացքում Մարգար Ապրոյանին պաշտպանում էր Զմյունիայի առաջնորդ արք. Դանիելը, որի դեմ պետք է տրամադրվեին նույն Ապրոյանի հակառակորդները:

Ինչպես երևում է հետագա իրադարձություններից, Մարգար Ապրոյանի ընդդիմախոսները շարունակել են պայքարը մինչև 1799 թ., երբ Կ. Պոլսում պատրիարքական աթոռն արդեն զբաղեցնում էր Դանիել Սուրմառեցին՝ վերոհիշյալ վեճի ծավալման ժամանակ Զմյունիայի առաջնորդը: Երևում է նաև, որ Մարգարը, իր հերթին, չի բավարարվել հակառակորդների հատուցման չափերից, որովհետև այս անգամ Մանիսայի համայնքից պահանջել է 1000 դուրուշ՝ եկեղեցու կառուցման դիմաց իր ծախսած գումարի դիմաց: Զմյունիայի նոր առաջնորդ արք. Մարտիրոսը, որը 1797 թ. փոխարինել էր Դանիելին, փորձել էր խանգարել այդ հատուցմանը, սակայն ապարդյուն այս վեճը ձգձգվեց մինչև Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Խամսեցու միջամտությունը, որի հրամանով գումարը վերադարձվեց Մարգարին՝ հակառակ առաջնորդի և նրա կողմնակից երևելիների, ինչի մասին տեղյակ էր պահում արք. Մարտիրոսը Դավիթ կաթողիկոսին՝ 1802 թ. դեկտեմբերին¹⁰⁹⁴: Այս արդեն վերաբերում է Դավիթ-Դանիելյան տխրահռչակ հակամարտությանը, որի արձագանքները Զմյունիայում ևս երկար ժամանակ իրենց զգացնել տվեցին: Դավիթ-Դանիելյան ներհակությունը հայ-եկեղեցու նոր շրջանի պատմության ոչ փայլուն էջերից մեկն է, որ ցուցանում է հայ հոգևոր վերնախավի մի մասի ապշեցուցիչ սնափառությունը, պաշտոնամոլությունն ու իշխելու տենչը և դրանք բավարարելուն ուղղված՝ նսեմ գործելակերպով հարուստ զինանոցը: Այդ մի պայքար էր երկու բարձրակարգ եկեղեցականների միջև, որ հիշեցնում էր XVII դ. Կ. Պոլսի պատրիարքական կոիվների տխուր ժամանակաշրջանը, որի ծանր հետևանքները երկար ժամանակ կրեցին և ժողովուրդը, և նրան հովվովդ եկեղեցին: Տարիներ շարունակ ձգձված այս ընդհարման ընթացքում առավել ևս ընդգծվում էին Դավթի բացասական հատկանիշները, արդեն կաթողիկոս ընտրված Դանիելի դեմ ոստնագություններն ու դավերը նրա օրինական իրավունքները ոտնակոխ անելու միջոցով՝ կաթողիկոսական բաղձալի աթոռին տիրելու համար: Հարցի նախապատմությունը, առավել ևս դրա ծալքերի ու հանգամանքների

այնու դիրություն եղել սրտի մերում եւ շնորհակալ եղաք զձեռք>>>-գրում է նա (Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, էջ 744):

¹⁰⁹⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 13, վավ. 264, էջ 3:

մանրամասները վերհանված են սկզբնաղբյուրի արժեք ունեցող՝ Մանվել Կյումուշխանեցի վարդապետի հայտնի շարադրանքում և դիպուկ բնութագրերով առավել քան աչքի ընկնող՝ Մ. Օրմանյանի աշխատության ծավալուն էջերում¹⁰⁹⁵։ 1801-1807 թթ. երկարուձիգ հակամարտությունն ավարտվեց Դավիթ կաթողիկոսի գահագրկմամբ և Դանիելի՝ կաթողիկոսական աթոռին վերահաստատվելու ուշացած, բայց արդարացի ելքով։ Նշված հակամարտության մեջ հասկանալի պատճառներով, սակայն և մեր ուսումնասիրության շրջանակների տրամաբանությամբ, շատ ավելի ուշագրավ է Ձմյուռնիայի թեմի և նրա առաջնորդի ու համայնքի ներգրավվածությունը Դավիթ-Դանիելյան պայքարի ընթացքում։ Հիմնավորապես ճիշտ էր Ա. Այվազյանը, երբ նկատում էր, որ հայաբնակ մյուս քաղաքների համեմատությամբ Ձմյուռնիան շատ ավելի մեծ չափերով էր ընդգրկված այս կաթողիկոսական ներհակության մեջ¹⁰⁹⁶։ Դրա պատճառները նշվեցին վերը, իսկ այստեղ կավելացնենք այն, որ Ձմյուռնիայի և առափնյակի մյուս գաղթօջախները արդեն իսկ բաժանված էին խմբակցությունների՝ Դանիելի առաջնորդության տարիներին դրսևորվելով առավել ընդգծված (եկեղեցու կառուցման, դրան հատկացված գումարների շուրջ տարաձայնություններ) բոլորքումով։ Դավիթ-Դանիելյան ներհակությունը, հետևաբար, պետք է խթաներ այդ գաղթօջախների վերնախավի և բնակչության մյուս հատվածների միջև առկա՝ տեղական բնույթի հակասությունները, երբ կողմերից մեկը անգիջում պայքարում պետք է պաշտպաներ Դանիելին, իսկ մյուսը նրա հակառակորդին։ Ավելին. Ձմյուռնիայի տերունի թեմի առաջնորդական թափուր տեղը զբաղեցնելու և Դավթի կողմնակիցներին այստեղ համախմբելու համար նոր առաջնորդը՝ Մարտիրոսը, պարտական էր նույն Դանիելին, որը 1797 թ. հեռացել էր Ձմյուռնիայից՝ այդպես էլ հաշտության եզրեր չգտնելով իր ընդդիմախոսների հետ։ Հենց Մարտիրոսի թևակցությամբ և հրահանգներով էր, որ 1801-1807 թթ. Ձմյուռնիայի թեմի երեսելիների մի զգալի մասը հարեց Դավթի կողմնակցությանը՝ ընդդեմ Դանիելյանների, որոնց հետ դեռևս 1790-ական թթ. ժառանգած հաշիվներ ուներ։ Մարտիրոսն, ընդամին, իր պաշտոնատեղին էր եկել, շատ հավանական է, էջմիածնի միաբանությունում թեմի

¹⁰⁹⁵ Տես Դիան հայոց պատմության, Գիրք ԺԲ, Մանուկ Կիւմուշխանեցի։ Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 3786-3861։

¹⁰⁹⁶ Այվազեան Ա., Յոնիական հայ գաղութի նահապետներէն, 1900, 25 օգոստոսի/7 սեպտեմբերի։

ճանաչված մարդկանց նկատմամբ արդեն ձևավորված իր նախասիրություններով: Բավականաչափ իրագեկ Կ. վարդ. Շահնագարյանն այս առթիվ նկատում է. <<Սոյն Մարտիրոս արհին եկաց յառաջնորդութեան Իգմիրու և իբրև հակառակորդ Դանիելի՝ Բագմօք զինեցաւ ընդդէմ նորա>>¹⁰⁹⁷:

Իր խառնվածքով և գործելակերպով Մարտիրոս եպ. Բավական հիշեցնում էր իր պաշտպանյալ՝ կաթողիկոսական աթոռին հանդգնությամբ տիրացած Դավիթ Էնեգեթցուն: Իր առաջնորդական առաջին ժամկետի երեք տարիներին նա Զմյուռնիայում և թեմի մյուս բնակավայրերում կարողացավ ստեղծել յուրայինների մի նշանակալի խումբ, որին հենվելով՝ հաջողեց երկրորդ անգամ մնալ իր պաշտոնին: Այս առթիվ Դավիթը 1801 թ. գոհունակությամբ էր վկայակոչում իր և Մարտիրոսի կողմնակից քահանաներին և <<իշխաններին>>, որոնք <<խնդրեալ էին վասն սիրելոյդ կրկին կարգել ի գործս նուիրակութեան և առաջնորդութեան վիճակիդ>>¹⁰⁹⁸:

Մարտիրոսի ազդեցությունը Զմյուռնիայում ավելի ամրապնդվեց Դավիթ կաթողիկոսի կողմնակիցների աջակցությամբ: Նրանք ճանաչված վաճառականներ էին, համայնքում հարգի մարդիկ, որոնց հետ նամակագրական կապեր ուներ Դավիթը և որոնց էր պարտական նաև վերջինս՝ Կ. Պոլսի աշխարհիկ և կղերական վերնախավի մարդկանց աջակցությունը առնվազն Բավարար չափով ստանալու և Դանիելի դեմ մարտնչելու համար: Այդ համակիրներն էին Մոսքոֆ հորջորջված Հովհ. Մավալանյանը, Կ. Չելիկյանը, չթագործարանի տամդաճի (ղրոշմահար) Ստ. Խաչատրյանը, նրանց հետ նաև Բագմաթիվ այլ անձինք: Դավթյան էին նաև Հարությունը դի Մուրատը, Պետրոսը դի Պալին, Կարապետը դի Հարությունը, Պողոսը դի Աղաճանյանը, Գեորգը դի Օհանը՝ համայնքի ճանաչված մարդիկ, և շատ ուրիշներ, մեծ մասամբ <<մահտեսի>> պատվանունով հանդերձ: 1803 թ. մայիսի 5-ին նրանք հավատարմագիր (համախոսական) են հղել Դավիթ կաթողիկոսին՝ ճանաչելով նրա հայրապետական իրավունքները¹⁰⁹⁹: Նրանց դիմակայում էին Մարգար Ապրոյանը, Մելիքբարմյանները՝ իրենց համախոհներով, որոնք սուր հակադրության մեջ էին վերոհիշյալ երևելիների մյուս խմբի հետ՝ դեռևս Մանիսայի

¹⁰⁹⁷ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, էջ 746:

¹⁰⁹⁸ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Զ, էջ 100:

¹⁰⁹⁹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 14, վավ. 56: Տես նաև Դիւան հայոց պատմութեան, Գիրք Զ, էջ 584-586:

եկեղեցու շինության շուրջ պառակտումների ժամանակներից ի վեր, 1790-ական թթ.:

Վտանգ ներշնչող զմյուռնացիներին մեղմացնելու կամ չեզոքացնելու նպատակով Դավիթը շինծու սիրալիրություն էր ցուցաբերում նրանց նկատմամբ, ինչը երևում է Մարգար և Առաքել Ապրոյանների հետ նրա գրագրություններում¹¹⁰⁰: Հարկ եղած դեպքում, սակայն, երբ այլևս կարիք չկար խորամանկ խուսանավումների, Դավիթն անցնում էր հարձակման՝ հակառակորդին ջլատելու բացահայտ դիտավորությամբ. 1803 թ. նա զմյուռնացիներին գրգռում էր նույն Մարգար Ապրոյանի դեմ՝ հիշեցնելով նրանց՝ նախընթաց էջերից մեզ ծանոթ <<եկեղեցու խարձագնացութեան>> աղմկալի միջադեպը: Զմյուռնացիներին նա հորդորում էր պահանջել Ապրոյանից՝ վերադարձնելու, իբր, նրա խլած համայնապատկան գումարը¹¹⁰¹: Այս առթիվ Մարտիրոսը 1803 թ. մարտի 13-ին տեղեկացնում էր իր դաշնակից և հովանավոր Դավիթ կաթողիկոսին, որ Մարգար Ապրոյանը ցայժմ էջմիածին չի տվել իր եղբոր նվիրաբերած գումարը, ինչպես և եկեղեցու կառուցման ֆերմանի դիմաց բռնությամբ վերցրած փողերը¹¹⁰²: Մարտիրոսն ավելի անհանդուրժող էր դարձել թեմում գտնվող իր հակառակորդների հանդեպ՝ այն ժամանակից, երբ Դավիթը իրեն կաթողիկոս էր հռչակել, իսկ պոլսահայ համայնքում, որ տարուբերվում էր Դավիթ-Դանիելյան երկպառակությունների մեջ, հաղթանակել էր յուրային՝ Հովհաննես պատրիարքը (Գրիգոր Խամսեցուց հետո): Բնականաբար, պատրիարքարանը անտարբեր դիտող չէր կարող մնալ այս իրադարձությունների ընթացքում, երբ Կ. Պոլսի պատրիարքները ընտրվում և պաշտոնանկ էին լինում այս պայքարի տրամաբանությամբ, նայած թե ամիրանների և բարձրակարգ կղերի խմբակցություններից որ կողմի օգտին էր թեքվում կշեռքի նժարը: Իսկ այս վերջինը շարժման մեջ էր դրվում կաշառքների և շահամետ դիտավորությունների համառ ազդեցությամբ: Իսկ այժմ, Դավիթ-Դանիելյան հակամարտության ընթացքում, նախ Հովհաննես պատրիարքն իր տեղը զիջեց Գր. Խամսեցուն (1801, հոկտեմբեր), ապա վեր-

¹¹⁰⁰ Տես Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, էջ 187, 234-238, Գիրք Զ, էջ 282-285:

¹¹⁰¹ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Է, մասն երկրորդ, էջ 394:

¹¹⁰² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 13, վավ. 262:

ջինս, մեկ տարի անց՝ դարձյալ Հովհաննեսին¹¹⁰³։ Այս փոխարինումների տրամաբանությունն այն էր, որ Հովհաննես պատրիարքը գլխավորում էր Դավթյանների, իսկ Խամսեցին՝ Դանիելյանների խմբակցությունը։ Այն, որ այդուհետև, մինչև այս հակամարտության վախճանը (1807) և դրանից տարիներ հետո ևս Հովհաննեսը մնաց պատրիարքական գահին, վկայում է, որ Կ. Պոլսում հաղթանակել էր Դավթյան խմբակցությունը՝ օսմանյան կառավարության թելադրանքով՝ ի հակակշիռ ռուսական իշխանությունների քաղաքական համակրանքների։ Այստեղ նկատենք, որ Դավթի հաջողությունները իր հակառակորդի նկատմամբ (այդ թվում նաև Մարտիրոսինը՝ Ջմյունիայում) պայմանավորված էին նաև պատրիարք Հովհաննեսի և նրա յուրային ամիրաների աջակցությամբ։ Այս ամիրաներն էին, որ 1803 թ. ապրիլ-մայիսին դիմել էին ռուսաց դեսպան Վ. Տոմարովին (հայկական աղբյուրներում՝ Թամարով, Թամար)՝ Դավթի եպ. ընտրությունը օրինավոր ճանաչելու հորդորով, ինչպես նաև համախոսականով՝ Թիֆլիսում գտնվող ռուսաց գորահրամանատարին՝ ունկնդիր չլինել Դանիելի օգտին աշխատող Եփրեմ եպ. և այլոց¹¹⁰⁴։

Ջմյունիայի համայնքում ևս ազգային վարչությանը տիրում էին մերթ Դանիելյանները, մերթ Դավթյանները, կախված այն բանից, թե էջմիածնում և Կ. Պոլսի պատրիարքարանում կողմերից որ մեկն էր առավելություն ստանում։ Պրուսայի առաջնորդ Պոդոս վարդ. ուղղած նամակում (1802, հուլիս) Դավթի զորում էր, որ Դանիելը հրովարտակ է հանել օսմանյան արքունիքից և առաքել Ջմյունիա, <<զի կալեալ զառաջնորդ նորին Մարտիրոս արքեպիսկոպոսն ... և ի վերայ մերկ երիվարի նստացեալ, իբրև մահապարտ շղթայեալ ոտիւք բերցեն և հասուցանեն առ իւր՝ համաբարոյ ամբարիշտ Դանիէլն որոյ աղագաւ և եղեալ է մեծ վնաս և գայթակղութիւն և յուսահատութիւնն իտճալի իզմիռնացոյն...>>¹¹⁰⁵։

Իրոք, թունդ Դանիելյան պատրիարք Գր. Խամսեցին ևս, 1802 թ. ապրիլին դիմել էր ռուսաց դիվանագիտական ծառայության մեջ գտնվող ումն Ադաթոնի՝ հայտնելով, որ ժողովուրդն ամենուրեք ընդունում է կա-

¹¹⁰³ Տես Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 3814, 3832։

¹¹⁰⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 13, վավ. 263։

¹¹⁰⁵ Դիւան հայոց պատմութեան, Գիրք Զ, մասն առաջին, էջ 543։ Մարտիրոսին փրկեցին զմյունացի Դավթյանները, և այս գործում առանձնապէս ջանքեր գործադրած Մոսկոֆ Հովհաննէս Սավալանյանը, որի շնորհիվ առաջնորդը կարողացել էր ազատվել, ինչպէս Դավթին է գրում 1802 թ. օգոստոսին՝ <<ի բազմահնար մեքենայից չարի>> (նույն տեղում, էջ 568)։

թողիկոս Դանիելին, բայց Ջմյունիայի առաջնորդ Մարտիրոսը արգելում է նրա անունը հնչեցնել տալ եկեղեցում, <<ուստի խորհրդով իշխանաց մերոց պատշաճ համարեցաւ թագաւորական հրամանաւ առաքել զնա ի սուրբ Աթոռն յորմէ եկեալն էր>>¹¹⁰⁶:

Հավանաբար, Դավիթը թանձրացնում էր Մարտիրոսին պատրիարք Խամսեցու կողմից հալածելու վերաբերյալ լուրերը՝ սրտաճմլիկ մանրամասներով, սակայն այն, որ իշխանությունները փորձել էին ի կատար ածել պատրիարքի ցանկությունը, վկայում է Տ. Պալյանի մեջբերած հետևյալ վավերագիրը. <<1802 մարտի 26 ի Ջմիւռնիոյ Առաջնորդ Մարտիրոս արհի եպիսկոպոսի աքսորման հրովարտակ եկաւ չափուշով և սարկաւագ մը ի միասին Առաքել անվամբ, որ յառաջագոյն 2 օր յառաջ Առաջնորդ հայրն մեր զօղեալ էր ի տան Սաւալանեան Օհաննէս աղայի ռուսեցոյ (ակնարկում է Սավալանյանի՝ Մոսքոֆ մականունը-Ա. Խ.), որ համայն ընչիւքն, եկեալ ոչ գտին և մնաց ի տան յիշեալ աղային որ ի Պիոնովայ (Բուռնովա՝ Ջմյունիայի արվարձանը-Ա. Խ.) մինչ ի նոյեմբեր 8: Ի տօնի Ս. Հրեշտակացն եմուտ քաղաքս (Մարտիրոսը-Ա. Խ.) մեծաւ հանդիսի>>¹¹⁰⁷:

Հաջողությամբ խուսափելով աքսորից և վերստին սատարելով Դավթին, առաջնորդն այս ուղղությամբ ակտիվացրեց իր գործունեությունը համայնքում՝ ընդհուպ մինչև Դավթի հակառակորդ Դանիելի վերջնական հաղթանակը՝ 1807 թ.: Այս թվականի օգոստոսին և սեպտեմբերին Ներսես Աշտարակեցուն (ի սկզբանե Դանիելի կուսակիցն ու համախոհը, որը մեծապես նպաստել էր նրա հաջողություններին, հատկապես ռուսաց պաշտոնական բարձր շրջաններում) գրած նամակում զմյուռնացի Մելիքզարմյանները գանգատվում էին այն հալածանքներից, որ իր հերթին սկսել էր Մարտիրոսը զմյուռնացի Դանիելյանների դեմ: Առաջնորդը եկեղեցու բեմից շանթ ու որոտ էր տեղում հակառակորդ կողմնակցությանը հարող մարդկանց գլխին, <<մեծաւ կատաղանօք... իսպառ ջնջել և բառնալ կամենայր զճշմարտասէրս>>¹¹⁰⁸: Մելիքզարմյանների մեկ այլ նամակից պարզվում է, որ համայնքի ազգային պաշտոնները գտնվելիս են եղել Դավթյանների ձեռքին, որ նրանք ի չարն են գործադրել ընդդեմ հակառակորդների: Նրանք խնդրում էին Ներսես Աշ-

¹¹⁰⁶ Դիւան հայոց պատմութեան, Գիթք Ե, Դանիէ կաթողիկոս, էջ 195:

¹¹⁰⁷ Պալեան Տ., նշվ. աշխ., 1921, թիւ 2, էջ 60:

¹¹⁰⁸ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 18, վավ. 108:

տարակեցու օգնությունը՝ <<սրբել զատեանն (համայնքի կառույցները- Ա.Խ.) որ կռուոյ է բազում ամաց հետէ և նենգաբանութեան տեղի>>¹¹⁰⁹:

Դավիթ-Դանիելյան հակամարտությունը շատ ավելի սեղմ ժամկետներում կավարտվեր, եթե դուրս չգար զուտ հայկական շրջանակներից և չբորբոքվեր արդեն քաղաքական կերպարանք ստացած, ռուս-պարսկական և այս գույզին առնչվող՝ օսմանյան շահախնդրությունների անխուսափելի բախումների թելադրանքով: Հատկապես ակտիվ էին ռուսական քաղաքական ու դիվանագիտական շրջանները, որոնք Անդրկովկասում ամրապնդվելու և ծավալվելու ռազմավարությունից ելնելով, ձգտում էին ընդլայնել իրենց ազդեցությունը Էջմածնի կաթողիկոսության վրա՝ աչքի առջև ունենալով ապագա կաթողիկոսի քաղաքական համակրանքները դեպի Ռուսաստանը և նրա հուսալիությունը այդ համակրանքներում: Հայտնի են ռուս դիվանագետ Վ. Տոմարովի և սրա մերձավոր Աղայեկովի եռանդուն գործողությունները՝ հօգուտ Դավթի, որ քիչ նշանակություն չունեցավ վերջինիս՝ կաթողիկոսական աթոռին հայտնվելու համար (1801, ապրիլ)՝ այնուհետև, նույն տարվա սեպտեմբերից Դանիելին հովանավորելը, ապա դրան պաշտոնական տեսք տալը, երբ ռուսական կառավարությունը կտրուկ փոխեց իր վերաբերմունքը՝ ի նպաստ նրա¹¹¹⁰: Անշուշտ, այստեղ նշանակություն ունեցան և Դանիել, և Դավիթ կաթողիկոսների անձնական որակները և նրանց անունից գործող աշխարհիկ ու հոգևորական գործիչների նախաձեռնությունները: Սակայն դրանք չէին, որ պետք է ապահովեին Դանիելի հաղթանակն այս տևական հակամարտության մեջ (1807), այլ ռուսական իշխանությունների վերջնական խոսքը և պարսից պետության համակերպումն այդ հանգուցալուծմանը: Երկրորդական նշանակություն ունեցավ անգամ Դանիելի հակառակորդների գերադաս դիրքն այս ընդհարումների այն փուլում, երբ ի դեմս Կ. Պոլսի Հովհաննես պատրիարքի, նրանք ոգի ի բոլին գործում էին պատրիարքարանում՝ ամրապնդելու իրեն կաթողիկոս հռչակած Դավթի ինքնագլխությունը (1802 թ. դեկտեմբերի հանրագիրը, որով Կ. Պոլսի հայ համայնքը ճանաչում էր վերջինիս կաթողիկոսությունը)¹¹¹¹:

¹¹⁰⁹ Նույն տեղում, թղթ. 18, վավ. 133:

¹¹¹⁰ Ալեքսանդր I-ը 1802 թ. սեպտեմբերի 26-ի գրությամբ արդեն կարգադրում էր Տոմարովին՝ փոխել նախկին ուղղությունը և Դավթի պաշտպանությունը դադարեցնել (տես Օրմանեան Մ., նշվ. աշխ., հ. Բ, էջ 3810):

¹¹¹¹ Նույն տեղում, էջ 3833:

Դավիթ-Դանիելյան հակամարտությունն ընդամենը կարող էր օգտագործվել Ռուսաստանի և Պարսկաստանի կողմից և ոչ ավելին. ոչ մեկը, և ոչ էլ մյուսը շահագրգռված չէին այդ հակամարտության շարունակականության մեջ և Էջմիածնի կաթողիկոսի ընտրությունն այս պարագայում կարող էր ունենալ ընդամենը արդեն խոցված թիրախի նշանակություն: Մի հայտնի չափով հակամարտության բորբոքման գործն ինքնին կատարում էին իրենք՝ նշված կաթողիկոսների կողմնակիցները և Դանիելյան դատի պաշտպան Էջմիածնի միաբանությունը, հակառակ կողմերին սատարող՝ Կ. Պոլսի Հովհաննես և Գրիգոր պատրիարքները, իրենց ամիրայական խմբակցություններով ու նրանց նախապատվությունների տրամաբանությամբ:

Զմյուռնահայ համայնքի երևելիները ևս ընդգրկված էին Դավիթ-Դանիելյան հակամարտության մեջ, կապող օղակ լինելով մի կողմից Էջմիածնի և եվրոպական շուկաներում գործող հայ դրամատերերի, և մյուս կողմից՝ այս վերջինների ու Կ. Պոլսի աշխարհիկ ու եկեղեցական վերնախավերի միջև, երբ զմյուռնահայ համայնքը չէր կարող նշանակալիություն չունենալ այս տևական հակամարտություն ընթացքում: Այսուհանդերձ, Զմյուռնիայում, տեղական և թող որ ավելի միջնորդավորված նշանակությամբ, այդ վեճը բորբոքվում էր առաջնորդ Մարտիրոսի և նրա հակառակորդ աշխարհիկ երևելիների միջև՝ Էջմիածնի և Կ. Պոլսի պատրիարքարանի թելադրանքով: Այդ ներհակությունը բացասական նշանակություն ունեցավ Էգեյանի հայ համայնքների համար՝ ավելորդ պառակտումներ ու հուզումներ պարտադրելով նրանց, անպտուղ և անհեռանկար մի հակադրություն, որից չշահեց կողմերից և ոչ մեկը. թերևս, բացառությամբ արք. Մարտիրոսի, որը հաջողությամբ դուրս պրծավ այդ պայքարի սահանքներից: Նա պահպանեց իր պաշտոնը Դանիելի՝ արդեն չվիճարկվող կաթողիկոսության (1807-1808) պայմաններում՝ վերջինիս անհիշաչարության կամ նախկին Դավթյանների Էջմիածնում և Կ. Պոլսում չգրգեղու խոհեմ վարքագծի շնորհիվ: Փաստն այն է, որ Մարտիրոս արք. Զմյուռնիայի թեմի ամենից երկար պաշտոնավարած առաջնորդներից մեկն է, որը հարատևեց նաև Եփրեմ կաթողիկոսի (կաթողիկոս 1809-ից) ժամանակ՝ Էջմիածին վերադառնալով ոչ ուշ, քան 1816 թ. և իր տեղը զիջելով եպ. Փիլիպոսին:

ԳԼՈՒԽ 5

ՄՇԱԿՈՒՅԹԸ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

1. Գրչությունը

Զմյուռնիան և Էգեյանի մյուս գաղթօջախները հայտնի են որպես հայկական ուշ միջնադարի գրչության կենտրոններից մեկը (XVII-XVIII դդ.): XVII դ. առաջ ձեռագրերի գոյության մասին կարելի է ընդամենը ենթադրություններ անել՝ կապված այդ տարածաշրջանում դեռևս VI-XI դդ. հայտնի հայկական հանրությունների գոյության հետ, բայց ոչ ավելին: Մեզ հասած կամ առայժմ հայտնի ամենահին ձեռագիր հիշատակարանը վերաբերում է 1622 թվականին. այն Եփեսոսում (Զմյուռնիային մերձ, հետագայի Այասլուքը) գրչագրված Ավետարան է. <<Արդ գրեցաւ Սբ Աւետարանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի թուականիս Հայոց ՌՀԱ (1622) ի քաղաքն Եփեսոս ընդ հովանեաւ Ս. Եօթն Մանկանցն որ ի Յողթոս լեառն կատարեցան ձեռամբ Աւետիսին ի դառն եւ ի նեղ ժամանակին>>¹¹¹²:

Գրչության այլ արգասիքներ Եփեսոսի այս եկեղեցուց՝ չկան, այն մնում է միակը իր տեսակի և ծագման մեջ՝ պարունակելով այլ արժեքավոր տեղեկություններ, որոնց նշանակությունն ավելի առարկայական կդառնա հետազոտողների ի հայտ բերելիք նոր փաստերի համակցության մեջ: Այստեղ միայն նշենք, որ Ողթոս լեռան ուխտատեղին ավանդաբար եղել է Էգեյանի շրջանի սրբագործված վայրերից մեկը՝ և հայերի, և հույների ու այլ կրոններ դավանողների համար:

Էգեյանի առափնյակին առնչվող ձեռագրերը մեզ հետաքրքրում են երկու դիտանկյուններից, որոնք բխում են այս ուսումնասիրության հետամտած խնդիրներից՝ գաղթօջախները, իբրև գրչության վայրեր, և երկրորդ ու դրա հետ միասին՝ այլ վայրերում գրված ձեռագրերում առկա հիշատակարանները՝ այդ գաղթօջախներին վերաբերող լրատվությամբ:

Առափնյակում գրչագրված առկա ձեռագրերն ունեն շուրջ երկդարյա պատմություն՝ սկիզբ են առնում 1622 թ. ու շարունակվում ընդհուպ մինչև XIX դ. 20-ական թթ.՝ արդեն վաղուց ի վեր, հատկապես XVII դ.

¹¹¹² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, հ. Բ, էջ 71:

երկրորդ կեսից իր կենսունակությունն ու արդիականությունն ապացուցած հայկական գրատպության կողքին: Այս զարմանալի համակեցությունը՝ 1512 թ. սկսած մեր գրատպության առջև ընկրկելու հարկադրված գրչության համառությունը, հավանաբար, կարելի է բացատրել տպագիր գրքի արտադրանքի սահմանափակ ծավալներով կամ այլ կերպ ասած՝ պահանջարկի նկամամբ այդ ծավալների ոչ բավարար չափերով: Զուտ բովանդակային կողմով ևս XVII-XVIII դդ. նշված խզումը ավելի էր խորանում կրոնական և աշխարհիկ բնույթի տպագիր գրականության աշխարհագրական տարածման սահմանափակությամբ, սրա հետ կապված՝ հասարակական ոչ սովոր շերտերի, ընդհուպ մինչև անհատական նախասիրությունների պահանջարկով: Պետք է հաշվի առնել, այնուհետև, խնդրի ավանդությանն ու հոգեբանական կողմը՝ գրչագրությունը գրատպության առկայության պայմաններում հանրության ունևոր հատվածների մեջ շարունակում էր համարվել անհատականացված և պատվիրատուի համար պատվաբեր մի գործ, որն իր եզակիությամբ շահեկանորեն տարբերվում էր տարեցտարի բազմաքանակ և դրա համեմատ՝ մատչելի դարձող տպագրական արդյունքներից: Հանրության դրամատիրական հատվածները (վաճառականություն, եկեղեցական վերնախավ) ի դեմս գրչագրողների, տեսնում էին իրենց սեփական խղճի և կամքի թելադրանքն իրացնողների, որին անհաղորդ էր մնում կամ իր սեփական առաջարկն էր հակադրում առհասարակ ընթերցողին հասցեագրված գրատպությունը: Այս վերջինն իր հերթին, իր կենսունակությունը պահպանում էր հանրության տվյալ դասերի սահմաններում, իսկ տպագիր գրքի պակասը դառնում էր առավել ակնառու:

Զմյուռնիայում հայերեն գրատպությունը սկիզբ է առնում դեռևս 1759 թ. և գործելով մի կարճ ժամանակ, տեղի գաղթօջախի՝ եվրոպական մշակույթի հետ ունեցած մերձավոր առնչությունների պայմաններում և բուն իսկ Հոլանդիայում ծավալված ազգային գրատպության ընթացքին իրազեկության շնորհիվ: Այն շարունակվեց միայն ավելի քան յոթ և կես տասնամյակ անց՝ ամերիկյան Մարդասիրական ընկերության տպարանի գործարկումով: Էգեյանի առափնյակում տպագրական գործի այս հապաղումը, կարելի է կարծել, մենաշնորհի դիրք էր ապահովում Զմյուռնիայի գրչության այդ կենտրոնի երկարակեցության համար: Եվ այս տեսակետից այստեղ գրչագրված գործերը (ձեռագիր մատյաններ, հիշատակարաններ) ձեռք են բերում հոգևոր-պատմական անփոխարին-

նելի արժեք, որի նշանակությունը գերաճում է իրեն ծնունդ տված գաղթօջախի սահմաններից՝ ներկայանալով իբրև համագգային երևույթ:

Զմյուռնիայում և կից բնակավայրերում գրչագրված մատյանները հիմնականում նվիրված են եղել տեղի եկեղեցիներին: Դրանք գրվել են Եփեսոսում, Զմյուռնիայում, Մանիսայում, Այդընում, Էդեմիշում, Բերգամայում և Թուրգուքում: Անշուշտ, ձեռագրական այս օջախներում և հատկապես Զմյուռնիայում կատարվել են ձեռագրերի բազմաթիվ պատվերներ, սակայն դրանց ճակատագիրը մնում է անհայտ՝ լեցուն դրամատիկ իրադարձություններով, և այսօր, եթե մենք բավական հստակ պատկերացումներ ունենք այդ ձեռագրերի և դրանց հիշատակարանների մասին, պարտական ենք մեր երախտավորներին, որոնց մատենագիտական ջանքերի շնորհիվ վերարտադրվել են դրանց բնագրային առանձնահատկություններն ու հոգևոր-մշակութային նշանակությունը՝ փրկվելով մոռացությունից:

Բուն Զմյուռնիային առնչվող մեզ հայտնի ամենահին հիշատակարանը (Ճառքնոտիք) գրվել է 1625 թ., Կոստանդնուպոլսում՝ Ղալաթիայում և նվիրվել Ս. Ստեփանոս եկեղեցուն, խոջա Ավետիքի կողմից¹¹¹³: Նույն այդ եկեղեցու անվան մի մասը կազմող՝ Ս. Բարդուղիմեոս եկեղեցուն է նվիրված Զենապ Չելեպու գնած Ավետարանը, որի հիշատակարանը թվագրված է 1628 թ.¹¹¹⁴: Հիշատակարանը գրել է Եղիա սարկավագը, որից, սակայն, չի երևում, թե ձեռագիրը որտեղ է գրվել: Շատ ուշագրավ է 1635 թ. գրչագրված Բժշկարանը (Բժշկական հեքիմարան)՝ կատարված Սարգիս երեցի՝ նշանավոր գրչի և ակնագործի ձեռքով և իր իսկ հիշատակարանով¹¹¹⁵, որ եզակի և հարուստ տեղեկատվություն է պարունակում Էգեյանի տարածքի տերունի թեմի, այդ թեմում Այդընի (Կյուզելիսար) վարչական դիրքի և այլնի մասին: Ուշադրություն է գրավում նաև այն, որ այս բժշկարանի, ինչպես և վերոհիշյալ՝ 1625 թ. գրված Ճառքնոտիքի պատվիրատուն եղել է նույն խոջա Ավետիքը՝ ուսումնասեր մի վաճառական, որի կրկնակի ներկայությունն այդ ձեռագրերում վկայում է հայ դրամատիքական կապիտալի նյութական ու մշակութային նշանակալիության մասին: Եվ վերջապես, Սարգիս երեցի ընդօրինակած հեքիմարանը մյուս ձեռագրերից առանձնանում է մեկ հանգամանքով ևս. այն բուն Զմյուռնիայում գրված առաջին ձեռագիրն

¹¹¹³ Նույն տեղում, էջ 187:

¹¹¹⁴ Նույն տեղում, էջ 314:

¹¹¹⁵ Նույն տեղում, էջ 19-20:

է, որով տարածաշրջանում փաստորեն սկիզբ է դրվում (գոնե դատելով առ այսօր հայտնի փաստական նյութից) այդ գաղթօջախում գրչության գործին:

XVII դ. հաջորդ տասնամյակներին Ձմյուռնիայում ընդօրինակվել է ամենատարբեր բնույթի կրոնական գրականություն՝ Ավետարան, Մատ-
մոսարան, Մասունք Աստվածաշնչի, Յայսմավուրք, մեկնություններ, ճաշոց և այլն: Ոչ քիչ դեպքերում արձանագրվել են նաև գրիչների ու հի-
շատակագրողների անունները՝ իրենց արժեքավոր լրատվությամբ ու
սյուժետային նկարագրություններով, որոնք հաճախ բացառիկ տվյալ-
ներ են տրամադրում հետազոտողներին: Ձեռագրերի մի խումբ մեզ
ներկայանում է սոսկ նվիրատվության մասին հիշատակարաններով,
որոնք, սակայն, առնչվում են ուղղակիորեն կամ միջնորդավորված,
բնաշխարհից Էգեյանի շրջաններ տանող գաղթերի, Ձմյուռնիայի թեմի
առաջնորդների, գաղթօջախների իրականության այս կամ այն կողմին:
Նույնը կարելի է տեսնել Մանիսայի, Էոդեմիշի, Բերգամայի և այլ բնա-
կավայրերի ձեռագրերում: Ընդօրինակողները կրթված մարդիկ են՝ քա-
հանաներ, դպիրներ, աբեղաներ, վարդապետներ և այլն, բայց պակաս
կարևոր չէ այն, որ նրանց մի նշանակալի մասը արհեստավարժ մաս-
նագետներ են, որոնց գործունեությունը հուշում է, որ XVII դ. այս տա-
րածաշրջանում զարգանում էր գրչության մշակույթը, որ հիմք և խթան
դարձավ հետագա դարերում գմյուռնահայ մշակույթի յուրահատուկ
դրսևորումների համար:

XVII դ. այս գրչության առաջատար կենտրոնին՝ Ձմյուռնիային զիջե-
լով հանդերձ, տեսանք, որ ձեռագրական գնահատելի արդյունքներ են
տվել նաև Էգեյանի մյուս գաղթօջախները: Ձմյուռնիայում և շրջակա
քաղաքներում գործում էին նաև գաղթական կամ այցելու կրթված եկե-
ղեցականներ: Բավական է հիշել Սիմեոն Լեհացուն, ով 1610-ական թթ.
Ձմյուռնիայում և այլուր զբաղվում էր ձեռագրերի բավական եկամտա-
բեր ընդօրինակությամբ: Կարելի է հիշել Վարդան երեցին՝ <<երկրես
յԱրրադու ի գիւղոյքաղաքէն Կարբու>>, ով <<Հարցմունք գրոց>> է ըն-
դօրինակել Թուրգութում (1705) և մեկ այլ ձեռագիր՝ Բերգամայում
(1711)¹¹¹⁶: Բերգամայում նրանից շուրջ քառորդ դար առաջ գրչագրությ-
ամբ էր զբաղվում մեկ այլ գաղթական, Գրիգոր երեցը՝ Նախիջևանի
Գաղ գյուղից¹¹¹⁷: Մեզ հասած ձեռագրերի մեջ իր հետքն է թողել ար-

¹¹¹⁶ ՄՄ, ձեռ. 805, էջ 45 բ, 91 բ, ձեռ. 2129, էջ 51ա:

¹¹¹⁷ Նույն տեղում, ձեռ. 4669, էջ 211բ:

մատներով էջմիածնեցի <<ապիմաստ դպիր>> Հարությունը՝ Զմյուռնիայում իր <<զծագրած>> ձեռագրերով (1742 և 1751 թթ.)¹¹¹⁸: Զմյուռնիայի՝ Էջմիածնի տերունի թեմ լինելու հանգամանքով էր, ի դեպ, պայմանավորված նաև Էջմիածնի դպիրների մասնակցությունը տարածաշրջանում գրչության գործի ծավալմանը: Էջմիածնից էր նաև 1750-1760-ական թթ. այստեղ գրչության արվեստով զբաղվող Սողոմոն աբեղան: Զմյուռնիայի առաջնորդ Աբրահամ Աստապատցու պատվերով նա <<կաթողիկեայ>> մի բնագրից ընդօրինակել է հանձնարարված պատվերը (1763)¹¹¹⁹: 1768 թ. Սողոմոն աբեղան, արդեն Ղուկաս Կարնեցու առաջնորդության ժամանակ, ընդօրինակել է ևս մեկ ձեռագիր¹¹²⁰:

Ձեռագրերի ընդօրինակման գործում իր վաստակն է ներդրել Զմյուռնիայում լուսավորական բեղուն գործունեություն ծավալած Մեսրոպ Գանձակեցի քահանան, ով այս ասպարեզում ըստ ամենայնի սատարում էր առաջնորդ Աբրահամ Աստապատցուն: Վերջինիս պատվերով 1758 թ. նա ձեռագրել է <<Մեկնութիւն Եօթեանց թղթոցն կաթողիկէից>> գործը¹¹²¹, իսկ 1760 թ. Երուսաղեմի հրավիրակ Պողոս վարդապետի (հետագայում՝ Երուսաղեմի պատրիարք) պատվերով՝ <<Լուծմունք Ս. գրոց Գրիգոր Աստուածաբանի եւ Մեկնութիւն Դանիէլ մարգարէի>> մատյանը¹¹²²:

Էգեյանի գաղթօջախներում XVIII դ. գրչագրությամբ զբաղվել են նաև կաթողիկ հայերը: 1738 թ. Զմյուռնիայում ընդօրինակվել է <<Վիճաբանութիւն աստուածաբանութեան>> վերնագրով ձեռագիրը՝ ըստ լատիներենից հայերենի թարգմանված օրինակի՝ <<ի լատիներէն ի հայ բարբառ թարգմանեցեալ է Թումաս վարդայպետէ ազնիւ գուղայքաղաքէն Ճահուկեցոյ ի սրբազան կարգէն քարոզողաց>>¹¹²³: Իր տեղում մենք նշել ենք, որ այս թարգմանությունը կարող էր կատարվել Նախիջևանի կաթողիկ հայերի առաջնորդ, դոմինիկյան հայր Թովմաս Իսավերդենցի ձեռքով: Աչքի է զարնում այն, որ Նախիջևանից Էգեյանի հայաբնակ

¹¹¹⁸ Նույն տեղում, ձեռ. 9695, էջ 39բ, ձեռ. 1709, էջ 108 բ:

¹¹¹⁹ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, էջ 569:

¹¹²⁰ ՄՄ, ձեռ. 407, էջ 3բ:

¹¹²¹ Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, էջ 561-562:

¹¹²² Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի, հ. 1, էջ 288:

¹¹²³ ՄՄ, ձեռ. 842, էջ 146:

վայրեր (Զմյոտնիա, Այդըն և այլն) գաղթելուց առաջ և ոչ միայն հենց 1738 թ. հայ կաթողիկոսները Զմյոտնիայում կապեր ունեին այստեղ հաստատված իրենց դավանակիցների հետ: Հովհան Քոնեցու <<Գիրք ի վերայ երկուց բնութեանց>> աշխատության ընդօրինակումը նույն այդ թվականին գրիչ Հովհ. Ջահկեցու կողմից¹¹²⁴, նույնպես վկայում է նշված իրողությունը: Կարելի է կարծել, որ հայ կաթողիկոսների պատվերով է ընդօրինակվել Ստեփանոս Լեհացու (Իլովացու) <<Հարանց վարք (Ֆռանգաց)>> գործը (1700): Այստեղ ուշագրավ է գրչի հիշատակարանի մի վերապահումը՝ այն, որ գիրքը <<Թարգմանեալ եղև ի լատին բարբառոյ հայ բարբառ ձեռամբ Ստեփաննոս վարդապետի Իլովացու, որ է վերակացու եւ գանձապետ ի սբ. Կաթողիկոսարանս սբ. Էջմիածնի: Բայց գրեալ եղև սա ի Զմիւռնի քաղաքի>>¹¹²⁵:

XVIII դ. գաղթօջախներում գրչագրված գործերում, որչափ էլ դրանք հարուստ և բազմազան լինեն, ազգային մատենագրության ընդօրինակություններ քիչ են պատահում, եղածներն էլ մտնում են բացառության կարգի մեջ: Հավանաբար այստեղ զգացնել է տվել կրոնական աստվածաբանական գրականության պահանջարկի գերազանցությունը աշխարհիկ իմացության նկատմամբ¹¹²⁶: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ ձեռագրերի մի զգալի մասը պատվիրում էին եկեղեցական վերնախավի մարդիկ՝ առաջնորդները, նվիրակները, իսկ շատ ավելի հաճախ՝ եկեղեցիներին նվիրատվություն անելու նպատակով, պահպանողական մտայնության տեր մեծահարուստ խոջաներն ու արհեստավետերը: Դպրոցական գործի և դպրոցի սկզբնավորումը Էգեյանի գաղթօջախներում, այսուհանդերձ, XVIII դ. երկրորդ կեսին առաջ էր քաշելու իր պահանջմունքները, որ դանդաղորեն, բայց և անկասելի պետք է ի հայտ գար տեղական գրչության բովանդակության մեջ: Այս տեսակետից հատկանշական է, որ 1778-1780 թթ. Զմյոտնիայում գրչագրվեցին Կիրակոս Գանձակեցու <<Պատմութիւնը>> և Թովմա Մեծոփեցու <<Պատմութիւն Լենկթէրոյ>> երկերը՝ ոչ պակաս հատկանշական հիշատակարանով. <<Եւ գծագրեալ ի ՌՄԻԷ թուականէս մինչ ի ՌՄԻԹ թուիս ընդ

¹¹²⁴ Նույն տեղում, էջ 142ա, 146ա:

¹¹²⁵ Նույն տեղում, էջ 8բ:

¹¹²⁶ Զմյոտնիայում, ինչպես և Կ.Պոլսում, կրոնադավանաբանական բովանդակության գործերը հիմնականում թարգմանվել են իտալերենից և լատիներենից (տես Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, էջ 73):

հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի շնորհալից եկեղեցւոյն յԲզմիռի քաղաքի ի պետս ուսումնասիրաց»¹¹²⁷: Ընդօրինակել է Եղիա քահանան:

Կարելի է մակարերել, որ նշված երկերի ընդօրինակումն ուներ ավելի քան գործնական և ուսումնական նշանակություն, որի իրականացումն անմիջականորեն կապվում է Զմյուռնիայում ազգային վարժարանի հիմնադրման հետ:

XVIII դ. աշխարհիկ թեմատիկան դրանից բավական առաջ Զմյուռնիայում իրեն զգացնել էր տվել նույնպես աշխարհիկ անձի՝ ուսումնասեր Պետրոս Ապրոյանի թարգմանական ասպարեզ մտնելու հանգամանքով: Նկատի ունենք նրա թարգմանած ժողովածուն՝ իր իսկ բացատրությամբ. <<Թարգմանեցեալ ի հեզահոգի դպրէ Պետրոսէ աղայէ ի տանէ բարեպաշտօն ազնուազարմէ Ապրոյ Զէլէայի կոչեցելոյ ի ֆիլէմէնկի բարբառոյն (ֆլամանդերեն- Ա. Խ.) ի հայ բարբառ: Յամի ներմարդութեանն Քի 1745 եւ յամի 1746 ի Զմիւռին քաղաքի»¹¹²⁸: Այս ձեռագրում հետաքրքիր տեղեկություններ են տրվում Բյուզանդիայի (Կոստանդնուպոլսի) պատմական վայրերի, փոքրասիական քաղաքների և դրանց անցյալի իրողությունների մասին (<<Վասն Նիկոմիդեայ քաղաքին>>, <<Յաղագս Մանիսայու>>, <<Յաղագս Պրուսայու>>, <<Յաղագս Եփեսոսի>>, <<Յաղագս Պերգամայու>>, <<Յաղագս Ֆիլատելֆիոյ>>, <<Վասն լիկիացոց Իսմիրային>> և այլն¹¹²⁹): Դրանք ունեն պատմաճանաչողական նշանակություն ոչ միայն հոլանդական առևտրի հանդեպ ուշադրության, այլև թարգմանիչ Պետրոս Ապրոյի տեղեկատվական հետաքրքրությունների համար:

Էգեյանի գաղթօջախներում գրչության վերջին շրջանը՝ XVIII դ. վերջ-XIX դ. 20-ական թթ., եզրափակում են ուսյալ քահանաները: Նրանք նաև վարժապետներ էին, լուսամիտ մարդիկ՝ ունկնդիր նաև նոր ժամանակների դպրոցի պահանջմունքներին: Զմյուռնիայում ար-

¹¹²⁷ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց , հ. 2, էջ 484:

¹¹²⁸ Նույն տեղում, էջ 481: Հոլանդիայի նկատմամբ Պ. Ապրոյանի հետաքրքրությունը պատահական չէր, բազմաթիվ այլ հայ վաճառականների հետ նա կապված էր հոլանդական շուկաների հետ և ուսյալ այս վաճառականի ուշադրությունից, բնականաբար, մի կողմ չէր կարող մնալ հոլանդացիների վերաբերմունքը փոքրասիական տարածաշրջանի և դրա պատմական անցյալի նկատմամբ: Հոլանդիայում էր, ի դեպ, Պետրոս Ապրոյանը ծանոթացել ռուսաց կայսր Պետրոս Մեծի հետ:

¹¹²⁹ Նույն տեղում:

դեն գործող արական վարժարանի ուսուցիչները՝ Գալուստ և Հովհան Վանանդեցի քահանաները ապրում և գործում էին հայ դպրոցի վերածնության անցումային մի փուլում, երբ կրոնաբարոյական հոգեշահ ճշմարտությունների հետ առաջադրվում էր մտքի ու մտածողության վերագնահատման, դրանք կրոնին համադրելու հիմնահարցերը: Այս մտայնությամբ է Է. Յունգի <<Գիշերային մտածությունք>> երկը հայերեն թարգմանել Գալուստ վարժապետը՝ զմյուռնացի <<թարմատար քահանան>>¹¹³⁰: Պետք է կարծել, որ նա իր հիմնական ժամանակն ու ուժերը տրամադրել է դպրոցին և իր սաներին:

Զմյուռնիայում գրչագրության վերջին ներկայացուցիչներից է Բանաստեղծ, ուսուցիչ և թարգմանիչ Հովհան Միրզա (Միրզայան) Վանանդեցին: Նրա ձեռագրական գործունեությունն ընդգրկում է 1806-1820-ական թթ., որչափով կարելի է դատել մեզ մատչելի ձեռագրացուցակներից: Նրա ընդօրինակություններն արված են և կրոնական, և աշխարհիկ բնույթի բնագրերից: Այս տարածաշրջանի գրչագրողների մեջ նա թերևս, միակն է, որ մտածված խմբագրական միջամտությունների է դիմում ընդօրինակվող օրինակի մեջ, մասնավորապես, երբ խնդիրը վերաբերում է դավանական նրբություններին: Այս իմաստով հետաքրքիր է նրա կատարած մի աշխատանքը՝ <<Կերակուր քահանայից>> վերնագրով (1822), որ ժամանակին լատիներենից հայերենի էր թարգմանել Վարդան կրոնավորը: Հ. Վանանդեցին այս գործը շարադրել է <<ըստ հայկաբանութիւն կարգի յաւելմամբ ի նոյն եւ այլ եւս վկայութեանց եւ բացատրութեանց>>, այսինքն կատարել էր մտավոր ստեղծագործական աշխատանք, ինչպես ակնարկում է ինքը¹¹³¹:

Հ. Վանանդեցին հիրավի, առանձնանում է իր ձեռագրական բեղմնավոր աշխատանքով: Նա ընդօրինակել է Ստեփանոս Լեհացու թարգմանած <<Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ, յաղագս հրեշտակաց (1806), <<Մեկնութիւն գրոցն Մովսէսի>> (1817) Պետրոս Բերդույանի <<Մատենագրութիւնք>> (1817-1820) գործերը, Մ. Պեքանյանի <<Անալոճիան>>¹¹³² և այլն: Էգեյանի գաղթօջախների պատմության տեսակետից լուսաբանող նշանակություն ունի նրա ընդօրինակած <<Մեկնութիւն ծննդոց եւ Յովբեայ>> ձեռագրին կցած ընդարձակ տեղեկանքը Զմյուռ-

¹¹³⁰ Մայր ցուցակ Սրբոց Յակոբեանց, հ. 4, էջ 176:

¹¹³¹ ՄՄ, ձեռ. 8634, էջ 2ա, 3ա: Տես նաև Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 2, էջ 261:

¹¹³² ՄՄ, ձեռ. 927, 4605, 2718, 163:

նիայի առաջնորդ Փիլիպոսի գործունեության և ժամանակի (1816-1821), նրան փոխարինած Ստ. Ենովքյանի մասին և այլն¹¹³³:

Ն. Մ. Վանանդեցիով փաստորեն բոլորվում է Էգեյանի գաղթօջախների ձեռագրական դպրոցի պատմությունը՝ գրատպության կողքին ցուցադրող իր տրամաբանական վախճանով և Զմյուռնիայում դարավոր այդ արվեստի վերջին, բովանդակալի պտղակումներով: Այդ շատ տաղանդավոր մարդու բազմաձև գործունեության առջև ընդամենը միջադեպային նշանակություն ունեցան ևս մեկ <<ուշացած>> գրչի՝ Հովհ. քահ. Էդդեմիշցու ձեռագրած՝ Պ. Բերդումյանի <<Քարոզգիրքը>> (1820) և <<Աղբիւր բացեալ>> (1822) գործերը¹¹³⁴ և մի քանի այլ գրչագրեր:

Այս վերջին սերնդի ընդօրինակողներից էր Ազարիա Տեր-Գրիգորյանը: Նա ընդօրինակել է Ղուկաս Խարբերդցու՝ լատիներենից թարգմանած <<Մեկնութիւն հինգ գրոցն Մովսէսի>> աշխատությունը¹¹³⁵:

Զմյուռնիայում բավական թիվ են կազմում XIX դ. առաջին քառորդին ընդօրինակված ձեռագրերը, կարելի է ասել՝ վերջին ձեռագրական աշխատանքները: Ամենին հավակնություն չունենալով անդրադառնալ դրանց բոլորին՝ այստեղ փորձեցինք ընդամենը վերհանել խնդրո առարկա գաղթօջախներում գրչության արվեստի ընդհանուր պատկերն ու ուղղվածությունը XVIII-XIX դարերում:

2. Վարժարաններ և կրթական-բարեսիրական ընկերություններ

Էգեյանի գաղթօջախներում, մինչև XVIII դ. վերջին տասնամյակները օսմանյան պետության կողմից ճանաչված դպրոցներ կամ դրանց գործունեությունը կարգավորող հիմնարկներ չկային:

Տարածաշրջանի հայկական համայնքներում առաջինը Զմյուռնիայում էր, որտեղ հիմնվեց արդիական վարժարան և այս իրողությանը նշված դարի առաջին կեսին և անտարակույս, դրանից էլ առաջ նախորդել էին դպրոցի, դպրոցական ուսուցումը նախապատրաստող գործնական քայլեր: Մինչև 1770-ական թթ. գործել են մասնավոր հիմունքներով կազմավորված դպրոցներ, որտեղ ուսուցանում էին, ինչպես ժամանակի նմանօրինակ հաստատություններում, կրթված եկեղեցականներ

¹¹³³ ՄՄ ձեռ. 2718, էջ 76-77ա:

¹¹³⁴ ՄՄ, ձեռ. 3736, 4855, էջ 234ա:

¹¹³⁵ ՄՄ, ձեռ. 2716:

րը¹¹³⁶: Սահմանափակ թիվ էին ներկայացնում այդ հոգևորականները, ասենք, և դպրոցներն էին սահմանափակ, և աշակերտները՝ հիմնականում ունևոր մարդկանց երեխաներ, որոնց գրագիտությունն ավարտվում էր Ավետարանի և կրոնական տեքստերի մեկնաբանությամբ: Գրագիտության աճող պահանջարկը Ձմյունիայում իրեն զգացնել տվեց առաջնորդ Աբրահամ Աստապատցու եռանդուն համախոհ և գործակից Մեսրոպ Գանձակեցու ուսուցչական գործունեության մեջ: Այն, որ նա ունեցել է դասատվական ճանաչված շրջանակ, որ տրամադրել էր նրան թեմի, և ամենից առաջ՝ Ձմյունիայի համակիր հանրությունը, ընդամին՝ շատ ավելի լայն, քան իր նախորդներից կամ ժամանակակիցներից որևէ մեկին, երևում է նրա դամբանագրից ևս (ՌՄԺԱ-1762).

Ես՝ վարդապետս անփառունակ,
Մեսրոպ սոփեսոս հեզ, միայնակ,
Վարժեալ ի գահն լուսակերտակ
Զկաթն իմաստից անվրիպակ
Զամբող մանկանց իբր գդայեակ¹¹³⁷:

Մեսրոպ Գանձակեցին իր գործունեությունը Ձմյունիայում սկսել էր քահանայի կարգավիճակով, երբ 1758 թ. Աբրահամ Աստապատցու խնդրանքով ավարտել էր <<Համառոտ մեկնություն եօթանց թղթոցն կաթողիկեից>> գործի ձեռագիրը: Իր մյուս ձեռագիրը նա ընդօրինակել է 1760 թ., մահվանից երկու տարի առաջ, որից և կարելի է եզրակացնել, որ նա Ձմյունիայի առաջնորդարանին կից մասնավոր դասատուն է ունեցել 1750-ականներից սկսած, որ և կարելի է համարել զմյունահայ դպրոցի առաջին առկայծումը կամ գաղթօջախում առաջին կանոնավոր վարժարանի անմիջական նախորդը: Իրոք, 1770-ականին արդեն գոր-

¹¹³⁶ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, հ. Ա, էջ 579:

¹¹³⁷ Բօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 91-92: Ա. Ալպոյաճյանը կարծում է, որ մասնավորապես 1737 թ. հետո Ձմյունիայում միայնաց հաջորդող նվիրակ-առաջնորդների կողմից <<կանոնաւոր ուսում տալու ձեռնարկներ կատարուած պէտք է ըլլան>>, և որ Սիմեոն Երևանցին, որպես փոխանորդ, <<միջոց մը Ձմիւնիա մնացած է>>, և ինչպես Կ. Պոլսում, Ձմյունիայում ևս հաստատել է դասատուն (1755): Նա ընդգծում է նաև Մեսրոպ Գանձակեցու երախտիքը՝ այստեղ հայ դպրոցի կայացումը նախապատրաստելու գործում (տես Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 579-580):

ծող այդ դպրոցի մասին կան բավականաչափ տվյալներ¹¹³⁸։ Հ. Ասատուրը, ով իր աշխատությունը գրել է հուսալի սկզբնաղբյուրների հիման վրա և մեր ամենահավաստի հեղինակներից մեկն է, գրում է, որ 1798 թ. Հ. Վանանդեցին, որպես ուսուցիչ, Զմյուռնիա է գնացել՝ 1775 թ. հիմնված Ս. Մեսրոպյան վարժարանում աշխատելու¹¹³⁹։ Ա. Ալպոյաճյանը դրանից չորս տարով ավելի ուշ է արձանագրում վարժարանի հիմնադրման ժամանակը. <<Դեռ Պոլսոյ մէջ կանոնաւոր վարժարան գոյութիւն չունե-

¹¹³⁸ Վերապահությամբ պետք է մոտենալ Հ. Քոսյանի այն կարծիքին, թե <<Զմիւռնիայի հայք ի սկզբան անդ իրենց գաղթականութեան յափունս Յոնիական ծովու այնչափ փոյթ եւ խնամք չեն ունեցած դպրոցներ կանգնելու կամ լաւ եւ ըսենք՝ իրենց ապագայ սերունդը կրթելու>>։ Նա թէն ընդունում է, որ զմյուռնահայերն ունեցել են իրենց <<տնային վարժոցները, բայց հասարակաց վայր մը վարժարան անունով, ընդհանուրին համար շէնք մը հազիւ անցեալ դարու վերջերն եղած կը հիշուի>> (Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 116-117)։ Բայց <<վարժոցները>> կամ մասնավոր դպրոցները ինքնին վկայում են զմյուռնահայերի՝ ուսման և կրթության մասին նրանց հոգածությունը՝ անշուշտ, հանրային դպրոցի կազմակերպման հարցում զիջելով պոլսահայերին։ Մյուս կողմից, 1770-ականին կանոնավոր վարժարան հիմնելով՝ նրանք կանխում էին Կ. Պոլսի հայկական թաղային վարժարաններին, որոնք ստեղծվեցին 1791 թ. և հետո, Շնորհք ամիրայի գործոն մասնակցությամբ, ի դեպ, այդ նույն ամիրայի, ով սատարել էր Զմյուռնիայի վարժարանի հիմնադրմանը (տես Պալեան Տ., Գաւազանագիրք առաջնորդաց Զմիւռնիոյ, 1921, թիւ 2, էջ 60)։ Օսմանյան կայսրությունում հայկական համայնքային կամ թաղային վարժարաններ էին բացվել 1790 թվականից (տես Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոց, 2016, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 177)։ Այս տասնամյակին թաղային վարժարաններ ստեղծվեցին Կ. Պոլսի Պալաթ, Օրթաքյուղ, Գուրուչեշմե, Սամաթիա, Սկյուտար-Մելամսըզ թաղամասերում (տես Ալպոյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը և կիրառութիւնը, էջ 152)։ Արևմտահայերի մեջ կրթական այս շարժումը ավելի քան չորս տասնամյակով առաջ էր անցնում օսմանյան լուսավորական համակարգից, եթե նկատի ունենանք, որ Կ. Պոլսում առաջին հանրակրթական աշխարհիկ դպրոցները (դյուշտիլե) ստեղծվել են 1839 թ. փետրվարից հետո, որոնք տարածվեցին 1846 թ. թանգիմարթի հետագա բարեփոխումների ընթացքում (տես Желтяков А. Д., Петросян Ю. А. История просвещения в Турции, с. 13-14)։ Նույն հեղինակները նկատում են նաև, որ հունական և հայկական դպրոցները քիչ ազդեցություն չթողեցին թուրքական լուսավորության զարգացման վրա և մի հայտնի չափով ընդօրինակելի դարձան թուրքերի համար (նույն տեղում, էջ 82)։

¹¹³⁹ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 206։

ցած՝ 1779-ին կը բացուի Ս. Մեսրոպեան վարժարանը>>,-գրում է նա¹¹⁴⁰: Տ. Պալյանը նույնպէս այդ կարծիքին է. <<Ղուկաս եպիսկոպոսի <<օրովը (առաջնորդության օրոք-Ա. Խ.),- գրում է նա,- 1779-ին կը հիմնուի Զմիւռնիոյ Մեսրոպեան վարժարանը>>¹¹⁴¹: Այս հարցում համոզիչ է Թ. Ճերմակյանի այն դիտողությունը, որ Հ. Վանանդեցուց առաջ վարժարանն ունեցել է մի նախնական վիճակ, որ <<ի վաղուց թաւալած է>>¹¹⁴²: Հիրավի, եթէ Հ. Վանանդեցին 1798 թ. (1797 թ., ինչպէս ճշտել էր Հ. Վանանդեցու թոռ Միրզա Սարգիս Վանանդեցին՝ 1860-ական թվականների ճանաչված մտավորականն ու խմբագիրը Զմյուռնիայում) սկսել է աշխատել վարժարանում, ուրեմն վերջինս արդեն կար, ինչը ցույց է տալիս Թ. Ճերմակյանը՝ վկայակոչելով Մեսրոպ Գանձակեցու վերոհիշյալ դամբանագիրը:

Կան նաև կողմնակի փաստեր, որոնք վկայում են վարժարանի գոյությունը 1770-ական թթ.: Զմյուռնիայում գրչագրված Կիրակոս Գանձակեցու և Թովմա Մեծովեցու երկերի ընդօրինակումը Եղիա քահանայի ձեռքով (1778-1780թթ.), իրոք, ունեն որոշակի հասցեագրում, ինչպէս ասված է հիշատակարանում՝ <<ի պէտս ուսումնասիրաց>>:

Հ. Քոսյանը Հ. Վանանդեցու պաշտոնավարման թվականը, համարում է 1799-ը, որ և նույնացնում է վարժարանի սկզբնավորման հետ¹¹⁴³, մինչդեռ, ինչպէս տեսանք, Զմյուռնիայում դպրոց կար դեռևս 1750-ական թթ. ի վեր՝ Մեսրոպ Գանձակեցու ժամանակներից: Այդ դպրոցը տեղավորվել էր Ապրոյան գերդաստանի նվիրած փայտաշեն տանը¹¹⁴⁴:

Հ. Վանանդեցին ոչ միայն հմուտ ձեռագրող էր, այլև բանաստեղծ և թարգմանիչ, որով արդյունավորվել է տասնամյակներ ի վեր նրա կատարած աշխատանքը Զմյուռնիայի վարժարանում, որտեղ դասավանդում էր աստվածաբանություն և հայկաբանություն: Նրա բանաստեղծական շնորհները լիովին դրսևորվել են իր երեք ծավալուն պոեմներում. այդ ստեղծագործությունները (<<Տեսարան հանդիսիցն Հայկայ, Արամայ եւ Արայի>>, <<Արփիական Հայաստանի>> և <<Ոսկի դար Հայաս-

¹¹⁴⁰ Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 13/26 ապրիլի:

¹¹⁴¹ Պալեան Տ., նշվ. աշխ., 1921, թիւ 1, էջ 28: Այստեղ նկատենք միայն, որ 1779 թ. Զմյուռնիայի առաջնորդը ոչ թէ արք. Ղուկասն էր (ով Էջմիածին էր վերադարձել 1775 թ.), այլ Եսայի վարդ., կամ Փիլիպոս եպ.:

¹¹⁴² Ճերմակեան Թ., Հայ տպագրութիւնը Իզմիրի մէջ, 1912, 16/29 հունիսի:

¹¹⁴³ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 117:

¹¹⁴⁴ Նույն տեղում:

տանի>>) հազեցած են ազգային-հայրենասիրական շնչով և աչքի են ընկնում բանաստեղծական բարձր արվեստով: Դրանցից առաջին գործը՝ գրված գլխունահայ մտավորական գործիչ Գր. Կոստանյանի խնդրանքով՝ <<ի զբոսանս մանկանց ազգիս Հայոց>>¹¹⁴⁵, անմիջականորեն առնչվում է Վանանդեցու մանկավարժական գործունեության հետ: Ավելացնենք, որ նշված պոեմներն իրենց ուղղվածությամբ նախորդում են նշանավոր մխիթարյան Ա. Բագրատունու << Հայկ դիցազն>> պոեմին և լավագույն կողմերով են ներկայացնում հայ կլասիցիստական գրականությունը:

Իր աշխարհիկ բովանդակության ստեղծագործություններին ի լրումն, Հ. Վանանդեցին գրաբարի է թարգմանել <<Փենտի աղդար>> (ժլատ փերեզակ) բարոյախրատական գիրքը թուրքերենից (1827)¹¹⁴⁶: Դաստիարակչական նույն նկատառումներով նա թարգմանել է Թեոսալրոսի ստեղծագործությունը՝ <<Զուարճարան բանասիրաց>> վերնագրով¹¹⁴⁷: 1840-1860-ական թթ. գլխունահայ լուսավորական շարժման ակունքների մոտ կանգնած այս գործիչը ուներ մանկավարժական լայնախոհ հայացքներ, որով և արդյունավորել է վարժարանի սաների իմացականությունը: Նա խրախուսել է իր աշակերտների գրական փորձերը. պատանիների ուսման ու կրթության հանդեպ հոգատարությունն ի հայտ է եկել նաև նրա հեղինակած ձոնում՝ ուղղված Մոսկվայի Լազարյան ճեմարանի ուսուցիչ Մ. Սալլանյանին, ինչպես և խրատական հորդորներում՝ նույն ճեմարանի ուսանողներին¹¹⁴⁸:

Հ. Վանանդեցու զգալի թվով ինքնուրույն գործեր չեն տպագրվել: Զմյուռնահայ մտավոր շարժման և նրա գործիչների հետ սերտ կապեր ունեցող մեծահարուստ Գր. Գուլասայանցը (Աբելյան-Գուլասայանց), այսուհանդերձ, նյութապես աջակցել է բազմալստակ մտավորականին, գրքեր նվիրել նրան և հաղորդակցվել նրա հետ՝ վերջինիս գործերի տպագրության առթիվ¹¹⁴⁹:

¹¹⁴⁵ ՄՄ, ձեռ. 3312, էջ 2:

¹¹⁴⁶ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 9, էջ 80:

¹¹⁴⁷ Նույն տեղում, հ. 8, էջ 362-363:

¹¹⁴⁸ Նույն տեղում, հ. 4, էջ 103:

¹¹⁴⁹ ՄՄ, արխիվ Իզմիրյան կաթողիկոսի, թղթ. 10, վավ. 31:

Զմյուռնիայում դպրոցական լայն չափերի հասնող ուսուցումը, որ կարելի է համարել հանրային ուսուցում՝ հասարակական բոլոր խավերի ընդգրկմամբ, սկսվում է 1820-ական թթ.: Այդ ժամանակից կրթական գործը հաղթահարում է վարժոցային սահմանափակ վիճակն ու մասնավոր շահագրգռությունները՝ վերածվելով հանրային ասպարեզի և ըստ այդմ՝ ընդգրկվելով հանրային կառույցների մեջ: Զմյուռնահայ դպրոցը հանրային կարգավիճակ պետք է ստանար ավելի քան երկու տասնամյակի մանկավարժական վաստակ ունեցող Հ. Վանանդեցու օրով, իսկ մինչ այդ, անգամ զմյուռնահայ ականավոր գործիչ և հայագետ Ս. Սավալանյանի դեռահասության օրերին, դեռևս հարատևում էին ավանդական վարժոցները՝ պահպանողական դիմացկուն սովորույթի ու մտածողության և ուսյալ հոգևորականության հմայքի պայմաններում: Նույն կերպ, ինքը՝ Ս. Սավալանյանը, սովորել է Ալլահ դեղիսի (Աստծո գիծ) կոչվող տեր-Կարապետ քահանայի մոտ՝ մինչ <<օրինավոր դպրոց>>՝ Հ. Վանանդեցու գլխավորած վարժարանն ընդունվելը¹¹⁵⁰: Այսուհանդերձ, արդեն 1820-ական թթ. առաջին կեսին վարժարանը մտնում էր իր հեղինակությանը վայել կանոնավոր կրթական հունի մեջ, անշուշտ, Ս. Ստեփանոս եկեղեցու միջոցների ու բարեգործների ձեռնտվությունների շնորհիվ (սկսած Շնորհք ամիրայով և շարունակելի դարձած մեկենասներով): Կրթական գործի հանդեպ համայնքի հոգածության ակնառու դրսևորումներից էր այդ տասնամյակի սկզբներին, նախքան վարժարանի նոր շենքի կառուցումը, թեմի առաջնորդ արքեպ. Ենովքյանի կողմից ներկայացրած ուսումնական կանոնադրությունը՝ <<Ցուցակ բարոք կառավարութեան վարժարանին Զմիւռնիոյ քաղաքիս>> խորագրով¹¹⁵¹: Կարելի է ասել, որ այս ցուցակ-կանոնադրությունը կազմվել էր Հ. Վանանդեցու՝ եթե ոչ ամբողջովին, ապա նրա հեղինակային մասնակցությամբ, ով արդեն արդեն հարուստ իմացականություն և մանկավարժական տասնամյակների փորձ ուներ նոր դպրոցի պահանջմունքները համակարգված ձևով ներկայացնելու համար: Իր՝ Հ. Վանանդեցու խմբագրած և լատիներենից հայերենի թարգմանված <<Կերակուր քահանայից>> վերնագրով ձեռագիրը եզրափակվում է

¹¹⁵⁰ Սաւալանեան Ս., Կենսագրական յուշեր, էջ 17:

¹¹⁵¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 52, վավ. 413:

վարժարանի կարգավիճակ ենթադրող՝ <<Յամի Տեառն 1822, ի Յունիսի 2, ի մայր դպրատան Ձմիւռնիոյ>> դարձվածով¹¹⁵²:

Այդ կանոնադրությամբ սահմանվում էին վարժարանի ուսման ծրագիրը, նպատակը, ուսուցանվող առարկաները, այնուհետև կառավարման, նյութական միջոցների ապահովման և այլ հարցեր: Նյութական միջոցները պետք է գոյանային համայնքի հարկերից և հասարակական արկղից (խորա) արվող մասհանումներից, եկեղեցու եկամուտներից ու նվիրատվություններից: Վարժարանը կառավարելու էին հոգաբարձուները, որոնք հետևելու էին դպրոցի՝ դասագրքերով ու գրենական պիտույքներով կանոնավոր մատակարարմանը, ուսման ընթացքին ու կարգուկանոնին:

Ուսումնական ծրագիրը ենթադրում էր երկու կարգի ուսուցում. քերականություն և ճարտասանություն՝ քահանաներ ու վարդապետներ պատրաստելու, ինչպես և պարզապես ընդունակ աշակերտների համար: Ուսուցման երկրորդ կարգը նախատեսված էր աղքատների զավակների ու որբերի համար և այստեղ է, որ կանոնադրությունն ի հայտ է բերում իր դեմոկրատական հակումները՝ նախատեսելով նրանց գործնական ուսուցումը, որ նորույթ էր հայ դպրոցի տարեգրության մեջ: Դպրոցն ընդառաջում էր իրականության գործնական պահանջմունքներին՝ նպատակ ունենալով պատրաստել արհեստավորներ և առևտրական հմտությունների տեր շրջանավարտներ, ընդամին, համայնքի միջոցներով պահվող վարժարանը ստանձնում էր նրանց անվճար ուսուցման հոգսը. <<զայսպիսի մանկունսն որք աղքատաց զաւակք են եւ կամ որբք եւ անտերունչք... ընկալնով պարտ է ի վարժարանն եւ կրթել ձրիապէս>>, -ասված է կանոնադրության մեջ, որտեղ շարունակվում է գործնական մտահոգությունը սոցիալապես անապահով աշակերտների նկատմամբ: Նրանց, ասվում է կանոնադրության մեջ, <<յանձնել լիցի կամ օրինաւոր վաճառականաց վասն գրագրութեան նոցա եւ ծառայութեան արժանաւոր փորձուք եւ կամ օրինաւոր արհեստաւորաց զի ուսուցանելով եւ զարուեստս կամ զվաճառականութիւն կարող լիցին կենցաղավարիլ... աշխատութեամբ իւրեանց>>¹¹⁵³:

¹¹⁵² Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 3, էջ 281:

¹¹⁵³ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 52, վավ. 413, էջ 1ա:

Ավելացնենք, որ գրագիտությունից մինչև քերականության ուսուցման ավարտ ընդգրկվում էին ութ կարգի խմբեր (դասարանների բաժանման կամ դրան մոտ իմաստով)¹¹⁵⁴:

Վարժարանում գլխավոր համարելով հայկաբանությունն ու ճարտասանությունը (որոնց մեջ, անշուշտ, մտնում էին պատմաբանասիրական առարկաներ), և դրանք դասավանդող առաջին ուսուցչի մանկավարժական ու իմացական որակները, կանոնադրությունը կարևորում էր <<համարողական արհեստները՝ թվաբանությունն ու հանրահաշիվը, որ <<յոթ եւ յոթ հարկաւոր է գիտել>>¹¹⁵⁵:

Կանոնադրությունը վերջնականապես մշակված չէր և, ենթադրվում էր այն քննարկել հոգաբարձուների և հանրության կրթված մարդկանց շրջաններում, որից հետո դնել գործողության մեջ, ուստի ձևակերպումներում զգացվում է որոշ թեականություն: Այսպես, առաջարկվում է երեք ամիսը մեկ, կամ տարեկան երկու անգամ անցկացնել հրապարակային քննություններ առաջնորդի և հոգաբարձուների ներկայությամբ՝ ուսման որակն ու դպրոցի սաների պատասխանատվությունը բարձրացնելու, նրանց գիտելիքները ստուգելու համար:

Ուշադրություն է հրավիրում այն հանգամանքը, որ կանոնադրությունը ամրագրում էր, կենտրոն ունենալով Ձմյուռնիայի վարժարանը, ուսումնական դրվածքի և առհասարակ դպրոցական գործի միասնականացման սկզբունքը՝ Էգեյանի բոլոր գաղթօջախներում այդ վարժարանի շուրջ համախմբելով կից բոլոր բնակավայրերի դպրոցները կամ առաջարկելով սովորել հենց Ձմյուռնիայում¹¹⁵⁶:

Էգեյանի գաղթօջախների ազգային դպրոցների կայացման մեջ իր գործուն մասնակցությունն էր բերում Էջմիածինը՝ ի դեմս իր թեմական առաջնորդի, ինչը արևմտահայ իրականության մեջ դյուրացնում էր հայ լուսավորական շարժման ընթացքը նոր ժամանակներում: Եվ այս առումով անգնահատելի նշանակություն ունեցավ նաև բարերարների նպաստը այդ տարածաշրջանի գաղթօջախների կրթական ու հասարակական գործերի անդաստանում: 1770-1840-ական թթ. վարժարանի հովանավորության հարցում հատկապես արդյունավոր էին Մայրոյանների, Հ. Սարգսյանի, Յուսուֆյանների և այլոց ազգանվեր միջամտությունները, լուրջ ներկայությունը Ձմյուռնիայի և մյուս գաղթօջախների կրթա-

¹¹⁵⁴ Նույն տեղում, էջ 7:

¹¹⁵⁵ Նույն տեղում:

¹¹⁵⁶ Նույն տեղում, էջ 3:

կան գործերում: Առաջինը Ապրոյաններն էին, ովքեր, ինչպես տեսանք, դպրոցական շենք տրամադրեցին համայնքին: XVII դ. վերջերին և XIX դ. Ապրոյանները, գործելով և Թուրքիայում և եվրոպական երկրներում, իրենց մասնակցությունն են բերել նաև Զմյոտնիայի ազգային-հասարակական գործերին՝ գործելով որպես հոգաբարձուներ, եկեղեցականներ, վարժարանի վերակացուներ և այլն: Հայտնի են նաև Պետրոս և Պողոս Յուսուֆյան եղբայրների նվիրատվությունները համայնքին, մասնավորապես Պետրոս Յուսուֆյանի նշանակալի նվիրատվությունները վարժարանին, ֆրանսերենի և անգլերենի ուսուցմանն այստեղ ըստ ամենայնի աջակցելու ջանքերով¹¹⁵⁷, նրանց գործուն աջակցությունը նշանավոր <<Սյունյաց ընկերությանը>> և այլն¹¹⁵⁸:

Հավելենք նաև, որ Պետրոս Յուսուֆյանը իր միջոցներով նորոգել է տվել Ս. Ստեփանոս եկեղեցուն պատկանող Շահին խան կոչվող շինությունները¹¹⁵⁹:

Արք. Ս. Ենովյանի առաջնորդության տարիներին, 1820-ական թթ. հասունացել էր վարժարանի նոր, աշակերտների աճող թվաքանակի

¹¹⁵⁷ Տես Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, էջ 43:

¹¹⁵⁸ Յուսուֆյանները կեսաբացի էին: Այս ականավոր եղբայրների հայրը՝ Հովսեփը, հավանաբար Զմյոտնիայում է հաստատվել XVIII դարակեսին՝ դատելով Պողոս Յուսուֆյանի՝ Եգիպտոսի ապագա քաղաքական գործչի ծննդյան թվականից (1775) (տես Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Բ, էջ 1943-1944): Հովսեփը Ապրոյան գերդաստանի փեսան էր և այքի ընկնող վաճառական: Նրա զավակները կրթվել են Առաքել Ապրոյանի տանը՝ ստանալով մասնավոր ուսուցում և տիրապետելով արևելյան լեզուների, որ հետագայում պետք էին գալու Պողոս Յուսուֆյանին՝ իր եգիպտական պետական ծառայության մեջ: Կեսագիրները նշում են, որ նա գործակցել է եղբոր՝ Տրիեստում հաստատված Պետրոսի հետ, ում աջակցել է եվրոպական երկրների և Եգիպտոսի առևտրական գործարար կապերի ասպարեզում (տես Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Ե, էջ 20-40, Ճերմակեան Թ., Եզական դեմք մը Իզմիրի մեջ, 1905, 30 հուլիսի/12 օգոստոսի, 4/17, 5/17 օգոստոսի): Պետրոս Յուսուֆյանը հասկանալի առնչություններ պետք է ունենար նույն ժամանակներում Տրիեստում առևտրով զբաղված իր ազգականների՝ Աբրահամ և Ստեփան Ապրոյանների հետ:

¹¹⁵⁹ Այվազեան Ա., Հոնիական հայ գաղութի նահապետներէն, 1900, 26 օգոստոսի/8 սեպտեմբերի: Շահին խանը (հյուրատուն, պահեստներ), ինչպես գրում է Ա. Այվազյանը, <<կիյնա Զմիտնիոյ փառաւոր առաջնորդարանի ճիշտ դիմացը եւ տեղոյն ազգային կալուածներու մէջ բաւական արդիւնաբեր կալուածք մըն է. խանին դուրսը 20-30 կրպակներ ունի, իսկ ներսը՝ բազմաթիւ սենեակներ>> (նույն տեղում):

պահանջները բավարարող՝ ժամանակակից շենք կառուցելու հարցը: Առաջնորդը անգամ հասցրեց պատրաստել տալ վարժարանի կանոնադրություն, ինչը տեսանք վերը, բայց ոչ ավելին: Օսմանյան կառավարությունը 1825-ի սկզբներին կամ դրանից փոքր-ինչ շուտ վերացրեց էջմիածնին տրված իրավունքները Թուրքիայում, լուծարվեցին տերունի թեմերը, այդ թվում և Զմյուռնիայի թեմը: Համայնքում վարժարանի հիմնարկեքը վիճակված էր կատարել Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից Զմյուռնիայի առաջնորդական փոխանորդ նշանակված Ստ. արք. Աղավնին¹¹⁶⁰: Շենքի կառուցումը, սակայն, տևեց տարիներ: Հետագայում Զմյուռնիայում հրատարակված <<Աշխատանք>> լրագիրը հայտնում է, որ տեղական իշխանությունները շենքի շինությունը կապել են հունական ապստամբական շարժման հետ՝ տազնապելով, որ <<հայերն ալ ապստամբութեան կը պատրաստուին եւ ասոր համար ամրոցանման շենք մը կը կառուցանեն>>¹¹⁶¹: Շինարարությունը կասեցվում է և տեղի հայ ազդեցիկ անձինք ձեռքալքվում են այս մեղադրանքով՝ ազատ արձակվելով միայն խոշոր դրամական տուգանքից հետո: Շինարարությունը վերջապես ավարտին հասցվեց համայնքի հեղինակավոր դեմքերից մեկի՝ Գրիգոր Պապոյանի համառ միջամտություններից հետո¹¹⁶²: Ա. Այվազյանը ևս առանձնացնում է Գր. Պապոյանի երախտիքը խնդիրը հաջողությամբ կարգավորելու գործում¹¹⁶³: Վարժարանի շենքի կառուցումն ավարտվեց 1826 թ.¹¹⁶⁴: Հարկ է ավելացնել, որ Պապոյանները, Էքիզյանները և զմյուռնահայ վերնախավի այլ մարդիկ համայնքում իրենց հեղինակությունը իրավականորեն ամրագրում էին տասնամյակներ շարունակ՝ հանդես գալով իբրև մյութեվելիներ՝ համայնքի սեփականությունը տնօրինող պաշտոնյաներ:

1820-ականի վերջերին և 1830-ականին Զմյուռնիայի արական վարժարանը իր ուսումնական նորամուծությունների և արդյունավետության շնորհիվ ամբողջ հայ իրականության մեջ ձեռք էր բերել արժանի

¹¹⁶⁰ Ասատուր Հ., Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 166:

¹¹⁶¹ Աշխատանք, 1912, 30 հունիսի:

¹¹⁶² Նույն տեղում, 13 հուլիսի:

¹¹⁶³ Այվազեան Ա., նշվ. աշխ., Բիզանդիոն, 1900, 24 օգոստ./8 սեպտ.: Հ. Քոսյանը գրում է, որ այս հարցում դժվարությունները հարթել են անգլիական հյուպատոսարանի դրագոման Գր. Պապոյանը և Ավ. Էքիզյանը (Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 118):

¹¹⁶⁴ Աշխատանք, 1912, 16/29 հունիսի

համբավ՝ դասվելով ազգային լավագույն դպրոցների շարքը: Այստեղ սովորելու էին գալիս աշակերտներ ոչ միայն Հզեյանի մյուս գաղթօջախներից, այլև Կ. Պոլսից, Արևմտահայաստանից և այլն: Գաբրիել Պատկանյանը Զմյուռնիայի այս վարժարանը համարում էր լուսավորության երևելի օջախ, համազգային նշանակություն ունեցող նոր դպրոց՝ հայերի համար¹¹⁶⁵:

1830-ական թթ. ի վեր, կանոնավոր վարժարանի վերածվելուն գուրբնթաց, գործում էր նրա գիշերօթիկ բաժինը՝ իր վարձու կացարանով և կենցաղային կարիքների ապահովմամբ: Այս և մյուս բոլոր գործերով զբաղվում էին չորս հոգաբարձուներ՝ հետևելով վարժարանի ուսումնատնտեսական ամբողջ ընթացքին: Իրենց հերթին վճարունակ աշակերտները տալիս էին տարեկան երեք հազար դուրուշի չափով ուսման վարձ¹¹⁶⁶: 1830-ականի սկզբին այստեղ սովորում էին 300-ից ավելի սաներ, որոնց քանակն աճում կամ նվազում էր կանխատեսելի տատանումներով: Լեզուների ուսուցման շարքում թեև ոչ պարտադիր (<<ոչ ուսուցանի հրապարակաւ>>) տեղ էր գտել նաև ֆրանսերենը, որ դրանից շատ չանցած՝ անգլերենի հետ մշտապես ընդգրկվեց դասացանկում¹¹⁶⁷:

¹¹⁶⁵ Տես Հովհաննիսյան Ա. Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, էջ 304:

¹¹⁶⁶ Արշալոյս Արարատեան, 1840, 20 նոյեմբերի:

¹¹⁶⁷ Զմյուռնիայի նոր դպրոցի բերած ակնառու նորույթներից էր լեզուների դասավանդումը, որ սկսվել էր Ռ. Փափագյանի (1806-1857) տեսչության օրոք: Ֆրանսերենի ուսուցումը առաջացրել էր զմյուռնահայ պահպանողական ուժերի, հին խալֆայական դպրոցի ջատագովների ընդդիմությունը, ովքեր համախմբվեցին առաջնորդ Գաբրիել եպ. շուրջ: Ֆրանսերենի վնասակարությունը նրանք հիմնավորում էին այն մեղադրանքով, որ, իբր, այդ լեզվով ստեղծված գրականությունը հեղափոխության (նկատի ունենին 1789 թ. հեղափոխությունը), անհավատության և անբարոյության գաղափարներ է պարունակում: Ռ. Փափագյանին և նրա կողմնակիցներին (հոգաբարձուներ Գր. Կոստանդյանը, Ս. Պալասանյանը և այլք) սակայն, սատարում էին ոչ պակաս ազդեցիկ ուժեր: Տրիեստում, որտեղ Ռ. Փափագյանը սովորել էր լատիներեն և իտալերեն, նա մերձեցել էր այստեղ բնակվող վաճառական Գր. Աբելյանին՝ վայելելով նրա հովանավորությունը (տես Փափագեան Պ., Կենսագրություն Ռուբեն Անդրեաս Փափագեան բազմադիր վարժապետի, էջ 9-11): Զմյուռնացի Պետրոս Յուսուֆյանը՝ նույնպես Տրիեստից, օգնության ձեռք մեկնեց վարժարանի տեսչին՝ ապահովելով ֆրանսերենի ուսուցման ծախսը: Թիֆլիսից նրան աջակցում էր Ներսես Աշտարակեցին, ի դեմս որի, Էջմիածինը դեռևս փայփայում էր Զմյուռնիայի

1830-1840-ական թթ. վարժարանում հանրակրթական առարկաներն էին ճարտասանությունը, դիցաբանությունը, հայոց պատմությունը, ինչպես և աշխարհագրություն, կրոնագիտություն, թվաբանություն, երկրաչափություն, ֆիզիկա, թվաբանություն և այլն¹¹⁶⁸: Ռ. Փափազյանի

կորսված թեմը վերադարձնելու հույսերը: Վերջինիս գրած նամակում (1835, 20 մարտի) Ռ. Փափազյանը հերքում էր հակառակորդների առարկությունները: Ֆրանսերենը, գրում էր նա, <<որ թեպետ ցանկալի էր ամենեցուն ի վաղնջագոյն հետէ, այլ ոչ ոք համարձակէր առնուլ գնա ի բերան, զի բազումք ի պարզամտաց խոչընդոտն լինէին, ըստ որս եւ Գաբրիէլ պատրիարքն Սրբոյ Երուսաղեմի (համատեղում էր նաև Զմյուռնիայի թեմի առաջնորդի պաշտոնը 1829-1834 թթ., երբ վերջնականապես անցել է Երուսաղեմ-Ա. Խ.), զոր ոչ ոք կարեց համոզել ի հաւանութիւն: Այն ինչ մեկնեցաւ սա ի քաղաքէս,-հարում է Ռ. Փափազյանը,- պսակեցան իսկոյն ուխտք ի սրտից մերոց եւ ուսումն գաղղիականին սկսաւ անդէն յուսումնարանին՝ առատ արդեամբք մեծանուն Պետրոս աղայի Երուսաղեմէն>> (ՄՄ, Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1482): Ռ. Փափազյանի և նրա համախոհների հաղթանակը վարժարանում՝ հույժ կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն գմյուռնահայ մշակույթի, այլև առհասարակ ազգային դպրոցի և հատկապես 1850-1870-ական թթ. սերնդի մտավոր վերածնության դժվարին խաչմերուկներում: Բավական է միայն ասել, որ առանց վարժարանում ֆրանսերենի պատշաճ գնահատման ու դասավանդման, չէր կարող կայանալ գմյուռնահայ թարգմանական փայլուն դպրոցը, որի ներկայացուցիչները (Մ. Մամուրյան, Գր. Զիլինկիրյան, Տետեյան եղբայրներ, Մ. Նուպարյան, Տ. Սավալանյան, Ստ. Ոսկանյան, Գր. Մսերյան և ուրիշներ) բոլորն էլ ավարտել էին այդ վարժարանը: Այդ թարգմանական դպրոցն էր, որ Կ. Պոլսի հայ թարգմանիչների հետ միասին (Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, էջ 73) աննախընթաց ծավալներով ու լեզվական նրբագեղ որակներով հայույթյանը պետք է մատուցեր XIX դ. ֆրանսիական դասական գրականության սքանչելի երկերը:

¹¹⁶⁸ 1830-ականի առաջին կեսին, Ռ. Փափազյանի ժամանակ ուսուցման ծրագիրը Զմյուռնիայում կրում էր որոշակի փոփոխություններ՝ ուսուցման բովանդակության՝ դասացանկի, դրա իրացման և վարժարանի կառավարման ասպարեզում: Ներսես Աշտարակեցուն հղած իր նամակում Ռ. Փափազյանը շարադրել է իր կազմած ծրագրի բնույթը (<<Ուսումնարան հայոց ի Զմիւռնիս>>), որից երևում է, որ նա լավատեղյակ է 1824 թ. հիմնված Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ծրագրին և ակնկալում էր նրա կարծիքը Զմյուռնիայի վարժարանի վերաբերյալ (ՄՄ, Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1479): Այս խնդրի պատշաճ քննությունը, կարծում ենք, կնպաստի բացահայտելու արևելահայ դպրոցի ու մանկավարժական մտքի հետ Օսմանյան Թուրքիայում գործող հայ դպրոց-

կազմած կանոնադրությունից երևում է, որ վարժարանն ընթանում էր մասնագետ ուսուցիչների ընտրության եղանակով, որ նորույթ էր Վանանդեցու դպրոցի համեմատությամբ՝ յուրաքանչյուր առարկա դասավանդում էր մասնագետ ուսուցիչ, որ վկայում էր որակյալ ուսուցման խնդիրը սկզբունքորեն լուծելու տեսչի առաջադիմական դիրքորոշման մասին: Ուսումնական ծրագրում ընդգրկված յոթ առարկաներին համապատասխան, հայտնում էր Ռ. Փափազյանը Ներսես Աշտարակեցուն, <<են ի սմա վարժապետք թուով եօթն եւ աշակերտք աւելի քան զերկերիւր>>¹¹⁶⁹:

Մեկ կարևոր հանգամանք եւս. Զմյուռնիայի վարժարանը ոչ մի կախում չունէր եկեղեցական իշխանությունից, ոչ ուսումնական, և ոչ էլ ծրագրային տեսակետից՝ ունենալով, սակայն, կազմակերպական ինքնատիպ անկախություն, համենայն դեպս, մինչև Ռ. Փափազյանի և վերնախավի որոշ ջոջերի ընդհարումը, արդեն՝ 1850-ական թթ. երկրորդ կեսին, որ ռդբեդական ավարտ ունեցավ լուսավորության ու դպրոցի այդ նվիրյալի համար: Ռ. Փափազյանը առավել խորացնում էր Վանանդեցու դպրոցի հանրակրթական ազգային ուղղվածությունը, որն այս տեսակետից եւս նորույթ էր գործող հայկական դպրոցների ուսումնակրթական համակարգում¹¹⁷⁰:

ների առնչությունները, որի կարիքը տակավին շատ է զգացվում ազգային դպրոցի պատմության ուսումնասիրության բնագավառում:

¹¹⁶⁹ ՄՄ, Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1479: Այս վավերագրում Ռ. Փափազյանը նշել է նաև դասացանկը:

¹¹⁷⁰ Դրան մեծապես նպաստեց այն, որ Զմյուռնիայում կրթական գործի կազմակերպման ղեկը ի սկզբանե, դեռևս Հ. Վանանդեցու ժամանակներից, իր ձեռքն էր վերցրել կրթված ու առաջադեմ մտավորականությունը՝ սատար ունենալով լայնախոհ վաճառականներին: 1831 թ. Ռ. Փափազյանը, ոչ մի կապ չունենալով Զմյուռնիայի հետ, ցանկացել է անցնել Տրիեստ՝ նշանավոր բարերար, մեծահարուստ Աբելյան-Գուլասայանցի մոտ՝ հայցելու նրա հովանավորությունը և այդ նպատակով մեկնել է Զմյուռնիայի նավահանգիստ: Այստեղ Մկրտիչ Նուպարյանը նրան առաջարկում է վարժարանի տեսչի թափուր մնացած պաշտոնը, ընդամին, տեղեկացնելով նրան, որ դպրոցը անկախ է եկեղեցական իշխանությունից և ենթարկվում է ազգային վարչությանը: <<Պուլոյ և Իզմիրի մէջ, ասում է Մ. Նուպարյանը, յայսմ մասին մեծ տարբերութիւն կայ եւ թէ դպրատունը բնաւ եկեղեցական իշխանութենէ կախում չունի>> (Արշալոյս, 1907, 30 նոյեմբերի): Այս և այլ փաստարկները համոզել են Ռ. Փափազյանին, և նա աշխատանքի է անցել վարժարանում՝ 1831 թ. հունիսին (նույն տեղում):

Ս. Մեսրոպյան վարժարանի և նրա երախտավորների գործունեության մասին մեր խոսքը եզրափակելուց առաջ նշենք, որ հատկապես XIXդ. երկրորդ քառորդից Զմյուռնիայում առաջավոր մշակույթի զարգացումն ուղեկցվում էր հետադիմության հետ չդադարող ընդհարումներով: 1855 թ. գաղթօջախում ընտրվեց ազգային-վարչական գործերը վարող նոր հոգաբարձություն, որ հիմնականում կազմված էր վարժարանում Ռ. Փափազյանի նորամուծություններին ընդդիմացող հակառակորդներից: Հոգաբարձությունը չհապաղեց կաշկանդելու Ռ. Փափազյանի գործունեությունը Ս. Մեսրոպյան վարժարանում՝ փորձելով այստեղ վերականգնել հարուստ վաճառականության՝ համայնքի գործերը տնօրինելու վաղեմի իրավունքը: Ռ. Փափազյանը մեկուսացվեց վարժարանի գործերից: Հաշվի չառնելով նրա կարծիքը՝ հոգաբարձությունը հեռացրեց իրեն անցանկալի ուսուցիչներին, նրանց փոխարինեց նախընտրելի համարած մարդկանցով, որով անտեսվում էր վարժարանի կանոնադրությունը: Վաստակաշատ մանկավարժի կենսագիրը նկատում էր, որ հոգաբարձուները գործում էին առևտրական շահերը բարձր դասելով ազգային շահերից¹¹⁷¹:

Զղիմանալով նրանց ճնշմանը, զուրկ վաղեմի լուսամիտ և զորեղ հովանավորներից, որոնք արդեն հեռացել էին կյանքից, 1856 թ. ապրիլին Փափազյանը թողեց իր պաշտոնը՝ մասնավոր կարգով շարունակելով մանկավարժական գործունեությունը: Դրանից հետո առաջավոր մտավորականության և հետադիմության հակասությունները գաղթօջախում առավել խորացան. հարցին միջամուխ եղան տեսչի պաշտպանները, որոնց մեջ, կարելի է ենթադրել, քիչ չեն եղել նաև ունևոր և առաջադեմ մարդիկ: Պայքարն ավարտվեց վերջիններիս հաղթանակով, Փափազյանին վերադարձվեցին իր պաշտոնը, վարժարանում ունեցած դիրքն ու հեղինակությունը: Կարճ ժամանակ անց, սակայն, 1857 թ. մարտին, իր կենսական ուժերն այդպես էլ չվերականգնած Ռ. Փափազյանը վախճանվեց: Հ. Սվաճյանի <<Մեղուն>> այս առթիվ գրում էր, որ մի քանի նորահայտ հարուստներ, ովքեր գաղտնի չարություն և ան-

Այսուհանդերձ, վարժարանն ամբողջովին զերծ չէր եկեղեցու ազդեցությունից. Զմյուռնիայի առաջնորդ Գաբրիել արք. ամեն կերպ խոչընդոտել էր վարժարանում ֆրանսերենի ուսուցմանը:

¹¹⁷¹ Փափազեան Պ. Ս. Կենսագրութիւն Ռուբէն Անդրէաս Զ. Փափազեան բազմադիւն վարժապետի, էջ 24:

հաշտ թշնամանք ունեին վարժապետի նկատմամբ, դիմեցին հալածանքների, որ հասցրեց նրա մահվանը (1857)¹¹⁷²:

Այժմ մի քանի խոսք Ջմյունիայի այս վարժարանի անվանակոչության մասին:

Ջմյունահայ համայնքին և նրա մշակույթին անդրադարձած բոլոր հեղինակները, սկսած XIX դ. երկրորդ կեսից, այնքան համբավված վարժարանը հիմնադրումից սկսած, հիշատակում են Ս. Մեսրոպյան անվամբ: Այստեղ, սակայն, մի անճշտություն կա. վարժարանն այդ անվամբ հետագայում է կոչվել և այս ժամանակավրեպությունը ձևակերպվել է որպես փաստական ճշմարտություն:

Իրականում դպրոցը Ս. Մեսրոպյան է կոչվել 1836 թ. ոչ վաղ, որովհետև մինչ այդ թվականը, սկզբնաղբյուրներում այն հիշատակվում է **դպրատուն, վարժարան, ուսումնարան, դպրոց** անուններով և ոչ ավելին: 1834 թ. մայիսի 9-ին Ներսես Աշտարակեցուն հղած տեղեկատվության մեջ Ջմյունահայ երևելիները դպրոցը հորջորջում են <<դպրատուն քաղաքիս>>: Նույն հասցեատիրոջն ուղղած՝ 1835 թ. մարտի 20-ի նամակում Ռ. Փափազյանն այն կոչում է **վարժարան, ուսումնարան և դպրոց** ¹¹⁷³: Եվ միայն 1836 թ. հունվարի 19-ի պաշտոնական ազդում, առաջին անգամ, դպրոցը կոչվում է արդեն անվանակոչված՝ <<Հանդես տարեկան հարցաքննութեան ուսմանց աշակերտացն Մեսրոպեան դպրատան>>¹¹⁷⁴ ձևով, այդ անվամբ հիշատակվելով այդուհետև, մինչև գաղթօջախի մայրամուտը:

Ջմյունահայ դպրոցների պատմության մեջ, հատկապես Ս. Մեսրոպյան դպրոցի կողքին և կարճ ժամկետում (1851-1853) միաժամանակ, գործել է Աղաբեկյան երկսեռ դպրոցը, որ հիմնել էին Մ. Աղաբեկյանը և Մ. Մամուրյանը: Վարժարանի ուսուցչական կազմում ընդգրկվել էին Փարիզի Մուրատյան վարժարանի մի խումբ երիտասարդ շրջանավարտներ: Մ. Աղաբեկյանը՝ նշանավոր <<Կռունկ հայոց աշխարհին>> ամսագրի (1860-1863, Թիֆլիս) ապագա խմբագիրը, դպրոցին տվեց եվրոպական առաջավոր մանկավարժական ուղղություն՝ Ժ.-Ժ. Ռուսոյի

¹¹⁷² Մեղու, 1860, թիւ 113, էջ 230-231, թիւ 115, էջ 245-246:

¹¹⁷³ Տես ՄՄ, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 148, վավ. 102: Մսերյանների արխիվ, թղթ. 206, վավ. 1482:

¹¹⁷⁴ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 89, վավ. 252:

մանկավարժական հայացքների հետևությամբ¹¹⁷⁵, որ նորություն էր առհասարակ հայ դպրոցի պատմության մեջ: Որպես մասնավոր, և ոչ թե թաղային, համայնքին պատկանող վարժարան, այն ամենից առաջ հենվում էր դաստիարակության ու կրթության համոզչության, ուսուցման ոչ բռնի մեթոդների կիրառման վրա՝ սաների բնական, աստիճանական զարգացումը ղնելով վարժարանի ուղղվածության հիմքում: Այստեղ մերժվում էին ծեծն ու ավանդական ֆալախան, որոնց օգնությանը, իբրև զորավոր փաստարկների, դիմում էր անգամ Ռ. Փափազյանի նման առաջադեմի համարում ունեցող մանկավարժը: Դպրոցականներին տրված պատիժները, նկատում էր Մկրտիչ Նուպարյանը, <<շատ անելի բանաւոր հիմ մ'ունէին, այսինքն խաղէ, ուտելիքի գրկման մէջ կը կայանային գլխաւորաբար>>¹¹⁷⁶:

Մեկ այլ նորույթ ևս՝ ժամանակի հայկական դպրոցներում գրաբարի բացարձակ տիրապետության պայմաններում աշխարհաբարի զուգահեռ ուսուցումը: Մնացյալ դեպքերում Աղաբեկյան վարժարանը շարունակում էր Ս. Մեսրոպյանի ավանդույթները՝ վարժարանը ծնողներին մերձեցնելու (ոչ միայն դաստիարակության ամբողջականության, այլև նյութական նկատառումներով) նրանց գործակցությունն ըստ ամենայնի ապահովելու տեսակետից: Այդպիսին էր տարեվերջյան քննությունների հրապարակայնությունը ծնողների և հոգաբարձու աղաների ներկայությամբ և որի աղմկոտ հաջողություններին էր պարտական Աղաբեկյան վարժարանը իր առաջին տարվան վաստակած համբավի համար: Այս ամենը, սակայն, կարճ տևեց: Վարժարանի բերած նորամուծությունները, կրոնաբարոյական դաստիարակության նորմերի հանդեպ ակնածանքի ակնհայտ պակասը և վերջապես, դպրոցական գործում մրցակցությանը հակառակ՝ մենատիրական հին ոգին, որի առկայությունն էր հետագայում ընդգծում Մեսրոպ Նուպարյանը, արագացրեցին իրադարձությունների ընթացքը: Պահպանողականների քարոզ-

¹¹⁷⁵ Այստեղ և այս վարժարանի մասին հանգամանորեն տես Նուպարեան Մ., Իմ մանկական յիշատակներէս, 1893, օգոստոս, էջ 372-379: Տես նաև Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 64-65: Ինքը՝ Մ. Աղաբեկյանը, 1849 թ. ավարտել էր Փարիզի Մուրատյան վարժարանը և այստեղ էլ ծանոթացել էր ֆրանսիացի նշանավոր լուսավորչի մանկավարժական հայացքներին՝ ձեռնամուխ լինելով, ի դեպ, նրա <<Էմիլ կամ դաստիարակության մասին>> աշխատության թարգմանությանը (Նուպարեան Մ., նշվ. աշխ., էջ 376):

¹¹⁷⁶ Նույն տեղում:

չությամբ տրված համայնքը դադարեցրեց իր աջակցությունը վարժարանին: Նկատենք, որ Մ. Նուպարյանն այստեղ <<չարակամություն>> չի տեսնում և վարժարանը քայքայելու ջանքերը (որոնց գործադրումը, ի դեպ, խրախուսում էր նաև մրցակից Ռ. Փափագյանը), բացատրում է հոգուտ Ս. Մեսրոպյան վարժարանի հանդեպ <<ծայրայեղ մտահոգության>> դրսևորում¹¹⁷⁷: Հավանաբար, Մ. Նուպարյանը հարթում էր իրական պատճառի սուր անկյունները. այստեղ պետք է առանձնացնել հնավանդ կրթության և դաստիարակության կենսունակության գործոնը, որն ամենատպալուրիչ հանգամանքը կարող էր լինել վարժարանի դեմ սկսված արշավի ընթացքում: Հիշենք նույն Ս. Մեսրոպյան վարժարանում եվրոպական լեզուների ուսուցման դեմ զմյուռնահայ պահպանողականների, այս թվում և կրոնական վերնախավի որոշ անձանց հարուցած խոչընդոտները, ինչպես և նույն այդ հոգևորականության լայնախոհ մեկ այլ գործչի՝ առաջնորդ արքեպ. Պ. Թագթագյանի ջանքերը, որ նա գործադրեց հոգուտ ֆրանսերենի ուսուցման: Հատկանշական էր նաև այդ պահպանողականների սկսած արշավանքը Ռ. Փափագյանի դեմ այն բանից հետո, երբ նրա վարժարանի տպարանում լույս տեսած Նարեկի մեջ (1843) հայտնաբերվեց տխրահռչակ բուրժի առկայությունը՝ հուզելով դավանաբանական մանրախնդիր կրքերը¹¹⁷⁸:

Աղաբեկյան վարժարանի ձախողումը ցույց է տալիս, որ զմյուռնահայ համայնքը 1850-ականի սկզբներին դեռևս պատրաստ չէր առավել ազատամիտ մանկավարժական ուղղություն որդեգրելու, քան ընդունված էր Ռ. Փափագյանի Մեսրոպյան վարժարանում: Մանկավարժական նոր դրույթներն ու մեթոդները զմյուռնահայ դպրոցներում պետք է մուտք գործեին միայն 1860-ական թթ. երկրորդ կեսից հետո, նախ Ստ. Ոսկանյանի, այնուհետև Մ. Մամուրյանի տեսչության ժամանակներում:

Աղաբեկյան դպրոցի հետ, նույն 1851 թ. Զմյուռնիայում բացվեց Տ. Հ. Սավալանյանի թաղային մասնավոր վարժարանը: Դրա մասին քիչ բան է հայտնի, համենայն դեպս, ոչ ավելին, քան իր՝ վարժարանի հիմնադրի տեղեկություններն են: Նա հայտնում է, որ 1850 թ. վերադառնալով Երուսաղեմից, <<տարի մի վերջ յաջողեցայ թաղային մասնաւոր դպրոց

¹¹⁷⁷ Նույն տեղում, էջ 378:

¹¹⁷⁸ Նույն տեղում, նույնքեր, էջ 511-512:

մի բանալ և քառասունի չափ աշակերտաց դասախօսել՝ օգնութեամբ մանկավարժի մի¹¹⁷⁹>>:

Տ. Սավալանյանի վարժարանը, պետք է կարծել, գործել է մի կարճ ժամանակ, հակառակ դեպքում այն կհիշեին նաև այլ հեղինակներ և ինքը՝ Տ. Սավալանյանը, դրան չէր անդրադառնա թոուցիկ և այն էլ, ընդամենը իբրև փաստ և ոչ ավելին:

Շուրջ հարյուրամյա պատմություն ունի գյուղնահայերի իգական վարժարանը: Իր ծագումնաբանությունը ևս սկսվում է նույն կերպ, ինչ արականը, կարելի է ենթադրել բավական ուշ՝ կրթված վարժապետ քահանաների անհատական կամ խմբային ուսուցման՝ վարժոցների ձևով: Տղաների վարժարանի արդյունավետ գործունեությունը, անշուշտ, խթանել է աղջիկների ուսուցման հետ կապված դժվարությունների հաղթահարումը: Համենայն դեպս, այս ընթացքը թափ է առել աստիճանաբար, սակայն և շարունակվել է այն բանից հետո, երբ համայնքի ազգային հիվանդանոցի մի սրահը հատկացվեց վարժապետ քահանայի՝ 1820-ական թթ., մինչև որ, ինչպես գրում է Հ. Քոսյանը, վիեննաբնակ մեծահարուստ, գյուղնացի Հակոբ Սարգսյանը <<1830-1835-ի միջոցները>> իր ծախքով աղջիկների համար կառուցել տվեց առանձին և միահարկ դպրոցական շենք¹¹⁸⁰: Դպրոցի շենքի կառուցումը ժամանակային ավելի որոշակի առումով ամրագրում է և Ա. Այվազյանը (1820 թ.՝ նախ կրթարան, 15-20 տարի անց՝ առանձին շենք¹¹⁸¹), որով և փաստորեն դպրոցի հիմնադրման ժամանակն է համարում 1820 թվականը: Ա. Այվազյանը ավելացնում է, որ Հ. Սարգսյանը պատրաստակամություն էր հայտնել այդ շենքը կառուցել տալ Ռյուշտիյե փողոցի վրա գտնվող <<ազգային գետնի>> սեփականության վրա: Շատ ավելի լավատեղյակ Հ. Ասատուրը նշում է վարժարանի հիմնադրման այլ թվական՝ 1838-ը¹¹⁸²: Վարժարանի առաջին ուսուցիչներից էին Հակոբ Շահինյան քահանան և Ղուկաս Պալազարյանը՝ <<լեզուագետ ու զարգացած մարդ մը>>, <<Արշալոյս Արարատեան>> լրագրի ապագա հիմնադիր խմբագիրը: Վերջինս, լավատեղյակ էր ժամանակի Զմյուռնիայի հայերի

¹¹⁷⁹ Սաւալան Տ., Կենսագրական յուշեր, էջ 38: Սակայն նույն աշխատության մեջ (էջ 88) Սավալանյանը գրում է, որ այդ վարժարանը բաց է արել 1858 թ.:

¹¹⁸⁰ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 137:

¹¹⁸¹ Այվազեան Ա., Յոնիականի հայ գաղութի նահապետներէն, 1900, 26 օգոստոսի/8 սեպտեմբերի:

¹¹⁸² Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը, էջ 225:

կրթական-հասարակական կյանքին և իր հերթին, այդ լրագրում բավական տեղեկություններ է տվել աղջիկների վարժարանի վերաբերյալ: 1840 թ. նրա լրագիրը հայտնում էր, որ <<աղջկանց դպրոցն>> ունի հարյուրի չափ սանուհի (նույն ժամանակվա Ս. Մեսրոպյան վարժարանում՝ երկու հարյուր հիսուն աշակերտ) և որ նրանցից ոչ ունևորների համար ապահովված է ձրի կրթություն: Սարգսյան դպրոցի դասացանկում ներառված էին հայերեն, վայելչագրություն, թվաբանություն, կարի և ասեղնագործության ուսուցում¹¹⁸³: Այս առաջին շրջանում Սարգսյան դպրոցում դեռևս բացակայում էր օտար լեզուների ուսուցումը¹¹⁸⁴, ինչն առկա էր Ս. Մեսրոպյան վարժարանում: Եվ դարձյալ, ի տարբերություն տղաների վարժարանի, Սարգսյան դպրոցը գիշերօթիկ բաժին չուներ. պատճառներից մեկն այն էր, որ Զմյուռնիայի թեմում, որտեղ դեռևս սակավաթիվ էին դպրոցները, կրթության հարզը գնահատող ծնողները նախընտրում էին մասնավոր-վարժոցային ուսուցումը՝ աղջիկ երեխաներին պահելով ուշադրության կենտրոնում: 1845 թ. Հայնոցի՝ հայկական թաղի հրդեհի ժամանակ այրված Սարգսյան վարժարանը վերակառուցվեց տիկ. Հռիփսիմե Կոստանոյանի նախաձեռնությամբ. նոր շենքը երկհարկանի էր, առավել ընդարձակ՝ նախորդի համեմատությամբ և ուսուցման շատ ավելի հարմարավետ պայմաններով: Վարժարանը շարք մտավ 1849 թ. և վերանվանվեց ի պատիվ բարերարուհու՝ Ս. Հռիփսիմյան: Այսուհանդերձ, վարժարանի կառուցումը հետագայում բավական թանկ նստեց համայնքին, որին ուշադրություն է դարձրել Ատոմը. <<Ս. Հռիփսիմեանց վարժարանի արդի շենքին շինութեան երբ ձեռնարկուեցաւ,- գրում է նա,- ֆերման մը հարկ էր: Այս ֆերմանը պատրիարքարանը կրնար ստանալ եւ օրէնք էր, որ անոր միջոցով

¹¹⁸³ Արշալոյս Արարատեան, 1840, 5 հոկտեմբերի:

¹¹⁸⁴ Մխիթարյանների Բագմավէյը 1847 թ. գրում է, որ Զմյուռնիայի աղջիկների դպրոցում սանուհիները <<հայերեն, գաղղիերեն ու բանիլ (ասեղնագործել-Ս. Խ.) կը սորուին (1847, թիւ 2, էջ 28): Բայց այս ֆրանսերենի ուսուցման փաստը, երբ 1845 թ. այրվել էր Սարգսյան վարժարանը և չէր գործում մինչև նոր շենքի կառուցումը, շատ կասկածելի է թվում: Հավանաբար, Բագմավէյի տվյալը վերաբերում է 1845 թ. հրդեհին նախորդող տարիներին, երբ Զմյուռնիայի զույգ վարժարանների ղեկավարությունը հանձնվել էր <<Սյունյաց ընկերությանը>>: 1845-1848 թթ. աղջիկների դպրոցը չէր գործում և այդ պատճառով, ինչպես տեղեկացնում էր Զմյուռնիայի թեմի առաջնորդ Պողոս արք. 1849 թ. մայիսի 3-ին, հայ աղջիկները սովորելու էին գնում եվրոպացի վարժուհիների մոտ (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 147, վավ. 476):

խնդրէինք: Լաւագոյն սեպեցինք մասնաւորի մը դիմել: Շինութիւնը վերջացաւ, ֆէրմանը չեկաւ, զի մասնաւորի պաշտօնը չէր զայն խնդրել: Կալուածատրոց վարչութիւնը իբր մասնավոր շէնք մը նկատելով՝ դպրոցի շէնքը իր արժողութեան համեմատ տուրքի մը ենթարկեց, ոչ աննշան գումար մը, որ երկար տարիներ վճարուեցաւ ազգ. արկղէն>>¹¹⁸⁵:

Ս. Հռիփսիմյան դպրոցը, իրոք բավական թանկ էր նստել համայնքին, բայց ազգային արկղը, պետք է նկատի առնել, բավական տարողունակ էր ուսման համար, ի լրումն դրա, այդ բեռը թեթևացնում էին բարերարները: Դպրոցի նորոգումից հետո բոլոր սանտուհիների ուսուցումը, իսկ նրանց թիվը հասել էր 230-ի, դարձավ անվճար: Համայնքն այս կարգի դժվարությունները հաղթահարում էր ոչ միայն Հո. Կոստանդյանի, այլև այլ անձանց, հատկապէս Յուսուֆյան եղբայրների (Հո. Կոստանդյանը նրանց քրոջ դուստրն էր) նվիրատվությունների շնորհիվ:

Վարժարանի <<բարձրագոյն դասատվութիւնը>>, այսինքն, տնօրնութիւնը, հանձնվեց Հովհ. Շահինյան քահանային¹¹⁸⁶, ով այդ վարժարանում ուսուցիչ էր դեռևս 1830-ական թթ.: Մի քանի տարի անց այդ պաշտոնը հանձնվեց Ս. Մեսրոպյան վարժարանի հոգաբարձությանը, որից հետո երկսեռ վարժարանները ղեկավարվում էին մեկ ընդհանուր վարչության կողմից, որի վերահսկողությունը մինչև 1840-ական թթ. վերջերը իրականացնում էր <<Սյունյաց ընկերությունը>>: Մահվանից ոչ շատ առաջ Ս. Հռիփսիմյանի տեսչությունը ստանձնել է Ռ. Փափագյանը: Այստեղ նկատենք, որ Էգեյանի գաղթօջախների պատմությունը եզրափակող ավելի քան 80-ամյա շրջանում (1840-1922) վարժարանների գործունեությունը ի սկզբանե սերտորեն ներհյուսված էր կրթական-բարեսիրական ընկերություններին, որով և լուսավորական գործն այդ համայնքներում անվիճելիորեն ստացել էր հանրային բովանդակություն:

Իր գործունեության լայն շառավղով ու դրան համարժեք ծրագրով <<Սյունյաց ընկերություն>> աննախընթաց երևույթ էր ժամանակի արևմտահայ իրականության մեջ, այդ թվում և Կոստանդնուպոլսի հայ հանրության նույնատեսակ ազգային կազմակերպությունների համեմատությամբ: Զմյուռնահայ գաղթօջախի, ասենք՝ Էգեյանի հայկական

¹¹⁸⁵ Ատոմ, Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը, 1902, 17/30 հունիսի:

¹¹⁸⁶ Նոյեան աղաւնի, 1852, 5 հունիսի:

ողջ համայնքների պատմության մեջ ևս, այն առանձնանում է իր ազգային-լուսավորական նշանակությամբ և 1840-ականին թանգիմաթի տրամաբանությամբ ընթացող տեղաշարժերով: Թանգիմաթի հռչակումը (1839) զարգացման հնարավորություններ ստեղծեց հատկապես օսմանյան մեծ քաղաքների համայնքների համար՝ մի որոշ չափով ազատականացնելու ազգային մարմինների կազմն ու դրանց գործունեության բովանդակությունը: Այս պայմաններում ազգային լուսավորության խնդիրը վերածվում էր ժողովրդական գործի, որը պետք է դուրս բերվեր համայնքների հին վերնախավի մենաշնորհ տնօրինությունից և որում հաշվի պետք է առնվեին հանրության մյուս խավերի, և ամենից առաջ փոփոխությունների կողմնակից միջին խավերի՝ արհեստավորության ու առևտրականության պահանջները: Եվ պատահական չէ, որ Կ. Պոլսում՝ հայ համայնքի ներսում ամիրայական միահեծանության դեմ բողոքներով և ապա դիմակայությամբ հրապարակավ հանդես եկան հենց այդ հասարակական շերտերը: Այստեղ առաջին ընդհարումներից մեկը ամիրաների և արհեստավորության միջև, ծայր առավ ազգային մարմինների ներկայացուցչության շուրջ, 1840 թ. վերջերին: Հին կարգուսարքի ջատագով ամիրաները շարունակելով իրենց պարտադրիչ ընթացքը, Իսկյուտարի թաղեցիների ցանկությանը հակառակ, պնդեցին, որ թաղապետը (մուխթար) պետք է լինի իրենց դրածո Մկրտիչը: Հուզված էսնաֆի մարդիկ մեկուկես տասնյակ ստորագրությամբ բողոք հղեցին պատրիարքարան՝ պահանջելով պաշտոնանկ անել նրան: Ի պատասխան դրա, ամիրաները եկեղեցում ժողով գումարեցին և իրենց հերթին, 120 ստորագրությամբ մի գրություն ուղղեցին պատրիարքին՝ պատվիրելով ձեռք չտալ Մկրտչին: Հետաքրքիր է Զմյուռնիայի <<Արշալոյս Արարատեան>> լրագրի սրտնեղությունը ամիրայական կամքի դեմ ելած էսնաֆի նկատմամբ: Բնականաբար, պատրիարքը պետք է անցներ ամիրաների կողմը և իր հերթին, սատարելով նրանց, լրագիրը գրում է, թե, իբր, պատրիարքը համեմատել է կողմերի դիմումները, <<այսինքն եկեղեցույ մեջ գրածը ու գինետանը մեջ տաքցած գլուխներուն խուռմիշ ըրածը (խելքներին փչածը-Ա. Խ.) մեկմեկու քով դնելով՝ իսկոյն իրաւունքը որ կողմը ըլլալը իմանալուն պէս՝ կոնդակաւ հաստատեց պարոն Մկրտիչը իր գործոյն մեջ>>¹¹⁸⁷:

¹¹⁸⁷ Արշալոյս Արարատեան, 1841, թիւ 15:

Բայց անկախ այս պարտությունից, ամիրաների և էսնաֆի հակադրությունն ի վերջո, և այդ արդեն 1840-1850-ական թթ., պետք է լուծվեր երկրորդի օգտին: Նշված միջադեպից շատ չանցած, ամիրաների և էսնաֆի միջև պայքարը դրսևորվեց նաև դպրոցաշինության ասպարեզում, նույն Իսկյուտար թաղի՝ այս անգամ ճեմարանի շուրջ՝ այնուհետև վերաճելով ազգային կառույցների կառավարման խնդրի¹¹⁸⁸: Այս իրադարձություններից հետո էր, որ պատրիարք Մատթեոսի ժամանակ (1844) հաստատվեց մի որոշ հավասարակշռություն ամիրաների և արհեստագետների միջև՝ սրանց խառն ներկայացուցչությամբ, իսկ դրանից հետո՝ պետության կողմից ճանաչված Հոգևոր և Գերագույն ժողովներով՝ առանց դրանց անդամների սոցիալական բնավածության, դարձյալ կողմերի համաձայնեցված անդամակցությամբ:

Զմյուռնիայում ևս հասարակական հակասություններն ի հայտ եկան դպրոցի և լուսավորության ասպարեզում: Ռ. Փափազյանի դպրոցական նորամուծություններին պահպանողականների դիմակայելու պայմաններում: Սակայն այստեղ պայքարը չհասավ այնպիսի լարվածության, ինչպես Կ. Պոլսի հայ համայնքում. նախ, արհեստավորները Զմյուռնիայում չունեին իրենց պոլսաբնակ արհեստակիցների համախմբվածությունը և այնուհետև, մեծահարուստների ճնշող մասը հակասություններ չունեին համայնքի այլ խավերի հետ՝ դպրոցական գործի զարգացման տեսակետից: Ընդհակառակն, ինչպես տեսանք, ազդեցիկ դրամատերերի մի խումբ իրենք էին Զմյուռնիայում և շրջակա քաղաքներում դպրոցներ հիմնում՝ գործունեության ասպարեզ տրամադրելով մտավորականությանը: Այս յուրահատուկ դաշինքն իր արդյունավետության բարձր աստիճանին հասավ <<Սյունյաց ընկերության>> մեջ նրանց գործունեությամբ: Ընկերությունը հիմնվեց 1841 թ. հունիսին, մեկենասները տրիեստաբնակ զմյուռնացի վաճառականներն էին՝ Պետրոս Յուսուֆյանը, Աբրահամ Ապրոյանը, Գրիգոր Աբելյանը և Հակոբ Սարգսյանը՝ Վիեննայից, Տասյանները՝ Կ. Պոլսից: Ընկերությանը բաժանորդագրվել էին բազմաթիվ վաճառականներ Բաղդադից, Բոմբեյից և այլ վայրերից¹¹⁸⁹:

Ընթերցողներին հայտնելով <<Սյունյաց ընկերության>> կազմակերպման մասին, <<Արշալոյս Արարատեան>> լրագիրը գրում էր. <<Այս ընկերութեան անունը Սինեաց... դնել արժան դատուեցաւ ի յիշատակ այն երեւելի դպրատուններաց, որոնք մեր սուրբ թարգմանիչներուն

¹¹⁸⁸ Ասատուր Հ., Կոստանդնուպոլսոյ հայերը, էջ 182-184:

¹¹⁸⁹ Արշալոյս Արարատեան, 1841, հունիսի 13, նոյեմբերի 7:

Մահակայ եւ Մեսրոպայ ժամանակը Սիւնեաց նահանգին մէջը շինուելով՝ հետզհետէ ծաղկեցան, մանաւանդ ուրերորդ դարուն մէջ մեծ համբաւ ստացան: Սիւնեաց ընկերութեան հիմնադիր եւ պաշտպանները Թրեստու մեծապատիւ եւ ազգասէր աղաները ըլլալով... այս անգամ յիշեալ աղաներին յատուկ խնդրանքը Ղուկաս Գ. Պալղագարեանը գլխաւոր վերատեսուչ ընտրուեցաւ»¹¹⁹⁰:

Ընկերության նպատակն էր <<Հայոց ազգին ուսումնական ու բարոյական յառաջադիմութեանը օգնել ըստ կարի>>: Այն կազմված էր տասն անդամներից՝ Ստ. Պալասանյան, Հ. Էքիզյան, Հ. Նուպարյան, Դ. Պալղագարյան, Ռ. Փափագյան և ուրիշներ՝ հիմնականում մտավորականներ: Ընկերության անդամները պետք է վճարեին 50 օսմանյան դուրուշ: Կարող էին անդամագրվել նաև օտարազգի հայասեր անձինք: Կանոնադրությամբ նախատեսվում էր¹¹⁹¹ տարեկան մեկ անգամ հրապարակել նրա հաշվետվությունը՝ եկամուտների ու ծախքերի վերաբերյալ:

Փոքր-ինչ առաջ անցնելով նկատենք, որ բավական երկար ժամանակ ընդարմացած հետադիմականները Զմյուռնիայում աշխուժացան 1846 թ.՝ սկսելով գործել ընկերության դեմ, որը նրանց անհանգստացրել էր լուսավորական գործի մենաշնորհից հոգևորականությանը գրկելու պատճառով: Ընդ որում, այդ հակառակորդները բնավ էլ պարտադիր չէ, որ հոգևորականներ լինեին: Զմյուռնիայի երկրորդ թերթի՝ <<Հայրենասերի>> նյութերը, որոնց կանցնենք հետագայում, ցույց են տալիս, որ նրա շուրջ են խմբվել նաև ունևոր աշխարհիկ անձինք, ովքեր հակադրվում էին և <<Արշալոյս Արարատեան>> լրագրին, և դրա խմբագիր ու <<Սյունյաց ընկերության>> հոգաբարձու Դ. Պալղագարյանին:

Կաթողիկոս Ներսէս Աշտարակեցուն գրած իր նամակում (1844, հուլիսի 30) <<Սյունյացի>> հիմնադիր անդամներից Գր. Մարկոսյանը բացատրում էր, որ ընկերության նպատակը ազգակից երեխաների անվճար ուսուցումն է, ինչպես և <<յուսմունս այլեւայլ լեզուաց եւ պէսպէս

¹¹⁹⁰ Նույն տեղում, 1841, յունիսի 13:

¹¹⁹¹ Ընկերության երկրորդ կանոնադրության մեջ առավել որոշակի են շարադրված նրա նպատակները և գործունեության ընդլայնման միտումները, այն, որ Զմյուռնիայի վարժարանները բարեկարգելուց գատ, <<հետզհետէ հոգ պիտի տարուի խեղճ հայազգի գտնուած ուրիշ ամէն քաղաքներ ալ դպրատուներ հաստատել ու անոնց բարեկարգութեանցը ու յառաջադիմութեանցը խնամ տանիլ՝ վարժապետներ կարգելով հայերէնի գիտութեանց ու օտար լեզուներու համար>> (Արշալոյս Արարատեան, 1844, 24 յունիսի):

կենցաղօգուտ գիտութեանց եւ արուեստից>>: Ընկերությունը, հարում է նա, ստանձնել է նաև մերձակա գյուղերի որք և աղքատ պատանիների կրթության, դրա հետ միասին պարենի, հագուստի և օթևանելու հոգսը, ինչպես և փոքրասիական քաղաքներում դպրոցներ բանալու գործը¹¹⁹²: Ընկերությանը նյութական աջակցություն են ցույց տվել Լազարյանները՝ տրամադրելով 10 հազ. դուրուշ, ինչպես և օտարազգի շատ վաճառականներ, իսկ նրա տարեկան եկամուտները հասնում էին բավական պատկառելի գումարի՝ 40 հազ. դուրուշի: <<Սյունյացի>> անվթար գործունեությունն ապահովելու համար համայնքի լուսամիտ և երևելի գործիչներից մեկը՝ Գր. Մարկոսյանը, խնդրում էր կաթողիկոսի հովանավորությունը՝ ուշագրավ հիմնավորմամբ. <<Թոյլ տուր մեզ,-գրում է նա.- դնել զվեհ անուն Սրբազնակատար Հօրդ ի գլուխ ընկերութեան Սիւնեաց, կոչելով զքեզ պաշտպան այդմ, որով... անվտանգ մնասցէ ընկերութիւնն մեր ի չարութենէ ոմանց հոգեւորականաց մերոց որք շարժեալ ի վարդապետական փառասիրութենէ եւ յուսումնատեցութենէ անօգուտ ջանային ի միմեանց տապալել ընկերութիւն մեր ոչ երկար ժամանակ յառաջ>>¹¹⁹³:

Դրանից 15 տարի անց, բայց Գր. Մարկոսյանին ու նրա տազնապնեւրին ժամանակակից Ստ. Ոսկանյանը՝ մեծանուն մտածողն ու հրապարակագիրը, գրում էր, որ <<Սյունյաց ընկերության>> կործանման պատճառը հոգևորականության թշնամանքն էր¹¹⁹⁴: Կնշանակի, հետադիմությունն ընկերության դեմ բացահայտ պայքար է մղել նրա գործունեության վերելքի շրջանում՝ 1843-1844 թթ. և միայն նրա գորեղ հովանավորներն են զսպել այդ ճնշումները, թեև ընկերության թշնամիները հաջողել էին կաշկանդել նաև նրանց: Հակառակ դեպքում Գր. Մարկոսյանը չէր հայցի Ներսես Աշտարակեցու բարձր հովանավորությունը:

Հայտնի չէ, թե ինչ պատասխանեց կաթողիկոսը վերոհիշյալ նամակին, բայց և հայտնի է այն, որ նա կմտներ բավական փափուկ դրության մեջ՝ <<Սյունյաց ընկերության>> գլխի (կամ հովանավորի) պարտական-

¹¹⁹² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 110, վավ. 100:

¹¹⁹³ Նույն տեղում:

¹¹⁹⁴ Արեւմուտք, 1859, թիւ 2, էջ 11: 1845 թ. Ստ. Ոսկանյանը Արշալոյս Արարատեան լրագրում տպագրել էր <<Երգ չափածոյ>> ողբերգական սյուժեով բանաստեղծությունը, որ այդ տարվա ավերիչ հրդեհի արձագանքը լինելուց բացի, վկայում էր գմյուռնահայ կյանքի իրողությունների հանդեպ նրա զգայուն վերաբերմունքի մասին (տես Արշալոյս Արարատեան, 1845, 19 հոկտեմբերի):

նությունները ստանձնելու դեպքում: Իր տեղում մենք տեսանք, որ 1825 թ. ի վեր Էջմիածինը կորցրել էր տերունի թեմերն Օսմանյան Թուրքիայում և դադարել Կ. Պոլսի պատրիարքության հետ գործնական որևէ փոխհարաբերություն ունենալուց, իսկ 1825 թ. հետո, ինչպես նկատում է Հ. Ասատուրը, կաթողիկոսի անունը չէր հիշատակվում այդ երկրի հայոց եկեղեցիներում¹¹⁹⁵: Միայն 1844 թ. սեպտեմբերի 14-ին Կ. Պոլսի պատրիարք Մատթեոսի գումարած ազգային վարչության ժողովի որոշմամբ այդ մոռացությունը վերացվեց, առանց, սակայն, Էջմիածնի նվիրակական և առաջնորդական իրավունքի վերականգնման¹¹⁹⁶: Այս պայմաններում հազիվ թե կաթողիկոսը համաձայներ իր անունն առնչել ընկերության հետ, որը գործում էր Էջմիածնի նախկին տերունի թեմում: Համենայն դեպս, Ներսես Աշտարակեցու անունը, որպես <<Սյունյաց ընկերության>> պաշտոնական հովանավորի, որևէ տեղ բնավ չի արձանագրված:

Վերադառնալով ընկերության հակառակորդներին, ովքեր շարժվում էին, Գր. Մարկոսյանի ձևակերպմամբ <<ի վարդապետական փառասիրութենէ>>, նկատենք, որ նրանց մի հայտնի չափով զսպում էր ծայր առած՝ թանգիմաթի Բարեփոխումների տրամաբանությունը: 1839-1845 թթ. Թուրքիայում բավական հուսադրող փորձեր արվեցին աշխարհիկ հանրակրթական դպրոցներ ստեղծելու ուղղությամբ, իսկ 1846 թ. Բարեփոխմամբ թուրքական դպրոցները դուրս էին բերվում մահմեդական կրոնագետների իրավասությունից և հանձնվում պետության տնօրինությանը՝ կազմակերպելու աշխարհիկ միջնակարգ դպրոցներ¹¹⁹⁷: Անշուշտ, կայսրության հպատակ փոքրամասնությունների դպրոցները, այդ թվում և հայերինը, ընդհուպ մինչև թանգիմաթ և դեռ դրանից հետո էլ, տասնամյակներով առաջ էին թուրքական դպրոցներից՝ իրենց կրթական մակարդակով ու բովանդակությամբ¹¹⁹⁸, սա-

¹¹⁹⁵ Ասատուր Հ., Կոստանդնուպոլսյ հայերը, էջ 184-185:

¹¹⁹⁶ Նույն տեղում:

¹¹⁹⁷ Желтяков А.Д., Петросян Ю.А. История просвещения в Турции, с. 13-14, 23.

¹¹⁹⁸ Այս իրողությունն իր ազդեցությունն էր թողնում նաև բուն իսկ՝ թուրքական դպրոցի զարգացման վրա: <<Ոչ մահմեդական համայնքների դպրոցները, գրում են հիմնահարցը հետազոտող հեղինակները,-և ամենից առաջ հույներինը և հայերինը, կայսրության մեջ նոր ժամանակի ամբողջ ընթացքում կողք-կողքի գոյակցում էին թուրքական դպրոցների հետ, շատ քաղաքներում խառն՝ թուրք, հույն, հայ ազգաբնակչությամբ: Դրանք քիչ ազդեցություն չթողեցին թուրքական

կայն պետք է նկատել, որ միլեթների համակարգի կարգունկառնով և քաղաքացիական իշխանության չգոյության պայմաններում հայկական դպրոցներում ազդեցիկ էին մնում հոգևորականության ազդեցությունն ու հեղինակությունը: Սակայն դպրոցի և դպրոցական գործի աշխարհականացումը արևմտահայության միջավայրում սկսվել էր թանգիմաթից դեռևս շատ առաջ: Իր տեղում՝ Զմյուռնիայի արական վարժարանի օրինակով տեսանք, որ Մ. Նուպարյանը Ռ. Փափագյանին ուսուցչական աշխատանքի հրավիրելիս հայտնում էր, որ այդ վարժարանը դուրս է բերված հոգևորականության ղեկավարումից: <<Սյունյաց ընկերության>> հակառակորդների ջանքերը, կարելի է կարծել, պայմանավորված էին դպրոցական գործում այդպիսի ղեկավարումը պահպանելու մեծ ցանկությամբ:

1841-1848 թթ. <<Սյունյաց ընկերությունը>> գրեթե ամբողջովին իր ձեռքն էր վերցրել զմյուռնահայ վարժարանների նյութական ծախսերի ապահովման (մատակարարման) և կառավարման գործը: Ընկերությունը վճարում էր դպրոցների վարիչների և ուսուցիչների մեծ մասի աշխատավարձը, հագեցնում դասատվությունը ուսումնական անհրաժեշտ, անգամ շատ թանկ առարկաներով, ըստ հարկին դրանք գնելով Եվրոպայում: 1843 թ. ընկերությունը ֆիզիկայի դասերն ապահովել էր Վիեննայում գնված անհրաժեշտ գործիքներով: Նրա գործունեությանը շարունակում էր մեծապես աջակցել Պողոս Յուսուֆյանը՝ եգիպտահայ նշանավոր գործիչը, աշխատավարձ սահմանելով անգլերենի ուսուցման համար և միաժամանակ, 15 բաժին անդամագրվելով ընկերությանը: Իսկ եղբայրը՝ Պետրոս Յուսուֆյանը, <<շատ ատեն էլ վեր գաղղիական լեզուի դասատուութիւնը հաստատած է վարժարանի մէջ>>, հայտնում էր այդ օրերի զմյուռնահայ լրագիրը¹¹⁹⁹: Մ. Մեսրոպյան դպրոցին նա կտակել էր 20 հազ. ավստրիական ֆիորին, Մարգարյան աղջիկների վարժարանին և Զմյուռնիայի ազգային հիվանդանոցին՝ 10 հազարական (440 հազ. դուրուշ)¹²⁰⁰:

Հարկ է նկատել, որ ընկերության գործունեության շնորհիվ Մ. Մեսրոպյան դպրոցում ժամանակի պահանջները բավարարող մակարդակի

լուսավորության զարգացման վրա և մի հայտնի չափով օրինակելի էին թուրքերի համար, որ նշում էին նաև թուրք մտավորականության ներկայացուցիչները>> (Желтяков А. Д., Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 82):

¹¹⁹⁹ Արշալոյս Արարատեան, 1842, 19 հունիսի:

¹²⁰⁰ Նույն տեղում, 1846, 23 օգոստոսի:

հասավ բնագիտական և մաթեմատիկական առարկաների ուսուցումը, որ մինչ այդ զիջում էր լեզուների և պատմության դասերի որակներին: Ընկերությունն այս վարժարանում հաստատել էր երկրաչափության, հանրահաշվի և ֆիզիկայի դասեր՝ սրանց հետ դասացուցակի մեջ մտցնելով նաև աշխարհագրություն: 1842 թ. Ռ. Փափազյանի խրախույսներով ու մասնակցությամբ Ս. Մեսրոպյան վարժարանում ուսուցանվում էին վեց լեզուներ՝ հայերեն, հունարեն, թուրքերեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն¹²⁰¹:

Արդեն բավական նյութական հնարավորություններ ունեցող ընկերությունը կարողացավ իր գործունեությունը տարածել Ջմյունիայի թեմի մյուս բնակավայրերում ևս՝ Մանիսայում, Բայանդըրում, Աք-հիսարում, Էդդեմիշում, Մենեմենում, Այդընում և անգամ թեմի սահմաններից այն կողմ՝ Չանաքկալեում (Գելիբոլու) և այլուր, հիմնելով վարժարաններ¹²⁰²:

Դպրոցական գործի վերելքը համայնքում մրցակցական ներշնչումներ էին ստանում քաղաքի հույն հանրության լուսավորական տպավորիչ առաջընթացից: Հիրավի, Ջմյունիայի հույները լուրջ ձեռքբերումներ ունեին իրենց դպրոցաշինության, լեզուների և գործնական (առևտրական) գիտելիքների ուսուցման ասպարեզներում: Հույները՝ առաջինը և հավանաբար, միակ հանրությունը տեղի քրիստոնյաների մեջ, թանգիմաթի հռչակումից անմիջապես հետո բաց էին արել մասնագիտացված ոչ ազգային դպրոց՝ ֆրանսերենի ու իտալերենի ուսուցմամբ, ինչպես և Ջմյունիայի տարողունակ շուկայի համար ոչ պակաս գործնական նշանակություն ունեցող կրկնատումար հաշվապահության դասընթաց՝ ամեն մի ազգության սովորողների համար: Ընդամին, նրանք հատուկ ուշադրություն էին դարձնում դասական և ժամանակա-

¹²⁰¹ Արշալոյս Արարատեան, 1842, փետրվարի 6, ապրիլի 10: 1840-ական թթ. առաջին կեսին, <<Սյունյացի>> գործունեության արգասաբեր շրջանում, Ս. Մեսրոպյանի տարեկան քննություններին, իբրև պատվավոր հրավիրյալներ, ներկա էին լինում նաև զմյունաբնակ այլ դավանությունների մարդիկ: 1843 թ. փետրվարին դպրոցում այդպիսի պատվավոր հյուր էր Ջմյունիայի լատինացիների առաջնորդ արքեպ. Մուսաբինին, ով գրքեր է ընծայել իտալերենի և հունարենի մրցանակաբաշխության մեջ աչքի ընկած աշակերտներին (տես Արշալոյս Արարատեան, 1843, 12 փետրվարի):

¹²⁰² Նույն տեղում, 1844, 20 մայիսի, 1846, 8 փետրվարի:

կից հունարենի ուսուցմանը՝ Ֆոտիոս Պետրաղիսի դասատվությամբ¹²⁰³։ 1841 թ., հայկական <<Սյունյացին>> համընթաց, Զմյուռնիայում նրանք կազմել էին կրթական-լուսավորական <<Մուսիոն>> ընկերությունը՝ նախատեսված կրթական որոշակի ցենզ ունեցող անձանց համար և որը շաբաթական մեկ կամ երկու բանախոսություն էր կազմակերպում արվեստագիտական և գիտական թեմաներով¹²⁰⁴։ Ավելացնենք, որ հույները վարժարաններ ունեին ոչ միայն իրենց Այա Կատերինա (Մուրբ Կատերինա) թաղում¹²⁰⁵, այլև քաղաքի արվարձաններում։ Առհասարակ, թանգիմաթի սկիզբն արդյունաբեր էր և իրենց՝ հպատակ այլադավանների լուսավորական զարգացման համար, հատկապես այն իմաստով, որ վերջիններս թանգիմաթից էլ շատ առաջ ստեղծել էին ազգային դպրոցներ և թանգիմաթի ընձեռած հնարավորություններն ի սպաս էին դնում ավանդական լուսավորական արժեքների արդիականացման նպատակին։ Այս տեսակետից չպետք է անգիտանալ Զմյուռնիայի եվրոպական դպրոցների բարերար ազդեցությունը տեղական մյուս համայնքների՝ կրթական բնագավառում ցուցաբերած մղումների վրա։ 1840-ից այստեղ հատկապես աչքի էր ընկնում լեզուների, բնագիտության և արվեստների ուսուցմամբ Ռեֆորցոյի ֆրանսիական դպրոցը, լեվանտական քաղաքային տնտեսական կյանքի հետաքրքիր լեզվական կողմնորոշմամբ՝ անգլերենի, ֆրանսերենի, իտալերենի, հայերենի, հունարենի, թուրքերենի դասերով։ Այս դպրոցում դասավանդում էին նաև բնագիտական առարկաներ, պատմություն և բանասիրություն, ինչպես և այլ կիրառական գիտելիքներ՝ վայելչագրություն, գծագրություն, երաժշտություն և պարուսուցում¹²⁰⁶։

Զմյուռնիայում դպրոցի և լուսավորության համար բարենպաստ այս տեղաշարժերին, ինչպես և համայնքների տնտեսական կյանքին մեծապես վնասեցին 1840-ական թթ. առաջին կեսի երկու հրդեհները։ Առաջինը 1841 թ. հուլիսի 16-17-ի հրդեհն էր, որ նյութական լուրջ կորուստներ պատճառեց քաղաքին։ Այդ հրդեհից հայոց թաղը համեմատաբար քիչ էր վնասվել, եթե համեմատենք մյուս թաղերի կորուստների հետ։ 17 ժամ տևած այդ հրդեհի ընթացքում այրվել էին մահմեդականների 3050,

¹²⁰³ Նույն տեղում, 1841, 20 մայիսի, 1846, 8 փետրվարի։

¹²⁰⁴ Նույն տեղում, 1841, 11 ապրիլի։

¹²⁰⁵ Զմյուռնիայում հույներն ունեին երկու թաղ՝ Վերին և Վարի (տես Արշալոյս Արարատեան, 1841, 18 հուլիսի)։

¹²⁰⁶ Նույն տեղում, 1845, 21 սեպտեմբերի։

հրեաների 500, հայերի՝ 17 տներ, 42 մզկիթ, 15 խան (պահեստարաններ և հյուրանոցներ), 2437 խանութ, 29 հունական և թուրքական դպրոցներ: Քաղաքի 1/3 մասը մոխրի էր վերածվել, 30-35 հազ. մարդ մնացել էր անօթևան¹²⁰⁷: Հայոց թաղը փրկվեց հաջող հակագործողության շնորհիվ՝ փլուզեցին կրակի ճանապարհին գտնվող մի քանի տներ, մի բան, որ չէին հասցրել անել մյուս թաղերում և որի պատճառով գրեթե ամբողջովին ոչնչացան հունական Վերին թաղը և հրեական թաղը¹²⁰⁸: Այս, և համեմատաբար ոչ մեծ՝ 1842 թ. մարտի շուտ մարված հրդեհը Ջմյուռնիայում¹²⁰⁹ կարծեք նախերգանքն էին այն վիթխարի և տևական հրդեհի, որ բռնկվեց 1845 թ. հունիսի 21-ին՝ մեծ ավերածություններ պատճառելով քաղաքին և մասնավորապես հայոց թաղին և որն այս անգամ բազմապատիկ կորուստներով էր հատուցելու նախորդ հրդեհների պատճառած ոչ մեծ վնասների դիմաց: Ջմյուռնիայում այս անգամ այրվել էր 3500 տուն, հայոց թաղի 900 տներից՝ 870-ը: Գրեթե հրաշքով անվթար էին մնացել, ըստ <<Արշալոյս Արարատեանի>>, Ս. Մեսրոպյան վարժարանը և ազգային հիվանդանոցը¹²¹⁰: Հրո ճարակ էին դարձել Ս. Ստեփանոս եկեղեցին, չթագործարանը (պասմահանե), 500 ընտանիք մնացել էր անօթևան և առանց պարենի¹²¹¹: Հույների թաղում այրվել էին 1000 տուն, 18 գինետուն, հարյուրավոր խանութներ, լատինաց թաղում՝ 600 տուն, խանութներ, մի քանի հյուպատոսարան և այլն: Ամբողջ քաղաքի վնասը հաշվվում էր վիթխարի դրամական գանգվածով՝ 300 մլն դուրուշ, որից ավելի քան 50 մլն դուրուշ կազմում էին հայերի կորուստները¹²¹²:

¹²⁰⁷ Նույն տեղում, 1841, 18 հուլիսի, 15 օգոստոսի:

¹²⁰⁸ Նույն տեղում, 1841, 18 հուլիսի:

¹²⁰⁹ Նույն տեղում, 1842, 6 մարտի:

¹²¹⁰ Նույն տեղում, 1845, 29 հունիսի: Սակայն այստեղ պետք է ճշտում մտցնել առաջնորդ արք. Թագթագյանի՝ Ներսես Աշտարակեցուն գրած նամակից (1846, 20 հունվարի) պարզ է դառնում, որ վարժարանը, այնուամենայնիվ, էթե լրիվ չէր այրվել, ապա զգալիորեն վնասվել էր. <<Ձկնի այսր ամի վերանորոգեցին պայծառագոյն քան զառաջինս, զբարեհամբաւ ուսումնարանս Ս. Մեսրոպբայ, ուրանոր արդեն սկսեալ են աշակերտք շարունակել զդասառօթիւնս իւրեանց>>,- գրում է նա (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 121, վավ. 92):

¹²¹¹ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 116, վավ. 28 ա, 28 բ:

¹²¹² Ատում, Իզմիրի Ս. Լուսաուրչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը (Արեւելք, 1902, 18 ապրիլի/1 մայիսի): Ջմյուռնահայերի օգտին շարունակական հանգանակություններ էին անում Կ. Պոլսի հայ համայնքը, Էջմիածինը, հայ եկեղեցու բազմաթիվ թեմեր՝ Ռուսաստանում, Օսմանյան Թուրքիայում, Հնդկաստանում,

Հրդեհը խիստ բացասական հետևանքներ թողեց ինչպես ամբողջ քաղաքի ազգաբնակչության, այնպես էլ հայ համայնքի թվաքանակի վրա. անօթևան մնացած բնակիչների մի մասը հեռացավ քաղաքից՝ մեկնելով այլ, ավելի հուսադրող վայրեր: Ցավոք, չկան ոչ միայն ստույգ, այլև որոշակի վիճակագրական տվյալներ, որոնք կվերաբերեին զմյուռնահայ բնակչության թվաքանակին՝ ընդհուպ մինչև հրդեհը և դրան հետևող մի քանի տարիներին, որոնք առավել պարզ կդարձնեին նշված թվաքանակի նվազման պատկերը կամ հայ համայնքի վրա աղետի թողած հետևանքը մարդկային ռեսուրսների տեսակետից:

Հրդեհից միայն 2-3 տարի անց սկսեցին վերաշինվել զմյուռնահայ ազգային հաստատությունները: Առաջիններից մեկը, ինչպես տեսանք, Ս. Մեսրոպյան վարժարանի շենքն էր, որ նորոգվեց 1845-1846 թթ.: Ասենք, հաջորդ տարիներին ևս դանդաղ էր ընթանում հրկիզված տների վերաշինումը: Ըստ երևույթին, այդ մեծապես կախված էր հայ համայնքների օգնության չափերից և դրա տեղ հասնելու հետ կապված դժվարություններից: Հայոց թաղը, ինչպես և քաղաքի մյուս թաղերը, կառուցապատված էին միջնադարի ասիական ոճի թելադրած պատահական դասավորությամբ ու խճողումներով: <<Բազմավեպը>> բավական դիպուկ ուրվագծում էր այդ թաղերի փողոցների պատկերը՝ ծուռուժուռ և նեղիկ շինություններ՝ կուտակված սեղմ տարածության վրա, <<նեղ փողոցներուն մէջը եղած տներուն պատշգամբներն ալ իրարու անանկ մօտ են, որ մէկ պատուհանէն մէկալը անցնիլը շատ դիւրին է>>, գրում էր հանդեսը¹²¹³:

Մինչև 1847 թ. մայիս հրկիզված տներից վերակառուցվել էր ընդամենը 200-ը, իսկ մյուս տուժած բնակիչները մի կերպ տեղավորվել էին վնասված կամ կիսակառույց տներում: Կար ևս մեկ դժվարություն՝ հայերի թաղը նոր նախագծման կարիք էր գգում, հարկավոր էր լայնացնել փողոցները, տները կառուցել ըստ որոշակի տարածքային բաժանումների, բակերի հատկացումներով և այլն, որ անշուշտ, ժամանակ էր պահանջում իշխանությունների և կառուցողների համաձայնեցված գործողությունների թելադրանքով: Իրենց ծառայություններն էին առաջարկում ճարտարապետները: Նրանցից մեկը՝ իտալացի Դելիստովիչը,

Եվրոպայում և այլուր: Հրդեհից տուժած զմյուռնահայերի օգնության գործը վերածվեց համազգային համերաշխության երևույթի, որ տևեց մինչև 1850-ական թթ. սկզբները:

¹²¹³ Բազմավեպ, 1847, թիւ 2, էջ 26:

պատրաստ էր դրան դեռևս հրդեհից ոչ շատ ուշ՝ 1845 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին, ինչպես տեղեկացնում էր գմյունահայ լրագիրը¹²¹⁴: 1846 թ. սկզբներին որոշվեց սկսել չքավորների տների վերաշինումը. Այս առթիվ առաջնորդ Պ. Թագթագյանը հայտնում էր, որ <<Սկիզբն արարին կառուցանել նախապես գտունս կարօտելոց զթաղս չքաւորաց որ կոչի Արապ մահալլեսի՝ ի գումարէ անտի հաւաքեալ ողորմութեան>>¹²¹⁵: Դրանից առաջ համայնքը դիմել էր իշխանություններին՝ Հայոց թաղը վերակառուցելու եվրոպական կառուցապատման սկզբունքներով: Գետնին էր հավասարեցվել ամբողջ տարածքը, հարթվել <<զամենայն թաղս հայոց որպէս դաշտ ձեւացուցեալ, յետ որոց իւրաքանչիւր ոք ըստ քանակութեան տեղոյն առցէ գերկիւր եւ ուղղագիծ փողոցիւ կացուցէ զբնակութիւն իւր... այսպէս թաղն հայոց գերազանց քան զայլ ամենայն ազգաց թաղիցն ունի պայծառ եւ գեղեցիկ հանդիսանալ եւ գնոցն յարկաց կրկնակի արժել>>,-չէր թաքցնում իր ոգևորությունը առաջնորդը¹²¹⁶:

Այս ամենին լավատեղյակ գմյունահայ լրագիրը հետաքրքիր դիտարկումներ էր անում՝ նկատելով, որ վերակառուցումը շատ ավելի հաջող կընթանար, եթե երկպառակությունները չլատեին գմյունացիների ուժերը¹²¹⁷: Այդպիսիք առաջանում էին, կարելի է կարծել, այն պատճառներից, որոնք միշտ լինում էին նման դեպքերում՝ ոչ կազմակերպվածություն, հովանավորչություն, ստացված օգնությունների ոչ արդարամիտ բաշխում, ազահություն և այլն, որոնք բոլորը միասին սնուցանում էին հայ և օտարազգի իշխանավորների կողմնակալությունն ու թշվառացած բազմությունների և անհատների վրդովմունքը, վերջին հաշվով՝ գժտությունները համայնքի ներսում:

¹²¹⁴ Արշալոյս Արարատեան, 1845, 5 հոկտեմբերի:

¹²¹⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 121, վավ. 92:

¹²¹⁶ Նույն տեղում: Հայոց թաղի գլխավոր փողոցները, ըստ նոր չափակարգի (պլան), ունեին 8, իսկ երկրորդականները՝ 6 կանգուն լայնություն, բոլոր տները կառուցվելու էին առանց պատշգամբի՝ հավանաբար, երկրաշարժերի ու հրդեհների դեմն առնելու նկատառումով (Արշալոյս Արարատեան, 1846, 8 փետրվարի): Վերակառուցման գործը, սակայն, ձգձգվում էր. Մսեր Մսերյանի մայրը՝ Թագուհին, կրթված գմյունացի կին, 1846 թ. գրում էր որդուն, որ Զմյունիա եկած երկու ճարտարապետները արդեն չափագրել են թաղի մեծագույն մասը, <<սակայն տակաւին չեն ևս են հասեալ ի մեր կոյս>> (ՄՄ, Մսերյանների արխիվ, թղթ. 205, վավ. 955):

¹²¹⁷ Արշալոյս Արարատեան, 1847, 30 մայիսի:

Հրդեհի հետևանքները շատ ծանր նստեցին գմյուռնահայ մշակութային հաստատությունների վրա: Ամբողջովին այրվել էր <<Արշալոյս Արարատեանի>> տպարանը՝ իր տպագրական մամուլով և այլ պարագաներով հանդերձ, ինչին տեղեկացնում էր խմբագիր Ղ. Պալդազարյանը կաթողիկոսին՝ 1847 թ. ապրիլի 4-ին¹²¹⁸:

Բավական երկար տևեց Ս. Ստեփանոս եկեղեցու վերաշինության գործը՝ անհրաժեշտ միջոցները դանդաղորեն հավաքելու պատճառով: Համենայն դեպս, դրամական օգնության գործընթացը շարունակվում էր նախագիծը կազմելուց հետո էլ՝ 1850 թ. գարնանը. պահպանվել է Զմյուռնիայի տարեկան հոգաբարձուների նամակը վիրահայության թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին՝ եկեղեցու շինությանն օգնելու խնդրանքով¹²¹⁹: Պետք է կարծել, որ նյութական միջոցներ հայթաթելու գործը շարունակվել է դրան հետևող մեկ-երկու տարիների ընթացքում ևս: Եկեղեցու նախագիծը, մինչդեռ, պատրաստ էր դեռևս 1849 թ.: Շինությանն ի սպաս դրվեցին հանգանակությունները հայ եկեղեցու ամենատարբեր թեմերից, նվիրատվությունները և ազգային կրոնական կենտրոնների տրամադրած միջոցները¹²²⁰: Նոր շենքի հիմնարկեքն արվեց 1849 թ. մարտի 20-ին, այն ավարտվելու էր գեղատեսիլ կառուցապատմամբ՝ իր զանգակատնով և գմբեթներով: Ի վերջո, Ս. Ստեփանոսի նոր շենքը նախագծեց և կառուցեց երիտասարդ և տաղանդավոր ճարտարապետ Մելգոն Երամյանը¹²²¹:

¹²¹⁸ ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 129, վավ. 194:

¹²¹⁹ Նույն տեղում, թղթ. 152, վավ. 98:

¹²²⁰ Այս տեսակետից հատկապես տպավորիչ էին Ներսես կաթողիկոսի, Երուսաղեմի պատրիարք արք. Կիրակոսի, Մկրտիչ ամիրա Ճեզայիրյանի և այլ անհատների եռանդուն գործունեությունն ու ջանքերը. նրանց անունները պետք է արձանագրվեին նորոգ եկեղեցու ավագ դռանը, ինչպես ասված է նախագծին կից գրության մեջ (նույն տեղում, թղթ. 149, վավ. 816):

¹²²¹ Ճարտարապետների շինության նախագծում ներգրավվելու անհաջող փորձերից հետո (ճարտարապետներ՝ Սթրատի և Սիմոն Կեսարացի), Կ. Պոլսից հրավիրվել էր Մելգոն Երամյանը, ով գլուխ բերեց տաճարի կառուցումը՝ 1853 թ.: Երիտասարդ ճարտարապետը վախճանվեց <<ի հասակի ԼԵ (35) ամաց>>, շինության ավարտից ոչ շատ անց, 1853 թ. ապրիլի 18-ին (տես Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 77-78): Ա. Այվազյանը, մինչդեռ, գրում է, որ եկեղեցին կառուցել է Մինաս խալխան (տես Այվազյան Ա., Շար հայ կենսագրութեանց, հ. 3, էջ 130), որ ճիշտ չէ:

Ս. Ստեփանոս եկեղեցուց շատ ավելի շուտ, բայց և բավական ուշացումով, 1849 թ. կառուցվեց աղջիկների դպրոցը: Հակոբ Սարգսյանը, որ հիմնել էր համայնքի աղջիկների առաջին՝ իր անվամբ կոչվող դպրոցը, ցանկություն էր հայտնել կառուցել նոր դպրոցական շենք, բայց նրա բարի կամքը մեզ անհայտ պատճառներով այդպես էլ չիրագործվեց¹²²²: Մինչդեռ, իր բարեգործական ձեռնարկներով զմյուռնահայերին քաջածանոթ Պետրոս Յուսուֆյանը (վախճանվել է 1846 թ.) իր կտակում և՛ աղջիկների վարժարանին, և՛ Ս. Մեսրոպյանի վերակառուցմանը, ինչպես տեսանք, բավական գումար էր հատկացրել¹²²³: Բարերարի ազգականուհուն՝ տիկին Հռիփսիմե Կոստանդյանին, մնում էր միայն իր եռանդն ու նյութական միջոցներն ավելացնել արդեն առկա գումարին և, նա գործը հասցրեց մինչև վերջ՝ ավարտելով վարժարանի նոր շենքի կառուցումը, կրկնահարկ¹²²⁴, շատ ավելի ընդարձակ և հարմարավետ, քան նախկին՝ Սարգսյան վարժարանն էր: Այդուհետև, մինչև գաղթօջախի վերջին օրերը, աղջիկների վարժարանը կոչվում էր բարերարուհու՝ Հռիփսիմե Կոստանդյանի անվամբ: Մինչև նոր շենքի կառուցումը 40-50 աղջիկներ հաճախում էին <<Քորք ողորմութեան>> կաթոլիկական միաբանության դպրոց¹²²⁵, իսկ մի մասն էլ, կարելի է կարծել, քաղաքի հույների և եվրոպական համայնքների դպրոցներ:

Զմյուռնահայ գրեթե բոլոր ազգային հաստատությունների շենքերի նորոգումը կատարվում էր դժվարությունները հաղթահարելու և հասկանալիորեն՝ հաճախ ձգձգվող գործընթացով: Եվ այս պայմաններում համայնքը, ասենք, դրանից տասնամյակներ անց ևս, բավական հույսեր էր կապում հայտնի Աբելյան կտակի գործադրության հետ:

Գրիգոր Աբելյանը մտնում էր Տրիեստի այն մեծահարուստների խմբակի մեջ (Պետրոս Յուսուֆյան, Ապրոյաններ և այլք), որոնք, ինչպես երևաց նախընթաց շարադրանքում, բարեգործական ու ազգասիրական նախաձեռնություններով հայտնի էին զմյուռնացիներին: Գր. Աբելյանի ծախքով էին տպագրվել, Հ. Վանանդեցու չափածո գործերը¹²²⁶, նրա

¹²²² Տես Արշալոյս Արարատեան, 1847, 30 մայիսի:

¹²²³ Նույն տեղում, 1846, 23 օգոստոսի:

¹²²⁴ Ճերմակեան Թ., Զմիւռնիա եւ ազգայինք, 1890, թիւ 5, էջ 108:

¹²²⁵ Արշալոյս Արարատեան, 1847, 30 մայիսի:

¹²²⁶ ՄՄ, Արխիվ Իզմիրյան կաթողիկոսի, թղթ. 10, վավ. 31, 32: Զմյուռնահայ համայնքի հանդեպ Գր. Աբելյանի հատուկ հոգածությանն անդրադառնալով՝ Ատոմը գրում է, որ նա բնիկ իզմիրցի չէ, այլ թիֆլիսեցի, և որ նա Իզմիրը թեև չի

հովանավորությանն էր պարտական Ռ. Փափազյանը՝ Տրիեստում ուսանելու և Ս. Մեսրոպյան վարժարանում բարեկարգումներ մտցնելու, Ղ. Պաղազարյանը՝ <<Արշալոյս Արարատեան>> լրագրի հրատարակությունն իրականացնելու գործում¹²²⁷, <<Սյունյաց ընկերությունը>>՝ իր գործունեության լայն շառավիղների համար և այլն:

Գր. Աբելյանը վախճանվեց 1848 թ. թողնելով իր կտակը, որի ենթադրած գումարների կեսը՝ 70 հազ. ֆիորին, տրամադրված էր Զմյուռնիայի ու Մանիսայի հայկական դպրոցներին ու հիվանդանոցներին: Կտակարար էր նշանակվել Պետրոս Յուսուֆյանը, նրան փոխարինելու դեպքում՝ Աբրահամ Ապրոյանը: Զմյուռնահայ համայնքը պատրաստել էր կտակընկալի անհրաժեշտ փաստաթղթերը՝ ռուսական իշխանություն-

տեսել՝ լսելով միայն նրա հռչակի մասին, համակրել է զմյուռնահայերի առաջադեմ վիճակը և <<ինքնաբերաբար անոնց նուիրած է իր հարստութիւնը>> (Ատոմ, Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը, 1902, ապրիլի 18/1 մայիսի): Այսուհանդերձ, այս անվերապահ կարծիքը մասամբ կարելի է վիճարկել: Գր. Աբելյանի ազգանվան երկրորդ բաղադրիչը (Գուլասայան) հուշում է, որ նա ազգակցական ինչ-ինչ կապեր է ունեցել զմյուռնահայերի հետ: Հայտնի է, որ թիֆլիսաբնակ Բեհբուլթովներն էին (1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի հռչակված հայազգի զեներալ Բ. Հ. Բեհբուլթովի տոհմը), որ վիճարկեցին Գր. Աբելյանի կտակը շահելով զմյուռնահայ համայնքի դեմ դատը: Եվ անշուշտ, կրելով այդ ազգանունը և հավակնելով Գր. Աբելյան-Գուլասայանցի թողած ժառանգությանը, նրանք ազգակցական կապեր պետք է ունենային վերջինիս հետ: Այս իմաստով ուշագրավ է, որ Գուլասայան-Բեհբուլթեանց ազգանունն էր կրում ոմն մի վարդապետ՝ դեռևս XVIII դ.: Զմյուռնիայի Ս. Ստեփանոս եկեղեցու մի ձեռագրում (<<Գիրք որ կոչի Չաստուածնմանութիւն>>) կա 1769 թ. հետևյալ գրառումը. <<Ներբողական տապանագիր ի վերայ գերեզմանի սիրեցեալ իմս վարժապետի զոր քանդակել ունիմ տալ ի յաջող ժամանակի նուաստ Զաքարիա վարդապետս Գուլասպեան Բեհբուլթեանց>> (ՄՄ, ձեռ. 3370, էջ 2ա): Հետևաբար, Զմյուռնիայում (կամ շրջակայքում) եղել են Գուլասայան-Բեհբուլթյաններ, որոնք ազգակցական կապեր են ունեցել մի կողմից Գր. Աբելյան-Գուլասայանցի, և մյուս կողմից՝ Բեհբուլթովների հետ:

¹²²⁷ Արշալոյս Արարատեան, 1841, 25 հուլիսի: Գր. Աբելյանը Ս. Մեսրոպյան դպրոցին էր նվիրել մի ամբողջ գրադարան՝ Վենետիկի Մխիթարյանների հրատարակությունների հավաքածուն, որը ավելի քան երկու տասնամյակ անց ամբողջովին աշակերտների տրամադրության տակ էր դրել Սո. Ոսկանյանը՝ 1860-ական թթ., երբ գլխավորում էր զմյուռնահայ վարժարանները՝ հիմնելով <<Ուսումնասեր>> ընկերությունը (տես Ճերմակեան Թ., Եզական դեմք մը Իզմիրի մէջ, Արշալոյս, 1905, 30 հուլիսի/12 օգոստոսի):

ներին ներկայացնելու համար (Գր. Արելյանը ռուսահայատակ էր և ռուսական կողմն էր ստանձնել կտակի գործադրության խնդիրը): Համայնքը քանիցս դիմել էր Ներսես կաթողիկոսին՝ այս հարցում նրա աջակցության ակնկալիքով, սակայն գործն առաջ չէր գնում: 1849 թ. մայիսի 21-ին կաթողիկոսին դիմեց զմյուռնացի Մ. Մարկոսյանը, նշելով, որ Գր. Արելյանի ազգականներից ոմանք ցանկանում են ջնջել կտակի այն կետեր, որով գումար էր հատկացվում Զմյուռնիայի և Մանիսայի ազգային հաստատություններին¹²²⁸: Գործը, սակայն, շարունակում էր ձգձգվել, մյուս կտակընկալները (ազգականներ, Թիֆլիսի, Տրիեստի եկեղեցիներ և այլն) ստացան իրենց բաժինները, վրա հասավ Ղրիմի պատերազմը և դատը վերսկսվեց միայն դրա ավարտից հետո: Չնայած Զմյուռնիայի երևելիների ճիգերին, որ տևեցին մինչև 1862 թ., և երբ կտակված գումարը տոկոսներով հասել էր 2 մլն դուրուշի, հանգուցյալի ժառանգորդներից Գ. Հ. Բեհբությանցը վիճարկեց կտակը՝ դատ բանալով դրա կիրառման դեմ: Զրկված մանիսացիներն ու զմյուռնացիները դատը տանուլ տվեցին հետագա բողոքարկումների ընթացքում, իսկ նրանց կտակված գումարն անցավ մյուս ժառանգորդներին¹²²⁹:

Գր. Արելյանի մահվամբ մեկեն թուլացան <<Մյուռնյաց ընկերության>> հնարավորություններն ու կորովը, որ առանց այդ էլ իրենց զգացնել էին տվել հրդեհի և, ինչպես տեսանք, ընկերության հակառակորդների գործունեության հետևանքով: Այսուհանդերձ, ընկերությունը գործում էր հրդեհից հետո ևս, երբ շարունակում էր խնամել իր դպրոցները Մենեմենում և Աքիսարում¹²³⁰: 1846 թ. վերջին Մանիսայում հիմնվել էր <<Ազգասեր>> ընկերությունը՝ փոխարինելով զմյուռնական թուլացած ընկերությանը:

Կ. Պոլսի պատրիարք Մատթեոսի կոնդակը (1846, նոյեմբերի 7) ընկերությանը՝ քաջալերական հորդորներով¹²³¹, նույնպես ցույց է տալիս,

¹²²⁸ Այս և կտակի վերաբերյալ մյուս տեղեկությունները տես նույն տեղում, 1905, 17 օգոստոսի:

¹²²⁹ Ատում, նշվ. աշխ., 1902, 18 ապրիլի/1 մայիսի:

¹²³⁰ Արշալոյս Արարատեան, 1845, 5 հոկտեմբերի:

¹²³¹ Նույն տեղում, 1846, 29 նոյեմբերի: Դժվար է կարծել, որ Մատթեոս արք.՝ 1844 թ. պատրիարք ընտրված և դրանից առաջ՝ Զմյուռնիայի առաջնորդը, ընկերության հակառակորդների շարքում եղած լինի, որ նրան է վերագրում Հ. Քոսյանը՝ գրելով, թե նա <<ինչ-ինչ կրօնական խնդիրներ յարուցանելով՝ արդեն վերջին ժամանակներն իրարու հետ գծտեալ անդամներու սրտին մեջ պաղուծին մը կը

որ ընկերությունը ընդհուպ մոտեցել է սպառնացող վախճանի եզրագծին: Հավանաբար, հրաժեշտի յուրօրինակ ազդանշան էր նրա հաշվետվությունը 1845 սեպտեմբեր-1846 օգոստոս տարեշրջանի համար: <<Արշալույս Արարատյանն>> իր կողմից տալիս էր ընկերության ծանր դրության բացատրությունը՝ աղետի հետևանքները, կորուստներն ու ձախողումները՝ առևտրական միջավայրում:

Այսպես, թե այնպես, ընկերությունն իր գործունեությունը պետք է որ դադարեցրած լինի 1849 թ. վերջերին, իսկ վերոհիշյալ հաշվետվությունը պետք է համարել այդ գործունեության ավարտը նախանշող փաստաթուղթը: Այս իմաստով Վենետիկի <<Բազմավեպը>> հազիվ թե թարմ լրատվություն էր հաղորդում իր ընթերցողին, երբ գրում էր 1847 թ. սկզբին. <<Արժանագով Սիւնեաց ընկերութիւնը, որ... անկողմնասէր, խոհեմ եւ զգուշաւոր ճամբով մը կաշխատի մեր ազգին մէջ, մանաւանդ Զմիւնիոյ եւ շրջակայ քաղաքներուն ու գեղերուն մէջ ուսմունքները ծաղկեցնելու>>¹²³²:

Զուտ անվանապես ընկերությունը դրանից հետո ևս գոյատևել է մի երկու տարի, թեև կենդանության ինչ-որ նշաններ է ցույց տվել, որի համար պարտական էր երբեմն-երբեմն տրամադրվող նվիրատվություններին: Այսպես, պահպանվել է ընկերության վերատեսչի և անդամների՝ 1848 թ. հունվարի 28-ի թվակիր վկայություն-ստացականը (ստորագրել են Հ. Խումարյանը, Մ. Փիլիճյանը, Հ. Սիմոնաքյանը, Դ. Պալդազարյանը և ուրիշներ), որտեղ նրանք հավաստում են, որ իրենք Աստվածատուր Ապրոյանից ստացել են ընկերությանը Ներսես կաթողիկոսի շնորհած

ձգե, մի եւ նոյն ժամանակ (1845) աւերիչ հրդեհը վրայ գալով՝ անբուժելի եւ վերջնական հարուած մը կուտա ընկերութեանս եւ կործանումը յառաջ կը բերէ>> (Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 178): Գ. Պոյաճյանը, հենվելով այս համեմատաբար զուսպ լրատվության վրա, ավելի է թանձրացնում գույները՝ Մատթեոսին մեղադրելով ընկերության դեմ սադրանքներ գործելու մեջ (Պոյաճեան Գ., նշվ. աշխ., 1972, 13 հոկտեմբերի): Ընդհակառակն, հենց Մատթեոսի առաջնորդության ժամանակ էր կազմակերպվել ու հաջողությամբ գործել <<Սյունյաց ընկերությունը>>, ավելին, նա ջանքեր է գործադրել ընկերության ղեկավարների մեջ հայտնված գծությունները կանխելու համար և, ինչպես տեսանք, սիրո և միաբանության հորդոր է տվել նրանց և բացի այս ամենից, հրդեհից մեկ տարի անց, 1846 թ. նոյեմբերին, քաջալերական կոնդակ էր հղել նյութապես ու տարաձայնություններից ընկճված ընկերությանը:

¹²³² Բազմավեպ, 1847, թիւ 2, էջ 28:

3000 դուրուշը¹²³³: 1849 թ. Ղ. Պալդազարյանը հրաժարվեց ընկերության խորհրդականի անդամությունից¹²³⁴ և այս ակտով էլ ավարտվում է այդ իրոք, համագլխին նշանակություն ունեցող կրթական-բարեսիրական ընկերության պատմությունը: Հրդեհը, տարերային կրքերն ու երկպառակությունները կանխորոշեցին <<Սյունյաց ընկերության>> վախճանը, սակայն այն կարևոր նշանակություն ունեցավ զմյուռնահայ հետագա ընկերությունների կազմակերպման ու գործունեության համար:

Ընկերության գործունեությունից մնացած չխամրող հուշերն էին, հավանաբար, պատճառը, որ նրա լուծարումից ավելի քան երեք տասնամյակ անց, 1879 թ., զմյուռնահայ գործիչներ Գ. Բաբազյանը (1869 թ. այստեղ ստեղծված <<Հայ ընթերցատան>> հիմնադիրը), Մ. Ալփիարյանը և Պ. Կոստանդյանը կազմեցին մի նոր <<Սյունյաց ընկերություն>>՝ նախորդի նման կրթական-բարեսիրական նպատակով: Դրա գոյությունը, սակայն, <<շատ կարճ ժամանակ տևած է>>¹²³⁵:

<<Սյունյաց ընկերության>> կարելի է ասել՝ լավագույն տարիներից մեկում, 1842 թ. երբ ակնհայտ էր նրա վարակիչ գործունեությունը զմյուռնահայ մտավոր կյանքում, հայտնվեց մի նոր ընկերություն՝ հրատարակչական ծրագրով, դարձյալ կազմված երիտասարդներից: Այդ ընկերության մասին Ս. Սավալանյանը գրում է. <<1842-ին Մեսրոպյան դպրոցի յառաջադեմ աշակերտներէն եօթն հոգի, ընդ որս էի և ես, ընկերութիւն մի կազմեցինք Հայկազնեան անունով: Նպատակնիս էր դպրոցական և բարոյական դասագրքեր և վէպեր յօրինել կամ թարգմանել յօգուտ դպրոցի տղայոց, որչափ որ կը ներէր մեր պատանեկան հասակը և մտաւոր կարողութիւնը: Առաջինն էր ընկերութիւնս Իզմիրի մէջ, Սիւնեաց համբաւաւոր ընկերութենէն յետոյ կազմուած, թէն երկուքն ալ գոհ գնացին մեծ հրդեհին>>¹²³⁶:

<<Հայկազնյան ընկերության>> հոգաբարձուն էր Ս. Սավալանյանը, անդամակցում էին Ա. Կ. Տետյանը, Պ. Ալփիարյանը, Ա. Սուլթանյանը

¹²³³ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 137, վավ. 45:

¹²³⁴ Հ. Քոստանյան ընկերության գոցվելու տարին է համարում 1845-ը (Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 177), բայց, ինչպես տեսանք, այն ավելի երկար է դիմակայել փորձություններին. Ղ. Պալդազարյանը, ինչպես ասվեց, 1849 թ. է հրաժարվել ընկերության մեջ զբաղեցրած իր պաշտոնից (տես Արշալոյս Արարատեան, 1848, թիւ 307 և 1849, թիւ 380):

¹²³⁵ Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 178-179:

¹²³⁶ Սաւալանեան Ս., Կենսագրական յուշեր, էջ 29:

և ուրիշներ¹²³⁷: Իր կարճատև գոյության ընթացքում այս ընկերությունը հասցրեց տպագրել Տ. Սավալանյանի թարգմանած՝ Շատոբրիանի <<Աթալա>>-ն (1842), ևս մեկ գրքույկ՝ <<Հարիւր առակներ>> վերնագրով: Տ. Սավալանը ձեռնարկել էր նաև <<Հազար ու մեկ գիշերներ>> արաբական հեքիաթների թարգմանությանը, բայց դեռ չավարտված, այն հրո ճարակ դարձավ մեծ հրդեհին¹²³⁸:

1843 թ. զմյուռնահայ մտավոր կյանքում հայտնվեց երրորդ՝ <<Արագածունյաց ընկերությունը>>, և ըստ իր նպատակների, ձեռք բերեց տպարան և Խ. Մելիքսեղումյանի խմբագրությամբ սկսեց հրատարակել <<Հայրենասեր>> շաբաթաթերթը (1843-1846):

Ընկերության անդամներն էին Խ. Մելիքսեղումյանը, Գ. Խաչիկյանը, Պապոն և այլք¹²³⁹:

<<Արագածունյաց ընկերությունը>> նույնպես պետք է կրեր <<Սյունյացի>> ճակատագրական երկու հարվածները՝ 1845 թ. հրդեհը և զմյուռնահայ երկպառակությունները: Գր. Գալեմքարյանը նկատում է, որ այն կործանվեց <<հակառակորդաց հնարիւքն>>¹²⁴⁰:

1840-ական թթ. կրթական-բարեսիրական ընկերությունները դպրոցն ու լուսավորությունը ազատականացնելու, այդ գործընթացում հանրա-

¹²³⁷ Արշալոյս Արարատեան, 1843, 12 նոյեմբերի:

¹²³⁸ Մաւալանեան Տ., նշվ. աշխ., էջ 29-30: Տ. Սավալանյանն իր թարգմանություններով կանխում էր զմյուռնահայ նշանավոր թարգմանչական դպրոցի երևումը՝ 1850-1870-ական թթ.: 1840-ական թթ.: Ստեղծագործություններից բացի, որ տեսանք վերը, նա թարգմանել է Մոնտեսքյոյի <<Պարսկական նամականին>>, Շատոբրիանի <<Ուսումն պատմականը>>, արաբ բանաստեղծ Բուսեիրիի <<Մարգարեին վերաբերուն>> (չափածո բնագրից՝ արձակ), <<Բժիշկն և հիմարուհին>>, <<Ֆրեդերիկոսը>> և այլ գործեր (Մաւալան Տ., նշվ. աշխ., էջ 79): Մինչև 1845 թ. հրդեհը, Սավալանը դասավանդել է Ս. Մեսրոպյան և Սարգսյան դպրոցներում: 1846 թ. նա նշանակվում է Էդդեմիշի դպրոցի վարժապետ (դպրոցը բաց էր արել տեղի ազգասեր գործիչներից մեկը՝ Օհան Զուլֆայանը՝ 1832 թ. (տես Արշալոյս Արարատեան, 1846, 4 հոկտեմբերի), իսկ 1851 թ. Զմյուռնիայում բաց էր արել թաղային մասնավոր դպրոց: Հետագայում դասավանդել է Զմյուռնիայի Սալահանե արվարձանի երկսեռ Վարդանյան դպրոցում: Երկար տարիներ աշխատել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում և գրել իր հայագիտական ու լրատվական պատկանելի արժեք ունեցող <<Պատմութիւն Երուսաղեմի>> երկհատոր աշխատությունը (Երուսաղեմ, 1931):

¹²³⁹ Աշխատանք, Զմյուռնիա, 1912, 14/27 հուլիսի:

¹²⁴⁰ Գալեմքեարեան Գր., Պատմութիւն հայ լրագրութեան, էջ 79:

յին մղումներն ու շահերը հաշվի առնող մտավոր շարժման արտահայտությունն էին զմյուռնահայ իրականության մեջ: Այն մի հայտնի չափով գործողության ազատություն էր ստանում թանգիմաթի ընձեռած հնարավորություններով, որպիսիք էին օսմանյան լուսավորական ծրագրերի ու աշխարհիկ դպրոցների բարեփոխման ձեռնարկները, հետաքրքրությունը եվրոպական դպրոցական շինարարության նկատմամբ և դրանց նմանակելու ջանքերը, ոչ մահմեդականների լուսավորական հիմնարկների հանդեպ համեմատաբար համբերատար վերաբերմունքը և այլն: Մակայն ընկերությունները, որպես հասարակական գործունեության նոր ձև, անխուսափելիորեն պետք է սրեին տարբեր պատկերացումներն ու հակասությունները պահպանողականության և, մյուս կողմից, նորի ջատագով մտավորականության և սրան համակիր վերնախավի միջև, դրանում ընդգրկելով երկուստեք՝ և դպրոցական գործերի դեկը դժկամությամբ զիջող հոգևորականության մի մասի, և աշխարհիկ, պահպանողական դրամատերերի որոշ շերտերը: Այդպիսի հակասությունները սնուցանում էին տարածայնությունները զմյուռնահայ համայնքի ներսում, ջլատում ընկերությունների գործունեությունը կամ հասարակական անտարբերության դատապարտում դրանց: Պատահական չէ, որ 1850-ական թթ. Ջմյուռնիայում ոչ մի նոր ընկերություն չստեղծվեց՝ չափազանց թարմ էին անցյալ տասնամյակի ձախողումներն ու թողած դառնությունները հանրային գործունեության հենց այդ բնագավառում: Եվ միայն 1860-ականին ենք այստեղ տեսնում նման կազմակերպությունների բավական ուշացած վերածնունդը: Քիչ նշանակություն չունեցավ նաև լուսամիտ մեծահարուստների սերնդի մարդկանց աղետալի չափերով նվազումը և հետևաբար, հեռանալը ազգասիրական բարեգործության ասպարեզից: 1850-ական թթ. չկային համայնքի բարերարներ Էքիզանները Յուսուֆյան եղբայրները, Հ. Սարգսյանը, Գր. Աբելյան-Գուլասպյանցը, չէին երևում ավանդականորեն բարերար Ապրոյանները, ովքեր մեկտեղվել էին 1820-1840-ական թթ. և որից մեծապես պետք է շահեին զմյուռնահայ լուսավորությունն ու մշակույթը:

3. Տպագրություն և պարբերական մամուլ

XIX դ. Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի տպագրական երկրորդ խոշոր կենտրոնը Ջմյուռնիան էր, որն այս բնագավառում առաջնությունը զիջում էր Կ. Պոլսին: Միաժամանակ, ինչպես և Կ.

Պոլսում, Ջմյուռնիայում ևս տպագրության վերելքը, որպես մշակութային առանձնահատուկ երևույթի ինքնահաստատում, կապվում է դպրոցի և լուսավորության տարածման որակական հաջողությունների հետ: Չպետք է անտեսել նաև մեկ այլ կարևոր հանգամանք՝ Էգեյանի գաղթօջախներում առաջին հայ տպագրիչների անմիջական կապը իրենց եվրոպական համագրի տպագրիչների հետ: Կ. Պոլսում այս իրողությունը տեսնում ենք շատ ավելի վաղ՝ Աբգար դպրի օրինակով (1567), իսկ Ջմյուռնիայում՝ Մահտեսի Մարկոսի (1759), երբ տպագրության սկիզբ են դնում եվրոպական երկրներում ազգային տպագրության ռահվիրաները կամ առնվազն վերջիններիս հետ գործակցած անհատները: Ջմյուռնիայում տպագրական գործի ակունքների մոտ է կանգնած այդպիսի մի դեմք՝ Մահտեսի Մարկոսը:

Գաղթօջախում նոր դպրոցի և տպագրության հաստատման գործը մեծապես աղերսվում է կրթված և հայրենասեր եկեղեցականության գործունեության հետ: Իր տեղում մենք անդրադարձանք նոր դպրոցը նախապատրաստող՝ Ջմյուռնիայի առաջնորդ Աբրահամ Աստապատցու և նրա աջակից Մեսրոպ Գանձակեցու եռանդուն ջանքերին՝ ուղղված դպրոցի գործնական պահանջմունքներին ընդառաջող ձեռագրերի ստեղծմանը և որն ըստ ամենայնի խրախուսվում էր ժամանակի լուսամիտ կաթողիկոս Սիմեոն Երևանցու կողմից: 1750-1770-ական թթ. Ջմյուռնիայում այս մտավոր շարժումը պետք է իր առարկայացումը ստանար նաև տպագրության ասպարեզում, Մահտեսի Մարկոսի գործունեությամբ:

Այս տպագրիչի և նրա տպարանի մասին կան բավական փաստեր: 1759 թ. նա Ջմյուռնիայում մասնավոր տպարան է հիմնել և, ինչպես տեղեկացնում է Գ. Ջարբխանալյանը, տպագրել երեք գիրք՝ <<Մեկնութիւն ժամակարգութեան>> (1759), <<Խորհրդատետր>> (1761) և Եզնիկ (1762)¹²⁴¹, որի առաջաբանը գրել է Կ. Պոլսի հայոց պատրիարք, աստվա-

¹²⁴¹ Ջարբխանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, էջ 233: Տես նաև տպագրված գրքերի և Մահտեսի Մարկոսի վերաբերյալ կարճ հավելումներով՝ Թեղդիկ, Տիպ ու տառ, էջ 134: Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 271 և այլն: Ընդամին, Թեղդիկը կարծում է, որ Մահտեսի Մարկոսը <<Հաւանաբար Ամստերթամի տպարանին աշխատաւորներէն մէկն է և որ այդ տպարանը <<հաստատել տուողն է եղել>> Ջմյուռնիայի առաջնորդ Աբրահամ Աստապատցին (Թեղդիկ, նույն տեղում): Իր հերթին, Ա. Ալպոյաճյանն ընդգծում է Աբրահամ Աստապատցու և Սիմեոն Երևանցու նախաձեռնիչ դերը Ջմյուռնիայի տպա-

ծաբան Հ. Նալյանը¹²⁴²: Հայտնի է նաև, որ գմյտունահայ իրականությանն ու առօրյային քաջածանոթ Սիմեոն Երևանցին իրագել է եղել Մարկոսի գործունեությանը Ջմյտունիայում և կաթողիկոս ընտրվելուց հետո, էջմիածնում տպարան հիմնելու իր ծրագրում ուշադրությունը 1765 թ. կենտրոնացրել է նաև Մարկոսի վրա:

Կաթողիկոսը ցանկանում էր Ամստերդամի հայ տպագրիչների միջոցով տպարան հիմնել էջմիածնում, ուստի առաջնորդ Ղուկասի հետ բանակցություններ սկսեց այս ուղղությամբ՝ նկատի ունենալով Ամստերդամում գտնվող ոմն տպագրիչ Առաքելին, ով պատրաստել էր իր սեփական տպատառերը: Միաժամանակ, նա տեսադաշտում է պահում Ջմյտունիայից հայտնի տպագրիչ Մարկոսին՝ հիշեցնելով առաջնորդին <<վասն միւս տպագրիչին (Մարկոսին-Ա. Խ.) որ էր անդ ի Ջմիւռին որոյ աղագաւ գրեցաւ յառաջ զի խնդրեցցի ընդ նա և ի պայմանի ինչ կացուցեալ ի սրբ Աթոռս հղեցեք>>¹²⁴³: 1767 թ. բանը հասավ այնտեղ, որ Մարկոսը համաձայնեց մեկնել էջմիածին՝ հանձն առնելով երեք տարի մնալ այնտեղ և սովորեցնել երկու-երեք աշակերտների և նորաստեղծ տպարանին տալով Ջմյտունիայում իր տպագրած Խորհրդատետրի և Եզնիկի տառերը, <<գոր ինքն էր հոգացեալ և զՏաթևացոյ հատորոյն (գոր ստացեալ էր) ամենայն պարագայիւքն իւրեանց և ապա ինքն ելանել և գալ աստի>>¹²⁴⁴:

Մարկոսը 1767 թ., գտնվում էր Ամստերդամում, որտեղ գործում էին հայ տպագրիչներ: Նրա միջոցով էջմիածնում տպարան ստեղծելու գաղափարն իրականացնելու շուրջ կաթողիկոսը թղթակցում էր ոչ միայն

րանի հաստատման գործում՝ կենսագրական որոշ տվյալներ ավելացնելով Մարկոսի մասին և նշելով, որ <<էջմիածնա նվիրակին հովանավորության տակ բացված տպարանին վարիչն էր Մահտեսի Մարկոս մականվամբ Քեշիշ կոչված՝ Ագատենց Սարգիս Ապուշեխցիի (Ակն) թոռը և Մահակի գավակը, որ կամ Ամստերդամի տպարանին կամ XVIII դարուն առաջին կեսին Կ. Պոլսո մեջ գործող տպարաններեն մեկուն աշխատավորներեն էր և հավանորեն Աստապատցի Աբրահամ եպ. ի կողմն հրավիրված էր Իզմիր>> (Ալպոյաճյան Ա., Ջմյտունիո տպարանները, 1964, N 2, էջ 71: Այստեղ և այսուհետև պահպանված է Ա. Ալպոյաճյանի այս հոդվածի բնագրային ուղղագրությունը):

¹²⁴² Ասատուր Հ., նշվ. աշխ., էջ 145 (առաջին հրատ.):

¹²⁴³ Դիւան հայոց պատմութեան, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, գիրք Գ, 1763-1767, էջ 352, տես նաև էջ 49-50:

¹²⁴⁴ Դիւան հայոց պատմութեան, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, 1767-1776, էջ 19:

Ղուկասի, այլև Ամստերդամի հետ կապ ունեցող զմյուռնացի վաճառականներ Հարություն և Դանիել խոջաների, Աստվածատուր չելեպիի և այլոց հետ¹²⁴⁵։ Մակայն նրա ջանքերը՝ Մարկոսին Ամստերդամից էջմիածին բերելու և այնտեղ նրա տառերով տպարան հարդարելու ուղղությամբ՝ արդյունք չտվեցին։ Առաջնորդ Ղուկասը հայտնում էր կաթողիկոսին, որ էջմիածին մեկնելուց Մարկոսը հրաժարվում է այն պատճառաբանությամբ, որ Զմյուռնիայում Սաղմոս է տպագրելու։ Այս բանակցությունները՝ Մարկոսին ամեն կերպ գոհացնելու՝ կաթողիկոսի պատրաստակամությամբ հանդերձ, այդպես էլ ավարտվեցին ապարդյուն, մինչև որ վերջինս 1771 թ. էջմիածնում հիմնեց իր տպարանը¹²⁴⁶։

Կաթողիկոսի հիշատակարանից պարզվում է նաև, որ Մահտեսի Մարկոսը վախճանվել է 1771 թ., Ամստերդամում. 1772 թ. այս առթիվ կաթողիկոսը Ղուկասին <<Ծանոյր և զմահն տպագիր Մարկոսին (որ յանցեալ ամին առ Տէր փոխեցաւ)>>¹²⁴⁷։

Մահտեսի Մարկոսից հետո, ավելի քան ութ տասնամյակ անց միայն, Զմյուռնիայում հայտնվեց հաջորդ հայատառ տպարանը, որ հիմնել էին ամերիկյան բողոքական միսիոներները։ Հ. Ասատուրը գրում է, որ նրանք Զմյուռնիա են տեղափոխվել 1833 թ.՝ Մալթայից, տպագրելով աշխարհաբար և հայատառ թուրքերենով գրքեր¹²⁴⁸։ Իսկ 1834 թ., հարում է նա, այդ տպարանի տնօրենն էր Էճրըր բողոքականների առաքելությունից։ Ա. Ալպոյաճյանը ևս հիշատակում է Էճրին, ով հաստատվել էր Զմյուռնիայում 1834 թ., իսկ Հ. Քոսյանը որևէ թվական չի նշում, նկատելով միայն, որ Մալթայից այստեղ եկած ամերիկյան բողոքական ընկերությունները տպագրել են <<այլ եւ այլ աննշան տետրակներ>> հայատառ թուրքերենով, իսկ 1839թ. հունվարից՝ <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> ամսաթերթը, ըստ էության, ժամանակային անորոշությամբ կրկնելով Գ. Զարբհանալյանին¹²⁴⁹։ Այդ անորոշությունը հաղթահարում է Թ. Ճերմակյանը, սակայն և տուրք տալով զմյուռնացու յուրահատուկ պատրիոտիզմին՝ տպագրության ասպարեզում Մահտեսի Մարկոսից հետո շարունակության առաջնությունը վերապահելով հայկական, և ոչ

¹²⁴⁵ Նույն տեղում, էջ 21։

¹²⁴⁶ Զարբհանալեան Գ., Պատմութիւն հայկական տպագրութեան, էջ 182-185։

¹²⁴⁷ Նույն տեղում, էջ 203։

¹²⁴⁸ Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, էջ 208։

¹²⁴⁹ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, էջ 846։ Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա., էջ 271։ Զարբհանալեան Գ., նշվ. աշխ., էջ 271։

թե միսիոներական տպարանին: Նա թվով երկրորդն է համարում Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանը Մարկոսից հետո¹²⁵⁰, սակայն նրա հիմնավորումները համոզիչ չեն թվում: Ըստ նրա, <<Արշալոյս Արարատեան>> լրագիրը 1841 թ. հունվարին տեղեկացրել էր, թե Պետրոս Յուսուֆյանն իր ծախսով Ս. Մեսրոպյան վարժարան է ներմուծել ֆրանսերենի ուսուցումը՝ ավելացնելով, որ դրանից <<քիչ առաջ ալ տպագրու-

¹²⁵⁰ Ճերմակյան Թ., Հայ տպագրությունը Իզմիրի մեջ, 1912, 10/23 հուլիսի: Թ. Ճերմակյանին շփոթեցրել է 1669 թ. Լիվոռնոյում գործող Ոսկան Երևանցու տպարանը՝ <<Տպարան Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի գորավարի>> անվամբ. նա հենվում է Ա. Այվազյանի մի անճիշտ տեղեկության վրա, ըստ որի, Զմյուռնիայի հայերը 1675 թ. տպարան են հիմնել, որտեղ և 1676 թ. տպագրել են փոքր և մեծ Մաշտոցներ և այլն: Ա. Այվազյանն իր ձեռքի տակ է ունեցել նշված՝ փոքր Մաշտոցի տիտղոսաթերթի բնագիրը (կամ ընդօրինակումը)՝ հետևյալ մակագրությամբ. <<Տպագրեցեալ ի տպարանի Սրբոյ Էջմիածնի եւ Սրբոյն Սարգսի գորավարի ի հայրապետութեան Տեառն Տեառն Յակոբայ... Ամենայն հայոց կաթողիկոսի: Արդեամբք եւ ծախիւք Աւետիսի եւ Սողոմոնի պաշտօնատարին: Ի Զմիւռնիա ի թւոյ Փրկչին 1676, իսկ ըստ Հայոց 1126>> (Այվազեան Ա., Շար հայ կենսագրութեանց, հ. 3, էջ 127-128): Զմյուռնիայում 1676 թ. գործող տպարանն է նշում նաև Թեոդիկը՝ վկայակոչելով Իզմիրում տպված <<Գիրք Մաշտոցայ վարդապետի>> հատորը և դրա հիշատակարանը, որ տպագրել է Մկրտիչ անվամբ մեկը: Այս Մկրտիչը, հարում է Թեոդիկը, շատ հավանական է՝ Ոսկանի գրաշարներից մեկը, Մարսելից անցել է Իզմիր <<ինք իր գլխուն տպագրութեամբ պարապելու>>: Թեոդիկն արդեն հաստատապես ընդունում է 1676-ին Զմյուռնիայում տպարանի գոյությունը, եզրակացնելով, որ <<Մկրտիչէ վերջ 83 տարի (այսինքն՝ 1759 թ., երբ հայտնվել է Մարկոսի տպարանը-Ա. Խ.) Հայու տպարան գոյութիւն չէ ունեցած Իզմիրի մեջ>> (Թեոդիկ, Տիպ ու տառ, էջ 134): Թեոդիկին հենվելով և սեփական մեկնաբանություններով նույն կարծիքին է մնում Հ. Աճառյանը (Աճառեան Հ., Հայ գաղթականության պատմություն, էջ 551): Ա. Ալպոյաճյանը, մինչդեռ, իրավացիորեն ցույց է տալիս, որ Զմյուռնիայում, իբր, 1676 թ. տպարանի գոյությունը ընդամենը հնարանք էր Մարսելում գործող Ոսկանի ժառանգորդների համար՝ կաթոլիկական գրաքննությանն ապակողմնորոշելու նպատակով. <<1676-ին, գրում է նա, -Մարսիլիտ մեջ Մաշտոցի տպագրությունը երբ գաղտնի կատարել ուզեցին՝ լատին գրաքննության ճիրաններեն ազատելու համար, իրենց միտքին առաջին անգամ ներկայացող քաղաքը, ուր պապերը բացարձակ ազդեցություն չունեին, Զմյուռնիան եղավ և այդ անունով հրատարակեցին այդ գիրքը (Մաշտոցը-Ա. Խ.)՝ առանց իրապես հոն տպելու (Ալպոյաճյան Ա., Զմյուռնիտ հայ տպարանները, 1964, N 2, էջ 69): Տես նաև Ա. Ալպոյաճյանի մյուս հոդվածը՝ <<Զմիւռնիոյ առաջին հայ տպագրութիւնը 1676-ին չէ>> (Ընդարձակ տարեցոյց Ազգային հիւանդանոցի, 1930, էջ 295-296):

թեան մամուլ մը բոլոր տառերով եւ այլն կը նուիրէ դպրոցին, ուր կը տպուին այժմ Տէր Յովհան քահանայ Վանանդեցիի <<Ոսկեդարը>>¹²⁵¹:

Ինչպէս տեսնում ենք, լրագիրը 1841 թ. հունվարին գրել է, որ քիչ առաջ տրիեստաբնակ բարերարը վարժարանին տպագրական մամուլ է նվիրել, այսինքն, նվիրել է կամ 1840 թ. վերջին, կամ 1841 թ. սկզբին: Հիրավի, Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանի երախայրիքը պետք է համարել Հ. Վանանդեցու նշված պոէմը, որը լույս է տեսել 1841 թ., ինչը վկայում է ոչ միայն Թեոդիկը, այլն Պ. Ս. Փափազյանը՝ խնդրո առարկա տպարանի արդյունքների մեջ դարձյալ առաջինը հիշելով Հ. Վանանդեցու նշված գրքի լույսընծայումը, որ և առաջինն է համարում Ա. Ալպոյաճյանը ևս¹²⁵²: Վերջինս Ս. Մեսրոպյանի տպարանի սկիզբն է համարում 1840-ը:

Ս. Մեսրոպյանի տպարանի արդյունքների հիշատակումը 1844-ից այն կողմ չի անցնում (<<Հարիւր բարոյական առակներ>>), բայց այս հանգամանքը ամեննին լույս չի սփռում այն խնդրի վրա, թե երբ է ավարտվել այդ տպարանի գործունեությունը: Թեոդիկը նշում է վերոհիշյալ գրքին նախորդած՝ 1842-1843 թթ. ևս մի քանի հրատարակություններ, ինչպէս <<Խորհրդածութիւնք շնորհաց և նշանաց և խորհրդոց քրիստ. Ս. եկեղեցւոյ>>, <<Աթալա>>, <<Մենադոս>>, <<Արկածք Արիստովնոսի>>, <<Տրամաբանութիւն>>¹²⁵³: Հայտնի չեն այս տպարանում 1845 թ. և հետո տպագրված գրքերը, թեև այն հաստատապէս գործել է 1845 թ. հրդեհից հետո ևս, որովհետև հենց այդ արհավիրքից հետո է, որ մի որոշ ժամանակ այստեղ է տպագրվել <<Արշալոյս Արարատեան>> լրագիրը:

Ամերիկյան միսիոներների տպագրած գրքերի մեջ որպէս առաջիններ, նշվում են 1835-1836-ի արդյունքները՝ <<Քերականութիւն անգղերէն և հայերէն>>, <<Հեգերէն կամ առաջին կարդալու գիրք>>՝ հրատարակված Ամերիկացոց մարդասիրական ընկերութեան տպարա-

¹²⁵¹ Ճերմակեան Թ., նշվ. աշխ., Աշխատանք, 13/26 հուլիսի:

¹²⁵² Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 136: Փափազեան Պ., Կենսագրութիւն Ռուբէն Անդրեաս Յ. Փափազեան բազմադիւն վարժապետի, էջ 15: Ալպոյաճեան Ա., Զմյոտնիո տպարանները, էջ 77: Հ. Քոսյանը բավական անորոշ է հիշում Ս. Մեսրոպյանի տպարանի սկիզբը, այն է՝ <<1832-40-ի միջոցները>> (Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 271):

¹²⁵³ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 136:

նում¹²⁵⁴: Քսան տարվա ընթացքում (1833-1853) այս հաստատությունը տասը լեզուներով տպագրել է կրոնադավանական լայնածավալ գրականություն՝ արևելյան ազգերի մեջ տպագիր գրքի միջոցով նույնչափ ծավալներով քարոզչություն իրականացնելու նպատակով¹²⁵⁵: Չմյուռնիան, այսպիսով, դառնում էր թիրախ ոչ թե բուն զմյուռնաբնակ համայնքներում բողոքականություն տարածելու, այլ այդ գործն առհասարակ տարածաշրջանում իրականացնելու կենտրոն՝ ամերիկյան միսիոներների համար: Ա. Ալպոյաճյանն այս առթիվ նկատում է, որ այս տպարանը միջազգային հաստատություն էր, և որ այն <<տեղական նշանակություն մը չուներ և բովանդակ Արևելքի մեջ տարածված միսիոնարական խմբերու օժանդակն ու նեցուկն էր, ինչպես երբեմն Հռոմի բրոպագանդային Ուրբանիան տպարանը կաթոլիկ քարոզիչներու կգործակցեր իր արտադրություններովը>>¹²⁵⁶:

1837-1852 թթ. այս տպարանը քանիցս փոխել է իր անունը՝ կրելով մերթ շ. Հալլոքի, մերթ Գ. Գրիֆիթի անունը: Վերջինս, ի դեպ չէր պատկանում բողոքականների կարգին. այդ անվամբ Չմյուռնիայում հայտնի էր գորգի ոմն վաճառական՝ տեղաբնակ գերդաստանից¹²⁵⁷:

Իրենց տպագրական գործունեությունը ամերիկյան բողոքականները լծորդում էին դպրոցներ կազմակերպելու նպատակին՝ քարոզչական աշխատանքը ծավալելով երկու ուղղությամբ՝ տպագրական և ուսումնական: Շ. Հալլոքի և Գ. Գրիֆիթի տպարանների բավական ընդարձակ ցանկը, որ մեջբերել է Թեոդիկն իր աշխատության մեջ, հնարավորություն է տալիս հետևելու միսիոներների տպագրական, ասել կուզի՝ մտավոր քաղաքականությանը Չմյուռնիայում: Մարդասիրական ընկերության և ապա Շ. Հալլոքի տպարանների առաջին արդյունքները և դասագրքեր են, և ավետարանական կրոնաբարոյական բնույթի գրքեր՝ մինչ <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> ամսագրի հրատարակությունը: Գ. Գրիֆիթի տպարանում 1839-1854 թթ. տպագրվածները գրեթե ամբողջովին ավետարանական սյուժեներ են՝ խրատներ քարոզներ, ճառեր, հավատի դավանության թղթեր և այլն: Միսիոներները, այսուհանդերձ, 1840-ական թթ. տպագրում են Այբբենարան, Հեգարան, անգլերենի քերականություն, հոգևոր երգեր, որ ակնհայտորեն վկայում է

¹²⁵⁴ Նույն տեղում, էջ 134:

¹²⁵⁵ Տես Ալպոյաճեան Ա., Չմյուռնիո տպարանները, էջ 74:

¹²⁵⁶ Նույն տեղում:

¹²⁵⁷ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 135:

նշված տպարանների տիրապետող՝ կրոնաքարոյական ուղղվածության մասին: Այս տպարանների հրատարակությունների մեջ որակ են կազմում հայատառ թուրքերեն գրքերը՝ գրված փոքրասիական և առհասարակ Օսմանյան կայսրության թուրքախոս հայ ընթերցողների համար՝ բոլորն էլ նույն կրոնական բովանդակությամբ¹²⁵⁸: Միսիոներ հրատարակիչների հպարտության առարկան կարող էր լինել Աստվածաշնչի աշխարհաբար տպագրությունը չորս հատորով՝ 1846-1847 թթ., <<թարգմանուած Անդրէաս Փափագեան յայտնի վարժապետին կողմէ՝ հայագէտ Իլիաս Բիկզ ամբիկ. միսիոնարին օգնութեամբ>>¹²⁵⁹:

Թեոդիկի այս վկայությունը ուշագրավ նոր գծեր է ավելացնում Ռ. Ա. Փափագյանի, ինչպես և ամերիկյան միսիոներների գործունեության լուսաբանմանը: Կնշանակի, միսիոներները մեկուսացած չեն եղել զմյուռնացի հայ մտավորականներից և ըստ հնարավորին, տվյալ դեպքում զուտ լեզվական մշակույթի տեսակետից, շփումներ են ունեցել նրա հետ: Մյուս կողմից Ռ. Փափագյանի այս ազատամտությունն արդյոք չի նպաստել հալածանքների սաստկացմանը նրա դեմ՝ Ս. Մեսրոպյանի սրտմտած հոգաբարձուների կողմից, երբ նրանք մեկուսացնում էին այդ մանկավարժին՝ նշված վարժարանի վերակացությունից¹²⁶⁰: Կարելի

¹²⁵⁸ Տես Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 134-135: Թեոդիկի՝ միսիոներների կողմից Ձմյուռնիայում հրատարակված գրքերի թվարկումը աղբյուրագիտական իմաստով անվրեպ է և լիարժեք, այն հենվում է 1850 թ. Գրիֆիթի <<Ցուցակ հայերեն և տաճկերեն գրեանց որ կը գտնուին Բրոթեսդանդներուն գրատունները ի Պօլիս և ի Ձմիւռնիա>> տեղեկատուի վրա (նույն տեղում, էջ 135):

¹²⁵⁹ Նույն տեղում:

¹²⁶⁰ Մ. Նուպարյանի բնութագրմամբ Ձմյուռնիայում այդ <<դասաւեր կուսակցութիւնը>> իր մտադրություններն էր ցուցադրել, դեռևս այն ժամանակից, երբ ընդդիմացել էր Ս. Մեսրոպյան վարժարանում ֆրանսերենի ուսուցմանը, ինչը տեսանք իր տեղում: Այս նույն <<կուսակցությունը>>՝ փաստորեն թունդ պահպանողականներ և հակառակորդ ամեն մի նորամուծության, վարժարանի տպարանում տպագրված Նարեկի (1843) ՀԵ գլխի մի հատվածում մի կետադրական նշանի բացակայությունն օգտագործելով (այսպես կոչված բութի խնդիրը)՝ գծություններ էին սերմանում համայնքում և Ռ. Փափագյանին հանիրավի մեղադրում կաթոլիկությանը հարելու մեջ (տես Նուպարյան Մ., Իմ մանկական յիշատակներէս, 1893, նոյեմբեր, էջ 511): Սակայն, կարելի է կարծել, պահպանողականներին հասկապես զայրույթ պետք է պատճառած լիներ վերոհիշյալ Ռ. Փափագյանի թարգմանած Աստվածաշնչի հրատարակությունը ամերիկացի միսիոներ Ի. Բիկզի գործակցությամբ և տպագրված նույն մի-

է կարծել նաև, որ հիշյալ Ի. Բիկզը դավանական անհրաժեշտ ուղղումներ և խմբագրումներ է մտցրել Ռ. Փափազյանի թարգմանության մեջ՝ այս կերպ ևս հիմնավորելով իր օգնությունը այդ գրքի թարգմանության և հրատարակության գործին: Սակայն վերջին հանգամանքը, անկախ դավանական նախասիրություններից, ի հայտ էր բերում ամերիկյան միսիոներների հրատարակչական գործունեության դրական կողմը՝ աշխարհաբար արևմտահայերենի մշակմանը բերած նպաստը և ամեննին էլ ոչ երկրորդական նշանակությունը առհասարակ գրական լեզվի զարգացման տեսակետից: Ուշագրավ է նաև Թեոդիկի հիշած և գիտական արժեք ունեցող՝ 1848 թ. տպագրված <<Համաբարբառ կամ ցանկ նմանաձայն բառից Նորոյ կտակարանի>> գիրքը¹²⁶¹, որ, թվում է, ոչ միայն արժեքավոր է Նոր կտակարանի բառամթերքի ուսումնասիրության, այլև այն տեսակետից, երբ բողոքական հրատարակիչները դուրս էին գալիս Հին կտակարանի՝ իրենց գրեթե անգիջում նախասիրության տիրույթներից:

Քարոզչական բովանդակությամբ հագեցած իրենց նյութերի հրատարակությունը միսիոներները շարունակեցին <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> ամսագրում, որը 1839-ից տպագրվում էր Հ. Հալլոքի, ապա Գ. Գրիֆիթի, և վերջում՝ Ա. Չըրչիլի տպարանում¹²⁶²:

Հայ տպագրության պատմաբանները ամերիկյան բողոքականների տպարաններից հետո թվարկումների շարքում հաջորդ տեղը հատկացնում են Թաթևիկյան վիմագրատուն-տպարանին, որ հիմնել էր Պողոս Թաթևիկյանը 1830-ականի վերջերին¹²⁶³: Այս ձեռնարկությունը Զմյուռնիայում աչքի էր ընկնում իր արտադրական լայն կարողություններով, հայերեն գրքերից առավել մեծ թվով իր եվրոպական ու արևելյան լեզուներով հրատարակություններով՝ տպագրելով նաև պարբերական մամուլ, ծանուցումներ և այլն: Երկար ժամանակ տպարանը հռչակված էր իր արդյունքների քանակով և որակով: Թեոդիկը նշում է Թաթևիկյան տպարանում հրատարակված հայերեն երեք գործեր՝ <<Ծրագիր ուսմանց Զմիւռնիոյ վիճակին>> (1892), <<Տեղեկագիր Հայ ընթերցատան>>

սիոներների տպարանում: Ռ. Փափազյանի դեմ ուղղված պահպանողականների հալածանքը՝ ընդհուպ նրան վարժարանների տեսչությունից հեռացնելը, պետք է կարծել, բացատրվում է նաև այս հանգամանքով:

¹²⁶¹ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 135:

¹²⁶² Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության, էջ 5:

¹²⁶³ Տես Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 136: Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 75-76:

(1894-1895) և <<Մոնչին եւ մնչին>>, թվում է՝ գեղարվեստական բնույթի գործը: Այս տպարանում է տպագրվել Ստ. Ոսկանյանի ֆրանսերեն <<Ռեֆորմ>> լրագիրը՝ 1869 թ. սկսած, մի քանի տեղեկագրեր և <<Միմոս>> երգիծաթերթը՝ 1908 թ.¹²⁶⁴: Ըստ երևույթին, Թաթևկյան տպարանը <<Միմոսից>> հետո հայերեն որևէ այլ պարբերական չի տպագրել, թեև իր գործունեությունը շարունակել է XX դ. առաջին տասնամյակներին՝ գրքերի և այլնի հրատարակության ասպարեզում: Հայտնի չէ, թե որոշապես մինչև երբ է գործել այս տպարանը, համենայն դեպս, Զմյուռնիայի տպարաններին նվիրված իր հոդվածը (ծավալուն ուսումնասիրության մի հատվածը) Ա. Ալպոյաճյանը ավարտում է 1913 թվականով, հետևաբար, կարելի է ասել, որ Թաթևկյան տպարանը այդ թվականին ևս գործում էր՝ հանդես գալով իբրև ամենաերկարակյացը զմյուռնահայերի տպարանների շարքում:

1840-ից գործում էր Ստ. Պապոյանի տպարանը, որտեղ տպագրվում էր Ղ. Պալղազարյանի <<Արշալոյս Արարատեան>> լրագիրը՝ մինչև 1844 թ. մայիս, որից հետո տպագրվելով իր սեփական տպարանում: 1845 թ. հրդեհը ոչնչացրեց այս վերջին, ինչպես և Ստ. Պապոյանի տպարանը¹²⁶⁵, որից հետո լրագիրը շարունակեց իր հրատարակությունը հրդեհից անվթար մնացած Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանում: Այդուհետև այդ տպարանը վաճառվել է նույն լրագրի խմբագիր Ղ. Պալղազարյանին, ինչը հավանական է համարում Ա. Ալպոյաճյանը¹²⁶⁶:

¹²⁶⁴ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 76: Ըստ Մ. Բաբլոյանի, <<Միմոսը>> նախ տպագրվել է Քեշիշյան, ապա Թաթևկյան տպարանում (Հայ պարբերական մամուլը, էջ 73):

¹²⁶⁵ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 78: Ըստ Թեոդիկի, <<Արշալոյս Արարատեան>> 1844 թ. մայիսի 20-ից տպագրվել է նույն՝ Ստ. Պապոյանի տպարանում, որն իր անվամբ էր փոխանցել, այսինքն, որի սեփականատերն էր դարձել Ղ. Պալղազարյանը (Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 136): Ա. Ալպոյաճյանը, մինչդեռ, դրանք համարում է տարբեր տպարաններ՝ նշելով անգամ դրանց տարբեր վայրերում գտնվելը. Ստ. Պապոյանի տպարանը, ըստ նրա, գտնվում էր Զմյուռնիայի Տերվիշ օղլու խանում, իսկ <<Արշալոյս Արարատեանինը>>՝ Մատամա խանում (Ա. Ալպոյաճեան, նշվ. աշխ., էջ 78): Ստ. Պապոյանի և <<Արշալոյս Արարատեանի>> տպարանների նույնության մասին չեն խոսում ոչ Հ. Քոսյանը և ոչ էլ Գր. Գալեմքյարյանը՝ լրելայն ընդունելով այդ տպարանների անկախ գոյությունը:

¹²⁶⁶ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 77:

1840-ականի տպարանների շարքում վերջինը <<Արագածունյաց ընկերության>> համանուն տպարանն էր, որը գործել է 1843-ից՝ լրագիր և գրքեր հրատարակելու նպատակով: Ընկերությանն անդամակցում էին, ըստ Թեոդիկի, Խ. Մելիքսեղումյանը, Պ. Պապիեն (թերևս, Պ. Պապո) և Գեորգ Մահտեսի Խաչիկյանը¹²⁶⁷: Ընկերությունը հրատարակեց <<Հայրենասեր>> շաբաթաթերթը, որը ծանր կորուստներ կրեց 1845 թ. հրդեհից և որին կանդրադառնանք հետագայում: 1843 թ. այս տպարանում է տպագրվել Ա. վարդ. Արարատյանի <<Համառոտություն ազգասիրական սխրագործությանց...>> հոդվածի առանձնատիպը՝ արտատպված <<Հայրենասերից>> և նվիրված կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն¹²⁶⁸: Լրագրի դադարից հետո, սակայն, ընկերության տպարանը շարունակել է իր գործունեությունը: Մեզ հայտնի այդպիսի սակավաթիվ արդյունքների մեջ Ա. Ալպոյաճյանը հիշում է Մ. Ճովետ քահանայի <<Քրիստոնեայ այցելու կամ բացատրություն Սուրբ գրոց երեւելի մասերուն՝ անոնց վերաբերեալ աղօթքներովը>> գործը (1847)¹²⁶⁹:

<<Հայկազնյան ընկերությունը>> ևս (հիմն. 1843), որի մասին խոսվեց վերը, հիմնեց իր տպարանը՝ ծրագրելով հրատարակել ինքնուրույն և թարգմանական գրքեր ու դասագրքեր: Ընկերության առաջին արդյունքներից է Շատոբրիանի <<Աթալա>>-ն՝ Տ. Սավալանյանի թարգմանությամբ¹²⁷⁰:

Զմյուռնահայ գրատպության պատմությանն անդրադարձած հեղինակները, գրեթե բոլորը՝ սկսած XIX դ. վերջերից, նկատել են տեղաբնակ հայերի՝ 1840-1850-ական թթ. մտավոր զարթոնքի մի զարմանալի հետևանքը՝ որ Ա. Ալպոյաճյանը համարում է, թերևս, աննախադեպ

¹²⁶⁷ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 136: Գալենքեարեան Գ., նշվ. աշխ., էջ 79:

¹²⁶⁸ Թեոդիկ, նույն տեղում:

¹²⁶⁹ Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 79:

¹²⁷⁰ Հ. Քոսյանը և Ա. Ալպոյաճյանը չեն հիշատակում այս ընկերությունը, մինչդեռ դրա գործունեության և տպարանի մասին վկայում են ընկերության հիմնադիր Տ. Սավալանյանը՝ իր <<Կենսագրական յուշեր>>-ում, Հ. Ասատուրը և նրան հետևած Թեոդիկը՝ առանց <<Հայկազնեան>> անունը հիշատակելու, նշելով, որ Տ. Սավալանյանը, Ա. Տետեյանը և Մ. Ալփիարյանը կազմել էին հրատարակչական մարմին, ընդամին, Հ. Ասատուրը գրում է, որ <<դեռահաս երիտասարդներէ>> կազմված <<այս խումբը տպարանն ալ հաստատեց>> (Ասատուր Հ., Կոստանդնուպոլսոյ հայերը, էջ 194): Հ. Ասատուրի գրքի նշված՝ ստամպոյլան հրատ. (2011 թ.) ծանոթագրող Գր. քահ. Տամատյանը իրավացիորեն նկատում է, որ խոսքը վերաբերում է <<Հայկազնեան ընկերութեանը>> (նույն տեղում):

երևույթ. <<Դպրոցական պատանիներ,-գրում է նա,-հազիվ կյանքի գարունը ողջունած, իրենց անփորձ գրիչովը հայրենասիրական նպատակներով ասպարեզ կը նետվեին իբր թե իրենց հատուկ տպարաններուն մեջ, որոնք ուրիշ բան չէին, եթե ոչ տուներու մեջ կազմված դպրոցական տղաքներու հասարակ սարքեր>>¹²⁷¹:

Պարզունակ տպագրական մամուլներով և մի կերպ հավաքած տառերով այս տպարաններում Ռ. Փափազյանի պատանի սաները իրենց ուսուցչի խորհուրդներով գոտեպնդված, իրենց հաջողություններով ու ձախողումներով, 1850-ական թթ. տպագրել են <<Երկասեր>> և <<Թութակ Հայկազեան> նաև ձեռագիր <<Աստղ>> (1860) պարբերականները: Այս շարքում Թեոդիկը հիշում է նաև Մեսրոպյան սանուց <<Բողբոջ>> թերթիկը¹²⁷²: Իրողություններ էին սրանք, որ վկայում էին զմյուռնահայ համայնքում մտավոր շարժման նկատմամբ ակնածալից վերաբերմունքի մասին, և որ պետք է նախապատրաստեր դպրոցի և մտավորականության բարձր որակները 1860-ական թթ.: Այսուհանդերձ, պատանեկան տպարանները կամ լրագրական հակումները միայն Ձմյուռնիայում չէ, որ ի հայտ եկան այս ժամանակաշրջանում: Կ. Պոլսում ևս, թերևս ոչ այդքան առատությամբ, հանդիպում ենք դրա մի օրինակի. Եթե Ձմյուռնիայում հանդես էր եկել <<Թութակ Հայկազեանը>> (1854)՝ իր <<Օրագիր բանասիրական, ազգային, տնտեսական և ուսումնական>> ենթավերնագրով և աշխատասիրութեամբ <<Երից աշակերտաց Մեսրոպյան վարժարանի>>, ապա դրանից երեք տարի առաջ, 1850-1851 թթ. Կ. Պոլսում Ս. Սահակյան վարժարանի աշակերտական մարմնի խմբագրությամբ լույս էր տեսել <<Բուրաստան Սուրբ Սահակեան, Օրագիր բարոյական, բանասիրական, տնտեսական եւ ուսումնական>> դարձյալ պատանեկան ամսագիրը՝ նախօրինակ հանդիսանալով Ձմյուռնիայի <<Թութակ Հայկազյանի>> համար: Բավական նմանություններ կան, ի դեպ, նաև այս երկուսի ենթավերնագրերում, որ հուշում է Կ. Պոլսի և Ձմյուռնիայի առաջավոր հայկական դպրոցներում հատուկ ուշադրություն էր դարձվում հրատարակչական-խմբագրական գործի վրա, որ իր հերթին, նախանշելու էր պարբերական մամուլի զարգացման անհրաժեշտությունը Կ. Պոլսի և Ձմյուռնիայի գաղթօջախներում՝ 1860-ական թթ.:

¹²⁷¹ Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 80:

¹²⁷² Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 136:

Հայ տպագրության ասպարեզում բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Տեւեյան եղբայրների հրատարակչությունը (1851-1893), որն ամենից առաջ դրսևորվեց արտադրության և մտավոր գործունեության զուգորդման եվրոպական գործելակերպի կիրառմամբ: Այս հրատարակչության հիմնադիր Տիգրան Հարություն Տեւեյանը (1832-1868)՝ եղբայրներից ավագը, ի դեպ, Ա. Ռ. Փափազյանի այն սաներից էր, ովքեր պետք է գործնականի վերածեին զմյուռնահայ դեռահաս տպագրիչների խանդավառ տրամադրությունները տպագրության ասպարեզում: Բնութագրելով Տ. Տեւեյանին և նրա գործունեության այս ազդակը նկատի առնելով, Թեոդիկը գրում է, որ նա <<պզտիկուց սիրահար տպագր. արուեստի, կաջողի իրագործել իր իտեալը՝ 1851-ին հիմնելով Հայոց թաղին մեջ տպարան մը՝ արտօնագիրով և քաղքենիներու օժանդակութեան շնորհիւ>>¹²⁷³:

Տիգրան Տեւեյանի տպագրական գործունեությունը (1851-1868), զարգացման շատ տպավորիչ փուլ էր նշանավորելու առիաստաբալ հայ գրատպության պատմության մեջ: Դեռևս Ս. Մեսրոպյանում սովորելու տարիներին Տ. Տեւեյանը կազմում էր աշխարհագրական քարտեզներ, որտեղ, ինչպես վկայում է նրա կենսագիր Մ. Նուպարյանը, դրսևորել էր փայլուն վարպետություն: Պատանու հակումները դեպի տեխնիկան, գրատպությունը, մի քանի տարի անց գործնական լայն կիրառում գտան: 1851 թ. նա եղբայրների՝ Արամ Կարապետ Տեւեյանի և Հայկ Հակոբ Տեւեյանի հետ միասին հիմնում է տպարան և երկու տարի անց, 1853 թ., հրատարակում <<Արփի Արարատեան>> հանդեսը¹²⁷⁴ երկրորդ գրական հրատարակչությունը Կ. Պոլսի <<Բանասեր>>-ից (լույս է տեսել 1851 թ., Հ. Հիսարյանի խմբագրությամբ) հետո: Կարճ ժամանակի ընթացքում Տ. Տեւեյանն իր տպարանը հագեցնում է եվրոպական նորագույն տպագրական սարքավորումներով: Տպագրական պարագաները, ինչպես և տառամայրերը բերվել էին Վենետիկի և Վիեննայի Մխիթարյաններից: Տպարանին կից գործում էր ձուլարան, որտեղ տառերը ենթարկվում էին նոր ձևավորումների: Տաղանդավոր տպագրիչը Փարիզից ձեռք բերեց տպագրական նոր մամուլ և տարբեր սարքավորումներ:

Տ. Տեւեյանի մշակութային գործունեությունը գերաճում է զուտ տպագրական գործունեությունից՝ վերածվելով նաև հրատարակչա-

¹²⁷³ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 136-137:

¹²⁷⁴ Ճինգոզյան Կ. Հ., Էջեր XIX դ. 50-60-ական թթ. զմյուռնահայ գրական շարժման պատմությունից, 1982, N 2, էջ 61-71:

կան-առևտրային ազդեցիկ ձեռնարկության, որ հույժ կարևոր նշանակություն ունեցավ հայ գրքի շուկայի արդիական ձևավորման ու գրահրատարակչական մշակույթի ծավալման համար: Նրա տպարանը դարձավ առհասարակ արևմտահայերի մշակութային կյանքի վերելքը խթանող կենտրոն՝ դուրս գալով զուտ գլխավորական, տեղական միջավայրի սահմաններից: Գալով այս վերջինին, պետք է ասել, որ գլխավորահայ պարբերական մամուլի և թատրոնի և սրանց հետ սերտորեն կապված թարգմանական գրականության զարգացումը մի հայտնի չափով պարտական է Տ. Տետեյանի մտահղացումներին ու դրանց կիրառմանը: Նշանավոր տպագրապետը կարողանում էր ընդառաջել առաջադեմ հայ ընթերցողի հոգևոր պահանջմունքներին, իր իսկ միջավայրում՝ հայրենի Զմյուռնիայում և այլուր կազմակերպել այդպիսիք գոհացնող անհրաժեշտ մարդկանց ու միջոցները: Ժամանակի սակավաթիվ ազգային պարբերականները, Մխիթարյանների մամուլը, դրանում հաճախակի հայտնվող ավանդական ու կրոնաբարոյական բնույթի շարադրանքները, գրաբարագիր գեղարվեստական չափածոն՝ մեծ մասամբ նվիրված հայոց պատմական անցյալին, արդեն չէին բավարարում այդ ընթերցողին: Տ. Տ. Տետեյանը նոր ուղղություն սկզբնավորեց ազգային գրատպության մեջ՝ ստեղծելով առաջին որոշակի հրատարակչական ծրագիրը և դնելով իր արտադրական գործունեության հիմքում: Իր համաքաղաքացի և սերնդակից մյուս առաջավոր մտավորականների՝ Մ. Մամուրյանի, Գր. Չիլինկիրյանի, Մ. Նուպարյանի, Ա. Կ. Տետեյանի, Հ. Հ. Տետեյանի, Գր. Մսերյանի և մյուսների հետ միասին, չմոռանանք, նաև սեփական թարգմանություններով, նա ձեռք զարկեց իրեն ժամանակակից, ինչպես և անցյալի դասական հեղինակների ստեղծագործությունների աշխարհաբար թարգմանությանը՝ դրանց հրատարակության համար մշակելով հայոց համար անխընթաց չափերով ընդարձակ ծրագիր: Մ. Նուպարյանը իրավացիորեն բնութագրում է Տ. Տ. Տետեյանին, որպես խոշոր հրատարակչի, ում մտահոգում էր ոչ միայն իր տպարանի նյութական ու արտադրական հնարավորությունների ընդլայնումը, այլև թարգմանիչների ու գրողների դրամական խրախուսանքը¹²⁷⁵: Նա իր լայնահուն ձեռնարկման մեջ ընդգրկեց թարգմանիչների մի ամբողջ ջոկատի, որի մի մասին միայն հիշեցինք վերը և որը ձեռնամուխ եղավ թարգմանելու եվրոպական գրողների երկերը: Հարկ է նկատել, որ այս

¹²⁷⁵ Նուպարեան Մ., Տիգրան Յարութիւն Տէտէան, 1901, N 1, էջ 22-29:

ասպարեզում նախաձեռնություն ցուցաբերելով, զմյուռնահայ զաղթօջախը նույնիսկ նշանակալիորեն առաջ անցավ Կ. Պոլսի հայ համայնքից, որտեղ թարգմանիչները գործում էին տարերայնորեն, առանց որևէ կազմակերպական հիմունքների: Թեոդիկը գրում է, որ Տ. Տետեյանը <<Իզմիրի, Պոլսոյ եւ արտասահմանի գրավաճառական հրապարակները տարիներ ողողած է բազմաթիւ հատորներով (ֆրնս. թրգմ.) և Հայը մասնաւորապէս մղած վիպասիրութեան>>¹²⁷⁶: Տետեյան տպարանում հայերեն տպագրվեցին Վոլտերի, Մոլիերի, Հյուգոյի, Աբբա Պրեվոյի, Վ. Սկոտի, Սվիֆտի, Շատոբրիանի, Ա. Դյումայի, Է. Սյուի, Ժ. Սանդի, Ժ. Վեռնի և եվրոպական այլ հեղինակների ստեղծագործություններից: Ինքը՝ Տ. Տետեյանը թարգմանել էր Մոլիերի <<Սերը բժիշկ է>>, <<Ակամա բժիշկ>>, <<Ժլատը>> կատակերգությունները, Վ. Հյուգոյի <<Լուկրեցիա Բորջիան>>, Ա. Դյումայի <<Կատրին Հովարդը>> և <<Կոմս Մոնտե Քրիստոն>>¹²⁷⁷:

Ավագ Տետեյանին հետաքրքրում էին նաև գրական աշխարհաբարի խնդիրները: Թարգմանական գրականություն հրատարակելով՝ նա առաջ էր մղում նոր գրական լեզվի զարգացումը: Նա գրել է նաև աշխարհաբարի ուսուցման ձեռնարկներ՝ <<Այբբենարան>>, հայերենի երկմաս քերականություն և այլն¹²⁷⁸: Հայ հին գրական դեմքերից նրա տպարանը հրատարակել է Եղիշե և Նարեկացի, որ հիշատակում է Թեոդիկը իր վերոհիշյալ աշխատության մեջ:

Տիգրան Հարություն Տետեյանի տպագրական-հրատարակչական ձեռնարկներին աջակցում էին եղբայրները՝ Արամ Կարապետ և Հայկ Հակոբ Տետեյանները: Նրանք նույնպես ունեին գրական նախասիրություններ, հատկապես Արամ Կարապետը, ում թարգմանությամբ իրենց տպարանում տպագրվեցին Շեքսպիրից և Մոլիերից կատարված մի քանի թարգմանությունները, որոնք իրենց ուրույն տեղն ունեն մեծ անգլիացուց արված հայերեն թարգմանական գրականության պատմության մեջ: Մյուս եղբայրը՝ Հայկ Հակոբը, նույնպես թարգմանել է մի շարք դրամաներ Հյուգոյից և Սյուից¹²⁷⁹:

¹²⁷⁶ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 137:

¹²⁷⁷ Ասատուր Հ., Դիմաստուերներ, էջ 192:

¹²⁷⁸ Նուպարեան Մ., Կենսագրական. Տիգրան Յարութին Տետեյան, 1901, 1 մարտի, էջ 190-194:

¹²⁷⁹ Տես Ճինգոզյան Կ., նշվ. աշխ., էջ 63:

Տետեյան տպարանի հրատարակչական գործունեությունը սպասվող ընդունելություն գտավ հայության մեջ. Դրա արդյունքները մեծապես նպաստեցին մտքերի ձևավորմանն ու զարգացմանը և մանավանդ, նոր գեղագիտական ճաշակի տարածմանը: Հայ հասարակական մտքի համար Տետեյան հրատարակչության արդյունքները ընթերցանության նյութ լինելուց բացի, ընթերցողներին առնչում էին հասարակական գաղափարներին ու շարժումներին, ծանոթացնում եվրոպական դասական գրականության հրամցրած գեղագիտական որակներին: Շատ կարևոր է, որ այդ արդյունքները խթանում էին XIX դ. երկրորդ կեսի հայ գրականության զարգացումը՝ տալով դրան լեզվական որոշակի կողմնորոշումներ: Մասնավորապես, եվրոպական գրականությունից արված թարգմանությունները լուրջ ազդեցություն էին թողնում, մանավանդ 1850-1860-ական թթ., Զմյուռնիայի և Կ. Պոլսի ազգային մամուլի զարգացման վրա¹²⁸⁰: Ա. Ալպոյաճյանը հենց այս հանգամանքը նկատի ուներ, երբ գրում էր, որ <<Մեծ տպագրապետը եւ արեւմտեան հայոց ամենամեծ հրատարակիչը 120-130 կտոր գրքեր՝ թարգմանություն, թե հեղինակություն, տպագրած է՝ ազգին մեջ գրական մեծ շարժում մը առաջ բերելով... Բացի Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան տպարաններէն, ոչ մէկ հայ տպարան այնչափ բազմաթիւ հրատարակություններ ընծայած ունի ազգին>>¹²⁸¹:

Պետք է ավելացնել նաև, որ Տետեյան տպարանի գործունեությունը գրականության զարգացման համար այն բարենպաստ մթնոլորտի արդյունքն էր, որ ստեղծվել էր Կ. Պոլսում, Զմյուռնիայում և կայսրության ևս մի քանի հայաբնակ կենտրոններում: Աճում էին ժողովրդի մտավոր պահանջունքները և, ըստ այդմ, ընդլայնվում ազգային լուսավորության և դպրոցի, կրթված խավերի շրջանակները:

Տետեյան հրատարակչությունը սկսեց խամրել Տիգրան Տետեյանի վաղաժամ մահվանից հետո: Նրա գործը շարունակող եղբայրները, չնայած իրենց ակնառու կարողություններին, չկարողացան միացնել իրենց գրական տաղանդը անհատական ձեռներեցության հետ, որ այնպես անհրաժեշտ էր հրատարակչական գործի համար, և որոնք այնքան հմտորեն համատեղում էր Տ. Տետեյանը: Այսպես, թե այնպես, տպարա-

¹²⁸⁰ Արփիարեան Ա., Պատմութիւն ԺԹ դարու Թուրքիոյ Հայոց գրականութեան, էջ 18:

¹²⁸¹ Ալպոյաճյան Ա., նշվ. աշխ., էջ 81:

նը շարունակեց իր գործունեությունը մինչև 1893 թ., որից հետո դադարեց գործելուց¹²⁸²:

XIX դ. առաջին կեսին հայ իրականության մեջ ամենուրեք և, խոսքը բացառապես վերաբերում է գաղթօջախներին, տպագրական գործի կայացումը նախորդում է պարբերական մամուլի սկզբնավորմանն ու հետագա ընթացքին:

Զմյուռնիայում հայերեն պարբերական մամուլը սկզբնավորվում է ամերիկյան միսիոներների հրատարակած <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> պատկերազարդ ամսագրով (1839-1854): Ամսագրի բովանդակությունը համապատասխանում էր բողոքական քարոզիչների մտավոր ու գործնական ուղեգծին՝ ընթերցողին հասցնել ավետարանական ճշմարտությունները՝ ամենից առաջ դրանք հասցեագրելով դեռահաս ընթերցողին¹²⁸³: Այս իմաստով ամսագիրը հավակնում է նաև առաջինը լինելու հայերեն մանկական հրատարակությունների մեջ, սակայն դրա բովանդակությունը ազգային համարել չի կարելի՝ հայության կյանքից և դրան առնչվող խնդիրներից նրա կտրվածության պատճառով: Այս հանդեսը պարունակում էր կրոնաբարոյախոսական խրատներ գուտ ավետարանական մտայնության շրջանակներում, և մյուս կողմից՝ իսկապես հետաքրքիր և բազմաբնույթ լրատվություն՝ բնական ու հասարակական գիտելիքների, պատմական անցքերի ու գործիչների և այլնի վերաբերյալ, բայց հեռու էր ազգային իրականության, Արևմտահայաստանի, ինչպես և հայ գաղթօջախների հետ կապվող հարցերից: Այսուհանդերձ, հայ մամուլի պատմությանը նվիրված աշխատություններում <<Շտեմարան պիտանի գիտելեացը>> առավել քան հայտնի է գուտ մատենագիտական տվյալներով և անխուսափելի բացատրությամբ, որ այն ամերիկյան բողոքականների հրատարակությունն էր՝ համապատասխան ուղղվածությամբ: Մինչդեռ այդ պարբերականը շատ ավելի ուշադրության է արժանի հենց միայն նրանով, որ հայ մամուլի անդաս-

¹²⁸² Տես Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 137:

¹²⁸³ Ամերիկյան միսիոներների միտումը՝ ավետարանական քարոզչության թիրախ ընտրել նոր սերնդին, նկատելի է նաև Զմյուռնիայում նրանց հունարեն **Ֆիլոս տոն նեոն** թերթի հրատարակությամբ. խմբագիրը կամ հրատարակիչը բողոքականների դպրոցի տնօրեն Օմիրոլատիսն էր: Լույս է տեսել ընդամենը երեք ամիս՝ 1831 թ. (տես Arslan A. Osmanlıdan Cumhuriyete Rum Basını, s. 77-78):

տան էր մտցնում ամերիկյան լրագրության սկզբունքները՝ թեմայի կամ լուսաբանման օբյեկտի անմիջական ներկայացումը, ոճի նպատակալացությունը, որ դրսևորվում էր շարադրանքի համառոտության և կողմնակի շեղումների բացառման մեջ, նյութի պարտադիր՝ փաստական հագեցվածությունը (գերազանցապես ավետարանական վկայակոչումներով) և այլն:

Ամսագրի յուրահատուկ լրագրողական ոճը թելադրվում էր ամերիկյան պրագմատիկ մտածելակերպով՝ չհոգնեցնող, կարճ շարադրանքով դեռահասներին տալ աշխարհճանաչողության համար պահանջվող ամենաբազմազան գիտելիքներ և դրանք իմաստավորել քրիստոնեական-ավետարանական բարոյականության հիմունքներով: Ակնհայտ է, որ ապագա բողոքական հասարակության կազմավորման հիմնախնդիրը ամերիկյան բողոքականները սկսում էին մտածված ծրագրի մեկնակետից՝ նոր սերնդի ավետարանական դաստիարակության փուլից: Ըստ այդմ, <<Շտեմարան պիտանի գիտելեացն>> ուներ բազմակողմանի և բազմաձև բովանդակություն՝ բնության ճանաչողության (բնական պատմություն, բնագիտական նյութեր), պատմաաշխարհագրական գիտելիքների, բժշկաառողջապահական, հողագործության, մշակույթի և արվեստի վերաբերյալ ընդարձակ լրատվության շնորհիվ: Այդ և գրեթե իր բոլոր հրապարակումներին զուգահեռ, ամսագիրը կարևորում էր քաղաքակրթության զարգացման ընթացքն ու դրսևորումները, հատուկ նշանակություն էր տալիս գյուտերին ու հայտնագործություններին և առհասարակ տեխնիկական նորություններին: Ամենատարբեր թեմաներով նյութերը ամսագրի էջերում միավորվում էին հրատարակիչների սկեռուն մտայնությամբ՝ քաղաքակրթական բոլոր երևույթների, այդ թվում և մարդու մտածելակերպի և գործողությունների բարոյական հիմնավորումը՝ ավետարանական անառարկելի ճշմարտություններով: Ըստ ամսագրի բարոյաէթիկական ըմբռնումների, գիտելիքն ու իմացությունը, որչափ էլ օգտակար լինեն մարդուն, դեռևս չեն կարող նպաստել իրերն ու երևույթները լիարժեք գնահատելու նրա կարողությանը, եթե հիմնված չեն ավետարանական փորձի վրա: Առանց դրա՝ <<ամեն բանի ճամբան գտնուած պիտի ըլլայ, բաց ի երջանկութեան ճամբայէն, որ քիչերը միայն կը կարդան ու կը գտնան սուրբ գրքի մէջէն>>¹²⁸⁴: Այլ կերպ, ամերիկյան քարոզիչներն առաջ էին քաշում իմացականության և գիտե-

¹²⁸⁴ Շտեմարան պիտանի գիտելեաց, 1841, թիւ 28, էջ 51-52:

լիքի միասնականության հիմնահարցը, որին հնարավոր է հասնել միայն դրանց կրոնաբարոյական իմաստավորմամբ: Նույն հոդվածում եզրակացվում է, որ սոսկ իմացության տված երջանկությունը <<նման է մուրացիկի մը վերարկուին, որ հագարումէկ կտորներէ ու կարկըտաններէ շինուած է և վերջապէս շատ քիչ արժողութիւն ունի>>, մինչդեռ ավետարանական ճշմարտություններից քաղված երջանկությունը <<մէկ կտորէն (ամբողջական-Ա. Խ.) ու կատարեալ է>>¹²⁸⁵:

Ամսագիրն իր գաղափարախոսությունն առաջ էր տանում ոչ միայն կրոնական գրականությունից առատորեն վերցրած օրինակներով, դարձվածներով ու եզրակացություններով, այլև հետաքրքրաշարժ զրույցներով, առօրեական իրադրությունների պատկերմամբ և այլն: Քարոզելով կրոնական սկզբունքների ճշմարտացիությունը, ամսագիրը դրանք մշտապես առնչում էր բարոյական նորմերին՝ առաքինությանը, հանդուրժողականությանը, մեծահոգությանը և այլն¹²⁸⁶: Ասելիքն առավել մատչելի դարձնելու համար ամսագիրը դիմում էր անգամ կենցաղային գիտելիքների մասին տեղեկատվությանը¹²⁸⁷:

Իր ժանրային բնույթով, ընթերցող լսարանի ընտրության և նյութի մատուցման անակնկալ ու անմիջական ոճով <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> ամսագիրը հետագայի հայ մանկապատանեկան մամուլին հուշարկում էր մասնագիտական առանձնահատկությունների գաղափարը: Իմացության և բարոյական դաստիարակության հիմնահարցերը, որ հայ մամուլում առաջադրեց այս ամսագիրը, շարունակվելու էին դրան հաջորդող հայկական հրատարակություններում:

Արևմտահայ իրականության մեջ հայ պարբերական մամուլի սկզբնավորման առաջնությունը պատկանում է Կ. Պոլսի հայ գաղթօջախին, բայց միայն անվանապես: 1832 թ. Կ. Պոլսում հրատարակված <<Լրոյ գիր>> թերթն իր յուրահատկության այս կամ այն դրսևորումներով հանդերձ¹²⁸⁸, փաստորեն թուրքական պաշտոնաթերթ <<Թաքվիմ-ի վեքայի>> (Իրադարձությունների օրացույց) թերթի հայկական տարբե-

¹²⁸⁵ Նույն տեղում:

¹²⁸⁶ Նույն տեղում, 1841, թիւ 30, էջ 88, 1842, թիւ 41, էջ 75-76:

¹²⁸⁷ <<Հարսանեաց հանդեսի մը մէջ հարսին ու փեսային խօսուած ճառ մը>>, նույն տեղում, 1842, թիւ 47, էջ 162-163:

¹²⁸⁸ <<Լրոյ գրի>> հիմնավոր բնութագիրը տես Ղուկասյան Վ. Գ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, էջ 32-97:

րակն էր, որը շոշափելի հետք չի թողել հայ պարբերական մամուլի զարգացման վրա¹²⁸⁹:

Զմյուռնիայում այդ դերակատարությունն էր վիճակված Ղ. Պալդա-զարյանի խմբագրությամբ հրատարակվող <<Արշալոյս Արարատեան>> թերթին (1840-1884), որը Կ. Պոլսի <<Ազդարար Բիւզանդեան>> (1840-1841) շաբաթաթերթի հետ միասին սկզբնավորում էր ազգային բովանդակության մամուլը Օսմանյան Թուրքիայում: Հայ մամուլի պատմաբան Գր. Գալեմքյարյանը իրավացիորեն նկատում է, որ <<Արշալոյս Արարատեանը>> Թուրքիայի հայության մեջ առաջին թերթն էր, որին հետաքրքրել են ազգային առօրյա անցուղարձը և հայ բնակչության կյանքին վերաբերող խնդիրները: Նա կարծում է, որ <<Արշալոյս Արարատեան>> իր արձարձած հարցերով ու խմբագրական-հրատարակչական մակարդակով ավելի բարձր աստիճանի վրա էր գտնվում, քան <<Լրոյ գիրը>>¹²⁹⁰:

Զմյուռնահայ ազգային թերթը հենց այնպես չէր հայտնվում մամուլի ասպարեզում: Այն պետք է համարել ոչ միայն որպես թանգիմաթի բարենորոգումների արդյունք, այլև միջազգային կապերով ու ազդեցություններով հայտնի այդ առևտրական խոշոր հանգուցակետում համառորեն հաստատվելու ձգտող եվրոպական քաղաքականության և գաղափարախոսությունների ծավալման արդյունք: Այս ժամանակաշրջանի թուրք-եվրոպական փոխհարաբերությունների իմաստով կարևոր է այն փաստը, որ Օսմանյան Թուրքիայում լրագրության և հրապարակախոսության զարգացումը մի հայտնի չափով կապվում է Զմյուռնիայի հետ: 1824 թ. ֆրանսիացիներն այստեղ հրատարակեցին <<Սմիրնեան>> թերթը, որը հետագայում վերանվանվեց <<Սպեկտատյոր օրինետալ>>-ի: Դրա խմբագիր Ա. Բլակն իր ծայրահեղ թուրքասիրական տրամադրությունների շնորհիվ 1831 թ. արժանացավ թուրքական առաջին պաշտոնաթերթ <<Մոնիտյոր Օտտոման>>-ի խմբագրի պաշտոնին¹²⁹¹:

¹²⁸⁹ Թերևս, այդպիսի հետագիծ կարող են բացահայտել թուրքական պաշտոնաթերթի հայերեն թարգմանություններին վերաբերող հետագա ուսումնասիրությունները՝ հայ մամուլում պաշտոնական ոճի ձևավորման կտրվածքով, որ առհասարակ դուրս է մնացել հայ լեզվաբանների հետաքրքրության, էլ չենք խոսում՝ հետազոտության շրջանակներից:

¹²⁹⁰ Տե՛ս Գալեմքյարեան Գր., Պատմութիւն հայ լրագրութեան, էջ 56-57:

¹²⁹¹ Ղուկասյան Վ. Գ. Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, էջ 39-40:

Պետք է նկատի ունենալ նաև, որ եվրոպական լրագրության առկայությունը Զմյուռնիայում իր հերթին խթանեց տեղի հայ մամուլի սկզբնավորումը:

Մինչև 1846 թ. <<Արշալոյս Արարատեանը>>, այնուհետև զմյուռնահայ մյուս թերթը՝ <<Հայրենասերը>>, մնում էին Թուրքիայում կանոնավորապես հրատարակվող միակ հայերեն թերթերը, եթե նկատի ունենանք, որ Կ. Պոլսի <<Ազդարար Բիզանդեան>> շաբաթաթերթը (1840-1841, խմբագիր՝ Խ. Օսկանյան) հայերեն լույս է տեսել ընդամենը չորս համար, որից հետո հրատարակվել է հայատառ թուրքերենով¹²⁹²: Դրա հետ միասին, մինչև 1884 թ. վերջը <<Արշալոյս Արարատեանը>> ամենահեղինակավոր լրագրերից մեկն էր, որի դերը դժվար է գերագնահատել մանավանդ հայ պահպանողականությունը և նրա մտայնությունն ուսումնասիրելու տեսանկյունից: Ավելացնենք, որ այս թերթն առավել քան ժամանակի որևէ այլ հրատարակություն, հարուստ և կանոնավոր տեղեկատվություն էր պարունակում արևելահայ իրականության, Եվրոպայի ու Մերձավոր և Միջին Արևելքի երկրների, մասնավորապես Հնդկաստանի հայ գաղթօջախների մասին: Թերթի շուրջ չորս և կես տասնամյակի գործունեությունը կարևոր դեր խաղաց ազգային համախմբման, հայության տարբեր հատվածների և գաղթօջախների հոգևոր կապերի խորացման գործում:

1840-1850-ական թթ. <<Արշալոյս Արարատեանը>> արևմտահայ հասարակության մեջ սակավաթիվ թերթերից մեկն էր, որ յուրացրել էր ժամանակի եվրոպական մամուլի մշակութային ընդունված մոտեցումները՝ առաջին հերթին նյութի մատուցման (խմբավորման և ժանրային դրսևորումների) և հասարակական կարծիքն արժեվորելու տեսակետից: <<Քաղաքական>>, <<Բանասիրական>>, <<Առևտրական>>, <<Ազգային>> և այլ մշտական խորագրերի ներքո թերթը տպագրում էր ամենատարբեր բնույթի նյութեր, փորձում առաջացնել ընթերցողի հետաքրքրասիրությունը բազմակողմանիորեն, և որ պակաս կարևոր չէ, ընդառաջել նրա հոգևոր պահանջներին:

<<Արշալոյս Արարատեանը>> հիմնականում ուներ չափավոր ուղեգիծ, սակայն պահպանողականությունը, որպես հասարակական մտայնություն, նրա էջերում չէր դրսևորվում մեկընդմիջ տրված կաղապարներով, այլ այս վերջինների կարծրությունը վիճարկող որոշ փոփոխությո-

¹²⁹² Տե՛ս Հայ պարբերական մամուլը, էջ 25:

յուններով: Ազգային եկեղեցու, վերնախավի նկատմամբ ունեցած հավատի, հնամենի բարքերի ու ավանդույթների պաշտպանության հետ թերթը թույլ էր տալիս որոշ ազատամտություն, ինչպես նաև նոր տեղաշարժերը տարբեր հայեցակետերից ըմբռնելու թող որ ոչ հաստատուն, սակայն և դրանց խորամուխ լինելու ակնհայտ ընդունակություն: Լուսավորական շարժման ասպարեզում նրա խմբագիր Դ. Պալդազարյանը՝ ժամանակի զմյուռնահայ առաջավոր մտավորականության այդ ինքնատիպ ներկայացուցիչը, գիտակցում էր այն վտանգը, որ կարող էր ծառանալ ազգի առջև, եթե նա դիմաշրջվեր նոր ժամանակների պահանջներից: Անտարակույս, Դ. Պալդազարյանը և նրա թերթի աշխատակիցներն ի վիճակի չէին համակողմանիորեն իմաստավորելու հոգևոր ու հասարակական կյանքի ընդերքում հասունացած խնդիրները ավելի խորամտորեն, քան կարող էին ենթադրել նրանց հայացքների շրջանակները: Բայց և նրանք հասկանում էին այն փոփոխությունները, որոնք ի հայտ էին գալիս զմյուռնահայ հանրության մտավոր ու տնտեսական տեղաշարժերի, ասել կուզի՝ նրա ազատականացման ընթացքի տրամաբանությամբ: Այս հանգամանքը առավել նկատելի էր դարձնում թերթի հայացքների հակասականությունը. մի կողմից <<Արշալոյս Արարատեանը>> կոչ էր անում հարգել հայ համայնքներում տիրող հասարակական-վարչական հարաբերությունները, կտրուկ առարկումներ էր անում առհասարակ վերնախավի (Կ. Պոլսում՝ ամիրանների) մարդկանց ընդդիմացող էսնաֆին (կամ միջակա խավերին՝ մանր ու միջակ արհեստավորներին ու առևտրականներին), իսկ մյուս կողմից, և ոչ քիչ դեպքերում, ըմբռնողություն էր ցուցաբերում եվրոպական երկրների քաղաքական կարգերին սպառնացող հեղափոխությունների նկատմամբ: Այս իմաստով ուշագրավ է, որ Փարիզի ապստամբած ժողովրդին թերթն անվանում էր հաղթանակած <<վեհանձն ժողովուրդ>>, որն անօրինակ անձնվիրությամբ և հերոսությամբ հաղթանակ է նվաճել¹²⁹³: Այս առումով բավական զգալի է թերթի համակրական վերաբերմունքը իտալական ու հունգարական հեղափոխությունների հանդեպ: Այսուհանդերձ, <<Արշալոյս Արարատեանը>> հասկանալի տագնապով էր նայում հեղափոխական իրադարձությունների զարգացմանը, հատկապես դրանց անիշխանական միտումներին և Ֆրանսիայի պարագայում շատ ավելի չափավոր ռազմական ուժի Կավենյակի ռազմական կարո-

¹²⁹³ Արշալոյս Արարատեան, 1848, 19 մարտի, նաև՝ 28 մայիսի, 25 հունիսի:

դությունների մեջ էր որոնում ներքին ծայրահեղությունները զսպող գործոնը¹²⁹⁴։ Եվ դարձյալ, տագնապելով հեղափոխության համաձայնական ընդգրկումներից, <<Արշալոյս Արարատեանը>> դրանից փոքրինչ ուշ, անբավականություն պետք է հայտնեք չարտիստական շարժման, Մաձձինիի ելույթների և հունգարական հեղափոխական իրադարձությունների առթիվ։ Շատ հետաքրքիր է, որ դրանց ընկալման այս փոփոխությունների հենքի վրա թերթը ժողովուրդների ազգային ու տնտեսական հուզումներից անում էր որոշակի քաղաքական հետևություններ, որոնցով էլ հիմնավորում էր ազատական բարեփոխումների անհրաժեշտությունը եվրոպական քաղաքական համակարգերի ներսում։ Նրա կարծիքով հեղափոխական շարժումները կարող էին կանխվել, եթե կառավարությունները հանդես բերեին ողջամտություն, հրաժարվեին բռնություն և ուժ գործադրելու քաղաքականությունից և ժողովրդին տրամադրեին ինչ-ինչ ազատություններ կամ իրավունքներ։ Ապստամբած հունգարացիների խաղաղեցման գործունակ միջոցը թերթի էջերում համարվում է նրանց սահմանադրական ազատություններ շնորհելը և առհասարակ, հարգալիք վերաբերմունքը հպատակ ազգությունների նկատմամբ։ Այսպիսի մոտեցումը սնունդ էր առնում օսմանյան պետության՝ Բալկաններում ավատրիական տիրապետության ցնցումներին համակրական խանդով հետևելու իրողությունից, որ փաստորեն սրբագործում էր թերթի համարձակ կեցվածքը, և մյուս կողմից՝ թանգիմաթից ունեցած ակնկալիքներից։ Եվ առհասարակ հայերի հոգևոր ու տնտեսական զարգացման հեռանկարները <<Արշալոյս Արարատեանը>> կապում էր կայսրությունում իրականացվելիք բարեփոխումների հետ։ Հիրավի, Գյուլիանեի հաթթը շերիֆը (1839) չէր կարող տպավորիչ չլինել դարեր ի վեր տնտեսական ու կրոնական բռնությունների պայմաններում ապրող ժողովրդի մտավորականության համար։ Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև այդ հրովարտակով Թուրքիան տեղի էր տալիս բարենորոգումների եվրոպական մտայնությանը, որ ենթադրում էր հպատակների խղճի և դավանանքի ազատություն, նրանց փաստական իրավահավասարություն՝ առանց կրոնի և ցեղի խտրության, հարկերի արդարացի և օրինական գանձում և այլն։

Թանգիմաթի հրապարակումից հետո օսմանյան բարենորոգիչները Ռեշիդ փաշայի գլխավորությամբ ձեռնամուխ եղան դրա օրենսդրական

¹²⁹⁴ Նույն տեղում, 1848, 9 հուլիսի։

իրականացմանը: 1840-1850-ական թթ. իրագործվեցին մի շարք վարչական և առևտրական օրենքներ, որոնք այս կամ այն չափով շոշափում էին հպատակների կյանքի և կայքի ապահովության, ժողովուրդների իրավահավասարության հարցերը, հող նախապատրաստում բարենորոգչական ձեռնարկումների հետագա ծավալման և դրանց իրականացման համար: Ոչ մահմեդական հպատակների իրավունքների տեսակետից դրական տեղաշարժ պետք էր համարել հարկերի միասնականացման և կարգավորման, առևտրական խառն դատարանների, քրեական իրավունքի և այլ բնագավառներում բարեփոխումներ կիրառելու փորձերը: Մասնավորապես, հարկային բարեփոխումը զգալի հարված կարող էր հասցնել վալիների և կայմակամների անսահմանափակ իշխանությանը և ամբողջ իլթիզամի համակարգին: Քրիստոնյա ազգաբնակչության շահերի տեսակետից պետք է գնահատել նաև հատուկ պարիսկների վերացումը և արտակարգ հարկերի սահմանափակումը¹²⁹⁵: 1840-ական թթ, հարկային բարեփոխումները, սուլթանական վարչական բյուրոկրատիայից բացի, բավականաչափ սահմանափակում էին նաև արևմտահայ ամիրա սեղանավորների տնտեսական ուժը: Հարկահավաքման նոր իրավունքի պայմաններում վալիների նախկին իրավասությունները տրվում էին պետական այլ պաշտոնյաներին, որով և ավելորդ էր դառնում ամիրա-սեղանավորների հարկահավաքման գործառույթը: Պոլսահայ իրականության մեջ այդ չքացման էր դատապարտում բուն ամիրայական խավը¹²⁹⁶: Իր հերթին, ամիրաների տնտեսական հզորության անկումը նպաստում էր հայ համայնքներում ավանդական կրոնական սկզբի թուլացմանը և աշխարհիկ մտածողությունն ու դրա զարգացումը խթանող ազգային հաստատությունների կազմավորման նոր հնարավորություններ էր ստեղծում:

Քաղաքներում բնակվող քրիստոնյա հպատակների համար դրական նշանակություն ունեցան դատարանակազմության և առևտրական իրավունքի բնագավառներում կատարվող բարեփոխումները, որոնք համընկնում էին երկրի տնտեսության զարգացման միտումներին¹²⁹⁷: Այդ դատարանների աշխարհիկ կազմը զգալի առաջարժու էր շերիի դատարանների միջնադարյան ինստիտուտի համեմատությամբ, երբ վերջիններս բացառապես գործում էին մահմեդականին նախապատվությո-

¹²⁹⁵ Новичев А. Д. История Турции. I, с. 124-125.

¹²⁹⁶ Հովհաննիսյան Ա. Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, էջ 349-350:

¹²⁹⁷ Новичев А. Д., նշվ. աշխ., էջ 145:

յուն տալու սկզբունքով: Թանգիմաթի Բարեփոխումները հետամտում էին Թուրքիայում շուկայական-դրամական հարաբերությունների զարգացման նպատակը, սակայն այդ օրենքների անհետևողականությունը, կիրառման նեղ շառավիղները օսմանյան պահպանողականության դիմադրության պայմաններում, նվազագույնի էին հասցնում դրանց արդյունավետությունը¹²⁹⁸: Չպետք է, սակայն, անգիտանալ ընդունված օրենքների թողած դրական ազդեցությունը երկրի վարչակառավարչական, իրավական ու քաղաքական կառույցների արդիականացման, մի հայտնի չափով՝ նաև տնտեսական հարաբերությունների վրա: Սակայն Թանգիմաթի Բարեփոխումները ամեննին չվերացրեցին կայսրության ժողովուրդների, այդ թվում և հայերի տնտեսական անողոր շահագործումը, մասնավորապես նրանց անձնական, քաղաքացիական և ազգային իրավունքների ոտնահարումը: Արևմտահայաստանի գյուղական և քաղաքային բնակչության սոցիալ-տնտեսական լուծը այս պայմաններում չէր կարող թեթևանալ: Հայկական գավառներում հողօգտագործման ձևերի փոփոխությունը (երբ քրդական դերեբեյներից հողերն անցնում էին թուրքական վերնախավին և չորբաջիներին) առավել խորացրեց սոցիալական շերտավորման գործընթացը և գյուղի տնտեսական քայքայումը: Առաջացավ հայ հողագուրկ գյուղացիների զանգվածը՝ մարաբայությունը, որ քրդական վերնախավի տնտեսական հարկադրանքի պայմաններում ընկավ կիսաճորտական կախվածության մեջ (Մուշի, Սասունի և Վանի մի քանի շրջաններում)¹²⁹⁹: Հողագուրկ գյուղացիների մի մասը 1840-1850-ական թթ. բռնեց գաղթի ավանդական ճանապարհը՝ կենտրոնանալով Կ. Պոլսում, Զմյուռնիայում, կայսրության փոքրասիական քաղաքներում և այլուր: 1850-ական թթ. վերջին Կ. Պոլսում կենտրոնացել էր հայ գաղթականների 15 հազարանոց բանակը, իսկ Զմյուռնիայում նրանց թիվը հասնում էր 4 հազարի¹³⁰⁰: Քաղաքներ տեղափոխված գաղթականները դառնում էին վարձու մշակներ, բեռնակիրներ, աղբահավաքներ, հրշեջներ և այլն:

Արևմտյան Հայաստանում Բարեփոխումների զուտ ձևական բնույթը և անգործունակությունը դրսևորվում էին ամենից առաջ ժողովրդի իրավագրկության խորացման մեջ: Բարեփոխումներն անգոր գտնվեցին ապահովելու անհատի ազատության այնպիսի չափ, որպիսին անհրա-

¹²⁹⁸ Чихачев П. А. Письма о Турции, с. 128-129.

¹²⁹⁹ Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 287:

¹³⁰⁰ Նույն տեղում, էջ 323:

Ժեշտ էր առաջավոր արտադրահարաբերությունների զարգացմանը երկրում: Այնուհետև, թանգիմաթը, որպես իրավական ակտ, կայսրության մեջ իրավունքի և տնտեսության բնագավառներում պարտադրվում էր դրսից՝ Բարենորոգիչների նեղ շրջանի և տերությունների, մասնավորապես անգլիական ու ֆրանսիական քաղաքականության ներգործության շնորհիվ: Այս պատճառով էլ օսմանյան հասարակությանը պատվաստված այդ բարեփոխումները միանգամայն համապատասխանելով արևմտյան քաղաքական ու հասարակական շահերին, մտածված օրենսդրական ակտերով չէին նպաստում բուն թուրքական տնտեսության զարգացմանը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ տնտեսականից առավել, թանգիմաթի բարեփոխումներն արտացոլում էին այն տեղաշարժերը, որոնք կատարվում էին երկրի քաղաքական կյանքում:

Թանգիմաթի իրական նշանակությունը, սակայն, օսմանյան կառավարողների համար զգալի չափով պետք է վերածվեր իր հակադրությանը: Այսպես, արևմտահայ հասարակական գործիչները բարեփոխումները գնահատում էին ժողովրդի հասարակական ու ազգային իրավունքների, անհատի ու նրա խղճի ազատության տեսակետից, ուստի և որոշակի սպասելիքներ ունեին թանգիմաթից: Հայ լուսավորական շարժումը, անկախ իր գաղափարախոսությունից և այն կրող տարատեսակություններից, ամենից առաջ կարևորում էր վերոհիշյալ ազատությունները: Այսպիսի դիրքորոշումը դրսևորվել է նաև <<Արշալոյս Արարատեան>> թերթում: Ղ. Պալղազարյանը և նրա համախոհները հատուկ նշանակություն էին տալիս արևմտահայերի և ընդհանրապես ոչ մահմեդական հպատակների քաղաքացիական իրավունքների ճանաչմանը և դրանց կիրառմանը օսմանյան դատարաններում, վարչական ու տնտեսական կյանքի ամենատարբեր բնագավառներում: Թերթը համակողմանիորեն պաշտպանում էր Բարենորոգումների գաղափարը Թուրքիայում և սրա համեմատ, կայսրությունը ներկայացնում էր որպես եվրոպական քաղաքակրթություն ոտք դրած երկիր: Սակայն պաշտոնական քարոզչության, երկրի <<եվրոպականացման>> տարփողվող տեսակետի կողքին <<Արշալոյս Արարատեանը>> չէր կարող չնկատել հնավանդ բռնությունների ու բարքերի հարատևումը: Մանավանդ մայրաքաղաքից հեռու շրջաններում, հայաբնակ և մյուս այլ վիլայեթներում թուրքական իշխանությունները շարունակում էին իրենց բռնություններն ու կամայականությունները, որպիսիք դույզն-ինչ չափով չէին մեղմացվել թանգիմաթի օրենքներով: Թերթին մնում էր միայն ինքնազուլիս վալիներին սպառնալ

այն դատաստանով, որ սպասվելու էր նրանց Բ. դռան կողմից և այդ էլ վկայակոչելով թանգիմաթի հռչակագրի դեկլամատիվ դրույթները¹³⁰¹։ Եվ թանգիմաթի փառաբանումը այս թերթի էջերում աստիճանաբար տեղի է տալիս փաստերին ու դրանցից ծնվող իրատեսությանը։ Նրա հրապարակումներում հայտնվում են բնությունների նորանոր փաստեր, ցրվում են նրա պատրանքները իրավահավասարության հաստատման, դատարանների կողմից արդարադատության իրականացման, գավառական մեջլիսներում քրիստոնյա հպատակների իրավունքների պաշտպանության և այլնի վերաբերյալ։ <<Արշալոյս Արարատեանը>> նկատում էր, որ թուրքական դատարաններում դատավճիռները մեծ մասամբ անարդարացի են և արտահայտում են մահմեդականների և իշխանավորների շահերը։ Այսպիսի բովանդակության նյութերից մեկում հայտնվում է, որ հակառակ օրենքի, մահմեդական երկու կեղծ վկաների ցուցմունքները բավական են մեղավոր ճանաչելու որևէ անպարտ և առաքինի քրիստոնյա հպատակի՝ դատապարտել տալով նրան¹³⁰²։

Թերթի լրատվությունը լեցուն է բնությունների այսպիսի օրինակներով, որոնք համոզում են, որ ոչ օսմանյան իշխանությունները, և ոչ էլ մահմեդական զանգվածի վրա հենվող պահպանողականությունը պատրաստ չեն թանգիմաթի բարեփոխումներին։

Թերթը քանիցս հիշատակում է պաշտոնյաների կամայականությունների և ազգային կրոնական հալածանքի դեպքեր, բերում բռնի տաճկացման փաստեր, սակայն այս ամենը դիտում է որպես շեղումներ բարեփոխումների բնականոն ընթացքից։ Ղ. Պալազարյանը այդպիսի չարիքների վերացման ոչ մի միջոց չի տեսնում, քան այդ նույն բարենորոգումների հետևողական կիրառումը. <<Թէպէտ եւ կառավարիչներէն և մուհասըլներէն մէկ քանին շատ անգամ անարժան գործքեր կընեն Անատօլոյի մէջ, բայց ժողովրդոց գանգատը տէրութեան ականջը հասնելուն պէս այնպիսիները իսկոյն իրենց անօրինութեան արժանատր պատիժը կընդունին>>, -գրում է <<Արշալոյս Արարատեանը>>¹³⁰³։

Թերթի հրապարակումներում կարելի է առանձնացնել թանգիմաթի տնտեսական բարեկարգումները ոտնահարող իրողությունների բացահայտումը, հատկապես այն դեպքերում, երբ դրանից վնասվում էին ոչ

¹³⁰¹ Արշալոյս Արարատեան, 1841, 17 հունվարի։

¹³⁰² Նույն տեղում, 1846, 22 փետրվարի։

¹³⁰³ Նույն տեղում, 1841, թիւ 17։

մահմեդականները, որոնց բողոքի պատասխանը լինում էր իշխանությունների հաշվեհարդարը: Այսուհանդերձ, սկզբնաղբյուրի արժեք ունեն այն նյութերը, որոնք վերաբերում են Ջմյուռնիայի առևտրում իրականացված բարեփոխումներին: Ի թիվս այլոց, այդպիսիք են 1851 թ. կազմակերպված առևտրական և քրեական դատարանների (թիջարեթ մեջլիե-ի, ջյունհա մեջլիե-ի) վերաբերյալ հրապարակումները:

Թերթը համակրում էր Բ. դռան այն փորձերը, որոնք նպատակ ունեին ամրացնել օսմանյան կենտրոնացած պետությունը: Մասնավորապես, քրդական լենատերերի կենտրոնախույս ձգտումների վերացումը պետք է դրականորեն անդրադառնար Արևմտահայաստանի հայ բնակչության սոցիալական կացության վրա՝ անողորմ թալանչիներից ու հարստահարողներից ազատվելու իմաստով: 1847 թ., երբ սուլթանն ընկճել էր քուրդ անհնազանդ վասալների դիմադրությունը, Մատթեոս պատրիարքը երկու կոնդակով ողջունեց այդ իրադարձությունը, որ անվերապահ համակրանքի արժանացավ թերթի էջերում: <<Արշալոյս Արարատյանը>> երևույթ էր համարում կառավարության հաղթանակը՝ նկատի ունենալով հայ գավառում օրինականություն հաստատելու հետևանքները, ուստի ողջունում էր, դեռևս 1841 թ. Դիարբեքիի քրդերին զսպող՝ կառավարության հաջողությունները, ինչպես և դատապարտում՝ 1848 թ., Հաքյարի վիլայեթի վալի Նասրուլլահ Բեյի ապստամբությունը կենտրոնական իշխանության դեմ¹³⁰⁴:

1856 թ. թերթը, ինչպես նախկինում, շարունակում էր հույսեր կապել օսմանյան բարենորոգչական շարժման հետ: Խմբագիրը տպագրեց հաթթը հյումայունի տեքստը, թեև բարեփոխումների նախընթաց ամբողջ պատմությունը և ճակատագիրը հազիվ թե հույսեր ներշնչեր նրան՝ հայաբնակ վիլայեթների վիճակի բարվոքման տեսակետից: Ռեշիդ փաշայի մեծ վեզիր վերանշանակվելու առթիվ ևս թերթի ոգևորությունը ցույց է տալիս, որ հայերի հասարակական բարեկեցությունը նա լծորդում է երկրում բարեփոխումների իրականացման հետ:

Հայ հանրության հետագա առաջընթացը թերթը պատկերացնում էր ազգային աշխարհիկ ու հոգևոր վերնախավի ներդաշնակ գործակցության պայմաններում: Ելնելով դրանից, <<Արշալոյս Արարատեանը>> դատապարտում էր ամիրաների ներքին երկպառակություններն ու <<ծղռած նախանձը>>՝ նրանց միաբանությունը վեր դասելով անձերի

¹³⁰⁴ Նույն տեղում, 1841, թիւ 47, 1848, թիւ 327:

հեղինակությունից: Մակայն, երբ խոսքը վերաբերում էր վերնախավի և բնակչության հասարակ շերտերի ընդհարումներին, թերթն անվերապահորեն անցնում էր առաջինի կողմը: Էսնաֆի ու ամիրաների բախումները նրա էջերում բնութագրվում էին որպես ազգի համար ողբերգական իրադարձություններ, որոնց մեղքն ամբողջովին բարդվում էր ըմբոստ արհեստավորության վրա: Բուն իսկ բախումների պատճառը թերթը վերագրում էր հասարակ ժողովրդի տգիտությանը: Այդ տգիտությունը, նրա կարծիքով, հետամուտ է ոսոնահարելու ազգային բարոյականության բոլոր արժեքները, ուրեմն և ազգի գոյության ամենակարևոր երաշխիքը:

Իբրև պահպանողական հրատարակություն, <<Արշալոյս Արարատեանը>> մի նշանակալի չափով արտահայտում էր հայ առևտրականության, այդ թվում և գաղութահայ առևտրականության մտորումներն ու հասարակական շահախնդրությունները: Ձմյունահայ առևտրականությունը, որ այս իմաստով Կ. Պոլսի ազգակից առևտրականության հետ միասին շատ ասպարեզներում առնչվում էր եվրոպական ու ռուսական առևտրի և արդյունաբերության հետ, ի դեմս այս թերթի, կարող էր տեսնել իր անկեղծ խոսսփողին:

<<Արշալոյս Արարատեանի>> էջերում զգալի տեղ է գրավում առևտրին ու վաճառականությանը վերաբերող լրատվությունը: Այստեղ հանգամանալի տեղեկություններ են տրվում տեղական առևտրի, մասնավորապես Էգեյանի բամբակագործական շրջաններում գյուղատնտեսական արտադրության, Ձմյունիայի և արտասահմանի շուկաներում դրա սպառողականության, տեսականու, որակի, գնի տատանումների և այլնի մասին: Առհասարակ հասարակական կյանքի առաջընթացը թերթը կապում էր առևտրի, ասել կուզի՝ այն իրականացնող դրամատերերի գործունեության հետ: Նրա պատկերացմամբ, առևտրական կապիտալը այն միակ տնտեսական լծակն էր, որն ի վիճակի էր շրջելու ժողովրդի բոլոր խավերի կյանքը դեպի տնտեսական բարեկեցության հուն: Նյութական այդ գործը ուժը, այդ պատկերացման համեմատ, նպաստելու էր ազգի ներսում եվրոպական քաղաքակրթության արժեքների, ուրեմն և լուսավորության տարածմանը: Թերթը կարծում էր, որ ազգի ամեն մի խավ հանդես է գալիս որպես սեփական շրջանակի մեջ գործող անհրաժեշտ միավոր, նրանցից յուրաքանչյուրը պետք է

կատարեր իր գործը սոցիալապես նախասահմանված շառավղի ներսում և սրանց մեջ առաջնությունը խոշոր առևտրականությանը վերապահելով հանդերձ, Ղ. Պալազարյանը վերոնշյալ խավերի համերաշխությունից էր բխեցնում ազգային առաջընթացի պայմանները: Այս պարզունակ մոտեցումն էր պատճառը, որ ազգի ներսում առկա հակասությունները կամ ընդհարումները թերթը չնկատելու էր տալիս և կամ, նկատելու դեպքում, այդպիսիք բացատրում էր հակադրվող կողմերի անձնական կամ սուբյեկտիվ հատկանիշներով, բարոյական դաստիարակության տված ճեղքերով և այլն:

Հասարակական իր ակնկալիքները սևեռելով առևտրի և առևտրական կապիտալի վրա, <<Արշալոյս Արարատեանը>> մի որոշ չափով է միայն ուշադրություն դարձրել արդյունաբերության զարգացման խնդիրներին: Այսուհանդերձ, նրա տպագրած նյութերում տեղեկություններ կան Ջմյունիայի բամբակագործական արհեստանոցների, Հ. Տյուզյանի հիմնած թղթի գործարանի, Պեյքոզի կաշեգործարանի, մետաքսի, գործվածքեղենի և տեղական արտադրության այլ տեսակների վերաբերյալ: Ուշագրավ է, որ ընթերցողին լուրեր տրամադրելով 1840-ական թթ. կառուցվող՝ Կ. Պոլսի մեխանիկական գործարանի և Նիկոմեդիայի չուխայի արհեստանոցի մասին, թերթը դրանք դիտում է որպես հասարակ ժողովրդին աշխատանքով ապահովելու միջոց¹³⁰⁵: Հարկ է նկատել, որ նշված ձեռնարկությունները ոչ թե առևտրական կապիտալի զարգացման արդյունք էին կամ կապված էին այդ կապիտալի շրջանառության հետ, այլ պետական հաստատություններ էին: Բնականաբար, թերթը դրանք չէր կարող կապակցել առևտրի ու վաճառականության որակական անցումների հետ, և այս պատճառով էլ արհեստանոցների հիմնադրումը բացառապես վերագրում էր հասարակ ժողովրդի հանդեպ կառավարության ցուցաբերած իբր, մտահոգությանը: Տեղական արտադրության զարգացման թույլ միտումները <<Արշալոյս Արարատեանի>> համար չէին կարող լուրջ ազդակ լինել՝ արտադրության խնդիրների փոքրիշատե լուրջ քննարկման համար: Նրա տեսակետից Օսմանյան Թուրքիայի տնտեսական հրապարակը և հայ վաճառականությունը հիմնականում մնում էին ինքնաբավ և անփոփոխ մեծություններ. առաջինը՝ որպես եվրոպական արդյունաբերական արտադրության ներմուծման մատչելի շուկա, իսկ երկրորդը՝ այդ արտադրությո-

¹³⁰⁵ Նույն տեղում, 1845, 5 մարտի:

յան հումքի մատակարար և օտար ապրանքներ իրացնող: Այս տասնամյակներին՝ 1840-1850-ական թթ. թերթը, և ոչ առանց հիմքերի, կարծում էր, որ առևտրական կապիտալը երկրում լուրջ հեռանկարներ ունի և լրիվ չի բացահայտել իր տնտեսական հնարավորությունները: Ի դեպ, առևտրականության չբացահայտված ներուժի վկայակոչումը ի ցույց էր դնում նաև թերթի աճող տագնապը այս ասպարեզում. Ղ. Պալդազարյանը և նրա համախոհները նկատում էին Թուրքիայում եվրոպական կապիտալի բերած տնտեսական անհանգստացնող հետևանքները, հայ առևտրականների թուլությունը՝ կազմակերպված օտար վաճառականների հետ մրցակցության մեջ, սակայն կարծում էին, որ այդ վիճակի պատճառը հայերի առևտրական հմտությունների պակասն է եվրոպացիների համեմատությամբ: Եվ թերթին այլ բան չէր մնում անելու, քան կոչ անելը՝ յուրացնելու եվրոպական առևտրի մեթոդներն ու եղանակները: Ըստ էության, առևտրի արդիական ձևերին անցնելու այս քարոզչությունը հետամտում էր հայ առևտրական ընկերությունների և մասնավոր կապիտալների միավորումը: Եվրոպայի հետ հայ առևտրականների կապերը ամրացնելու նպատակով թերթը հանձնարարում էր բաժնետիրական ընկերությունների և այլ կազմակերպական ձևեր: Բուն Զմյուռնիայում հաթթը հյումայունի ուժով իշխանությունները փորձում էին եվրոպական վարկավորման միջոցով կարգավորել ներքին առևտուրը. 1857 թվականից այստեղ՝ Չուխաճի բեգեթեն շուկայում, գործում էր Օսմանյան բանկի բաժանմունքը՝ հույն և հայ մանրածախ առևտրականներին վարկավորելու համար: Բանկի կառավարիչն էր Հակոբ Տետեյանը՝ նշանավոր տպագրիչի եղբայրը կամ ազգականը:

Զմյուռնահայ առևտրականությունը XIX դ. երկրորդ կեսին հիմնականում կապված էր անգլիական, մասամբ ֆրանսիական առևտրաարդյունաբերական, մասնավորապես մանածագործական կենտրոնների հետ: 1850-ական թթ, սկզբներին Մանչեստրի հայ վաճառականների մեջ դրամաշրջանառության նկատելի չափերով աչքի էին ընկնում զմյուռնացիներ Հ. Հովակիմյանը և Հ. Կոստանդյանը, Կ. Պոլսից Խաբամաճյանները, Թ. Կարապետյանը, Կ. Աղջիկյանը և այլք: Ջատագովելով սրանց գործունեությունը, <<Արշալոյս Արարատեանը>> Թուրքիայի տնտեսության վերածնության ուղիներից մեկն էր համարում փոխառությունները, որոնց օսմանյան կառավարությունը դիմել էր նախքան Ղրիմի պատերազմը: Թերթն ըստ ամենայնի հիմնավորում էր այդ փոխառությունները՝ իբրև համաշխարհային տնտեսության մեջ ընդուն-

ված ֆինանսական ազդակ. <<Քանզի ճարտարութեան (արտադրութեան) եւ երկրագործութեան վերաբերեալ մեծամեծ բարելաւութիւնները եւ յառաջադիմութիւնները, որոնք այսօրուան օրս վերջին աստիճան ծաղկեալ են Եւրոպայի գլխաւոր եւ երկրորդական իսկ տէրութեանց մէջ, միթէ ամենքն ալ փոխառութեանց միջոցաւ չեն>>,-գրում է թերթը¹³⁰⁶:

Դիտողությունը, ըստ էության ուղղվում էր փոխառությունների դեմ հանդես եկած օսմանյան տնտեսավար-պաշտոնյաներին: 1852 թ. օսմանյան կառավարությունը Ֆրանսիայից վերցրել էր 50 մլն ֆրանկի փոխառություն և թերթը շտապում էր իր գոհունակությունը հայտնել այս իրողության առթիվ՝ նկատի ունենալով նաև տեղական առևտրի ու արտադրության շահերը: Սակայն հազիվ թե թերթը փոխառությունների առթիվ ունենար տնտեսագիտական կայուն համոզմունքներ. մի որոշ ժամանակ անց, երբ Բ. դուռը չվավերացրեց վերոհիշյալ փոխառությունը, <<Արշալոյս Արարատեանն>> իր անվերապահ գոհունակությունը հայտնեց դրան, նշելով, որ կառավարությունը <<ինքնիրեն կարող եղաւ իւր հարկաւորութիւնը լմնցնել՝ առանց կարօտ ըլլալու օտարին>>¹³⁰⁷:

Անգլիական կապիտալի հետզհետեւ ամրապնդումը Թուրքիայում, այսուհանդերձ, ավելի ու ավելի էր գրավում թերթի ուշադրությունը: 1850-ական թթ. երկրորդ կեսին, Ղրիմի պատերազմից հետո Թուրքիայի՝ Անգլիայից վերցրած փոխառությունները, անգլիացիների ձեռնարկած երկաթուղաշինությունը կայսրության տարածքում (Եփրատ-Միջերկրական ծով, Ջմյուռնիա-Այդըն, Ռուշուկ- Էնեզի ծովախորշ) թերթը գնահատում էր որպէս երկրի տնտեսական ծաղկման նախապայման: Նշանակալի չափերի էր հասել այստեղ նաև անգլիական առևտուրը. 1856 թ. Ջմյուռնիայի ապրանքային առևտրական շրջանառության մեջ ներդրված գումարը հասնում էր 165 մլն 237.884 ֆրանկի, որից Անգլիային բաժին էր ընկնում 61 մլն 207.610 ֆրանկ, Ավստրիային՝ 23 մլն, Ֆրանսիային՝ 21,5 ֆրանկ¹³⁰⁸: Ընդամին, այս ոչ լրիվ հաշվեկշռում ապրանքների գրեթե կեսը կազմում էր արտածման գումարը, որ վկայում էր այդ երկրի տնտեսական կայունության գործում Ջմյուռնիայի նավահանգստի գործնական նշանակության մասին:

Հիրավի, Ջմյուռնիան դարձել էր անգլիական կապիտալի կարևոր հենակետերից մեկը Թուրքիայում: Տնտեսական այս ամրակայումն ու-

¹³⁰⁶ Նույն տեղում, 1852, թիւ 425:

¹³⁰⁷ Նույն տեղում, 1852, թիւ 426:

¹³⁰⁸ Նույն տեղում, 1857, 26 հունիսի:

ղեկցվում էր զմյուռնաբնակ անգլիական համայնքի հոգևոր ինքնահաստատման ընդգծումով. 1856 թ. անգլիացի վաճառական Չարլզ Վիթթըլը, որի գերդաստանն այստեղ գործում էր XIX դ. սկզբներից, զմյուռնաբնակ այն եվրոպացիներից էր, որ առևտրական կապեր ուներ հայերի հետ: Առաջ ընկնելով նկատենք, որ 1860-ական թթ. Զմյուռնիայում հրատարակվում էր անգլիական <<Սմանա մեյլ>> թերթը, իսկ 1866 թ. անգլիացիներն այստեղ հիմնեցին <<Հոմերոս>> մասոնական ժողովարանը, որ նպաստելու էր անգլիական ազդեցության տարածմանը: <<Արշալոյս Արարատեանը>> ամեն կերպ խրախուսում էր հայ վաճառականների տնտեսական կապերը անգլիական կապիտալի հետ¹³⁰⁹:

1859-1860 թթ. թերթը մի քանի նյութեր հրատարակեց <<Արարատյան>> և <<Հայկազնյան>> առևտրական ընկերությունների, <<Արամյան>> խնայողական ընկերության մասին, տպագրեց դրանց կանոնադրությունները: <<Հայկազնյան>> ընկերության ծավալուն հայտարարության մեջ ցույց է տրվում հայ առևտրականության աննախանձ կացությունը, որը կորցնում է միջնորդի դերն արտաքին առևտրում: Այստեղ ասվում է, որ արևմուտքից բերված ապրանքները թանկ են նստում, իսկ արևելքից արևմուտք արտահանածը՝ էժան, որ ծանր է անդրադառնում տեղական առևտրի վրա: Հայտարարությունը միավորվելու կոչ էր անում հայ առևտրականներին՝ միացնել դրամագլուխները, որ դիտվում է միջոց՝ մրցակցությանը դիմակայելու և տնտեսական սպասվող դժվարություններից խուսափելու համար¹³¹⁰:

Հանդես գալով որպես առևտրականության շահերի պաշտպան, <<Արշալոյս Արարատեանը>> բնականաբար, ձգտում էր կանխել մանր ու միջակ առևտրականների տնտեսական քայքայումը: Վտանգավոր այս գործընթացը առավել խորանում էր այն պատճառով, որ եվրոպական դրամագլխին տրված արտոնությունները Բ. դուռն առավել զգալի էր դարձնում տեղական առևտրի զարգացումը արգելակող իր ձեռնար-

¹³⁰⁹ Ինքը՝ Դ. Պալլազայանը անձնական շփումներ ուներ Կ. Պլլսի անգլիական դեսպան Ստ. Քաննինգի (հետագայում՝ լորդ Ռեդկլիֆ) հետ, հավանաբար, զմյուռնաբնակ անգլիացիների միջոցով. մայրաքաղաքում դեսպանը նրա պատվին <<մասնաւոր հացկերոյթ>> էր տվել (Արշալոյս Արարատեան, 1842, 3 հուլիսի):

¹³¹⁰ Արշալոյս Արարատեան, 1860, 1 ապրիլի:

կումներով՝ հարկերի ու մաքսերի մի ամբողջ համակարգի կիրառմամբ¹³¹¹: Այսպես, հաթթը հյումայունի հռչակագրից հետո, երբ կրկնվել էին երկրի տնտեսության զարգացման վերաբերյալ բարեփոխումների խոստումները պետության կողմից, տեղական առևտրականներին պարտադրվել էին Փոքր Ասիայի շրջաններից բերված ապրանքների լրացուցիչ հարկեր (10%-ի չափով)¹³¹²: Այս առթիվ տեղական առևտրականությունը բողոք էր ուղղել Բ. դռանը, որը և տպագրել է թերթը: Անկախ նման սակավաթիվ ցույցերից, <<Արշալոյս Արարատեանը>> շատ զգույշ էր կառավարության տնտեսական միջոցառումների գնահատման հարցում և առհասարակ, դրվատանքի էր արժանացնում վերջինիս քաղաքականությունն այս ասպարեզում:

<<Արշալոյս Արարատեանը>>, իբրև պահպանողական մտայնության հրատարակություն, բնավ սպառված չէր համարում առևտրի ու արհեստների հնարավորությունները հասարակության առաջընթացի գործում և, ինչպես տեսանք, գրեթե անտեսում էր այս հարցում արտադրության ու արդյունաբերության զարգացման նշանակությունը: Սոցիալական դժվարությունների հաղթահարումն այս դեպքում թերթը առնչում էր դարձյալ առևտրի և առևտրականության հաջողություններին, ընդամենի չմոռանալով դրա բարոյական հետևանքները նույնպես: Նույն կերպ, ընթերցողը նախազգուշացվում էր հնամենի բարքերի ու բարոյականության տեղատվությունից, շռայլության, մոլեկան խաղերի բերած չարիքներից: Արևմտահայ առևտրականության միավորման, ընկերություններ կազմելու հորդորը վկայում էր թերթի տազնապների ու անհանգստության մասին, որ ի վերջո բխում էր երկրի տնտեսական կացությունից:

<<Արշալոյս Արարատեանը>> գիտակցում էր արևմտյան մշակույթի և լուսավորության նշանակությունը ժամանակի առաջադիմության գործում, կողմնակից էր այդ արժեքների ներթափանցմանը ազգային իրականության մեջ, սակայն ոչ առանց վերապահումների: Մասնավորապես, թերթը չէր ընդունում կրոնի հեղինակության դեմ ուղղված գաղափարները, որոնց մեջ, հասկանալի պատճառներով, նկատում էր

¹³¹¹ Hurewitz J. S. Diplomacy in the Near and Middle East., Vol. I, p. 110. Տես նաև Brown P. M. Foreigners in Turkey, p. 76.

¹³¹² Արշալոյս Արարատեան, 1858, 31 հոկտեմբերի:

ազգության քայքայման ու այլասերման վտանգ: Ազգային կրոնի և եկեղեցու կարևորությունը ազգի ինքնապահպանության տեսակետից առանց որևէ առարկության ընդունելի սկզբունք էր լուսավորական շարժման բոլոր ներկայացուցիչների համար: Այդ տեսակետն ուներ խորապես հիմնավորված բնույթ, մանավանդ, օսմանյան միլեթների համակարգի պայմաններում, երբ ազգերի տարրորոշումը ամբողջովին կամ գրեթե ամբողջովին համընկնում էր այդ նույն միլեթների (կրոնական հանրությունների) ազգային հատկանիշներին: Այսպես, հայ լուսավորչական համայնքը ներփակ և մեկուսի միավոր էր կայսրության ժողովուրդների մեջ՝ իր ազգային-կրթական ու վարչական գործերի շրջանակներում, ճիշտ այնպես, ինչպես կաթոլիկ և բողոքական, հայ համայնքները, հույն ուղղափառ համայնքը և այլն: Այլ կերպ ասած, կրոնական հատկանիշով ազգ ճանաչելու սկզբունքը շարունակում էր մնալ առհասարակ օսմանյան պետության ներքին քաղաքականության անկյունաքարը: Այսպիսի համակարգում և քաղաքականության պայմաններում ազգային եկեղեցու, նրա իրավունքների պաշտպանության խնդիրը ստանում էր համազգային նշանակություն և դառնում հայ հասարակական մտքի բնութագրական առանձնահատկություններից մեկը: XIX դ. 40-50-ական թթ. արևմտահայ լուսավորական շարժման պահպանողական թևը մեկնում էր եկեղեցու բացառիկ նշանակությունից և նրա իրավասությանն էր հանձնում անհատական ու ազգային բարոյականության, հոգևոր ու մտավոր մշակույթի զարգացման ընթացքը կամ դրա ուղղորդման իրավունքը: Լուսավորության բնագավառում այսպիսի մոտեցումը ենթադրում էր զգույշ վերաբերմունք եվրոպական մշակույթի և գիտության որակների հանդեպ և դրան համապատասխան՝ դանդաղ ու անցավագին փոփոխություններ հասարակական հարաբերությունների և այլնի մեջ: Առանձնացվում էր, մանավանդ, ազգային բարոյականությունը, որի ավանդական պահպանը համարվում էր ազգային եկեղեցին: Ուշագրավ է, որ Մ.Աղաբեկյանը՝ զմյուռնահայ նշանավոր մանկավարժը և Թիֆլիսի <<Կռունկ հայոց աշխարհին>> ապագա հանդեսի խմբագիրն ու կովկասահայ ազգային պահպանողականների ցայտուն դեմքերից մեկը 1850-ականի վերջերին և 1860-ականի առաջին կեսին, բավականաչափ հստակ ձևակերպում էր պահպանողականների մտայնությունն այս հարցում, նշելով, որ եթե ազգային դաստիարակությունը

միացվի եվրոպական կրթությանը, ապա այդպիսի լուսավորությունը կլինի <<էն պատուականագոյնը>>¹³¹³:

1840-1850-ական թթ. <<Արշալոյս Արարատեանի>> թղթակիցները, սակայն, ազգային լուսավորության բովանդակությունն ընկալում էին ոչ միանշանակ: Եթե Ղ. Պալղազարյանը և Մ. Աղաբեկյանը շեշտը հիմնականում դնում էին ազգային հոգևոր արժեքների պահպանության վրա, ապա թերթի հեղինակներից Մ. Մամուրյանը ուներ առավել լայն հայեցակետ: Կրոնասիրությունն ու ազգասիրությունը նա համարում է ոչ թե ինքնաբավ զգացումներ կամ նպատակ, այլ միջոց՝ ազգի ինքնության, նրա իրավունքների ճանաչման համար. <<Պէտք չէ ժողովրդեան իրատունքը ոտնահարել, այլ սուրբ պահել անոր սահմանը, քանզի անհնար է ժամանակի ընթացքին հակառակիլ¹³¹⁴>>,-գրում է նա:

Նկատենք միայն, որ այս շրջանում Մ. Մամուրյանը, ինչպես և <<Արշալոյս Արարատեանի>> աշխատակիցները, կարծում էր, որ խելացի և մտածված կրթական ու դաստիարակչական համակարգը հաջողությամբ իրականացնելու դեպքում հնարավոր կլիներ լուծել նաև հասարակության սոցիալական հակասությունները:

Լուսավորության տարածման այսպիսի սկզբունքը ենթադրում էր ժողովրդական լայն խավերի կրթություն ու դաստիարակություն և այս իմաստով թերթի գործիչները դուրս էին գալիս առևտրականության գաղափարախոսի նեղ շրջանակներից և ընդառաջում ազգային լուսավորության ազատամիտ ծրագրերին: Այս հանգամանքը, թվում է, հակասում էր թերթի պահպանողական գաղափարներին, սակայն իրականում, մենք գործ ունենք այդ գաղափարների մի հայտնի երկփեղկվածության հետ: 1840-1850-ական թթ. հայ պահպանողականությունը պարիսպներով անջատված չէր հասարակական այլ մտայնություններից և, չնոռանանք, արտահայտում էր քաղաքային, ինչպես և գյուղական ազգաբնակչության լայն խավերի հասարակական բարեկեցության վերաբերյալ պատկերացումները, որոնք կարող էին շատ ավելի լայն ու արդիական լինել, քան ազգի ու եկեղեցու փոխհարաբերությունների մասին ավանդական նշանախեցերը: Ի պատիվ Ղ. Պալղազարյանի, պետք է ասել, որ նա թերթը չէր դիտում իբրև միագիծ գաղափարական ամբիոն: Նրա խմբագրության տարիներին (1840-1878) <<Արշալոյս Արարատեանը>> տպագրել է ոչ միայն պահպանողական գործիչների, այլև

¹³¹³ Նույն տեղում, 1852, թիւ 422:

¹³¹⁴ Նույն տեղում:

այլ հայեցության տեր հեղինակների հոդվածները, թղթակցությունները և այլն: Թերթը այս կամ այն չափով հաշվի էր առնում կարծիքների բազմազանությունը՝ օգտակար համարելով իրարամերժ դատողություններն ու տեսակետները, եթե դրանք չէին հակադրվում հայ իրականության մեջ եկեղեցու գերակայության և ազգային միասնության վերաբերյալ իր պատկերացումներին: Այս իմաստով հետաքրքիր է պահպանողականության հեղինակավոր պոետից մեկի՝ Հ. Չամուռճյանի (Տերոյենց) և ականավոր լուսավորիչ, տնտեսագետ և մանկավարժության տեսաբան Ն. Ջորայանի բանավեճը <<Արշալոյս Արարատեանի>> էջերում: Բանավեճը սկսեց Հ. Չամուռճյանը՝ Ն. Ջորայանի <<Նկարագիր ազգային դաստիարակութեան>> գրքի առթիվ: Ազգային լուսավորության մեջ Ն. Ջորայանը բարձր էր գնահատում ժամանակի առաջավոր գիտությունը, քարոզում հատկապես քաղաքատնտեսության հիմունքների տարածման գործը, ընդ որում, հասարակության տնտեսական կացությունը նա քննարկում էր ոչ միայն զուտ տնտեսագիտական տեսությունների և գիտելիքների շրջանակներում, այլև բարոյականության հետ առնչություններում: Ջորայանը չէր ընդունում պահպանողականության պնդումներն այն մասին, թե կրոնն է բարոյականության միակ և բացարձակ հիմքը: Մինչդեռ իր <<Մարդու բարոյականը շտկելու միջոցը որն է>> հոդվածում Հ. Չամուռճյանը խոր անջրպետ էր դնում բարոյականության և նյութական կյանքի միջև. <<Առաքինութեան հետևողին գլխաւոր պայմանն է բոլոր նիւթական բաներն արհամարհել>>¹³¹⁵, պնդում էր նա:

Ն. Ջորայանը ամենևին էլ աթեիստ չէր և բարոյականության ասպարեզում չէր բացառում կրոնի դերը: Հ. Չամուռճյանի հարձակումները, սակայն, ընթերցողին պետք է որ կասկածներ ներշնչեին Ն. Ջորայանի անասովածության վերաբերյալ, ստեղծեին անցանկալի հասարակական կարծիք: Այս էր պատճառը, թերևս, որ Ն. Ջորայանը զուսպ պատասխանեց Չամուռճյանի մեղադրանքներին: Արժանին հատուցելով կրոնի հասարակական նշանակությանը, նա նկատում էր, որ <<Նկարագրոյն>> (նկատի ունի իր գիրքը-Ա. Խ.) մեջ մեր միտքս միայն ազգին նիւթական վիճակին վրայ խօսել էր¹³¹⁶>>:

¹³¹⁵ Նույն տեղում, 1849, 18 մարտի:

¹³¹⁶ Նույն տեղում: Ն. Ջորայանն առարկում էր Հ. Չամուռճյանի բանավիճային այն նրբամտությանը, որով <<պատվելին>> նույնականացնում էր տնտեսական

Չամուռճյանը, սակայն, չբավարարվեց իր ընդդիմախոսի պատասխանով և նրան մեղադրեց <<Ըուսսօ անուն գաղղիացի անհաւատին>> հայացքներին հետևելու մեջ¹³¹⁷:

Այսուհանդերձ, Շ. Չամուռճյանը այն անձը չէր, ով կարող էր մնայուն հեղինակություն լինել պահպանողականության համար: Վերջինիս պատկերացումներում կարևոր տեղ էր գրավում միախմբված, ներքին հակասություններից և գաղափարական հակադրություններից զերծ ազգի գաղափարը, որ հենվելու էր ազգային եկեղեցու վրա: Մինչդեռ իր հնավանդ պատկերացումներով, Առաքելական հայ եկեղեցու դավանանքի նկատմամբ թույլ տված մեղանշումներով և միաժամանակ՝ կրոնը մեծարող իր անդրդվելի կեցվածքով Շ. Չամուռճյանը հակադրվում էր պահպանողականներին, ուստի և չէր կարող օգտվել <<Արշալոյս Արարատեանի>> մշտական համակրանքից: Եվ թերթը չէր թաքցնում իր անբավականությունը այս գործչից և տեղ էր տալիս նրա հասցեին ուղղված խիստ քննադատությանը: Խորենացու շուրջ բորբոքված մի բանավեճում թերթի մի հեղինակ՝ <<Ազգասեր ոմն>>-ը, Շ. Չամուռճյանին հիմնավորապես մեղադրում էր բանասարկությունների մեջ¹³¹⁸:

Ճկուն դիրքորոշում ունեւ թերթը միաթարյանների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի մեջ: Ընդունելով նրանց գիտական լուրջ ներդրումները հայ մշակույթի, և մանավանդ գրական աշխարհաբարի մշակագործման ասպարեզում, այն լռելյայն շրջանցում էր նրանց դավանական համոզմունքները, անշուշտ, հանդես բերելով շատ գնահատելի լայնախոհություն՝ առաջ ընկնելով նույնիսկ հաջորդ՝ 1860-ական թթ. առաջադիմական շատ մտածողներից, ովքեր դավանանքին առաջնություն էին տալիս մշակույթի համեմատությամբ (հանդես գալով որպես ավելի պահպանողականներ, քան երբեմն՝ պահպանողականները) և չնկատելով, որ մշակույթը կարող է հաղթահարել այդ նույն դավանանքի նեղմիտ սահմանափակումները ազգապահպանության շատ ավելի կարևոր մարտահրավերների առջև: Անշուշտ, ազգային եկեղեցու առջև խոնարհվող Ղ. Պալլազարյանը, կողմնակից լինելով տարադավան հայ հանրությունների գործակցությունը, դրա վերջնական նպատակն էր համարում մոլորված համազգի <<գառնուկներին>> հարազատ եկեղե-

իրողությունների թեման և առհասարակ մատերիալիզմը, որպես գաղափար (տես Ջօրայեան Ն., Նկարագիր ազգային դաստիարակութեան, Կ. Պոլիս, 1849):

¹³¹⁷ Արշալոյս Արարատեան, 1849, թիւ 337:

¹³¹⁸ Նույն տեղում, 1852, թիւ 409:

ցու փարախ վերադարձնելը: Նույնիսկ 1844 թ., երբ Եդիշեի ֆրանսերեն թարգմանության առաջաբանում Մխիթարյան վարդապետ Գ. Գապարաճյանը չէր ծածկել իր կաթոլիկական նախասիրությունները, թերթը չվարանեց նրան դիտողություն անել՝ կրքերը չզսպելու համար¹³¹⁹:

Հարանվանական հայ համայնքների մերձեցման գաղափարից ելնելով՝ <<Արշալոյս Արարատեանը>> համակրական մոտեցում ցուցաբերեց Կ. Պոլսի <<Համազգայց>> ընկերության նկատմամբ, որն անկախ դավանական պատկանելությունից, համատեղ գործողության կոչ էր անում բոլոր հայերին: Այս ընկերությանը հարում էին ժամանակի լուսամիտ մտավորականները՝ ի դեմս Մ. Պեշիկթաշլյանի, Ծերենցի, Հ. Վարդանյանի (Հովսեփ Վարդան փաշա, <<Ագապի>> վեպի հեղինակը), Հ. Հիսարյանի և այլոց: Ավելին, թերթը մերկացրեց այն հետադիմական ձեռնարկումները, որոնց դիմել էր կաթոլիկ հայերի պարագլուխ Ա. Հասունյանը՝ ընկերությունը վերացնելու բուռն ճիգերի մեջ: <<Գերապայծառը>> հաջողել էր Հռոմի Ս. Հաւատոյ տարածման ժողովի մի հատուկ թղթով արգելել տալ <<Համազգայցը>>: Այս օրերին <<Արշալոյս Արարատեանը>> գետեղում էր հակահասունյանների նամակները, որոնց միավորում էին հանդուրժողականության, հայ լուսավորչական և կաթոլիկ համայնքների միջև, մոլեռանդության վերացման և գործակցության կոչերը: Այս դիրքերից էլ թերթը ողջունեց երեք վարդապետների՝ Ս. Թեոդորյանի, Գ. Այվազովսկու և Ա. Գալֆայանի անդրլեռնական գործունեությունը և ընդարձակ հաստիքներ տպագրեց նրանց հանրահայտ գրքույկից, որտեղ հեղինակները հիմնավորում էին իրենց դարձը հայրենի եկեղեցի¹³²⁰: Թերթը քննադատում էր այն վերաբերմունքը, որ մխիթարյանների նկատմամբ ունեին <<գոլեճցի>>¹³²¹ կրոնավորները: Այդ անսքող երևաց նրանց <<Մխիթարեան միաբանութիւն Ս. Ղազարու>> գրքույկում, որտեղ մխիթարյանները մեղադրվում էին դավանական անսկզբունքայնության և զիջողամտության մեջ, որ նրանք, իբր, թույլ

¹³¹⁹ Նույն տեղում, 1844, 22 ապրիլի:

¹³²⁰ Նույն տեղում, 1856, 5 հոկտեմբերի: Տես նաև Պատմութիւն եւ պատճառք վերադարձի երկից վարդապետաց Հայոց, Փարիզ, 1856:

¹³²¹ Գոլեճցի կրոնավորները Հռոմի Ս. Հաւատոյ տարածման (Պրոպագանդա դելլա ֆիդել) ժողովի շրջանավարտներն էին՝ տարբեր ազգության անձինք, այդ թվում և հայեր, ովքեր մարտնչող կաթոլիկությամբ դաստիարակված վերադառնում էին հայրենիք՝ քարոզչության նպատակով (տես Հասունյան քաղաքականութիւն, Թիֆլիս, 1868):

էին տվել հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ: Այդ երևույթի անցանկալի հետևանքները աչքի առջև ունենալով, մխիթարյանները դիմեցին ինքնապաշտպանության և հրատարակեցին պատասխան գրքույկը՝ <<Ջատագովութիւն>> վերնագրով, որտեղ շեշտադրում էին իրենց սահմանազատումը Էջմիածնականներից¹³²²: Այս առթիվ <<Արշալոյս Արարատեանը>> մխիթարյաններին կրոնական երկայնամտության կոչ էր անում՝ չթաքցնելով նաև սեփական դավանական նախասիրությունները: Մյուս կողմից, մխիթարյանների դերը ազգային հոգևոր ու մտավոր մշակույթի բնագավառում ըմբռնման էին արժանանում թերթի կողմից, որով էլ բացատրվում է վերջինիս ակնածանքը նրանց գիտական վաստակի նկատմամբ:

Մխիթոնների գործունեությունը Թուրքիայում՝ արևմտահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումից ի վեր դարձել էր գաղափարական պայքարի առարկա: Ազգային ինքնագիտակցության բարձրացումը անհրաժեշտորեն ենթադրում էր պայքար այն ամենի դեմ, ինչը խանգարում էր այդ գործընթացի ծավալմանը: Քարոզչությունների հետ վարած բանավեճի ընթացքում ազգային եկեղեցու դիրքերը պաշտպանող հայ մամուլը հետին շարք էր մղում կամ անտեսում այն իրողությունը, որ և կաթոլիկները, և բողոքականները ստեղծում են կրթական հաստատություններ, նպաստում գրատպության, մամուլի զարգացմանը, ցուցաբերում զուտ մարդասիրական վերաբերմունք տառապյալ հայերի նկատմամբ մի այնպիսի բռնատիրական երկրի մեջ, որպիսին Օսմանյան Թուրքիան էր: Այսպիսի վերաբերմունքը հասկանալի է դառնում, երբ նկատի ենք ունենում, որ հայ հասարակական մտքի և հրապարակախոսության համար առաջնայինը մնում էր ազգային միասնությունը և դրա գաղափարական հիմնավորումը, ինչպես և ազգային եկեղեցու հույժ կարևոր դերը այդ միասնության գործում: Կար նաև մյուս հանգամանքը, որ առաջացնում էր թերահավատությունը քարոզիչների մարդասիրական գործունեության հանդեպ: Հիրավի, մխիթոնների գործունեությունը կապվում էր Թուրքիայում տերությունների քաղաքական ու ֆինանսական ազդեցության տարածման հետ: Բողոքականներին տրված գործողության յուրաքանչյուր ազատություն ի հայտ էր բերում անգլիական կամ ամերիկյան ազդեցության ուժեղացում երկրում, այնպես, ինչպես ֆրանսիական քաղաքականության ազ-

¹³²² Տե՛ս Ծերենց, Հասունեան եւ հակահասունեան խնդիրը, 1879, N 5, էջ 198:

դեցության ուժեղացումը կաթոլիկ քարոզիչներին տրված ազատությունների դեպքում: Իր հերթին, օսմանյան կառավարությունը ձգտում էր սեփական շահերին համապատասխան քաղաքականություն վարել հարանվանությունների նկատմամբ՝ այս կան այն դավանանքին արած զիջումների փոխհատուցումը կորզելով տերություններից: Չպետք է աչքաթող անել, որ 1850-1860-ական թթ. օսմանյան պետական քաղաքականության հիմքում ընկած օսմանիզմը ձգտում էր կայսրության այլացնել ու այլադավան ժողովուրդներին տարրալուծել մահմեդական զանգվածի մեջ՝ այդ նպատակով խախտելով համայնքների ողնաշարը կազմող կրոնական-եկեղեցական կապերը: Օսմանյան պետական գործիչներից Ֆուադ փաշան համոզված էր, որ ոչ մահմեդականներին մահմեդականների մեջ ձուլելու համար պետք է այլադավան փոքրամասնությունները դուրս բերել հոգևորականության ազդեցությունից¹³²³:

Օսմանիզմի հեռահար նպատակադրումը XIX դ. երկրորդ կեսին այդպես էլ նպատակադրում մնաց, որին վիճակված չէր իրականանալու: Այդպիսի նախահարձակ դոկտրինան, սակայն, օսմանիզմի գաղափարախոսների համար մնում էր սոսկ վերացական նպատակ, որը շարունակ կորցնում էր գործնականի վերածվելու հնարավորությունները՝ քաղաքականության ընթացքի թելադրանքով: XIX դ. երկրորդ քառորդին ընդհակառակն, Բ. դուռը ստիպված պետք է ճանաչեր հարանվանությունները, որ փաստորեն առավել անիրական էր դարձնում ոչ մահմեդականների հրապուրանքը տիրապետող կրոնի նկատմամբ, ուրեմն և ազգային փոքրամասնությունների ձուլումը: Ֆրանսիական դիվանագիտության անմիջական միջամտության պայմաններում սուլթանը հատուկ ֆերմանով վավերացրեց առանձին հայ կաթոլիկական համայնքի կարգավիճակը¹³²⁴: Այս ճանաչմանը նախորդել էին բավական կտրուկ իրադարձություններ. 1828 թ. Բ. դուռը հայ առաքելականների և կաթոլիկների միջև եղած ընդհարումներից հետո և իր հակաֆրանսիական դիրքը ցուցադրելու նպատակով կաթոլիկ հայերին Կ. Պոլսից արտաքսեց փոքրասիական շրջաններ, երկրից հեռացրեց կաթոլիկական կրոնավորներին և այլն¹³²⁵: Արտաքսվեց 12 հազար մարդ¹³²⁶: Երկու տարի

¹³²³ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, էջ 1108:

¹³²⁴ ՄՄ, Մսերյանների արխիվ, թղթ. 199, վավ. 382:

¹³²⁵ Չոքմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Կ. Ս, էջ 388:

անց, եվրոպական տերությունների ազդու միջամտության հետևանքով սուլթան Մահմուդը ոչ միայն վերադարձրեց արքայալներին, այլև համաձայնեց ճանաչել նրանց ինքնություն համայնքը՝ առանձին եկեղեցիներով ու ազգապետով: 1847 թ. հերթը հասավ հայ բողոքականներին, որոնք անգլիական, ամերիկյան ու պրուսական դեսպանների աջակցությամբ և սուլթանական ֆերմանով առանձին համայնք ճանաչվեցին, իսկ 1850 թ. ամբողջովին դուրս եկան էջմիածնական եկեղեցու իրավասությունից¹³²⁷:

Հայ հարանվանությունների հանդեպ օսմանյան պետության քաղաքականության մեջ պետք է տարբերել երկու հիմնական կողմ՝ փոխհարաբերությունները տերությունների հետ և մյուս կողմից՝ հայ լուսավորչական հանրության ու նրա եկեղեցու հետ: Հայ կաթոլիկների և բողոքականների առանձին համայնքների ճանաչումը, եթե մի կողմից զիջում էր նշանակում տերություններին, ապա մյուս կողմից, իրավականորեն ձևակերպում էր հայ հանրության պառակտումը: Այդ մասամբ համապատասխանում էր հայ եկեղեցու և հոգևորականության ազդեցության թուլացմանն ուղղված՝ օսմանիզմի գաղափարական նպատակներին: Հետևաբար, այս տեսակետից, կորցնելով արտաքին քաղաքական հարաբերություններում, Բ. դուռն այն փոխհատուցում էր ներքին քաղաքականության մեջ: Կրոնական համայնքների հակասությունների բորբոքմանն ուղղված կառավարության այս ուղեգիծը դրսևորվում էր ոչ միայն լուսավորչականների ու կաթոլիկների, այլև բուն հայ կաթոլիկական համայնքում երկպառակություններ հրահրելու փաստերով: Այսպիսի գործելակերպ կառավարությունն ի հայտ բերեց, ինչպես տեսանք, <<Համազգյաց>> ընկերության շուրջ տարաձայնությունների և Ա. Հասունյանի կողմնակիցների ու հակառակորդների պայքարի ժամանակ: Նշված իրողությունների ընթացքում և հետագայում նույնպես, <<Արշալոյս Արարատեանը>> աջակցում էր կղերամտությանը դիմակայող գործիչներին:

Ազգային լուսավորության, դավանական հակասություններին և հայ հանրությանը վերաբերող նյութերով թերթը ցույց էր տալիս, որ 1840-1850-ական թթ. ազգային միասնությունը համարում է առաջնահերթ խնդիր: Նրա համոզմամբ այդ գաղափարին պետք է ծառայեին եկեղե-

¹³²⁶ Պալասանեան Ստ., Պատմութիւն հայոց, էջ 721-722: Տես նաև Մովսիսեան Հ., Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւն, էջ 348:

¹³²⁷ Gordon L. J. American Relations with Turkey, p. 227-228.

ցին, ազգային բարոյականությունն ու դրանցով ներծծված լուսավորությունն ու կրթությունը: Հազիվ թե կարելի կլիներ նշված տասնամյակների այս թերթը տեղավորել զուտ ազգային պահպանողականության շրջանակներում: Մասնավորապես դավանական լայնախոհության և հարանվանությունների գործակցության հարցում այն դրսևորում էր բավականաչափ ազատամտություն, որը բնավ չէր կարող դուր գալ հետադիմական շրջաններին:

<<Արշալոյս Արարատեանը>> տպագրվում էր գրական աշխարհաբարով, որ ազգային լուսավորության տվյալ փուլի պահանջն էր: Հասարակական ազդեցություն ունենալու համար արևմտահայ պահպանողականներն իրենց մտքերը պետք է արտահայտեին հանրությանը մատչելի լեզվով, հակառակ դեպքում իրենց կդատապարտեին առանց ընթերցողի մնալու կամ մի բուռ ընթերցողներով բավարարվելու տխուր փորձությանը: Հայ հրապարակախոսությունը կարող էր կազմավորվել և զարգանալ միայն աշխարհաբարի միջոցով, ուստի պատահական չէ, որ աշխարհաբարի քաղաքացիությունը հիմնականում նախապատրաստվեց և հաստատվեց մամուլի էջերում: Դեռևս Մադրասի <<Ազդարար>>-ում (1794-1796)՝ հայ անդրանիկ պարբերականում զետեղվում էին աշխարհաբարով գրված հրապարակումներ, աշխարհաբարով էին տպագրվում Վենետիկի մխիթարյանների <<Տարեգրութիւնը>> (1799-1807), <<Եղանակ Բիւզանդեան>> (1803-1820) և <<Դիտակ Բիւզանդեան>> (1812-1816) պարբերականները: Մխիթարյաններին դեպի աշխարհաբար էին մղում ազգային մշակույթի արդիականացման վերաբերյալ նրանց կենսունակ գաղափարները: Իրենց հրատարակությունները նրանք նախատեսում էին ընթերցող լայն շրջանների՝ հայազգի բոլոր մարդկանց համար, տալով դավանական սահանքներն ու խոթերը հաղթահարելու համոզիչ ու մնայուն ապացույցներ:

Ընթերցողին մատչելի լինելու մտահոգություն, սակայն իրենց առաքելության ընդգծված նախապատվությամբ, ունեին նաև ամերիկյան բողոքական միսիոներները: Մինչդեռ, Զմյուռնիայում և այլուր նրանց գործունեությունը քիչ կապեր ուներ հայերի ազգային մշակույթի ու պատմության, ժողովրդի ավանդույթները և ազգային հոգեբանությունը խտացնող հոգևոր արժեքների հետ: <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> ամսագիրը, ինչպես տեսանք, իր բովանդակությամբ լիովին բա-

ցահայտում էր այդ կտրվածությունը: Մինչդեռ մխիթարյանները հետևում էին ոչ միայն մշակույթի վերաբարձման, այլև դրա զարգացման արդյունավետ գործելակերպին: Կաթոլիկական դավանական սկզբունքները նրանց գործունեության մեջ նպաստում էին ազգային լուսավորության ընթացքին: Մյուս կողմից, հղկելով արևմտահայ գրական աշխարհաբարը, նրանք, ի հակադրություն դավանական անջրպետների, արագացնում էին ազգային լուսավորության գործընթացը:

Դեռևս 1840-ական թթ. <<Արշալոյս Արարատեանը>> կարծում էր, որ ժողովրդին անհասկանալի լինելու պատճառով գրաբարը չի կարող նպաստել լուսավորության ժողովրդականացմանը: Սակայն թերթը չէր հրաժարվում գրաբարից, որչափով ընդունում էր անցյալի մշակութային արժեքների շարունակականության անհրաժեշտությունը և մյուս կողմից, դրանց արդիականացման ոչ պակաս չափերով՝ կարևորությունը: Հարկ էր միացնել այս, թվում է, փոխադարձաբար միմյանց բացառող ծայրակետերը, ուստի թերթը աշխարհաբարը դիտում էր իբրև միջոց կամրջելու լեզվական հին մշակույթը և նոր ժամանակների համագգային հաղորդակցության պահանջները: Այլ կերպ ասած՝ գրական աշխարհաբարի մշակումը՝ լեզվական հին ավանդույթների հիման վրա կամ աշխարհաբարը միջոց համարելը՝ գրաբարին վերադառնալու համար: Ղ. Պալդազարյանը փաստորեն բաժանում էր Ն. Ռուսինյանի և Գ. Օտյանի տեսակետները, որոնց համաձայն, նոր գրական լեզուն միջակա տեղ պետք է զբաղեցնեք բարբառների և գրաբարի միջև՝ լայն հուն բանալով հաղորդակցական գործառույթի համար¹³²⁸:

<<Արշալոյս Արարատեանը>> խրախուսում էր Կ. Պոլսի <<Ուսումնական>> ընկերության ջանքերը՝ գրաբարը աշխարհաբարի հիմքի վրա վերածնելու ուղղությամբ. Թերթը լայնորեն օգտագործում էր գրաբարյան դարձվածներ, բառեր ու բառակապակցություններ, կրկնում մխիթարյանների ոճը: Նրա հեղինակները բարձր էին գնահատում մխիթարյանների վաստակը գրաբարի վերածնության գործում՝ նկատի ունենալով նրանց գիտական ու գեղարվեստական գրականությունը: Գրաբարին մոտ գրական լեզվի ստեղծման ու մշակման զաղափարը թերթին տալիս էր որոշակի հակասականություն. Տեսականորեն նա պաշտպանում էր գրաբարի վերածնությունը, իսկ գործնականում նպաստում էր

¹³²⁸ Տես Ռուսինյան Ն., Ուղղախօսութիւն արդի հայոց լեզուին, Կ. Պոլիս, 1853:

աշխարհաբարի լեզվական կարողությունների ընդլայնմանը: Հենց վերջին՝ գործնական մոտեցման մեջ էր կայանում <<Արշալոյս Արարատեանի>> նշանակալի ծառայությունը գրական արևմտահայերենի զարգացմանը:

Թերթի գեղարվեստական գրականությունը շփման բավականաչափ եզրեր ուներ նրա գաղափարաբարոյական կողմնորոշումների հետ: Ղ. Պալլազարյանը վարում էր գիտակցված գրական քաղաքականություն, որքանով հնարավորություն էր տալիս նրա մտայնությունը գրականության մշակութային նշանակության վերաբերյալ: Իր խմբագրական գործունեության սկզբում նա նախապատվությունը տալիս էր չափածո ստեղծագործություններին (ձոներ, առակներ և այլն), որոնց մի զգալի մասը հասցեագրվում էր պատմական դեմքերին և ժամանակակից աշխարհիկ ու հոգևորական վերնախավին: Գրաբարյան հանդիսավոր տողերում այս կերպ ուրվագծվում են կաթողիկոսների, պատրիարքների, Տյուգյանների, Տատյանների և այլ ամիրանների կերպարները: Գրաբարով գրված մյուս չափածո ստեղծագործությունները փառաբանում էին ընդօրինակելի բարոյական սկզբունքները, առաքինությունները և այլն: Հիշյալ ոտանավորների հեղինակները հիմնականում զմյուռնացիներ էին՝ Ս. Մեսրոպյան վարժարանի ուսուցիչներ և աշակերտներ: Բանաստեղծական արվեստով ու զգացումներով առանձնանում են Ռ. Փափազյանի բանաստեղծությունները, հաճախ հայրենասիրական բովանդակությամբ: Իր հայրենասիրական ու բարոյական իդեալները նա որոնում էր որոշակի պատմական անհատների մեջ: Ռ. Փափազյանն արտահայտում էր լուսավորական գաղափարներ՝ դաստիարակությունն ու ուսումը համարելով հոգևոր հարստության աղբյուր: 1840-ական թթ. թերթում իր բանաստեղծություններն ու թարգմանություններն է տպագրել վարժարանի սան Ստ. Ոսկանյանը:

<<Արշալոյս Արարատեանի>> արձակը ներծծված էր բարոյախոսական մտայնությամբ, հանդիպում են նաև զբաղեցնող-արկածային գործեր, սյուժետային զրույցներ, որոնք ժանրային իմաստով մոտ են պատմվածքին: Դրանք ունեն հիմնականում կանխակալ կոնֆլիկտ և իրադարձությունների նախապես ենթադրվող հանգուցալուծում: Պարզունակ այս պատումների հետ միասին թերթի արձակը ընթերցողին նախապատրաստում էր եվրոպական ռոմանտիկական երկերի ընկալմանը, որոնց թարգմանությունները Տետեյան հրատարակչությամբ պետք է ողողեին արևմտահայ գրքի շուկան: <<Արշալոյս Արարատեա-

նում>>, ի դեպ, իրենց առաջին քայլերն են արել զմյուռնահայ թարգմանական դպրոցի ներկայացուցիչներ Գր. Զիլինկիրյանը և Մ. Նուպարյանը: Զմյուռնացի և հնդկահայ հեղինակների գործերի կողքին ուշագրավ բացառություն է կազմում Խ. Աբովյանի <<Աշխարհիկ բարբառ երևանցի հայոց>> վերնագրով ստեղծագործությունը¹³²⁹: Ակներն է, որ Ղ. Պաղազարյանը հաշվի է առել այդ գործի լեզուն, այս վերջինը արևելահայ գրականության նմուշի հետ իր ընթերցողին ծանոթացնելու անհրաժեշտությունը:

<<Արշալոյս Արարատեանի>> թարգմանական գրականությունը վկայում է զմյուռնացի մտավորականության հակումը դեպի ֆրանսիական գրականությունը: Ռ. Փափազյանը, Տ. Սավալանյանը, Ստ. Ոսկանյանը, Զ. Չազըրյանը և ուրիշներ թարգմանում էին Լամարտինի, Ռասինի, Լաֆոնտենի, Դյումա-հոր և այլոց ստեղծագործությունները: Ֆրանսիական գրականությանը թերթն անդրադարձել է նաև Բերանժեի երգերի առթիվ: Նկատի ունենալով դրանց ժողովրդականությունը, թերթը գրում էր. <<Աս երեւելի գրիչը այնքան անուն ունի գաղղիացոց մէջ, որ անհնարին է մեկու մը գրել, իր երգերը փարիզցիք գոց գիտեն... Աս երեւելի հեղինակին գրած բազմաթիւ երգերէն <<Հինգ մայիսի>>, <<Թռչուն>>, <<Հին դրօշակ>> և այլն... բարակ մտօք, վառվռուն երեսակայութեամբ գրեալ են>>¹³³⁰:

1840-1850-ական թթ. <<Արշալոյս Արարատեանում>> չեն հանդիպում գրաքննադատական արժեք ունեցող նյութեր: Այդ բովանդակությանը հետամտող նյութերն ունեն առավել պատմողական-հայեցողական, քան գնահատող կամ վերլուծական ուղղվածություն: Միայն հետագա տասնամյակներին, երբ արևմտահայ մամուլը սերտաճեց գրականության զարգացմանը՝ գրական գործընթացը մեծապես հյուրընկալելով իր էջերում, օբյեկտիվորեն, և դարձյալ մամուլի էջերում, ի հայտ պետք է գար գեղարվեստական գրականության տեսական արժեքավորման կարիքը:

Զմյուռնահայ մյուս թերթը <<Հայրենասեր>> շաբաթաթերթն էր (1843-1846), որն իր լուսաբանած հարցերի ու նյութի մատուցման եղանակով հանդես էր գալիս որպես <<Արշալոյս Արարատեանը>> հիշեցնող հրա-

¹³²⁹ Արշալոյս Արարատեան, 1850, 31 մարտի:

¹³³⁰ Նույն տեղում, 1846, 9 օգոստոսի:

տարակություն: Խ. Մելիքսեղումյանի խմբագրությամբ տպագրվող այս թերթը ուներ հասարակական հետաքրքրությունների գրեթե նույն շրջանակը, դրա հայտնությունը ևս Զմյուռնիայում լուսավորական, մշակութային շարժման արդյունք էր, որ, ինչպես տեսանք, ծայր էր առել թանգիմաթի հրապարակմանը հետևող տասնամյակին: Այստեղ հիշեցնենք, որ թերթը հրատարակում էր <<Արագածունյաց>> ընկերությունը՝ իր սեփական տպարանում:

<<Հայրենասերը>> տպագրում էր առևտրական ու առօրեական լուրեր, պատմաաշխարհագրական ակնարկներ, բանասիրական բաժնում (որ առկա էր արդեն <<Արշալոյս Արարատեանում>>)՝ հայ հին գրականության նմուշներ, բարոյախոսական թեմաներով զրույցներ և այլն: Իր հրատարակության սկզբնական շրջանում այն լույս էր տեսնում կանոնավորապես, որ հնարավորություն էր տալիս ընթերցողին մատուցել ավելի թարմ տեղեկատվություն՝ այս ժամանակաշրջանում ամիսը երկու անգամ հրատարակվող զմյուռնահայ անդրանիկ թերթի համեմատությամբ:

Սկզբից նեթ թերթը հայտարարում էր, որ խուսափելու է քաղաքական (և ոչ թե քաղաքացիական՝ հասարակական) հարցերի քննարկումից և զուսպ դիրքորոշում է ունենալու հավատի հարցերում¹³³¹: Իսկապես, իր ողջ պատմության ընթացքում թերթը հետևել է զուսպ ուղեգծի և դուրս չի եկել նախօրոք նշված սահմաններից: Այս տեսակետից բացառություն է նրա նկատելի հակադրությունը Բ. դոան տնտեսական քաղաքականությանը, որչափով այդ քաղաքականությունը չէր կարող չառաջացնել <<Հայրենասերի>> հենարանը կազմող առևտրականության՝ մի հայտնի չափով անբավականությունը: Հիմնականում տեղական շուկային կապված ոչ հարուստ առևտրական այդ խավերի մեջ 1840-ական թթ. աճում էր դժգոհությունը երկրում իր տնտեսական առավելությունները ցուցադրող եվրոպական դրամագլխի հանդեպ, որին պատկանում էր Օսմանյան կայսրության առևտրի կեսից մինչև 2/3 %-ը¹³³²: Թերթը գրում էր, որ եվրոպական առևտրականները Թուրքիայում ունեն <<հազարումէկ դիրություններ>> և բողոքում էր տեղական առևտրականների գործունեությունը կաշկանդող սահմանափակումների դեմ: Բնութագրելով ոչ միայն տեղական, այլև արևմտահայ առևտրականության վիճակը, <<Հայրենասերը>> նկատում էր, որ ներմուծվող ապրանք-

¹³³¹ Հայրենասեր, 1843, 28 մայիսի:

¹³³² Issavi C. The Ottoman Empire in the European Economy, p. 116.

ների հոսքը լուրջ հարված է հասցնում տեղական առևտրին: Այդ ապրանքները, հարում էր թերթը, առավել էժան են, որակով, բայց և վնասակար Թուրքիայի համար, որովհետև խանգարում են տեղական ապրանքների իրացմանը: Առևտրատնտեսական իրողությունների գնահատման մեջ <<Հայրենասերն>> ի հայտ էր բերում բավականաչափ իրազեկություն և հայ վաճառականության ոչ նախանձելի վիճակի պատճառն էր համարում ներմուծվող և արտահանվող ապրանքների անհամաչափ հաշվեկշիռը:

Հայ առևտրականության համար ապահով տնտեսական հիմքեր ստեղծելու նպատակով <<Հայրենասերը>> կոչ էր անում զարգացնել հողագործությունը: Թերթի խմբագիրն ըստ երևույթին նկատի ուներ Արևմտահայաստանում դրամագլուխներ ներդնելու խնդիրը, ինչպես նաև Զմյուռնիային կից շրջաններում հողագործության զարգացումը: Զմյուռնահայ խոշոր վաճառականներից ոչ քչերը միաժամանակ հողատերեր էին և բարեհաջող տնտեսավարման դեպքում կարող էին վաճառքի հանել նաև սեփական գյուղատնտեսական արտադրանքը:

Պաշտպանելով լուսավորչալ վաճառականության գաղափարը, <<Հայրենասերն>> առաջարկում էր Ս. Մեսրոպյան վարժարանում մտցնել առևտրական կրկնակ հաշվետու մարի դասավանդում և ինչպես <<Արշալոյս Արարատեանը>>, առաջ էր քաշում ժամանակակից առևտրի եղանակներն ու ձևերը կիրառելու խնդիրը: Բուն ազգային կյանքում թերթն առաջատար տեղը վերապահում էր եկեղեցուն: Խոնարհվելով ազգապահպան այդ գործոնի առջև, պահպանողական Խ. Մելիքսեյումյանը կարծում էր, որ իր գործունեության մեջ եկեղեցին ևս պետք է առաջնորդվի նոր, լուսավորական գաղափարներով, մի հանգամանք, որ չենք տեսնում <<Արշալոյս Արարատեանի>> քարոզչության մեջ: Այդ լուսավորությունը, իր հերթին, ոչ թե վիճարկելու էր կրոնի և եկեղեցու հեղինակությունը, այլ արդիականացնելու էր եկեղեցին՝ գիտության գործակցությամբ և ամրապնդելով նրա ավանդական տեղը հայ հանրության մեջ:

<<Հայրենասերը>> խուսափում էր Արևմտահայաստանի հարստահարված վիճակի և դրան առնչվող հարցերին անդրադառնալուց, մի իրողություն, որ ցույց է տալիս 1840-ական թթ. հայ մամուլի սոցիալական դեռևս չձևավորված բովանդակությունը, որին, որպես շատ ավելի կարևոր հակակշիռ և համադարման, հայ լուսավորիչներն առաջ էին քաշում ազգային լուսավորության հիմնահարցը: Ընդհանրականը և

առաջնակարգը նրանց համար ազգի մեջ լուսավորության տարածումն էր, որի լուծումից էին կախված մյուս բոլոր՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական և այլ հիմնախնդիրների լուծումները: Իր գոյության երեք տարիների ընթացքում թերթը ծայրահեղության է հասցրել այսպիսի մոտեցումը. Նրա էջերում ընդամենը մեկ անգամ է տեղեկություն տպագրվել ազգային կամ կրոնական ճնշումների մասին¹³³³: Եվ դարձյալ, ի տարբերություն <<Արշալոյս Արարատեանի>>, այս թերթը գրեթե չարձագանքեց թանգիմաթի հետ կապված իրողություններին, որ թերևս, վկայում է կայսրությունում բարեփոխումների նկատմամբ նրա թերահավատության մասին: Մյուս կողմից, հազիվ թե Խ. Մելիքսեղումյանին և նրա էջմիածնական համախոհներին դուր գար եկեղեցու իրավունքների սահմանափակումը օսմանյան բարենորոգումների շրջանակներում: Ինչ վերաբերում է Օսմանյան Թուրքիայի հասարակական ու քաղաքական կյանքին, դրա արժեքավորմանը, ապա <<Հայրենասերի>> վերաբերմունքը զուտ հայեցողական էր: Բավականաչափ մոտ կանգնած լինելով էջմիածնին և ընդունելով հովվապետի համազգային նշանակության գաղափարը, Խ. Մելիքսեղումյանին մնում էր ազգային իրականության հակասությունների և տնտեսական անհավասարությունների հիմքում տեսնել նախախնամության մատր: Իսկ քանի որ նախախնամությունը բարձր է տրամաբանությունից և անքննելի, ապա այդ մտայնության համաձայն, անքննելի պետք է լինեին և հասարակական կարգերի արմատները: Այս տեսակետից հետաքրքրական է <<Հայրենասերի>> վերաբերմունքը 1789 թ. ֆրանսիական հեղափոխության նկատմամբ: Անստորագիր մի հոդվածում նշվում է, որ ազատությանն և հավասարության անունով պայքարի ելած ժողովրդին սպասում էր դառն հիասթափություն, որովհետև բոլոր իրադարձությունների հիմքում նշմարվում էր Աստծո կամքը՝ անքննելի տնօրինությամբ¹³³⁴:

<<Հայրենասերի>> պահպանողականությունը առավել նկատելի է նրա բարոյախոսական հոդվածներում: Պատահական չէր, որ թերթը պարբերաբար տպագրում էր Հ. Չամուռճյանի հոդվածները, որոնք հետապնդում էին մեկ նպատակ՝ հերքելու կրոնը կասկածի ենթարկող գաղափարները և պաշտպանելու ամիրայական վերնախավի ազդեցիկ դերը արևմտահայ կյանքում:

¹³³³ Հայրենասեր, 1844, 10 հունիսի:

¹³³⁴ Նույն տեղում, 1846, 12 ապրիլի:

Այս թերթի էջերում Հ. Չամուռճյանը պայքարում էր այլախոհ մտավորականության դեմ՝ ամենից առաջ հարձակման թիրախ դարձնելով մատերիալիզմը; <<Օրինակ բարերարութեան>> հոդվածում նա <<անաստուածութեան պաշտպաններին>> մեղադրում էր մարդկանց բարոյականությունից զրկելու, մարդուն անբան կենդանուն հավասարեցնելու մեջ, որչափով, Հ. Չամուռճյանը աշխարհընկալումը, այս դեպքում նաև բարոյականությունը անվերապահորեն նույնացնում էր կրոնի գաղափարին¹³³⁵: Չամուռճյանի այս բանավեճն ուղղված էր XVIII դ. ֆրանսիական մատերիալիստների դեմ՝ ենթատողերում նկատի առնելով նրանց համակիր հայ մտավորականությանը: Թերթում տպագրած մի հոդվածում նա իրերի և երևույթների միջև եղած կապը բացատրում էր աստվածային պատճառականության դիրքերից, գտնելով, որ մարդկանց գործողությունները կախում ունեն մեկը մյուսից, բայց պատճառական շղթայի սկիզբը Աստծո կամքն է: Նա պնդում էր, որ բարոյականությունը ևս բխում է նույն աստվածային սկզբից և որ մարդուն առաքինության է մղում երկյուղն առ Աստված¹³³⁶:

<<Հայրենասերի>> խմբագիրը Կ. Պոլսի հայ համայնքի հասարակական բարօրությունն առնչում էր դրա մաս կազմող անհատներից յուրաքանչյուրի գիտակցված պարտքի և իրավունքի հավասարակշռության մեջ: Եթե ազգասեր ամիրաները ժողովրդին են տրամադրում իրենց նյութական միջոցները, ապա վերջինս պետք է այդ փոխհատուցի իր աշխատասիրությամբ և երախտագիտությամբ, եզրափակում էր Խ. Մելիքսեղևյանը¹³³⁷: Նրա թերթի էջերում, ինչը տեսնում ենք <<Արշալոյս Արարատեանի>> օրինակով, բարոյական առաքինության հիմնավորումը գերաճում-հասնում էր ամիրայական իշխանության հիմնավորման,

¹³³⁵ Նույն տեղում, 1844, 5 օգոստոսի:

¹³³⁶ Հ. Չամուռճյանը 1840-ական թթ. վայելում էր պահպանողական ամիրաների և պատրիարքարանի հովանավորությունը: 1846-1848 և 1850-ից մինչև 1852-ի սկիզբը նրան էր վստահվել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի <<Հայաստան>> թերթի խմբագրությունը (տես Ղուկասյան Վ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, էջ 165): Մի շարք պատմական վավերագրերի և մասնավորապես, հայ եկեղեցու պատմության տեսակետից հատկապես աչքի է ընկնում Հ. Չամուռճյանի՝ հետագայում հրատարակած <<Երևակ>> (Կ. Պոլիս, 1857-1866) պարբերականը, որ տակավին դուրս է մնացել հայ մամուլի պատմության տեսադաշտից, եթե չհաշվենք, մանավանդ հայ խորհրդային հետազոտողների կողմից, այդ գործչի դեմ ուղղված միահամուռ հարձակումները:

¹³³⁷ Հայրենասեր, 1843, 4 հունիսի:

որ նույնպես պահպանողական մտայնության դրսևորում էր: Այսուհանդերձ, <<Հայրենասերի>> բովանդակությունը միանշանակ չպետք է ըմբռնել: Չամուռճյանի հետև և միաժամանակ, թերթին աշխատակցում էր Մ. Աղաթոնը Կ. Պոլսից՝ արտահայտելով առաջավոր լուսավորական մտքեր մայրաքաղաքի հայկական վարժարանների, դրանց կրթական նպատակների և ուսումնական ընթացքի մասին:

<<Հայրենասերի>> հասարակական հայացքները գրեթե նույնն էին, ինչ <<Արշալոյս Արարատեանին>>. երկու թերթերն էլ այս կամ այն տարբերությամբ, հիմնականում արտահայտում էին առևտրականության շահերը, նրա մտահոգություններն ու տրամադրությունները: Հասարակական զարգացման ընթացքը այս երկու հրատարակություններին ներկայանում էր ոչ այլ կերպ, քան ամիրանների ու խոշոր վաճառականների առաջնորդությամբ, որ հենվում էր կրոնի և եկեղեցու բարոյագաղափարական հեղինակության վրա: Երկու թերթերում էլ 1840-ական թթ. ցանկալի քարոզիչ էր Հ. Չամուռճյանը, ով պաշտպանելով այս դիրքորոշումը դրան տալիս էր մարտնչող բովանդակություն: Եվ վերջապես, կառուցվածքի, նյութերի դասավորման ու ժանրային ձևավորմամբ ևս <<Հայրենասերի>> հետևում էր <<Արշալոյս Արարատեանին>>, որ դարձյալ վկայում է զմյուռնահայ անդրանիկ թերթի ազդեցությունը <<Հայրենասերի>> վրա:

Դրանով հանդերձ, այս թերթերի միջև տարիների ընթացքում զգացվում էր խուլ հակառակություն, որ չէր հապաղում պոռթկալու հասարակական սուր իրավիճակներում: Թերթերի բախման առաջին առիթը դարձավ <<Հայրենասերի>> թղթակից Խ. Էքիզյանի <<Առեւտուրի մէջ իրար օգնելու վրայ>> հոդվածը¹³³⁸: Նկատի առնելով անմիաբանության վտանգավոր հետևանքները, որ սպառնում էր <<հակառակասեր>> վաճառականներին, Խ. Էքիզյանը դատապարտում էր նրանց եսասիրական վարքագիծը և համերաշխության կոչ էր անում: Ինքը՝ Խ. Էքիզյանը, պատկանում էր զմյուռնահայ տոհմիկ վաճառականների գերդաստանին, որի ներկայացուցիչները դեռ նախորդ դարից գործուն մասնակցություն ունեին լեվանտական առևտրին և զմյուռնահայ ազգային կյանքին:

Հավանաբար, Խ. Էքիզյանի հրապարակման մեջ հակառակորդները նկատել են ինչ-ինչ ակնարկներ, համենայն դեպս, <<Հայրենասերի>>

¹³³⁸ Նույն տեղում, 1843, 30 հունիսի:

թղթակցի բարոյախոսությունը քննադատվեց <<Արշալոյս Արարատեանի>> էջերում: Ղ. Պալազարյանի թերթը Խ. Էքիզյանին մեղադրում էր ազդեցիկ վաճառականներին խրատ տալու հանդգնության մեջ¹³³⁹: Դրան ի պատասխան, <<Հայրենասեր>> տպագրեց <<Հակառակասեր գիտուն մարդու բնաւորութեան վրայ>> հոդվածը, որն ըստ էության պարսավ էր և դատապարտում էր ընդդիմախոսի <<մոլի կիրքն ու ծանկոտ գլուխը>>¹³⁴⁰: Դրանից հետո <<Հայրենասերի>> հակառակորդները դիմեցին գործնական միջոցների. այս թերթի 1843 թ. թիվ 16-ը (22 սեպտեմբեր) արգելվեց, ուստի <<Հայրենասեր>> հարկադրված էր միացյալ հրատարակել 16-17 թվերը (փաստորեն դադարելով մեկ շաբաթ): Այս առթիվ <<Հայրենասեր>> հայտնում էր, որ <<անկողմնասեր>> <<Արշալոյս Արարատեանը>>, թերևս, կհայտնի այդ խափանման պատճառը, որի վերաբերյալ ինքը հարկ չի համարում բացատրություն տալ¹³⁴¹: Մակայն գույգ թերթերն էլ ունեին իրենց կողմնակիցները առևտրական շրջաններում, որոնց բախումները մրցակցող խմբակցության հետ՝ խախտում էր գլխունահայ կյանքի երևութական անդորրը: Կրքերը բորբոքվեցին այն աստիճանի, որ ապարդյուն անցավ նույնիսկ Զմյուռնիայի առաջնորդ արք. Մատթեոսի հաշտարար միջնորդությունը: Դրանից հետո էլ <<Հայրենասեր>> շարունակեց քննադատել իր հակառակորդին, ում ջանքերով խափանվեց ևս մի քանի ամիս (1843 թ. հոկտեմբերից մինչև 1844 թ. ապրիլի կեսը): Նրա վերահրատարակմանն օգնեց Պետրոս Յուսուֆյանը՝ մեզ արդեն ծանոթ գլխունացի մեծահարուստն ու բարերարը: Խ. Մելիքսեղումյանն այս առթիվ գրում էր, որ Պ. Յուսուֆյանը <<զանազան ազգօգուտ բարերարություններն ուրիշ մեր օրագրոյն առաջադիմութեանը համար, օրագրոյս դժբախտութեան ժամանակին անգամ իւր առատ շնորհօք եւ ըստ ամենայնի անկեղծ ձեռնտուութիւնք մեր երախտապարտութիւնը մշտենջենաւորեց>>¹³⁴²:

Զնայած այս ընդհարմանը՝ գլխունահայ երկու թերթերը գաղափարական տարաձայնություններ չունեին: Խոսքը տվյալ դեպքում վերաբերում էր առևտրական տարբեր խմբակցությունների հակադրությանը, որ, ի դեպ, ցույց են տալիս նաև համայնքում ընթացող իրադարձությունները: Նկատենք, որ <<Հայրենասեր>> պաշտպանում էր <<Սյունյաց>>

¹³³⁹ Արշալոյս Արարատեան, 1843, 20 օգոստոսի:

¹³⁴⁰ Հայրենասեր, 1843, թիւ 14:

¹³⁴¹ Նույն տեղում, 22 սեպտեմբերի:

¹³⁴² Նույն տեղում, 1844, 15 ապրիլի:

ընկերության հակառակորդ խմբակցությանը, իսկ <<Արշալոյս Արարատեանը>>՝ այդ ընկերությանը. ինքը՝ Ղ. Պալդազարյանը, ինչպես տեսանք, այդ ընկերության հոգաբարձուն էր, նրա եռանդուն գործիչներից մեկը: Ի վերջո, այս թերթերի մրցակցությանը վերջ տվեց 1845 թ. մեծ հրդեհը, որը նյութական կորուստներ պատճառեց <<Հայրենասերի>> հրատարակիչ <<Արագածոնյաց>> ընկերությանը և նրա հովանավորներին: 1845 թ. հունիսին, հրդեհից հետո, <<Հայրենասերը>> սկսեց հրատարակվել ամիսը երկու անգամ (դրանից առաջ՝ շաբաթաթերթ), իսկ հաջորդ՝ 1846 թ. մայիսին վերջնականապես դադարեց:

Զմյուռնահայ թերթերի միջև, այնուամենայնիվ, կային որոշ տարբերություններ, այսպես, <<Արշալոյս Արարատեանը>> արտահայտում էր առևտրականության ինչ-ինչ ազատամիտ տրամադրությունները, թեև երկու թերթերն էլ հիմնականում ունեին պահպանողական ուղղություն: <<Հայրենասերն>> առանձնանում էր ավելի ավանդապահ միտումներով, որ արտահայտվում էր <<Սյունյաց>> ընկերության հանդեպ նրա ոչ համակրական վերաբերմունքով, Հ. Չամուռճյանի մշտական աշխատակցությամբ և այլն:

<<Հայրենասերի>> նյութերում արտացոլվել է մշակութային-լուսավորական շարժման մի կարևոր կողմը՝ գրական նոր լեզվի զարգացման հարցը: Այս թերթը ևս գրական աշխարհաբարի հետագա զարգացումը տեսնում էր դրա՝ գրաբարին մերձենալու ուղիով: <<Հայոց լեզուի վրայ>> հոդվածում մեզ արդեն ծանոթ Խ. Էքիզյանն առաջարկում էր աշխարհաբարը մաքրագործել գրաբարի ավազանում և ազատել օտար (հիմնականում՝ թուրքերեն) բառերից: Խորթ բառերով ու դարձվածներով <<խանգարեալ>> աշխարհաբարը, նրա կարծիքով, պետք է ուղղվեր նախ դպրոցում, որտեղից էլ պետք է ժողովրդականացվեր այսպես կոչված պարզ գրաբարի գաղափարը:

<<Հայրենասերն>> անդրադարձել է արևելահայ մշակութային և հասարակական կյանքի մի քանի կողմերին, կարևոր նշանակություն է տվել Արևելյան Հայաստանի՝ պարսից տիրապետությունից ազատագրվելուն և Ռուսաստանի կազմի մեջ մտնելու իրողությանը՝ այդ գնահատելով Էջմիածնի կաթողիկոսության դիրքերից: Իր՝ Խ. Մելիքսեղումյանի գերդաստանը մոտ հարաբերություններ ուներ Էջմիածնի հետ, և այս հանգամանքը չէր կարող չանդրադառնալ նրա Էջմիածնական, հետևաբար նաև ռուսական կողմնորոշման վրա: Առհասարակ <<Հայրենասերը>> փորձում էր ըստ հնարավորին հետաքրքիր տեղեկություն-

ներ տալ Արևելյան Հայաստանի, նաև՝ Երևանի ու Թիֆլիսի հայ իրականության, Մոսկվայի Լազարյան ճեմարանի և այլնի մասին: Էջմիածնի և կաթողիկոսի նկատմամբ թերթի համակրական ուղեգիրը դրսևորվել է <<Համառոտություն ազգասիրական սխրագործութեանց տեառն Ներսիսի>> հրապարակման մեջ¹³⁴³:

Արևելահայ կյանքն ընթերցողին ներկայացնելու նպատակով թերթը Մ. Թադիադյանի <<Ազգասեր>> պարբերականից արտատպել է մի հատված, որը վերաբերում է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանի բացման հանդիսությանը: Նույն ռուսական բարեհայատակային տրամադրությանը հետևելով, <<Հայրենասերը>> դրվատում էր արևելահայերի <<կրոնական ազատությունը>>, իսկ <<Ռուսիա>> հողվածում ընդգծվում է ռուսական ուղղափառ և հայ առաքելական եկեղեցիների <<հավասարապատիվ>> լինելը Ռուսաստանում: 1836 թվականից գործող <<Պոլոժենիե>>-ն, որով սահմանափակվում էին հայ եկեղեցու իրավունքները Ռուսաստանում, ամենևին չի հիշվում թերթի հրապարակումներում: Խ. Մելիքսեղումյանը Էջմիածնական իր պահպանողական մտերիմների ջանքերով, թվում է, կտրված էր Կ. Պոլսի և առհասարակ, արևմտահայ բարձրաստիճան հոգևորականների շրջաններից, որոնք բողոքում էին ցարական եկեղեցական այդ կանոնադրության դեմ: <<Հայրենասերի>> խմբագիրը հայ եկեղեցու իրավունքների հարցում լռելյայն համակերպվում էր իրերի դրությանը:

Թերթը փորձում էր իր ընթերցողին ծանոթացնել ռուս գրականության նմուշներին: Բարձր գնահատելով Ի. Կոչիլովի ստեղծագործությունները, նրա առակների մատչելի սյուժեն և նրբությունը, մի հեղինակ նկատում էր, որ ռուս առակագրի բարոյական ճշմարտությունները միաժամանակ բացահայտում են ռուս գյուղացիների կյանքն ու կենցաղը¹³⁴⁴: Այսուհանդերձ, <<Հայրենասերը>> քիչ ուշադրություն է դարձրել գեղարվեստական գրականությանը: Տպագրված գեղարվեստական երկերը առավելապես թարգմանություններ են ֆրանսերենից և հունարենից, որոնք հիմնականում ունեն բարոյախոսական բնույթ: Վերջին թեմաներով Խ. Մելիքսեղումյանին հողվածներ էին տրամադրում Հ. Չամուռճյանը և Խ. Գալֆայովը՝ դարձյալ Կ. Պոլսից:

¹³⁴³ Նույն տեղում, 1843, 22 սեպտեմբերի:

¹³⁴⁴ Նույն տեղում, 1845, 5 մայիսի:

Բուն Զմյոռնիայում <<Հայրենասերը>> աչքի ընկնող թղթակիցներ գրեթե չունեն, որ ցույց է տալիս նրա աշխատակիցների սահմանափակ ներկայացուցչությունը մի քաղաքում, որտեղ կար նշանակալի թիվ կազմող հայ մտավորականություն: Վերջինս հիմնականում խմբված էր <<Արշալոյս Արարատեանի>> շուրջ, որի բովանդակությունն ավելի էր համապատասխանում ժամանակի ընթերցողի պահանջներին: Մինչդեռ <<Հայրենասերը>> վարանումով էր ընկալում հասարակական պահանջները և ի վիճակի չէր որևէ բան ավելացնելու <<Արշալոյս Արարատեանի>> ուղղությամբ: Այս պայմաններում թերթը բոլորում էր իր եռամյա գոյությունը գրեթե այնպես, ինչպես սկսել էր՝ <<Արագածունյաց>> ընկերության և նրա համախոհների նեղ շրջանակով և առանց հեռակարների: Թերթի դադարելու գործում հրդեհից բացի, իր դերը կատարեց <<Արշալոյս Արարատեանի>>՝ իսկապես անհաղթահարելի մրցակցությունը:

Հավանաբար, Զմյոռնիայում ամերիկյան ավետարանականների լայնածավալ և տպավորիչ գործունեությունը իր ազդեցությունը պետք է թողներ, զոնե մի կարճ ժամանակով, գերմանական բողոքականների եռանդի վրա: 1846 թ. նրանք այստեղ հրատարակում են <<Գերմանիոյ եկեղեցական դիպուածները>> թերթը, որ տեղեկանում ենք Գր. Գալեմբյարյանի աշխատության շնորհիվ¹³⁴⁵: Դատելով այդ թերթի՝ վերջինիս տրամադրության տակ եղած համարի նյութերից, ինչպես և անվանումից, այն հետամտել է զուտ կրոնադավանական նպատակներ՝ փորձելով նպաստել բողոքական համայնքի ստեղծմանը Զմյոռնիայում: Իրենք՝ հայ բողոքականներն այստեղ շատ սակավաթիվ էին, որպեսզի թերթ հրատարակեին: Կարելի է կարծել, որ գերմանացի բողոքականները ամերիկյան բողոքականների օրինակով ընդամենը փորձել են հայերեն լեզվով թերթ տպագրել, որ հաջողություն չէր կարող ունենալ վերը նշված պատճառով:

1853-1856 թթ. Տետեյան եղբայրները խմբագրում և հրատարակում էին <<Արփի Արարատեան>> բանասիրական, ազգային, տնտեսական և ուսումնական ամսագիրը: Այս պարբերականում դրսևորվել է դեմոկրատական մամուլի հայտնության ժամանակի հասունացած պահանջը: Ուշագրավ է, որ նրա խմբագիրները անբավականություն էին հայտնում

¹³⁴⁵ Գալեմբեարեան Գր., Պատմություն հայ լրագրութեան, էջ 198:

այն իրողությունից, որ ազգային մամուլն ավելի շատ համապատասխանում է վերնախավի, քան ժողովրդի ճաշակին, որը դեռևս նոր է սկսվում ձևավորվել: Այլ կերպ ասած, Տետեյանները ցանկանում էին ամսագրի լուսավորական ուղղվածությունը ի սպաս դնել հանրության հոգևոր և իմացական պահանջներին: Նրանք եվրոպական քաղաքակրթությունը դիտում էին որպես ազգի ինքնագիտակցությունը խորացնելու միջոց, որ պետք է որոշեր ամսագրի բովանդակությունը: Մարդկանց գիտակցության մեջ և հանրային կյանքի բնագավառներում Տետեյանները դանդաղ, բայց հաստատուն առաջընթացի կողմնակիցներ էին, ուստի և գերադասում էին վերափոխումների հայտնի ուղին: <<Արփի Արարատեանը>> քաղաքակրթության համոզված պաշտպան էր, դրա նվաճումները, գյուտերն ու հայտնագործությունները գնահատում էր որպես <<բնութեան վրայ տարած հաղթութիւններ>>, իսկ այս վերջինների պատմությունը՝ մտքի ու քաղաքակրթության զարգացման պատմություն: Նկատելի է ամսագրի մտահոգությունը հանրության հասարակ շերտերի՝ մանր առևտրականների ու արհեստավորների նկատմամբ: Վերջիններիս հասարակական բարեկեցությանը հետամտելով՝ Տետեյաններն առաջարկում էին գործուն միջոցներով նրանց պաշտպանել տնտեսական ցնցումներից և աղքատացման վտանգից: <<Պզտիկ առաջարկութիւն մը>> հոդվածում <<Արփի Արարատեանը>> կոչ է անում լուսավորական ընկերությունների հետ ստեղծել այնպիսի հաստատություններ, որոնք աշխատանքով կապահովելին գործազուրկներին¹³⁴⁶: Նույն նպատակով խմբագրությունն առաջարկում էր զմյուռնահայ վարժարաններին տալ արհեստագործական թեքում, գործնական պահանջներից բխող ուսուցում և քննադատում էր առհասարակ արևմտահայ դպրոցի լեզվագիտական նախասիրությունները, որոնք նրան պարտադրում էին իմացական միակողմանիություն: Այս նույն հոդվածում նկարագրվում է Ս. Մեսրոպյան վարժարանի շրջանավարտների ոչ նախանձելի կացությունը՝ հատկապես նրանց աշխատանքային գործունեությունը սկսելու տեսակետից: Լեզուների, և ամենից առաջ հայերենի իմացությունը միայն մասամբ կարող էր պիտանի լինել Զմյուռնիայի թեկուզ և բազմալեզու առևտրական հրապարակի համար: Լեզվի իմացությունը կարող էր օգտակար լինել միայն հարուստ ընտանիքների երեխաներին, իսկ աշխատավորական խավերի շրջանավարտները,

¹³⁴⁶ Արփի Արարատեան, 1853, թիւ 2, էջ 18-20:

որոնք բաց էին թողել արհեստների տիրապետելու լավագույն տարիները, ստիպված էին կյանքի շեմ ոտք դնել առանց համապատասխան հմտությունների: Կրթությունը գործնական խնդիրներին ու իրական պահանջներին լծորդելու մտայնությամբ ամսագիրն ընդառաջում էր լուսավորական գաղափարախոսության առաջադրումներին: Ուշագրավ է, որ դրանից երկու տասնամյակ անց, 1870-ական թթ. երկրորդ կեսին արևմտահայ մանկավարժական միտքը ձեռնամուխ եղավ ազգային դպրոցի գործնական ուսուցման համակարգի քննարկմանը: Այս իմաստով <<Արփի Արարատեանն>> առաջինն էր իր միջավայրում, որ առաջ էր քաշում ազգային կյանքում նշմարվող՝ դպրոցի վերակառուցման խնդիրը: Մի հայտնի չափով դրա պատճառը պետք է որոնել զմյուռնահայ կյանքի առևտրականացման, այդ քաղաքում և շրջակա հայաբնակ վայրերում ապրանքային արտադրության զարգացման և հանրության հասարակական ինքնագիտակցության բարձրացման հետ: <<Արփի Արարատեանը>> իր դեմոկրատական հակումներով չէր կարող չարձագանքել հանրության տրամադրություններիս մեջ կատարվող փոփոխություններին:

Ամսագիրը տպագրում էր արձակ և չափածո ստեղծագործություններ, որոնք ժանրային իմաստով նույնն էին, ինչ ժամանակի հայկական մամուլում տպագրված գեղարվեստական երկերը: Նրա արձակը ևս հիմնականում մոտ էր պատմվածքի ժանրին՝ դրան հատուկ այլաբանական ու բարոյախոսական բնույթով: Դրանք կամ փոխադրություններ են, կամ թարգմանություններ: Իտալերենից փոքր ծավալի գործեր է թարգմանել Գր. Չիլինկիրյանը՝ ապագա <<Ծաղիկի>> խմբագիրը: Ամսագրի բանաստեղծական գործերի մի մասը գրված է աշխարհաբարով, որ դարձյալ նորույթ էր արևմտահայ մամուլում, իսկ մյուս՝ հիմնական մասը, գրաբարագիր է, որ հեղինակել են Ս. Մեսրոպյան վարժարանի սաները: Վերջիններս նույն կերպ և նույն թեմաներով (Հայաստանի պատմական անցյալ, նշանավոր ազգային դեմքեր և այլն) տպագրվում էին նաև քաղաքի մյուս <<Արշալոյս Արարատեան>> թերթում, ուստի և այս տեսակետից գրեթե տարբերություն չկա նրանց տպագրած չափածո ստեղծագործությունների թեմաներում: Ամսագրին աշխատակցել է նաև Ռ. Փափազյանը, ում գրած <<Ի խրախոյս ուսումնասեր համբակաց>> բանաստեղծությունը ևս ցույց է տալիս զմյուռնահայ այս լուսավոր անհատի ջանքերը՝ իր սաների գրական շնորհները ուղղորդելու ասպարեզում:

Անհամեմատ հարուստ է <<Արփի Արարատեանի>> թարգմանական բաժինը: Ամսագրի յուրաքանչյուր թվի գրական հավելվածում տպագրվում էին եվրոպական դասական երկերի թարգմանություններ: Առաջին թվի հավելվածում տպագրվել է Շեքսպիրի <<Սիալանաց կատակերգությունը>> Ա. Կ. Տետեյանի թարգմանությամբ: Այդ Շեքսպիրի առաջին թարգմանությունն է արևմտահայ աշխարհաբարով: Ի դեմս Ա. Կ. Տետեյանի, գլխունահայ թարգմանական դպրոցը առաջադրում էր անգլիացի դրամատուրգի երկերի թարգմանության և ժողովրդականացման խնդիրը: Ավագ եղբոր՝ Տ. Տետեյանի թարգմանությամբ <<Արփի Արարատեանը>> հրատարակել է Մոլիերի <<Ժլատը>>, <<Ակամա բժիշկ>>, <<Սերը բժիշկ է>> կատակերգությունները: Այս թարգմանությունները լուրջ խթան դարձան հայ թատրոնի զարգացման համար՝ հաստատուն տեղ գրավելով նրա խաղացանկում: Շեքսպիրի և Մոլիերի ստեղծագործությունների թարգմանությամբ <<Արփի Արարատեանը>> հող էր նախապատրաստում արևմտահայ թատրոնի և դրամատուրգիայի հետագա զարգացման համար: Այս հանգամանքը ևս բնութագրում է ամսագրի կարևոր նշանակությունը մեր մշակույթի պատմության մեջ:

Առաջադիմական այս հրատարակությունը առաջին անգամ հայերեն ընթերցողին է ներկայացրել <<Մարսելյեզը>>: Այս հեղափոխական երգի թարգմանությունը ինքնին համարձակ քայլ էր, եթե նկատի ունենանք, որ արևմտահայ, հատկապես Զմյուռնիայի պահպանողական շրջաններում, բացասաբար էին տրամադրված ֆրանսիական հեղափոխության գաղափարների հանդեպ: <<Արփի Արարատեանի>> էջերում այս թարգմանությունը նկատելի ազդեցություն է թողել արևմտահայ ընթերցող շրջանների վրա: Դրանով պետք է բացատրել, որ հետագայում, 1877 թ. Զմյուռնիայի <<Արեւելեան մամուլ >> հանդեսը Թ. Թերգյանի թարգմանությամբ տպագրեց <<Մարսելյեզի>> և գրաբար, և աշխարհաբար տեքստերը¹³⁴⁷:

<<Արփի Արարատեանը>> դադարեց 1855 թ., ամենայն հավանականությամբ՝ հրատարակիչների ցանկությամբ: Իրենց տպարանը Տետեյան եղբայրները դնում էին առավել լայն՝ հրատարակչական հիմքերի վրա և ողջ ուշադրությունը կենտրոնացնում գրատպության վրա: Ամսագրի զուգահեռ տպագրությունը կարող էր խանգարել դրան և ժամանակի, և նյութական հնարավորությունների տեսակետից:

¹³⁴⁷ Արեւելեան մամուլ, 1873, թիւ 3, էջ 105-107:

ՎԵՐՋԱԲԱՆ

Փոքրասիական արևմուտքի հայկական գաղթօջախները հնագույններից մեկն են առհասարակ հայրենիքից հեռու կազմավորված հայ հանրությունների պատմության մեջ: Մեր ազգային մատենագիտության մեջ գրեթե տեղեկություններ չկան այս գաղթօջախների սկզբնավորման մասին, եթե նկատի չունենանք այն ընդհանուր դիտողությունները, որ հանդիպում ենք VII-XI դդ.՝ Սեբեոսի, Թովմա Արծրունու, Արիստակես Լաստիվերտցու և այլոց երկերում հայ նախարարների՝ բյուզանդական տարածքներն անցնելու մասին: Այսուհանդերձ, հետազոտողները Էգեյանի արևմտյան հատվածի հնագույն գաղթօջախը համարում են Պերգամոն (Բերգամա) քաղաքը, որտեղ հայրենիքից տարագրված հայերն ապաստան են գտել դեռևս VI-VII դդ.: Գ. Ասլանը և նրան հղելով՝ Մ. Օրմանյանը Էգեյան թերակղզու արևմուտքում հայերի հայտնությունը կապում են 571-576 թթ. պարսիկների դեմ Վարդան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության հետ, երբ Բյուզանդիան այդ քաղաքը տրամադրեց ապստամբության մասնակից հայ նախարարներին: Եվ դատելով ըստ ամենայնի, ապստամբության ավարտից հետո, 576-577 թթ.: Ռազմական գործին և արվեստին տիրապետող հայ նախարարները, որ Էգեյանի ափեր հասան իրենց գերդաստաններով ու կռվող ուժերի հետ միասին, ի տրիտուր ապաստանի, պետք է որ զինվորական ծառայության անցնեին բյուզանդական կայսրերի մոտ:

Էգեյանի տարածքներում հայ գաղթօջախների առկայությունը, ըստ Հ. Բարթիկյանի, առնչվում է նաև բյուզանդացիների կողմից թոնդրակեցի աղանդավորներին Հայաստանից XI դարում գաղթեցնելու իրողությանը: Զմյուռնիայի և շրջակայքի հայերի վերաբերյալ նույն հեղինակի հրատարակած բյուզանդական վավերագրերում բազմաթիվ տեղեկություններ են տրվում XII-XIV դդ. Զմյուռնիայի և կից շրջաններում բնակվող հայերի տնտեսական, պաշտոնական և այլ գործառնությունների մասին, որից նա հանգում է այն եզրակացությանը, որ նշված տարածքներում (Եփեսոս, Պրիսե, Միլետոս, Փիլադելփիա, Լավոդիկե և այլուր) առկա էր հայկական համախումբ բնակչություն: Այս տարածքներում XII դ., ապա և Նիկիական կայսրության ժամանակաշրջանում՝ XIII դ. և հետո հայ բնակչության առկայությանն են անդրադարձել հույն պատմաբան Չարանիսը և ռուս հեղինակներից Պ. Բ. Ժավորոնկովը՝ նշելով նրա դիրքն ու ազդեցությունը երկրի ռազմաքաղաքական ու քաղաքացիա-

կան հարաբերություններում: Անտարակույս, հայկական այս համայնքները պահպանել էին իրենց միաբնակ դավանանքը կամ ազգային ինքնությունը ուղղափառ հունական միջավայրերում: Կարելի է կարծել, որ այդ համայնքների մեծ մասը, իբրև սահմանապահ ռազմական ուժ և ի հատուցումն իր ծառայության, կարողացել էր պահպանել իր դավանական անկախությունը: Իսկապես, 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովին մասնակցած երեք տասնյակից ավելի եպիսկոպոսների շարքում հիշվում է Լավոդիկիայի (փոքրասիական արևմուտքի շրջան, Դենիզլիի մոտ, ինչը նշում է Հ. Աճառյանը) Սարգիս եպիսկոպոսը:

Հարկ է հաշվի առնել Էգեյանի համայնքների ոչ միայն ռազմական, այլև տնտեսական ու առևտրական ներուժը: Անհերքելի է նաև այն իրողությունը, որ հայ վաճառականները Ղրիմում և սևծովյան այլ շրջաններում գործակցելով ջենովացի վաճառականների հետ, փոքրասիական լեվանտում ևս իրենց մասնակցությունն էին բերում միջազգային առևտրական շրջանառությանը: Նիկիական պետության մեջ նույնպես, հայ վաճառականները գերաճել էին զուտ տեղական նշանակությունից և ճանաչված գործընկեր էին շատ ավելի ընդարձակ առևտրական ուղիներում:

Էգեյանի առափնյակում հայ գաղթօջախները հարասնեցին XIV-XV դդ.՝ օսմանյան գրավումներից հետո ևս, սակայն այս ժամանակից մինչև XVII դ. սկզբները դրանց համայնքային կյանքի վերաբերյալ քիչ տեղեկություններ ունենք: Գաղթօջախների պատմաբանների մեջ բավական տարածված է ֆրանսիացի Բ. Սլարսի (և նրա հետևությամբ՝ մխիթարյան հայր Հ. Քոսյանի) կարծիքը, ըստ որի, հայ գաղթականությունը Էգեյանի առափնյակում, մասնավորապես Ջմյունիայում է հայտնվել Կիլիկիայի հայկական թագավորության անկման արդյունքում, XIV դ. վերջին քառորդին:

Ջմյունիան և տարածաշրջանի գաղթօջախները (Այդըն, Մանիսա, Բերգամա (Պերգամոն), Էոդեմիշ, Սյոքե և այլն) նոր գաղթականություններով պետք է համալրվեին կամ ի նորո ստեղծվեին XVI դ. վերջերին և XVII դ. առաջին տասնամյակներին, երբ ջալալիների ապստամբությունների, սովի ու թուրք-պարսկական պատերազմների պատճառով փախստական բազմաթիվ հայեր բնաշխարհի արևելյան և արևմտյան հատվածներից անցան Միջերկրականի և Էգեյանի կղզիներն ու առափնյա տարածքները: Հետազոտողները, մասնավորապես Հ. Քոսյանը մի շարք դամբանագրերի վրա հենվելով ցույց են տվել այս ժամանա-

կաշրջանի գաղթականների ելքի վայրերը, մասնավորապես Սյունիքից, Արարատյան հովտի բնակավայրերից, Նախիջևանից, Ագուլիսից, նվազ քանակությամբ՝ Խարբերդից, Բաղեշից, Կեսարիայից, Ափիոն Կարահիսարից և այլն: Հարկ է նկատի ունենալ վերոհիշյալ, ինչպես և բնական աղետների ու համաճարակների պատճառներով Ջմյունիայից և կից շրջաններից հայերի գաղթը փոքրասիական այլ բնակավայրեր, Կ. Պոլիս և այլուր:

Մասնավոր ուշադրություն է հրավիրում այն հանգամանքը, որ գաղթերը Սյունիքից դեպի Ջմյունիա և կից բնակավայրեր (քաղաքներ և գյուղեր՝ զուտ գյուղատնտեսական շրջաններ) XVII դ. և թերևս ավելի վաղ սկսվելով, շարունակվել են նաև հետագայում՝ ընդհուպ մինչև XIX դ. սկզբները: Այս իրողությունը պետք է բացատրել շարունակաբար կրկնվող գաղթերի սովորությանն տրամաբանությամբ, տեղաշարժերի նպատակակետի սոցիալական, տնտեսական, ինչպես և հանրային ապահովության վերաբերյալ գաղթողների որոշ պատկերացումներով ու ծանոթությամբ, մանավանդ, եթե նկատի առնենք այն, որ դեպի Էգեյանի առափնյակ ընթացող գաղթերը բռնագաղթեր չեն եղել:

Սյունիքից և Արևելյան Հայաստանի այլ տարածքներից գաղթերի երևույթը նկատելի է դառնում նաև XVIII դ. 30-ական թթ. ազատագրական շարժման տեղատվությունից հետո, այնուհետև, Նաղիր շահի ժամանակ սաստկացած բռնությունների հետևանքով, երբ Ջմյունիա, Այդըն, Բերգամա և կից բնակավայրեր գաղթեցին Բազմաթիվ հայեր, այդ թվում և հայ կաթոլիկներ՝ Նախիջևանից: XVIII դ. վերջերին դեպի Ջմյունիա ուղղվեց Գաղատիայի (Էնկյուրի) հայ կաթոլիկների հոսքը: Եվ մեկ, և մյուս դեպքերում Էգեյանի այս հատվածը դեպի իրեն էր ձգում վերջիններիս՝ սոցիալական ու դավանական տեսակետից համեմատական ապահովություն ներշնչող հնարավորություններով: XVIII դ. երկրորդ կեսին հայ կաթոլիկները կենտրոնանում էին Այդընում և նրանց հոգևոր ղեկավարությունը հանձնվել էր Վիեննայի Մխիթարյաններին, որոնք այստեղ աչքի էին ընկնում իրենց հայանպաստ գործունեությամբ:

Էգեյանի գաղթօջախների պատմության առանձնահատկությունների, մանավանդ, մշակույթի ու տնտեսության դիմագիծը գնահատելու համար կարևոր նշանակություն ունեն դրանց առնչությունները Մայր աթոռ Ս. Էջմիածնի հետ: Ջմյունիան և առափնյակի մյուս գաղթօջախները Էջմիածնի տերունի (իմա սեփական) թեմն էին, որքան մեզ հայտնի է, XVII դ. 10-ական թվականներից: Այդ նշանակում էր, որ գաղթօ-

ջախները կաթողիկոսության հետ կապված էին նվիրակական (կրոնական-հարկային) և միաժամանակ առաջնորդական (կրոնական-վարչական) կապերով ու հարաբերություններով: Հարկ է ուշադրություն դարձնել տերունի թեմ հասկացությանը, որի հիմքում ընկած էր սեփականատիրության սկզբունքը՝ ճանաչված օսմանյան պետական օրենքներով, որով և ամրագրվում էր Էջմիածնի արտատարածական իրավունքը Թուրքիայի որոշակի տարածքներում:

Զմյուռնիայի, Կ. Պոլսի և Օսմանյան Թուրքիայում Էջմիածնի մյուս տերունի թեմերը վերացվեցին 1825 թ. կամ 1824 թ. վերջերին, Բ. դռան նոր քաղաքականության արդյունքում, որի անմիջական ազդակները եղան դրան նախորդած թուրք-պարսկական պատերազմը և ծավալվող հունական ազատագրական շարժումը, որոնք օսմանյան կառավարությանը մղեցին ուժեղացնելու վերահսկողությունը հպատակ հույն և հայ հանրությունների նկատմամբ:

Էջմիածնի կաթողիկոսության և Զմյուռնիայի թեմի փոխհարաբերությունների, ինչպես և գաղթօջախների պատմության տեսակետից կարևոր նշանակություն ունի այդ թեմի առաջնորդների պաշտոնավարության ժամանակագրական ընթացքի՝ գավազանագրքի վերհանումը: Այստեղ հարկ է ընդգծել Զմյուռնիայի թեմի համազգային հեղինակությունը, որի ակնհայտ վկայությունն է նրա առաջնորդներից թվով հետևյալ վեցի ընտրվելը Ամենայն հայոց կաթողիկոս՝ 1737-1858 թթ. ժամանակահատվածում. Ղազար Ջահկեցի՝ 1737, Ալեքսանդր Բյուզանդացի Գարազաշ՝ 1753, Սահակ (Բսահակ) Ահագին՝ 1756 (հրաժարվել է կաթողիկոսությունից), Ղուկաս Կարնեցի (1780), Դանիել Սուրմառեցի (1801) և Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի (1858):

Էգեյանի համայնքների պատմության մի բաղկացուցիչ մասն է կազմում նրանց եկեղեցիների, հատկապես Զմյուռնիայի եկեղեցիների պատմությունը: XVI դ. երկրորդ կեսին և XVII դ. առաջին կեսին Զմյուռնիայում գործել են երկու եկեղեցիներ (ըստ Սիմեոն Լեհացու՝ տարբեր թաղերում, կարծում ենք, այն բանից հետո, երբ հայերը հաստատվեցին քաղաքի ավամերձ շրջանում (Հայնոց թաղամաս)՝ խմբվելով նոր եկեղեցու շուրջ: Այդ եկեղեցին՝ Ս. Ստեփանոսը, հիշատակվում է 1625 թվականից: Հայտնի է նաև այլ՝ Ս. Բարդուղիմեոս եկեղեցին 1628 թվականից: Իրականում խոսքը վերաբերում է նույն եկեղեցուն, ավելի ստույգ՝ եկեղեցական համալիրի, որը ձեռագրերում (XVII-XVIII դդ.) կոչվել է մերթ Ս. Ստեփանոս, մերթ Ս. Բարդուղիմեոս, և մերթ զուգանուն՝ Ս. Ստեփա-

նոսի և Ս. Բարդուղիմեոսի եկեղեցի: 1780-ական թթ. վերջնականապես ամրագրվել է մեկ՝ Ս. Ստեփանոս եկեղեցի անվանումը՝ գաղթօջախի հետագա ողջ պատմության ընթացքում: Այնուհետև, 1842 թ. զմյուռնահայերն ունեցան իրենց երկրորդ եկեղեցին՝ Ս, Լուսավորիչ անվամբ, որ կապվում է համայնքի հիվանդանոցի պատմության հետ:

Հատկապես XVIII դ. պահպանված կաթողիկոսական կոնդակներն ու Սիմեոն Երևանցի կաթողիկոսի <<Ջամբո>>-ը բավական տեղեկություններ են տալիս Էգեյանի մյուս գաղթօջախների (Այդըն, Մանիսա, Էոդեմիշ, Գնըք, Դենիզլի, Նազլի և այլն) մասին: Այս գաղթօջախները մարդաշատ են դարձել XVI դ. վերջին և XVII դ. առաջին քառորդին՝ թուրք-պարսկական պատերազմների, ջալալիների հուզումների և այլ աղետների հետևանքով. կարծում ենք այն պատճառով, որ Էգեյանի արևմտյան հատվածում կանգառած գաղթականների հոգևոր խնամքը մինչ այդ՝ 1610-ական թթ., արդեն գտնված պետք է լիներ Էջմիածնի իրավասության ներքո: Իսկ այն, որ Զմյուռնիայի և նրա մերձակայքի հոգևոր ղեկավարումը այդ տասնամյակին, կամ՝ շատ հավանական է, դրանից էլ առաջ, պատկանում էր Էջմիածնին, աներկբա է դառնում 1614-1615 թթ.՝ Մելքիսեթ կաթողիկոսի կողմից Զմյուռնիայի, Մանիսայի, Թիրայի և շրջակայքի առաջնորդ նշանակված Պոկնտոշ Կարապետի պաշտոնավարությամբ:

Էգեյանի հնագույն գաղթօջախի՝ Բերգամայի պատմությունը ևս փակ է մնում մեր առջև՝ մինչև XVII դ., երբ այստեղ հանգրվանեցին Սյունիքից, Ղարաբաղից եկած գաղթականները, որի հետևանքով համալրվեցին կամ հաստատվեցին Էգեյանի համայնքներն իրենց եկեղեցիներով, կրոնական և ազգային-կրթական այլ կառույցներով: Առավել մարդաշատ համայնքներ ունեին Այդընը (վկայված XVI դարից), Մանիսան և Էոդեմիշը: Մանիսայի և Զմյուռնիայի համայնքների մասին ամենավաղ տեղեկությունը հաղորդում է 1610-ական թթ.՝ Սիմեոն Լեհացին իր ուղեգրության մեջ, որպես հին գաղթականությունների, իրենց երկուական եկեղեցիներով: Մանիսայում, ըստ նրա տվյալների, կային մի քանի հարյուր տուն հայեր՝ իրենց եպիսկոպոսներով և երկու երեցներով: Պետք է կարծել, որ XVII դ. Մանիսան համալրվել է նոր գաղթականներով, համենայն դեպս, 1833 թ. անգլիացի ճանապարհորդ Է. Սմիթը 80 հազարանոց Մանիսայում հաշվում է 400 հայկական տուն՝ դարձյալ իր երկու եկեղեցիներով, կնշանակի՝ երկու տարբեր թաղերով: Կարելի է կարծել, որ մինչև 1620-ական թթ. Մանիսան իր տնտեսական վիճակով՝

առափնյակի առևտրում և հումքի արտադրության մեջ ունեցած տեղով առավել նշանակալի տեղ է գրավել, քան Ջմյունիան, որի համար բավարար հիմք կարող է լինել Դ. Գոֆմանի վիճակագրական տվյալների վրա հենվող հետազոտությունը: Այդ ցույց է տալիս, որ XVII և հետագա դարերում Մանիսան մնում էր առափնյակի ամենահաստատուն գաղթօջախներից մեկը՝ Ջմյունիայից հետո:

Հարկ է ուշադրություն դարձնել այն բանին, որ Միմեոն Լեհացին Մանիսայում հիշում է Հակոբ Ֆրնոզցի եպիսկոպոսին, որը կարող էր հովվել Էգեյանի այս համայնքները՝ նախքան Պոկնտոշ Կարապետը (1610-ական թթ.) Ջմյունիայում: Չի բացառվում, որ մինչ այդ Էգեյան թերակղզու արևմտյան մասի հայ գաղթօջախները ենթակա եղած լինեին Կիլիկիայի կաթողիկոսությանը, ինչը տեսնում ենք Սարգիս եպիսկոպոսի պաշտոնավարմամբ՝ տակավին 1179 թ. և այս իրավիճակը կարող էր շարունակվել մինչև 1610-ական թթ., երբ նշված գաղթօջախները գտնվում էին Էջմիածնի իրավասության ներքո:

XVII դ. առաջին քառորդից հետո էլ, երբ Ջմյունիան իր իրավունքների մեջ մտավ իբրև շրջակայքի առևտրատնտեսական խոշոր կենտրոն, Մանիսայի հայ համայնքը շարունակում էր ապրել իր տնտեսական կարողություններով և դրան համապատասխան ազգային կյանքով: Մի հայտնի չափով համայնքն աշխուժացավ Խարբերդից եկած գաղթականությամբ (XVI դ. 90-ական թթ.-XVII դ. սկիզբ): Այս ժամանակաշրջանում և դեռ մեկ տասնամյակ անց տարածաշրջանում նկատելի են գաղթական հոսքեր Արևելյան Հայաստանից, նաև՝ Արևմտյան Հայաստանից, որ շարունակվել է նաև հետագա դարերում: Համայնքներն իրենց գոյությունը պահպանում էին երկու կարևոր գործոնների շնորհիվ՝ Ջմյունիայի, որպես հոգևոր (թեմական) կենտրոնի հետ ունեցած ազգային-դավանական ու տնտեսական կապերով և երկրորդ՝ ոչ պակաս կենսական նշանակություն ունեցող՝ իրենց պատմական օրրանից հայրենակիցների շարունակական, մեկը մյուսին հետևող գաղթերի հետևանքով (XVII-XVIII դդ.): Ընդամին, այս երևույթից անկախ, նկատելի է VI-XVI դդ. գոյատևած այս համայնքներում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի այլևայլ շրջաններից սերող գաղթական հին շերտերի առկայությունը, որը դրսևորվել է **կը** ճյուղին պատկանող Ջմյունիայի բարբառի իրողությամբ և որով, կարծում ենք, խոսել են հիմնականում այդ քաղաքի համայնքում: Առափնյակի մյուս գաղթօջախներում շատ ավելի գործածական էին Սյունիքի բարբառը կամ դրա տարբեր խոս-

վածքները, ինչն ակնհայտ է դառնում Հ. Քոսյանի և մյուս հետազոտողների մեջբերած նմուշներից: Հարկ է ավելացնել, որ հին գաղթականության մի մասը կարող էր տեղի տալ տարածաշրջանում մեկը մյուսին հետևող մահմեդական տարացեղ նվաճողների (սելջուկներ, բելույություններ, մոնղոլներ, օսմանյան թուրքեր) ճնշմանը և կորցնել իր լեզուն: Ավելին, այս գաղթօջախները կարող էին համալրվել Կիլիկիայից և Արևմտահայաստանից գաղթած թուրքախոս հայերով: Այդ է պատճառը, որ XIX դ. մի շարք հեղինակներ արձանագրել են նաև թուրքախոս հայերի առկայությունն այս գաղթօջախներում: Մակայն դրանց մեծ մասում ազգային կառույցների՝ եկեղեցու, դպրոցի և ինքնության այլ գործոնների շնորհիվ պատմականորեն գոյացել էր մշակութային ամուր հենք՝ ազգային արդիական զարգացման ուղու վրա դնելով համայնքների կյանքն ու իրականությունը:

Գաղթօջախներում հայերը մշակում էին և պետական, և կրոնական ու բարեգործական հաստատությունների սեփականություն հանդիսացող հողերը: Հողի մշակությունը փոխհատուցվում էր պետականորեն ամրագրված հարկերով և որոնց միանում էին առանձին խումբ կազմող՝ եկեղեցուն տրվող հարկերն ու տուրքերը. Վերջին դեպքում ինքը՝ Էջմիածինը, հանդես էր գալիս որպես վակֆի եկամուտներ ստացող սեփականատեր (տներից, այգիներից, խանութներից, շինություններից և այլն): XV-XVII դդ., դատելով օսմանյան օրենքներով սահմանված նորմերից, Էգեյանի առափնյա տարածքներում, հատկապես հետագայում՝ Այդընի վիլայեթում, հողը թանկ է եղել, ինչը, այս կամ այն կերպ փոխհատուցվել է հարկերի համեմատաբար թեթև չափերով. Կարելի է կարծել, որ այս հանգամանքը իր որոշ նշանակությունն է ունեցել գաղթական հոսքերի՝ դեպի այս կողմերն ուղղվելու տրամաբանության վրա:

Հայ արհեստավորները մտնում էին էսնաֆական կազմակերպությունների մեջ՝ պահպանելով իրենց ազգային ու կրոնաբարոյական ավանդույթները, ինչպես մահմեդական արհեստավորները՝ իրենց համապատասխան նորմերով (ֆութուվվաթ): Կային հացագործների, երկաթագործների, կաշեգործների, ներկարարների, կտավագործների և շատ այլ միավորումներ, որոնք արհեստակիցներին վերաբերող խնդիրները (արտադրանքի տեսակ, վաճառքի տարածքներ, որակ, չափ, գին և այլն) քննարկում կամ լուծում էին էսնաֆի մեծ ժողովում (մեջլիս-ի քեֆիր): Կապված տվյալ քաղաքի (բնակավայրի) տնտեսական նշանակության և բնակչության թվաքանակի հետ՝ մարդաշատ էին Զմյուռնիայի, Էոդեսի-

շի, Մանիսայի և Այդընի հայ արհեստավորները՝ կենցաղային արհեստի տեսակների բազմազանությամբ: Զմյուռնահայերի արհեստագործության զարգացման որոշակի փուլ հանդիսացան 1790-ական թթ. բացված չթագործարանը, ինչպես և մինչև 1860-ական թթ. գործող նմանատիպ մի ձեռնարկություն՝ շուրջ չորս հարյուրի չափ աշխատողներով:

Գաղթօջախներում արհեստավորության հետ միասին սոցիալական նշանակալիություն ուներ վաճառականությունը, որի գործունեության աշխարհագրական լայն սահմանները մղում են գնահատանքի միջազգային չափանիշների: Գործուն մասնակցություն ունենալով Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած առևտրական ուղիներում և դրանից այս կողմ՝ Էգեյանի առափնյակն ընդգրկող տարածքների ապրանքափոխանակության ասպարեզում, Զմյուռնիայի հայ վաճառականները գործակցում էին Վենետիկի, Ջենովայի և իտալական այլ քաղաքների առևտրականության հետ: XIII-XIV դդ. և հետագայում լեվանտի հայ վաճառականները Զմյուռնիայում հենվում էին ջենովացիների հիմնած առևտրական կայանների վրա. նրանք Էգեյանի մատույցներ էին հասնում Հայաստանի ամենատարբեր շրջաններից՝ տեղափոխելով հումք և տնայնագործական արտադրության ապրանքներ Հայաստանից, Պարսկաստանից և փոքրասիական շրջաններից: 1261 թ. մարտի 13-ի Միքայել Պալեոլոգի և Ջենովայի միջև կնքված առևտրական պայմանագրով ջենովացիները ձեռնպահ էին մնում Կիլիկիայի հայկական թագավորության դեմ Բյուզանդիային իրենց ռազմաճակատները տրամադրելուց, որ վկայում է Ջենովայի և հայ վաճառականության տնտեսական ընդհանուր շահախնդրությունների մասին: XVI դ. վերջին և XVII դ. առաջին քառորդին պարսկական մետաքս տեղափոխող հայ վաճառականների համար Վենետիկը ստեղծեց առավելագույն բարենպաստ պայմաններ ընդհուպ մինչև մաքսադրույքների նվազագույն չափը: Տոսկանայի իշխանությունները ևս նույն ժամանակներում առևտրական կայանի հարմարություններ էին ապահովել հայ վաճառականների համար: 1646 թ. Լիվոռնոյում հանգրվանած 12 հայ խոշոր վաճառականներից երեքը զմյուռնացիներ էին, որոնք թվական տեսակետից զիջում էին միայն կեսարացի հայերին: Ինչ վերաբերում է պապական պետության և կաթոլիկական այլ երկրներում նույնպես առևտրական կայաններ հիմնելուն, ապա այստեղ դավանական անհաղթահարելի արգելքներ էր հարուցում կաթոլիկ եկեղեցու վերնախավը՝ XVII դ. երկրորդ քառորդից էլ հետո: Իտալական քաղաքներում զմյուռնահայ վաճառականներն

իրացնում էին արևելյան գյուղատնտեսական հումք՝ հում մետաքս, շերամ, մուշկ, որդան կարմիր, բամբակ, բուրդ և այլն, այսինքն իտալական արտադրության համար անհրաժեշտ ապրանքներ:

Անհրաժեշտ է մի վերապահում անել Ջմյոտնիայում բնակվող հայ վաճառականների և մյուս կողմից, առհասարակ Ջմյոտնիայում հանգրվանած և այդ նավահանգիստն իրենց առևտրական կայանը համարող ջուղայեցի, ագուլիսցի, պունեցի, նախիջևանցի, եվդոկիացի, կեսարացի, կոստանդնուպոլսեցի և այլ հայ վաճառականների վերաբերմամբ: Նրանց մի մասը հաստատվում էր քաղաքում, մերվում զմյոտնահայ կյանքին, իրականությանն ու մշակույթին: Ջմյոտնահայ վաճառականություն հասկացությունն այս կերպ ձեռք էր բերում ոչ միանշանակ, այլ հարաշարժ, զուտ այդ հասկացության սահմաններից այն կողմ անցնող, ընդհանրապես Ջմյոտնիայի առևտրական կայանի հայ վաճառականության իմաստ: Բայց մյուս կողմից կար բուն զմյոտնահայ վաճառականության խավը՝ իր հնամենի համայնքի պատկանելությամբ, տեղաբնակի բոլոր հանգամանքներով, որ և պետք է նկատի ունենալ էգեյանի այս համայնքների պատմության ուսումնասիրության որոշակի սահմաններում:

Ֆրանսիական շուկայի հետ, հակառակ իտալական առևտրահրապարակների հյուրընկալության, հայ վաճառականների փոխհարաբերությունները հարթ ու խաղաղ չընթացան: Ֆրանսիական վաճառականությունը XIX դ. առաջին կեսին առաջատար տեղերից մեկն էր գրավում լեվանտի, այս սահմաններում նաև Օսմանյան Թուրքիայի հետ առևտրում: Դրանից բխող առավելություններ ունենալով, ֆրանսիական արտաքին առևտուրը 1630-ական թթ. ձգտում էր ավելի մեծ առավելությունների՝ լեվանտում արտադրական հումքի տնօրինման ասպարեզում: Մասնավորապես Մարսելում ֆրանսիական արտադրությունը ավելի էժան հումքի ակնկալիքով չէր կարող հանդուրժել արևելյան, այդ թվում և Ջմյոտնիայի վաճառականների համար մինչ այդ սահմանված թեթև մաքսատուրքերը: Այդ նավահանգստի դռները 1634 թ. փաստորեն փակվեցին օտարների առջև՝ մաքսատուրքերի շեշտակի բարձրացմամբ: 1680-ական թթ. միայն, ընդառաջելով երկրի աշխուժացած տեքստիլ արդյունաբերության պահանջներին, ֆրանսիական կառավարությունը որդեգրեց առավել լիբերալ կողմնորոշում՝ արևելյան հումքի ներմուծման բնագավառում: Դրան համապատասխան, Ֆրանսիայում պետք է աշխուժանար նաև հայ վաճառականությունը:

XVII-XVIII դդ. գմյուռնահայ վաճառականներն ամրապնդեցին իրենց տեղը հոլանդական ապրանքաշրջանառության մեջ՝ Մարսելի նավահանգիստն օգտագործելով որպես տարանցիկ կայան: Դրան նպաստում էր հոլանդական կառավարությունը՝ ազատ առևտրի քաղաքականությամբ: Քաջալերվում էին Ամստերդամում և Անտվերպենում գործող հայ վաճառականները, որոնք գործում էին մեկուսի, հիմնականում առանց ընկերությունների և հոլանդական առևտրի ռազմավարական տեսանկյունից վտանգ չէին կարող ներշնչել: Մի հայտնի չափով այս կարծիքը հիմնավորվում էր լեվանտի ջրերում գործող հոլանդական առևտրական հզոր նավատարմի առկայությամբ, որը Հոլանդիա էր տեղափոխում հայ վաճառականների կողմից ապրանքաշրջանառության մեջ դրված արևելյան հումքը, այլև հոլանդական թեթև արդյունաբերական արտադրանքը՝ հակառակ ուղղությամբ:

Մինչև XVIII դ. վերջերը Ամստերդամում բնակվող հայ վաճառականները սերտ կապեր էին պահպանում Միմեռն, ապա Ղուկաս կաթողիկոսների հետ, իբրև Էջմիածնին պատկանող Զմյուռնիայի թեմի հավատացյալներ՝ Արևմտյան Եվրոպայում: Ամստերդամի հայկական եկեղեցին ևս պատկանում էր Զմյուռնիայի թեմին և գտնվում էր նրա հովանավորության ներքո: XVIII դ. երկրորդ կեսին հոլանդական շուկաների հետ հայերին կամրջող մետաքսի արտահանման կորուստը կործանիչ հարված հասցրեց հայ-հոլանդական տնտեսական առնչություններին: Աստիճանաբար մարեց Սպահան-Կարին-Թոքատ-Զմյուռնիա երթուղին, և այս ասպարեզում գործառող հայ վաճառականները լքեցին հոլանդական շուկան:

Քիչ են ուսումնասիրված հայ վաճառականների կապերը անգլիական առևտրի և լեվանտում գործառող առևտրական ընկերությունների հետ, մասնավորապես, Զմյուռնիայի նավահանգիստ տանող առևտրական ուղիների շրջագծում: Այդ կապերն ավելի շոշափելի դարձան XIX դ. առաջին կեսից, որ ամրապնդվում է Լոնդոնի և անգլիական առևտրական այլ կենտրոնների հետ գմյուռնահայ վաճառականների փոխհարաբերությունների փաստական նյութերով:

Համեմատաբար մշակված է Ռուսաստանի հետ գմյուռնահայ վաճառականների տնտեսական հարաբերությունների հիմնահարցը: XVII դ. երկրորդ կեսին Ռուսաստանը շահագրգռված էր պարսկական մետաքսը Կասպյան-Վոլգյան երթուղիով անցկացնելու գաղափարով, որ իրականացնելու էին հայ վաճառականները: Անգլիացիները դրան հա-

կադրեցին Հնդկաստանում հայերին առևտրական կայաններ տրամադրելու հնարավորությունը, որ, ի դեպ, ուղղվում էր նաև հոլանդական առևտրի դեմ: Հայ վաճառականները, այսպիսով, XVII-XVIII դդ. տարուբերվում էին, առ ի չգոյե սեփական ազգային պետության, որ կապաշտպաններ իրենց շահերը, մի կողմից Անգլիայի և Հոլանդիայի, և մյուս կողմից, սրանց և Ռուսաստանի մրցակցության միջև: Պետրոս Մեծի կողմից հայ վաճառականներին սիրաշահելու երևույթը դրսևորվում էր 1717 թ. հունվարի 28-ին զմյուռնացի Ապրոյան եղբայրներին նրա շնորհած արտոնությունների իրողությամբ: Վերջիններս Աստրախանով ռուսական տարածքներ էին հասցնելու պարսկական մետաքսը և այլ ապրանքներ՝ Գիլան-Աստրախան-Յարոսլավլ-Արխանգելսկ-Մոսկվա-Պետերբուրգ երթուղով: Ռուս-անգլիական մրցակցության պայմաններում հայ վաճառականների կրավորական դերը պետք է սահմանափակեր Ռուսաստանի հետ նրանց համատեղ ջանքերի գործնականությունը: Պետրոսի Կասպիական արշավանքը (1722-1723), և այնուհետև Աննա Իվանովնա կայսրուհու զիջումները Պարսկաստանին, ի չիք դարձրին հայերին տրված արտոնությունները: 1770-ական թթ. Աստրախանում բնակություն հաստատած (կամ այդ առևտրական կայանից օգտվող) զմյուռնահայ վաճառականների վերադարձը Ջմյուռնիա՝ Ռուսաստանի հետ նրանց առևտրական կապերի ջլատման հետևանքն էր: Դրան ավելացան նաև թուրք-պարսկական հարաբերությունների սրման պատճառով պարսկական հումքը Թուրքիա արտահանելու (Կ. Պոլիս-Ջմյուռնիա-Հալեպ երթուղով) խոչընդոտները: XVIII դ. երկրորդ կեսին աստիճանաբար արժեզրկվեց Սպահան-Թավրիզ-Թոքատ առևտրական ուղին: Ջմյուռնիայի հայ վաճառականների մի մասը կենտրոնացավ Այդընի, Ալաշեհիրի, Մանիսայի, Քրքադաչի և առհասարակ Էգեյանի առափնյա շրջաններում՝ բավարարելով բամբակի և բրդի հումքի տեղական և արտաքին սպառման պահանջարկը:

Բուն զմյուռնահայ համայնքում եկեղեցու մասնակցությամբ առևտրական վերնախավը կառավարում էր ազգային-ֆինանսական հաստատությունը, այսպես կոչված խորան՝ ազգային սնդուկը կամ բյուջեն: Իսկ առափնյակի գաղթօջախների համայնքային կազմակերպությունների մասին ավելի լայն պատկերացում կարելի է կազմել թանգիմաթի դարաշրջանից սկսած: 1841 թվականից դրամատերերից և մտավորականներից ընտրվում էին թվով տասը հոգաբարձուներ ու խորհրդականներ, ինչպես և հոգևորականներից՝ եկեղեցու վերատե-

սուչներ: Հոգաբարձուների այս քանակը Ձմյունիայում անփոփոխ մնաց ընդհուպ մինչև 1861 թ.՝ ազգային սահմանադրության կիրառումը համայնքներում: Թանգիմաթի դարաշրջանում այստեղ, ինչպես և Կ. Պոլսում, եկեղեցու դերի սահմանափակումն ազգային կյանքում առաջացնում էր հոգևորականության և առհասարակ հայ պահպանողականության արդարացի մտահոգությունները: Ըստ էության, նրանք հակադրվում էին եկեղեցու աշխարհիկ գործառնությունները նվազեցնելու հետամուտ օսմանիզմի գաղափարախոսական դրույթների կիրառմանը:

Որպես էջմիածնական թեմ, իր հարստությամբ և համազգային հեղինակությամբ հայտնի Ձմյունիայի առաջնորդությունը (պատահական չէ, որ Սիմեոն կաթողիկոսը դեռևս XVIII դ. երկրորդ կեսին այնպես համառությամբ էր պաշտպանում այդ թեմում էջմիածնի ավանդական իրավունքները) ազդեցիկ գործոն էր Առաքելական եկեղեցու արտատարածական գործունեության պատմության մեջ: Պատահական չէ նաև, որ Ձմյունիայի թեմի համայնքները ևս ընդգրկվեցին Դավիթ-Դանիելյան ներհակության մեջ (1801-1807)՝ կարևոր հանգուցակետ լինելով մի կողմից էջմիածնի և արտասահմանում գործառող հայ դրամատերերի, և մյուս կողմից՝ Կ. Պոլսի աշխարհիկ ու եկեղեցական վերնախավի միջև: Այս ներհակությունը բացասական նշանակություն ունեցավ Էգեյանի համայնքների համար՝ անպտուղ տարաձայնությունների անխուսափելի հետևանքներով:

Ձմյունիայի և մյուս գաղթօջախների ստեղծած մշակույթը, անտարակույս, շատ ավելի հին արժեքներ պետք է ունենա, քան ձեռագրական, վիմագրական և այլ նմուշները, որոնք մեզ հայտնի են դեռևս XVII դարից: Մասնավորապես, այս գաղթօջախները (Ձմյունիա, Այասլուք, Բերգամա, Մանիսա, Թուրգութ) մնում են հայկական միջնադարի գրչության կենտրոններից մեկը: Ամենահինը, որքան մեզ հայտնի է, Եփեսոսում (Այասլուք) 1622 թ. գրչագրված Ավետարանն է՝ իր հիշատակարանով: Ձմյունիայում ստեղծված ձեռագրերից հայտնի են նաև 1625 թվականից ավանդված և մինչև XIX դ. առաջին տասնամյակները գրչագրված մատյանները: XVII դ. Ձմյունիայում և մյուս համայնքներում ընդօրինակվել է կրոնական գրականություն՝ Ավետարան, Սաղմոսարան, Հայսմավուրք, մեկնություններ և այլն՝ արժեքավոր լրատվությամբ հագեցած հիշատակարաններով:

Շոշափելիորեն զգացնել են տալիս նաև աշխարհիկ թեմաները: 1778-1780 թթ. Ձմյունիայում ընդօրինակվեցին Կիրակոս Գանձակեցու և

Թովմա Մեծովեցու հայտնի աշխատությունները, որ Էգեյանի գաղթօջախներում առնչվում էր դպրոցի և դպրոցական գործի սկզբնավորմանը: Աշխարհիկ բովանդակություն ուներ դրանից առաջ՝ 1745-1746 թթ. Պետրոս Ապրոյանի՝ հոլանդերենից թարգմանած գրչագիր գործը, որտեղ հատկապես ուշագրավ են Էգեյանի հունաբնակ բնակավայրերին վերաբերող և պատմաճանաչողական նշանակություն ունեցող հատվածները (<<Յաղագս Մանիսայու>>, <<Յաղագս Եփեսոսի>>, <<Յաղագս Պերգամայու>>, <<Վասն լիկիացոց Իսմիռային>> և այլն): Ձմյուռնիայում իր բեղմնավոր գործունեությամբ աչքի էր ընկնում տարածաշրջանի գրչագրության վերջին ներկայացուցիչներից մեկը՝ բանաստեղծ, ուսուցիչ և թարգմանիչ Հովհան Միրզա Վանանդեցին, որն ընդօրինակել է կրոնական և աշխարհիկ բովանդակության մի շարք ձեռագրեր (Ստեփանոս Լեհացի, Պետրոս Բերդումյան, Վարդան Կրոնավոր և այլն): XVIII դ. երկրորդ կեսի՝ Ձմյուռնիայի գրչության այդ ուշագրավ փուլի պատմությունը մերձավոր աղերսներ ունի գաղթօջախներում դպրոցական գործի հաստատման հետ: Մինչև 1770-ական թթ. Ձմյուռնիայում (կարելի է կարծել՝ մյուս համեմատաբար մարդաշատ համայնքներում ևս) գործել են մասնավոր, տարրական գրագիտություն ուսուցանող դպրոցներ՝ կրթված հոգևորականների դասատվությամբ: 1762 թ. վախճանված Մեսրոպ Գանձակեցին այդպիսի վարժապետներից մեկն էր. իր դամբանականում նա հիշվում է իմացության կաթը <<ջամբող մարդկանց իբր գդայեակ>>: Դպրոցական գործի այս ավանդական հենքի վրա նույն 1770-ական թթ. պետք է կազմակերպվեր Ձմյուռնիայի հայերի առաջին կանոնավոր դպրոցը՝ ապագա Ս. Մեսրոպյան հոշակավոր վարժարանը: 1790-ական թթ. վերջերից այստեղ է դասավանդել Հ. Վանանդեցին: 1820-ականից այս վարժարանը հայտնի էր <<մայր դպրատուն>> անվամբ և նույն ժամանակներում մտել էր իր հեղինակությանը վայել կրթական կյանքի հուն: Ենթադրվում էր առափնյակի բոլոր գաղթօջախների համախմբումը Ձմյուռնիայի վարժարանի շուրջ, որ և հեռանկարում նկատի ուներ դրանցից շատերում կանոնավոր և տեղական վարժարանների ստեղծման հեռանկարը: Հ. Վանանդեցուց հետո վարժարանների (նաև իգական վարժարանի) արդիականացման համար 1830-1850-ական թթ. լուրջ գործունեություն էր ծավալել Ռ. Փափագյանը, որի տեսչության օրոք Ս. Մեսրոպյանը հասավ համազգային ճանաչման՝ նաև իր բազմալեզվյան կրթության շնորհիվ: Նույն ժամանակներում այդ դպրոցն ուներ շուրջ երեք հարյուր աշակերտ, իգականը

(նախ Սարգսյան, ապա Ս. Հռիփսիմյան անվամբ)՝ ավելի քան երկու հարյուր: Հետագայում ևս այս վարժարանները գտնվել են հայկական առաջավոր դպրոցների շարքում, հատկապես Ստ. Ոսկանյանի և Մ.Մամուրյանի տեսչության տարիներին:

Զմյուռնահայ դպրոցների պատմության մեջ հիշատակելի են Մ. Աղաբեկյանի և Մ. Մամուրյանի հիմնած Աղաբեկյան երկսեռ դպրոցը և Տ. Հ. Սավալանյանի դպրոցը (1850-ական թթ.): Դրանցից առաջինը որդեգրել էր Ժ.-Ժ Ռուսոյի մանկավարժական ուղղությունը, որը նորություն էր հայ դպրոցի պատմության մեջ:

Թանգիմաթի հրապարակումից հետո Զմյուռնիայում՝ առափնյակի այդ առաջատար համայնքում, նկատվում են հանրային կյանքի կազմակերպման ուշագրավ տեղաշարժեր: Ասպարեզ տրվեց մտավորականությանը՝ ազգային վարչության և դպրոցաշինության մեջ և այս գործում ուղղորդող գործոն դարձավ ազդեցիկ դրամատեր-մեկենասների այն խումբը, որն իր տնտեսական գործառնություններով կապված էր եվրոպական մայրաքաղաքների հետ՝ կրելով դրանց բարերար քաղաքակրթիչ ազդեցությունը: Տեղի մտավորականության հետ այս մեկենասների յուրահատուկ դաշինքը կազմակերպական ձևավորում ստացավ <<Սյունյաց ընկերության>> (1841-1849) գործունեությամբ, որ խրախուսվում էր հատկապես տրիեստաբնակ զմյուռնացիների կողմից: Վերջիններս՝ Պետրոս Յուսուֆյանը, Աբրահամ Ապրոյանը և Գրիգոր Աբելյան-Գուլասայանցը, գործում էին Կ. Պոլսից Տառնայանների, Վիեննայից՝ Հակոբ Սարգսյանի և Ռուսաստանից՝ Լազարյանների աջակցությամբ: Ընկերությունն ուներ իր կանոնադրությունը, դրա նպատակն էր ըստ ամենայնի նպաստել ազգի լուսավորական ու բարոյական առաջադիմությանը: Իր նյութական պատկառելի հնարավորություններին հենված՝ ընկերությունը բարեփոխումներ մտցրեց Զմյուռնիայի և Էգեյանի մյուս գաղթօջախների դպրոցներում: Նրա գործունեությանը, սակայն, նյութական ծանր հարված հասցրեց 1845 թ. հունիսի հրդեհը, որը մոխրի վերածեց հայկական Հայնոց թաղամասի մեծ մասը: Այս նույն ժամանակից սկսած, ընկերության ներսում ծայր առան և խորացան երկպառակությունները, որ դրսևորվեցին նրա վարչության մեջ՝ հետադիմական աշխարհիկ և կրոնական անձանց հրահրումներով: Ընկերությունը դադարեցրեց իր գործունեությունը՝ իր վերատեսուչ Ղ. Պաղազարյանի հրաժարականով:

Գործունեության շատ ավելի նեղ շառավիղներ ունեցան 1840-ական թթ. զմյուռնահայ մյուս <<Հայկազնյան>> և <<Արագածունյաց>> ընկերությունները: Առաջինն ըստ էության, հանրային գիտակցության մեջ էր մտցնում թարգմանական գրականության գեղագիտական պահանջը, որի ընդարձակումն ու բավարարումն ենք տեսնում 1860-1870-ական թթ. զմյուռնահայ թարգմանական նշանավոր դպրոցի (Մ. Մամուրյան, Գր. Չիլինկիյան, Տետեյան եղբայրներ, Մ. Նուպարյան, Գր. Մսերյան և ուրիշներ) գործունեության մեջ: Իր հերթին, <<Արագածունյաց ընկերությունը>> զգալիորեն նպաստեց Զմյուռնիայում գրատպության և մամուլի զարգացմանը:

Գրատպության սկիզբը Զմյուռնիայում սկսվում է Մահտեսի Մարկոսի գործունեությամբ (1759-1762), որի համար հիմք հանդիսացան հայկական տպագրական գործի ծավալումը Արևմտյան Եվրոպայի երկրներում, զմյուռնահայության մերձավոր շփումները մի կողմից Եվրոպայի հայ տպագրիչների, և մյուս կողմից՝ Էջմիածնի լուսավորական ընթացքի հետ: Տպագրական գործն այստեղ մի հայտնի չափով առաջ էր մղում ամերիկյան բողոքական առաքելությունը, որի տպագրական գործունեությունը Զմյուռնիայում տևեց քսան տարի (1833-1853): Իր քարոզչական բնույթի ծավալուն և բազմալեզվյան հրատարակություններին զուգահեռ, առաքելությունն այստեղ 1835-1836 թթ. տպագրեց <<Քերականութիւն անգղիերէն եւ հայերէն>> և ընթերցարան <<Հեգարան կամ առաջին կարդալու գիրք>>, որոնք, անկախ հայ հետազոտողների դավանական նախանձախնդրությունից, դրական ազդակներ տվեցին հետագա տասնամյակների լուսավորական մղումներին և այդ ոչ միայն Զմյուռնիայում, այլև ամբողջ արևմտահայ իրականության մեջ: Հարկ է նաև առանձնացնել միսիոներների կողմից Աստվածաշնչի աշխարհաբար տպագրությունը՝ Ռ.Ա. Փափագյանի թարգմանությամբ և հայագետ միսիոներ Ի. Բիկզի գործակցությամբ:

1840-1850-ական թթ. Զմյուռնիայում տպագրական գործը ընդլայնվեց նոր տպարանների հիմնադրումով, որպիսիք էին Ս. Մեսրոպյան վարժարանի տպարանը (1841), Պ. Թաթիկյան վիմագրատունը (1839-1910-ական թթ.) և Ստ. Պապոյանի տպարանը (1840-1844), որտեղ տպագրվում էր <<Արշալոյս Արարատեան>> թերթը մինչև 1844 թ.: 1840-ական թթ. տպարանների շարքում պետք է հիշել <<Արագածունյաց ընկերության>> և <<Հայկազնյան ընկերության>> տպարանները (երկուսն էլ 1843-ից):

Հայկական տպագրության պատմության մեջ իր որակներով և զմյուռնահայ մշակութային կյանքի վրա թողած ազդեցությամբ բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ Տետեյան եղբայրների հրատարակչությունը (1851-1893): Ավագ եղբոր՝ Տիգրան Հարություն Տետեյանի լայնահուն գործունեության շնորհիվ այս հրատարակչությունը լուրջ ազդակներ տվեց ոչ միայն տպագրական գործի զարգացմանը համագային չափանիշներով, այլև իր շուրջ համախմբելով կարող մտավորական ուժերին, նպաստեց պարբերական մամուլի, թարգմանական գրականության (ֆրանսերենից և անգլերենից) և թատրոնի առաջընթացին: Այդ նոր ուղղություն էր ազգային գրատպության մեջ, երբ մտածված հրատարակչական ծրագիրը իր ողջ արտադրական կարողությամբ ի սպաս էր դրվում ժամանակի հասունացած մտավոր և մշակութային պահանջմունքներին: Տետեյանների հրատարակչական գործունեությունը տեղական ամուր հիմքեր ուներ նաև զմյուռնահայ վարժարանների տեսուչ Ռ. Փափազյանի լուսավորական լայնախոհ կողմնորոշումների շնորհիվ: Ի դեպ, Զմյուռնիայում տիրող մշակութային անախադեպորեն հազեցած մթնոլորտում Ռ. Փափազյանի պատանի սաները իրենք էին գործի դնում թեկուզ և պարզունակ իրենց տպարանները՝ լույս ընծայելով սեփական մանկապատանեկան պարբերականները:

1840-1850-ական թթ. Զմյուռնիայում հրատարակվող երեք հայերեն պարբերականներից առաջինը ամերիկյան բողոքականների <<Շտեմարան պիտանի գիտելեաց>> ամսագիրն էր (1839-1854): Հանդես գալով ավետարանական կրոնաբարոյախոսության քարոզչական շրջանակներում, այս ամսագիրը չէր կարող հարմարվել ազգային դաստիարակության ավանդական սկզբունքներին, որ լիովին դրսևորվեց հայ իրականության հանդեպ նրա խմբագիրների դրսևորած կատարյալ անտարբերության մեջ: Այսուհանդերձ, ամսագիրը թեկուզ և միջնորդավորումով կամ վերապահումներով, առնչվում էր հայ հանրությանը: Այն հայ մամուլի անդաստան էր մտնում հետնամուտքով՝ իր հետ բերելով ամերիկյան լրագրության (կամ լրատվության) սկզբունքները՝ ընթերցողի համար առավել պարզ ու հասկանալի լեզուն (այս դեպքում՝ գրական աշխարհաբարը) և ապա ճանաչողական բազմաձև բովանդակությունը (բացի ավետարանական պոեմներից՝ բնական պատմություն, պատմաաշխարհագրական գիտելիքներ): Իմացության և բարոյական աշխարհի ձևավորման խնդիրները, որ այս ամսագիրը միավորում էր իր

կարճ և չհոգնեցնող հրապարակումներում, շարունակվելու էին հետագայի հայկական մանկապատանեկան մամուլում:

Զմյուռնիայում ազգային բովանդակության առաջին լրագիրը <<Արշալոյս Արարատեանն>> է (1840-1884, հիմնադիր խմբագիր՝ Ղ. Պալդազարյան), որ կանգնած է արևմտահայ մամուլի ակունքների մոտ: Հիմնականում հետևելով պահպանողական ուղղությանը, Ղ. Պալդազարյանի լրագիրը սատարում էր հայ եկեղեցուն՝ ազգապահպանության նպատակը առարկայական դարձնելով լրատվական նյութի բազմակողմանի մատուցմամբ, տեղեկատվություն տալով արևմտահայ և արևելահայ իրականության և գաղթօջախների ազգային կյանքի մասին: Ազգային եկեղեցու, որպես ազգը միավորող գործոնի կարևորությունից ելնելով, այս լրագիրը դժկամությամբ էր ընկալում նրա իրավունքները Օսմանյան Թուրքիայում սահմանափակող թանգիմաթի (այդ սահմաններում՝ արևմտահայերի սահմանադրական մտայնության) գաղափարական ուղղվածությունը: Բայց և մյուս կողմից, <<Արշալոյս Արարատեանը>> պաշտպանում էր, մասնավորապես, բավականաչափ ազատամիտ պատկերացումներ թանգիմաթով հռչակված՝ հպատակ ազգերի իրավահավասարության և քաղաքացիական այլ ազատություններին առնչվող դրույթները, թեև դրանց զուտ հռչակագրական բնույթն ու ամլությունը լրագիրը տասնամյակներ շարունակ բացահայտում էր իր էջերում: Նշանակալի չափերով թերթն արտահայտում էր գաղութահայ առևտրականության տրամադրությունները, որոնք նպաստում էին ազգային համախմբման ասպարեզում մշակույթի կարևորության վերաբերյալ նրա լայնախոհ պատկերացումներին: Այս իմաստով հարկ է առանձնացնել նրա հետաքրքրություններն ու մշտական լրատվությունը արևելահայ, ինչպես և հայ գաղթօջախների կյանքի, գործիչների ու իրողությունների վերաբերյալ:

Նույնպիսի պահպանողական ուղղություն ուներ գմյուռնահայ մյուս՝ Խ. Մելիքսեղումյանի խմբագրությամբ հրատարակվող <<Հայրենասեր>> շաբաթաթերթը (1843-1846): Այն ուներ գրեթե նույն լրատվական կողմնորոշումները, սակայն ոչ այնքան ընդգրկուն տեսադաշտով և արևելահայ կյանքի նկատմամբ առավել ընդգծված հետաքրքրությամբ: Այս լրագիրը ևս շրջանառության մեջ էր դնում առևտրական ու տնտեսական, պատմաաշխարհագրական բնույթի նյութեր, բարոյախոսական-կրոնական գրույցներ և այլն: <<Հայրենասեր>> պաշտպանում էր հայ առևտրականության շահերը՝ զուսպ քննադատելով օսմանյան կառա-

վարության տնտեսական մոտեցումները արտաքին ու ներքին առևտրի, մասնավորապես մաքսային քաղաքականության նկատմամբ: Միաժամանակ, լրագիրը խուսափում էր Արևմտյան Հայաստանի կեղեքված դրության բացահայտումներից, թուրքական ու քրդական հարստահարումների իրողությունների լուսաբանումներից: <<Հայրենասերը>> գրեթե չանդադարձավ թանգիմաթի հետ կապվող ակնկալիքներին կամ գործընթացներին, որ վկայում էր նրա էջերում առհասարակ այդ վերափոխումների հանդեպ էջմիածնական և ընդհանրապես հայ հոգևորականության բացասական վերաբերմունքի յուրահատուկ դրսևորման մասին:

Անկախ այն բանից, որ <<Հայրենասերը>> <<Արշալոյս Արարատեանի>> հետ ընդհանուր առմամբ կիսում էր նույն պահպանողական հայացքները, այս թերթերի միջև կար որոշակի հակադրություն, անգամ բանավիճային սրություն, որի հիմքը զմյուռնահայ առևտրական տարբեր խմբերի մրցակցությունն էր շուկայում և վերջին հաշվով՝ համայնքի ազգային գործերում:

Լուսավորական ուղղվածություն ուներ Տետեյան եղբայրների խմբագրած <<Արփի Արարատեան>> ամսագիրը (1853-1855)՝ եվրոպական քաղաքակրթությունը, այդ թվում և տեխնիկական նվաճումները ազգի սոցիալական բոլոր շերտերում տարածելու դեմոկրատական ձգտումներով: Ամսագիրն արտացոլում էր ուսման և կրթության ոչ միայն իմացական, այլև գործնական բովանդակության պահանջները, որ դեռևս 1830-1840-ական թթ. առաջ էր քաշել Ս. Մեսրոպյան դպրոցը տասնամյակներ առաջ կանխելով հայ մանկավարժական մտքի կողմնորոշումները: Տեսական նույն հիմքերից ելնելով՝ ամսագիրն իր գրական հավելվածներում տպագրեց Մովսեսի և Շեքսպիրի կատակերգությունները՝ հող նախապատրաստելով ազգային թատրոնի և դրամատուրգիայի հետագա զարգացման համար:

Եթե հանրագումարի բերենք զմյուռնահայ մամուլի գաղափարական ու լրատվական գործառույթը 1840-1850-ական թթ. էգեյանի հայկական համայնքներում, ապա պետք է կարծել, որ այն, ինչպես և Կ. Պոլսի ազգային թերթերն ու ամսագրերը, հաստատուն հիմքեր ստեղծեց հետագա տասնամյակների հայ հասարակական մտքի և մշակույթի արդիական դրսևորումների համար:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԸ ՁՄՅՈՒՌՆԻԱՅՈՒՄ (XVII դ. I կես-XIX դ. I կես)

Իր աշխարհագրական կարևոր դիրքի, Արևելքի և Արևմուտքի միջև առևտրատնտեսական շփումներում առանցքային դերակատարման, հատկապես լեվանտի ապրանքաշրջանառության մեջ իր ուղղորդող նշանակությամբ Ձմյուռնիան XVII դ. երկրորդ քառորդից առաջատարներից մեկը դարձավ Օսմանյան Թուրքիայի նավահանգիստների շարքում: Հիմնականում այս իրողությունը, ինչպես և Ձմյուռնիայի՝ հին աշխարհից մինչև Բյուզանդական կայսրություն, այնուհետև սելջուկներից ու բեյություններից մինչև Օսմանյան կայսրություն ձգվող պատմությունը այդ նավահանգստի վրա էր բևեռում եվրոպացի ճանապարհորդների չթուլացող ուշադրությունը ամբողջ XVII-XIX դարերի ընթացքում: Օսմանյան Թուրքիայում ճամփորդող եվրոպացիները հիմնականում ֆրանսիացիներ և անգլիացիներ էին, որ բացատրվում է XVII դարից սկսած եվրոպական ու ասիական առևտրական հանգուցային նշանակություն ձեռք բերած այդ քաղաքում նրանց երկրների արտաքին տնտեսական քաղաքականության շահագրգռություններով, ինչպես և խոշոր տեղաշարժերով՝ արտաքին քաղաքական հարաբերությունների ասպարեզում: Լեվանտական առևտրական մայրուղիներն այս իմաստով համաշխարհային առևտրաշրջանառության մեջ ստացան բացառիկ կարևոր նշանակություն՝ ընդլայնելով փոքրասիական առևտրական ոչ միայն հին, ավանդական, այլև նոր հանգրվանները: Նաև գլխավորապես սրանով է բացատրվում եվրոպական ճանապարհորդների բացարձակ մեծամասնության ամենևին էլ ոչ անձնական շահախնդրություններով կամ նախապատվությամբ, այլ որոշակիորեն ճանաչողական և հետազոտական նկարագիր ունեցող այցերը Ձմյուռնիա, և որոնք արտացոլվել են նրանց ուղեգրություններում: Առևտուր և դրա իրականացման միջավայր, տեղաբնակ ազգերի ու նրանց դավանական ինքնության նկարագիր, նրանց փոխհարաբերությունների ու տնտեսական ներուժի բացահայտում, Օսմանյան Թուրքիայի տնտեսության և կառավարման ճանաչողություն ու բնութագիր՝ ահա այն գլխավոր նպատակներից մի քանիսը, որոնց հետամտում էին եվրոպական ճանապարհորդները, ոչ քիչ դեպքերում նաև դիվանագիտական ծառայության մեջ գտնվող կամ

գտնված անձինք: Բովանդակային այս համալիրում նրանք կարևորում էին Թուրքիայում բնակվող ժողովուրդների առանձնահատկությունների, մշակույթի և զբաղմունքների վերհանումը, անցյալի պատմության և ներկա կացության բացահայտումները: Եվ այս տեսակետից ևս նրանց հետաքրքրությունների ընդարձակ շրջանակն ունի ճանաչողական ակնհայտ արժեք, կարծում ենք, հետադու բոլոր ժամանակների համար: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է զմյուռնահայ համայնքի, այդ քաղաքում կենտրոնացած հայ վաճառականության ու նրա տնտեսական գործառնությունների, տեղաբնակ հայերի ազգային ու հանրային կյանքի վերաբերյալ տեղեկատվությունն ու հայեցվածքը:

Ֆրանսիացի բազմաթիվ ուղեգրողներից, որոնք եղել են Չմյուռնիայում, առ այսօր առավել հայտնի են Թավերնիեն (1631), Թեվենոն (1656), Շարդենը (1672), Թուրնեֆորը (1700-ականի սկիզբ), Պ. Լուկան (1700-ականի սկիզբ), Ռանքոենեն (1720-ական թթ.) և շատ ուրիշներ, որոնց անունները կարելի է գտնել նաև XVIII-XIX դդ. ուղեգիրների շարքում:

XVII դ. վաղ շրջանի ականավոր ճանապարհորդներից **Ժան Բատիստ Թավերնիեն** այցելել է Օսմանյան Թուրքիայի ամենատարբեր շրջաններ, մասնավորապես փոքրասիական շրջաններում առաջին անգամ եղել է 1631 թվականին: Ֆրանսերենով տպագրված նրա ուղեգրական նոթերը անգլերեն թարգմանվել և տպագրվել են Լոնդոնում՝ 1678 թ., <<Ժ. Բ. Թավերնիեի վեց ճանապարհորդությունները>> վերնագրով¹³⁴⁸: Թավերնիեի համար թեմայի առաջնահերթություններից է Չմյուռնիայի՝ լեվանտական առևտրի կենտրոն լինելու հանգամանքը, որ, ի դեպ, որակական նոր հատկանիշներ էր ձեռք բերել XVII դ. երկրորդ քառորդից՝ կապված պարսկական հում մետաքսի և արևելյան հումքի այլ տեսակների արտահանման ասպարեզում Չմյուռնիայի նավահանգստային նշանակության ընդլայնման հետ: Ֆրանսիացի ճանապարհորդին Չմյուռնիան հետաքրքրում է նաև իր բազմացեղ ազգաբնակչությամբ, կենցաղով, զբաղմունքով և մշակույթով: Չմյուռնիայի հայ համայնքի և նրա ժողովրդագրական կացության տեսակետից կարևոր են նրա արձանագրած վիճակագրական տվյալները. Բնակչության մեծամասնությունը, ըստ նրա, կազմում են թուրքերը՝ 60 հազար, ապա հույները՝ 15 հազար, հայերը՝ 8 հազար և հրեաները՝ 6-7 հա-

¹³⁴⁸ Այստեղ օգտագործել ենք մեզ մատչելի հրատարակությունները՝ Tavernier J. B. Les six voyages en Turquie et en Perse. Francois Maspero, Paris 1981: The Six Voyages of John Baptista Tavernier, pp. 1-2, London, 1678.

զար մարդ: Հայերն ունեն մեկ եկեղեցի, հույները՝ երկու, լատինացի բնակչությունը (Ֆրանկաց թաղում)՝ երեք¹³⁴⁹:

Թավերնիեն հատուկ ուշադրություն է դարձնում Ջմյունիա տանող քարավանային ուղիներին, հայերի ծավալուն մասնակցությանը պարսկական հում մետաքսի առևտրին, ինչպես և Անգորա-Ջմյունիա առևտրական երթուղուն, ֆրանսիական մանածագործական արտադրությանը հետաքրքրող ապրանքացանկին (այծի բուրդ, կտավ, բամբակե գործվածքեղեն և այլն), կենցաղային սպառման առարկաներին (օպիում օձառ, խավարծիլ, գյուղատնտեսական այլ ապրանքներ¹³⁵⁰): Աչքի է զարնում հասարակական անվտանգության հանդեպ նրա ուշադրությունը, որ նա Ջմյունիայում անհամեմատ բարվոք է համարում, նկատելով, որ այստեղ կարիք չի զգացվում շրջել ենիչերինների ուղեկցությամբ, ինչը բացառվում էր Թուրքիայի բազմաթիվ քաղաքներում: Քաղաքի կառավարումը, հարում է նա, իրականացնում է կադին, որպես վարչական պաշտոնյա, որը <<այնքան խիստ չէր քրիստոնյաների հանդեպ, ինչպես այլ տեղերում է>>¹³⁵¹:

Փաստորեն Թավերնիեն բացահայտում է Օսմանյան Թուրքիայի վարչության ամբողջ նկարագիրը, երբ նշում է չորս կարևոր պաշտոնները՝ մեծ վեզիր, Կ. Պոլսի գայմագամ, քափթան փաշա և ենիչերի աղասը¹³⁵²: Թավերնիեն անվրեպ է նաև թուրքական բանակի ռազմահողատիրական բնույթը նկարագրելիս՝ ի դեմս գեամեթի և թիմարի տերերի. Նրանք հեծելագոր էին տրամադրում բանակին՝ իրենց հողային տիրույթների չափին համապատասխան: Նրա տեղեկությունները օսմանյան մաքսային քաղաքականության և մաքսադրույթների վերաբերյալ՝ փաստական նշանակություն ունեն XVII դ. առաջին կեսի հարկային համակարգը վերհանելու համար: Այդ տվյալները նպաստում են առավել լայն ընկալելու հայ վաճառականների գործնական հնարավորությունները Ջմյունիայի նավահանգստում: Օտարերկրացի առևտրականները, նկատում է նա, պետք է վճարեն կես ասպերս (աքչե, ֆրանսիական կես կրոնից ավելի չափով), արտասահմանի հույները՝ 350 ասպերս, իսկ Պարսկաստանից, Վրաստանից, Մենգրելիայից և այլ երկր-

¹³⁴⁹ The Six Voyages, p. 33.

¹³⁵⁰ Նույն տեղում, էջ 34:

¹³⁵¹ Նույն տեղում:

¹³⁵² Նույն տեղում, էջ 2:

ներից բեռներ տեղափոխող հայերը՝ 300 ասպերս¹³⁵³։ Այստեղ էլ գործում էին թուրք պաշտոնեության կոռուպցիայի ինքնահնար մեթոդները։ Առևտրականները, նկատում է Թավերնիեն, պետք է տիրապետեն մաքսատան աշխատողների աչալրջությունը շրջանցելու արվեստին, այդ մարդիկ 1000 էքյու էին վերցնում այն ապրանքի դիմաց, որը չարժեր անգամ 300 էքյու, նրանք բացարձակ բարձր գին էին դնում շատ ավելի էժան ապրանքների վրա¹³⁵⁴։

Ճանաչողական արժեք ունեն Թավերնիեի դիտարկումները քաղաքում հայկական, հունական և թուրքական թաղամասերի վերաբերյալ։ Հայերը, թուրքերը և հույները ապրում են բլրի վրա, հայտնում է նա, եվրոպացիները՝ ներքևում, ելքով դեպի նավահանգիստը¹³⁵⁵։ Հետևաբար, հայերը մինչև 1630-ականի սկզբները ապրել են նախնական՝ վերի թաղամասում և հետագայում են իջել քաղաքամեջ՝ ապագա Հայնոց թաղամաս։ Թավերնիեն գրում է նաև, որ Պարսկաստանից եկած քարավանները Ջմյուռնիա էին հասնում փետրվարին, հունիսին և հոկտեմբերին և մեկնում նույն ամիսներին։ <<Առևտրականները մեծ մասամբ հայեր էին, որոնք շատ էին սիրում իրենց ապրանքները վաճառել ֆրանսիացիներին, քան մեկ այլ ազգի վաճառականների, որովհետև նրանք ամեն ինչի դիմաց վճարում էին հնչուն դրամով, մինչդեռ անգլիացիներն ու հոլանդացիները նրանց հարկադրում էին ապրանքի գնի կեսը հատուցել մահուրով>>¹³⁵⁶։

1656 թ. Ջմյուռնիա է այցելել Թավերնիեի ժամանակակից մյուս ֆրանսիացին՝ **Ժան դը Թեվենոն**, որն իր հերթին տեղեկություններ է հայտնում քաղաքի առանձին հանրությունների մասին։ Թեվենոն գրում է, որ հայերը երկու եկեղեցի ունեն¹³⁵⁷, ի տարբերություն Թավերնիեի արձանագրած մեկ եկեղեցու։ Թեվենոն, իսկ նրանից փոքր-ինչ առաջ՝ դ'Արվյոն, կարծում ենք, կարող էին հայկական երկու եկեղեցի հաշվել՝ նրանց հին թաղի դեռևս գործող եկեղեցին և նոր թաղի եկեղեցին։ Դ'Արվյոն, մանավանդ, այդ եկեղեցիները հիշում է (1654 թ.) յուրաքանչյուրին հատուկ գործառությային նշանակությամբ։ Համենայն

¹³⁵³ Նույն տեղում, էջ 11։

¹³⁵⁴ Նույն տեղում, էջ 141։

¹³⁵⁵ Les six voyages, p. 138.

¹³⁵⁶ Նույն տեղում, էջ 141։

¹³⁵⁷ Տես Գալուստեան Գ.Օ., Ջմիւռնիա և Ջմիւռնիոյ հայ գաղութը, Յունահայ տարեգիրք, էջ 279։

դեպս, Թավերնիեին շուրջ երկու տասնամյակ նախորդող և հաջորդող հուշագրողները (XVII դ. 10-50-ական թթ.)՝ Սիմեոն Լեհացին, ֆրանսիացիներ դ՛Արվյոն և Թեվենոն վկայում են զմյուռնահայերի երկու եկեղեցի ունենալու փաստը, որ հնարավոր չէ հերքել:

1672 թ. գտնվելով Զմյուռնիայում, ֆրանսիացի ճանապարհորդ **Ժան Շարդենը** աչքի է ընկնում տնտեսական հետաքրքրություններով, նրա ուղեգրական նոթերի հիմքում ընկած են ֆրանսիական, անգլիական և հոլանդական առևտրական փոխհարաբերությունները (1680-1700-ական թթ.)՝ անգլիական դիվանագետ և անգլո-հնդկական ընկերության գործակալ): Գրել է <<Ճանապարհորդություն դեպի Պարսկաստան և արևելյան այլ երկրներ>> ուղեգրական երկը: Նրա իրազեկությունն ի հայտ է գալիս դեպի Զմյուռնիա փոքրասիական գյուղատնտեսական ապրանքների հոսքի և այնտեղից առևտրական նույն երթուղիներով եվրոպական ապրանքների տեղափոխության վերաբերյալ տեղեկատվության հատվածներում: Ոչ պակաս կարևոր են նրա նկարագրություններն ու տվյալները հայ վաճառականների և Հոլանդիայի առևտրատնտեսական կապերի մասին:

Կարելի է կարծել, որ անդրծովյան երկրներ տեսնելու և զգալու բավականությունն է մղել Լյուդովիկոս XIV-ի բժիշկ Պոլ Լուկային՝ XVIII դ. առաջին տասնամյակին կամ դրանից փոքր-ինչ վաղ հայտնվելու Օսմանյան Թուրքիայում: Հնարավոր է բժիշկն ունեցած լինի բնագիտական հետաքրքրություններ կամ առավել ևս, հնագիտական արժեքներին ծանոթանալու կամ դրանք ձեռք բերելու նպատակներ: Բժշկի տպագրած աշխատության Ա հատորից մի հատված է տպագրել Կ. Պոլսի <<Բիզանդիոն>> լրագիրը <<Իզմիր երկու հարիւր տարի առաջ (Լուի ԺԴ-ի բժիշկի գրքն)>> վերնագրով¹³⁵⁸: Բժիշկը ցուցադրում է իր հնասիրական հակումները, երբ նշում է, որ Զմյուռնիայում եվրոպական հյուպատոսները օրն ի բուն զբաղված են հնությունների հավաքածուներ կազմելով. <<Իզմիր դարձիս,-գրում է նա,-հետամուտ եղայ միայն շքադրամներ, ձեռագրեր և ուրիշ հնություններ հաւաքելու, զոր հեռի տեղերէն կը բերեն հոն>>: Քիչ անց նա նկատում է, որ քաղաքի շատ հնություններ անմատչելի են հետազոտողներին, որովհետև թուրքերը վախենալով դրանք, իբր, պահպանող ոգիներից և նախանձից դրդված՝ ուրիշներին էլ թույլ չեն տալիս

¹³⁵⁸ Բիզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի:

մոտենալ այդ հնություններին: Մեզ համար արժեքավորը, սակայն, Զմյոռնիայի և նրա շրջակայքի վերաբերյալ Լուկայի տեղեկություններն են քաղաքի բնակչության, թվաքանակի, բազմաթիվ շուկաների ու բեզեսթենի (ծածկած շուկա, որտեղ կատարվում էր ակնեղենի, թանկագին մետաղների և այլնի առևտուր) նկարագրությունները: Նրա տվյալներով՝ Զմյոռնիայում ապրում էին ոչ մահմեդականներից՝ 20 հազար հույն, 8 հազար հայ, ամբողջ քաղաքի 100-հազարանոց բնակչության մեջ: Հայերին նա անդրադառնում է Գյուզելիսար (Այդրն) արած իր ճամփորդության առթիվ, դիտելով, որ այդ քաղաքի հայերը <<մեծ վաճառականութիւն կընեն մետաքսի և մանածի (գործվածքեղենի-Ա. Խ.)>>: Այդ ցույց է տալիս, որ Էգեյանի առափնյակում՝ Այդրնում, ինչպես և Մանիսայում, Էոդեմիշում և այլ հայաբնակ քաղաքներում XVIII դ. առաջին տասնամյակներին հայ վաճառականությունը շարունակում էր գործել՝ Զմյոռնիայի իր հայրենակից վաճառականների հետ միասին և ինքնուրույն:

Ուշադրության արժանի են բժշկի գրառումները Զմյոռնիայում և շրջակայքում տնաշինական սկզբունքների վերաբերյալ, որ ընթերցողին ենք ներկայացրել նախընթաց էջերից մեկում:

XVII դ. ֆրանսիական մտածող ճանապարհորդների շարքը արժանիորեն լրացնում է նշանավոր հետազոտող, ֆրանսիական ակադեմիայի անդամ **Ժորժ Պիթոն Թուրնեֆորը**: Մասնագիտությամբ բուսաբան, բժիշկ և ֆիզիկոս այդ ճանապարհորդը գրել է նամականու ժանրով, Օսմանյան Թուրքիայում է եղել 1700-1702 թթ.¹³⁵⁹: Նրա գիրքը՝ <<Դեպի Լեվանտ Պիթոն դը Թուրնեֆորի ճանապարհորդության պատմությունը>> լույս է տեսել Լիոնում, 1717 թ. և աչքի ընկնում իր գիտական մեծ արժեքով, որչափով նա փայլուն կերպով է իրականացրել ֆրանսիական կառավարության առաջադրանքներն իր ուղևորության ընթացքում¹³⁶⁰: Զմյոռնիայի և կից շրջանների հայերի մասին նա ևս տալիս է բնութագրական տեղեկություններ: Ըստ նրա, Զմյոռնիայում հայերն ունեն մեկ եկեղեցի, հույները՝ երկու, հրեաները՝ ութ սինագոգ, լատինացիներ-

¹³⁵⁹ Степ Новичев А. Д. История Турции I, с. 282.

¹³⁶⁰ Գիրքը հրատարակվել է Լիոնում, 1717 թ.՝ Relation d'un voyage Levant par M. Pitton de Tournefort վերնագրով: Այստեղ օգտագործված է ֆրանսերեն հետևյալհրատարակությունը. Tournefort Jozeph P. De. Voyage d'un botaniste. II, La Turquie, La Georgie, L'Armenie. Francois Maspero, Paris, 1982.

րը՝ երեք վանք¹³⁶¹: Թուրնեֆորը թերևս միակն է ուղեգրողներից, որին հետաքրքրել են տեղական համայնքների կրոնական հաստատությունների եկամուտները: Ամենից շատ, հայտնում է նա, ստանում է հայոց առաջնորդարանը, որն ապրում է ազգի նպաստներով՝ <<Այդ նպաստները կիրակի և տօն օրերը կը հաւաքեն եւ կը հաւաստեն, թէ տարին վեց կամ եօթն քսակի կը հասնին>> (մեկ քսակը համարժեք էր 500 դուրուշի, որ բավական պատկառելի գումար էր կազմում)¹³⁶²: Քաղաքի 90 հազարանոց բնակչության մեջ հույներն ունեին 15, հայերը՝ 8 և հրեաները՝ 7 հազար մարդ, թուրքերը՝ 60 հազար¹³⁶³: Դարավերջին Ջմյունիայի բնակչության նվազելու երևույթը նա բացատրում է 1688 թ. երկրաշարժի հնարավոր հետևանքներով:

Հետաքրքիր և եզակի են Քուշադայի (Սկալա Նովա) հայերին վերաբերող նրա տեղեկությունները: Քրիստոնյաներից հույներն այստեղ ունեն 600 ընտանիք, հայերը՝ 60, ընդամենը, նա նկատում է, որ հայերը եկեղեցի չունեն¹³⁶⁴: Քուշադայում առևտրի սահմանափակությունը բացատրելով Ջմյունիայի շուկայի մեջ այդ բնակավայրի մարդկանց ներգրավմամբ, Թուրնեֆորը փոխարենը նշում է, որ Մանիսայում կատարվում է բամբակի և գյուղատնտեսական այլ ապրանքների առևտուր¹³⁶⁵, և որից, ինչպես հայտնի է, անմասն չէր նաև հայ բնակչությունը:

Իր շարադրանքում Թուրնեֆորը կանգ է առնում ֆրանս-հայկական առևտրական կապերի տեսակետից ուշագրավ՝ բերաթյը (արտոնագիր ունեցող) վաճառականների խավի վրա, որից առավելապես օգտվում էին ֆրանսիացի վաճառականները¹³⁶⁶, և որը Թուրքիայում Ֆրանսիային տրված՝ կապիտուլյացիաների ռեժիմի դրսևորումներից մեկն էր: Թուրնեֆորի պատումը առանձնանում է Ջմյունիայի և նրա շուկաների ճշմարտացի և գունեղ, միաժամանակ նուրբ դիտողականության տեր մտավորականի նկարագրություններով և ընդհանրացումներով:

Ջմյունիայի հայերի մասին բավականաչափ տեղեկություններ են տրվում ավելի ուշ շրջանի ֆրանսիացի ճանապարհորդ **Ռանքոնեի** <<Ճանապարհորդությունն ի Ջմիւնիա, յԱրշիպեղագոս եւ ի Կրետե.

¹³⁶¹ Tournefort J. P. Voyage d'un botaniste, p. 314:

¹³⁶² Մեջբերումը և բացատրությունը՝ ըստ Գալուստեան Գ. Օ., նշվ. աշխ., էջ 282:

¹³⁶³ Նույն տեղում, էջ 313:

¹³⁶⁴ Tournefort J. P., նշվ. աշխ., էջ 328:

¹³⁶⁵ Նույն տեղում, էջ 312-313:

¹³⁶⁶ Նույն տեղում, էջ 316:

1821-1824>> գրքում, որից մի հատված, առանց այլ մատենագիտական տվյալների, թարգմանվել է հայերեն՝ Ձմյուռնիայում (Բուռնովա արվարձանում) և ներկայումս պահվում է Մաշտոցյան Մատենադարանի Մարկոս Աղաբեկյան արխիվում (թղթ. 189, վավ. 65): Այս ճանապարհորդը ևս, ֆրանսիական ուղեգրողներին հատուկ լայն դիտողականությամբ ունի (<<փողոցքն նեղ են և լի աղտեղութեամբ, եւ տունքն շինեալք ի կաւոյ յաղիւսոյ թրծելոյ եւ ի փայտէ, ուր յաճախ լինին հրդեհք>>), միաժամանակ նշելով, որ այք են շոյում արևելյան ապրանքներով լեցուն բազմաթիվ շուկաները: Քաղաքի թաղամասերն իրենց առանձին համայնքներով իրարից բաժանված էին կրկնակի դարպասներով, որոնք փակվում էին երեկոները: Հեղինակը քիչ հայտնի տեղեկություններ է հաղորդում քաղաքի վարչության մասին, նշում է, որ քաղաքը վայելում է վալիդե սուլթանուհու (սուլթանի մոր) հովանավորությունը, այստեղ է գտնվում գորահրամանատարի (մյուսելլի) նստավայրը, որն անկախ է մերձակա քաղաքների փաշաներից և որին անձամբ նշանակում էր սուլթանը: Մյուսելլիմին էին ենթակա ենիչերիների ջոկատները <<բազումս եւ խռովայոյզս որք զոր ի հանապազ ի խնդիր են աղմկաց եւ աւարառութեանց>>: Ռանքոենէին առավել հետաքրքրողը Ֆրանկաց թաղն է (Ֆրանկ մահալլեսի)՝ իր ակումբով ու խաղատնով, շվայտ երիտասարդներով ու բաց բարձրերով: Այդ թաղի բնակիչները (որոնք հայտնի էին լատինացիներ անվամբ), ծագումով ֆրանսիացի, անգլիացի, հոլանդացի և գերմանացի էին, որոնց հեղինակն անվանում է <<արևելյան ֆրանկներ>>՝ 5-6 հազար մարդ, որոնք ծնվել էին Թուրքիայում: Ռանքոենէն քիչ է անդրադառնում քաղաքի կրոնական փոքրամասնություններին և այս տեսակետից ժլատ հեղինակը այդ լրացնում է քաղաքին կից ամառանոց արվարձանների (Բուռնովա, Սեվտի քյոյ, Պուձա, Քուքլուձա), Հին աշխարհի պատմության հետ կապվող հնությունների և իհարկե, ֆրանսիական առևտրի վերաբերյալ ծանոթություններով:

XVII դարից հայտնի են անգլիացի բազմաթիվ ճանապարհորդների այցելությունները Ձմյուռնիա, որոնք իրենց առջև դրել են, ինչպես և եվրոպական ճանապարհորդների մեծ մասը, ճանաչողական, և առաջին հերթին, իրենց երկրի առևտրական քաղաքականությանն առնչվող խնդիրներ: 1610-ական թթ. սկզբներին Ձմյուռնիա է այցելել անգլիացի **Ջորջ Սանդին**՝ հետամտելով վերհանել Օսմանյան Թուրքիայի օրենսդրական և կառավարման համակարգը, ինչպես և առևտուրն ու արդա-

րադատությունը¹³⁶⁷: Սանդին Ջմյունիայում է եղել ջալալի Քալդենդեր օղլուի ապստամբությունից հետո, երբ այդ քաղաքում առևտուրը նոր միայն սկսել էր վերականգնվել: Ջմյունիայի հիմնական արտադրանքը նա համարում է բամբակն ու բուրդը, որ շուկա է հանվում մեծ քանակությամբ: Ջալալիների կողմից Ջմյունիայի նավահանգստի պաշարումը և անգլիական առևտրանավերին վնասներ հասցնելու փաստերը մեզ հետաքրքրում են դեպի Ջմյունիա հայերի հերթական գաղթի հնարավորության տեսակետից: Նրանք այստեղ կարող էին հայտնվել (Սյունիքից և Արևելյան Հայաստանի այլ գավառներից) 1610-ական թթ. երկրորդ կեսին միայն՝ տարածաշրջանը մինչ այդ ջալալիական հուզումներով բռնված լինելու պատճառով: Սանդին անուղղակիորեն հաստատում է այս կարծիքը, նկատելով, որ ապստամբությունների պատճառով Ջմյունիայի ազգաբնակչության մեծ մասը հեռացել էր այրված քաղաքից¹³⁶⁸:

Անգլիացի մեկ այլ ճանապարհորդ՝ **Ուիլյամ Լիթգոուն**, նույն տասնամյակին իր արևելյան ճանապարհորդության ընթացքում այցելելով Կանդիա, Հունաստան, Երուսաղեմ և հանգրվանել է նաև Ջմյունիայում¹³⁶⁹: Նա ուշադրություն է դարձրել առևտրական շրջանառության մեջ ներգրավված հիմնական ապրանքներին, ինչպիսիք էին նուրբ մետաքսը, բրդե-բամբակյա տարատեսակ գործվածքեղենը: Այս նավահանգստում կատարվող միջազգային առևտրի ծավալների նկարագրությամբ Լիթգոուն ցույց է տալիս, որ դրանից առաջ էլ Ջմյունիան իրականացնում էր Արևելք-Արևմուտք ապրանքափոխանակության կենտրոնի գործառույթը, որը, ինչպես հայտնի է, շեշտակիորեն պետք է բարձրանար XVII դ. երկրորդ քառորդից: Նկատենք, որ ճանապարհորդը մատնացույց է անում փոքրասիական արևմուտքի բամբակագործական արտադրանքի նկատմամբ եվրոպական շուկաների բարձր պահանջարկը¹³⁷⁰:

Տեղեկատվության հարստությամբ և սթափ ընդհանրացումներով առավել աչքի են ընկնում անգլիական արտակարգ դեսպանի քարտու-

¹³⁶⁷ Sandy's Travels Containing an History of the Original State of the Turkish Empire, London, 1673. Տես նաև Armenians in the Ottoman Empire, p. 69.

¹³⁶⁸ Sandy's Travels, p. 12.

¹³⁶⁹ Hakluytus Posthumus or Purchas his Pilgrimes. Vol. 10, Glazgow, MCMV, James Maclehose and Sons.

¹³⁷⁰ Նույն տեղում, էջ 475:

դար, ապա Զմյուռնիայում անգլիական հյուպատոս **Պոլ Ռայկոտի (Ռիկո)** հուշագրական նոթերը: Այս հեղինակը Թուրքիայում է եղել 1660-1670-ական թթ., նրա դիտարկումները լույս են տեսել իր դիվանագիտական ծառայությունից ոչ շատ հետո և ունեն հավաստի սկզբնաղբյուրի նշանակություն¹³⁷¹: Այստեղ միայն նկատենք, որ Ռայկոտը սթափ վերլուծություններ ունի երկրի տնտեսության, ֆինանսների, բանակի, կրոնական քաղաքականության, վարչաձևի և այլնի վերաբերյալ: Ուշագրավ են նրա տեղեկությունները իրեն մեսիա հռչակած Սաբեթա Սեվիի (Յվի) միջադեպի (1666), նրա կենսագրական ու Զմյուռնիայի հրեական միջավայրի հանգամանքների բացահայտումներով: Հեղինակը որոշ դեպքերում անդրադառնում է Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունների կյանքի առօրեական հանգամանքներին, հիշում է նաև հույն և հայ մեծահարուստներ Պանայոտիին ու Ապրո Չելեպիին, նշում, որ վերջինս պատկառելի գումարներ էր ներդրել իր համայնքում եկեղեցիներ կառուցելու համար¹³⁷²:

Զմյուռնիայում ենիչերիների անսանձ կամայականության մի պատկեր ենք տեսնում անգլիացի ճանապարհորդ **Ջոն Հոփհաուզի**¹³⁷³ ուղեգրական հրատարակության մեջ՝ ճամփորդել է 1809-1810 թթ.: Իրենց ծառայակցի սպանության դիմաց ենիչերիները կրակի էին տվել Ֆրանկաց թաղը (այս հեղինակը նկատի ունի 1799 թ. իրադարձությունները), այնուհետև իրենց վրեժխնդրությունը թափելով քրիստոնյա հույների ու հայերի վրա և 300 մարդ սպանելով փողոցներում¹³⁷⁴:

Ազգագրական և առևտրական լրատվության բնույթ ունեն անգլիացի ճանապարհորդ **Հենրի Դիլլբորնի** գմյուռնական տպավորությունները: Ահա և հայկական ու հունական տների նկարագրությունները՝ փայտաշեն, մինչև եռահարկ, դրանց վերին հարկերը սեղմ մոտենում են դիմացի տանը՝ <<մի փոքր տարածություն թողնելով փողոցներից թափանցող

¹³⁷¹ Rycaut P. (Late Consul of Smyrna). The History of the Turkish Empire from the Year 1623 to the Year 1677. London, MDCLXXX. Այս հեղինակի գիրքը ֆրանսերեն է հրատարակվել 1670 թ., Փարիզում (տես Անապյան Հ. Ս., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 12): Ռայկոտի վերաբերյալ համառոտ տեղեկությունները, որ մենք նշել ենք վերը, տես Новичев А. Д., նշվ. աշխ., էջ 281:

¹³⁷² Rycaut P., նշվ. աշխ., էջ 279-280:

¹³⁷³ Armenians in the Ottoman Empire, p. 155.

¹³⁷⁴ Նույն տեղում, էջ 155:

լույսի համար՝ մոտ վեց ոտնաչափ բարձրությունից¹³⁷⁵>>: Հույներն ունեն երկու, իսկ հայերը մեկ եկեղեցի՝ ճոխ ոսկեգօծված որմնանկարներով: Հետաքրքրական է Ջմյունիայում առկա մաքսային քաղաքականության՝ XIX դ. սկզբի պատկերը, որ բացահայտում է սեփական առևտուրը կաշկանդող իրողությունը. օտարերկրացիները, արձանագրում է նա, վճարում են ապրանքի արժեքի մեկից մինչև երեք տոկոսը, թուրքերը՝ չորս, հայերն ու հույները՝ հինգ կամ վեց¹³⁷⁶:

Հ. Դիբրոբորնի՝ տների նկարագրությանը կարելի է համադրել անգլիագիր մեկ այլ ճանապարհորդի՝ **Ջոն Լ. Ստեֆենսի** ուրվագծերը¹³⁷⁷ հայկական թաղամասի վերաբերյալ (Ջմյունիայում է եղել 1835 թվականին): Այդ թաղամասը, գրում է նա, Ջմյունիայում ոճով և տեսքով գերազանցում է յուրաքանչյուրին, <<նրանց փողոցներն ընդարձակ են և բարեկարգ, տները մեծ են և կանոնավոր... իրենց արևելյան ճարտարապետությամբ, լայն պատշգամբներով և վանդակաճաղ պատուհաններով>>¹³⁷⁸:

1830-ական թթ. ճանապարհորդների մեջ զմյունաբնակ համայնքների տնտեսական կյանքի նկարագրությամբ առանձնանում է **Ֆրենսիս Հարվեն**: Ջմյունիայի հայերի և հույների առևտրատնտեսական կապերին անդրադառնալով, նա նկատում է, որ նրանք իրենց առևտրական գործարքներն իրականացնում են Լոնդոնում, Մարսելում, Փարիզում, Տրիեստում և այլուր: Նա շոշափում է, ի դեպ, հայագիտությանը քիչ ծանոթ՝ զմյունացի հայ կաթոլիկների տնտեսական գործունեությանը, որտեղ, չնայած ուղեգրողի հպանցիկ անցումներին, ի հայտ է գալիս իրենց ազգությունից նրանց հեռանալու և օտարերկրացի դավանակիցներին ձուլվելու հանգամանքը: <<Երբ ես ապրում էի այնտեղ (Ջմյունիայում-Ա.Խ.), Բսավերդենց ֆիրման կատարում էր իր առևտրական գործարքներն ամենալայն չափերով, անում էր իր խոշոր գործարքները: Ձեռնարկի գլուխ էին կանգնած հայերը, թեև ներկայումս նրանք իրենց համարում են ֆրանկներ: Բայց եղբայրները (Բսավերդենց) շուտով բաժանվեցին, ընկերությունը կիսվեց երկու տարբեր ֆիրմաների միջև>>¹³⁷⁹:

¹³⁷⁵ Նույն տեղում, էջ 169:

¹³⁷⁶ Նույն տեղում:

¹³⁷⁷ Նույն տեղում, էջ 243:

¹³⁷⁸ Նույն տեղում:

¹³⁷⁹ Նույն տեղում, էջ 270:

Հետաքրքիր է, որ խոսքը վերաբերում է Նախիջևանի Խոշկաշեն գյուղաքաղաքից հայտնի Իսավերդենց ընտանիքին, որից սերում էր Թովմաս Իսավերդենցը՝ Նախիջևանի հայ կաթոլիկների առաջնորդը և Դոմինիկյան միաբանության անդամը: 1747 թ., ինչպես տեսանք, նա կազմակերպել էր իր համայնքի գաղթը Ջմյունիա, որի պատճառն էին եղել պարսկական ծանր հարկահանումները:

Այս հեղինակների մեջ Ջմյունիայի ազգաբնակչության ընդհանուր թվի վերլուծական դիտարկումներով առանձնանում է **Ֆ. Ռանդելի** գիրքը¹³⁸⁰: Մասնավորապես, ուշադրություն են գրավում հեղինակի քննադատական վերաբերմունքն ու դիտողությունները XVII-XVIII դդ. Ջմյունիա այցելած եվրոպացի ճանապարհորդների վիճակագրական տվյալների նկատմամբ: Նա համեմատում է քաղաքի ազգաբնակչության թվաքանակը (ընդհանուր և մասնակի՝ ըստ համայնքների) ցուցադրող ճանապարհորդներ դը Լա Մոտրեի (1699), Թուրնեֆորի (1701), Պոկոկի (1740), Ստյուարտի (1788), Դալավելի (1795) և ավելի ուշ շրջանի հեղինակների տվյալները՝ նրանց հաշվարկների հակասականությամբ հանդերձ, ցույց տալով, որ շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում (1699-1795) Ջմյունիայի ազգաբնակչության ընդհանուր թիվը 24 հազարից հասել է 130 հազարի¹³⁸¹: Ավելի ուշ հանդես եկած ճանապարհորդ **Ռ. Չեսնեյը** (Ջմյունիայում է եղել 1835-1837 թթ. ճանապարհորդությունների ընթացքում) իր քառահատոր գրքում քաղաքի բնակչությունը հաշվում է շուրջ 130 հազար մարդ, մոտ 70 հազարը՝ թուրք, 30 հազարը՝ հույն, 12 հազարը՝ իսպանական հրեաներ, 7 հազարը՝ հայ¹³⁸²: 1830-ական թթ. մեկ այլ ճանապարհորդ՝ վերոհիշյալ Ֆ. Հարվեն, ավելի է ընդլայնում այս ցուցանիշները՝ Ջմյունիայի ազգաբնակչության ընդհանուր թվաքանակը հասցնելով 150 հազարի և հետաքրքիր լուսաբանումներ անելով քաղաքի կրոնադավանական հատկանիշներով առանձնացող թաղամասերի (թուրքեր, հույներ, հրեաներ, հայեր, ֆրանկներ) մասին¹³⁸³: Ասվածից որոշ տարբերություններով իր տվյալներն է ներկայացնում, ի դեպ, ֆրանսիացի **Ժ.-Պ. Դեբբինը** 1845 թ. հրատարակված երկհատոր գրքում, բնակչության ընդհանուր թիվը նա ամրագրում է 145 հազար, որից 80 հազարը՝ թուրք, 35 հազարը՝ հույն, 15 հազարը՝

¹³⁸⁰ Նույն տեղում, էջ 232:

¹³⁸¹ Նույն տեղում:

¹³⁸² Նույն տեղում, էջ 265:

¹³⁸³ Նույն տեղում, էջ 269:

հրեա, 10 հազարը՝ հայ և 50 հազար՝ քրիստոնյա այլ ազգաբնակչություն¹³⁸⁴։

1845 թ. հրատարակած իր գրքում անգլիացի **Վալշը** ակնհայտորեն նվազեցնում է Ձմյունիայի ազգաբնակչության ընդհանուր թիվը՝ հաշվելով ընդամենը 100 հազար մարդ և խուսափելով այդ թիվն ըստ համայնքների տրոհելուց։ Այստեղ մեզ առավել հետաքրքրում է Աքհիսարի բնակչությանը վերաբերող՝ նրա տեղեկատվությունը, ընդամենը 6-7 հազար մարդ, որից 1500-ը՝ հույներ և հայեր¹³⁸⁵։

Ձմյունիայի նավահանգստի առևտրական կացության և առհասարակ օսմանյան ու միջազգային տնտեսական նշանակության ոչ պակաս հետաքրքրական ծայրեր են բացահայտվում ռուս ճանապարհորդների և մասնագետների գրառումներում։ XVIII դ. երկրորդ կեսի ճանապարհորդ **Սերայիոնը** Ձմյունիայի նավահանգստի եռուզեղը պայմանավորում էր երթևեկ բազմաթիվ օտարերկրյա առևտրանավերով, որոնք այստեղից մեկնում էին Կ. Պոլիս և այլ ուղղություններով¹³⁸⁶։ Ճանաչողական տեսակետից ուշագրավ են 1740-ական թթ. Կ. Պոլսում ռուսական գործակալ **Ն. Դ. Նեպյունի** տեղեկությունները քաղաքի առևտրական շրջանառության, առևտրատեսակների, ներմուծվող և արտահանվող ապրանքների, ինչպես և Պարսկաստանից Ձմյունիա ձգվող քարավանային (ցամաքային) ուղիների և դեպի մերձավորարևելյան տարածքներ տանող ուղիների վերաբերյալ։ Իր տեղեկագրում Ն. Նեպյունը Ձմյունիան դասում է օսմանյան առաջնակարգ նավահանգիստների շարքում՝ (Կ. Պոլսի, Սալոնիկի, Հալեպի և Կահիրեի հետ միասին), միաժամանակ այն համարելով ասիական և եվրոպական ապրանքների ամբարանոց։ Աչքի են ընկնում փաստականորեն հագեցած տվյալները զմյունաբնակ եվրոպական համայնքների, անգլիական լեվանտական առևտրական ընկերության և դրա առանձնաշնորհումների մասին¹³⁸⁷։

Ասվածին անմիջականորեն առնչվում է Օսմանյան Թուրքիայում Պետրոս Մեծի դեսպան **Պ. Ա. Տոլստոյի** լայն իրազեկությամբ առանձնացող տեղեկագիրը (XVIII դ. սկիզբ)։ Պ. Տոլստոյի նկարագրությունները շոշափում են Եվրոպայի հետ առևտրի, Թուրքիա ներմուծվող ապրանքների, պարսկական մետաքսը դեպի սնծովյան առևտրական ուղիներն

¹³⁸⁴ Նույն տեղում, էջ 330։

¹³⁸⁵ Նույն տեղում, էջ 352։

¹³⁸⁶ Даниел Б. М. Русские путешественники на Ближнем Востоке, с. 73.

¹³⁸⁷ Նույն տեղում, էջ 79-80։

ուղղելու, այս ասպարեզում հայ վաճառականների գործառույթի և այլնի մասին: Դեսպանի տեղեկությունների մեջ ուշագրավ են նաև հոլանդական առևտրի, Թուրքիա ներմուծվող հոլանդական, իտալական և անգլիական ապրանքների տեսականու վերաբերյալ մտքերը, որոնք բնականաբար, պետք է գոհացնեին ռուսաց կառավարության հետաքրքրությունները արտաքին քաղաքականության ոլորտում¹³⁸⁸: Պ. Տոլստոյի հաղորդումներում իրենց տեղն ունեն այդ նույն հետաքրքրություններից բխող տվյալները, որպիսիք առնչվում են թուրքական նավատորմին և Էգեյանի առափնյակին, որոնք գտնվում էին քափթան փաշայի իրավասության ներքո:

Եթե հանրագումարի բերենք եվրոպական տասնյակ ճանապարհորդների՝ Զմյուռնիայի ազգաբնակչության վերաբերյալ տվյալները, ականհայտ է, որ սկսած Թավերնիեից (1631)՝ նրանց հաշվումներով Զմյուռնիայի հայերի թիվը տատանվում է հիմնականում 7-10 հազարի միջև, և հասկանալի է, որ այս դեպքում դժվար է նրանցից ճշգրտություն ակնկալելը, ինչպես, ի դեպ, առհասարակ ուղեգրական գործերից: Ճանապարհորդներից ոմանք օգտագործում են հին և հայտնի տվյալները, ոմանք հենվում են բանավոր տվյալների վրա, ոմանք՝ մոտավորապես համադրելով մատչելի կամ պատրաստի թվերը: Մնում է, մանավանդ արխիվային վավերագրական նյութերի բացակայության պայմաններում, խորապես շնորհակալ լինել ճանապարհորդներին՝ անգամ նրանց տրամադրած մոտավոր տվյալների համար:

¹³⁸⁸ Стu Русский посол в Стамбуле, М., 1985.

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան

Զեռագրեր 1709, էջ 108բ, 2803, էջ 498, 429, 2718, էջ 77, 76, 76ա, 2243, 7002, 6332, էջ 215/ա, 216, 4331, 4669, էջ 211/բ, 842, էջ 142/ա

Ղ. Փիրղալեյանի հավաքածու 6332, էջ 204, 215/ա-216, 5817, էջ 84բ, 9656, էջ 93ա, 4515:

1027/2, էջ 6/ա, 4669, էջ 211/բ, 2129, էջ 29/ա, 51/ա, 805, էջ 45/բ, 91/բ, 2129, էջ 51/ա, 9695, էջ 39/բ, 1709, էջ 108/բ, 407, էջ 3/բ, 842, 146, 146/ա, 142/ա, 8/բ, 8634, էջ 2/ա, 3/ա, 927, 4605, 2718, էջ 76-77/ա, 163, 3736, 4855, էջ 234/ա, 2716, 3312, էջ 2, 3370, էջ 2/

Արշակ Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 7, վավ. 17/1

Անհատական արխիվների ֆոնդ, թղթ. 240, վավ. 6, 11

Արխիվ Ալեքսանդր Երիցյանի, թղթ. 148, վավ. 102

Արխիվ զանազան հեղինակների, թղթ. 48, վավ. 45

Արխիվ Իզմիրլյան կաթողիկոսի, թղթ. 10, վավ. 31, 32

Արխիվ Հարություն Աբրահամյանի, թղթ. 98, վավ. 148

Արխիվ Մարկոս Աղաբեկյանի, թղթ. 189, վավ. 65

Արխիվ Մսերյանների, թղթ. 206, վավ. 1479, 1482, թղթ. 205, վավ. 955, թղթ. 199, վավ. 382

Արխիվ Ներսես Աշտարակեցու, թղթ. 165, վավ. 731, 165, 408, 810, թղթ. 166, վավ. 161

Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163, վավ. 369, թղթ. 163/բ, վավ. 786, 760

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 52, թղթ. 243, վավ. 22, 51, 59, 92, 148, 155, 239, 1481, թղթ. 242, վավ. 59, թղթ. 167, վավ. 447, 448, 509, թղթ. 248, վավ. 1090, թղթ. 48, վավ. 221, թղթ. 273, վավ. 75, թղթ. 29, վավ. 133, 151, 160, թղթ. 22, վավ. 134, թղթ. 38, վավ. 108/ա, 108/բ, թղթ. 17, վավ. 137, թղթ. 51, վավ. 2, 156, 197, թղթ. 166, վավ. 161, 162, թղթ. 47, վավ. 137, թղթ. 54, վավ. 293, թղթ. 2, վավ. 12, թղթ. 5, վավ. 32, թղթ. 6, վավ. 40, 41, 46, թղթ. 11, վավ. 92, թղթ. 22/բ, վավ. 52/ա, թղթ. 36, վավ. 4, թղթ. 121, վավ. 82, թղթ. 6, վավ. 61, 71, թղթ. 9, վավ. 125, թղթ. 34, վավ. 269, թղթ. 169/ա, վավ. 70, թղթ. 119, վավ. 394, թղթ. 14, վավ. 56, թղթ. 18, վավ. 133, թղթ. 52, վավ. 413, թղթ. 221/բ, վավ. 52, թղթ. 165, վավ. 175, թղթ. 9, վավ. 125, թղթ. 137, վավ. 101, թղթ. 129, վավ. 45, թղթ. 145, վավ. 229, թղթ. 137, վավ. 15, թղթ. 6, վավ. 77, 71, 89, թղթ. 13, վավ. 264, թղթ. 13, վավ. 262, 263, թղթ. 18, վավ. 108, 133, թղթ. 52, վավ. 413, էջ 1/ա, 3, թղթ. 89, վավ. 252, թղթ. 110, վավ. 100, թղթ. 121, վավ. 92, թղթ. 129, վավ. 194, թղթ. 152, վավ. 98, թղթ. 149, վավ. 816, թղթ. 137, վավ. 45

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ g. 2, գ. N 108

Հիշատակարաններ

Աճառեան Հ., Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Բայազետի, Հանդէս ամսօրեայ, 1913, թիւ 10, էջ 627-638:

Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դարի, հ. Ա (1601-1620) կազմ. Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Ե., 1974, հ. Բ (1621-1640), կազմ. Հակոբյան Վ., Ե., 1978, հ. Գ (1641-1660), կազմ. Հակոբյան Վ., Ե., 1984:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի, հ. Ա, կազմ. Սիրմէեան Ա., Երուսաղէմ, 1948:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, Ե., <<Նաիրի>> հրատ., 2008:

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, կազմ. Սարգիսեան Բ., Վենետիկ, 1914, հ. Գ, կազմ. Սարգիսեան Բ., Սարգիսեան Գ., Վենետիկ, 1966:

Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, կազմ. Պողարեան Ն., Երուսաղէմ, հ. Բ, 1967, հ. Գ, 1954, հ. Դ., 1969, հ. Թ, 1979:

Տ. վ. Պ[ալեան], Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Լուսատրիչ եկեղեցոյն Վերի թաղի ի Մաղնիսա, Արեւելեան մամուլ, 1897, 15 օգոստոսի, էջ 553-555:

Տայեան Ղ., Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ ի Ս. Ղազար, 1707-1773, Վենետիկ, 1930:

Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հ. Բ, կազմ. Ալիխեան Ն., Ոսկեան Հ., Վիեննա, 1971:

Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, կազմ. Աճառեան Հ., Վիեննա, 1910:

Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիա եւ ի շրջակայս նոցին: Նկարագրեց Տ. եպ. Պալեան, կազմեց Տէր-Վարդանեան Գ., Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի, կազմեց Կարինէ Աւետեան, <<Քննասէր>> հրատ., Ե., 2002:

Յուցակ հայերէն ձեռագրաց Ղալաթիոյ մատենադարանի հայոց, կազմ. Կիւլէրեան Բ., Անթիլիաս, 1961:

Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմ. Ս. Տէր-Ավետիսեան, Վիեննա, 1977:

Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, կազմ. Ոսկեան Յ., Վիեննա, 1963, հ. Գ, Վիեննա, 1983:

Այլ սկզբնաղբյուրներ

Աղբիւր ազգային արդեան պատմութեան, Կոռնկ հայոց աշխարհին, 1863, թիւ 9, էջ 662-684:

Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, Ամսրելօղամ, 1669:

[Բարխուտարեան Մ.], Վիճակագրութիւն, Արեւելեան մամուլ, Ջմիտնիա, 1879, յունուար, էջ 379, փետրուար, էջ 393-96, մարտ, էջ 435-440:

Դիմաքսեան Հ., Շիրք մ'անունք ի Միջերկրականէ, Կ. Պոլիս, 1878:

Դիվան հայոց պատմության, աշխատասիր. Գրիգորյան Վ., հ. Ա, գիրք 1, Ղուկաս կաթողիկոս Կարնեցի, Ե., 1984:

Դիւան հայոց պատմութեան, հրատ. Աղանեանց Գ., Թիֆլիս, Գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը, 1894 թ.: Գիրք Դ, Ղուկաս կաթողիկոս (1780-1800), 1899 թ.: Գիրք Զ, մասն առաջին, 1904 թ.: Գիրք Ե, մասն երկրորդ, Դավիթ կաթողիկոս, 1909 թ.: Գիրք Ը, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը (1766-1776), 1908 թ.: Գիրք ԺԱ, մասն երրորդ, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը (1777-1779), 1913 թ.: Գիրք Թ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն առաջին (1778-1800), 1911 թ.: Գիրք Ժ, ԺԵ-ԺԹ դարեր, 1912 թ.: Գիրք ԺԱ, մասն երրորդ, 1777-1779, 1913 թ.:

Երեմիա Չելեպոյ Սպամպոյոյ պատմութիւն, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1909, թիւ 4, էջ 97-103:

Երեմիա Քեսովիքեան, Պատմութիւն համառօտ Դճ տարւոյ օսմանցոց թագաւորացն, աշխատասիր. Ժ. Մ. Ավետիսյանի, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982:

Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Ե., Արմֆան հրատ., 1938:

Զաքարիա Սարկաւազի պատմագրութիւն, հ. 1-2, Վաղարշապատ, 1870:

Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղէմ, 1871:

Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, կազմ. Սաֆրաստյան Ա. Խ., Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1961:

Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ, Երուսաղէմ, 1915:

Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի, Կոունկ հայոց աշխարհին, Թիֆլիս, 1863, N2, էջ 92-112, N3, էջ 181-212:

[Լուկա Պ.], Իզմիր երկու հարիւր տարի առաջ, Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1909, 24 դեկտեմբերի:

Խաչատուր աբեղայ Զուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:

Հակոբյան Հ., Ուղեգրություններ (1808-1820), հ. Զ, Ե., 1934:

Հայոց նոր վկաները, կազմ. Մանանդեան Յ., Աճառեան Հ., Վաղարշապատ, 1902:

Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1956:

Յովհաննէս Հաննայ, Գիրք պատմութեան Սրբոյ և մեծի քաղաքի Երուսաղէմիս... Կ. Պոլիս, 1767:

Յովհաննէս Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիր. Բ. Չուգասյանի, Ե., 1974:

Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար, ժողովեաց Երիցեանց Աղ., Թիֆլիս, 1877:

Պերպերեան Ա., Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1871:

Սաւալանեան Տ., Կենսագրական յուշեր, Գահիրէ, 1900: Սիմէոն դարի Լեհացոյ Ուղեգրութիւն, հրատ. Ակինեան Ն., Վիեննա, 1936:

Միմեն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, Թարգմ., առաջար. և ծանոթագր. Վ. Գ. Համբարձումյանի, <<Մուղնի>> հրատ., 2003:

Միմեն կաթողիկոս, Ջամբո գիրք որ կոչի Յիշատակարան, Վաղարշապատ, 1873:

Аграрный строй Османской империи XV-XVII вв. Сост., перевод и коммент. Тверитиновой А. С. М., изд. Восточной литературы, 1963.

Армяно-русские отношения в XVII веке. Сб. документов (под ред. Парсамяна В. А.). Е., АН Арм. ССР, 1953.

Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб. документов, т. II, ч. I (под ред. Иоаннисяна А.), Е., АН Арм. ССР, 1964.

Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сб. документов, т. II, ч. II (под ред. Иоаннисяна А.), Е., АН Арм. ССР, 1967.

Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века. Сб. документов, т. III (сост. Восканян В., Галустян Дж., Мартirosян В.), Е., АН Арм. ССР, 1978.

Армяно-русские отношения в XVIII веке. 1760-1800 гг., т. IV. Сб. документов (под ред. акад. АН Арм. ССР М. Г. Нерсисяна), Е., АН Арм. ССР, 1990. Книга законов султана Селима I. Публ. текста, перев., коммент. и предислов. Тверитиновой А. С., М., “Наука”, 1969.

Март Н. Я. Список рукописей Севанского монастыря, М., 1892.

Русский посол в Стамбуле, М., “Наука”, 1985.

Armenians in the Ottoman Empire. An Antology of Transformation 13th-19 th Centuries. Edited with an Intoduction and Notes by V. Gazazian. Waltham, 1997.

Handbook for Travellers in Turkey in Asia. London, 1872.

Memories of Baron de Tott, Vol. II, New York, 1973.

Naima. Annal of the Turkish Empire. From the 1591 to 1659 of the Christian Era. New York, 1973.

Rycaut P. Late Consul Smyrna. The History of the Turkish Empire from the Year 1623 to the Year 1677. London, Starkey, 1680.

Sandy’s Travels Containing History of the Oriental State of the Turkish Empire. London, 1673.

Tavernier J.-B. Les six voyages en Turque et en Pers. Paris, Francois Maspero, 1981.

The Six Voyages of John Baptista Tavernier. P. 1-2, London, 1678.

Tournefort J.-P. Voyage d’un botaniste la Turquie, la Georgie, L’Armenie. Paris, Francois Maspero, 1982.

Մենագրություններ, գրքեր, այլ աշխատություններ

Արգարյան Գ., Գեյցեր Հ., Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 2, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976:

Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Պարիս, հրատ. Ա. Ղուկասյանի, 1948:

Ալիշան Ղ., Հայ- Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց, ԺԳ-Դ եւ ի ԺԵ-Ձ դարու, Վենետիկ, 1896:

Ալիշան Ղ., Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:

Ալիշանեան Ղ., Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853:

Ալպոյաճեան Ա., Անհետացող հայ գաղութներ. Զմիւռնիա, Հայաստանի կոչնակ, Նիւ Եօրկ, 1923, թիւ 3, էջ 70-72, թիւ 5, էջ 134-135, թիւ 6, էջ 166-167:

Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն հայոց Իզմիրի (առաջնորդական ընտրութեան արթիւ), Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1904, 10/23, 12/25, 13/26, 14/27, 15/28, 16/29 ապրիլի:

Ալպոյաճեան Ա., Զմիւռնիոյ առաջին հայ տպագրութիւնը 1676-ին չէ, Ընդարձակ տարեցոյց Ազգային հիւանդանոցի, Ստանպուլ, 1930, էջ 294-305:

Ալպոյաճեան Ա., Զմյոռնիո տպարանները, Պատմա-բանասիրական հանդես, Ե., 1964, N2, էջ 67-84:

Ալպոյաճեան Ա., Իզմիրի հայոց առաջնորդները, Դափնի, Զմիւռնիա, 1922, թիւ 9, էջ 280-282:

Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, Գահիրէ, 1952:

Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ, Գահիրէ, 1955, հ. Գ, Գահիրէ, 1961:

Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ դպրոցի, Գահիրէ, հրատ. Եգիպտոսի հայ ուսուցչական միութեան, 1947:

Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937:

Ալիկնեան Ն., Երեմիա Չլէպի Քեօմիրճեան, Վիեննա, 1933:

Ալիկնեան Ն., Մովսէս Տաթեւացի Հայոց կաթողիկոս եւ իր ժամանակը, Վիեննա, 1936:

Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. 6, Մոսկուա- Նախիջեւան, 1911:

Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Ե., <<Զանգակ-97>> հրատ., 2002:

Ալվազեան Ա., Հոնիական հայ գաղութի նահապետներէն, Արեւելք, Կ. Պոլիս, 1900, 21-26 օգոստոսի:

Ալվազեան Ա., Նուպար փաշա, Բիւրակն, Կ. Պոլիս, 1899, թիւ 13, էջ 193-197:

Ալվազեան Ա., Շար հայ կենսագրութեանց, հ. 3, Կ. Պոլիս, 1893:

Ալվազովսկի Գ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, հ. Ա, Վենետիկ, 1841:

Անասեան Յ., Թուրքական ֆութովվաթը եւ հայերը (Օսմանեան կայսրութեան ձուլողական քաղաքականութեան պատմութիւնից), Հասկ հայագիտական տարեգիրք, Անթիլիաս-Լիբնան, 1993, էջ 221-256:

Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961:

Ասատուր Հ., Դիմաստուներներ, Կ. Պոլիս, 1921:

Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ընդարձակ օրացոյց ազգային հիւանդանոցի, Կ. Պոլիս, 1901, էջ 77-258:

Ասատուր Հ., Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ստանպոլ, 2011:

Ատոմ, Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը, Արեւելք, Կ. Պոլիս, 1902, 31 հունվարի, 13 փետրվարի, 17 հունիսի, 3, 5 հուլիսի:

Արամեան Ս., Դաւիթ Բէկ կամ <<Պատմութիւն դափանցւոց>>, Վենետիկ, 1978:

Արփիարեան Ա., Պատմութիւն ԺԹ դարու Թիւրքիոյ հայոց գրականութեան, Գահիրէ, 1943:

Բարթիկյան Հ., Բյուզանդիա, Հայ գաղթաշխարհի պատմությունը գրքում, հ. 2, ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., Ե., 2003, էջ 4-64:

Բարթիկյան Հ., Հայ-բյուզանդական հարաբերություններ, հ. 1, Ե., Երևանի պետիամալսարանի հրատ., 2002, հ. 3, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2006:

Բարթիկյան Հ., Նյութեր գաղութահայ պատմության, II, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1987, N10, էջ 72-87:

Գալէմքեարեան Գր., Զաքարիա եպիսկոպոս Վանեցի, պատրիարք Կ. Պոլսոյ (1576-1639), Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1911, թիւ 2, էջ 66-79:

Գալէմքեարեան Գր., Կենսագրութիւն Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆեան, Վիեննա, 1908:

Գալէմքեարեան Գր., Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկէայք, Վիեննա, 1915:

Գալէմքեարեան Գր., Յարութիւն Վ. Լեւոնեան Կ. Պոլսեցի, արք. Կեսարիոյ Պաղեստինացոյ, 1670-1738 Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1913, թիւ 9, էջ 548-555:

Գալէմքեարեան Գր., Պատմութիւն հայ լրագրութեան, Վենետիկ, 1898:

Գալուստեան Գ. Օ., Զմիւռնիա եւ Զմիւռնիայի հայ գաղութը, Յունահայ տարեգիրք, Աթէնք, հրատ. Նոր օր, 1927, էջ 276-351:

Գելցեր Հ., Համառօտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901:

Գելցեր Հ., Հայ հասարակութիւնն ի Պերգամոն եւ պերգամացի կայսերական գահին վրայ, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1907, թիւ 8, էջ 225-228:

Զարբիանալեան Գ., Պատմութիւն հայ լրագրութեան, սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, 1895:

Զարդարեան Վ., Յիշատակարան, հ. Ա-Բ, Կ. Պոլիս, 1910, հ. Գ, Գահիրէ, 1934, հ. Ե, Գահիրէ, 1939, հ. Ա-Բ, Գահիրէ, 1940-1941:

Զարդարեան Վ., Նուպար փաշա, Բիւրակն, 1899, թիւ 13, էջ 195-196:

- Ջորայան Ն., Նկարագիր ազգային դաստիարակութեան, Կ. Պոլիս, 1849:
- Ջուլայան Մ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966:
- Էփրիկեան Ս., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, պր. 1, Վենետիկ, 1900:
- Թաղիադյան Մ., Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:
- Թաջիրյան Է., Նոր Ջուղան եվրոպական աղբյուրներում 17-18-րդ դարերում, մաս II, Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ-ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2017:
- Թեոդիկ, Տիպ ու տառ, Կոստանդնուպոլիս, 1912, Ե., <<Նաիրի>> հրատ., վերջաբանը և ցանկերը Վ. Քեշիշեանի, հրատ. պատրաստեց Գ. Գասպարեանը, 2012:
- Ինճիճեան Ղ., Դարապատում, 1750-1757, հ. Ա, Վենետիկ, 1824, հ. Բ, 1757-1768, Վենետիկ, 1825:
- Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե, Վենետիկ, 1804:
- Լեո, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. III, գիրք I, Ե., <<Հայաստան>>, 1969, գիրք II, Ե., 1973:
- Լեո, Խոջայական կապիտալ, Ե., Պետհրատ, 1934:
- Լեո, Հայկական տպագրություն, հ. 1, Թիֆլիս, 1901:
- Լուկա Պ., Իզմիր երկու հարիւր տարի առաջ, Բիւզանդիոն, 1909, 24 դեկտեմբերի:
- Խառատյան Ա., Ջմյունիա. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.) եռհատորյակում, հրատ. պատրաստեց և խմբագրեց ՀՀ ԳԱԱ սկադեմիկոս Միքայելյան Վ., Ե., ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., 2000, էջ 178-200:
- Խառատյան Ա., Ջմյունիայի տերունի թեմի առաջնորդները, Պատմաբանասիրական հանդես, Ե., 2016, N2, էջ 14-31:
- Խարաճեան Ա., Հանքեր Հայաստանի, Փոքր Ասիոյ եւ Կիլիկիոյ, Նիւ Եորք, 1919:
- Օերենց, Հասունեան եւ հակահասունեան խնդիրը, Փորձ, Թիֆլիս, 1879, N 5, էջ 193-215:
- Օոցիկեան Ս. Մ., Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947:
- Վալվաճագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պր. 1, կազմ. Աբրահամյան Ե., Ե., 1941:
- Վալոռիկ, Աճառեան Հ., Մանիսացիներն իբրեւ գաղթական Խարբերդի, Բիւրակն, Կ. Պոլիս, 1899, թիւ 25, էջ 402-405:
- Հայ ժողովրդի պատմություն, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, հ. IV, հ. V, Ե., 1976, 1972, 1974:

Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ, 1794-1980, կազմ. Բաբլոյան Մ., Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986:

Հայ պարբերական մամուլի պատմություն, հ. 1, XVIII-XIX դարեր, Գահիրե, 2006, հ. 2, 1900-1922: Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2017:

Հայոց նոր վկաները, կազմ. Յ. Մանանդեան, Հ. Աճառեան, Վաղարշապատ, 1902:

Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., <<Ձանգակ>> հրատ., հ. II, գիրք երկրորդ, հ. III, գիրք երկրորդ, 2014, 2015:

Հայոց պարբերական մամուլը. լիակատար ցուցակ հայ լրագրության, 1794-1934, կազմ. Լևոնյան Գ., Յերևան, հրատ. Մեղրոյան ֆոնդի, 1934:

Հասունեան քաղաքականություն, Թիֆլիս, 1868:

Հարսանեաց հանդեսի մը մեջ հարս ու փեսային խօսած ճառ մը, Շտեմարան պիտանի գիտելեաց, Ջմիրոնիա, 1842, թիւ 47, էջ 162-163:

Հովիւ, Մի տխուր պատկեր հռովմեական հայոց կեանքէն, Արարատ, Էջմիածին, 1896, N 6:

Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Ե., Հայպետհրատ, 1957:

Հովհաննիսյան Ա., Նաբանդանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Հայպետհրատ, Ե., 1955:

Ղուկասյան Վ., Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը (1832-1853), Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

Ճերմակեան Թ., Ասանդական բարեգործությունը, Արշալոյս, Ջմիրոնիա, 1908, 1 մայիսի:

Ճերմակեան Թ., Եզական դէմք մը Իզմիրի մէջ, Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1905, 30 հուլիսի/12 օգոստոսի, 4/17 օգոստոսի, 5/18 օգոստոսի:

Ճերմակեան Թ., Ջմիրոնիա եւ ազգայինք, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1890, թիւ 4, էջ 81-84, թիւ 5, էջ 106-109, թիւ 6, էջ 134-136, թիւ 8, էջ 183-184:

Ճերմակեան Թ., Թագթագեան սրբազանի մէկ կոնդակին առթիւ, Արշալոյս, Ջմիրոնիա, 1908, 25 մայիսի, 15 օգոստոսի:

Ճերմակեան Թ., Իզմիրու հայ բարերարներու յիշատակին առթիւ, Արշալոյս, Ջմիրոնիա, 1908, 8 հունվարի:

Ճերմակեան Թ., Հայ տպագրութիւնը Իզմիրի մէջ, Աշխատանք, Ջմիրոնիա, 1912, 16/29 հունիսի:

Ճինգոզյան Կ., Էջեր XIX դ. 50-ական թթ. գլխունահայ գրական շարժման պատմությունից, Պատմաբանասիրական հանդէս, Ե., 1982, N 2, էջ 61-71:

Մանանդեան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1952:

Մեր Ջմիրոնիան, Նիւ Եօքք, հրատ. Ամերիկայի գլխունահայ միություն, 1961 (հուլամատյան):

Միքայելյան Վ., Դրինահայոց պատմություն, Ե., <<Հայաստան>>, 1989:

Մովսիսեան Հ., Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ պատմութիւն, Վաղարշապատ, 1884:

Մըմըրեան Յ., Ստուերք հին դէմքերու. 1635-1900, Կ. Պոլիս, 1907:

Մուշեղ եպիսկոպոս, Մանչեսթրի հայ գաղութը, Պոստոն, 1911:

Ներսիսյան Մ., Մի բանավեճ Զմիռնիայի 1922 թվականի ողբերգության մասին, <<Պատմության կեղծարարները>> (Ե., ՀՀ ԳԱԱ <<Գիտություն>> հրատ., 1998, էջ 116-124) գրքում:

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, կազմ. Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ., հ. առաջին, Վենետիկի տպարանի Ս. Ղազարու, 1836:

Նուպարեան Մ., Իմ մանկական յիշատակներէս, Արեւելեան մամուլ, Զմիռնիա, 1893, հուլիս-դեկտեմբեր, 1894, հունվար 15-դեկտեմբեր 15: Մ. Նուպարյանի այլ հոդվածներն ու հրապարակումներն այս թեմայով տես նույն պարբերականի 1899, 1901, 1902, 1906 թվահամարներում և 1908 թ. բացառիկ թողարկման մեջ:

Նուպարեան Մ., Տիգրան Յարութիւն Տէտէեան, Արեւելեան մամուլ, Զմիռնիա, 1901, թիւ 1, էջ 22-29:

Շահինեան Գ., Մաղնիսայի հայ գաղթականութիւնը, Բիւրակն, Կ. Պոլիս, 1899, թիւ 1-2, էջ 11-15:

Շահինեան Գ., Մաղնիսայի հայ գաղութին ծննդավայրը, Բիւրակն, Կ. Պոլիս, 1899, թիւ 31-32, էջ 503-505:

Շահինեան Գ., Նմոյշներ Մաղնիսայի գաւառաբարբառէն, Բիւրակն, Կ. Պոլիս, 1899, թիւ 19, էջ 291-294:

Շահնազարեան Կ., Սիւնիք, Ստ. Օրբելեան, <<Պատմութիւն նահանգին Սիւսական>> երկի (Փարիզ, հ. Ա, 1859, ի գործատան Կ. վ. Շահնազարեանց) հրատարակության առաջաբանը:

Չամչյանց Մ., Պատմություն հայոց, հ. Գ, Ե., Երևանի պետհամալսարանի հրատ., 1984:

Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Ա, 1850-1878, Պէյրութ, 1972:

Պալասանեան Ստ., Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1890:

Պալեան Ս., Գաւազանագիրք առաջնորդաց Զմիռնիոյ, Դափնի, Զմիռնիա, 1921, թիւ 1, էջ 25-28, թիւ 2, էջ 59-63, թիւ 3, էջ 91-93:

Պատմութիւն եւ պատճառք վերադարձի երից վարդապետաց, Փարիզ, 1856:

Պոտուրեան Մ., Հայ հանրագիտակ, գիրք Ա, Պուքրէշ, 1938:

Պոյաճեան Գ., Եգեականի դիցուիին՝ Զմիռնիան եւ զմիռնահայ գաղութը, Յառաջ, Փարիզ, 1972 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների թվահամարները:

Ռուսինեան Ն., Ուղղախօսութիւն արդի հայոց լեզուի, Կ. Պոլիս, 1853:

Սարգիս արքեպիսկոպոս Սարաֆեան, Հանդէս ամսօրեայ, 1906, թիւ 11, էջ 327:

Սաւալանեան Ս., Կենսագրական յուշեր, Գահիրէ, 1900:

Սաւալանեան Ս., Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ, 1931:

Սարգիսեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծն Հայս, Վենետիկ, 1864:

Սարուխան, Հոլանդան եւ հայերը, Վիեննա, 1926:

Սիմոնեան Պ., Յուշամատեան հայկական Ձմիւռնեան, հրատ. Ձմիւռնիոյ եւ շրջաններու հայրենակցական վերաշինաց միության, Փարիզ, 1936:

Սիրունի Հ. Ճ., Պոլիս եւ իր դերը, 1453-1800, հ. 1, Պէրոյք, 1965:

Սիւրմէան Ա., Պատմութիւն Հալէպի քահանայից, Բազմավէպ, 1939, թիւ 1-2, էջ 14-19:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, Ե., <<Հայաստան>> հրատ., 1973:

Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010:

Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Ե., ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտ, 2011:

Սրուանձտեանց Գ., Թորոս աղբար կամ ճամբորդ Հայաստանի, մասն Բ, Կ. Պոլիս, 1884:

Սուրբ Էջմիածնի հայրապետական աթոռը եւ Տաճկաստանի Հայք, Փորձ, Թիֆլիս, 1881, N1, էջ 20-40:

Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոց, Ստանպուլ, 2016, նոյեմբեր-դեկտեմբեր:

Վերածին Մ., Հայ բոշաները Փոքր Ասիոյ մէջ, Հայրենիք ամսագիր, Պոսթըն, 1931, թիւ 6, էջ 132-141:

Տէր-Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու, Նոր Ջուղա, 1880:

Տէր-Յովհաննիսեան Ա., Ժամանակագրական պատմութիւն Սուրբ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1890:

Յոլակ, Ճամբու նոթեր, Աշխատանք, Ձմիւռնիա, 1912, 12 հոկտեմբերի:

Ուղուրլեան Մ., Պատմութիւն հայոց գաղթականութեան եւ շինութեան եկեղեցւոյն նոցա ի Լիվոռնո քաղաքի, Վենետիկ, 1891:

Փափագեան Պ., Կենսագրութիւն Ռուբին Անդրեաս Յ. Փափագեան բազմաբնիկն վարժապետի, Կ. Պոլիս, 1859:

Փափագեանց Ի., Պատճէնք նամակաց վաճառականութեան, Վենետիկ, 1826:

Քօսեան Յ., Հայք ի Ձմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա-Բ, Վիեննա, 1899:

[Քօսեան Յ.] Հ. Յ. Ք. Ակնարկ մը հնութեան բեկորներու, Հանդէս ամսօրեայ, Վիեննա, 1906, թիւ 9, էջ 277-279:

[Քօսեան Յ.] Հ. Յ. Ք., Յիւնամեայ յոբելեան հանդէս հաստատութեան վանաստան Միխիթարեանց, որ ի յԱյտըն, Հանդէս ամսօրեայ, Վենետիկ, 1903, թիւ 6, էջ 180-187:

Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, 1914:

Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Ա-Գ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001:

Арунова М. П., Ашрафян К. З. Государство Надир-шаха Афшара, М., изд. Восточной литературы, 1958.

Бааш Э. История экономического развития Голландии в XVII-XVIII веках. М., Изд. иностранной литературы, 1949.

Байбуртян В. А. Армянская колония Новой Джульфы в XVII веке. Е., АН Арм. ССР, 1969.

Васильев А. А. Латинское владычество на Востоке. Петроград, Academia, 1923.

Васильев А. А. Падение Византии. Л., 1925.

Гордлевский В. А. Государство сельджукидов в Малой Азии. Соч., т. I, М., ИВЛ, 1960.

Гордлевский В. А., Избр. Соч., т. IV, М., "Наука", 1968.

Гордлевский В. А. Силуэты Турции. Соч., т. III, М., ИВЛ, 1962.

Гордлевский В. А. Эксплуатация недр земли в Турции. Соч., т. III, М., ИВЛ, 1962.

Горянов Б. Т. Поздневизантийский феодализм, М., изд. АН СССР, 1962.

Данциг Б. Русские путешественники на Ближнем Востоке. М., "Мысль", 1965.

Жаворонков П. И. Западные и Восточные реалии в социально-политической и духовной жизни Никейской империи. В кн.: Византия между Западом и Востоком (под ред. акад. Литаврина Г. Г.), СПб., "Алтай", 2001, с. 207-219.

Жуков К. А. Эгейские эмираты в XII-XV вв., М., "Наука", 1988.

Желтяков А. Д., Петросян Ю. А. История просвещения в Турции, М., "Наука", 1965.

Зуляян М. К. Западная Армения в XVI-XVII вв. Дисс. На соиск. д.и.н., Е., 1974.

История Византии. В трех томах, т. 3, М., "Наука", 1967.

Лень-Пуль С. Мусульманские династии, СПб., 1899.

Мейер М. С. К характеристике экономической жизни городов Османской империи в XVII в. В кн.: Проблемы генезиса капитализма, М., 1978, с. 242-275.

Мейер М. С. Османская империя в XVIII веке. М., "Наука", 1991.

Новичев А. Д. История Турции I. Эпоха феодализма (XI-XVIII века), Л., изд. ЛГУ, 1963.

Петросян Ю. А. Османская империя, М., "Алгоритм", 2003.

Петросян Ю. А. Юсупов А. Р. Измир. М., "Наука", 1973.

Рутенберг В. И. Италия и Европа накануне нового времени. Ленинград, "Наука", 1974.

Тверитинова А. С. О домениальном землевладении феодалов-ленников в Османской державе в XV-XVI веках. В кн.: О генезисе капитализма в странах Востока (XV-XIX вв.), М., ИВЛ, 1962, с. 314-318.

Тодоров Н. Балканский город XV-XIX веков, М., 1976.

Успенский Ф. И. История Византийской империи, т. 3, М.-Л., изд. АН СССР, 1948.

Халфин Н. А. Мурадян А. А. Янки на Востоке в XIX веке или колониализм без империи, М., “Мысль”, 1966.

Ханцель Ф. Османская империя, М., 2006.

Чистозвонов А. Н. Реформационное движение и классовая борьба в Нидерландии в первой половине XVI века, М., “Наука”, 1964.

Чихачев П. А. Письма о Турции, М., 1970.

Alderson A. D. The Structure of the Ottoman Dynsty. Connecticut Greenwood Press, 1982.

An Economic and Social History of the Ottoman Empire. Edited by H. Inalcik with D. Guataert, Vol. 2, 1600-1914. Cambridge Univ. Press, 2004.

Armenian Smyrna. The Aegean Communities. Edited by R. Hovannisian. Mazda Publishers. Costa Mesa, California, 2012

Armenians in the Ottoma Empire. Edited with an Introduction and Notes by Watche Ghazarian. Waltham, 1977.

Aslan Kevork, Etudes historiques sur le peuple Armenien. Paris, G. Dujarric, Editeur, 1909.

Baibourtian V. International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century. Sterling Publishers, New Delhi, 2004.s

Brown P. M. Foreigners in Turkey. Their Juridical Status. Princeton, 1914.

Charanis P. The Armenians in the Byzantine Empire. Lisboa, 1963.

Creasy E. S. History of the Ottoman Turks. Beirut, 1961.

Encyclopaedia Britanica, Vol. 14, 20. Ltd Chicago-London-Toronto, 1961.

Eton W. A Survey of the Turkish Empire. New York, Arno Press, 1973.

Finkel C. Osman's Dream. The Story of the Ottoman Empire 1300-1923, New York, Basic Books, 2007.

Fisher S. N. The Foreign Relations of Turkey 1481-1512. Urbana Univ. of Illinois Press, 1948.

Forbes G. The Empires and Cities of Asia. London, Virtue and Co, 1873.

Gibbons H. A. The Foundation of the Ottoman Empire 1300-1403. New York, The Century Co, 1916.

Goffman D. Izmir and the Levantine World 1550-1560. Seatl and London Univ. Washington Press, 1990.

Gordon L. J. American Relations with Turkey 1830-1930. Philadelphia, 1932.

Green J. K. Leavening the Levant. Boston-New York-Chicago, 1916.

Hakluytus Posthomus or Purchas His Pilgrimes, Vol. X. Glasgow, James Maclehose and Sons, MCMV.

Handbook for Travellers in Asia. London, 1872.

Hanvay J. An Historical Account of the British Trade over the Caspian See, Vol. 1, Dublin. 1740.

Housepian M. The Destruction of a City. London, Faber and Faber, 1972.

Hurevitz J. S. Diplomacy in the Near and the Middle East 1535-1914. Vol. 1, Princeton-New Jersey, 1956.

Inalcik H. The Ottoman Empire. The Classical Age 1300-1600. Praeger Publishers, New York-Washington, 1973.

Inalcik H. The Ottoman Empire. Conquest, Organization and Economy. London, 1978.

Issavi Ch. The Ottoman Empire in the European Economy. In: The Ottoman State and Its Place in World History. Leiden, Brill, 1974.

Karpat K. Introduction. In: The Ottoman State and Its Place in World History, Leiden, E. J. Brill, 1974, p. 1-13.

Karpat K. The Stages Ottoman History. In: The Ottoman State and Its Place in World History, Leiden, E. J. Brill, 1974, p. 79-98.

Kaya O. Tanzimatla Lozana Azınlıklar. Istanbul, Yedi Tepe Yayınevi, 2004.

Milton G. Paradise Lost. Smyrna, 1922. The Destruction of Islamic City of Tolerance. London, Clays Ltd, 2009.

Porter J. Turkey. Its History and Progress. Vol. 1-2, London, 1854.

Ramsay W. The Historical Geography of Asia Minor. London.

Ramsay W. The Thousand and One Churches, London, MCMIX.

Rycaut P. (late Consul of Smyrna). The History of the Turkish Empire from the Year 1623 to the Year 1677. London, MDCLXXX.

Sandy's Travels Containing an History of the Original State of the Turkish Empire. London, 1673.

Shaw S. History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 1, Cambridge, 1976. Shay M. The Ottoman Empire from 1720 to 1734. Urbana, 1944.

Shay M. The Ottoman Empire from 1720 to 1734. Urbana, 1944.

Smyrnelis M.-C. Les Arme'nien catholiques Smyrne aux XVIII et XIX siècles. Revue du Monde Armenien, Paris, 1995-1996, t. 2, p. 25-44.

Subhi L. The Era of Suleyman Magnificent. Crisis of Orientation. International Journal of Middle East Studies, Cambridge Univ. Press, 1979, Vol. 10, N4, p. 435-451.

Tavernier J. B. Les six voyages en Turquie et en Perse. I. Francois Maspero, Paris, 1981

The Six Voyages of John Baptista Tavernier through Turkey into Persia and the East-Indies. London., Printed for R. L. and M. P. 1678.

Tournefort J. P. Voyage d'un botaniste. II. La Turquie, la Ge'orgie, l'Armenie. Francois Maspero, Paris, 1982.

Vaux B. The Armenian Dialect of Smyrna. In: Armenian Smyrna/Izmir. The Aegean Communities. Edit. By R. Hovannisian. Mazda Publishers, Costa Mesa, California, 2012, p. 111-126.

Akdağ M. Türkiyenin İktisadi ve İctimai Tarihi, C. 2. Istanbul, 1974.

Arslan A. Osmanlıdan Cumhuriyete Rum Basimevi. İstanbul, Truva Yayınları, 2005.

Bağış A. I. Osmanlı Ticaretinde gayri Müslimler. 2 Bası, Ankara, Kitabevi Yayınları, 1998.

Cem I. Türkiyede geri Kalmışlığın Tarihi. İstanbul, Cem Yayınevi, 1975.

Cadirci M. Tanzimat Doneminde Anadolu Kentlerinin Sosyal ve Ekonomik Yapısı, Ankara, Afsaroglu Matbaası, 2013.

İstanbul Basın Tarihinde (1830-1914). Yayıncı ve gazeteciler. Türkiye Gazeteciler Cemiyeti, İstanbul, 2012.

Ortaylı I. İmparatorluğun en Uzun Yüzyılı, Alkim Yayınevi, 2005.

Uzunçarşılı I. H. Anadolu Beylikleri ve Akkoyunlu, Karakoyunlu Devletleri. Ankara, Türk Tarih Kurumu Basimevi, 1937.

Uzunçarşılı I. H. Osmanlı Tarihi. C. 1, C. 3, kis. 2, Ankara, Türk Tarih Kurumu Basimevi, 1947, 1954.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա. Անձնանուններ

- Աբարնեցի Հովհաննես 112
Աբբա Պրեվո 423
Աբգար դպիր 410
Աբելյան-Գուլասայանց
(Աբելյան) Գր. 18, 25, 303, 352, 375,
381, 383, 392, 403-405, 409, 480
Աբովյան Խ. 454
Աբրահամ Աստապատցի, եպ.,
առաջնորդ Զմյուռնիայի 29,
140, 165, 367, 372, 410, 411
Աբրահամ Բ կաթողիկոս 162
Ադամ 25
Ադամյան 297
Ադոնց Ն. 43
Ագատենց Ս. Ապուշեխցի
(Քեշիշ) 411
Ագարիա 159
Ագարյան Ստ. 173
Ագիզինե 224
Ալբերիչի 290
Ալեքսանդր Ա կայսր 173, 161
Ալեքսանդր Մակեդոնացի 41
Ալեքսանդր Սիսման 67
Ալեքսանյան Կ. վարդ. 181
Ալեքսեյ Միխայլովիչ, ցար 329
Ալեքսիանոս Կոմնենոս, կայսր 42
Ալիշան Ղ. 13, 14, 41, 69, 75, 103,
104, 113, 210, 220, 222, 234, 242,
244, 247, 252, 278, 296, 297, 316
Ալպոյաճյան Ա. 6, 8, 26-28, 43,
54, 61, 72, 74, 79, 89-92, 119, 123,
131, 151, 152, 155-164, 166-173,
176, 178-181, 191-193, 345, 372,
373, 410, 412-415, 418, 419, 424, 468
Ալփիարյան Մ. 407, 419
Ալփիարյան Պ. 407
Ախիջան, խոջա 296
Ակինյան Ն. 172, 309
Ահմեդ, դեֆթերդար 308
Ահմեդ Գ, սուլթան 132
Աղաբեկյան Մ. 385, 386, 443,
444, 480, 492
Աղազարով Մ. վաճառական 311
Աղաթոն 359
Աղաթոն Մ. 459
Աղաճանյան Պ. դի 357
Աղա Մահմադ Խան 101, 269
Աղայեկով 361
Աղեքսանդր Բյուզանդացի
(Գարագաշ), կաթողիկոս,
Զմյուռնիայի առաջնորդ 139,
144, 158, 163, 164, 182, 470
Աղեքսանդր Զուղայեցի,
կաթողիկոս 132
Աղիջանի որդի Սիակ 243
Աղջիկյան Կ. 439
Աճառյան Հ. 8, 33, 34, 81, 89, 93,
94, 104, 193, 200-201, 213, 214,
231, 247, 413, 468
Ամատյան Ս. 32
Այդըն, ցեղապետ 44, 198
Այդընօղլու Ումուր բեյ 8
Այդընօղլուներ 199, 286
Այվազյան Աբր. 16-18, 94, 179,
193, 280, 295, 297, 345, 356, 380,
388, 402, 413
Այվազովսկի Գ. 313, 447
Այրիճիհան 245
Անասյան Հ. 270
Անաստաս 112

Անդրեաս 112, 236
 Անդրոնիկ Գ, կայսր 43
 Աննա Իվանովնա, կայսրուհի
 334, 477
 Անտիգոնոս 42
 Անտոն Չելեպի 290
 Ապրոյաններ 17, 24, 172, 219,
 295, 302, 355, 354, 374, 378, 379,
 403, 477
 Ապրոյան Աբր. (Ապրո Չելեպի)
 25, 58, 291, 295, 299, 303, 308,
 331, 480, 379, 392, 404, 494
 Ապրոյան Առ. 358, 379
 Ապրոյան Աստ. 168, 211, 406
 Ապրոյան Հ. 287
 Ապրոյան Մ. 58, 171, 173, 175,
 211, 295, 305, 308, 353-355, 357, 358
 Ապրոյան Պ. 322, 331, 369
 Ապրոյան Ստ. 302, 303, 331, 379
 Առաքել 360
 Առաքել, տպագրիչ 411
 Առաքել Դավրիժեցի 12, 49, 156,
 290
 Առաքելյան Խ. 241
 Ասլանյան 38, 39
 Ասողիկ 6
 Աստվածատրյան Կ. 304
 Աստվածատուր 104, 112
 Աստվածատուր, արք. 146, 147,
 149, 177, 178
 Աստվածատուր Սեբաստացի,
 նահատակ 271
 Աստվածատուր Չելեպի 412
 Ավագ 97
 Ավագի որդի Ավետիք 275
 Ավետիս, գրիչ 363
 Ավետիս, տպագրական գործիչ 413
 Ավետիսի որդի Հակոբ 202
 Ավետիք, խոջա 185, 324, 365

Ավետիք Եվդոկիացի,
 պատրիարք 133-135, 136, 158
 Ատոմ 21, 22, 59, 63, 79, 91, 191,
 306, 343-346, 49, 389, 403
 Արարատյան Ա. վարդ. 419
 Արևնդել Ֆ. 246
 Արիստակես Լաստիվերտցի
 79, 467
 Արտավազդ Ռաբդաս
 Զմյուռնացի 43
 Արտեմիս 71
 Աքչելյան Կ. 146
 Բաբազյան Գ. 407
 Բագրատունի Ա. 375
 Բալադյուր Ա. (Բահաթրյան) 110
 Բաղդասար, նահատակ 74, 271
 Բաղդասարյան Է. 79
 Բաղըշեցի Հովհաննեսի որդի
 Ավագ 97
 Բամպուրճյան Գ. 28
 Բայազետ Ա 45, 199, 152, 159, 204
 Բայազետ Բ 318
 [Բայ]անտրեցի Առաքելի որդի
 Ոնա 21
 Բայբուրդյան Վ. 313
 Բարատոսի Օ. 291
 Բարթիկյան Հ. 5-7, 11, 39, 81,
 82, 85, 89, 235, 239, 285
 Բարխուտարյան Մ. վարդ. 15,
 16, 33, 95, 200, 201, 210, 211, 213,
 220, 221, 224, 226, 228, 233, 234,
 237, 241, 242, 244, 248, 250, 252,
 253, 255
 Բարսեղ վարդ., առաջնորդ
 Զմյուռնիայի 157
 Բեդրեդդին, շեյխ 46, 206
 Բեկնազարյան Ա. 240
 Բեհբուրով Բ. գեներալ 404
 Բեհբուրովներ 404

Բերդումյան Պ. 370, 371, 479
 Բերանժե 454
 Բլակ Ա. 428
 Բյորքլուջե Մուստաֆա 46
 Բոնակ, դը 334
 Բրապիոն, Ղազարի դուստր 223
 Բրիջիտա 304
 Բուսենիբի 408
 Գաբրիել արք. Եդիայան,
 առաջնորդ Զմյուռնիայի 180,
 382, 384
 Գալեմքյարյան Գր. 408, 418,
 428, 463
 Գալուստ վարդ., առաջնորդ
 Զմյուռնիայի 169, 245
 Գալուստ, քահ. 171, 370
 Գալուստյան Գ. Օ. 31, 33, 92,
 93, 491
 Գալֆայան Ամբ., վարդ. 447
 Գալֆայով Խ. 462
 Գապարաձյան Գ. 44
 Գասպար 88
 Գասպար, վաճառական 338
 Գասպարյան Կ. 313
 Գարագոյան 30
 Գարախաչատուրյաններ 232
 Գարդան, գեներալ 293
 Գափամաձյաններ 327, 328
 Գելլանդ Ա. 39
 Գելցեր Հ. 5-7, 22, 39, 43, 80, 81, 85
 Գեորգ, տիրացու 279
 Գեորգ, քուղագործ 272
 Գեորգ Ասլան 5, 6, 39, 467
 Գեորգ դի Օհան 357
 Գիլանենց Պետրոս Սարգիս 208
 Գոլիցին Մ. Մ. 102
 Գոլձյան Հ. քահ. 236
 Գոլովկին Գ. 334
 Գորդլիսկի Վ. Ա. 54, 205, 240
 Գոֆման Դ. 10, 37, 251, 472

Գրիգոր, գրիչ 184
 Գրիգոր Երեց, գրիչ 105, 366
 Գրիգոր Աստվածաբան 367
 Գրիգոր Դարանաղցի
 (Կամախեցի), եպ. 12, 51, 52,
 120, 207, 265, 33
 Գրիգոր Լուսավորիչ 154, 233
 Գրիգոր Խամսեցի, պատրիարք
 173, 355, 358, 359, 362
 Գրիգոր Կեսարացի,
 պատրիարք 133, 152, 153, 208
 Գրիգոր Նարեկացի 423
 Գրիգոր Պասմաձյան,
 պատրիարք 140
 Գրիգորյան Պ. նվիրակ 136
 Գրիֆիթ, տպարանատեր 415-417
 Գրուար Ֆ. 75
 Գուլասայան-Բեհբուդեանց Ջ.,
 վարդ. 404
 Դավավեյ, ճանապարհորդ 496
 Դանիել, խոջա 412
 Դանիել, մարգարե 367
 Դանիել Սուրմառեցի,
 կաթողիկոս, առաջնորդ
 Զմյուռնիայի 29-31, 131, 141,
 170-173, 182, 349, 355-362, 470
 Դավիթ 104, 112
 Դավիթ Բաղիշեցի 156
 Դավիթ Բեկ 200, 222
 Դավիթ Էնեգեթցի, կաթողիկոս
 31, 77, 128, 172, 173, 211, 226,
 305, 349, 354-361
 Դավիթյան Գ. 231
 Դավիթյան Էդբայրներ 232
 Դ'Արվյո, ճանապարհորդ 196,
 488, 489
 Դաուդ 271
 Դելի Հասան 51
 Դելիստովիչ, ճարտարապետ 400
 Դերբին Ժ.-Պ. 496

Դերձակյան Գ. վարդ. 181
 Դիլրբորն Հ., ճանապարհորդ 494
 Դիմաքսյան Հ. վարդ. 14, 15, 88, 95, 192, 210, 228-234, 236-238, 244-246
 Դյումա Ա. 423, 454
 Դյուպլան Ժ. 336
 Դուրյան Ե. եպ. 28
 Դովլաթյան Հ. խոջա 280, 281
 Եզնիկ (Կողբացի) 410, 411
 Եկենյան Գ. 74
 Եղիա սարկ. 365
 Եղիա քահ., գրիչ 368, 374
 Եղիազար Այնթափցի, կաթողիկոս 137, 144, 157
 Եղիայան Գ. եպ., պատրիարք, առաջնորդ Ձմյուռնիայի 180
 Եղիայի որդի Ստեփան 202
 Եղիշե 423, 447
 Եղիվարդյաններ 278
 Եղվարդյան (Եղիվարդյան) Կ. 146, 232, 278, 327
 Ենովքյան Ստ. արք., առաջնորդ Ձմյուռնիայի 142, 145-149, 176-179, 268, 269, 371, 379
 Եսայան Ե. 188, 189
 Եսայի, վաճառական 295
 Եսայի վարդ., առաջնորդ Ձմյուռնիայի 166-168, 321, 374
 Եվում 99
 Երամյան Մ. ճարտարապետ 402
 Երիցյան Ալ. 150, 171, 172
 Եփրեմ Ձորագեղցի, կաթողիկոս 125, 142, 145, 149, 174, 175, 197, 224, 348, 359, 362
 Զարբհանալյան Գ. 410, 412
 Զարդար 245

Զարդարյան Վ. 24, 308, 335
 Զաքարիա Ագուլեցի 12, 292-294, 338
 Զաքարիա Կաղզվանցի, պատրիարք 56, 108, 111, 152, 168, 170-172, 353, 354
 Զաքարիա Մարկավազ 12
 Զաքարիա Վանեցի, պատրիարք 120
 Զաքարիա Քանաթեցի 49
 Զաքարյան Հ. 304
 Զենապ Չելեպի 186, 365
 Զմյուռնակեայան Ստ. 175
 Զորայան Ն. 445
 Զուլալյան Մ. 265, 266
 Էճրը, միսիոներ 412
 Էթըն Վ. 72
 Էլիազ փաշա 51, 52, 216
 Էրթողրուլ 44
 Էրմենի Հասուն 251
 Էրմենի Քալըչ 251
 Էքիզյան Ավ. 146, 194, 247, 344, 350, 380
 Էքիզյան Խ. 459-461
 Էքիզյան Կ. 344
 Էքիզյան Հ. 175, 393
 Էքիզյաններ 17, 97, 218, 295, 336, 380, 40
 Թագվոր, մահտեսի 275
 Թագուհի (Մսերյան) 401
 Թադեոս եպ., առաջնորդ Ձմյուռնիայի 180
 Թաթիկյան Պ. 417, 418, 481
 Թահմազ Ղուլի Շահ 99, 102, 229
 Թաղայի որդի Մկրտում 295
 Թաղիաղյան Մ. 99, 237, 462
 Թամա, դուստր Եղիայի 223
 Թաջիբյան Է. 318

Թավերնիե Ժ.-Բ, ճանա-
պարհորդ 39, 58, 61, 64, 66, 76,
93, 191, 292, 294, 486, 487, 488,
489, 498
Թավուլ (Ջանփուլադ Ալի Օղլի)
64, 96, 215
Թեոդիկ 32, 410, 413, 414, 416-
420, 423
Թեոդորյան Ս., վարդ. 447
Թեսավրոս 375
Թեսեսու 41
Թեվենո Ժ., ճանապարհորդ
191, 196, 317, 486, 488, 489
Թերզի Ղազար 253
Թերզյան Թ. 466
Թիմուր (Լենկթեմուր) 45, 76,
183, 186, 199, 204, 287, 368
Թոխատցի Հստեփան 112
Թոռնիկներ 85
Թովմա Արծրունի 79, 467
Թովմա Արվինացի 174
Թովմա Մեծովեցի 18, 368, 374, 479
Թորլաք Քեմալ 46
Թորոս 119
Թորոս Սսեցի, եպ. 168
Թումաս վարդ. 106, 367
Թուրնեֆոր Ժ.-Պ., ճանա-
պարհորդ 67, 72, 192,
218, 246, 251, 253, 291, 490, 491, 496
Ժերիայաններ (Երիցյաններ) 110
Ժավորոնկով Պ. Ի. 85, 467
Ժուկով Կ. 244
Իբն Բատուտա 44
Ինճիճյան Ղ. 13, 300
Իբրահիմ, մեծ վեզիր 98
Իգնատիոս Միականի,
Զմյուռնիայի առաջնորդ 157-158
Իմպերտ, դոֆին 286
Իսավերդենց եղբայրներ 106,
495, 496

Իսավերդենց Թ. 103-106, 108,
110, 367, 496
Լազար, թագավոր 67
Լազարյաններ 394, 480
Լամարտին 454
Լասկարիսներ 204
Լաֆոնտեն 454
Լեո 30, 31, 135, 332
Լևոն Զ, կայսր 84
Լիթգոու Ու. 493
Լիսիմաքոս 42
Լյուդովիկոս ԺԴ 202, 307, 309, 489
Լուդշովեյտ Ե. 257
Լուկա Պ. ճանապարհորդ 58,
59, 72, 76, 202, 325, 486, 489, 490
Խաբամաճյաններ 439
Խալիլ փաշա 133
Խաչատրյան Հ. 269
Խաչատրյան Ս., դրոշմադիր
280, 281, 357
Խաչատուր, բոշա 227
Խաչատուր Զուղայեցի 103
Խաչիկյան Գ. 408, 419
Խոշկաշինեցի Գալուստ 104
Խոշկաշինեցի Մանաս 112
Խոսրով, պարսից արքա
Խումարյան Հ. 406
Խուսրեվ փաշա 51
Ծերենց 447
Ծոցիկյան Ս. 35
Կալերցի Աբգար 223
Կալերցի Գրիգոր 223
Կալերցի Սիմոն 223
Կապրիել 223
Կավենյակ 430
Կարամանօղլուներ 45
Կարապետ 100
Կարապետ արք. 402
Կարապետ արք., պատրիարք
141, 147, 148, 150

Կարապետ դի Հաճի
 Հարություն 305, 357
 Կարապետ Մանուկ Օղլու 335
 Կարապետ, պարոն 227
 Կարապետ Ուլնեցի,
 կաթողիկոս 139, 144, 161, 162
 Կարապետյան Ա. 350
 Կարապետյան Թ. 439
 Կարաօսմանօղլու Յադ. 205
 Կարաօսմանօղլուզադե Է. 55
 Կարաօսմանօղլուններ 54, 55,
 205, 206, 217, 300
 Կայծողիկ 34, 213, 214
 Կեսարացի Աբրահամ 225
 Կիրակոս արք., պատրիարք 402
 Կիրակոս Գանձակեցի 186, 368,
 374, 478
 Կիրակոս Թալինցի, վարդ.,
 առաջնորդ Զմյուռնիայի 153-
 155, 233
 Կիրակոսի որդի Հարություն,
 դպիր 164
 Կլավդիոսներ 198
 Կլենկ Կ. 239
 Կղեմես Զ. պապ 286
 Կյումուշխանեցի Մ. վարդ. 350
 Կուլբեր 308
 Կոստանդ, կայսր 80
 Կոստանդյան Գր. 375, 381
 Կոստանդյան Հ. 439
 Կոստանդյան Հռ. 389, 390, 403
 Կոստանդյան Պ. 407
 Կոստանդյաններ 219
 Կռիլով Ի. 462
 Կուլիկենց Դավթի որդի Պապո 295
 Կուրտիկներ 85
 Հալիլ Քյամիլի փաշա 324
 Հալլոք Հ. տպարանատեր 415,
 417

Հակոբ Շամախեցի, կաթո-
 դիկոս 125, 133, 137, 164
 Հակոբ Զուղայեցի, կաթողիկոս
 136, 139, 156-158, 413
 Հակոբ Ֆրնոզցի եպ. 207, 208,
 Հակոբյան Վազգ. 155
 Համբարձումյան Վ. 124
 Հայրապետ վարդ. առաջնորդ
 Զմյուռնիայի 160, 162
 Հասունյան Ա. 447
 Հարություն, խոջա 412
 Հարություն եպ. Գապենճյան
 (Գապենճանյան), առաջնորդ
 Զամյուռնիայի 179
 Հարություն Եղեսացի, վարդ.
 179, 180, 298
 Հարություն դի Մուրատ 357
 Հարություն Կարնեցի, նա-
 հատակ 74
 Հերվե Ֆ., ճանապարհորդ 106,
 495, 496
 Հերոդոտ 41
 Հզըրշահ 204
 Հիսարյան Հ. 447
 Հյուզո Վ. 423
 Հոբհաուզ Ջ., ճանապարհորդ
 495, 496
 Հոմերոս 71
 Հովակիմ, նահատակ 74
 Հովակիմյան Հ. 439
 Հովբ 370
 Հովիվ 113
 Հովհան Մ. Վանանդեցի 174,
 370, 371, 373-376, 383, 414, 479
 Հովհան Էդդեմիշցի, քահ., գրիչ
 371
 Հովհան Քոնեցի 105, 368
 Հովհաննես, պատրիարք 358,
 359, 362

Հովհաննես Ավետարանիչ 105,
 152
 Հովհաննես Եղվարդեցի 100
 Հովհաննես Զմյուռնացի, վարդ.
 158
 Հովհաննես Խուլ, պատրիարք
 52, 120
 Հովհաննես Կարբեցի,
 կաթողիկոս 146, 176
 Հովհաննես Կոլոտ,
 պատրիարք 98, 107, 137, 139,
 141, 144, 164
 Հովհաննես Հաննա 136
 Հովհաննես Զահուկեցի, գրիչ
 105, 106, 368
 Հովհաննիսյան Ա. Գ. 47, 134,
 330, 333
 Հովհաննիսյան (Տեր-
 Հովհաննիսյան) Ա., եպ. 179
 Հովհաննիսյան Ռիչ. 35, 52
 Հովսեփ Արղուրյան,
 կաթողիկոս 170
 Հովսեփ, վարդ. (Քյոլեյան),
 առաջնորդ Զմյուռնիայի 27, 59,
 119, 151, 152, 158-160, 187, 212
 Հովսեփ Չելեպի 25
 Հրանտ Ասատուր 28, 29, 129,
 373, 393, 412, 419, 130, 131, 168, 170
 Զաքարիաներ, ջենովական
 ընտանիք 45
 Ղազար Զահկեցի, կաթողիկոս,
 առաջնորդ Զմյուռնիայի 28,
 162, 163, 182, 470
 Ղափանցի Եղիա 223
 Ղափանցի Օհաննես 223
 Ղուկաս Խարբերդցի 371
 Ղուկաս Կարնեցի, կաթողիկոս,
 առաջնորդ Զմյուռնիայի 29, 61,
 125, 127, 136, 137, 141, 145, 165-

171, 224, 245, 279-281, 321, 348,
 354, 367, 374, 411, 412, 470, 476
 Ճեզայիրյան Մ., ամիրա 402
 Ճերմակյան Թ. 24-26, 33, 79,
 254, 301, 343, 374, 412, 413
 Ճիհանշալ 97, 296
 Ճովետ Մ., քահ. 419
 Մահմուդ Ա, սուլթան 323, 336
 Մահմուդ Բ, 55, 57, 450
 Մահտեսի Մարկոս, տպագրիչ
 165, 410, 411, 413, 481
 Մահտեսի Մարտիրոս 99
 Մաձձինի 430
 Մաղաքիա Եփեսացի եպ.,
 ենթադրյալ առաջնորդ 21 , 156,
 157, 201
 Մամուրյան Մ. 23, 382, 385, 387,
 422, 444, 480, 481
 Մանանդյան Հ. 285
 Մանլեցի Մարտիրոս 225
 Մանուկյան Գ. 350
 Մանուել, վարդ., առաջնորդ
 Զմյուռնիայի 162
 Մանուել, կայսր 81
 Մառ Ն. 155
 Մատթեոս, ավետարանիչ 154
 Մատթեոս, գրիչ 214
 Մատթեոս (Կոստանդնու-
 պոլսեցի), կաթողիկոս,
 առաջնորդ Զմյուռնիայի 29,
 181, 183, 194, 243, 351, 392, 395,
 405, 406, 436, 460, 470
 Մարգերեցի Ղազար 223
 Մարիա-Թերեզա, կայսրուհի 303
 Մարիամ Ռոզա 304
 Մարկոս Ավրելիոս, կայսր 57, 58
 Մարկոսյան Գր. 393-395
 Մարկոսյան Մ. 405
 Մարտիրոս արք., առաջնորդ

Զմյուռնիայի 29, 62, 77, 101, 129,
 141, 171-174, 219, 226, 347, 348,
 355-357, 362
 Մարտիրոս (Քյուլիանճի),
 պատրիարք 135, 136
 Մարտիրոս, Սյունյաց եպ. 172
 Մարտիրոսյան Վ.,
 պատմաբան 296
 Մեդիչի Ֆ. 289
 Մելիք Խանրաբ 98
 Մելիք Մելում 98
 Մելիքբարամյաններ 357, 360
 Մելիքյան Մ. 99
 Մելիքշահյան Պ. (Ֆիզիքա
 Պողոս) 18
 Մելիքսելումյան Խ. 408, 419,
 455, 457, 458, 460-462, 483
 Մելիքսելումյաններ 17
 Մելքիսեթ (Մելքիսեդեկ),
 կաթողիկոս 119, 120, 133, 152, 4711
 Մելքոնյան Ստ., արքահայր 114
 Մեհմեդ Ա Չելեպի 67
 Մեհմեդ Բ 45, 206, 277
 Մեհմեդ Բեյ 44
 Մեյեր Մ. 277
 Մենեքշեզատե Հ. 245
 Մեսրոպ, արք. 172
 Մեսրոպ Գանձակեցի, քահ.
 165, 367, 372, 374, 410, 470
 Մեսրոպ Մաշտոց 393
 Մերիեմ (Մարիամ) 252, 253
 Մինաս Եվդոկիացի, եպ., 162
 Մինաս խալֆա,
 ճարտարապետ 402
 Մխիթար Մեբաստացի 60, 61
 Մխիթարյաններ 115
 Միհրդատ 42
 Մինաս Փերվազյան, արք.,
 առաջնորդ Զմյուռնիայի 161, 163

Միքայել, վարդ., առաջնորդ
 Զմյուռնիայի 167-169
 Միքայել Պալեոլոգ, կայսր 8, 89,
 257, 285, 474
 Միքայելյան Ա. 350
 Միքայելյան Մ. 350
 Միքայելյան Վ. 6
 Մկրտիչ, գրաշար 413
 Մնացական, վաճառական 322
 Մովսես 423, 466, 48
 Մոնտեսպյո 408
 Մոսկոֆ Հովհաննես
 (Սավալանյան) 173, 321, 357,
 360
 Մովսես, մարգարե 370, 371
 Մովսես Խորենացի 446
 Մոսորե դը Լա 496
 Մորտիեր, հյուպատոս 320
 Մսեր դի Գրիգոր 305
 Մսերյան Գր. 382, 422, 481
 Մսերյանց Մ. 165, 401
 Մուսաբինի, արք. 114, 397
 Մուսթաֆա Ա 46
 Մուսթաֆա Բ 135
 Մուսթաֆա Գ 144
 Մուրադ Բ 45, 206
 Մուրադ Գ 206
 Մուրադ փաշա 96
 Մուրատ, խոճա 97, 290
 Մուրատյան Ա. 313
 Յունգ Է. 370
 Յուսուֆյաններ 24, 295, 303,
 378, 379, 390, 409
 Յուսուֆյան Հ. 379
 Յուսուֆյան Պետր. 303, 319,
 379, 382, 392, 396, 403, 404, 413,
 460, 480
 Յուսուֆյան Պող. 25, 327, 379,
 396

Նադիր շահ 99, 117, 237, 247, 336
 Նագար, խոջա 289
 Նալյան Հ., պատրիարք 107, 137-139, 141, 163, 411
 Նահապետ 104, 112
 Նապոլեոն 293
 Նեպլուն Ն. Դ. 276, 301, 317, 333, 334, 339, 497
 Ներսես Աշտարակեցի, կաթողիկոս 60, 109, 128, 145-147, 149, 175-177, 181, 267-269, 281, 305, 306, 348, 351, 395, 402, 405, 406, 419, 352, 360, 381-383, 385, 393, 394, 399,
 Ներսես Եփեսացի եպ., առաջնորդ Զմյուռնիայի 160-162
 Ներսես Շնորհալի, կաթողիկոս 8
 Ներսեսյան Հ., վարդ. 98
 Նիկեփորոս, պատրիկ 6, 80
 Նուպարյաններ 17, 24, 98
 Նուպարյան Հ. 393
 Նուպարյան Մ. 23, 24, 382, 387, 420, 422, 454, 481
 Նուպարյան Մկր. 175, 383, 386, 396
 Նուրյան Կ. 279
 Շաբան, ջալալի 215
 Շահ Աբաս 39, 64, 93, 117, 120, 128, 200, 245, 260
 Շահինյան Գ. 34, 35, 212, 213
 Շահինյան Հ., քահ., 388, 390
 Շահնազարյան Կ. վարդ. 100, 101, 237, 357
 Շահվերդի, վաճառական 338
 Շահումյաններ 297, 298
 Շահումյան Հ. 298
 [Շահումյան] Սահակի որդի Ոսկան 298
 Շահումյան Ստ. 297, 298
 Շաշկետեցի Միմոն 225

Շաշկետեցի Պողոս 223
 Շատոբրիան 408, 419, 423
 Շարդեն, ճանապարհորդ 486, 489
 Շեքսպիր 423
 Շնորհք, ամիրա 373, 376
 Ոսկան (Երևանցի) 413
 Ոսկանյան Ստ. 24, 280, 382, 387, 394, 404, 418, 480, 494
 Չազըրյան Զ. 454
 Չամչյան Մ. 9, 13
 Չամուռճյան (Տերոյենց) Հ. 445, 446, 457-459, 461, 462
 Չավդրեցի Միրզա 222
 Չարանիս 7, 83, 84, 467
 Չարմաղան 90
 Չափանօղլուներ 260
 Չելիկ Թ. 109
 Չելիկ Կ. 128
 Չելիկյան Ա. 149, 168
 Չելիկյան Թ. 267, 268, 347, 348
 Չելիկյան Կ. 168, 169, 357
 Չելիկյան Ս. 149
 Չեսնեյ Ռ., ճանապարհորդ 496
 Չըրչիլ Ա. տպարանատեր 417
 Չիլինկիրյան Գր. 23, 24, 382, 422, 454, 465, 481
 Չիլինկիրյան Հ. վարդ. 181
 Պալապանյան Ս. քահ. 191
 Պալասանյան Ստ. 381, 391
 Պալդազարյան Դ. 191, 388, 393, 402, 404, 406, 407, 418, 430, 434, 435, 438, 439, 441, 444, 446, 452, 454, 460, 461, 489
 Պալթազատե Ա. 245
 Պալյան Տ. եպ. 11, 27, 28 151, 152, 155-158, 160, 162, 163, 165-172, 176, 179-181, 194, 212, 374, 360
 Պանայոտի 494
 Պապդուլյանցներ 298

Պապո 408
 Պապիե 419
 Պապոյան Գր. 25, 306, 327, 380
 Պապոյան Ստ. 418, 481
 Պապոյաններ 17, 295, 306
 Պատկանյան Գ. 381
 Պարիս 70
 Պեշիկթաշյան Մ. 447
 Պետրադիս Ֆ. 398
 Պետրոս դի Պապի 357
 Պետրոս Մեծ 227, 322, 331-334, 369, 497
 Պետրոս վարդ., առաջնորդ Զմյուռնիայի 163, 164
 Պերպերյան Ավ. 108, 131, 171
 Պերքնեցի Սաղայթել 224
 Պեքանյան Մ. 370
 Պոլիկարպոս, եպ. 42
 Պոկոկ, ճանապարհորդ 246, 496
 Պոդոս վարդ., պատրիարք 359, 367
 Պոդոս արք. Թագթագյան, առաջնորդ Զմյուռնիայի 180, 181, 347, 387, 389, 399, 401
 Պոյաճյան Գ. 32, 33, 281, 406
 Պոտուրյան Մ. 201, 230
 Պոկնտոշ Կարապետ, առաջնորդ Զմյուռնիայի 119-121, 152, 207, 471, 472
 Ջեվդեթ փաշա, պատմագիր 107
 Զուլֆայան (Զուլֆայան) Օ. 228, 408
 Ռամսեյ Վ. 183
 Ռանդել Ֆ. ճանապարհորդ 496
 Ռանքոենե 486, 491, 492
 Ռասին 454
 Ռեֆորցո 398
 Ռիկո (Ռայկոս) 47, 48, 308, 494
 Ռուբինյաններ 87, 90
 Ռուհիջան, խոջա 296

Ռուսինյան Ն. 452
 Ռուսո Ժ.-Ժ. 385, 446, 480
 Սաբեթա Սեվի (Յվի) 47-49, 494
 Սաղըք բեյ 55
 Սալլանթյան Մ. 375
 Սահակ, կաթողիկոս 393
 Սահակ (Բսահակ) Ահագին, եպ., առաջնորդ Զմյուռնիայի (1754-1755) 29, 131, 139, 144, 164, 165, 182, 470
 Սահակ (Բսահակ) Ահագին, եպ., առաջնորդ Զմյուռնիայի (1784, 1791-1793) 61, 168-170, 298
 Սամուել Անեցի 79
 Սամուել Մանիսացի, նահատակ 74
 Սամուելյան Գր. վարդ (Տերեա) առաջնորդ Զմյուռնիայի 160
 Սանդ Ժ. 423
 Սանդի Զ. 492, 493
 Սաչլու Խալիլ 96
 Սավալան Ե. 324
 Սավալան Թ. 227
 Սավալան Հ. 226, 324
 Սավալան Օ. 224
 Սավալանի որդի Օհանես 224
 Սարգսյան Հ., բարերար 281, 303, 378, 388, 392, 403, 409, 480
 Սարուխան Ա. 308, 320
 Սավալանյան Առ. 321, 322
 Սավալանյան Տ. Հ. 225-228, 321, 324, 335, 376, 388, 407, 408, 419, 454, 480
 Սարաֆյան Ս. եպ., 114
 Սարուխանօղուներ 204, 261
 Սավալանյան Տ. 23, 77
 Սարգիս, եպ. Լավոդիկեի 8, 81, 94, 239, 472
 Սարգիս երեց, ակնագործ, գրիչ 153, 324

Մարգիս, նահատակ 74, 87, 88
 Մարգիսյան Ն. 64
 Մարգսյան Հ. 25
 Մարուխան Ա. 316
 Մարուխանողլուներ 53
 Մաֆար, խոջա 294
 Մաֆրազ, խոջա 328
 Մեբեռու 6, 467
 Մելիմ Ա 11, 60
 Մելիմ Բ 206
 Մելիմ Գ 47, 280
 Մելումյան Ս. 227
 Մերապիոն 497
 Մերովբյան Վ. 284
 Մթրատի, ճարտարապետ 402
 Միմեոն Դպիր Լեհացի 12, 39,
 64, 73, 96, 183, 190, 193, 196,
 207-209, 211, 247, 366, 470, 489
 Միմեոն Երևանցի, կաթողիկոս
 12, 71, 120, 129, 123, 124, 126, 127,
 131, 132, 136-141, 144, 145, 162,
 165, 166, 197, 207, 278, 232, 321,
 323, 372, 410, 411, 471, 472, 476
 Միմեոն Երևանցի, վարդ.,
 առաջնորդ Զմյուռնիայի, 161
 Միմոն Կեսարացի,
 ճարտարապետ 402
 Միմոնաքյան Հ. 406
 Միմոնյան Պ. 32, 33
 Միրունի Հ. Ճ. 134
 Մլարս Բ. 9, 18, 19, 21, 22, 32, 39,
 79, 86, 87, 89, 90, 93, 182, 190,
 191, 196, 303, 468
 Մկոտ Վ. 423
 Մմիթ Է. 210, 471
 Մմիրնա, ամագոնուհի 41
 Մմիրնեյիս Մ.-Կ 104, 109, 110, 113
 Մյու Է. 423
 Մյուրմեյան Ա. արք. 153, 316
 Սողոմոն 413

Սողոմոն արեղա, գրիչ 367
 Սպարթալյան Հակ. 328, 344
 Սպարթալյան Հովհ. 328, 344
 Սպոն, ճանապարհորդ 58
 Սվաճյան Հ. 384
 Սվիֆտ Ջ. 423
 Ստեփանյան Գ. 62
 Ստեփանոս, արքահայր 303
 Ստեփանոս եպ., առաջնորդ
 Զմյուռնիայի 155, 156
 Ստեփանոս Աղավնի,
 պատրիարք 30, 148, 176-178
 Ստեփանոս Էրեց 232, 233
 Ստեփանոս Թելավեցի 176
 Ստեփանոս Լեհացի 174
 Ստեփանոս Օրբելյան 101
 Ստեֆենս Ջ. 495
 Ստրաբոն 41, 198
 Սրվանձտյանց Գ., եպ. 119,
 Սուլեյման Քանունի 277
 Սուլթանյանց Ա. 407
 Սուքիաս, գրիչ 288
 Վալչ Ռ. ճանապարհորդ 249, 497
 Վանանդեցի Մ. 24, 374
 Վանի, մելիք 99
 Վարդան, գրիչ 236, 237
 Վարդան, պատմագիր 90
 Վարդան Կարբեցի, գրիչ 99, 366
 Վարդան Մամիկոնյան 5, 6, 85,
 116, 235, 467
 Վարդան Օձնեցի 102
 Վարդանյան Հ. (Հովսեփ
 Վարդան փաշա) 447
 Վարդաս Լևոն 84-85
 Վարժապետյան Ն.,
 պատրիարք 15
 Վեոն Ժ. 423
 Վիենոյ կոմս 44
 Վիթթլ Չ. 78, 327, 441
 Վինյո Ալ. դը 49

Վոլինսկի Ա. դեսպան 315, 331
 Վոլտեր 423
 Տամատյան Գր., քահ. 28, 419
 Տամկաձյան գերդաստ. 280
 Տանտալուս 41
 Տավինո, սուրբ 292
 Տատյաններ 392, 453
 Տեղապահյան Ստ., արք. 146, 149, 268
 Տետեյան Ա. Կ. 419, 421-423, 466
 Տետեյան եղբայրներ 24, 382, 463-466, 481, 482, 484,
 Տետեյան Հ. Հ. 421-423, 439
 Տետեյան Տ. Հ. 24, 421-423, 466, 480
 Տեր-Գրիգորյան Ա. գրիչ 371
 Տեր-Հովնանյան Հ. 337
 Տիրերիոս, կայսր 198
 Տիգրան Մեծ 42
 Տյուզյան Հակ. 79, 311, 438
 Տյուզյաններ 453
 Տոլստոյ Պ. Ա. 68, 301, 497, 498
 Տումարով (Թամարով, Թամար) Վ. 31, 359, 361
 Տոտո ղը, բարոն 55
 Տվերիտինովա Ա. Ս. 262, 263
 Տրդատ արք., առաջնորդ
 Ջմյունիայի 152, 153, 157
 Տրճանենց Կ. 279
 Դանքոենե, 64
 Դիկզ Ի. 416, 417, 481
 Յաչա, սելջուկ 42
 Յիցերոն 198
 Ուդուրյան Մ. 291
 Ումուր բեյ, Այդընօղլու 45, 199
 Փափազյան Պ. 351, 413
 Փափազյան Ռ. 24, 351, 381-390, 390, 392, 393, 396, 397, 404, 416, 417, 419, 453, 454, 465, 479, 481, 482
 Փափազյանց Ի., վարդ. 318, 339
 Փիլիճյան Մ. 406

Փիլիպիկոս-Վարդան, կայսր 6, 80-82
 Փիլիպոս, կաթողիկոս 136, 139, 153, 209
 Փիլիպոս եպ., առաջնորդ
 Զմյունիայի 60, 142, 146, 166, 167, 173-176, 225, 231, 234, 281, 362,
 Փիրդալեմյան Ղ. վարդ. 159, 160, 186
 Քալենդեր օղլու 215, 216, 493
 Քանինգ Մտ. (լորդ Ռեդկլիֆ) 441
 Քարա Յազըջի 51
 Քարա Սայիդ (Մեյադ) 96, 216
 Քեմալ Աթաթուրք 33
 Քեյխուսբեկ 239
 Քյումուրճյան Ե. 49, 50, 58, 157, 235
 Քյուրուկճյան Հ. 232
 Քյուրտյան Հ. 313, 329, 332, 337
 Քնալը Օղլի 51, 97
 Քոսյան Հ. 9, 16-19, 21, 32-34, 36, 39, 59, 74, 79, 87-90, 95, 99, 101, 104, 105, 111-114, 151-159, 163, 172, 176, 177, 179, 181-184, 187-191, 196, 200-203, 210-213, 217, 219-223, 225, 231, 239-244, 252, 255, 256, 373, 374, 388, 405, 407, 412, 414, 418, 419, 468, 473
 Քորյաթ Թ. ճանապարհորդ 60
 Քուզիբեթցի Ավան 223
 Օմիրոլատիս 425
 Օսկանյան Խ. 429
 Օսման (Օթման) 44, 235
 Օվանես, քահ. 101
 Օտյան Գր. 452
 Օրհան 235, 236
 Օրմանյան Մ., արք.
 պատրիարք 5, 6, 8, 29, 39, 81, 94, 107, 131, 139, 144, 150, 161, 162, 165, 166, 171, 179-181, 208, 285, 356, 467

Բ Տեղանուններ

Աբիդոս 7, 83, 84
 Ագուլիս 95, 118, 224, 292, 294, 469
 Ադանա 96
 Ադրիանուպոլիս 75, 282, 340
 Ազիզիյե (Ենի գյուղ) 16
 Ալաշեհիր (Ալաշհար,
 Փիլադելփիա) 14, 16, 42, 45,
 197, 210, 239, 241, 257, 258, 336,
 369, 467, 477
 Ալաշկերտ 126
 Ալեքսանդրիա 320, 333
 Ախալցխա 130, 138
 Աղթամար 134, 137, 145, 208
 Ամերիկա 32
 Ամիր (Ամիր) 174, 215
 Ամատերդամ (Ամսրեղողամ,
 Մարդամ) 166, 197, 292, 293, 313-
 317, 319, 321, 322, 328, 411, 412, 475
 Այա Կատերինա (Այա
 Կատինա) թաղ 69, 398
 Այազմա 197
 Այաշ 285
 Այդըն (Տրալիս, Գյուզելիսար)
 10, 11, 13, 14, 16, 18, 20, 21, 34,
 37, 44-46, 50, 51, 53, 54, 57, 64,
 68, 70, 76, 86, 97, 99, 101, 114-
 117, 126, 140, 152, 156, 157, 197-
 203, 200, 212, 205-208, 214, 216,
 231, 238, 249-251, 253, 261, 263-
 266, 272, 273, 274, 283, 287, 318,
 324, 336, 338, 352, 365, 368, 468,
 469, 471, 473, 474, 477, 490
 Այնթապ 25
 Անատոլիա (Կենտրոնական
 Անատոլիա) 6, 10, 46, 58, 67, 78,
 120, 205, 206, 216, 241, 260, 270, 277

Անգլիա 66, 76, 313, 325, 326,
 328, 330, 440, 477
 Անդրկովկաս 108, 361
 Անի 79
 Անկոնա 110, 287
 Անտվերպեն 319, 476
 Ասիա 44, 236, 237, 256,
 Աստրախան (Աշտարխան)
 324, 328, 329, 331, 334, 335, 476
 Ավստրիա 50, 303, 440
 Ատլանտյան օվկիանոս 325
 Արագած 99
 Արապ մահալլեսի, թաղ 401
 Արարատյան դաշտ (հովիտ,
 Էրկիր, Նահանգ) 93, 95, 98, 99,
 154, 201, 202, 237, 239, 240, 247, 267
 Արխանգելսկ 328, 329, 476
 Արծկե 126
 Արճեշ 126
 Արշիպելագ 66, 492
 Արցախ (Ղարաբաղ) 34, 95, 98,
 198, 200, 211, 230, 234, 236, 267, 471
 Ափիոն Գարահիսար 202, 243,
 469
 Ափքես 243
 Աքիսար (Աղասար, Թիրա,
 Թիյաթիրա, Թիրադիր) 14, 44,
 99, 100, 111, 116, 120, 140, 153,
 197, 199, 207, 210, 220, 238, 247-
 250, 255, 282, 338, 397, 405, 469, 497
 Աքշեհիր 239
 Բալկաններ 67, 430
 Բալու 214
 Բաղաբերդ 222
 Բաղազ գավառ 222, 223
 Բաղդադ 392

Բաղեշ 97
 Բայազետ 126, 130
 Բայանդըր (Պայանտըր,
 Բայինդուր) 115, 128, 174, 199,
 267, 347, 397
 Բասրա 123
 Բատավիա 315
 Բարգուշատ 222
 Բելգրադ 308
 Բենդեր Աբաս 317
 Բերգամա (Պերգամոն,
 Պերդամա) 5, 6, 14, 15, 29, 39,
 46, 51, 53-54, 56, 66, 68, 71, 74,
 79-82, 85, 86, 100, 105, 116, 117,
 140, 205, 197, 207, 216, 232 235-
 239, 282, 285, 295, 338, 365, 366,
 369, 467, 469, 471, 478, 479
 Բերկրի 126
 Բյուզանդիա (Բյուզանդական
 կայսրություն) 6, 8, 42, 46 ,80,
 83, 84, 204, 217, 220, 235, 239,
 256-258, 369, 467, 485
 Բողըռում (Բուրդուր) 197, 200, 210
 Բումբեյ 392
 Բոստոն 210
 Բրուսա (Պրուսա, Բուրսա) 43,
 61, 92, 180, 206, 207, 209, 216,
 217, 284, 290, 292, 294, 359, 369
 Բուռնովա (Բուռնաբաթ,
 Բոնովա, Պիոնովա)
 արվարձան 33, 65, 77, 78, 360,
 441, 492
 Գաղ 105, 236, 366
 Գաղատիա 254, 469, 114, 115, 117
 Գանձասար 145
 Գենջե (Գյանջա) 102
 Գերմանիա 304
 Գերմիյան 19, 44, 45
 Գիլան 292, 293, 314, 328, 311,
 333, 334, 335, 476

Գմըր (Գումարք) 95
 Գյոզթեփե, արվարձան 33
 Գյորդաստ (Գյորդես) 197, 204
 Գյուլամբա 197
 Գնըք (Դնըխ, Քլըք) 15, 16, 100,
 125, 143, 197, 232-235, 471
 Գոճակյուր 201
 Գոնջարլու 239
 Գորիս 95, 228
 Գումարք 243
 Գուրուչեշմե, թաղամաս 373
 Դամասկոս 298
 Դանուբյան շրջաններ 333
 Դարալագյազ 99
 Դեմիրջի 204
 Դենիզլի (Տենկեզլու) 13, 16, 18-20,
 81, 86, 94, 116, 117, 140, 197, 207,
 238-242, 282, 286, 295, 336, 338,
 339, 468, 471
 Դիադիս 126
 Դիարբեքիր 129, 436
 Եգիպտոս 327
 Եղվարդ 232, 278
 Ենզի նահիե 53
 Ենկիբագար 197
 Ենկիշեհիր 58
 Եվրոպա 75, 86, 90, 106, 116,
 130, 256, 281, 284, 295, 289, 294,
 297, 298, 342, 303, 314, 315, 323,
 329, 330, 331, 332, 341, 373, 396,
 429, 439, 440, 481, 476, 497
 Երևան (Իրևան) 11, 95, 98, 99, 102,
 103, 118, 224, 118, 230, 237, 294, 462
 Երզնկա (Երզնջան) 46, 50, 133
 Երուսաղեմ 12, 23, 28, 133, 136,
 139, 179, 180, 367, 382, 387
 Եփեսոս (Այասուրք) 7, 14, 43 44,
 71, 82, 83, 85, 96, 199, 203, 210,
 220, 235, 250, 257, 264, 363, 365,
 369, 467, 478, 479

Եփրատ 440
 Զանգեզուր (Զանկիզուր) 222
 Զարապխանե 98
 Էգեյան թերակղզի 467, 472
 Էգեյան ծով 5-7, 9-10, 13, 14, 20, 21,
 27, 29, 35, 36, 40-42, 44-46, 94, 95,
 105, 110, 114, 257, 285, 287, 292, 317,
 318, 471
 Էգեյանի առափնյակ
 (գաղթօջախներ, մերձակայք,
 շրջան) 80, 83, 86, 94, 117, 156, 197,
 203, 207, 216, 226, 229, 233, 237, 240,
 242, 243, 246, 250, 254-256, 258, 260,
 264, 266, 270, 271, 273, 274, 278, 295,
 301, 312, 338, 339, 342, 363, 365-367,
 369-371, 378, 381, 390, 437, 468, 469,
 471-474, 477-480, 484, 490
 Էգեյանի կղզիներ 52, 254, 258
 Էնեզի ծովախորշ 440
 Էնկյուրի (Անգորա, Անկյուրիա)
 25, 29, 92, 110, 129, 136, 199, 206,
 254, 275, 294, 311, 487
 Էոդեմիշ (Օտամիշ) 10, 11, 14,
 16, 18, 23, 34, 74, 100, 101, 126, 128,
 140, 142, 174, 197, 199, 200, 214, 220-
 228, 253, 256, 266, 267, 273, 274, 324,
 347, 352, 365, 366, 397, 408, 468, 471,
 473, 490
 Էջմիածին 12, 27, 29-31, 92, 98, 108,
 109, 119-122, 124-135, 137-151, 154,
 157, 159, 160, 162, 164-168, 170, 173,
 174, 176-179, 182, 208, 209, 233, 254,
 268, 269, 273, 279, 321, 322, 347, 353,
 356, 358, 359, 361, 362, 367, 368, 378,
 380, 381, 395, 399, 411, 457, 468-
 473, 476, 478
 Էվբեյա 258
 Էրզրում (Կարին) 98, 129, 271,
 292-294, 299, 304, 328, 336, 164,
 174, 230, 293, 323, 476

Ըշրգլը 201
 Թալին 233
 Թավրիզ 230, 292, 294, 328, 336,
 337, 477
 Թեփեճիք 201
 Թեքքե 44-46
 Թիֆլիս 102, 295, 327, 359, 381,
 382, 385, 405, 443, 462
 Թոփրակ կալա 126
 Թոքատ (Թոխատ) 98, 111, 129,
 224, 271, 292-294, 323, 336, 476,
 477
 Թրակիա 55
 Թուրգուք 99, 197, 204, 210, 365,
 366, 471, 478
 Իլգին 239
 Իմամ քյոյ 201
 Իսաքլու չայ 239
 Իսկենդերուն 310
 Իսկյուտար 392
 Իսպանիա 75
 Իտալիա (Տալիա) 90, 110, 163
 Լանգեդոկ (Լանկլոտոք) 309, 311
 Լավոդիկե (Լավոդիկիա) 43, 81,
 85, 94, 239, 467, 468
 Լեմվոն 82
 Լեսբոս 258
 Լիդիա 41
 Լիոն 309, 490
 Լիվերպուլ 313
 Լիվոնոն (Լիկոնոն) 289, 290-
 293, 298, 299, 317, 474
 Լյուդիա 239
 Լոմբարդիա 286
 Լոնդոն 106, 246, 284, 476, 495
 Լոր 236
 Լուկա 292
 Խարբերդ 34, 97, 117, 211, 214,
 215, 217, 284, 469, 472
 Խոյ 23, 230, 256

Խոշկաշեն 108, 496
 Կ. Պոլիս (Ըստամպոլ) 15, 17, 27, 29, 59, 67, 70, 74, 75, 81, 82, 84, 89, 90-92, 91, 96-98, 100, 106-108, 110, 116, 120, 121, 129-132, 135-140, 143-150, 152, 158, 161, 165, 168, 170, 171, 173, 176-179, 181, 182, 214, 217, 228, 242, 257, 258, 268, 270, 271, 276, 279-282, 284, 285, 287, 293, 294, 300, 301, 308, 309, 313, 316, 317, 320, 325, 333, 334, 336, 337, 340, 345, 350, 351, 353-355, 358, 359, 361, 365, 369, 372, 373, 380-383, 391, 392, 395, 399, 402, 409, 410, 416, 420, 423, 424, 427, 428, 429, 430, 433, 437-439, 447, 449, 452, 458, 459, 462, 469, 470, 477, 478, 480, 487, 497
 Կալեր 95, 222, 223
 Կալիս 293
 Կահիրե 67, 497
 Կամախ 50
 Կապադոկիա 64
 Կապան (Ղափան) 95, 117, 222, 230, 240, 243, 297
 Կարաման 44-46, 50, 53, 76, 199, 261
 Կարբի 99, 236, 237
 Կարմիր ծով 325
 Կարս 130, 145
 Կաֆա 136, 285
 Կենտրոնական Ասիա 44
 Կեսարիա 11, 97, 176, 186, 224, 293, 469
 Կիլիկիա 8, 9, 14, 33, 38, 81, 85, 86, 88, 90, 92-94, 116, 122, 168, 208, 233, 260, 342, 472, 473
 Կիպրոս 8, 44, 87, 90, 199, 286
 Կոնիա 98
 Կովկաս 64
 Կորդելիո, ար վարձան 33
 Կրեստե (Կանդիա) 87, 197, 294, 308, 492
 Կրթթաղ (Գիրթաղ) 243
 Կուտինա 92, 180
 Հայաստան 8, 10, 22, 25, 26, 32, 35, 39, 73, 79, 84, 95, 97, 98, 102, 104, 108, 117, 120, 122, 140, 198, 200, 203, 215, 226, 229, 234, 236, 243, 245, 247, 267, 269, 284-286, 293, 296, 341, 381, 425, 433, 436, 456, 461, 462, 467, 469, 472-474, 484, 493
 Հալեպ (Բերիա) 58, 67, 96, 294, 310, 315, 320, 323, 325, 326, 331-336, 477, 497
 Հայնոց (Հայոց թաղ) 60, 70, 193, 389, 400, 470, 480, 488
 Հաքյար 436
 Հերմոս 254
 Հյուսիսային ծովային ուղի
 Հնդկական օվկիանոս 325, 326, 330
 Հնդկաստան 315, 317, 323, 326-331, 341, 399, 477
 Հոլանդիա 66, 76, 299, 303, 313, 314, 320, 323, 325, 328-331, 364, 369, 476, 477
 Հոնաս 197
 Հոնիական ծով
 (տարածաշրջան) 41, 58, 90
 Հոռոդոս 44, 45, 76, 87, 92, 93, 199, 286
 Հոռոմ (Հոռոմ) 42, 152, 159, 289
 Հոռոմկլա 81, 94, 239, 468
 Ղալաթիա 184, 271, 365
 Ղրիմ (Ղոըմ) 98, 325, 405, 440
 Ճեզայիր 68, 70
 Մազրա, գյուղ 222, 223
 Մադրաս 451
 Մալաթիա 214

Մալա 197
 Մալթա (թաղ) 209
 Մալթա (կղզի) 412
 Մալիկանտա 293
 Մանակերտ 126
 Մանդալիաթ 197
 Մանիսա (Մագնեսիա,
 Մադնիսա) 10-12, 14-16, 18, 34, 35,
 37, 43, 46, 50-52, 54, 55, 62, 86, 120,
 126, 140, 142, 152, 153, 157, 159, 160,
 174, 177, 192, 197, 198, 203-208, 210,
 212-220, 226, 238, 244, 249, 255, 257,
 261, 266, 273, 274, 276, 281, 283, 286,
 294, 296, 336, 338, 352, 353, 355, 357,
 365, 366, 369, 397, 404, 405, 468, 471,
 472, 474, 477-479, 490, 491
 Մանլի (Մալի) 95, 223, 243
 Մանչեստր 327, 328, 439
 Մարաշ 25
 Մարմարա ծով 197, 292
 Մարսել 106, 293, 307-309, 313,
 325, 328, 413, 475, 495
 Մեանդր 203
 Մեդիսնա 67
 Մելես, գետ 70, 71, 114
 Մեդրաձոր 222
 Մեդրի 95, 117, 222, 240, 297, 298
 Մեն Հայք 9, 14
 Մենեմեն (Մենոմենոս,
 Մանաման, Թեմնոս) 140, 197,
 204, 205, 210, 249, 253-255, 338,
 397, 405
 Մենթեշե 13, 44, 46, 199
 Մեսինա 293
 Մերձավոր Արևելք 130, 143,
 341, 429
 Մեքքա 67
 Մթնաձոր (Մտնաձոր,
 Մատնեձոր) 99
 Միլետոս 82, 83, 467
 Միջագետք 239
 Միջերկրական ծով 8, 86, 95, 284,
 287, 310, 317, 318, 325, 440, 474
 Միջին Արևելք 130, 143, 429
 Միտիլի (Միտիլենե, Միտիլոս)
 197, 285
 Մոսկվա 328, 329, 331, 335, 468, 477
 Մսրտամ 197
 Մուլան 102
 Մուլլա 197
 Մուշ 433
 Յալովա 222
 Յարոսլավլ 331, 477
 Նագիլի (Նագլոս) 16, 18, 20, 74,
 86, 100, 101, 116, 128, 142, 197,
 242-244, 274, 471
 Նախիջևան (Նախչևան) 95, 98,
 100, 102, 103, 105, 108, 110, 113, 118,
 236, 248, 275, 294, 367, 469, 496
 Նեապոլ 301, 302
 Նիկիա (Նիկիական
 պետություն), 8, 11, 42, 43, 84,
 85, 257, 265, 284-286, 337, 468
 Նիկոմիդիա 369
 Նիֆ 204
 Նոր Բայազետ 105
 Նոր Զուլա 113, 289, 294, 316
 Շահին խան 379
 Շամախի 62
 Շաշկերտ (Շիշկերտ, Շեշկերտ,
 Շաշկետ, Իշկերտ Շաշիգետ)
 95, 222, 223
 Շորեկեյ (Շորագյալ) 98
 Շվանիձոր 95, 223
 Ոլոգոս (Յոդքոս) 71, 363
 Չավնդուր 95, 222, 223
 Չանաքկալե 397
 Չեշմե 37
 Չերքեզքյոյ 201

Չուխաճի բեգեթեն, շուկա 439
 Պագոս, լեռ 66, 74, 77, 182, 183, 195
 Պալատ, թաղամաս 373
 Պալատիա 258
 Պալքեքներ (Պալքեքսար) 176, 207, 234, 235, 258
 Պանարետոս 85
 Պանտրմա 15, 148, 178
 Պատմոս 82
 Պարսից ծոց 333
 Պարսկաստան (Պարսից երկիր, Պարսից աշխարհ) 66, 80, 86, 89, 91, 123, 135, 137, 146, 148, 234, 240, 255, 258, 290, 292, 294, 297, 314, 315, 323-326, 331-335, 362, 474, 477, 487-489, 497
 Պեյքոզ, թաղամաս 279, 438
 Պիզա 291
 Պիրկի (Պերկի, Բերզի) 44, 197, 199, 200, 221-226, 324
 Պլովդիվ 67
 Պոնտոս 64
 Պրինե 7, 81, 83, 84, 89, 467
 Պուճա, արվարձան 78, 492
 Պուրտուր (Բուրդուր) 34
 Ջենովա 89, 76, 93, 204, 257, 258, 284, 285, 287, 296, 474
 Ջուղա 95, 106, 296, 326
 Ջուստից 293
 Ռյուշտիյե, փողոց 388
 Ռոդոստո (Ռոտոսթ) 197
 Ռումելի (Ռումելիա) 29, 67, 129, 136, 141, 146, 149, 171, 172, 268
 Ռուշչուկ 440
 Ռուսաստան 66, 130, 150, 151, 328-335, 361, 362, 399, 462, 476, 477, 480
 Սազըզ (Քիոս) 197
 Սալահանե, արվարձան 408
 Սալեհլի 16
 Սալմաստ 23

Սալոնիկ 67, 75, 282, 340, 497
 Սամաթիա, թաղ, 74, 107, 373
 Մանկտ Պետերբուրգ 331, 477
 Մասուն 433
 Մարատով 331
 Մարդես (Մարդիս, Մալեհլի) 43, 239, 257
 Մարդիկե 16
 Մարուխան 13, 44-46, 50, 54, 55, 76, 199, 204, 205
 Մեքաստիա 98
 Մև ծով 86, 284, 287, 474
 Մևան 155
 Մեվտիքյոյ, արվարձան 78, 492
 Մերչեքյոյ 201
 Միպիլ, լեռ 276
 Միս 90, 96, 133, 139
 Միրիա 239
 Սկամանդեր 7, 83, 84
 Սկանդինավյան թերակղզի 329
 Սկյուտար-Մելամսըզ, թաղամաս 373
 Սյոքե (Սոքե) 114, 86, 115, 180, 197, 248, 253, 255, 256, 468
 Սյունիք (Սյունյաց նահանգ) 14, 95, 98, 99-101, 103, 117, 120, 128, 198, 200, 201, 203, 211, 214, 217, 222, 223, 225-227, 233, 234, 236, 238, 240, 243, 247, 267, 284, 393, 469, 471, 472, 493
 Սոպրուջա 197
 Սովմա 197
 Սոֆիա 67
 Սպահան 294, 323, 328, 336, 476, 477
 Ստադիոն 71
 Ստանքյոյ 197, 210
 Սրաշեն 223
 Սուեզի ջրանցք 325
 Վայոց ձոր 222

Վան 130, 136, 292, 433
 Վասպուրական 120
 Վեզիր խան 69
 Վենետիկ 9, 14, 76, 103, 144, 52,
 66, 114, 158, 161, 199, 258, 284-
 286, 288, 292-294, 297-303, 305,
 318, 404, 406, 421, 424, 451, 474
 Վիեննա 20, 114, 172, 281, 286,
 392, 396, 421, 424, 480
 Վոլգա 331
 Վրաստան 123, 487
 Տաթև 101, 117, 128, 129, 142
 Տերվիշօղլու, հյուրատուն 295, 418
 Տիգրանակերտ 121, 174
 Տիներ 239
 Տոմոլլու սոխախ, փողոց 267
 Տոսկանա 288, 289
 Տրապիզոն 98, 284, 285, 294
 Տրիեստ (Թրեստ) 106, 292, 302-
 304, 319, 381, 383, 393, 403-405, 495
 Տրոյա 82
 Ումուրլու 201
 Ուշագ 249
 Փարիզ 32, 106, 312, 385, 421,
 430, 494, 495
 Փոկիա 45
 Փոքր Ասիա 11, 34, 41, 43, 44,
 52, 90, 96, 104, 117, 198, 200, 206,
 296, 442
 Փոքր Հայք 9, 104
 Քամար 197
 Քասաբա (Գիրմաստ) 14-16, 169,
 174, 244-247, 250, 255, 282, 336, 339
 Քաստամոնու 46
 Քարաթաշ, արվարձան 33
 Քիոս (Սաղքըզ) 37, 52, 58, 66,
 Քյոշք 197
 Քրքաղաչ (Ղրխաղաճ) 15, 18,
 19, 86, 100, 128, 142, 197, 228-
 232, 238, 249, 250, 255, 336, 339

Քուշադա (Սկալա Նովա,
 Ղուշատա) 10, 13, 16, 37, 66, 86, 100,
 114, 119, 197, 250-253, 256, 274, 491
 Քուջերթ 223
 Քուրլուճա, արվարձան 78, 492
 Օդեսա 335
 Օրթագյուղ, թաղամաս 373
 Ֆլորենցիա 290, 302
 Ֆրանսիա (Գաղիա) 66, 76, 304,
 310-313, 325, 440, 475, 491
 Ֆրենկ մահալլեսի (Ֆրանկաց
 թաղ) 47, 76, 77, 60, 316, 320, 492,
 494
 Ֆրնոզ 201

Գ. Եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, կրոնական այլ կառույցներ

- Այա Կատինա, հունական
եկեղեցի (Զմյուռնիա) 69
Արմաշի վանք 254
Դոմինիկյան միաբանություն
111
Յոթն մանկանց վանք
(Եփեսոս) 363
Ս. Աստվածածին եկեղեցի
(Այդըն) 21, 201
Ս. Աստվածածին եկեղեցի
(Աքիսար) 247
Ս. Աստվածածին եկեղեցի
(Բայանդըր) 344
Ս. Աստվածածին եկեղեցի
(Բերգամա) 236-238
Ս. Աստվածածին եկեղեցի
(Էոդեմիշ) 225, 256
Ս. Աստվածածին եկեղեցի
(Քասաբա) 169, 344
Ս. Աստվածածին եկեղեցի
(Քրքադա) 230
Ս. Աստվածածին եկեղեցի
(Քուշադա) 252
Ս. Աստվածածին վանք
(Լեմվոն լեռան) 82
Ս. Բարդուղիմեոս եկեղեցի
(Զմյուռնիա) 184-187, 189, 196,
288, 365, 470
Ս. Գեորգ եկեղեցի (Կ. Պոլիս,
Սամաթիա) 107
Ս. Էջմիածնի միաբանություն 164
Ս. Թադեի վանք (Ուչքիլիսե) 267
Ս. Լազարյան միաբանություն
77, 113
Ս. Լուսավորիչ եկեղեցի
(Զմյուռնիա) 23, 194, 343, 471
Ս. Լուսավորիչ եկեղեցի
(Կարին) 164
Ս. Լուսավորիչ եկեղեցի
(Կ. Պոլիս, Ղալաթիա) 107
Ս. Լուսավորիչ եկեղեցի
(Մանիսա) 28, 157, 158, 160,
210-212, 219, 253, 353
Ս. Լուսավորիչ եկեղեցի
(Քասաբա) 245
Ս. Լուսավորչյան եկեղեցի
(Աքիսար) 248
Կապուլչիններ (Ֆրանս.) 76, 113
Ս. Հակոբյանց վանք
(Երուսաղեմ) 23, 136, 408
Ս. Հովհաննես եկեղեցի
(Քուշադա) 252
Ս. Հովհաննեսի
միաբանություն
(Հոսպիտալյերներ) 45, 183
Ս. Հռիփսիմե եկեղեցի
(Էոդեմիշ) 225, 226, 253
Ս. Հռիփսիմե եկեղեցի
(Նազիլի) 243
Ս. Մինասի տաճար [մատուռ]
(Զմյուռնիա) 189
Ս. Նիկողայոս եկեղեցի
(Կ. Պոլիս, Հիսար դիբի) 308
Ս. Պանտելեյմոն մենաստան
(Զմյուռնիային կից) 244

Ս. Պոլիկարպոս եկեղեցի
 (Զմյուռնիա) 112, 113
 Ս. Սարգիս եկեղեցի
 (Մենեմեն) 254, 255, 344
 Ս. Սիոն եկեղեցի (Մանիսա)
 28, 210, 212, 344
 Ս. Ստեփանոս եկեղեցի
 (Զմյուռնիա) 17, 23, 28, 56, 59,
 150, 159, 163, 184-186, 188-191,
 193-196, 309, 324, 343, 350, 365,
 368, 376, 379, 399, 402-404, 470

Ս. Ստեփանոս և Ս. Բարդու-
 դիմեոս եկեղեցի (Զմյուռնիա)
 97, 158, 184, 185, 187-189, 195,
 196, 471
 Սրբոց մանկանց հանգստա-
 րան, ուխտատեղի 71
 Տաթևի վանք 347
 Քառասնից մենաստան
 (Էնկյուրի) 254
 Ֆրանցիսկյան միաբանություն
 113